Մաշտոցի անվան Մատենադարանը և «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամը երախտագիտություն են հայտնում բարերար **Մաքսիմ Հակոբյանին** սույն հատորի հրատարակությունը հովանավորելու համար:

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots "Matenadaran" and the Benevolent fund "Friends of Matenadaran" express their gratitude to benefactor **Maksim Hakobyan** for sponsoring the publication of the volume.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

HOVHANNES YERZYNKATSI

WORKS

VOLUME I

SPEECHES AND SERMONS

Texts were prepared for publication by
ARMENUHI YERZYNKATSI-TER-SRAPIAN and
EDVARD BAGHDASARYAN

Introductions by EDVARD BAGHDASARYAN

“NAIRI” Publishing Hause
Yerevan – 2013

“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ОВАННЕС ЕРЗЫНКАЦИ

СОЧИНЕНИЯ

ТОМ ПЕРВЫЙ

РЕЧИ И ПРОПОВЕДИ

Тексты подготовлены к изданию
АРМЕНУИ ЕРЗЫНКАЦИ-ТЕР-СРАПЯН и
ЭДВАРДОМ БАГДАСАРЯНОМ

Предисловия ЭДВАРДА БАГДАСАРЯНА

Издательство “НАИРИ”
Ереван – 2013

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՃԱՌԵՐ ԵՒ ՔԱՐՈԶՆԵՐ

Բնագրերը հրատարակության պատրաստեցին
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐԶՆԿԱՑԻ-ՏԷՐ-ՍՐԱՊՅԱՆԸ եւ
ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Ներածականները ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

«Նաիրի» հրատարակչություն
Երևան, 2013

ՀՏԴ1/14
ԳՄԴ
Ե 846

Խմբագրությամբ՝ ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Երզնկացի Յովհաննէս
Ե 846 Ճառեր եւ քարոզներ / Յ. Երզնկացի, Աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի. - Երևան, 2013. - 668 էջ:

Հովհաննես Պլուզ Երզնկացու կենսագործունեությունը միշտ եղել է հայագիտության ուշադրության կենտրոնում, մինչեւ Ի. դարի երկրորդ կեսը նրա մասին գրվել են մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Հակառակ սրան՝ մեծ եւ արդյունաշատ այս մատենագրի գիտական-գրական ժառանգության հիմնական մասը կազմող ճառերն ու քարոզները մինչեւ օրս մնացել էին անտիպ, մինչդեռ նրանց մեջ լավագույնս դրսեւորվել են մեծ մտածողի եւ հայրենասերի անսահման սերը հայրենի ժողովրդի նկատմամբ, հայկական պետական միավորումների եւ եկեղեցու ամրապնդմանը, ազգապահպանությանը, գիտության եւ լուսավորության զարգացմանը եւ ծավալմանը, սոցիալական անհավասարությունները մեղմելուն վերաբերող գաղափարներն ու ձգտումները:

Այստեղ՝ հիմնականում առաջին անգամ, տպագրվում են Հովհաննես Երզնկացու խրատական արձակի քառասունմեկ միավոր, որոնք շատ մեծ արժեք ունեն միջնադարի հայկական մտածողությունը եւ առօրյա կյանքի բազմազան դրսեւորումներն առավել լավ պատկերացնելու համար: Գիրքը հասցեագրվում է հայագիտությամբ եւ ընդհանրապես արեւելագիտությամբ հետաքրքրվողներին:

ՀՏԴ1/14
ԳՄԴ 87

ISBN 978-5-550-01705-0

© Մատենադարան, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, 2013
© «Նաիրի» հրատ. ՓԲԸ, 2013

ՄՈՒՏՔ

Հայ միջնադարյան մշակույթի ականավոր ներկայացուցիչ, եկեղեցական-քաղաքական նշանավոր գործիչ Հովհաննես Երզնկացի Պլուզը դեռևս իր ժամանակակիցների կողմից շատ բարձր է գնահատվել: Նա հռչակվել է «գերիմաստ վարդապետ» տիտղոսով և զարդարվել սրբության պսակով:

Հովհաննես Երզնկացու կյանքն ու գործունեությունը ի սկզբանե հուզել ու հետաքրքրել են ինչպես իր ժամանակակիցներին, այնպես էլ հաջորդներին: Նա ապրել և ստեղծագործել է Հայաստանի ու հայ ժողովրդի համար փոթորկալից ժամանակաշրջանում՝ ԺԳ. դարում, և իր ստեղծագործությունն էլ դարձել է իր ապրած անհանգիստ դարի արտահայտությունը:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն միջնադարի նշանավոր այլ վարդապետների, Հովհաննես Պլուզի կյանքը չի անցել վանական փակ շրջանակներում: Աշակերտելով ժամանակի նշանավոր վարդապետներից Վարդան Արևելցուն՝ Երզնկացին վերադարձել է հայրենի քաղաք, դարձել Երզնկայի ու եկեղյաց գավառի հայրենասեր իշխանավորների՝ արքեպիսկոպոս տեր Սարգսի, նրա որդի Հովհաննես իշխանի և նրանց ժառանգների աջակիցն ու զինակիցը ո՛չ միայն գիտության ու մշակույթի, ժողովրդի լուսավորության ու հոգևոր դաստիարակության գործում, այլև ազգային իշխանության ամրապնդման, քաղաքական ու սոցիալական արդարության հաստատման համար մղած պայքարում: Սակայն Երզնկացու գործունեությունը չի սահմանափակվել միայն հայրենի երկրամասի՝ Երզնկայի սահմաններով: 1268 թ. վարդապետական աստիճան ստանալուց կարճ ժամանակ անց նրա համբավը տարածվում է ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ հայաշատ այլ երկրներում: Անընդհատ շրջագայությունների ընթացքում (իսկ նա ուղևորվում էր ոչ միայն իր ցանկությամբ, այլև զանազան հանձնարարականներով կամ հրավերներով) եղել է Անիում, Կարինում (Թեոդուպոլիս), Տարոնում, Տփխիսում, Երուսաղեմում և այլուր: Հանգամանքների բերումով Երզնկացին տարիներ շարունակ ապրել է Կիլիկյան Հայաստանում, ուր բացառիկ գնահատանքի է արժանացել Լևոն Գ. և Հեթում Բ. թագավորների, Հակոբ Ա. Կլայեցի, Կոստանդին Բ. Կատուկեցի, Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի կաթողիկոսների և բազմաթիվ գիտնական վարդապետների կողմից: Նրա հայտնվելը ամենուր երևույթ է դարձել, ինչին հետևել են ժամանակի հոգևոր ու քաղաքական գործիչների կողմից ճառեր ու քարոզներ կարդալու առաջարկներ, խնդրանքներ, պատվերներ՝ հոգևոր և գիտական տարբեր խնդիրների և հարցերի լուսաբանման համար:

Ժամանակի քաղաքական ըմբռնումներից մինչև աստվածաբանություն, իրավագիտություն ու փիլիսոփայություն, տիեզերագիտությունից տոմարագիտություն, բերականագիտությունից երաժշտագիտություն ու բժշկագի-

տություն. ահա ոչ լրիվ թվարկումը այն բնագավառների, որոնց շուրջը խորհել, գրել ու քարոզել է այդ զարմանալի հանրագիտակ մտածողը: Նկատենք, որ ժամանակակիցները և միջնադարի հետագա հեղինակները ոչ միայն հիացումով ու հպարտությամբ են գրում նրա մասին, այլև այնպիսի համեմատություններ են անում, որոնք թույլատրելի էին միայն մեծագույնների համար: Պատահական չէ, որ մեր ժողովրդի և հատկապես հայ մշակույթի համար ամենադժնդակ ժամանակներում անգամ՝ ԺԵ.-ԺԶ. դարերում, Երզնկացու ինչպես արձակ, այնպես էլ չափածո գործերը շարունակում էին ընդօրինակվել բազմաթիվ ձեռագրերում:

Երզնկացու ստեղծագործությունները լուրջ ուշադրության արժանացան նաև տպագրության գյուտից հետո: 1664 թ. Ամստերդամում հրատարակված Շարակնոցում առաջին անգամ հրատարակվեցին Երզնկացու շարականներից հինգը, իսկ 1792 թ. Նոր Նախիջևանում՝ տիեզերագիտական արձակ և չափածո աշխատությունները:

Ավելի ուշ՝ նախ 1824 թ. Կ. Պոլսում «Յաճախապատում» ժողովածուի մեջ, ապա 1853 թ. Վենետիկում Սոփերքի Ե. հատորում տպագրվել են Գրիգոր Լուսավորչին, իսկ Սոփերքի Է. հատորում՝ Ներսես Մեծ կաթողիկոսին նվիրված ազատ չափով և հանգով գրված նշանավոր ներբողական պատմությունները[1]:

Ընդհանրապես հայագիտությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Հովհաննես Պլուզ Երզնկացու ժառանգությունը:

Սկսած ԺԸ. դարի առաջին կեսից՝ իրենց աշխատություններում Երզնկացուն անդրադարձել են նշանավոր հայագետների բազմաթիվ սերունդներ (Մ. Զամչյան, Ղ. Ալիշան, Գ. Սրվանձտյանց, Գ. Զարպհանալյան, Բ. Կյուլեսերյան, Մ. Պոտուրյան, Մ. Օրմանյան, Գ. Հովսեփյան, Մ. Աբեղյան, Լ. Խաչիկյան, Հ. Քյուրտյան, Ա. Տեր-Սրապյան, Ս. Արևշատյան)՝ բարձր գնահատելով նրա գործունեությունը և ժառանգությունը: Այդ տեսակետից հատկապես նշանակալի է ականավոր հայագետ հ. Ղևոնդ Ալիշանի խոսքը Երզնկացու մասին. «Սա վերջինն է յարժանաւոր մատենագիրս մեր, ԺԳ. դարը կնքելով և ԺԴ. բանալով, իրմէ ետքը ո՛չ ոք իրեն հաւասարեցաւ և կամ մօտեցաւ, և ո՛չ իսկ իր դարուն հոչակեալքն, միանգամայն առնելով իր վարժապետն՝ Մեծ անուանեալ Վարդանն ևս, և իրմէ առաջ այլ սակաւ: Իրեն նման հանճարեղ և հմուտ վայելչաբան մը գտնելու համար պէտք է ելնել մինչև ի Մխիթար Գոշ, ի Լամբրոնացի և ի Շնորհալի, և ավելի վեր՝ մինչ ի Յովհաննէս Սարկաւագ վարդապետ»[2]:

Հակառակ այդ ամենին՝ մինչև նախորդ դարի կեսերը հայագիտության մեջ դեռևս շատ բան անորոշ էր մնում թե՛ նրա կենսագրության, ապրած ժամանակաշրջանի և թե՛ ստեղծագործության մասին առհասարակ: Նա գրեթե մնում էր չուսումնասիրված: Ո՞վ էր Երզնկացին՝ Պլու՞զ, Ծործորեցի՞,

---

[1] *Ի դեպ՝ Արմենուհի Տեր-Սրապյանն այս գործերն առաջին անգամ տողատել և վերածել է չափածոյի: Տե՛ս Հովհաննես Երզնկացի Պլուզ, Բանք չափաւ, աշխատասիրությամբ Ա. Ե. Սրապյանի, Երևան, 1986, էջ 136, 200:*

[2] *Հ. Ղևոնդ Ալիշան, Հայապատում, հ. Ա., Վենետիկ, 1901, էջ 119:*

երկուսը մեկտե՞ղ, թե՞ մեկ ուրիշ նույնանուն Երզնկացի: Ե՞րբ է ապրել ու գործել, ԺԳ.՞, ԺԴ.՞, թե՞ ԺԵ. դարում: Այս ամենի պատասխանը վիճակված էր տալ երջանկահիշատակ Արմենուհի Նիկողոսի Տեր-Սրապյան Երզնկացուն, որի ողջ կյանքը, ի թիվս հայագիտական բազում այլ խնդիրների ուսումնասիրության, դարձավ կատարյալ նվիրում Հովհաննես Պլուզ Երզնկացու, ինչպես նաև ԺԳ.-ԺԴ. դարերում ապրած ու գործած նշանավոր մյուս Երզնկացիների՝ Կոստանդին, Կիրակոս և այլոց ժառանգության հետազոտմանը:

Հովհաննես Պլուզին նվիրված՝ Ա. Տեր-Սրապյանի 1958 թ. հրատարակած առաջին իսկ ուսումնասիրությունը, որտեղ բազմաբնույթ հարցերի լուսաբանումների հետ մեկտեղ զետեղված էին Երզնկացու չափածո գրեթե բոլոր գործերը[3], հզոր ազդակ հանդիսացավ նրա երկերի հետազոտման համար: Իրար հաջորդեցին տարբեր մասնագետների մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ՝ նվիրված Երզնկացու ժառանգությանը[4]:

Սակայն գաղտնիք չէ, որ մինչև 60-ական թվականները խորհրդային իրականության մեջ, մեղմ ասած, չէր խրախուսվում, այսպես կոչված, զուտ կրոնական բովանդակություն ունեցող երկերի՝ խրատների, ճառերի, քարոզների ուսումնասիրությունը և հատկապես հրատարակությունը: Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական անձնակազմը աղբյուրագիտական այդ աշխատանքին ամբողջական ծավալով ձեռնամուխ եղավ միայն 60-ական թվականներին, երբ լուսահոգի ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ղեկավարությամբ ծրագրվեց հայ միջնադարի պատմության ու մշակույթի համակողմանի ուսումնասիրության համար գիտական շրջանառության մեջ դնել հոգևոր գրականության մի շարք արժեքավոր ստեղծագործություններ: Այդ ուղղությամբ առաջինը եղան Հովհաննես Երզնկացու խրատական երկերի պատմաբանական ուսումնասիրությունն ու հրատարակությունը[5]: Նկատի առնելով, որ մինչ այդ հայագիտության մեջ չէր եղել խրատներին նվիրված որևէ հատուկ հետազոտություն, հարկ համարեցինք Երզնկացու խրատների բնությանը և բնագրերի հրատարակությանը ձեռնամուխ լինելուց առաջ պատմաբանասիրական ուսումնասիրության ենթարկել խրատներն ընդհանրապես և Երզնկացու կանոնական բնույթի խրատները մասնավորապես, ինչպես և ձեռագրական նոր տվյալների հիման վրա լուսաբանել Երզնկացու կյանքի ու գործունեության մի շարք կողմեր: Վերոհիշյալ ուսումնասիրությանը զուգընթաց հրատարակվեցին Երզնկացու խրատական բնույթի մի շարք գործեր՝ այդ թվում նաև նրա նշանավոր «Խրատք հասարակաց»ը[6], որը Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»ից[7] հետո

---

[3] Ա. Սրապյան, *Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958:*

[4] *Մանրամասն տե՛ս* Ա. Երզնկացի Սրապյան, *Հովհաննես Երզնկացի-Պլուզ (կյանքն ու գործը), Երևան, 1993, էջ 9:*

[5] Է. Մ. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977:*

[6] Հովհաննես Երզնկացի, *Խրատք հասարակաց.*- Է. Մ. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 139-201:*

նմանատիպ արժեքավոր, ծավալուն ստեղծագործությունն է միջնադարյան Հայաստանի բարոյախրատական գրականության մեջ:

Մի փոքր ավելի ուշ Արմենուհի Տեր-Սրապյանը հրատարակեց ևս երկու ուշագրավ գիրք՝ Երզնկացու չափածոյին[8], ապա նաև նրա կյանքին ու գործունեությանը[9] նվիրված առավել բնախույզ ուսումնասիրություններ: Վերջապես 1983 թ. ԱՄՆ-ում Լ. Խաչերյանը հրատարակեց Երզնկացու կոթողային աշխատություններից մեկը՝ «Հաւաքումն մեկնութեան քերականի»[10], ինչպես և Ա. Տեր-Սրապյանի և տողերիս հեղինակի կողմից հրատարակվեցին Երզնկացու գրչին պատկանող մի շարք արժեքավոր բնագրեր[11], որոնց

---

[7] Ներսես Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Մ. Բաղդասարյանի, Երևան, 1995:*

[8] Հովհաննես Երզնկացի Պլուզ, *Բանք չափաւ, աշխատասիրությամբ Ա. Ե. Սրապյանի, Երևան, 1986:*

[9] Ա. Ն. Երզնկացի-Սրապյան, *Հովհաննես Երզնկացի-Պլուզ (կյանքն ու գործը): Ա. Տեր-Սրապյանի սույն աշխատությունը իրավամբ կարող է համարվել ոչ միայն Երզնկացու ժառանգության, այլև հայագիտության կողմից երզնկացիագիտության շուրջ հին ու նոր ժամանակներում տարբեր հեղինակների կատարած ուսումնասիրությունների հանրագիտարան, որում հեղինակը ոչ միայն ներկայացնում է միջնադարյան մեծ երախտավորի անմնացորդ նվիրումը հայ ժողովրդի ազգապահպանության, գիտության, լուսավորության, մշակույթի տարբեր բնագավառների զարգացմանը, այլև անդրադառնում միջնադարի մեր նախորդ մեծերի, ինչպես և համաքրիստոնեական ու անտիկ հեղինակների երզնկացիական մեկնաբանությանը՝ ըստ հարկի ճշտ ելով նաև Երզնկացու օգտագործած աղբյուրները:*

[10] *Երզնկացու այս նշանավոր երկի գրության ժամանակի մասին մեր բանասիրության մեջ տարակարծություններ են եղել, ոմանց կարծիքով այն գրվել է 1293 թվականին, Կիլիկիայում: Հարցին անդրադառնալով՝ Ա. Սրապյանը հերքել է այդ թյուր կարծիքը, նշելով, որ 1291 թվականին, երբ Երզնկացին դեռևս իր հայրենիքում էր՝ Լուսավորչի լեռներում, գրել և ավարտին է հասցրել իր նշանավոր ստեղծագործությունը, քանզի այդ մասին է վկայում դեռևս 1291 թվականին գրված՝ Մաշտոցյան Մատենադարանի Հմր 2329 ձեռագիրը (Ա. Սրապյան, Հովհաննէս Երզնկացի, Երևան, 1958, էջ 44): Ավելի ուշ նույն խնդրին անդրադառնալով, Լ. Խաչերյանը փորձեց հերքել Սրապյանի կարծիքը, առանց որևէ հիմքի հայտարարելով, թէ 2329 ձեռագիրը ոչ թէ 1291 թվականի է, այլ տասնչորսերորդ դարի: Սակայն անկախ այդ ամենից, չափազանց էական է, որ ձեռագրում նշվում է ոչ միայն գրչության ժամանակը, այլև վայրը. «Ի թուին Զխ. (1291), ի հայրապետութեանն տեառն Ստեփ[աննոսի] եւ ի թագաւոր[ութեան] բարեպաշտին Հեթմոյ եղեւ կատարումն գրոյս ի գուռն Սուրբ Լուսաւորչիս գերեզմանի...» (ձեռ. 2329, էջ 281): Բայց չէ որ Երզնկացին ինքն է հայտնում, որ նույն թվականին ստիպված է լինում հեռանալ Կիլիկիա. «Այլ յուսով ողորմութեանն Աստուծոյ թողում զամենայն աշխատութիւնս իմ եկեղեցւոյ մանկանց եւ գրոց ուսումնականաց...»: Ահա այս «գրոց» մեջ է եղել նաև «Հաւաքումն մեկնութեան քերականի» 1291 թվականին ավարտված գործը, որից, ինչպես նշում է Ա. Սրապյանը, ավելի ուշ ընդօրինակել է «Երջանիկ եւ ճգնաւոր բաբունին Ահարոն»: Ընդ որում, Ա. Սրապյանը նաև նշում է. «Հետագայում, ինչպես պարզեցինք, Երզնկացու Քերականության մեզ հասած բոլոր ձեռագրերի (ձեռ. 2329, 2325, 2296, 2380) համեմատությունից, հեղինակը վերանայել է իր աշխատությունը, կատարել է որոշ փոփոխություններ եւ հաւելումներ», այդ թվում՝ գրելով 1289-1293 թվականների մասին իր նշանավոր հիշատակարանը (տե՛ս անդ):*

[11] *Տե՛ս* Է. Բաղդասարյան, *Դավանաբանական խնդիրներ արծարծող միջնադարյան մի ուշագրավ բնագիր.- «Էջմիածին», 1994/Բ-Գ., էջ 49-55:* Յովհաննէս Երզնկացի, *Յաւուր ծննդեան եւ մկրտութեան Քրիստոսի, բնագիրը և առաջաբանը Ա. Սրապյանի,* Յովհաննէս Երզնկա-

շնորհիվ առավել ակնհայտ դարձավ միջնադարի մեր մեծագույն մտածողներից մեկի արձակ երկերի ամբողջական հրատարակության անհրաժեշտությունը: Խնդիրն այն է, որ Հովհաննես Երզնկացուց մեզ են հասել հարյուրի չափ արձակ գործեր, որոնց մեջ գերակշռում են ճառերն ու քարոզները: Սրանք պարունակում են աստվածաբանության, հայոց երկրի ու եկեղեցու պատմության, դավանանքի, հոգևոր ու աշխարհիկ ծեսերի, սովորութային իրավունքի, ինչպես և գիտության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ բազմաբնույթ ու համամարդկային հետաքրքրություն ներկայացնող արժեքներ, որոնք, ինչպես նշվեց, անցյալ ժամանակներում անհնար էր լիովին ներկայացնել հայ և միջազգային հանրությանը: Մինչդեռ առավելապես հենց այդ երկերում են բացահայտվում մեծ մտածողի անսահման նվիրումը հարազատ ժողովրդի ազգապահպանման, մշակույթի զարգացման գործին, եկեղեցական, պետական-քաղաքական գործչի խորը գիտելիքները գիտության տարբեր բնագավառներում: Այդ բացը լրացնելու նպատակով Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի առջև խնդիր դրվեց պատրաստել Երզնկացու ճառերի ու քարոզների ամբողջական հրատարակությունը:

Առիթը ավելի քան նպաստավոր էր. մոտենում էր Երզնկացու ծննդյան 750-ամյակը, որ պետք էր նշվեր 1983 թ.՝ միջազգային մակարդակով: Ցավոք, աննպաստ պայմանների հետևանքով այն տեղի չունեցավ: Նոր ժամանակներում վրա հասած դժվարությունները ևս երկար ժամանակով ի չիք դարձրին վերոհիշյալ բնագրերի հրատարակությունը, թեև մինչ այդ Արմենուհի Տեր-Սրապյանի և մեր ջանքերով գրեթե ամբողջությամբ պատրաստված էին հրատարակվելիք երկերի համեմատական բնագրերի նախնական տարբերակները: Տարաբախտաբար, 2000 թ. իր մահկանացուն կնքեց բազմավաստակ գիտնական Արմենուհի Տեր-Սրապյանը՝ մեր ուսերին թողնելով այդ ծանր գործի ամբողջացումը:

Ա. Տեր-Սրապյանը դեռևս 1993 թ. Հովհաննես Պլուզ Երզնկացուն նվիրված իր երրորդ գրքում իրավացիորեն նշել է. «Շարադրանքում աշխատել ենք հնարավորին չափ խոսք տալ մեծ գիտնականին և բանաստեղծին, նկատի ունենալով նրա արձակի բացառապես անտիպ լինելն ու հորինվածքի գեղարվեստականության բարձր մակարդակը՝ ի հաստատություն մեր տված գնահատականների»[12]:

Արդ, հրատարակության ներկայացնելով մեծ գիտնականի արձակի զգալի մասը՝ ճառերն ու քարոզները, նկատի առնելով նախորդ հեղինակների, ինչպես և նախկինում մեր կատարած ուսումնասիրություններից բազմաթիվ կրկնություններ կատարելու անխուսափելիությունը՝ նպատակահարմար

ցի, *Յաղագս միաբանութեան եղբարց, բնագիրը և առաջաբանը է. Բաղդասարյանի.- «Գանձասար» աստվածաբանական հանդես, Զ., Երևան, 1996, էջ 420-477,* Յովհաննէս Երզնկացի, *Ի ճխ. սաղմոսն, որ ասէ..., բնագիրը պատրաստեց Ա. Սրապյանը.- «Գանձասար» աստվածաբանական հանդես, է., Երևան, 2002, էջ 387-408 և այլն:*

[12] Ա. Երզնկացի Սրապյան, *Հովհաննես Երզնկացի-Պլուզ (կյանքն ու գործը), էջ 10:*

համարեցինք այս ծավալուն գործը չծանրաբեռնել ընդարձակ առաջաբանուսումնասիրությամբ: Միաժամանակ հրատարակվող հատորի ընթերցողներին Հովհաննես Երզնկացու մասին որոշակի իմացություններ տալու համար որոշեցինք համառոտ ակնարկով անդրադառնալ նրա ապրած ժամանակի, կյանքի ու գործունեության և թողած ժառանգության ամենաէական խնդիրներին՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ հենց հրատարակվելիք գործերը լավագույնս կխոսեն իրենց հեղինակի մասին:

Անկասկած, հրատարակվող հատորը նոր հարթության վրա կդնի Հովհաննես Պլուզ Երզնկացու գիտական ժառանգության գնահատականը ինչպես հայագիտության մեջ ընդհանրապես, այնպես էլ հայ և համաքրիստոնեական հայրաբանական գրականության ուսումնասիրության մեջ մասնավորապես: Միաժամանակ այն կլինի հուշակոթող՝ նվիրված Երզնկացու ժառանգության անխոնջ ուսումնասիրող, լուսահոգի Արմենուհի Երզնկացի Տեր-Սրապյանի պայծառ հիշատակին, որը մինչև իր կյանքի ավարտը բազում տքնությամբ աշխատել է սույն հատորի վրա:

ԲՆԱԳՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Երզնկացու ճառերի և քարոզների ներկա հատորը պատրաստելիս նախապատվությունը տվել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) Հ^մր^ 2173 ձեռագրին, որը պարունակում է բացառապես Հովհաննես Երզնկացու մատենագրությունը[13]: ԺԴ. դարում գրված սույն ձեռագրում առկա են Երզնկացու արձակի 37 ստեղծագործություններ, որոնք հիմնականում համեմատված են ԺԸ. դարում գրված ՄՄ Հ^մր^ 2854 և 2992 ժողովածուներում առկա ընդօրինակությունների հետ[14]:

ՄՄ Հ^մր^ 2173 ձեռագրում առկա այն ստեղծագործությունները, որոնք բացակայում են վերոհիշյալ երկու ժողովածուներում, համեմատված են գրչագիր այլ օրինակների, այդ թվում՝ Մխիթարյան միաբանության Վիեն-

---

[13] *Ինչպես հայտնի է Երզնկացին ոչ միայն «ի չորս եւ հինգ» վանքերում շինարարական գործունեություն է ծավալել՝ ամենուր ստեղծելով հոգևոր և աշխարհիկ բովանդակության ձեռագիր հավաքածուներ, այլև «Եւ է զոր իմով աշխատության բազում ժողովածոյս բանից եւ մտաց եւ ասացվածոց գրեալ ի գիրս հաւաքեցի»* (Տ. եպ. Պալյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, Վիեննա, 1963, էջ 56: Մանրամասն տե՛ս նաև* Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 27-29): Ամենայն հավանականությամբ Երզնկացին նույն կերպ է վարվել նաև իր ստեղծագործությունների հետ, ինչի արդասիքն է սույն բարձրարժեք ժողովածուն: Ենթադրում ենք, որ ձեռագրի գրիչն օգտվել է Երզնկացու կազմած ժողովածուից, և իրեն թույլ է տվել նյութերի մասնակի տեղափոխություն: Այսպես՝ Երզնկացին «Յաղագս աղաւնոյն միամտության» քարոզում հայտնում է, որ օձի խորագիտութեան մասին ոմն աշխատասեր վարդապետի կարդացած խրատի առիթով ինքն արդեն խոսել է և անցնում է աղավնու միամտությանը, սակայն ձեռագրում նյութերի դասավորությունը ճիշտ հակառակն է: Գրիչը օձի խորամանկության մասին քարոզը տեղադրել է աղավնու միամտության քարոզից հետո՝ կրկնելով Երզնկացու խոսքերը և ավելացնելով «...եւ ասա ըստ կարգի եդեալ եւ եղեւ ընդ պատշաճի» (ՄՄ 2173, 355ա):*

[14] *Օգտագործված ձեռագրերի՝ ստորև գրված ցանկում այս երեք (2173, 2854 և 2992) ձեռագրերի մէջ հրատարակվող բնագրերի էջահամարների նշանակումն ավելորդ ենք համարել, որովհետև ամեն բնագրի սկզբում դրանք արդեն նշված են:*

նայի մատենադարանում պահվողների հետ, ինչի մասին տեղեկություն կա յուրաքանչյուր երկից առաջ տրվող ծանոթության մեջ:

Ինչպես ՄՄ Հ^{մր} 2173 ձեռագրում եղած նյութերը, այնպես էլ այլ ձեռագրերում մեկից ավելի օրինակներով առկա ճառերն ու քարոզները, հրատարակվում են համեմատական բնագրերով[15], իհարկե բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ստեղծագործությունը մեզ է հասել եզակի օրինակով:

Սույն հատորում զետեղված երկասիրությունները հիմնականում հրատարակվում են առաջին անգամ՝ բացառելով մի քանիսի. այդ մասին դարձյալ տեղեկանք կա յուրաքանչյուր երկից առաջ դրված ծանոթագրության մեջ:

* * *

Հրատարակվող հատորում օգտագործված ձեռագրերը դասավորել ենք ըստ գրության ժամանակի, պայմանանշել հայոց այբուբենի տառերով: Պատկերը հետևյալն է.

Ա.- 2173. Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւնք, ԺԴ. դ., ստացող՝ Ստեփաննոս ռաբունի՞: 424+3 (կրկն.՝ 31, 283, 297) թերթ, թուղթ, 17x12. միասիւն, բոլորգիր, 27-29 տող[16].

Բ.-2329. Ժողովածու, Սուրբ Լուսաւորչի գերեզման, ՉԽ. - 1291 թ., ստացող՝ Ահարոն ռաբունի՝ Գրիգոր կոչեցեալ: 303 թերթ, թուղթ, 17x13. միասիւն, բոլորգիր, 20 տող: Բնագիր ԻԳ. 287բ-295ա (ՄՅ, է., էջ 953-8):

Գ. - 2174. Ժողովածու, ՉԾԸ. - 1309 թ.: 237 թերթ, թուղթ, 16,5x12. միասիւն, բոլորգիր, 20 տող: Բնագիր ԺԳ.՝ 1ա-10ա (գործածվծ՝ 4ա-10ա). ԺԳ. բնագրի ԻԴ. հատվածը ևս (ՄՅ, է. 299-302):

Դ. - 2187. Ժողովածու, ՉՂԵ. - 1346 թ., գրիչ՝ Թորոս Տարօնացի, ստացող՝ Մարտիրոս քհյ. Սանահնեցի: 193 թերթ (թ. 105-297), թուղթ, 15,7x11,7. միասիւն, բոլորգիր, 24 տող: Բնագիր Լ. 267ա-86ա (ՄՅ, է., էջ 361-6):

Ե. - 2189. Ժողովածու, ԸՃԽԳ. – 1394 թ., Թավրէզ, գրիչ՝ Գրիգոր, 442 թերթ, թուղթ, 14x9. միասիւն, բոլորգիր, 22-23 տող: Բնագիր ԺԳ.՝ 398բ-413ա (ՄՅ, է., էջ 371-80):

Զ.-848. Ժողովածու, ԺԴ. դար: 118 թերթ (թ. 37-154), թուղթ, 12,5×8,3. միասիւն, բոլորգիր 19-20 տող: Բնագիր ԻԴ.՝ 50բ-56ա[17]:

Է. - 2783. Ժողովածու, ՊԾԸ. - 1409 թ., գրիչ՝ Գրիգոր վրդ., Վարդան, ստացող՝ Ստեփանոս աբեղ. Շահուտեցի, Հոռոփսիմ, Աննա, Յովսէփ երէց: 264 թերթ, թուղթ, 23,6x16,3. երկսիւն, բոլորգիր, 32-36 տող: Բնագիր ԻԳ.՝

---

15 *Հովհաննես Պլուզ Երզնկացու մի շարք արձակ ստեղծագործություններ ամբողջությամբ կամ հատվածաբար առկա են տարբեր դարերում ընդօրինակված բազմաթիվ ձեռագիր մատյաններում:*

16 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. է., Ձեռագիրք 2101-2400, խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, «Նայիրի» հրատարակչութիւն, Երևան, 2012, էջ 293-9 (այսուհետև վերը, շարադրանքի մեջ՝ ՄՅ, է.):*

17 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., Կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթաբեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետեանի, Յանկերը կազմեց՝ Վ. Դևրիկեանը, Երևան, 2007, էջ 973-80 (այսուհետև վերը, շարադրանքի մեջ՝ ՄՅ, Գ.):*

4ա-7ա, Բնագիր ԻԴ.՝ 7ա-11ա:

Ը. - Մխիթարեան Վիեննայի ձեռ. 1299. Ոսկեփորիկ-ժողովածու, 1451 թ. կամ առաջ, ստացող՝ Ֆարխատին և Յովսէփ: 277 թերթ, թուղթ, 11,5x7,8. միասիւն, բոլորգիր, 20-21 տող: Բնագիր ԻԴ.՝ 158ա-181ա[18]:

Թ. - 573. ժողովածու, ԺԵ. դար, [Տաթեւ], գրիչ՝ Թումա վրդ. Կաֆայեցի (աշակերտ Մխիթարայ Տաթեւացւոյ): 483 թերթ, թուղթ, 11,4x13,5. միասիւն (լայնիին ուղղահայեաց), բոլորգիր, 27 տող: Բնագիր ԺԳ.՝ 268ա-74բ[19]:

Ժ. - 652. ժողովածու, ԺԷ. դար, գրիչ՝ Գրիգոր աբղյ., ստացող՝ Յակոբ եպս.: 132 թերթ, թուղթ, 20,5×13,7. միասիւն, բոլորգիր և նոտրգիր, 22-26 տող: Բնագիր ԻԳ.՝ 70բ-5բ (ՄՅ, Գ., էջ 201-4):

Լ. - 3527. ժողովածու, ԺՁ. դար, 108 թերթ (թ. 32-139), թուղթ, 18x13,5. միասիւն, նոտրգիր, 17 տող: Բնագիր ԺԳ.՝ 69ա-90բ:

Խ. - 567. Հակաճառութիւնք, ԺԷ. դար, գրիչ՝ Մովսէս քհյ.: 321 թերթ, թուղթ, 18x13,5. միասիւն, նոտրգիր, 23 տող: Բնագիր ԽԱ.՝ 5աբ: - ՄՅ, Ա., էջ 1295-1302 (ՄՅ, Բ., էջ 1295-1302):

Ծ. - 682. ժողովածու, ՌՃԻԸ.- 1679 թ., գրիչ՝ Սրապիոն վրդ.: 194 թերթ, թուղթ, 23x18. միասիւն, նոտրգիր, 31 տող: Բնագիր ԺԳ.՝ 38բ-42ա, Բնագիր ԼԹ.՝ 91ա-5ա (ՄՅ, Գ., էջ 311-6):

Կ. - 7032. ժողովածու, ԺԷ. դար, գրիչ՝ Ղազար, 261 թերթ, թուղթ, 14,3x9,8. միասիւն, բոլորգիր, 23 տող: Բնագիր ԻԷ.՝ 114բ-122ա: Բնագիր ԻԹ.՝ 122ա-129ա: Խ.՝ 114բ-122ա:

Ձ. - 2992. ժողովածու, ՌՁԾՁ. - 1756 թ., ստացող՝ Բարսեղ, 218 թերթ, թուղթ, 21,4x15,5. միասիւն (2ա-62ա, 201ա-215բ) երկսիւն (62բ-200), նոտրգիր, 28-29 տող:

Ղ. - Մխիթարեան Վիեննայի ձեռ. 29. Ոսկեփորիկ-ժողովածու, ՌՃՂԵ. - 1746 թ., Պոլիս, գրիչ, ծաղկող և կազմող՝ Ալէքսան երէց: 332 թերթ, թուղթ, 21x15,5. միասիւն, նոտրգիր, 22-25 տող: Բնագիր ԻԴ.՝ 136ա-9բ[20]:

Ճ. - 2854. ժողովածու, ԺԸ. դ., 270 թերթ, թուղթ, 32,3x21.երկսիւն, նոտրգիր, 38-62 տող:

Մ. - 610. ժողովածու, ԺԴ.դ.: 257 թերթ, թուղթ, 16×11,5. միասիւն, բոլորգիր, 22-25 տող: Բնագիր ԼԵ.՝ 94ա-102բ (ՄՅ, Գ., էջ 47-52):

Յ. - 6453. Հակաճառութիւնք, 1787 թ., էջմիածին, ստացող՝ Իսահակ վրդ.

---

[18] *Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, Կազմեց Հ. Համազասպ Ոսկեան՝ Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1963, էջ 930-932:*

[19] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., Կազմեցին՝* Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, *խմբագրութեամբ՝* Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Ջէյթունեանի, *Յանկերը* Վ. Դևրիկանի, *Երևան, 2004, էջ 1317-3680 (այսուհետև վերը, շարադրանքի մեջ՝ ՄՅ, Բ.):*

[20] *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց հ. Յակովբոս վ. Տաշեան՝ Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1895, էջ 163, 168:*

Գեղամացի: 224 թերթ, թուղթ, 22,5x16. միասիւն, նոտրգիր, 31 տող: Բնագիր ԽԱ.՝ 2աբ:

Տ. - Յովհաննէս Երզնկացի, Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսատրացն, որ ի նմա, և զհաստատութենէ երկրի... Տետրակ համառօտ եւ լի իմաստնախոհ բանիւ, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի, սակս սմանչելարուեստ արարչագործութեանցն Աստուծոյ և յաղագս թուոյ երկնից... Հրամանաւ և ծախիւ... տեառն Յովսեփայ Սրբազան արքեպիսկոպոսի Սանահնեցւոյ Երկայնաբազուկ Արդութեանց, յամի Տեառն 1792, յունիսի 22, ընդ հովանեաւ երկնահանգէտ Սուրբ Խաչ վանիցն, որ ի Նորն Նախիջեւան, Ժ., 73 (=83) էջ:

* * *

Բնագրերը պատրաստելիս կիրառվել են հետևյալ սկզբունքները.

1. Մեր բնագրերի հիմնական ձեռագրերում թե՛ փակ և թե՛ բաց վանկերում գերակշռում է «աւ» ձևը (ըստ մեր դիտումների՝ այդպես է հայ մատենագրության՝ ընդհուպ մինչև ԺԵ. դարի վերջի կարևոր գործերի մեջ), բայց երբեմն կա նաև «օ» գրությունը. միօրինակացնելով՝ սակավաթիվ «օ» գրերը ևս դարձրել ենք «աւ»:

2. Բառերի ընկալումը, որով նաև՝ ընթերցումը դժվարացնող ձևերի դեպքում՝ ձեռագրական «յողոյ» ձևը գրել ենք «յո[ւ]ոյ». նույն կերպ՝ բառամիջին, առավել ևս՝ բառավերջին «յ» գրի չգոյությունն անտեսել ենք՝ «հաին», «վկաութեան» կամ «բանա», ձևերը դարձնելով «հային», «վկայութեան», «բանայ»: Իսկ «սմայ, նայ, ծերայկոյտ, մեծայգոյն» ձևերի մեջ անտեսել և «յ»-ն չենք գրել:

3. Ձեռագրերի գաղափար օրինակներից բխող և տողադարձի հետևանք սակավադեպ ձևերը՝ «ստւերն, պատիրանացն» գրել ենք՝ ստուերն, պատուիրանացն:

4. Ընկալում-ընթերցումը չդժվարացնող ուղղագրական մնացեալ ձևերի, նաև՝ խոլերի ձայնեղացման կամ ձայնեղների խլացման դեպքերում շեղում-տատ(եր)ը գրել ենք ընդգծվ. «անխոնճ, խնծորենիք, ձերոյ*ա*, ընձային, փափա*կ*, մանգութենէ, յոքնատեսակ, անգման, ժառան*կ*որդ, պղնծիք, ընդրեալ, անծուկ, կա*ռ*կառեալ, *ն*ետրոպոլիտ, ա*ն*փոփեալ, աշտիճան, *ս*գենոյր» և այլն: Իսկ «ի» գրով ավարտվող բառերի սեռական-տրական հոլովների խոտոր ձևերը թողել ենք նույնությամբ՝ «եղբաւրորդոյն, բարոյն, կենդանոյն, տեղոյ, տարոջն» և այլն[21]:

5. Բոլոր հապավումները բացված են, հիմնականում սուրբգրային մեջբերումների ավարտի մասերի կրճատ գրությունները լրացված են փակագծերի՝ [ ] մեջ: Միօրինակության է բերված և/եւ գրությունը՝ նախընտրելով

[21] *Բոլոր բնագրերի հիմք ձեռագրերի ուղղագրական պատկերի այսօրինակ մշակում անելով, թվարկված ձևերին վերաբերող ընթերցումներ չենք նշանակել (այսպիսի ընթերցումներն իմաստային որևէ արժեք չունեն): Ջանց են առնվել նաև իմաստային տարբերություններ չտվող ետևառաջությունները:*

եւ-ը:

6. Ակնհայտ վրիպակներն ուղղել ենք առանց տողատակային նշումների: Հաճախադեպ երկնև գրությունները թողել ենք ՄՄ 2173 ձեռագրի ունեցած ձևով. օրինակ՝ ուղ**ե**ղ-ուղ**ի**ղ, սե**փհ**ական- սե**փ**ական և այլն:

7. Հանրահայտ՝ հեշտ ճանաչելի անունները գրել ենք ձեռագրական ձևերով. ասենք՝ «Սաղամոն»ը Սողոմոնն է, «Պիթագորաս»ը՝ Պիւթագորասը և այլն:

8. Գործածել ենք՝] (իմա՛ փոխարէն) և > (իմա՛ չիք) նշանները. միշտ գրված են նախ ձեռագրերի պայմանանիշերը, ապա ընթերցումը, հետո այս նշաններից մեկը, վերջում՝ հիմնաբառը. «Ձ՛ որոյ] այսորիկ». այսինքն՝ Ձ՛ ձեռագրերը բնագրի «այսորիկ» բառի փոխարեն ունեն «որոյ». կամ՝ «Ճ՛ > պտղալից». նշանակում է՝ Ճ՛ ձեռագիրը բնագրի «պտղալից» բառը չունի:

Ոչ միայն մեր, այլև Արմենուհի Երզնկացի Տեր-Սրապյանի անունից շնորհակալություն ենք հայտնում սույն հատորի ամբողջացմանը նպաստած անձանց. «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի տնօրեն Մեսրոպ քահանա Արամյանին, սուրբգրական վկայակոչումների հասցեները պարզելու և նշելու համար՝ Հակոբ Քյոսեյանին, սրբագրող Նաիրա Թամամյանին, բոլոր բնագրերը հիմնական ձեռագրերի հետ համեմատող և վերջնական տեսքի բերող Հասմիկ Իրիցյանին, համակարգչային շարվածք և ձևավորող՝ Անահիտ Խանզադյանին:

Էդվարդ Բաղդասարյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ

(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Զարմանալի, երբեմն էլ անիմանալի է հայ ժողովրդի և Հայաստանի հազարամյա պատմությունը: Եղել են պահեր, երբ թվում է, թե հերթական արհավիրքը պետք է իսպառ կործաներ երկիրը՝ ցամ ու ցրիվ անելով հայությանը: Սակայն անցել է արհավիրքը, և փյունիկի նման վերածնված ժողովուրդը իր մեջ ուժ է գտել շարունակելու իր դժվարին պատմության հերոսական ընթացքը:

Ծանր, հակասական վայրիվերումներով լի էր նաև Հովհաննես Պլուզ Երզնկացու ապրած ԺԳ. դարը: Որքան էլ կործանարար լինեին մինչև այդ սելջուկյան, ապա նաև մոնղոլական արշավանքները, և որքան էլ երկիրը քաղաքական առումով տարանջատված լիներ տարբեր իշխանությունների ներքո, ժողովուրդը չկորցրեց ոգու, ազգային պատկանելության և մշակույթի միասնականությունը: Երկու դեպքում էլ արշավանքների մակընթացությունից հետո Հայաստանի տարբեր վայրերում սկսվում է տնտեսական, մշակութային և քաղաքական որոշակի առաջընթաց: Դժվարին պայմաններում նման երևույթը թերևս կարելի է բացատրել մի շարք կարևոր հանգամանքներով, նաև նրանով, որ, հակառակ օտար տիրապետությունների, Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը, հատկապես քաղաքներում, շարունակում էին մնալ հայերը, որոնց միջոցով էր հիմնականում գոյատևում քաղաքային կյանքը, զարգանում առևտուրն ու արհեստագործությունը: Ավելին՝ հակառակ երկրի մասնատվածությանն ու օտար տիրապետություններին, գրեթե ամենուր առկա էին նաև հայկական ռազմական ուժեր, որոնք նոր նվաճողներից կամ իսլամական տարբեր ավատատերերի բախումներից իրենց բնակավայրերի պաշտպանության գործում հաճախ լուրջ դեր էին խաղում: Անգամ հայտնի են դեպքեր, երբ իսլամ կառավարիչները հայերին էին վստահում քաղաքների կարգուկանոնի պահպանությունը[22]: Այդ հանգամանքը, կարծում ենք, նշանակալի դեր ունեցավ ինչպես Զաքարյանների իշխանապետության, այնպես էլ Կիլիկիայի հայկական պետության ստեղծման հարցում:

---

[22] *Հայտնի է, որ Սելջուկյան մեծ սուլթանության տրոհումից հետո Անիում հաստատված Շահդատյանների տիրապետությունը մեծապես կախված էր Անիի ավագանու, երկրի սպարապետ Վահրամ Պահլավունու և նրան ենթակա հայկական բանակի բարեհաճությունից: Դանիշմանդյանների իշխանությունում Գոհարինյան իշխանական տան ներկայացուցիչները էմիրի զորապետներ էին, իսկ Խլաթում հայկական տարրը այնքան ազդեցիկ էր, որ թեկուզ կարճ ժամանակով իշխանության բերեց ազգությամբ հայ իշխանի: Վերջապես, անգամ Սեբաստիայում քաղաքի կարգ ու կանոնը պահպանող ոստիկանական ջոկատը («իկդիշներ») կազմված էր քրիստոնյաներից, որոնց հրամանատարը ևս հայ էր:*

Եթե Բյուզանդիայի անհեռատես քաղաքականության պատճառով Կիլիկիա և հարակից վայրեր աքսորված հայ խոշոր ավատատերերը Բյուզանդիային ենթակա տարածքներում ստեղծեցին մի շարք կիսանկախ իշխանություններ, և, ի վերջո, Կիլիկիայի հայկական թագավորությունը, ապա Հյուսիսային Հայաստանում, օգտվելով այն հանգամանքից, որ խաչակրաց արշավանքների շնորհիվ քրիստոնյա-իսլամ հակասությունների հիմնական բևեռը փոխադրվեց հարավ-արևմուտք, Զաքարյանների իշխանապետության ջանքերով ազատագրվեցին մի շարք շրջաններ, որոնց բնակչությունը, ի դեպ, մեծ աջակցություն էր ցուցաբերում և սիրով ընդունում Զաքարյաններին[23]:

Քաղաքական քիչ թե շատ ապահով դրությունն իրեն զգալ տվեց կյանքի բոլոր բնագավառներում: Ե՛վ Հայաստանի ազատագրված շրջաններում, և՛ Կիլիկյան թագավորությունում սկսում են վերականգնվել ու զարգանալ քաղաքները, որոնք իրենց բնական դիրքի և տնտեսության (առևտուր, արհեստագործություն) զարգացման շնորհիվ դառնում են տարանցիկ առևտրի կենտրոններ: Երկուստեք կառուցվում են բազմաթիվ նոր ամրոցներ, վանքեր ու եկեղեցիներ, վերականգնվում ավերվածները, որոնցից շատերը դարձյալ վերածվում են գիտության, արվեստի ու լուսավորության նշանավոր կենտրոնների:

Տարանջատված հայկական համայնքների փոխհարաբերությունների զարգացման հարցում հիմնական դերակատարությունը ինչպես անցյալում, այնպես էլ ԺԲ.-ԺԳ. դդ. պատկանում էր Հայ Առաքելական եկեղեցուն, որը միջին դարերում, փաստորեն, դարձել էր արևելյան եկեղեցիների առա-

---

[23] *Խնդիրն այն է, որ Հայկական Բագրատունյաց կենտրոնական թագավորական տան կործանումից հետո Վրաստանում հաստատված Բագրատունիների ճյուղը թեև սկսեց առաջնային դեր խաղալ և ստանձնեց հայ և վրացի ավատատերերի համախմբման գործը, որը Թ.-Ժ. դարերում կատարում էին հայ Բագրատունիները, սակայն ակներև է, որ մինչև Զաքարյանների հանդես գալը ամեն ինչ հարթ չէր ընթանում երկու ազգերի միջև: Հակառակ հայերի նկրտումների և դինաստիական ազգակցության՝ Բագրատունիների վրացական թևը հայ Բագրատունիների միացյալ թագավորության անկումից հետո հետևողականությամբ կործանում էր դեռևս գոյատևող հայկական մանր թագավորություններն ու իշխանությունները, ինչպես և, հետևելով Բյուզանդիայի անհեռատես քաղաքականությանը, իր հերթին հրահրում էր դավանաբանական խնդիրներ: Վրացական զորքերի արշավանքները Հայաստանի զանազան շրջաններում երբեմն ուղեկցվում էին ոչ միայն բնակչության նկատմամբ ոտնձգություններով, այլև եկեղեցիների ավերածությամբ և կողոպուտով: Կիրակոս Գանձակեցին Արտազի Ս. Թադեոս եպիսկոպոսանիստ եկեղեցու վերաշինության առթիվ նշում է, որ վանքը վաղուց ի վեր ավերակ էր «ի թուրքաց եւ ի հինից վրաց» (տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ* Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, *Երևան, 1963, էջ 311): Առավել խոսուն է այն դաժան վերաբերմունքը, որ դրսևորել է Վրաց Գևորգ Գ. թագավորը Անիի հայ բնակչության, ավագանու և անգամ բարձրաստիճան հոգևորականության նկատմամբ: Թերևս միայն Թամար թագուհու տիրակալության շրջանում Վրաստանում լիովին հասկացան, որ միայն հայկական ռազմական ուժերի օգնությամբ կարող են ոչ միայն պահպանել երկրի սահմանները, այլև նոր նվաճումներ կատարել:*

ջատարը և, հետևելով ազգային ավանդույթներին, շարունակում էր մնալ հայոց պետականության ջատագովն ու աջակիցը: Հակառակ Կիլիկիայի և Հայաստանի հոգևորականների միջև երբեմն տեղի ունեցող սուր բանավեճերի՝ հայոց եկեղեցին ոչ միայն պահպանեց ազգային միասնությունը, այլև առավել սերտացրեց կապը Մեծ Հայքի և Կիլիկիայի միջև, նպաստեց գիտնական վարդապետների ու նրանց աշակերտների հաճախակի փոխայցելություններին: Վերջին հանգամանքը մեծապես նպաստեց մշակութային կյանքի զարգացմանը, զգալիորեն ուժեղացրեց տարանջատված ժողովրդի հատվածների հետաքրքրությունը միմյանց ճակատագրերի նկատմամբ:

Պատահական չէ, որ հենց Կիլիկյան հայկական թագավորության և Զաքարյանների իշխանապետության հզորացման շրջանում եկեղեցու և ժողովրդի միասնության, ինչպես նաև գիտության ու մշակույթի զարգացման հարցերով լրջորեն զբաղվում էին ո՛չ միայն հոգևոր գործիչները, այլև աշխարհիկ տիրակալները:

Փաստորեն, ԺԳ. դարի սկզբներին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ թվում է՝ իրական էր դառնում անգամ հայկական երկու տերությունների՝ Կիլիկյան հայկական թագավորության և Զաքարյանների իշխանապետության միասնության հեռանկարը: Որ իսկապես կար նման հեռանկար, նկատելի է ոչ միայն այն հանգամանքով, որ Կիլիկյան տիրակալներն իրենց «Հայոց արքա» տիտղոսին հավելում են «Ամենայն հայոց արքա» տիտղոսը, այլև բուն Հայքի բնակչությունը Կիլիկյան թագավորության ստեղծումը դիտում էր հայոց պետականության վերականգնման արտահայտություն, և ամենուր թևածում էր հայ ժողովրդի միասնականության գաղափարը, որն արտահայտվում էր «մի՛ է եւ միակրօն ազգն Հայոց»[24] բանաձևով:

Սակայն իրավիճակը հիմնովին փոխվեց ԺԳ. դարի կեսերին, երբ սելջուկյան ավերիչ արշավանքներից ու ծանր տիրապետությունից հետո աստիճանաբար ուշքի եկող ողջ Մերձավոր Արևելքը ենթարկվեց նոր՝ առավել ծանր հարվածների՝ մոնղոլական արշավանքներին և տիրապետությանը:

Մոնղոլական արշավանքներն այնքան սրընթաց էին, որ ոչ մի տեղ չհաջողվեց լուրջ դիմադրություն ցույց տալ նրանց: Հասարակական զարգացման ստորին աստիճանում գտնվող մոնղոլները, ի տարբերություն սելջուկների, որոնք գրաված տարածքները բաժանում էին սեփական ավագանուն, չփոխեցին նվաճած երկրների հասարակական-քաղաքական կարգը, այլ աշխատում էին իրենց շահերին ծառայեցնել նրանց վարչական ապարատն ու զինական ուժերը: Այս իմաստով Հայաստանում վիճակը համեմատաբար բարվոք էր այն շրջաններում, որտեղ պահպանվել էին հայկական ավատատիրական տները, որոնք ևս թեև կրում էին ծանր հարկապահանջության ներքո և պարբերաբար ենթարկվում մոնղոլական նվաճողների

[24] Հովհաննես Երզնկա ցի Պլուզ, *Բանք չափաւ, էջ 150:*

ավերածությանն ու կողոպուտին, հետագայում հանձնվեցին բնիկ հայ իշխաններին: Վերջիններս, հարկատու դառնալով մոնղոլական խաներին, երկիրը կառավարելու համար «ինջու»-ի իրավունք էին ստանում: Իրավիճակը առավել ծանր էր այն շրջաններում, ուր իշխում էին սելջուկները: Ճիշտ է, սկզբում մոնղոլները, հեռու լինելով կրոնական մոլեռանդությունից, ծանր հալածանքների չէին ենթարկում ինչպես մահմեդականներին, այնպես էլ քրիստոնյաներին, փոխարենը հավասարապես դաժանությամբ էին վարվում և՛ քրիստոնեական, և՛ իսլամական այն տիրույթների հետ, որոնք զինված դիմադրություն էին ցույց տալիս իրենց: Սակայն, ինչպես նշվեց, հակառակ սելջուկների գրեթե երկու հարյուրամյա տիրապետությանը, Հայաստանի հատկապես քաղաքների բնակչության մեծ մասը շարունակում էին մնալ հայերը, որոնք էլ մոնղոլական վայրագությունների զոհ էին դառնում[25]:

Նման իրավիճակում գտնվող Հայաստանի քաղաքներից էր նաև Հովհաննես Պլուզ Երզնկացու հայրենի քաղաքը՝ Երզնկան: Մեծ Հայքի այս նշանավոր քաղաքը, որի մասին հիշատակում են Ագաթանգեղոսը, Կորյունը և Խորենացին, հնագույն ժամանակներից եղել է նշանավոր պաշտամունքային կենտրոն, որտեղ, դեռևս Տիգրան Մեծից սկսած, Հայոց թագավորները մեհյաններ էին կառուցում, երկրպագում կուռքերին և բազմաթիվ զոհեր մատուցում[26]:

Քաղաքը նշանավոր դարձավ նաև քրիստոնեության ընդունումից հետո:

---

[25] *Ի դեպ, այս խնդիրը կարոտ է հատուկ ուշադրության, քանզի քաղաքներում օտար բնակչության փոքրաթիվ լինելը, կարծում ենք, բացատրվում է նաև այն հանգամանքով, որ խաշնարած սելջուկյան ցեղերը և նրանց ավագանին առանձնապես չէին գայթակղվում քաղաքային կյանքով, որին նաև սովոր չէին:*

[26] *Հայաստանի և հայ ժողովրդի հազարամյակների պատմության ընթացքում երեք հիմնական «աշխարհներ» կան, որոնցից մեկը հարատև, մյուսները տևականորեն եղել են մեր ժողովրդի քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնական կենտրոնները՝ Այրարատը, Վասպուրականը և հայոց բուն բնաշխարհից հեռու ու մոտիկ Կիլիկիան: Բայց այս հսկա եռանկյունու մեջ և նրա շուրջը գտնվող հայկական հայրենիքի առանձին «աշխարհներ» և գավառներ հանգամանքների բերումով ոչ միայն տեղական նշանակության կենտրոններ են դառնում, այլև համազգային նշանակություն են ստանում: Այդ իմաստով շատ ուրույն ու նշանակալից է Եկեղյաց-Դարանաղյաց գավառը՝ իր հինավուրց Անի և Երզնկա կենտրոններով: Դեռևս հեթանոսական շրջանից նշանավոր հոգևոր կենտրոն և հայոց հանգուցյալ արքաների թաղման սրբատեղի դարձած այս գավառը քրիստոնեության ընդունումից հետո ևս չկորցրեց իր նշանակությունը: Այստեղ իր առաջին օրհնությունն է տվել Գրիգոր Լուսավորիչը, և այն հետագայում դարձել էր նրա ճնգության վայրն ու նրա հետնորդների հավիտենական հանգստավայրը: Հակառակ Բարձր Հայքի ծայրագավառ լինելուն (այն տևականորեն դուրս էր մնացել Հայոց պետականության սահմաններից)՝ այդ նշանավոր գավառը և Երզնկա քաղաքը երբեք չդադարեցին ապրել համազգային լիարժեք կյանքով՝ հայրենիքին տալով հոգևոր և աշխարհիկ նշանավոր գործիչներ՝ կաթողիկոսներ, իշխաններ և ականավոր գիտնական վարդապետներ: Ավելին՝ հայոց վերածնունդի վերջին՝ ԺԲ.-ԺԳ. դարերում Բարձր Հայքը դարձավ հոգևոր մշակութային կապող օղակ՝ բուն Հայքի և Կիլիկյան հայկական թագավորության միջև, հայրենիքին տալով գիտնական վարդապետների մի քանի սերունդներ, որոնք իրենց գործունեությունը ծավալեցին Հայաստանի և Կիլիկիայի բազմաթիվ բարձրակարգ վարդապետարաններում:*

Այդ մասին մի շարք ստեղծագործություններում թերևս լավագույնս ներբողել է հենց ինքը՝ Հովհաննես Պլուզ Երզնկացին՝ ոչ միայն նշելով, որ Գրիգոր Լուսավորիչն այնտեղ է կառուցել առաջին քրիստոնեական սրբարանը, այլև Երզնկա քաղաքը և նրա շուրջ եղած սրբավայրերը համարել է երկնային արարչագործության արգասիք՝ զուգահեռներ անցկացնելով Երուսաղեմի և շրջակա սրբավայրերի հետ:

Մոնղոլական արշավանքների նախօրեին Երզնկա քաղաքը և գավառը գտնվում էին Իկոնիայի սուլթանության կազմում, սակայն, 1243 թ. Զամանկատուկի ճակատամարտում մոնղոլներից պարտություն կրելով, սուլթանը իր արքունիքով ու զորաբանակով ճողոպրում է արևմուտք՝ ճակատագրի քմահաճույքին թողնելով քաղաքը, որի բնակչությունը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հզոր դիմադրություն է ցույց տալիս նոր նվաճողներին. «...եւ բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին»[27]: Անկարող լինելով երզնկացիների դիմադրությունը կոտրելու՝ մոնղոլները առաջ շարժվելով նախ գրավում են Կեսարիան և Սեբաստիան, ապա երկարատև պաշարումից հետո, այն էլ միայն խաբեությամբ, կարողանում են գրավել քաղաքը:

Ավերելով քաղաքի պաշտպանական ամրությունները և սրի մատնելով բնակչության մի մասին՝ մյուսներին գերեվարում են: Վերջնական կործանումից Երզնկան փրկվում է շնորհիվ մոնղոլական բանակում եղած հայերի, որոնք կոտորածից և գերությունից փրկում են իրենց բազմաթիվ ազգակիցների: Ի դեպ, Կիրակոս Գանձակեցու հաղորդումից պարզվում է, որ փրկության գործին մասնակցում են ոչ միայն «մեծամեծ իշխանքն՝ Աւագն եւ Շահնշահն, Վահրամ եւ որդի իւր Աղբուղայն, եւ խաչենեցիքն՝ Ջալալն Հասան, զօրքն իւր, եւ ազգականքն եւ Գրիգոր՝ Դօփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին», այլ նաև «իշխանքն եւ զօրք նոցին ըստ կարի իւեանց: Եւ այս եղեւ ի ՈՂԲ. (1243) թուականիս Հայոց»[28]:

Հետաքրքիր է, որ մեծ դժվարությամբ քաղաքը նվաճելուց և այնտեղ ոստիկան կառավարիչ՝ «շահնայ» կամ «շահնէ» թողնելուց հետո մոնղոլները, սկզբում հետևելով իրենց որդեգրած քաղաքականությանը, 1248 թ. այն հանձնում են նախկին սյուզերենին՝ իրենց իսկ օգնությամբ Իկոնիայի սուլթան հռչակված Ռուքն էդ Դինին: Սակայն խաղաղությունը երկար չի տևում: Կարճ ժամանակ անց նույն սուլթանը ապահովության համար իր մորը և կանանոցը հանձնում է Կիլիկյան Հայոց արքա Հեթում Ա.-ի պաշտպանությանը, ինչը ենթադրում է, որ նրա հարաբերությունները մոնղոլների հետ դարձյալ սրված էին[29]: Եվ իրոք, 1256 թ. Կիլիկյան Հայոց արքա Հեթումի հետ

---

[27] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, էջ 283:*

[28] *Անդ, էջ 284:*

[29] *Ինչպես հայտնի է, մոնղոլները Կիլիկյան հայկական թագավորության հետ դաշինք կնքելու պայման են դնում՝ սուլթանի կանանոցը և մորը իրենց հանձնելը: Արքայեղբայր, պատմիչ Սմբատ Գունդստաբլը վկայում է, թե ինչ ծանր տվայտանքների մեջ ընկավ Կիլիկյան արքու-*

դաշնակցած մոնղոլները երկրորդ անգամ նվաճեցին Երզնկան, և այս անգամ քաղաքի ու գավառի իշխանությունը ժառանգական կառավարման հանձնեցին տեղի նշանավոր հայ իշխանական տներից մեկին՝ Սարգիս արքեպիսկոպոս Մահրահսայի և նրա որդի Հովհաննես իշխանի գլխավորությամբ:

Կստահ կարելի է ենթադրել, որ, ինչպես Հայաստանում հաստատված մյուս իսլամական էմիրություններում, այնպես էլ Երզնկայում հայերը պահպանել էին ո՛չ միայն տնտեսական, մշակութային ներուժը, այլև այստեղ ևս, ինչպես Անիում, Խլաթում և Դանիշմանյան էմիրությունում, իսլամական իշխանությունների ներքո գոյատևում էին տեղական ավագանու ներկայացուցիչներ, որոնց և 1256 թ. հետո մոնղոլները հանձնեցին իշխանությունը[30]:

Միայն նման պայմաններում էր հնարավոր տնտեսական, մշակութային այն բուռն զարգացումը, որը տեղի ունեցավ Երզնկայում ազգային իշխանության վերականգնումից անմիջապես հետո: Թեև մեզ հայտնի չէ Սարգիս արքեպիսկոպոսի և նրա նախորդների ճշգրիտ տոհմաբանությունը, սակայն նրա համբավը և հեղինակությունն ինչպես մոնղոլական էլխանության, այնպես էլ բյուզանդական կայսրության արքունիքներում ենթադրել են տալիս, որ նա սերում էր նշանավոր իշխանական այն տներից, որոնք օտար տիրապետության ներքո իրենց տիրույթները տրամադրում էին եկեղեցուն՝ դառնալով պարոնտերեր: Իմիջիայլոց, դա է վկայում և այն, որ արքեպիսկոպոս Սարգիսը նախապես եղել է ամուսնացած աշխարհական անձնավորություն, և նրա որդիներից հենց Հովհաննեսը հռչակվել է Երզնկայի իշխան, որը մտերմիկ հարաբերություններ է ունեցել Հովհաննես Պլուզի հետ և մեծապես օժանդակել նրան:

Ամենասեղմ գծերով արտահայտված՝ այսպիսին էր իրավիճակը Երզնկայում, երբ հանդես է գալիս ականավոր մատենագիր, գիտնական, բանաստեղծ Հովհաննես Պլուզ Երզնկացին:

Հովհաննես Երզնկացին ծնվել է հավանաբար 1230 թվականին և արյու-

նիքը և անձամբ Հայոց արքան՝ հայտարարելով, թե իր համար ավելի տանելի կլիներ, եթե մոնղոլներն իբրև պատանդ իր որդիներին պահանջեին: Սակայն հայրենասեր ու խիզախ արքան, որ չխորշեց իր անձը ահավոր վտանգների ենթարկելուց հանուն Հայաստանի, Կիլիկյան հայկական թագավորության և ընդհանրապես քրիստոնյաների փրկության, մեկնեց Մոնղոլիա՝ մեծ խանի հետ բանակցությունների և, հակառակ ծանր մտատանջության, ստիպված եղավ կատարել մոնղոլների պահանջը և թշնամական տարածքով Կիլիկիայից անցավ Հայաստան: Տե՛ս Յ. Քիւրտեան, *Երիգա և եկեղեաց գաւառ, Ա., Վենետիկ, Ս. Ղազար, 1953, էջ 114-115, ուր մեջբերված է ասորի պատմիչ Աբուլ Ֆարաջի զրույցը Երզնկայում Հեթում Ա.-ի հետ պատահած միջադեպի մասին:*

30 *Այս փաստը ևս գալիս է հաստատելու Հեթում պատմիչի և Գրիգոր Ակներցու այն հաղորդումները, թե Հեթումը Մանգու խանի հետ բանակցություններում հետապնդել է ոչ միայն Կիլիկիայի անվտանգությունը ապահովելու, այլև համահայկական, ավելին, համաքրիստոնեական շահերը պաշտպանելու խնդիրները. տե՛ս* Է. Մ. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 16:*

նակցական կապ է ունեցել Սարգիս արքեպիսկոպոսի ազգատոհմի հետ[31]: Պետք է ենթադրել, որ հակառակ իր հաղորդման, թե հարազատների չկամության պատճառով կորցրել է ուսումնառության ու հոգևոր գործերին նվիրվելու լավագույն տարիները[32], այնուամենայնիվ մեծատաղանդ երիտասարդը շատ արագ է ետ բերել կորցրածը՝ փայլուն կրթություն ստանալով Երզնկայի Սուրբ Մինասի անապատում, ապա աշակերտելով ժամանակի նշանավոր վարդապետներից Վարդան Արևելցուն, որին հաճախ է իր գործերում մեծ սիրով ու երախտագիտությամբ հիշատակում: Թեև ճշգրիտ հայտնի չէ՝ երբ է ավարտել իր ուսումնառությունը, բայց այն փաստերը, որ 1266 թվականին Երզնկայում դեռևս սարկավագ Հովհաննեսը ճառընտիր է ընդօրինակել[33], իսկ երկու տարի անց՝ 1268 թվականին նոր կաթողիկոսի գահակալության առիթով հատուկ հիշատակվել է Երզնկացու վարդապետական աստիճան ստանալու հանգամանքը[34], խոսում են այն մասին, որ նա արդեն համընդհանուր ճանաչում ստացած անձնավորություն էր: Հենց այս շրջանից էլ սկսվում է Երզնկացու գիտական, հասարակական և մանկավարժական բուռն գործունեությունը:

1272 թվականին Երզնկայի Թիլ ավանում գտնվում են Ներսես Պարթև կաթողիկոսի նշխարները, ինչը հայ իրականության մեջ լայն արձագանք է ստանում: Մեծահամբավ Սարգիս արքեպիսկոպոսի և նրա որդի Հովհաննես իշխանի կողմից Երզնկացին հրավիրվում է ճառ կարդալու: Այդ փաստն իսկ և ճառի բովանդակությունը լավագույնս ապացուցում են հեղինակի բազմակողմանի, փայլուն գիտելիքների մասին: Մի փոքր անց նա սկսում է զբաղվել նաև իր կոթողական աշխատանքներից մեկի՝ Քերականության մեկնության վրա, որը սակայն հանգամանքների բերումով ավարտում է իր կյանքի վերջին տարիներին: Պատճառն այն էր, որ դարի 70-ական թվականների երկրորդ կեսից մեծահամբավ վարդապետը սկսում է իր քարոզչական շրջագայությունը Հայաստանի տարբեր վայրերում՝ Կիլիկիայում, Երուսաղեմում, հայաճոծ Տփղիսում և այլուր՝ ամենուր արժանանալով ամենաբարձր գնահատանքի և ընդունելության:

Տարաբախտաբար, 1276 թվականին տեղի և Խարբերդից եկած թուրքերի կողմից դավադրաբար սպանվում են Սարգիս արքեպիսկոպոսը, իշխան Հովհաննեսը և բազմաթիվ այլ երևելի անձինք, ինչը Երզնկացուն ստիպում է գնալ Կիլիկիա:

---

31 *Տե՛ս անդ, էջ 24-25:*

32 *Թերևս նման վիճակում ավելի ուշ հայտնվել է Երզնկացի մեկ այլ նշանավոր հեղինակ՝ Կոստանդինը, որը, հակառակ 15 տարի վանքում ուսանած լինելուն, ոմանց կողմից հալածվել է վարդապետի աշակերտած չլինելու, ասել է թե՝ հոգևոր կրթության պակասի պատճառով. տե՛ս* Ա. Սրապյան, *Կոստանդին Երզնկացի, Տաղեր, 1962, էջ 52, 187-188:*

33 *Տե՛ս* Յ. Քիւրտեան, *նշվ. աշխ., էջ 118:*

34 Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ, Բ., Երևան, 1956, էջ 145:*

Զափազանց հագեցած է նրա գործունեությունը հատկապես Կիլիկիայում, ուր նա եղել է մի քանի անգամ: Այստեղ Երզնկացին արժանանում է Լևոն Գ. արքայի և Հակոբ Ա. Կլայեցի կաթողիկոսի ջերմ վերաբերմունքին ու հովանավորությանը: Կաթողիկոսի առաջարկով քերականություն է դասավանդում Կիլիկիայի նշանավոր վանքերում: Գրում է նաև իր նշանավոր «Խրատ հասարակացի» համառոտ տարբերակը և այն հղում հայկական բոլոր թեմերին՝ ո՛չ միայն իր անունից, այլև «Հրամանաւն կաթողիկոսի, որոյ այժմ յաթոռ սրբոյն Գրիգորի»[35]: Այստեղ Երզնկացին հեղինակում է բազմաթիվ ճառեր ու քարոզներ, որոնք կարդացվում են արքունիքում, կաթողիկոսարանում և Կիլիկիայի նշանավոր վանքերում: Կիլիկիայում են կարդացվել այնպիսի նշանավոր ճառեր ու քարոզներ, ինչպիսիք են «Ի ՃԽ. սաղմոսն... ասացեալ յատեանն Դրազարկոյն», «...Ի տօնի ծննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի, ասացեալ ի թագաւորանիստ քաղաքին ի Սիս, յատեան տօնախմբութեան», «...Ի բանն մարգարէին Դաւթի՝ Սքանչելի եղեւ գիտութիւն քո յիս, յԱնավարգա խոսեցեալ», ինչպես և իր ամենանշանավոր ճառերից մեկը՝ «Նորին Յովհաննէս վարդապետի ասացեալ ի բանն առաքելոյ, որ ասէ՝ «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կացցէ. յաւուրն յորում օրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում եւ Թորոս, եւ այլ մանկունք իշխանաց, եւ այլք յարքունական սպասաւորացն», որտեղ, ինչպես և իր մի շարք այլ գործերում, նա շարադրում է Կիլիկիայի հայկական թագավորության և առանձին հայկական իշխանությունների ամրապնդման վերաբերմամբ իր հայացքները: Ըստ Երզնկացու՝ երկիրը, հասարակությունը կարող են զարգանալ և գոյատևել միայն այն դեպքում, երբ թագավորը կամ իշխանը հանդես են բերում բարձր բարոյական հատկանիշներ, արդարությամբ են վարվում իրենց ենթակաների հետ: Նա համոզված է, որ երկրի, հասարակության զարգացման համար կարևորագույն պայմաններից է գիտության և լուսավորության տարածումը՝ պահանջելով իշխողներից հոգատար լինել ենթակաների ո՛չ միայն նյութական, այլև հոգևոր, բարոյական և կրթական կարիքների նկատմամբ:

Անկասկած, Կիլիկիայում նա այն փնտրված անձն էր, որն իր մեծ հեղինակությամբ համապատասխանում էր Լևոն Գ. արքայի և Հակոբ Ա. Կլայեցի կաթողիկոսի կողմից իրականացվող քաղաքականությանը, որը նպատակ ուներ առավել սերտացնելու Հայաստանի և Կիլիկյան թագավորության հարաբերությունները ինչպես հոգևոր-կրոնական, այնպես էլ քաղաքական, և անգամ՝ ռազմական բնագավառներում[36]:

---

[35] *Տե՛ս* Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 143: Նախապես ենթադրել էինք, որ «Խրատ հասարակացի» ընդարձակ տարբերակը Երզնկացին գրել է 1280-ականների երկրորդ կեսին, սակայն նկատի առնելով, որ համառոտ խմբագրությունը պատրաստվել է ավելի ուշ, ենթադրում ենք, որ Երզնկացին այն (ընդարձակ տարբերակը) գրել է Երզնկայում և իր հետ տարել է Կիլիկիա. տե՛ս անդ, էջ 26:*

[36] *Նկատենք, որ հակառակ իր հոգևոր բարձր կոչմանը, Երզնկացուն մեծապես մտահոգել է նաև հայկական իշխանությունների ռազմական ուժերի խնդիրը: Նա ոչ միայն բուռն արձագանքում է Կիլիկիայում ստեղծվող ռազմական ուժերի համալրմանը, այլև Երզնկայի իշ-*

Հեռու լինելով հայրենի երկրամասից՝ Երզնկացին չէր դադարում ապրել նրա հոգսերով: Կիլիկիայում եղած ժամանակ լուր ստանալով Երզնկայի իշխանության վերահաստատման մասին՝ նա գրում է Սարգիս արքեպիսկոպոսի ժառանգներ Գրիգորիս իշխանին և Ներսես արքեպիսկոպոսին ուղղված նշանավոր նամակը՝ «Թուղթ առ իշխանս եկեղեաց գավառի», որում բազմաթիվ օգտակար խորհուրդներ է տալիս երիտասարդ իշխանավորներին[37]:

Անշուշտ, վերը նշված ուրախալի լուրն էր, որ ոգեշնչում է հայրենասեր գործչին հավանաբար 1277 թ. վերադառնալու հայրենիք, նեցուկ լինելու համար հայրենի գավառի վերաշինությանը: Եվ իրոք, գալով Երզնկա, Հովհաննես Երզնկացին գործուն մասնակցություն է ունենում հասարակության բարոյական առողջացմանն ու հայրենասիրական դաստիարակությանը: 1280 թվականին գրում է երիտասարդների և մանուկների ճիշտ դաստիարակությանը, եկեղեցու շուրջը նրանց համախմբմանը նվիրված մի շարք կանոնախրատական ստեղծագործություններ, որոնցում չափազանց արժեքավոր տեղեկություններ կան հայ աշխարհում դարավոր ավանդություններ ունեցող սովորութային կարգերի մասին: Հատկապես մեծ արժեք ունեն «Սահման եւ կանոնք միաբանութեան եղբարց...»[38], «Կրկին կանոնք եւ խրատք տղայահասակ մանկաց աշխարհականաց»[39] գործերը, որոնց մեջ անդրադարձ կա վաղնջական ժամանակներից եկող և քրիստոնեական շրջանում ինչ-ինչ փոփոխություններ կրած երիտասարդական կազմակերպությունների և նրանց ղեկավար մանկտավագների մասին: Նույն շրջանում Երզնկացին գրում է Երզնկայում գործող հոգևոր եղբայրությանն ուղղված խրատական թուղթը[40]: Հակիրճ, բայց բավական հետաքրքիր ստեղծագործություն է նաև Նոր տարվա գալստյան առթիվ Երզնկայի և գավառի բնակչությանն ուղղված օրհնության թուղթը, որտեղ հեղինակը հիացական խոսքերով է նկարագրում հայրենի քաղաքը և նրա բնակիչների բարեմասնությունները[41]:

խաններին գրած թղթում ցավ է հայտնում, որ հնարավորություն չունի ռազմական օգնություն տրամադրելու նրանց, «Վասն զի, թէ էր այժմ հնար զաւրաւք կամ գանձիւ շնորհաւորել զաստուածապարգեւդ իշխանութիւն ձեր՝ յոյժ ախորժի է, բայց զի բանի գոլով սպասաւոր՝ բանիւ շնորհաւորեմ եւ օժանդակեմ եւ տամ օգնութիւն փափագելի սիրելոյդ» (Յովհաննես Երզնկացի, *Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի.*- Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 205): Վերջապես՝ պատահական չեն Երզնկացու կողմից Ներսես Մեծ կաթողիկոսի ռազմական գործունեության հիշատակումը և գնահատականը:*

37 Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 204-219:*

38 *Անդ, էջ 220-228:*

39 *Անդ, էջ 221-239:*

40 Է. Բաղդասարյան, *Յովհաննէս Պլուզ-Երզնկացու «Յաղագս միաբանութեան եղբարց» խրատական թուղթը.– «Գանձասար», Զ., էջ 454-458, Յաղագս միաբանութեան եղբարց բանք սակաւք եւ պիտանիք, վկայութեամբ Գրոց Սրբոց, զորմէ թուղթ գրիցի սիրով եղբայրութեան յայնոցիկ, որք ցանկան փափագանաւք բանից իմաստութեանն.- անդ, էջ 459-472:*

41 *[Ամանորեայ օրհնութիւն եւ խրատք առ բնակիչսն Եկեղեաց գաւառի], բնագիրը պատրաստեց Է. Բաղդասարյանը.- «Գանձասար», Զ., էջ 473-477:*

Երկրորդ անգամ Երզնկացին Կիլիկիա է մեկնում 1281 թվականին, այնտեղից անցնում է Երուսաղեմ, ուր և Ստեփանոս Կոռիկոսցի նշանավոր վարդապետի խնդրանքով գրում է եկեղեցուն նվիրված իր սքանչելի «Յորդորակը»: Հավանաբար Սուրբ երկրում էլ հենց գրում է «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»-ը, որը, ինչպես հաստատում են Սեն Արևշատյանը և Սեդա Բարսումյան-Դադոյանը, արաբերենից քաղվածաբար կատարված թարգմանություն է[42]:

Նույն թվականին, վերադառնալով Կիլիկիա, նա կաթողիկոսի հրահանգով, որպես պատվիրակ մեկնում է Կարին՝ եկեղեցական կանոնական հրահանգներով: Հավանաբար հենց այս ուղևորության շրջանում է մեկնում հայահոծ Տփղիս, ուր ի թիվս այլ քարոզների, քաղաքի իշխան Ամեկի կառուցած կաթողիկե եկեղեցում մինչ այդ Ապլոց իշխանի խնդրանքով չափածո գրված թեմաներով տիեզերագիտական մեծ քարոզ է կարդում, որը հենց տեղում Ամեկի որդի Վախթանգ իշխանի և մեծատոհմիկ տեր Հովհաննես եպիսկոպոսի խնդրանքով գրի է առնում, ապա նաև նույն եպիսկոպոսի խնդրանքով գրում է «Տեառն Յոհանիսի բարձրատոհմի եւ մեծազարմ եպիսկոպոսի Դօփի թոռն կոչեցելոյ, առաքինազարդ եւ իմաստախոհ գլխո եկեղեցոյ Հարցումն բանից առ նուաստ Յոհան Եզնկաեցի եւ պատասխանիք ըստ թուոյ բանիցն հարցման» երկը[43]:

Եթե նկատի առնենք ճանապարհորդությունների դժվարություններն ու բազում վտանգները, ապա անհավատալի է թվում, թե ինչպես կարճ ժամանակում Երզնկացին հասցնում է լինել բազմաթիվ վայրերում: Որոշակի հայտնի է, որ նա մինչև 1283 թվականը Կիլիկիայում էր, որտեղ և, ինչպես ասվեց, արքունիքում արտասանում է «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է...» նշանավոր ճառը:

Ուշագրավ է այն, որ Հովհաննես Երզնկացին իր թողած հսկայական ժառանգության մեծ մասը ստեղծել է հասարակական, քաղաքական կյանքի բուռն իրադարձությունների մթնոլորտում, որոնց գործուն մասնակիցն է եղել հաճախ նաև ինքը:

Համընդհանուր ճանաչման հասած ականավոր գիտնականն ու բանաստեղծը միայն ութսունական թվականների վերջին ոչ այնքան ծերությունից, որքան առողջական վիճակից նեղված, որոշում է քաշվել վանք և լիովին նվիրվել գիտամանկավարժական գործունեության՝ նախընտրելով իր պատանեկության տարիների ուսումնառության՝ Լուսավորչի լեռներում գտնվող

---

[42] *Տե՛ս* Յովհաննէս Երզնկացի, *Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք («Ռասաիլ Իխվան ալ-Սաֆա»), հրապարակումը, առաջաբանը և բառարանը Ս. Արևշատյանի, Երևան, 2009, էջ 7,* Ս. Բարսումեան-Դադոյեան, *Յովհաննէս Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը և իմաստասիրական արձակը իսլամական աղբիւրներու լոյսին տակ, Պէյրութ, 1991, էջ 288:*

[43] *ՄՄ ձեռագիր Հմր 644, 78բ-84ա (ԺԴ-ԺԵ. դդ.). տե՛ս նաև Արմենուհի Երզնկացի Տէր-Սրապյան, Հովհաննես Երզնկացի-Պլուզ, էջ 43, 219:*

Ս. Մինասի անապատը: Երզնկացու այստեղ ծավալած գործունեությունն ապշեցնում է իր արդյունավետությամբ: Թվում է, թե իր հոգևոր-գիտական, հասարակական-քաղաքական գործունեությունից հոգնած մեծ վարդապետը, առանձնանալով վանքում, պետք է զբաղվեր վանական կյանքին հատուկ հոգևոր ծիսական գործունեությամբ: Սակայն, իր իսկ խոստովանությամբ, այստեղ ևս ծավալում է բուռն գիտական և մանկավարժական գործունեություն: Նա 1291 թ. ավարտին է հասցնում դեռևս Հակոբ Կլայեցի կաթողիկոսի խնդրանքով տարիներ առաջ ձեռնարկած իր նշանավոր «Մեկնութիւն քերականի»ն, որը համարում է վանական կյանքի առաջին պտուղը և որում ի մի է բերում մինչ այդ քերականության բնագավառում եղած գրեթե բոլոր հայ հեղինակների գործերը, նշում նրանց արժանիքները և բացթողումները: Երզնկացու այս երկասիրությունը իսկապես կարևոր ներդրում էր այդ բնագավառում, որը երկար ժամանակ քերականական գիտելիքների ուսուցման ձեռնարկ էր հայ իրականության մեջ:

Վանական կյանքի, ինչպես և հետագա տարիների իր գործունեության մասին Երզնկացին չափազանց հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում: Պարզվում է, որ նա ողջ կյանքի ընթացքում ոչ միայն աշխարհիկ և հոգևոր գրքերի բազմաթիվ ժողովածուներ է հավաքել և իր իսկ կողմից վերաշինված չորս և հինգ վանքերում գրապահոցներ հիմնել՝ հուսալով «լինել ինձ ի տեղի գերեզմանի, եւ գրեանցն իմ մնալ անդ յաւգտութիւն այլոց, եւ ինձ՝ պատճառս յիշատակիս»[44], այլև հաճախ հենց ինքն է գրել ու բազմացրել այդ ձեռագրերը: Զարմանալի է, բայց անգամ վանական խցում փակված մեծ հայրենասերը չի դադարեցրել իր ազգապահպան գործունեությունը, գործուն մասնակցություն հանդես բերելով այս ու այնտեղ գոյատևող հայկական իշխանությունների և Կիլիկյան հայկական թագավորության ամրապնդման, հայ Առաքելական եկեղեցու դավանանքի և ազգային սովորույթների ու բարքերի անարատության գործում: Անշուշտ, միայն Երզնկացու մեծ հեղինակությունն էր թույլ տալիս նրան ո՛չ միայն կանոնախրատական թղթեր գրել հոգևոր միաբանություններին, այլև զանազան իշխանավորների և անգամ Կիլիկյան արքայազուններին ու գահակալին՝ հորդորելով և պահանջելով նրանցից լինել ազնիվ ու արդարամիտ, հարգել օրենքն ու օրինականությունը: Ընդ որում, էական չէ, թե կարևոր իրադարձությունների ո՛ր պահին որտե՛ղ է գտնվել Երզնկացին՝ հայրենի Երզնկայո՞ւմ, Կիլիկիայո՞ւմ, Երուսաղեմո՞ւմ, թե՞ այլուր: Վերը նշվեց, որ Կիլիկիայում գտնված ժամանակ նա անմիջապես արձագանքել է Սարգիս արքեպիսկոպոսի և նրա որդի Հովհաննես իշխանի եղերական մահից հետո Երզնկայում հայկական իշխանության վերահաստատմանը՝ ողջունելով Հովհաննես իշխանի որդիներ Ներսես արքեպիսկոպոսին և Գրիգորիս իշխանին:

[44] Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 28:*

Ավելի ուշ, լինելով Երզնկայում, նույնաբնույթ նամակ է հղել Լևոն Գ. արքայի որդիներին՝ նշելով, թե տեղյակ է «որպես քաջ հավատով եւ սիրով, արիական սրտի պնդությամբ, քրտամբ յոլով եւ վաստակաւ ջանայք վասն այդ երկրիդ բարության եւ հանգստեան եւ ի սէր ազատութեան սուրբ եկեղեցացդ»[45]:

Տարաբախտաբար, հակառակ իր ցանկության՝ կյանքի վերջին տարիները անցկացնելու հայրենի գավառի Լուսավորչի լեռների նշանավոր վանքերում և ամբողջապես նվիրվելու գիտական և մանկավարժական գործունեությանը, Երզնկացին 1291 թ. ստիպված է լինում այլևս անվերադարձ հեռանալ Երզնկայից[46]: Այդ մասին նա հաղորդում է 1292 թ. իր ընդօրինակած՝ Երբեմնի աշակերտակից Գևորգ Սկևռացու «Մեկնութիւն գործոց առաքելոց»[47] երկի և վերջապես 1293 թ. Կիլիկիայում վերջնական մշակման ենթարկած քերականության մեկնության[48] ավարտին գրված ընդարձակ հիշատակարաններում: Թեև հոգնած ու ծերացած, ինչպես հայրենի Երզնկային, այնպես էլ Կիլիկյան թագավորությանը բաժին ընկած բազմաթիվ աղետներից, մասնավորապես՝ եգիպտական մամլյուկների կողմից Հռոմկլայի կաթողիկոսարանի գրավումից ու ավերումից և իր հայրենակից Ստեփանոս Երզնկացի կաթողիկոսի գերեվարությունից վշտացած, Երզնկացին չի դադարեցնում ակտիվ գործունեությունը: 1293 թ. մեկ ուրիշ նշանավոր վարդապետ՝ Պլուզի ազգակից և աշակերտ Մովսես Երզնկացին, հայտնում է, որ 1293 թ. Պատարագի մեկնությունը գրել է ոչ միայն իր մտահոգությամբ, «այլ յորդորեալ առաւել յիմաստուն ռաբունապետն Յովհաննու, որ ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս»[49]: Խորհրդանշական է, որ Հովհաննես Երզնկացին անգամ իր մահվան օրը մեկ օրինակ Սաղմոսաց մեկնիչ է նվիրել Ակների վանքին[50]: Հայագիտության մեջ այս փաստը լիովին անտեսվել է, ոչ միայն

---

45 *Անդ, էջ 205, ծնթ.:*

46 *Անդ, էջ 28-29:*

47 *Տե՛ս* Տ. եպ. Պալյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, Վիեննա, 1963, էջ 56:*

48 Յովհաննէս Երզնկացի, *Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Լոս Անջելես, 1983, էջ 301-302:*

49 Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 31:*

50 Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1946, էջ 599-600: Տե՛ս նաև* Է. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 33: Երզնկացին թեև հաճախ է դժգոհում մարմնական տկարությունից, և իրոք էլ՝ անգամ միջնադարյան ըմբռնմամբ երկար չի ապրել, այդուհանդերձ նրա պայծառ միտքը և հզոր տաղանդը երբեք չեն խամրել: Ասվածի լավագույն ապացույցն են կյանքի վերջին տարիների նրա բուռն արձագանքները Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, ինչպես և այդ տարիներին գրած ստեղծագործությունները, որոնց մեջ հարկ է առանձնացնել 1288 թվականին Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվան նվիրված հիսաքանչ ճառը, «Յոհանիսի վարդապետի Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորիչն Հայոց մեծն Գրիգորիոս, ասացեալ յօր յիշատակի նորին, զոր տոնեն մեծաժողով հանդիսիւ ի Լեառն Սեպուհ (որ է տեղի ճգնութեան նորին եւ հանգստի), յօգնահաւաք հանդիսիւք*

այն պատճառով, որ Պլուզ Հովհաննեսի փոխարեն գրված է բարբառային տարբերակը՝ Ճլուզ Հովհաննես, այլև՝ առավելապես Հովհաննես Պլուզի և Հովհաննես Ծործորեցի վարդապետների շփոթության հետևանքով Պլուզի կյանքը երկարացվել է մինչև ԺԴ. դարի 30-ական թվականները: Հետաքրքիր է, որ այս բացահայտումից հետո Հովհաննես Պլուզին է վերադարձվում արդեն որերորդ անգամ Գրիգոր Լուսավորչին նվիրված մի ստեղծագործություն՝ «Լուսաւորչի ելքն ի Վիրապէն»: Այն հրատարակել է հայր Ղևոնդ Ալիշանը՝ մերժելով սակայն Պլուզին պատկանելը[51]:

քահանայական դասուց եւ վարդապետաց եւ ժողովաց հաւատացելոց բազմաց անդ գումարելոց» (Հովհաննես Երզնկացի Պլուզ, Բանք չափաւ, էջ 136, 374):

51 *Այս առիթով ևս անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Երզնկացիների շփոթման խնդրին, քանզի այդ հանգամանքը բազում անհարմարություններ է մատուցել նախորդ ուսումնասիրողներին, որոնք այնուամենայնիվ ինչ-ինչ անհամատեղելիություններ նկատել են Հովհաննես Պլուզի կենսագրության մեջ: Ջանտեսելով այդ փաստը՝ ականավոր հայագետ հայր Ալիշանը, որպեսզի ընդունելի դարձնի Երզնկացու իբրև թե միարարներին հարելը, նույնիսկ առակի օգնությամբ է փորձում արդարացնել Երզնկացուն՝ «Առակ է թէ իմաստուն մարդն իր կարծիքը կու փոխէ. եւ երբ հաւատոց վրայ ըլայ ճանչցուածն՝ ոչ միայն իմաստութիւն, այլեւ պարտք է այնպէս ընելն» (Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ., երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1921, էջ 427): Թող որ ճիշտ է մեծանուն հայագետի միտքը, սակայն այն դույզն-ինչ չի վերաբերում Հովհաննես Պլուզին, քանզի նա առիթ չուներ և չի փոխել իր կարծիքը, այլ պարզապես նույնացվել է այլ կերպ մտածող մեկ այլ նշանավոր Երզնկացի վարդապետի՝ Հովհաննես Ծործորեցու հետ: Վերջապես, եթե փորձում ենք ի մի բերել ոչ միայն Հովհաննես Երզնկացու, այլև Երզնկայի հոգևոր դպրոցի նշանավոր ներկայացուցիչների հայացքները՝ քրիստոնեական եկեղեցիների դավանաբանական տարաձայնությունների վերաբերյալ, ապա բացահայտվում է ուշագրավ փաստ: Լինելով Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի ջերմ պաշտպաններ՝ նրանք միաժամանակ հանդուրժողականություն են հանդես բերում քրիստոնեական քույր եկեղեցիների նկատմամբ: Դեռևս Ներսես Լամբրոնացին արևելյան վարդապետներին գրած իր պատասխան նամակում հետաքրքիր ակնարկ է անում Երզնկայի գավառի վերաբերյալ, որից կարելի է եզրակացնել, թե անգամ սելջուկյան ծանր տիրապետության շրջանում Երզնկան չէր կորցրել հայ հոգևոր-մշակութային կենտրոնի իր նշանակությունը և գործուն մասնակցություն էր բերում Արևելյան Հայաստանի և Կիլիկիայի հոգևոր գործիչների միջև ընթացող պայքարին՝ շարունակելով մեծ հեղինակություն վայելել երկուստեք (Յ. Տաշեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 333-334, նաև Յ. Քիւրտեան, նշվ. աշխ. էջ 119): Այս իմաստով առավել խոսուն է Հովհաննես Երզնկացու գործունեությունը: Ինչպես Կիլիկյան արքայազներին գրած նամակում է հայտնում Կիլիկիայից Արևելյան Հայաստան և մասնավորապես Սյունիք՝ Ստեփանոս Օրբելյանի մոտ առաքված պատվիրակ Ստեփանոս վարդապետը իր այցի ժամանակ գալիս է նաև Երզնկա և հանդիպում ունենում Երզնկայի վարդապետների ու անձամբ Հովհաննես վարդապետի հետ: Ինքը՝ Երզնկացին, ինչպես քանիցս նշվեց, լինելով Հայոց եկեղեցու դավանանքի ջերմ պաշտպան, միաժամանակ կոչ է անում վերջ տալու եկեղեցիների հակառակությանը, որն առավելապես վերաբերում էր ծիսական արարողություններին, գտնելով, որ այդ ամենը հետևանք է տարբեր երկրներում քրիստոնեության ընդունման ժամանակի և պատմական, անգամ նաև եղանակային հանգամանքների և որևէ չափով չի կարող առնչվել բուն հավատին առ Աստված: Բացահայտ կոչ անելով համախմբվելու և անհաշտ պայքար մղելու եկեղեցու հակառակորդների դեմ՝ միաժամանակ շեշտում է, որ դա չպետք է կատարվի այլադավան քրիստոնյաների նկատմամբ: Սակայն միայն իր հայացքներով լայնախոհ Հովհաննես Պլուզը չէր, որ այդպես էր մտածում: Երզնկայի մեկ այլ նշանավոր վարդապետ՝ Կիրակոս Երզնկացին, որն իր հայացքներով շատ ավելի խստահայաց պահ-*

Երկար ժամանակ, երբ հայտնի չէին Երզնկացու մահվան ճիշտ ժամանակը և վայրը, ուսումնասիրողները նրա գերեզմանը փնտրել են մերթ Երզնկայում, մերթ Հաղբատում: Ա. Տեր-Սրապյանը, մանրամասն քննության առնելով հարցը, եկել է այն համոզման, որ մեծ գիտնականը վախճանվել և թաղվել է Երզնկայում՝ նկատելով սակայն, որ նա նախապես չէր կարող թաղված լինել Ս. Նշան եկեղեցում, քանզի ինքը՝ Երզնկացին կանոնական օրենքներով արգելում էր նման թաղումները, և միայն ժամանակ անց է աճյունը վերաթաղվել եկեղեցում: Այս ճիշտ դիտողությանը ավելացնենք, որ Հովհաննես Պլուզ (նույնն է՝ Ճլուզ) Երզնկացի վարդապետը վախճանվել և նախապես թաղվել է Կիլիկիայի Ակների վանքում:

Ինչ վերաբերում է Երզնկայի Ս. Նշան եկեղեցում Գ. Սրվանձտյանի և հ. Ս. Էփրիկյանի նկարագրած՝ Երզնկացուն վերագրված շիրմաքարին, ապա եթե դա Երզնկացի նույնանուն այլ վարդապետների հետ շփոթելու հետևանք չէ, ապա մնում է ենթադրել, որ նրա աճյունը հետագայում իր հայրենակիցները բերել և թաղել են Երզնկայում. կամ էլ նկարագրվածը նրա հիշատակին նվիրված հուշաքար է: Նկատենք, որ սիրված գործիչների աճյունները կամ նրանց նշխարների մի մասը տեղափոխելու և վերաթաղելու սովորույթ Հայաստանում գոյություն ուներ՝ ինչպես մինչև ԺԳ. դար, այնպես էլ հետագայում[52]:

* * *

Վերադառնալով սույն հատորում հրատարակվող երկերին, որոնց գերակշիռ մասը հեղինակի ճառերն ու քարոզներն են, նկատենք, որ եթե խրատական գործերում առավելապես ընդգծվում են մեծ հայրենասերի անխոնջ գործունեությունը՝ Հայ Առաքելական սուրբ եկեղեցու դավանանքը՝ իբրև

պանողական էր ինչպես հավատի, այնպես էլ կենցաղային հարցերում, կոչ անելով պայքարելու այլադավանների դեմ, բացառում է պայքարը կաթողիկների դեմ, հայտարարելով, թե նրանք մեր ավագ եղբայրներն են: Կարծում ենք Կիրակոսի նման վերաբերմունքը թելադրված էր այն մտայնությամբ, որ դեռևս թևածում էր Հայաստանում, թե Հռոմը և եվրոպական երկրները պետք է փրկեն Հայաստանը մահմեդական տիրապետությունից:

[52] *Ի դեպ, Հովհաննես Շախաթունյանի վկայությամբ Հովհաննես Պլուզին վերագրվող մի հուշաքար կա նաև Հաղպատի վանքի զանգակատան մոտ: «Ի սոյն զանգակատան հարաւակողմն է տապանն Յոհաննես վարդապետի Երզնկացւոյ, որ մականուամբ Պլուզ կոչեցեալ է. բայց բնաւին գիր չէ ունեցեալ և աւանդութեամբ գիտէն, որպէս և Ղազար կաթողիկոսն յիշէ ի մէջ «Դրախտ ցանկալի» գրքոջն: Հասարակ փոքր քարէ, յորոյ վերա քանդակեալ գաւազան անձև և խաչ ինչ շրջապատեալ ի վերա գլխոյ իբր վեղարաձև և փորձիւ ջուր ածէն ի վերա սոյն գերեզմանի ի յերաշտ ժամանակն, վասն անձրև տեղալոյ, որպէս և մեք արարեալ այնպէս եկն անձրև, աղօթիւք սրբազան վարդապետին Յոհաննիսի Պլուզ կոչեցելոյ» (ՄՄ ձեռ. 4537, 14ա):*

Հետաքրքիրն այն է, որ ավանդությունը դարեր շարունակ պահպանել է հիշողությունն այն մասին, որ Հովհաննես Պլուզը եղել է խոշոր դիվանագետ և հենց Արևելյան Հայաստանում բազմաթիվ տիեզերագիտական քարոզներ է կարդացել: Բնականաբար հարց է առաջանում՝ արդյոք հենց այդ ավանդությամբ չի՞ բացատրվում Պլուզի մի նոր գերեզմանի ի հայտ գալը այնտեղ, ուր շատ քիչ հավանական է, ինչպես և իր բուն հայրենիքում՝ Երզնկայում: Կասկածից վեր է, որ մի շարք նշանավոր վանքեր ցանկացել են մի մասունք ունենալ այդ հրաշագործ վարդապետից:

ազգապահպանության հիմնական կովան, անաղարտ պահպանելու ջանքերը, ապա ճառերում ու քարոզներում բացահայտվում են նշանավոր գիտնականի աստվածաբանական, իմացաբանական, բարոյաքաղաքական խորը գիտելիքները, որոնք ազգային և համամարդկային մշակութային մեծ արժեք ունեն: Երզնկացու ճառերն ու քարոզները առանձին արժեք ու նշանակություն են ստանում ոչ միայն հեղինակի բացառիկ տաղանդի, նյութի բազմակողմանի իմացության, ասածի ճշմարտացիության խորին համոզվածության, այլև քննարկվող նյութի նկատմամբ մեծ սիրո, ապրումի, ինչպես և հռետորական խոսքի բացառիկ ուժի շնորհիվ: Երզնկացու խոսքը, ինչպես նկատվել է, հաճախ ընդունում է բանաստեղծական շեշտեր, ինչը ո՛չ միայն առավել ընկալելի ու մատչելի է դարձնում քննարկվող նյութը, այլև ճառի կամ քարոզի պարբերաբար կրկնվող կիզակետերում ընդունում է այրող երանգներ, ինչն ընդունակ է ի հարկի, ինչպես ունկնդիրներին, այնպես էլ ընթերցողներին օժտելու անհողդողդ հավատով և վճռականությամբ:

Նույնիսկ ժամանակակից ընթերցողը, ավելին, անգամ ուսումնասիրողը չի կարող անհաղորդ մնալ Երզնկացու ապրումին, երբ նա նկարագրում է Աստծո Որդու ինքնազոհաբերման մանրամասները, կրած տառապանքներն ու նվաստացումները հանուն մարդու և նրա փրկության[53]:

Նույն սքանչելի պոռթկումն ունեն նաև Ստեփանոս Կոռիկոսցի վարդապետի խնդրանքով գրված՝ եկեղեցուն նվիրված հակիրճ հորդորակը[54] և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Երզնակցու բազմաթիվ ստեղծագործություններում՝ անկախ նրանց ձևից և բովանդակությունից, ընդգծված է դեռևս միջին դարերում ծայր առած այն տխուր փաստը, որ շատերը, չհանդուրժելով ծանր իրականությունը, թողնում էին հայրենիքը: Այդ մասին վարդապետը բացահայտ խոսում է ինչպես իր քարոզներում, այնպես էլ Ներսես Մեծին նվիրված ներբողում՝ կոչ անելով չլքել հայրենիքը:

Ինչպես և սպասելի էր, Երզնկացու արձակի համար թեև առաջնային աղբյուր են ծառայել Աստվածաշունչը և եկեղեցու նշանավոր հայրերի ստեղծագործությունները, այդուհանդերձ, նա քաջատեղյակ է նաև անտիկ շրջանի, ինչպես և իսլամական գիտության նվաճումներին, որոնցից ըստ հարկի հաճախ օգտվել է:

Ընդ որում, անկախ աղբյուրից, Երզնկացու մոտ առկա է մի ուշագրավ երևույթ: Նա իր աղբյուրներին հիմնականում դիմում է ոչ միայն տեսական ինչ-ինչ խնդիրներ լուծելու, այլև գործնական նպատակներով՝ պայմանավորված ժողովրդի, եկեղեցու, պետության, երբեմն նաև առանձին գավառի կամ քաղաքի ինչպես առօրյա, այնպես էլ տևական շահերով:

---

[53] *Տե՛ս աստ, բնագիր ԺԱ.՝ Նորին Յոհանէս Եզնկայեցոյ Ի մեծի ուրբաթին, ի խորհուրդ խաչելութեանն (ՄՄ ձեռ. 2173, էջ 131բ-148բ):*

[54] *Տե՛ս աստ, բնագիր ԺԲ. (ՄՄ ձեռ. 2173, էջ 148բ-150ա):*

Երզնկացու ճառերի ու քարոզների նշանակալի մասը սաղմոսների ճառային մեկնություններն են, որոնց մեջ հեղինակը, բնաբան ընդունելով սաղմոսի հիմնական իմաստը արտահայտող առաջին նախադասությունը, ամենայն խորությամբ վերլուծում ու մեկնաբանում է սաղմոսի ո՛չ միայն արտաքին, այլև ներքին իմաստները: Այս առիթով հարկ է նշել, որ, իսկապես, Սաղմոսարանն աստվածաշնչական գրքերի մեջ համարվել է ամենաբարդերից, քանզի միաժամանակ պարունակել է բազմաթիվ իմաստներ, ինչը և դժվարացրել է մեկնությունները: Ահա թե այդ խնդիրը ինչպես է բացատրում հայր Միքայել Չամչյանը. «Վեհապանծ վսեմութիւն սաղմոսաց կասեցոյց զիմաստունս ի մեկնելոյ նոսին, իսկ խորութիւն իմաստիցն յորդոր եղեւ իջանել ի տեսութիւն նոցին», ինչի պատճառով նրանք որոնք փորձեցին ողջ խորությամբ ուսումնասիրել Սաղմոսները, ի վերջո ստիպված եղան «զերեսսք» քերել նրանց իմաստը, «ըստ կարի մարդկային տկար մտաց բացատրելով զնոսին»[55]:

Անդրադառնալով հայ իրականության մեջ սաղմոսների մեկնությանը՝ Չամչյանը իրավամբ նշում է, որ առաջնությունը այդ բնագավառում պատկանում է Ներսես Լամբրոնացուն. «Եւ նա վստահացեալ ի Հոգին Սուրբ, ձեռն էարկ մեկնել ծայրէ ի ծայր»: Այնուհետև, հակիրճ գնահատական տալով նաև Վարդան Բարձրբերցու մեկնություններին, նշում է «բաց ի մեկնութեանց աստի արարելոց ի Լամբրոնացւոցն եւ ի Վարդանայ՝ զայլ մեկնութիւն սաղմոսաց ոչ եղեւ տեսանել յազգի մերում»[56]:

Ցավոք, մեզ հայտնի չէ, թէ Չամչյանին անծանո՞թ են եղել Երզնկացու՝ սաղմոսների ճառային մեկնությունները, թէ՞ նա այդ շարքում գիտակցված չի հիշատակել Երզնկացու անունը՝ նկատի առնելով, որ նա սաղմոսների ամբողջական մեկնություն չի գրել, այլ տարբեր առիթներով, բնաբան վերցնելով որևէ սաղմոսի հիմնական գաղափարը, այն անմիջականորեն առնչել է հայ իրականությանը հուզող որոշակի խնդիրների հետ: Հարկ է նշել, որ Երզնկացին ևս դժգոհում է, որ միշտ չէ, որ սաղմոսերգուները խորապես ըմբռնում են սաղմոսների ներքին իմաստը, թեև «ի մանկութենէ մինչեւ յաւագոյթ ի բերան առեալ երգեն»:

Ամեն դեպքում, կարծում ենք, որ հայ հոգևոր գրականության մեջ սաղմոսները «զերեսսք քերելու» մասին հայր Չամչյանի խիստ նկատողությունը Երզնկացու խորիմաստ, փայլուն մեկնություններին վերաբերել չի կարող:

---

[55] *Մեկնութիւն Սաղմոսաց, Յորինեալ ի Հ. Միքայէլ Չամչեանց..., հ. Ա., Վենետիկ, 1823, էջ 3:*
[56] *Անդ, էջ 6-8:*

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

Ա. ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԻ ՃԱՌԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճառի սկիզբը մի շքեղ ու յուրատեսակ ձոն է Դրազարկին՝ նրա անցյալ ու ներկա օրերի միաբանությանը եւ հայոց սրբատեղիներին նվիրված լավագույն ձոներից մեկն է: Հանրահայտ են Երզնկացու սերն ու նվիրվածությունը հայրենի գավառի՝ Երզնկայի սրբավայրերին: Այս չքնաղ ներբողը ոչ միայն նոր երանգ է Երզնկացու հարուստ ներկապնակում, այլեւ շատ ուշագրավ աղբյուր՝ հայոց վանքերի ու սրբատեղիների պատմությամբ զբաղվողների համար:

Սաղմոսում արծարծված խնդիրներին Երզնկացին տարբեր առիթներով հաճախ է անդրադառնում նաեւ իր այլ ստեղծագործություններում, որոնցում աստվածային արարչագործության բարձրագույն արարն է համարում բանական էակի՝ մարդու ստեղծումը: Ըստ նրա՝ Աստված ոչ միայն մարդու համար ստեղծեց երկիրն իր գեղեցիկ հորինվածքով եւ մարդուն՝ իբրեւ տիրական իշխանություն երկրի վրա, այլեւ հինգ զգայարաններ պարգեւեց նրան, որոնց շնորհիվ աշխարհը ճանաչելի դարձավ:

Մարդու միտքը, ըստ Երզնկացու, այնքան կատարյալ է, որ նա ի վիճակի է հասկանալու եւ բացատրելու ոչ միայն բնության, այլեւ աստվածային խորհուրդները:

Անդրադառնալով Աստծո կողմից մարդուն տրված մեծագույն պարգեւին՝ անձնիշխանությանը, Երզնկացին նոր իմաստ ու բովանդակություն է տալիս վերջինիս, արտահայտելով իր դարաշրջանի ըմբռնումները մարդ էակի ճակատագրի մասին: Եթե Սիրաքի խրատները քարոզում են՝ «Մի՛ խնդրեր ի Տեառնէ իշխանութիւն, եւ մի՛ ի թագաւորէ աթոռ փառաց: Մի՛ առ արդարս ունիր զանձն քո առաջի Տեառն, եւ առաջի թագաւորի մի՛ ճարտարեր» (Սիր. Է. 4-5. Գիրք Աստուածաշունչք, Վենետիկ, 1860, էջ 684), ապա Երզնկացին՝ ընդհակառակը, գտնում է, որ մարդն իրավունք ունի եւ պետք է հանդես բերի ձեռներեցություն՝ իր ճակատագիրը տնօրինելու խնդրում, եւ դրա հիմնական պայման է համարում իմաստությունը: Միայն իմաստությամբ մարդը կարող է տեր լինել իշխանության եւ ունեցվածքի: Ավելին, նա մարդկանց եւ դասային հարաբերությունները քարացած չի համարում եւ նախապատվությունը տալիս է ոչ թե մարդու ծագմանը, այլ անձնային արժանիքներին: Ընդունելով, որ աշխարհում ամեն ինչ շարժման եւ փոփոխման ենթակա է, եւ մարդուն, ինչպես ասվեց, համարելով Աստծո ամենակատարյալ ստեղծագործությունը միաժամանակ մեծ նմանություն է գտնում նրա եւ բնական երեւույթների (նաեւ՝ քաղաքի) միջեւ եւ մարդուն համարում է բնության բախտակիցը, այսինքն՝ նրա մոտ էլ ամեն ինչ (բացի հոգու անմահությունից) շարժման եւ փոփոխման մեջ է, այդ թվում եւ ճակատագիրը:

Ճխ. սաղմոսը երգվել է երեկոները եւ կոչվել է նաեւ երեկոյան սաղմոս[1]: Սակայն այստեղ խիստ էական է մի հանգամանք. վերը նշվեց Երզնկացու բարձր գնահատականը Դրազարկի հոգեւոր միաբանությանը: Սակայն դրան անմիջապես հետեւում է նաեւ, մեղմ ասած, լուրջ բննադատությունը. «...զի յոլովք ի մանկութենէ մինչեւ յաւագոյթ ի բերան առեալ երգեն, եւ զմիտս իմաստիցն՝ որ ի սմա, ո՛չ կամին ուսանել...»:

Դժվարանում ենք որոշակի ասել, թե երբ է գրվել սույն մեկնությունը: Ինչպես հայտնի է, Երզնկացին Կիլիկիայում եղել է առնվազն երեք անգամ, երբ արդեն մեծ հոչակ էր վայելում եւ՛ Հայաստանում, եւ՛ Կիլիկյան հայկական թագավորությունում: Այնուամենայնիվ, հակված ենք ենթադրելու, որ նույնիսկ Երզնկացու պես մեծահամբավ գիտնական վարդապետը Դրազարկի պես նշանավոր մենաստանում կարող էր ուսուցողական ոճով քարոզ կարդալ Կիլիկիա իր նախավերջին այցելության ընթացքում՝ ԺԳ. դ. ութսունական թվականների առաջին կեսին՝ արժանացած լինելով Լեւոն Գ. արքայի և Հակոբ Ա. Կլայեցի կաթողիկոսի սիրուն ու հովանավորությանը:

Ճառը առաջին անգամ հրատարակել է Արմենուհի Տեր-Սրապյան Երզնկացին՝ երեք (ՄՄ 2173՝ Ա. 1ա-17ա, 2992՝ Ջ. 2ա-13բ, եւ 2854՝ Ճ. 97ա-101ա) ձեռագրերի համեմատությամբ, Մեսրոպ քահանա Արամյանի ներածականով:

Ներկա հրատարակությունը նախորդի վերատպությունն է՝ աննշան տեխնիկական փոփոխություններով, որոնք թելադրված են ողջ հատորի հրատարակության միասնականության սկզբունքով:

Ա.

|1ա| Ի ՃԽ. ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ ԱՍԷ «ՏԷ՛Ր, ԿԱՐԴԱՑԻ ԱՌ ՔԵԶ»՝ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՏԵԱՆՆ ԴՐԱԶԱՐԿՈՅՆ, Ի ՀՌՉԱԿԱՒՈՐ ԵՒ Ի ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻՆ, ԳՆԱԼՈՎ ԱՆՏԻ...[2]

Ա. 1 *Անզուգական եւ անբաղդատելի սիրոյն Աստուծոյ առ ազգս մարդկան վկայ են երկինք եւ երկիր՝ ամենայն մասամբք արարածոցս:* **2** *Նախ՝ զի այս ամենայն գեղեցիկ յաւրինուածք էից յաղագս մարդոյն եկին ի լինելութիւն եւ գործով ի ցոյցս տեսութեան, յորոյ վերայ եւ զտիրականն առ իշխանութիւն:* **3** *Եւ երկրորդ՝ զի ոչ միայն շնչաւ կենդանի է մարդն եւ զգայական մասամբք՝ ճանաչող զգալեացն, այլեւ մտաւոր եւ բանական*

---

[1] *Տե՛ս Հ. Մ. Զամչեան, Մեկնութիւն Սաղմոսաց, հ. Թ., Վենետիկ, 1821, էջ 328:*

[2] *Վերնագրի աւարտի «անտի տէ///» մնացորդը ենթադրաբար ընթերցելի է «անտի Տէրն» (Ա. Տեր-Սրապեան), «անտի ի Տէրն», «անդի ի Տեառն է» են (տե՛ս «Գանձասար», է., էջ 387, ծնթ.):*

եւ խոհականին ընտրութեամբ՝ իմաստասիրակ։ 4 *Վասն այսորիկ*[1] *եւ կրկնակի բնութեամբ բարգաւաճեալ ցնծայ յարարածս Աստուծոյ, վասն զի ետ մարդոյն զոմանս ի պէտս վայելչութեան, եւ է զորս ի պատճառս իմաստասիրութեան։* 5 *Եւ երրորդ՝ զի ստեղծ Արարիչն գործական մասունս ի կազմածի*[2] *մարմնոյս եւ ետ հնարս եւ հանճարս իմաստութեան բանական հոգւոյ, որովք յամենայն արարածոցս գեղեցկութիւն մի՛ վրիպեսցի զիւրն ընդունել շահաւորութիւն։* 6 *Ետ զգայարանք Ե. (5). առաջին*[3]*՝ աչք, երկրորդ՝ ակա|1բ|նջք, երրորդ՝ ճաշակելիք, որ է բերանն, եւ չորրորդ՝ հոտոտելիք, եւ հինգերորդ՝ շաւշափելիք, որ է ձեռն։* 7 *Իսկ իմաստութեան գտաւղ եւ բացատրաւղ՝ միտք եւ բան։* 8 *Այլ եւ զմեծահրաշ բարձրութիւնն*[4] *երկնի եւ զխորութիւն եւ զտարակացութեան երկայնութեան եւ լայնութեան երկրի եւ զամենայն իրողութիւնս աշխարհի համառաւտեալ հաւաքեաց Արարիչն ի Ե. (5).՝ ըստ զգայարանացս չափոյ։* 9 *Զի կամ գոյութիւն է շաւշափելի եւ թանձրատեսակ էութիւն, որ ձեռաւք շաւշափի. եւ կամ պատահմունք գունոց զանազան եւ գեղեցկանկար երանգաւք, որ աչաց տեսանի, եւ կամ հնչմունք ձայնից յաւդաւորական եւ անյաւդաւոր կենդանեաց, եւ անշունչ եւ անկենդան նիւթոց, որ ականջաց լսի. եւ կամ համոյ եւ ճաշակաց որակք, որ բերանով ճանաչին, եւ կամ բուրմունք հոտոց, որ ըռնկամք հոտոտին։* 10 *Եւ ոչ ինչ է յամենայն մասունս արարածոց, որ հնգիցս այսոցիկ արտաքոյ գտանի։*

Բ. 1 *Արդ, այսոքիկ բնաւորեալ են ի մեզ մասունք զգայարանաց, ընդ որս եւ ամենառատ բարեացն Աստուծոյ բխմունք առատապէս հոսին գետաւրէն գնացիւք՝ իբր ի ծով մեծ յանմարմին մտացն յընդարձակութիւն։* 2 *Եւ ի նմանէ դարձեալ յառաջ գան ներտրամադրական եւ արտաբերական բանիւ ի ձեռն ձայնական գործեաց՝ իբր զվտակս աղբերաց ընդ երակս երկրի եւ ընդ ծործորս քարանձաւաց եւ ընդ մէջս վիմաց, որովք արբեալ զուարճանան բանականաց եւ անբանիցն հոյլք կենդանեաց, եւ դալարացեալ ծաղկին տնկական եւ բուսական արմատոցն ազգ զան[ազան]*[5]*։* 3 |2ա| *Այսպէս եւ յիմացուած մտացն աղբիւրաբար բխմանէ բանից դալարացեալ ծաղկին բանականաց եւ անբանից մասունք հոգւոյն, եւ պտղաբերին տունկք եւ սերմանիք կենդանի այսմ անդաստանի։* 4 *Արդ, զի՞ ասէ իմաստունն. «Ոչ լցցի ակն տեսանելով, եւ ոչ ունկն՝ լսելով, եւ*

---

[1] *Զձ որոյ] այսորիկ*
[2] *Ձ կազմուած*
[3] *Ձ առաջիննն*
[4] *Զձ բարձրութիւն*
[5] *Զձ ազգաց] ազգ զանազան*

երկիր ոչ յագի ջրով, եւ հուր եւ ջուր ոչ երբեք ասեն շատ» (**հմմտ. Ժղվ. Ա. 8**)։ **5** *Վասն զի միշտ կարաւտ եմք բնութեամբ տեսանել աչաւք զգեղեցկութիւն զարդուց, որ յարարածս Աստուծոյ, եւ լսել ականջաւք զլուր սքանչելի գործոց Արարչին, եւ բանական երկիրս մեր ո՛չ յագի այսպիսի ջուրցս գիտութեան ոռոգմամբ, եւ ո՛չ հուր ցանկականին եւ մտաւորական տեսութեանց ասէ շատ, զի անյագ է յընդունելն միտք զգայարանաւք եւ անխոնճ ի խոկումն խորհրդոց եւ յարտաբերութիւն պատմողական բանից։*

Գ. 1 *Արդ, այսպիսի նախադրութիւն բանից մեզ առաջի եդան, վասն զի մի իմն է մեծագունիցն եւ յաշխարհի հռչակեցելոցն ձայնիւք եւ տենչալի տեսութիւն եւ ցանկալի աչաց, քաղցր եւ ախորժելի ճաշակ բերանոյ եւ անուշահոտ բուրումն ըստնգաց, հռչակաւորս այս տեսանի տեղի եւ յականաւոր յոլորտս տիեզերաց, մենաստանս մեծ մաքրակրաւն եւ մարմնապար հրեշտակաւք լցեալ ի բարձրութիւնս ծայրից լերանց, դրախտ Աստուծոյ՝ բանաւոր տնկովք զուարճացեալ արդարութեանն գործովք, ըստ նմանութեան արմաւենեացն ծաղկեալք, որոյ աճումն ի վեր կոյս եւ անհաս ձեռին մարդոյ, զ՝առ ի յետոյս մոռացեալք եւ |2բ| յառաջադէմսն նկրտեալք, ըստ Պաւղոսի, ուշ եդեալ բարձրընթաց գնացիւք ի կէտ կոչմանն Աստուծոյ, որ ի Քրիստոս* (**տե՛ս Փլպ. Գ. 13-14**)*, նեղ ճանապարհաւ յաւթեւանսն վերին ճեպեալք, ձիթենիք պտղալիցք ի տանն Աստուծոյ տնկեալք, եւ աւծմամբ Հոգւոյն Սրբոյ պարարտացեալք, լուսանիւթ պտղովք առաքինութեանցն լցեալք, նռնենիք պարարտապտուղք, ընդ կարծր կեղեւոյ կեղեքեալ եւ չարչարեալ մարմնոյ դեղնութեան ծածկեալք, բազմահոյլ հատից հոգեկան մասամբն բարեաց, հրագունակ Հոգւոյն որակաւք ներկեալք։* **2** *Խնծորենիք կարմրաբերք՝ ի փայտից անտառաց մարդկութեան միջոցէս բուսեալք, եղբաւրորդոյն գովեստիւ պատուեալք, որոյ իմաստունն յերգսն զհարսինն բան բարբառի. «Որպէս խնծոր ի փայտս անտառի՝ եղբաւրորդին իմ ի մէջ ուստերաց»* (**տե՛ս Երգ, Բ. 3**)։ **3** *Վարդք կարմրերփեանք ի սէրն Աստուծոյ վառեալք, մանուշակք մաքուրք, անուշահոտութեանն Քրիստոսի բուրիչք, շնորհալի շուշանք՝ ճգնողական վարուք ողջախոհացեալք, քրքումք քաջագաւրք կուսութեանն պատկառանաւք պարկեշտացեալք, յաղագս որոյ ցանկալի՛ է յոյժ եւ բաղձալի՛ ձայն համբաւոյ ձեր եւ զուարթարար տեսութիւն եւ ճաշակ ձերոյտ պտղոյ քաղցրութեան։* **4** *Վասն որոյ զառաքելականն բարբառիմ, զոր ի վերայ հոյակապ եւ հռչակաւոր քաղաքին մեծի Հռոմայ ի համբաւ հաւատոյ նոցա գոհանայր. «Գոհանամ զԱստուծոյ իմոյ, զի հաւատքն ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ»* (**Հռոմ. Ա. 8**)*. ըստ որում եւ ես գոհանամ, զի*

զոր ի լուր ականջաց |Յա| լսէի, եւ այժմ դէմ յանդիման աչաւք իմաւք տեսի եւ զքաղցր եղանակս ձայնից ձերոց յաւրհնութիւնն Աստուծոյ լուայ, եւ իբրեւ ի հոտ խնկոց անուշից ի նուէրս աղաւթից ձերոց զմայլեցայ։ 5 Վասն որոյ յաւժարի բերան իմ ի պատմել զիմաստութիւն, եւ խորհուրդ սրտի իմոյ՝ զհանճար հոգւոց ձեր հրատարակել եւ գրել գրչաւ լեզուի զերանական պատկեր գեղոյ կերպարանաց կենդանեացդ հոգւով։ 6 Եւ առնելով զայս ոչ իբր կարաւտ գոլով բանից, որոց գործքն են վկայք եւ վարք վեհագոյնք, այլ զի աւրէնք են, եւ այս աստուածային եւ ամենագեղեցիկ եւ մի ի տասանց բարեգործութեանցն թուեալք։ 7 Զի հարցնելով մարգարէին. «Տէ՛ր, ո՞վ կաց[ց]է ի խորանի քում» (Սղմս. ԺԴ. 1)՝ յիմանալին եւ յանճառականն։ 8 Եւ պատասխանէ նմա Հոգին. «Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն» (Սղմս. ԺԴ. 2). եւ ընդ այլսն ամենայն թուէ եւ զայս՝ զերկեղածս Տեառն փառաւորելով (հմմտ. Սղմս. ԺԴ. 4)։ 9 Արդ, առաջին այս իսկ է յոյս մեր, զի զեկեղածս Տեառն փառաւորելով մեր բանիւ, թերեւս արժանի եղիցուք կեալ ի խորանի նորա եւ ի սրբում նորա բնակել ի լերինն։ 10 Եւ երկրորդ՝ գովելի են բանիւ գեղեցիկքն, զի մի՛ նախատիցիմք, իբր ոչ ընտրողք զսուրբն եւ զանարատ յանսրբոյ եւ յարատաւորէ։ 11 Եւ երրորդ՝ զաւրէն սիրոյն մի՛[1] զընկենուլ երեւեսցուք զանվճարականն, եւ թէ ամենեցուն եմք պարտական սիրոյ, ապա կրկնակի պարտք են ի վերայ զԱստուծոյ սիրելիսն սիրական բանիւ ներբողել։ 12 Եւ չորրորդ՝ գովեստ յառաքինիսն[2] նախ առաջին յԱստուած[3] վերաբերի, երկրորդ՝ յառաքինութիւնն, երրորդ՝ յենթակայ նորին, յոմն՝ որպէս յառաջին պատ|Յբ|ճառ եւ ի միւսն՝ որպէս ի բարւոյ բարի երկրորդ, իսկ ի միւսն՝ որպէս ի սիրելի երկոցունց։ 13 Եւ հինգերորդ՝ որ է վերջին եւ մեծ, եւ հարկաւոր՝ եթէ ոչ զարժանիսն բանի պատմեսցուք, երկուց կողմանց զրկաւղս գտանիմք բազմաց այլոց եւ նախ մերոց անձանց. զնոսա՝ վասն ոչ ի ցուցմանէ բարոյն ի նոյնս եւ ի նմանս յորդորելոյ, իսկ զմեզ՝ յաղագս անշարժութեան եւ հեղգութեան առ աւգտակարագոյնսն, ուստի անշահութեանն է վրէժխնդրութիւն յասողէն՝ «Ծառա՛յ չար եւ վատ, ընդէ՞ր ոչ արկէր զարծաթդ ի մի սեղանաւորս» (հմմտ. Ղկ. ԺԹ. 22-23)։

Դ. 1 Արդ, յաղագս այսպիսի պատճառաց զընծայս բանից մերոց նուիրեսցուք աստուածարելոց եւ աստուածեղէն գանձիւք փարթամեցելոցդ եւ ճոխագունից, զի եւ երեւելեացն եւ մեծամեծաց եւ թագաւորական փառաւք պսակելոցն, որոց բնաբար եւ սեփհական է գանձուցն յոլովու-

[1] Զձ՛ զօրէ նա սիրոյն
[2] Զձ՛ յառաքինին
[3] Ճ՛ աստուած

թիւն, պատուական մարգարտացն եւ մեծագին եւ լուսանշոյլ քարանցն պայծառութիւն, սոփերականն ոսկի եւ ոսկեթել նկարագործական հանդերձիցն եւ արկանելեացն զգեստուց։ 2 Բայց ո՛չ ամաւթ համարի ոք այր տառապեալ յիւրոց քրտնաջան տաժանմանց եւ մշակութեան գործոյ երկու դանկաց եւ սակաւ լումայից չափ գնոջ ընծայել արքայաշուք պատուով փառաւորելոյն, ոչ յաւելուած ճոխացելոյն, այլ հնազանդութեան պարտուց հատուցումն եւ ի պառճառս սակաւ ընձային զիւրոյ անձինն պատմել զկարիս՝ յուսով գտանելոյ զողորմութիւն։ 3 Եւ կամ թէ ոք զմիոյ երկնի գեղեցկութիւն զխորանայարկ կամարին կայական հաստա|4ա|տութիւն, եւ որ ի նմա զարդ սքանչելի, կոյտք եւ կաճառք լուսատարր, եւ ճառագայթ արձակ դրից աստեղաց եւ լուսաւորին մեծի արեգականն, գերապայծառ ջահին երկնային շրջանին, եւ փոքու լուսաւորին լուսնոյ ստուերական գիշերոյն հանդարտածագ եւ արագընթաց լուսաւորին։ 4 Արդ, եթէ ոք զսոսա ներբողական գովեստից բանիւ պատմէ, ո՛չ առ ի լրումն պակասութեան նոցա եւ կամ իբր առ կարաւտս գովութեան զբանն առնիցէ, զի գեղ անձնաւորական լուսոյն իւրեանց եւ շարժումն ընթացիցն մոլորականաց եւ անմոլար գնդին բաւական է պատմել առանց բարբառոյ բանի ընդ ամենայն ծագս տիեզերաց զգովութիւն նոցա։ 5 Բայց կարաւտութիւն եւ բաղձանք առ այն է բնաւորել, որ զամենագեղեցիկսն գործով ախորժական ըղձիւ յաւժարի ներբողել բանիւ. եւ կամ թէ ոք զգեղեցիկ պատկեր կենդանւոյ բանական մարդոյ եւ զարքայական պատուով շքեղացելոյ նկարագրական դեղաւք եւ պէսպէս երանգաւք հնարի զնոյն ձեւ եւ զնմանութիւն պատկերի ի տախտակս նկարել, ոչ առ ի լրումն թերութեան կենդանոյն, այլ առ անծուկ սրտին բաղձանաց, զոր ունի ի փափակ եւ ի սէր կենդանոյն, հնարի գեղեցկափայլ դեղաւք ի նոյն ձեւ ի նմանութիւն ածել։ 6 Ըստ այսմ աւրինակաց եւ մերս լիցի ընծայումն բանից արքայաբնակ տաճարիս եւ թագաշնորհ արանց աստուածամերձից, գանձին ծածկելոյ յագարակի գտաւղք եւ ամենայն կենցաղականացս անցաւորի վաճառողք |4բ| եւ միոյ պատուական մարգարտին գնաւղք, որոց ստացուածք ոսկոյ՝ ուղեղ հաւատոյն հարստութիւն, եւ լուսանշոյլ քարինք՝ առաքինութեանցն պայծառութիւն, եւ գեղեցկութիւն զգեստուց՝ վեհագոյն վարուցն զարդարանք։ 7 Այսպէս եւ երկնային այսմ խորանիս՝ ի կենդանի հոգով լուսաւորաց զարդարեցելոց, յորում փայլեն աստեղք լուսագեղք՝ ի կենցաղական ծովուս առաջնորդք նաւով մարմնոյ ընթացողաց, որք եւ, ըստ քաղցր ճառագայթից արեգականն, ընդ երկիրս ծագեն՝ յերկրայնոցս ամենայնէ անաղտ մնալով, եւ ըստ նմանութեան լուսնին՝ միշտ աճողականք ի բարիս եւ նուա-

զեալք ի չարեաց, վերնական յուսոյն եւ արփիաւոր լուսոյն շաւղաց ընթացաւղք, որ ոչ նսեմական բանից մերոց կարաւտիք, այլ ձերովդ լուսոյ փայլմամբք փառս ամենիմաստ Արարչին նուիրեալ յաւժարիմք։ **8** *Եւ զբարեացն ամենայնի սկզբնատպի զիմաստուն եւ զկենդանի պատկերաց պատիւ ո՛չ միայն բանական, այլ եւ աստուածեղէն Հոգւովն կենդանականաւ շարժեալք, ո՛չ միայն պատկերեալք եւ կերպարանեալք, այլ եւ աւր ըստ աւրէ ի նոյն գեղեցկութիւն փառաց յաւելեալք։*

Ե. **1** *Արդ, այսպիսի մեծահանդէս տեղոյ եւ երկնաքաղաքացի ժողովոյ կամելով ընձայաբեր լինել մեր՝ եդաք առաջի զմարգարէական բանն Դաւթի, որ ամենայն երեկոյի երգեցեալ լինի, յորում ասէ. «Տէ՛ր, կարդացի առ քեզ, եւ լո՛ւր ինձ»* (**Սղմս. ճԽ. 1**)*։* **2** *Որ եւ նախ քան զմեկնութիւն առաջիկայ բանիս զայս պարտ է ասել, զի յոլովք ի մանգութենէ մինչեւ յաւագոյթ ի բերան |5ա| առեալ երգեն եւ զմիտս իմաստիցն, որ ի սմա, ոչ կամին ուսանել։* **3** *Զի թէ ոք ծարաւի յստակ ջրոյ հանդիպի, մի՞թէ ոչ յաւժարի լնուլ զցանկութիւն կամ մտանել ի ծաղկոցս եւ ի դրախտս ամենալի, եւ ո՞չ կամիցի վայելել ի մրգոցն կամ ի հոտոյն։* **4** *Իսկ մեք զիա՞րդ չիցեմք մեղադրելիք՝ կալ առընթեր գանձի ծածկելոյ, կամ որպէս քսակ լի ոսկով կրեմք կնքեալ եւ ոչ վայելեմք, այլ միայն զծանրութիւնն զգամք։* **5** *Այլ չէ պարտ այսմ այսպէս լինել, այլ զիւրաքանչիւրսն ի միտ առնուլ արժան է խորհրդով, որպէս եւ այս սաղմոս, զոր միշտ ամենայն երեկոյի երգեմք, քանզի են աստ զաւրութիւնք իմաստից, որ կարող են մաքրել, զոր ինչ զաւրն ամենայն կրեցաք ի մեզ կամայ եւ ակամայ, ոչ միայն վասն միոյ բանին, թէ՝ «պատարագ երեկոյին», այլ որպէս եւ ասէ. «Տէ՛ր, կարդացի...»։* **6** *Ըստ չորից յեղանակաց լինի կարդալն առ Աստուած։* **7** *Առաջին՝ զամենայն արարածս ի նա իբր ի գրի կարդալ, զի ի նմանէ են, եւ նա է պատճառ ամենայնի՝ յարացուցական, կատարական, գործաւորական, յատկական եւ տարրեղէն, եւ որ ըստ այսմ ամենայնի։* **8** *Վասն որոյ եւ ամենայն արարածովքս անուանեմք զնա ըստ երկուց պատճառաց. վասն զյարացոյցսն յինքեան ունելոյն զեղական արարածոցս ի գիտութիւն եւ ի կամս իւր, եւ վասն բաշխելոյն ի մեզ զզանազան եւ զյոքնաթիւ պարգեւսն։* **9** *Վասն որոյ անուանեմք զնա ի պարգեւաբաշխ պատճառէն եւ ի հեղլոյն յարարածս զամենայն բարիսն, որովք կարդամք զնա բարի եւ իմաստուն, ազնիւ, կենդանարար, եւ զամենայն որքան ի բարի պարգեւ|5բ|աց նորա անուանեմք*[1]*, եւ վասն այսորիկ ընդ այլ արարածս եւ զբանական բնութիւնս արարած Արարչին գեղեցկագոյն բնա-*

[1] *Զձ՛ պարգեւացն որ անուանեմք*

ւիցս ամենայն, ուստի եւ պարտական պտղոյ, իբր տունկ՝ տնկագործի։
10 *Եւ երկրորդ՝ կարդալն զիւր մեղսն խոստովանաւրէն, որով զլացաւ զբարեացն զպտուղ եւ զսկզբնատպին բարեացն կերպարան, կամ զոր ունէրն, եղծեալ տգեղացոյց, եւ կամ զոր պարտն էր կատարել, անփոյթ արարեալ տգեղացոյց եւ զկենդանականն զաւրութիւն մահաբեր ցաւաւք հիւանդացոյց, զոր պարտ է կարդալ եւ յայտնել իմաստուն բժշկին։* 11 *Զի պատճառ կորըստեան այն իսկ է, յորժամ ծածկէ յանցաւորն զխոցուածս նետից մեղացն, զոր ընկալաւ յանձին, եւ ոչ կարդայ խոստովանաբար առ տեսողն գաղտնեաց եւ բժշկի։* 12 *Զոր աւրինակ, եթէ ոք զհիւանդարար պատճառս ցաւոցն ո՛չ յայտնէ բժշկին, դեղս առողջական ոչ գտանէ անձին, եւ ախտք առանց բժշկութեան մնացեալ՝ հնացեալ նեխին, որում հետեւի մահ, որպէս եւ սոյն մարգարէ ասէ. «Նեխեցան եւ փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ» (Սղմս. Լէ. 6)։* 13 *Իսկ իմաստութեամբ զգալ ցաւոյն եւ խոստովանութեամբ կարդալն՝ բժշկութիւն հետեւի. եւ սոցա գաղափար ի Գրոց Սրբոց իմասցիս։* 14 *Նախաստեղծքն, որ ոչ կարդացին խոստովանութեամբ՝ ի հարցանել բժշկին, մահու եղեն ժառանկորդք։* 15 *Իսկ Դաւիթ, որ ոչ ծածկեաց, այլ ասաց՝ մեղա՛յ Տեառն, եւ ապրեցաւ, վասն որոյ թողութեան արժանացաւ։* 16 *Եւ զի ոչ է այնպիսի իրս, որ զԱստուած յողորմութիւն յորդորէ, որպէս |ճա| զկարդալն խոստովանութեամբ զյանցանսն, որպէս եւ այժմ մարգարէիս ցուցանէ բան՝ «Տէ՛ր, կարդացի...»։* 17 *Իսկ երրորդ՝ կարդալ է զահաւոր Դատաստանն, որ սրբոց եւ անսրբոց, վասն որոյ խորհեցան, խաւսեցան եւ գործեցին բարի եւ չար։*

Զ. 1 *Եւ Բ. (2) են ժամանակ կարդալոյ. մի՝ որքան ի մարմնի եւ յայժմու կեանս եմք, որք եւ ազատ կամաւք կարդամք զհամարս գործոց մերոց, եւ մի՝ ի հանդերձեալ ատենին, ի Դատողական աւուրն, յորժամ ոչ լինիմք տեարք անձանց։* 2 *Զի անդ կարդացի ստուգապէս, զոր աստ ոչ կարդացաք եւ ջնջեցաք եւ փոքր ամաւթով այս եւ պատկառանաւք, զոր առաջի հարցն խոստովանութեան լինի, ո՛չ զերծուցաք զմեզ ի մեծի ատենին եւ յահեղ հրապարակին ամաւթոյ, զոր պարտ էր ամենայն աւուր կարդալ, զի մի՛ մոռացաւնք ծածկեսցեն, եւ երեւեսցի ի մեծի ատենին, յորում իւրաքանչիւր ոք զգործս ձեռաց իւրոց գրեալ ի տախտակս մարմնոյ իւրոյ, ընթեռնու եւ ի տեղիս եւ ի տարերս ամենայն, ուր գործեցան։* 3 *Այլ այժմ, որքան ի շնորհաց եւ յողորմութեան ասի նստեալ յաթոռ, մատիցուք առաջի աթոռոյ շնորհաց նորա եւ ի դէպ ժամու կարդասցուք, որ վասն միոյ արտասուաց զհինգ հարիւր դահեկանն թողու եւ մի ասելոյն՝ «Յիշեա՛ զիս, Տէ՛ր», զդրախտն պարգեւէ։* 4 *Իսկ յորժամ յարդարութեան եւ*

յիրաւանց նստի յաթոռ, զաստի գործոյս փոխարէնն հատուցանէ, վասն որոյ յիմար կուսիցն արտասուք անտես լինի եւ բազմաց «Տէ՛ր, Տէ՛ր» զնա խոստովանելն։ **5** *Մեծատունն պապակի՝ կաթոյ* |**6**բ| *ջրի կարաւտեալ, Ղազար ցնծայ վասն աստ վիրաւորելոյն եւ ի գոգն Աբրահամու հանգչի, վասն որոյ աստէ՛ն կարդասցուք առ նա։* **6** *Եւ չորրորդ՝ կարդալ է զարարչական եւ զհայրենի գութն ի վերայ արարածոցս եւ զողորմութիւն նորա, զոր տայ զղջացելոցն, եւ զերկայնմտութիւն, որով ներէ յանցաւորացն, եւ զբազում ողորմութիւն նորա, որ առ բազմամեղսն, եւ խոստովանել զճշմարիտ եւ զիրաւացի ընտրութիւն դատաստանաց նորա, վասն զի ողորմութիւնն գանձ է, եւ ճշմարտութիւն նորա կնիք եւ պահապան ի վերայ ողորմութեանն։* **7** *Եւ յորժամ տեսանէ զմեզ զղջացեալս եւ պաղատանաւք խնդրել եւ հայցել ի նմանէ զողորմութիւն, բանայ զփականս դրանն եւ զկնիք պահպանութեանն զճշմարտութիւն եւ հեղու զողորմութիւն իւր ի վերայ մեր զանազան կերպարանաւք, եւ առնէ զմարդիկ բազում աւթեւանացն լցուցիչ, զոր պատրաստեալ է սիրելեաց իւրոց։* **8** *Վասն որոյ ըստ այսքան յեղանակացս կարդալով ծառայիցս առ Տէրն՝ ասեմք. «Տէ՛ր, կարդացի առ քեզ, եւ լո՛ւր ինձ»։* **9** *Վասն զի այս են սահման եւ գլուխք աղաւթիցն, որովք պաղատիմք առաջի Աստուծոյ եւ ակն ունիմք լսել մերոց պաղատանացն։*

Է. **1** *Այլ եւ նոյն ինքն լսելն Աստուծոյ ըստ չորից պատճառաց լինի, զի ըստ այնմ լուիցէ մեզ։* **2** *Եւ է առաջին՝ ինքնաշարժ ողորմութիւնն, յորժամ խոնարհեցուցանէ զունկն, որպէս մարդասէր բժիշկ առ նուաղ ձայն հիւանդին, եւ լսէ զպատճառս եւ զկիրս ցաւոյն եւ զաւկտակարն մատուցանէ դեղ։* **3** *Զի զոր աւրինակ հիւանդն ի նեղ*|**7**ա|*ութենէ ցաւոց մարմնոյն տագնապեալ՝ առողջութեանն փափագէ, այսպէս եւ հոգին, որ ունի զվէրս եւ զխոցուածս մեղաց, ողորմութեանն Աստուծոյ կարաւտի։* **4** *Եւ երկրորդ՝ արդար իրաւամբք է հայցելն մեր, զի լուիցէ մեզ, վասն զի լի է ականջք նորա ի քաղցրաձայնութենէ մաքուր բնութեանց լուսեղինացն, զիջանել աղերսեմք, ըստ մերս տկարութեան եւ ի հողեղէն բանականացս, որ առաւել եմք ողորմելոյ արժանի եւ կարաւտք բազմադիմի աւգնականութեան, որ եմք ի տկար մարմնի եւ ի յամբոխեալ կեանս երկրաւոր։* **5** *Վասն որոյ բազում հնարիւք կարդալոյ պէտս ունիմք եւ ժտելոյ ի խնդիրն, որպէս այն, որ զերեք նկանակն հայցէր, եւ որպէս կինն այրի՝ յանիրաւ դատաւորէն, եւ կամ տղայք սդնտեայք ի մարցն յորժամ հայցեն։* **6** *Այսպէս եւ մեզ բազում հնարիւք դարձուսցուք ի մեզ, որ պիտոյ են արտասուք բազում, անմռունչ հեծութիւն, բախումն կրծից, տառապանս սրտից, մինչ խոնարհեցուցանեմք յաղաչանս մեր, զի տացէ զհայցելին՝*

ընդ վերին բանականսն զպարակցութիւն եւ զվերին քաղաքին ժառանկութիւն։ 7 *Եւ երրորդ՝ զի որ մեզ անկարելի է, նմա կարելի, զի ըստ Իմաստնոյն՝ «Երկին բարձր, եւ երկիր խոնարհ» (***հմմտ. Առկ. Իե. 3***), ըստ այնմ՝ «Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր» (***Սղմս. ճԺԲ. 4***)։* 8 *Բարձր ո՛չ տեղեաւ միայն, այլ վասն ամենահաս եւ երկնատես գիտութեանն, որովք քննէ զերկինս եւ զերկիր եւ տեսանէ զաղքատ բնութեանս կարիս եւ զհայցուածս խորոց սրտից եւ խոնարհի առ մեզ այն, որ զբարձունս ի վերայ բարձանց պահէ, որպէս ասէ Ժողովողն (***տե՛ս Ժղվ. Ե. 7***)։* 9 |7բ| *Զորրորդ՝ զի ի կարդալն իմում կարդան ընդ իս ամենայն արարածք՝ իբր անդամք ամենայն բերանով միով, զի յամենայն տեսակէ գոյիցս մասն ունի յինքեան բնութիւն մարդոյս. զգայութեամբք՝ զգայուն կենդանեացն, աճեցական մասամբն՝ զտնկոցն, եւ մտաւք՝ զմտաւոր աշխարհին։* 10 *Զոր իբրեւ զքնար ի գիրկս ամենայն աշխարհի եդեալ՝ հնչէ զբանաւորական երգս եւ ասէ. «Տէ՛ր, կարդացի, եւ լո՛ւր ինձ» միջնորդաւ ականջաց քոց՝ հրեշտակաց բարեխաւսութեամբ, զի ականջք վերագոյն է քան զբերան, որպէս եւ հրեշտակք՝ քան զմարդիկ։*

Ը. 1 *«Նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոց» (***Սղմս. ճԽ. 1***)։* 2 *Դարձեալ քննելի է եւ զձայնին զաւրութիւն, զի ոչ եթէ «ձայն» զբարձրաբարբառ գոչելն ասէ, եւ կամ «կարդալ» զարագաշարժ լեզուին զառատութիւն բանից, եւ կամ «նայել» ի գեղեցկութիւն պատկերի եւ անձին։* 3 *Զի բազում ինչ յայսպիսեացս է, զոր ի բնութենէ ունին մարդիկ՝ զոմանս գովելի կարծելով եւ զայլս նախատելի, որպէս գեղեցկութիւն դիմաց կամ քաղցրութիւն ձայնից կամ արագութիւն եւ սրութիւն լեզուի, այլ առաջի Աստուծոյ ոչ են այսպէս, որ զանգործսն տեսանէ եւ ի ծածուկս սրտին հայի։* 4 *Զի գեղեցիկ էր Աբեսողոմ, մինչ զի հերացն եւ վարսիցն զարդարանաւք էր զարմանալի, բայց ոչ ինչ աւգնեաց նմա։* 5 *Կունդ էր Եղիշա, որ եւ ի տղաց այպանէր, եւ ոչ վնասեաց ինչ նմա։* 6 *Առաւել էր բազմութիւն հրէիցն, եւ աղաղակ նոցա յոյժ, եւ ոչ լուաւ Տէր։* 7 *Եւ լռութիւն ներբաձայնին Մովսիսի լսելի լինէր, իսկ հրէիցն ասէր՝ «Թէ եւ կարի բազմացուսջիք զհայցուածս ձեր, ոչ լուայց ձեզ» (***հմմտ. Ա. Յվհ. Ե. 15***), այլ* |8ա| *գեղեցկութիւն, յոր նայի, է պատկերին պահպանութիւն*[1]*։* 8 *Եւ ձայն զներքին մտացն ասէ, ընդ որ հայի Աստուած եւ լսէ, զոր սիրտն ծնանի*[2]*, եւ յառաջ գայ ի ջերմեռանդն սրտէ եւ ի խոնարհ մտաց, եւ կարդալ զհաճոյական աղաւթիցն։* 9 *Վասն որոյ Բ. (2) զգայութեամբք ընդունել*

---

[1] *Զ պահպանութեամբ*

[2] *Զ ծնանին*

*աղաչէ՝ ականջաւք եւ աչաւք, եւ ասէ. «Լո՛ւր ինձ, որպէս իմաստուն կուսանացն լուար եւ բացեր զառագաստն, եւ նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոց, ոչ ի դատարկ ձայն հնչմանն» (**հմմտ. Մտթ. Իե. 1**): 10 Այլ զոր աւրինակ, որ յամենայն ուժոյ ձայնէ զաւրութիւնք ձայնական գործեացն, եւ ամենայն ուժն անդր հաւաքին, նոյնպէս որ աղաւթէ՝ այս է, որ խաւսի ընդ Աստուծոյ: 11 Բոլոր սիրտն եւ ամենայն խորհուրդն յաւժարութեամբ մտացն յաղաւթքն հաւաքին, իբր երկունք յղ[ւ]ոյ ամենայն զաւրութիւնք հոգոյն եւ մարմնոյն միաւորին եւ միոյ յուսոյ սպասեն ծնընդեան մանգանն, եւ ապա հանգչի ծնաւղն: 12 Նոյնպէս եւ որ կարէ ասել. «Յահ եւ յերկեղ[1] քո յղացե[ա]լ երկնեցաք եւ ծնաք զփրկութիւն հոգոյ» (**հմմտ. Եսայ. ԻՁ. 18**): 13 «Յղացաք, երկնեցաք» ասելովն զբովանդակ բնութիւնն ասէ՝ ի գործ աղաւթիցն պարապեալ եւ ի մամուլս երկեղին Աստուծոյ յառեալք: 14 Վասն որոյ ասէ. «Նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոց ի կարդալ իմում առ քեզ» (**Սղմս. ՃԽ. 1**): 15 Վասն որոյ պարտ է մեզ հնարել, զի ձայն եւ բանք մեր քաղցրասցին նմա: 16 Զոր աւրինակ եթէ ոք զթագաւոր բազում զաւրաւք ի ճաշ մեծարիցէ, բազում եւ զանազան պատրաստութիւնք պիտոյ են նմա, յորս խոնարհի թագաւորն:*

Թ. 1 *Արդ, ըստ չորիցս այսոցիկ կարդացումն բանից եւ ձայնք աղաւթիցն |8բ| եւ աւրհնութեանցն, զոր տամք Աստուծոյ, քաղցրանայ:* 2 *Առաջին՝ ցած եւ հանդարտ եւ մեղմ ձայնիւ, որպիսի յեղանակաւ եւ մահապարտք սարսեալ եւ սասանեալ կերպիւ կան առաջի թագաւորաց եւ խնդրեն զանձին փրկութիւն, ողորմ դիմաւք առ թագաւորն միայն հային[2]:* 3 *Երկրորդ՝ առ մարդիկ քաղցր բարուք լինել եւ յաղաչանս ունկնդիր, զոր եւ Տէրն ուսոյց, թէ՝ «Որով դատաստանաւ դատիք, դատելոց էք, եւ որով չափով չափ[էք, չափեսցի ձեզ]» (**Մտթ. է. 2**):* 4 *Երրորդ՝ յորժամ դառնութիւն մեղաց ոչ ունիցի եւ զգործս անձնական բարեաց խառնեսցէ յաւրհնութիւն բանիցն Աստուծոյ եւ զգոհութիւն առեալ պարգեւացն յիշէ ի ժամ հայցուածոցն, յայնժամ քաղցրանայ նմա, զի այն իսկ է պատճառ, որ ոչ քաղցրանան աղաչանք մեր առաջի Աստուծոյ, յորժամ վերջանամք ի պահպանութենէ աւրինաց նորա:* 5 *Վասն որոյ աւրհնելն զնա ասէ. «Ի բա՛ց արա՛ յինէն զձայն երգոց քոց, զի յաւուրս տաւնից ձերոց գտանին կամք ձեր կատարեալ» (**հմմտ. Ամովս, Ե. 23**):* 6 *Զորրորդ՝ որ ոչ է անգիտաբար եւ ոչ ի ստախաւս բերանոյ եւ անխառն ի փառս որսալոյ եւ մաքուր ի հերձուածոյ ուղիղ փառատրութեամբ աւրհնել զԱստուած եւ խոս-*

---

[1] *Զ երկիւղին*

[2] *Ա հասին, ապա սրբգրծ՝ հաին, Զձ՝ հասին] հային*

տովանութեամբ։ 7 *Այլ եւ զխոստովանութիւն բարերարութեան նորա խառնել յաւրհնութիւն նորա եւ զբարեգործակ*[1] *անուանսն յիշել ի հայցելն զողորմութիւն նորա, զի քաղցր թուին բանք աղաւթիցն մերոց, յորժամ զՔրիստոսի շնորհն յեղյեղեմք՝ զքաղցրութիւնն իւր յիշեցուցանելով, թէ՝ «Դու ասացեր, թէ՝ «Զոր ինչ խնդրեսջիք յանուն իմ՝ |9ա| արարիցս զայն»* (**տե՛ս Յվհ. ԺԴ. 13**) *եւ դու՝ արդարդ, ի վերայ անարդարոցս մեռար», զոր Պետրոս յիշեցուցանէր* (**տե՛ս Ա. Պտր. Գ. 18**)։ 8 *Եւ այսպիսի բանքս քաղցրասցին, իբրեւ զմեղր եւ զկաթն ի ներքոյ լեզուի հարսնացեալ եկեղեցոյ, որում վկայեն տղայքն. «Քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ»* (**Սղմս. ՃԺԸ. 103**)*. եւ թէ՝ «Քաղցր են ստինք քո, քան զգինի»* (**Երգ Ա. 1**)։ 9 *Եւ այսպիսի երգ քաղցր ձայնիւ եւ մաղթանք աղաւթից քաղցրասցին Աստուծոյ, յոր եւ նայի առ աղաւթականն եւ լսէ զհայցուածսն։*

Ժ. 1 *«Ուղիղ եղիցին աղաւթք իմ, որպէս խունկն առաջի քո, Տէ՛ր»* (**Սղմս. ՃԽ. 2**)*. յարացոյց առնու մտաւոր աղաւթիցս զգալի նիւթսն, զոր աւրինադրեաց Աստուած Մովսիսիւ առնել ի խորանն վկայութեան։* 2 *Քանզի արար սեղան խնկոց ի խորանն՝ արտաքոյ վարագուրին, որ անջրպետէր զսրբութիւն սրբոցն, եւ մանր աղացեալ զզանազան խունկսն՝ արկ ի վերայ նորա։* 3 *Եւ աստի առեալ Ահարոն եւ որդիքն իւր՝ բուրուառով արծարծէին, եւ մտեալ ծխէին ի սրբութիւն սրբոցն առաջի տապանակին եւ սեղանոյ քաւութեանն։* 4 *Եւ զայն խունկ*[2] *որդիքն Ահարոնի՝ Նաբադ եւ Աբիուդ, աւտար հրով ծխեցին եւ սատակեցան։* 5 *Արդ, ասէ, թէ՝ «Մի՛ լիցին աղաւթքս իմ, որպէս Նաբադայն եւ Աբիուդայ խոտորնակ խնկարկութիւնն, այլ որպէս Ահարոնին՝ ուղիղ լիցի առաջի քո»։* 6 *Վասն որոյ եւ մեք տեսցուք զգալի աւրինակ նիւթական խնկոցն, թէ ըստ որքանեաց իրաց ուղեղ լիցին առաջի Աստուծոյ։* 7 *Եւ զայսոսիկ զաւրինակ եւ զխորհուրդ խնկոցս համեմատեսցուք ընդ աղաւթիցն մեր խնկարկ|9բ|ութիւն, որպէս զի ուղիղ եղիցին աղաւթքն մեր, որպէս զխունկն։*

ԺԱ. 1 *Արդ, առաջին քննելի է այս, զի չորք էին խունկք անուշահոտք ըստ աւրինացն՝ քաղբանն, տաշխն, եղեգնխունկն եւ կնդրուկն՝ ընդիրք եւ ազնիւք։* 2 *Եւ որպէս անդ ի չորից նիւթոց էր խունկն, յորմէ անուշահոտ բուրումն ելանէր, նոյնպէս եւ ի մեզ չորք են առաքինութիւնք հոգոյ. խոհականութիւն՝ բանին մասին, եւ ողջախոհութիւն՝ ցանկականին, եւ սրտմտականին՝ արիութիւն, եւ բոլոր անձինն՝ արդարութիւն։* 3 *Եւ այս-*

---

[1] *Զձ՛ զբարեգործական*
[2] *Ճ՛ ունկի*

պիսի խնկոցս խառնուածք՝ բանին իմաստութիւն՝ յաստուածայինսն, եւ ողջախոհ պարկեշտութիւն՝ ի սէր նորին, եւ արիութիւնն՝ յառաքինութեանցն հանդէս, եւ արդարութիւնն՝ յամենայն տեսակս առաքինութեան։ **4** *Աղաւթք այսպիսի հոգոյ բուրումն ուղեղ եւ խունկք անուշունք են առաջի Աստուծոյ։* **5** *Երկրորդ՝ զի եւ խունկն կարի իմն յարացոյց է աղաւթից, քանզի որպէս նա անուշահոտ գոլով ոչ բուրի, մինչ չեւ է ի հուր արկեալ, այսպէս եւ սաղմոսերգութիւնքն եւ աղաւթքն բարի է, բայց ոչ բուրէ զանուշահոտութիւնն յայլում ժամու, այլ յորժամ հուր սիրոյն բորբոքի եւ զսա առաջի Աստուծոյ արծարծէ եւ զբուրումն անուշահոտութեանն յերկինս ծառացուցանէ։* **6** *Քանզի եւ Յոհանէս զաղաւթս սրբոցն ի ձեռս ԻԴ. (24) ծերոցն խունկ ետես ծխեալ բուրուառաւք։* **7** *Քանզի որպէս խունկն զքիմս, այսպէս աղաւթք բորբոքեալ սիրոյ Աստուծոյ է անուշահոտ։* **8** *Եր[ր]որդ՝ զի գոլոշիք ծխոյ խնկոցն ուղեղ ի վեր ելանէ թեթեւաբար, զի ոչ գոյ ի |10ա| նմա ծանրութեան տեսակ, թէպէտ ի ծանր նիւթոց ելանէ բուրումն։* **9** *Այսպէս եւ զիմանալի տեսութիւն մտացս մեր եւ զշարժումն ցանկականին եւ զխորհուրդս սրտից ի հուր սիրոյն Աստուծոյ արկեալ՝ յամենայն նիւթականացս ի վեր ելանել եւ յերկիր հայելոյս առ Աստուած եւ ի նորա փառսն դարձուցանել, որ միայն իմանալի տեսութեանն է լոյս եւ ամենայն բանականաց ցանկալի։*

ԺԲ. **1** *Եւ այսպէս որք ի ծանրութիւն մարմնոյ եմք, ըստ այսմ կարգի ուղեղ եղիցին աղաւթքն՝ ելանել առ Աստուած, որպէս հրեշտակն Աստուծոյ ասէր ցԿուռնելիոս, թէ՝ «Ելին աղաւթք քո եւ ողորմութիւն առաջի Աստուծոյ»* (**հմմտ. Գրծ. Ժ. 31**)։ **2** *Վասն որոյ լծեալ պարտ է ընդ բանիցն եւ զգործս բարեաց, եւ աղաչել ուղիղ ելանել ի սենեկէ սրտին փակեալ, զգայութեամբ ի ցոյցս առնելոյ, եւ իբրեւ զխունկ անոյշ առաջի Աստուծոյ։* **3** *Չորրորդ՝ զի որպէս անդ ոչ էր ուղեղ աւտար հրով ծխելն զայն խունկն, այլ սեղանոյն Աստուծոյ հրով, եւ որք ընկալան աւտար հուր ի բուրուառս իւրեանց եւ այնու ծխեցին խունկս, պատուհասեալ ծախեցան յաւտար հրոյն, նոյնպէս եւ անձն աղաւթականին ունի զսիրտն որպէս բուրուառ։* **4** *Եւ որպէս բուրուառք խնկոց ի զանազան նիւթոց լինին՝ ոսկեղէնք, արծաթեղէնք եւ պղնձիք, նոյնպէս եւ զանազան են աւրինակք մաքրութեան սրտից մարդկան. ոմանց՝ ըստ ոսկւոյն սրբոյ պատուականութեան, եւ այլք՝ ըստ արծաթոյն պայծառութեան, եւ ոմանց՝ պղնձոյ նման կարմրութեան։* **5** *Եւ հուր բուրուառացս այսոցիկ զջերմութիւն սիրոյն Աստուծոյ պարտ է դնել եւ ոչ աւտար հուր, |10բ| որ է սէր աշխարհիս եւ ցանկութիւն սորին, որ թէպէտ այնպիսին աղաւթէ բերանով, բայց զի ըշտեմարանք խորհրդոցն լցեալ են գարշութեամբ ախ-*

տիցն, ըստ բանի առաքելոյն Յակովբայ՝ «Երկրաւոր ցանկութիւնն, որ ի նոսա յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ մեղքն՝ կատարեալ գործով, զմահ ծնանին» (հմմտ. Յակ. Ա. 15), եւ այսպէս աւտար հրով այրին, զի աւտար է ցանկականին ի վայր շարժումն, եւ ոչ են աղաւթքն ուղիղ առաջի Աստուծոյ: 6 *Հինգերորդ՝ զի ի հոտոյ խնկոցն, յորժամ ի հուր դնի, ամենեքեան հաղորդին՝ ընդունելով ի քիմսն, եւ ոչ ոք զրկի, բայց եթէ որոց ոչ առողջ են հոտոտելիք:* 7 *Այսպէս աղաւթականին այն իցեն աղաւթք ընդունելի եւ ուղիղ, զի զամենայն արարածս առնու կցորդ աղաւթիցն. ըստ որում եւ Տէրն ուսոյց ոչ միում անձին ասել՝ Հա՛յր իմ, այլ թէ՝ «Հա՛յր մեր, որ յերկինսդ ես»:* 8 *Վասն որոյ պարտ է զբոլոր արարածս բառնալ ի ձեռս, իբր ի սկտեղ եւ ի բարբառս լեզուին, որպէս ի սեղան ողջակիզաց, եւ ամենեքումք եւ վասն ամենեցուն հայցել շնորհս ի բարի պարգեւացն Աստուծոյ, որպէս եւ Տէրն ուսոյց եւ վասն թշնամեացն մատուցանել աղաւթս:* 9 *Եւ Պաւղոս խրատէ. «Կամիմ, զի յամենայն տեղիս արք կացցեն յաղաւթս եւ ամբարձցեն զսուրբ ձեռս՝ առանց բարկութեան» (տե՛ս Ա. Տիմ. Բ. 8). այսինքն՝ ի ժամ աղաւթիցն շիջո՛յ զբարկութիւնն, զոր ունիս վասն թշնամոյն, եւ այնպէ՛ս մատիր առ Տէր աղաւթիւք եւ, մինչդեռ խաւսեսցիս, ասացէ՝ Ահաւասիկ եմ:* 10 *Եւ այնպէս ուղիղ գոլով աղաւթիցն տայ զբարեաց պարգեւսն լիապէս, որով լնումք անուշ|11ա|ահոտութեամբ զերկինս եւ զերկիր՝ հայցելով մեզ մասնակցութիւն ընդ լրումն վերին եւ ներքին եկեղեցոյ ընդ փարթամսն, եւ ընդ մեր փրկիլն աղաչեմք տալ եւ սրբոցն յաւելուած փառաց եւ շնորհաց՝ դարձուցանելով բարերարին զսէր նոցա առ մեզ, վասն որոյ. ասէ. «Ուղիղ եղիցին»:* 11 *Վեցերորդ՝ զի ըստ ժամանակի լինէր ընդունելի եւ ուղիղ խնկարկութիւնն եւ ոչ տարաժամ, զի երկիցս խնկէին՝ առաւաւտուն եւ երեկոյին:* 12 *Այս կարգ ուղիղ լիցին մեզ ի մատուցանել զաղաւթսն՝ իմանալ եւ ըստ ժամանակի պահել զուղղութիւնն:* 13 *Եւ է ժամանակ ուղղութեան աղաւթիցն, յորժամ ի ցնդմանէ ճապաղման զգալեացս միանայ յաստուածային իմացումն, զի միտսն, որ է լոյս մարմնոյն եւ զգայական շնչոյն եւ ծագաւղ սոցա որպէս զառաւաւտ, հուպ տարեալ ի լոյսն Քրիստոս, եւ նորա՝ ի նմանէ պայծառացեալ, ընդ նմա դառնան եւ զգայական մասունքն, եւ ընդ նմա՝ մարմինն, որ երեկոյի եւ գիշերոյ նման է:* 14 *Եւ լինի բովանդակ մարդն ընդ մտացն վերացեալ յԱստուած եւ երկնաճեմ եղեալ. թէպէտ եւ զժամուցն պահելի է զսահման, յորս կարգեցան ժամք աղաւթիցն, այլ մեզ երեկոյ է, յորժամ նեղիմք ի խաւարատեսակ խորհրդոցն, որ ի պատրանաց չարին եւ ի մարմնական զբաղանացս, եւ առաւաւտ՝ զզերծանելն անտի լուսով խրատու աւրինացն ի լոյսն Աստուծոյ դիմեալ, որով եւ ընդ ամենայնի*

պարտիմք զբուրումն աղաւթիցն Աստուծոյ նուիրեալ։ 15 *Եւթներորդ՝ գիտել զտեղին, յորում պարտ է նուիր[ա]ւք խնկոցն մտանել առաջի Աստուծոյ, որպէս եւ նոքա՝ առաջ|11բ|ի տապանակին եւ սեղանոյ քաւութեանն։* 16 *Իսկ մեզ ոչ ի նիւթական խորանի, այլ յերկինս երկնից, ի սրբութիւն սրբոցն, յանմտանելին եղականաց, ընդ կարգ քահանայապետութեան երկնայնոցն, ընդ դասապետութիւնս հրեղինացն մտանեմք աղաւթիւքն։* 17 *Իսկ բուրուառք մեզ՝ սրբութիւնք սրտից, չորեքնիւթեայ բնութիւնս մեր՝ սանձք ամբառնալեաց բուրուառին, իմացականն ի մեզ՝ վերին ագոյցք շղթայիցն, ներքի կառոյց՝ մարմնոյս բնութիւն, բռնելիք՝ յիշողականն անմոռաց, քահանայ խնկանուէր՝ միտքն, սեղան եւ տաճար եւ բեմ՝ ուր ծխին, անձեռագործ խորանն՝ արարչականն Բանին իմաստութեամբ շինեալ, եւ որ հոտոտի ի հոտ անուշից Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ. եւ մեր աղաւթելն ուղիղ գոլով ի յոյսն վերին, որ ասաց Գլուխն մեր, թէ՝ «Ուր եսն եմ, անդ եւ պաշտ[աւնեայն իմ եղիցի]» (**Յվհ. ԺԲ. 26**). եւ թէ՝ «Երթամ, պատրաստեմ ձեզ տեղի» (**Յվհ. ԺԴ. 2, 3**)։* 18 *Ութերորդ՝ ուղիղ եղիցին աղաւթքն, յորժամ գիտէ, թէ առ ո՞վ է խաւսակցութիւն աղաւթիցն, վասն զի աղաւթք խաւսք է ընդ Աստուծոյ։* 19 *Գիտել եւ զայս, թէ առանց խնդրելոյ չէ հնար առնուլ, թէպէտ եւ առատ է պարգեւատուն. զսոյն եւ Տէրն ուսոյց՝ «Խնդրեցէ՛ք եւ առնուցուք» (**հմմտ. Մտթ. Է. 7**)։* 20 *Իսկ թէ ո՞րպիսի պարտ է լինել խնդրողին, զի առնուցու, յԱւրէնսն ասէ. «Սո՛ւրբք եղերուք, զի ես սուրբ եմ՝ Տէր Աստուած ձեր» (**տե՛ս Ղեւտ. ԺԹ. 2**)։* 21 *Եւ մարգարէն Դաւիթ վկայէ. «Մեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի՛ լուիցէ ինձ Տէր» (**Սղմս. Կե. 18**)։* 22 *Եւ երկու են յեղանակ սրբութեան. կամ զառաջին անմեղութիւնն, զոր ձրի շնորհեցաւ ի Տեառնէ, պահել եւ մնալ սուրբ, եւ թէ այսմ ոչ |12ա| է հնար հողանիւթ բնութեանս, ապա յետ մեղանացն դարձեալ մաքրիլ ի մեղաց եւ լինել սուրբ, որ է երկրորդ բարի յետ առաջնոյն։* 23 *Այսմ հանգոյն եւ ի Քրիստոսէ ուսաք. «Եթէ կացջիք յիս, եւ բանք իմ ի ձեզ կացցեն, զոր ինչ կամիք՝ խնդրեցէ՛ք, եւ լինիցի ձեզ» (**տե՛ս Յվհ. ԺԵ. 7**)։* 24 *Այսինքն՝ կացջի՛ք յիս սիրով, եւ բանք իմ ի ձեզ՝ գործով, եւ ապա լինիցի, զոր խնդրէքն։* 25 *Եւ որ ի Քրիստոս բնակէ, եւ զբանս նորա արդեամք ի կիր արկանէ, սիրտ նորա արդարեւ սրբեալ է յամենայն մեղաց՝ ըստ աստուածաբանին Յոհանու. «Որ ի նա հաստատեալ, ոչ մեղանչէ» (**Ա. Յվհ. Գ. 6**)։* 26 *Ապա մի՛ վայրապար վարկցուք զաղաւթելն, եւ մի՛ յոչ առնուլն զխնդրուածսն անյոյս լիցուք ի խոստմանէն, այլ պատրաստեսցուք եղեալքս պատկեր Աստուծոյ նմանութեամբն, որ արար մեզ, նովաւ խաւսել ընդ սկզբնատպին յաղաւթսն. զի հոգի է Աստուած, հոգւով երկրպագեսցուք (**տե՛ս Յվհ. Դ. 23**)*

եւ ոչ միայն պարանոցի կորանալով։ 27 *Եւ զի լոյս է, ապա լոյս մտացս ընդ նա խառնի եւ ո՛չ խաւարատեսակ ծածկոյթս։* 28 *Ակն տեսանող զԱստուած սրբութիւն սրտին է եւ ոչ զգալիս, ըստ այնմ՝ «Սուրբքն սրտիւք զԱստուած տեսցեն» (հմմտ.* **Մտթ. Ե. 8***)։* 29 *Լեզու խաւսակից նմա՝ իմացականն, որ ի մեզ, եւ ոչ մարմնոյս, որով Մովսէս խաւսէր։* 30 *Եւ Աստուած ասէր նմա. «Զի՞ գոչես առ իս» (*Ելք ԺԴ. 15*), վասն զի զներքին մարդոյն խաւսակցութիւնն եւ զտեսութիւնն խնդրէ Աստուած եւ ոչ զբերանով կարդալ եւ զլեզուով բարբառելն։* 31 *Պատկերաւս առ նախատիպն մերձ գնասցուք եւ ո՛չ խեցեղէն անաւթիւս. ընդ հսկել մարմնոյն եւ սրտին արթնութիւնն հսկեսցէ. եւ զի անձնիշխանութեամբ եւս պատկեր եմք Աստուծոյ,* |12բ| *յազատ եւ յանձնիշխան կամաց լիցի աղաւթիցն սէր եւ ո՛չ ի հարկէ եւ բռնութեամբ։* 32 *Եւ այսպէս ուղղակի աղաւթիցն կարգաւք առցուք, զոր հայցեմքն։* 33 *Իններորդ՝ ուղիղ եղիցին աղաւթքն մեր, յորժամ ըստ կամաց տուողին լինիցի խնդիրն, որ ուսոյց մեզ զկամս իւր բարերարն. «Խնդրեցէ՛ք զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այլն ամենայն յաւելցի ձեզ» (*տե՛ս **Ղկ. ԺԲ. 31***)։* 34 *Եւ առաքեալ ասէ. «Տեսջիք, որպէս ճշմարտութեամբ գնասջիք» (*տե՛ս **Եփս. Ե. 15***). այսինքն՝ խոհականիդ ընտրութեամբ։* 35 *Տե՛ս զուղիղ շաւիղն արքայական պողոտային, վասն զի ըստ Տեառն բանի երկու են ճանապարհ. մին՝ նեղ եւ անձուկ, որ տանի ի կեանս, եւ սակաւք, որ գնան ընդ նա, եւ՝ լայն եւ ընդարձակն, որ տանի ի կորուստ, եւ բազումք, որ ընթանան ընդ նա (հմմտ.* **Մտթ. Է. 13-14***)։* 36 *Եւ զի խաւար է կենցաղս այս, եւ ոչ կարեմք ընտրութիւն առնել ճանապարհիս, յորում գնամք, զոր ասէ առաքեալ. «Ուշ եդեալ ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ» (*Փլպ. Գ. 14*), եւ զայս ճանապարհ բազումք ի մարդկանէ թիւր ընթանան գործով եւ ոչ զուղիղն հայցեն աղաւթիւք։* 37 *Զի զոր աւրինակ ի զգալի լուսոյս տեղի տալ ոչ ոք կարէ ընտրութիւն առնել գունոց, զի ամենայն ինչ, որ կենցաղումս է, կեղծաւորական գունով ներկեալ է, եւ զչարն բարի կարծեմք, եւ երկրաւոր մեծութեանց եւ փառաց անցաւորիս եւ առժամանակեայ կենացս ցանկամք։* 38 *Վասն որոյ պիտոյ է մեզ գործակցութիւն Ընդունողին զաղաւթսն, զի ուղիղ եղիցին աղաւթքն, զոր մատուցանեմք, եւ ոչ աւտար ի տուողին կամաց։* 39 *Տասներորդ՝ «ուղիղ». զի որ մերն է սեփհ*|13ա|*ական ժառանգութիւն, զայն խնդրեսցուք. զի զոր աւրինակ եթէ ոք յիրաւունս դատաստանի մտեալ աղաչիցէ զդատաւորն դարձուցանել յինքն զժառանկութիւն հարց իւրոց, զոր ի թշնամեաց զրկեալ է, եւ յորժամ քննեն ճշմարտութեամբ, եւ թէ ոչ է իւր, զոր խնդրէ, ամաւթ եւ անարգանս կրէ, ըստ որում եւ Տէրն ասէր. «Եթէ յաւտարին չեղէք հաւատարիմ, զձերն ձեզ*

*ո՞յ հաւատասցէ» (*Ղկ. ԺՁ. 12*)։* 40 *Եւ է աւտար առաւրեայ եւ անցաւոր կեանքս այս, յորում պանդխտանամք, եւ մեր սեփհական ժառանկութիւն է դրախտին փափկութիւն եւ երկնից բարութիւնքն, յորում եդ Աստուած զմարդն ի ստեղծմանն ի դրախտն՝ յուսով փոխմանն ի յերկինս։* 41 *Վասն որոյ առաքեալ ասէ. «Ոչ ունիմք քաղաք, որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք» (*Եբր. ԺԳ. 14*)։* 42 *Եւ Դաւիթ, այնմ քաղաքի գոլով ցանկացող, աղաւթիւք զՀոգին Սուրբ առաջնորդ հայցէր. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ» (*Սղմս. ՃԽԲ. 10*), վասն զի այս ո՛չ է ուղիղ մեր, այլ գազանաց եւ անասնոց եւ թռչնոց տեղի։* 43 *Եւ դարձեալ՝ ո՛չ է ուղիղ, զի փոփոխական է, յեղյեղուկ եւ անցաւոր, գարնանային եւ ամառնային յեղանակաւ, աշնանային եւ ձմեռնային փոփոխականութեամբ։* 44 *Իսկ այն՝ մշտնջենաւոր եւ անմահ, եւ անփոփոխ, որում վկայէ եւ մարգարէն Զաքարիաս, թէ՝ «Զամառն եւ զգարուն նոյնպէս եղիցի» (*Զքr. ԺԴ. 8*)։* 45 *Եւ դարձեալ՝ զի ոչ է կեանքս այս ուղիղ, այլ անհարթ եւ անհաւասար, զի իմաստունք եւ արժանաւորք պատուոյ, առաքինիք եւ սիրողք սրբութեան բազում անգամ չարաչար կիրս եւ ան-պ|13բ|ատուութիւնս կրեն։* 46 *Իսկ չարք եւ անիրաւք ի մարդկանէ փառս եւ պատիւ եւ իշխանութիւնս ժառանկեն, որպէս ասէ իմաստունն. «Է. չարութիւն, զոր տեսի ի ներքոյ արեգականն, որ իբրեւ յակամայ կամս ել յերեսաց իշխանին։* 47 *Տուաւ անմիտն ի բարձրութիւնս մեծամեծս, եւ մեծատունք ի խոնարհութեան նոցին։* 48 *Տեսի ես ծառայս հեծեալ ի ձիս, եւ իշխանս, զի գնային իբրեւ ծառայս յերկրի» (*Ժղվ. Ժ. 5-7*)։* 49 *Յորմէ յայտ է, թէ ոչ ուղղութեամբ են իրք այսմ աշխարհի, իսկ այն ուղիղ է, զի իրաւամբ դատաստանի է, եւ ըստ գործոցն արժանաւորութեան, ի բազմապատիկ աւթեւանսն վայելեն։* 50 *Վասն որոյ մարգարէս հայցէ. «Ուղիղ եղիցին»՝ զմերն խնդրելով եւ զմնացական բարիսն։* 51 *Եւ զի սահման աղաւթիցն մտաց վերելումն է առ Աստուած եւ կամ խնդիր ինչ ի պատշաճիցն յԱստուծոյ, վասն որոյ հայցէ, զի միտք մեր ուղիղ առ Աստուած ելանիցեն եւ խնդիրն պատշաճապէս եւ ըստ կամացն Աստուծոյ լինիցի եւ յաւգուտ խնդրողին։*

ԺԳ. 1 *«Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի» (*Սղմս. ՃԽ. 2*)։* 2 *Արդ, գիտելի է, զի չորք էին ի խորանի անդ պատուաւոր եւ հաստատուն սեղանք. զի սեղանն քաւութեան ի սուրբն սրբոց կայր, որ մի անգամ ի տարոջն քահանայապետն արեամբ եւ խնկով մտանէր, եւ սեղանն երեկոյին, ուր դնէին Գ. (3) հաց եւ գառն մի, եւ սեղան խնկոցն ոսկի, որ կայր ի կողմն հարաւոյ եդեալ, որոյ առաջի երկիցս խնկէր յաւուրն՝ առաւաւտին եւ երեկոյին, եւ սեղան ողջակէզացն, յորում մատուցանէին*

զզոհսն եւ զպատարագսն։ 3 *Արդ, ի չորից անտի յիշեաց մարգարէս զսեղան խնկոցն՝ յաղագս խորհրդոցդ,* |14ա| *որ ասացաւ։* 4 *Իսկ զսեղան հացիցն եւ գառանցն յիշէ յասելն. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»։* 5 *Եւ վասն է՞ր զերեկոյին յիշէ եւ ո՛չ զառաւաւտն։* 6 *Վասն զի մի եւ նոյն էր խորհուրդն, զի առաւաւտին պատարագն երեկոյին սպասէր, ուր կատարէին ամենայն նուէրք աւուրն յամենայն սեղանոցն։* 7 *Եւ դարձեալ՝ զի ի հալածման էր Դաւիթ եւ ի վիշտս, մինչ ասաց զայս։* 8 *Զերեկոյն պատշաճ համարի զնուաղումն լուսոյն, որպէս եւ ամենայն անձն աղաւթականի ի կրից մարմնոյս եւ ի փորձանաց կենցաղոյս, որպէս ի մէջ երեկոյի ժամու կայ, յորմէ հայցէ աղաւթիւք զլոյս շնորհաց եւ աւգնութեանն Աստուծոյ։* 9 *«Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի». վասն զի հրէական պատարագքն եւ ողջակէզքն, զոր մատուցանէին, բոլորվիմբ ապացոյց էր նուիրողացն զանձինս Աստուծոյ եւ զկամս հին մարդոյն սպանողաց։* 10 *Եւ զի լինէր ողջակէզն ի զուարակաց, ի խոյոց եւ ի նոխազաց եւ գառանց, զիւրաքանչիւրոյն մեծութիւն եւ փոքրութեան առաքինութեանց նշանակ էր, ըստ Պաւղոսի բանին. «Իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ» (**Ա. Կրնթ. Է.** 7). ոմն՝ այսպէս եւ ոմն՝ այնպէս։* 11 *Իսկ խունկքն ընդ ողջակէզացն ապացոյց էր մաքուր աղաւթիցն, որ ի հրով սիրոյն Աստուծոյ ողջակիզելոցն ամբառնայ Աստուծոյ ի հոտ անուշից միշտ յերկինս, զորոց այժմ մարգարէս զերկոցունց խորհրդոցն ի մէջ առնու՝ ասելով. «Ուղիղ եղիցին աղաւթք իմ որպէս խունկ»՝ զանուշահոտ աղաւթիցն զաւրութիւն խնկոց նմանեցուցանելով։* 12 *Իսկ ասելն՝ «համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»՝ զողջակէզացն եւ զպատարագացն յիշէ զխորհուրդ, որք բոլորն* |14բ| *առաքինութեանց էին յարացոյցք։* 13 *Եւ այս ըստ աւրինացն, զի հրաման ետ Աստուած քահանայիցն՝ գառն մի առաւաւտուն եւ գառն մի երեկոյին պատարագել ի վերայ սեղանոյն զոհիցն։* 14 *Արդ, ասէ, թէ զոհս եւ պատարագս բարբառեցար ոչ հաճիլ, ընկա՛լ ապա զհամբարձումն ձեռաց իմոց յաղաւթս քեզ հաճոյական, քան զանբան արեանցն հեղմունսն։*

ԺԴ. 1 *Արդ, զոր աւրինակ զգալի խունկքն եւ որ ի նմանէ անուշութիւն հոտոցն խորհուրդ էին իմանալի աղաւթիցն անուշահոտութեան, նոյնպէս եւ զանազան անասնոցն զենմունք ողջակէզացն եւ զոհից զանազան գործոց առաքինութեանց էին աւրինակք, զոր պատարագէ ամենայն անձն, որ նուիրէ զինքն Աստուծոյ եւ մեռեալ իցէ յաշխարհիս՝ ըստ զենման պատարագացն խորհրդոց։* 2 *Նմանապէս եւ զգառանցն, եւ զհացից սեղանն յաւրինակ առնու ամբարձման ձեռաց աղաւթականին՝ ասելով. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»։* 3 *Այլ եւ Հոգովն Սրբով*

նկատէ Դաւիթ զսոսկալի խորհուրդ Տեառն իւրոյ գալոյն ի պատարագ։
4 *Ի լրման ժամանակի եւ յերեկոյացեալ դարս, որ եւ սկսանի ի Մեծի հինգշաբաթին ի ժամ երեկոյին ի Վերնատանն խորհրդոյ, ի հաց եւ ի գինի միաւորեալ՝ զինքն տայր ընդրեալ եւ սրբեալ աշակերտացն, զոր իմացեալ՝ մարգարէաբար ասէ՝ զհամբարձումն ձեռացն իւրոց, նման Տեառն համբարձմանն ի վերայ խաչին զբազուկսն. եւ ի ժամ երեկոյին աւանդէր զոգին՝ նուէր հաշտութեան Հաւր եւ պտուղ խնկոյ, յորմէ լնոյր արարածք անոյշաբուրիչք հոտոյ։* 5 |15ա| *Նոյնպէս եւ ի ժամ վերանալոյն ամբարձեալ զձեռսն արարչական՝ աւրհնեաց զառաքեալսն, զոր եւ մեզ պարտ է առնել ի նուիրելն զաղաւթս համբառնալ զձեռսն՝ անուշահոտ առնելով մաքուր վարուք եւ ճշմարտախաւս լեզուաւ՝ յուսալով ի շնորհսն Յիսուսի, զի միասցի եւ մերն ընդ գլխոյն մերոյ՝ նուիրեալ Հաւր ի հոտ անուշից։* 6 *Եւ որպէս Տէրն յաղագս մարդկային սիրոյն ետ զինքն ի մահ եւ պատարագեցաւ սիրով ի խաչին՝ իբրեւ զգառն ի վերայ սեղանոյ, զի մարդիկ հաւատացեալք ի նա՝ ուսցին սիրով նորա պատարագել զանձինս՝ իբր զգառն ի վերայ ողջակիզաց սեղանոյ։* 7 *Վասն որոյ ասէ. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյին»։* 8 *Բայց երիս իրս յիշէ մարգարէս. Համբառնալ ձեռացն եւ պատարագն եւ պատարագելին՝ լինել գառն։* 9 *Արդ, ձեռն իմանամք զգործսն, զի որպէս ձեռն գործոյ է պաշտպան, այսպէս եւ գործն նորին հոմանունաբար կոչի ի Գրոց, եւ գործք կոչին համանգամայն ամենայն տեսակք առաքինութեան, որ ի բոլոր անձնէ նուիրէ Աստուծոյ։* 10 *Եւ գառն աւրինակ է անմեղութեան, որպէս զգառն անբիծ եւ անարատ լինել Աստուծոյ պատարագ, զոր եւ ասէ. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»։* 11 *Եւ Գ. (3) են աւրինակք գործոցն լինել պատարագ Աստուծոյ. ձեռացն համբարձմամբ, որ յեկեղեցիս Աստուծոյ ի բանաւոր հաւտից պատարագին. հոգեկան եւ մարմնական, զոր իւրաքանչիւր անձն զինքն պատարագէ. եւ երրորդ՝ որ բաւական լինի եւ զայլսն նուիրել Աստուծոյ։*

ԺԵ. 1 *Արդ, զհոգեկանն ի Տեառնէ խրատիմք՝ ասելով. «Հոգի է Աստուած. եւ երկրպագուաց նորա հոգով եւ ճշմա|15բ|րտութեամբ պարտ է երկիր պագանել»* (**Յվհ. Դ. 24**)։ 2 *Եւ Դաւիթ ուսուցանէ. «Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ»* (**Սղմս. Ծ. 19**)։ 3 *Եւ ո՞րպէս լինի հոգին պատարագ։* 4 *Յերից մասանց գոլով անձն մարդոյ՝ զերիսն պարտ է պատարագել Աստուծոյ. ի բանականէ անտի զաւրհնութիւն, զոր յաղաւթսն խնկոցն նմանեցոյց, իսկ ի ցասմնականէն՝ զխոնարհութիւնն, եւ ի ցանկականէն՝ զսրբութիւնն։* 5 *Վասն զի խոնարհէ կարէ լինել առանց սրբութեան սրտի, որպէս ամենայն վաւաշոտք։* 6 *Եւ ախտասէրք շողոքորթ են եւ մարդե-*

լուզք։ 7 *Իսկ սուրբ սրտին մեծ ախոյեան է եւ մարտակից ամբարտաւանութիւնն եւ դիւրաւ տիրէ նոցա։* 8 *Վասն այսորիկ զերկուսն միանգամայն առնու. զի ոչ կարէ հաճոյ լինել խոնարհն՝ առանց սրբութեան, վասն զի յախտէն ստորաքարշի։* 9 *Եւ ոչ սուրբն՝ առանց խոնարհութեան, զի ի սկզբնաչարին ախտն վարակի, այլ սրբեալն յախտից եւ խոնարհեալն հոգւով է Աստուծոյ նուէր հաճելի։* 10 *Վասն որոյ ոչ ասէ խոնարհ սոսկ, այլ՝ հոգի խոնարհ։* 11 *Եւ Տէրն զխոնարհն հոգւով երանէ (***հմմտ. Մտթ. Ե. 3***), զի են բազումք յաղքատութեան եւ հոգւով մեծատուն, իսկ այլք բնական ծնեալք ի փարթամութիւն եւ հոգւով աղքատք, ըստ որում եւ Աբրահամ եւ Յովբ։* 12 *Այս է յեղանակ ի հոգւոյն մասանց պատարագել գործով Աստուծոյ, որ է ձեռամբ։* 13 *Իսկ ի մարմնական մասանցն մատուցանել Աստուծոյ պատարագ. Պաւղոս աղաչանաւք առ Հռոմայեցիսն թուղթ խրատել ուսուցանէ՝ ասելով. «Աղաչեմ զձեզ, եղբա՛րք, գթութեամբն Աստուծոյ պատրաստել զմարմինդ ձեր պատարագ կենդանի սուրբ՝ հաճոյ Աստուծոյ» (***Հռոմ. ԺԲ. 1***)։* 14 *Բայց այս խորագոյնս ունի իր*|16ա|*ողութիւնս, եւ լուսաւորելոցն մտաւք միայն տեսանելի, զոր ասէ աստուածայինն Պաւղոս՝ մատուցանել զմարմինս պատարագ, ըստ պատարագաց գառանցն զենմամբ, եւ նոյն կալ եւ մնալ կենդանի։* 15 *Եւ այս զիա՞րդ է հնար ի միում անձին պատարագիլ եւ մնալ կենդանի։* 16 *Արդ, զայս ասելով զմահու եւ զկենաց զանազանութիւն ուսուցանէ մեզ, զի կենդանութիւն է ունակութիւն եւ պատճառ գոլոյ, իսկ մահ է պակասութիւն եւ պատճառ ոչ գոլոյ։* 17 *Եւ երկաքանչիւր ոք ի սոցանէ երկակի ասի. զի կենդանութիւն է, որ բնական է, եւ է, որ յաւժարական։* 18 *Արդ, բնական կենդանութիւն է շարամերձութիւն հոգոյ եւ մարմնոյ, ըստ որում զգայութիւն տայ հոգի մարմնոյ, եւ զգայութիւն մտաց։* 19 *Եւ հոգին յաղթի ի մարմնական հեշտախտութեանց, ընդ որս եւ անառակ կեանք կոչեցան։* 20 *Իսկ բնական մահ է անջատումն հոգոյ ի մարմնոյ. ըստ որում եւ ամենեքեան վախճանիմք։* 21 *Իսկ յաւժարական մահ է ըստ առաքինութեան կենցաղավարիլ. այսինքն մնալ մարմնով կենդանի եւ մեռելութիւն գործել ախտից։* 22 *Վասն որոյ չորքս այս յայսմ բանէ մեզ իմաստասիրեսցին. գոլն, ոչ գոլն, բարին գոլ, չարն գոլ։* 23 *Արդ, գոլն է բնաւորական կենդանութիւն, իսկ ոչն գոլ՝ բնաւորական մահ։* 24 *Եւ բարի գոլն՝ յաւժարական մահ, իսկ չարն գոլ՝ ախորժական կենցաղավարութիւն։* 25 *Արդ, յորժամ ասէ Պաւղոս, թէ՝ պատարագեցէ՛ք զմարմինս ձեր, զախորժական մահուամբ պատարագելն ասէ. եւ զառաքին*|16բ|*ութեամբ կենցաղավարիլն եւ մեռելութիւն գործել ախտիցն՝ ըստ այնմ՝ «Սպանէ՛ք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս» (***Կղս. Գ. 5***)։* 26 *Եւ որպէ՞ս սպանեալ լինին անդամք երկրաւորք։* 27 *Յորժամ զմասունս զգայութեանցն ոչ տամք թոյլ*

գործի լինել մեղաց եւ զինուորիլ ընդդէմ աւրինացն մտացն, այլ արդարութեամբ պատարագիլ Աստուծոյ ի կենդանի մարմնի, այսինքն՝ ձեռք փոխել յանիրաւութեամբ զրկելոյ եւ լինել սիրող գործոյ՝ զանձինս եւ զայլս կերակրելով։ 28 *Պատարագ է Աստուծոյ՝ լեզու յանշահ բանից փոխել ի փառատրութիւնն Աստուծոյ։* 29 *Պատարագ է՝ աչք ի ցանկութեամբ յածելոյն դառնայ ի տեսութիւն արարածոցս եւ այնու՝ ի փառատրութիւն Աստուծոյ. եւ արտասուաւք զինքն ոռոգանէ եւ լինի պատարագ Աստուծոյ։* 30 *Եւ այսպէս իւրաքանչիւր անդամք մարմնոյն, խոտորեալք ի չարէն, եւ գործելով զբարին, պատարագ ասին Աստուծոյ։* 31 *Իսկ երրորդ յեղանակ պատարագելոյն, յորժամ ընդ ինքեան եւ զայլս նուիրէ պատարագ Աստուծոյ, զմարգարէականն ասել բան. «Ահաւասի՛կ ես եւ մանգունք իմ, զոր ետ ինձ Աստուած» (*Եբր. Բ. 13*)։* 32 *Զոր եւ հայրք սուրբ եւ առաջնորդ հաւատին Քրիստոսի զծնեալսն յինքեանց բանիւ ճշմարտութեանն համբարձմամբ ձեռացն յաղաւթս ընծայեն Աստուծոյ, որպէս գառինս պատարագաց, զոր բանիւ սնուցին եւ ձեռամբ Աստուծոյ նուիրեցին, յորոց բազումք եւ անթիւք պատարագեցին զանձինս Աստուծոյ՝ որպէս զուարակս եւ գառինս ի սեղանն երկնաւոր։* 33 *Նախ՝ վկայքն երանելի, եւ յետ նոցա՝ հայրքն ճգնաւորք, որք հրով սիրոյն Աստուծոյ ողջակիզեց|17ա|ան ի մարմնի, ողջակէզք բանաւորք, զենմունք կատարեալք. յորոց եւ դուք իսկ Աստուծոյ պատարագելի եւ կենդանի զենմունք ի բանական տնկոց բնութեանս, խունկք անուշահոտք, հարցն առաջնոց եւ սիրելեացն Աստուծոյ եւ սրբոց գոլով համակարգ եւ համաձեւք, եւ նոցունց դասու եւ կայանի փափագողք եւ փութացողք։* 34 *Պարտ է ձեզ միշտ պատրաստ եւ կազմ ունել զգործարան եւ զսեղան նուիրական աղաւթիցն պատարագաց. այսինքն՝ զլեզու եւ զձեռս. զի զոր աւրինակ ի բուրուառ խնկոցն չէ արժան աղտեղի ինչ լինել, բայց միայն զհուրն եւ զխունկ, նոյնպէս բերանին եւ լեզուին չէ ինչ պարտ աղտեղի բանս ունել, եւ ոչ ձեռին գործի անիրաւութեան լինել՝ ագահելոյ, յափշտակելոյ հարկանելոյ, զի ձեռն եւ լեզու գործիք են աղաւթից եւ նուիրողք։* 35 *Այսու յուսով պահեսցո՛ւք զսոսա եւ մի՛ տացուք գործի լինել չարին, զի նոքաւք զհոգեւոր պատարագն մատուսցուք Աստուծոյ. զշարժումն ձեռինն՝ յողորմութիւն, ի մարդասիրութիւն՝ կառկառեալ մտաւք առ կարաւտեալս, զի համարձակ լիցի համբառնալ առ Աստուած։* 36 *Նոյնպէս եւ բերանոյ լիցի զգուշութիւն առաւել, քան զամենայն անաւթս ոսկեղէնս, պահել յանարգ պէտս վարելոյ եւ անաւթ եւ գործի լինել աւրհնութեանն Աստուծոյ՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։*

Բ.

|17ա| ՅԱՂԱԳՍ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏԱԻՆԻՆ Ի ՁԸ. ՍԱՂՄՈՍՆ, Ի ԲԱՆՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ՈՐ ԱՍԷ. «ՔՈ ԵՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ ՔՈ Է ԵՐԿԻՐ, ՁԱՇԽԱՐՀ ԼՐԻՒ»

Թեպետ Երզնկացին ճառի բնաբանը բերում է ՁԸ. սաղմոսից, սակայն ճառի մեջ ինքնության են առնված քրիստոնեության հավատքի բազմաթիվ խնդիրներ՝ քաղված ինչպես Սաղմոսներից, այնպես էլ Աստվածաշնչի այլ գրքերից:

Քաջատեղյակ լինելով ոչ միայն քրիստոնեական եկեղեցու պատմությանն ու գաղափարախոսությանը, այլեւ՝ անտիկ գրականությանը եւ հեթանոսական կրոնի դիցարանին՝ Երզնկացին հանգամանալի բացատրում է, թե ինչպես եւ ինչու քրիստոնեությունը ժառանգեց հեթանոսական աստվածներին նվիրված բազմաթիվ տոներ եւ ծեսեր, որոնք արմատացած էին ժողովրդի հիշողության մեջ. «ոչ կարացեալ խափանել մերոց հարցն, ապա հարկատրեալ զարտաքին ներքին կարգելով եւ զմարդկայինսն յաստուածայինսն փոխեցին տօնս» (ՄՄ ձեռ. 2173, 17բ):

Պարզ է, որ ԺԳ. դարում հեթանոսական կրոնի հետ ունեցած առնչությունները վաղուց հաղթանակած քրիստոնեության համար այլեւս վտանգավոր չէին: Օրվա գլխավոր խնդիրն այլ էր: Եթե շարքային հավատացյալի համար պարտադիր չէր իմանալը, թե հեթանոսական կրոնի որ ավանդություններն էին անցել քրիստոնեությանը եւ ինչ ձեւափոխություններ էին կրել, ապա հոգեւոր դասի համար դա պարտադիր էր, քանզի վերջինս էր, որ պետք է հավատացյալներին ըստ պատշաճի ներկայացներ ավանդույթների եւ տոների նոր, ներքին իմաստը:

Հարկ է հավելել՝ անկախ քաղաքական եւ տնտեսական իրավիճակներից, Հայոց Առաքելական եկեղեցին արեւելյան եկեղեցիների մեջ ամենակենսունակներից էր եւ, իր թիկունքում ունենալով Կիլիկյան հայկական թագավորությունն ու Մեծ Հայքի զանգվածային հայ բնակչությանը, փաստորեն, դարձել էր արեւելյան քրիստոնեության գաղափարական ու քաղաքական հիմնական հենարանը: Նման կարգավիճակը ԺԳ.-ԺԴ. դարերում հայոց հոգեւոր հայրերին թելադրում էր ե՛ւ Մեծ Հայքում, եւ՛ Կիլիկիայում եղած բազմաթիվ վանական հաստատություններում ամենայն խորությամբ ուսումնասիրել եւ՛ արտաքին, ե՛ւ ներքին գիտությունները, քրիստոնեական հավատի տեսական եւ գործնական խնդիրները: Ընդ որում, նման անհրաժեշտությունը թելադրվում էր ո՛չ միայն տեսական գիտելիքների ծարավով եւ քրիստոնեական այլ եկեղեցիների հետ հարաբերություններում պատշաճ մակարդակով ներկայանալու, այլեւ այս եւ այնտեղ հանդես եկող աղանդներին ու հակառակորդ կրոնական հավատալիքներին հակահարված տալու համար:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 17ա-31բ) եւ 2854 (Ճ. 101ա-5ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Արար Աստուած զեկեղեցի՝ երկինք ի վերայ երկրի եւ յաւրինակ ադինական դր|17բ|ախտին փափկութեան, վասն որոյ զկարգ երկնաւորացն դասու եւ զձե՛ւ զգալի լուսաւորացդ, որ ի յաւգս՝ յեկեղեցի տեսանեմք զայնոսիկ, զորս առաքեալ որդիս լուսոյ եւ որդիս տունջեան անուանէ, որոց եւ Տէր ասաց. «Դո՛ւք էք լոյս աշխարհի» (**Մտթ. Ե. 14**)։* 2 *Իսկ զաւրինակ դրախտին վայելչագեղ եւ անթառամ տնկոցն եւ ծաղկացն բերեն յինքեան սուրբքն եւ երամք արդարոցն, ըստ սաղմոսին. «Արդարքն որպէս զարմ[աւենի] ծաղկ[եսցին] տնկ[եալ] եւ ի գաւ[իթս] ծաղկե[սցին]» (**տե՛ս Սղմս. ՂԱ. 13-14**)։* 3 *Եւ է գաւիթ վերնոյն Երուսաղէմի եկեղեցի սուրբ եւ դրախտ ծաղկեալ բանական տնկովք եւ անմահական պտղովք, զորս միշտ նուիրեալ ընծայեմք Աստուծոյ։*

Բ. 1 *Արդ սովորութիւն էր հեթանոսաց, զի զծառս եւ զծաղիկս իւրեանց պաշտամանց նուիրէին եւ տաւնս ուրախականս յանուն նոցա կատարէին, որպէս եւ յորմզդական տաւնին, զոր գիրք մակաբա[յե]ցւոցն պատմէ, եւ որպէս Տրդատ սրբոյն Գրիգորի Անահտայ տայր տաւնել։* 2 *Իսկ Քրիստոսիւ զաւրացեալ քրիստոնէութեանս, զվաղնջուց սովորութիւնն ո՛չ կարացեալ խափանել մերոց հարցն, ապա հարկաւորել զարտաքինն ներքին կարգելով եւ զմարդկայինսն յաստուածայինսն փոխեցին տաւնս։* 3 *Ըստ որում եւ Մովսէս սովորելոց հրէիցն, զոր յԵգիպտոս առնէին, զնոյնն եւ ի տաւն տաղաւարահարացն հրամայեաց առնել։* 4 *Առնուցուք ձեզ ասէ, «Ոստս գեղեցիկս ծառոց եւ կողերս յարմաւենեաց, եւ ոստս ի տերեւախիտ ծառոց եւ յուռեաց, եւ ի հագնեաց ձորոց, ուր|18ա|ախ լինել առաջի Տեառն զեւթն աւր տաւնելով» (**հմմտ. Բ Մակ. Ժ. 7-8**)։* 5 *Իսկ մեք զեւթ եւթնեկի արարեալ հիսուն աւր կատարեմք՝ զյիսներրեկն կատարելով։*

Գ. 1 *Հեթանոսք զարմաւենին արեգականն նուիրելով, իբր թէ զճառագայթից արեգականն զնմանութիւն վարսիւն բերելով, բազմաշառաւիղ յարձակմամբ երկայն ծայրիւն ի վեր առ նա դիմելով անհաս ձեռին մարդոյ։* 2 *Եւ յաւէտ տունկս այս առ մարդ նմանութիւն ունելով վարսաւորեալ գլխովն։* 3 *Եւ զձիթենի Աթենայ նուիրէին, որպէս նախ բուսաւ յԱտտիկէ ի դղեակն, եւ ալիք ջուրցն ոչ կարացին հասանել ի նա, եւ ոչ կտրել ոք զաւրեաց սրով կամ հրով։* 4 *Վասն որոյ զյաղթողսն նովաւ պսակէին յողոմպիական նահատակութիւնսն, զոր եւ ասեն իմաստունք զբնաւորեալսն առ տնկոյն սքանչելիք բաւական գոլ ի խրատ տեսողացն, զի առողջական ունի զաւրութիւն եւ լուսոյ է նիւթ եւ ողորմութեան հոմանուն։* 5 *Նոնենի՛ Դիոնեսեա՛յ էր ձաւնել, որպէս թէ ի նորա արեանն կաթուածոյ է բուսեալ։* 6 *Նմանապէս եւ զորթ, թէ նա՛ եգիտ ուրախութիւն հիւրոց։*

7 Սարդէ՛ եւ Տաֆնի՝ Ապողոնի։ 8 Նարդոս ծաղիկ՝ եթէոպացի պատանեկին, վասն հեղձամղձուկ լինելոյ ի ջուրսն։ 9 Նեմիական լախուրն՝ կորիբանդացն, որպէս թէ ի նոցա պատճառս բուսաւ։ 10 Սոճի խոթիմական[1] կոոցն ձաւնէին։ 11 Իսկ զվարդ՝ Ափրոդիտեայ, եւ զմուրտ եւ զյեսմիկ՝ Արամազդեայ, իբր թէ ի նորայ հրամանէն ծառք եւ ծաղիկք բուսան։

Դ. 1 Իսկ քրիստոնէից զմարմնաւորն նոցա եւ զախտ|18բ|աւոր խորհուրդ առեալ ի հոգեւորսն եւ յաստուածայինսն փոխեցին։ 2 Եւ զարմաւենին իմանալի արեգականն՝ արդարութեան նուիրեցին, զոր տղայքն ի յովանակաճեմ ճանապարհին ընդառաջ տանելով յաղթութեան նշանակ, իբր արդարեւ յաղթող մահու եւ դժոխոց, յաղագս զՂազարն յարուցանելոյ։ 3 Եւ զձիթենին տեառնեղբաւրն նուիրեցին, որ ի հնումն ունէր[2] զքահանայական եւ զթագաւորական հրամանն, զորոյ զխորհուրդն Դաւիթ ցուցանէ։ 4 Եւ որպէս ձիթենի պտղալից[3] ի տանն Աստուծոյ։ 5 Եւ զնոնենին, զոր ի կաթլաց արենէն Դիոնիսեայ ասեն, զայն սրբոյն Ստեփանոսի նուիրեցին[4], որ ի զարկուածոյ քարանցն արեանն յորդագոյն կաթուած յերկիր հոսեալ լինէին։ 6 Եւ զտունկ որթոյ բոլոր եկեղեցույ նուիրեցին, ըստ մարգարէին բանի. «Կին քո որպէս զայգի վ[այելուչ]» (Սղմս. ՃԻԷ. 3)։ 7 Իսկ զսարդի եւ զտափնի՝ սրբոյն Սարգսի եւ Բագոսի նուիրեցին, եւ զսոճի սրբոց վկայիցն նուիրեցին։ 8 Իսկ զվարդ, որ Ափրոդ[իտ]եա՛յ էր ձաւնեալ ի հեթանոսաց, իբր թէ կոխեաց զփուշ վարդի եւ յարիւնէ նորա էառ զգեղն կարմիր, եւ զի յարիւնէ քաջի՛ է եւ հրոյ նման ներկուածովն, եւ նմա՛ն է ոսկէտեսակ վարսի եւ է թագ ծաղկանց, վասն որոյ բոլորք նովաւ կոչին Ռոդիսմոս, որ է Վարդավառ, յերկոտասանէն մայիս ամսոյ մինչեւ ի կատարումն յունիս ամսոյ, զոր քրիստոնէից առեալ՝ սրբոյ Աստուածածնին նուիրեցին, իսկ զմուրտ եւ զյեսմիկ սրբոց առաքելոցն նուիրեցին, յաղագս կատարման Պետրոսի եւ Պաւղոսի, յելսն յունիս ամսոյ։

Ե. 1 |19ա| Արդ, սկսանի ծաղկանց տաւնն զկնի պենդակոստէին, մինչեւ ցաւր կատարման առաքելոցն, թէ՛ յիսուն գայ եւ թէ՛ քառասուն, ըստ փոփոխման զատկին։ 2 Եւ զաւուրս զայսոսիկ տաւն ծաղկանց կոչեմք եւ վարդավառ անուանեմք, որպէս եւ սուրբն Գրիգոր ասէ. «Զաւրքն լուսեղէն ցանկային իջանել ի հոտ ծաղկաձեւ վարդագոյն արեան վկայիցն»[5]։

Զ. 1 Եւ զի՞նչ ունի խորհուրդ զաւուրս զայսոսիկ վարդավառ անուա-

---

[1] ձ՝ սթիմական
[2] ձ՝ էր
[3] ձ՝> պտղալից
[4] ձ՝ նուիրեցին + որ է թագ ու պարծանք ամենայնի իսկ
[5] ձ՝ ծաղկանց արեանցն վկայից

նել[1]*։* 2 *Առաջինն է այս, զի Մովսէս յելսն յԵգիպտոսէ հրամանաւն Աստուծոյ պատուիրեաց որդւոցն Իսրայիղի. «առ աւար կողոպտեա՛ զԵգիպտացիսն» (*հմմտ. **Եք ԺԲ. 36***)։* 3 *Եւ առեալ բերէին ծածուկ ի միմեանց զգանձսն Քանանու, որ յԵգիպտոս յորդեալ էր ի տանէն հնդկաց՝ սահմանակցացն իւրեանց, իբրեւ յանհոգս ի տանջողացն լինէին։* 4 *Յայնժամ ցուցանէին միմեանց*[2] *ի տաղաւարս իւրեանց յայտնի եւ տաւն ուրախութեան կատարէին։*

Է. 1 *Այսպէս էր արարուածք տաւնի նոցա ի տաղաւարսն։* 2 *Հատանէին ոստս ի հագնեաց, յուռեաց եւ ի տերեւախիթ ծառոց, զվարդ եւ զյեսմիկ, եւ զծառոցն եւ զծաղկանց արմատսն դնէին յանաւթս ի ջուրն, զի աննուաղ մնասցէ տեսիլն յաչս որդոցն Իսրայիղի։* 3 *Եւ զայսոսիկ աւուրս վարդավառ կոչէին, մանաւանդ զի յաւուրս յայսոսիկ փթթի վարդ։* 4 *Եւ վասն այնորիկ աւրինադիրն նոցա Մովսէս առնէր զայն, զի փարաւոն արքայ պաշտաւն մատուցանէր Նեղոս գետոյ, եւ այգոյն այգոյ ելանէր մեծամեծաւքն իւրովք, շրջէր պայծառապէս առ եզերբ գետոյն, որպէս ասաց |19բ| Տէր ցՄովսէս. «Առ վաղիւն յարուցեալ կացցէս առաջի փարաւովնի, զի ահա ելանէ ի գետ անդ զոհել այգոյն» (*հմմտ. **Եք Թ. 13***), զի աւր մեծ էր թագաւորին եւ ամենայն եգիպտացւոցն, զոր առնէին, սփռելով զծաղիկս վարդիցն ի վրանս մեծամեծացն։* 5 *Արդ, զնոյն աւրինակ հրամայէր Աստուած առնել որդոցն Իսրայիղի՝ ի փրկութիւնսն իւրեանց, զի մի՛ յիշեսցեն զուրախական տաւնս նոցա եւ յոգոց հանիցեն։* 6 *Վասն որոյ զմիտս նոցա առատութեամբ գանձուցն եւ գեղեցկատեսիլ ծաղկաւքն հանգուցանէ*[3]*։* 7 *Իսկ մեք, զմարմնատեսակն նոցա ի հոգեւորսն փոխելով, յիշատակաւք տէրունական տաւնիցն եւ սրբոցն եւ սիրելեացն Աստուծոյ, որք են գանձք եկեղեցոյ, զոր ա՛ռ աւար Տէրն մեր ի խաւարաբնակ կենացաղոյս։* 8 *Սոքա՛ են եւ տունկք կենդանի եւ ծաղիկք անթառամելիք, եւ բժշկարարք հոգոց, որք բուսան ի դրախտի եկեղեցոյ, ի բանական բնութեանս անդաստանէ, զոր նուիրեմք Աստուծոյ եւ ուրախանամք հոգեւոր տաւնիւք։*

Ը. 1 *Արդ, այսոքիկ պատճառ տաւնիս ընդ այլոց*[4] *ասացուածոցն բանիցն, որ եղեալ են ի նախնեացն մերոց հարց։* 2 *Այժմ տեսցուք եւ զառաջի եղեալ բանս մարգարէին, որ ի սաղմոսարանէ*[5] *անտի։* 3 *Բայց նախ քննեսցուք զվերնագիր սաղմոսիս։* 4 *Արդ, ունի ՁԸ. (88) սաղմոսն զաւ-*

---

[1] *Ձ խորհուրդ անուանեալ*
[2] *Ձ > միմիանց*
[3] *Ձ գանգնէ] հանգուցանէ*
[4] *Ձ ըստ այլոցն*
[5] *Ձ սաղմոսէ*

րութիւն եւ տեսութիւն ի վերայ երից ժամանակաց. անցելոյն[1] *եւ ներկայիս եւ ապագային:* **5** *Ըստ անցելոյն՝ աւրհնութիւն եւ գոհութիւն է շնորհացն Աստուծոյ Հաւր, որ ողորմութեամբ եւ գթութեամբ շինեաց զաշխարհ արարչակից բանիւն, եւ հ|20ա|ամազաւր սուրբ հոգւովն, եւ ի խախտելն յանցաւորութեամբ*[2] *եւ ի կործ[ան]մանէ մեղացն, խոստացաւ տալ ուխտ «զՄիածին Բանն» իւր:* **6** *Եւ նոյն առաջին գթութեամբն եւ ողորմութեամբն արարչական շինել վերստին զաշխարհս եւ կանգնեալ զանգեալ եւ զկործանեալ խորանն Դաւթի, որ է*[3] *բնութիւնս Ադամայ, սքանչելի փրկութեամբ եւ տնաւրէնութեամբ որդոյն Աստուծոյ, որ կոչեցաւ որդի Դաւթի:* **7** *Եւ հաւատացեալք աւետարանի բանի նորա, ծնեալք յարգանդէ աւազանին մաքուր մաւրէ եկեղեցոյ, կոչեցան զաւակք եւ որդիք, եւ տուն, եւ տաճար փառաց անուան նորա:* **8** *Վասն որոյ եւ մարգարէական հոգովն հայի ի ժամանակ գալստեանն Քրիստոսի եւ ի յեղանակ անհամեմատ փրկութեանն մերոյ, եւ ասէ. «Տէր Աստուած զաւրութեանց. ո՞վ նման է քեզ»* **(Սղմս. ՁԸ. 9)***, եւ խոստովանի զմարդացեալն Աստուած երկնային զաւրացն տէր եւ զզաւրութիւնն աննման, եւ պատմէ զգործ սքանչելի զաւրութեան նորա, ըստ կարգի յայսմ սաղմոսի:*

Թ. **1** *Ունի մաւտ ի կատարածի սաղմոսիս եւ վասն աւերմանն Երուսաղէմի, վասն թողլոյն զաւրէնս Աստուծոյ եւ ո՛չ գնալոյ նոցա ի ճանապարհս իրաւանց նորա եւ բազում անգամ սաստիւ գաւազանի ցասմանն հարեալք, եւ դարձեալ ողորմութեամբ մխիթարեալք, եւ ո՛չ խրատեցան:* **2** *Վասն որոյ մերժեալ անարգեցան եւ քաղաքն եւ սրբութիւնքն աւերեալ կործանեցան:* **3** *Պաշտի եւ սաղմոսս այս ի սուրբ եկեղեցի, որ ամենայն աւուր երգեմք եւ մարգարէական բանիւս ընդ Աստուծոյ խաւսիմք, զերախտեացն Աստուծոյ գոհանամք:* **4** *Եւ թէ*[4] *վասն տկարութեան մարմնոյ ի մեծամեծ եւ յան|20բ|զուգական շնորհս պարգեւաց Քրիստոսի*[5] *սխալեմք, հայրական գթով խրատիմք:* **5** *Եւ դարձեալ առ նոյն գթածն Հայր, որ ուխտեաց մեզ որդովն արքայութեանն իւր ժառանկաւորս լինել, նոյն արեամբ ուխտի որդոյն իւրոյ եւ յիշատակաւ կենարար մահուան նորա դարձեալ քաւիմք եւ արդարանամք:* **6** *Եւ ո՛չ ոք զրկի յայսմ քաւութեան եւ փրկական շնորհէս, բայց թէ ոք անհաւատ լիցի մեծի շնորհիս եւ յաճախէ ի մեղս անդարձապէս եւ անզղջանալի*[6]*, եւ պղծէ զսրբութիւն տաճարի*

---

[1] *ձ՝ այսինքն՝ անցելոյն*
[2] *ձ՝ անցաւորութեամբ*
[3] *ձ՝> որ է*
[4] *ձ՝> թէ*
[5] *ձ՝> քրիստոսի*
[6] *ձ՝ զզջանալի*

իւրոյ ախտիւ մեղացն։ **7** *Եւ քակի բանական տաճարիս Քրիստոսի պարիսպ զանազան առաքինութեան, եւ զսերմն բանի վարդապետութեանն Քրիստոսի յափշտակեն ի սրտից նոցա անցաւոր դեւքն, որք իբրեւ զճանապարհ կոխեն զանազան ախտիւք զսիրտս եւ սերմն կենաց բանին ցամաքեցուցանեն։*

Ժ. **1** *Այլ այժմ տեսցուք զբանս սաղմոսիս, որ առաջի եդաւ մեզ, որով պաշտել սպասաւորեմք ի խորհուրդ աւուրս տաւնի, որ եւ ասէ. «Քո՛ են երկինք եւ քո՛ է երկիր՝ զաշխ[արհս] լր[իւ]»։*

ԺԱ. **1** *Առ ո՞վ ասէ զայս*[1] *մարգարէս։* **2** *Առ Աստուած Հայր եւ եւ Միածին Որդին*[2] *եւ Բանն Հաւր, առ որ փոքր մի յառաջ ասաց. «Տէր Աստուած զաւրութեանց, ո՞վ նման է քեզ», հզ[աւր] յամենայն բնութեանց եղականաց, զի էական բնութիւն քո անհաս եւ անսահմանելի։* **3** *Ի գորովական սիրոյ բարեգործաց բարերարութեան քում ո՞վ նման է Քեզ, կամ յիմաստնոցն կոչեցելոց ամենիմաստ արուեստի քո արարչութեանդ, կամ ի տէրանց եւ ի դատաւորաց տիրական դատ|21ա|աստանի քո եւ արդար իրաւանց, կամ յերկնային եւ երկրաւոր զաւրաց զաւրութեան քում անպարտելի, զի բնութեան ամենայնի ես Արարիչ, եւ անչափելի՛ է հանճար իմաստութեան քո, եւ տէրութիւն քո մեծ եւ անբաւանդակելի։* **4** *Նոյնպէս մեծամեծ են զաւրութիւնք տէրութեան քո մեծի, զի զզաւրութեանդ քո զներգործութիւն ցուցեր ո՛չ ի պատժել, այլ յողորմելն, զի հրեշտակք ետուն աւրէնս խիստս, եւ յերեւելն իւրեանց յերկրի*[3]՝ *ցուցին պատժողական զաւրութիւնս։* **5** *Իսկ Որդիդ Աստուծոյ քաղցր եւ հեզ եւ աւրէնք քո լուծ թեթեւ, յերեւելն քո յերկրի զպատժողական զաւրութիւնն քո ցուցեր ի թզենին եւ ո՛չ ի մարդիկ։* **6** *Ունին հրեշտակքն զաւրութիւնս պատժողական, զոր ցուցին ի Սոդոմ եւ ի զաւրսն Հռափսակայ, բայց զայս զաւրութիւնս ո՛չ ունէին, վասն ճշմարտութեան եւ արդար իրաւանց գալ եւ մարմին զգենուլ եւ զնոյնն արդարացուցանել, վասն որոյ ո՛չ ոք նման է քեզ։*

ԺԲ. **1** *Եւ ապա ըստ կարգի պատմէ զզաւրութիւն, եւ գայ յա՛յս եւ խոստովանի զմարդացեալն Աստուած արարիչ եւ տէր երկնի եւ երկրի, ասելով. «Քո՛ են երկ[ինք] եւ [քո՛] երկ[իր]՝ զաշխ[արհս] լր[իւ]»։* **2** *Եւ քանզի է՛ Քրիստոսի երկինք եւ երկիր ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլեւ ըստ մարդեղութեանն եւ ըստ մարմնոյ տնաւրէնութեանն, եւ վասնզի խառնեալ եւ միաւորեալ են անյեղապէս եւ անշփոթաբար բնութիւն Բանին եւ մարմնոյն, նոյնպէս եւ յեղանակ արարչական տէրութեանն երկնի*

---

[1] *ձ՛> զայս*
[2] *ձ՛> որդին*
[3] *ձ՛> յերկրի*

եւ երկրի, որ ըստ աստուածութեանն է եւ ըստ մարդկութեանն խառնեալ են եւ միաւորեալ։ **3** *Վասն որոյ*[1] *տեսցուք, թէ* |21բ| *ըստ քանի՞ յեղանակաց ասի տիրելն ումեք ի վերայ ստացուածոց, որով աւրինակաւ իմանամք զՔրիստոս ի տէրութեանն երկնի եւ երկրի, որ ըստ աստուածութեանն է եւ ըստ մարդեղութեանն։*

ԺԳ. **1** *Արդ, չորք են յեղանակ տէրութեանց ի վերայ ստացուածոց։* **2** *Առաջին, զոր ինչ ոք անձամբ եւ զաւրութեամբ*[2] *ձեռին ստանայ իւրով գործով՝ զշինութիւն տաճարաց կամ զանդաստան երկրագործաց, այնմ տէր ասի։* **3** *Եւ երկրորդ, զոր ի հարց եւ ի ծնաւղաց անկանի որդեաց մասն ժառանկութեան, այնմ տէ՛ր ասին, իբր սեփհական հայրենեաց։* **4** *Եւ երրորդ, եթէ գնովք ոսկւոյ եւ արծաթոյ ստացեալ է ի ժառանկութիւն եւ տիրէ նմին։* **5** *Եւ չորրորդ, եթէ ոք պատերազմական զինու եւ զաւրութեամբ ի մարտ մտեալ տիրէ գաւառաց եւ ստացուածոյց, զոր առնու յաւար, եւ կամ արդար իրաւամբ ի դատաստան [մտ]եալ՝ զստացուածս հարց իւրոց թափէ ի բռնաւորէ ումեքէ, զոր յափշտակեալ էր ի բերմանէ ժամանակաց։*

ԺԴ. **1** *Արդ յեղանակացս յայսցանէ առաջիննն աստուածութեան Բանին պատշաճի եւ այլքն մերոյ բնութեանս առելոյ եւ աւծելոյ աստուածութեամբն եւ եղելոյ զուգաստուած։* **2** *Ըստ որում ասէ. «Քո՛ են երկինք եւ քո [է երկիր]»։* **3** *Քո են, վասն արարածք գոլոյ արարչիդ եւ են եւ ասին պատճառաւորքս պատճառիդ եւ սկսեալքս անսկզբնականիդ, ընդ ծնողի քում Հաւր եւ պատճառի եւ Հոգոյդ Սրբոյ փառակցի, զոր եւ մարգարէս խոստովանի. «Ողորմութեամբ Տեառն լի [եղեւ երկիր] եւ Բան[իւ Տեառն] երկ[ինք] հա[ստատեցան]» (**Եմմտ. Սղմս. ԼԲ. 5-6**)։* **4** *Եւ մարգարէն Եսայի ի դիմաց Աստուծոյ Հաւր ասէ. «Այսպէս աս*|22ա|*է տէր Աստուած, որ արար զերկինս եւ կանկնեաց զնա, որ հաստատեաց զերկիր եւ որ ի նմա, եւ ետ շունչ մարդկան, որ ի վերայ նորա» (**Եսայ. ԽԲ. 5**)։* **5** *Դարձեալ ասէ. «Ե՛ս արարի զերկիր եւ զմարդն ի վերայ նորա, ես ձեռամբ իմով հաստատեցի զերկինս» (**Եսայ. ԽԲ. 12**), եւ ամենայն*[3] *ուրէք ձեռն եւ բազուկ եւ աջ Աստուծոյ Հաւր, եւ Աստուծոյ իմաստութիւն։* **6** *Նոյն է եւ բազուկ*[4]*, զի որպէս*[5] *մեք զգործս ձեռամբ առնեմք, որ է ի բնութենէս մերմէ, եւ ո՛չ ստացական գործի, այսպէս եւ Հայր զամենայն ինչ բնութիւն էակից որդւովն արար. զերկինս եւ զերկիր եւ զամենայն, որ է ի նոսայ։* **7** *Որում եւ Աս-*

---

[1] *ձ՛> որոյ*
[2] *ձ՛> զորութեամբ*
[3] *ձ՛> ամենայն*
[4] *ձ՛> աջ աստուծոյ... բազուկ*
[5] *ձ՛> զի որպէս*

տուածաբանն Յոհ[աննէս] ասէ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ», եւ Պաւղոս ասէ. «Որով եւ զյաւիտեանսն արար, որ է լոյս փառաց եւ նկ[արագիր յէ-ութեան] եւ կրէ զամենայն բան[իւ] զաւր[ութիւն իւրոյ]» (Եբր. Ա. 2-3)։

ԺԵ. 1 *Արդ, ըստ այսմ յեղանակի է՛ երկինք եւ երկիր Քրիստոսի, ըստ աստուածութեանն եւ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյ արարչութեանն։* 2 *Վասն որոյ ասէ. «Զաշխ[արհ] լրիւ իւր[ով] դու հաստ[ատեցեր]»։* 3 *Աշխարհ կոչէ, որ յերկնէ եւ յերկրէ եւ ի մէջ սոցա գոյացութիւնք, որ են չորից տարերց, զի երկին եւ երկիր ասելն, ըստ քերթողացն բառի երկուց իրաց է նշանակութիւն։* 4 *Ըստ որում, ի գիրս քերականին ասէ. «Նախ վերծանութիւն, երկիր՝ զրուցատրութիւն»։* 5 *Ըստ այսմիկ եւ երկին երկու իրս նշանակէ. զհուր եւ զհողմ, եւ երկիր՝ զջուր եւ զհող, որ են տարերք չորք, յորմէ աշխարհ լրիւ իւրով հաստատեցան։* 6 *Եւ թէ որպէ՞ս է հաստատութիւն երկնի եւ երկրի։* 7 *Մարգարէն Եսայիաս ցուցանէ զաւրինակ, ասելովն. «Կանգնեաց զերկինս իբրեւ զկամար |22բ| եւ ձգեաց իբրեւ զխորան եւ հաստատեաց զերկիր բնակեալ ի նմա» (Եսյ. Խ. 22)։* 8 *Ոչ միայն ըստ պարզ տեսութեան*[1] *զերկիր ասէ հաստատեաց, բնակիլ ի նմա բազմազան կենդանեացն ազգի, այլ ըստ նուրբ տեսութեան զերկիր ասէ հաստատեաց բնակել ի նմա, այսինքն՝ ի մէջ երկուց կիսագնդից ի մեծ եւ յահագին ծոցն հրեղէն երկնի, որում յոյնք եթերն կարդացին, եւ ելեսացիքն՝ հուր թաղկեալ ասացին, որ ըստ հայական բառիս ասի հրատ բոցագոյն։* 9 *Եւ է՛ սա մարմին անշարշարելի, հուր պարզ՝ ո՛չ յումեքէ եւ ո՛չ ոքի նմա. ինքն յինքեան, ինքն առանձին, մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, անխո՛ր, անփոթ, անգոգ՝ պա՛տ առեալ զերկրաւ բոլորա՛կ, գնդաձեւ, շրջագայ արագութեամբ անչափելի՛ եւ անթուելի եւ անտեսանելի։* 10 *Եւ ի ներքոյ պրկմանն արգելեալ են սաստկութիւնք*[2] *հողմոցն վերնոցն, եւ ի մէջ առեալ՝ փակեաց զմեծ մարմինս զայս երկիր։* 11 *Եւ ձեւ բոլորակ շրջագային բաժանի յերկուս կիսագունդս՝ ի վեր եւ ի վայր։* 12 *Եւ հայեցուածք երկուց կիսագնդիցն հանդիպութեամբ կշռին ուղիղ ի վերին եւ ի ներքին տրամագիծսն։* 13 *Եւ ի մէջ նորա արգելեալ փակեցաւ ցան եւ ցիր հող երկրի. եւ ընդ նոյն անգայտութիւն հողոյն, խառնեալ մանրասիք խոնաւութիւն ջուրցն, որ էր անյարմար եւ անկազմ, եւ առ ի յոյժ շրջագայութենէ վերին մարմնոյն եւ հողմոցն սաստկութեամբ ի վեր մղելով, եւ երկիր թանձրահող ծանրութեամբ կաւոյն ի վայր հակելով, կ|23ա|ափչի հողն յիրարս եւ ճնշի իբր ի մամուլս մանրասիք խոնաւութիւն ջուրցն ի*

---

[1] *Ձ՝ պարզութեան] պարզ տեսութեան*
[2] *Ձ՝ արգելքն սաստկութեամբ*

վե՛ր կոյս, եւ խտանայ երկրային մարմինս ի ներքոյ ջուրցն եւ լինի սա-
լայատակ հաստատրամ, անպախելի եւ անպայթելի, նեցուկ անվթար՝
զբազմութիւն ջուրցն յինքեան ունելով, զոր եւ ծով անուանեաց։

ԺԶ. 1 *Եւ այսպէս, երկիրս չորեքկուսի ձեւով ի միջոց երկնի կառուցաւ,*
եւ ո՛չ թոյլ տայ սմա երկին իւրով արագութեամբն եւ սաստիկ հողմոյ
հնչմամբն ի ներքին կիսագունդն խոնարհել, եւ ո՛չ իբր[1] *բնական ծանրու-*
թիւնն հանդերձ բազմութեամբ ջուրցն թողու ի հասարակակշիռ կիտէն ի
վեր բերիլ։ 2 *Եւ այսպէս յերկուց հակառակացն միջոցի ունի զտրամա-*
գիծսն եւ կա՛ ի հաստատութիւն ամենայնիւ, որ ի ծովու եւ որ ի ցամաքի
են բնութիւնք եղանակաց։ 3 *Եւ այսպէս, ըստ մարգարէին բանի, հաստա-*
տեաց զերկինս իբրեւ զկամար եւ ձգեաց իբրեւ զխորան, եւ հաստա-
տեաց զերկիր՝ բնակել ի նմա։ 4 *Զոր եւ մարգարէս Դաւիթ ասէ. «զԱշ-*
խարհս լրիւ իւրով դու հաստատեցեր, զհիւսիս եւ զհարաւ Դո՛ւ արարեր»
*(***Սղմս. ՁԸ. 12-13***)։* 5 *Արդ, զհիւսիս եւ զհարաւ յիշելով, դարձեալ եւ այժմ*
զամենիմաստ արուեստ սքանչելի գործոցն Աստուծոյ ասէ, որ երեւի յաշ-
խարհ ի ձեռն ընթացից եւ շարժմանց փոփոխմանն արեգական, ուստի
լինին չորք յեղանակք. գարնանային եւ աշնանային հասարակաւորու-
թիւն, ամառնային եւ ձմեռնային փոփոխմունք յեղանակաց։ 6 *Եւ գործի*
այս յարեգակնէն յընթացս երկոտասան կենդանակերպիցն, զի սկսեալ ի
Խոյէն մինչ ի Կշ|23ք|իոն հիւսիսային՝ կոչին կենդանակերպք, եւ երկիր՝ ա-
րեգականն եւ ջերմային բնութիւն, զի ի նոսա գնալով արեգականն, ջեր-
մանան բնութիւնք աւդոց։ 7 *Իսկ վեց կենդանակերպն՝ ի սկզբանէ Կշռին*
մինչեւ ցԽոյն հարաւայինք կոչին, եւ երկիր լուսնին ասին եւ հով բնու-
թիւն, զի ի նոսա գնալով արեգականն՝ ի ցրտութիւն փոխին աւդք։ 8 *Եւ*
բաժանին ի չորս յեղանակս այսպէս. երեք կենդանակերպք՝ Խոյ եւ Յուլ
եւ Եկաւորի գարնանայինք կոչին։ 9 *Եւ է՛ այս ի միջի գալով արեգականն,*
եւ է՛ ջերմ եւ գէճ եւ բնութիւն արեան։ 10 *Եւ բարձրանայ արեգակն մինչեւ*
ցԽեցգետինն։ 11 *Իսկ երեք կենդանակերպքն՝ Խեցգետին, Առիւծ, Կոյս*
ամառնային յեղանակ ջերմ գոլով՝ եւ չոր, եւ աճեցուցիչ խարտեշի մաղ-
ձին։ 12 *Եւ դարձեալ արեգակն ի միջոց կոյս եւ խոնարհիլ։* 13 *Իսկ երեք*
կենդանակերպք՝ ի Կշիռէն մինչ ի վճար Աղեղնաւորին աշնանային կոչի,
հասարակ ի նոսա գոլով արեգականն։ 14 *Եւ ի միջոցէն փոքր փոքր ի խո-*
նարհ իջանելով ընդ հարաւ, եւ է բնութիւն հով եւ գէջ եւ մաղասի։ 15 *Իսկ*
յԱյծեղջիւրէն սկսեալ Ջրհոս եւ Ձուկն՝ երեք կենդանակերպ, որով առնէ[2]

---

[1] *Ձ՛ իւր] եւ ոչ իբր*
[2] *Ձ՛ կենդանակերպով առնէ*

ձմեռն՝ հով գոլով եւ չոր, եւ բնութիւն զսեւ մաղձոյ։ **16** *Եւ դարձումն ի բարձրութիւն արեգականն յԱյծեղջիւրէն մինչ ի վճար Եկաւորին, որպէս եւ խոնարհիլն ի [խեց]գետնոյն մինչեւ ի յաւարտ*[1] *Աղեղնաւորին, ի հիւսիս կողմ գնալով, բարձրանալ ասի, եւ յիջանելն ընդ հարաւ՝ խոնարհիլ։* **17** *Եւ է կողմանքս երկու՝ հիւսիս եւ հարաւ անշէն եւ անբնակ, որ առ եզերաւք աշխարհիս։* **18** *Հիւսիս՝ վասն առաւել ցրտութեանն ասի |24ա|, եւ հարաւ՝ վասն սաստիկ*[2] *ջերմութեանն։* **19** *Իսկ որ յերկուց միջոց է՝ բարեխառն է եւ բնակութիւն կենդանեաց մարդոյ եւ անասնոյ։* **20** *Արդ, ասէ. «Զհիւսիս եւ զհարաւ Դո՛ւ արարեր»։* **21** *Եւ որ ինչ յերկուց կողմանցս այսոցիկ՝ գեղեցկայար մար փոփոխմունք լինին յաշխարհի յարեգակնային ընթացիցն, զի եւ բնութիւնք աղբերաց ընդ փոփոխումն յեղանակացս շրջափոխեալ լինին, վկայ գոլով, որ ինչ ի ներքոյ երկրի գործին ի փոփոխմանէ աւդոց, որ անտեսն է ի մէնջ, զի յաւուրս ամարանոյ՝ ի բարձրանալ արեգականն, հալածի հիւսիսական ցրտութիւն աւդոյն ի ներքոյ երկնից, ուստի հով եւ սառն բխեն բնութիւնք աղբիւրաց ջուրց, որք ի վեր բերեալ լինին։* **22** *Իսկ ի հարաւ իջանելովն եւ յամել ջերմութիւնն ընդ երկրաւ՝ ջեռնուն շտեմարանք ջուրցն, զի յորժամ ազդէ հարաւայինն ի ներքինսն, հիւսիսայինն բռնացեալ տիրէ յերեսս երկրի*[3]*։* **23** *Նմանապէս եւ բնութիւն մարդոյն, որ փոքր կոչի աշխարհ, ըստ բնութեան երկրի գոյանայ, զի ձմերայնի ջերմն լինի ներքին որովայնն, ուստի եւ դիւրահալ կերակուրքն եւ ի վերոյ մարմինն հով. եւ յամարայնի՝ ի վերոյ ջերմ եւ ի ներքոյ՝ հով, զոր իմաստունք ի բժշկաց Ասկղիպիադէս եւ Հիպոկրատէս բնախաւսեցին։* **24** *Ուստի պարտ է իմանալ, թէ ի բարձրանալն արեգականն ի կողմ հիւսիսոյ եւ հալածեալ սառամանեացն հիւսիսի ի ներքին փորուածն՝ ի ներքոյ երկրի լինի ձմեռն եւ ի վերին երեսս՝ ամառն. եւ ի ցածուլն արեգականն՝ հարաւ|24բ|այինն ջերմութեանն արեգակնային ճառագայթիցն զաւրութեամբ, ի ներքոյ երկրի մտեալ ի փորուած ներքին կիսագնդին, յայնժամ զաւրացեալ հիւսիսայինն՝ յերեսս երկրի լինի ձմեռն, իսկ ի ներքոյ երկրի՝ ամառն։* **25** *Արդ, ասէ, թէ զարեգակն եւ զամենայն լուսաւորսդ, որ, յերկնի եւ զասդմունս*4 *փոփոխման աւդոց, ուստի լինին շարժմունք յեղանակաց, եւ գործ ի՛, յերկու կողմանս երկրի՝ ի հիւսիս եւ ի հարաւ, «Դու արարեր, Թափաւր եւ Հերմոն անուն քո ցնծասցեն»* **(Սղմս. ՁԸ. 13)**։

ԺԷ. 1 *Զորք են պատճառք ցնծութեան, զոր ընտրեն մարդիկ ի բնաւո-*

---

[1] *ձ՝ վճար] յաւարտ*
[2] *ձ՝ առաւել] սաստիկ*
[3] *ձ՝ երկնի] երկրի*
[4] *ձ՝ > եւ զազդ մունս*

բական բարս իւրեանց, եւ հետեւին նմին բարի՛ եւ չար եւ անորոշելին, որ յերկուս բաժանի, որով լինի առաջին բարին եւ երկրորդ եւ երրորդ, եւ ոչ բարին, որ է չա՛րն[1]*։* **2** *Արդ, առաջին բա՛րի է աստուածպաշտութիւնն եւ որ վասն նորին իմաստութիւն եւ արդարութիւն եւ ամենայն*[2] *գործք առաքինութեան։* **3** *Եւ երկրորդ բարի*[3]*, որ շուրջ զմարմնովս է՝ առողջութիւն եւ քաջազգայութիւն, եւ գեղեցկութիւն, եւ զաւրութիւն։* **4** *Իսկ երրորդ բարի, որ արտաքոյ մարմնոյս է՝ մեծութիւն եւ իշխանութիւն, տոհմաւոր սիրելիս եւ փառք։* **5** *Իսկ որ ոչ իմանան զառաջին եւ զբուն բարին զԱստուած եւ ոչ ի նմանէ տուեալ*[4] *զերկրորդ*[5] *եւ զերրորդ բարին՝ ի պատճառս եւ ի նիւթ փրկութեան մերոյ, եւ անաստուածաբար զտուեալ բարիսն չարաչար ի կիր արկանեն, առ նոսա չարին գոյանայ զաւրութիւն, որ անգո՛յ է ի բնութենէ։* **6** *Արդ, ասէ Մարգարէս, թէ «Թափաւր եւ Հերմոն, որ կա՛ յե|25ա|րկիրն պարգեւաց, ուր ճշմարիտ Աստուածն պաշտի, նոքա յանուն քո ցնծան եւ ո՛չ ի սնոտի կուռսն» (***հմմտ. անդ, 13***), որով խրատէ զմեզ մարգարէս, թէ աշխարհ եւ ազգ եւ թագաւորութիւն անձն իւրաքանչիւր, որ աստուածպաշտութեամբ է զաւրացեալ եւ իմաստութեամբ վարուց*[6] *եւ առաքինական գործոց, այնոցիկ միայն ասի ունել զճշմարիտ ցնծութիւնն։*

ԺԸ. **1** *Արդ, այսոքիկ ըստ առաջին յեղանակին, որ աստուածութեան բանին ընդ Հաւր եւ Հոգոյն։* **2** *Տեսցուք եւ զայլսն, որ ըստ մարդեղութեանն պատշաճի, զոր ասէ մարգարէս առ Քրիստոս Աստուածն մեր. «Քո՛ են երկինք եւ քո է երկիր»։* **3** *Իբր ճշմարիտ ժառանկութիւն տուեալ ի Հաւրէ, որում Աստուած Հայր ասէ*[7]*. «Խնդրեա՛ յինէն եւ տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն եւ իշխ[անութիւն] քեզ [ընդ] զ[ամենայն] ծագ[ս երկրի]» (***Սղմս. Բ. 8***)։* **4** *Եւ թէ որպէ՞ս եւ կամ ո՞ւր խնդրեաց որդի ի Հաւրէ, երկուքումք աւրինակաւք իմանամք. արդեամք եւ բանիւ։* **5** *Արդեամք՝ վասն մարմնա[նա]լոյն*[8]*, զի մարմին առնուլն խնդրել ասի ի Հաւրէ։* **6** *Եւ երկրորդն՝ բանիւ երեւի խնդրելն, յորժամ ասէ*[9]*. «Հա՛յր, փառաւորեա՛ զիս փառաւքն, զոր ունէի առ ի քէն*[10] *յառաջ, քան զլինելն աշխարհի» (տե՛ս* **Յվհ. ԺԷ. 5***)։* **7** *Զայս խնդրէ, թէ որ բնութեանց բան եւ որդի եւ ա-*

---

[1] *ձ՛ > բարին բարի, եւ ոչ... չարն*
[2] *ձ՛ > ամենայն*
[3] *ձ՛ > բարի*
[4] *ձ՛ > զառաջին... տուեալ*
[5] *ձ՛ զատել երկրորդ*
[6] *ձ՛ իմաստութեան վարութեամբ*
[7] *ձ՛ ասէ ցաստուածորդին*
[8] *ձ՛ մարմնանալոյն խնդրել*
[9] *ձ՛ > ասէ*
[10] *ձ՛ զի առ ի քէն*

բարչակից քո՛ եմ, ըստ աստուածութեանս, փառաւորեա՛ զիս եւ զգեցմամբ մարմնոյս, զի ծանիցէ աշխարհ եւ զի՛մ արարչութիւնս, զոր յառաջ ունէի, եւ զնոր աշխարհագործութիւնս, զոր մարմնանալովս արարի։

ԺԹ. 1 *Եւ «Եկն բարբառ յերկնից, փառաւոր արարի եւ դարձեալ փառաւոր արարից» (***Յվհ. ԺԲ. 28***)։* 2 *Զն|25բ|ոյնն եւ մարգարէն Դաւիթ ասէ. «Փոքր ինչ խոն[արհ] ար[արէր] զն[ա], քան զհր[եշտակս քո], փառ[աւք] եւ պատ[ուով] պսակ[եցեր զնա]։* 3 *Եւ կաց[ուցեր զնա] ի վեր[րայ] ամենայն ձեռակե[րտաց քոց]» (***Սղմս. Ը. 6-7***)։* 4 *Զոր եւ թարգմանէ Առաքեալն. «Զփոքր մի խոնարհելն զՅիսուս վասն չարչարանաց մահուն տեսանեմք՝ փառաւք եւ պատուով պսակեալ»։* 5 *Եւ Ինքն, յետ ի գլուխ հանելոյ զյաղթութիւնն, ասաց. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (***Մտթ. ԻԸ. 18***), որում եւ վկայէ Դաւիթ. «Քո՛ են երկինք եւ քո՛ է երկիր»։*

Ի. 1 *Եւ ըստ երրորդ յեղանակին, զի զարարչութեամբ ստացեալն եւ զառ ի Հաւրէ ժառանկութիւն տուեալն զնոյնն եւ գնովք գնեցեր, զոր յիշեցուցանէ աստուածայինն Պաւղոս սխալական եւ մոռացոտ բնութեանս «Գնոց գնեցայք. մի լինիք ծառայք մեղացն» (***տե՛ս Ա. Կրնթ. Է 23***)։* 2 *Եւ գինն ահաւոր եւ զարհուրելի, զոր գլուխն առաքելոց1 Պետրոս ուսուցանէ. «Սիրելիք ո՛չ եթէ ապականացու ոսկեղինաւք կամ արծաթեղինաւք գնեցայք, այլ սուրբ եւ պատուական արեամբ անբիծ եւ անարատ գառինն Աստուծոյ» (***տե՛ս Ա. Պտր. Ա. 18-19***)։* 3 *Որում եւ Պաւղոս համազուգի. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից աւրինացն» (***Գղտ. Գ. 13***)։*

ԻԱ. 1 *Իսկ եթէ քննեսցուք՝ ո՞ւմ յաղագս մեր ետ զարիւնն, զի Աստուած Հայր ո՛չ կարաւտ էր միածնի որդոյն իւրոյ արեանն հեղման, եւ թէ չարն, որ զմեզ ըմբռնեալ ունէր[2], այնքան զաւրեաց, զի եւ զարիւնն սոսկալի առ գին։* 2 *Աւա՛ղ թշնամանացս։*

ԻԲ. 1 *Այլ աստ երեւի եւ չորրորդ յեղանակ վերստին ստանալոյն իւր զերկին եւ զերկիր, զի ո՛չ պատշաճ համարի թագաւորական զաւրութեամբ մարտնչել ընդ ապստամբ ծառային, որ տիրեալն էր ի վերայ մարդկութեանս |26ա|, եւ ո՛չ զմեծն եւ զսոսկալի արիւնն գին տալ ի վերայ անարժանին, այլ մերով ծառայական կերպիւս արդար իրաւամ[բ]ք ի դատաստան մտանէ։* 2 *Վասն որոյ սեփհականն հայրենեաց եւ զծածկեալ զփառս աստուածութեանն զինու եւ ասպարաւ մարմնոյն մատուցեա՝ յաղթէ չարին, զի ի նետից յանցուածոցն եւ մեղացն, որով խոցէր[3]*

---

[1] *ձ՛> զոր... առաքելոց*
[2] *ձ՛> ունէր*
[3] *ձ՛> խոցեր*

զմարդիկ, յանմեղ մարմինն Տեառն ո՛չ կարաց հարկանել։ **3** *Վասն որոյ յաղթէ նմա Տէրն, քանզի էառ զմարմինս կրիւքն իւրովք, եւ ծանեաւ, զի արդա՛ր էր։* **4** *Առանց խայթոցի բանսարկուին, զոր եւ զնոյն ցուցանէ բանսարկուին, թէ ո՛չ էիր դու պատրիչ եւ առիթ կորստեան մարդկան. ամենայն մարմին անմեղ էր, իբրեւ զիմս մարմին։*

ԻԳ. **1** *Եւ այսպէս յաղթեալ չարին, զգիր պարտաւորութեան յանցանացն մեր պատառեաց, եւ իւրով անմեղ մահուամբն զմեզ ազատեաց, եւ հեղմամբ արեամբն իւրով սրբեաց, եւ զնոյն Հաւրն իւրում ընծայս եւ պատարագս անուշահոտ նուիրեաց, զոր առեալ Հայր՝ հաճեցաւ եւ ողորմեցաւ յանցաւորացս եւ արդարացոյց։* **2** *Ըստ այնմ զայն որ ո՛չ գիտէր զմեղս, վասն մեր մեղս*[1] *արար*[2]*, զի մեք եղիցուք նովաւ յարդարութիւն Աստուծոյ։* **3** *Եւ զնոյն նուէր հաշտութեան զարիւնն Որդոյ հրամայեաց Հայր տալ դարձելոցս ի գերողէն, զի փարթամասցուք Նովաւ եւ ապրեսցուք։*

ԻԴ. **1** *Եւ այժմ ունիմք գնեալքս զգինն մեր զմարմիւն եւ զարիւն որդոյն Աստուծոյ, զի աղքատ գոլով մեր բնութամբ,* |26բ| *ո՛չ ունիմք արժանաւոր ընծայս մեծութեան փառացն Աստուծոյ։* **2** *Զի յորժամ սխալեմք ըստ տկարութեան բնութեանս, տալով նմա ընծայս, հաշտեցուսցուք ընդ մեզ։* **3** *Վասն որոյ որչափ եմք ի կեանս աշխարհի, զյիշատակ մահու Միածնին եւ զարիւնն անմահի որդոյն Աստուծոյ տամք նուէր հաշտութեան Հաւրն, եւ խնդրեմք զխաղաղութիւն յԱստուծոյ եւ սրբիմք ողորմութեամբ նորա, որպէս եւ գրէ առաքեալ. «Հարկ էր աւրինաւորացն արեամբ նոխազացն սրբիլ» (հմմտ. Եբր. Թ. 23), զոր ասաց Մովսէս. «Ա՛յս է արիւն ուխտին, զոր ետ ձեզ Աստուած» (Ելք ԻԴ. 8), եւ բուն իսկ երկնաւորացն առաւել եւս պատարագաւք, քան զնոյն։* **4** *Վասն որոյ արարչական գթութեամբ ստեղծեալքս եւ ի Հաւրէ, վասն անպարտական մահու Որդոյն իւրոյ ժառանկութիւն տուեալքս եւ պատուական արեամբ Նորա գնեալքս եւ արդարութեամբ եւ իրաւամբք դատաստանի ի գերողէն փրկեալքս, ասեմք։* **5** *«Քո՛ են երկինք եւ քո՛ է երկիր, զաշխ[արհս] լր[իւ] դու հ[աստատեցեր]»։*

ԻԵ. **1** *Աշխարհ կոչէ զերկինս եւ զերկիր եւ զբնակեալսն ի նոսա՝ զհրեշտակս երկնային եւ զմարդիկ, զի վրդովեալ եւ սասանեալ էին բնակիչք աշխարհի յիւրաքանչիւր ճանապարհաց, ընդ նոսին եւ աշխարհ, որ բնակութիւն է սոցա, ըստ առաքելոյ. «Ակնկալութիւն արարածոցս յայտնու-*

---

[1] *Ձ մեղսավորացս*
[2] *Ձ > արար*

թեան Որդոյն Աստուծոյ սպասէ, զի եւ ինքեանք իսկ արարածք[1]*, ազատեալք ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդոյն Աստուծոյ»* (**Հռմ. Ը. 19, 21**)*:*

ԻՁ. 1 *Եւ երեքումբք իրաւք սասանեալ կային մարդիկ՝ բնակիչք աշխարհի. |27ա| ծննդեամբ եւ կենաւք եւ մահուամբ: 2 Ծննդեամբ, զի ի հրեշտակական եւ յանախտ աճմանէն անգեալ եւ յանմահական վայրէ դրախտին՝ յախտաւոր եւ յապականացու ծնունդս, զոր ողբայ մարգարէն Դաւիթ. «Մարդ ի պատ[ուի էր] եւ ոչ իմ[ացաւ] հաւաս[արեաց] անաս-[նոց անբանից] եւ նմ[անեաց նոցա]»* (**Սղմս. ԽԸ. 13**)*, զոր տէրն իւրով սուրբ եւ անարատ ծննդեամբն ի Կուսէն, հաստատեաց զնոյն շնորհ անապական ծննդեան եւ մեզ պարգեւելով, «Եթէ ո՛չ ոք ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ո՛չ կարէ մտ[անել] յարք[այութիւն]»* (**տե՛ս Յվհ. Գ. 5**)*. որք եւ հաւատացեալ ծնաք աւազանաւն, տնկակից լինելով մահու որդոյն Աստուծոյ, զի եւ փառաց նորա եւ յարութեանն հաղորդ լինիցիմք, որպէս ասէ Առաքեալ: 3 Իսկ կենաւք սասանեալ էին, զի մարմին զգայարանաւք տատանէր ի չար գործս եւ կործանեալ կայր ի ցանկութիւնս աշխարհի, եւ բանական հոգւոյս մասունքն՝ յանիրաւութիւն անկարգութեան, զորս հաստատեաց Քրիստոս, առեալ զհոգի եւ զմարմին իւրովք մասամբքն, յիւր բնական սահմանն պահելով, որպէս արար ի ստեղծմանն անարատ, եւ զկեանս մարմնոյ իւրոյ աւրինակ տուեալ, սուրբ պատուիրանաւքն իւրովք դաստիարակ ծառայիցս: 4 Եւ մահուամբ, զի յուսահատութեամբ կենաց եւ երկիւղիւ մահուն, զոր հանապազ ծփէր ընդ տիեզերս ազգ մարդկան, ոչ գտանելով ելս եւ հնար, յորմէ ապրեցոյց Քրիստոս, որպէս գրէ առաքեալ. «Զայնոսիկ, որ մահուն երկեղիւն կային վտարանդեալք ի ծառայութիւն»* (**տե՛ս Եբր. Բ. 15**) *եւ հաստատեաց յայնմ խռովութենէ, քանզի մեռաւ եւ յարեաւ եւ ետ զինքն ամենեց|27բ|ուն կենաց առհաւատչե՛այ, եւ կրկին կենաց յոյս ետ մահակուլ բնութեանս, ընդ նմին յառնել եւ ընդ նմին նստել, զոր իբրեւ զխարիսխ անշարժ ունիմք ի ներքին կողմ վարագուրին զկարապետն մեր Յիսուս, որպէս ասէ առաքեալ. «Յորում հաստատեալ եմք»* (**հմմտ. Հռմ. ԺԴ. 14**)*:*

ԻԷ. 1 *Եւ դարձեալ, թէ որպէս Ադամաւն ամենիքեան մեռանին, նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենիքեան կենդանասցին, եւ յայս ազատութիւն եւ ի փառս եւ յորդիանալս մարդկային բնութեանս: 2 Եւ ինքեանք իսկ արարածք ազատեցան ի ծառայութենէ ապականութեան եւ հաստատեցաւ աշխարհ ամենայն լրիւ իւրով, ի ճանաչելն արարածոցս զճշմարիտ Արարիչն:*

ԻԸ. 1 *«Զհիւս[իս] եւ զհար[աւ] Դո՛ւ արար[եր]»: 2 Արարեր աստուա-*

---

[1] *ճ՛> արարածք*

ծութեամբդ, որպէս զԱրարիչ, եւ վերստին նորոգեցեր աւետարանիդ տարածմամբ, որպէս զնախախնամիչ, զոր եւ Եսայեաւ աւետիս ետուր բնութեանս, որք ցրուեալ եւ ճապաղեալ էին ի ծագս ամենայն աշխարհի՝ ի բանսարկուին գերութիւն։ **3** *«Մի՛ երկնչիր, զի ընդ քեզ եմ. յարեւելից ածից զզաւակ քո, եւ յարեւմտից ժողովեցից զքեզ։* **4** *Ասացից հիւսիսոյ՝ Մ՛ծ եւ հարաւոյ՝ թէ՝ Մի՛ արգելուք, ածէ՛ք զորդիս իմ ի յերկրէ հեռաստանէ, եւ զդստերս իմ ի ծագաց երկրէ՝ զամենեսեան, որք մի անգամ կոչեցեալ են յանուն իմ» (տե՛ս* **Եսյ. ԽԳ. 5-7***)։* **5** *«Զհիւս[իս] եւ զհ[արաւ] Դո՛ւ [արարէր]»։* **6** *Նշանակէ անուամբն հիւսիսի զազգն հեթանոսաց, որք յանպտղութիւն կռապաշտութեան սառուցեալք էին։* **7** *Զի որպէս ցրտութիւն ձմերան զերկիր[1] անպտուղ առնէ, այսպէս անհաւատութիւն՝ զմարդիկ ի բար|28ա|եաց գործոց, որք սառուցեալք եւ ցրտացեալք էին ի գիտութենէն Աստուծոյ։* **8** *Իսկ հարաւոյ՝ զժողովուրդն հրէից, որք աւրինաւքն եւ մարգարէիւքն տային զպտուղ աստուածպաշտութեանն, զոր եւ ասէ. «Զհիւս[իս] եւ զհ[արաւ] Դո՛ւ [արարեր]»։* **9** *Այսինքն՝ զազգսն հեթանոսաց, զսառուցեալսն ի կռապաշտութիւն անհաւատութեանն, Դո՛ւ արարեր արարչական քո գթութեամբդ։* **10** *Եւ թէպէտ ո՛չ ճանաչէին զՔեզ, այլ Քո՛ էին ստեղծուած, եւ ո՛չ թէ այլ ոք տիրէր ի վերայ նոցա, այլ արարածք քո՛ են, որպէս եւ զսիրեցեալ որդիսն Աբրահամու։* **11** *Բայց ժամանակ ինչ անտես արարեր, վասն դառնալոյ եւ խնդրելոյ զքեզ, վասն որոյ յորժամ եւ պաղատեցաւ հարսն, արի՛ հիւսիսի եւ եկ հարաւ. Դու՝ երկնաւոր փեսայդ խոնարհեալ յաղաւթս հարսինն, հալածեցեր զհողմ հիւսիսոյ՝ զկռապաշտութիւնն սառուցիչ եւ զանպտղութիւն գործոցն խաւարի։* **12** *Եւ շնչեաց ի նոսա հողմ քաղցրաշունչ՝ շնորհք Հոգւոյն, եւ բուրեցին խունկք զանազան առաքինութեան, եւ երեւեցան ծաղիկք գեղեցիկք՝ յանպտուղ ազգաց հեթանոսաց. ոմանք մարտիրոսական արեամբ փայլեցին, որպէս զվարդ, այլք խոստովանողական դաւանութեամբ, իբրեւ զմանիշակ, եւ կուսութեան պատկառանաւք, իբրեւ զքրքում, ճգնութեան ժուժկալութեամբ, իբրեւ զշուշան, եւ այլ անթուելի բարեացն բոյսք, որք ծաղկեցան յեկեղեցի հրէից եւ հեթանոսաց միաբանութեամբ։* **13** *Վասն որոյ, ասէ. «Զհիւսիս եւ զհ[արաւ] Դու [արարեր]»։*

ԻԹ. **1** *«Թափաւր եւ Հեր[մոն] յան[ուան քո] ցնծ[ասցեն]»։* **2** *Նախատեսութիւն է եւ |28բ| այս առյապայ խորհրդոյն, որ կատարեցաւ ի Թափաւր, որով ցնծայ՝ Քրիստոսի անուամբն փառաւորեալ, որ ի նա յայտնեաց զփառս աստուածութեան իւրոյ, երից ընտրեալ աշակերտացն, զոր յաւետարանական պատմութիւնսն ուսանիմք, թէ՝ «Առնու Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅոհանէս, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր» (**Մրկ. Թ. 1***)։*

---

[1] *ձ՛> զերկիր*

Լ. 1 *Եւ վասն էր զնոսա միայն հանէ ի լեառն, եւ զի՞նչ խորհուրդ լերինն ցուցանէ, եւ կամ յաղագս որո՞յ պատճառանաց՝ արժան է քննել։* 2 *Վասն այսորիկ զնոսա միայն հանէ, զի զկարգ եւ զսահման երկնաւորացն դասու ամենայն ուրեք ի մարմնաւորութեանն իւրում եւ յերկրի պահեաց Տէրն մեր, զի որպէս դասք աթոռոցն եւ քերովբէիցն եւ սերովբէիցն գերագոյն են, քան զամենայն դասապետութիւնս երկնաւորացն, եւ հուպ եւ մերձակայք Աստուածութեանն փառաց, եւ հաւէտ խորհրդակիցք անճառ գիտութեանց իմաստութեանն Աստուծոյ։* 3 *Այսպէս եւ սոքա երեքեան նոյն խորհրդով գերագոյն, քան զդասս առաքելոցն եւ հուպ եւ մերձակայք աստուածութեանն փառաց, եւ առաւել իրագէտք տնաւրինութեանն խորհրդոյ. Պետրոս, վասնզի առաւել սիրէր զՏէրն եւ Յոհաննէս եւ Յակովբոս, վասնզի սիրեցեալք էին ի Քրիստոսէ։*

ԼԱ. 1 *Դարձեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅոհաննէս միայն առնու ընդ ինքնեան, զի թէ զերկոտասանսն տանէր, Յուդա ո՛չ էր արժան, եւ թէ զնա միայն թողոյր՝ պատճառս տայր ատելութեան, եւ թէ տանէր՝ անպատշաճ էր այնմ, որ զրկելոցն էր յարքայութեանն փառաց, զաւրինակ փառացն ցուցանել նմա։* 2 |29ա| *Այլ զսոսա միայն հանէ ի լեառն, առանց ձեռին հատեալ վէմն Քրիստոս, զոր Աստուած Հայր խոստացաւ Եսայեաւ դնել ի հիմունս Սիովնի, հանէ զծայր անկեան վէմն, զոր ինքն որդի եդ հիմն իւրոյ եկեղեցւոյ, զի դիցէ զքարն ի վերայ գլխոյ լերինն, զի մի՛ ոք կարասցէ քակել զհիմն քաղաքին, որ ի վերայ լերինն շինելոց էր։* 3 *Հանէ եւ զՅոհաննէս զի տեսցէ զփառսն Որդւոյ եւ լսեսցէ զձայնն Հաւր, եւ եկեալ վկայեսցէ, եթէ «Տեսաք զփառս նորա, իբրեւ զփառս Միածնի առ ի Հաւրէ, լի՛ շնորհաւք եւ ճշմարտութեամբ»* (**Յվհ. Ա. 14**) *եւ ի Կաթուղիկէից թուղթն, թէ «Զայս բարբառ մեք իսկ լուաք, որ ընդ նմա էաք ի սուրբ լերինն»* (**տե՛ս Բ. Պտր. Ա. 18**)։ 4 *Յակովբոս տեսանելով զայնպիսի փառս, գիտասցէ թէ յաղագս ո՞յր զբաժակ չարչարանացն ըմբէ եւ կամ թէ որո՞յ փառաց հաղորդեսցի։*

ԼԲ. 1 *Եւ թէ ընդէ՞ր ի լեառն հանէ։* 2 *Զի որպէս սովորութիւն է զմանկունս առանձին եւ զատ տանել ի հրապարակաց եւ ժողովրդոց, զի մի՛ ընդ զգայարանսն մտանելով ազգի ազգի տեսութեանց եւ ձայնից զմիտսն պղտորիցէ եւ ո՛չ կարեն ուսմանց ընդունակ լինել անզբաղութեամբ։* 3 *Այսպէս եւ Տէրն ի հնումն եւ ի նորումս զվարդապետութիւն յանապատ տեղիս առնէր, որպէս որդոցն Իսրայիղի ի յանապատին, եւ Մովսէս՝ ի Սինեայ, այսպէս եւ զաշակերտսն ի լեառն հանէ, զի յԱստուծոյ Հաւրէ ուսցին զփառս միածնին։*

ԼԳ. 1 *Երկրորդ, զի սովորութիւն է թագաւորաց զմեծապատիւ եւ*

զհանճարեղս յիշխանաց առնուլ խորհրդակից |29բ|, *այսպէս եւ Որդի զխորհրդակիցսն իւր՝ զիշխանսն*[1] *ամենայն երկրի հանէ ի լեառն, զի եւ Հաւրն իւրում խորհրդակից լիցին։*

ԼԴ. 1 *Երրորդ, զի ուսցին ի Հաւրէ զխորհուրդն մարդեղութեանն Որդւոյ եւ մի՛ մոռասցին, զոր միշտ լսելով յՈրդւոյ, դարձեալ մոռանային, զի եւ ի Յորդանան զնոյն բարբառ լուան ի Հաւրէ, այժմ երկրորդէ, զի վերստին ի մոռացմանէն ի մտածութիւն եկեսցեն։* 2 *Հանէ զնոսա ի լեառն մի բարձր, զի զոր աւրինակ Մովսէս ի Սինեայ առնու աւրէնս այնոցիկ, որ զերկրաւորսն կամէին հանգիստ, ելեալք յԵգիպտոսէ՝ զպարգեւաց երկրին բարութիւնսն յուսային ժառանգել։* 3 *Սոքա ի լերինն զփառս արքայութեանն եւ զհանգիստն մշտնջենաւոր եւ զերկնային բարութիւնսն տեսեալ եւ լուեալ, ուսուսցեն եկեղեցւոյ Քրիստոսի, զոր եհան յերկրաւորս Եգիպտոսէ ի երկնաւոր բարութիւնսն։* 4 *Հանէ զնոսա ի լեառն, զի բարձրասցի փառք առաքելոցն, քան զմարգարէիցն, զի նոքա երկրաւոր բարեաց աւետաւորք եւ սոքա՝ երկնաւոր փառացն աւետարանիչք։* 5 *Եւ դարձեալ զի արասցէ հաղորդութիւն նորոյս ընդ հնոյն, զի որպէս հին աւրէնքն ի լերինն որդւոցն Իսրայիղի, եւ սոքա ի լերինն առցեն աւրէնս նորոյս Իսրայիղի. Մովսէսին ի տախտակս քարեղէնս գրեալ եղեն, եւ սոցա՝ ի տախտակս սրտի մարմնեղէն գրեալ ո՛չ մրով*[2]*, այլ հոգւով։* 6 *Հանէ զնոսա ի լեառն, զի ճշմարտեսցէ զասացեալսն իւր, թէ «Որ ետեսն զիս՝ ետեսն զՀայր» (**Յվհ. ԺԴ. 9**), զի անդ յայտնէր նոցա Հայր Մովս*|30ա|*իսիւ, եւ Հոգին Սուրբ՝ Եղիայիւ, զի Մովսէս զՀայր յայտնեաց աշխարհի, եւ Եղիայ՝ կրկին ոգով զՀոգւոյն զաւրութիւն ցուցանէր։*

ԼԵ. 1 *Դարձել հանէ զնոսա ի բարձրութիւն լերինն, զի Աստուծոյ ծանաւթութիւնն ի բարձանց զաւրացն քարոզի եւ իշխանութիւն նորա ի բարձունս փառաւորի։* 2 *Վասն որոյ ուսուցանէ զաշակերտսն, թէ մարմնականաց սեռից, որք տեսութեանն Աստուծոյ բաղձան, պարտ է բարձրանալ յառաքինութեանն լեառն եւ յանմարմնոցն՝ փառատրութիւնսն համազուգիլ եւ ապա տեսութեանն արժանաւորիլ։* 3 *Ի բնակութեանց մարդկան ի լեառն առանձնացուցանէ զնոսա, զի վասն արքայութեանն էր ուսուցանելոց զնոսա, որ ո՛չ է գիտել ի մարդկան։*

ԼԶ. 1 *Տասներորդ. հանէ զնոսա ի լեառն առանձինն։* 2 *Իսկ եթէ զի՞նչ են խորհուրդ, զի այժմ ի լերինն ցուցանէ զփառս Աստուածութեանն իւրոյ նախ քան զչարչարանս խաչին քառասուն աւուրբ։* 3 *Առաջին, զի պարտ էր ի խաչ ելանել վասն փրկութեան աշխարհի. նախ զփառս աս-*

---

[1] *ձ՛ > զիշխանսն*

[2] *ձ՛ մարմնով] մրով*

տուածութեանն իւրոյ ցուցանէ, զի մի՛ գայթակղեսցին ի ժամ չարչարանաց խաչին։ 4 *Երկրորդ. դարձեալ ցուցանէ զաստուածային փառսն, որոց տեսանելոց էին զհարկանելն նորա ի մէջ քաղաքին։* 5 *Վասն որոյ տեսին զծաղիկն, որ տալոց էր զպտուղն ի Գողգոթայ տեսին զգեղ երեսացն, որ գեղեցիկ էր, քան զամենայն որդւոց մարդկան, որպէս ասէ Դաւիթ, զի «Մի՛*[1] *երկմտեսցեն, յորժամ տեսցեն անարգ նուազեալ, քան զամենայն մարդկան յատեանն |30բ| Կայիափայ, որպէս պատմէ Եսայիաս»։*

ԼԷ. 1 *Դարձեալ տեսանէին զթագաւորութիւնն նորա յառաջ՝ քան զմահն իւր. զփառս երեսացն յառաջ՝ քան զթուքն, զգաւրութիւնն յառաջ՝ քան զկատակելն, զհանդերձս լուսափայլս յառաջ՝ քան զմերկանալն, զի յորժամ խաչեսցի, իմասցին թէ կամաւոր գա՛յ ի չարչարանս, եւ ո՛չ վասն տկարութեան, այլ հաճութեամբ Հաւր ի փրկութիւն աշխարհի։* 2 *Զորրորդ. զի բազում չարչարանս ճառեալ էր վասն նոցա, թէ նախատեսցեն զձեզ եւ նեղեսցեն, եւ հալածեսցեն զձեզ ի քաղաքէ ի քաղաք, եւ այլ բազում չարչարանս, զոր կրելոց էին։* 3 *Վասն որոյ զփառս, զոր ի հանդերձեալսն ժառանկելոց էին՝ ցուցանէ, զի յուսով վայելման փառացն տանիցեն վշտացն։*

ԼԸ. 1 *Դարձեալ, զի ասաց աշակերտացն, թէ «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Հաւրն իմոյ, որ յերկինս է»* (**Մտթ. Ժ. 33, տե՛ս նաեւ Ղկ. ԺԲ. 19**)*։* 2 *Նոքա խռովեալ էին, թէ վասն մարմնաւոր մարդոյ այսպիսի պատուհաս կրելոց են, վասն որոյ զաստուածութեանն ծածուկ փառսն ցուցանէ, զի գիտասցեն, թէ անճառապէս միացեալ է աստուածութիւնն ընդ մարդկային բնութեանն։* 3 *Եւ զի ասաց նոցա. «Մի՛ ճաշակիցէք զմահ, մինչեւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով»* (**տե՛ս Մտթ. ԺՁ. 28**)*։* 4 *Վասն որոյ, մինչդեռ կենդանի էին ի մարմնի, զարքայութեանն իւրոյ զփառս ցուցանէ նոցա։* 5 *Եւթներորդ. զի ասաց նոցա թէ «Բազում մարգարէք գայցեն յանուն իմ եւ ասասցեն, թէ՝ Ես եմ Քրիստոս, եւ զբազումս մոլորեցուցանիցեն»* (**տե՛ս Մտթ. ԻԴ. 5, 11**)*։* 6 *Վասն որոյ զերկրո|31ա|րդ գալստեան իւրոյ զհանգամանս տայ նոցա, թէ որ գայ եւ ո՛չ ունիցի զձեւս զայս, մի՛ հաւատայք։* 7 *Ութերորդ. զառհաւատչեա՛յ յարութեանն եցոյց նոցա, թէ այնպիսի փառաւք ծագելոց են ի յարքայութեանն երկնից։* 8 *Իններորդ. զփառսն, որով յետ իւրոյ յարութեանն երեւելոց էր, ցուցանէ նոցա, զի մի՛ անծանաւթ լիցին յետ յարութեանն, յորժամ տեսանիցեն ի փառս բնութեան աստուածութեան իւրոյ։* 9 *Տասներորդ. եւ դարձեալ, որ էր ընդ Հաւր Աստուած եւ ասաց ի գալն ի*

---

[1] *ձ՛ > մի*

*կամաւոր չարչարանսն. «Հա՛յր, փառաւորեա՛ զիս առ ի Քէն փառաւքն, զոր ունէի յառաջ, քան զլինելն աշխարհի» (**Յվհ. ԺԷ. 5**), եւ զնոյն*[1] *փառս աստուածութեանն իւրոյ, անտես եւ ծածուկ ի մարդեղութեանն, զոր ե-ցոյց առաքելոցն ի Թափաւական լերինն։*

ԼԹ. 1 *Եւ վասն է՞ր յայնմ լերին եւ ոչ յայլում տեղւոջ։* **2** *Նախ, զի յայնմ աշխարհի էր, ուր եւ զամենայն տնաւրինականսն կատարեաց Քրիստոս։* **3** *Եւ դարձեալ Թափաւր եւ Հերմոն աւրինակ էին երկու ժողովրդեանն։* **4** *Հերմոն նշանակէր զհին ժողովուրդն, եւ Թափաւր՝ զնորս, որ ի Քրիստոսի անունն խրախուսելով ցնծան հաւատացեալք, որք ի հրէից եւ ի հեթանոսաց, զի Քրիստոսի անուամբն աւծեալք՝ կոչեցաք քրիստոնեայք եւ անուանեցաք անդամք Քրիստոսի եւ եղբարք, որ եւ ուսոյց մեզ կարդալ զերկնաւորն իւր Հայր, առ որ ասեմք. «Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո» (**Մտթ. Զ. 9**). եւ ցնծամք անուամբքն, որ կոչեցաւ մեզ Քրիստոսիւ։* **5** *Նա գլուխ եւ մեք անդամք. Նա հիմն եւ մեք շինուածք. Նա որթ եւ |31բ| մեք ուռ. մեք տաճար եւ Նա բնակիչ. Նա լոյս եւ մեք լուսաւորեալք. Նա հաց յերկնից իջեալ, եւ մեք ճաշակաւղք. Նա քահանայապետ մեր քաւիչ, եւ մեք ժողովուրդ անուան Նորա. Նա թագաւոր արդարութեամբ ի վերայ մեր, ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց, եւ մեք զինուորք զաւրացեալք նովաւ ի մարտ թշնամոյն. Նա հովիւ եւ մեք հաւտ նորա բանաւոր։*

Խ. 1 *Վասն որոյ միշտ զայս աղաւթեսցուք, զի բազմապատիկ անուանքն Քրիստոսի, որովք ցնծամք սուրբ եկեղեցի ի վերայ մեր, գթածն գթասցի եւ ողորմածն ողորմութիւն արասցէ։* **2** *Քաղցր եւ բարերար եւ անոխակալն քաղցրութեամբ հայեսցի ի մեզ եւ բարեացն առատութիւն տացէ, ո՛չ յիշելով զմեղս մեր։* **3** *Այլ եւ զոր մեզ կոչեաց անուն յիւր անուանցն տալով՝ մնասցէ ի վերայ մեր սուրբ եւ անեղծանելի. անվէ՛ր եւ անբաժանելի լիցուք անդամքս ի գերագոյն գլխոյն, անխախտելի կացցուք շինեալքս ի հիման հաւատոյն։* **4** *Ուռքս որթոյն պտղաբերք եւ արժանաւորք սրբելոյ երկնաւոր Հաւրն մշակութեան։* **5** *Տաճարացեալքս Աստուծոյ սուրբ կացցուք եւ արժանաւոր բնակողին ի լուսոյն լուսաւորեսցուք. կենաց հացին հաղորդ միշտ լիցուք եւ ամենայն տնաւրինական անուանցն ներգործութեան արժանաւոր կրաւղ ի մեզ խորհրդոց Քրիստոսիւ Յիսուսիւ՝ Տերամբ մերով, որ է աւրհնեալ յաւիտեանս*[2]*։*

---

[1] *Ձ՛ ոչ զնոյն*

[2] *Ձ՛ յաւիտեան ամէն*

Գ.

|31բ| Ի ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԲԱՆՆ, ԶՈՐ ԳՈՀԱՑՈՂԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՐԳԵԱՑ ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ. ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՆՀԱՄԵՄԱՏ ՊԱՐԳԵՒԱՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐ |31գ| ԵՒ ՄԻԱԾՆԻ ԲԱՆԻՆ ԻՒՐՈՅ, ԶՈՐ ԵՒ ԱՍԷ. «ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԱՆՁՆ ԻՄ ՁՏԷՐ» (ՂԿ. Ա. 46), ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱ[ՅԻՈՅ] ԱՇԽԱՏԵԱԼ Ի ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՅՍ.

Այս ճառը հիասքանչ մի ձոն է Մարիամ Աստվածածնի եւ նրա կուսական հղության մասին, որով Աստված մարդեղացավ՝ բացելով մարդկությանը փրկագործության ճանապարհը:

Երզնկացին ի վերուստ հաստատված մարդկային հասարակության դասային կառուցվածքը արդար է համարում եւ հասարակության կայունության ու հաստատության գրավական ընդունում է տիրոջ ու ծառայի գոյությունը, միաժամանակ, անհատի համար այն քարացած վիճակ չի համարում: Հետեւելով քրիստոնեության ընդունած այն սկզբունքին, որ ի սկզբանե մարդկային հասարակության բոլոր անդամները սերում են Աստվածային արարչագործությամբ կավից ստեղծված նախահորից՝ Երզնկացին Դավթի օրինակով ոգեւորում է մարդկանց՝ ասելով, որ Աստծո կողմից ազատակամ ծնված մարդը կարող է փոխել իր ճակատագիրը գիտությամբ, իմաստությամբ եւ իր աստվածահաճո գործունեությամբ, ինչպես Դավիթը, չլինելով նշանավոր տոհմի ժառանգ, կոչվեց ոչ միայն թագավորական իշխանության, այլեւ կոչվեց աստվածահայր:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 31բ-41ա) եւ 2854 (Ճ. 105ա-13ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 |31գ| *Հրաշական իմն զարմացմամբ, հիապատում վարդապետութեամբ, վասն բանական շնորհիս, ոմն յարտաքին իմաստասիրացն վեհից տրա[մա]բանէ առ*[1] *ուսումնական համբակն*[2]*, եթէ այսպիսի ինչ մեծ յաստուածային պարգեւսն ո՛չ եկն յԱստուծոյ առ մարդիկ եւ ո՛չ այլ եկեսցէ, բայց եթէ ինքն իսկ բանական շնորհիս գեղեցկութիւն դարձեալ եկեսցէ: 2 Եւ ո՛չ եթէ միայն առ մեզ եղելոց պարգեւացն անհամեմատ գտանի, զորս անձամբ վայելեմք, այլ եւ արժանաւոր ընծայք մեծութեան փառացն Աստուծոյ յիւրական արարածս այլ ո՛չ գտանեմք, բայց թէ զբանական պտուղ լեզուի եւ շրթանց, որք յուղիղ եւ ի պարզ մտաց յառաջ գան՝ իբրեւ զգառն անարատ ի նուէր ողջակիզի: 3 Վասն որոյ զհրէական զոհիցն եւ զպատարագացն խոտելով զմատուցումն՝ ասէր Աստուած. «Պա-*

---

[1] *Ճ՝ > տրամաբանէ առ*

[2] *Ճ՝ ուսումնական էառ համբակն տրամաբան*

տարագ աւրհնութեան փառաւոր արասցէ զիս» (**Սղմս. ԽԹ. 23**)*, որ բանական արեամբն է շաղախեալ, այսինքն՝ ջերմ սիրովն, «եւ անդ է ճանապարհ, ուր ցուցանեմ*[1] *զփրկութիւն իմ» (հմմտ. անդ)։* 4 *Այսինքն՝ ի բանեղէն պատարագացն զենմունսն տեսանէք զիս, որ «ճանապարհ եմ եւ ճշմարտութիւն, եւ կեանք», եւ անդ լիցի փրկութիւն ի կարդացումն բանական պատարագացն։* 5 *Եւ մարգարէն Ովսէէ ասէ. «Առէ՛ք ընդ ձեզ բանս, եւ դարձարուք առ Տէր Աստուած ձեր, եւ ասացէք ցնա. «Կարող ես թողուլ զմեղս, զի ընդունիցիք զբարիս, եւ վայելեսցեն ի բարութեան անձինք ձեր»* (**տե՛ս Ովս. ԺԴ. 3**)*։*

Բ. 1 |31դ| *Ահա Աստուած խաւսեցաւ, եւ ո՞վ է, որ ո՛չ լուիցէ։* 2 *Ինքն վկայեաց, եւ ո՞վ է որ ոչ հաւատայ, որ եւ զմեր իսկ հասարակաց փրկութիւնս մարգարէիւքս խաւսեցաւ եւ ուսոյց. «Եթէ Բանն է նորոյ փրկութեանս մեզ նուէր եւ մարդկեղէն սղալանացն վերստին լուացման աւճառ»* (**հմմտ. Մաղաք, Գ. 2**)*։* 3 *Եւ այս ո՛չ միայն բանիւ, այլ մարգարէաբար տպաւորեցաւ ի փրկութիւն մանգանցն ի բորբոքել բոցոյն, որ ի Բաբելոն։* 4 *Եւ Դանիէլ յարգելական գբոյն ի մէջ առիւծուցն, եւ Յովսէփայ ի ծառայական բանդէն, որք ոչ անբանից արեանցն հեղման, այլ բանականին աւրհնութեամբ փրկեցան ի նեղութեանցն, յորում կարդացին։*

Գ. 1 *Արդ, զայս իսկ մարգարէական բանիւ ցուցանէ սրբուհի Կոյսն, եթէ հանդերձեալ է մարդկային բնութիւնս կենդանի տաճար շինիլ կենդանւոյն աստուծոյ բնակութիւն։* 2 *Եւ փոխանակ հրէական քահանայութեանն, որ ղեւտացւոցն էր*[2] *բաժին եւ վիճակ, ամենայն անձն քահանայական՝ շնորհիւ պատուելոց եւ ընդ անասնական զոհիցն եւ պատարագացն, բանական պատարագաւք տուաւղն բանի աւրհնաբանեսցի։* 3 *Վասն որոյ ասէ ամենասրբուհին Մարիամ. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»։*

Դ. 1 *Արդ, պարտ է քննել մեզ զիմաստս մարգարէական բանից, զոր բնակարանն Աստուծոյ Կոյսն ամենաւրհնեալ նախագուշակ եղեւ, զինքեամբ եղեալ փրկութիւն աշխարհի, զի թէ մարգարէքն ամենայն, որ մասնաւորապէս ընկալան շնորհս զտիեզերակեցոյց տնաւրէնութիւն բանին Աստուծոյ յայտնի տեսութեամբ՝ հոգւոյն ակամբ իմանային, ըստ առ|32ա|աքելոյ, եւ մարգարէութեամբ գուշակէին։* 2 *Իսկ զի՞նչ ապա Կոյսն ամէնաւրհնեալ, որոյ զաւրութիւն Հաւր Աստուծոյ բարձրելոյ հովանաւոր էր եւ Միածինն ի նմա իսկ բնակեալ շրջաստեղծէր ինքն իւր մարմին ի շնչոյ եւ յարենէ նորա, եւ Սուրբ Հոգին արարչակցէր Միածնին ի մարմնառիկ լինել փառակցին իւրոյ։* 3 *Ապա զիա՞րդ ոչ յատկապէս, քան զամե-*

---

[1] *Ձ՛ ցուցից նմա*
[2] *Ձ՛ > էր*

նայն մարգարէսն զինքեամբ լինելոց փրկութիւնն մարգարէանայր, զի յորժամ ըստ աւետեացն Գաբրիէլի ընկալաւ զողջոյնն, ասաց լինել ինքեան ըստ նորա բանին։ 4 *Ունէր ապա ի մտի եւ զբան հրեշտակին, որ պայման ետ վստահութեան ողջունին.*

Ե. 1 *Ահա Եղիսաբեթ ազգական քո, զոր եւ բաւական համարեցաւ ինքեան առ ի քննել զելս Բանին, եւ ո՛չ ըստ աւրինակի այլոց կանանց սկսաւ հրապարակել զբանն, ոչ Յովսէփայ եւ ոչ այլ ումէք, այլ խնդրեաց աղաչանաւք ի Յովսէփայ գնալ ի տեսութիւն ազգականին իւրոյ Եղիսաբեթի։* 2 *Եւ Յովսէփ յղէր ընդ նմա յորդւոց եւ դստերաց իւրոց, որպէս սովորութիւն է աշխարհայնոց։* 3 *Եւ յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ գնաց փութապէս, եւ իսկ եւ իսկ զպատշաճաւոր ողջոյնն լուեալ Եղիսաբ[եթ]ի ի Մարիամու ընդ բանին, եւ բան հոգւոյն այնորիկ, որ ընդ նմա էր, եմուտ ի լսելիսն Եղիսաբեթի եւ ելից զնա հոգւով սրբով. եւ սկսաւ աւրհնել զայն, որ ի նմա աւրհնելոց էին ամենայն ազգ, եւ երանել զայն, որ երանելոց էին ամենայն արարածք։* 4 *Եւ ասէ. «Օրհնեալ ես դու ի կանայս»* (**Ղկ. Ա. 42**)*։* 5 *Ապա յաւելու, թէ ո՛չ միայն ես, այլեւ որ ի յիսնէ* |32բ| *երկրպագեաց այնմ, որ ի քե՛զն է բնակեալ, Տեառն եւ Արարողին տիեզերաց, զի իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ խաղ։* 6 *Եւ երանի, որ հաւատայ, եթէ լցաւ մարգարէիցն բանն, որ խաւսեցան ի Տեառնէ, զոր եւ Կուսին ոչ հիացեալ վասն այսոցիկ, քանզի կիրթ էր լսելիքն յաւետեաց հրեշտակին, այլ խոնարհ հոգւով տրիտուր փոխարէնին հատուցանէ, ասելով. «Մեծացուսցէ ա[նձն իմ զՏէր]»։*

Զ. 1 *Արդ, զանազան բառիւք զխաւսուն պատարագս բանականաց Աստուծոյ ընծայեմք, աւրհնեմք զնա եւ գոհանամք զնմանէ, գովեմք եւ փառաւորեմք, բարձրացուցանեմք եւ մեծացուցանեմք զանկարաւտն ամենայնի այսոցիկ։*

Է. 1 *Արդ, զի թէպէտ ամենեքեան սոքա ի մի միտս հային, բայց ունին եւ զանազանութիւն ինչ, յաղագս յոքնակի բարեացն զանազանպէս հեղեալ յԱստուծոյ յարարածս իւր, զի գոհութիւնն եւ աւրհնութիւնն այսու զանազանին ի միմեանց. վասնզի աւրհնութիւն է յէից բարեացս, զոր տամք Աստուծոյ, այսինքն՝ յորժամ սքանչանամք ընդ առաւելութիւն պէս պէս ձրից նորա, որ առ մեզ ի նախախնամութենէն յեղեալ իջանէ, որ եւ աւրհնութիւնն հիացման է ծնունդ եւ ծաղիկ, զի մարդկան ազգք ո՛չ իւիք ունի երախտեացն Աստուծոյ ի ներքս բերեալ, որպէս զաւրհնելն եւ զգոհանալն, որպէս եւ իսրայէլացիքն տրիտուր բարեացն Աստուծոյ զնոյն հատուցանէին։* 2 *Եւ մարգարէն Դաւիթ ընդ պատկերիս Աստուծոյ գերարհրաշ կազմութիւն հիացեալ ասէ. «Աւրհնեա՛ անձն իմ զՏէր»* (**Սղմս. ճԲ. 1, 2**)*։* 3 *Իսկ գոհութիւն է, յորժամ ձեռն ի ձեռն առնումք ի նմանէ զհայցուածս*

խնդրոյն, որ եւ նայեցեալ ի մեր խոնարհութիւնս եւ ի տ|33ա|ուողին անկարաւտ զաւրութիւնն, եւ զի չունիմք այլ ինչ տալ նմա, ի գոհութիւնն յաճախեմք, զի ո՛չ կարէ իմաստ բանականիս բերել[1] *լռութեամբ վայելեալ ի տուրսն անբանապէս:* **4** *Ըստ որում, ի զգալիս է տեսանել, զի յորժամ տուրս առնումք ի սիրելոյ՝*[2] *տաղտապիմք եւ տարակուսիմք փոխարէն հատուցանել:* **5** *Իսկ զի՞նչ*[3] *Աստուծոյ այլ, քան թէ զգոհութիւն:* **6** *Եւ գոհանալ նախ առ ինքն զիւրմէ, յետ այնորիկ առ հրեշտակս եւ առ մարդիկ:* **7** *Իսկ գովութիւն այսու զանազանի յաւրհնութենէն, զի աւրհնեմք իբր թէ ի մէնջ տալով աւրհնեցելոյն շնորհ:* **8** *Իսկ գովեմք զսքանչելի գործս, կամ զոր առ մեզ երախտիս Աստուծոյ կամ մարդկան ըստ այնմ, յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք իմ գովեցին զիս, յայտ է տեսեալ զվայելչութիւն նոցա:* **9** *Սոյնպէս եւ փառաւորեմք զնա, հայելով ի գեղեցկութիւն արարածոցս յեղեալս ի փառս Արարչին, ըստ Տեառն բանի. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայրն ձեր, որ յերկինս»* **(Մտթ. Ե. 16)**: **10** *Եւ առաքեալ գրէ. «Փառաւոր լիցի անուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ եւ դուք ի Նմա»* **(Բ. Թես. Ա. 12)**: **11** *Իսկ բարձրացուցանելն զԱստուած եւ մեծացուցանել՝ զմի ունի դիտաւորութիւն*[4]*, որպէս եւ Դաւիթ երգէ. «Բարձր առնեմ զքեզ, Տէ՛ր, զի ընկալար զիս»* **(Սղմս. ԻԹ. 1)**: **12** *Այսինքն՝ բարձր առնեմ զքեզ բանիւ եւ կամաւք, զի դու ընկալար զիս արդեամք. այս է զբնութիւնս մարդկան ի քեզ ընկալար միաւորելով:*

Ը. **1** *Արդ, ասացեալ բառիցս փառատրութիւն հասարակաց վայել է բանականացս ազգի:* **2** *Բայց մեծացուցանելն ո՛չ է ամենեցուն |33բ| տիրապէս, զի մեծացուցանելն Աստուծոյ յայն հայի, յորժամ հրաշագործութիւն կամ բարեգործութիւն, կամ առաքինի ինչ կատարեալ ի մեզ երեւեսցի, որով փառաւորի Աստուած:* **3** *Ըստ այնմ տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայր:* **4** *Եւ առաքեալ գրէ. «Մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում»* **(Փլպ. Ա. 20)**: **5** *Վասն որոյ եւ Կոյսն տեսեալ, թէ մեծահրաշ իրագործութեան սկիզբն եւ միջնորդ լինելոց է, եւ բարեգործութեամբն իւրով*[5] *մեծի բարեգործութեանց աղբիւր բխելոց է եւ անհամեմատ բարձրութիւն եւ ճոխութիւն աշխարհի շնորհելոց է, ասէ. «Մեծացուսցէ»:* **6** *Բայց գիտելի է, զի որպէս ամենայն սրբոցն դասք, զկիրս նախաստեղծին Ադամայ, որ ի վերայ ամենայն մարդկային բնութեանս տարածեալ էր՝ անձանց իւրեանց վարկանէին, զի եւ նոքա ընդ նովին*

---

[1] *ձ սրբել] բերել*
[2] *ձ սիրելեաց*
[3] *ձ > զինչ*
[4] *ձ դատաւորութիւն*
[5] *ձ > իւրով*

դատակնքիւ էին։ 7 Վասն այնորիկ եւ ի դիմաց ամենայն բնութեանս աղաղակէին. «Զարթո՛ զաւրութիւն Քո եւ ե՛կ ի կեցուցանել զմեզ» (Սղմս. ՀԹ. 3)։ 8 Այսպէս եւ Կոյսն ամէնաւրհնեալ զեղեալն փրկութիւն ամենայն աշխարհի անձին իւրում վարկանի եւ ի դիմաց ամենեցուն զգոհութիւնն նուիրէ։ 9 Եւ յիրաւի՛ իսկ, զի ի ձեռն նորա այսմ խորհրդոյ զաւրութիւն յամենայն ազգս եւ ի լեզուս հնչելոց է։ 10 Վասն այսորիկ, նախկի ժամանեալ ի շնորհսն, ասէ. «Մեծացուսցէ ա[նձն իմ զՏէր]»։ 11 Որպէս եւ մարգարէն Դաւիթ ասէ. «Բարձր արարէք»։

Թ. 1 Եւ զիա՞րդ կարէ հողանիւթ բնութիւն մարդկային եւ տկար[1] բարձրացուցանել կամ մեծացուցանել զԱստուած, զի նա յերկինս ի վեր, եւ մարդիկ յերկիր ի խոնարհ, նա՛ ի քերովբիմս եւ մարդ՝ յատակս յերկրի։ 2 Եւ զիա՞րդ բարձրացուցանէ, առ որ եւ ոչ հասանել կարէ. «Ո՞վ մարգարէ...»։ 3 |34ա| Ոչ եթէ արդեամբք, ասէ, կարէ մարդ բարձրացուցանել կամ մեծացուցանել զԱստուած, այլ ըղձիւք եւ կամաւք, զի գիտելով զչափ փոքրկութեան բնութեանս եւ զԱստուծոյ մեծութեանն, սակայն հայելով ի բարեացն շնորհս, կամքս առատանայ ի սիրոյս, որպէսզի թէ կարո՛ղ էի, այլ քան զոր է բարձր՝ զնա բարձրացուցանէի եւ նա գիտէ զկամսն՝ որպէս զգործ գրեալ։ 4 Ի սոյն միտս եւ սրբուհի Աստուածածինն, զոր կամքն ի սիրոյն յառաջ բերէր, զայսպիսի բանս ասէ՝ «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»։ 5 Զի նա՛ զիս եւ զբնութիւնս, յորմէ ես ծնայ, մեծացոյց գործով, եւ ես մեծացուցանեմ բանիւ։ 6 Զի եւ հասարակաց մարդկան զայս կամելով՝ բարձրացուցանել զԱստուած եւ մեծացուցանել, գթութիւն նորա պարարի եւ զմեծացուցանողն, եւ բարձրացուցանողն, եւ զաւրհնաւղն արդեամք, բանի՛ւ եւ կամաւք ի մեծացուցանել եւ յաւրհնելն մեր հատուցաք զփոխարէնն, ըստ անձնիշխան կամացս յաւժարութեան։

Ժ. 1 Դարձեալ եւ յայլ միտս տեսանելի է զզաւրութիւն բանիս, զի ո՛չ է տարադէպ, թէ արդեամք ասէ մեծացուցանել զամենամեծն Աստուած, իբր պատճառ եւ գործի լինելով եւ առիթ, զի թէպէտ եւ չէ՛ կարաւտ մեծութեան Արարիչն, վասնզի մեծ է Տէր մեր եւ մեծ է զաւրութիւն նորա, վասն զի քանակ եւ սահման ամենայն[2] ի ներքոյ զաւրութեան Նորա է, սակայն, նախքան զմարմնառիկ տնաւրէնութիւն բանին ո՛չ այնքան մեծ անուն մեծին Աստուծոյ[3], որչափ յետ մարմին զգենլոյ նորա ի Կուսէն։ 2 Որպէս եւ Դաւիթ յառաջագոյն ասէ. «Մեծ է տէր եւ աւրհնեալ է յոյժ»

[1] Ձ՛> եւ զիարդ... տկար
[2] Ձ՛> ամենայն
[3] Ձ՛ աստուծոյ, որ յառաջագոյն ասէ տէր որ օրհնեալ է յոյժ որչափ

*(**Սղմս. ՃԽԴ. 3**)։* **3** *Եւ դուստր Դաւթի. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»։* **4** |34բ| *Ոչ զբնութիւնն ասէ մեծացուցանել, այլ զփառսն, զի այժմ մեծ է, քան յառաջագոյն։* **5** *Որպէս. զոր աւրինակ թագաւոր, որ որչափ ընդարձակ ունի զլայնութիւն աշխարհին, այնքան մեծ անուանի, այսպէս եւ Աստուած նախ զՊաղեստին միայն ունէր իւր երկրպագուս եւ զսակաւաւոր ազգն, որ ի նմայ, իսկ այժմ Բանին մարմին լինելով ի Կուսէն՝ զամենայն տիեզերս։*

ԺԱ. **1** *Վասն այսորիկ մեծ է հանուր*[1] *աշխարհի տիրելն, որոց նախ միայն է Արարիչ, իսկ այժմ, ըստ անձնիշխան կամացն խոստովանութեան՝ Տէր։* **2** *Զի տեսեալ Կուսին, թէ յինքենէ առնու սկիզբն տարածիլ աստուածպաշտութեանն եւ մեծանալ անուն երրորդական Աստուածութեանն ի հեթանոսս, ասէ մարգարէութեամբ. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»։* **3** *Զոր աւրինակ, ծիրանածին արքայ, յորժամ զոսկէնկար եւ զմարգարատաշար պատմուճանն զգենու, ո՛չ է այնքան գովելի, որպէս զայն, յորժամ ի սիրոյն յաղթի եւ գնայ ի հեռաւոր աշխարհ եւ զնոսա, զորս ծառայացուցանէին թշնամիքն՝ զերծուցանէ ո՛չ բազմութեամբ զաւրացն, այլ ի՛նքն իջանէ յասպարէսն ընդ գլխաւորի նոցա ի մարտ եւ յաղթէ որպէս Դաւիթ Գողիաթու (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 48-51**) եւ որդին Դաւթի՝ սատանայի։* **4** *Ուստի առաւել մեծացաւ անուն նորա, զի էջ յերկնից բարձրութենէ իւրմէ ի խոնարհ եւ զգեցաւ մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ, եւ նոյն մարմնովն մտեալ*[2] *յասպարէզ կենցաղոյս փորձութեամբն ի մարտ եւ յաղթեաց թշնամոյն կենաց մերոց։* **5** *Եւ զի այս ի Կուսէն շնորհեցաւ բնութեանս մերոյ, որ եղեւ բանաւոր տաճար բանին Աստուծոյ, եւ նովաւ լինելոց էին մարդիկ կենդանի եւ բան|35ա|աւոր տաճար Բանին Աստուծոյ, եւ զի ի սկզբանէ աշխարհի զաւրութիւն այսմ խորհրդոյ ծածկապէս եւ անճառաբար երեւէր ներգործութեամբ, այլ կատարումն խորհրդոյն առ Կոյսն եղեւ, վասն որոյ ասէ, «Մեծացուսցէ անձն [իմ զՏէր]»։* **6** *Վասն զի որ քան յիմանալեացն էր*[3] *բնակեալ տաճար ի վերին եւ յանձեռագործ խորանն, երկնաւորացն միայն էր յայտնի, եւ երկրաւորքս՝ յաղագս ոչ հասանելոյ ի բարձրագոյն կայանն, անծանաւթ էին ի նմանէ։* **7** *Իսկ յորժամ կամեցաւ եւ երկրաւոր բանականացս գա՛լ ի ծանաւթութիւն տեսութեան, յայնժամ ի նիւթեղէն խորանս երեւէր, որպէս առ Աբրահամու։* **8** *Բայց այն երեւումն միայն նահապետին եւ զաւակաց իւրոց լինէր*

---

[1] *Ճ՝ > հանուր*
[2] *Ճ՝ եղեալ] մտեալ*
[3] *Ճ՝ > էր*

ծանուցեալ[1]*, եւ այլ աշխարհ ամենայն անծանաւթ մնային։* 9 *Իսկ Մովսէսի հրամայեաց խորան առնել նմա, զորոյ զաւրինակն եցոյց ի լերինն, եւ գեղապաճոյճ զարդու պայծառացուցանել զնա, իբրեւ մանկան տղա[յ]ոյ զաւակին Իսրայիղի, տալ զնա ի յորդորումն, զի ի զարդ գեղեցկութեան նորա փափաքեսցին, եւ որ ի նմա գանձեալ աւրէնքն իցէ՝ սիրեսցեն, եւ զԱստուած բնակութեամբ խորանին ընդ ինքեանս եղեալ՝ հաւատասցեն։* 10 *Վասն որոյ եւ Սողոմոն շինէ նմա տաճար հրաշազան յաւրինուածով, այլ ո՛չ եթէ բարձրեալն ի ձեռագործ տաճարս բնակէ։* 11 *Բայց ի խորհուրդ մեծ իմաստութեան, ետ նոցա զխորանն վկայութեան եւ զտաճարն վայելչութեան, եւ զպէս պէս նիւթս պատարագացն, որպէսզի զԱստուած ի խորանին եւ ի տաճարին հաւատալով, հեռասցին ի հեթանոսական կ|35ք|ռոցն եւ ի զոհելոյն*[2]*, եւ Աստուծոյ միայն մատուսցեն պատարագս*[3]*։* 12 *Եւ երկրորդ, զի ի ձեռն զոհիցն եւ պատարագացն զհաւատ եւ զսէր հոգւոցն խառնեսցեն ընդ զգալի պատարագացն, զոր խնդրէր Աստուած, զի անտի բխէր աւրհնութիւն նմա։* 13 *Իսկ նոքա զզոհն տային իբր ի հարկէ մարմնաւոր ձեռաւք եւ կամք հոգւոյն հեռի եւ աւտար գտանէր յԱստուծոյ։* 14 *Վասն որոյ անարգէ. «Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց եւ ոչ զար[իւն նոխազաց քոց ըմպեմ]» (***Սղմս. ԽԹ. 13***) այլ զիմն խնդրեմ կերակուր, որ է սէրն եւ որ ի սիրոյն Աստուծոյ բխէ աւրհնութիւնն։* 15 *Եւ վասն տաճարին ասէ. «Ես ո՛չ ի ձեռագործ տաճարս բնակեմ» (***հմմտ. Գործ. ԺԷ. 24***), վասն որոյ զիւրն խնդրէր շինութիւն տաճարի, զոր ի սկզբանն շինեաց եւ մեղքն կործանեցին, զորոյ ասէ. «Ես յո՞ հանգչիմ, եթէ ոչ հեզս եւ ի խոնարհս» (***հմմտ. Եսայ. ԿՁ. 2***)։* 16 *Յայտ առնելով զի Աստուած իմանալի՛ է եւ ո՛չ զգալի, աննիւթ եւ ոչ նիւթաւոր, ըստ այնմ՝ «Հոգի է Աստուած եւ երկրպագուաց նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պա՛րտ է երկիր պագանել» (***Յովհ. Դ. 24***)։* 17 *Արդ, զնա մեռեալ նիւթ զիա՞րդ կարէ հանգուցանել կամ նիւթաւոր տաճար քանակել, կամ զգալի տեղիք ժողովել։*

ԺԲ. 1 *Ապա յայտ է, թէ իմացական բնութիւնն յիմանալի միտսն*[4] *հանգչի, զի անմարմինն կարէ զանմարմինն ժողովել, եւ իմաստունն զանունն*[5] *Աստուծոյ եւ զփառս պարունակել եւ հաւատովն եւս տաճար Աստուծոյ լինել։* 2 *Արդ, զայս ծանուցեալ Կոյսն, որ բանաւոր եւ իմանալի տաճար եղեւ բանին Աստուծոյ, եւ ծանեաւ ի ձեռն իւրոյ շնորհին, թէ հանդեր-*

---

[1] *ձ՝ երեւյալ] ծանացեալ*
[2] *ձ՝ ի զոհիցն*
[3] *ձ՝> աստուծո... պատարագացն*
[4] *ձ՝ մեղացն] միտսն*
[5] *ձ՝> զանունն*

ձեալ է Աստուած զմարդիկ տաճ|36ա|արացուցանել աստուածութեանն իւրոյ, յորում եւ հանգչի, որպէս եւ գրէ առաքեալ. «Դուք տաճար Աստուծոյ էք որպէս, զի հոգին Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (**Ա. Կրնթ. Գ. 16-17**)*, զի որ զգիտութեանն Աստուծոյ զհոգի ունի ի ներքին մարդն, նա «է տաճար Աստուծոյ եւ ի նմա հանգչի Աստուած», որպէս առաքեալ դարձեալ ասէ, թէ՝ «Գնացից նոսա եւ բնակեցայց ի նոսա»* (**Բ. Կրնթ. Զ. 16**)*:*

ԺԳ. 1 *Արդ, որպէ՞ս լինի գեղեցկայարմար այսմ տաճարի շինութիւն. վասնզի է՛ հիմն շինուածոյ այսպիսի տաճարի երկիւղ, ըստ այնմ՝ «Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն»* (**Առակ. Ա. 7**)*, զի երկեղիւ խորշի ամենայն ոք ի չարէ եւ մաքրի՝ լինիլ տաճար բնակութեանն Աստուծոյ եւ պարիսպ շինուածոյն տեսութիւն*[1]*, զի սուրբքն սրտիւ զԱստուած տեսցեն:* 2 *Եւ ձեղուն ծածկութեան՝ սէր, ըստ Յոհանու՝ «զԱստուած ուրուք չի՛ք տեսեալ»* (**տե՛ս Ա. Յվհ. Դ. 12**)*, բայց եթէ սիրեմք զԱստուած՝ ի մեզ բնակէ:* 3 *Նա՛եւ պիտոյ է այս տաճարիս նկարագրական գեղեցկութիւնք, այսինքն՝ գիտութիւն եւ իմաստութիւն եւ հանճար, իմանալ զգործ տնաւրէնութեանն Քրիստոսի, թէ որպէ՞ս նորոգեցաք, զիա՞րդ Բանն մարմին եղեւ, զի՞նչ է յոյս կոչմանն մերոյ, եւ զի՞նչ զաւրութիւն այս մեծի խորհրդոյս, որքա՞ն փառս ընկալաք Քրիստոսի մարմնանալովն, որպէս եւ յԵփեսացւոցն գրէ Պաւղոս:* 4 *Զհանգամանս նկարագրութեան բանեղէն տաճարիս ասէ. «Յորժամ կարող լինիջիք հասանել ի վերայ, թէ զի՞նչ է լայնութիւն եւ երկայնութիւն, խորութիւն եւ բարձրութիւն, առաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի, յայնժամ լցջիք ամենայն զաւրութեամբն Աստուծոյ»* (**հմմտ. Եփս. Գ. 18-19**)*:* 5 *Տեսե՞ր, թէ որպէս զաւրութիւնն Աստուծոյ կարէ տանել գիտութիւն սիրոյն բխեալ:*

ԺԴ. 1 |36բ| *Զայս ամենայն խորհուրդ*[2] *տեսեալ սրբուհի Կոյսն, թէ փոխանակ միոյ նիւթական տաճարին, յորում կարծէին հրէայքն պարագրիլ զԱստուած, բոլոր մարդկեղէն բնութիւնս հանդերձեալ են տաճարանալ Աստուծոյ, իմանալի հոգւով եւ առաքինական գործով. եւ մեծանալոց է փառացն Աստուծոյ փառաւորութիւն:* 2 *Եւ այսմ ամենայնի ինքն է սկիզբն եւ արմատ նորոյ աշխարհի լինելութեան եւ փառաց եւ մեծութեանն Աստուծոյ ընդ ամենայն աշխարհ տարածելոյ:* 3 *Ասէ. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»:* 4 *Դարձեալ եւ զայս իմանամք խորհուրդ, զի ծնաւ Աստուած Բանն յամէնասուրբ Աստուածածնէն մաքուր կուսութեամբ, եւ զնոյն պատիւ աստուածածնութեան ետ եկեղեցւոյ իւրում, զի ծնցի կոյս աւազանաւն զորդիս մարդկան որդիս Աստուծոյ, եւ կոչի նա Քրիստոս, եւ մեք՝*

---

[1] *ձ՝ տեսութեան*

[2] *ձ՝ > խորհուրդ*

քրիստոնեայք, նա՝ գլուխ եւ մեք՝ անդամք, նա՝ հիմն եւ մեք՝ շինուած։

ԺԵ. 1 *Արդ, գիտացեալ սրբուհին, թէ յինքենէ պարգեւելոյ է շնորհս այս եկեղեցւոյ, եւ մինչ ի լրումն աշխարհի միաւորին անդամքն հաւատով ի գլուխն Քրիստոս, եւ մեծանայ մարմինն Քրիստոսի, որ են հաւատացեալք. մարմին ի մարմնոյ նորա եւ ոսկր յոսկերաց նորա, վասն որոյ յարաձգական բարբառով ասէ. «Մեծացուսցէ անձն [իմ զՏէր] եւ ցնծա հոգի յԱստուած փրկիչ իմ»։ 2 Արդ, հոմանուն է ցնծութեանս անուն, զի են, որ ցնծան յազնուականութիւն ազգի, ըստ մարմնոյ բարետոհմութեան, եւ է՛ն, որ ցնծան ի մարմնոյ գեղեցկութիւն, եւ է՛ն որ յ[ը]նչից փարթամութեան։ 3 Իսկ ամէնաւրհնեալ եւ իմաստուն Կոյսն ասէ. «Ցնծացաւ հոգի յԱստուած»։ 4 |37ա| Զի ստոյգ ցնծութիւն ա՛յն է, որ յԱստուծոյ իցէ, այլ մարդկային ուրախութիւնքն հակառակ են Աստուծոյ եւ աստուածային ուրախութեանն, եւ ապականիչ ոգւոցն բարելաւութեանց։ 5 Իսկ այն ցնծութիւն, որ յԱստուած իցէ, յեւս կատարեալ բարձրութիւն վայելչութեան փառացն ածէ, քանզի թէ ոք ի բարետոհմութիւնս ազգի ուրախանայ, նոքա ամենեքեան զկա՛ւ ունին ազգաբանութիւն։ 6 Իսկ զգաւրութիւն եւ զգեղեցկութիւն մարմնոյ Եսայիաս խոտոյ նմանեցուցանէ. Աստուծոյ առ նա խաւսեցեալ. «գոչեա՛», թէ՝ «Ամենայն մարմին խոտ է» (Եսյ. Խ. 6) եւ զմարմնական[1] ստացուածս ամենայն, յորս ուրախանան մարդիկ, ծաղկի խոտոյ նմանեցուցանէ, զի ծաղիկ խոտոյ գարնանային մինչ փթթին, ուրախ առնեն զտեսիլ երեսացն, եւ ի թարշամիլն՝ տխրեցուցանեն։ 7 Այսպէս եւ ինչքն ամենայն, ի ցամաքիլ խոտոյ մարմնոյն մահուամբ, թաւթափի ի նմանէ ծաղիկ ստացուածոյն, եւ Բանն Աստուծոյ միայն մնայ յաւիտեան, որ[2] ասաց. «Հո՛ղ էիր եւ ի հող դարձցիս» (Ծն. Գ. 19)։ 8 Իսկ ցնծութիւն ոգոց անմահ եւ մշտնջենական սէրն է Աստուծոյ, որով ցնծայր Կոյսն ամէնաւրհնեալ։ 9 Կրելով յինքն զցնծութիւնն աշխարհի, ասէ. «Ցնծացաւ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ»[3] (Ղկ. Ա. 46)։ 10 Զի որպէս[4] ի ձեռն նախամաւրն սուգ եւ տրտմութիւն տիրեաց բնութեանս նախ ի՛ւրն եւ ապա ծննդոց իւրոց. տրտմութեամբ եւ ցաւաւք եւ երկամբք ծնունդ, եւ անկանել յանասնական անպատուութիւն՝ ի փշալից եւ ի տատասկածին[5] երկիր, ի քրտանց եւ ի վաստակոց հաց եւ ի բազում եւ ի յոլով իրս տրտմականս։ 11 Իսկ ի ձեռն Կուսին |37բ| աշխարհի ցնծութիւն, անիծից եւ երկանց բարձումն, յանասնական ծննդենէն՝ լուսաւոր եւ հոգեւոր ծնունդ, երկրի եւ որ ի սմա՝ վերստին աւրհնութիւն։ 12 Վասն*

---

[1] *ձ մարմնականաց*
[2] *ձ որպէս] որ*
[3] *ձ > փրկիչ իմ*
[4] *ձ > որպէս*
[5] *ձ > անապատութիւն... տատասկածին*

որոյ ասէ. «Ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ»։

ԺԶ. 1 *«Փրկիչ իմ», ասէ Դաւիթ, հայեցեալ յախտակրութիւն տառապանաց եւ ի խոնարհութիւն ծառայական բնութեանս, որ ի դիւաց, ասաց. «Ողորմեա՛ ինձ եւ տե՛ս զխոնարհութիւն իմ»* (**Սղմս. Թ. 14**)*։* 2 *Եւ վաղվաղակի փրկութիւնն, որ Քրիստոսիւ լինելոց էր, իբրեւ հայելեաւ նկարեցաւ առաջի նորա։* 3 *Յոր հայեցեալ ասաց. «Ո՛հ, բարձր արարեր զիս ի դրանց մահուանէ»* (**Սղմս. Թ. 14**)*։* 4 *Այսպէս յայտ յանդիման ետես Մարիամ զեղեալն փրկութիւնն մեր ի ծոց իւր, ցնծացաւ հոգւով եւ ասէ. «Ցնծասցէ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ»։* 5 *Ահա այսու յայտնեցաւ միտք բանիս, զի յայտ արար կրողն եւ բարձողն փրկութեան, թէ եւ ինքն էր*[1] *կարաւտ ամենեցունց Փրկչին, վասն զի եւ նա՛ զանկուած էր տանն Ադամայ եւ պարտական առաջին մաւրն պարտեաց, յաղագս որոյ նախ նա՛ լինի ընդունակ փրկութեան, եւ ապա ի նմանէ տարածեալ բաշխի ամենեցունց փրկութիւնն։* 6 *Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ։*

ԺԷ. 1 *Կրկին տեսակ է խոնարհութեան։* 2 *Մինն որ գեղեցիկ է եւ առաքինութեանն եւ միւսն վատթար եւ չարութեանն։* 3 *Իսկ վատթարն չորս ունի զանազանութիւն. տեղեաւ եւ գործով, ուսմամբ եւ պատահմամբ։* 4 *Տեղեա՛ւ, յորժամ ոք ի բարձրութենէ ի նուաստութիւն անկանի, եւ գործով, յորժամ ի բարձր եւ յերկնաւոր առաքինութենէ ի մեղս կործանի, եւ ուսմամբ, յորժամ մտ|38ա|ացն գեղեցիկ տեսութեամբ ի վնասակար եւ ի չար ուսմունս վարժի։* 5 *Իսկ պատահմամբ, որոյ չէ՛ յիւր կամաց յաղքատ եւ յապատհմ ծնողաց ծնանիլ։*

ԺԸ. 1 *Արդ, այսոքիկ ամենայնս հասարակաց բնութեանս տիրեալ էին ըստ մարմնոյ բնակութեան, ի բարձրութենէ դրախտին ի վայր անկեալք, եւ հոգւովք յաստուածատեսակ առաքինութենէն եւ ի կերպարան լինելոյն, յանասնականն անկեալ հաւասարութիւն եւ մտաւք դիւաբախ եւ վնասակար ուսման հետեւեալ։* 2 *Իսկ Սրբոյ Կուսին յայսցանէ երկոքին միայն ասի խոնարհութիւն ի դրախտէն յերկիր անգանելով, զի ծնունդ էր եւ նա՛ նախաստեղծիցն, եւ զի աղքա՛տ էր յաղքատաց երեւեալ ծնաւղաց։* 3 *Իսկ Նա՛, որ երանեաց զաղքատս եւ խոտեաց զմարդկան բարձրութիւնս, բնակեաց ի նա՛ եւ մեծացոյց անզուգական մեծութեամբն, ըստ այնմ. «Յո՞ բնակեցայց, թէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս»* (**հմմտ. Եսայ. ԿԶ. 2**)*։* 4 *Արդ, սա յայսպիսի բարձրութիւն հասեալ, ո՛չ մոռանայ զբնութիւնն, այլ «աղախին» զինքն անուանէ* (**տե՛ս Ղկ. Ա. 38**)*։*

ԺԹ. 1 *«Հայեցաւ ի խաղ»։* 2 *Թէպէտ նա՛ արժանացոյց մայր իւր առնել*

---

[1] *ձ՛> էր*

զնա եւ որդի նորա լինիլ, այլ նա Տէ՛ր եւ Արարիչ խոստովանի։ **3** *Ըստ որում Տէրն առ փարիսեցիսն ասէր, թէ՝ «Դաւիթ հոգւովն զնա տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ» (տե՛ս* **Ղկ. Ի. 44***)։* **4** *Արդ, այսպէ՛ս Տէր է եւ հաճեցաւ որդի նորա լինել։* **5** *Նմին իրի ասէ. «Ահա յայսմ հետէ ասէ, երանիցեն ամենայն» (***Ղկ. Ա. 48***)։* **6** *Ծանոյց նմա հոգին եւ զայն եւս, զի որ ի նմանէ ծնանելոց էր, Տէր էր ամենայն ազգաց եւ առ նա ժողովելոց էր ամենայն ազգք։* **7** *Ըստ այնմ՝ «Յիշեսցեն եւ դարձցին առ տէր [Աստուած] ամենայն ծագք [երկրի]» (***Սղմս. ԻԱ. 28***)։* **8** |38բ| *Արդ, այժմ, որ ասացաւ յԵղիսաբեթէ, ամենայն ազգ եւ լեզու խոստովանին զնոյն զոր եւ ինքն ծանեաւ հոգւովն, թէ «Ահա ամենայն ազգ երանիցեն ինձ» (***Ղկ. Ա. 48***)։*

Ի. **1** *Արար ինձ մեծամեծս հզաւրն։* **2** *Երեք աւրինակաւք եղեն եւ կատարեցան մեծամեծքն Աստուծոյ առ Կոյսն՝ խորհրդաբար հիմնարկութեամբ, Բանին ներգործութեամբ, Գործոյն կատարմամբ։* **3** *Հիմնարկութեամբ՝ առ նահապետսն եւ մարգարէսն, ներգործութեամբ՝ Բանին միաւորելով ընդ բնութեանս։* **4** *Իսկ կատարումն գործոյն է՛ զբնութեանս բարիսն այսրէն դարձուցանելով։* **5** *Ըստ որում ասէ. «Արար ինձ մեծամեծս Հզաւրն» (***Ղկ. Ա. 49***), զի այն, զոր մարգարէքն եւ նահապետքն գուշակեցին եւ բանիւ ներբողականաւ յառաջագոյն պատմեցին, եւ բազմադիմի եւ անթիւ բարեաց պատճառ քարոզեցին վասն մեր, զի կոչեցին Դրախտ աստուածատունկ, Այգի վայելուչ, Մորէնի անկէզ, Լեառն սուրբ, Վէմ ջրածին, գաւազան ծաղկեալ, Սափոր ոսկի, Տուփ խնկոց, Տապանակ կենդանագիր կտակին, Ջրհոր ջրոյ կենդանւոյ, Բոյս բարի, Քաղաք Աստուծոյ, Տեղի շափիւղայ, Պարտէզ փակեալ, Աղբիւր կնքեալ, Հովիտ շուշանի, Բլուր կնդրկի, Երկիր ծարաւուտ, Ամպ թեթեւ, Անապատ անկոխ, Դուռն ախեալ, Տումար անընթեռնելի, Երկին բանաւոր, Արեւելք արեգականն արդարութեան։* **6** *Արդ, այս ամենայն մեծահրաշ եւ խորհրդական անուանս յառաջագոյն վասն իմ թելադրեաց ի շրթունս նոցա*[1]*, որք խաւսեցան զայս, եւ ի սոյն վարժեալ՝ կրթեաց զմիտս մարդկան, եւ ապա ինքն եկեալ՝ գործով կատարեաց։* **7** |39ա| *Եւ զմեկնութիւնսն, որ յանուանսն, արդեամբք յայտնի արարեալ ծանոյց, եւ ի լրումն աւրինաց եւ մարգարէից եկն եւ ելից զբանս նոցա, որք ի հոգւոյն Աստուծոյ խաւսեցան։* **8** *Եւ կատարեաց զամենայն՝ սկիզբն ի ծննդենէն արարեալ եւ ծնեալ մեծահրաշ ծննդեամբ ի սրբոյ Կուսէն։* **9** *Զոր եւ ասէ. «Արար ինձ մեծամեծս Հզ[աւրն]»։*

ԻԱ. **1** *Յայտ է, զոր Բանն ի մարմնանալն ի Կուսէն ներգործեաց, քանզի ի լինել բարբառոյ աւետեաց հրեշտակապետին ի յունկն սրբուհւոյ Մա-*

[1] *Ձ նորա] նոցա*

րիամու Կուսին եւ տալ նմա զհաւանութիւն Բանին, ընկալաւ նոյն ժամայն զԲանն Աստուած ի ծոց իւր եւ ընդ մտանելն Բանին ի մաքրեալն[1] *հոգւով տաճար, միանգամայն եղեն երիս մեծամեծ եւ սոսկալի խորհուրդ. Առու՛մն եւ յէութի՛ւն գալն եւ աստուածանա՛լ մարմնոյն ի Բանէն:* **2** *Եւ յայսցանէ իմանի Աստուածածին Սուրբ Կոյսն Մարիամ, ո՛չ միայն*[2] *յաղագս բնութեամբ Աստուածն գոլ Բանին բնակելոյ ի նմա, այլեւ վասն աստուածանալոյ մարդկութեանն ի նմա, որոց վաղվաղակի յղութիւն եւ էութիւն, եւ աստուածութիւն սքանչելագործի:* **3** *Յղութիւն՝ Բանին Աստուածոյ, իսկ մարմնոյն՝ ի նոյն անձն Բանին էութիւն, եւ անձամբ եւ բնութեամբ միաւորութիւն, եւ Աստուածութիւն ի մաւրէն Աստուծոյ՝ ի վե՛ր քան զբնութիւն, շնորհելով զստեղծումն ստեղծողին եւ զմարդանալն Աստուծոյ եւ Արարչին արարածոց, որ աստուածացոյց զառեալն եւ կենդանի պահեաց զմիաւորեալն ընդ ինքն, յորոց եղեալ էր միաւորութիւնն, այսինքն՝ անշփոթ եւ անխառնակելի, զոր եւ տեսեալ զայսպիսի խորհուրդս յինքն եղեալ, Տիրամայրն ասէ. «Արար ինձ մեծամեծս Հզաւրն»:*

ԻԲ. **1** |39բ| *Եւ զի՞նչ եւս ոք ունիցի ասել մեծամեծս կամ շնորհի առաւելութիւն, որպէսզի յարարածոց աստի գոլով լինել Մայր անեղ բնութեանն:* **2** *Եւ զի մի՛ ընդ մեծամեծսն հայելով տարակուսեսցիս, յաւե՛լ զՀզաւրին, որում ամենայն ինչ կարելի է, եւ տկարանայ եւ ոչինչ, այլ որպէս կամի, բաւական է ի կազմել, եւ զի հզոր է, էլոյծ զկապ մայրականացն եւ կուսականացն, եւ ծնաւ արու ի մարգարէ կնոչէն, որպէս Եսայիաս աւետարանէ (*հմմտ. Եսյ. է. 14*):* **3** *Եւ սոքա երկոքին մեծ հրաշագործութիւնք են, զի որ կո՛յս է, կապեալ է ընդ նմա բնութեամբ, ո՛չ անուանիլ մայր, եւ որ մա՛յր է, կապեալ է ընդ նմա, ո՛չ մնալ կամ կոչիլ կոյս, զոր Ստեղծիչն բնութեանս էլոյծ զաւրէնս բնութեան, արար զկոյսն մայր, եւ պահեաց զմայրն կոյս, որ եւ ասէ կրողն այսպիսի անճառելեացս. «Արար ինձ մեծամեծս Հզաւրն»:*

ԻԳ. **1** *Յա՛յտ է զերրորդ յեղանակ մեծագործութեանն, որ կատարմամբ գործոյն է, զի զհասարակացն եղեալ փրկութիւն, զոր արար Հզաւրն, փրկել նմա աջ իւր եւ բազուկ սուրբ իւր. զնոյն անձին սեփհական խոստովանի, զի զնոյն մեծամեծս Հզաւրն ամենեցուն արար, միջնորդութեամբ ամենամաքուր Կուսին, այսինքն՝ զնո՛ր արարչութիւնն եւ վերստին ստեղծելն ի տիպն առաջին, զայն որ եղծեալն էր յանցանաւք, զփչումն*

---

[1] *Ձ մաքրիլն*
[2] *Ձ > միայն*

հոգւոյն, որ բարձեալն էր ի մարդկանէ, վասն ի մարմին փոխարկելոյն զդրախտին ժառանկութիւնն, յորմէ իրաւամբ զրկեցաք ադամածին Կուսիւն, զոր կուսածին Ադամն ի մեզ դարձոյց վերստին, զկենաց փայտին ճաշակումն, յորմէ սրովբէա|40ա|փակ պահպանութեամբն հեռացաք՝ տուեալ մեզ վերստին շնչաւոր դրախտիւն Մարիամու։ **2** *Արար մեզ եւ ընդ հրեշտակս միաւորութիւն՝ յորմէ աւտարացաք, զյաւիտենական անմահութիւնն, զոր մահուամբ անմահին ընկալաք, զմիաւորութիւն եղական բնութեանս ընդ անեղին, որում Միածնին մարմնանալովն արժանացաք զորդիութեանն պատիւ, զոր անդրանիկն Հաւր, անդրանիկ մաւր լինելով՝ սեփհականեաց զժառանկակցութիւն Միածնին, որում ըստ մարմնոյ հաւասարութեանն ժամանեցաք զփառացն հաղորդութիւն, զոր չարչարանացն կցորդութեամբ ընկալաք։*

ԻԴ. **1** *Արդ, զայս ամենայն բնութեանս բարիք եղեալ յԱրարչէն իւր խոստովանի կոյսն, իբր զծնունդ բնութեանս եւ ասէ. «Արար ինձ մեծ[ամեծս] Հզաւրն»։* **2** *«Սուրբ է անուն Նորա» (Ղկ. Ա. 49), այսինքն՝ փառաւորեալ է ի վերայ մեծամեծացս այսոցիկ, քանզի արար ծնաւղ եւ պահեաց կոյս. եւ ի ձեռն իմոյ ծննդեանս ամենեցունց սրբութեան վերագլխի լրումն եւ զամենայն հասակ աւրհնեաց, արանց եւ կանանց եւ սուրբ է անուն Նորա ի մեզ։* **3** *Եւ դարձեալ, զի ի վերայ անսուրբ տարերց, քարանց եւ փայտից եւ անսուրբ կենդանեաց կոչեալ լինէր անունն Աստուծոյ, եւ ի յառնելն զմեծամեծս Հզաւրին, բառնալով զխաւար կռապաշտութեանն եւ ծագեալ ի մեզ զլոյս աստուածգիտութեանն։* **4** *«Սուրբ է անուն Նորա» յամենայն նիւթական եւ եղծական իրաց, յորոյ վերայ կարդացին մարդիկ զանուն Նորա։* **5** *Եւ դարձեալ՝ «Սուրբ է անուն [Նորա]»։* **6** *Զի ելից զբանս մարգարէիցն, զոր հոգւովն սրբով խաւ|40բ|եցան։* **7** *Եկն եւ իւր մարմնանալովն կատարեաց, եւ զի որ արար զմարդն ի պատկեր իւր, եւ ե՛դ ի դրախտին՝ վայելել զվայելչական վայրն եւ լնուլ զնա անախտ աճմամբ, այժմու մարմնանալովն եւ զբնութիւնս աստուածացուցանելովն, եւ զհոգեւոր ծնունդն շնորհելով, եցոյց թէ՝ «սո՛ւրբ է անուն Նորա» յամենայն պատճառաց, զոր բանսարկուն խաբեաց զմարդիկ։* **8** *Զի զբնութեանս բարիսն, զոր կորուսաք մեղանչելովն, ի մեզ դարձոյց վերստին իւր անմեղ մարմնովն, եւ քաղաքավարելովն իւր[1] ի մարմնի՝ ետ մեզ աւրինակ պահել[2] զանմեղութիւն բնութեանս եւ զճշմարիտ ճանապարհն*

---

[1] *ձ՛> իւր*
[2] *ձ՛> պահել*

առ Հայր եցոյց, ասելով. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն, եւ կեանք» (**Յվհ. ԺԴ. 6**)։

Իե. 1 *Արդ, յայսմհետէ թէ ոք մոլորեսցի յայնմ ճանապարհէ եւ զճշմարտութիւնն փոխանակեսցէ ստութեան, եւ փոխանակ կենացն՝ զմահ, եւ դարձցի վերստին անդրէն ի դժոխս, զոր շինեաց իւրովք յանցանաւքն։* **2** *«Սուրբ է անուն Նորա», զի Նա զմեղսն եբարձ եւ զանմոլար ճանապարհն եցոյց, այլ մեք մերով անձամբ եղաք պատճառ մերում կորստեան։* **3** *Եւ «սուրբ է անուն Նորա» ի մերմէ արիւնէս, որպէս եւ Պաւղոս իւր աշակերտելոցն ասէր. «Սուրբ եմ ես յարիւնէ ամենեցուն զի ո՛չ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զբանն Աստուծոյ»* (**Գրծ. Ի. 26-27**)։ **4** *Այսպէս եւ գլուխն եկեղեցւոյ Քրիստոս պատմեաց մեզ զկամս Հաւր եւ ուսոյց մեզ բանիւ եւ գործով, թէ որպէ՞ս պարտ է քաղաքավարիլ մարդոյ ըստ պատկերի եւ կերպարանի Աստուծոյ եղելոյ, եւ որպէ՞ս ելանել առ սկզբնատպին նմանութիւն եւ ժ|41ա|առանգել զտեղին, զոր պատրաստեաց մեզ Քրիստոս։* **5** *Ըստ այնմ «Ուր է՛ն եմ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի»* (**Յվհ. ԺԲ. 26**)*, որում արժանի՛ արասցէ Քրիստոս զհաւատացեալս անուանն իւրոյ, եւ նմա փառք յաւիտեանս։*

Դ.

|41ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԱՐԿԵԱԼ ԲԱՆ ԻՆՉ ՅԱՐՄԱՐԱԿԱՆ Ի ԾԹ. ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ ԱՍԷ. «ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐԺԵՑԵՐ ՁՄԵՁ ԵՒ ԱՒԵՐԵՑԵՐ» (ՍՂՄՍ. ԾԹ. 3) ՆՈՐԱԳԻՒՏ ՇԱՒՂՕՔ ԵՐԵՒԵՑՈՒՑԵԱԼ ՁՁՕՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԻՍ ԵՒ ՅՈԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՄՆ ԲԱՆԻՑ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԽԱՁԻՆ Ի ՎԱՐԺՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԵՂԲԱՐՑ ԳԵՂԵՑԻԿ

Բավական ընդարձակ եւ խոսուն վերնագիրը հուշում է ճառի բովանդակությունը, ինչպես նաեւ լսարանը, որի համար նախատեսված է այն:

Բնաբան վերցնելով սաղմոսի «Աստուած մերժեցեր եւ աւերեցեր...» խոսքերը՝ Երզնկացին նկատում է, որ ինչպես բնական երեւույթները, այնպես էլ մարդ անհատը, հասարակությունը, պետությունը ենթակա են փոփոխականության: Հարկ էր պատասխան տալ, թե ինչո՞ւ Աստված երբեմն-երբեմն պատժում է մարդկային հասարակությանը եւ իր հավատացյալ հոտին:

Հետաքրքիր է, որ սաղմոսի վերը նշված միտքը տարակարծությունների տեղիք է տվել. խոսքը վերաբերում է դրախտից արտաքսվելու՞ն միայն, թե՞ մարդկության նկատմամբ Աստծու տնօրինությանն ընդհանրապես: Ինչպես նկատել է Հ. Զամչյանը, այդ խնդրին անդրադարձել էր նաեւ Վանական Վարդապետը[1]: Երզնկացին այս խնդրին ավելի մանրամասն է անդրադառնում: Նա Հին կտակարանի ասույթը համադրում է ավետարանական իրողությունների հետ բացատրելու համար, որ աստվածային պատժի համար մեղավորը հենց ինքը՝ մարդկային հասարակությունն է, եւ աստվածային պատիժները նախ եւ առաջ մարդկության փրկության նպատակով են կիրառվել: Ինչպես իր մի շարք այլ երկերում, այստեղ եւս հայրենասեր հեղինակն իր խոսքը մասնավորեցնում է՝ դառնալով Հայաստանի ծանր իրողություններին, ջերմորեն մաղթելով Աստծո ողորմածությունը Հայաստանի եւ ընդհանրապես հավատացյալների՝ քրիստոնեական աշխարհի նկատմամբ, իսկ քրիստոնյա թագավորներին՝ զորակցություն եւ հաղթություն. «եւ առաւել զբարեպաշտ եւ զքրիստոսապսակ թագաւորն Հայոց... ի պատերազմունս բարբարոսաց յաղթութիւն» (ՄՄ 2173, 56ա):

Նկատի առնելով, որ Երզնկացու բացատրությունը համահունչ է Ներսես Լամբրոնացու մեկնությանը[2], հարկ է նշել, որ այս կարծիքն ընդունված էր հայ աստվածաբանական մտքի կողմից:

Զեռնպահ ենք մնում որոշելուց, թե երբ է գրվել սույն ճառը, քանզի միակ ակնարկը՝ «բարեպաշտ եւ քրիստոսապսակ թագաւորն հայոց» խոսքերը, կարող են նվիրված լինել ե՛ւ Լեւոն Գ., ե՛ւ Հեթում Բ. արքաներին, որոնց հետ մտերմիկ հարաբերություններ ուներ Հովհաննես Երզնկացին, այնուամե-

---

[1] *Տե՛ս* Մ. վ. Զամչեան, *Մեկնութիւն Սաղմոսաց, հ. Ե., Վենետիկ, 1819, էջ 101:*

[2] *Տե՛ս անդ, էջ 111:*

նայնիվ թույլ ենք տալիս ենթադրել, որ այն գրվել է Հեթում Բ. թագավորի գահակալության շրջանում, երբ առավել վտանգված էին ինչպես բուն Հայաստանի ու Կիլիկյան Հայոց թագավորության, այնպես էլ, ընդհանրապես, քրիստոնեական իշխանությունների շահերը արևելքում:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 41ա-56ա) եւ 2854 (Ճ. 107բ-111բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Նախերգան*[1] *քեզ, զոր պիտի, ասա՛, եւ ի սկսանելն ի մեկնութիւն բանիցս ասա՛, բայց նախ զվերնագրիս զաւրութիւն տեսցուք, որ ասէ Սաղմոս ի Դաւիթ արձանագիր՝ ի զառանցելոց ժամանակաց առ ուսմանէ ի ժամանակի, զի հրձիգ արար զՄիջագետս Ասորոց եւ զԱսորեստան եւ զՍոբ[ող]այ եւ դարձին հարկանէ Յովաբ զձորն Աղտից ԺԲՌ.ս (12 000):*

Բ. 1 *Գիտել արժան է, զի ո՛չ է այնքան յաշխարհի քաղցր եւ ախորժելի իր, եւ հեշտական, քան թէ յորժամ թագաւորք զթշնամեացն իւրեանց կոխեն զգաւառս եւ զընդդիմակացն զաւրութիւնսն հարեալ, վանեն պատերազմաւ, եւ յաղթութեան անուն եւ զփառս ժառանգեն:* **2** *Արդ, որ յայսպիսի եհաս կատարումն կամաց, զիա՞րդ մերժումն անուանէ եւ ո՛չ աւգնութիւն, եւ կամ վասն է՞ր ասէ. «Մերժեցեր զմեզ եւ աւերեցեր»:* **3** *Բայց սակայն յուսալով ի շնորհս Հոգւոյն Սրբոյ, տեսցուք զդիտաւորութիւն սաղմոսիս, զոր Հոգին Սուրբ խաւսեցաւ ի բերանոյ Դաւթի, զի կարի իմն գեղեցիկ եւ յարմարական ուսումն է այս ի խրատ բնութեանս, զի ի յաղթութեան ժամու |41բ| եւ ի ծայրս բարեբախտութեանն ժամանեցելոյ ետ խաւսել հոգին զմերժելոյ եւ զաւերելոյ եւ զբարկանալոյ Տեառն բան, զոր եւ վերնագիրս հաստատէ՝ ասելով. «Ի կատարած վասն այլայլութեան»:*

Գ. 1 *Արդարեւ ճշմարիտ, քանզի ի վերայ այլայլական եւ դիւրափոփոխ բնութեանս է կատարումն բանիցս, որ ոչ է կարող անշարժ մնալ ի բարին եւ ոչ անփոփոխ ի չարն, այլ ըստ նմանութեան բնութեան ուղղունակ է ներհական փոփոխմանց, որպէս աւդ լուսոյ եւ խաւարի:* **2** *Այսպէս եւ բնութիւնս զանազան ներհական կրից, վասն զի ոչի՛նչ է անշարժ ի յեղականաց եւ ոչ հա՛րթ եւ ո՛չ ինքնաբաւ եւ ոչ ի սպառ մնան՝ ոչ ի զուարճանալն եւ ոչ ի տրտմելն, ո՛չ ընչեղութիւն եւ ո՛չ աղքատութիւն, ո՛չ զաւրութիւն եւ ոչ տկարութիւն, ո՛չ խոնարհութիւն եւ ո՛չ ճոխութիւն, նա՛ եւ որ կարի իմն անշարժելիքն թուին:* **3** *Առաքինութեանցն յաջողութիւնք ո՛չ ոք պահեաց առանց սայթաքելոյ, զի բազում անգամ ընթանալն ուղիղ՝ հանդիպի առաջի նմա գայթակղութիւն եւ փոփոխի ի հեզութենէ ի բարկութիւն, ի պարկեշտութենէ՝ յորկորամոլութիւն, յողջախոհութենէ՝*

[1] *Ճ նախերգանք մեզ*

յանկարգապէս ցանկութիւն, յիմաստութեան ունելոյ կարծիս՝ յանմտութիւն բանից կամ գործոց, եւ վաղվաղակի այլայլեալ յառաքինութեան կարգացն՝ յերկիր կործանի, ստորաքարշեալ եւ պատրեալ։

Դ. 1 *Եւ արդ, զի այսպէս դիւրափոխ եւ այլայլոտ է բնութիւնս, մինչ զի հողմոց առաւել գոյ հաւատալ* |42ա| *եւ գրոյ ի վերայ ջուրց, քան թէ մարդկան բարաւրութեան. վասն որոյ կանխագէտ եւ յառաջատես Հոգին Սուրբ արձանացոյց զսաղմոսս զայս՝ ի վերայ վիմի եկեղեցւոյ, ի դարս ժամանակաց, զի մի՛ ի ժամանակի խնդամտութեան՝ մոռասցուք զերկիւղն եւ մի՛ ի տրտմականսն ի բա՛ց ընկեսցուք զքաջայուսութիւնսն եւ ի մրրիկս*[1]*՝ զնաւ ուղիղն։* 2 *Վասն որոյ մարգարէս ասէ. «Աստուած, մերժեցեր զմեզ եւ աւարեցեր, բարկացար եւ [գթասցիս ի մեզ]»։*

Ե. 1 *Արդ, ունի սաղմոսս տեսութիւն ըստ չորից յեղանակաց։* 2 *Առաջին, որ ըստ տեղւոյն առ Դաւիթ ի փորձութեան ժամանակս։* 3 *Երկրորդ, առ ի միտս, ի վերայ գերութեանն ժողովրդեանն, որ ի բաբելացւոցն, որ նշանակ էր գերութեան բնութեանս մարդկան, որ ո՛չ եկաց հաստատուն, եւ ո՛չ պահեաց զսկզբնատպին բարեացն կերպարան։* 4 *Երրորդ, այլաբանաբար եւ բարոյականապէս ի վերայ իւրաքանչիւր ումեք, որ զբարիսն, յոր ժամանեցին, ո՛չ կարացին մինչ ի սպառ պահել։* 5 *Չորրորդ. ընդ ժամանակս-ժամանակս. ազգի՝ եւ թագաւորութեան յարմարի, որոց բարիքն յընդդէմսն փոխին, եւ երբեմն եղեալք ի փառս իշխանական ճոխութեան*[4]*, ըստ ստրկութեան*[2]*, ըստ ծառայական կարգի անգանին ի հնազանդութիւն։*

Զ. 1 *Ունի եւ սաղմոսս այս լայն եւ ընդարձակ զաւրութեամբ զխորհուրդ խաչին, զփրկական նշանի սեռն եւ անապակ սիրոյն Աստուծոյ*[3] *առ մարդիկ։* 2 *Բայց ի սկիզբն ձեռնարկելի է, որ ասէ. «Աստուած մերժ[եցեր] եւ աւերեց[եր]»։* 3 *Ոչ եթէ Աստուած զոք մերժէ յինքենէ, կամ բարկու*|42բ|*թեամբ վարի անբարկանալի բնութիւնն։* 4 *Վասնզի աստուածային բարի բնութիւնն ո՛չ երբեք որոշէ զինքն յերկրորդէն, այսինքն՝ ի մարդոյն, բայց թէ յանպատկանաւորութենէ մարդոյն, քանզի յայնժամ թուի զինքն որոշել ի նմանէ։* 5 *Եւ արդ, որպիսի՞ ինչ է, զոր ասեմս, որպէս արեգակնայինն լոյս՝ առհասարակ զամենեսեան լուսաւորէ։* 6 *Բայց թէ յանպատկանաւորութենէ տեսարանացն*[4] *թուի զոմանս առաւել լուսաւորել, եւ զոմանս՝ նուազ, քանզի ե՛ն ոմանք, որ առողջ ունին զտեսարանն, եւ*

---

[1] *Ձ մօրան] մրրիկս*
[2] *Ձ տկարութեան] ստրկութեան*
[3] *Ձ > աստուծոյ*
[4] *Ձ տեսականացն*

են, որ տկար։ 7 *Եւ յայսմանէ թուի զոմանս առաւել լուսաւորել եւ զոմանս՝ նուազ։* 8 *Սոյնպէս եւ աստուածայինն ո՛չ երբէք մերժե զմարդ յիւրմէ եւ ո՛չ որոշէ զինքն ի մարդոյ*[1]*, այլ ամենեցուն հասարակապէս խնամէ, այլ վասն տկարութեան ընդունողին եւ վասն ոչ սուրբն գոլոյ ախտից, թուի զինքն որոշել ի նմանէ։*

Է. 1 *Եւ այսպէս մեք մերովք ախտիւքս մերժիմք։* 2 *Ըստ որում գրէ Յակովբոս. «Իւրաքանչիւր ոք փորձի[առ ի] յիւրոց[ն] ցանկութեանցն ձգեալ եւ պատրեալ» (***Յակ. Ա. 14***)։* 3 *Այսինքն՝ զի անձնիշխան կամաւք ի մէջ կամք բարոյն եւ չարին, եւ յերկուց անտի ստիպիմք ըստ ախորժակաց եւ հարկաւոր կրից։* 4 *Եւ քարշէ զմեզ Աստուած բարեսէր կամաւք յառաքինութիւն։* 5 *Իսկ սատանայ, հարկաւոր կրիւքն՝ ի չարութիւն։* 6 *Արդ, բազում անգամ ի քարշելն ի չարութիւն, նախախնամութիւնն Աստուծոյ զերծուցանէ զմեզ եւ փրկէ, իսկ երբեմն թոյլ տա փորձիլ եւ անկանիլ ի բարւոյն, յորում եւ է՛։*

Ը. 1 *Է՛ եւ այլ ազգ, դարձեալ մերժումն իմանալ, զի յորժամ զպատիւ մեծարանացն, յոր եւ իցեմք|43ա|, ըստ արժանւոյն ոչ վարեմք, անարգանաւք չարշարանացն ուղղէ՛ Աստուած, այսինքն՝ զուրախականսն՝ տրտմութեամբ, զառողջութիւնն՝ հիւանդութեամբ, զմեծութիւնն՝ աղքատութեամբ, զխաղաղութիւնն՝ պատերազմաւ, մերժելով ի բարւոյն, զոր ո՛չ գոհացաք*[2]*։* 2 *Եւ խրատէ հակառակաւքն, զի զգաստասցուք, վասնզի կամի Աստուած զամենեցունց կեալն եւ ի գիտութիւն ճշմարտութեան գալն ճանապարհաւ, յորում ունի ոք զընթացս ի կենցաղումս, զի հաղորդք լիցուք բարերարութեան Նորա։* 3 *Իսկ յորժամ մեղանչեմք՝ կամի տանջել։* 4 *Եւ է՛ առաջինն նախ կամք եւ հաճութիւն*[3]*, իսկ երկրորդն՝ հետեւումն կամաց*[4] *եւ թուլացումն։*

Թ. 1 *Եւ այսպէս յամփոփեալն Աստուծոյ զինամսն իւր եւ տալոյ թոյլ բազում եւ զանազան տեսակք փորձութեանց գան ի վերայ՝ հոգեկանք եւ մարմ[ն]ականք. ոմանք ընդհանրական, որպէս Ադամայ, եւ ծննդոց իւրոց անգանել ի փառաց դրախտին, ի քրտանց եւ ի վաստակոց երկիր եւ ի հող մահու։* 2 *Եւ է՛, զի ազգի եւ երկրի միում*[5]*, որպէս հրէիցն եւ Երուսաղէմի, որ յոլով գերութեամբ եւ տառապանաւք խրատեցան։* 3 *Եւ է՛, զի իւրաքանչիւր յատուկ անձին, որպէս բազմաց ըստ բազում աւրինակաց*

---

[1] *ձ ի մարդոց*
[2] *ձ գոյացաք*
[3] *ձ աճութիւն*
[4] *ձ կենաց] կանաց*
[5] *ձ մերում] միում*

թոյլ տայ նախախնամութիւնն Աստուծոյ անգանել ի փորձանս, եւ թոյլ տալն կրկին է։ 4 Է՛ որ ի խրատ ուղղութեան եւ է՛, որ ամենեւին մերժ է։ 5 Եւ որի խրատ ուղղութեանն է, է՛ այսպէս, զի բազում անգամ թոյլ տայ եւ արդարո՛ց անգանել ի փորձանս, որպէսզի ծածկեալ առաքինութիւնն յայտնեսցի այլոց, որպէս եւ Յոբայն։

Ժ. 1 Եւ դարձեալ թուլացուցանէ |43բ| գործել ինչ յանպատշաճիցն, զի սակս այն մեծ եւ սոսկալի ուղղեսցի առաքինութիւն, որպէս Քրիստոս խաչիւն զմարդկան փրկութիւն։ 2 Թոյլ տայ զոմանս յարժանաւորացն չարաչար տանջել, զի մի՛ յարդար մտածութենէն անգեալ՝ լքանիցի յամպարտաւանութիւն, որպէս Պաւղոս եւ կամ զՊետրոս, որ յանձնապաստան պարծէր անբարտաւանութեամբ։ 3 Թողեալ լինին ոմանք յուղղութիւն այլոց, որպէս Ղազար եւ մեծատունն (**տե՛ս Ղկ. ԺԶ. 19-31**), զի յորժամ տեսանեմք զոմանս ի ցաւս, սոսկամբ յիշել զտկարութիւն բնութեանս։ 4 Թողեալ լինին ոմանք ի փառս այլոց, որպէս [ի] ծնէ կոյրն, ըստ Տեառն բանի, եւ կամ թէ հեշտանայ ոք ի բազում խնամսն Աստուծոյ, եւ լքանի ի ճգնութենէ, որպէս զԴաւիթ, զոր փորձանաւքն զգաստացուցանէ։

ԺԱ. 1 Արդ, այս ամենայն գան ի վերայ յամփոփելոյ նախախնամութեանն Աստուծոյ։ 2 Իսկ ի նախախնամութենէն զամայի մնալն՝ «մերժումն» ասէ մարգարէս, եւ բարկութիւն յԱստուծոյ։ 3 Զոր աւրինակ որդի խրատեալ ի հաւրէ գանիւ, առժամայն զնոյն ատելութիւն վարկանի, իսկ յետոյ ճաշակել զպտուղ, խաղաղութեանն շնորհ ունի։ 4 Վասն որոյ տեսցուք զբանս նախ՝ ի դէմս հրէիցն, որք գերեցան ի բաբելացւոյն, որ ասէ. «Աստուած մերժ[եցեր][1] եւ աւեր[եցեր»։ 5 Մերժեաց զհրեայսն յԵրուսաղէմէ, ի թագաւորութենէն եւ ի խաղաղական եւ յուրախական կենացն, եւ առաքեաց գերի ի Բաբելոն. Եւ տաճարն եւ քաղաքն եւ գաւառքն աւերեցան, վասնզի զխնամս բարերարութեանն Աստուծոյ ո՛չ իմացան, զպատուհաս բարկութեանն ընկալան։ 6 Ըստ որում ասեն. «Բարկացար դու, նոյն ինքն գթասցիս ի|44ա| մեզ» (**տե՛ս Սղմս. ԾԹ. 3**)՝ դարձ առնելով գերելոցն։

ԺԲ. 1 «Շարժեցեր զերկիր եւ խռովեցուցեր զսա» (**Սղմս. ԾԹ. 4**)։ 2 Իբրեւ զծովակս ժողովոյ ջուրց, որ խաղաղեալ եւ անշարժ կա հանդարտ եւ առանց ամբոխելոյ, յորժամ ո՛չ ունի պատճառս յարտաքին խռովութեանց։ 3 Իսկ յորժամ քար ոք ընկենու ի միջոցին եւ կամ ի հողմոյ շարժմանէ ամբոխի, այնուհետեւ պղտորեալ խռովին ջուրքն եւ խառնակին։

---

[1] Ձ մերժեցեր զհրէայսն

4 *Այսպէս անխռով եւ խաղաղութեամբ են ժողովք աշխարհացն՝ ի խաղաղութեան ժամանակս, եւ հասեալ ի վերայ թշնամեացն՝ շարժեալ սասանին եւ խռովեալ ամբոխին, իբրեւ զալիս ծովու ծփեալ սասանին։* 5 *Եւ այս լինի ի խստանալ ցասմանն Աստուծոյ ի վերայ մեր բարկութեամբ։* 6 *Ըստ որում ասէ. «Յուցեր ժողովրդեան քում զխստ[ութիւն]» որ բարի ես բնութեամբ, «... Եւ ետուր ըմբել մեզ գինի յիմարութեան»* (**Սղմս. ԾԹ. 5**)։ 7 *Զոր Երեմիայիւ սպառնացար, եթէ՝ «Բաժակ ոսկի՛ է ի ձեռին»* (**տե՛ս Երմ. ԾԱ. 7**) *իմում Նաբուգոդոնոսոր, եւ ում կամիմ՝ արբուցանեմ զսա, որով արբոյց հրէիցն զսաստ պատուհասին։* 8 *Այլ զի ապացոյց էին ամենայնիւ ազգն հրէից մարդկային բոլոր բնութեան, եւ Երուսաղէմ դրախտին փափկութեան, եւ նոցա գերութիւնն՝ գերութեան բնութեանս, որպէս ասէ առաքեալ. «Այն ամենայն ընդ նոսա աւրինակաւ անցանէր, բայց գրեցաւ ի մեր վարդապետութիւն»* (**տե՛ս Ա. Կրնթ. Ժ. 11**) *եւ ի խրատ ուղղութեան։* 9 *Վասն որոյ բնութեանս յարմարի ասել. «Աստուած մերժեցեր եւ աւ[երեցեր]։* 10 *«Մերժեցեր» վասն մեղաց նախաստեղծիցն ի դրախտէն, եւ «աւերեցեր» զբնութեանս գեղեցիկ ստեղծուած, ասելով. «Հո՛ղ էիր եւ ի հող դարձցիս»* (**Ծնն. Գ. 19**), *զոր երբ|44բ|եմն արարչական սիրով ստեղծեր զմարդն յանեղծութիւն, եւ յանմահութիւն կենաց ետուր ի վիճակ ժառանգութեան, եւ վասն հնազանդելոյ թշնամոյն խրատի, բարկացար՝ մահու մատնելով. եւ դու ես գթասցիս ի մեզ՝ գալստեամբ Միածնիդ։* 11 *Շարժեցեր զերկիր եւ խռովեցուցեր զսա, զի ի գալն [Ադամայ] յերկիրս յայս՝ շարժեցան տարերք ամենայն ընդդէմ նորա՝ ի պատուհաս բարկութեան, իբր ծառայի՝ ապստամբելոյ ի տեառնէ. որպէս Յունանու՝ ծովն եւ ալիք ջուրցն* (**տե՛ս Յովն. Ա.**), *այսպէս Ադամայ տարերքս եւ ծառայակից կենդանիքս։*

ԺԳ. 1 *Աւդ ապականագործ հիւանդութեամբ, հուր՝ ցոլմամբ եւ հրացանութեամբ կայծականց, ջուրք հոսմամբ հեղեղաց եւ երկիր՝ զբերս փշոյ եւ տատասկի եւ զվաստակս դառնութեան քրտանց։* 2 *Կենդանիք ամենայն ապստամբեալք ի ձեռաց անուանադրողին նոցա եւ իշխանի՝ հարկանել, խայծանել եւ թիւնաւորաց՝ խայթել։* 3 *Եւ այսպէս, յանկանել թագաւորին աշխարհի, յարեան ի վերայ միմեանց զաւրաւորքն տկարաց։* 4 *Այլ եւ ընդդէմ Տեառն իւրեանց իբրեւ հաւասարապատուի յարեան հակառակ, զի «մարդ ի պատուի էր եւ ո՛չ իմացաւ»* (**Սղմս. ԻԸ. 12, 21**)։

ԺԴ. 1 *Արդ, բժշկե՛ա զհ[արուածս] սորա, զի բաւականապէս սասէ սասանեցաւ*[1] (**հմմտ. Սղմս. ԾԹ. 4**)։ 2 *Յուցեր ժողովրդեան քում խոստութիւն*

[1] *ձ՛> արդ... սասանեցաւ*

ընդ խրատու ցասմանն եւ ընդ պատուհաս պատուիրանազանցութեանն, որով տանջեցին զմեզ տարերքս, իբրեւ դայեակ եւ դաստիարակ։ 3 *Եւ այլ՛ւս խստութիւն, զի աստուածգիտութեանն իմաստութիւն բարձաւ ի մարդկանէ, եւ եղեն որպէս արբեալք եւ յիմարեալք, որպէս եւ ասէ. «Ետուր մեզ ըմբել գինի յիմարութեան»։* 4 *Որպէս հրէիցն գերութեամբ* |45ա| *եւ տառապանաւք արբոյց զգինի ցասմանն՝ ի ձեռն Նաբուգոդոնոսորայ, այսպէս եւ մեզ մատռուակեաց զանկանելն յայս աշխարհ, եւ գինով բարկութեանն թմրեալք ի ծանրութենէ մարմնոյս։* 5 *Եւ որպէս արբեալն շրջի անմտաբար, այսպէս, ասէ, «Բարձի թողի զնոսա երթալ [զհետ կամաց սրտից իւրեանց], զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց» (**Սղմս. Զ. 13**)։* 6 *Եւ զի պաղատեցաւ աղաւթիւք բնութիւնս նահապետաւք եւ մարգարէիւք, թէ «Որ բարկացարդ՝ գթասցիս ի մեզ»։*7 *Վասն որոյ եւ մարգարէս զմխիթարականն եւ զաւետաւորն բարբառի բան, թէ՝ «Ետուր երկեղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան» (**Սղմս. ԾԹ. 6**)։*

ԺԵ. 1 *Արդ, որ մեզ առաջի կայ յաղագս խորհրդոյ խաչին եւ տանի աւուրս, շնորհի սպասաւորել բանիւ, այլ որ համառաւտ տեսութեամբ քննեցաւ զաւրութիւն սաղմոսիս, իբր հիմն եւ արմատ առաջիկա խորհրդոյս, եւ զպատճառ բնութեանս կրից պատմելոյ, զմերժումն վասն մեղաց, եւ զգթալն յաղագս բարերարութեանն շնորհաց, զի եւ անդէն ի սկզբան լինելութեան մարդոյն եւ նշան փրկութեան մարդկութեանս տուաւ, որով ապրեսցին յերեսաց աղեղան բարկութեանն Աստուծոյ, որով եհար զբնութիւնս նետիւ մահուն։* 2 *Արդ, գիտելի՛ է, զի նշանն յերկուց կողմանց տեսանի, որպէս նշանն Յունանու ի միում անձին երկու իրս նշանակէր. թէ արհամարհեսցեն զբան քարոզութեան նորա, իջցեն ի դժոխս, իբրեւ զնա, եւ թէ հաւատասցեն՝ կեցցեն ի մահուանէ, ըստ նմանութեան նորա։* 3 *Որպէս եւ Տէր մեր եղեւ ի գլորումն եւ ի կանկնումն, զի կամ կեցցեն* |45բ| *անուամբ Նորա, կամ մեռանին մահուամբ Նորա։* 4 *Այսպէս եւ նշան, զոր ասէ. «Ետուր երկեղածաց»։* 5 *Յայտ է երկեղածացն նշան, զի ապրեսցին, իսկ որք ո՛չ հաւատան եւ երկիցեն, նշան է զի պատուհասեսցեն զի ի նետից սլացելոց, յաղեղանէ ոստուցելոց զխոցումն կրիցեն, վասն որոյ ասէ. «Ետուր երկ[իւղածաց քոց] նշան»։*

ԺԶ. 1 *Բազում եւ զանազան նշանք յաղագս բազում իրաց տուեալ եղեն, զոր երկարութիւն է յիշատակելն։* 2 *Իսկ այս նշան ո՞ր արդեաւք իցէ յաստուածային բարեաց նշանացն։* 3 *Առ Աստուած, ասէ մարգարէս, զգթութեան քո եւ զսիրոյ նշան, որ առ ազգս մարդկան, որով փրկեցեր զբնութիւնս եւ զհարուածս ցաւոց մերոց բժշկեցեր. բազմադիմի աւրինակաւք*

ցուցեր ընդ ժամանակս ժամանակս առ սիրելիսն քո եւ երկիւղածս անուան քո, զի ծառն կենաց, որ ի մէջ դրախտին, եւ փայտն գիտելոյ զգիտութեան բարոյ եւ չարի, նշանակ էր փրկական կենաց փայտիս, զի թէ երկուցեալ էր նախաստեղծն եւ կացեալ մնացեալ ի պատուէր Արարչին, ճաշակեալ էր ի ծառոյն կենաց, եւ զի ո՛չ երկեաւ ճաշակեաց զդառնութիւն մահու: 4 *Այն նշան երկիւղածաց ի դրախտին եւ փայտ խաչիս յեկեղեցի, նշան փրկութեան հաւատացելոց եւ կորստեան անհաւատիցն:* 5 *Յելանելն Ադամայ ս[է]րովբէիւք՝ փակեցաւ դրախտն շուրջանակի:* 6 *Իսկ սա ի բա՛ց բառնայ զփականս դրախտին եւ մուծանէ զաւազակն:* 7 *Այն փայտ մեզ անհպելի*[1] *եղեւ, իսկ սա՝ դիւրահուպ՝ հաւատով մերձեցելոցն:* 8 *Նա կենաց պտո|46ա|ւղ ունէր յինքեան եւ սա զկեանս հոգւոյ եւ մարմնոյ:* 9 *Յայն պտղոյ ստունգանելով՝ պատուիրանին զրկեցաք, իսկ փայտ խաչին ձրի մեզ զկեանս ծաղկեցոյց զՔրիստոս:* 10 *Այն փայտ թէ ի չար եւ թէ ի բարի ըմբռնէր՝ ի նոյն կենդանացուցանէր, իսկ սա կեանս հաւատով մերձեցելո՛ցն շնորհէ:* 11 *Այլ եւ ընդ փայտին գիտութեան բարոյ եւ չարի համազուգեալ գերազանց գտանի:* 12 *Այն փայտ գեղեցիկ եւ քաղցր պտղովն մահու եղեւ առիթ, իսկ սա կենաց պատճառ Քրիստոսի զլեղին ճաշակելով ի սմա:* 13 *Նա գիտութիւն բարւոյ եւ չարի, սովաւ ծանեաք զբարին զԱստուած եւ խոյս տուաք ի չար բանսարկուէն:* 14 *Զոր եւ ասէ. «Ետուր երկ[իւղածաց քոց] նշան»:* 15 *Զի երկրորդ հաւրն աշխարհի՝ նահապետին Նոյի, ի նշան փրկական փայտի խաչին, հրամայեաց նմա Աստուած առնել տապան չորեք կուսի, որով ապրեցաւ տամբն իւրով եւ ամենայն բազմահոյլ կենդանաւքն ի ջուրցն արկածից:* 16 *Անդ Նոյ նահապետն արդար կազմիչ տապանին, եւ ա[ստ] Քրիստոս, որ եղեւ մեզ յԱստուծոյ Հաւրէ արդարութիւն եւ սրբութիւն, կանգնիչ փրկական խաչիս:* 17 *Ի մտանելն Նոյի իւրայաւքն ի տապանն, բարձրանայր տապանն ի վերայ ջուրցն:* 18 *Իսկ փրկական բեւեռամամբն Քրիստոսի ի խաչին, բարձրացոյց զհաւատացեալս ի ծփական ալեաց ծովու աշխարհիս:* 19 *Անդ դուռն ի կողմանէ՝ զի մի՛ մտցէ ջուրն, այլեւ ի դէպ ժամու ելցէ աղաւնին, իսկ ի սմա իմանալի տապանն Քրիստոս, դո՛ւռն ի կողմանէ, խոցեա՛լն տիգաւ կենարարին կող, յորմէ |46բ| արիւն եւ ջուր, եւ փոխանակ աղաւնոյ՝ մարդկային բանական հոգին:* 20 *Նոյ զաղաւնին հրեշտակ առաքէ, տեսանել թէ ցածուցեա՞լ է ջուրն յերեսաց երկրի, եւ Տէրն ի վերայ խաչին, զհոգին առ Հայր առաքեալ, ասելով. «Հա՛յր, ի ձեռս քո առաքեմ*[2]

---

[1] *Ճ հպելի*
[2] *Ճ աւանդեմ*

զոգի իմ» (**տե՛ս Ղկ. ԻԳ 46**)։ 21 *Անդ աղաւնին տերեւ ձիթենոյ բերեալ նշան, թէ ցածուցեալ է ջուրն յերկրէ, եւ Տէրն զաւետիս կենաց, թէ՝ բացեալ է ճանապարհ ելանելոյ հոգւո՛ցն յերկինս եւ յորդեգրութեանն պատիւ, վասն որոյ ասէ. «Ետուր երկ[իւղածոց քոց] նշան»։* 22 *Զի զայնոցիկ, որ սնոտի երկեղիւն էին պաշարեալք եւ բարձրակառոյց շինութեամբ աշտարակին յերկինս կամէին ելանել, զորոց լեզուսն խառնակելով եւ զշինուածս ամբարտաւանիցն ցրուելով* (**տե՛ս Ծն. ԺԱ. 1-9**)։ 23 *Իսկ աստ ընդդէմ քաղանեայ աշտարակին խոնարհութեամբ զաշտարակ խաչին կանգնելով եւ զտիեզերս ի մի բարբառ ածեալ, ժողովեցեր ի փառատրութիւն Աստուծոյ Հաւր, եւ լցեր զցանկութիւն մարդկան յերկինս ելանելոյ։* 24 *Եւ զի առ Աբրահամ հայրն արդարոցս յարմարական աւրինակաւք նշանակեցաւ խաչին խորհուրդ. եւ Իսահակ բազում իրաւք բերէր զաւրինակ Տեառն մերոյ։* 25 *Նա ծնանելով յամլոյն՝ ուրախութիւն տանն Աբրաամու, եւ Քրիստոս ծնանելով ի Կուսէն՝ խնդութիւն տանն Ադամայ։*

ԺԷ. 1 *Աբրաամ կամաւ մատուցանէր զԻսահակ, եւ Հայր կամաւ եւ հաճութեամբ մատուցանէր «զԳառն, որ բառնայր զմեղս աշխարհի»* (**տե՛ս Յվհ. Ա. 29**)։ 2 *Եւ հնազանդութիւնն Իսահակայ զկամաւ գալ Փրկչին ի չարչարանս խաչին նշանակէր։* 3 *Իսահակ բ|47ա|առնայր զփայտն ի վերայ թիկանց իւրոց, եւ Տէրն ինքնին բարձեալ էր զխաչափայտն, եւ անդ կատարեցաւ բանն, թէ՝ «Աբրահամ ցանկացաւ տեսանել զաւր իմ, ետես եւ ուրախ եղեւ»* (**տե՛ս Յվհ. Ը. 56**)։ 4 *Յառաջեաց Աբրահամ ի մարդկային բնութենէս պարտական առնել զԱստուած սիրով, եւ Արարիչն՝ փոխանակ մարդկային սիրոյ, տա՛ զՄիածինն իւր ի մահ։* 5 *Խոյն փոխանակ Իսահակայ կախի զծառոյն սեբեկա* (**տե՛ս Ծն. ԻԲ. 13**)*, եւ Տէրն փոխանակ բազմաց բարձրանայ ի խաչ մահու։* 6 *Այլեւ Յակովբ ի գնալն յԱսորիս, հասեալ ի տեղի նշանաւոր, ննջէ* (**տե՛ս Ծն. ԻԸ. 10-13**)*, յորում տեղւոջ ննջեաց Արարիչն ի վերայ խաչին եւ ի հող մահու։* 7 *Եւ տեսեալ սանդուխտ, որոյ գլուխն յերկինս*[1] *հասանէր, ի խորհուրդ խաչին, որ յերկրի բուսանելով, գերագոյն երկնից կամարացն ծայր արձակեալ բարձրացաւ։* 8 *Եւ ընդ սանդուխտն, զի ելանէին մարդիկք եւ իջանէին հրեշտակք, զի խաչիւն մարդիկ բարձրացեալ՝ ելին յերկինս, եւ հրեշտակք իջեալ՝ խառնեցան ընդ մարդկան, որ եւ զաւծեալ արձանն կանգնեաց, ուր եւ աւծեալն Աստուծոյ կնքելոց էր վիմով։* 9 *Այլ եւ նկարել գաւազանացն զխաչին բերէր զաւրինակ, զի որոշեաց Լաբան խաշն սեփհական Յակովբայ զամենայն ոչխար, որ գոշախայտ եւ խայտապիսակ ծնանիցի,*

---

[1] *Ձ յերկիր] յերկինս*

եւ խաշն համակ սպիտակ լաբանու լիցի։ 10 *Նկարեաց Յակովբ գաւազան՝ ըստ բանին Տեառն եւ արկ յաւազանն առաջի խաշանց, եւ նմանեցան ծնունդք խաշանցն ի գոյն նկարեալ գաւազանացն, եւ* |47բ| *գնացին ընդ Յակովբայ յերկիրն աւրհնեալ իսրայէլացւոցն, եւ մայրքն միագոյնք, որ ծնան զնոսա, մնացին յերկիրն պիղծ (տե՛ս* **Ծն. Լ. ԼԱ.***)։*

ԺԸ. 1 *Նոյնպէս եւ մերն Յակովբ, Տէրն Յիսուս Քրիստոս, զոր եւ Եսայեաւ Աստուած Հայր «Յակովբ ծառայ իմ» (***Ես. ԽԴ. 1***) կոչէ, վասն ծառայական մարմնոյն, որում խոստանայ աւգնական լինել յամենայն գործս տնաւրէնութեանն, որ եւ զբազմանկար առաքինութեանցն ընդունակ, զխաչն խորհրդական եդ յաւազանն մկրտութեան, որով ծնան ծնեալքն ի հեթանոսաց, ի հաւատս ճշմարիտս, խայտապիսակք յոգնազան եւ ծաղկանկար շնորհաբաշխութեամբ, եւ գնացին զհետ քաջ հովվուին յերկիրն կենդանեաց։* 2 *Այն Յակովբ՝ թարգմանեալ խաբո՛ղ, առեալ զՀռաքէլ եւ զԼիա, գնայր յերկիր իւր։* 3 *Եւ ճշմարիտն Յակովբ, որ մարմնոյ զգեցմամբ խաբեաց զիմանալին Լաբան, առեալ իւր երկու ժողովուրդս, որք ի հեթանոսաց եւ ի հրէից եկեղեցիք, ուսոյց նոցա՝ «Մոռանալ զժողովուրդ եւ զտուն հաւր իւրեանց, զի ցանկացաւ թագաւորն երկնաւոր գեղոյ նոցա» (***ճմմտ. Սղմս. ԽԴ. 11-12***)։* 4 *Ի դառնալն յԱսորոց գոհանայ Յակովբ զԱստուածոյ, որ ետ նմա զվարձս վաստակոց իւրոց, եւ ասէ. «Յուպ ի ձեռին անցի ընդ այս Յորդանան, եւ ահա երկու եղեն բանակ» (տե՛ս* **Ծն. ԼԲ. 10***) նշանակ Միածնին Աստուծոյ, որ մի՛յն էջ յերկիր եւ էանց ընդ կենցաղս, զոր Յորդանան նկարէր, յոր միայն մկրտեցաւ եւ ե՛լ երկու եկեղեցւով՝ հրէից եւ հեթանոսաց։* 5 *Եւ «ցուպն» նշանակ խաչին, որով էջ ի դժոխս եւ ե՛լ երկու բանակաւք՝ արդարաւք* |48ա| *եւ մեղաւորաւք։* 6 *Այլեւ զձեռն խաչանման եդեալ ի վերայ որդոցն Յովսէփայ աւրհնէր (տե՛ս* **Ծն. ԽԸ. 12-22***), զի որ ջանայր ծածկել զանդրանիկն, ի մէջ եկեսցէ, ի նշան խորհրդոյ խաչին, որով ամենայն շնորհաբաշխութիւնք տուեալ լինի յեկեղեցի։* 7 *Եւ նստելն ի մահիճսն, եւ երկրպագելն ի գլուխ գաւազանին, զոր ունէր ի գիրկսն, նշանակելով զերկրպագեալն ի փայտն փրկութեան, եւ զի եդ զեփրեմ յառաջ տեսանելով զթագաւորական շնորհն, զոր տալոց էր*[1] *Աստուած ի վերայ Ժ. ցեղիցն։* 8 *Նմին իրի եւ ի ծագ գաւազանին երկրպագէ, զի քահանայութիւն եւ թագաւորութիւն եւ մարգարէութիւն խաչիւն տալոց էր Քրիստոս երկրպագուաց իւրոց։* 9 *Վասն որոյ ասէ. «Ետուր եր-*

[1] *ձ՛> էր*

կեղ[ածաց քոց] նշան» (**Սղմս. ԾԹ. 6**)։ 10 *Որպէս եւ մեծի նախամարգարէին Մովսէսի, որ ետ զհրաշագործ գաւազանն, ի նշան խաչին իւրոյ ի ձեռս նորա, զի տպաւորեսցէ գործ*[1] *գաւազանին, զխորհուրդ զարմանալի գործոց խաչին։*

ԺԹ. 1 *Անդ, յԵգիպտոս, արեամբ գառինն զդրունս տանցն եւ զսեմս մտիցն ածանելով, զխորհուրդ խաչին եւ զարիւն խաչեցելոյ գառինն նշանակէր* (**տե՛ս ելք ԺԲ. 21-22**)։ 2 *Նոքա յեգիպտական նեղութենէն զերծեալ լինէին ի կաւոյն եւ ի յաղիւսոյն, եւ մեք խաչիւն՝ ի նեղիչ ախտիցն, որով ի կաւ կենցաղոյս տառապէաք։* 3 *Անդրանիկքն Իսրայիղի փրկեցան եւ անդրանիկքն Եգիպտոսի սատակեցան* (**տե՛ս ելք ԺԲ. 29-30**)։ 4 *Իսկ խաչիւն անդրանիկ խորհուրդն սատանայի սատակի եւ մեր ածեալ գործ եւ բան անդրանիկք մարդկութեանս փրկեցան։* 5 *Նոքա հասին յերկիրն պարգեւաց,* |48բ| *իսկ հաւատացեալքն՝ յերկնից արքայութիւնն եւ յորդեգրութիւնն Աստուծոյ։* 6 *Անդ մարմնոյ փրկութիւն՝ ի մարմնաւոր նեղչաց, եւ աստ հոգւոյ ազատութիւն՝ ի հոգւոյ՝ հալածչաց։* 7 *Անդ երկիր, որ բխէ զկաթն եւ զմեղր, եւ աստ գիտութիւն անճառ եւ իմաստութիւն աստուածային բխեալ ի մարդիկ։*

Ի. 1 *Մովսէս գաւազանաւն զջուրսն Կարմիր ծովուն հերձանէր եւ անցուցանէր զորդիսն Իսրայիղի* (**տե՛ս ելք ԺԴ. 21-22**)։ 2 *Եւ Տէրն խաչիւն զծո՛վ մեղացն զսեա՛ւ եւ զաղջամղջին, յորմէ հանեալ զորդիս Ադամայ։* 3 *Նա ի հարկանելն գաւազանին վէմն ապառաժ ջուր բխեալ աղբիւրանայր, եւ Տէրն զքարացեալ ի բարեաց բնութիւնս աղբիւրացոյց խաչիւն, եւ գետ գիտութեան բխեաց ի մարդկանէ։* 4 *Մովսէս տարածմամբ ձեռինն զԱմաղէկ պարտեաց, յաւրինակ նշանի խաչին, քանզի յորժամ ելին ի Սինայ անապատէն եւ եկին յՌաճադիմ, եկն Ամաղէկ պատերազմել ընդ նմա, եւ Մովսէս առեալ զգաւազանն Աստուծոյ, ել ի գլուխ բլրոյն, եւ համբառնալով ձեռին նորա, պարտէ՛ր Ամաղէկ եւ զորանայր Իսրայէլ* (**տե՛ս ելք ԺԷ**)։ 5 *Եւ Տէրն ելեալ խաչիւն Գողգոթայ եւ տարածմամբ ձեռինն զթշնամին կենաց մերոց պարտեաց եւ զհաւատացեալս իւր, զորս եհան ի մեղացն խաւարէ, իբր յԵգիպտոսէ, եւ անցոյց ընդ ծով յուսահատութեան մեղացն, խաչիւն զաւրացոյց, եւ միշտ զաւրացուսցէ։* 6 *Վասն որոյ ասէ. «Քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի»* (**Յվհ. ԺԶ. 33**)։

ԻԱ. 1 *Այլ եւ զդառնութիւն ջուրցն Մեռայի՝ ի քաղցրութիւն փոխելով Մովսէս ըմբելի արար* |49ա| *որդոցն Իսրայիղի։* 2 *Հրամանաւն Աստուծոյ առեալ փայտն, որ ստեղծեալ, զոր եցոյց Աստուած Մովսէսի, եւ ընկենոյր*

---

[1] *ձ՛> գործ*

յակնաղբիւրն (տե՛ս Ելք ԺԵ. 23-25), որ էր ջուրն նշանակ բնութեանս մերոյ, դառնացեալ մեղաւք, զոր առեալ Տէրն յինքն զբնութիւնս եւ արկ ի նմա զփայտ խաչին. փայտիւ հացն մեր արկեալ, ըստ մարգարէին, որ եւ փոխեաց զդառնութիւնն ի քաղցրութիւն, եւ զմահկանացուն յանմահութիւն: 3 Եւ դարձոյց զբնութիւնս վերստին յառաջին բարիսն, որ դառնաբեր յանցանաւքն ի հոսման էր եւ ի ծորման, զոր քաղցրացոյց առաքինութեամբ: 4 Այլեւ տապանակն անփուտ եւ պատեալ ոսկով, աւրինակ խորհրդոյ խաչիս, եւ որ ի նմա սափորն ոսկի եւ գաւազանն ծաղկեալ: 5 Անդ ի տապանակին երկու տախտակք աւրինացն, իսկ ի խաչին, փոխանակ երկու տախտակացն, հոգի՛ եւ մարմինն միաւորեալ ընդ Աստուածութեանն Բանին փոխանակ հինգ բանիցն հինգ զգայութիւնս առեալ ի Տեառնէ: 6 Անդ մատամբն Աստուծոյ գրեալ, եւ աստ նոյն ինքն Աստուածութիւն Բանին միացեալ: 7 Անդ տախտակ քառանկիւն, իսկ աստ նշան սուրբ խաչիս քառաթեւ:8 Անդ Աստուծոյ ծանաւթութիւն, տասնաբանեան պատգամաւքն ազգին Իսրայէլի[1], եւ աստ՝ ամենայն աշխարհի, ո՛չ մատամբ գրեալ, այլ Միածին Բանն ըստ նմանութեան տառի ձեւացեալ: 9 Զի որպէս մեր բանս աներեւոյթ գոլով ի միտս եւ գրով եւ քարտիսիւ ձեւանա, նո՛յնպէս աներեւոյթն եւ անմարմինն եւ անտեսն ի մէնջ, ձեւացեալ ի մարմնի երեւեցաւ ազգի մարդկան: 10 Նա՛ ի Սինայէ Իսրայէլի ազգին Մովսէսիւ տուաւ, |49բ| եւ սա ի Սիովնէ ամենայն աշխարհի Քրիստոսիւ պարգեւեցաւ: 11 Եւ որպէս գաւազանն Ահարոնի, որ ծաղկեցաւ եւ պտղաբերեաց (տե՛ս Թիւք, ԺԷ. 8), եւ խաչն նշան գաւազանի Տեառն հատեալ յարմատոյ կառուցաւ ի Գողգոթայ, ոռոգեալ արեամբն Տեառն, պտղաբերեաց զամենեցուն Արարիչն, զոր մարգարէն Զաքարիա ասէ. «Յաւուր յայնմիկ բխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ» (Զfr. ԺԴ. 8), կէս նորա ի ծովն, որ առաջին, եւ կէսն ի ծովն երկրորդ, որ եւ բխեաց ջուր եւ արիւն ի կենարարին կողից. կէս նորա ի ծովն առաջին, ջուրն յաւազանն մկրտութեան, եւ կէս նորա ի ծովն երկրորդ, որ է արիւնն ի հաղորդեալսն սրբութեամբ:

ԻԲ. 1 *Այլ եւ աւձն պղնձի, զոր արար Մովսէս յանապատին, եւ բարձրացոյց (տե՛ս Թիւք ԻԱ. 1-9), աւրինակ էր խաչին եւ խաչեցելոյն վասն մեր: 2 Մովսէս ո՛չ առանց խորհրդոյ բարձրացոյց զաւձն պղնձի, այլ սակս ապրեցուցանելոյ, զի Իսրայէլ յաւձիցն խարամանից, եւ Տէրն բարձրանայ ի խաչին, վասն ապրեցուցանելոյ զորդիս մարդկան: 3 Մովսէս ի պղնձոյ առնէ զաւձն կաղապարաւ ձեւացեալ, եւ ո՛չ կռանահարութեամբ գործեալ: 4 Եւ զի կա՛րծր է պղինձ եւ անփո՛ւտ եւ ոսկէտեսակ,*

[1] *ձ՛> իսրայիլի*

*այսպէս անմահ Աստուածութիւն Բանին իջեալ յարգանդ ամենասուրբ Կուսին, զգենու մարմին անփուտ եւ անապական, ըստ մարգարէին, թէ՝ «Մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» (**Եմմտ. Սղմս. ԺԵ. 10**) զի անփոփոխելի լուսոյն ճառագայթ անկեալ, զփոփոխելի մարմնովս Աստուած ստեղծ զնա, որով բարձրանայ ի փայտն մահու, որպէս գաւձն, զոր արար Մով|50ա|սէս:*

ԻԳ. 1 *Եւ պղինձն աւ՛ձ ձեւացեալ, բարձրանայ աւրինակ Փրկչին, զի աւձաձեւ է մարդկային բնութիւնս, զի հինգ գալար է աւձին, եւ տուտն ընդ գլխովն եդեալ՝ եաւթ, որպէս հինգ են զգայարանք մարդոյն, եւ ձայնական եւ բանական գործին՝ եաւթ:* 2 *Եւ սոքա առաջին Ադամաւն ախտացան, եւ Քրիստոսիւ անախտ եւ անապական գործեցաւ:* 3 *Աւձն պղնձի զձեւն միայն ունէր աւձի, եւ ո՛չ թիւնք եւ դառնութիւն:* 4 *Եւ տէրն մարմին առեալ ի մեղաւոր բնութենէս, եւ եղեալ ի «ի նմանութիւն մարմնոյ մեղաց» (**Հռմ. Ը. 3**) այլ ո՛չ արար մեղս եւ ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա (**Սղմս. ԼԱ. 2**):* 5 *Եւ որպէս ի միոյ աւձէ եւ ի միոյն Ադամայ յամենայն մարդիկ մահ եւ ապականութիւն տարածեցաւ, նոյնպէս ի միոյ Քրիստոսէ, երկրորդ կոչեցեալ Ադամայ կախեցելոյ զփայտէ, յաւրինակ միոյ աւձի փրկականի, յամենայն մարդիկ արդարութիւն կենաց եւ անմահութիւն ծաւալեցաւ:* 6 *Եւ որպէս յաւձն պղնձի, որ ոք հայէր ողջախոհանայր երկեղիւն Աստուծոյ, այսպէս եւ որ հայէր յաստուածավայելուչ մարմինն, որ գեղեցիկ էր տեսանելով, քան զամենայն*[1] *որդիս մարդկան, մեռեալ լինէր աւձաձեւ ցանկութիւնն, որ ի նոսա, թէեւ պոռնիկ ոք էր յայրատահայեաց աչք:* 7 *Եւ որպէս բա՛րք է աւձի շրջիլ յերկրի եւ սուզանիլ ի հող եւ զծերութեան խորխն մերկանալ, նոյնպէս եւ Տէրն Քրիստոս շրջի յերկրի, քաղելով ի սմանէ զփուշ նզովիցն Ադամայ, եւ բարձրացեալ ի փայտ մահու, զի բարձրացուսցէ զբնութիւնս, եւ ի ներքոյ հողոյ մտեալ, զի զոգիս մարդկան վերացուսցէ ի դժոխոց |50բ| ներքնոց:* 8 *Եւ այսպէս յոլովագոյն խորհրդով աւձն պղնձի նկարագրէր զաւրինակ Փրկչին Յիսուսի:* 9 *Եւ ո՛չ միայն աւրինակ էր, այլեւ՝ հակառակատիպ:* 10 *Զի որպէս պղնձի աւձն մեռեալ եւ անշունչ, եւ զնմանիսն իւր զաւձսն ընդ ինքեան սպանանէր, եւ զմարդիկ՝ զթշնամիսն իւր կեցուցանէր:* 11 *Իսկ Տէր մեր զնմանազգիս իւր՝ զմարդիկ կեցուցանէր, եւ զթշնամիս մարդկան՝ զդեւսն սպանանէր:* 12 *Աւձն պղնձի, յոր հայէին հաւատով որդիքն Իսրայիղի եւ ապրէին, զձեւ աւձին ունէր, որ մեռեալ էր ի սկզբանն եւ անիծեալ:* 13 *Եւ Տէրն յանիծից փայտ բարձրացաւ, զի գրեալ է, թէ «Անիծեալ*

---

[1] *Ձ՛տեսանելով այն քան զորդիս ադամայ եւ զամենայն*

է ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ» (**տե՛ս Բ. Օր. ԻԱ. 23**) *զի զմարդիկ յանիծից ազատեսցէ, եւ ի հեթանոս զաւրհնութիւնն Աբրահամու հաստատեսցէ։* 14 *Վասն որոյ մարգարէն Դաւիթ. ասէ. «Ետուր երկեղածաց քոց նշ[ան]»։ Յեսու՝ որդի Նաւեա աղաւթէր. «Կացցէ արեգակն հանդէպ Գաբաւոնի, եւ լուսինն հանդէպ ձորոյն Ելոնի»* (**տե՛ս Յեսու, Ժ. 12**)։ 15 *Ոչ միայն զաւր խաչելութեանն գուշակել եւ զխաւարումն լուսաւորացն, այլ եւ զվերացումն ի խաչին եւ զբարձրանալն ի նմա արեգականն արդարութեան։* 16 *Նա՛ զգայիսոնն նշան յաղթութեան կանգնէր ի դրունս Գայեայ նշանակ պարտեցելոյ թագաւորին Գայեայ։* 17 *Իսկ Տէրն ի կատարման տնաւրէնութեանն, ի Գողգոթա կանգնեալ զփայտ խաչին, նշան պարտեցելոյ թշնամոյն սատանայի, ըստ առաքելոյ, որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ։* 18 *Յեսու ի մտանել արեգականն կախէ զթագաւորն Գայեայ զերկճղի փայտէ* (**տե՛ս Յեսու, Ը. 29**) |51ա|, *եւ Տէրն յերեկոյացեալ ժամանակի բեւեռեաց զզաւրութիւն մահու ընդ խաչափայտին, այն որ թագաւորեաց յԱդամայ մինչ ի Մովսէս։*

ԻԴ. 1 *Զնոյն նշանի զաւրութիւն գուշակէր եւ «Յայէլ՝ կին Քաբերայ զցից խորանին ընդ ծամելիսն Սիսարայ հարեալ»* (**տե՛ս Դտ. Դ. 21-22**), *որ եւ ըստ նախատիպ ցուցակին, կանայք պատուականք, պարկեշտ կուսութեամբ եւ սուրբ ամուսնութեամբ, եւ ժուժկալող այրութեամբ եւ մարտիրոսական նահատակութեամբ, նշանաւ խաչին, որ է ցից խորանի եկեղեցւոյ սրբոյ հաստատութեան, ջախջախեցին զաներեւութին Սիսարայ զգլուխն։* 2 *Եւ զի որպէս Նա սատակելովն զՍիսարայ, զճաշակումն դառնացոյց նմա, այսպէս եւ Տէրն խաչիւն զմահ, որ զխայթեալսն յինքենէ մեղաւք ըմբռնէր ի կորուստ, եւ զաւրութեամբ խաչիս դառնացաւ նմա։* 3 *Վասն որոյ ասէ. «Ետուր երկ[իւղածոց քոց նշանց]», որ եւ ի մարգարէիցն բազմադիմի աւրինակաւք նշանակեցաւ։* 4 *Առ Եղիսէի տապարն ընգղմեալ ի ջուր, զոր փայտիւն արկեալ ի ջուրցն վերաբերեաց* (**տե՛ս Դ. Թգ. Զ. 1-7**), *որպէս եւ Տէրն խաչիւն զբնութիւնս մեղաւք ծանրացեալ վերաբերեաց ի հոսական ջուրց կենցաղոյս։* 5 *Զոր եւ Դանիէլ ի ճարպն եւ ի մազն նշանակեաց, զոր արկ ի բերան վիշապին, որով հերձեալ պատառեցաւ* (**տե՛ս Դնլ. ԺԴ. 26**)։ 6 *Ըստ Յովբա, իմանալի վիշապին կարթ ի քիմսն եղեալ ըմբռնէր* (**տե՛ս Յոբ, Գ. 8, ԻԶ. 13**)։ 7 *Ըստ Դաւթի. «Վիշապն, զոր ստեղծեր խաղալ նովաւ»* (**Սղմս. ՃԳ. 26**)։ 8 *Զաքարիա աշտանակ ոսկեղէն տեսեալ եւ գունդ ի վերայ նորա, այլովք նշանակաւքն* (**տե՛ս Զքր. Դ. 2-3**)։ 9 *Մարգարէն Դաւիթ ցուպ եւ գաւազան կոչէ* |51բ|, *եւ ի քար պարսատկին նշանակէր* (**հմմտ. Սղմս. ԻԲ 4, Ա. Թգ. ԺԷ.**), *որով ի վերայ ընթացաւ մարգարէն Յիսուս, իմանալոյն Գողիադու եւ սատակեաց զամ-*

բարձեալն հպարտութեամբ: 10 *Եւ գաւազան զաւրութեան ի Սիովն է առաքեալ, այնմ որ մարգարէին ասաց. «Ես կացի թագաւոր ի նմանէ ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա»* (**Սղմս. Բ. 6**)*:* 11 *Սողոմոն փայտ կենաց անուանէ զնշան խաչիս, որով իմաստունն, որ ի Մարիամայ, զկեանս փոխարկեալ ի մահ յառաջին մարդոյն վերստին այսրէն դարձուցանէ եւ առակեալ չնչին փայտի, յոր անգանին հաւատացեալք, եւ որով անցանեն ընդ ալիս ծովու աշխարհի, յայս լաստափայտ ապաւինեալ, զի սա՛ է աւրհնեալ փայտն, որով եղեւ արդարութիւն դատաստանի ընդ թշնամին կենաց մերոց եւ ընդ մեզ:* 12 *Զոր եւ Եսայիաս հրեղէն հացին սեղան եւ անմահական գինոյն հնձան եւ ի կղզիս կանգնեալ նշան անուանեալ կոչէ, որ եւ եղեւ իսկ նշան խաչիս, սեղան քառանգիւն կանգնեալ ի Գողգոթա, զսոյն եւ հնձան նշանակեալ աւրինակէր, ուր եւ ողկոյզն անմահարար ճմլեցաւ յուրախութիւն հաւատացելոց եւ զաւրութիւն թշնամոյն կոխեցաւ, եւ ի կղզիս կանգնեալ նշան, որք յաղտաղտուկ մեղաց ծովէս եւ ի մոլորութեան ջուրցն, ի վեր ելեալք ազգք հեթանոսաց, հաստատեցան յԱստուած հաւատովք:*

Իե. 1 *Զնոյն նշան եւ հրաշատեսն Եզեկիէլ պատմէ, զի ի մէջ վեցից արանցն այնմ, որ զպճղնաւորն էր զգեցեալ, փառքն Աստուծոյ, որ բնակեալն էր ի մէջ քրոբէիցն, եւ անդուստ խաւսէր ընդ իսրայէլեան ժողովուրդն, եւ յորժամ վերացաւ ի տաճարէն յաւգս, զի հանդերձեալ |52ա| էր գնալ ի նոցանէ, ձայնէր առ այրն, որ զպճղնաւորն էր զգեցեալ, թէ՝ մուտ ի քաղաքդ եւ դիր նշան ի ճակակ (=ճակատ) արանցդ, որք հեծեն եւ հոգւոց հանեն* (**հմմտ. Եզկ. Թ. 4-5**)*:* 2 *Եւ այլոցն ասէ. «Մտէ՛ք զհետ եւ յորոյ վերայ նշանն իցէ, մի՛ մերձենայք, իսկ զայլսն յանխնա՛ կոտորեսջիք»* (**տե՛ս անդ, 6**)*, եւ զինչ այլ այսպէս իցէ:* 3 *Այլ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ի վեցերորդ դարուն երեւեցաւ, եւ ի մէջ երկու վեցից առաքելոցն շրջեցաւ, եւ պճղնաւոր զմարմինն զգեցաւ, եւ գաւտի ականակապ զհաւատացեալս իւր զառաքինութեամբ լուսափայլեալսն ած շուրջ զիւրեաւ:* 4 *Առ որ ձայնեաց Աստուած Հայր, թէ զմարդիկ, զոր չարչարանաւք խաչի քո ստացար, դի՛ր նշան ի սոսա զուղիղ հաւատս եւ զմաքուր գործս, որք եւ ունին զդրոշմ խաչին ի դէմս, եւ զչարչարանս խաչին կրեն յանձինս, զի որք զայս նշանս ունիցին, ապրեսցին ի հանդերձեալ սատակմանէն, յորմէ ո՛չ կարասցեն ապրել անհաւատիցն ժողովք, այլ անխնա կոտորեսցին:*

Իզ. 1 *Սոյն նշան է եւ գաւազանն ընկուզի, ըստ Երեմիայ* (**տե՛ս Երմ. Ա. 11**)*, որով դատէ մարգարէն հեթանոսաց մանուկն Յիսուս զթշնամիս նորին գաւազանի:* 2 *Սոյն իսկ է եւ փայտն ի հացն մեր արկեալ ձեռաւք անաւրէն հրէիցն, այնմ որ ասաց. «Ես եմ հացն կենաց յերկնից իջեալ* (**տե՛ս**

Յվհ. Զ. 41)։ 3 *Եւ հրեայքն խորհեցան. «Եկայք արկցուք փայտ ի հաց նորա» (***Երմ. ԺԱ. 19***)։* 4 *Եւ գաւազան կոչեցեալ գեղեցիկ ըստ Զաքարիայ նետ փրկութեան ընդ դէմ իմանալի ասորոյն, զոր առ Իսրայէլ ճշմարիտն։* 5 *Յաղագս որոյ եւ Մարգարէն Դաւիթ ասէ. «Ետուր երկ[իւղածոց քոց] նշան»։* 6 *Զխաչն փրկչական նշան* |52բ| *սեռն եւ անապակ սիրոյն Աստուծոյ, որ առ մեզ, որով երկեղածքն ապրին ի բարկութենէն Աստուծոյ, որ զսուր իւր սրեալ է եւ զաղեղն լարեալ, եւ զսլաքս նետիցն ի պէտս <ի պէտս> կարեվէր խոցելոյ, այրմամբ եւ ջրով է մխեալ, որ է սաստ անվախճան պատուհասի անզէղջ մեղաւորացն եւ աներկրպագուացն եւ խաչիւ փրկագործաւղին ուրացողաց, եւ ի ճառէ խաչին կորուսելոցն եւ յիմարելոցն։* 7 *Իսկ երկիւղածաց անուան նորա եւ երկրպագուացս պատուանդանի ոտից նորա, եւ փրկելոցս զաւրութեամբ նորա, պարծանք պարծանաց ըստ Պաւղոսի «Քաւ լիցի յայլ ինչ պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ» (***տե՛ս Գղտ. Զ. 14***), զոր ինքն բարձեալ ելանէր ի տեղի Գողգոթայ, յանկ հանելով զաւրինաւք եւ զմարգարէիւք ստուերագրեալն ի վերայ շիրմի նախահաւրն զպարտիս յանցանաց նորա եւ զաւակի նորա վճարելով։* 8 *Եւ բեւեռելովն ի խաչին ընդ նմին եւ զկնիք դատապարտութեան մերոյ բեւեռեալ, զի զմեզ ի կապանաց մեղացն արձակեսցէ։* 9 *Եւ զի փայտ կենաց, փոխանակ փայտին մահու շնորհեսցէ։* 10 *Եւ կախելով ի վերայ փայտին յաւրինաց անիծիցն զմեզ գնեսցէ։* 11 *Եւ տարածմամբ ձեռինն զգիր պարտաւորութեան մերոյ պատառեսցէ, եւ զցրուեալ որդիս Ադամայ զաւրութեամբ բազկին իւրոյ հաւաքեալ ժողովեսցէ։* 12 *Եւ զդրախտն փակեալ ի ձեռն Ադամայ պարտաւորեցելոյ, երկրորդ Ադամն վերստին բացցէ, եւ զփայտ մահուն իւրոյ մեզ զէն փրկութեան եւ նշան բարութեան շնորհեսցէ։*

Իէ. 1 *Եւ արդ, այսոքիկ ի խորհուրդ խաչին յԱստուծաշունչ* |53ա| *գրոց մարգարէական եւ առաքելական վկայութեանց ի պատիւ աւուրս համառաւտեալ հաւաքեցան։* 2 *Այլ ի դէպ իսկ ի ժամանակի նեղութեան եւ տառապանաց մերոց, մարգարէական բանիւս, զողբս եւ զաղետս Հայաստանեայց ազգի եւ եկեղեցւոյ պատմել եւ առ բարերարն Աստուած եւ միշտ բարին եւ անբարկանալին, զբերմունս դառնութեան աւուրցս եւ զպատուհաս, զոր վասն մեղաց մերոց կրեցաք պատմել, եւ զյանցանս անաւրէնութեանց մերոց խոստովանել եւ ասել. «Աստուա՛ծ, մերժեցեր զմեզ»* (**Սղմս. ՃԷ. 12**)։ 3 *Բնութեամբ բարիդ, որ ո՛չ զոք մերժես, այլ մանաւանդ աւրըստաւրէ կոչես, եւ զողորմութեամբ քո ստեղծեալ աշխարհս միշտ ողորմութեամբ շինես, եւ ո՛չ իսպառ բարկանաս, եւ ո՛չ յաւիտեան պահես ոխս։* 4 *Այլ այժմ, իբր զի անարժան գտաք առ ի քէն շնորհիդ զգութ*

խնամոց քոց անփոփելով, զմեզ մերժեցեր եւ զաշխարհ բնակութեան մերոյ աւերեցեր։ 5 *Եւ այսպէս, նախ մե՛ք եղաք պատճառ մերում մերժելոյն եւ աւերելոյն, զի դատաւորս մեր, որ է՛ միտք տեսանող, ի բնութեանս մերոյ հաստատեալ քաղաք եւ յաշխարհ, ո՛չ եկաց յարդարացոյց իրաւունսն Աստուծոյ եւ ո՛չ կարգաւորեաց զերկիր մարմնոյս շինուածոյ, այլ մերժեցաւ ինքն եւ թիկունս դարձոյց յիւր լցուցիչ լուսոյն, որպէս հայելի ո՛չ զընդունակն լուսոյ զերեսն, այլ զթիկունս*[1] *դարձուցեալ յԱստուած։* 6 *Եւ ապա մերժեաց եւ ինքն յիւր խնամոցն զերկիր իւր զմարմինն, վասն որոյ աւերեցան քաղաքք առաքինութեան՝ ի յառնելն ի վերայ նորին չարութեանցն։* 7 *Եւ շարժեցաւ երկիր, այսինքն՝ զգալի մարմինս, որ ի* |53բ| *հողոյ, որ անշարժ կա եւ անխռով, յորժամ հոգին աստուածազգեաց եղեալ ընդ երկինս շրջի եւ ընդ իմաստութեամբ նորին փարի։* 8 *Իսկ յորժամ սա ամբոխի եւ ստորաքարշ եղեալ այլայլի, շարժի եւ մարմնոյս երկիր, խռովի ընդ նմա, եւ զգայարանս, որպէս եւ խռովեցուցաք զլեզո՛ւ*[2] *ի շատախաւսութիւն եւ բարկութիւն, զաչս ի զոշոտութիւն, զլսելիս ի չար բանից ունկնդրութիւն, զձեռս ի գործս անիրաւութեան։* 9 *Եւ այսպէս շարժեցաւ երկիր մարմնոյս ընդ աւերեալ միտսն եւ խռովեցաւ, զորոյ զհարուածսն բժշկել Աստուծոյ եւ Արարչիդ մաղթելի է, այսինքն՝ ներել յանցանացն, յորս իւրաքանչիւրքն սասանեալ կործանեցան։* 10 *Վասն որոյ ասէ. «Յուցեր ժողովրդեան քում խստութիւն»* (**Սղմս. ԺԹ. 5**)։ 11 *Այսինքն՝ ի վարիլ մեր մեղաւք յարուցեալ ի վերայ մեր խիղճ մտացն. խոցոտեն զմեզ ժողովք խորհրդոց մերոց յերկեղէ արդար իրաւանցն Աստուծոյ եւ կոփել ըստգտանեն զմեզ ի մեղանչելն։* 12 *«Եւ ետուր ըմբել մեզ գինի յիմարութեան»* (**Սղմս. ԺԹ. 5**), *զի չար խորհրդոցն հաւանեցաք եւ ըմբելով զայն, միտք մեր յիմարեցան։* 13 *Սասանեցաւ ընդ մտացն եւ մարմինն ի մեղս, զի որպէս գիտութիւն աստուածային բանիցն իմաստութեան ըմբելի ասի եւ գինի, ըստ այնմ՝ «Վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ գինի»* (**Եսայ. Ա. 22**)։ 14 *Այսպէս եւ մոլորումն մտացն ի հաւանումն մեղացն յիմարութեան՝ գինի ասի։*

ԻԸ. 1 *Եւ ա՛րդ, զի այսպէս մերժեցաք, աւերեցաք, եւ զերկիր մարմնոյս ի գործս չարեաց շարժեցաք եւ խռ*|54ա|*ովեցուցաք, եւ խստութիւն, խոցոտումն մտաց մերոց վկայէ մեզ, եւ յիմարեցաք անզգամութեան գործովք մերովք։* 2 *Եւ վասն այսորիկ*[3]*, զի մեք անձնիշխան կամաւք մերժեալ հեռացաք ի Քէն, դու զխնամս գթութեան քո եւ ողորմութեան արգելեր ի*

---

[1] *ձ՝ > դարձոյց... զթիկունս*
[2] *ձ՝ > զլեզու*
[3] *ձ՝ այսու պատճառաւ] այսորիկ*

մէնջ, զի մեք ո՛չ տուաք տեղի հանկչելոյ առ մեզ քոին նախախնամութեանն շնորհի, որպէս Երուսաղէմ ո՛չ կամեցաւ ժողովել զմանկունս իւր, զոր Աստուած կամէր ժողովել։ 3 *Վասն որոյ զահագինն զայն բարբառեցար բան։* 4 *Ահա թողեալ լիցի տունդ ձեր աւերակ, որպէս եւ այժմ աշխարհ կալուածոց մերոց աւերեցան, եւ բնակիչք ի տանց քանդեալ խլեցան, շինուածք բնակութեան մերոյ այրեցան, եւ տաճարք սրբութեան կործանեցան, զարդք խորանին Աստուծոյ կողոպտեցան, եւ քահանայք սրբոյ սեղանոյն անզարդացան, այլեւ ի սուր սուսերի անգեալ խողխողեցան, եւ զայրիս նոցա ո՛չ ոք է, որ լայ, զի գութ եւ խնամք սիրոյ բարձաւ ի մարդկանէ։* 5 *Այգի Քրիստոսի գեղեցիկ եւ ուռք ճշմարիտ որթոյն, զոր յեգիպտական խաւարէն հանեալ Քրիստոս, ի տեղի անկելոցն յուսով տնկեաց, եւ այժմ քակեցաւ սորա ցանկն եւ պարիսպքն կործանեցան, ըստ այնմ՝ «Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, եւ կթեն զնա անցաւորք ճանապարհի»* (**Սղմս. ՀԹ. 13**) *որդիքն Հագարու զպտուղ մարմնական բարեացն, եւ դեւքն չարասէրք՝ զբերս հոգեկան պտղոցն, զի ո՛չ գոյր սորա տնկագործ բարի, ջուրբ վարդապետութեանն ոռոգանել շուրջ բրել եւ կակղացուցանել, եւ ի պտղոյ նորա զտէր այգոյն կերակրել,* |54բ| *որպէս տնկագործն բարի։* 6 *Պաւղոս ասէ. «Ես տնկեցի, Ապաւղոս ջուր ետ եւ Աստուած աճեցոյց»* (**Ա. Կրնթ. Գ. 6**)։ 7 *Եւ զի այս ո՛չ գոյր, բարկացեալ ասէ. «Քակեցից զցանկ նորա՝ եւ եղիցի յապականութիւն, կործանեցից զպարիսպ նորա եւ եղիցի ի կործանումն*[1]*»* (**տե՛ս Եսայ. Ե. 5**) *եւ այժմ ո՛չ գոյ ոք աղաչաւղ։* 8 *Թոյլ տուր այս ամ եւս, զի շուրջ զդովաւ բրեցից* (**տե՛ս Ղկ. ԺԳ. 8**)։ 9 *Զբարի՛ եւ զքաջ հովվապետին հաւտս բանաւոր, զոր տարածմամբ աստուածային բազկացն ժողովեաց, գայլք ապականիչ ցրուեալ ճապաղեն եւ զգառինս կենարար Քրիստոսի արաւտին՝ արեամբ խողխողեն։* 10 *Եւ վասն է՞ր տիրեցին ապականիչ գայլքն գառանց, զի հովիւք զանձինս իւրեանց, այլ ո՛չ զխաշինսն արածեն, զվարձականացն եւ ի մարմին սերմանողացն այլ ո՛չ զքաջ հովուին նմանութիւն սիրեն։* 11 *Վասն որոյ անփոյթ լինին մեծագին ոչխարք, ո՛չ ոք է, որ զգայլսն հալածէ եւ զվիրաւորսն բժշկէ, եւ զգաստ արթնութեամբ պահէ։*

ԻԹ. 1 *Զերամս պատարագելի թռչունոց, ձագուց աղաւնեաց, որ յոստս ծառոյն կենաց նստեալ հանգչէին, վոհմակք ցնա ժողով կուտիցն հարեալ հալածեն, եւ ներէ երկայնամիտն Տէր եւ հզաւր։* 2 *Գաւազանք մեղաւորաց ի վիճակս արդարոց մտեալ՝ անողորմաբար հարկանեն։* 3 *Վասն է՞ր. զի գրեալ է, թէ ո՛չ թողու Տէր զգաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոց,*

[1] *Ձ՛Ա. նախապես «կոխումն» լուսանցում ուղղած «կործանումն»*

վասնզի արդարք ձգեցին զձեռս իւրեանց յանիրաւութիւն, եւ որ գաւազանաւ խաչին իւրոյ ժողովեաց զմեզ, ո՛չ սաստէ հարկանողացն։ 4 *Այլազգին պարծի ի սպառազինութիւն զրահին իւրոյ յուսացեալ, եւ Դաւիթ, որ ցպով եւ գաւազ|55ա|անաւ բառնայ զնախատինս յորդւոցն Իսրայիղի, ո՛չ փրկէ զժողովուրդ իւր։* 5 *Սկսաւ Տէր բարկութեամբ առ ի սատակել զժողովուրդ իւր, եւ Մովսէս ո՛չ գոյր, որ հաշտեցուցանէ եւ կամ ասասցէ. «Եթէ թողուս դոցա՝ թող, ապա թէ ո՛չ եւ զիս ջնջեա՛ ի գպրութենէ կենաց» (*հմմտ. **Ելք ԼԲ. 31***)։* 6 *Սովեալ եմք հոգեւոր հացին, վասնզի յոլով ժամանակաւք կապեալ կա երկինք մտաց մերոց՝ ի ցաւղելոյ, եւ երկիր մարմնոյս՝ ի պտղաբերելոյ։* 7 *Եւ Եղիայ չի՛ք ի միջի, որ սափոր ալեւրն եւ զկապսակ եւղոյն աղբեւրացուցանէ (*հմմտ. **Գ. Թգ. ԺԷ. 14***)։* 8 *Եւ է՛ սով ո՛չ հացի, այլ Բանին Աստուծոյ գիտութեան եւ գործոց բարեպաշտութեան, զի իշինուածոց առաքինութեան աւերեցաք եւ իսպառ կործանեցաք։* 9 *Այլ «դու ետուր երկեղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց հարուածոց նետից աղեղան»։*

Լ. 1 *Երկու են ազգ աղեղանց, որ նետիւք խոցոտեն զմեզ, յորմէ առ ի քէն տուեալ նշանովդ կարասցուք ապրել, զի աղեղն են դեւքն, որ խոցոտեն զմիտս մեր չար խորհրդոցն սլաքով նետից, որ եւ ըստ առաքելական բանին՝ «Պատրաստեցաք զանձինս ծառայս ի հնազանդութիւն» (*հմմտ. **Հռմ. Զ. 19***), եւ ծառայեցաք, որով հնազանդեցաքն, վասն որոյ ի խնամոցն Աստուծոյ մերժեցաք, եւ ի ցասմանէ նետից նորա հարուածեալ՝ խոցոտեցաք։* 2 *Այլ դարձեալ, թէ՝ գամք յերկեղ քո սուրբ, եւ երկնչելով ի քէն՝ «խնդրեմք զերեսս քո» (*հմմտ. **Սղմս. ԻՁ. 8***)։* 3 *Ետուր երկեղածաց նշան զսուրբ եւ զպատուական արիւն քո կեցուցիչ։* 4 *Ըստ այնմ՝ «Արիւն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց» (***Ա. Յվհ. Ա. 7***), եւ որ սրբի՝ ապրի «յերեսաց բարկութեան աղեղանն» (*հմմտ. **Սղմս. ԾԹ. 6***)։* 5 *Եւ որպէ՞ս է սրբութեամբ |55բ| ապրելն։* 6 *Յորժամ զղջացեալ ի մեղաց ապաշաւեմք եւ զնշան խաղաղութեանն մերոյ զարիւն միածնի Որդւոյն Աստուծոյ եւ զմահն բարեխաւս ածեմք սմա՝ քաւիմք եւ արդարանամք։*

ԼԱ. 1 *Եւ արդ, որպէս փրկեցան սիրելիքն քո այսմ խորհրդոյ նշանակութեամբ, կեցո՛ եւ զմեզ զաւրութեամբ աջոյ քո եւ լո՛ւր մեզ։* 2 *Ողորմած Աստուած եւ բնութիւն բարի, որպէս ապրեցուցեր զսիրելին քո Նոյ խաչանիշ տապանաւն եւ փրկեցեր ի ջուրցն արկածից, զորս ժողովեաց ի յարկ տապանին։* 3 *Փրկեա՛ զհաւատացեալս անուան քո եւ ապրեցոյ զսուրբ եկեղեցի քո ի հեղեղաց մեղաց եւ ի ջուրց փորձանաց։* 4 *Գթած Հայր եւ ամենողորմ, որ զսիրելոյն քո Աբրաամու զպատարագն ընկալար, եւ ընդ յաւժարական մահն Իսահակայ որպէս ընդ կատարեալ զենումն*

հաճեցար, եւ խոյ փոխանակ տուեալ գնեցեր, նոյնպէս եւ զգնեալքս կենարար մահուամբ Միածնի քո, զոր փոխանակ մեզ ետուր։ **5** *Ջերծո՛ ի պատուհասէ բարկութեան եւ ապրեցո՛ յաւիտենից մահուանէն։* **6** *Եւ որպէս ի ձեռն Մովսիսի մարգարէին մեծի փրկեցեր զժողովուրդ քո զԻսրայէղ յեգիպտական ծառայութենէն եւ ի դառն տառապանացն եւ նեղութեանցն, զոր կրէին, փրկեա՛ զժողովուրդ քո՝ զնորս Իսրայէլ յահէ եւ յերկեղէ անաւրինաց եւ ի դառն ծառայութենէ մեղաց, որով նեղէ զմեզ իմանալին փարաւոն։* **7** *Եւ որպէս տարածմամբ ձեռինն Մովսիսի, որի խորհուրդ խաչին տպաւորութեան զաւրանայր բազուկ ձեռին զաւրուն Իսրայիղի, զաւրացոյ Քրիստոս Աստուած զաւրութեամբ խաչատարած բազկի* |56ա| *քո զթագաւորս քրիստոնէից եւ զզաւրս նոցա, եւս առաւել զբարեպաշտ եւ զքրիստոսապսակ թագաւորն Հայոց, եւ աներեւոյթ ձեռին քո զաւրութեամբ դո՛ւ իսկ մարտիցես ընդ թշնամիսն խաչի քո եւ զաւրացուսցես զզաւրս քրիստոնէից, որպէս խոստացար լինել ընդ մեզ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի, զաւրութեամբ խաչի քո, Քրիստո՛ս։* **8** *Շնորհա՛ քրիստոնէից ուղիղ հաւատոյ դաւանութեամբ պայծառութիւն թագաւորաց, եւ իշխանաց զաւրութիւն, եւ ի պատերազմունս բարբարոսաց՝ յաղթութիւն, թշնամեաց խաչի քո՝ պարտութիւն, եկեղեցւոյ մանկանց՝ փրկութիւն, քահանայից՝ անբիծ կենաւք քաղաքավարութիւն, ննջեցելոց մերոց հանգիստ եւ ողորմութիւն, եւ որ սրով եւ չարչարանաւք ի ձեռս անաւրինաց կատարեցան, հեղմամբ արեանդ քո կեցուցիչ, հանգո՛ զնոսա ի դասս սրբոցն եւ արդարոց, եւ եղիցի հեղումն արեան նոցա ի լուացումն եւ ի մաքրութիւն մեղաց նոցա, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

Ե.

|56ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑԻՈՅ, Ի ԺԱՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԱՍԱՑԵԱԼ, ԵՒ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՈՐ ԱՍԷ. «ՄԱՏԻ՛Ք ԱՌ ՏԷՐ ԵՒ ԱՌ[ԷՔ ԶԼՈՅՍ]» (ՍՂՄՍ. ԼԳ. 6)

Աստծո արարչագործությամբ անձնիշխան մարդը ենթակա է բնական եւ ստացական բազմաթիվ մեղքերի, որոնց ազդեցությամբ, արարածը խարխափելով խավարում՝ հաճախ շեղվում է ճշմարիտ ուղուց եւ թույլ տալիս բազմաթիվ սխալներ: Իրավիճակից դուրս գալու ելքը Երզնկացին համարում է զղջումն ու ապաշխարությունը, ինչի լավագույն պահը պատարագին մասնակցությունն է եւ հաղորդության խորհուրդը, որոնց ընթացքում, առավել մերձ գտնվելով Աստծո խոսքին, աստվածային բարությանն ու հանդուրժողականությանը, ոչ միայն ինքն է լուսավորվում մարմնական խավարից, այլեւ ստացած դրական զորությունը հաղորդում է այլոց այնպես, ինչպես հմուտ բժշկի միջոցով առողջացած մարդը կոչ է անում դիմել հմուտ բժշկին եւ առանց վարձ մուծելու բժշկվել ախտերից:

Հորդորելով մարդկանց հաճախակի ներկա լինել պատարագի արարողությանը՝ նա հույս է հայտնում, որ զղջումի միջոցով փրկության հույս կարող են ունենալ նաեւ նրանք, ովքեր խախտել են անգամ իրենց նախորդ խոստումները: Անշուշտ, այս հորդորը չափազանց էական էր խառնակ ժամանակներում ինչ-ինչ հարցերում թերացած մարդկանց մայր եկեղեցու գիրկը վերադարձնելու համար:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 56ա-62ա) եւ 2854 (Ճ. 111բ-113ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Զուարճանան բարգաւաճեալքն յանձնաւորական հրճմունս, զի թէպէտ խոնճումն միայնոյ, իսկ շահաւետութիւնն բազմաց գոլ պատահեաց, որպէս եւ այժմ աստուածահայր արքայն Դաւիթ հրճուելով յիւր բարութեան գիւտսն, եւ ո՛չ բերելով զխնդութիւնն առ ի ծածկել, յայտնէ ամենեցուն՝ կամելով խնդակիցս իւր առնուլ, թէ ո՛չ վայրապար հեշտանայ խնդութեամբս, այլ եւ զայլս ի նոյն յորդորէ: 2 Եւ այս ո՛չ ըստ միում յեղանակի, |56բ| այլ զանազան դիմաւք եւ ունակութեամբ զաւրութեանց գործեալ երեւի, ոմանց բնութեամբ, որպէս ծնաւղք ծննդոցն իւրեանց գանձեն զերկս քրտանց եւ վաստակոց, զշինուածս յարկաց եւ զտունկս այգեաց եւ բուրաստանաց, եւ ըստ կարողութեան զստացուածս գանձուց*[1]*, եւ զայլ ամենայն ցանկալիս անձանց, ըստ առաքելոյ, եթէ՝ «Ո՛չ պարտին գանձել որդիք հարց, այլ հա՛րք որդոց» (տե՛ս Բ. Կրնթ. ԺԲ. 14):*

[1] *Ճ՝ > զշինուածս յարկաց... գանձաց*

3 *Եւ այս ո՛չ ի մարմնականս միայն, այլեւ ի հոգեկան ծնունդսն։* 4 *Վարդապետք բանին ճշմարտութեան եւ գտողքն ամենայն մասանց իմաստասիրութեանն, զորս ծնան զաշակերտելոցն անձինսն, յանկատար գոլոյն ի կատարեալ գիտութիւնն ածելով, թողին նոցա բազում գանձս հոգեւորական փարթամութեանց, եւ ուրախութեամբ սրտի զուարճանան ի նոսա, որպէս մեծն Յոհան գրեր աշակերտելոցն. «Գրեցի՛ ձեզ մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն»* (**տե՛ս Ա. Յովհ. Բ. 14**)։

Բ. 1 *Զայս եւ աղքատակիցք ընգերաց եւ հիւանդակիցք նեղելոց առնեն բարեմտութեան սիրով, որպէս միոյ մաւր բնութեանս որդիք գոլով եւ միմեանց եղբարք, զորս գտանեն աւգտութիւն անձանց, զնոյն եւ ընկերաց կամին։* 2 *Արդ, զոր աւրինակ, աղքատ ոք մտեալ առաջի արքայի՝ դանկ մի խնդրէ, իսկ նա բիւրս ոսկոյ նմա շնորհէ, ելանէ եւ առ աղքատակիցսն ամենեսեան եւ ասէ. Մատի՛ք առ թագաւորն, որ բաշխէ զգանձս իւր լիապէս. զի մտեալ աղքատակիցքն փարթամացեալ հարստասցին։* 3 *Եւ կամ*[1] *թէ ի տարակուսելոց ոք, հմուտ գոլով կատարեալ իմաստնոյ եւ անննախանձ ուսուցչի, յորդորէ զխնդրողսն ուսման. Մատի՛ք* |57ա| *առ ամենագէտ եւ ամենիմաստ վարդապետն եւ առէք զուսումն գիտութեան։* 4 *Եւ կամ որպէս հիւանդ գոլով ոք եւ բժշկութիւն գտեալ յումեքէ, ասէ առ ցաւագնեալ եւ աշխատեալ անձինս. մատի՛ք առ բարեմիտ բժիշկն, որ առանց արծաթոյ ձրի բժշկէ, եւ առէք զբժշկութիւն ձերոց ախտից։* 5 *Այսպէս եւ աստուածահայր արքայն եւ մարգարէն Դաւիթ առնէ իբրեւ զհայր գթած ի վերայ որդւոց զիւրոյ*[2] *փարթամութեան եւ զճոխութեան պատճառն, եւ զյոլովութիւն գանձուցն ցուցանէ եւ շարժէ ի վայելումն զորդիս, եւ վարդապետ ճշմարիտ եւ ուսուցիչ լուսաւոր իմաստութեանն լինի եւ զմեզ, որք ի խաւար կենցաղոյս եմք, յաղբիւրս լուսոյ յորդորէ, եւ իբրեւ զաղքատակից բնութեանս՝ ողորմի թշուառականացս եւ զշտեմարանն անծախելի գանձուց ցուցանէ, որով եւ ինքն փարթամացեալ մեծացաւ։* 6 *Եւ զի ի մէջ վշտաց եւ բազմադիմի ցաւոց եւ հիւանդութեանց ախտից պաշարեալ կամք, եւ իւր գտեալ զգաւրեղ բժիշկն եւ զամենահնար, յաղագս որոյ ասէ. «Խնդրեցի ի Տեառն եւ լու[աւ ինձ] եւ յամենայն նեղ[ութենէ] փրկ[եաց զիս]»* (**Սղմս. ԼԳ. 5**)։

Գ. 1 *Արդ, եւ դո՛ւք մատիք առ նոյն Տէր, որ ծառայիցն իւրոց առատ գանձիւք է փարթամացուցիչ, եւ մահաբեր ցաւոց եւ հիւանդութեանց զաւրեղ եւ բարեմիտ բժիշկ, եւ առէ՛ք զլոյս գիտութեան եւ ճոխութեան եւ*

---

[1] *ձ՛> կամ*
[2] *ձ՛ իւրոց*

բժշկութեան: 2 Եւ ուսուցանէ բանիւն այսպէս: 3 «Մատի՛ք առ Տէր[1] եւ առէք զլոյս»: 4 Եւ որո՞ց ասէ զայս եւ կամ զո՞րս յորդորէ ի լոյսն: 5 Յայտ է, զի որք ի խաւարի կան եւ կարաւտ են լուսոյ: 6 Եւ ո՛չ մի, այլ՝ բազմաւորակի ասէ «մատիք», վասնզի զանազա՛ն են |57բ| կացեալքն ի խաւարի եւ յոլո՛վ են խաւարի տեսակք. է՛ որ բնական եւ է՛ որ ստացական: 7 Եւ բնականն է՛, որ ընդհանուր է եւ է՛ որ մասնաւոր: 8 Եւ ստացականն է՛ որ բանիւք է եւ է՛ որ գործով: 9 Որոց ամենեցուն ասէ. «Մատի՛ք առ Տէր եւ առէք զլոյս»:

Դ. 1 Արդ, առաջին բնական խաւար է մարմինս, որ ոչ զաւգնականն իւր կարէ տեսանել եւ ոչ զթշնամին, վասն նիւթոյն թանձրութեան, եւ զգայական եւ անասնեղէն շունչս, որ ի զգայարանս, որոց միշտ զգալիս է փափաքելի: 2 Եւ զի թէպէտ ունի զլուսատեսիլ միտսն, որպէս ճրագ ի մարմնի, բայց զսորա զաւրութիւնս ծածկէ նիւթական մարմնոյս թանձրութիւն: 3 Եւ զորաւրինակ աստեղք ի մթին գիշերի ո՛չ կարեն լոյս ծագել[2], յորժամ ամբք թանձրութեան եւ խաւարային մէգ ծածկէ[3] զաւդս, այսպէս եւ իմանալի միտք ո՛չ կարեն լոյս ծագել, յորժամ ախտք խաւարային մարմնոյն զաւրանան ի յանդամս մեր, եւ ո՛չ կարէ[4] միտք՝ քան[5] զերեւելի[6] արարածս[7] արտաքս համբառնալ եւ յիմանալի լոյսն հպել: 4 Ըստ որում, ասաց առաքեալ. «Շնչաւոր մարդ ո՛չ կարէ ընդունել զհոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա» (**տե՛ս Ա. Կրնթ. Բ. 14**): 5 Եւ Տէրն ասէ, թէ[8]՝ «Լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչա՞փ եւս» (**Մտթ. Զ. 23**): 6 Այսինքն է՝ միտքդ, որ ճրագ է եւ լոյս է ի խաւարի մարմնոյդ, որպէս ակն ի մարմնի, եւ այդ չա՛ր է, զի պատրանաւք կենցաղոյս խաւարեալ է, եւ որ իմացականդ է՝ ի զգալի խաւարի ստուերն հարեալ եւ չարացեալ է, զգայարանք մարմնոյդ ե՞րբ կարեն լուսաւորել, |58ա| այլ մնան խաւար: 7 Եւ թէ լոյսդ, այսինքն՝ միտքդ ի հեշտութիւն մեղացն խաւարեալ է եւ ո՛չ ըստգտանաւք տանջեալ, եւ սգայարանք մարմնոյդ ո՛չ տիրեալք ի նմանէ, որպէս աւրէն է, այլ տիրող, որչափ որ[9] ի խաւար ախտիցն թաւալին՝ մթանան եւ խաւարագգեաց լինելովն զրկին ի ճշմարիտ լուսոյն: 8 Վասն որոյ ասէ մարգարէս. «Մատի՛ք առ Տէր եւ զճրագ մտացդ, զոր ունիս ի

---

[1] ձ՛ > առ տէր
[2] ձ՛ ծախել] ծագել
[3] ձ՛ մէգ ծածկեն
[4] ձ՛ կայր] կարէ
[5] ձ՛ քանզի
[6] ձ՛ երեւելի
[7] ձ՛ արարածք
[8] ձ՛ եթէ
[9] ձ՛ > որ

խաւարի մարմնոյդ[1] *հաստատեալ լուսաւորեցէք», այսինքն՝ ի վեր ելէք մտաւք ի վերայ վիմի հաւատոյն բարձրացեալք եւ իմացականապէս հասեալք առ իմանալի լոյսն Աստուած, ձգելով ի նմանէ զճառագայթ գիտութեան իւրոյ պատրուգին արծարծիչ, եւ յորժամ այդ՝ որ անձնիշխանն է, լուսաւորի՛ յԱստուծոյ, յայնժամ եւ ամենայն զգայարանք մարմնոյդ լուսաւորի, զի որպէս ճրագին չէ հնար յինքենէ լուսաւորել, թէ ոչ յայլ լուսոյ բորբոքի, այսպէս եւ մեզ չէ հնար առանց շնորհացն Աստուծոյ լուսաւորել:* 9 *Վասն որոյ Դաւիթ հայցէ. «Դու լուսաւոր առնես զճրագ իմ»* **(Սղմս. ԺԷ. 29)** *այսինքն՝ զմտացս իմանալի զաւրութիւն, որով զաւրացեալ զխաւար մարմնական շնչոյս եւ զգայարանացս լուսաւորեցից:* 10 *Եւ որպէ՞ս լուսաւորի. յորժամ ի բա՛ց դառնայ ի հեշտութեանց աշխարհիս եւ լինի ընդ իմացականին հեշտութեան միացեալ:* 11 *Ըստ այնմ. «Ինձ աշխարհ ի խաչ ելեալ է եւ ես աշխարհի»* **(Գղտ. Զ. 14)** *այսինքն՝ մեռեալ է յաչս իմ սէր նորա. եւ ի սմանէ յոր յետ սակաւ մի ժամանակի արտաքս գնամ, այժմ կամաւք հրաժարեցի:*

Ե. 1 *Ըստ որում երկրորդ խաւ|58բ|ար է աշխարհ, զի մարմնական կեանքս խաւար անուանի, եւ միշտ ոք ի յաճախ շաղախիլն ընդ սա՝ կուրանայ իմանալի հոգին:* 2 *Իսկ Քրիստոս յայս խաւարիս մէջն լոյս յայտնեցաւ, ըստ այնմ՝ «Լոյսն ի խաւարի անդ լուսաւոր էր»* **(Յվհ. Ա. 5)** *այսինքն՝ յաշխարհի եւ ի մարմնի:* 3 *Եւ վասն այնորիկ յայտնեցաւ, զի արտաքս հանցէ զցանկութիւն մեր եւ զյոյս յաշխարհէ, քանզի չէ՛ր հաւատարիմ յոյս յարութեանն մինչ ի նա, իսկ նա ո՛չ միայն ասաց զնոյն, այլեւ ապացոյց եղեւ մեռանել մարմնով եւ յարուցեալ եւ ընդ աջմէ Հաւր նստեալ:* 4 *Արդ նա մեզ լոյս է յերկինս հոգւոց, որպէս արեգակն մարմնոյ:* 5 *Եւ զոր աւրինակ մարմին ի ճանապարհի այնքա՛ն գայթակղի, որչափ ի լոյսն չնայի, իսկ նայեցեալ ի լոյսն ճանաչէ զվիհն եւ զհարթն, զդժուարինն եւ զդիւրինն, եւ ընդ ուղի՛ղն գնա. այսպէս եւ հոգի, այնքան սէր աշխարհիս նմա քաղցր թուի, որչափ ի Քրիստոս ո՛չ հայի:* 6 *Իսկ յորժամ նայի եւ տեսանէ՛ զնա, շրջեալ աշխարհի եւ ոչ հաղորդեալ սմա, այլ յա՛յլ գերագոյն կեանս ելեալ եւ ի նոյն զմեզ կոչեցեալ, եւ հրաժարեալ յաշխարհէ՝ զհետ Քրիստոսի գնայ, որ ասաց. «Որ գայ զկնի իմ՝ ի խաւարի մի՛ մնասցէ»* **(տե՛ս Յվհ. Ը. 12)**: 7 *Յոր այժմ եւ մարգարէս յորդորէ. «Մատի՛ք եւ առէ՛ք զլոյս»:*

Զ. 1 *Զի է՛ եւ եր[ր]որդ խաւար ստացական եւ ո՛չ ի բնութենէ, այլ ի թշնամոյն պատրանաց, եւ զմեզ խաբէութեամբ ի նոյն արկանել, որ են*

---

[1] *ձ՛> մարմնոյդ*

խորհուրդք եւ գործք զանազան մեղաց, որք իբրեւ զլարս որոգայթից[1] *ըմբռնեն զմեզ եւ իբրեւ զտոռունս եդեալ ի պարանոց |59ա| անասնոց՝ պնդեն զմեզ ի տիղմ եւ ի խորս խաւարի կենցաղոյս, եւ ո՛չ տան թոյլ վերաբերիլ ի սմանէ մտաւք ի լոյսն Քրիստոս, զի խորհուրդք մեղացն, իբրեւ զխաւար եւ զգիշեր պատեալ ո՛չ տան թոյլ զճշմարիտ լոյսն տեսանել, այլ զցանկութիւն մեղացն ուղիղ տայ համարել եւ իրաւացի։* 2 *Վասն որոյ, որպէս քնով թմբրեցելոց ձայնեալ զարթուցանէ մարգարէս եւ ասէ. «Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք ձեզ լոյս» գիտութեան զղամբարս պատուիրանի իւրոյ, եւ սիրով նորա եւ պատուիրանին լուսով հատէք զկապանս մեղաց եւ զսիրոյ աշխարհիս, եւ ելէ՛ք առ լոյսն Քրիստոս՝ անցանելով ընդ գիշեր երկրաւոր ցանկութեանցն։* 3 *Եւ զայս որպէ՞ս կարէք, բայց յայնժամ, յորժամ զլոյս պատուիրանի Նորա առաջի մտաց աչաց ձերոց ունիցիք այնմ, որ զկապանս մեղացն ձեր եհատ իւրով մահուամբն, եւ զսէրն իւր, որով մեռաւ յաշխարհի, ձեզ աւանդ տուեալ եւ ուսոյց մեռանել ցանկութեանց աշխարհի։*

Է. 1 *Վասն որոյ եւ չորրորդ խաւար է՛ անգիտութիւնն, յորմէ եւ անհաւատութիւնն իսկ զաւրանայ։* 2 *Արդ, ասէ մարգարէս. Մի՛ անգիտանայք զառատութիւն շնորհացն Քրիստոսի եւ մի՛ արգելցէ զձեզ խաւար մարմնոյ կամ սէր աշխարհի, կամ կապանք մեղացն, կամ անհաւատ լինել առ մեծութիւն շնորհին։* 3 *Մի՛ հեղգայք ծուլութեամբ անհաւատութեանն, այլ առէք զլոյս հաւատոյն, եւ մի՛ ամաչէք վասն ծանրութեան մեղացն։*

Ը. 1 *Եւ զի՞նչ է հաւատոյն լոյս, զոր առնուլ խրատէ։* 2 *Զի Քրիստոս էա՛ռ զմարմինս կրիւքն իւրովք եւ ծանեա՛ւ զի արդա՛ր էր |59բ| առանց խայթոցի բանսարկուին, ապա զնոյն Հաւր պատարագեաց եւ զմեզ զամենիսեան, որ խաբեալ պատրիմք ի սատանայէ՝ արդարացոյց, վասն զի զնա ո՛չ կարաց պատրել, եւ փոխանակ մեր զպատրաւղն մեր դատապարտեաց։* 3 *Արդ եթէ մեղաւոր ես՝ մատի՛ր առ Քրիստոս Տէրն քո զի նա քո՛, մարմնովդ արդար է եւ ա՛ռ ի Նմանէ զայս լոյս։* 4 *Եւ որ է լոյսն, որ զի թէ*[2] *չէ՛ր սատանայ քեզ պատրիչ, եւ դու իբրեւ զնա արդար էիր, այսինքն՝ զՔրիստոս։* 5 *Արդ, պատրեցար, հաւատա՛ թէ Քրիստոս վասն քո՛ մեռաւ, եւ այսու յուսովս արդարանաս։* 6 *Եւ թէ յետ արդարանալոյն դարձեալ մեղանչես, մի՛ ամաչէր, զի որչափ յայս*[3] *կեանքս ես՝ ի ներքոյ շնորհին ես, եւ նորա մահուն յիշատակն աւրըստաւրէ քեզ քաւի՛չ։* 7 *Դարձեալ մատի՛ր եւ դարձեալ լուսաւորեա՛, ապա թէ ամաչես, ա՛յն ես, որ գտանի ի քեզ յուսահատութեամբ կործանումն։*

---

[1] *Ձ որոգայթի*
[2] *Ձ > զի*
[3] *Ձ այս*

Թ. 1 *Դարձեալ՝ առաւել խաւար, քան զամենայն՝ է՛ անգիտութեանն խաւար, յորմէ ծնանի մեղք եւ անհաւատութիւն եւ անյուսութիւն եւ ամենայն գործքն խաւարի:* 2 *Որո՞ց ասէ՝ «Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս» աստուածային աւրինաց եւ պատուիրանաց, որ կան պայծառացեալ ի Հին եւ ի Նոր կտակարանս:* 3 *Եւ զորոց մարգարէս ասէ. «Պատուիրանք Տեառն լո՛յս են եւ լոյս տան աչաց»* (**Սղմս. ԺԸ. 9**)*:* 4 *Զոր աւրինակ, արեգակն լոյս է զգալի աչաց, եւ պատուիրանք Տեառն լո՛յս են մտաց իմանալի աչաց:* 5 *Եւ զոր աւրինակ, մարմնոյ աչք եւ լոյս արեգականն, յորժամ ընդ միմեանս բաղակցին, ապա զմեզ զգալի լուսոյս ընդունակ առնէ, եւ չիք հնար միոյն՝ առանց |60ա| միոյն ներգործել:* 6 *«Զի յորժամ թագչի արեգակն, առանց լուսոյ է աչք, եւ յորժամ նա խաւարի՝ չաւգտի ի ճառագայթիցն ծագմանէ:* 7 *Այսպէս եւ պատուիրանն Աստուծոյ եւ միտքս ունին ընդ միմեանս հաղորդել, զի թէպէտ եւ աչք է իմանալի միտս, սակայն կարաւտ է զպատուիրանն ունել եւ նովաւ լուսաւորել:* 8 *Եւ թէպէտ լո՛յս է պատուիրանն, յորժամ միտքն ո՛չ տան*[1] *նմա տեղի, ծագէ եւ անգործ ի մէնջ դառնայ, երկուցն պարտ է բաղակցել, եւ յայնժամ լուսաւորի շունչս եւ մարմինս իմանալի լուսովն, եւ գիտէ, թէ ի ճշմարիտ լոյսն եմ:* 9 *Եւ որք արտաքոյ են սորա՝ ի խաւարի՛ են եւ ամէն*[2]*:*

Ժ. 1 *Վասն որոյ ասէ. «Մատի՛ք առ Տէր եւ առե՛ք զլոյս եւ երեսք ձեր մի՛ ամաչեսցեն»:* 2 *Այսինքն՝ ի լոյս պատուիրանաց Նորա գնայք՝ երեսք ձեր մի՛ ամաչեսցեն, վասն չարութեան գործոցն համարս տալոյ յատենի, ա՛ստ առաջի հարց խոստովանութեանն եւ անդ՝ ի մեծի հրապարակին:* 3 *Այլ, զոր աւրինակ նախամարգարէն Մովսէս մատեաւ առ Տէր եւ առ զլոյս աւրինացն տախտակաւք ի ձեռս եւ զլոյս շնորհացն Աստուծոյ յերեսս, նոյնպէս եւ դուք գրեցէք զբանս աւրինացն Աստուծոյ ի տախտակս սրտից ձերոց եւ լուսաւորեսցին երեսք ձեր ի լուսոյ երեսացն Քրիստոսի:* 4 *Նա՛ ի Սինէական լեառն մատեաւ, ուր ետես զաւրինակ խորանին, եւ դուք՝ յարքունիս երկնաւոր արքային ի տաճարն Աստուծոյ յեկեղեցի սուրբ:* 5 *Նա ընկալաւ զլոյս ստուերական աւրինացն, իբրեւ զճրագ լուսատու տան միում ազգին Իսրայիղի, եւ դուք առէ՛ք զլոյս |60բ| Աւետարանին եւ լուսաւորեցէ՛ք ծագմամբ արեգականն արդարութեան ի բանսն եւ ի գործսն Քրիստոսի, եւ մի՛ մնայք խաւարեալք ի բանիցն եւ ի գործոցն Քրիստոսի գիտութենէն, ընբռնեալք հոգւով ի պատաղմանց կենցաղոյս, այլ մատիք առ Տէր քննութեամբ:*

---

[1] *Ձ տայ*
[2] *Ձ ասեն] ամեն*

ԺԱ. 1 *Զիա՞րդ Աստուած՝ հրեշտակացն պաշտեցեալն որպէս մարդ ի մսուր։* **2** *Վա՞սն էր զտնաւրէնութեան գործսն ո՛չ եցոյց փառաւք յաշխարհի։* **3** *Վասն է՞ր երեւեցաւ յաշխարհ հեզութեամբ եւ ո՛չ ահարկութեամբ։* **4** *Եւ զի կարող էր ժուժկալութեամբ կալ՝ է՞ր խոնարհեցաւ ի հասարակաց կեանս։* **5** *Արդ, յորժամ այսպէս մատչիս առ Տէր եւ տարակուսիս, ա՛ռ քեզ զլոյս գիտութեան ի նմանէ, թէ վասնզի մարդասէր է, արար զայս ամենայն. երեւեցաւ աղքատութեամբ, զի գիտասցուք, թէ եւ մե՛ք զնա աղքատութեամբ գտանեմք առաւել, եւ ո՛չ մեծութեամբ միայն, որ սակաւուց է հասանելի։* **6** *Հե՛զ էր, զի մի՛ երկնչելով զրկեսցուք ի նմանէ, թէպէտ ի խորս չարեաց հասեալ իցեմք։* **7** *Հասարակաց կեանս ստացաւ, զի թէ ժուժկալքն միայն գտանէին զնա, ապա որք ի հասարակաց կեանս էին, տրտմեալ յուսահատէին եւ հեղգային մարդիկ ո՛չ ելանել առ նա։* **8** *Եւ այսպէս ամենայն գործք եւ բանք Քրիստոսի լուսաւորեցեն զքեզ*[1]*։*

ԺԲ. 1 *Արդ, որ կայք ի հեշտութիւնս աշխարհի ըմբռնեալք եւ ի սնոտի զբաղանս, որպէս յանլոյս գիշերի՝ խաւարաւ տանջիք մատի՛ք առ Տէր եւ առէք զլոյս զԱստուծոյ խաւսեցեալ բանսն, որ յԱւետարանին։* **2** *Յորժամ լսէք զասելն աշակերտացն. «Ո՞ն արիք* |61ա| *գնասցուք աստի»* (**տե՛ս Մրկ. ԺԴ. 42**) *եւ թէ՝ «Որ ո՛չ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի»* (**Մտթ. Ժ. 38**) *եւ «Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանս յաւիտենից գտցէ զնա»* (**տե՛ս անդ, Ժ. 39**)*, ապա լուսաւորեսցին միտք ձեր, թէ ո՛չ է այս աշխարհս մեր, եւ պանդուխտ եւ նշդէհ եմք աստ, եւ մահկանացու եմք, որպէս զհարս մեր։* **3** *Եւ թէ այսպէս է, ապա բարիոք է, զի կամաւ հրաժարէմք յաշխարհէ եւ չարչարանաւք խաչի եւ սիրով երթալ զհետ Քրիստոսի։*

ԺԳ. 1 *Դարձեալ մատի՛ր առ Տէր եւ լուր զհարցումն Պետրոսի. «Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո, արդ՝ զի՞նչ լինիցի մեզ»* (**Մտթ. ԺԹ. 27**)*։* **2** *Զի՞նչ լսէր զպատասխանին ի Քրիստոսէ. «Դուք, որ եկիք զկնի իմ, եւ ամենայն ոք, որ եթող զհայր կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ*[2] *յայսմ աշխարհի, զորս եթողն, եւ ի հանդերձեալսն զկեանսն յաւիտենականս ժառանկեսցէ»* (**տե՛ս Մտթ. ԺԹ. 28-29**)*, եւ ապա լուսաւորիք։* **3** *Թէ այսպէս է, ապա բարիոք է թողուլ զանցաւորս, որ թէ վա՛ղ եւ թէ անագան է, թողլոց եմք, եւ գտանել զանանցն եւ զմշտնջենաւորն եւ զհարիւրապատիկն աստ, քան թէ մնալ ի սէր անցաւորիս եւ ժառանկել զտանջանսն։*

---

[1] *Ձ զմեզ] զքեզ*
[2] *Ձ առնուցոյս*

ԺԴ. 1 *Եւ այսպէս, որքան մատչիս առ Տէր, լուսաւորիս ի բանից աստուածային գրոց, յորժամ ամենայն տարակուսանաց յԱստուածաշունչ գրոց լուծումն առնուցուս։* **2** *Արդ, եւ դո՛ւք քաջալերեցէք զմիմեանս՝ յորդորական ձայնիւ, ըստ բանի մարգարէին, թէ՝ «Եկա՛յք |61բ| երթիցուք ի լոյսն տեառն»* (**Եսայ. Բ. 5**) *եւ ցուցցեն մեզ զճանապարհս Նորա աստուածային աւրինաց ուսուցիչք եւ խրատիչ վարդապետք։* **3** *Արդ, որ ի մեղս էք խաւարի, մատի՛ք եւ առէ՛ք զլոյս, որպէս կինն մեղաւոր, որ մատեաւ ի տունն Սիմոնի եւ անկեալ առ Տեառն, լա՛յր եւ արտասուաւքն թանայր զոտս նորա եւ հերով գլխոյ իւրոյ մաքրէր* (**հմմտ. Ղկ. Է. 38**)։ **4** *Մատի՛ք այնպիսի յուսով եւ դո՛ւք, լուացէ՛ք զոտս Նորա արտասուաւք, զի որ արտասուք ձեր իջանեն՝ ա՛նդ զոտսն Յիսուսի գտանեն։* **5** *Առէ՛ք զլոյս թողութեան, բազմապատիկ ցուցէք սէր, զի բազմաց յանցանաց թողութիւն գտանիցէք։* **6** *Որ յանգիտութեան խաւարին եւ ի սէր ընչիցն զմիտս ձեր կուրացուցանէք մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս, որպէս այն, որ եհարց զՏէրն. «Վարդապե՛տ բարի, զի՞նչ բարի գործեցիցս, զի զկեանս յաւիտենականս ժառանկեցիցս»* (**Ղկ. ԺԸ. 18**)։ **7** *Եւ նա ընդ այլսն. «Երթ վաճառե՛ա զինչս քո եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս»* (**տե՛ս Ղկ. ԺԸ. 22**)*, եւ եկ զկնի իմ»։* **8** *Եւ որ յաշխարհիս յայսմիկ ի սորին պատրանս կայք, որպէս ի խաւարի, եւ մարմնոյ կրից եւ կարեաց մատնեալ էք, որպէս ի գիշերի, մատի՛ք առ Տէր յեկեղեցիս սուրբ եւ առէ՛ք զլոյս մխիթարութեան կենաց ձերոց, զի վասն այնորիկ անտեսանելին երկնի եւ հրեղինաց տպաւորեաց զինքն ի հաց եւ ի գինի, զի հնար լիցի հողեղինացս տեսանել զնա եւ վայելել ի նմանէ, ճաշակել բերանովն զհացն երկնաւոր եւ անմահարար, տեսանել աչաւք զլոյսն հոգւոց եւ զարեգակն արդարութեան, լսել ականջաւք զերախտեացն Քրիստոսի բազմապատիկ բար|62ա|ութիւնսն, իմանալ մտաւք, թէ որ յերկինս ընդ Հաւր բազմի, եւ աստ ի խորհրդական սեղանս պատարագի, զի վերին սեղանոյն*[1] *զիս հաղորդս արասցէ։*

ԺԵ. 1 *Եւ այսպէս լուսաւորեալ մտաւք, հոգւով եւ մարմնով, բանիւ եւ գործով, իմաստութեամբ եւ հաւատով արժանապէս նմա գոհութեամբ, եւ փառս մատուցցուք, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

---

[1] *Ձ սեղանոյս*

Զ.

|62ա| ՆՈՐԻՆ ՆԱԽԵՐԳԱՆ ՅԱՂԱԳՍ ՊԱՏՈՒԵԼՈՅ ԶԲԱՆՆ ԵՒ ԿԱՄ ԱՆՊԱՏՈՒԵԼՈՅ

Հայտնի է, որ Երզնկացին իր ճառերում, քարոզներում եւ խրատական գործերում հաճախ է դիմում համարձակ բնաղատություններ՝ իր ասածները հիմնավորելով Աստվածաշնչի եւ բազմաթիվ սրբերի ասույթներով: Թերեւս իր սեփական օրինակով նա համոզվել էր, թե որքան էական է այն, որ բանասացի խոսքը համապատասխանի ժամանակին եւ իրադրությանը, ինչպես եւ լսարանի բարյացակամությանը: Հիշենք ավանդությունները Անի քաղաքում տեղի ունեցած միջադեպերի մասին[1]:

Թեպետ ենթադրելի է, որ նախերգանները կարող էին կցվել նաեւ այլ գործերի, սակայն առաջինի պարագայում կա մի ուշագրավ տեղեկություն, որտեղ ասվում է, որ այդ առիթով ինքը հրաման է ստացել «սպասաւորել արքայական ատենի եւ մեծի թագաւորական աւուրս»:

Արդ, առ այսօր ճշգրիտ հայտնի են արքունիքում կարդացած երկու գործեր՝ «Նորին Յոհաննէս վարդապետի Եզնկայեցւոյ ի տօնի ծննդեան եւ մկրտութեանն Քրիստոսի, ասացեալ ի թագաւորանիստ քաղաքն ի Սիս, յատեան տօնախմբութեան» եւ «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեան է...» նշանավոր ճառը: Կարծում ենք՝ «Նախերգանը» վերաբերում է առաջին գործին, քանզի ոչ միայն բնագրում այն նախորդում է վերջինիս, այլեւ, որ շատ կարեւոր է, որ այն ասվել է «Մեծի եւ թագաւորական աւուրս», որ պետք է հասկանալ Քրիստոսի ծննդյան եւ մկրտության օրը:

Այս եւ «Նորին այլ նախերգան» փոքրածավալ ստեղծագործությունները եւս հրատարակվում են առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 62ա-65ա) եւ 2854 (Ճ. 113ա-114ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *«Ամենեցուն ժամանակ եւ ժամ ամենայն իրի ընդ երկնաւ»* (**տե՛ս Ժղվ. Գ. 1**)*, ասէ իմաստնացեալն յԱստուծոյ Սաղամոն:* **2** *Եւ արդ, է՛ ժամանակ ծնունդ շարժման շրջագայութեանն երկնի, կերպատարագ կենդանատեսակաւք, որ ինքնա չափելով մասամբք-մասամբք ժամուցն, զպատկեր աւուրցն եւ նոքաւք զլրումն ամաց, դարուց եւ ժամանակաց:* **3** *Եւ արդ, իմացեալ լինի ժամանակն չափ, եւ տեսակացեալք ի նիւթոյ չափին*

[1] *Աբրահամու կաթողիկոսի Կրետաւոյ Պատմութիւն անցիցն իւրոց եւ Նատր շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 105, Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Բ., Վենետիկ, 1870, էջ 490, նույնի Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 514:*

նովաւ ամենիմաստ եւ աստուածային արուեստիւն, այսինքն՝ խնամաւք եւ զաւրութեամբ Բարձրելոյն, որ է ինքն բնութիւն, զոր արտաքինք՝ ասեն հոգի՛ ընթհանուր տուող կենդանութեանն ամենայնի։

Բ. 1 *Արդ, այս բնութիւն, որ է՛ աստուածային արուեստ, շուրջ էած զգնդիւն երկնի, եւ խաղաց յեթերէն մինչեւ ի ներքսագոյն խորս երկրի եւ յանդունդս։* **2** *Եւ որք ի ներքոյ լու[ս]նոյդ՝ երկու տարազք են, պա՛րզ եւ շարունակեալ։* **3** *Եւ պարզին մասունք են երեք. կենդանիք եւ բուսականք եւ հանեալքն յերկրէ նիւթք պատուականք ոսկւոյ եւ արծ|62ք|աթոյ, եւ քարինք լուսանշոյլք։* **4** *Եւ ամենեքեան սոքա ըստ ժամանակի եւ ըստ նիւթոյ շինեալ լինէին*[1]*, եւ ըստ ժամանակին եւ ըստ նիւթին փոփոխումն առնուն, զի երկին ո՛չ միայն գոյացուցանէ զժամանակ, այլեւ փոփոխէ ի զանազան յեղանակս, ըստ որում եւ փոփոխին գործեցեալքն ի նիւթոյ՝ ըստ ժամանակի։* **5** *Զի խնամք ամենիմաստ արուեստին Աստուծոյ շարժէ զերկնային գունդ բոլորին եւ նա՝ զժամանակ։* **6** *Իսկ ժամանակ՝ զտարերքս, եւ նոքա՝ զկենդանիսս եւ զբո՛յսս, եւ զբրածոյս պիտանացուս, եւ այսպիսի շարժմամբս պահեալ լինի ամենայն ինչ ի կայի իւրում։* **7** *Վասն որոյ ասէ իմաստունն. «Ամենայն իրի ժամանակ եւ չափ», զի տարաժամութիւն, քան զչափ ժամանակին է անաւգուտ, եւ յապաղելն առաւել, քան զչափն՝ անգեղեցիկ*[2]*։* **8** *Զի ժամանակ է կենդանեաց յղութեան, ծննդեան եւ սննդեան, եւ կենաց կատարելութեան։* **9** *Ժամանակ սերմանելոյ սերմանց եւ չափ հասակիցն հնձոց եւ հասողութեան պտղոցն։* **10** *Ժամանակաւ զգեցուցանէ բնութիւն ոսկւոյ զգեղեցկութիւն եւ զծանրութիւնն ի գիջութենէ ջրոյ՝ եւ ջերմութենէ հրոյ եփեալ ի սիրտ երկրի հրով՝ տապոյ արեգականն։* **11** *Նմանապէս եւ ամենայն հալողական նիւթոց։* **12** *Նաեւ ամենայն քարինք լուսափայլք ժամանակաւ զգենուն ազդողական զաւրութիւն եւ գեղազարդ պայծառութիւն։*

Գ. 1 *Դարձեալ եւ արդ, որպէս*[3] *ամենայնի սահման է չափ եւ ժամանակ, նոյնպէս բանի եւ լռութեան, վասն զի ասէ. «Ժամանակ լռելոյ եւ ժամանակ խաւսելոյ» (Ժղվ. Գ. 7)։* **2** *Եւ զայս ի տեղւոջ իւրում եւ ի կ|63ա|արգի հարցն սրբոց ցուցեալ է մեկնողաւրէն վերլուծութեամբ։* **3** *Այլ մեր, ըստ մտածութեանս մերոյ պիտոյից, յա՛յլ երանգս գունոյ*

---

[1] *Ձ լինին*
[2] *Ձ այն գեղեցիկ*
[3] *Ձ որպէս եւ*

զորակութիւն զաւրութեան[1] սորա փոխեսցուք ասելով. ժամանա՛կ է խաւսելոյ, յորժամ սիրելի՞ իցէ խաւսելն, եւ ժամանակ լռելոյ, յորժամ ատելի թուեսցի նոյն։ 4 Վասն զի սիրելի՛ է սպասաւորի բանին յորմէ բանն՝ յորժամ առ բարեմիտ եւ աննախանձ լսաւղս բարբառի, եւ ո՛չ առ այնոսիկ, որոց լսելն է որսորդական եւ կամ անունկնդրութիւն՝ սակս արհամարհանաց, եւ ճշմարիտ եւ ցաւակից յանդիմանիչք ի դրունս ատելիք, եւ բանք սուրբ եւ ինքեանք միանգամայն գարշելիք։ 5 Իսկ ուղիղ մտաւք լսողին զվայելչութիւն բանին ցուցանէ զգովութիւն իմաստունն, որպէս ոսկի ընդ սարդիոն յեռեալ, այնպէս եւ բան իմաստուն յունկնդիր լսելիս։ 6 Իսկ որ լսողին թուի սիրելի եւ ախորժական, միանգամայն եւ աւկտակար, յորժամ ի խոհական մտաց եւ ի գործնական յանձնէ եւ ի ճշմարտախաւս բերանոյ իցէ բանն, «իբրեւ աղիւ համեմեալ» (**Կղս. Դ. 6**), ըստ Առաքելոյ. Եւ զժամանակ ճանաչողի բանին եւ զդէմս քաղցելոցն առատապէս բրդել յաւրինացն Աստուծոյ հա՛ց է, եւ ո՛չ յագեցութեամբ թշնամանողացն։ 7 Բան, ո՛չ որ զլսելիսն միայն զուարճացուցանէ, այլ որ ընդ միտս անցեալ՝ ընդարձակէ զբերանն եւ լնու հոգւով, զի զայն, որ առ դուրս[3] լսելեացն բազում անգամ թոչուն յափշտակէ եւ անպտուղ լինի, իսկ զոր ի խորս սրտին՝ գիտէ հոգին հարիւրաւոր պտղաբերել։ |63բ| Իսկ որ Աստուծոյ հաճոյ եւ սիրելի իցէ բան, յորժամ դիտաւորութիւն երկոցունց յաղագս աւկտակարին լինիցի հոգւոց, միումն սպասաւոր լինել այնպիսի բանից, որ ինչ բարին իցէ ի շինուած պիտոյից, ըստ առաքելական խրատուն, զի տացէ շնորհս լսողին, իբրեւ զբժիշկ բարեմիտ զցաւոցն յայտնել պատճառ, եւ մի՛ միայն զբարս շահել հիւանդին, զմահացուն տեսանելով ճաշակել կերակուր, զխրատական մատուցանել բան, թէպէտ եւ առժամայն տրտմեցուցիչ, բայց յետոյ լի՛ պտղովք խաղաղութեան նովաւ կրթելոցն յարդարութիւն։

Դ. 1 Արդ, այսպիսի բանիւ սպասաւորելն հաճոյական Աստուծոյ եւ սիրելի, իսկ լսել այն իցէ հաճոյ Աստուծոյ, որք գործելն կամիցին, զի ո՛չ եթէ լսելիք[4] աւրինացն արդարասցին առաջի Աստուծոյ, այլ առնելիք աւրինացն են[5] արդարացեալ։ 2 Գրէ առաքեալ՝ եւ Յակովբոս զառանց գոր-

---

[1] ձ զորութենէ
[2] ձ սիրեալ
[3] ձ դրունս
[4] ձ լսելիքն
[5] ձ > են

ծոյ լսելոյն ցուցանէ զանշահութիւն՝ ասելով. «Թէ ոք լսող միայն իցէ բանին եւ ոչ առնելի, նման է մարդոյ, որ հայիցի յերեսս իւր, որ ծնանիցի ի հայելո՛ջ, զի հայեցեալ ետես զինքն եւ զանց արար անդէն մոռացեալ, թէ որպիսի ոք էր» (տե՛ս **Յակ. Ա. 23***): Իսկ որ հեզութեամբ ընդունիցին զբանն ընդաբոյս, որ կարողն է կեցուցանել զոգի, նա ի յառնելն իւրում լիցի երանելի:*

Ե. 1 *Արդ, այսպիսի կարգաւորութիւն բանիս Աստուծոյ հաճոյ եւ սիրելի ի խաւսելն եւ ախորժական ի լսելն: 2 Իսկ ո՞ր իցէ ժամանակ լռելոյ բանին. յորժամ բանն մեր իբրեւ զայլ ինչ ի վաճառանոցս եդեալ* |64ա| *ծախիցի, եւ որսորդք լինիցիմք ո՛չ առաքելաբար ի խորոցն ինչ վերաբերել ծովէ, հրով հոգւոյն հասուցեալ եւ կերակուր գործել Քրիստոսի, այլ զանձանց փառս եւ զկենաց պէտս յԱւետարանին ուռկան որսալով: 3 Նաեւ յորժամ լսողքն ատեն զաւկտակարն խրատ եւ սիրեն զհեշտալիս եւ զախորժականս բարուց, եւ զանձինս առ իմաստունս ունին, եւ յաչս*[1] *անձանց իւրեանց իցեն խորհրդականք, եւ ճարտար բժշկութեան հմուտ զինքեանս վարկանեն:*

Զ. 1 *Եւ արդ, այսպիսի ոստս եւ տերեւ ի բանական տնկոցն արձակեցելոյ, ժամանակ է լռելոյ, զԴաւթայն բարբառել. «Լո՛ւռ եղ եւ ո՛չ բ[արբառէ]», զի Դաւիթ եւ Երեմիային ըղձալ երանութեանց, զի երանէ զայնոսիկ, որ «առնու զլուծ խոնարհութեան ի մանկութենէ նստցի միայն լռիկ ի տան իւրում եւ տացէ հողոյ զբերան» (տե՛ս* **Ողբ. Գ. 27-28***) եւ այնպէս հանդարտութեամբ նստեալ յապահովութիւն, թէպէտ զարհուրելի՛ է ձայն բարբառոյն, թէ «ծառայ չար. պա՛րտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս» (տե՛ս* **Մտթ. Իե. 27***): Վասնզի զի՛նչ աւգուտ է սոսկ բարբառելն եւ ունայնութեամբ լսելն, զի լաւագո՛յն է գեղեցկութիւն դիմաց տեսեալն, քան բանիւ կենդանագրեալն, եւ ընչեղութիւն՝ զոր ի ձեռս ունին, քան երազաւք ստեղծանելն, եւ իմաստութիւն՝ ո՛չ բանիւ պայծառացեալ, այլ ի ձեռն գործոց յանդիման լեալ: 3 Վասնզի իմաստութիւն բարի ամենեցուն, ոյք առնեն զնա, այլ ո՛չ միայն որք բանիւ քարոզեն կամ լսեն: 4* |64բ| *Եւ այս ամենայն յաջողի ըստ ժամանակի, յորժամ յարտաքին հողմոցն փորձութեանցն հնչելոյ զխաղաղութիւն ունիցիմք, վասնզի զի՛նչ աւգուտ է նաւ ի լիութիւն շահաւոր գանձուց, յորժամ հողմ յաջողակ ո՛չ ունիցի ուղղեկից: 5 Այսպէս եւ ամենայն բան քաղցր՝ անա-*

[1] *Ձ՛ զաչս*

խորժ ի դառնութեան ժամանակի թուեսցի։ **6** *Արդ թէպէտ լռելոյ կամ խաւսելոյ իցէ ընտրութիւն ժամանակի, բայց ատելոյ բանին մի՛ երբէք լիցի ժամանակ, այլ յամենայն ժամ սիրելի եւ յամենայն տեղիս եւ ի կիրս զանազանս, զի բան աւրինացն Աստուծոյ ճոխացելոցն փարթամութեամբ՝ չափաւորութեան դաստիարակ, եւ աղքատացելոցն եւ նուաստիցն՝ մեծախորհրդութեան խրատիչ, ուղիղ գնացաւղացն ի*[1] *պատուիրանացն՝ շաւիղ յաւելու յընթացս, եւ գլորեցելոցն գայթակղութեամբ՝ ձեռն կարկառէ. ընդ տկարացելումն՝ տկարանայ եւ ընդ զաւրացելումն՝ զուարճակից լինի։* **7** *Բան գաւառականաց՝ մարդասիրութեան աւրէնս ուսոյց, եւ աւտարացելոցն յընտանեաց՝ պանդխտակից պատուելի, ելիցն յաշխարհէս՝ առաջնորդ բարի, եւ մտից վերին աշխարհին՝ բեռնակիր գանձու։* **8** *Բան՝ վայրենացեալ սրտմտութեանն սանձ, նախանձու բոցոյն՝ ցաւղ շիջուցիչ, տրտմութեան սգոյն սգակից զուարթարար, հեշտալի եւ երկրական ցանկութեանց՝ ողջախոհացուցիչ, ատելութեանն չափու խորտակիչ եւ սիրոյն սահմանի ընդարձակիչ։* **9** *Սոյն բանիւ եւ այժմ հրամ*|65ա|*ան առաք սպասաւորել արքայական ատենիս եւ մեծի եւ թագաւորական աւուրս։*

[1] *ձ՛ > ի*

Է.

|65ա| ՆՈՐԻՆ ԱՅԼ ՆԱԽԵՐԳԱՆ

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 65ա-6ա) եւ ՄՄ 2854 (Ճ.) ձեռագրերի:

Ա. 1 *«Ամենայնի ժամ եւ ժամանակ է ի ներքոյ երկնից»* (**տե՛ս Ժղվ. Գ. 1**), *ասէ իմաստունն:* **2** *Եւ արդ, որպէս ամենայնի սահմանէ չափ եւ ժամանակ, այսպէս եւ մերոցն ամենայնի մարդկային իրաց, որք ի նիւթոյ եւ ի փոփոխական տարերց գոյացաք փոփոխականաւք դաստիարակեսցէ*[1] *Ստեղծիչն բնութեանս. բարձրութեամբ եւ խոնարհութեամբ, հիւանդութեամբ եւ առողջութեամբ, տրտմականաւք եւ ուրախութեամբ, խաղաղութեամբ հանդարտութեանն եւ պատերազմաւ գերողացն, զի յորժամ զպատիւ մեծարանացն ըստ արժանւոյն ո՛չ վարեն մարդիկ, անարգութեամբ չարչարանացն ուղղէ Աստուած, ըստ այնմ՝ «Մարդ ի պատուի էր եւ ո՛չ իմացաւ»:* **3** *Եւ սոքա ամենեքեան ըստ ժամանակի եւ ըստ չափոյ արուեստագործին ամենատես նախախնամութեամբ Աստուծոյ:* **4** *Վասնզի ժամանակ է բարձրութեան ազգաց եւ թագաւորաց, որպէս եւ բաբելացւոց բռնաւորն զիւրն բարձրացեալ տէրութիւն ի նմանութիւն ծառոյ տեսանէր, որոյ բարձրութիւնն մինչեւ յերկինս հասանէր եւ լայնութիւնն՝ յամենայն երկրի, տերեւալի եւ պտղաշատ բազմութեամբ, զի զերկնաւորին անուամբ կոչեցեալ քաղաքն զԵրուսաղէմ էառ, եւ զաւելի մասն Լիբիայ եւ զԵւրոպիայ եւ զբոլորն Ասիայ ետ նմա Աստուած: Եւ լայնացեալ յամենայն երկիր եհաս մեծութիւն նորա եւ ոստքն ծառոյն, քաղաքն՝ որ յաշխարհ ամենայն|65բ| եւ վայելչութիւն տերեւին՝ զաւրքն, եւ պտուղն՝ հարկք մտից աշխարհին, եւ թռչունք ի նմա՝ հպարտքն եւ թեթեւամիտք, եւ գազանք շաղղակերք՝ արիւնարբու իշխանքն եւ գործակալք:*

Բ. 1 *Եւ ժամանակ է նուաստութեան եւ խոնարհութեան, որպէս տեսանէր Բաղտասար որդի նորա, զի մատունք երկնաւոր ձեռինն գրէին ի վերայ բռելոյ որմոյ ի տաճար թագաւորին, եւ զյաջողումն կռոցն իւրեանց համարէին:* **2** *Եւ է՛ր գիրն ցասմնական ձեռինն Աստուծոյ, որ ունի իշխանութիւն գրել ի կեանս եւ ի մահ:* **3** *Եւ էին բանք գրոյն. Մանէ,*

---

[1] *Ճ՝ դաստիարակէ*

Թեկեղ[1]*, Փարէս, որ ասի չա՛փ, կշիռ եւ բաժանումն։* **4** *Վասն որոյ մեկնէ Դանիէլ, թէ վասն զի ո՛չ ածէր զմտաւ զանչափ եւ զանվճար զաւրութիւնն Աստուծոյ, վասն այնորիկ լցաւ չափ եւ կշիռ քոյոյ թագաւորութեանդ, զի կշռեցաւ եւ գտաւ պակաս յամենայն արդարութենէ (տե՛ս* **Դնլ. Ե. 25-28***)։* **5** *Եւ է՛ չափն մարմնոյ մեղաց լրումն, եւ կշիռն մտաց եւ խորհրդոց։* **6** *Եւ բաժանեցաւ մարաց եւ պարսից։* **7** *Եղեւ ժամանակ, զի բարգաւաճեալ փառաւք մեծարեալ պատուեցաւ արքայն Եզեկիայ՝ ի սատակել բազմութեան զաւրացն ասորոց ի դրունս Երուսաղէմի, ի ձեռն հրեշտակին։* **8** *Եւ գանձք մեծութեան նորա, զոր առեալ էր յամենայն ազգաց, մտին ի շտեմարանս նորա բազմութիւն ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց։* **9** *Եւ զի հպարտացաւ նա ի միտս իւր, ժամանեցին եւ նմա ցաւք հիւանդութեան, զի խոնարհեալ շիջցի մեծամտութիւն նորա, առ որ ասաց Եսայի. «Պատուէր տուր տան քոյ, զի մեռանիս եւ ո՛չ կեաս» (տե՛ս* **Եսյ. ԼԸ. 1***)։* **10** *Իսկ նա բեկեալ սրտիւ եւ ար|66ա|տասուալի աղաւթիւք հաշտեցոյց զառատագութն եւ զբարեսէրն Աստուած*[2] *եւ էգիտ ո՛չ միայն զբժշկութիւն, այլ եւ ի ժամանակս կենաց իւրոց զերկայնութիւն։*

---

[1] *ձ՝ օթեկեզ*

[2] *ձ՝ > աստուած*

Ը.

|66ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՂՆԿԱՅԵՑԻՈՅ Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՍԱՅԵԱԼ Ի ԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ, ՅԱՏԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ

Երզնկացու այս հիասքանչ ճառը, կարծում ենք, մեր միջնադարյան մատենագրության քրիստոսաբանությանը նվիրված լավագույն ստեղծագործություններից մեկն է, որում ի հայտ են գալիս ոչ միայն հեղինակի խորունկ աստվածաբանական գիտելիքները, այլեւ անտիկ աշխարհի ականավոր հեղինակների՝ Հոմերոսի, Թեոնի, Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի, Պյութագորասի եւ այլոց երկերին քաջածանոթ լինելը:

Դեռեւս Երզնկացուն նվիրված իր առաջին գրքում Արմենուհի Տեր-Սրապյանը, հիմնավորապես լուծելով երկու նույնանուն նշանավոր Երզնկացի վարդապետների՝ Հովհաննես Պլուզ Երզնկացու եւ Հովհաննես Ծործորեցի Երզնկացու նույնացման թնջուկը, նկատել էր, որ ի տարբերություն երկրորդ հեղինակի, որն ի վերջո հարել էր միաբարական նկրտումներ ունեցողներին, Հովհաննես Պլուզը աննահանջ եղել է Հայ Առաքելական եկեղեցու ականավոր տեսաբաններից մեկը, ինչը հետագայում հաստատվեց նաեւ այլ ուսումնասիրությունների շնորհիվ:

Այս պատասխանատու ատյանում կարդացած ճառում եւս, ինչպես եւ իր մի շարք այլ գործերում, պատասխանելով դարեր շարունակ քրիստոնեական աշխարհին հուզող կարեւորագույն հարցերից՝ Քրիստոսի աստվածային եւ մարդկային բնության խնդրին, ասում է. «Վասն որոյ ճշմարտապէս մարդ միանգամայն եւ Աստուած, ո՛չ այլեւայլ դէմք կամ բնութիւն, թէպէտ եւ ո՛չ համաբունք կամ նոյնագոյնք. ո՛չ սկիզբն առեալ աստուածութեանն, այլ մարդկութեանն, սակայն մի՛ եւ նոյն, քանզի նոյն ըստ աստուածութեանն անե՛ղ, իսկ ըստ մարդկութեանն՝ եղեալ ի կնոջէ: Այս ի լրման ժամանակաց, իսկ այն՝ նախ քան զժամանակս եւ զյաւիտեան» (ՄՄ 2173, 83բ):

Ճառի սկիզբը հետաքրքիր մանրամասներ է պարունակում նաեւ աշխարհիկ արքաների գահակալության առթիվ համաժողովրդական ճոխ տոնակատարությունների մասին:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 66ա-86ա) եւ 2854 (Ճ. 114-119ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Բազումք, ըստ բազում պատճառաց, տաւնս ուրախականս եւ խրախական խնդութիւնս կատարեն ըստ իւրաքանչիւր ազգաց եւ կրաւնից ժողովրդոց:* **2** *Հոգեւորացն եւ աստուածայնոցն փութացողացն հոգեւորքն եւ աստուածային խորհրդոցն ծանաւթութիւնք են տաւնելիք եւ ցնծութիւնք հոգւոց, որով զուարճանան քաղցր եւ ախորժելի հեշտու-*

թեամբ, որ մտացն յաստուածայինսն տեսութիւն։ 3 Իսկ մարմնասիրացն, եւ ըստ մարմնո՛յ տեսողաց մարմնականքն եւ որ ինչ ըստ մարմնոյ են նիւթական ցնծութիւնք՝ յայնոսի՛կ բերկրեալ զուարճանան։ 4 Նա՛եւ զայս իսկ տեսանեմք աւրէնս յաշխարհակալացն հրամանէ կարգեալս, զի յորժամ նոր արքայ աշխարհակալ յաթոռ թագաւորութեան նստիցի եւ գիրս թագաւորական հրամանի յաշխարհն առաքիցէ, ի բազմամբոխ ժողովս քաղաքացն, եւ ի յոգնակի շինուածս փողոցացն, աւետեաց[1] իմն[2] հնչիւն եւ բերկրական դիմաց տեսութիւն, եւ խրախճանութիւնս ամենապատիկս, ընդ բոլոր հրապարակս քաղաքին առնիցեն, զփողոցն զարդարելով, ի բազմածաղիկ նկարագործական կտաւոցն ծածկութից, ծա՛ռս եւ ծաղ|66բ|իկս ոստոց եւ համադամ պտղոցն գեղեցկութեամբ վայելչացուցանեն զիւրաքանչիւր զդրունս եւ զխանութս, եւ զանազան գործաւնեայքն արուեստիցն զիւրեանցն զարդարել փութան զփողոցս, եւ այսպէս հրապարակատեսս զուրախութիւն սրտիցն առնիցեն։

Բ. 1 Արդ, եթէ ըստ մարմնոյ առաւրեայ եւ երկրաւոր թագաւորաց մարդկան այսպիսի աւրէնս ունին աշխարհ զուարճանալ խնդութեամբ ի փառս թագաւորին, եւ ակնկալութեամբ յուսոյ իւրեանց կարծեցեալ բարութեանն, ապա քանի՞ եւս առաւել պարտ է մեզ զուարճանալ տէրունական տաւնիւք եւ զուրախութիւն հոգւոց մերոց ընդ հոգեղինացն խառնել անտրտում ցնծութիւն, մանաւանդ ի հրաշալի եւ ի մեծախորհուրդ աւուր ծննդեան եւ յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յորում աւետաբեր արքայական եւ գրաւորական հրամանի զուարթունքն անմարմին քաղցր բարբառովն առ հովիւսն հաւատից ձայնէին, աւետարանեմք ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանդ, զի «Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ, որ է աւծեալ Տէր ի քաղաքի Դաւթի» (Ղկ. Բ. 11)։ 2 Զնոյն եւ դասապետն երկնաւոր զաւրացն Գաբրիէլ Կուսին աւետարանէր. «Տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի՝ հաւր նորա, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեան։ 3 Եւ թագաւորութեան Նորա վախճան մի՛ լիցի» (Ղկ. Ա. 32-33)։ 4 Արդ, ի յերեւել մերոյ փրկութեանն եւ ի Հաւրէ աւծեալ արքային եւ Տեառն, եւ ի թագաւորել ճշմարտութեանն եւ կենացն յաւիտենականաց, |67ա| եւ ծագման լուսոյն մշտնջենաւորի, որքա՞ն առաւե՛լ պարտ է տաւնս ուրախականս եւ խրախութիւնս հոգեւորս յազգս եւ յեկեղեցիս հաւատացելոց կատարել։ 5 Իսկ զպատճառն այսմ ցնծութեան, որ յարդեանցն կատարման է, բարձրն Եսայիաս, ի դիմաց եկեղեցւոյ աւետաձայնէ. «Ցնծասցէ անձն իմ զՏէր, զի զգեցոյց ինձ հանդերձ

[1] ձ՛> աւետեաց
[2] ձ՛ ինմին] իմն

փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, իբրեւ փեսայի՛ եդ ինձ պսակ, եւ իբրեւ զհարսն զարդու զարդարեաց զիս, [եւ] իբրեւ երկիր, որ աճեցուցանէ զծաղիկ իւր, եւ իբրեւ զպարտէզ, որ բուսուցանէ զսերմանիս իւր» **(Եսայ. ԿԱ. 10-11)**: **6** *Զի զոր հրեշտակքն Փրկիչ եւ Օծեալ ասացին, զնոյն փրկութիւն եկեղեցի զգեցաւ եւ ի նոյն աւծումն շնորհի աւծաւ:* **7** *Զի յայսմ աւուր տաւնի բազմապատիկ ցնծութիւն եկեղեցւոյ պարգեւեցաւ, զի որ ծնաւն այսաւր եւ մկրտեցաւ, եւ զհոգին սուրբ ի Յորդանան զգեցաւ, զնո՛յն հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան մկրտութեամբ աւազանին եկեղեցւոյ իւրում զգեցոյց, զի «Որք ի Քրիստոս մկրտեցան*[1]*, զՔրիստոս զգեցեալ են»* **(տե՛ս Գղտ. Գ. 27)** *եւ զհոգի Նորա:* **8** *Եւ զի հարսանիք եղեն հոգեւոր, յորժամ հոգիք մեր ընդ Աստուծոյ հաղորդեցան, վասն որոյ ասէ. «Իբրեւ փեսայի՛ եդ ինձ պսակ, եւ իբրեւ զհարսն զարդու զարդարեաց զիս»:*

Գ. 1 *Առաջին այս ի՛սկ է տաւնելի պարգեւ, զի հարսն, որում կրկին զարդարանք պիտոյ էին, առաջին՝ զոր ի տուն հաւրն իւրոյ զգեցուցանեն, եւ երկրորդ՝ ի մտանելն*[2] *ի տուն փեսային:* **2** *Իսկ սա, ոչ ունելով զայս, վասն աղքատ գոլոյն, զե|67բ|րկոսին ի փեսայէն գտանէ, իբրեւ աղախին մի դուստր աղքատաց, որում ցանկացի թագաւորն գեղոյ նորա, ինքն տացէ զամենայն զարդարանսն:* **3** *Առ որ քաղցրալուր եւ խրատական ձայնիւ խաւսի յունկն հարսինն՝ աստուածահայր արքայն Դաւիթ եւ ասէ. «Լո՛ւր դուստր եւ տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո, մոռա՛ զժողովուրդ եւ զտուն հաւր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո»* **(Սղմս. ԽԴ. 11)**, *եւ որում ցանկացաւ՝ Ինքն տա զզանազան զարդս հարսնութեան նորա:* **4** *Եւ կրկին ընկալաւ զարդարանս եկեղեցի ի փեսայէն իւրմէ Քրիստոսէ, զի իբրեւ զփեսայ թա՛գ ունի, յորմէ թագուհի կոչի:* **5** *Ունի եւ յայլ անդամսն զարդս զանազանս, յականջսն եւ ի լանջսն, ի պարանո՛ցն, ի ձեռս եւ յոտս:* **6** *Գինդս ոսկիաձոյլս եւ ակնապաճոյճս զա՛րդ ականջաց՝ զԱւետարանին աստուածախաւս քարոզութիւն, եւ աստուածագործ տնաւրէնութեանն խորհրդոցն ուսմունս:* **7** *Ի պարանոցն՝ զմանեակ՝ աստուածային պատգամացն, ի լանջսն՝ զաստուածային խորհրդոցն թաքնութիւն եւ անճառութիւն, զոր եւ Դաւիթ ի սրտին ասէ՝ թագուցեալ զբանսն աստուածային. զձեռն*[3] *զտեղի ապարանջանին զարդու, ի բոլոր բարեգործութեանցն շարժումն, զընթացս ոտիցն՝ ի շաւիղս անմոլար ճանապարհին, որ ասաց. «Ես եմ ճանապա՛րհ եւ ճշմարտութի՛ւն, եւ կեանք»* **(Յվհ. ԺԴ. 6)**:

Դ. 1 *Արդ, որ այսպիսի պարգեւաց արժանացաք եւ յայսմ աւուր զայս-*

---

[1] *ձ՝ զգեցան մկրտեցան*
[2] *ձ՝ > ի մտանելն*
[3] *ձ՝ զի ձեռն*

պիսի շնորհս գտաք, զարդարեսցուք այսպէս զերկնաւոր քաղաքս |68ա| *մեր զեկեղեցի բազմանկար եւ ծաղկազարդ պատմուճանաւն, որ ի նորածին Արքայէն շնորհեցաւ։* 2 *Հատցուք ոստս ի մարգարէական տնկոց եւ ժողովեսցուք ծաղիկս յառաքելական բուրաստանացն, առցուք պտուղս ի հարցն եւ ի վարդապետացն հոգեւորն անդաստանէ, եւ զուարճասցուք տաւնիւս ի փառս թագաւորին Քրիստոսի, եւ ի փրկութիւն եւ ի պատիւ բնութեանս բարձրութեան։* 3 *Վասն որոյ եւ մեք՝ իբր հանկանակաւ վարեցեալ աւրինաւք, զառաքելականն եդաք զբան ի մէջ աստուածաժողով խրախճանութեանս, գերազանց գոլով զաւրութեամբ, քան զամենայն բանահիւսիցն արուեստախաւսութեամբ։* 4 *Եւ արդ, եթէ տաղքն հոմերական չափաւորեալքն քանակութեամբ, իմաստն Սոկրատայ եւ Դիոնիսի հաւաքումն, եւ որ ըստ Հոմերոսի գիրն եւ արարուածն, Թէոնայ պրակացն մակացութիւնն, եւ դիրք ստեղծիցն նախերգանաց, եւ գլուխք ճարտասանացն մատենից, եւ Ստագիրացւոյն Արիստոտէլի՝ Ստորոգութիւնք տասն, պղատոնավարժ համբակի եւ ամենահրահանգ իմաստակի, բաւական վարժարան եղեւ աշակերտելոցն իւրեանց ի բնախաւսութիւն եւ հնգեակ ներածութիւնքն Պորփիւրի, որ յԱղեքսանդրի է, եւ քառեակն Պիթագորի, ի վերայ չուանացն հսկմամբ եւ ի կարաս տքնութեամբ եւ անձկութեամբ սիրելի՛ եղեւ ուսումնական համբակաց՝ պարապել ի նոսին եւ բնաւորապէս կրթել, ապա քանի՞ եւս առաւել զքրիստոսաշարժ լեզուին* |68բ| *Պաւղոսի, որ զմիտս Քրիստոսի ունելով՝ բարբառէր զբնախաւսութիւնն մերոյ ստեղծմանս, լիապէս իմաստիւք ուսանիմք ի նմանէ։* 5 *Վասնզի ուսուցանէ մեզ յառաջի եղեալս բանէ զզանազանութիւն աստուածաստեղծ եւ աստուածային աւրինաց, եւ ցուցանէ բնախաւսութեամբ զմարդկային բնութեան*[1] *զստեղծուածոյ զկիրս եւ զգործս յոքնաւրինակ շարժմամբ, պատմէ եւ զշնորհացն Քրիստոսի փրկագործութիւն, որ եղեւ մարդեղութեամբ Աստուածն բանի, ծանուցանէ եւ զյեղանակ անճառելի տնաւրէնութեանն, որով զմերն հրաշագործեաց փրկութիւն։* 6 *Եւ զայսոսիկ շնորհաւք ողորմութեանն Քրիստոսի տեսցուք յառաջի կայ բանիցս զաւրութենէ, որ ասէ. «Հաճեալ եմ ընդ աւրէնսն Աստուծոյ, ըստ ներքին մարդոյն» (Հռմ. է. 22)։* 7 *Եւ արդ, նախքան զառաքելական բանիցս վերլուծութեամբ քննել զզաւրութիւն, տեսցուք եթէ քանի՞ են աւրէնք յԱստուծոյ եղեալ, որքա՞ն սեռականք եւ կամ քանի՞ մասնաւորք։*

Ե. 1 *Եւ ա՛րդ, երեք են մասնաւորականք եւ երեք սեռականագոյնք։* 2 *Եւ են մասնաւորք՝ պատուիրականն, բարոյական եւ բանաւորն։* 3 *Պատուի-*

---

[1] *Ձ՛ բարձրութեան բնութեան*

բականն տուա՛ւ Ադամայ, բարոյականն՝ Ենովսայ, Ենովքայ եւ Նոյի, բանիւն, որ Աբրաամու։ 4 *Զի յորժամ ստեղծ Աստուած զնախնի մարդն Ադամ, եւ եդ զնա իբրեւ զթագաւոր շքեղազարդ փառաւք յարքունիս, եւ իբրեւ զքահանայ մեծի լուսընկալ բեմի բարձրացելոյ արեւելեան մասինն ի յարազուարճ դրախտին փափկութեան, ի յարացոյցն հոգեւոր եւ անթառամ իմաստութեանն Աստուծոյ* |69ա|*, տա՛ նմա աւրէնս պատուիրականս։* 6 *Ըստ այնմ. «Պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ ասէ. Յամենայն ծառոց, որ են ի դրախտիդ՝ ուտելո՛վ կերիցես, բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի մի՛ ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահո՛ւ մեռանիցիք» (տե՛ս Ծն. Բ. 16-17)։* 7 *Ո՛չ ասէ, աւրինադրեաց կամ հրամայեաց, որպէս տէր ծառայի, կամ արարիչ ստեղծուածոյ, այլ՝ «պատուիրեաց», որ է յոյժ քաղցրութեան նշանակ, որպէս հայր որդւոյ եւ բարեկամ սիրելւոյ պատուիրէ։* 8 *Եւ պատուիրանքն այն աւրէնք եդան նմա։* 9 *Իսկ աւրէնքն նիւթ տուան ինքնիշխանութեան մարդոյն, զի ցուցցի կարող յերկոսին. ի պահելն եւ յոչ պահելն զեղեալ աւրէնսն, այլեւ Աստուծոյ գերագոյն գոլն եւ Արարիչ ցուցցի՝ դնելովն աւրէնս եւ մարդոյն հնազանդութիւնն երեւեսցի պահելով զաւրէնսն։* 10 *Ի պահելն՝ պատիւ ի վա՛րձ վաստակոյն, եւ յո՛չ պահելն՝ պատիժ եւ պատուհաս յանցաւորին, զի ամենայն աւրինադրութիւնք յերկուս լծորդս յայսոսիկ իրագործի։*

Զ. 1 *Իսկ բարոյական աւրէնքն սկսաւ յԵնովսայ զի մի՛ մեղուցեալքն յանյուսութեան անկեալ՝ խորս մնասցեն անդարձապէս ի չարիսն։* 2 *Սա՛ զծաղիկ յուսոյն երեւեցոյց յանձին իւրում, որ եւ ի քաղդէացւոց լեզուն թարգմանի Ենովսն մարդ, զի խոյս տուեալ յանասնական վարուց՝ ցուցաւ մարդ, որ է՛ պատկեր Աստուծոյ, եւ կոչեաց զանուն Տեառն եւ Աստուծոյ յաւգնութիւն*[1]*։* 3 *Եւ զի Ենովս որդի՛ էր ջրարբուին Սեթայ, վասն այնորիկ ի յուսոյն աղբիւրէ զծարաւ ծնաւղացն շիջոյց, եւ անարատ կեանս* |69բ| *ստացեալ՝ յուսացաւ կոչել զանուն Տեառն, թէ չգարշի ի ծառայիցս եւ զԱստուծոյն, թէ՝ ո՛չ վասն կորստեան էած զմեզ աստ, այլ ի կեցուցանել վերստին։* 4 *Եւ զի գոյր հնար մարդկութեանս ապաշխարութեամբ դառնալ վերստին յանմահութեանն վիճակ, երեւեցաւ այս յառաջին ապաշխարողն յԵնովք, քանզի ճշմարիտ ապաշխարութիւնն յոյս մեծ ունի։* 5 *Եւ զի ո՛չ կամի Աստուած զմահ յանցաւորին անդէն՝ ի սկզբանն*[2] *եցոյց զանչափութիւն սիրոյն իւրոյ առ ապաշխարողն առաջին, որ եղեւ հաճոյ Աստուծոյ, քանզի ասաց. «Բունքն*[3] *մեր ո՛չ եղեն հաճոյ եւ մեռան,*

---

[1] *Ձ՝ օգնութեան*
[2] *Ձ՝ իսկ] ի սկզբանն*
[3] *Ձ՝ բանքն] բունքն*

ես ժրացայց ի հաճոյս կամացն Աստուծոյ» (**հմմտ. Մն. Ե. 22, 24**) *եւ տեսից, թէ յաղթեցի մահու, որպէս եւ եղեւն իսկ։* 6 *Փոխեալն յանմահութիւն՝ յոյս տուեալ մահակուլ ազգի մարդկան յամաւթ այնոցիկ, ոյք ասէին. Մի՛ կարէ հողեղէն մարմինս անմահանալ, եւ զի առ յապա՛ մեղուցեալքն մի՛ զամաւթ զգեցեալ ի քաղցր ճաշակէ ապաշխարութեանն զրկեալ գտանիցին։*

Է. 1 *Իսկ եւս առաւել բարոյական աւրէնքն առաւելաւ առ Նոյիւ, որ զարմանալին էր, եւ գերագոյն փառաց եղեւ արժանի, քան զհողածինն եւ զառաջին մարդն Ադամ, զի նա՛ անունկնդի՛ր եղեալ պատուիրանաց Արարչին եւ Հաւր, ի բարձրութենէ փառացն նուաստացաւ։* 2 *Իսկ սա հնազանդութեամբն Աստուծոյ եւ սիրովն առ նա բարձրանայ անուամբ եւ իրաւք։* 3 *Նա՛ աւրինակ վատթարութեան ոչ զոք ունելով ի դրախտին՝ ի վատթարն հակամի|70ա|տեաց, իսկ սա՛ բարի ի ծնունդս ժամանակին ո՛չ զոք ետես եւ հաճոյ եղեւ Աստուծոյ, զի ո՛չ հայեցաւ նա յազգն եւ ի վարս ժամանակին, այլ յԱրարիչն, եւ ի վերի գաւառին բնակիչսն՝ ի հրեշտակսն, եւ քան զբնութեան աւրէնս գերազանց գտաւ, զամս ԵՃ. (500) կուսութեան եւ անապական կեանս ստացեալ։* 4 *Եւ յետ այնորիկ ապա ամուսնութեան հաւանեալ աւրինաց, վասն լինելոյ սկիզբն երկրորդ լինելութեան մարդկան, եւ հայր՝ փոխանակ Ադամայ հաւր իւրոյ։*

Ը. 1 *Իսկ բանաւոր աւրէնքն տուաւ Աբրաամու, զի բանիւ հրամայէ նմա Աստուած ելանել յերկրէն քաղդէացւոց, գնալ յերկիրն քանանացւոց։* 2 *Եւ երեւեալ նմա Աստուած եւ ասէ. «Զաւակի քում տաց զերկիրս զայս»* (**Մն. ԺԲ. 7**)*։* 3 *Երկու խոստմունք լինին նմա ի տեղւոջն, իշխանութիւն երկրին եւ խոստումն զաւակին, զոր տալոց էր նմա։* 4 *Եւ իմացեալ Աբրաամ, թէ որ զերկիրս տայ՝ չառնէ՛ անմասն եւ յերկնից. շինէ նմա սեղան եւ մատուցանէ պատարագ՝ ակն ունելով երկնաւոր բարեացն։* 5 *Վասն որոյ Առաքեալ ասէ. «Ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է»* (**Եբր. ԺԱ. 10**)*։* 6 *Եւ ո՛չ միայն զաւակին տալոյ նմա, այլ եւ ի զաւակի նորա աւրհնիլ ամենայն ազգաց։*

Թ. 1 *Արդ, այսոքիկ մասնաւորական աւրէնք, որ ի դարս ժամանակաց իբրեւ զնշոյլս լուսոյ երեւեցաւ յորդիս Ադամայ։* 2 *Իսկ սեռական աւրէնք երեքեան այսոքիկ են. բնականն, գրաւորն եւ աւետարանականն։* 3 *Եւ բնական աւրէքն տուաւ ամենայն որդոց Ադամայ։* 4 *Եւ չորք են |70բ| դէմք բաժանեալք, որովք վարժիմք ի բնական աւրէնսն։* 5 *Եւ երեք են բնաւորական գիտութիւն յարարածս Աստուծոյ. եւ երկո՛ւք են ուսմունք կատարեալ բարութեանց ի նմանէ. եւ մի՛ է աղբիւրն ամենայնի սոցա։* 6 *Եւ են չորք այսոքիկ զգալի եւ զգայարան, զգայութի՛ւն եւ զգալն, զոր եւ վար-*

ժեսցուք[1] *զբանս միով տարացուցական*[2] *աւրինակաւ։* 7 *Արդ, կացցէ առաջին տախտակ, յորում գրե՛ալ են գիծք*[3] *գրաւորական տառից, եւ կոչի այն զգալի։* 8 *Եւ ակն, որով տեսանէ՛ մանուկն եւ ընթեռնու՝ ասի զգայարա՛ն։* 9 *Իսկ մտաւորական զաւրութիւնն, որ ներգործէ զտեսութիւնն <ի> յակն*[4]*, անուանի զգայութիւն*[5]*։* 10 *Իսկ կիրքն, զոր կրէ յանձին՝ է՛ զգալ։*

Ժ. 1 *Արդ, ըստ այսմ աւրինակի, գեղեցկութիւն սքանչելի գործոցն Աստուծոյ, որ են ի նմանութիւն գրաւորական տառից, տպաւորեալք ի հանուր տախտակս տիեզերաց, զարդ լուսատարր յաւրինուածոց աստեղացդ, եւ որ*[6] *ի յաւդդ եւ յերկրի, եւ ի ծովու վայելչութիւնք ստեղծուածոց, զոր գեղեցկացոյց Արարիչն վարժել սոքաւք մարդկութեանս, իբր ի դպրոց ուս[ու]մնական մանկանց։* 2 *Այսք ամենայն կոչին զգալիք։* 3 *Իսկ ակն, որով տեսանեն, եւ այլ զգայարանք, որով լսեմք, ճաշակեմք եւ հոտոտիմք, կոչին զգայարանք՝ գործարան զգալեաց, զի ետ Արարիչն աչս մարմնաւորս ճառագայթիւք արեգականն տեսանել զգեղեցկութիւն արարածոցս։* 4 *Եւ եւ միտս քննողասէրս, որ է ակն իմանալի եւ բանական* |71ա| *հոգւոյ զմիտս։* 5 *Եւ սքանչելի արուեստիւ ի նմանէ ոգի իմանալի ի գործարանն կոյս կարգեալ, որ ասի զգայութիւն, զի զտեսեալն աչաւք յերեւելի արարածս Աստուծոյ քննեսցէ մտաւք՝ իմանալ զաներեւոյթ Արարիչն նորա։* 6 *Եւ որպէս ճաշակէ զգայարանաւք զվայելչութիւն արարածոցս, ճաշակեսցէ մտաւք զգիտութիւն խորհրդոցն Աստուծոյ. եւ ասի զգա՛լ ի ձեռն զգալոյն եւ զգայարանաց եւ զգայութեան։* 7 *Վասն որոյ եւ Պաւղոս մեղադիր լինի ասելովն. «Յայտնելոց է բարկութիւնն Աստուծոյ ի վերայ անբարշտութեան եւ անիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին, վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի՛ է ի նոսա, քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա, զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի երեւելի արարածովքս իմացեալ տեսանի» (Հռմ. Ա. 18-20)։* 8 *Այսինքն՝ մշտնջենաւորութիւն եւ զաւրութիւն եւ Աստուածութիւն նորա։*

ԺԱ. 1 *Վասն որոյ երեք են բնաւորական գիտութիւն Աստուծոյ յարարածոց աստի. էութիւն, եւ զաւրութիւն, եւ ներգործութիւն։* 2 *Զի ամենայն էութիւն՝ կենդան եւ անկենդան, բուսական եւ անբոյս, զաւրութիւն ունի, եւ ամենայն զաւրութիւն ներգործական կատարողութեամբ երեւի, յորմէ*

---

[1] *ձ՛ շարժեսցուք*
[2] *ձ՛ տարացուցակ*
[3] *ձ՛ գիրք] գիծք*
[4] *ձ՛ ընտիր ակն] յակն*
[5] *ձ՛ զգալի*
[6] *ձ՛ > որ*

պա՛րտ էր իմանալ զէութիւն եւ զզաւրութիւն Արարչին, ի ներգործական խնամոց նորին։ 3 *Եւ զերկուս գլխաւոր բարութեանցս զպտուղ զայսոսիկ շահել, այսինքն՝ ճանաչել զԱստուած եւ զկամս նորա առնել։* 4 *Եւ զի կամեցան զայս հեթանոսք, յա՛յտ անտի՛ է զի քննելով զբնութիւն արարածոցս՝ |71բ| զԱրարիչն խնդրէին, եւ ի բնութեանս ուղղութիւն հայելով, կամեցան լինել արդարագործս եւ առնել զկամս Աստուծոյ։* 5 *Վասն որոյ եւ դատողական աւրէնս սահմանեցին, բայց ոչ կարացին իմանալ զԱստուած, եւ ո՛չ արդարանալ։* 6 *Է՞ր վասն։* 7 *Զպատճառն Պաւղոս յայտ առնէ. «Զանձինս առ իմաստունս ունէին, վասն այնորիկ յիմարեցան եւ զարարածս Աստուած կարծելով, նմա՛ մատուցին զպաշտաւն Արարչին»* (**տե՛ս Հռմ. Ա. 22-25**)։ 8 *Եւ բնութեանս աւրինաւք ո՛չ կարացին արդարանալ, զի գտիչն եւ հայրն մեղաց զինէ՛ր զաւրէնս իւր ընդդէմ աւրինաց մտացն, եւ գերէր զմարդիկ աւրինաւք մեղացն ի վեհ անդամոց մարմնոյս՝ սորին հարկաւոր կրիւքն։* 9 *Եւ զի ունէին զյաւժարութիւնն երկոցունց սոցա մարդիկ գտանել զԱստուած եւ առնել զկամս նորա, յայտնէ եւ զայն Պաւղոս, ասելովն, թէ՝ «Յուցանեն զգործս աւրինացն՝ գրեալ ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց, յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց»* (**Հռմ. Բ. 15**)։ 10 *Եւ զի է՛ր հնար արդարանալ բնական աւրինաւքն, յա՛յտ է, զի ոմանք ի նահապետացն, որք զհետ իմանալի մտացն տեսութեան գնացին, եւ զգայարանս յինքեանս անփոփեցին, ճանաչեցին զիմանալին Աստուած։* 11 *Եւ որք զգայարանաւքս ընդ հեշտութիւն զգալեացս քարշեցան, աւտարացան յԱրարչէն, եւ գերեալք եղեն ի բանսարկուէն, որ եւ պակասեաց*[1] *ի նոցունց աստուածգիտութեանն*[2] *լոյս։* 12 *Յաղագս այսորիկ յաւել զգրաւորական աւրէնսն ո՛չ նոր ինչ եւ աւտար, այլ զոր ի բնութիւնս մարդկային |72ա| տնկեալ էր Ստեղծիչն, եւ յեղական արարածս հաստատեալ, զնոյն եւ գրաւորական տառիւք աւրինադրեալ պատուիրեաց. ըստ այնմ զաւրէնսն յաւգնականութիւն ետ, յա՛յտ է՝ բնաւորականին աւրինաց։*

ԺԲ. 1 *Իսկ յաղագս գրաւորական աւրինացն ի կարգի առաքելական բանիցդ ուսցուք, որ ասէ. «Հաճեալ եմ ընդ աւրէնսն Աստուծոյ, ըստ ներքին մարդոյն, բայց տեսանեմ այլ աւրէնս յանդամս իմ զինեալ, հակառակ աւրինաց մտաց իմոց»* (**Հռմ. Է. 22-23**)։ 2 *Գիտել պարտ է, եթէ հինգ աւրէնս ցուցանէ յայսմ տեղւոջ Պաւղոս։* 3 *Աւրէնքն Աստուծոյ, եւ աւրէնք մտացն։* 4 *Աւրէնք անդամոց մարմնոյս եւ աւրէնք մեղացն, եւ զաւրէնս*

---

[1] *Ձ՝ պակասեաց Աստուած*

[2] *Ձ՝ գիտութեանն] աստուածագիտութեան*

հոգւոյն կենաց։ 5 *Եւ աւրէնք Աստուծոյ են գրաւորական պատուիրանք նորա, վասն զի բարի՛ է Աստուած, եւ առաւել բարի կամք Նորա։* 6 *Վասն այնորիկ եւ բարի այն, զոր կամի Աստուած։* 7 *Իսկ աւրէնք կոչի, որ զայս ուսուցանէ պատուիրան, որպէսզի ի նոսա գնալով՝ ի լոյս պատուիրանի նորա գնասցուք։* 8 *Իսկ աւրէնք մտացն են այսոքիկ, վասն զի երեք են մասունք հոգւոյ. բան, ցասումն եւ ցանկութիւն, որոց բնաւորեալ է կրել յինքեանս զչարութիւն, եւ ծնանիլ զառաքինութիւն։* 9 *Եւ է՛ չարութիւն բանականին անզգամութիւն, որ է՛ անհանճարութիւն եւ անմտութիւն։* 10 *Իսկ առաքինութիւն նորա՝ իմաստութիւն, զոր եւ անուանեմք խոհականութիւն։* 11 *Եւ սրտմտականին վատթարութիւն է ըստ գերազանցութեան յանդգնութիւն։* 12 *Իսկ ըստ պակասութեան՝ երկեղածութիւն, յորոց ո՛չ իցէ արժան, եւ առաքինութիւն* |72բ| *սորա՝ հակամարտ յանդգնութեանն չափաւորութիւն, որ է միջին, զոր կոչեմք արիութիւն։* 13 *Սորա՛ է եւ քաղցրութիւնն, որ է՛ հեզութիւն։* 14 *Իսկ ցանկականին մասին՝ չարութիւն, գիջութիւնք շռայլութեանց։* 15 *Իսկ առաքինութիւն՝ ողջախոհութիւն։* 16 *Արդ, հակառակաց չարութեանցն տեղի տուեցելոց, եւ առաքինութեանցն ի ներքս մտեցելոց, բովանդակն կոչի արդարութիւն։* 17 *Եւ ա՛յս են աւրէնք մտաց մերոց։*

ԺԳ. 1 *Եւ լինին՝ այսոքիկ մասունք հոգւոյ բարեկարգ եւ աւրինազարդ, յորժամ ելանեն աւրէնքն Աստուծոյ ի վերայ մտաց մերոց, եւ ձգէ զնա առ ինքն, եւ խոցոտէ զխորհուրդս մեր շարժե՛լ յայս բարեկարգութիւն։* 2 *Իսկ աւրէնք մեղացն են այսոքիկ, զի յորժամ մասամբք հոգւոյս կամ անդամաւք մարմնոյս անցանեմք զաւրինաւքն Աստուծոյ, կո՛չի մեղք։* 3 *Եւ լինի այս յերկուց կողմանց. է՛ որ ի մէնջ, եւ է՛ որ ի հաւրէն մեղաց։* 4 *Ի մէնջ, զի կամելով մեր ըստ կարաւտ բնութեանս վայելել յարարածս Աստուծոյ, խառնէ թշնամին ի նմա զաւելորդն, ըստ տերունեան առակին, ընդ բարի սերմանսն զորոմն չարին խառնելով, որ են մեղք։* 5 *Եւ այս մեղք բախմամբ դիւացն անբռնադատաբար, կամաւոր մեր ընդունելութեամբ առնու զկատար գործոյն։* 6 *Եւ կոչին այսոքիկ աւրէնք մեղացն, որ եւ ելանեն յանդամս մարմնոց մերոց, եւ նովաւ դիմահար լինին մեզ մեղք։* 7 *Վասն զի զանցանելն զպատուիր[ան]աւն Աստուծոյ, եւ զդիմահարեալ բախումն չարին՝ ընդ*|73ա|*ունել տուաք զմուտն ի մեզ, եւ յանձինս մեր բնակեցուցաք զմեղս։*

ԺԴ. 1 *Իսկ աւրէնք անդամոցն ասի այն, որ գրեալ կայ ի մարմինս մեր շնչաւոր հոգի եւ զգայութիւն մեղաց. այսինքն է՝ ցանկութիւնն եւ տրփումն ախտից մարմնոյ, որ կոչին աւրէնք անդամոց մերոց։* 2 *Եւ լինին անդամք մարմնոց մերոց, որ են զգայարանք, եւ այլ անդամոց մասունք,*

երբեմն ընդունակ չարին, յորժամ ի մեղացն տիրեալ լինին, եւ թիւրին ի բնաւորական շարժմանէ բարւոյն։ **3** *Եւ կոչին այն աւրէնք մեղացն։* **4** *Եւ երբեմն ընդունակ բարւոյն, յորժամ ընդ իշխան առաջնորդի մտացն, հնազանդութեամբ նուաճեալ լինի՝ յիւր բնական*[1] *կարգին վարելով սահման։* **4** *Եւ այն կոչի անդամոցն աւրէնք, որ են այսոքիկ. Աչք զուղիղն հայեցուածս բարւոյն, նմանապէս եւ ականջք՝ զաւկտակարացն լսողութիւն, եւ ոչ խնուլ իբրեւ զիժ եւ զքարբի հրամանս աւրինացն։* **5** *Շրթունք եւ լեզու՝ ո՛չ դատարկաբանել, այլ չափաւորապէս վարել ի խաւսս։* **6** *Որովայնի՝ զպարկեշտութիւն, եւ ո՛չ ծանրութեամբ կերակրոցն բլշակնագոյն զարագատեսութիւն սրահայեցութեանն գործել։* **7** *Զհոտոտելիսն ո՛չ ճենճերային մխոցն հոտովք մեղկել եւ իգացուցանել։* **8** *Եւ ո՛չ զձեռն անարգելաբար ողորկութեամբ եւ կակղութեամբ գործակից բազմագլուխ պաճարին առնել այլ ձգել յերկինս սրբապէս եւ գործել ի պէտս կարաւտելոց։* **9** *Տա՛լ եւ շարժութեան ոտից զիւրն բարեկարգութեան ընթացս* |73բ|։ **10** *Զերիկամունս եւ զլեարդ՝ զանաւթս փափուկ ցանկութեանց՝ առ միայն ցանկալի բարին։* **11** *Նմանապէս եւ զկենդանական ջերմ շնչոյն զաղբիւր՝ զսիրտ։* **12** *Նոյնպէս եւ զիշխանականին դղեակ եւ տաճար եւ հայր՝ զգայութեանցն զգլուխ։* **13** *Այսոցիկ բարեձեւութեան շարժումն ընդ մտացն իշխանականի հնազանդութամբ, ըստ բնական ստեղծմանն Աստուծոյ ի բարիս, կոչին աւրէնք անդամոց մերոց։* **14** *Իսկ մտանելով ընդ լծով հեշտութեան մեղացն, որ ի բախմանէ չարին, կոչին աւրէնք մեղացն, շարժեցեալ կարգին յաւրինուածոյ եւ յարմարութեանն բնաւորականի, գործի այլայլութիւն դժուար ըմբերելի։* **15** *Քանզի ծառային թագաւորեցելոյ, ըստ Յերովբովամայ որդւոյն Նաբադայ (տե՛ս* **Գ. Թգ. ԺԲ.-ԺԴ. Ի.***) եւ աղախնոյն ամբարձեցելոյ ի չափ հրամայաւղի տիկնոչն, եւ յագուրդ անմտին պատահելոյ հացիւ, սասանեալ շարժի այս երկիր կենդանի, եւ յայնժամ ասի ցանկալ հոգի հակառակ մարմնոյ, եւ մարմին՝ հակառակ հոգւոյ։*

ԺԵ. **1** *Արդ, զանազանութեան աւրինացս յայտնի եղելոյ, այսուհետեւ դիւրին է զառաքելական բանիս ի միտ առնուլ զարուեստախաւսութիւն, զոր եւ ասէ. «Հաճեալ եմ ընդ աւրէնսն Աստուծոյ ըստ*[2] *ներքին մարդոյն»։* **2** *Վասնզի աւրէնք մտաց մերոց, որ է խորհուրդն, եւ խոհականաբար կարգաւորելն զմասունս անձին վկայէ՛ աւրինացն Աստուծոյ, այսինքն՝ պատուիրանացն եւ կամի զնա։* **3** *Վասն որոյ ասէ. «Հաճեալ եմ ընդ*

---

[1] *Ձ՛ բանական*

[2] *Ձ՛ զի ըստ*

աւրէ[նսն], |74ա| զի գիտէի եւ յառաջ, քան զաւրէնսն զբարին։ 4 *Բայց տեսանեմ այլ աւրէնս յանդամս իմ» այսինքն՝ մեղքն, որ ի բախմանէ չարին, ի ձեռն աւրինաց անդամոցս, որ է յանդամս մարմնոյս. շարժողութիւն եւ տեսութիւն եւ զգայարանացս ներգործութիւն, եւ անբանական մասին անձին, որք դիմամարտին աւրինաց մտացն հակառակեալ, այսինքն՝ խորհրդոցն։* 5 *Վասն որոյ ասէ. «Տեսանեմ այլ աւրէնս յանդամս իմ»։* 6 *Ո՛չ ասէ զանդամքս իմ, այլ թէ՝ «յանդամս իմ», զի այլ ոմն է յորում են, որպէս եւ պատուիրանքն չեն մեղք, թէպէտ եւ մեղքն պատճառք առին։* 7 *Նոյնպէս եւ ո՛չ մարմինն չար, թէպէտ եւ նովաւ պատերազմի ընդ մեզ, ապա թէ ոչ, եւ հոգի առաւել չա՛ր է, զի նա՛ է առաջնորդ մարմնոյն եւ դաստիարակ։* 8 *Յաղագս որոյ սակս մեղացն ասէ. «Տեսանեմ այլ աւրէնս յանդամս իմ զինեալ՝ հակառակ աւրինացն մտաց իմոց» (***Հռմ. Է. 23***)։*

ԺԶ. 1 *Եւ զի՞նչ պատճառ զինելոյն, կամ որպէ՞ս զինի՝ գիտելի՛ է։* 2 *Քանզի մտաւորական իմացումն իշխանականիս առաջի դնէ մեզ զժուժկալութիւն, զհեզութի՛ւն, զխոնարհութի՛ւն, եւ զայլ տեսակս բարեաց, զի են այսոքիկ գործ եւ աւրէն մտացն։* 3 *Իսկ թշնամին կենաց մերոց արտաքս հանեալ զգայութիւնս ի խորհրդակցութենէ մտացն, շարժէ յորկորամոլութիւն, ի բարկութիւն, ի ցասումն եւ յայլ ախտաւոր շարժմունս, եւ զինի ընդդէմ աւրինացն մտաց իւրովքն աւրինաւք։* 4 *Ըստ որում եւ զինուոր կոչեաց զնա, ո՛չ վասն բարեկ|74բ|արգութեանն, այլ վասն յոյժ հնազանդութեանն, որք նմա հաւանեցան, որպէս եւ զմամոնայն տէ՛ր կոչեաց եւ աստուած զորովայն, որք ծառայենն որպէս Աստուծոյ (***հմմտ. Փլպ. Գ. 19***)։* 5 *Սոյնպէս եւ աստ աւրէնս կոչեաց զմեղքն, որք իբրեւ յաւրինաց երկնչէին թողուլ զնա, որք իբրեւ հակառակ զինին ընդ աւրէնս մտացն, այսինքն՝ ընդ բնական աւրէնս, որովք կարգաւորին մասունք հոգւոյն ի բանէն, զի աւրէնքն Մովսէսի յետոյ մտին բնական աւրինացն։* 6 *Եւ ոմն ուսուցանէր, եւ ոմն գովէր, սակայն ոչինչ աւգտեցին մեղացն բռնութեան. ո՛չ բնականն եւ ոչ գրաւորականն, զի աւրէնք մեղացն տիրեալ ունէր։* 7 *Վասն որոյ ասէ. «Գերեն զիս» (***տե՛ս Հռմ. Է. 23***)։* 8 *Ո՛չ ասաց թէ յաղթեն, այլ թէ՝ «գերեն», զի որ գերի՝ ո՛չ կամաւ եւ յաւժարութեամբ հետեւի գերողին, որպէս եւ ասէ մարգարէն. «Երթալով երթային եւ լային գերեալք ի Բաբելոն» (***տե՛ս Սղմս. ՃԻԵ. 6***)։* 9 *Նոյնպէս եւ աստ. աւրէնք մեղացն ի ձեռն աւրինաց մարմնոյն հակառակեալ, զինին ընդ խորհրդոցն, եւ զիս՝ զսիրողս եւ զկամեցողս աւրինացն Աստուծոյ, եւ զո՛չ կամեցողս մեղաց, փափկութեամբ եւ ողորկութեամբ ցանկութեանն, համոյ ախտից մարմնոյ, անբանական մասամբ անձինն խաբեալ, հաւանեցուցանեն ծառայել մեղացն։* 10 *Վասն որոյ բողոք բարձեալ գոչէր ի դիմաց*

մարդկութեանս՝ զմարդկայնոյ կրից տագնապ եւ ասէ. «Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ ապրեցուսցէ զիս ի մարմնոյ աստ ի մահու» (Հռմ. է. 24)։

ԺԷ. 1 *Եւ թէ յորո՞ց փարթամութեանց կոչէ տառապեալ. յաստուածածանաւթութեանն իմ|75ա|աստութենէ*[1]*, եւ յառաքինութեան գանձուցն ճոխութենէ, զոր ի ստեղծմանն ունէր բնութիւնս, յայնմանէ տառապեալ։* 2 *Զի, զոր աւրինակ, մարմնաւոր հարստութիւն յերիցս յայսցանէ լինի. կամ զոր ի ձեռս ունին պահել զգուշութեամբ, կամ զո՛չ են ստանալ իմաստութեամբ, կամ զի բաց գնացեալն վերստին դարձուցանել քաջութեամբ։* 3 *Այսպէս եւ ի հոգեւորն. կամ զբնաւորականն պահել ուղղութիւն անձին, զոր ի ստեղծմանն ունէր, կամ զոր ո՛չ ունի ստանալ՝ գրաւոր պատուիրանացն խրատով, կամ զառաջին անապական կեանսն դարձուցանել յանձին, զոր նախաստեղծն ունէր։* 4 *Իսկ սա գոչէ, թէ՝ Յամենայնէ տառապեալ եղէ, զպատուիրանական աւրէնս, որ ի դրախտին, ո՛չ պահեցի բարոյական աւրինաւքն, որովք ոմանք հաճոյացան Աստուծոյ, ո՛չ կարացի արդարանալ, եւ թէպէտ բազում անգամ պատերազմեցայ ընդդէմ աւրինացն մեղաց, որ զինեալ էր ընդդէմ մտաց իմոց, ո՛չ կարացի յաղթել։* 5 *Իսկ որ յարարածս Աստուծոյ էին բնական գիտութիւն աւրինաց, եւ այն իսկ կողոպտեաց զմարդկութիւնս զԱրարչին պաշտաւն ստեղծական տարերցս մատուցանել։* 6 *Եւ ապա դիմեցի ընդ աւրէնսն, ընդ որ հաճեալն էի, եւ նա ո՛չ զաւրեաց ապրեցուցանել զիս, այլ եւ սպան եւս զիս եւ կրկին էարկ ընդ դատապարտութեամբ անիծից։* 7 *»Արդ, ո՞յ ապրեցուսցէ զիս»՝ ի մէջ այսքան վտանկից տարակուսեալս, «այլ շնորհքն Աստուծոյ, ի ձեռն տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի» (Հռմ. է. 24-25)։*

ԺԸ. 1 |75բ| *Արդ, բազմադիմի են շնորհք պարգեւացն Աստուծոյ։* 2 *Զո՞ր արդեաւք նշանակէ յաւդիս՝ ասելով «շնորհն Աստուծոյ»։* 3 *Վասն զի յաւդն զնշանաւոր եւ զնախածանաւթ իրս ցուցանէ, որպէս այն՝ թէ՝ որ «էրն ի սկզ[բանէ]»*[2] *(Յվհ. Ա. 2), եւ «Դու ես Քրիստոսն» (Մտթ. ԺՁ. 16), եւ թէ «Ո՛չ ոք էլ յերկինս, եթէ ոչ որ էջն» (Յվհ. Գ. 13), եւ թէ «կոյսն յղասցի» (Եսայ. է. 14, Մտթ. Ա. 23), եւ՝ «Ես եմ հովիւն քաջ» (Յվհ. Ժ. 11), եւ այլս բազումս այսպիսիս։* 4 *Նոյնպէս եւ աստ, ասելն թէ «շնորհն Աստուծոյ», զերբեմն նշանակեալն եւ զյատկապէս նախատպաւորեալն ցուցանէ։* 5 *Եւ թէ՝ ո՞ր իցէ։*

ԺԹ. 4 *Ե՛կ երթիցուք յաւետարանական պատմութիւնսն աստուածային շնորհացն եւ սքանչելեացն, զի յորժամ է՛ր Տէրն բազմեալ ի տան փարիսեցւոյն, եկն կինն մեղաւոր, ունելով զշիշ եղոյն ազնուի, լայր եւ արտա-*

---

[1] *Ձ՝ իմաստութեան*

[2] *Ձ՝> որպէս... սկզբանէ*

սուաքն լուանայր զոտսն Յիսուսի, եւ հերովն ջնջէր եւ անուշահոտ ե-
ղովն աւծանէր, զոր տեսեալ փարիսեցւոյն, գայթակղի ի միտս. Սա եթէ
մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ[1] որպիսի ոք կին է[2], որ մերձենայ ի սա։
2 Իսկ քննողն գաղտնեաց եւ տեսողն խորհրդոց մտաց ասէ. «Սիմովն,
ունիմ ինչ ասել քեզ»։ 3 Եւ նա՛ ասէ. «Ասա՛, վարդապետ»։ 4 Ի մէջ բերէ
Տէրն զաւրինակ երկու պարտականացն, որոց պարտք միոյն եՃ. (500)
դահեկան, եւ միոյն՝ Ծ. (50)։ 5 Եւ իբրեւ ո՛չ գոյր նոցա հատուցանել՝ երկո-
ցունցն շնորհեաց։ 6 Արդ, ասա, ո՛ յերկոցունցն առաւել սիրեսցէ զՇնոր-
հաւղ պարտուցն»։ 7 Եւ ասէ Սիմոն. «Ինձ այսպէս թուի, թէ որում զբա-
զումն շնորհեաց»։ 8 Եւ ասէ տէրն. «Ուղի՛ղ դատեցար»։ 9 Եւ դարձեալ ի
կինն կողմ, ասէ. «Տեսանե՞ս զայս կին։ 10 |76ա| Մտի ի տուն քո, ջուր
ոտից իմոց ո՛չ ետուր, իսկ սա արտասուաւք իւրովք եթաց, եւ հերովն
ջնջեաց։ 11 Համբո՛յր մի դու ո՛չ ետուր, իսկ սա, յորմէ հետէ մտեալ է, ո՛չ
դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ։ 12 Դու լոկ եղով ո՛չ աւծէր, սա՛ եղով
անուշիւ աւծ։ 13 Վասն որոյ ասեմ քեզ. «Թողեալ լիցին սմա մեղք իւր բա-
զում, զի յոյժ սիրեաց»։ 14 Եւ ասէ ցկինն. «Թողեալ լիցին քեզ մեղք քո», եւ
թէ՝ «Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն» (տե՛ս Ղկ. է. 40-50)։

Ի. 1 Արդ, մի՛ ոք մեղադրեսցէ վասն ի հեռուստ ածելոյ զբանս, առ ի
ցուցանել զշնորհն Աստուծոյ, որով ապրեցաքն։ 2 Զի երկու պարտա-
պանքն յաւրինակ հրէից եւ հեթանոսաց գոլով, եւ հեթանոսք, վասն ոչ
ունելոյ աւրէնս, բազում դահեկանաց գտանէին պարտապանք հինգ հա-
րիւրից, եւ հրեայքն, վասն աւրէնս եւ մարգարէս ունելոյ, հիսունից էին
պարտապանք դահեկանի։ 3 Եւ զի՞նչ նշանակէ դահեկան գոլ պարտուցն,
որ է յոսկոյ, եւ ունի զպատկեր թագաւորի, վասն զի ամենեքեան, որք
յաստուածատեսակ նմանութիւն եւ ի պատկեր բարերութեան նորա ստեղ-
ծա՛ն, պարտական գտանի պահելն զսկզբնատպին նմանութիւն։ 4 Եւ յոր-
ժամ եկն ստեղծողն եւ թագաւորական պատկերին տպացուցանողն խնդ-
րել զպարտսն, ո՛չ ումէք գոյր հատուցանել։ 5 Ըստ առաքելոյ. «Ամե-
նեքեան նուազեալ են ի փառացն Աստուծոյ» (տե՛ս Հռմ. Գ. 23)։ 6 Յայտ է,
ի պատկերին պահպանութենէ. եւ արդարանան ձրի՛ նորին շնորհաւք ի
ձեռն փրկութեանն, որ ի Քրիստոս Յիսուս, զոր յառաջն եդ Աստուած ի
քաւութիւն, |76բ| ի ձեռն հաւատոցն՝ արեամբ նորա։ 7 Զոր եւ աստ աւրի-

[1] ձ՛> թէ
[2] ձ՛ կին էր

նակեաց Տէրն հաւատովք արդարանալ կնոջն մեղաւորի յաւրինակ ամենայն հեթանոսաց։ 8 *Ըստ որում եւ աստ ասէ. Այլ շնորհքն Աստուծոյ, որ եղեն առ կնոջն մեղաւորի, նոյն ի ձեռն աւազանին փրկեաց զիս յաւրինացն մեղաց, որ զաւրացեալ էր յանդամս իմ, եւ ի մահուանէ աւրինացն Մովսիսի, որ յանցաւորին մահու տայր հրաման։*

ԻԱ. 1 *Տե՛ս զառաւելութիւն շնորհացն Քրիստոսի, զի յաւրէնսն՝ մինչ ապաստան եղաք, ո՛չ կարաց ազատել, իսկ Քրիստոս, մինչ փախուցեալ էաք ի նմանէ՝ ազատեաց զմեզ։* 2 *Վասն որոյ մեծապէս յոգոց հանեալ, որպէս այր տառապեալ, չքաւորեալ յաւգնականութենէն եւ ապա գտեալ զՔրիստոսի աւգնականութիւնն, ասէ. «Այլ շնորհքն Աստուծոյ» փրկեցին զիս. աւրէնքն ո՛չ զաւրեցին, միտքն ո՛չ եղեւ բաւական փրկել։* 3 *Ապա ասէ. «Գոհանամ զԱստուծոյ, ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»* (**հմմտ. Հռմ. է. 25**)։ 4 *Եւ աստ եցոյց կարեւոր զգալուստ շնորհացն։* 5 *Եւ թէպէտ զՀաւրէ գոհանա, այլ պատճառ զՔրիստոս ցուցանէ այսր ամենայնի, ասելով. «Շնորհքն Աստուծոյ, որի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։* 6 *Վասն որոյ պա՛րտ է ապաւինել ի շնորհն, որ ի ձեռն հոգեւոր գնացից կեցուցանէ։* 7 *Եւ ապա դարձեալ զասացեալսն իւր վերստին հաստատելով, ասէ. «Ապա, ուրեմն, ե՛ս ինքնին մտաւք իմովք ծառայ եմ աւրինացն Աստուծոյ», վասնզի կամաւք եւ յաւժարութեամբ սիրեմ զնա, եւ ախորժեմ ի նոյն գնալ, «եւ մարմնով աւրինացն մեղաց»* (**Հռմ. է. 25**) *իբր ակամայ եւ անյաւժար ի նոյն քարշեալ։* 8 |77ա| *Ապա եւ զմխիթարականն հաստատէ զբանս, զի թէ այդպէս իցէ, որպէս ասացի, ապա ոչինչ դատապարտութիւն իցէ այնոցի՛կ, որ ի Քրիստոս, զի տեսանէ, թէ ըստ անձնիշխան կամացս ծառայ եմ աւրինացն Աստուծոյ, եւ այս՝ զի մարմնով ծառայ եմ աւրինաց մեղացն, ո՛չ ըստ նախայաւժար*[1] *կամաց, այլ ըստ ներհակ ներգործութեան կամացս։* 9 *Վասն որոյ անձնիշխան կամացս տկարութեան՝ աւգնեաց ի փրկելն եւ ո՛չ դատապարտէ։* 10 *Եւ ո՛չ միայն ի յանցելոց մեղացն փրկեաց զմեզ, այլ եւ յառաջակայիցն անընբռնելիս արար։* 11 *Վասն որոյ չիք դատապարտութիւն յաւրինացն, որ ի Քրիստոս Յիսուս, որ ո՛չ մարմնով գնան, այսինքն՝ որ ո՛չ մեղաւք վարին յետ մկրտութեանն, քանզի յառաջնումն ի մերմէ ծուլութենէ ընբռնեցաք ի մեղսն, մի դարձեալ յետ ընդունելոյ շնորհացն, ի նոյն ընկղմիցիմք։* 12 *«Քանզի աւրէնք հոգւոյն կենաց ազատեցին զիս յաւրինացն մեղաց եւ մահու»* (**տե՛ս Հռմ. Ը. 2**)։ 13 *Հոգւոյն աւրէնս զհոգին կոչէ, որպէս աւրէնք մեղացն զմեղս, զաւրէնսն հոգեւոր կոչեաց։*

---

[1] *Ա նախայաւժար*

14 Ըստ այնմ աւրէնքն հոգեւո՛ր են իսկ ես մարմնաւոր ընդ մեղաւք վաճառեալ։ 15 Եւ ասա՛ տ աւրէնս հոգւոյն, որ բաշխէ զշնորհսն որք ընդունին զնա։ 16 Իսկ «կենաց» ասելով զհոգեւոր աւրէնսն անջրպետեաց յաւրինացն մեղաց եւ մահու, ըստ այնմ, թէ՝ «Գիրն սպանանէ, բայց հոգին կեցուցանէ» (տե՛ս Բ. Կրնթ. Գ. 6)։ 17 Արդ, զի սաստկութիւն շնորհացն պատառեցին զմուրհակս ամենեցուն, ապա ո՛չ գոյ դատապարտութիւն այնոցիկ, որք ի Քրիստոս Յիսուս հաւատան։

ԻԲ. 1 |77բ| Արդ, հասարակաց լեալ[1] ասէ զմեր փրկութիւն ի Հաւրէ, ի ձեռն Քրիստոսի, եւ աւրինաւք Հոգւոյն։ 2 Եւ դարձեալ զՀայր եւ զՈրդի յիշէ, ասելով. «Զի, որ անհնարինն էր[2] աւրինացն, որով տկարանայրն մարմնով, Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց» (Հռմ. Ը. 3)։ 3 Եւ թէ զի՞նչ գործ էր աւրինացն, որոյ կատարումն անհնարին եղեւ, վասն տկարութեան մարմնոյ՝ տեսցուք նախ զգլխաւորագոյն դէմս աւրինացն եւ անտի՛ իմասցուք։

ԻԳ. 1 Արդ, չորք էին հիմն եւ արմատ, յորոց գործ աւրինացն զկատարումն առնոյր։ 2 Քահանայութիւնն եւ համաւրէն բազմութիւն ժողովրդեանն, եւ ընծայք պատարագացն, զոր տային ի ձեռս քահանայիցն, եւ տաճարն եւ սեղանքն, յոր նուիրէին զմատուցումն պատարագացն։ 3 Զի քահանայութիւնն միջնորդ էր կարգեալ յԱստուծոյ առ ժողովուրդն, եւ ժողովուրդն տային զպատարագս վասն մեղաց իւրեանց, եւ քահանայքն ընծայէին զայն նուէր հաշտութեանն Աստուծոյ, եւ Աստուած ընդունէր ի տաճարէն եւ ի սեղանոյն։ 4 Արդ, սոքա ամենեքեան, ասէ, տկարացան մարմնով, եւ անհնարին եղեւ ի ձեռն աւրինացն արդարանալ մարդկան։ 5 Զի եւ ինքն իսկ Մովսէս, որ բերողն էր աւրինացն, տկարացաւ ի վիմին, եւ կարաւտացաւ քաւութեան, որպէս մարմնաւոր։ 6 Տկա՛ր էին[3] եւ քահանայքն, զի կարաւտ էին նախ վասն իւրեանց յանցանացն մատուցանել պատարագ, եւ ապա վասն ժողովրդեանն։ 7 Եւ դարձեալ, զի ո՛չ էին կարող զմատուցեալսն կատարել։ 8 Վասն որոյ ամի ամի զնոյն պատարագ |78ա| մատուցանէին ցանկ։ 9 Նաեւ զոհքն եւ պատարագքն ո՛չ կարէին քաւել զմարդիկ։ 10 Է՞ր վասն։ 11 Զի տկարանային մարմնով, ոչ ունելով զկենդանական խառնուած հոգւոց մատուցողացն։ 12 Զի այսոքիկ երեքեան էին զանազանութիւնք պատարագաց նոցա։ 13 Առաջին. պանս բաղարջոյ եւ արմտիս, եւ պտուղս, որ յերկրէ։ 14 Երկրորդ. անասուն կենդանիս։ 15 Եր-

[1] ձ՝ > լեալ
[2] ձ՝ Ա է
[3] ձ՝ > էին

րո՛րդ. թռչունս թեւաւորս։ **16** *Եւ սոքա ըստ ինքեանց միայն մարմին էին լոկ եւ տկար, այլ տուաւ նոցա նշանակ առ ի զինքեանս մատուցանել Աստուծոյ, ընդ երկրաւոր պտղոցն եւ արմտեացն, զմաքրութիւն մարմնոյ իւրեանց պատարագեալ Աստուծոյ, որպէս յերկրէ։* **17** *Եւ ընդ զենման անասուն կենդանեացն զանասնական ախտսն սպանանել եւ զանմեղութիւն հոգւոցն տալ պատարագ Աստուծոյ, եւ ընդ թռչնոցն, հաւուց, տատրակաց եւ աղաւնեաց՝ զիմանալի մտացն արագութիւն եւ իմացումն, եւ սէրն, որ առ Աստուած՝ մատուցանել։* **18** *Եւ այս անհնարին եղեւ, վասնզի տկարանային մարմնով ի սպանումն մարմնական ախտից։* **19** *Վասն որոյ եւ մարգարէն Դաւիթ համաձայնեալ կանխասացութեամբն իւրով առաքելական բանիցս, զարմանայ ընդ սքանչելիս [եւ] խորհրդոցն Աստուծոյ*[1] *եւ ասէ. «Բազում արարեր դու տէր Աստուած մեր*[2] *զսք[անչելիս քո] եւ խոր[հրդոց քոց] ոչ ոք է որ նման [է Քեզ], պատմե՛ցի եւ խաւս[եցայ] եւ բազում եղեն, քան զթիւ»* **(Սղմս. ԼԹ. 6)**։

ԻԴ. 1 *Եւ զի՞նչ էին սքանչելի խորհուրդքն, զոր ասէ առ Աստուած, զի կամեցար կոչել առ քեզ զմարդկային բնութիւնս եւ մերձեցուցանել հոգւով, ո՛չ խնդրեցեր զնոյնն |78բ| ի սկզբանն, այլ խնդրեցեր զոհս եւ պանս բաղարջաց, եւ զենումն ոչխարաց։* **2** *Եւ յորժամ այնու վարժեցաք, ապա հոգւոյ մաքրութիւն խնդրեցեր, եւ առ սակաւ սակաւ զմեզ ի կատարելագոյնն ածեր։* **3** *Յաղագս այսորիկ ասէ. «Խորհրդոց քոց ո՛չ ոք է, որ նման է քեզ»։* **4** *Զի նշանաւքն, որ յԵգիպտոս, եւ զոհիւքն վեր ածեր զմեզ ի կատարեալ գիտութիւն բանական պաշտամանս։* **5** *Վասն որոյ ասէ ի նոյն կարգի՝ «Ընդ զոհս եւ ընդ պատարագս ոչ հաճեցար՝ մարմին հաստատեցեր ինձ»* **(տե՛ս Սղմս. ԼԹ. 7)**։ **6** *Այսինքն՝ զմարմնոյս կամացն սպանանելն խնդրեցեր յինէն, զոր միւս մեկնիչ ասէ. «Լսելիս հաստատեցեր ինձ»* **(Սղմս. ԼԹ. 7)**։ **7** *Ա՛յս է. զլսելութիւն քո պատուիրանացդ եւ ո՛չ զզենումն պատարագաց, որպէս ասաց Սամուէլ Սաւուղի. «Եթէ ո՛չ գիտես, թէ լա՛ւ է ունկնդրութիւն, քան զպատարագս»* **(տե՛ս Ա. Թգ. ԺԵ. 22)**։ **8** *Արդ, զոհիւքն եւ ողջակիզաւքն զայս առակեցեր խորհրդաբար, թէ՝ յորժամ մեղանչես՝ զմարմնոյդ կամս սպան՝ եւ քաւիս։* **9** *Իսկ տղայաբարոյն Իսրայէլ զզոհն իհարկէ աւրինացն տայր ձեռաւք, եւ հոգւոյն կամաւք հեռի՛ գտանէին յԱստուծոյ եւ աւտար։* **10** *Իսկ քո տեսեալ, թէ տկարացաք մեք ի յառնելն*

---

[1] *Ձ՛> աստուծոյ*
[2] *Ձ՛> աստուած մեր*

զմատուցումն պատարագացն՝ ըստ քո սքանչելի խորհրդոցդ, եւ ո՛չ կարացաք զմարմնոյ մեռելութիւն քեզ պատարագել, յայնժամ ասացեր բերանով պատգամախաւս մարգարէիցն, թէ՝ Ահաւասիկ գամ ես, զի ի գլուխս գրոց, որ է՛ Արարածքն, եւ յամենայն մարգարէս գրեալ է վասն Իմ, եւ ես գամ եւ Իմով մարմնով, զոր |79ա| զգենում, առնեմ զկամս քո՝ Աստուած Հայր, որով տկարացան մարդկային բնութիւնս մեր:

Իե. 1 *Եւ ա՛րդ, զի՞ ծառայեն աւրէնքն:* 2 *Վասն զի ի ձեռն ծառայի տուան, եւ ծառայ զծառայ ազատել ո՛չ կարէ. ճշմարիտ ազատութեանն Որդւոյ կարաւտացան:* 2 *Եւ ի բնէ՛ ո՛չ աւրէնքն տկար էին եւ ոչ մարմինս, այլ՝ մարմնաւոր խորհուրդքն, որ ի վաղնջուց յոգիս հնացեալ էին:* 3 *Արդ, տե՛ս զհամաձայնութիւն մարգարէին ընդ առաքելական բանիս:* 4 *Սա ասէ. «Որ անհնարինն էր աւրինացն, որով տկարանայրն մարմնով, Աստուած զՈրդին իւր առաք[եաց] (Հռմ. Ը. 3):* 5 *Եւ մարգարէն ասէ ի դիմացն Որդւոյ առ Հայր, եթէ «Ընդ զոհս եւ ընդ պատարագս, զոր մատուցանէին մարդիկ, ո՛չ հաճեցար. ահաւասիկ գամ ե՛ս առնել զկամս քո, Աստուած» (հմմտ. Սղմս. ԼԹ. 7-9) եւ լնում զգիրս աւրինաց եւ մարգարէից, եւ կատարեմ զաւրինակս նորին*[1]*:* 6 *Ա՛յս է ասելն, թէ՝ «Որ անհնարինն էր աւրինացն, որով տկարանայրն մարմնով, Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց»:*

Իզ. 1 *Արդ, ցուցաք, եթէ չորք էին, որք տկարացանն. քահանայքն՝ միջնորդք պատարագացն, եւ ժողովուրդն, որք տային զպատարագս ի ձեռն քահանայիցն, ինքեանք պատարագելի կենդանիքն, եւ նիւթքն՝ խորանն եւ սեղանն, որ ընդունէր զնոսա:* 2 *Վասն որոյ փոխանակ այսր ամենայնի, ասէ. «Աստուած զորդին իւր առաքեաց». յա՛յտ է՝ քահանայապետ եւ միջնորդ, ի նմանութիւն մարմնոյ մեղաց:* 3 *Այսինքն՝ իբրեւ զմատուցաւղ պատարագի իւրով մարմնովն, փոխանակ մեղաւոր մարմնոց մարդկան:* 4 *Եւ վասն մեղաց:* 5 *|79բ| Այսինքն՝ փոխանակ բազմաց անասնոցն, որք վասն մեղաց մատուցանէին, մի պատարագ եւ անմեղ զմարմինն մատուցեալ ի վերայ սեղանոյ աստուածութեանն համազաւր սմին:* 6 *Եւ յԵբրայեցւոց թղթին եւս պարզագոյն ճառէ, յորժամ վասն քահանայութեանցն եւ պատարագացն եւ խորանին եւ որ ի նմա սպասուցն եցոյց, ասէր. «Որք ոչ կարող էին ըստ միտս կատարել զպաշտամունսն, այլ կերակրովք եւ ըմբելաւք՝ պէս պէս մկրտութեամբքն, մարմնոյ արդարութեամբքն, որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային (տե՛ս Եբր. Թ. 9), եւ ապա ասէ. «Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոց բա-*

[1] *Ձ՛զօրինական որ ի նորս*

*րեացն» (*Եբր. Թ. 11*)։* 7 *Յա՛յտ է՝ փոխանակ հնոյ քահանայութեանն. «Մեծաւն եւ կատարելովն եւ անձեռագործ խորանաւն» (*Եբր. Թ. 11*)։* 8 *Այս փոխանակ խորանին եւ սպասուցն, որ ի նմա, ո՛չ արեամբ ցլուց եւ նոխազաց, այլ իւրով արեամբն այս փոխանակ պատարագացն։* 9 *Մի անգամ եմուտ ի սրբութիւնսն յաւիտենական գտեալ*[1] *զփրկութիւն. ա՛յս փոխանակ ամի ամի մատուցանելոյն եւ ո՛չ արդարացուցանելոյն։* 10 *Եւ աստ ասէ. «Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց»։* 11 *Եւ վասն այսորիկ ասաց «նմանութիւն մարմնոյ մեղաց», զի նման մեղաւո՛ր մարմնոյ էր, զի նոյն մերս էր բնութիւն, այլ ո՛չ մեղաւոր։* 12 *Ապա յա՛յտ է, թէ չէ՛ մարմինս չար, այլ մեղքն, զի որ առ զմերս մարմին, ո՛չ փոխեաց զբնութիւնն, այլ զնոյնն ուսոյց պատերազմող։* 13 *Վասն որոյ ասէ. «Դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ, զի արդարութիւն աւրինացն* |80ա| *կատարեսցի ի մեզ» (*Հռմ. Ը. 3-4*)։*

Իէ. 1 *Արդ, բե՛ր աստանաւր քննեսցուք երիս գլուխս զայսոսիկ։* 2 *Առաջին՝ թէ զի՞նչ են մեղք եւ որպէ՞ս եմուտ ի մարդկային բնութիւնս։* 3 *Երկրորդ. քանի՞ են գլխաւորական մասունք դատաստանի, որովք ընտրին իրաւունք ի մէջ դատախազացն։* 4 *Երրո՛րդ. որպիսի՞ յեղանակաւ դատապարտեաց Բանն Աստուած զմեղս ի մարմնի իւրում։* 5 *Արդ, տեսցուք զառաջին գլուխն, եթէ զի՞նչ են մեղք։* 6 *Մեղք ո՛չ գոյութիւն ինչ է, եւ ո՛չ էութիւն, եւ ոչ ի ստեղծմանէ գոլով ընտ բնութեանս, այլ առարկութիւն ինչ եւ եկամուտ, եւ աւելորդ մտեալ ի բնութիւնս։* 7 *Եւ թէ որպիսի՞ յեղանակաւ՝ յաւրինակ առցուք զտեսանելի գոյութիւն մարմնոյս։* 8 *Արդ, որպէս ի մարմնի բնաւորեալ է երիս իրս գեղեցիկ, զի մարմնոյ եւ ջլաց յարադրութիւն՝ զաւրութի՛ւն առնէ, ջերմոյ եւ ցրտոյ, ցամաքի եւ խոնաւի բարեխառնութիւն՝ առողջութիւն է։* 9 *Իսկ բարեչափութիւն անդամոց, հանդերձ վայելուչ գունով՝ գեղեցկութիւն առնէ։* 10 *Արդ, այսոքիկ բնաւորականք եւ բաղկացականք կոչին։* 11 *Իսկ անզաւրութիւն եւ հիւանդութիւն եւ տգեղութիւն՝ անբնականք եւ ո՛չ բաղկացելիք, այլ գեղեցկին եւ ազնուին պակասութիւնք։* 12 *Զի, որպէս քնարի միոյ աղոյն փոփոխումն անյարմարութիւն առնէ, եւ կենդանւոյն միոյ տարէր անհաւասարութիւնն՝ հիւանդութիւն, այսպէս տեսանել ի հոգւոյ եւ ի մարմնոյ կիրս միոյ ի բնականացն նուազելոյ եւ կամ յառաւելութենէ երեւեալ զմեղս։* 13 |80բ| *Եւ են բնակա՛նք այսոքիկ. մարմնոյ՝ քա՛ղց, ծարա՛ւ, աշխատութի՛ւն, քո՛ւն։* 14 *Իսկ հոգւոյն՝ ցասումն, ցանկութիւն, երկե[ւ]ղ եւ տրտմութիւն, եւ խոկումն եւ հոգք։* 15 *Այսոքիկ բնականք կոչին, զի անդէն ի ստեղծմանն*

[1] *Ձ գիտել] գտեալ*

գոյր ի նախաստեղծ մարդումն։ **16** *Արդ, այսոքիկ բնականքս, ի ձեռն իշխան առաջնորդի մտացն, յերկուս կողմանս հակամիտին՝ յարձակմամբ ցանկութեանն։* **17** *Եւ ասի. «Մինն հոգւոյն, եւ մինն մեղաց. ըստ այնմ՝ աւրէնք հոգւոյն կենաց ազատեցին զիս յաւրինացն մեղաց եւ մահու»։* **18** *Եւ այսպէ՛ս լինի*[1]*։* **19** *Տրտմութիւնն, որ է՛ բնական, եւ ո՛չ մահու կամ ապականութեան ի ներքս ածաւղ, այլ յորժամ ըստ աշխարհի լինի տրտմութիւնն՝ գործէ զմահ։* **20** *Իսկ, որ ըստ Աստուծոյն լինի տրտմութիւն անզղջականին՝ հանդիպի*[2] *ուրախութեան։* **21** *Նոյնպէս ուտելն եւ ըմբելն որկորստութեամբ դսրովի։* **22** *Իսկ յաստուածային փառացն սեղան բարեբանի։* **23** *Ըստ այնմ՝ «Եթէ ուտիցէք, եթէ ընբիցէք, զամենայնն ի փառս Աստուծոյ արասջիք (տե՛ս Ա. Կրնթ. Ժ. 31)։* **24** *Նմանապէս եւ զայլսն ամենայն, զի ոգի եւ մարմին ծառա՛յ են այնպիսի կարեաց, որ ի մեղս տանի եւ որ արտաքոյ մեղաց։*

ԻԸ. **1** *Արդ, յայս բնաւորականքս, որ ի ստեղծմանէ արաչութեանն եւ յաստուածահրաման պատուիրանաւք աւրինադրեալքս կալ եւ մնալ, ուղղութի՛ւն է եւ արդարութիւն եւ կիրք կենդանական։* **2** *Իսկ անցանելն ընդ սոքաւք, առաւելութեամբ կամ նուազութեամբ, մեղք առասին յանգոյից եւ յոչ էից, ի պակասմանէ բարւոյն եւ յանկարգութենէ բնականին երեւեալ։* **3** *Վասն որոյ, յառաւելութենէ |81ա| Սողոմոն զգուշացուցանէ՝ ասելով. «Ամենայն բանք Աստուծոյ ընտրեալ են եւ վերակացու լինի ինքն երկեղածաց իւրոց. մի՛ յաւելուցուս ի բանս նորա, զի մի՛ յանդիմանեսցէ զքեզ եւ սուտ լինիցիս» (Առակ. Լ. 5-6) որպէս եւ հրեայքն յաւելին զաւանդութիւն ծերոցն յաստուածադիր աւրէնսն, եւ որպէս սուտս յանդիմանեցան ի Քրիստոսէ։* **4** *Իսկ ի պակասելոյն Տէրն զգուշացոյց. «Որ ոք լուծցէ մի՛ ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, եւ ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից» (Մտթ. Ե. 19)։* **5** *Ո՞չ է տարադէպ եւ աստուածաշունչ բանիցս վկայութիւն առնուլ եւ զբանս Ողոմպիոդորոսի փիլիսոփայի, որ ասացն. «Եթէ սքանչելի՛ իմն հնարս եգիտ բնութիւնս, նուազութիւն հարստացեալ, եւ հարստութիւն կեղծաւորեալ զնուազութիւն, զի առաւելուլ բառիւք զսահմանն նուազեն իրք գոյացութեանն, եւ ի պակասել բառիցն՝ առաւելուն»։* **6** *Այսպէս եւ յաստուածադիր սահմանս աւրինացն եթէ պակասեցուսցէ ոք՝ յաւելո՛ւ յանձն իւր զանիրաւութիւն, եւ եթէ յաւելու՝ պակասեցուցանէ՛ յանձնաւորական բարութիւնսն, որպէս եւ նախնի մարդն աստուածաստեղծ պակասեցոյց*

---

[1] *Ձ այսպէս է*
[2] *Ձ լինի] հանդիպի*

զաստուածադիր սահմանս աւրինացն, եւ յաւել ընդ բոլոր պտուղս տնկոցն զհրաժարեցուցեալն պտուղ ճաշակել։ **7** *Եւ այսպէս, ի բնաւորականսն իւր*[1] *ի ստեղծման, զոր ուղիղ եւ արդարապէս ունէր յառաւելուլն եւ ի պակասելն, կորոյս զբնական բարիսն իւր զչորք սեռականսս զայսոսիկ, զանմեղութիւն եւ զանմահ|81բ|ութիւն, զաստուածային աւրհնութեանն շնորհ, եւ զիշխանական տէրութիւնն, եւ անկաւ ընդ մեղաց եւ ընդ մահու ծառայութեամբ, զրկեալ ի վեհ եւ յիշխանական տէրութենէն եւ յաւրհնութենէն, եւ անկաւ ընդ ապականութեամբ ախտից զանազան կրից, եւ մատնեցաւ հողոյ եւ գերեզմանի, ուր եղեւ ապականութիւն մարմնոյ։* **8** *Արդ, այսոքիկ, թէ որպէ՞ս եմուտ մեղք ի բնութիւնս առթելով բանսարկուին, եւ որպէ՞ս թիւրեաց զուղղութիւն բնութեանս։*

ԻԹ. 1 *Արդ, տեսցուք եւ զերկրորդ գլուխն, եթէ քանի՞ են մասունք դատաստանի, որովք արդարարդատն Աստուած արար մեզ իրաւունս եւ արդարութիւն։* **2** *Եւ են սոքա վեց։* **3** *Առաջին՝ գլուխ եւ նիւթ դատաստանի է աւրէնսդրականն, այսինքն՝ աւրէնք պատուիրանի յիմաստնոյ ումեքէ եղեալ, որովք պահեն դատաւորքն զիրաւացին առ հաւանեալսն։* **4** *Երկրորդ. դատաւորական իշխանութիւնն։* **5** *Երրորդ. տեղի դատաստանի։* **6** *Չորրորդ. ինքն*[2] *իսկ իրաւունք դատաստանին. եւ երկոքեան սոքա միմեամբք կոչին, վասնզի դատաստան յիրէ՛ եւ ի տեղւոջէ բաղկանա։* **7** *Յիրէ՛, որ է դա՛տ, այսինքն՝ քննել, եւ տեղւոյ, որ է՛ աստան, որպէս եւ տեղի բնակութեան ազգաց կոչին՝ Հայաստան կամ Ասորեստան։* **8** *Հինգերորդ. դատելոցն անձինք, որ զնիւթոյ տեղի ունին առ դատողականն։* **9** *Վեցերո՛րդ. դատախազքն, վասն զի ի դատաւորէ քննաւղէ՛ եւ ի դատախազաց ի տեղւոջ ուրէք յաւրինին իրք դատաստանի։*

Լ. 1 *Արդ, այսոքիւք վեց մասամբք գլխաւոր|82ա|ականաւք. Բանն Աստուած դատապարտեաց զմեղս մարդկան ի մարմնի իւրում (Հռմ. Ը. 3)։* **2** *Աւրէնսդրականաւն, զի ասաց՝ «Որպէս պատուիրեաց ինձ Հայր, այնպէ՛ս գնացից եւ այնպէ՛ս արարից» (Յվհ. ԺԴ. 31)։* **3** *Իսկ դատաւորութեամբ, զի ասաց. «Ի դատաստան եկի յաշխարհս յայս» (Յվհ. Թ. 39)։* **4** *Իսկ տեղի դատաստանին, զոր Տէրն*[3] *«աշխարհս» ասաց եւ առաքեալն՝ «ի մարմնի» այլեւ՝ խաչն, յորում բարձրացաւ։* **5** *Իսկ իրաւունք դատաստանին, զի ասաց. «Որք ո՛չ տեսանեն տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին» (Յվհ. Թ. 39), եւ թէ «Իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս,*

---

[1] *ձ՛> իւր*
[2] *ձ՛> ինքն*
[3] *ձ՛> տէր*

եւ ի բարձրանալն զամենիսեան ձգեցից առ իս» (տե՛ս **Յվհ. ԺԲ. 31-32***):*
6 *Իսկ երկու կողմք դատախազաց մարդիկ եւ բանսարկուն, որ է սպանողն մարդկային բնութեանս, զոր Տէրն ասաց. «Նա՛ ի սկզբանէ մարդասպան է» (տե՛ս* **Յվհ. Ը. 44***):* **7** *Արդ, այսոքիկ դատաստանին իրողութիւնք, որով դատապարտեաց զմեղս ի մարմնի՛ անդ, զդատախազն կենաց մերոց ցուցեալ պատճառս մերոց յանցանացն, եւ անմեղ բնութեանս ապականիչ մեղաւք:*

ԼԱ. **1** *Եկեսցուք եւ յերրորդ գլուխն, եթէ զայնոսիկ, որ ոչ էր ի ստեղծմանէ եւ ոչ գոյութիւն ինչ, եւ ծնաւ ի բնականացն հակառակ բնութեանս եւ կոչեցաւ աւրէնք մեղացն, որպէս դատապարտեաց Քրիստոս ի մարմնի իւրում:* **2** *Վասն որոյ ասասցուք, եթէ Աստուած Բանն չորիւք յեղանակաւք կատարեաց զխորհուրդ տնաւրէնութեանն իւրոյ ի դատապարտութիւն մահու եւ մեղաց. բարերարութեամբ եւ արդարութեամբ, իմաստութեամբ եւ զաւրութեամբ:* **3** *Բարերարութեամբ, զի ո՛չ անտես արար զստեղծո|82բ|ածն իւր, այլ ձեռն ետ ի վերայ անգելոյն եւ յարոյց, եւ զայն, որ ի պատկեր բարերարութեանն իւրոյ արար յառաջնումն, ի պատկեր եւ ի նմանութիւն նորա լինի յերկրորդումս:* **4** *Իսկ արդարութիւն, զի մարդ յաղթեալ գոլով, ո՛չ զայլ ոք յաղթող արար իւրում յաղթողին, եւ ո՛չ բռնութեամբ յափշտակեաց ի մահուանէ զմարդ, այլ զայն, որ ի ձեռն մեղաց ծառայ իւր արար մահ:* **5** *Զսա Բարերարն եւ Արդարն դարձեալ*[1] *յաղթող եցոյց, եւ նմանեաւն զնմանն վերակոչեաց:* **6** *Իսկ իմաստութիւն, զի եգիտ կապելոյն հնարս լուծման, զի անժամանակ Որդին Հաւր էջ ի բարձրութենէ իւրմէ ի խոնարհութիւնս մեր եւ կերպարանն Հաւր զկերպարանս ծառայի էառ (հմմտ.* **Փլպ. Բ. 7***), եւ որ կատարեալ Աստուած էր, կատարեալ մարդ եղեւ:* **7** *Եւ զաւրութիւն, զի ճշմարտապէս մարդ եղեալ ի Կուսէն, եւ մայրն կո՛յս մնալով եւ զմարդկեղէն բնութիւնս միաւորեալ ընդ աստուածայինն, եւ յիւրումն*[2] *անփոփոխելի մնացեալ, եւ զամենայնն կրեալ զմարդկայինս կիրք զբնականսն, որ ի ստեղծմանէ ի վեր քան զմարդ, եւ այսպէս դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ:*

ԼԲ. **1** *Եւ զի՞նչ էին կիրքն մարդկային, զոր կրեաց. յղութի՛ւն, ծնո՛ւնդ, աճո՛ւմն, քա՛ղց, ծարա՛ւ, վաստակե՛լ, ննջե՛լ. այսոքիկ մարմնոյն:* **2** *Իսկ հոգւոյ՝ ցասումն, ցանկութիւն, երկե՛ղ, տրտմութիւն, հոգալ:* **3** *Արդ, զայս ամենայն զմերսն կիրս, որ են անպարսաւք, որովք ի դէ՛պ էր մեզ բարեկրիլ՝ կրեաց բարերարն զմարմնոյ բնութիւն, եւ զհոգւոյ ճշմարիտ ցուցա-*

---

[1] *ձ՝> դարձեալ*
[2] *ձ՝ յիւրումն աստուածայինն*

նելով։ **4** *Եւ զաւելորդն, զոր խառն|83ա|եաց ի բնութիւնս, սկզբնաչարն եւ հայրն մեղաց, ո՛չ ետ թոյլ խառնել ի բնաւորականսն։* **5** *Եւ այսպէս դատապարտեաց զմեղս իւր անմեղ մարմնովն։* **6** *Վասն զի Միածինն Հաւր, Բանն Աստուած առաքեցաւ յԱստուծոյ Հաւրէ եւ իջեալ յարգանդ Սրբոյ կուսին Մարիամու, լինելով ի նմանէ մարդ ճշմարիտ եւ անյեղաբար զհայրականն ո՛չ թափուր թողեալ զփառաց աթոռ, գտանի՛ր նոյն ինքն լիապէս եւ յարգանդ Կուսին։*

ԼԴ. **1** *Երիս իրս հրաշափառագոյն գործեալ ի յղութեանն. միանգամայն առումն եւ յէութիւն գալ եւ աստուածանալ մարմնոյն ի բանէն։* **2** *Եւ յայսցանէ իմանի Աստուածածին սուրբ Կոյսն Մարիամ ո՛չ միայն յաղագս բնութեամբ Աստուածն գոլ բանին բնակեցելոյ ի նմա, այլեւ վասն աստուածանալոյ մարդկութեանն ի նմա որոց վաղվաղակի յղութի՛ւն եւ էութի՛ւն եւ Աստուածութիւն աքանչելագործի ի յղութիւն Բանին Աստուծոյ։* **3** *Իսկ մարմնոյն՝ ի նոյն անձն բանին էութիւն եւ աստուածութիւն ի մաւրէն Աստուծոյ ի վեր, քան զբնութիւնս, շնորհելով զստեղծումն Ստեղծողին եւ զմարդանալն Աստուծոյ եւ Արարչին արարածոց, որ աստուածացոյց զառեալն եւ կենդանի պահեաց զմիաւորեալն ընդ ինքն, յորոց եղեալ էր միաւորութիւնն ի մի դէմս, եւ առանձնաւորութիւն եւ բնութիւն։* **4** *Եւ զի զբոլորն զմարդն, եւ ո՛չ զմարմինն եւ եթէ*[1] *կամէր կեցուցանել՝ զբովանդակն զգենու. մարմի՛ն, հոգի՛ եւ մի՛տս, եւ լինի ամենայն ինչ մարդ, բա՛յց ի մեղաց, ո՛չ ի մարդ բնակէ, այլ մարդ լինի, ըստ Յոհաննու ձայնին. «Բանն մարմին եղեւ» (* **Յվհ. Ա. 14** *) ո՛չ կողոպտեալ կամ նուաստացեալ աստուածայինն բնութիւն ի լինելն մարդ, եւ ո՛չ զմարդկութիւնն եւ զորս |83բ| ըստ մեզ ասել բնութեանն բարձեալ ինչ ի միջոյ։* **5** *Վասն որոյ ճշմարտապէս մարդ միանգամայն եւ Աստուած. ո՛չ այլեւայլ դէմք կամ բնութիւն, թէպէտ եւ ո՛չ համաբունք կամ նոյնագոյնք. ո՛չ սկիզբն առեալ աստուածութեանն, այլ մարդկութեանն, սակայն մի՛ եւ նոյն, քանզի նոյն ըստ աստուածութեանն անե՛ղ, իսկ ըստ մարդկութեանն՝ եղեալ ի կնոջէ։* **6** *Այս ի լրման ժամանակաց, իսկ այն՝ նախքան զժամանակս եւ զյաւիտեան։*

ԼԴ. **1** *Անճառ՝ ի Հաւրէ, անմարմնական ծննդեամբ, անճառ ի մաւրէ՝ ըստ կուսական ծննդեանն. անպատմելի՝ ըստ անեղութեանն, անպատմելի եւ ըստ եղելութեանն, աստուածավայելուչ առաջին ծնունդն, ո՛չ մարդկավայելուչ եւ երկրորդն, քանզի «Ո՞ պատմեսցէ զազգատոհմէ» (տե՛ս Եսայ. ԾԳ. 8) անհաւրն եւ անմաւրն։* **2** *Եղեւ մարդ, զի արասցէ Աս-*

[1] *Ձ՛ եւ եթէ ոչ*

տուած զորդիս մարդկան։ 3 *Ծնաւ այր ի կնոջէ, առ ի փոխարինել զպարտս առաջնոյն Ադամայ՝ կի՛ն յառնէ ծնեալ, այլեւ զախտաւոր խառնիցն խափանել զորդեծնութիւն՝ ծնանելովն ի կուսէն, եւ զկուսութիւն ծնաւղին անարատ պահելով, զի զծնունդն աւրհնեսցէ յանիծից եւ զկուսութիւնն նախապատուեսցէ։* 4 *Թլփատեցաւ ութաւրեայ, զի զուխտն, որ ընդ հարսն կատարեսցէ եւ մեզ ուսուսցէ՝ թլփատութիւն սրտի հոգեւորապէս։* 5 *Ընծայեցաւ քառասունաւրեայ ի տաճարին, զի մարդկային բնութիւնս ինքեամբ ընծայեսցէ Հաւր ի բարձունս։* 6 *Յամբ թեթեւ նստեալ ի գիրկս կուսին գնալով յԵգիպտոս, զի մայրաքաղաք կռապաշտութեանն՝ տեղի աստուածպաշտութեան արասցէ,* |84ա| *եւ զմեզ խրատեսցէ յաւժարութեամբ փախչիլ ընդ նմա հալածանաւք։* 7 *Աճեաց հասակաւ՝ զհակառակն աճելութեանս, արտաքս մղեաց ի բնութենէս գնուազութիւն, կատարելահասակս զմեզ նորոգելով յանվախճան ի կեանսն։* 8 *Յանձն էառ կերակրաւք եւ ընբելեաւք սնանիլ, ընդ ձեռն որոյ մեզ զհոգեկան կերակուրն ջամբեցուսցէ ի հանդերձեալսն։* 9 *Աղքատացաւ մարմնով, զի զմեզ իւրով աստուածութեամբն ճոխացուսցէ։* 10 *Մկրտեցաւ ի Յորդանանն ի Յովաննէ, զի զջուրսն սրբեսցէ եւ զհնութիւն մեղացն ի նմա ընկղմեսցէ եւ զհոգեւորականն մեզ տացէ մկրտութիւն, ըստ վկայելոյն Յովաննու, թէ՝ «Նա մկրտեսցէ զձեզ ի հոգին սուրբ եւ ի հուր»* (**տե՛ս Յվհ. Ա. 33**)։ 11 *Եւ զառաջին աւրինակ անախտ աճմանն ի մեզ դարձուսցէ։*

Լե. 1 *Փորձեցաւ եւ յաղթեաց փորձողին մարդկան երիւք փորձանաւք, որով զուարճանայր նախահայրն յաղթել կարացել ի փորձելն, զի նոյն թուով փորձանաւքն հնոյն Ադամայ մարտեաւ ընդ նորոյս որկորստութեամբ, զի ցանկալի՛ եցոյց զպտուղն։* 2 *Փառասիրութեամբ, զի յետ ուտելոյն յոյս ետ աստուածանալոյ։* 3 *Ագահութեամբ, զի ո՛չ ետ բաւական համարել զամենայն ծառոցն վայելս, այլեւ ի միոյ հրաժարեցելոյն ստիպեաց ուտել։*

Լզ. 1 *Արդ, նոքումք մարտեաւ եւ ընդ նորոյս Ադամայ, որ յետ քառասուն աւուրն եցոյց զինքն քաղցեալ եւ այն եղեւ բանսարկուին իբրեւ զկերակուր պատեալ զկարթիւ, զի կլցէ զնա փորձանաւքն՝ իբրեւ զմարդ եւ ընբռնեսցի ի քիմս նորա, եւ լիցի որպէս յԱստուծոյ կործանեալ եւ յաղթահարեալ։* 2 |84բ| *Վասն որոյ յառաջ մատուցեալ ասէ. «Ասա՛ քարիս այսմիկ, զի հա՛ց լիցի։* 3 *Իսկ Տէրն պատասխանէ. «Ո՛չ հացիւ միայն կերակրիլ մարդոյ ըստ մարմնոյ, այլեւ աննիւթական բանիւ բերանոյ Աստուծոյ*[1] *ըստ հոգւոյ։* 4 *Ապա փառասիրութեամբ արկ զքեզ աստի ի վայր։* 5 *Իսկ Տէրն խոնարհութեամբ պատասխանեալ, գրեալ է. «Ո՛չ փորձեսցես*

[1] *ձ՛> աստուծոյ*

զՏէր Աստուած քո։ 6 Եւ ապա՛ ագահութեամբ քեզ տաց զամենայն փառս աշխարհիս, եթէ անգեալ երկիրպագանիցես ինձ։ 7 Իսկ Տէրն տիրաբա՛ր սաստէ. «Երթ յետս իմ, սատանայ» (**հմմտ. Մտթ. Դ. 3-10, Ղկ. Դ. 3-12**) վասն զի զարարածս Հաւր Բանին Աստուծոյ իւր անուանէր, վասն որոյ քաղցեաւ եւ ժուժկալեաց՝ բժշկելով զանժամ ցանկութիւն ճաշակելոյ նախամաւրն, յորմէ պատուիրազանցութիւնն։ 8 Ծարաւեցաւ եւ նովաւ պարգեւեաց մեզ զջուրն կենդանի։ 9 Աշխատեցաւ ի ճանապարհի, զի բարձցէ՛ ի մէնջ զտաժանաւոր կենացս այսոցիկ[1] զհայթայթանս։ 10 Ննջեա՛ց եւ արթնութեամբ հրամանատրէ հողմոց։ 11 Անգիտացաւ՝ զի զգացուցանելոց է անմոլար առ յապա զգիտութիւն բնութեանս։ 12 Տրտմեցաւ՝ զտրտմութիւնն մեր յուրախութիւն դարձուցանելով վերստին ի ներքս տանելով զոր կորուսաք զփափկականն։ 13 Աղաւթէ իմով բնութեամբս առ Հայր, զի յառաջինն դարձուսցէ ի փառս, եւ զամենեցունց աղաւթս, որ անշունչ կռոցն ինքեամբ Հաւր ընծայեսցէ, եւ զի տացէ աւրինակ աղաւթել եւ մեզ՝ ի փորձութեան մերում։ 14 Արտասուեաց՝ հատանելով զամենայն արտաւսր յամենայն երեսաց։ 15 |85ա| Երկեաւ, զի զերկեղն լուծցէ զմահու։ 16 Քրտնեցաւ, զի զքիրտն երեսաց մերոց ջնջեսցէ։ 17 Ի ծունկս իջանէ, զի զծունկս կթոտս ի ծառն ընթացմամբ հաստատեսցէ։ 18 Համբառնայ զձեռս, զի զձգումն ձեռինն ի պտուղն՝ բժշկեսցէ։ 19 Ելդ ծունր, զի զերկնայինսն ի յերկրաւորս խոնարհեցուսցէ։ 20 Եւ վե՛ր առնլով գլխոյն՝ զերկրաւորսս ընդ երկնայինսն դասեսցէ։ 21 Ածաւ յատեանս դատաւորաց թագաւորն արարածոց, զի զմեզ ի դատապարտութենէ զերծուսցէ։ 22 Ապտակեցաւ ի ծառայից կռփեալ, զի հարցէ ուժգին զթշնամին, եւ հրամայեալ հաւատացելոց, զի ծառայեցուսցեն զբանսարկուն։

Լէ. 1 Եւ այսպէս զմարդկայինս կրեալ մարմնով զմարմնոյ կիրս, եւ հոգւով զհոգւոյ, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում, եւ բարձեալ զնա ի մէնջ եւ զորս ծնունդ էին մեղացն, որ են այսոքիկ. անէ՛ծք եւ մա՛հ եւ ապականութիւն։ 2 Արդ յայսցանէ է՛, որ բանսարկուին էր սերմանք։ 3 Եւ դարձեալ ի մէնջ էառ սկզբնաւորութիւն։ 4 Եւ է՛, որ աստուածային բարկութեանն է պատուհաս։ 5 Քանզի մեղքն է գի՛ւտ բանսարկուին, եւ յաղագս պատուիրանազանցութեանն ի մէնջ էառ սկիզբն առթելով բնութեանս։ 6 Իսկ անէծք եւ մահ յԱրարչէն եդան պատուհաս ի վերայ։ 7 Իսկ ապականու<ու>թիւնք հետեւանք մահու ո՛չ ի մէնջ եւ ո՛չ յԱրարչէն, այլ որս գտեալ իւր զբնութիւնս եւ կերակուր, վասն անգանելոյն ընդ մահուամբ։

---

[1] Ձ կենցաղոյս այսորիկ

ԼԸ. 1 *Արդ, արարիչն զոր եդ ի վերայ մարդոյն պատուհաս, յաղագս մեղանացն ի մարմնի իւրում* |85բ| *կրեալ էսպան, որ են այսոքիկ. անէծք երկանցն, եւ փուշ եւ տատասկ բուսուսցէ երկիր, եւ քրտամբք երեսաց ուտել զհաց, եւ դառնալ ի հո՛ղ, ուստի առաւ։* **2** *Իսկ զմեղս եւ զապականութիւն, յոր ոչ էր իւր ինքեան եդեալ ի բնութիւնս, եւ ո՛չ հպեալ ի նոսին տեսանի, վասն զի զմեղս բանսարկուն արար, եւ նա՛ է հաստիչ յանցանաց։* **3** *Վասն այնորիկ անդուստ յորովայնէ դատապարտէ զնա ի մարմնի իւրում, եւ ո՛չ տայր թոյլ մերձենալ յաստուածախառն մարմինն։* **4** *Իսկ ի պատուհասէ անտի եդեալ մահուն ո՛չ հրաժարէ ճաշակել, որպէս բժիշկք ի դեղոյ, զոր կազմեն հիւանդաց։* **5** *Իսկ զերկանցն պատուհաս՝ ի ձեռն երկանցն եբարձ յայրին ի Բեթմէէմ, ուր է գերեզման նախամաւրն։* **6** *Իսկ զմեղս հասարակաց ազգի մարդկան, որ են խայթոց մահու եւ դժոխոց՝ ի վերայ երկրի դատապարտեալ եբարձ, ասելով ցանդամալոյծն. «Թողեալ լիցին քեզ մեղք քո»* (**Մրկ. Բ. 5**)։ **7** *Եւ եւ մեզ իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն զաւրութիւն թշնամոյն։* **8** *Եւ ասաց առաքելոցն*[1]*, թէ*[2]*՝ «Որում թողուցուք զմեղս յերկրի՝ թողեալ լիցի»* (**հմմտ. Յվհ. Ի. 23**)։ **9** *Իսկ զանիծիցն բարձումն՝ ի վերայ փայտին արար, բեւեռելով ի խաչին*[3]*, ըստ Առաքելոյ, եւ զգիր պարտաւորութեանն մերոյ պատառեաց՝ յանիծից աւրինացն գնելով զմեզ։* **10** *Իսկ զապականութեան քակտումն ի գերեզմանին արար, դնելով ի գերեզմանի, ուր ապականեցաւ մարմին մարդոյն, յորում եդաւ Տէրն եւ զապականութիւն մեր յանապականութիւն դարձոյց։* **11** *Իսկ զմահու լուծումն ի դժոխս արար, ուր արգելեալ* |86ա| *կային ընդ կապանաւք ամենայն հոգիք։* **12** *Լուծեալ զերկունս մահու եւ ազատեալ զամենեսեան եւ այսպէս դատապարտեաց զմեզս ի մարմնի իւրում յամենայն տեղիս, ուր դատապարտէր զբնութիւնս սատանայ, զամենեսեան դատարան գործեալ, յամենայնի դատապարտեաց զնա արդար իրաւամբք դատաստանի, եւ զարդարութիւն աւրինացն կատարեաց ի մեզ։*

---

[1] *ձ՝ պետրոսի] առաքելոցն*
[2] *ձ՝ > թէ*
[3] *ձ՝ ի վերայ խաչին*

Թ.

|86ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ԲԱՆՆ ԱՌԱՔԵԼՈՅ, ՈՐ ԱՍԷ. «ԱՄԵՆԱՅՆ ԱՆՁՆ, ՈՐ ԸՆԴ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ Է, Ի ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԿԱՑՑԷ» (ՀՌՄ. ԺԳ. Ա.), ՅԱՒՈՒՐՆ ՅՈՐՈՒՄ ԱՒՐՀՆԵՑԱՆ ՁԻԱՒՈՐՔ ԱՐՔԱՅՈՐԴԻՔՆ ՄԵՐ ՀԵԹՈՒՄ ԵՒ ԹՈՐՈՍ ԵՒ ԱՅԼ ՄԱՆԳՈՒՆՔ ԻՇԽԱՆԱՑ, ԵՒ ՈՐՔ ՅԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՒՈՐԱՑՆ

1283 թվականին Տիրոջ հայտնության տոնի առիթով Կիլիկյան արքունիքում տեղի են ունենում ճոխ հանդիսություններ, որոնց միջոցին Լեւոն Գ. թագավորը ձիավորական (ասպետական) օրհնություն է պարգեւում իր Հեթում եւ Թորոս որդիներին, ինչպես եւ բազմաթիվ այլ երիտասարդների՝ «մանկանցն իշխանաց եւ արքունական սպասաւորացն»:

Հանդիսությունների մասնակից Հովհաննես Երզնկացին թագավորից եւ Հակոբ Կլայեցի կաթողիկոսից պատվեր է ստանում («հրամայեցաւ ի վերից») ճառ արտասանելու, ինչը մեկ անգամ եւս փաստում է Երզնկացու մեծ հոչակի ու հեղինակության մասին:

Այս նշանավոր ճառում եւս, ինչպես եւ այլ առիթներով, Երզնկացին հանգամանալից շարադրում է իր մտքերը պետության ամրապնդման, դասային հարաբերությունների, տիրոջ ու ծառայի փոխկապակցված շահերի եւ այդ հարաբերությունները ավելի տանելի ու կողմերի համար ընդունելի դարձնելու վերաբերյալ:

Ի թիվս պատմագիտական արժեք ներկայացնող այլ տեղեկությունների, ճառում ուշագրավ փաստեր կան Լեւոն Գ. արքայի գահակալության շրջանում Կիլիկյան հայկական բանակում «ընդ եկեղեցւոյ» կազմավորվող ռազմական նոր միավորումների մասին, որոնք մեր համոզմամբ նպատակ էին հետապնդում ոչ միայն հայկական այլ իշխանությունների, այլեւ օտարադավան իշխանությունների ներքո ծառայող հայ զորական ուժերի համախմբման՝ ընդդեմ օրավուր սպառնալից դարձող եգիպտական եւ Իկոնիայի սուլթանության հարձակումների[1]:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 86ա-101ա) եւ 2854 (Ճ. 119ա-122ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Յարաժամ բաղձանաւք եւ նորալուրն եւ նորատեսն եւ նորագործն սիրելի եւ ախորժական է լինել մարդկային բնութեանս եւ պատահեցելոցն այսմ, այլ յայլմէ թուին լինել այսմ ըստ մտացն նորագիւտ իրագործութեամբն բերկրեալ:* **2** *Եւ այս ո՛չ պարզագունացն եւեթ եւ ռամկական ժողովոց, այլեւ իմաստայեղծ բազմահմուտ արանց, որպէս եւ է*

[1] *Մանրամասները տե՛ս* Է. Բաղդասարյան. *Հովհաննես Երզնկացին Կիլիկիայի զինվորական կազմակերպությունների մասին.- «Բանբեր Մատենադարանի», 16, Երեւան, 1994, էջ 44-55:*

ուսանել զայս յատտիկեցւոցն հանդիսարանս եւ ի նոցա վարժանոցսն, որով եւ պարծէինն իսկ, ո՛չ յայլ ինչ աթենացւոցն պարապել, բայց ասել ինչ նորագոյնս եւ կամ լսել։ **3** *Եւ զայս բնաւորական իմն կարծեմ զաւրութիւն ի մեզ հաստատեալ, որպէս եւ ասէ իմաստունն. «Ո՛չ լցցի ակն տեսանելով եւ ոչ ունկն լսելով»* (**Ժղվ. Ա. 8**) *եւ երկիր ո՛չ յագի ջրով, եւ հուր եւ ջուր* |86բ| *ո՛չ երբէք ասեն շատ, վասն զի միշտ կարաւտ եմք բնութեամբ տեսանել աչաւք զգեղեցկութիւն զարդուց, որ յարարածս Աստուծոյ, եւ լսել ականջաւք զլուր սքանչելի գործոց Արարչին, եւ բանական երկիրս մեր ո՛չ յագի այսպիսի*[1] *ջուրցս գետոց ոռոգմամբ, եւ ոչ հուր ցանկականին եւ մտաւորական տեսութեանն*[2] *ասէ շատ, զի անյա՛գ է յընդունելն միտք զգայարանաւք, եւ անխոնջ ի խոկումն խորհրդոց եւ յարտաբերութիւն պատմողական բանից*[3]*։* **4** *Յաղագս այսորիկ սքանչելի՛ եւ ամենիմաստ արուեստաւորն բնութեանս Աստուած միշտ նորատե՛ս եւ նորազարդ գեղեցկութեամբ զուարճացուցանէ զմարդկեղէն բնութիւնս յիւրական յարարածս որում եւ Դաւիթ շնո[ր]հակալութեամբ եւ խոստովանութեամբ սաղմոսէ. «Ուրախ արարեր զիս, Տէր, յարարածս քո, եւ ի գործս ձեռաց քոց ցնծ[ացայց]»* (**Սղմս. ՂԱ. 5**)*։*

Բ. 1 *Եւ բազմատեսակ է այսմ ուրախութեան գործ, որ յարարածս Աստուծոյ։* **2** *Առաջին զի արար զամենայն ինչ ի պէտս վայելչութեան մարդոյն. զերկինս իւրով գեղեցկութեամբ զարդուն, եւ զերկիր իւրովք բերմամբք բուսոց, հանդերձ կենդանեաւք։* **3** *Եւ ծովք, եւ որ ի նմանէ երամք աւդական թռչնոց եւ լուղակք ջրասուն կենդանեաց։* **4** *Եւ երկրորդ, զի եղեն արարածք. այլ ո՛չ ի նիւթոյ ինչ արար աննիւթականքս եւ ո՛չ ի գոյութենէ էացան եղականքս, այլ յանգոյից եւ յաննիւթից նոր իմն սքանչելեաւք եկին ի լինելութիւն։* **5** *Եւ երրորդ, զի ո՛չ աշխատութեամբ եւ վաստակաւք գործոյ, այլ միայն ասաց բանիւ՝ եւ եղեն, հրամայ|87ա|եաց՝ եւ հաստատեցան, զի եթէ մեր ասելն բանիւ անաշխատ է, ո՞րքան դիւրին է աստուածային եւ արարչական Բանին։* **6** *Չորրո՛րդ. զի որք եղենն եւ էացան՝ կան միշտ եւ մնան ի նոյն անսասան սերտութեամբ եւ յարամնայ հաստատութեամբ։* **7** *Հինգերո՛րդ, իմաստ սքանչելի, զի ո՛չ խառնակ ինչ եւ շփոթեալ եթող զարարածս, այլ կա՛րգ եդ ամենայնի եւ դաս, եւ սահման ամենայն գոյից, եւ որոշումն զանազանութեան, որպէսզի կարգն ուսուցէ՛ մեզ զվերինն եւ զներքինն, զմիջինն եւ զամենայն ետեղական կարգաւորութիւնս։*

---

[1] *ձ՛ ի բանական] այսպիսի*
[2] *ձ՛ տեսութենէն*
[3] *ձ՛ > պատմողական բանից*

Գ. 1 *Իսկ դա՛ն ծանուցանէ*[1] *մեզ զառաջինն եւ զերկրորդն, զերրորդն եւ զչորրորդն, եւ զայլն ամենայն ըստ կարգի։* **2** *Իսկ սահմանն ցուցանէ զբնութիւնն իւրաքանչիւրոցն՝ զիմանալին եւ զգալին, զբանականն եւ զանբանն, զկենդանին եւ զանկենդանն։* **3** *Իսկ որոշումն եւ զանազանութիւն զպատիւ իւրաքանչիւրոցն ցուցանէ՝ զտեսակացն ի սեռիցն զատուցելոց, եւ զյատուկսն ի տեսակացն բաժանեցելոց, որպէս եւ ի միում տեսակի մարդկութեանս բազումս է տեսանել զանազանութիւն անուան եւ պատուոյ, որպէս եւ իշխան լինել եւ ընդ իշխանութեամբ, թագաւոր եւ զաւրք, տէր եւ ծառայ, զաւրավա՛ր եւ զինուոր, դասապե՛տ եւ դաս։* **4** *Ըստ որում եւ ասէ Պաւղոս. «Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Եփս. Գ. 14)։* **5** *Ուստի ամենայն նահապետութիւն յերկ<ր>ինս եւ յերկրի անուանի։*

Դ. 1 *Եւ այսպէս ուրախ եղեալ ցնծամք յարարածս Աստուծոյ եւ բերեմք զնմանութիւն փառացն Աստուծոյ* |87բ| *ի մեզ եղեալքս պատկեր եւ նմանութիւն Աստուծոյ ո՛չ միայն էութեամբ, այլեւ բնակութեամբ տեղո՛յ, եւ փառաց եւ պաշտամանն յարմարութեամբ։* **2** *Ըստ որում եւ բերէ եկեղեցի զնմանութիւն վերին եւ անձեռագործ խորանին երկնի. եւ եկեղեցւոյ մանգունք զնորին դասուցն եւ դասապետութեանցն զանազանութիւն անուամբ եւ փառատրութեամբ։* **3** *Նմանապէս եւ թագաւորութիւնս երկրաւոր՝ զերկնաւոր եւ զանմահ թագաւորութեանն ցուցանէ զնմանութիւն՝ մարմնով զանմարմնականին եւ նիւթական ձեւակերպութեամբ փառաց՝ զաննիւթականին։* **4** *Վասն որոյ, բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորք քրիստոնէից զպատիւ պաղատանն իւրեանց յաւրինեալ կազմեցին ի տիպ եւ ի նմանութիւն արքայարանին վերին եւ անմարմնական զաւրացն, հրեղէն եւ աննիւթ պաշտաւնէիցն, ինն կարգեալ դասս պաշտաւնէից արքունական փառացն ի սպասաւորութիւն։*

Ե. 1 *Որպէս եւ այսմ աւուր իրագործութիւն թագաւորական պաղատանն դասու է, եւ ի թագաւորական հրամանէ կարգաւորին, որով եւ ի գործս ձեռաց հողեղինացս զուարճանան բանակք զաւրացն հրեղինաց եւ ի նորագիւտ յաւրինուածս բանականացս մարմնաւորաց. ուրախանան բնակիչք բարձր գաւառին անմարմնական բանաւորացն, զի զդաս եւ զկարգ իւրեանց վերնական փառացն, որ յերկինս, տեսանեն գեղեցիկ եւ գերահրաշ նմանութեամբ դասաւորեալ յերկրի եւ իրեանց անուանցն գործոյ եւ փառաբանութեան մշտնջենաւոր։* **2** |88ա| *Տեսանեն զմարդիկ*

---

[1] *Ձ՛ ծանրացուցանէ*

անուամբ եւ գործով իսկ յայտնաբանող, որոց ուրախութիւն է[1] *յերկինս երկրաւորացս փառաւորութիւն, որով եւ ցնծան իսկ տէրութիւնքն ընդ տեա՛րս, զաւրութիւնքն ընդ զաւրս անուանեալս, իշխանութիւնքն ընդ իշխանսն, պէտքն՝ ընդ պետութիւնս, եւ հրեշտակքն ընդ մարդկային հրեշտակական պատգամախաւսութիւնս։* **3** *Ուրախ եղեալ ցնծամք եւ մեք ընդ յաւելուած փառաց թագաւորական դասակարգութեանս եւ ընդ եկեղեցւոյ Աստուծոյ զինուորական զաւրութեանս, մանաւանդ ընդ որդւոյ արքայի նախածին եւ անդրանիկ զաւրաւոր զաւակի, որ այսաւր իշխանական փառաւք յարքայէ՛ եւ ի Հաւրէ ճոխացեալ պատուի, ի թագաւորական գաւազանէ աճեցեալ շառաւիղ ծաղկի, հանդերձ միւս եւս գեղեցիկ բուսակցաւ՝ բարեբողբոջ պատանեկաւ եւ*[2] *եղբարբ։* **4** *Ուրախանան եւ նախնիքն սուրբ եւ արքայազունքն առաջինք, արմատքն եւ սկիզբն թագաւորութեանս Հայոց, սերունդքն որ յԱրբինեանց, եւ թագիւ պսակեալքն, որ ի նոցունց։* **5** *Զի թէպէտ մարմնով ի հող դարձեալք ըստ իմաստնոյն բանի, սակայն հոգւով մերձ են առ Աստուած, որ ետ զնա. եւ առաւել եւս են ի զգայութեան, որքան եւ ի թանձր կապակցութենէ մարմնոյ ազատ գոլով։* **6** *Վասն որոյ զուարճացեալ ցնծան այսաւր հոգւով յաշխարհն հոգեղինաց, զճիռն աւրհնութեան տեսանելով ծաղկեալ յերկիրս հողեղինաց։* **7** *Եւ զոր աւրինակ ի ծաղկեալ այգեացն ողկուզաբեր որթոցն տնկոյ շարժեալ շրջան առնու եռալով գինին* |88բ| *հին, որ ի կարաս հաւաքեալ, այսպէս եւ ի ծաղկել թագաւորական այսմ գաւազանի ոստոյ՝ բերկրեալ խնդան եւ նորոգափայլ յուսով զուարճանան քաջաց հարցն եւ ազնուական հաւուցն հոգիք։* **8** *Եւ զի որպէս վշտանան հոգիք նախավախճանելոցն, վասն յետնորդացն անարժանիցն, որպէս եւ մեծատունն ցաւէր վասն հինգ եղբարցն, որ ի տուն հաւրն, ուստի եւ յայտ է, թէ մխիթարին ի լաւսն, որպէս եւ ի յարդարն Նոյ, որում եւ ասաց հայրն. «Սա՛ հանգուսցէ զմեզ ի գործոց մերոց եւ ի տրտմութեանց ձեռաց մերոց, եւ յերկրէ, զոր անէծ Տէր Աստուած» (Ծն. Ե. 29)։*

Զ. **1** *Ապա ստուգապէս մխիթարեալ սփոփին թագաւորական գաւազանի այսմ արմատքն եւ սկզբունք, եւ նախահարքն աստուածասէրք, զի այսաւր դնէ մերս արքայ պատկեր թագաւորութեանն Աստուծոյ եւ հայրենի խնամոց նորին կերպարան, զծնունդսն իւր՝ ի գործ պահպանութեան Քրիստոսի հաւատին, եւ ցանկ ամրութեան եկեղեցւոյ սրբոյ, եւ զինակիր հաւատարիմ ի սպասաւորութիւն զաւրապետին երկնաւորաց եւ երկրա-*

---

[1] *ձ՛> է*
[2] *ձ՛> եւ*

ւորաց։ 2 *Վասն որոյ եւ մեք այսպիսի մեծահանդէս աւուրս փառաւորութեան, հրամայեցաւ ի վերիցս սպասաւորել ի հոգեւոր այսմ սեղանոյ խրախճանութեան։* 3 *Յաղագս որոյ եդաք առաջի զվարդապետական բանն առաքելոյն Պաւղոսի, որ խրատեալ վարժէ եւ ուսուցանէ զիշխանսն իշխեցելովքն հանդերձ, ասելով. «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ի հնազ[անդութիւն] կացցէ»։*

Է. 1 *Գիտել արժա՛ն է, զի երեք են դէմք ամենայն բանի։* 2 *Նախ՝ յորմէ՞ բանն |89ա| երկրորդ՝ առ ո՞վ բանն. երրորդ՝ յաղագս որո՞յ բանն։* 3 *Եւ արդ, է՛ բանս աստուածայինն Առաքելոյ, որ է խորոցն Աստուծոյ խորհրդակից եւ մեծ հազարապէտ, երրորդ*[1] *երկնիցն տեսող եւ անճառելեացն լսող, փողն փառազարդ փրկաւետ բարբառոյն, եւ բերանն բարեբուղխ բանին Յիսուսի, հաւատոյ վարդապետն տիեզերաց։* 4 *Իսկ եթէ առ ո՞վ է սա գրեալ ի հոյակապ եւ ի հռչակաւոր, յականաւոր եւ յերեւելի քաղաքն մեծ ի Հռոմ՝ առ հաւատացեալսն, որ է ի հրէից եւ հեթանոսաց։* 5 *Եւ յետ բազում բանից խրատականաց հասեալ ի չորրորդ ընթերցուածին, որ է խրատ վասն առաքինութեան առ Աստուած եւ առ մարդիկ։* 6 *Եւ ի հինգերորդ մասնաւորն գրէ վասն իշխանացն հնազանդելոյ ասելով. «Ամեն[այն] անձն որ ը[նդ] իշխ[անութեամբ է], ի հ[նազանդութիւն] կա[ցցէ]»։* 7 *Իսկ եթէ յաղագս որո՞յ է բանն, զի թէպէտ առ հաւատացեալսն, որ իշխանութեամբ թագաւորաց եւ իշխանաց են գրէ՛, այլ յաղագս իշխանացն եւ ճոխագունիցն, որք ի բարձրագահ յաթոռսն նստին, գրէ եւ ուսուցանէ զնոսա։*

Ը. 1 *Եւ երկու յեղանակաւք խաւսի առ հաւատացեալսն զբան վարդապետութեանս. մխիթարական եւ խրատական, զի նա՛խ մխիթարէ զնոսա մի՛ տրտմական կրիւք յաղթիլ եւ տժգոհ զնախախնամութենէն լինել, որպէս թէ իբրեւ զանասունս ի ծառայութիւն հզաւրացն եւ իշխանացն հնազանդեցոյց զնոսա. ցուցանէ, թէ ընդ հնազանդութեամբ լինելով նոցա, ի շա՛հ եւ յաւգուտ իւրեանց է։* 2 *Իսկ խրատականաւն ուսուցանէ զնոսա, |89բ| թէ աստուածադի՛ր է աւրէնքն եւ թէ պա՛րտ է հնազանդ լինել իշխանացն եւ ցուցանէ զշահն եւ զաւգուտն, որ անտի լինելոցն է։* 3 *Իսկ բանն, որ յաղագս իշխանացն է, երկուս ունի իմաստս գիտութեան ի յաւգտութիւն նոցա։* 4 *Առաջին՝ ցուցանէ զպատիւ եւ զարժանաւորութիւն գերակայ փառացն, որք մեծարեալ եղեն ի համազգի եւ ի միոյ բնութենէ, եւ գերազանց, քան զբնութիւնակիցսն յիշխանական ճոխութիւն բարձրացեալ եղեն։* 5 *Եւ երկրորդ՝ ուսուցանէ զնոսա զանխլաբար եւ ծածուկ*

---

[1] *Ձ երկրորդ] երրորդ*

խորհրդով, թէ զի՞նչ է գործ իշխանացն եւ որո՞վ աւրինակաւ արժան է վարել առ հնազանդեալսն եւ ընդ ձեռամբ անկեալսն, զի խաւսելով առ հնազանդեալսն, որ ընդ իշխանութեամբ նոցին, զնոսա՛ տեղեակ առնէ, յո՛յժ իմաստութեամբ թագուցանելով զբանն, եւ որ ընդ իշխանութեամբ առ նոսա խաւսելով, ասելով. «Ամենն[այն] անձ[ն], որ ը[նդ] իշխ[անութեամբ] է, ի հնազ[անդութիւն] կաց[ցէ]»։

Թ. 1 *Բազում ինչ ճառեաց վասն այսր իրացս ա՛ստ եւ յայլ թուխթոս. որպէս ծառայիցն հրամայէ հնազանդ լինել տէրանցն (տե՛ս* **Եփս. Զ. 5***), այսպէս եւ որք ընդ իշխանութեամբ են, հրամայէ իշխանացն հնազանդ լինել։* 2 *Այսու ցուցանէ, թէ ո՛չ փոփոխումն ինչ արար Քրիստոս հասարակաց կարգաւորութեանն, զիւր աւրէնսն ի ներքս մուծանելով, եւ խրատէ զմեզ, բաւական համարելով, որ վասն ճշմարտութեանն են պատերազմունք ի նենգչացն, այլ ինչ մի՛ յաւելուլ ի մարտ պատերազմին։* 3 *Եւ ի դէպ ժամու զայս բան ի կի՛ր արկ, յորժամ զայսպիսի փիլիսոփայութիւն պահանջեաց ի հաւատացելոցն, բարեկամաց եւ |90ա| թշնամեաց, եւ ամենեցուն պիտանիս գտանել, եւ որ ինչ հրեշտակաց վայել էր, զայն կարգաւորութիւն տնկեաց ի նոսա, եւ զսրտմտութիւն եւ զանբարտաւանութիւն շիջոյց։* 4 *Ապա՛ ճառէ վասն այսպիսի իրաց եւ խրա՛տ տա, թէ որք վնաս առնիցեն մեզ, երախտիս պարտ է առնել եւ առաւել հնազանդել պարտ է վերակացուաց մերոց (տե՛ս* **Ա. Թեսաղ. Ե. 12***)։* 5 *Եւ ամենեցուն տա՛ զայս հրաման՝ քահանայից եւ միանձանց։* 6 *Ամենայն անձն, ասէ թէ առաքեալ իցէ կամ մարգարէ, չվնասէ ինչ բարեպաշտութեանն այսպիսի հնազան[դ]ութիւն։* 7 *Եւ ցուցանէ իսկ զիրաւունսն ասելով, թէ յԱստուծոյ են կարգեալ նոքա (տե՛ս* **Հռմ. ԺԳ. 1***)։* 8 *Զի ո՛չ ուստեքէ ասէ իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ։*

Ժ. 1 *Զի՞նչ խաւսիս, ո՞վ աստուածային Առաքեալ, մի՞թէ ամենայն իշխան յԱստուծոյ ձեռնադրի, զի ահա բազումք անիրաւութեամբ, յափշտակութեամբ, զրկանաւք եւ յափշտակելով ընբռնեալ ունին զիշխանութիւնս։* 2 *Պատասխանէ. Ո՛չ յաղագս այնպիսեացն ինչ ասեմ, եւ կամ թէ զիւրաքանչիւր իշխանացն է բանս այժմ, զի ո՛չ յաղագս առանձնաւորակի բաժանմանցն, այլ յաղագս սեռական իշխանութեանն պատուոյ բանս է եւ վասն նորին իրաց. զի ոմն իշխան լինել պա՛րտ է, եւ ոմն ընդ իշխանութեամբ. եւ մի՛ ժպրհութեամբ վարիլ։* 3 *Ասացի թէ՝ Աստուծոյ իմաստութեանն գործ է, եւ ո՛չ վասն այսորիկ ասացի, եթէ ո՛չ են իշխանք եւ թէ չեն յԱստուծոյ, այլ վասն իրացն ճառել ասէի, թէ չէ՛ իշխանութիւն՝ թէ ոչ յԱստուծոյ։* 4 *Զի թէ անաւրէն եւ խի՛ստ է ի խրատ անաւրինաց եւ ի քննումն արդարոց տուեալ լինի, եւ եթէ |90բ| քաղցր եւ ստոյգ իցէ՝ ողոր-*

մութեամբ տուեալ է նա։ **5** *Եւ որպէ՞ս. զիարդ եւ իցեն նոքա, եւ յորս եւ իցեն, սակայն Աստուծոյ հրամանաւն են, քանզի անիշխանութիւն ամենայն ուրեք չար է եւ պատճառք ո՛չ փրկութեան։*

ԺԱ. **1** *Եւ իշխանք, ոչ առ մի՛ կարգ միայն պիտանանան, այլ եւ առ անբանս ի ծովու եւ ի ցամաքի։* **2** *Բայց զի ի հոմանուա՛նց է ձայնս, գիտել պա՛րտ է, թէ քանի՞ նշանակութիւնք են իշխանական անուանց։* **3** *Եւ բաժանի յերեք՝ ի տիրականն, ի դրականն եւ ի բնականն։* **4** *Եւ տիրական իշխանութիւն է Աստուծոյն, ըստ որում ասէ Եսայի. «Տէ՛ր Հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր իշխան մեր» (***Եսյ. ԼԳ. 22***), եւ թէ իշխանութիւն Աստուծոյ ի բարձունս փառաւորի։* **5** *Իսկ դրականն է՛ մարդոյս, ըստ որում յարարչութեան անդ աւրհնեաց զնոսա եւ ասէ. «Աճեցէք եւ բազմացարուք, եւ լցէք զերկիր եւ տիրեցէ՛ք դմա, եւ իշխեցէ՛ք ձկանց ծովու» (***Ծն. Ա. 28***) եւ այլոցն, որ ըստ կարգի։* **6** *Իսկ բնական է անասնոց, զոր ի բնութենէ ունին իւրաքանչիւր իշխան առաջնորդաւ վարիլ, այլեւ համաւրէն եւ սեռականաբար իշխանութիւն է նոցա, որպէս առեւծ՝ գազանաց եւ զուարակ անասնոց. եւ արծուի՝ թռչնո՛ց, եւ մարդն՝ ամենայնի, զորոց զկերպարանս թագաւորական կենդանեացն տեսանէր Եզեկիէլ՝ ընդ աթոռով ամենաթագաւորին Աստուծոյ լծեալ (տե՛ս* **Եզկ. Ժ.***), զի նա՛ միա՛յն է ամենայնի թագաւոր եւ իշխան։*

ԺԲ. **1** *Ըստ այնմ՝ թագաւոր մեծ ի վեր ամենայն երկրի*[1] *Աստուած է։* **2** *Վասն որոյ երե՛ք են ամենայնի զանազանութիւն. զի ոմն իշխա՛ն միայն, իսկ ոմն՝ իշխան եւ ընդ իշխանութեամբ, իսկ ոմն միայն ընդ իշխանութեամբ։* **3** |91ա| *Իշխան՝ միայն Աստուած, իսկ իշխան եւ ընդ իշխանութեամբ՝ մարդ, իսկ ընդ իշխանութեամբ միայն անասուն կենդանիք։* **4** *Վասն որոյ ասէ Պաւղոս. «Ո՛չ ուստ[եք է] իշխ[անութիւն], եթ[է] ոչ յԱստուծոյ» (***Հռմ. ԺԳ. 1***)։* **5** *Բայց քննել արժան է, զի թէ ամենայն իշխանութիւն յԱստուծոյ է, իսկ ոմանք ի նոցանէ՛ չա՛րք են եւ այլք բարի՛. որո՞վ յեղանակաւ իշխանութիւն չարացն ասի յԱստուծոյ, եւ որո՛վ աւրինակաւ բարեացն։* **6** *Եւ առ այս մերձ դիցուք զասելն առաքելոյ ի սմին ընթերցուածի, եթէ՝ քննել արժան է զի՞նչ են կամքն Աստուծոյ. «Բարին եւ հաճոյն եւ կատարեալն» (***Հռմ. ԺԲ. 2***)։* **7** *Արդ, որ ըստ չորից մասանցս այսոցիկ վարէ զիշխանութիւնն, նա՛ կատարելապէս յԱստուծոյ ասի, զի «կամք Աստուծոյ» է իշխան լինել ոմանց, եւ ոմանց՝ ընդ իշխանութեամբ։* **8** *Իսկ յորժամ զհրամանն Աստուծոյ ինքն պահիցէ՝ բարի՛ է, եւ թէ աստուածային աւրինաւքն, որ ընդ իւրով իշխանութեամբ են, դաստիարակէ՛, բարի՛ է եւ հաճոյ, որ է կատարեալ ամենայնիւ։* **9** *Իսկ որ ո՛չ ունի զսո-*

---

[1] *ձ՛> երկրի*

սա, այլ միայն լոկ զիշխանական պատիւն ունի առանց գործոյ՝ յԱստուծոյ է, զի նորա կամք է իշխան լինելն, բայց զի ո՛չ պահէ զհրամանս աւրինացն եւ ոչ այլոց դաստիարակէ, ո՛չ է բարի եւ ո՛չ հաճոյ, վասն որոյ եւ ոչ կատարեալ։

ԺԳ. 1 *«Ոչ ուստ[եք է] իշխանութիւն եթ[է] ոչ յԱստուծոյ»։ Գիտելի է եւ այս, թէ վասն էր տուեալ լինի յԱստուծոյ իշխանութիւն չարացն, զի գիտէ Ամենատեսն, եթէ ո՛չ են շահելոց անտի։* **2** *Առ որս ասեմք. եթէ Թագաւորն ամենայնի Աստուած ո՛չ անընտանի ինչ գործէ՝ չարացն տալով իշխանութիւն եւ յաջողուած ըստ*[1] *մարմնոյ, զի ո՛չ միայն Թագաւոր ամենայնի եւ է՛ եւ անուանի Աստուած, այլեւ Հայր,* |91բ| *զերկուս բուն գեղեցիկսն բնութեան անշարժ աւրինաւք յանքակ միաւորութիւն յարմարեալ՝ զիշխանականն ընդ խնամականին։* **3** *Եւ զոր ինչ յազգակցութիւնսն առ որդիսն՝ ծնաւղք, զայս առնէ եւ թագաւոր առ քաղաք, եւ առ աշխարհ՝ Աստուած։* **4** *Քանզի որպէս զանապուր որդիսն ո՛չ անտես առնեն ծնաւղքն, այլ, զթշուառութիւնն ի գութ առեալ, խնամ տանին եւ տածեն, կարծելով՝ եթէ աննուէր եւ անհամբոյր թշնամեաց գործ է ի վերայ թշուառութեանն ելանել ոտնահար լինելով։* **5** *Իսկ սիրելեաց եւ ընտանեաց գործ թեթեւացուցանել զգայթմունսն՝ բազում անգամ դէպ է, զի սոցա առաւել տան զբաժինն, քան համեստ պարկեշտիցն, գիտելով, զի նոցա մեծի պատճառս կենաց է իւրեանց պարկեշտութիւնն։* **6** *Իսկ սոցա՝ յոյս*[2] *մի՛ է միայն՝ ծնաւղքն, յորմէ թէ վրիպեսցեն՝ ի տարակոյս մատնին հարկաւորացն։* **7** *Նոյնպէս եւ Աստուած, զի բանական բնութեանս հա՛յր է ամենեցուն խնամ տանի՝ չարաց եւ բարեաց (* **հմմտ. Մտթ. Ե. 45***)։*

ԺԴ. 1 *Տա՛ իշխանութիւն չարացն։* **2** *Առաջին, զի բարի՛ է բնութեամբ Աստուած եւ ըստ հաղտական եւ բարեգործակ զաւրութեանն իւրոյ ո՛չ անցանէ, այլ ներգործելով ցուցանէ՛ առ անարժանսն բարեգործութեամբ։* **3** *Երկրորդ, զի թերեւս այնու յուղղութիւն եկեսցեն ճանաչել զԲարերարն։* **4** *Որպէս մանգան տղայոյ խաղալիկ տալով սովորեցուսցեն գա՛լ առ տուողն, այսպէս եւ նոքա, որ երկրաւոր մեծութիւնս եւ առաւրեա փարթամութիւնս թուին ըղձալի՝ տայ նոցա։* **5** |92ա| *Իսկ եր[ր] որդ՝ մի՛ զոք ի թշուառականացն բարեբախտիկ կարծեսցես, եւ զանոտի եւ զսո՛ւտ մեծութիւն ճշմարիտ համարեսցիս*[3]*, զի թէպէտ եւ մեծատնագոյն ոք իցէ քան զԿրիւսոս, եւ քան զՎինկեւս՝ սրակնագոյն, եւ երկայնակեցագոյն՝ քան զԱմէնտիլով, եւ գեղեցկագոյն՝ քան զԳանեւմիդէս, զոր եւ առեալ յափշտակեցին աստուածք Որմզդի գինէպաշտ լինելով, վասն իւրոյ գեղեցկութեանն։* **6** *Բայց եթէ մտաւք բազմաց եւ ոչ սակաւ տէրանց ծառա՛յէ,*

---

[1] *ձ՛ > ըստ*
[2] *ձ՛ այս] յոյս*
[3] *ձ՛ կարծեսցիս] համարեսցիս*

այսինքն՝ տուփանաց, ցանկութեանց, հեշտ բաղձանաց, ահի՛ տրտմութեան, անարգել ցանկութեան, երկեղի՛ անիրաւութեան, ո՛չ երբէք կարասցէ բարեբախտ գոլ։ 7 *Այսոքիկ՝ թէ վասն է՛ր չարացն տուեալ լինի իշխանական պատիւ եւ զշնորհ թագաւորական։*

ԺԵ. 1 *Իսկ եթէ քանի են նշանակութիւնք, որով ճանաչի, թէ յԱստուծոյ է իշխանութիւնն եւ բարի։* 2 *Եւ են սոքա երեք դէմք, որոց ի մի յարմարութիւն գոլով երիցն՝ իշխանութիւնն հաստատո՛ւն լինի։* 3 *Առաջին՝ Աստուած, որ իշխանութեանն է տուող։* 4 *Երկրորդ՝ որ ա՛ռն զիշխանութիւնն, յորժամ ըստ կամացն Աստուծոյ վարէ։* 5 *Երրորդ՝ զի որք ընդ ձեռամբ են իշխանութեանն, ախորժելով ընդունին եւ հնազանդին, առանց ամենայն հակա[ռա]կութեան։* 6 *ՅԱստուծոյ պիտոյ է կամելն. զի Աստուծով լինի*[1] *իշխանութիւնն, զի մի՛ լիցի այն, թէ թագաւորեցին եւ ոչ ինեւ։* 7 *Յիւրմէն, զի գիտասցէ, թէ որպէս պարտ է վարել զիշխանութիւնն։* 8 *Եւ յաշխարհէն, զի ընդունեսցին եւ հնազանդեսցին սիրով։*

ԺԶ. 1 *Եւ որպէ՞ս ճանաչի, թէ յԱստուծոյ է։* 2 |92բ| *Յորժամ երեք իրաւք փառաւորի յԱստուծոյ. դիմաւ՛ք, բանի՛ւ եւ անուամբ։* 3 *Դիմաւ՛ք, որպէս եւ զմեծն Մովսէս, զի զդէմս երեսացն փառաւորեաց, յոր ո՛չ կարէին հայել*[2] *որդիքն Իսրայիղի (տե՛ս ելք ՀԳ. 29,35)։* 4 *Բանիւ, զի զոր ինչ խաւսէր՝ արդիւնանայր որպէս եւ յաստուածային հրաման է (տե՛ս ելք Է.1)։* 5 *Անուամբ, զի Աստուած փարաւոնի կոչեցաւ, որ ահարկու էր այնպիսի անուամբ։*

ԺԷ. 1 *Այսպէս, զոր պատուէ Աստուած իշխանութեամբ, փառաւորէ զդէմսն, զբանն, զանունն։* 2 *Իսկ յիւրմէ, այսպէս վկայէ, թէ ճշմարիտ իշխան է, յորժամ զայս երիցս պատիւն գործով ցուցանէ։* 3 *Սրբութեամբ վարել զկեանսն՝ զերեսն՝ փառաւոր ցուցանէ, ճշմարիտ խաւսքն զբանն հաւատարիմ առնէ եւ պատուելի՛, որպէս ճշմարիտ դրամ, որ զանուն եւ զգիր թագաւորին ունի։* 4 *Իսկ իմաստութեամբ ի գո՛րծ ածելն՝ զանունն ահարկու եւ զարհուրելի առնէ, որպէս բժիշկք այն են ճշմարիտ, որ գործով ցուցանեն, եւ ո՛չ սոսկ անուամբ։* 5 *Իսկ հնազանդեալքն ընդունին զայսպիսիս եւ սիրեն, վասն երից պատճառաց. բնութեամբ, ի հարկէ եւ վասն կարեաց։* 6 *Բնութեամբ, զի բարի իշխանք սիրականք են ամենեցուն իբրեւ զհայր եւ զծնաւղ։* 7 *Ի հարկէ, զի յԱստուծոյ են ընտրեալ եւ եդեալ ի գլուխ ժողովրդոց։* 8 *Եւ վասն կարեաց, զի ամենեքեան կարաւտ են իշխանին բարեացն եւ պիտանացուին։* 9 *Որում առցուք եւ այլ աւրինակ այսմ իբրեւ զնախագաղափար պատկեր՝ զԱբրաամ, զայն որ պանդուխտն էր ի մէջ քանանացոցն ազգի, մինչ զի ո՛չ գոյր տեղի, ուր թաղէր*

---

[1] *Ձ լիցի] լինի*
[2] *Ձ որով կարէին հայել] յոր ոչ կարէին*

զմեռեալն իւր, այլ աղերսելով խնդրէր յորդոցն Քետայ[1], |93ա| *իսկ նոքա ասեն. «Թագաւոր յԱստուծոյ ես ի միջի մերում, յընտիրս շիրմաց մերաց թաղեա՛ զմեռեալս քո»* (**տե՛ս Ծն. ԻԳ. 6**)*:* **10** *Եւ թէ որպէ՞ս է թագաւոր յԱստուծոյ:*

ԺԸ. 1 *Առաջին այս իսկ է. զի որ մաքուր եւ աննենգ իմաստութեանն է նախանձաւոր, զայնպիսին ո՛չ միայն իմաստուն բանաւորքն պատուեն եւ զարմանան, այլ առհասարակ, ամենայն ոք. եւ պատուեն իբր զիշխանաց աստուածային իշխան եւ թագաւոր եւ թագաւորաց քաջ:* **2** *Իսկ այնպիսի առաքինի ոչ ի մարդկանէ, այլ յԱստուծոյ ձեռնադրեալ:* **3** *Եւ երկրորդ աւրէնս դնէ բնաւորական, զի յանզգամացն թագաւոր ոչ ոք, թէպէտ զամենայն երկրի եւ զծովու զաւրութիւն առցէ, բայց միայն իմաստունն եւ աստուածասէրն, թէպէտ եւ կազմուածոյ պատրաստութեան անմասն իցէ:* **4** *Զոր աւրինակ, ո՛չ ասին նաւաստի, կամ բժիշկ, կամ երաժիշտ, որ ո՛չ են հմուտ այնոցիկ գիտութեան արուեստից:* **5** *Իսկ որ զղեակ նաւին հմտաբար ուղղէ, եւ զխառնուածս դեղոց եւ սպեղանեաց կազմէ, եւ զփողս եւ զքնար յարմարէ, նոքա ասին նաւաստի եւ բժիշկ, եւ երաժիշտ:* **6** *Այսպէս արուեստ իմն է բնական եւ իշխանութիւնն, եւ որ անգէտն է եւ անտեղեակ պիտոյից մարդկան, տգէտ համարելի է եւ գեղջուկ, բայց թագաւոր՝ միայն զհմուտն եւ զտեղեակ մարդկային աւգտութեանց:* **7** *Երրորդ՝ զայն ցուցանէ, զի Աստուծոյ դատաստանքն առաւել են, քան զմարդկայինս, զի մարդիկ զայն համարին իշխան եւ տէր իւրեանց, որ առաւե՛լ ունին զապականելի նիւթս:* **8** *Իսկ առ Աստուած ո՛չ են սոքա պատուական, այլ որ զհոգի մաքուր ունի եւ միտս ազատս եւ անծառայելի,* |93բ| *նա է իշխան եւ թագաւոր ստուգապէս, ե՛ւ է եւ ասի:* **9** *Զորրո՛րդ, զի ի մարդկանէ ձեռնադրեալքն անհաստատ են եւ անցաւորք, եւ ի վեր եւ ի վայր յեղյեղուն, ըստ բարուց եւ պատահարաց, իսկ Աստուծոյքն հաստատունք են եւ մնացական:* **10** *Վասն որոյ այսպիսի իշխանութիւնք ստուգապէս են յԱստուծոյ, ըստ որում ասէ. «Եւ որ ենն յԱստուծոյ կարգեալ են»:* **11** *Եւ իբրեւ եցոյց, թէ ուստի է իշխանութիւնն, ասէ. «Որ հակառակ կայ՝ Աստուծոյ հրամանացն ընդդէմ կայ»* (**տե՛ս Հռմ. ԺԳ. 2**)*:*

ԺԹ. 1 *Տե՛ս ո՞ւր տարաւ եհան զիրսն եւ ուստի՞ երկեցոյց զնոսա, յորժամ ասաց, թէ վասն աւգտի են նոքա, զի մի՛ ասիցեն հաւատացեալք թէ անարգեցեր զմեզ եւ արհամարհելիս արարեր, որք զերկնի՛ց թագաւորութիւնն ընդունելոց եմք, հրամայես երկրաւ, որ իշխանաց հնազանդ լինել:* **2** *Եցոյց*[2]*, թէ ո՛չ իշխանաց, այլ Աստուծոյ հրամանին հնազանդիք:* **3** *Եւ*

---

[1] *ձ՝ քետացոց] Քետա*
[2] *ձ՝ > եցոյց*

հակառակաւքն երկեցոյց, թէ որ ո՛չն հնազանդի նոցա՝ ընդ Աստուծոյ պատերազմի, որ զայս աւրինադրեաց։ 4 *Յուցանէ, թէ ո՛չ շնորհս ինչ առնեմք նոցա զհնազանդութիւնն, այլ պարտական իսկ եմք։* 5 *Եւ այսոքիւք ձգէ զանհաւատ իշխանսն ի բարեպաշտութիւն եւ զհաւատացեալսն ի հնազանդութիւն, քանզի յայնժամ մեղադիր լինէին առաքելոցն, եթէ հրամանս ինչ նորաձեւս մուծանէին եւ աղարտէին զհասարակաց աւրէնս մարդկան։* 6 *Իսկ յորժամ ցուցանեն, թէ մեր Տէրն ամենեցուն զայս ընձեռեաց իւրոց աշակերտացն, յայնժամ զամբարտաւանութիւնն ի բաց խլեալ խնուին զբերանս նոցա եւ համարձակ|94ա|ութեամբ վասն ճշմարտութեան հաւատոցն խաւսէին։*

Ի. 1 *Ասէ, որ հակառակն կան՝ անձանց դատաստանս ընդունին, զի զԱստուած ի բարկութիւն ածեն։* 2 *Ապացուցանէ զշահ իրացն։* 3 *Քանզի իշխանք, ասէ, չեն յերկեղ բարեաց գործոց, այլ չարեաց։* 4 *Եւ զի ի խոր ետ զվէրսն, դարձեալ ողջացուցանէ իբրեւ զիմաստուն բժիշկ։* 5 *Ընդէ՛ր զարհուրիս, ասէ, մի՞թէ սաստել ինչ կարիցէ, յորժամ դու բարիոք վարիցիս, եւ կամ թէ ահագին ինչ թուիցի քեզ, յորժամ դու առաքինութեան խնամ տանիցիս։* 6 *Դարձեալ ասելովն, թէ իշխանք ո՛չ են յերկեղ բարեաց գործոց, այլ չարեաց, զանխլաբար եւ ծածուկ իմաստութեամբ եւ զիշխանսն խրատէ, զնոցայն ցուցանելով զգործ, եթէ ո՛չ է պարտ, զի բարեգործքն երկիցեն ի նոցանէ եւ չարագործքն համարձակութիւն ունիցին։* 7 *Զի որք բարեգործացն եւ երկեղածացն Աստուծոյ ահարկու եւ սաստիկ ցուցանեն զինքեանս, երկու մեծամեծ մեղս մեղանչեն, մի՛ զի զնոսա ի բարի առաջարկութենէն վերջացուցանեն, եւ երկրորդ, զի*[1] *զայլս ի*[2] *նման ան[ն]ախանձ յորդորմանէն արգելուն։* 8 *Նոյնպէս եւ զչարագործսն ընդունելով, երկու իրս վնաս գործեն, զի որ զչարն գործէ, ո՛չ ունելով երկեղ յիշխանացն, ո՛չ երբէք ի զղջումն եկեսցէ։* 9 *Եւ երկրորդ, զի յոչ հատանել զչարն ի միջոյ, փոքր խմորն զբազումս ապականէ, ի կցորդութիւն չարեացն իւրեանց ձգելով։*

ԻԱ. 1 *Առ այսպիսի իշխանացս ի խրատ ասաց ոմն իմաստուն բանաւոր, |94բ| եթէ իշխանաց եւ դատաւորաց պա՛րտ է այնպէս լինել, զի ոչ վասն արդարոցն աղաչիցին եւ ոչ վասն անիրաւացն բարեխաւսեսցին։* 2 *Այսինքն՝ ո՛չ է արժան կալ մնալ իշխանացն, մինչ զի աղաչեսցեն եւ ապա բարի արանց եւ արդարոց արասցեն բարի, այլ յինքենէ պարտին շարժել, եւ ո՛չ վասն անիրաւացն բարեխաւսիլ եւ ոչ խրատել ըստ յանցա-*

---

[1] *ձ՝ զի*
[2] *ձ՝ > ի*

նացն, զի մի այնու յուսով բազում յանցաւորք լինիցին։ 3 *Սորին վասն ասէ. «Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի, զբարիս գործեա՛ եւ ընկալցիս գոհութիւն ի նմանէ» (* **տե՛ս Հռմ. ԺԳ. 3***)։* 4 *Տե՛ս որպէ՞ս ընտանեցոյց զնոսա իշխանին, եւ թէ որպէս թափեաց զսրտմտութիւն նոցա, քանզի Աստուծոյ սպասաւոր է քեզ ի բարիս։* 5 *Այնքան հեռի է, ասէ, յերկուցանելոյ, զի եւ գովող իսկ է քեզ, եւ գործակից եւս քեզ ի բարի։* 6 *Ապա ընդէ՛ր ոչ հնազանդիս նմա, զի դիւրին գործ է քեզ զառաքինութիւնն, յորժամ զչարսն տանջէ, եւ բարեացն երախտիս առնէ, եւ ըստ Աստուծոյ կամացն վարի։* 7 *Սորին վասն եւ ասէ, թէ Աստուծոյ սպասաւոր է։* 8 *Կամիմ զգաստութիւն, զսոյնս եւ նա պատուիրէ ի ձեռն աւրինացն. խրատեմ ես, թէ մի՛ յափշտակեր եւ մի՛ ագահեր. զսոյնս եւ նա նստեալ դատի. որպէ՞ս. զի գործակից եւ աւգնական է Իմ։* 9 *Եւ յԱստուծոյ յայսպիսի իրս առաքեցաւ։* 10 *Եւ յերկոցունց է նա մեզ հեշտալի։* 11 *Եւ զի յԱստուծոյ առաքեցաւ, եւ վասն այսպիսի իրաց, վասն որոյ ասէ. «Աստուծոյ սպասաւոր է եւ քեզ ի բարիս» (* **հմմտ. Հռմ. ԺԳ. 4***)։*

ԻԲ. 1 *Քննել պարտ է զայս, թէ որո՞վ իրաւք սպասաւոր է Աստուծոյ, եւ որով ի բարիս մարդկան։* 2 |95ա| *Եւ առ այս մերձ դիցուք զբանն խաւսեցեալ յԱստուծոյ առ Իսահակ, որ ասաց նմա. «Մի՛ իջանել յԵգիպտոս, զի քեզ տաց զերկիրս զայս եւ զաւակի քում. եւ եղիցի զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ, փոխանակ զի պահեաց հայր քո զհրամանս իմ եւ զպատուիրանս իմ զիրաւունս իմ եւ զարդէնս իմ» (* **տե՛ս Ծն. ԻՁ. 2-5***)։*

ԻԳ. 1 *Արդ, չորիւքս այսոքիկ արք բարիք եւ առաքինիք, որք յիշխանականն հասանեն պատիւ, ընտանենան զաւրութեանցն Աստուծոյ։* 2 *Եւ ի չորիցս յայսցանէ առաջին երկեակն նուիրեալ դնի Աստուծոյ, որով եւ սպասաւորեն նմա, քանզի հրաման տայ՝ իբր իշխան այնոցիկ, որք առանց երկեղի ո՛չ լսեն դիւրաւ եւ պատուիրէ՝ իբր սիրելեաց եւ բարեկամաց հնազանդիցն եւ հաւանողաց։* 3 *Իսկ միւս երկեակն՝ զիրաւունսն եւ զարէնսն, առաքինութիւն է առ մարդիկ, որովք իրաւանցն եւ աւրինացն վայելէ։* 4 *Եւ իրաւունքն են բնութեամբ, իսկ աւրէնքն դրութեամբ. եւ իրիցագոյն է բնութեամբն, քան զդրութեամբն, վասն որոյ նախ զիրաւունսն է պահել ի առ մարդիկ եւ ապա զաւրէնսն։* 5 *Այսինքն՝ նախ զիւր զբնութիւնն զարդարել իրաւամբք, խոյս տալով յանիրաւութենէ, եւ ապա՛ զեղեալ աւրէնսն պահել առ հնազանդեալսն։* 6 *Որպէս ի հարցանել ումեմն. Զիա՛րդ ազնիւ լինին քաղաքք եւ մնան ի շինութիւն։* 7 *Պատասխանէ ոմն իմաստուն. «Յորժամ իշխանքն հնազանդ լինին աստուածային աւրինացն*

եւ քաղաքացիքն՝ իշխանացն»։ 8 *Եւ զի հոգի քաղաքաց*[1] *աւրէնքն են, զոր աւրինակ մարմին մեռեալ է* |95բ| *առանց հոգւոյ, նոյնպէս բնակիչք քաղաքի տկարք եւ աղքատք՝ մեռեալ են առանց իրաւանց աւրինացն։* 9 *Քանզի բժիշկք աւգնեն հիւանդաց, իսկ իշխանք աւրինաւքն՝ զրկելոց։* 10 *Եւ որպէս բժիշկք անիմաստք վնասեն հիւանդաց, նոյնպէս իշխանք, որք ոչ գիտեն զիրաւունս աւրինացն, եւ կամ ո՛չ պահեն՝ վնասեն զարդարս եւ զանմեղս՝ զզրկեալս յանիրաւաց։* 11 *Իսկ որ պահէ զհրամանս Տեառն, որպէս ծառայ հնազանդ եւ կա՛ ի պատուիրանս նորա, որպէս որդի սիրելի այսոքիւք յԱստուծո՛յ սպասաւոր է։* 12 *Իսկ իրաւամբքն եւ աւրինաւքն՝ քեզ ի բարիս է։*

ԻԴ. 1 *Ապա թէ չար գործիցես, երկի՛ր, զի ո՛չ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մեջ, որով վառեալ կազմեաց զնա՝ իբրեւ զզաւրական ոք ահեղ ի վերայ մեղուցելոց։* 2 *Քանզի «Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր ի բարկութիւն չարագործաց» (հմմտ. Հռմ. ԺԳ. 4)։* 3 *Արդ, մի՛ յորժամ լսիցես տանջանս եւ սուր՝ ի բաց փախիցես։* 4 *Յաղագս այնորիկ ասէ, թէ «զԱստուծոյ աւրէնսն կատարէ», թէպէտ եւ դու տգիտանայցես, սակայն Աստուած այնպէս կարգեաց։* 5 *Եթէ տանջելոյ սպասաւոր է, վրէժխնդիր է առաքինութեան եւ հալածիչ չարեաց, զոր եւ Աստուած իսկ կամի. յիրաւի, այնպիսին Աստուծոյ պաշտաւնեայ կոչեսցի։* 6 *Զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ, այլ Աստուծոյ սպասաւոր է։* 7 *Եւ զի ո՛չ է վայրապար սուրն, զոր ետ Աստուած ի ձեռն իշխանին։*

ԻԵ. 1 *Տեսցուք զպիտանութիւն իշխանութեանն եւ զսրոյն, զորս ի գործ արկանէ ըստ ժամանակի եւ ըստ դիմաց, թէ որոց սրովն սաստիկ երեւի եւ զորս սրովն խնամարկեալ պահէ։* 2 |96ա| *Վասն որոյ խրատ կարգեալ է յիմաստնոց, եթէ իշխանին պիտոյ են երիս իրս այսոքիկ։* 3 *Առ դիմադարձսն՝ համարձակութիւն։* 4 *Առ ժամանակն՝ բնութիւն։* 5 *Ընդ ձեռամբ անգեալսն՝ բարեմտութիւն։* 6 *Եւ առ դիմադարձսն համարձակութիւն այն իսկ է, զի յարտաքին թշնամիսն, ա՛յս է՝ յաւտարսն եւ ի հակառակսն իշխանութեանն համարձակապէս եւ հզաւրաբար զաւրս կազմել եւ պատերազմել։* 7 *Իսկ առ ժամանակն՝ բնութիւն։* 8 *Ըստ իմաստնոյն խրատու առնել եւ զայս զժամանակն ճանաչել պատերազմի եւ խաղաղութեան, զի թէ գիտէ՛ թէ ո՛չ կարէ մարտնչել, ըստ Տեառն խրատու նստեալ խորհիցի, թէ կարող է ԺՌ.աւ (10.000) զդէմ ունել այնմ, որ գայցէ ի վերայ նորա ԻՌ.աւ (20.000), ապա թէ ոչ, հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն։* 9 *Է՛ զի եւ գանձս տացէ, զի վասն այնորիկ են գանձք։* 10 *Եւ*

---

[1] *Ճ հոգիկ աղքատաց*

ամենայնիւ հնարեսցի զփրկութիւն երկրի։ 11 *Եւ այսպէս, յամենայն իրս ընդ փոփոխման ժամանակին հնարել եւ զհետ գնալ ժամանակին։* 12 *Իսկ ընդ ձեռամբ անգեալսն՝ բարեմտութիւն, ո՛չ խիստս եւ անողորմ բարուք լինել եւ անողորմաբար*[1] *եւ առանց ցաւակցութեան, յայլոց քրտանց եւ յաշխատութեանց զլիութիւն սեղանոյ եւ զպճնումն հանդերձի առաւելուլ, քան զչափն, զի մի՛ աղաղակ զրկելոց հասցէ յականջս Տեառն զաւրութեանց։*

Իզ. 1 *Եւ յաւրինակ առցուք զ Դաւիթ, որ զերեսինս զայս գործեաց՝ ի խրատ թագաւորաց եւ իշխանաց, զի ունէր առ դիմադարձսն համարձակութիւն, որպէս առ Գողիադ, որ զաւուրս բազումս արձանանայր ընդ|96բ|դեմ Իսրայիլի, եւ նախատէր զբանակն Աստուծոյ կենդանւոյ։* 2 *Իսկ Դաւիթ վստահացեալ ի շնորհ աւծմանն, ե՛լ ընդդէմ նորա, զի գիտէր հոգւովն, թէ որ էաւծ զնա Սամուէլ հրամանաւ, ո՛չ մեռիցի մինչեւ թագաւորեսցէ։* 3 *Իսկ առ ժամանակն բնութիւն, զի գիտէր ժամանակ ներելոյ եւ սպանանելոյ, որպէս եւ ի ժամ փորձութեանն, յորժամ հալածական լինէր յորդւոյն, համբերէր նախատանացն Սեմէի (տե՛ս Ա. Թգ. ԺՁ. 1-13, ԺԷ.)։* 4 *Իսկ ի ժամ մահուն պատուէր տայր Սողոմոնի, որդոյ իւրոյ, ասելով. «Տե՛ս իմաստութեամբ քով եւ [մի] իջուսցես զծերութիւն նորա արեամբ ի գերեզմանի» (հմմտ. Գ. Թգ. Բ 6)։* 5 *Իսկ ձեռամբ անկելոցն բարեմտութիւն այսպէս արար, զի յորժամ վասն համարելոյ զժողովուրդն Աստուծոյ առաքեաց Աստուած զԳադ մարգարէ առ Դաւիթ եւ ասէ. «Երիս իրս ածեմ ի վերայ քո, ընտրեա՛ զմի ի նոցանէ. եթէ տաց յերկրի քում սով զերիս ամս, եւ կամ թէ հալածումն քեզ զերիս ամս, եւ կամ զերիս աւուրս մահ» (տե՛ս Բ. Թգ. ԻԴ. 12-13)։* 6 *Իսկ Դաւիթ ասէ. «Վտանգէ ինձ յամենայն կողմանց, բայց անկայց ի ձեռս Աստուծոյ եւ մի ի ձեռս թշնամեաց» (տե՛ս Բ Թգ. ԻԴ. 14), եւ ընտրեաց իւր զմահն։* 7 *Եւ սկսեալ յայգուէ մինչեւ ի ժամ ճաշու՝ մեռան ՀՌ. (70.000)։* 8 *Եւ ասէ Դաւիթ ցաւելով ի վերայ ժողովրդեանն, եւ աղաղակէ առ Աստուած. «Ես մեղա՛ հովիւս, դոքա զի՞նչ արարին գառինքդ. յի՛ս եւ ի տուն հաւր իմոյ եղիցի սուր քո» (տե՛ս անդ, 17)։* 9 *Եւ այսպէս բարեմիտ լեալ առ ժողովուրդն՝ ի հաշտութիւն դարձուցանէ զԲարերարն։*

Իէ. 1 *Ջսոյն եւ առաքեալն խրատէ. «Եթէ ոք իւրոցն, մանաւանդ ընտանեացն, խնամ ո՛չ տանիցի, ի հաւատոյն որոշեալ, եւ ե՛ւս չար, քան զանհաւատսն է» (տե՛ս Ա. Տմթ. Ե. 8)։* 2 *Եւ |97ա| զայս ո՛չ վասն արեան մերձակայիցն ընտանութեան միայն ասէ, այլ որ ընդ ձեռամբ են ծառայք եւ*

---

[1] *Ձ անզարմաբար*

սպասաւորք տանն։ **3** *Դարձեալ եւ նոցա, որ ըստ հաւատոյ ընտանիք իցեն։* **4** *Վասն որոյ ասէ. «Հարկ է հնազանդ լինել ո՛չ միայն վասն բարկութեանն, այլեւ վասն մտացն խղճի» (***Հռմ. ԺԳ. 5***)։* **5** *Զի՞նչ է, եթէ ոչ միայն վասն բարկութեանն. ո՛չ միայն ընդդէմ կացեր Աստուծոյ հնազանդելոյն, եւ թէ չթուի քեզ, թէ մեծագոյն չարիս քեզ կազմեցեր եւ յԱստուծոյ եւ յիշխանէն, այլ զի եւ ի մեծամեծսն*[1] *քեզ երախտաւոր լինի եւ զխաղաղութիւն ընձեռէ։* **6** *Եւ բարկութիւն իսկ քաղաքաց յայնպիսի իշխանէ լինի. եթէ զնա՛ մերժիցես, ամենայն առհասարակ ի վայր կործանի քաղաքք եւ գաւառք, որպէսզի մի՛ առանց խղճի մտաց ինչ լինիցի չհնազանդելն, եւ անագորոյն առ երախտաւորն լինիցիք։* **7** *Նմին իրի գրեալ է եւ յԱստուածային աւրէնսն, եթէ «զԱստուածս, ժողովրդեան քո մի՛ հայհոյեր» (***տե՛ս Ելք ԻԲ. 28***)։* **8** *Ընդ նմին յաւել, թէ եւ՝ «մի՛ զիշխանս» (***տե՛ս Գրծ. ԻԳ. 5***), զի որպէս ասեն քերթողքն, մերձազաւակք եւ մաւտասերք եւ նոյնասերմանք են աստուածոց իշխանքն։* **9** *Վասն որոյ աստուածաբար մահու եւ կենաց իշխանութիւն ունին տալոյ հրաման։* **10** *Եւ զի հայհոյել, կամ արհամարհել զիշխանս ի բարկութիւն շարժէ, եւ բարկութիւն իշխանին հասարակաց ամենայնի վնասէ։*

ԻԸ. **1** *Եւ դարձեալ, զի գովութիւն իշխանին եւ գոհութիւնն յարմարական է, որով քրք[ր]ել զմիտսն շարժի ի բարեգործութիւն։* **2** *Սորին վասն ասէ. «Հարկս հարկանէք, զի Աստուծոյ պաշտաւնեայ են» (***Հռմ. ԺԳ. 6***) ի սոյն ժուժկալեալք։* **3** *Եթող զամենայն երախտիսն ասել, որ քաղաքի եւ ամենայն աշխարհի յիշխանացն* |97բ| *լինի։* **4** *Եւ զայս ամենայն միով բանիւ եցոյց, եթէ երախտիս առնուս ի նոցանէ, ասէ, դու իսկ վկայ ես, զի հարկս տաս նոցա, այսինքն՝ վարձ ընդ երախտեացն։* **5** *Տե՛ս զիմաստութիւնն Պաւղոսի, զի որ թուէրն տաղտկալի հարկացն պահանջումն, զայն ի դէմս ածէ նոցա խնամոցն։* **6** *Է՞ր, ասէ, հարկս տամք թագաւորի. ո՛չ որպէս հոգողի եւ յառաջախնամողի եւ վերակացուի զվարձսն ընդ երախտեացն հատուցանեմք. նա՛ եւ ո՛չ տայաք հարկս, թէ չէր ի սկզբանէ գիտացեալ, թէ շահիմք ինչ յայսպիսի հրամանաց, այլ անտուստ ի վերուստ միահամուռ ամենայն ազգի մարդկան հաճոյ թուեցաւ ամենայն իշխանաց ի մէնջ կերակրիլ. զի իւրեանց տանց անփոյթ արարեալ, զամենայն աշխարհ հոգան, եւ զամենայն պարապմունս յայն ծախեն, զի մե՛ր կեանք ամբողջ պահեսցին։* **7** *Եւ մի՛ ինձ այժմ զայնցանէ*[2] *ասեր, որ զիրս չարաչար ի կիր արկանեն, այլ ի կարգաւորութիւն բարեզարդութեանն*[3] *հա-*

---

[1] *Ձ՝ այլեւ մեծամեծսն*
[2] *Ձ՝ յայնցանէ*
[3] *Ձ՝ բարեզարդութենէ*

յեաց, եւ ապա տեսանես անտէն ի սկզբանն զայսպիսի աւրէնսդրութեան զիմաստութիւնն։ **8** *Վասն որոյ ասէ. «Աստուծոյ սպասաւորք են» ի նոյն կանխեալք։* **9** *Արդ, եթէ Աստուծոյ սպասաւո՛ր է պա՛րտ է գիտել, թէ որովք գլխովք եւ իրաւք վճարին իրք սպասաւորութեանն Աստուծոյ։* **10** *Առաջին գիտելն, թէ ընդ իշխանութեամբ Աստուծոյ է։* **11** *Երկրորդ, թէ իշխան մարդկան է։* **12** *Երրորդ, թէ ո՛չ միշտ իշխան է։* **13** *Եւ արդ, զի ընդ իշխանութեամբ Աստուծոյ է. չորիւքս այսոքիւք պարտ է զիշխանութեանն Աստուծոյ զպատկեր եւ զնմանութիւն յանձին բերել։* **14** *Առաջին զքաղցրութիւն բարուց։* **15** *Երկրորդ. խոնարհութիւն հոգւոյ։* **16** |98ա| *Երրորդ ճշմարտութիւն բանից եւ գործոց։* **17** *Չորրորդ. առատութիւն ձեռին։*

ԻԹ. **1** *Արդ, պիտոյ է իշխանին քաղցրութիւն բարուց, որով պատկեր ասցի Աստուծոյ, զի որպէս քաղցր է Աստուած եւ գթած եւ բարի։* **2** *Եւ հանրական է քաղցրութիւնն։* **3** *Իսկ մասնաւորաց՝ գթութիւնն եւ բարութիւնն. ըստ այնմ «Քաղցր է Տէր առ ամենեսեան, եւ գթութիւն նորա ի վերայ երկեղածաց իւրոց» (տե՛ս* **Սղմս. ՃԽԴ. 9***)։* **4** *»Եւ բարի առնէ Տէր բարեացն եւ ուղղոցն» (տե՛ս* **անդ, ՃԻԴ. 4***)։* **5** *Արդ, քաղցրութիւն ամենեցուն է եւ գթութիւն՝ երկեղածացն, եւ բարութիւն՝ բարեացն։* **6** *Այսպէս եւ իշխանին պարտ է լինել ամենեցուն քաղցր, եւ ոյք երկնչին՝ գթած, եւ բարեգործացն՝ բարի։* **7** *Իսկ խոնարհութիւն հոգւոյ իշխանին կարի՛ գեղեցիկ եւ զարմանալի եւ վայելուչ է, զի այլ մեծութեանն պատճառքն արտաքուստ է, իսկ խոնարհութեանն գեղեցկութիւնն յանձնէ է։* **8** *Զորս եւ Սողոմոն խրատէ. «Յորժամ ի մեծութիւն հասանես՝ ի խոնարհութիւն կալջիր զանձն, եւ առաջի Տեառն գտցես շնորհ» (տե՛ս* **Առակ. ԺԶ. 3***)։* **9** *Որպէս եւ Դաւիթ ասէր. «Ո՞վ եմ ես, Տէր իմ Տէր, կամ ո՛վ տուն հաւր իմոյ, զի այսքան սիրեցեր զիս» (հմմտ.* **Բ. Թգ. Է. 18***)։* **10** *Ո՞չ է տարադէպ սակս խրատու յիշել եւ զբանս թագաւորաց ոմանց ի պատշաճ ժամանակի խաւսեցեալ, որպէս ասաց Դարեհ արքայ առ Աղէկսանդրոս թագաւոր։* **11** *Յորժամ անհուն զաւրաւք դիմեալ*[1] *Աղէկսանդր ի վերայ Դարեհի, եւ եկեալ գտանէ զնա մերձ ի մահ՝ խոցեալ յիւրոց ծառայիցն, ասէ. «Ո՛վ Աղէքսանդրէ, յորժամ գործ հանգէտ Աստուծոյ գործիցես, եւ յերկինս թեւաւք հասանել թուիցիս, ընդ մի՛տ ած եւ գիտեա՛ զհանդերձեալսն, քանզի դիպուած |98բ| բախտի անորիշ բարուք ամենայն ուրեք գնա՛յ, յածի՛, ո՛չ գիտելով թագաւոր եւ զգեղջուկ, եւ ո՛չ զբազմութիւն, որպէս եւ ահա ես. զի՛նչ էի եւ զի՛նչ եղէ»։*

---

[1] *Ձ դեմ ել*

Լ. 1 *Պիտոյ է եւ ճշմարտութիւն գործոյ. զոր աւրինակ, եթէ ոք անուանէ զինքն բժիշկ, կազմէ բժշկանոցս, ստանայ աշակերտս, ժողովէ եւ դեղս բազումս, եւ թէ ո՛չ գիտէ զարուեստ եւ զխառնուած դեղոցն, սո՛ւտ են ասացեալքն ամենայն։* 2 *Այսպէս եւ իշխանն եւ թագաւոր բժիշկ է հասարակաց ժողովրդեանն, ունի բժշկանոց՝ զարքունի՛սն, աշակերտ՝ զսպասաւորսն, հիւանդս՝ զժողովուրդսն, եւ թէ ո՛չ գիտէ զթագաւորական եւ զիշխանական սահման եւ զգործ՝ ո՛չ է ճշմարիտ։* 3 *Պա՛րտ է եւ բանի իշխանին ճշմարիտ լինել, զի բանիւն եմք պատկեր Աստուծոյ, եւ որպէս թէ ոք հարկանէ արծաթ խառն, որ ոչ ունի զանուն եւ զգիր թագաւորի, արժանի մահո՛ւ է, նոյնպէս որ խառնէ ստութիւն ի ճշմարտութիւնն Աստուծոյ, ըստ այնմ կորուսանէ՛ Տէր զամենեսեան, ոյք խաւսին սուտ։* 4 *Իսկ առատաձեռն լինել՝ առաւել եւս հաճոյ է յաչս մարդկան եւ առաջի Աստուծոյ, զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած, զի որպէս ոչ ամբք զանձրեւ եւ ոչ բնութիւն երկրի զբոյսս արգելուն, նոյնպէս եւ որք ունին զտէրութիւնսն, ո՛չ է պարտ զրկել զծառայակիցսն, զի միոյ Տեառն ծառայ եմք։* 5 *Եւ գոհանալ պա՛րտ է իշխանին, զի ի բարի արարողացն եղեւ եւ ոչ ի բարի՛ կրողացն։*

ԼԱ. 1 *Այսոքիկ, զի ընդ իշխանութեամբն Աստուծոյ է։* 2 *Իսկ զի իշխան մարդկան է, պա՛րտ է զչորքս զայսոսիկ ածել զմտաւ։* 3 *Առաջին. գիտել զչափ անձին զիւրն եւ զայնոցիկ, որոց իշխանն է, զի* |99ա| *ի նմին հողոյ մինն իշխէ եւ մինն իշխեցեալ լինի, մինն կարգէ զհարկն եւ մինն ընդ հարկաւ մտանէ։* 4 *Եւ այսոցիկ մի՛ պատկերն եւ մի՛ արժանաւորութիւնն միեւնոյն կենաց ժառանգաւորք, յաղագս որոց Քրիստոս նմանապէս մեռաւ։* 5 *Երկրորդ. որ իշխանն է մարդկան, ո՛չ է պարտ հաւասար կարծել հաւտից իշխել անբանից եւ անդէոց։* 6 *Նոյնպէս համարել եւ զիշխելն մարդկան. մի՛ արհամարհեր իբրեւ զանբանս զմի՛ ոք ի փոքրկանց, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հաւրն երկնաւորի, այլեւ խնամ տանել առաւել, քան զիշխողս հաւտից, զի նոքա*[1] *մարմնոյ խնամակալութիւն պահանջին, եւ դու բանաւորաց հոգւոց եւ անձանց անմեղաց տնանկաց։* 7 *Երրորդ. իշխանացն որքան բարձրութիւնն եւ արժանաւորութիւնն է, այնքան եւ վտանգն, եւ որքան բազմութեան իշխա՛ն է, պա՛րտ է այնքան աչս ունել տեսանողս եւ ունկն՝ ի լսել, զի մի՛ վրիպեսցի յիրաւանց։* 8 *Եւ որքան իշխանութիւնն*[2] *է յոլովից, այնքան եւ չարն տարածեալ լինի, զի ոչ ասր զներկուածն եւ ոչ անուշահոտ ինչ եւ կամ գար-*

---

[1] *ձ՛ > նոքա*
[2] *ձ՛ իշխանութեանն*

շահոտ ազդէ այնքան յընդունակսն, եւ ոչ ժանտախտ ի տարածումն ի մարդիկ, որքան եւ դիւրին եւ հեշտաբարն տարածեալ փոխի չարն յիշխանացն առ իշխեցեալսն։ 9 *Որպէս սակաւ աւշինդր զբազում մեղր դառնացուցանէ, եւ մեղր յոլով զսակաւ աւշինդր ո՛չ քաղցրացուցանէ, այսպէս փոքր ինչ տեսակ մեղաց յիշխանացն զամենայն ժողովուրդսն խմորեալ պղծէ։* 10 *Իսկ ի բազում առաքինութենէն* |99բ| *սակաւ ինչ ընդունին։* 11 *Չորրորդ. գիտել է, թէ արուեստ է իշխանութիւնն, զի եթէ փողք եւ քնարք եւ կաքաւիչք եւ այլ ամենայն արուեստք ժամանակաւ եւ աշխատութեամբ ուսեալ լինին, որքա՞ն մարդկան իշխանութիւն եւ վերակացութիւն։* 12 *Եւ զի ո՛չ միշտ իշխան է, զտնտեսին առցուք ի մէջ զաւրինակ, առ որ ասաց Տէր նորա. «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո, զի եւ ո՛չ եւս կարես լինել տնտես»* (**Ղկ. ԺՁ. 2**)։ 13 *Եւ զհատումն թզենոյն, եւ զոր ասաց տէր այգւոյն ընդ այգէգործն. «Կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրս խափանէ»* (**հմմտ. անդ, ԺԳ. 7**)։ 14 *Կամ զայն մեծատուն, առ որ ասաց Քրիստոս. «Անմի՛տ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեմ, իսկ զոր պատրաստեցեր, ո՞ւմ լինիցի»* (**տե՛ս անդ, ԺԲ. 20**)։

ԼԲ. 1 *Արդ, զի անվրէպ լինելոց է, ապա իմաստութեամբ խորհել զչորսս զայսոսիկ։* 2 *Խորհրդակից առնուլ զիմաստունս, պատուել զարժանաւորսն, պատժել զյանցաւորս, նմանել մաքրագոյն ոսկոյ։* 3 *Պիտոյ է իշխանին խորհրդակից։* 4 *Առաջին. զի մարդ է մահկանացու եւ տկար. եւ Աստուած զմարդն ո՛չ ինքնաբաւ արար, այլ խրատտուի եւ խորհրդակցի կարաւտ։* 5 *Պարտ է իմաստուն խորհրդակցաւ վարել զիշխանութիւնն։* 6 *Յայս խոնարհամիտքն յանապազ ստիպին, իսկ վէսքն եւ անպարտաւանքն ո՛չ խոնարհին, այլ առ յինքեանս թագաւորացուցանեն, անկարաւտ գիտելով զանձինս ուղղչի։* 7 *Ըստ որում ասէ Սաղամոն. «Յապաղեն զխորհուրդս, որք ո՛չ պատուեն զխորհրդակիցս»* (**Առկ. ԺԵ. 22**)։ 8 *Իսկ որ զայլոց խորհրդակցութիւն առնու, ոաուցանէ իմաստունն զաւգու*|100ա|*տն, որ անտի ասելով. «Ի սիրտ խորհրդականաց հաստատի խորհուրդ»* (**Առկ. ԺԵ. 22**)։ 9 *Զի տալով զբանս իւր ի խորհրդակիցս որոճալ ի նոսա ընտրողութեամբ եւ վկայեն ուղիղ խորհրդոցն եւ հաստատեն ի նոյնն։* 10 *Որպէս զաւրինակ սոցա տեսանեմք եղեալ առ Սաւուղ եւ Դաւիթ, զի Սաւուղ, որ արհամարհեաց առնուլ զՍամուէլ խորհրդակից, բարկացոյց զԱստուած ապրեցուցանելովն զԱգագ թագաւոր։* 11 *Իսկ Դաւիթ ա՛ռ խորհրդակից զՔուսի եւ խափանեալ զխորհուրդն Աքիտոփելայ եւ ապրեցաւ յորդւոյն* (**հմմտ. Բ. Թգ. ԺԵ.-ԺԸ.**)։ 12 *Վասն որոյ կարի՛ պիտանացու է իշխանաց խորհրդակցութիւն իմաստնոց։*

ԼԳ. 1 *Երկրորդ. պատուել արժան է իշխանացն զարժանաւորսն, զի մի*

եւ սա՛ է ի տասանց առաքինութեանցն, որ բնակողս արքայութեանն երկնից առնէ զգործաւղն, զոր եւ Դաւիթ հարցաներ առ Աստուած. «Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում քահանայ, եւ կամ ի լեառն սուրբ քո թագաւոր»։ 2 *Պատասխանէ հոգին, թէ՝ «Որ զայսոսիկ գործէ զառաքինութիւնս»։* 3 *Առաջին՝ «որ գնայ անբիծ»։* 4 *Երկրորդ՝ «գործէ զարդար»։* 5 *Երրորդ՝ «խաւսի զճշմարտութիւն ի սուրբ սրտէ»։* 6 *Չորրորդ՝ «որ ո՛չ նենգաւոր է լեզուաւ»։* 7 *Հինգերորդ՝ «չա՛ր ընգերի ո՛չ արար»։* 8 *Վեցերորդ՝ «ոչ նախատէ զայլս եւ ոչ առնու փոխարեն»։* 9 *Եւթներորդ՝ «արհամարհէ զչարագործն եւ ո՛չ հաղորդի, թէպէտ եւ մեծ ոք է»։* 10 *Ութերորդ՝ «զերկեղածս Տեառն մեծարէ»՝ կցորդ լինելով նոցա։* 11 *Իններորդ՝ «զարծաթ ի վարձու ո՛չ տա»։* 12 *Տասներորդ՝ «կաշառ ի վերայ իրաւանց ո՛չ առնու»* (**հմմտ. Սղմս. ԺԴ. 1-5**)։ 13 |100բ| *Որ զայս արասցէ, ո՛չ սասանի յայժմու կեանս եւ ոչ ի հանդերձեալնն, եւ ո՛չ թիւրի ի ճանապարհէ խորանին, եւ ո՛չ ի բնակութենէ նորա յաւիտենից։* 14 *Եւ այսոքիկ կարի վայելչական թուին ինձ թագաւորաց եւ իշխանաց։*

ԼԴ. 1 *Երրորդ. պատժե՛լ եւ պատուհասե՛լ արժան է իշխանացն զյանցաւորս եւ ո՛չ սիրել եւ մերձաւորս առնել, եւ կամ թոյլ տա՛լ գնալ ըստ ախորժակաց։* 2 *Ըստ որում, գրէ իմաստունն՝ «Յրումն*[1] *անբարշտաց՝ թագաւոր իմաստուն, եւ արկանէ՛ զնոքաւք անիւ»* (**Առակ. Ի. 26**)*, ըստ որում յԻսրայէլ՝ Եզեկիայ եւ Յովսիայ եւ յեկեղեցիս՝ Կոստանդիանոս եւ Թէոդոս, զի սոքա ցրուեցին զամբարշտեալսն կռապաշտութեամբ եւ հերետիկոսութեամբ յեկեղեցւոյ, որպէս եւ նոքա յԻսրայէլէ։* 3 *Եւ որպէս անիւ դիւրաշուրջ է ներքինն ի վերին եւ վերինն՝ ներքին, նոյնպէս եւ սոքա զամբարշտեալսն հոսեն ի խոնարհ եւ զբարեպաշտսն բարձրացուցանեն։* 4 *Եւ ա՛յս է գործ ճշմարիտ եւ աստուածասէր իշխանաց եւ թագաւորաց։* 5 *Չորրորդ. ըստ նմանութեան ոսկւոյ եւ արծաթոյ, պարտ է իշխանաց սուրբ եւ անխառն մնալ ի ժանկոյ եւ յաղտոյ յամենայն իրս եւ յամենայն ժամանակս, զի ոսկի եւ արծաթ հրոյ կարաւտին, առ ի սրբել զխառնուածս աղտեղութեանն։* 6 *Իսկ թագաւորք եւ իշխանք արդար դատաստանին Աստուծոյ։* 7 *Արդ՝ լսելով զայսոսիկ աստէն մաքրեսցուք հրով սիրոյն Աստուծոյ, սրբելով զանձինս, եւ մի՛ կացցուք մնասցուք աղտեղեալ՝ վերջին հրոյն կարաւտացեալք անշիջանելոյն եւ տաժանագունին։*

ԼԵ. 1 *Ընկալարուք յանձինս աւրինաւքն Աստուծոյ զտիպ աստուածա-*

---

[1] *Ձ Ա. լրումն*

յին պատկերին եւ իբրեւ զկնիք մատանոյ ի մոմ տպաւոր|101ա|եսջիք, եւ դուք նոյն աւրինաւք՝ ի հնազանդելոցն անձինս, վասնզի պատկեր Աստուծոյ ես եւ զպատկեր Աստուծոյ ի ձեռին ունիս։ **2** *Ոչխար ես աստուածային հաւտին սքանչելի եւ արջառ*[1] *մեծի Հովուին եւ զարեամբ գնեալ Քրիստոսի գառինսն ի ձեռին ունիս։* **3** *Հանդերձ Քրիստոսիւ իշխես. ի նմանէ՛ է քո սուրդ՝ ո՛չ ի գործ, այլ ի սպառնումն, որ մաքուր նուէր տուողին պահեսցես զսակաւ ժամանակս, յոր հաւատացան քեզ տէրունիքն։* **4** *Հաւատարիմ եւ իմաստուն տնտես երեւեսցիս յաշխարհի, զի ընդ փոքուս եւ անցաւորիս արդարապէս դատելոյ տացէ՛ Քրիստոս զանանցն եւ զմշտնջենաւորն ի վերայ Ժ. (10) քաղաքաց ունել իշխանութիւն, որ է ամենայն բարեացն կատարելութիւն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ սուրբ Հոգւոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։*

[1] *Ա արճար*

Ժ.

|101ա| ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑ[Ի]ՈՅ, Ի ԲԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԴԱՒԹԻ. «ՍՔԱՆՉԵԼԻ ԵՂԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՔՈ ՅԻՍ» (ՍԱՂՄ. ՃԼԸ. 6). ՅԱՆԱՒԱՐՁԱ ԽՕՍԵՑԵԱԼ՝ ԱՌ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ճառի հանգամանալի գնահատականը թողնելով մասնագետ աստվածաբաններին՝ նկատենք, որ հոգեւոր բարձր ատյանում, բազմաթիվ նշանավոր անձանց ներկայությամբ կարդացած այս փայլուն ճառում Երզնկացին քրիստոսաբանության այնպիսի խորունկ վերլուծություններ է կատարում, որոնք մեծ արժեք ունեն Հայոց Առաքելական եկեղեցու կողմից խնդրի ուսումնասիրության պատմության համար:

Ինչպես վերնագիրն է հուշում, ճառը կարդացվել է Կիլիկիայի Անավարզա քաղաքում, ժամանակի նշանավոր հոգեւոր գործիչ, Անավարզացի եպիսկոպոս, ապա նաեւ Կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու առաջարկությամբ: Վերջինս, ինչպես հայտնի է, իր ունիթորական գործունեության եւ կաթոլիկ եկեղեցուն լուրջ զիջումներ անելու համար արժանացել է ժամանակակիցների խիստ քննադատությանը: Սակայն ուշագրավ է, որ նրա ամենախիստ քննադատներն ու գաղափարական հակառակորդներն անգամ, ինչպես Ստեփանոս Օրբելյանը, չեն խորշում նշել նրա անձնական բարձր հատկանիշները՝ ինչպես իմացաբանական, այնպես էլ կենցաղային հարցերում: Օրբելյանը, խիստ քննադատելով նրա գործունեությունը եւ անուղղակի մեղադրելով նրան Կոստանդին Բ. կաթողիկոսին հրաժարեցնելու գործում, միաժամանակ գրում է. «այր գիտնական եւ առաքինի, սիրող եկեղեցւոյ, տօնասէր եւ տօնախմբիչ տօնից տէրունականաց, եւ պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց, գիտեր եւ զլեզու եւ զդպրութիւն լատին եւ յոյն ազգին»[1]:

Երզնկացին եւս, ավելի մոտիկից ճանաչելով Անավարզեցուն, շատ բարձր է գնահատում նրա ոչ միայն գիտական բարձր հատկանիշները՝ պատվելով նրան «վարդապետ» տիտղոսով, այլեւ գրելով. «Զիմաստութիւն տեսականին եւ գործնականին զառաքինութիւն ի մարդ հետազօտեալ ըստ չորից նշանակութեանց գաղափարեալ տեսանի»: Եւ ահա, բավական հանգամանալի նկարագրելով մարդկային առաքինության չորս հատկանիշները, շարունակում է. «Ըստ որում եւ ինձ պատահեալ վեհագունի Տեառնդ, իբր ի քառավտակ գետոցն եդեմաբուխ ոռոգանի երկիր, եւ ինձ առ ի էն քառակի այս նշանակութեամբք բոլորովին լցեալ զուարճանայ երկիր մարմնոյս եւ զգայութիւնք հոգւոյս, ի զուարթ եւ ի հրեշտակատիպ դիմացդ տեսութենէ, ի քաղցր եւ յախորժական բանիցդ արդիւնականէ, յամենալի եւ ի յոգնափայլ ծաղկանցդ առաքինութեան, որ ի հոգւոյդ բուրաստանէ, յիմաստախոհ յա-

[1] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկուա, 1861, էջ 326:*

ռակցաց եղբարց եւ որդւոց հոգեւորաց ի քոյդ զմայլելոց վարժական հանճարասիրութենէ, որ եւ մեծամեծ բարեացս այսմանեաց վայելողս, շարժեալ ի հնազանդութեան օրինացն, եւ ի հարկեցուցիչ հրամանաց, փոքր այս բանիւ սպասաւորել ախորժեմ ձերում մեծահանդէս ատենիդ, զոր մարգարէն Դաւիթ ասէ. «Սքանչելի եղեւ գիտութիւն քո յիս» (ՄՄ 2173, 103աբ):

Արդ, ինչպե՞ս եւ ե՞րբ կարող էր Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի պաշտպանության ախոյան Հովհաննես Երզնկացին մեծարել Գրիգոր Անավարզեցուն, որքան էլ հիացած լիներ վերջինիս արժանիքներով: Կարծում ենք՝ Երզնկացին Դրազարկում եղել է եւ այս ճառը կարդացել դեռեւս Լեւոն Գ. թագավորի եւ Կոստանդին Բ. Կատուկեցի կաթողիկոսի գահակալության շրջանում, երբ, ինչպես վկայում է Վարդան Արեւելցուն աշակերտելիս Երզնկացու դասակից եղած մեկ այլ նշանավոր վարդապետի՝ Գեւորգ Սկեւռացու կենսագիրը, թեեւ Կիլիկյան արքունիքում եւ որոշ հոգեւորականների մոտ, այդ թվում նաեւ արքայազնի ուսուցիչ Վահրամ Ռաբունու, տարիներ ի վեր առկա էին ունիթորական նկրտումներ, սակայն քանի դեռ կենդանի էր Լեւոն Գ. արքան, նրանք չէին հանդգնում բացահայտ գործել[1]:

Մինչդեռ ինչպես հայտնի է Անավարզեցու՝ ունիթորներին հարելու անվերապահ գործունեությունը բացահայտվեց շատ ավելի ուշ, երբ Հովհաննես Երզնկացին կնքել էր իր մահկանացուն:

Հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 101ա-31բ) եւ 2854 (Ճ. 122բ-129բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Զիմաստութիւն տեսականին եւ զգործնականին զառաքինութիւն ի մարդ հետազատեալ՝ ըստ չորից նշանակութեանց գաղափարեալ տեսանի:* **2** *Ի կերպարանս տեսակի երեսացն, ի բարբառոյ լեզուի արտաբերական բանին, ի վարս կենաց քաղաքավարիցելումն եւ ի շարժումն գնացից անդամոց մարմնոյ, ի մերձաւոր յարակիցս եւ յընտանի սիրելիս, զոր ախորժէ ընտրութեամբ խոհականին:*

Բ. 1 *Արդ, դասիւ եւ զաւրութեամբ առաջին է ճանաչել զոք ի դէմս կերպարանի երեսացն, երկուս ունելով վկայութիւնս՝* |101բ| *բնաւորական եւ գրաւորական:* **2** *Եւ է բնաւորականն, զի որպէս ի հայելւոջ տեսանէ ոք նկարեալ*[2] *անմարմնաբար զկերպացեալն պատկեր:* **3** *Նոյնպէս եւ ի դէմս երեսացն եւ յերեւոյթ զգայական մասանցն տպաւորեալ ձեւանայ անմարմին հոգւոյն կերպարանաց տեսակ, վասն զի Արարիչն, որպէս հայելի յաւրինեաց զսա անմարմին հոգւոյն, զի որպէս ի ձեռն հայելեաց մարմնոյս ձեւոյ յատկութիւնք երեւեալ լինին, այսպէս եւ հոգւոյն՝ ի ձեռն երեսաց եւ դիմաց, մանաւանդ զտեսանելիսն ասեմ զաչսն, որ ամենայնիւ*

---

[1] *ՄՄ ձեռ. 8356, էջ 211ա,* Է. Բաղդասարեան, *Գէորգ Սկեւռացու վարքը.- «Բանբեր Մատենադարանի», 7, 1964, էջ 421:*

[2] *Ճ նկարէ*

ընդ նորա յեղանական շրջափոխի, զոր երկարութիւն է ի մէջ բերել զսորա նշանական։ 4 *Հաստատի այս եւ գրոց վկայութեամբ, ըստ*[1] *իմաստնոյն՝ «Սրտի բերկրիցելոյ երեսք զուարթ են»* (**հմմտ. Առակ. ԺԵ. 13**) *եւ թէ՝ «Այր բարկասիրտ՝ տգեղ է կերպարանաւք»* (**հմմտ. Առակ. ԺԱ. 25**)*, յայտ է, զի ունակութիւն անմարմին հոգւոյն ի դէմս երեսացն տրամադրեալ տեսանի։* 5 *Եթէ ոք յաստուածային եւ ի մնացական բարիսն բերկրական խնդութիւնս ունի, եւ թէ յերկրաւոր եւ ի մարմնական հեշտալիսն, զնոյնն եւ ի վերայ բարկութեանն է տեսանել։*

Գ. 1 *Իսկ երկրորդ նշանակութիւնք ծանաւթութեան հոգւոյ՝ արտաբերականն բան, որ ի բարբառոյ լեզուին յառաջ գայ, իբր զջուր ընդ ակունս աղբեւրաց բխեալ են, որ քաղցր եւ ախորժելի ճաշակաց, եւ է՛ն, որք դառն եւ աղտաղտուկ, որք նախքան զանաւթս ամանոյ ջրաւորացն՝ յիւրեանց իսկ ակունսն լցեալ ունին զզանազան որակացն զաւրութիւն։* 2 *Այլեւ որպէս յըշտեմարանէ գանձուց՝ զամբարեալսն ի սրտի յառաջ բերեն բանք* |102ա| *լեզուի, որ եւ յայտնէ զծածուկս ոգւոյն։* 3 *Զոր աւրինակ իմաստուն բժիշկք զծածուկ ախտսն ի յայտնի նշանացն ճանաչեն՝ Տեառն մերոյ տալով զտարացոյց։* 4 *«Մարդ բարի ի բարի գանձուց սրտի՛ իւրոյ բխէ զբարիս, եւ մարդ չար*[2] *ի չար գանձուց սրտի իւրոյ բխէ զչարիս, զի ի յաւելուածոյ սրտի խաւսի բերան ն[որա]»* (**Ղկ. Զ. 45**)*, վասն զի բանք լեզուի են պատգամաւորք սրտի, եւ զորս լցեալ ունի ի ժողովս խորհրդոցն՝ զնոյնս բխէ։* 5 *Որպէս եւ մարգարէն Դաւիթ զգործս բարութեանն Քրիստոսի մարգարէական հոգւով ծովացեալ ունելով ի սրտի, ասէ. «Բխեսցէ սիրտ իմ զբան բարի»* (**տե՛ս Սղմս. ԽԴ. 2**)*։*

Դ. 1 *Եւ երրորդ, զի իբրեւ զդրախտ իմն ամենապատիկ տնկովք լի զբանական ոգիս մեր զարդարեաց Արարիչն, եւ յիշխանական միտսն տնկեաց իբրեւ զծառս զտեսակս իմաստութեանցն, զի որպէս արմատք տնկոց եւ բոյսք սերմանեաց ի պտուղս իւրեանց ցուցանեն զզանազան ունակութիւնս որակութեանցն, այսպէս առաքինութեանցն տեսակք եւ իմաստութիւնք հանճարոյ արմատացեալ յոգւոջ, ըստ զանազան մասանցն յարմարութեան ի գեղեցկութենէ գործոցն տա՛ն զքաղցր եւ զախորժելի ճաշակս ի մերձաւորսն։* 2 *Եւ որպէս յամենալի դրախտէ տնկոց եւ բուրաստանէ ծաղկանց զճաշակելիս եւ զհոտոտելիս հպելոցն ուրախ առնեն, ըստ որում եւ նահապետն ի հոտ*[3] *հանդերձի որդւոյն զպտուղս իմաստութեան գործոցն եւ զանձնաւորական առաքինութեանցն առեալ*

---

[1] *ձ՛ ընդ] ըստ*
[2] *ձ՛ > չար*
[3] *ձ՛ > ի հոտ*

զճաշակս, ասէր. «Ահա հոտ հանդերձի որդւոյ իմոյ իբրեւ զհոտ անդիմ լիոյ, զոր աւրհնեաց Տէր» (տե՛ս Ծն. Իէ. 27) յորոց իւրաք|102բ|անչիւր ծաղիկք եւ պտուղք գործոց զաւրինակ իմն հոտ առանձին ունի, որ ըստ խոհականութեան է՝ իմաստութիւն, որ ըստ ողջախոհութեանն՝ մաքրութիւն, որ ըստ արիականին է՝ ժրութիւն, որ ըստ արդարութեանն՝ հաւասարաբաշխութիւն, զի այսպէս անուշահոտացեալ են կեանք վարուցն առաքինութեանցն յիւրաքանչիւր առաքինութեանցն. հագագս եւ գոլոշիս ի բա՛ց արձակելով գործովք եւ բանիւք առ մերձաւորսն լաւագոյն, քան ի կնդրկէ եւ յամենայն անուշահոտ խնկոց։ 3 *Զսոյն եւ ի Տեառնէ ուսանիմք ասելով. «Ի պտղոյ անտի ծառն ճանաչի, եւ ի գործոյ անտի ներգործաւղն, զի ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ բարի» (տե՛ս Մտթ. ԺԲ. 32-35, Ղկ. Զ. 43-44)։*

Ե. 1 *Իսկ չորրորդ նշանակ բարեսէր ոգւոյ, որ առ յարակիցսն եւ ընտանի մերձաւորսն է՝ համախոհութիւն։* 2 *Եւ այս երկակի՝ զոմն ընտրութեամբ եւ զոմն փոխատրութեամբ*[1]*։* 3 *Ընտրութեամբ՝ առ յարակցութիւն զլաւագոյնսն եւ զազնիւս, եւ փոխատրութեամբ առ նոսին զունակացեալ բարոյն առաւելութիւն, եւ զյոգնակի մասանց նորին գեղեցկութիւն, զի որպէս բնաւորեալ է արեգական լուսաւորելն եւ հրոյ ջեռուցանելն, եւ անոյշ եղոյ բուրելն յընդունակսն առ որս հպինն, այսպէս եւ անձն բարի ունակութեամբ տրամակայեալ առ մերձաւոր յարափոխել զամենեցունց աւգտակարն, զառաքելականն լնուլ բան՝ առաւել լինել ի գործս Տեառն, քան զբազում ընկերս եւ կամ զտուեալ շնորհսն բազմապատիկ գործել եւ աւգտեցուցանել զորս ը|103ա|նդ նովաւ, առնել զարժանն բարի եւ ուսուցանել զարժանաւորսն բարոյ, մինչ զի իւրաքանչիւր ումէք ի մի՛ վայր եղելոցն ի սիրոյ հաւասարութիւն զՊիթագորեանն կարել բարբարել. «Արդեաւք իցէ սիրելոյ այլ ոք եւս»։*

Զ. 1 *Արդ, որպէս քարինք պատուականք ի լուսանշոյլ փայլմանէն եւ ի բնաւորական զաւրութենէն մեծարի առ վաճառականսն իմաստուն, եւ արմատք եւ ծաղիկք յառողջական զաւրութենէն գովի առ բժիշկս հմուտս եւ հանճարեղս, այսպէս եւ անձն բարոյն՝ Աստուծոյ գեղեցկութեամբ կերպարանել, ըստ այսքան ասացեալ ձեւոցս երեւի անտեսական հոգւոյն զաւրութիւնք՝ ի յերեւելի մարմնոյն նշանակութենէ։* 2 *Ըստ որում եւ ինձ պատահեալ վեհագունի Տեառնդ, իբր ի քառավտակ գետոցն եդեմաբուղխ ոռոգանի երկիր, եւ ինձ առ ի քէն քառակի այս նշանակութեամբք բոլորովին լցեալ զուարճանայ երկիր մարմնոյս, եւ զգայութիւնք հոգւոյս,*

[1] *Ձ փոխաւորութեամբ*

ի զուարթ եւ ի հրեշտակատիպ դիմացդ տեսութենէ, ի քաղցր եւ յախորժական բանիցդ արդիւնականէ, յամենալի եւ ի յոքնափայլ ծաղկանցդ առաքինութեան, որ ի հոգւոյդ քո բուրաստանէ, յիմաստախոհ յարակցաց եղբարց եւ որդւոց հոգեւորաց ի քոյդ զմայլելոց վարժական հանճարասիրութենէ, որ եւ մեծամեծ բարեացս այսքանեաց վայելողս, շարժեալ ի հնազանդութեան աւրինացն, եւ ի հարկեցուցիչ հրամանաց, փոքր այս բանիւ սպասաւորել ախորժեմ ձերում մեծահանդէս |103բ| ատենիդ, զոր մարգարէն Դաւիթ ասէ. «Սքանչելի եղեւ գիտութիւն քո յիս» (տե՛ս Սղմս. ՃԼԸ. 6):

Է. 1 *Արդ, ըստ իմաստնոյ ումեմն, երեք են աշխարհ, առ որ զուարճանայ բանիւ բնական կենդանիս այս մարդ, ունելով տեղի իւրում բանախաւսութեան արուեստին. «Աստուած՝ իմանալի աշխարհ. Աշխարհ՝ զգալի աշխարհ. Մարդ՝ զգալի՛ եւ իմանալի՛ աշխարհ»*[1]*: 2 Եւ ասի Աստուած իմանալի աշխարհ, վասն զյարացոյցսն եւ զնախատիպսն ամենայն աշխարհի յինքեան ունելոյն: 3 Եւ երկրորդ, վասն մասամբք ամենայն աշխարհ անուամբք անուանելոյն: 4 Իսկ աշխարհ է՛ զգալի աշխարհ, վասն ընդ զգայարանս մեր զգայական ազդումն եւ զաւրութիւն տալոյն, յորմէ ամենայն գունոց եւ որակութեանց գեղեցկափայլութիւնք, եւ ձայնից նուագարանաց, եւ բազմատեսակ կենդանեաց եւ անկենդանեաց, ի ձեռն աւդոյդ բացագանչութեան, հոտոց եւ համոց եւ շաւշափական նիւթոց, իբր ընդ դրունս քաղաքի յընդարձակութիւն մտաց մերոց մտանեն: 5 Իսկ զգալի եւ իմանալի աշխարհ՝ մարդ, վասն զի միջոց է եւ շաղկապ է երկուց աշխարհաց՝ իմանալոյն եւ վերնականի, եւ զգալոյս եւ նիւթականի:*

Ը. 1 *Նմին իրի եւ երեք են տեսակք բանական իմաստութեանս, որ ի տեսականէ անտի բաժանին. բնաբանակա՛նն, ուսումնական եւ աստուածաբանական, որպէսզի ի ձեռն բնաբանականին զբնական արարածոցս քննիցէ զիմաստ, որ վասն նիւթական գոլոյն՝ ընդ զգայութեամբ զգայարանացս անգանին, որ են մասունք ամենայն զգայլի աշխարհիս որք ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ նիւթաւորք գոն: 2 Իսկ ուսումնականն պատշաճ է մարդոյս, որ է՛ զգալի |104ա| եւ իմանալի աշխարհ, յերկուց ունելով զխառնուած միաբանութեանն՝ զգալոյն եւ զիմանալոյ, որպէս եւ ուսումնականն ի մէջ երկուցն տեսանի. բնաբանականին եւ աստուածաբանականին, զի նիւթաւո՛ր է որպէս բնաբանականն, եւ աննիւթ՝ որպէս զաստուածաբանականն: 3 Իսկ աստուածաբանականն պատշաճի իմանալի աշխարհին, վասն ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ*

[1] *Տե՛ս Հերմեայ Եռամեծի առ Ասկեպիոս Սահմանք.- «Բանբեր Մատենադարանի», 3, 1956, էջ 298:*

աննիւթ գոլոյն, որպէս եւ Աստուած եւ հրեշտակք, եւ որ ինչ յաղագս իմանալի աշխարհին։ 4 *Արդ, մարգարէս յամենեւին ծայրս իմանալեացն ախորժելով զաւրութեամբ բանիս ելանել, զՀայրն եւ զպատճառն բնաւից իմանալեաց եւ զգալեաց քննելով զէութիւն բնութեանն Աստուծոյ, եւ զանհաս Նորա զաւրութիւնն եւ զանչափելի մեծութիւնն, եւ զսքանչելի գործոց նորա զզանազանութիւն եւ զկանխագէտ եւ զամէնատես նորա գիտութիւնն, որ եւ զանգործսն տեսանէ, որպէս եւ ասէ յայսմ սաղմոսի. «Տէ՛ր, փորձեցեր զիս եւ ծանեար դո՛ւ ծանեար զնստել իմ եւ զյառնել իմ. ի միտ առեր զխորհուրդս իմ ի հեռաստանէ զշաւիղս իմ եւ զվիճակս իմ դու քննեցեր, եւ զամենայն ճանապարհս իմ յառագագոյն տեսեր, զի ո՛չ գոյ նենկութիւն ի լեզուի իմում։* 5 *Ահա. դո՛ւ, Տէր, ծանեար զյետին իմ եւ զյառաջին իմ, դու ստեղծեր զիս եւ եդեր զձեռն քո ի վերայ իմ»* **(հմմտ. Սղմս. ճԼԸ. 1-5)**։

Թ. 1 *Եւ ապա ասէ. «Սքանչելի եղեւ գիտութիւն քո յիս»։* 2 *Այն, զոր բաղձամ եւ յաւժարիմ՝ ի քո՛յդ հասանել գիտութիւն, որ եւ հրեշտակաց անհա՛ս է. յիս եւ յիմ բնութիւնս հայելով, սքանչելի եւ զարմանալի եղեւ գիտութիւն քո եւ յիմս ստեղծական կազմածի։* 3 |104բ| *Զոր աւրինակ, եթէ ոք զթագաւորի որումն զքաջի եւ զհզաւրի լսելով զանուն եւ բազմահնար հանճարս իմաստութեան նորա, այլեւ զգործս արքայական մեծութեան նորա տեսանելով, առ անձուկ սրտին բաղձանաց փափագէ ի տեսութիւն գեղեցկութեան անձին նորա։* 4 *Իսկ վասն անհաս գոլոյն յաղագս հեռաւորութեանն, եւ կամ վասն անհուն զաւրացն բազմութեանն, եւ անմտանելի գոլոյն արքայական ապարանից նորա, ապա զպատկեր նորա ի տեղւոջ ուրէք նկարեալ տեսեալ մեծածախ զարդիւք, ի բազմերանգ դեղոց նկարագրութենէ զփափաք ցանկութեան նորա ի տեսութիւն պատկերին լցեալ, եւ ընդ այն եւս զարմացեալ, մեծաւ սքանչացմամբ ասէ՝ եթէ պատկերս արքայական այսքան հրաշալ<ալ>ի եւ ահարկու, եւ սքանչելի՛ է կազմեալ արուեստիւ*[1]*, ապա որքա՞ն կենդանին եւ թագիւ պսակեալն արքայ ճոխ իցէ եւ սքանչացման արժանի։* 5 *Այսպիսի ինչ եւ մարգարէս, զաստուածայինն կամելով քննել բնութիւն եւ զաւրութիւն, եւ զսքանչելի գործոց նորա մեծութիւն եւ տեսեալ զանհասութիւն նորա մեծութեանն եւ զանսահմանութիւն նորայն բնութեան, իսկ զինքն պատկեր եւ կերպարան գոլով նորա եւ նմանութիւն առ սկզբնատիպն գեղեցկութեան՝ յինքն դարձուցանէ զմիտս, սքանչանայ եւ ասէ. «Սքանչ[ելի եղեւ] գիտո[ւթիւն] քո յ[իս]»։* 6 *Որպէս թէ ասիցէ, թէ ի խնամս արարչական սիրոյ քո*

[1] *ձ՛> արուեստիւ*

վայելեմ, եւ զի կանխագէտ ես յամենայնի, գիտեմ եւ զի ի չգոյէ ի գոյութիւն ածեր, հաւատամ, այլ վասն քո ամենայնիւ հասու լինել չեմ ձեռնհաս. եւ ո՛չ վասն քո միայն, այլեւ զիս ստեղծական պատկեր եւ կերպարան գիտելով քո, եւ ո՛չ |105ա| այսմ կարեմ հասու լինել: **7** *Այլեւ գիտութիւն քո արարչութեանդ՝ եւ ի՛ս յարարածական բնութիւնս սքանչելի եղեւ:*

Ժ. **1** *Զի՞ որդ զգալի եւ իմանալի աշխարհ ի միում շինուածի գաղափարեալ կերպարանեցայ, եւ չորիցս այսոցիկ եղեւ յիմում կազմածիս յարմարութիւն. ոգոյ առ մարմին զկապն, մտաց՝ առ հոգի, բանին առ միտս:* **2** *Եւ այսպէս, նիւթ եւ չափ երկուց աշխարհաց, որ եղեն եաւթ մասամբք, տարերք չորք, յորմէ ամենայն տարրական արարածք, եւ յերկի՛նս, եւ ի լոյս, եւ ի հրեշտակս, զի սոքա յառաջնում աւուրն արարան:* **3** *Եւ յիմս տեսանի կազմածի տարերք չորք ի գոյութիւն մարմնոյս, որ եւ յիս հոգի եւ միտք եւ բանին իմաստութիւն:* **4** *Զի որպէս լուսոյն պայծառութիւն ի հրեղէն երկնից անտի խզեալ եղեւ, եւ ի լուսոյ անտի բանակք բիւրաւոր լուսեղինաց դասուց հրեշտակացն, այսպէս եւ միտքն ի յոգւոջ երեւի եւ բանաւորութիւնն ի մտացն, զի նորա՛ է գործ*[1] *զի հրեշտակք բանաւոր կոչին, յոր հայեցեալ իմաստունք փոքր աշխարհ կոչեցին զմարդ, զի յամենայն տեսակէ գոյիցս մասն ունի յինքեան բնութիւնս մեր. զգայութեամբք զգայուն կենդանեացն, աճեցական մասամբքն՝ զտնկոցն, եւ մտաւք՝ զմտաւոր աշխարհին:* **5** *Եւ յայսցանէ մի եւ նոյն Արարիչ ցուցանիս երեւելեաց եւ աներեւութից, զի իբրեւ զպահանգ եւ զկապ ի միջոցի գոյիցս ամենայնի եղեր զմարդ:*

ԺԱ. **1** *Եւ զայս բարիոք հրաշագործեաց Արարիչն:* **2** *Առաջին, զի վասն ընտանի գոլոյ սորա արարածոցս, իբրեւ զքնար ի գիրկս ամենայն աշխարհի եդեալ՝ հնչէ զբանաւորական երգս ի փառս եւ ի պատիւ ճարտարապ|105բ|ետին ամենեցուն, ըստ այնմ «Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէր» (տե՛ս Սղմս. ճԲ. 22), յա՛յտ է զի ի ձեռն մարդոյս աւրհնեն:* **3** *Եւ երկրորդ, զի թագաւոր լինելոց էր մարդն ի վերայ աշխարհի, վասն այնորիկ յամենայն արարածոց մասն հատեալ խառնեաց եւ եդ ի բնութիւնս մեր, զի վասն ընտանութեանն հոգ տարցի գոյիցս ամենայնի, իբրեւ սեփհական անդամոց, վասն որոյ ասէ. «Սքանչելի եղեւ գ[իտութիւն] քո յիս»:* **4** *Սքանչացա՛յ եւ ընդ երիցս այսոցիկ գեղեցկապէս բարեկարգութիւն, եթէ ուստի՞ իցէ հիմն շարժութեան մարմնոյս, կամ աճողական սորա զաւրութիւնն, եւ կամ կենդանական ջերմութեանն աղբեւր:* **5** *Որ եւ զերիսս զայսոսիկ յերից սկզբանց տեսանեմք, որք են երակք եւ շնչերակք եւ ջիլք:* **6** *Ի լերդէն ի սկզբանէ արեան՝ կերակրական երակ, ման ա-*

[1] *Ճ այսպիսի գործ*

բեան։ 7 *Իսկ ի սրտէն ի սկզբանէ կենդանականին շնչերակն, ման շնչոյ, եւ ի միասին գոլով երիցս սոցա, զա՛ռ ի միմեանց աւգտութիւն ընդունին։* 8 *Երակ կերակուր բաշխէ ջլի, եւ շնչերակ հաղորդեցուցանէ զերակ ջերմութեան՝ բնաւորական եւ շնչոյ կենդանականի, ուստի ո՛չ է շնչերակ առանց նուրբ արեան, եւ ո՛չ երակ՝ առանց շնչոյ։* 9 *Իսկ որ ի գլխոյն ի խելապատակէ անտի, ըստ յաւժարութեան եւ ըստ յարձակման շարժութիւն, որոյ սկիզբն է խելքն եւ ուղեղն*[1]*, որ է մասն խելացն։* 10 *Իսկ գործարանք սորա բնաւորեալ ջիլ, եւ շաղկապ եւ մկունքն, որ ի մարմնոյ եւ ի ջլուտ նեարդից, որով շարժի ձեռն ի գործ, եւ ոտն ի յընթացս, եւ այլ ամենայն մասունք մարմնոյ։* 11 *Զգայական եւ կակուղ ջիլքն ի միջնոյ եւ յառաջնոյ կուսէ խելացն փորուածոյ առաքին։* 12 |106ա| *Իսկ խստագոյնքն եւ շարժողականքն՝ ի յետուստ կուսէ փորուածոյն եւ յաւէտ խստագոյնքն՝ յողանէն։* 13 *Եւ կրկին են սոքա. զգայականքն եւ շարժականքն՝ յաջ եւ յահեակ։* 14 *Իսկ աճողականքն զաւրութիւն, որ է կերակրականն՝ ի լերդէ անտի սկսանի։* 15 *Եւ ունի կերակրականն զաւրութիւնս չորս. քարշողական, ունակական, այլայլական, արտաքս վտարական։* 16 *Քանզի իւրաքանչիւր ի մասնկանց կենդանւոյն՝ բնաւորապէս քարշէ յինքն զիւր կերակուր. եւ քարշեալ ունի, եւ կալեալ յինքն փոխարկէ, եւ զաւելորդսն արտաքս մղէ։* 17 *Եւ այսպէս կերակրին եւ աճեն ամենայն մասունք մարմնոյն, զի*[2] *ըստ աւրինակի տնկոց քարշէ երակաւք լեարդն զկերակուրն յորովայնէ, որ է նմանեալ որովայնի երկրի եւ երակքն, որ ի լերդէն՝ ի նմանութիւն արմատոց. իսկ ստեղանցն՝ նոյն ինքն լեարդն։* 18 *Իսկ ոստոց եւ ծայրից երակքն, որ ի լերդէն, որ պարզեալ զարիւնն երակաւք կերակրէ զբոլոր մասունս մարմնոյն. եւ ասի՛ այս մասն բանին ոչ հաւանեալ։* 19 *Իսկ կենդանական ջերմութեանն աղբիւր է սիրտն, որ եւ բաժանէ զկենդանական ջերմութիւնն յամենայն մասունս մարմնոյն եւ ըստ նմանութեան շրջագայական բնութեանն երկնի՝ կա՛ միշտ ի շարժման, որ ոչ երբէք դադարի։*

ԺԲ. 1 *Եւ որպէս շրջագայութեամբն երկնի կա երկիր յիւրում հաստատութեանն, նոյնպէս ի շարժմանէ եւ յաղբիւրաբար հոսմանէ հրային ջերմութեանն կա՛ երկիր մարմնոյն ի կայանի իւրում հաստատութեանն, յաջմէ ունել զարի՛ւն եւ յահեկէ՝ զաւդ յերկոսին* |106բ| *դնելով զաւրութիւն կենդանական։* 2 *Եւ երակքն, որք ի սմանէ բաժանին, վկա՛յք են կենաց եւ մահու, հիւանդութեան եւ առողջութեան։* 3 *Վասն որոյ մարգարէն ասէ. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։*

ԺԳ. 1 *Թէ զիա՞րդ մի է հոգի եւ երիս մասունս ունել ասի, եւ կամ ո՞ր*

---

[1] *Ձ՝ ուղեղ ողինն] ուղեղն*
[2] *Ձ՝ եւ] զի*

են տեղիք բնակութեան սորին մասանց եւ զի՞նչ սոցա կոչումն անուանց, եւ կամ որքա՞ն զանազանութիւն կենաց։ 2 *Արդ, ի մասանցս յայսցանէ եւ ի սոցին անուանց երեւի տեղի բնակութեան սոցա, զի կոչի՛ բան, ցասումն եւ ցանկութիւն։* 3 *Եւ է՛ տեղի բանականին ուղեղ գլխոյն, որ յերիս բաժանի՛ փորուածս։* 4 *Առաջին է տեսողականն, որ է զաւրութիւն անբանութեան անձինն, ի ձեռն զգայարանացն ի ներգործել առ զգալին, եւ կամ կրել ի զգալեացն։* 5 *Իսկ միջինն սորա՝ խելապատակ, որ է իմացողականն, որ ընդունելով ի տեսողականէն, դատէ՛ քննութեամբ եւ հաւանի իրին, եւ ապա զի բաց փախչելն կամ ի վերայ դիմելն առնէ։* 6 *Եւ երրորդ սորա յետուստ կուսէ՝ յիշողականն։*

ԺԴ. 1 *Արդ, տեսողականն աւանդէ իմացողականին զտեսեալն, իսկ իմացողականն, որ եւ խոհեցողական ասի՝ յինքն առեալ եւ դատեալ, առաքէ առ յիշողականն։* 2 *Եւ է գործարան սորա յետուստ կուսէ փորուած խելացն։* 3 *Եւ արդ, է՛ տեղի բանականին միջինն սորա փորուած։* 4 *Իսկ սրտմտականն մասն է՛ ի սրտի անդ, ուր եւ կենդանական ջերմութիւն շնչոյն։* 5 *Եւ է՛ սրտմտութիւնն սպասաւոր խոհեցողականին, յոր ինչ հրամայէ եւ արժանի պատժոց դատի, թէ ըստ բնութեան զիւրեանցն իսկ զկարգս պահեսցեն։* 6 |107ա| *Իսկ ցանկական մասինն տեղի՛ է լեարդն, ուր եւ բնաւորեալ խնդութիւնն, զի ի փափուկ լերդէ անտի սկսանի ցանկութիւնն եւ զաւրանայ յերիկամացն։* 7 *Իսկ զանազանութիւն այսոցիկ մասանցս անուամբք երեւի, զի որ ի խելապատակէ անտի՛ է, կոչի անձնական եւ բանական։* 8 *Իսկ սրտմտականին մասին կոչի կենդանական եւ զգայական։* 9 *Իսկ ցանկականին ասի բնական եւ կերակրական։* 10 *Եւ զայսպիսի զանազանութիւն հոգւոց եւ նախամարգարէն Մովսէս ճառեաց՝ զարարածս պատմելով նախ զբուսականն յիշել, որ յերկրէ, եւ յետոյ զանասուն կենդանիս, եւ ապա՝ զմարդն (հմմտ.* **Ծն. Ա. Բ.***)։* 11 *Իսկ պատճառ ո՛չ միայն այս, զի ի կենդանեացն սակս արաւտ, եւ վասն մարդկան արաւտականք, այլ թուի թէ յաղագս հոգւոց զանազանութեան իմաստասիրեաց Մովսէս զկենդանական եւ զշնչական զաւրութիւնն նշանակեալ։* 12 *Զի մինն աճեցական միայն ասի եւ կերակրական, որ կոչի բնական կենդանութիւն եւ հոգի, վասն զի ի տունկս իսկ տեսանի բուսեալ յերկրէ, զորոյ նմանութիւն բերէ լեարդ։* 13 *Իսկ առ անասունսն ո՛չ միայն կերակրիլն եւ աճելն, այլեւ զգայական գործն եւ զընդունելութիւնն ունի։* 14 *Իսկ կատարեալն կեանք է բանականին, որ ի մարդկային բնութեանս տեսեալ լինի, կերակրելով եւ զգալով, եւ բանի հասեալ։* 15 *Վասն որոյ յե-*

տոյ լինի մարդն յերեսինն ի նուազ գոյութիւնն[1] *ունելով։* **16** *Ուսանիմք զայս եւ յառաքելոյ ի վերայ թեսաղոնիկեցւոցն աղաւթս առնելով, զբոլորակատար շնորհս մարմնոյն եւ շնչոյն եւ հոգւոյն, ի գալստեանն պահեալ, փոխանակ կեր|107բ|ակրական մասինն զմարմինն ասելով։* **17** *Իսկ զգայականն շնչովն նշանակեալ, եւ զմտաւորն՝ հոգւով (***ճմմտ. Ա. Թեսաղ. Ե. 23***)։*

ԺԵ. **1** *«Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։* **2** *Ընդ երիցս այսոցիկ հրաշագործութիւն, թէ զիա՞րդ միաւորեալ հոգի ընդ մարմնոյ՝ մնայ անշփոթ եւ կամ որպէս հող եւ կերպարան, կամ անմահ եւ մահկանացու։* **3** *Եւ արդ զի միաւորի, ախտակցութիւնն ցուցանէ, զի ախտակից է բոլոր կենդանին ինքեան՝ որպէս մի գոլով, եւ զի անշփոթ մնայ՝ յայտ է յորմէ անձինն յեղանակ իւիք զատուցելոյ ի մարմնոյն, ի ննջելն որպէս մեռեալ թողու, բայց միայն ի տուր եւ առ շնչոյն, նոյնպէս եւ յորժամ ըստ ինքեան հայեսցի ինչ յէիցս, զի որպէս կարողութիւն է յայնժամ զատանի ի մարմնոյն եւ միաւորեալ է որպէս լոյս արեգական ընդ աւգս, զի որպէս արեգակն զաւգս ի լոյս փոխարկէ մերձաւորութեամբն եւ միաւորի՛ անշփոթաբար համանգամայն ընդ սմա հեղեալ, ըստ նմին յեղանակի եւ անձն միաւորեալ ընդ մարմնոյ, մնայ ամենայն իրաւք անշփոթ, ըստ այնմ միայն փոխեալ, քանզի արեգակն մարմին գոլով, եւ ընդ տեղեա՛ւ պարագրեալ, ո՛չ է ամենայն ուրէք ուրանաւր եւ լոյս նորայ։* **4** *Իսկ անձն անմարմին գոլով եւ ոչ պարագրեալ ընդ տեղեաւ, յամենայն տարեալ լինի կենդանութեամբն, որպէս զլոյսն՝ նոյնպէս եւ էութեամբն։* **5** *Վասն որոյ եւ՝ Հող եմ ըստ մարմնոյ եւ կերպարան եւ պատկեր Աստուծոյ ըստ հոգւոյ, եւ միաւորեալ ընդ միմեանս, ըստ անճառելի իմաստութեան կապողին։* **6** *Թերեւս, զի նահատակութեամբ եւ մարտնչելով առ ստորինս՝ զվերին փառսն ժառանգիցեմք, որպէս ոսկի հրով աստ քննեալ, որպէսզի առաքինութեան մրցանակ, այլ ո՛չ Աստուծոյ պարգեւ |108ա| միայն ունիցիմք զյուսացեալսն, եւ ո՛չ բնութեամբ միայն սերմանել ի մեզ զբարին, այլեւ մեր յաւժարութեամբ մշակել։*

ԺԶ. **1** *Եւ չորրորդ, որպէսզի թէ վատթարութիւն ինչ ձգիցէ առ ինքն եւ ի վերուստ լուծանիցէ առ սակա՛ւ սակաւ թանձրութեամբն, զի որպէս Աստուած հոգւոց, նոյնպէս եւ հոգի մարմնոց լիցի, եւ դաստիարակեսցէ ինքեամբ սպասաւոր նիւթոյն եւ ընտանեցուսցէ զծառայակիցն։* **2** *Վասն որոյ անմա՛հ է եւ մահկանացու։* **3** *Անմահ հոգւով եւ մահկանացու մարմնով, երկնային եւ երկրային, ժամանակեայ եւ անմահ, տեսանելի եւ իմանալի, միջոց մեծութեան եւ խոնարհութեան, մարմին՝ վասն ամբառնա-*

---

[1] *Ճ՛նոսա գոյութիւն*

լոյն, եւ հոգի՝ յաղագս շնորհին. ոմն՝ զի չարչարեսցի, եւ ոմն զի կեցցէ կենդանի եւ փառաւորեսցէ զբարեգործն, ասա մատակարարեալ եւ այլուր փոփոխեալ, եւ վախճան խորհրդոյն առ Աստուած նայելովն՝ աստուածանալ։ 4 *Վասն որոյ եւ եբրայեցիքն ի սկզբանէ զմարդն խոստովանին ո՛չ մահկանացու եւ ոչ անմահ լինել, այլ միջնասահման երկաքանչիւր բնութեանցն, զի թէ մարմնոյն հետեւեսցի ախտից՝ անկցի ի մարմնական փոխադրութիւնս, իսկ եթէ զհոգւոյն նախապատուեսցէ բարութիւնս՝ անմահութեան արժանաւորեսցի։* 5 *Եւ կամ թէ մահկանացու կազմեցաւ կարող գոլ ի յառաջադիմութենէ, կատարեալ անմահ լինել, այսինքն է՛ զաւրութեամբ անմահ։* 6 *Աքանչացայ եւ ընդ չորիցս այսոցիկ ներգործութիւն, թէ որպէ՞ս կապեալ հոգի ընդ մարմնոյ, եւ զիա՞րդ անձն շրջի եւ զկեանս տայ, եւ յախտիցն ընդունի։* 7 *Արդ, զորաւրինակ երկնի եւ երկրի երկու ծայրիցն ընդդիմակաց՝ լինի |108բ| առ միմեանս հաղորդութիւն, ի ձեռն միջնատարերցն՝ աւդոյ եւ ջրոյ, հողոյ եւ հրոյ ամենեւին ներհակացն*[1]*, այսպէս մարմնոյ թանձրագունի եւ անմարմին ոգոյ՝ ի ձեռն միջնորդացն լինի միաւորութիւն, քանզի է մարմին թանձրատեսակ եւ ծանր, եւ ըմբռնեալ ունի յինքեան*[2] *զարիւն ի ձեռն անաւթոց երակացն, որ է՛ անաւսրագոյն քան զմարմին։* 8 *Իսկ արիւն անաւսրագոյն, քան զմարմին, եւ թանձրագոյն, քան զշունչ, ընբռնեալ ունի յինքեան զշնչոյն ջերմութիւն։* 9 *Իսկ շունչ անաւսր՝ քան զարիւն եւ թանձրագոյն՝ քան զհոգի, յինքեան միաւորեալ ունի զանմարմին հոգի, եւ հոգի՝ զմիտս, որ է առաւել անմարմնական եւ անաւսր, քան զհոգի։* 10 *Եւ այսպիսի յեղանակաւ միաւորեալ հոգի եւ անշփոթ մնացեալ։*

ԺԷ. 1 *Եւ արդ, զի անշփոթ է յա՛յտ է, զի որոշէ զինքն եւ շրջի ի տեսութիւն արարածոցս եւ իմանալեաց անմարմնաբար։* 2 *Եւ զի միաւորեալ է, տայ*[3] *զկեանս, եւ ընդունի յախտիցն, քանզի ախտակից լինի հոգի մարմնոյ, եւ մարմին՝ հոգւոյ, զի ի հիւանդանալ մարմնոյ, եւ կամ հատանիլ, եւ կամ պատահիլ վատախառնութեան, կրակից լինի անմարմին հոգի, եւ ո՛չ մնա անյեղլի*[4]*։* 3 *Այլ որպէս եւ բնաւորեալ է ի խառնուածոյ մարմնոյն եւ ի յարմարական դրութենէ մասանց՝ լինել զաւրաւոր եւ առողջն գոլ, եւ գեղեցիկ լինել, նոյնպէս ի բարեխառնութենէ կամ ի վատախառն|109ա|ութենէ մարմնոյ՝ առաքինութիւնք եւ չարութիւնք հետեւին հոգւոյ, զի մարմնոյ եւ ջլաց եւ այլոց անդամոց բարեխառնութիւն՝ զաւրութիւն է. ջերմոյ*

---

[1] *Ճ ջրոյ միաբանութիւն ընդ միմիանս հղոյ եւ հրոյ եւ ի ներհակացն*
[2] *Ճ > յինքեան*
[3] *Ճ սա] տայ*
[4] *Ճ մնան հեղլի*

եւ ցրտոյ, ցամաքի եւ խոնաւի բարեխառնութիւն՝ առողջութիւն է։ **4** *Իսկ բարեչափութիւն անդամոց՝ հանդերձ վայելուչ գունով՝ գեղեցկութիւն առնէ*[1] *մարմնոյն։* **5** *Նոյնպէս եւ ի մարմնոյն խառնուածոց բնաւորեալ են ճշմարտութեամբ ախտակից լինել անձին, զի ոմանք բնութեամբ դառնամաղձոտք եւ բարկացողք են, այլեւ վախողք եւ վայրաբերեալք խարտեաշ մաղձ, զի ջերմէ սրտմտոտ առնէ, բայց արի՛։* **6** *Իսկ մաղասոյ յաւելուած՝ վատասիրտ եւ թոյլ առնէ եւ վաւաշոտ, որ է պլղամ։* **7** *Սեաւ մաղձ՝ ծոյլ եւ հեղգ, նաեւ ի չարն եւս դժուարաշարժ։* **8** *Իսկ աւդոյն յաւելուածոյ գոլ ծանծաղախել եւ պարզամիտ, զորս պարտ է բժշկել՝ զոմանս բանիւ եւ զայլս դեղով, որպէս յաւդումն աղեաց երաժշտականաց՝ զոմանս թուլացուցանել եւ զայլս պնդել, զի պատշաճ իւր կազմեսցէ, յարմարապէս տալով զձայն։*

ԺԸ. **1** *Այլեւ ի բազում իրս զանմարմին հոգւոյն ախտ տպաւորեալ ցուցանէ, երեւելապէս մարմին, ախտակից եւ կրակից լեալ հոգւոյն, քանզի երկնչելով ումէք՝ դեղնանայ, եւ ի պատկառելն՝ շառագունէ։* **2** *Վասնզի իշխանական եւ առաջնորդ է ամենայն բնութեան՝ սիրտն։* **3** *Յորժամ պատահէ ումէք երկնչել, սարսեալ ամենայն բնութիւնն, եւ փախնու արիւնն առ իշխանականն, զաւրէն բազմութեան ի քաղաքի, յորժամ զպատերազմի լսիցեն զհամբաւ ինչ, |109բ| ո՛չ ուրէք ունին ապաւինել, բայց առ իշխանն եւ առաջնորդն նոցա։* **4** *Այսպէս եւ բնութիւնս ամփոփեալ յինքն, փախնու առ իշխանն, անապատ յարենէ զմակերեւութիւնն թողեալ, ուստի եւ դեղնութիւնն լինի։* **5** *Իսկ ի պատկառելոյն լինի՛ շառագոյն այսպիսաբար, քանզի պատկառոտքն ծածկել զինքեանս եւ քաւղարկել յաւժարեն, զի մի՛ ոք տեսցէ։* **6** *Արդ, զի ամաչելն լինի իշխանին ի մեզ, եւ զի առ ինքն ամփոփի իշխանականն, եւ զիւրեաւսն ի բա՛ց սփռէ, որպէս առագաստ իմն, եւ կրճիմն ընդ ինքն եւ յորոց պատկառին զարիւն ձգէ։* **7** *Իսկ հասեալ արիւնն ի սրտէն ի մակերեւութիւնն, առագաստաձեւ տրամակայի ի կենդանւոյն, եւ ըստ այսմ շառագունին երեսք կենդանւոչն յարեանն առաւելութենէն։* **8** *Վասն որոյ ասէ. «Սքանչ[ելի եղեւ] գիտո[ւթիւն] քո յիս»։*

ԺԹ. **1** *Եւ դարձեալ սքանչելի է եւ այս. զի արդ ամփոփէ տրտմութիւնն եւ ցնդէ հեշտութիւնն, հալեն մախանք եւ ամբառնայ հպարտութիւն, վասն զի ի տրտմութենէ կափուցեալ երակացն, որ ընդ ամենայն մարմինն, իսկ շնչոյն նեղեալ ի վեր ճնշմամբ*[2]*, զատանելով ընդարձակել զնե-*

---

[1] *Ձ արենէ] առնէ*

[2] *Ձ ի վեր ելեալ ճնշմամբ] նեղեալ ի վեր ճնշմամբ*

ղեալն, զոր զայսպիսի հինինումն, հեծեծումն եւ ժողով տրտմութեան անուանեմք։ **2** *Եւ այսպէս, ի ձեռն նեղելոյ շնչերակացն ի մաղձատար ամանոցն*[1]*, զկսկիծն զայն եւ զխածանող հիւթս համոց ի ճնշելոյ ի բերան որովայնին հասուցեալ, որով եւ դեղին վերերեւոյթք տրտմեցելոցն լինին, ի պարպատմանէ լիութեանն յերակս զիւր հիւթսն համոց մաղձոյն սերմանելով, ի գլուխն եւ ի խելապատակն՝ զտամուկ հոտսն ճմլեալ* |110ա| *հանեն, որ արգելեալ ի գլխոյն հովիտսն, եւ յաչսն մղեալ գիջութեանն կաթիլք արտասուաց ելանեն յորմէ դիւրութիւն տրտմեցելոցն լինի։* **3** *Որպէս ամբք լցեալ ջրով պաղատին որոտմամբ, իբր զծննդականս, եւ հեղեալ զանձրեւսն՝ հանգիստ առնուն, նոյնպէս եւ տրտմեցելոցն թանձրացեալ գոլո[ր]շիք սրտին երակաւք ի գլուխն ելանեն եւ ընդ աչսն արտասուս արձակեն, եւ որպէս ամբք առեալ զջուրս ի ծովէ՝ վերանան յաւդդ, եւ որոտմամբ ամբոյն ջուրքն յերկիր իջանեն, նոյնպէս եւ տրտմութիւնն ի ձեռն հեկեկմանն, զարտասուսն արտաքս հոսեն։* **4** *Եւ որպէս հողմ հիւսիսոյ խաւարային եւ գիջային զամպսն լնուն ջրով, նոյնպէս եւ տրտմութիւնքն մթացուցիչ խաւարով զաչսն արտասուաւք լնուն։* **5** *Եւ որպէս հարաւային հողմք լի՛ լուսով եւ ջերմութեամբ պարզեն զաւդս եւ լուսաւորեն եւ ցամաքեցուցանեն, նոյնպէս խնդութիւնքն զամպ տրտմութեանն փարատեն, մանաւանդ ի հոգեւորսն, վասն զի յուրախութենէն սփռեալ տարածանին եւ լուծանին ի ձեռն հեշտ ցանկութեանն մարմնոյ գնացք, ի հեշտ եւ ի բաղձալի լսելեաց տարածեցելոց, եւ ընդարձակել երակաց շնչոյն առաւել քան զսովորականն իւր ընդարձակութիւն եւ մանաւանդ լերդին ի ձեռն խռովութեան իմն եւ եռանդնուտ շարժմանն, զայսպիսի շունչ ի միասին ի բաց մղելով, ուստի դիւրութիւն ելստի շնչոյն*[2] *հնարել բնութիւնս, ընդարձակելով զառբերանով գնացսն, յերկուց կողմանց շուրջ զշրթամբքն* |110բ| *յայտսն որոշելով. եւ է անուն եղելոյն ծաղր։*

Ի. 1 *Սքանչացայ եւ ընդ չորիցս ընդ այսոսիկ, թէ զիա՞րդ հալեն*[3] *մախանք, ամբառնայ հպարտութիւն, մոլեցուցանէ*[4] *բարկութիւն, գահերեց նստի՛ խորհուրդ։* **2** *Վասն զի հալեն մախանք զմարմնոյ թանձրութիւնն եւ ծիւրեալ ծնկէ զգեղոյն շնորհ, եւ մաշէ առաւել, քան զերկաթ ժանգ։* **3** *Ամբառնայ՛ հպարտութիւնն, որպէս հուր ի դիւրավատնելի նիւթոց բարձրացեալ բոցով, նմանն մոխրոյ վերանայ, որպէս բալ սփռի ըստ նմանութեան ամպոց հողմոյ դիւրացրելին գեղեցկանայ՝ ծաղկի գունոցն նմա-*

---

[1] *Ճ մաղձատարանոցն] մաղձատար ամանոցն*
[2] *Ճ ելս ի շնչոյն*
[3] *Ճ հող են] հալեն*
[4] *Ճ մոլորեցուցանէ*

նեալ, ցամաքելի խոտն թեթեւացուցանէ յոյս, եւ վերաբերէ զմարմին թանձր եւ ծանրաբեռն, իբր զանմարմին եւ զանարիւն: **4** *Մոլեցուցանէ բարկութիւն, որ է եռանդն, շուրջ զսրտիւ արեանն:* **5** *Վասն որոյ ասէ. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»:* **6** *Թէ զիա՞րդ այս ամենայն կերպարանք ախտից հոգւոյ ի մարմինն երեւին եւ զի՞նչ է խորհրդոյ գահիրիցութիւնն, եւ զիա՞րդ այսոցիկ ամենայնի ի վերայ կայ եւ ցածուցանէ զախտիցն շարժմունս:*

ԻԱ. **1** *Սքանչացայ եւ ընդ երիցս այսոցիկ կիրք անմարմին մտաց, որպէ՞ս ի մեզ բովանդակեալ եւ անսահմանելի մնայ եւ ընդ ամենայնն անցանէ ճանապարհաւ՝ արագութեամբ բերմանն եւ հասմանն, զիա՞րդ ընդունի ի բանէն եւ փոխարէն տայ եւ ընդ աւգս անցանէ, եւ հանդերձ իրաւքն ի ներքս մտանէ, զգայարանաւքն ընդ արտաքինսն խաւսի, եւ զարտաքուստն ընդունի, զիա՞րդ առնու զկերպարանս եւ զի՞նչ պահպանութեամբ կանխաւ առելոյն կայ յիշատակ, եւ զի՞նչ անցելոյն*[1] *վերատին ը|111ա|նդունելութիւն կամ յիշողութիւն, զիա՞րդ Բանն մտաց ծնունդ, եւ ծնանի զԲանն յայլում միտս, եւ որպէ՞ս Բանիւ միտքն տուեալ լինին, եւ զիա՞րդ զգայութեանցս հաղորդի եւ անփոփի ի զգայութեանցս, զիա՞րդ չափիմք տեղեաւ, եւ միտքդ ո՛չ հեռանալով, այլ ի նմին մնացեալ՝ ընդ ամենայն շրջին, զիա՞րդ աչք փոքունք եւ յոլովագոյնս ժամանեն, եւ ընդունելութիւնն զի՞նչ իցէ երեւեցելոյն եւ անճառաբար հաղորդելոյն առ տեսանելիսն, որք միայն կամելովն եւ միանգամայն շարժմամբն զմտացն կրեն զկիրս, որպէ՞ս նա՛ խառնի ընդ իմացեալսն, եւ սա ընդ տեսեալսն, որ ամենայնիւ ընդ նորա յեղանակս շրջափոխի յոլովագոյն՝ յաղագս ձայնից եւ լսելեաց, զիա՞րդ ոմանք բերեալ լինին ձայնարանաւքն գործեալք, եւ կէսքն ընդունին միջոցաւ աւգոյս բախմամբ եւ տպաւորութեամբ ընդ միմեանս խառնեալք:* **2** *Արդ, այսոքիկ, որ ինչ մարմնական եւ թանձրատեսակ բանիւք՝ յաղագս նիւթական մարմնոյս մերոյ կազմածի, առ բանական հոգիս միաւորութեան եւ յարմարութեան քննել ասացան, բե՛ր այսուհետեւ, որ ինչ ճշմարտապէս զարմանալոյ եւ սքանչացման արժանի՛ է քննութիւն, առ այնոսիկ երթիցուք, յաղագս միաւորութեանն Աստուածն բանի առ ծառայական եւ հողանիւթ մարդկային բնութեանս, ընդ որ հայեցեալ սքանչելին Ամբակում հիացեալ զարմանայ, ասելով. «Լուայ զլուր քո եւ երկեայ, հայեցայ ի գործս քո եւ զարմացայ» (տե՛ս Ամբկ. Գ. 2):* **3** *Զլուր գալստեան Բանին յաշխարհ ասէ եւ զարմանայ ընդ գործս աստուածային սքանչելեացն, զոր միութեամբ մարմնոյն էր կատարելոց, եւ ընդ մարդկաւրէն |111բ| կրիցն, որ յաղագս մերոյ փրկութեանն էր զիջանելոց:*

ԻԲ. **1** *Զնոյն եւ սուրբ հայրն Գրիգորիոս աստուածաբանութեանն վար-*

[1] *ձ՛ > անցելոյն*

*դապետ զԲանին Աստուծոյ գալն ի մարմնաւորութիւն եւ ի ծնունդ ճառելով հիանայ սքանչացմամբ եւ ասէ. «Ով նոր խառնմանն, ո՛վ սքանչելի խառնուածոյն, որ էրն՝ լինի եւ ստացիչն ստացանի, եւ անտանելին տարեալ լինի միջոցաւ հոգւոյն աստուածութեանն միջնորդելով եւ մարմնոյ թանձրագունի»[1]: 2 Եւ «նո՛ր» ասէ զայս «խառնումն», զի տարերքս խառնին ի միմեանս, բայց լուծանին եւ ապա՛ այլ իրս գոյանայ, կենդանի կամ անկենդան, եւ ոչ երեւի մասն հողոյն կամ ջրոյն եւ այլոցն, եւ ոչ որպէս ջուր եւ գինի, եւ կամ կաթն, որ ի խառնիլն շփոթին, ո՛չ երեւի որակութիւնն, յաղագս նրբութեանն բնութեան: 3 Իսկ այս նո՛ր է, զի խառնեցաւ Աստուած ի մարմնի, անշփոթ եւ անայլայլելի մնացեալ՝ ոչ թանձր բնութիւն մարմնոյն յեղաւ յանմարմնութիւնն եւ ոչ անմարմին աստուածութիւնն փոխարկեաց յինքն ի մարմնոյ թանձրութենէն, այլ անճառաբար միացաւ աստուածութիւնն ի մարմնի, ըստ Յոհանու՝ «Բանն մարմին եղեւ» (**Յվհ. Ա. 14**): 4 Վասն որոյ ասէ. «Ով սքանչելի խառնուածոյն», զի ընդ ամենայնն միանայ, որ ինչ է մարդ, եւ զամենայն զմարդոյն խառնէ ընդ իւր[2]՝ բաց յանկոսնելի կրից եւ էրն Աստուած՝ լինի մարդ եւ ստացիչն ամենայնի, եւ մարդոյն արարչութեամբ ստացեալ լինի ըստ մարդկութեանն եւ բանական հոգին, եւ միտք միջնորդ լինի պարզագոյն Աստուածութեան եւ մարմնոյ թանձրագունի, որպէս ի մերում կազմածի՝ անասնական շունչս մարմնոյս եւ հոգւոյ բանականի: 5 Ճոխն աղքատանայ, վասն զի աղքատանայ իմով մար|112ա|մնովս, զի ես ճոխացայց Նորա աստուածութեամբն: 6 Եւ ապա ասէ. «Զի՞նչ ճոխութիւն բարձրութեանն, զի՞նչ յիս խորհուրդն»: 7 Զայս հարցանէ եւ պատասխանէ. «Զի՞նչ է ճոխութիւն բարձրութեանն, զոր շնորհեաց ինձ: 8 Եւ կամ զի՞նչ յիս եւ յիմ բնութիւնս գալոյն խորհուրդ»: 9 Եւ կարճառաւտ բանիւ պատասխանէ եւ լուծանէ՛ զնոյն. «Ընկալայ զկերպարանն եւ ոչ պահեցի, առնու զմարմինն, զի զկերպարանն պահեսցէ եւ զմարմինն աստուածացուսցէ, զերկրորդ հաղորդութիւնն հաղորդի՛ յոյժ հրաշափառագոյն, քան զառաջինն որքան յայնժամ ի վեհագունէն ետ, այժմ առնու ի վատթարագունէն»[3]: 10 Եւ զայս գեղեցկապէս սուրբ հայրն ճառէ, զոր եւ մարգարէն Դաւիթ յառաջ՝ քան զհազար ամ մարգարէական հոգւովն զմարմնանալ Բանին Աստուծոյ, եւ զմիանալն ընդ բնութիւնս մարդկան տեսեալ, ասէ. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս», զաւր եւ ոչ հանդարտ, սմա[4]:*

ԻԳ. 1 *Արդ, յիրաւի՛ ոմն յիմաստասիրաց ասէ. «Սկիզբն իմաստասիրե-*

---

[1] *Տե՛ս Գրիգոր Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի Խաւաք ի Յայտնութիւնն Տեառն.- ՄՄ ձեռ. 948, 183բ:*

[2] *ձ՝ յինքն] ընդ իւր*

[3] *Տե՛ս ՄՄ ձեռ. 948, 183բ:*

[4] *ձ՝ > սմա*

լոյ սքանչացումն է», զի թէ ոչ սքանչանայ ոք յաղագս իրի, ո՛չ իմաստասիրէ վասն նորայ։ 2 *Որպէս զմշտաշարժ բնութիւնն երկնի ոք տեսանելով զկամարաձեւ զգմբեթարդ խորանն՝ յերկուս բաժանեալ կիսագունդս, կամ զփոփոխական բնութիւն լուսնիդ լրմամբ եւ պակասութեամբ, եւ կամ զերփն-երփն եւ գունագեղ երեւումն ծիածանիդ, զի թէ ոք ո՛չ սքանչանայ ընդ երեւումն տեսութեան նոցա, ո՛չ իմաստասիրէ զգոյացութիւն բնութեան նոցա։* 3 *Այսպէս եւ վասն անճառելի եւ անհասանելի այս մեծի խորհրդոյս՝ միանալոյ Բանին Աստուծոյ ի մարմնի։* 4 *Սկիզբն իմաստասիր|112բ|ելոյ մեզ սքանչացումն ուսուցանէ մարգարէս. ասելով. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։* 5 *Որպէս եւ ասէ սուրբ հայրն եւ աստուածաբան վարդապետութեամբ փառաւորեալն Գրիգորիոս, յաղագս Աստուծոյ, թէ «Անհասութեամբն սքանչելի երեւի*[1]*» եւ սքանչելի երեւեալ՝ փափագելի է, իսկ փափագելի լեալ սրբէ, իսկ սրբեալն աստուածատեսս գործէ, որպէս եւ զՄովսէս, եւ ապա իբր ընդ ընտանիս խաւսի, որպէս ընդ առաքեալսն սուրբ*[2]*։* 6 *Եւ զի սրբութիւնն աստուածային բնութեանն է սէփհական, զնորին զգենլով զկերպարան սրբութեան, Աստուած ընդ աստուածս միաւորեալ եւ ծանուցեալ, այսինքն՝ ընդ աստուածացեալսն սրբութեամբ միաւորի եւ ծանուցեալ լինի, եւ յայտնէ զանճառութիւն իւրոց խորհրդոցն։* 7 *Ըստ այնմ՝ Խորհուրդ իմ ինձ եւ իմոցն եւ այնքան հաւասարապէս, որքան ճանաչէ զծանուցեալսն, ըստ հաւասարութեան չափոյ մաքրութեանն, յայտնէ զինքն իւրոց սրբոց եւ սիրողաց. ըստ այնմ՝ «Ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն»* (**Յվհ. Ժ. 14**)։

ԻԴ. 1 *Արդ, եւ մեք սքանչասցուք ընդ մարգարէին եւ փափագեսցուք տեսանել եւ ճառել յաղագս սքանչելոյն։* 2 *Եւ յորժամ փափագեմք՝ սրբեսցուք զմեզ ինքեանս զի ըստ Տեառն բանի «Սուրբքն սրտիւք տեսցեն զԱստուած»* (**հմմտ. Մտթ. Ե. 8**) *եւ զաստուածային խորհրդոցն անճառութիւն։* 3 *Եւ այնպէս եղեալ խաւսեսցի ընդ մեզ, իբրեւ ընդ ընտանիս, որպէս եւ իւրոց աշակերտացն ասէր. «Զամենայն, զոր լուա՛յ ի Հաւրէ իմմէ՝ ծանուցի ձեզ»* (**Յվհ. ԺԵ. 15**)։ 4 *Եւ արդ, յուսալով ի շնորհս ճառեցելոյն, որ եւ անճառելի, եւ քննեսցուք եթէ վասն է՞ր Աստուած ի մարմնի։* 5 *Եւ զի թէպէտ բազմադիմի են պատճառ եւ բան խոնարհել Փրկչին մարդասիրաբար եւ զգենուլ զմարդկային մարմին, բայց այժմ ասեմք |113ա| ըստ հինգ յեղանակս, որ են գլխաւորականք, իբր զբոլոր բազում մասունս ունելով։* 6 *Կամ առ ի ճշմարտել, կամ առ վարդապետել յուսումն մեզ, կամ*

---

[1] *Ձ՛եղեւ] երեւի*

[2] *Տե՛ս Գրիգորի Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի Խաւաք ի Ծնունդն Քրիստոսի. - ՄՄ ձեռ. 1500, 724բ-727ա։*

առ ի շահել, կամ ընդդիմամարտել, կամ առ ի յախտակցել։ **7** *Եւ սոցա իւրաքանչիւր ոք յայտնի եւ բացորոշ բերէ զժամանակն եւ զտեղին եւ զդէմն եւ զիրն, զյեղանակն եւ զպատճառն։* **8** *Եւ առ ի ճշմարտել այսպէս։* **9** *Վասն զի մարդացաւ Արարիչն այսու աղագաւ, զի որպիսի ինչ ստեղծ զմարդն, այնպիսի գոյացութիւն տացէ նմա, զի ստեղծ ըստ պատկերի իւրում, մտաւոր եւ անձնիշխան, եւ ըստ նմանութեան, այսինքն՝ կատարեալ առաքինութեամբ, որքան եւ կարող էր բովանդակել բնութիւն մարդկան։* **10** *Եւ այսոքիկ են տիպ եւ նմանութիւն աստուածային բնութեանն. անհոգ, անշփոթելի, բարերար, իմաստուն, յամենայն չարութենէ աւտար։* **11** *Եւ սոքաւք հաղորդս իւր արար զմարդն, զի հաղորդութեամբն իւրով հանցէ յանապականութիւն, վասն որոյ եւ ստեղծ զնա։* **12** *Իսկ որովհետեւ զայն ո՛չ պահեցաք, զոր ետ ի Բարձրագունէն՝ զաստուածային փչումն, զպատկեր եւ զնման լինելն, ապա առնու ի վատթարէս, այսինքն՝ ի մեր բնութենէս զմարմին եւ զհոգի իւրեանց բնական կրիւքն զի յանձն իւր ինքեամբ նորոգեսցէ զըստ պատկերին եւ զնմանութեանն գիծ։* **13** *Եւ զերիսս զայսոսիկ ճշմարտեաց իւրով մարդեղութեամբն զարարչական զայն հրաման, որ ասաց. «Արասցուք զմարդն ըստ պատկերի մեր[ում] եւ ըստ նմ[անութեան]»։ (***Ծն. Ա. 26***) Զի զոր ասացն, այնպէս արար։*

Իե. **1** *Եւ զի սատանայ յորժամ պատրեաց*[1] *եւ ընկեց ի նմանութեանն եւ ի պատկեր լինելոյն շնորհէ, այնպէս կարծիս տայր,* |113բ| *թէ բնութեամբ է մարդկան մեղանչելն եւ ի ստեղծմանէ եղեն այնպէս, եւ ո՛չ էր հնար բերել զաստուածայինն պատկեր եւ զնմանութիւն։* **2** *Զնոյն բնութիւն առեալ Աստուածն Բան եցոյց, թէ ո՛չ էր անհնարին լինելն պատկեր, եւ թէ ոչ է Արարիչն պատճառ մեղացն, եւ ոչ բնութեամբ է մարդկան մեղանչելն, այլ՝ ի նորին պատրանաց։* **3** *Եւ երրորդ, զի բանսարկուն այնու խաբեաց զնախաստեղծսն, թէ*[2] *վասն այն արգել ի պտղոյն, զի մի կերեալ աստուածք լինիցիք (**հմմտ. Ծն. Գ. 5**), իբրու նախանձկոտ ցուցեալ զԱրարիչն, որ արար զմարդն վասն բարոյ։* **4** *Վասն որոյ Տէրն զնոյն բնութիւն առեալ աստուածացոյց եւ զաննախանձ բարերար կամսն իւր ճշմարտեաց, եւ զտուութիւն բանսարկուին յանդիմանեաց եւ յամաւթ արար։*

Իզ. **1** *Եւ թէ որպէ՞ս պահի պատկերին եւ նմանութեանն տիպ։* **2** *Առ ի վարդապետել եւ յուսումն մեզ զկենցաղավարութիւն մարմնոյ իւրոյ աւրինակէր։* **3** *Եւ զայսոսիկ զպատճառս Սողոմոն մեզ ուսուցանէ, ի դիմաց*

---

[1] *ձ՝ > պատրեաց*
[2] *ձ՝ > թէ*

ճշմարիտ իմաստութեանն, որ Որդի առ Հայր ասացեալ. «Տէր ստացա՛ւ զիս սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր» (հմմտ. Առկ. Ը. 22): 4 Արդ, ծնունդ ասի Որդի Հաւր եւ ստացուած: 5 Եւ զերկոսեանն Սողոմոնն ցուցանէ ասելովն. «Յառաջ, քան զամենայն բլուրս, ծնաւ զիս» (Առկ. Ը. 25): 6 Եւ թէ՝ «Տէր ստացաւ զիս»: Եւ է՛ մինն առանց պատճառի, եւ միւսն հանդերձ պատճառաւ: 7 Հանդերձ պատճառաւ մարդանալն, զի սակս մերոյ փրկութեան եղեւ: 8 Իսկ առանց պատճառի, զաստուածային եւ զհայրական ծնունդն, որոյ ոչինչ պառճառս գտանեմք:

Իէ. 1 *Իսկ յաղագս ըստ մարմնոյ ծննդեանն ի մաւրէ ասէ. «Տէր ստացաւ զիս», մերձ դնէ եւ զպատճառն* |114ա| *սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր, զի զոր ինչ կամէր Հայր ներգործել բարիս ի մարդիկ՝ այնր ճանապարհի սկիզբն ստացաւ զՄիածնին մարդկութիւնն: 2 Որում Դաւիթ վկայէ. «Գրծ. ձեռաց նորա արդարութիւն եւ իրաւունք են» (Սղմս. ՃԺ. 7): 3 Եւ «ձեռք» Հաւր Միածինն անուանի, եւ Նա ինքն է ճշմարտութիւն, որ իրաւամբք դատաստանին արդարութեան փրկեաց զմեզ, եւ բազմադիմի աւրինակաւ «սկիզբն ճանապարհաց» մեզ եղեւ, ծնանելով վասն մեր Հոգւովն Սրբով ի Կուսէ, զի մեք ծնցուք նոյն հոգւովն ի կոյս աւազանէ, մկրտելով վասն մեր, խոստովանելով ընդ մեր, փորձելով եւ համբերելով, զի ուսուսցէ մեզ զաւրինակ յաղթելոյ փորձաւղին, կերակրելով զայն, որ հանդերձեալ էր մատնել, յուսումն անոխակալութեան մեզ, խաչելով եւ ժուժկալելով չարչարանացն, զի զաւրացուսցէ զմարմին՝ խորտակել զախտ իւր, զի մեք զհետ երթիցուք շաւղաց նորա: 4 Եւ յաւուրս մարմնոյ իւրոյ յաղաւթս եւ ի պաղատանս կայր առ Հայր, զի ուսուսցէ զմեզ ի փորձութիւնսն յԱստուած նայել, եւ զնա յաւգնութիւն կոչել: 5 Հնազանդ եղեւ Հաւր՝ ըստ այնմ «Թէպէտ որդի էր, ուսաւ ի չարչարանացն զհնազանդութիւնն» (տե՛ս Եբր. Ե. 8) զի մեզ ուսուսցէ զշահ եւ զաւգուտն հնազանդութեանն, որպէս ասէ Պաւղոս, թէ՝ «Իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն հնազանդելոցն իրոց պատճառ փրկութեան յաւիտենից» (Եբր. Ե. 9): 6 Հնազանդութեամբն կատարեցաւ, զի նա՛ է կատարումն ամենայն առաքինութեան, սկիզբն եւ ճանապարհ յարութեան*[1] *մեզ եղեալ: 7 Եւ առաջինն զմարմինն յերկինս հանել: 8 Եւ թէ որով յերկինս ելանեմք, ուսոյց մեզ ճշմարտութեամբ,* |114բ| *զոր եւ խորհրդակիցն նորին Պաւղոս ցուցանէ ասելովն, թէ՝ «Յաւուրս մարմնոյ աղաւթս եւ պաղատանս առ այն, որ կարողն էր ապրեցուցանել ի մահուանէ» (Եբր. Ե. 7), ուժգին գոչմամբ եւ արտասուաւք մատուցանէր, եւ լսելի լինէր առ լաւութեանն: 9 Թէ-*

[1] *Ճ՛ ճանապարաց փրկութեան] ճանապարհ յարութեան*

պէտ «Որդի էր, ուսաւ ի չարչարանացն զհնազանդութիւնն եւ իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն հնազանդելոցն իւրոց պատճառք փրկութեան յաւիտենից եւ անուանեցաւ քահանայապետ յաւիտենից, ըստ կարգին Մելիքսեդեկի» (տե՛ս Եբր. Ե. 8-10)։

ԻԸ. 1 *Արդ, աղաւթելն ո՛չ ի մահուանէ փրկելոյ սակս էր, որ ոչ եղեւ, այլ վասն խաչահանուացն, յորոց բազումք ապրեցան։* **2** *Արդ, ասէ, թէպէտ բնութեամբ Որդի էր Հաւր այլ ի չարչարանացն ուսաւ զհնազանդութիւնն՝ զի այնպիսի երկեղածութիւն կալաւ յանձին, առ ի զմեզ ուսուցանել, թէ որչա՞փ շահք լինին ի հնազանդութենէն, զի Աստուած բանն միացոյց ընդ ինքեան զմեր բնութիւնս, եւ մերով բնութեամբս համբեր չարչարանց, իբր զի զաւրացուսցէ զսա խորտակել զախտն իւր, եւ զի ուսուսցէ մեզ ի փորձութիւնս՝ առ Աստուած նայել, զնա յաւգնութիւն կոչել, եւ թէ որչա՞փ ի կատարելութիւն եւ յորպիսի՞ երանութիւն հասուցանէ համբերութիւն չարչարանացն։* **3** *Իսկ երրորդ գլուխն էր պատճառ մարմնանալոյն Բանին առ ի շահել, զի թէ զայլ ոք առաքեալ էր, ո՛չ էր կատարելապէս տնաւրինեալ մերն փրկութիւն, զի եւ եկին իսկ նահապետք եւ արդարքն ամենայն, եւ մարգարէքն՝ եւ ոչ եղեն կարող փրկելոյ, զի եւ ինքեանք իսկ ներքոյ դատակնքին Ադամայ էին եւ ի նոյն բնութենէ, եւ չէր հնար արարածականի բնութեան միջնորդ |115ա| լինել այսմ մեծագոյն իրի, զի արարածական ոք ոչ գիտէ զկամս Արարչին, նաեւ ո՛չ զիւրում բնութիւնակցի ումեմն, վասն որոյ ո՛չ կարէր արարածական ոք շահել զմարդկային բնութիւնս, զի բռնութեամբ ո՛չ ոք հաւանի, եւ թէ հաւանի՝ ո՛չ մնա հաստատուն։* **4** *Զոր աւրինակ հոսմունք, որ բռնութեամբ արգելեալ լինին, ոչ դադարեն, եւ տունկ թիւրեալ եւ ընկողմանեալ ի մի կողմ, ո՛չ բռնութեամբ, քան արուեստիւ ուղղի։* **5** *Վասն որոյ պարտ էր այնպիսի լինել միջնորդ, որ ե՛ւ զբնութիւնս շահել կարողութիւն էր եւ հնարաւոր։* **6** *Վասն որոյ ասէ Պաւղոս. «Մի՛ է Աստուած եւ մի՛ է միջնորդն Աստուծոյ եւ մարդկան մարդն Յիսուս Քրիստոս» (Ա. Տիմ. Բ. 5)։*

ԻԹ. 1 *Եւ զի՞նչ է գործ «միջնորդի»։* **2** *Այն իսկ է, զի յերկուցունց կողմանց ունիցի հաղորդութիւն, եւ որ ո՛չ ունի յերկուց կողմանց, ո՛չ կարէ լինել միջնորդ։* **3** *Իսկ Որդի, զի առ Հաւ՛ր էր եւ առ մարդիկ եկն, վասն այնորիկ յերկոցունց բնութեանց կողմանցն եղեւ միջնորդ, զի զերկոսին բնութիւնսն ունէր ստուգապէս։* **4** *Զի որպէս մարդ ստուգապէս եղեւ, նոյնպէս եւ Աստուած ճշմարտութեամբ է, զի թէ չէ՛ր Աստուած եւ մարդ, չկարէր միջնորդ լինել*[1]*, քանզի չկարէին նմայ հանդարտել միջնոր-*

[1] *Ձ միջնորդեալ Քրիստոս] միջնորդ լինել*

դեալքս։ 5 Վասն որոյ այն որ ունէր զԱստուծոյ բնութիւնն, կալաւ եւ զմարդկան բնութիւնս, եւ ապա մարթաց լինել միջնորդ։ 6 Եւ վասն որո՞յ իրաց եղեւ միջնորդ։ 7 Քանզի չկամէր Հայր տալ մեզ զայս ժառանկութիւնս, զի բարկացեալ էր մեզ իբր աւտարացելոց, իսկ Որդի միջնորդ եղեւ եւ ա՛ծ զՀայր ի հաւան։ 8 Եւ որպէ՞ս եղեւ միջնորդ։ 9 Բանս տարաւ եւ եբեր մեզ ի Հաւրէ պատգամաւորութեամբ։ 10 Եւ զի յանցաւորք էաք եւ մահապարտք՝ էառ մարմին, որով հնար էր մեռանել։ 11 |115բ| Եւ զմահ մարմնոյն միացելոյ ընդ Աստուածութեանն՝ ընծայս ետ Հաւր եւ հաշտեցոյց եւ արժանիս արար այս կտակիս, որով եւ հաստատուն իսկ է եւ մնացական, որպէս ասէ Պաւղոս. «Յորժամ մահ լինիցի ի փրկութիւն, վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ի սկզբանէ ի ժառանկութիւն յաւիտենից» (Եբր. Թ. 15)։ 12 Եւ այսպէս միջնորդ լինելով՝ շահեցաւ զբնութիւնս մեր եւ շահեցոյց մեզ զժառանգութիւնն մեր սեփհական։

Լ. 1 Իսկ չորրորդ գլուխ ի պատճառ մարմնանալոյն էր առ ի դիմամարտել, զի առաջինն Ադամ՝ պատրեալ նախանձու բանսարկուին, թիւրեցաւ յիւր բնական գեղոյն վայելչութենէ եւ կորոյս զանմեղութիւն եւ զանմահութիւն եւ զանապական կենացն վայելչութիւն ի պատրանաց բանսարկուին եւ վասն այսորիկ չարախաւսէր թշնամին զբնութիւնս, եթե կամաւ սիրեն մարդիկ զչարութիւն։ 2 Եւ զի թէպէտ ջանային մարդիկ բնական աւրինացն գիտութեամբ եւ խոհական մասինն իմաստութեան ճառագայթիւք տրոհել զչարն ի բնութենէս՝ ոչ կարէին, զի դաւաճանող բանսարկուն զկնի ունէին, որ զբնական շարժումն անդամոցս եւ զգայարանացս զէն առեալ յաղթահարէր եւ խոցոտէր զտեսանող ակն հոգւոյ՝ զմիտսն եւ զմառախուղ մեղացն ծածկոյթ արարեալ, խաւարեցուցանէր զլոյս իմաստից գիտութեանն։ 3 Եւ մարդիկ ո՛չ իմանային, թէ այս դաւաճանութիւն չարին է, վասն որոյ ո՛չ կարէին ամենեւին արդար լինել եւ յաղթել զչարախաւսն բնութեանս։ 4 Վասն այնորիկ եկն Ստեղծիչն բնութեանս եւ միացաւ ընդ սա, եւ պահեաց զսա յիւր բնական արդար|116ա|ութիւնն, որպէս ի ստեղծմանն արար եւ զաստուածադիր աւրէնսն, զոր ո՛չ կարացին պահել մարդիկ ի խաբանաց թշնամոյն, կատարեաց իւրով մարմնովն։ 5 Եւ զի թէպէտ բազում անգամ մարտեաւ ընդ նմա թշնամին բնական մարմնոյն եւ հոգեկան կրիւքն, սակայն յաղթեալ գտաւ յամենայնի, զի լոյսն ի խաւարի՛ անդ լուսաւորէ՛ր, այսինքն՝ լոյս աստուածութեանն ի խաւար թանձրատեսակ մարմնոյն եւ նորին կրիցն, միջնորդութեամբ մտացն եւ անմարմին հոգւոյն։ 6 Եւ այսպէս դիմամարտեալ ընդ հակառակորդին բնութեանս, սկսեալ ի ծննդենէ մինչ յարգելանս գերեզմանի, կո-

խեալ զամենայն ախտս որ սերմանի ի կիրս մարմնոյս, զոր Դաւիթ ի դիմաց ամենայն մարդկութեանս հայցեր. «Դատեա՛ Տէր զայն[ոսիկ] որ դատին զ[իս] մարտիր ըն[դ այնոսիկ] որ մարտ[նչին] ընդ իս, առ զզէն եւ զա[սպար քո] (**Սղմս. ԼԴ. 1-2**)*: 7 Զէն՝ զԱստուածութիւնն եւ «ասպար»՝ զմարմինն, որ ի մարդկային բնութենէս, եւ «արի յաւգնել ինձ», զի յայտ լիցի, թէ չէ տկար եւ թոյլ մարմինս ի ստեղծմանէ, այլ մեք տկարացուցաք զսա ի պատրանաց թշնամոյն:*

ԼԱ. 1 *Եւ այսպէս, զոր առաջինն Ադամ հողածին զանմեղութիւն մարմնոյն կորուսեալ մեղաւք, զայս մարմին հիւանդացոյց, երկրորդն Ադամ կուսածին, իւրով մարմնոյն անմեղութեամբ եւ արդարութեամբ վերստին առողջացոյց: 2 Եւ զի տկարացաւ առողջ բնութիւնն Ադամայ, զնոյն բնութիւն, որ զառողջութիւնն իւր կորոյս, զգեցաւ Տէր մեր, զի նովաւ գտցէ զառողջութիւն բնութեան նորա, եւ զնոյն մարմին, որ զէն ընդդէմ բնութեանս կրէր թշնամին իւր բնական |116բ| կրիւքն, եւ մարտնչէր ընդ մեզ, զգեցաւ Տէր մեր, եւ նոյն բնական կրիւքն ապրեցոյց զմեզ եւ սպան զթշնամին կենաց մերոց: 3 Եւ զի առաջնոյն Ադամայ մարմնոյ ախտք եւ ապականութիւն հոսեալ տարածեցաւ յամենայն բնութիւնս մարդկան, յերկրորդ Ադամայ անմեղ եւ անապական մարմնոյ սրբութիւն եւ անապականութիւն աղբիւրացեալ տարածեցաւ ի մեզ: 4 Ըստ որում եւ հինգ յեղանակ եւ պատճառ միանալոյ Բանին ի մարմին՝ իմանամք յաղագս ախտակցելոյ եւ կարէկից բնութեանս մեր լինելով, զոր եւ Պաւղոս ուսուցանէ, թէ «Որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբն կցորդ եղեւ նոցունց»* (**Եբր. Բ. 14**)*: 5 Եւ զի՞նչ է «հաղորդիլն մարմնոյ եւ արեան», զի աստուածային փչումն Հոգւոյն պակասեալ ի մարդկանէ, եղեն մարմին եւ արիւն, որ եւ անասնական է, ըստ յանմ՝ «Մի մնասցէ հոգի իմ ի մարդիկդ յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին»* (**տե՛ս Ծն. Զ, 3**)*: 6 Վասն որոյ բնութեանս Արարիչն կցորդ եղեւ նոցա եւ ա՛ռ զնոյն մարմին, զի իբր գլուխ զհոգւոյն շնորհ, զոր կորուսաք ի Հաւրէ, յինքն առեալ եւ ի մեզ հեղցէ: 7 Եւ վասն այսորիկ ասէ Պաւղոս. «Ո՛չ զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւ[ակէն] Աբ[ահամու] բուռն հարկանէ»* (**Եբր. Բ. 16**)*, այսինքն՝ ո՛չ զնոցա բնութիւն առ, այլ զմարդոյ եւ բուռն եհար իբր զփախուցեալ ոք՝ ըմբռնեաց եւ զիւրեաւ ած: 8 Ուստի պարտ էր ամենայնիւ եղբարցն նմանել: 9 Մարդկան, որ մարմին առնլովն եղբայրացաւ, եւ նմանեալ ամենայնիւ, զի ծնաւ, սնաւ, աճեաց չարչարեցաւ, նաեւ մեռաւ իսկ, եւ ո՛չ միայն եղբայր, այլեւ քահանայապետ մեզ եղեւ: 10 Ըստ որում ասէ. «Զի ողորմած լիցի եւ հաւատարիմ |117ա| քահանայապետ յաստուածակոյս կողմանէն»* (**Եբր. Բ. 17**)

զորոյ աւրինակն եւ Մովսէս եցոյց՝ ողորմելով որդւոց ժողովրդեան իւրոյ, տա՛յր զինքն փոխանակ նոցա, եւ Ահարոն, խորհրդով նորայ արգել զմահ յորդւոց ազգատոհմին իւրոյ, կացեալ բուրուառովն առաջի մահու։ 11 *Եւ Տէրն վասն այն էառ զմերս մարմին մարդասիրութեամբ, զի մեզ ողորմեսցի, որք անգեալ էաք ի ձեռս մահու, զի քաւեսցէ զմեղս իւրով պատարագաւն «յաստուածակոյս կողմանէ անտի»։* 12 *Ունելով զաստուածային բնութիւնն՝ էառ եւ զմերս, զի որով ինքն չարչարեցաւ եւ էանց ընդ փորձանս, ի ձեռն բնակցին իւրոյ, սովիմբ աւգնական լինի տկարութեամբ չարչարեցելոցն, որք փորձին իւրով մարմնով զտկարութիւն մերոյ մարմնոյս գիտացեալ։* 13 *Զայն որ իբրեւ զԱստուած գիտէր, զնոյն ծանեաւ եւ իբրեւ զմարդ, եւ առ զչափ չարչարանացն, զոր տանի մարմին, եւ որ անչարչարելին էր ըստ աստուածութեանն, բազում չարչարանս կրեաց մարմնովն, զի որով ինքն չարչարեցաւ, զփորձ առեալ կարո՛ղ է եւ փորձանաւորացս աւգնական լինել, իբր փորձիւ գիտող զկարիս եւ զկար բնութեանս, զի որ ի մարդկանէ՛ են քահանայապետք, չեն կարող գիտել զկիրս վշտացելոցն։* 14 *Իսկ Քրիստոս, զի փորձէ՛ ամենայնիւ ըստ նմանութեանն մերում, առանց մեղաց փորձէ, զի հալածեցաւ եւ բամբասեցաւ, եւ խաչեցաւ. եւ առանց մեղաց կրէ զայն, զի մեք ուսցուք, թէ պարտ է անմեղութեամբ համբերել վշտաց։* 15 *Արդ, յաղագս այսպիսի խորհրդով Բանին Աստուծոյ ընդ բնութիւնս մարդկան միանալոյ* |117բ|, *ասէ մարգարէն. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։* 16 *Որ եւ սքան[չան]ալ արժան է ընդ երիսս ընդ այսոսիկ, եթէ զիա՞րդ զայս կիրք փրկական ապականութիւն ասացին յանապական մարմինն Տեառն. եւ որո՞վ իւիք զանազանի կիրք Տերունեան մարմնոյն ի հասարակաց բնութեանս կրից. եւ ըստ քանի՞ պատճառաց կրէր Աստուած Բանն զմարդկայինսն։*

ԼԲ. 1 *Բայց նախ արժան է քննել եթէ զի՞նչ են մարդկային կիրքն։* 2 *Եւ բաժանին սոքա յերկուս՝ ըստ հոգւոյ եւ մարմնոյ։* 3 *Եւ հոգեկանքն են այսոքիկ. բա՛ն, ցասումն եւ ցանկութիւն, երկե՛ղ եւ տրտմութի՛ւն եւ հոգք։* 4 *Իսկ մարմնոյն՝ քա՛ղց, ծարա՛ւ, ննջե՛լ, աշխատութի՛ւն եւ զգալ չարչարանացն եւ հեշտութեանցն։* 5 *Զայսոսիկ զբնական կիրս, որ ըստ հոգւոյ եւ մարմնոյ կրեաց Տէրն։* 6 *Ոմանք ի հերձուածողացն ապականութիւն ասացին, արուեստաբանելով այսպէս, եթէ կրկի՛ն է ապականութիւն։* 7 *Առաջին ա՛յս քաղց, ծարաւ, աշխատութիւն, ցաւք, մահ, որ է որոշումն հոգւոյ ի մարմնոյ, եւ այլ այսպիսիքս, որ եւ բնականք ասին։* 8 *Իսկ երկրորդն մարմնոյ լուծանիլ ի տարերս։* 9 *Արդ, զառաջինն ասի Տեառն, իսկ զերկրորդս՝ ո՛չ, ըստ Դաւթի. «Մի՛ թողաւ ոգի նորա ի դժոխս եւ ոչ [տա-*

ցես սրբոյ Քում տեսանել զապականութիւն]» (**տե՛ս Սղմս. ԺԵ. 10, հմմտ. Գործ. Բ. 27**)։ 10 *Ըստ առաջին տեսակին անապական ասել ո՛չ է ճշմարիտ, եւ ըստ երկրորդ տեսակին՝ անապական ասի, որով մեզ շնորհեաց զանապականութիւն։* 11 *Զայսոսիկ նոքա։* 12 *Արդ, բնաւ իսկ ապականութիւն ասել ի Քրիստոս, անբարշտութիւն է եւ դառն հայհոյութիւն եւ անթողլի մեղք։* 13 *Այլ կամաւոր կիրքն այնոքիկ վասն մերոյ փրկու|118ա|թեանն են, զոր յանձն էառ մարդասիրութեամբ, մարդ եղեալ Բանն Աստուած, զի կրեսցէ վասն մեր ընդ մեզ լինելով զմերս, ըստ առաքելական բանին. «Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, եւ վասն մեղաց եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում»* (**Հռմ. Ը. 3**)։

ԼԳ. 1 *Արդ, որպէ՞ս դատապարտեաց զմեղս։* 2 *Զմեղս ո՛չ մեղանչելովն դատապարտեաց եւ զապականութիւն ո՛չ կրելովն։* 3 *Եւ զի որ ի մեզ բնաւորականքն են՝ հոգեկանք եւ մարմնականք, ո՛չ են ապականիչք եւ կամ ապականութիւն բնութեանս։* 4 *Աստուստ յա՛յտ է, զի ապականութիւն լինելութեան ներհակա՛ն է, եւ ներհականքն ո՛չ կարեն համանգամայն ի նոյն ժամանակի եւ ի միում բաղկանալ։* 5 *Իսկ քաղցն եւ ծարաւն եւ աշխատութիւնն, տրտմութիւնն եւ հոգք, ցասումն եւ ցանկութիւն եւ անգիտութիւն, եւ սոցին նման՝ համանգամայնք ի լինելութեան բանին առեալ լինի ի մարդումս։* 6 *Ապա ոչ են այսոքիկ ապականութիւնք, զի թէ էր ապականութիւն, ո՛չ կարէր ի միասին ընդ գոլոյն բաղկանալ, այլ են բաղկացականք գոյացութեանն։* 7 *Զի ասաց Աստուած զԱդամ. «Յամենայն ծառոց, որ են ի դրախտիդ, ուտելով կերիցես»* (**Ծն. Բ. 16**)։ 8 *Այս ցուցանէ ըստ բնութեան գոլ ի նմա կերակրականն։* 9 *Եւ ասելով՝ «Ի պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին, մի՛ ուտիցես, զի մի՛ մահու մեռանիցիս»* (**հմմտ. Ծն. Բ. 17**)։ 10 *Եւ թէ ո՛չ էր բնաւորել յոգւոջ նորա երկեղն, զիա՞րդ զգուշացուցանէր։* 11 *Իսկ ասելն գործել նմա զդրախտն եւ պահել. առաջին զաշխատութիւն եւ երկրորդ զհոգալն ցուց|118բ|անէ ընդ նմա ընդ ինքեան շարամանեալ։* 12 *Իսկ զքնոյն ունակութիւն բանն յայտնէ. «Արկ Աստուած թմրութիւն ի վերայ Ադամայ, եւ ննջեաց»* (**Ծն. Բ. 21**)։ 13 *Իսկ զցանկութիւնն ցուցանէ ցանկալն ի հրաժարեցուցեալ պտղոյն։* 14 *Իսկ ասելն Ադամայ «Ոչ գտաւ աւգնական նման նմա»* (**Ծն. Բ. 20**)*. այս զտրտմութիւն ցուցանէ, տրտմել ընդ իւր միայնութիւնն, զայլս ի կենդանեացն զուգակենակցաբար ըստ ազգի տեսանելով։*

ԼԴ. 1 *Արդ, այսոցիկ բնաւորականք գոլով ի մեզ ի ձեռն իշխան առաջնորդականիս, յերկուս կողմանս հակամիտեսցէ յարձակմամբ ցանկութեանն, եւ ասի մինն հոգւոյն, եւ մինն մեղաց։* 2 *Ըստ այնմ՝ «Օրէնք հոգւոյն կենաց ազատեցին զիս յաւրինաց մեղացն եւ մահու»* (**Հռմ. Ը. 2**)։ 3 *Եւ*

այսպէս լինի տրտմութիւն, որ է բնական, եւ ո՛չ մահու կամ ապականութեան ներքս ածաւղ, այլ յորժամ ըստ աշխարհի լինի տրտմութիւնն՝ ներգործէ զմահ, իսկ որ ըստ Աստուծոյն լինի տրտմութիւն անզղջականին, հանդիպի ուրախութեան։ 4 *Նոյնպէս ուտելն որկորստութեամբ դարովի։* 5 *Իսկ յաստուածային փառացն սեղան բարեբանի՝ «Թէ ուտիցէք, թէ ընբիցէք, զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք»* (**Ա. Կրնթ. Ժ. 31**)։ 6 *Զոր եւ մեծն Սեւերիանոս Գաբաղայ եպիսկոպոս ի տնաւրէնութեան Փրկչի բանի ասէ. «Անչարչարելին չարչարի չարչարելեաւն», եւ ո՛չ ընդ այն կարեաւք եմուտ, որ ի մեղսն տանի, այլ որ զհասարակաց բնութեամբս պատեալ է։* 7 *Զի ոգի եւ մարմին ծառայեն կարեաց, որ ի մեղսն տանի, եւ այնց կարեաց, որ արտաքոյ, քան զմեղս են»*[1]։ 8 *Այսինքն՝ քաղցնուլն, ծարաւելն, վաստակելն եւ ննջելն՝ մարմնոյ կարիք են, այլ ո՛չ* |119ա| *թէ ի մեղս թուին։* 9 *Իսկ պոռնկութիւն, պղծութիւն եւ հակառակութիւն՝ այն կարիք մեղացն են։* 10 *Նոյնպէս եւ մասունք հոգւոյն երկեղն, տրտմութիւնն, ցասումն՝ ըստինքեան կարիք կոչին, եւ չափով՝ ըստ ժամանակի աւգնականութիւն են բնութեանն։*

Լե. 1 *Արդ, զկարիս մարմնոյ եւ ոգւոյ, որ արտաքոյ, քան զմեղսն իցեն, տարաւ յանձին Կենարարն, զի քաղցեաւ ըստ մարմնոյ, ծարաւեցա՛ւ, վաստակեցա՛ւ, ննջեա՛ց, զմարմնոյ բնութիւնն ճշմարտապէս յայտնելով։* 2 *Նոյնպէս եւ ըստ շնչոյն. երկեաւ, տատամսեցաւ, տրտմեցաւ, ըստ այնմ. «Տրտում է անձն իմ»* (**Մտթ. ԻԶ. 38**)։ 3 *Եւ սկսաւ տրտմել եւ հոգալ։* 4 *Եւ այսոքիկ են բնաւորականք մարդկութեանն, եւ սոքա ո՛չ են մասունք ապականութեան մեղաց, որ ի մեզ կիրքս, այլ բնական հոգւոյ եւ մարմնոյ կարիք, զոր կրէր Տէրն։* 5 *Իսկ եթէ որով զանազանի կիրք տէրունեան մարմնոյն ի հասարակաց բնութեանս կրից՝ տեսցուք։*

ԼԶ. 1 *Արդ, կիրքն զորս կրեաց Տէրն, թէպէտ բնաւորք են այլ ո՛չ հարկաւորք, զի մեր հասարակաց մարդկութեանս է բնաւոր, եւ է՛ հարկաւոր, զի ըմբռնեալ եմք ի հարկէ կրից մարմնոյս, զի ապականացու է բնութիւնս մեր, եւ հարկ է մեզ զպակասութիւն ապականութեանն լնուլ։* 2 *Իսկ Քրիստոսի մարմինն անապական էր, վասն այնորիկ ո՛չ ունէր կիրս հարկաւորս, այլ կամաւորաբար կրէր, զորս կամէր, զի ապականութիւն ի մեղաց մտին, իսկ նա «Ոչ արար մեղս եւ ո՛չ մարմին նորա ետես զապականութիւն (հմմտ. Գրծ. Բ. 31), ըստ վկայութեան մարգարէիցն։* 3 *Եւ արդ, հարկաւորաբար* |119բ| *կրէր զայս, ապա ապականացո՛ւ էր, եւ թէ ապականացո՛ւ էր, ապա ո՛չ էր ազատ ի մեղաց, զի ապականութիւն ի մեղաց*

[1] *Տե՛ս Սեբերիանոսի եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի Ճառք, Վենետիկ, 1830, էջ 12։*

մտին։ 4 Եւ զիա՞րդ ասէ մարգարէն, թէ «Մեղս ո՛չ արար», եւ թէ՝ «Ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։ 5 Եւ թէ ապականացու էր մարմինն, ապա հարկ էր կերակրոյն հալելոյ եւ յամենայն ախտս բաժանելոյ ի մաղձ եւ ի մաղաս եւ յայլ վնասակար ցաւս եւ յախտս անվայելուչս, եւ ի խոնարհ ծորմունս եւ յարտափորումն ռնգաց եւ յայլոց զազրալեաց։ 6 Եւ թէ այսպէս իմանաս, զինչ այլ գարշելի մտածմունք եւ հայհոյութիւնք, քան զայսպիսի կիրս ի Քրիստոս իմանալ։ 7 Եւ զիա՞րդ ասէ Կիւրեղ, թէ «Սրբեալ եւ պարզեալ եւ մաքրեալ էր մարմինն յամենայն շարժմանց յարտաշնչութենէ որ տանին զմեզ յանպատշաճսն»[1], եւ սուրբն Եփրեմ յԱւետարանին մեկնութեանն ասէ, թէ «Որպէս փոխեաց զջուրն ի գինի ի մէջ թակոյկացն ըստ ոչ բնութեան, նոյնպէս առեալ զմեր բնութիւնս ի մէջ Կուսին շրջեաց յանապականութիւն»։ 8 Եւ Ոսկէբերանն Յոհան ասէ, «Եթէ վասն կերակուր ճաշակելոյն համարիս զնա ապականացու, նա եւ յետ յարութեանն ճաշակեաց եւ առ Աբրաամու եկեր զորթն», եւ թէ ապականացու է այն մարմինն, ապա զիա՞րդ ասէ Քրիստոս. «Ես եմ հա՛ցն կենաց յերկնից իջեալ» (**Յվհ. Ժ. 35**), զի յերկինս ապականացու ինչ ո՛չ է։

ԼԷ. 1 Արդ, յա՛յտ եղեւ զանազանութիւն կրիցն տէրունեան մարմնոյն եւ մերս, զի ո՛չ զամենայն զմերսն կրեաց զախտս, այլ միայն զանպարսաւսն եւ զի ո՛չ զմեղաց զապականութեան, այլ զորս ախորժէրն, որովք |120ա| ի դէպ էր մեզ բարեկրիւ, եւ զի ո՛չ ակամայ ի հարկէ՛ գային ի վերայ նորա կիրքն, այլ՝ կամաւորաբար։ 2 Զի որպէս զչարչարանսն եւ զմահ, յորժամ կամեցաւ Տէրն ընկալաւ ի մարմին իւր, նոյնպէս եւ զայլ կիրսն, ըստ այնմ՝ «Ժամանակ իմ չեւ է հասեալ, բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է» (**Յվհ. Է. 6**), զի մարդկան յամենայն ժամ է երկեղ մահու եւ վտանգ, իսկ Քրիստոս՝ ըստ յառա՛ջ սահմանեալ ժամանակին եւ յորժամ ինքն կամեցաւ։ 3 Այսպէս եւ կիրքն ո՛չ եթէ կարող էին զիւրաքանչիւրսն ի վերայ ածել մարմնոյ նորա զվտանկն, որպէս միոյ ուրուք ի մարդկանէ, որպէս եւ Յոհան Ոսկէբերան ասէ. «Յորժամ կամէր եւ թո՛յլ տայր մարմնոյն իւրոյ, յայնժամ զգայր իմոց կարեացն»։ 4 Եւ սուրբն Աթանաս ասէ. «Այլ այժմ անձն իմ խռովեալ է». այժմ «յորժամ կամեցաւ, եւ սակայն զէն ցուցեալ, այլ ո՛չ թէ զոչ էն»։ 5 Եւ Գրիգոր Նիւսացի ասէ. «Անսուաղ զքառասուն աւր կացեալ, յետոյ քաղցեաւ, յորժամ ախորժեաց բնութեանն զիւրն կատարել»։ 6 Եւ սուրբն Բարսեղ ասէ. «Մարմոյն, որ ի

[1] Այստեղից մինչեւ ԼԷ.8 հմմտ. Խոսրովիկ Թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, աշխատ. Գ. վ. Յովսէփեան, Վաղարշապատ, 1903, էջ 120-121։

բնութեանն յարմարագոյն էր պատահումն թուլացոյց»։ 7 *Եւ Կիւրեղ ասէ. «Անգիտացաւ թողացուցեալ երբեմն մարմնոյն կրել զիւրսն»։* 8 *Եւ Գրիգոր Աստուածաբան ասէ. «Վաստակեցաւ եւ երկեաւ, եւ արտասուեաց, եւ քաղցեաւ եւ ծարաւեցաւ աւրինաւք մարմնոյն»։* 9 *Եւ տէրն ասէ. «Զանձն իմ ո՛չ ոք հանէ յինէն, այլ ես կամաւք իմովք դնեմ զանձն իմ։* 10 *Իշխանութիւն ունիմ դնել զնա, եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնուլ զնա» (տե՛ս* **Յվհ. Ժ. 18***)։* 11 *Եւ որպէս ունէր իշխանութիւն Իւրն մարդկայ|120բ|ին հոգւոյ, առ ի դնել զնա եւ յառնուլ միւս անգամ, այսպէս եւ բնաւիցն անձնականացն մասանց իշխանութիւն ունէր խոնարհել տալ յանցն իւրսն բնաւորականն կիրս։* 12 *Իշխանութիւն ունէր դարձեալ միւսանգամ մոռանալ տալ զայնոսիկ, ա՛յս է՝ զցասումն եւ զտրտմութի՛ւն եւ զերկեղ, սովին աւրինակաւ ընդ մասանցն իւրոյն մարմնոյն միացեալ Աստուածն Բան, ընդ ձեռն բանականի շնչոյն, յորժամ եւ ուրանաւր, եւ որքան կամէր ազդէր անցն Իւրոցն զգալ կարեաց քաղցոյն եւ ծարաւին, ննջելոյն եւ աշխատութեանն եւ չարչարանացն եւ յորժամ ո՛չ լիներ կամ, արգելոյր զայնոսիկ յԻւրմէ մարմնոյն։*

ԼԸ. 1 *Եւ արդ, եթէ ո՛չ ունէր զկիրս հարկաւորս, ապա ընդէ՞ր իսկ*[1] *կրէր զկիրսն։* 2 *Ասեմք, եթէ ըստ չորից պատճառացս այսոցիկ կրեաց զմարդկային կիրս։* 3 *Առաջին. առ ի ճշմարտել։* 4 *Երկրորդ. զչափ եւ զսահման մեզ ուսուցանել։* 5 *Երրորդ, առ ի շահել։* 6 *Չորրորդ. առ ի խափանել։* 7 *Եւ է՛ առաջին ճշմարտել զստուգապէս մարդեղութիւնն իւր, որպէս սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց ասէ. «Ճաշակեաց Տէրն ի նոր արքայութեանն, որ է՛ յետ յարութեանն, զի ցուցցէ, թէ որ յանկարաւտ եւ յանճաշակ յարքայութեանն կերակրել գիտէ, նոյն եւ յառաջ, քան զչարչարելն, քաղցական եւ դարմանաւոր յաշխարհիս լի եւ անկարաւտ ամենալցոյցն շրջէր, եւ որպէս անդ վասն հաստատելոյ աշակերտացն եկեր, նոյնպէս եւ աստ ի հաւատարիմ առնելոյ զմարմինն քաղցեաւ, թէ արդարեւ իսկական որդին Աստուծոյ ո՛չ ստուեր կերպարանաց, այլ ճշմարիտ |121ա| մարդ եղեւ, զի կեցուսցէ զաշխարհս»*[2]*։* 8 *Վասն որոյ կանխասաց մարգարէն ասէր. «Աստուած յաւիտենական, որ հաստատեաց զծագս երկրի, ո՛չ քաղցիցէ եւ ո՛չ վաստակիցէ, եւ ո՛չ գոյ քննութիւն իմաստութեան Նորա» (տե՛ս* **Եսյ. Խ. 28***)։*

ԼԹ. 1 *Եւ երկրորդ, ի յուսումն վարդապետութեան մեզ կրեաց զմարդկային կիրսն։* 2 *Որպէս սուրբն Բարսեղ ասէ. «Եկեր Տէրն եւ արբ, ո՛չ*

---

[1] *ձ՛> իսկ*

[2] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս 1909, էջ 244։*

այնոցիկ կարաւտեալ, այլ զի քեզ չափս եւ սահմանս հարկաւորացն անձին ախտից թողցէ։ 3 *Սոյնպէս եւ արտասուեաց, զի զսգացելոցն զսաստկացեալ ախտսն նուաստացուցեալ ուղղեսցէ, եւ զի ո՛չ ախտաւոր արտասրն Տեառն, այլ վարդապետութիւն, զի եւ ո՛չ սգայր, զոր եւ յարուցանելոց էր անդէն»*[1]*։*

Խ. 1 *Եւ երրորդ, կրէր զմարդկայինսն առ ի շահել զմարդիկ եւ ընդունել զմեղաւորս։* 2 *Որպէս եւ ասէ սուրբն Եփրեմ. «Ո՛չ թէ վասն որովայնի լրման հրաւիրեցաւ Տէրն յագիլ, այլ վասն ապաշխարութեան կնոջն մեղաւորի, զի արդարացուսցէ զմեղաւորս. ո՛չ էր քաղցեալ կերակրոց, այլ արտասուաւք պոռնկին յագէր, եւ հանգուցեալ յարտասուաց, որում քաղցեալն էր, զի ո՛չ թէ վասն անցաւոր կերակրոյն հրաւիրեալ էր, այլ վասն աւգնականութեան մտացն։* 3 *Ո՛չ վասն հեշտութեան եղեւ ընդ կերողս եւ ընդ արբեցողս, որպէս կարծէր փարիսեցին, այլ զի ի մահկանացու կերակուրս նոցա խառնեսցէ զիւր վարդապետութիւնն, որպէս դեղ կենաց, զի որպէս ի պատճառս կերակրոյն տայր բարին զպարգեւս կենաց որդւոց Ադամայ։* 4 *Որսորդ իսկ էջ, զի որսայր զկորուսեալ կենդանիսն, փութացաւ եւ սփռեաց զգործիս իւր ի վերայ ընթ*|121բ|*ացիից պոռնկաց եւ մաքսաւորաց, տալ նոցա զկերակուրն հոգւոց»*[2]*։*

ԽԱ. 1 *Եւ չորրորդ, վասն այնորիկ կրեաց զմեր կիրսն, զի խափանեսցէ ի մէնջ զկիրս հարկաւորս։* 2 *Որպէս ասէ սուրբն Գրիգոր Նիւսացի, եթէ՝ կիրք կարեաց մերոց շարժեալ առ Քրիստոսի*[3]*, ոչ զի կալցին հարկաւորաբար, որպէս եւ առ մեզ, այլ զի շարժեալք խափանեսցին։* 3 *Եւ այս յայտ յարդեանցն է, զի զոր կրեաց Քրիստոս զկիրս կարեաց մերոց, մի անգամ կրեաց եւ այլ ո՛չ եւս, զի թէ հարկաւորք էին՝ մինչ ի մահ կրէին առ նա, որպէս առ մեզ, ապա թէ մի անգամ կրեաց, եւ զայն կամաւորաբար՝ եւ ոչ ի հարկէ. ո՛չ ահա քաջայայտ է, թէ վասն խափանելոյ զնա ի մէնջ կրէր զայն։* 4 *Զի կիրքս այս յետ մեղացն մտին ի մեզ. քաղց, ծարաւ, աղքատութիւն, հո՛գք եւ տրտմութիւն, եւ վերջին թշնամին՝ մահ»*[4]*։* 5 *Եւ զայս լուր յԱւետարանչէն, զի զոր մի անգամ ասաց զքաղցնուլն՝ ի լերինն, զծարաւելն՝ յաղբերն, զվաստակելն՝ ի ճանապարհին, զարտասուելն՝ առ գերեզմանն Ղազարու, զհոգալն եւ զտրտմելն՝ ի ժամ խաչին. այլ ոչ եւս կրկնեաց զնոյն, որով յայտ առնէր,*

---

[1] *Տե՛ս Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Յաղագս գոհութեան.- «Գանձասար», Բ., Երեւան, 1992, էջ 206։*

[2] *Տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 257։*

[3] *Ձ՛աստուած] քրիստոսի*

[4] *Տե՛ս Անանիա Սանահնեցի, Հակաճառութիւն.- «Գանձասար», Բ., էջ 185։*

թէ ելոյծ կրելովն զնոսա, եւ այլ ոչ եւս պիտոյ է զմեռեալն եւ զլուծեալն կրել վերստին, զի ըստ Պաւղոսի, դատապարտեաց զմեղս այսուիկ յանձին իւրում, եւ սպան զթշնամութիւն յանձին իւրում։ 6 Եւ թէ զի՞նչ է թշնամութիւնն՝ ինքն ասաց. «Խորհուրդ մարմնոյն թշնամութիւն է յԱստուած» (Հռմ. Ը. 7)։ 7 Եւ թէ չէր կրել զիա՞րդ էր սպանել, զի ահա կիրք մարմնոյն, որ իբր առ մարդ շարժէին, իբր յԱստուծոյ լուծեալ խափանէին։ 8 |122ա| Ապա, ուրեմն, իբր մարդ յամենայն կիրս մեր հպեցաւ, եւ իբրեւ զԱստուած՝ ելոյծ զամենայն։ 9 Որպէս ի մահ հպելով՝ ելոյծ զնա, եւ յանեծս մերձեալ՝ ջնջեաց զնա, եւ առ մեղաւորս մերձեալ՝ եբարձ զնա, եւ առ բորոտս հպեալ՝ սրբեաց զնա, եւ առ մեռեալս մերձեալ՝ կեցոյց զնա, նոյնպէս եւ առ կիրս մեր հաղորդեալ՝ սպան զնոսա։

ԽԲ. 1 Եւ այսպէս, երկրորդ Ադամն առաջնոյն գտաւ նորոգաւղ, զի զոր աւրինակ նա վիրաւորեալ ի մեղացն, հակառակորդին ետ զինքն ի ծառայութիւն, սա անմեղութեամբ մերձեցեալ զմեղսն դատապարտեաց, եւ վիրաւորեցելումն վերաբերեաց զառողջութիւն, եւ ծառայեցուցանել զծառայեցուցիչն հրամայեաց ծառայեցելոյն։ 2 Եւ զայս գտեալ զազատութիւն մեր ի Տեառնէ, ո՛չ այլ աւրինակաւ, այլ ի ծառայական կրից անտի, զոր կատարեաց իւրով մարմնովն։ 3 Զայս խորհրդոյ մեծագոյն իրողութիւն տեսեալ մարգարէս, ասէ. «Սքա[նչելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։

ԽԳ. 1 Սքանչանալ արժան է եւ ընդ երիցս ընդ այսոցիկ տեսութիւն, թէ զիա՞րդ մի բնութիւն ասի յոմանց՝ Բանին մարմնացելոյ, եւ կամ զիա՞րդ յոմանց երկու բնութիւն խոստովանեալ լինի, եւ կամ որպէ՞ս է յերկուց բնութեանցն մի ասել։ 2 Եւ արդ, յայսոցիկ քննութիւն, եթէ ոք կամեսցի հետեւել ճշմարտութեանն, նախ արժան է գիտել զժամանակ եւ զտեղի, զդէմ եւ զիրն եւ զպատճառ, թէ յորո՞ւմ ժամանակի եւ առ ո՞վ, եւ վասն որո՞յ պատճառի սոքա ասացան։ 3 Զի թէ ո՛չ քննեսցես զայսոսիկ զմասունս, այլ պարզաբար զմին խոստովանել կամ զերկուսն ասել յետ անճառ միութեանն, եւ յերկուց բնութեանց զմին ասել |122բ|, է եւ ի սոսա տեսանել հերձուածս։ 4 Զի որք մի ասեն բնութիւն Բանին եւ մարմնոյն՝ կատարեալ են անբարիշտք, զի մարմինն ի Կուսէն եւ Կոյսն դուստր Դաւթի եւ Աբրաամու եւ արարածական ի հողոյ, իսկ Բանն՝ Աստուած՝ հոգեղէն եւ ստեղծիչ։ 5 Եւ զիա՞րդ Աստուծոյ եւ Անեղի եւ Արարչի եւ հողոյ՝ ժամանակաւ արարեալ ի նմանէ, մի իցէ բնութիւն, սոքա չորրորդութիւն առնեն զերրորդութիւնն։ 6 Իսկ որք յետ միանալոյն երկու բնութիւն ասեն, զմինն Աստուած միայն՝ արտաքոյ քան զմասունս մարմնոյն, անտես եւ անշաւշափելի, հզաւր եւ գիտակ ամենայնի, ի վեր քան զկարիս զապականութիւն եւ զմահ։ 7 Իսկ զմի բնութիւն մարդ մահկանացու, տգէտ եւ անզաւր, ի ներքոյ կարեաց եւ ապականութեանց։ 8 Սոքա կամ

ո՛չ խոստովանին առեալ մարմին ի Կուսէն եւ կամ ի մարդ բնակել զԲանն դաւանեն եւ ոչ հաւատան զԲանն մարմին եղեալ՝ ըստ Յոհանու քարոզութեանն (տե՛ս Յվհ. Ա. 14)։ 9 *Իսկ որք յերկուց բնութեանց միացեալ ասեն, թերի է նոցա խոստովանութիւնն, զի այնպիսի ասելն՝ մասն ի միոջէ եւ մասն ի միոջէ, նշանակ է բնութեանցն, իբր հանկանակաւ բերեալ յԱստուածութենէ եւ ի մարդկութենէ, յորոց միանալ ասի այլ ոմն բնութիւն՝ բնաւորելով զՈրդին ի մէջ ցուցանէ ընդ Աստուած եւ ընդ մարդ։* 10 *Եւ այն ոչ կատարեալ Աստուած կարէ գոլ եւ ոչ կատարեալ մարդ։* 11 *Իսկ որք բարեպաշտաբարն լսեն զերկոսին, ոչինչ է արգել՝ զմի բնութիւն ասել յիշել եւ զառ ի յերկուցն, եւ դարձեալ ո՛չ մոռանալով զերկուցն խոստովանել եւ զմին, զի եւ սուրբ հարքն զէն անվթարելի զերկոսեան զսոսա ընդ ինքեանս կրէին, ըստ ժամանակի* |123ա| *եւ ըստ դիմաց եւ ըստ պիտոյից, զմի ոք ի սոցանէ շարժեալ շողացուցանէին ընդդէմ թշնամեաց ճշմարտութեանն առ այնոսիկ, որ ըստ Եւտիքեայ կամ Յուլիանեայ եւ այլոց, որք չարաչար զմինն իմացեալ ասէին երկակի ասացուածով, զբանիցն իւրեանց յաւրինէին զյառաջարկութիւն։*

ԽԴ. 1 *Որպէս եւ սուրբն Աթանաս ընդդէմ Արիոսի ասաց. «Մի՛ հուր է այս, կամ որ դժոխք զգայուեցին մի բնութիւն ասել»։* 2 *Զի հաւանեալքն Արիոսի ո՛չ կարէին իմանալ զբանս սրբոց*[1]*, որք երկու գլխովք վարին յաղագս որդւոյ՝ աստուածավայելուչ եւ մարդկավայելուչ։* 3 *Նոյնպէս եւ սուրբն Աստուածաբան ընդդէմ Ապողինարի, որ մի բնութիւն ասէր Քրիստոսի, եւ զԲանն ասէր՝ ի տեղի հոգւոյ եւ մտաց։* 4 *Ասաց ի ճառին, որ առ Կլոդոնիոս «Բնութիւնք երկու, քանզի Աստուած եւ մարդ, բայց որդիք ոչ երկու»*[2]*։* 5 *Նաեւ այլք ի սրբոցն թէ՝ ի միասին եկին բնութիւնքն։* 6 *Պրոկղ՝ եւ թէ «Հաւաստի զերկոսին բնութիւնն ունէր Քրիստոս»։* 7 *Տիմոթէոս՝ եւ թէ «կրկին էր Քրիստոս. մարդ, որ երեւէր, եւ Աստուած, որ ոչն երեւէր»։*

ԽԵ. 1 *Արդ, այս սուրբ հարանցն որոշաբար յիշել ի վերայ միոյ Քրիստոսի, ո՛չ առ ի բաժանել զմի Քրիստոս յերկուս դէմս, կամ յերկուս որդիս։* 2 *Քա՛ւ լիցի. այլ աստուստ զճշմարտութիւն հաւատոյն տնտեսել կամեցեալք եւ [մի բնութիւն] յամաւթ առնել, որք ի ձեռն մի ասելոյն Քրիստոսի բնութիւն, ուրանան զմարդեղութիւն նորա։* 3 *Զեւտիքէս, որ ոչ համագոյական մեզ, զի կուսէն մարմինն Քրիստոսի ասէր, եւ մի բնութիւն։* 4 *Զվաղենտիանոս եւ զՄանի, որք կարծեալք ասացին զերեւումն Քրիստոսի, եւ մի՛ բնութիւն։* 5 *ԶԱպողինա՛ր եւ զՍոփրոնիոս եւ զՅուլիանէ* |123բ| *որք կիսաբաժ եւ ոչ կատարեալ զմերս ասացին բնութիւն առեալ, բանին ի կուսէն եւ մի բնութիւն։* 6 *զԵւնոմիոս եւ զԱրիոս, որ զաներեւելի*

---

[1] *Ա սրբագրուած՝ գրոց սրբոց*

[2] *Տե՛ս Գրիգոր Աստուածաբան, Առ Կղեդոնիոս. ՄՄ ձեռ. 4149, 142ա։*

արարածն ընդ երեւելի արարածոյ շաղկապեալ՝ ասացին զԲանն ընդ մարմնոյն եւ մի բնութիւն։ 7 *Վասն որոյ եւ հարքն սուրբ ընդդէմ այսպիսեացս, որք հերձուածողական անբարշտութեամբ զմի բնութիւնն ասացին, ճշմարիտ եւ ուղիղ խոստովանութեամբ զերկու բնութիւնսն ասելով յաղթահարեցին։* 8 *Իսկ առ այնոքիկ, որք երկուս ասեն հակառակ բնութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի, որ եւ հետեւումն ունի յոլով կարծեաց անտեղեաց, ըստ որում եւ Նեստորն կարծեաց, ի մարդ զԲանն բնակեալ, ուստի եւ՝ Կոյսն ո՛չ աստուածածին եւ ծնունդն ի յառաջադիմութենէ աստուածացեալ։* 9 *Եւ ապա երկու աստուածք ըստ նոցա մտածութեանցն։* 10 *Եւ Նեստորի արուեստաբանութեանն են սոքա հետեւալք. Բանն որ յԱստուծոյ Հաւրէ եւ մարդոյն, որ ի զաւակէն Դաւթի, զՏէրն եւ զՔրիստոս անունն հոմանունաբար ասել, զի հոմանունք կոչին որոց անուանքն նոյն, իսկ բնութիւնքն այլ եւ այլ։* 11 *Սոքա եւ մարդ լոկ ասեն զՔրիստոս, հաղորդի ի Հաւրէ Բանին, որպէս եւ սուրբք ամենայն եւ այս ըստ Նեստորի ուսմանցն։* 12 *Իսկ ըստ ճշմարտութեանն ո՛չ եթէ մարդկութիւնն եղեւ ընդունակ Բանին, այլ Բանն ընկալաւ զմարդկութիւնն եւ խառնեալ միացաւ ի մարմնի։* 13 *Եւ զի Միածինն Հաւր զմարդն եւ ո՛չ զմարմինն եւեթ կամէր ապրեցուցանել՝ զբովանդակն զգենու, եւ լինի ամենայն ինչ մարդ, բացի մեղաց. ոչ ի մարդ բնակէ, այլ մարդ լինի, զի մարդն եղիցի Աստուած, վասն որոյ եւ մի՛ խոստովանիմք բնութիւն։* 14 *Եւ թէպէտ ի զանազանից* |124ա| *կատարելոց միաւորութիւնն եղեւ, սակայն ո՛չ վասն այնորիկ երկու պարտիմք ասել, զի եւ մարդ կրկին է, այլ ոչ վասն այնորիկ երկու մարդք։* 15 *Զի որք յետ միաւորութեանն յերկուս անջատեն բնութիւն, յերկու որդիս հատանէն այնպիսիքն աննմանս միմեանց զմինն եւ զանբաժանելին։* 16 *Վասն որոյ եւ սուրբ հարքն՝ ընդդէմ այսպիսի բաժանողաց, մի՛ ասացին բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ։* 17 *Եւ մի՛ բնութիւն խոստովանելով, ո՛չ որպէս կարծեն հակառակորդքն խառնակումն, եւ կամ շփոթումն ընկալեալ, որպէս թէ տկարագունին մարդկայնոյ էութեանն ծախումն ընկալեալ, կամ ի բաց բարձումն, որպէս թէ հզաւրագունին յաղթելով, կամ որպէս ոմանք բնա՛ւ չառեալ զմարդկային բնութիւնս։*

ԽԶ. 1 *Արդ, զայլասէր թիւս եւ զաննմանս մի՛ խոստովանիմք ի Քրիստոս, եւ մի՛ որդի ըստ Պաւղոսի ձայնին, ո՛չ ուրանալով երկուս ասել բնութիւնս միաւորեալս։* 2 *Իսկ որք երկու ասիցեն բաժանաբար, կարելի՞ է արդեաւք լուծումն ընդունել, քանզի որ զանազան ունի բնութիւնս, հարկաւորապէս կրեսցէ քակտումն։* 3 *Եւ զայս ասեալ Մարկեղիէ Գաղատացւոյ։* 4 *Առ որս ասէ ոմն ի սրբոց հարցն, եթէ զկնի երկու բնութիւնն ասաւղաց անէծք վասն այնորիկ է, զի ի երկու բնութիւնն՝ երկու կամք են, եւ երկու խորհուրդք եւ երկու տեարք, եւ «թագաւորութիւն բաժա-*

նեալ յանձն՝ աւերի» (հմմտ. Մրկ. Գ. 24), զի բնութիւն բնութեան հակառակ մարտակիցք են միմեանց։ 5 *Եւ կամ մինն տէր եւ միւսն ծառայ։* 6 *Եւ եթէ երկու բնութիւն է, ապա Աստուած ի մարմնի* |124բ| *իւրում կռիւ ունի, իբրեւ ընկեր առ ընկեր։* 7 *Եւ զիա՞րդ կարէ նա այլում տալ զխաղաղութիւն, զոր ինքն ո՛չ ունի։* 8 *Վասն որոյ եւ սուրբն Աթանաս ասէ. «Որք երկու բնութիւնս ի Քրիստոս իմանան եւ ասեն յետ միանալոյն՝ ծառայ ընդ տեառն կամին դասել, եւ զերրորդութիւնն չորրորդութիւն առնել։* 9 *Վասն որոյ մի բնութիւն պարտ է իմանալ եւ ասել Բանին մարմնացելոյ ի հաստատութիւն ճշմարտութեան, ընդդէմ այնոցիկ, որ յերկուս բնութիւնս որոշեալ բաժանեն զՔրիստոս, եւ բնութեանցն երկոցունց առանձին յատկութիւնս ասեն, զանազանս ի միմեանց՝ հանդերձ կրիւքն երկաքանչիւրոց, եւ ներգործութեամբքն՝ եւ անձն եւ դէմ մի՛ սահմանեն։* 10 *Արդ, զի՞ այսքան անճառելի եւ հաւատոյ աչաւք միայն տեսանելի քննութիւն իմաստից գոյ, ի միաւորութիւն Աստուածն Բանի*[1]*։*

Խէ. 1 *Ասէ մարգարէն. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։* 2 *Որ եւ սքանչանալ արժան է ընդ չորիցս այսոցիկ իմաստասիրութիւն, եթէ զիա՞րդ միութիւն ասի անշփոթելի, եւ կամ որպէ՞ս երկու բնութիւն անբաժանելի, եւ կամ զի՞նչ բնութեանն բան եւ միաւորութեան։* 3 *Եւ արդ, մի բնութիւն ասեմք քրիստոսի, եւ ո՛չ ըստ համագոյութեան բանին եւ մարմնոյն եւ ո՛չ ըստ յեղման եւ շփոթութեան, եւ կամ ըստ յատկական գոյացութեան, եւ ո՛չ ըստ պատուոյ եւ արժանաւորութեան, այլ գոյացութեանցն, ասեմ*[2]*, աստուածանոյ եւ մարդկայնոյ, անճառ եւ գերահրաշ միաւորութեան։* 4 *Նաեւ, յորժամ կրկին եւ կամ երկու դաւանեմք՝ ըստ սրբոց հարանցն վարդապետութեան, ո՛չ եթէ զմիաւորութեանն ինչ եղծանեմք զհրաշալին խորհուրդ առ ի բաժանել եւ որոշել, այլ* |125ա| *կացեալ ի նմին յորում էրն, եւ միացեալ անքակութեամբ եւ անշփոթութեամբ, ի վեր՝ քան զմիտս եղելոցս։* 5 *Վասն որոյ պարտ է գիտել ճշմարտութեամբ, թէ ո՞ր է բնութեանն*[3] *բանն եւ ո՞ր՝ ըստ միաւորութեանն։* 6 *Որպէս եւ սուրբն Յոհան Ոսկէբերան ասէ. «Մի՛ շփոթեսցուք եւ մի անջրպետ ի մէջ արկցուք, քանզի միաւորութիւն խոստովանիմք եւ ո՛չ քայքայումն ինչ եւ կամ լուծումն այս բնութեան՝ յայն կամ այնր՝ յայս, այլ միացեալ մի լեալ*[4]*։* 7 *Եւ Կիւրեղ ասէ ի խոստովանելն մեր, թէ՝ «Եղեւ Բանն մարմին, ոչ եթէ շփոթութիւն ինչ ասեմք բնութեանցն, այլ կացեալ մնացեալ անքակաբար եւ անշփոթաբար ի վե՛ր, քան զմիտս եղելոցս»։* 8 *Եւ Պրոկղ ասէ. «Ի միա-*

---

[1] *Հմմտ. Ս. Աթանասի ճառք, էջ 326, Խոսրովիկ թարգմանիչ, էջ 113։*

[2] *Ձ՝ > ասեմ*

[3] *Ձ՝ բնութեան այնր կամ*

[4] *Այստեղից մինչեւ Ծ.2 հմմտ. Խոսրովիկ թարգմանիչ, էջ 122-126։*

սին եկին բնութիւնքն եւ անշփոթ մնաց միաւորութիւնն»։

ԽԸ. 1 *Այսպէս սուրբ հարքն զբանս իւրեանց պայծառացուցին ճշմարտելով զանփոփոխութիւնն, ընդ նմին միանգամայն եւ զանքակ միաւորութիւնն, զի ի խոնարհել Բանին Աստուծոյ ի մարդկային կիրս՝ զանփոփոխութիւն ցուցանէր մարդկայնոյն։* 2 *Իսկ նոքումբք կրիւքն ազատել զմեզ ի նոցանէ, եւ փոխանակ նոցա աստուածայնովն զուարճանալ փրկութեամբ, անճառ միաւորութեանն քարոզ իւր անբաժանութիւն։* 3 *Եւ ի կատարելն զաստուածագործ աքանչելիսն, աստուածայնոյն յայտնեալ լինէր անայլայլութիւն, իսկ զնոսին երեւելեաւն հրաշագործել, միաւորութեանն պայծառանայր փառք։* 4 *Այսինքն, թիւնաւքն զոր ի ծնէ կուրին բանալ զաչս, եւ դնելով ձեռինն՝ բժշկել զհիւանդս, եւ մարմնովն եւ արեամբն իւրով կենդանացուցանել զմեզ,* |125բ| *եւ թողութիւն մեղաց պարգեւել։* 5 *Վասն որոյ ճշմարտութեանն սիրողաց պարտ է բարեպաշտապէս գիտել, թէ այլ է բնութեանն բան եւ այլ միաւորութեանն, քանզի այլ է աստուածայինն, եւ այլ մարդկային գոյացութիւնն ըստ ինքեան։* 6 *Քանզի է ոմն անեղանելի եւ անվախճան արարիչ ամենայնի, իսկ մարդկային բնութիւնն արարածական եւ մահկանացու՝ ի խառնման Բանին Աստուծոյ ի մարդկայնում էութեանն։* 7 *Նորաձեւ եղեն բնութիւնքն ի Քրիստոս Յիսուս յՈրդի Աստուծոյ եւ զհրաշալին զայն միաւորութիւն ո՛չ է հարկ յերկուս բաժանել, այլ զամենայն մի՛յ եւ նորին ասել, եթէ մարդկայինք իցեն եւ եթէ աստուծայինք։* 8 *Եւ պարտ է բարեպաշտաբար եւ որպէս աւանդեցին մեզ սուրբքն, զբնական անունսն հակառակաբար առնուլ ի վերայ Բանին եւ մարմնոյն իւրոյ, զի եղիցին բնականքն՝ ըստ բնութեան եւ հակասացեալքն՝ ըստ միաւորութեան։* 9 *Եւ յայտնի արասցուք զասացեալսս. բնական է Աստուածն Բանի անչարչարելի եւ անմահն գոլ, եւ խոստովանեալ եղեւ ի բարեպաշտից՝ չարչարանաց եւ մահու համբերել յաղագս ընդ չարչարելոյն եւ մահկանացուի միաւորելոյն։* 10 *Եւ բնական է մարմնոյն չարչարելի եւ մահկանացուն գոլ՝ եւ նոյն ինքն ստացեալ ունի զանչարչարութիւն եւ զանմահութիւն ընդ ձեռն անչարչարելի եւ անմահ Բանին միաւորութեան։* 11 *Եւ որ անբովանդակելին էր ըստ բնութեան, բովանդակեցաւ ըստ մարմնոյն տնաւրէնութեան, եւ զբովանդակելին ըստ բնութեանն մարմինն՝ անբովանդակելի էութեանն արար հաղորդս, միաւորելովն ո՛չ փոփոխել կամ* |126ա| *այլայլել զբնութիւնն։*

ԽԹ. 1 *Այս ո՛չ ի*[1] *բարեկարգապէս ընտրողութեամբ, «Բանն շաւշափելի եւ տեսանելի ասացաւ ի Յոհաննէ»* (**հմմտ. Ա. Յվհ. Ա. 1**), *եւ երկրային*

[1] *Ձ՝ այսորիկ] այս ոչ ի*

մարմինն յերկնից իջեալ ասացաւ ի Պաւղոսէ (**հմմտ. Եփս. Դ. 10***), եւ նոյն ինքն ի Քրիստոսէ, որ հետեւի այս նոցա, ո՛չ ըստ բնութեան բանին, այլ ըստ յեղանակի միաւորութեանն, զի բնութեամբ Բանն զանտեսանելին ունի եւ զանշաւշափելին, որպէս եւ սուրբն Բարսեղ ասէ. «Բնութեամբ է մարմինն Քրիստոսի մարդկային, իսկ միաւորութեամբ տնաւրէնութեանն՝ աստուածային»։* 2 *Ըստ սմին աւրինակի իմասցի, զի բնութեամբ է Փրկչական մարմինն չարչարելի եւ մահկանացու, իսկ միաւորութեամբ տնաւրէնութեանն՝ անչարչարելի եւ անմահ։* 3 *Եւ ըստ յայսմ յեղանակի ասի անմահին մահ եւ մահկանացու մարմնոյն՝ անմահութիւն։* 4 *Անչարչարելոյն՝ չարչարանք եւ չարչարականին՝ ըստ բնութեան, կենագործակ եւ անչարչարելի՛ գոլ, ոչինչ յանչարչարական բնութիւն Բանին, մերձեցեալ ի կրիցն եւ չարչարեալ ճշմարտապէս, անմահ մնացեալ՝ եւ մեռեալ, զմինն ըստ բնութեան եւ զմիւսն ըստ միաւորութեան։* 5 *Եւ սոքաւք երկոքումբք բնութեամբ՝ բանիւ եւ միաւորութեամբ հիմնացեալ եւ հաստատեալ եղեւ եկեղեցի Քրիստոսի ի վերայ վիմի հաւատոյ, ընկալեալ յառաքելոցն տուչութենէ։*

Ծ. 1 *«Սա է, որ կայ ի կանգնումն եւ ի գլորումն բազմաց եւ ի նշան հակառակութեան», որպէս ասաց Սիմէոն «Ի սմանէ հրեայքն գայթակղին եւ հեթանոսք յիմարին»։* 2 *Այս է, որ առնէ զհերձուածողացն զմոլորութեան, որպէս ասէ Աստուածաբանն՝ «Անուանցն լծակցութիւն եւ աւտարութիւն լծակցելոցն անուանց»։* 3 *Արդ, Բանին* |126բ|*, որ ըստ միաւորութեանն ասի չարչարելի, եթէ ոք դիցէ զայն նմա ըստ բնութեան գոլ, Արիոսի ամենայնիւ եւ նորին նմանեացն ձայնակցեսցէ, նոյնպէս եւ մարմնոյ նորա զասելն ըստ միաւորութեան անչարչարելի, եթէ ոք դիցէ զայն նմա ըստ բնութեան գոլ, յուլիանիտ է արդարեւ, որ այնպէս անբարշտեաց։*

ԾԱ. 1 *Դարձեալ զմիաւորութիւնն, եթէ ոք ըստ արժանաւորութեան, այլ ոչ ըստ բնութեան ասասցէ գոլ, ըստ Նեստորայինսն, ի հարկէ դատապարտեալ նզովեսցի։* 2 *Նոյնպէս եւ զբնութեամբ միաւորութիւնն, թէ արտաքոյ դիցէ դիմի եւ անձնաւորութեան, հերձուած է այնպիսին եւ յոյժ անբարշտութեամբ։* 3 *Ըստ որում զմին ասելի է եւ զերկուս բնութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի։* 4 *Եթէ ոք զմի բնութիւն ըստ բնութեան, այլ ոչ ըստ միաւորութեան ասասցէ գոլ ի Քրիստոս, կամ եղիցի Արիոսի համաձայնեալ, ստացական ասելով զԲանն եւ զմարմին Բանին՝ հարկաւորեցաւ*

ասել մի՛ բնութիւն, զմարդկայինս զկապակցութիւն հոգւոյ եւ մարմնոյ յաւրինակ առնլով։ 5 *Կամ եւտքենիտ եւ մանիքեցի, որ անստացական ասելով զԲանն եւ զմարմին բանին՝ յանդգնեցաւ ասել մի՛ բնութիւն Բանին եւ մարմնոյն։* 6 *Դարձեալ զերկուս բնութիւնսն, եթէ ոչ ըստ բնութեան եւ յորոց եղեւն նշանակելով, եւ միայն մտածութեամբ, այլ ի միաւորութեանն զայն ասելով եւ բաժանաբար, գտանի ասացեալ ընդ Պաւղոսի Սամուստացւոյ եւ ընդ Թէոդորի Տարսոնացւոյ, մարդ տկար զՔրիստոս, միայն մերձաւորութիւն առ բանն ունելով, եւ յարելութիւն։* 7 *Սապէս եւ վասն կրկին ասելոյն ի Քրիստոս, կամս, եւ ներգործ|*127ա*|ութիւնս։* 8 *Եթէ ըստ բնութեան ոք զայն ասիցէ գոլ, ո՛չ արտաքոյ ճշմարտութեանն գտանի ասացեալ, զի մի ընդ Գաիոսի եւ Թէոդոտոսի ամբարշտելով անսգայ եւ աննեներգործական եւ անկրական զմարմինն տէրունական, զոր ի Կուսէն առեալ դժոխաբանիցէ։* 9 *Իսկ եթէ ըստ միաւորութեան, եւ նմին ինքեան միաւորեցելումն ժպրհիցի տալ երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս, ամենեւին հեռի՛ ի ճշմարտութենէն, եւ Մաքսիմոսի ի ներքոյ կացեալ, սխալանաւքն դատապարտեսցի, քանզի ո՞ւր ապա այնուհետեւ եւ երեւեսցի վեհագունին յաղթելն, եթէ զամենայն, որ ինչ գոյացութեանցն առ ի կատարելութիւն՝ որոշաբար եւ առանձին դիտեցին։* 10 *Արդ, զի այսքան զգուշութեամբ եւ երկեղածութեան հոգւով եւ բարեպաշտ կամաւք քննութիւն է յաստուածային տնաւրէնութիւն մարմնացելոյ Բանին, ասէ մարգարէս. «Սքանչ[ելի եղեւ] գիտ[ութիւն] քո յիս»։* 11 *Թէ զիա՞րդ մարդկային հոգի բանաւոր եւ մտաւոր միացան ընդ Աստուածն Բանի, եւ որպէս մարմին թանձր եւ նիւթական, ընդ անմարմնոյ եւ անտեսանելի բնութեանն, եւ զիա՞րդ կամք եւ կիրք եւ ներգործութիւն մարդկային ընդ աստուածայնոյն միացաւ կամաց եւ ներգործութեանց։*

ԾԲ. 1 *Եւ արդ, զի թէպէտ եւ է՛ ճշմարտութեամբ կատարելական եւ ո՛չ անկատար առ ի մէնջ Փրկչականն առեալ մարմին, այս է՝ հոգի, մարմին, միտս, համայն գտանելով միացեալ առ Բանն Աստուած։* 2 *Եւ թէ մարմին է, յորում ներգործելն եւ կրելն բնաւորեալ է Բանին մարմին։* 3 *Եւ եթէ միտք, յորում կամելն եւ խորհելն բնաւորեալ է փրկչական մարմնոյն միտք,* |127բ| *եւ ոչ որումն մարդոյ, զի ո՛չ թէ նախկին ոմն գոյացեալ համբակ յարգանդի եւ ապա յարակցեալ ի Բանն, այլ Բանին Աստուծոյ մարմին՝ ընդ որում միացեալ եղեւ եւ ո՛չ այլոյ ուրուք մարմին։* 4 *Եւ զի այսպէս այսոքիկ, ապա եւ ներգործելն եւ կրելն, որ ի մարմնում բնաւորեալ է, որոյ մարմինն է, այսինքն՝ Աստուածն Բանի մարմնացելոյ ներգործե՛լն եւ*

կրե՛լն։ 5 *Նոյնպէս եւ կամելն Բանին Աստուծոյ ասի, որ անքակաբար առ մարդկայինն էր միացեալ միտք, զի ինքն Բանն Աստուած զմարդկայինն իւր մտաց ուղղէր զկամս եւ ինքեան ազդմամբն զմարմնոյն իւրոյ շարժէր զներգործութիւն եւ զկիրս, որպէս եւ երաժշտականն գործի յերաժշտապետէ անտի զհնչելն եւ զնուագելն։* 6 *Զի որպէս ի մեզ առաջնորդականն որպէս գործեաւ՝ մարմնովն վարի, այսպէս եւ մտաւքն մարդկայնովք՝ Բանն, սակայն ո՛չ իբրեւ այլ, քան զնա՛ գոլով. ըստ որում արուեստագէտն եւ գործին անշունչ, վասնզի արուեստագետն մահկանացու եւ գործին անշունչ, եւ այլ քան զճարտարն։* 7 *Իսկ անդ, վասնզի ի վե՛ր, քան զմիտս է, որ ի ձեռն մտացն մարմնովն առ ամենայն վարէր՝ յիրաւի մի եւ նոյն ասի։*

ԾԳ. 1 *Արդ, մեղանչական միտք միացեալ ընդ անմեղ բնութեանն, գեր ի վերոյ մեղաց լինէր, եւ չարչարելի եւ մահկանացու. եւ ապականացու բնութիւն մարմնոյն խառնեալ ընդ անչարչարականին եւ անմահի եւ անապականին, ամենեւին ազատ յայսցանէ լինէր։* 2 *Նոյնպէս եւ զկամսն իմասցիս, ըստ որում ինքն՝ Բանն իշխէր եւ առաջնորդէր մարդկութեանն։* 3 *Ըստ այսմ եւ կամքն նորին ինքեան եւ ոչ այլոյ ուրուք, ուստի եւ մի ասեմք կամս մարդացելոյն Աստուծոյ* |128ա| *եւ ո՛չ երկուս, զի որպէս նորա են միտք, նորա են եւ կամք մտացն, վասնզի մտաւոր անձինն միջնորդութեամբ ընդ թանձրագունի մարմնոյն բնութիւն միացաւ, որպէս ի մեզ բանականն միջնորդութեամբ շնչոյն, ըստ աւրինակի հրոյ, զի ուժգնութեամբ եւ խստութեամբ մտանէ ընդ թանձրութիւն երկաթոյն, եւ այնքան զմիաւորութիւնն գործէ, մինչ զի ո՛չ երկաթ, այլ հուր տեսողացն երեւեալ, եւ հրոյ եւ ո՛չ զերկաթոյ ունել առժամայն ազդմամբ զներգործութիւն։* 4 *Այսպէս եւ առաւել իմա ինձ զԲան՝ զԲանին Աստուծոյ առ իւր մտաւոր անձն եւ մարմին՝ զմիութիւն։* 5 *Եւ որպէս ասր ներկանիցի ծիրանի՝ եւ ո՛չ է երկու գոյն, եւ ոչ նիւթն զէութիւն իւր կորուսեալ, նոյնպէս եւ միտքն պայծառացեալ եւ աստուածացեալ մի՛ եւ ո՛չ երկու առաջնորդականք։* 6 *Յիրաւի՛ ապա ամենայնն աստուածայինք՝ կամք եւ գործք։* 7 *Եւ կիրքն մարդկաւրինագոյնք։* 8 *Վասն որոյ ո՛չ երկութիւն իմասցուք ի Բանն Աստուած, այլ ըստ որում ուսաք ի հարցն սրբոց՝ զեղելութիւն ասել անեղին եւ զմարմին լինել անմարմնոյ բանին, ո՛չ այլեւայլ կարծելով զԲանն եւ զմարմինն, կամ զեղեալն եւ զանեղն։* 9 *Եւ զայս ասեմ ըստ միաւորութեան, այլ ո՛չ ըստ բնութեան։* 10 *Նոյնպէս եւ զկիրսն իմասցուք ասել*

գրոց զպարագրութիւն մարմնով՝ անպարագրելոյն, զծնունդն ի կնոջէ՝ հաւր ծննդոյն, զկերակրիլն եւ զսնունդ կերակրաւղին եւ կատարաւղի զամենայն, զանարգանսն՝ գերագունին, քան զամենայն պատիւ, անչարչարելոյն՝ զչարչարանսն, եւ զմահ՝ անմահին։

ԾԴ. 1 *Այսպէս եւ զաստուածային զճահագործութիւնսն՝ ո՛չ այլոյ ուրուք, քան ծնիցելոյն ի Կուսէն Մարիամայ, որ եւ զամենայն ինչ կրեաց զ|128բ|որ ինչ կամեցաւ զմարդկան՝ ի խրատ եւ յուսումն մեզ։* **2** *Վասն որոյ եւ մարդ իսկ լինել յանձն էառ, նոյնպէս եւ իւրով մարմնովն ի մերմէ բնութենէս առիցելով, զաստուածավայելուչսն կատարէր սքանչելիս, եւ ո՛չ կամաւք միայն կամ բանիւ, այլեւ թքով բերանոյ եւ մերձաւորութեամբ ձեռին եւ ոտիւք, նա՛եւ մարմնոյն հանդերձի քղանցիւք զախտս եւ զմահ ի բաց առաքէր*[1]*։* **3** *Եւ ո՛չ ուրէք երեւի բնութեանցն զանազանութիւն, այլ անշփոթ եւ անփոխադրելի զաստուածայինն խոստովանիմք բնութիւն, ո՛չ բնաւ կողոպտեալ կամ նուաստացեալ ի լինելն մարդ։* **4** *Եւ ո՛չ զմարդկութիւնն եւ զորս ըստ մեզն ասել բնութիւն, բարձեալ ինչ ի միջոյ, որպէս թէ խափանեալ ի գոլոյն մարմին անձնաւոր եւ մտաւոր։* **5** *Եւ որպէս չէ՛ր հնար փրկչական մարմնոյն յիշել զիւրսն ի Բանին Աստուծոյ ազդեցողութեանն, զի եւ ո՛չ թափուր երբեք ի նմանէ՝ ըստ սմին այսմիկ եւ ո՛չ գոլ կարէ կամ ասիլ՝ գոյացութիւն առանձնապէս կամ կատարելութիւն յատկական, կամ որոշակի միտս առաջնորդականս, կամ բաժանաբար բերել անձնիշխանական կամս, քանզի առ ինքն ամենեքումք այսոքիւք զմարդկայինն խառնեաց եւ միացոյց Աստուածն Բան, յաղագս որոյ եւ ի Բանն Աստուած ամենեքեան վերաբերին՝ աստուածայինքն եւ մարդկայինք։* **6** *Եւ նորա են եթէ կիրքն մարդկայինք*[2] *եւ եթէ աստուածային սքանչելիք զի Բանն Աստուած ծնաւ ըստ մարմնոյ ի կուսէն, սակս որոյ եւ Աստուածածին սուրբ Կոյսն։* **7** *Բանն Աստուած խաչեալ եւ մեռեալ մարմնով վասն մեր, յաղագս որոյ եւ մահուամբ Որդւոյն Աստուծոյ եղաք փրկեալք եւ ազատեալք։* **8** *Բանն Աստուած իջեալ ի գերեզման ի ձեռն մարմնոյն, եւ ի դժոխս իջեալ՝ ի ձեռն ի|129ա|ւրոյ մարդկային հոգւոյն, յաղագս որոյ լուծեալ յաղթութիւն մահու, եւ խայթոցն դժոխոց փշրեալ, եւ զամենայնն նորա եւ միոյ ասեմք Աստուծոյ մարդացելոյ յաղագս մարդկութեանն առ բանն միաւորութեան։* **9** *Վասն որոյ ասէ մարգարէն. «Սքանչ[ելի եղեւ գիտութիւն քո յիս]»։*

ԾԵ. 1 *Արդ, սքանչանալ արժան է, թէ որպիսի՞ յեղանակաւ հաւանե-*

---

[1] *Ճ հալածեր՝ փոխ առաքէր*

[2] *Ճ> եւ նորա... մարդկայինք*

ցուսցուք զտեսութիւն մտաց մերոց հանգուցանել՝ ի զգալեացս բերել յարացոյցս եւ աւրինակ՝ անճառ եւ գերահրաշն միաւորութեան Աստուածն Բանի ընդ իւրում մարմնոյն։ 2 *Եւ արդ, առցուք ի մէջ աւրինակս՝ թուով չորք. զոմն յերկնէ, եւ զոմն յերկրէ, եւ միւս ի ծովէ եւ միւս ի գլխաւորական կենդանւոյ, առ ի հաւաստի ունել զանտեսն եւ զանհասն ի տեսական եւ ի զգալի երեւութից։* 3 *Եւ նախ՝ լուսոյն ճշմարտի եւ արդարութեանն արեգական, զեղական լոյսս եւ զերեւելի արեգականս առցուք աւրինակ, քանզի զլուսոյս զգալոյ էութիւն յառաջնումն աւուրն ասել լինել աստուածային Բանն։* 4 *Իսկ զարեգակն եւ զայլ լուսաւորսն ի չորրորդումն. եւ անմարթ է կարծել, թէ եղծաւ յառաջնումն գոյացեալ միատեսակ լոյսն, եւ ա՛յլ ի չորրորդումն աւուր հաստատեցաւ։* 5 *Այլ զնոյն լոյս կանխաւ եղեալ՝ առանց նիւթոյ, ժողովեաց ի նիւթ արեգականդ ի չորրորդումն աւուր, զի զմեծագունին լուսոյ եւ աննիւթականի տպաւորեսցէ ի նիւթական միանալ բնութիւն ի լրման ժամանակաց, վասն որոյ եւ եղանի՛լ ի գրոց ասի։* 6 *Եւ ըստ որում ո՛չ ոք կարասցէ ասել՝ այլ զլոյսն զկանխաւ եղեալն, եւ այլ զնիւթն յետ միաւորութեանն, բայց մի՛ արեգակն։* 7 *Այսպէս եւ ոչ ումեք արժան է ասել երկուս զկնի անճառ* |129բ| *միաւորութեանն ընդ մարմնոյ զմիածին Որդին Աստուծոյ։* 8 *Եւ որպէս արեգական ի՛ւր ասեմք զլուսոյն ճառագայթս՝ եւ իւր դարձեալ, եթէ կրեսցէ խաւարումն, եւ կամ յորժամ գիշերաւ ծածկի ի ներքնում կիսագնդին, կամ զխոնարհիլն ի միջաւրեայ եւ զբարձրանալն ի սայլն կողմ եւ ամենայն իւր ասի արեգականն, այսպէս եւ զսքանչելագործութիւնսն եւ զմարդկաւրէն կիրսն եւ զչարչարանսն միոյ ասել ուսաք*[1] *Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ո՛չ որոշել առանձին Աստուծոյ եւ առանձին մարդոյ բնութեան։* 9 *Վասնզի միացոյց անբաժանաբար ընդ ինքեան զմերս անդստին յորովայնէ Բանն Աստուած, ուստի զչարչարանս եւ զանչարչարութիւն ըստ բնութեանցն միաւորութեան ի մի հաւաքեմք, ասելով նմա պահել զիւրոյն, քան զամենայն գերազանցելոյ բնութեան զանչարչարութիւն Աստուած ըստ բնութեան գոլով։* 10 *Եւ զնոյն ինքն չարչարեալ, վասն իւրութեան չարչարականին բնութեան կամաւորապէս, այսինքն՝ չարչարեալ ճշմարտապէս իւրով մարմնովն, եւ անչարչարելի մնացեալ ըստ աստուածային բնութեանն։* 11 *Եւ զոր աւրինակ, ծածկեալ լինին աստեղացն պայծառութիւնք ի մեծապայծառ արեգականն լուսոյ, մինչ զի որք ենն՝ որպէս թէ ո՛չ իսկ իցեն ի տունջեանն։* 12 *Եւ յաղագս այսորիկ ո՛չ ասին միանգամայն ի միասին երկու բնութիւնք՝ տիւն, այսինքն արեգակն*

[1] *Ձ՛ ասէ լուաք] ասել ուսաք*

կամ աստեղք, կամ աւր եւ գիշեր, կամ լոյս եւ խաւար, այլ որք միանգամ հետեւին անուանք արեգականն, նոքումք անուանեսցի տիւն։ 13 *Այսպէս իմասցիս եւ զմիաւորութեանն բան Աստուածն Բանի մարմնացելոյ, զի թէպէտ իցեն անբառնալիք ի մարմնի կացեալ մնացեալ մարդկայինքն, այսինքն՝ բնու|*130ա*|թիւն եւ կերպարա՛ն եւ դէմ, եւ եւս առ այսոքիկ եւ բա՛ն եւ միտք եւ իմաստութիւն, եւ զաւրութիւն եւ կենդանութիւն եւ որ ինչ այսպիսիքս։*

ԾԶ. 1 *Եւ դարձեալ կամիմ, զի յաւրինակէ հրոյ յայտ ցուցից զմիաւորութիւն Բանին եւ մարմնոյն, որպէս սուրբն Բարսեղ եւ Դիոնէսիոս ցուցանեն մեզ. զի որպէս երկաթ ընդ հրոյ միաբանեալ՝ ընդունի զհուրն ո՛չ փոխարկաբար, այլ փոխատրաբար՝ զիւրն բնական որակութիւնսն ի բաց դնելով, ի հրոյն փոխադրի որակութիւնսն, եւ ո՛չ զիւրսն, այլ զնորայն ներգործէ զաւրութիւնսն, իսկ բնութիւն հրոյն ո՛չ շփոթի կամ ի բաց դնէ զծայրս որակութեանն բնաբար ունել զանյեղափոխութիւն, ի միաւորելն ընդ երկաթոյն՝ զնորայն փոխադրէ յիւրն որակութիւն, ոչինչ կրելով ի նորայնցն որակութեանց, այլ պարզեալ ձգէ ի ծայրս որակութեան իւրոյն բնութեանն, զորակութիւնս երկաթոյն ասեմ. զցրտութիւնն եւ զսեւութիւնն լուսափայլ եւ ջերմին փոխադրեալ։* 2 *Վասն որոյ ասեմ զերկաթն հրացեալ, այլ ոչ անդրադարձի ասել զհուրն երկաթացեալ, զի զներհակս որակութեան երկաթոյն հուրն առ իւրն վերաբերէ նմանութիւն, ի լաւն զվատթարն փոխադրելով, ինքն ոչինչ առեալ ի նորա[յն]ոցն, բայց միայն ըստ ձեւոյ եւ ըստ չափ երկաթոյն ձեւակերպեալ։* 3 *Եւ այնպէս անբմբռնելի բնութիւն հրոյն՝ ընբռնի ի ձեռն երկաթոյն եւ ընդ կռանաւ անգանի։* 4 *Այլ ըստ բնութեանն անշարշարելի եւ անայլայլելի է, զի որ մի անգամ ի տանջանս ընբռնի*[1]*՝ այլայլի, իսկ հուր ի տանջանս ընբռնի, վասն միանալոյ ընդ երկաթոյն, |*130բ*| բայց ո՛չ այլայլի եւ ոչ կրէ զնորայսն, վասն զի անյեղափոխ է ունակացեալ եւ պարզաբար եւ մէկին ունի զաւրութիւն, եւ անկա՛ր է փոխադրիլ*[2] *յայլ ինչ։* 5 *Եւ արդ, ըստ այսմ նմանութեան Բանն ի մարմնի միացեալ, ոչինչ կրել զնորայսն հարկաւորաբար, այլ կամաւորութեամբ, վասն մերոյ փրկութեան։* 6 *Իսկ զնորայսն հարկաւորաբար կիրսն վերաբերել առ իւր անպարտելի զաւրութիւնսն, եւ ո՛չ էր նմա հնար ընբռնիլ իւրոցն ինչ հարկաւոր կրիցն։*

ԾԷ. 1 *Եւ զիա՞րդ էր հնար զայլոցն շարաբառնալ զտկարութիւն, որ յիւ-*

---

[1] *Ձ՝ ընդունի՝ փոխ ըմբռնի*
[2] *Ձ՝ փոխարկի] փոխադրիլ*

բոցն վտանգիւր կրից։ **2** *Աստ յիշէ աւրինակ եւ զմարգարիտն, զոր ի ծովէ, զոր ոչ գրեցի*[1]*։* **3** *Դարձեալ եւ այլ աւրինակ միաւորութեան բանին եւ մարմնոյն։* **4** *Զոր աւրինակ մարդն հոգւով եւ մարմնով եւ մտաւք միացեալ, մի մարդ կոչի եւ մի դէմ եւ մի անձն, եւ մի գոյացութիւն, եւ մի բնութիւն եւ մի անուն իւր կոչի՝ ոմն մարդ, թէպէտ եւ ի բազում խառնուածոց եւ յայլ եւ յայլ տեսակաց, եւ յաննմանից ունի զգոյացութիւն իւր, եւ յոր ինչ եւ գործ առաջանայ՝ մի մարդ եւ մի անուն կոչի, եթէ մեծութիւն, թէ աղքատութիւն եւ որ ըստ այսմ, եւ ո՛չ ոք որոշէ, թէ այսինչ մարմնոյն է եւ այսինչ հոգւոյն, թէպէտ եւ գիտեմք, թէ անմահ է հոգին եւ անշարժարելի։* **5** *Եւ միտքն ո՛չ անգանի ընդ ընբռնմամբ եւ շաւշափմամբ*[2]*, սակայն զհոգեկանսն եւ զմարմնականսն միոյ մարդոյ եւ միոյ անուան համարիմք։* **6** *Ըստ այսմ աւրինակի համարեսցուք եւ զՔրիստոս Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ յոքնանուն անուանի։* **7** *Այլ ա՛յն ըստ գործոյն կոչի, որպիսի դուռն եւ այլն, բայց տիրական անուն մի կոչի, որպէս Առաքեալ անուանէ մի՛ Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայնք[ն ուսոյց]*[3]*։*

ԾԸ. |131ա| *[1]Արդ, ըստ այսմ իմաստից կոչի Քրիստոս եւ ասի Աստուած հզաւր եւ անմահ, եւ չարչարեալ եւ մեռեալ, զի ինքն է նոյն Աստուած եւ նոյն մարդ, նոյն ինքն Որդի Աստուծոյ, եւ նոյն ինքն որդի մարդոյ, եւ յերկնից եւ յերկրէ, անչարչարելի եւ չարչարեալ, մեռեալ եւ անմահ, եւ իւր ինքեան բարձրագոյնքն ըստ աստուածութեանն, եւ նուաստագոյնքն՝ ըստ իւր կամաւոր յանձնառութեանն. եւ ո՛չ է արժան բաժանեալ զաստուածայինսն եւ զմարդկայինսն, վասն զի միոյ Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ կոչին կիրք եւ ներգործութիւնքն, ըստ որում եւ մարդ, թէպէտ եւ կրկին է, այլ ո՛չ յերկուս բաժանեալ։* **2** *Եւ զի՞նչ այլ յարմարական յարացոյց, քան զսոյն, որ եւ առ Աստուած խորհուրդ ի մէջ առեալ լինի։* **3** *«Արասց[ուք] մարդ ըստ պատ[կերի իւր]* (**տե՛ս Ծն. Ա. 27**)*, կանխաւ տպաւորեալ ի ստեղծումն մարդոյն զմեծ եւ զսքանչելի այսորիկ խառնմանս զաւրութիւն, զի այսր աղագաւ ի հողոյ ստեղծեալն կոչեցաւ պատկեր Աստուծոյ։* **4** *Սմին իրի եւ զաննիւթն ընդ նիւթոյ խառնէր, եւ զանմարմինն՝ ընդ մարմնոյ, ընդ մահկանացուի եւ ապականելոյ, զանմահն զանապականն՝ ընդ անբանի բնութեանն, զբանն եւ զիմաստութիւնն ընդ*

---

[1] *Ա աստ յիշէ... գրեցի՝ լրացրած ձախ լուսանցում*
[2] *Ձ՝> եւ շօշափմամբ*
[3] *Ձ՝> որով... ուսոյց*

անխորհրդի, ընդ ստորնայնոյն՝ զերկնայինն, ընդ ծառայականի՝ զիշխանականն, զլաւն եւ զվեհն՝ ընդ վատթարի՛ եւ նուաստի։ **5** *Բայց ըստ որում եւ զամենայն ինչ իմաստութեամբ արար, նմանապէս եւ զայս, զի ի փոքու կազմածին խառնման՝ կրթեսցուք հաւատալ մեծագունին եւ ուսցուք զանհնարինն հնարաւոր գոլ Աստուծոյ, ուստի եւ երկրորդ մարդ անուանէ Պաւղոս զՏէրն յերկնից եւ հոգեւոր Ադամ* |131բ|։ **6** *Իսկ զառաջինն շնչաւոր եւ հողեղէն, վասն զի հանդերձեալ էաք զգենուլ զերկնաւորին պատկեր, որպէս զերկրաւորին, զի այսր աղագաւ եղեւ հաւասարն Հաւր՝ հաւասար մեզ, լցեալ զյառաջագոյն նկատմանն գծագրութիւն, զի զմեզ ի հաւասարութենէ անասնոց ածցէ առ իւրն հաւասարութիւն, որպէս եւ յաղաւթսն ասէ. «Դո՛ւ հայր յիս եւ ես ի քեզ»* (**տե՛ս Յվհ. Ժ. 38**)*. զի եւ նոքայ ի մեզ եղիցին։* **7** *Եւ զի եղիցին կատարեալք ի մի, որով արժանի լիցուք շնորհաւք ողորմութեանն Քրիստոսի, բերել յանձինս մեր զպատկեր եւ զնմանութիւն աստուածային կերպարանացն, յորում եւ ստեղծ զմեզ, եւ ուղիղ հաւատոյ դաւանութեամբ փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն, որէ աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

ԺԱ.

|131բ| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑԻՈՅ Ի ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԻՆ, Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆՆ

Թեեւ չի նշվում, թե որտե՞ղ եւ ե՞րբ է կարդացվել այս ճառը, սակայն ենթադրելի է, որ գրվել է Քրիստոսի խաչելության օրվա առիթով եւ, հավանաբար, կարդացվել է Կիլիկյան վարդապետանոցներից մեկում, ուր Հովհաննես Երզնկացին Հակոբ Կլայեցի կաթողիկոսի հանձնարարությամբ բազմաթիվ գիտական, աստվածաբանական ճառեր եւ քարոզներ է կարդացել Սիս, Դրազարկ, Անարզաբա, Հռոմկլա քաղաքներում:

Նկատելով, որ Քրիստոսի խաչելությունը չորս խորհուրդներից երեքի մասին «հզօրագունիցն եւ բանիւ ճոխացելոցն իմաստասիրեցաւ», ինքը անցնում է Զաքարիայի մարգարեության մեկնությանը, ըստ որի պետք է գա Տերը, եւ բոլոր սրբերը պետք է լինեն նրա հետ:

Ճառը ուշագրավ է նաեւ նրանով, որ պատկերացում է տալիս ո՛չ միայն Երզնկացու աստվածաբանական, իմացաբանական, այլեւ տոմարագիտության եւ աշխարհագիտական փայլուն գիտելիքների մասին:

Հայրենասեր հեղինակը ինչպես հաճախ տարբեր առիթներով, Քրիստոսի համընդհանուր թագավորաճանաչման առթիվ եւս, անդրադառնում է այն հարցին, որ թագավորությունը հաստատուն կարող է լինել երկու պայմանով. որ թագավոր լինի եւ որ ենթակաները հնազանդ լինեն թագավորությանը:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ ՄՄ 2173 (Ա. 131բ-48բ) եւ 2854 (Ճ. 129բ-33բ) ձեռագրերի համեմատությամբ (հմմտ. նաեւ ձեռ. Հ^{մր} 2715, 31ա-8բ Նորին Յոհաննու Երզնկացւոյ ի Մեծի ուրբաթու ի խորհուրդ խաչելութեան Քրիստոսի):

Ա. 1 *Զբանին Աստուծոյ խորհուրդ փրկագործ տնաւրէնութեանն պատմել բանիւ ախորժեմք եղեալքս յԱստուծոյ բանական:* **2** *Եւ թէպէտ քան զբան գեր ի վերոյ գտանի խորհրդոյ մեծութիւն, բայց երիցս այսոցիկ գլխոց յոքնամասնեայ բարութեամբ գերազանցելոց շահի աւգտութեան ակնկալեալ ի սպասաւորելն բանիւ՝ շարժիմք ի բանին զաւրութենէ:*

Բ. 1 *Առաջին, զի ծանիցէ ի մեզ Արարիչն զիւր գեղեցիկ ստեղծուածոյն բարետոհմիկ ծնունդ, եւ կթեսցէ ի Բանին սերմանց զպտուղ բանական հանճարոյն, եւ ուրախ եղիցի յարարածս իւր, վկա՛յ բաւական համարել բարոյն զպատկերն լինել սկզբնատպին բարեաց:* **2** |132ա| *Եւ երկրորդ, ի պատմելն մեր զանհասանելին մտաց եւ զանքննին խորհրդոց՝ յեղանակ մերոյն փրկութեան, ծանիցուք զազնուականն մեր պատիւ եւ զանհամե-*

մատն յարացուցական գիւտից, ի ցոյց եւ ի կշիռ եկեալ զգայութեանց։ **3** *Զի նոյն Տէր եւ Արարիչ, որ պատուեաց զմեզ ի փառս պատկերի իւրում յառաջնումն, զոր ոչ պահեցաք, մերս զգենու պատկեր, զի զկերպարանն պահեսցէ եւ զբնութիւնս անմահացուսցէ, եւ զառաջին բարձրութիւն փառացն ի մեզ դարձուսցէ անճառ իւրով խոնարհութեամբն, որ այսաւր կատարեաց մարդասիրապէս, զնոյն հնարս փրկութեան եւ բարձրանալոյ մեզ տուեալ աւրինակ ուսման, որպէսզի յեղանակ փրկութեանն մերոյ մնասցէ միշտ յիշատակաւ, առ ի զաւրացուցանել զդանդաղութիւն բնութեանս եւ հոգւոյ զգաստութեամբ ի բաց մերժել զմոռացմանն ստուերացուցիչ շամանդաղ։* **4** *Եւ երրորդ, յիշելով զերախտեացն Աստուծոյ առ մեզ կատարումն, անմոռաց մտացն աւանդել զանվճար պարտուցն համարս, խոցոտեալ սիրով զհետ գնասցուք հոտոյ եղոյն թափելոյ, զի արժանի արասցէ թերեւս արքայ տանել ի սենեակ իւր անճառ բարութեանցն, յորում մաքրեալքն տեսութեամբ գնացին եւ եկեալ պատմեցին։* **5** *Որպէս եւ նախամարգարէն Մովսէս մտեալ յամպն եւ ի մէգն, եւ ի խորհրդեան եղեալ զաւուրս քառասուն, եկեալ պատմէր որդւոցն Իսրայիղի։* **6** *Եւ որպէս մեծն Յոհաննէս, որ սիրեաց զստինս լանջացն եւ մտեալ ի սենեակ անճառ խորհրդոցն, եւ եկեալ պատմէր «Զի սկզբան է բանն»* (**տե՛ս Յվհ. Ա. 1**)*, որ Աստուած ընդ Հաւր։* **7** *Եւ կամ որպէս մեծն Պաւղոս յափշտակեալ յերրորդ երկնից, եւ եկեալ ասէր.* |132բ| *«Զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»* (**տե՛ս Ա. Կրնթ. Բ.**)*։*

Գ. **1** *Եւ արդ, եթէ աստուածամերձ անձինքն այնոքիկ եւ լուսափայլեալքն մաքրութեամբ այնքան փափագմամբ ըղձից զհետ գնացին, մինչ հաղորդ եղեն գերագունին խորհրդոց եւ բաւականացան պատմել զհանգամանս անճառ խորհրդոյն, ապա որքա՞ն ծարաւի սիրով եւ անմոռաց յիշատակաւ զհետ գնալ պարտ է մեծի երախտեաց Փրկչի եւ բարերարի Տեառն, թերեւս տեսութեամբ մտաց հասուցէ զմեզ սիրով ի սենեակն իւր արքայ[ութեան], ուր զբնութիւնս միաւորեաց, եւ տեսցուք զանզուգական փառացն բարձրութիւն ի կատարման տնաւրէնութեանն զի զոր էառն ի նմանէ, յիւրն տարաւ սենեակ յերկինս երկնից, որով եւ զմեզ յանբաւ բարձրութեան կայանսն հանեալ, մեծախորհուրդ այսմ աւուր իրագործութեամբ եղեալ եւ կատարեալ ի Տեառնէ։* **2** *Որ եւ նախքան զճառելն բանիւ եւ հպելն մտաւք, հիացումն եւ զարմացումն առնեն իմացականիս տեսութեան, եւ լուծանին ջիլք զաւրութեան իմոյ՝ կալ ի հաստատութեան ոտից, յահէ ըմբռնեալ մեծահրաշ աւուրս զաւրութեան։* **3** *Զի թէ աստուածարելոցն անձանց աշակերտացն ընտրելոց թմբրութիւն քնոյ ար-*

կանէր ի վերայ տեսութիւն մեծասքանչ եւ աստուածիմաստ[1] *գործոյ Արարչին, որ յայսմ գիշերի, ապա զիա՞րդ կարասցուք մեք զսոյն բանիւ պատմել, որ ի բանէն Աստուծոյ, վասն մերոյ փրկութեան կիրք եւ գործք՝ երկնի եւ երկրի զարմացուցիչք, եւ եղական բնութեանս բանաւորի անհաս եւ անճառ։* **4** *Այլ ապաւինեսցուք ի շնորհ աւուրս զաւրութեան եւ յողորմութիւն պարգեւ|133ա|աբաշխ ձեռինն ամենակարող, զի եւ մեզ առաջնորդեսցէ ի մարգարէական բանիս տեսութիւն, սպասաւորել բանիւ հաւաքման հանդիսիս՝ սիրով ժողովելոց ի փառս եւ ի պատիւ մեծի երախտեաց Արարչին։*

Դ. **1** *Բայց նախ արժա՛ն է գիտել, եթէ չորք են մեծագոյն խորհուրդք, զոր կատարեաց Քրիստոս յայսմ աւուր ի փրկութիւն աշխարհի. խորհուրդ հնոյ զատկին եւ գառինն, զոր եկեր ի վերնատունն, եւ նորոյ ճշմարտութեանն սկիզբն արար։* **2** *Երկրորդ. լուացումն ոտից աշակերտացն, զոր ետ մեզ յաւրինակ խոնարհութեան։* **3** *Եւ երրորդ. զմարմինն եւ զարիւնն իւր ետ մեզ եւ պատուիրեաց առնել յիշատակ կամաւոր մահուանն իւրոյ։* **4** *Եւ չորրորդ. շարշարանք խաչին, յորում եբարձ զմեղս եւ զանէծս Ադամայ եւ ծննդոց իւրոց։*

Ե. **1** *Եւ արդ, յաղագս երիցն խորհրդոյ քննութիւն ի հզաւրագունիցն եւ բանիւ ճոխացելոցն իմաստասիրեցաւ, եւ մեք յաղագս չորրորդին՝ զբան մարգարէութեանն Զաքարիայ քննեսցուք, որ ասէ. «Եւ եկեսցէ հասցէ տէր Աստուած իմ եւ ամենայն սուրբք ընդ նմա» (**Զքր. ԺԴ. 5**)։* **2** *Քննելի է, եթէ ուստի՞ եկն եւ կամ ո՞ւր եւ յաղագս որոյ պատճառի։* **3** *Եւ թէ ուստի՞ եկն՝ Եսայիաս ուսուցանէ. «Եւ եկեսցէ ի Սիոնէ Փրկիչ*[2] *եւ դարձուսցէ զանբարշտութիւնն Յակովբայ (**Եսյ. ԾԹ. 20**)։* **4** *Զոր եւ Դաւիթ զիղձս եւ զբաղձանս ամենայն արդարոցն յայտնէ, ասելով. «Ո՞ տացէ ի Սի[ոնէ] զփ[րկութիւն] Իսրայիղի» (**Սղմս. ԺԳ. 7**) զբանն ի վերին Սիովնէ, եւ զմարդ լինելն ի բնութենէս, զի Սիովն մայր ասի, ի դարձ զգերեալսն ի սատանայ է եւ այլն։* **5** *Եւ թէ ո՞ւր եկեսցէ, մարգարէն Դաւիթ ցուցանէ. «Աստուած թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս որ արար զփրկութիւն ի մէջ [երկրի]» (**Սղմս. ՀԳ. 12**)։*

Զ. **1** *Եւ թէ ո՞ր է մէջ |133բ| երկրի, զոր Տէրն սիրտ երկրի կոչեաց, ըստ որում ասէ. «Որպէս եղեւ Յոնան ի փոր կիտին*[3] *զերիս տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եւ որդի մարդոյ եղիցի ի սիրտ երկրի» (**տե՛ս Մտթ. ԺԲ. 40**)։* **2** *Եւ «մէջ երկրի» կոչի Երուսաղէմ, զի ի միջոցի կայ երից մասանց աշ-*

---

[1] *Ձ՝ աստուածարեալ*
[2] *Ձ՝ փրկիչ իսրայէլի*
[3] *Ձ՝ ի սիրտ երկրի] ի փոր կիտին*

խարհիս. Լիբիա, Բոպիա եւ Ասիա: **3** *Եւ Տէրն «սիրտ» կոչեաց, զի որպէս կենդանւոյ ի սրտէ անտի աղբիւրաբար բխէ կենդանական զաւրութիւնն յամենայն մասունս անդամոցն եւ որպէս արեգակն ի միջի պարունակին գոլով արձակէ զճառագայթս լուսոյն ընդ ամենայն աշխարհ, նոյնպէս եւ Տէրն զկենդանացուցիչ զաւրութիւնն եւ զարդարութիւն եւ զաւրհնութիւն ի խաչէն եւ ի գերեզմանէն՝ յամենայն ծնունդս Ադամայ, եւ զճառագայթս Աւետարանին քարոզութեան անտի՛ ընդ ամենայն տիեզերս:* **4** *Եւ վասն է՞ր յայսմ տեղւոջ կատարէ զբովանդակ տնաւրէնութեանն իւրոյ զխորհուրդ:* **5** *Քանզի ի հնագէտ*[1] *պատմութիւնս եբրայեցւոց գտանի, ա՛նդ գոլով շիրիմ առաջին մարդոյն, զի այսպէս ասեն եթէ զոսկերս նախաստեղծիցն, իբրեւ զգանձս պատուականս ունելով առաջին նահապետացն, եւ հայր որդւոյ աւանդելով, եհաս մինչեւ ի Նոյ:* **6** *Իսկ նա, հրամանաւ հրեշտակի, ընդ ինքեան առ ի տապանն, առ ի լուսատու լինել նոցա:* **7** *Եւ յետ ելանելոյն ի տապանէն, իբրեւ զմեծ իմն պարգեւ տայր երեց որդւոյն Սեմա:* **8** *Իսկ նա առեալ ընդ ինքեան զՄելքիսեդեկ՝ զթոռն իւր, եւ ի գիշերի, ծածուկ խորհրդով լծեալք իբրեւ զլուծս եզանց, առեալ զնշխարսն Ադամայ եւ Եւայի, եւ հասին յերկիրն Պաղեստինեայ, առաջնորդութեամբն Աստուծոյ:* **9** *Եւ մերձ ի Քաբրաթայ, որ այժմ Բեդղեհէմ, ի յայրի անդ բնափոր եղեալ յԱրարչ|134ա|էն, եդին զոսկերսն Եւայի եւ եկին ի Սիոն լեառն, եւ ի տեղին որ կոչի Գողգոդայ եդին զնշխարսն Ադամայ, ուստի եւ Գողգոդայ ասի, վասն անդ լինելոյ գագաթանն Ադամայ:*

Է. **1** *Եւ, արդ, որպէս ծննդամբ զնախամաւրն եբարձ զյանցանս ի Բեդղեհէմ՝ ի յայրին, նոյնպէս չարչարանաւք խաչին զնախահաւրն եբարձ զդատապարտութիւն յանցանաց:* **2** *Վասն այնորիկ ի Գողգոդայ կանգնէր զխաչն՝ ի վերայ շիրմի նախահաւրն, զի ա՛նդ եկեալ հասանէր Տէրն եւ Աստուածն մեր, ըստ մարգարէութեանն Զաքարիայ:* **3** *«Եւ եկ[եսցէ] հա[սցէ] Տէր [Աստուած]» (Զfr. ԺԴ. 5):* **4** *Զի, զոր աւրինակ, թշնամոյ իւրոյ, ուր եւ հասանէ ոք, անդ սպանանէ, եւ զգողացեալ գանձս իւր, ուր եւ գտանէ, անտի՛ դարձուցանէ, եւ զախտս որջացեալ, ուր եւ գտցէ՝ ա՛նդ բուժեսցէ եւ զառողջութիւն շնորհեսցէ:* **5** *Եւ ուր տեղի դատաստանի է, զոսոխն իւր անդ դատապարտեսցէ:* **6** *Այսպէս եւ Տէրն, զհետ մտեալ մահու, որ էր թշնամի կենաց մերոց՝ սկսեալ ի ծննդենէ, եւ անդ հասանէր նմա եւ զգանձս իւր զիւրական պատկերն անդ գտեալ, եւ դարձուցանէ յառաջին փառացն ճոխութիւն:* **7** *Եւ զանկեալն ի ձեռս աւազակացն անդ եկեալ տեսանէր եւ զառողջարար դեղ արեանն իւրոյ հեղեալ, եւ զաւծումն լու-*

[1] *Ճ՛ հնագոյն*

սաւոր մկրտութեան աւազանին ի խորհուրդ մահուն իւրոյ շնորհեալ՝ զախտացեալն բժշկէր։ 8 *Վասն զի պա՛րտ եւ արժան էր, ուր յաղթեաց մահու բռնութիւն, ա՛նդ յաղթահարիլ, եւ ուր ծաղկեաց ապականութիւն՝ անդ ապականիլ։* 9 *Եւ ուր ընկճեալ կայր մարդկային բնութիւնս՝ անդ վերականգնիլ յարութեամբն յառաջին ապականութենէն։* 10 |134բ| *Եւ մարմնովն, որով մահ թագաւորեաց, ա՛նդ կեանք աղբիւրանալ։* 11 *Եւ որպէս մահն առ մարմինն Ադամայ գոյր որջացեալ, այսպէս յանցաւորութիւնն առիթ մահու առ փայտին։* 12 *Նմին իրի ա՛նդ եկն զպարտիս մեր բառնալ եւ փայտիւն զմեղսն՝ զպատճառսն մահու սպանանէր, եւ մահուամբն զմահու իշխանութիւն լուծանէր։* 13 *Վասն որոյ ասէ մարգարէն. «Եւ եկ[եսցէ] հա[սցէ] տէր Աստուած եւ ամենայն սուրբք»։* 14 *Այսինքն՝ ի դատաստան եւ յիրաւունս հասցէ ի դատաստանս սատանայի եւ ի դատապարտութիւն դժոխոց, եւ յիրաւունս եւ յողորմութիւն մարդկային բնութեանս, ըստ Դաւթի. «Արարեր զդատաստանս [իմ] եւ զիրաւունս, նստար յաթ[ոռով] դատ[աւոր] արդ[արութեան]» (**Սղմս. Թ. 5**)։* 15 *Եւ Տէրն ասէր. «Ի դատաստան եկի յաշխարհս յայս» (**Յվհ. Թ. 39**)։* 16 *Զի ո՛չ թէ աստուածային անբաւ զաւրութեամբն յաղթեաց, այլ իրաւամբք դատաստանի, զի վասն այսորիկ զգեցաւ զմարմինն, զի մարմինն առցէ զյաղթութիւն։* 17 *Զի թէ Աստուած առանց մարմնոյ յաղթեալ էր սատանայի, զի՞նչ սքանչելիք էին։*

Ը. 1 *Արդ, ի յանկանելն Ադամայ անկա՛ւ ընդ նմա ա՛յն, որ յարուցանելոցն է զնա։* 2 *Ըստ այնմ՝ «Ուր անգածն է, անդր ժողովեսցին արծուիք» (**տե՛ս Մտթ. ԻԴ. 28**)։* 3 *Արդ, զի զառողջութիւն իւր կորոյս Ադամ, զգեցաւ Տէր մեր մարմին, զի նովաւ գտցէ զառողջութիւնն Ադամայ, զի թէպէտ սուրք աւազակաց անխնա խոցոտեցին զնա, սակայն դեղք բարերարին փութացան կեցուցանել զնա, զի հարուածք նորա ձրի էին, զի ոչինչ մեղաւ սատանայի, որ եհար զնա, եւ ոչինչ ետ գինս բարերարին, որ բժշկեաց զնա։* 4 |135ա| *Իշոյն ծնաւտիւն կոտորեաց Սամսոն զհազարս (**տե՛ս Դատ. ԺԵ. 16-17**), եւ աւձն Եւայիւ՝ զամենայն ազգս։* 5 *Առ Տէր մեր զնոյն զէն, որով կոտորեաց սատանայ*[1] *եւ էջ ի մարտ պատերազմի, եւ մարմնովն, որ ի կնոջէն, յաղթեցաւ սատանայ։*

Թ. 1 *Եւ այս ամենայն ի վերայ գերեզմանի նախահաւրն լինէր, զի որք առաջնոյն Ադամայ յանցանաւքն մեռաք, երկրորդն Ադամայ արդարութեամբն ապրեսցուք, զոր եւ Պաւղոս համեմատէ ասելով, թէ՝ «Որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ ի մեղաց անտի մահ, եւ այնպէս*

[1] *ձ զնա] սատանա*

յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեռան» (**Հռմ. Ե. 12**)։ **2** *Զի զոր աւրինակ, Ադամ մեղաւ եւ ճաշակեաց ի պտղոյն, եւ որք ոչն կերան ի պտղոյն՝ մահկանացուք եղեն, զի նա սերմանեաց մեղս պղծութեան ի մարմին սուրբ, եւ թաղեցաւ խմորն չարութեան ի զանկուածս մեր։* **3** *Եւ այսպէս «թագաւորեաց մահ յԱդամայ մինչ ի Մովսէս եւ ի վերայ չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է աւրինակ հանդերձելոյն»* (**Հռմ. Ե. 12**)։ **4** *Այսինքն՝ աւրինակ էր Ադամ Քրիստոսի, զի որպէս նա, որք յինքենէ թէպէտ եւ ո՛չ կերան ի ծառոյն, եղեւ պատճառ մահու յանցանաւքն իւրովք, նոյնպէս եւ Քրիստոս, որք յիւրմէն, թէպէտ եւ չէին ինչ արդարութիւն գործեալ, եղեւ առաջնորդ արդարութեան եւ սերմանեաց ի մարմին զսրբութիւն եւ զարդարութիւն, եւ ի ձեռն խաչին շնորհեաց մեզ զամենայն բարութիւն։* **5** *Եւ ամենայն սուրբք ընդ նմա։* **6** *Զի զոր աւրինակ, որք զտաճարս գեղեցկաշէն հանդերձեալ են կազմել, նախ խորհին մտածութեամբ զձեւ եւ զաւրինակ շինուածոյն, եւ ապա խաւսին |135բ| ընդ գործակիցս ճարտարութեան արուեստին, եւ ապա գործով կատարեն, զոր խորհեցաւ եւ խաւսեցաւ։* **7** *Այսպէս եւ ամենիմաստ ճարտարապետն բնութեանս, որ հանդերձեալ էր շինել զբնութեանս խորան։*

Ժ. **1** *Ըստ որում Աստուած Հայր խաւսեցաւ բերանով մարգարէին Ամովսայ։* **2** *«Յաւուր յայնմիկ կանգնեցից զխորանն Դաւթի, զանգեալն եւ զկործանեալն վերստին կանգնեցից, եւ շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից»* (**տե՛ս Ամովս, Թ. 11**)։ **3** *Եւ խորան Դաւթի է՛ մարմինն անգեալ եւ կործանեալ մեղաւքն Ադամայ, զոր կանգնեաց Հայր ի Բանն իւր Միածին, վերստին նորոգել ի նմա զբնութիւնս, ըստ առաջին անմեղութեանն, որ էր նախքան զյանցանսն։* **4** *Եւ զայս նորոգումն շինութեան՝ նախ խորհրդով եւ աւրինաւք տպաւորեաց առ նահապետսն, եւ ապա բանիւ եւ խաւսելով առ մարգարէսն, եւ ապա գործով կատարեաց իւրով մարմնովն Աստուած Բանն։* **5** *Վասն որոյ ի կատարելն իւր գործով ընդ նմա են եւ ամենայն սուրբք, որք խորհրդով եւ աւրինակաւք տպաւորեցին վասն նորա եւ որք բանիւք մարգարէականաւք ճառեցին։* **6** *Ըստ առաքելոյ. «Բազում մասամբք եւ բազում աւրինակաւք կանխաւ խաւսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք»* (**Եբր. Ա. 1**)։ **7** *Արդ, ընդ նմա են ամենայն սուրբք ոչ միայն վասն զկատարումնն աւրինակացն եւ բանիցն տեսանելով կատարեալ, այլ տեղի տնաւրէնութեանն Իւրոյ՝ յոլովք յառաջագոյն տպաւորեցան խորհուրդք, քանզի աստ Աբրահամ պատարագէր զԻսահակ զմիածինն իւր՝ յաւրինակ Միածնին Հաւր։* **8** *Աբրաամ կամաւ մատուցանէր զԻսահակ, եւ Հայր կամաւ եւ |136ա| հաճութեամբ*

մատուցանէր «Զգառն, որ բառնայր զմեղս աշխարհի» (**Յվհ. Ա. 29**)*, ըստ Եսայեայ. «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր»* (**Եսյ. ԾԳ. 6**)*:* **9** *Իսահակ հնազանդ էր Աբրահամու, եւ Պաւղոս ասէ վասն որդւոյ, եթէ՝ «Հնազանդ եղեւ հաւր մահու չափ եւ մահու խաչի»* (**տե՛ս Փլպ. Բ. 8**)*:* **10** *Խոյն փոխանակ տուաւ Իսահակայ եւ Տէրն՝ փոխանակ բազմաց:* **11** *Ի սոյն տեղւոջ եւ Մելքիսեդեկ աւրհնեաց զԱբրաամ, տալով հա՛ց բաղարջ եւ գինի՝ անապակ, ուր զմարմինն եւ զարիւնն իւր բաշխելոց էր որդին Աստուծոյ* (**տե՛ս Ծն. ԺԴ. 18**)*:*

ԺԱ. **1** *Ի սմին եւ Յակովբ սքանչելին «Ետես զտեսիլ սանդխտոցն, յորում հրեշտակք իջանէին եւ մարդիկ ելանէին, որ յերկրի գոլով հաստատեալ, եւ գլուխն յերկինս հասանէր՝ ի խորհուրդ խաչին, որով մարդիկ բարձրացեալ ելին յերկինս, եւ հրեշտակք իջեալ խառնեցան ընդ մարդկան:* **2** *Եւ աստ էաւծ զարձանն եւ անուանեաց տուն Աստուծոյ, ուր եւ աւծեալն Աստուծոյ կնքելոց էր վիմով»* (**տե՛ս Ծն. ԻԸ. 12-18**)*:* **3** *Ի սմին եւ Մովսէս պատուիրեաց ազգատոհմին իւրոյ անդ պաշտել զԱստուած, ուր դիցէ զանուն քաջութեան իւրոյ, որ եւ ընտրեաց զտեղիս զայս ի ձեռն Դաւթի ընտրելոյ իւրոյ, ասելով. «Ընտրեաց նա զազգն Յուդա լեառն զՍիոն, զոր եւ սիրեաց»* (**Սղմս. Հէ. 68**)*:* **4** *Եւ դարձեալ. «Հաճեցաւ Տէր ընդ Սիոն եւ ընտրեաց բնակիլ ի նմա»:* **5** *Եւ «ասէ. Այս է հանգիստ իմ յաւ[իտեան], ի սմա բն[ակեցայց], զի հ[աճեցայ ընդ սա]»* (**Սղմս. ՃԼԱ. 13-14**)*:* **6** *Քանզի անդ կատարեաց Տէր զտնաւրինականսն ամենայն, ուր եղեւ գերեզման նորա եւ յարութիւնն եւ համբառնալն յերկինս, եւ գալ Հոգւոյն. եւ ոչ մեկնի շնորհ նորա ի տեղեաց անտի:*

ԺԲ. **1** *Ի սոյն տեղի եկն եհաս յաւգնութիւն բնութեանս տէր Աստուած մեր «եւ ամենայն սուրբք ընդ նմա»* (**Զfr. ԺԴ. 5**)*:* **2** |136բ| *Զի յորժամ կատարեաց ի Սիոն ի վերնատունն*[1] *զխորհուրդ տնաւրինական գառինն եւ զլուացումն ոտից աշակերտացն, եւ ետ զմարմինն եւ զարիւն իւր փոխանակ ստուերական պատարագացն, ելեալ գնաց, ըստ սովորութեանն ի լեառն Ձիթենեաց, զի մի՛ թագչել թուիցի:* **3** *Ընդ նմա եւ մարգարէն Զաքարիա, ի կատարումն մարգարէութեան իւրոյ, որ ասէ. «Եթէ յաւուր յայնմիկ կացցեն ոտք նորա ի վերայ լերինն Ձիթենեաց յարեւելից կուսէ», եւ պատառեսցի լեառն ընդ*[2] *չորս* (**տե՛ս Զfr. ԺԴ. 4**)*, զի Ձիթենեաց լեառն աւրինակ էր քահանայութեանն եւ թագաւորութեանն, որք եւ յաւծումն եղոյն աւծեալք էին, որք եւ բաժանեցան եւ ցրուեցան ընդ չորս*

---

[1] *Ձ՛ սիոնի վերնատանն*
[2] *Ձ՛ > ընդ*

կողմանս աշխարհիս։ 4 *«Եւ զի ամբոխն հրէից*[1]՝ *սուսերաւք եւ բրաւք, եւ ջահիւք եւ լապտերաւք հասին ի վերայ»* (**տե՛ս Մրկ. ԺԴ. 43**)*, ընդ նմա էր եւ Դաւիթ, որոյ առաջագոյն ետես զըմբոնելն Տեառն ջահիւք ի ձորն Գեթսամանի, որ եւ ինքն իսկ զաւրինակն անձամբն տպաւորեաց ի փախչելն յԱբեսողոմայ ի գիշերի, ջահիւք եւ բոկոտն գնալով ընդ ձորն Գեթսամանի, ծածկէր զերեսս իւր եւ լայր։* 5 *Եւ զի սուսերաւք եւ բրաւք եկեալ ի վերայ Տեառն, ընբռնեցին, Զաքարիայ մարգարէացաւ յերեսաց Հաւր. «Զարթիր սուր ի վերայ հովուի իմոյ եւ ի վերայ առն*[2] *ընկերի նորա, եւ թէ հարիցս զհովիւն եւ ցրուեսցին ոչխարքն»* (**տե՛ս Զfr. ԺԳ. 7**)*, եւ զի ոչ ոք կարէր ընբռնել, եթէ ոչ էր տուեալ ինքն համարձակութիւն։* 6 *Եւ իբրեւ ընբռնեցին զնա, կապեցին եւ մուծին ի տուն քահանայապետին, ընդ նմա գոլով Եսայիաս, որ ասաց. «Վա՛յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առ անձինն եւ* |137ա| *ասեն. «Կապեսցուք զարդարն, զի դժպհի եղեւ մեզ»* (**Եսյ. Գ. 9-10**)*։* 7 *Եւ Սողոմոն ասէ. «Դարան գործեսցուք արդարոյն, զի դառնացաւ մեզ»* (**տե՛ս Իմաստ. Բ. 12**)*։* 8 *Եւ արքն, որք պահէին զնա, այպն առնէին զնովաւ եւ հարկանէին, ծածկէին զերեսս նորա եւ տանջէին եւ հարցանէին զնա եւ ասէին. «Մարգարէեաց ո՞վ է, որ եհարն զքեզ»* (**Ղկ. ԻԲ. 64**)*։* 9 *Ընդ նմա գոլով Միքիաս, որ*[3] *ասէ. «Հարին զծնաւտս հովուին Իսրայիղի»* (**տե՛ս Միք. Ե. 1**)*։* 10 *Եւ Դաւիթ «Զթիկունսն իմ հարին մեզ[աւորք]»* (**Սղմս. ՃԻԸ. 3**)*։* 11 *Եսայի ի դիմաց Տեառն ասէ. «Զթիկունս ետու ի հարուածս, եւ զծնաւտս [իմ]՝ յապտակս, եւ զերեսս իմ ոչ դարձուցի յամաւթոյ ընդ երեսս թքանելոյ»* (**Եսյ. Ծ. 6**)*։* 12 *Վասնզի թքանէին յերեսս այնմ, որ փչեաց յերեսս մեր շունչ կենդանի, որով եղաք եւ յոգի կենդանի։* 13 *Եւ իբրեւ դատեցին յատեանն Պիղատոսի, եւ ոչ կամեցան արձակել զնա, այլ առեալ գնացին, Մաթէոս ասէ. «Մերկացուցին զհանդերձս նորա եւ արկին [զ]քղամիդ կարմիր ի վերա նորա»* (**հմմտ. Մտթ. ԻԷ. 28**)*։* 14 *Եւ Յոհ[աննէս] ասէ. «Զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, եւ զգեցուցին նմա հանդերձ ծիրանի։* 15 *Եւ ասէին. «Ողջ լեր. արքայ հրէից, եւ ապտակէին զնա»* (**հմմտ. Յվհ. ԺԹ. 3**)*։* 16 *Եւ Մարկոս ասէ. «Զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր եւ ծիրանի»* (**Մրկ. ԺԵ. 17**)*։* 17 *Եւ Մաթէոս ասէ. «Եդին եղէգն յաջոյ ձեռին նորա»* (**Մտթ. ԻԷ. 29**)*։*

ԺԳ. 1 *Եւ զայս ամենայն նախատանաւք եւ կատակելով առնէին, որպէս թէ՝ թագաւոր ասես զքեզ, ա՛ռ փոխանակ մարգարտաշար եւ ակա-*

---

[1] *ձ՛ > հրէից*
[2] *ձ՛ առ] առն*
[3] *ձ՛ > որ*

նակուռ պսակի՝ զփշեղէնդ պսակ գլխոյ, եւ փոխանակ ոսկեղէն մականի՝ զցուպդ եղեգնեայ։ 2 *Եւ հանդերձ կարմիր եւ ծիրանի զգեցուցին, իբր թագաւորական զգեստ պատմուճանի։* 3 *Եւ զոր մերկացեալքն* |137բ| *յաստուածային նորա շնորհաց՝ այպանելով առնէին, կրեաց կենարարն մեր Քրիստոս, եւ շրջեաց զամենայն ի բարութիւն աշխարհի։* 4 *Մերկութեամբն իւրով զգեցոյց լուսեղէն պատմուճանն Ադամայ, զոր մերկացաւն մեղաւք։* 5 *Եւ ծիրանեաւն թագաւորեցոյց զծառայքս ախտից, զի որում հնազանդեցաք, նմին եւ ծառայեցաք, որպէս գրէ առաքեալ (***հմմտ. Հռմ. Ջ. 16***)։* 6 *Եւ փոխանակ կարմրին, զարիւնն իւր կենդանարար ետ հաւատացելոց իւրոց։* 7 *Եւ եղեգնեայ ցուպն՝ ցուպ եղեւ հաստատութեան աշխարհիս ի վերայ*[1] *նորա յենլովն, այլեւ զտկարութիւնս մեր եբարձ եւ գաւազան քահանայութեան եւ թագաւորութեան պարգեւեաց մեզ։* 8 *Եւ դարձեալ, զի թագաւորք եղեգամբ գրեն*[2] *զոմանս ժառանկաւորս եւ զայլս՝ տարագիրս, նոյնպէս եւ Քրիստոս գրեաց այնու զհեթանոսս ժառանգաւորս, եւ զանհաւատ հրեայսն՝ տարագիրս։* 9 *Ըստ որում գրէ առաքեալ, թէ «Յորժամ մահ լինիցի ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն, իսկ ի ժառ[անգութիւն] յաւ[իտենից]» (***Եբր. Թ. 15***)։* 10 *Այսինքն՝ զի գրեալ էր յաւրէնսն, թէ՝ անձն, որ մեղիցէ, նոյն եւ մեռցի, եւ զի ամենեքեան մեղան, վասն որոյ բոլոր բնութիւնս մարդկան էին պարտական մահու։* 11 *Իսկ Տէրն տուեալ զանձն ի մահ՝ եւ փրկանս փոխանակ բազմաց, եւ իւրով անպարտական մահուամբն զմերն վճարեաց մահու պարտս եւ զանմեղ մահն եւ զանբիծ արիւնն՝ նուէր հաշտութեան Հաւր տուեալ, զի բարկացեալ էր մեղանչականաց, եւ ոչ կամէր տալ զժառանգութիւնս զայս մեզ, այսինքն՝ զվերին կեանսն* |138ա| *եւ զանմահութիւն։* 12 *Իսկ մահուամբն որդւոյ հաշտեալ հայրն՝ ներէ եւ թողու զմերն պարտիս եւ առնէ զմեզ ժառանկակիցս Որդւոյ իւրոյ, որ գրեաց զմեզ յեղբայրութիւն իւր եւ յորդեգրութիւն հաւրն իւրում։* 13 *Եւ այս կտակս հաստատուն է մեզ մահուամբն Քրիստոսի։*

ԺԴ. 1 *Եւ ապա ընբռնեցին զՍիմոն Կիւրենացի, որ գայր յանդէ, եւ եդին ի վերայ նորա զխաչն բերեալ զհետ Յիսուսի (***տե՛ս Մտթ. ԻԷ. 32, Ղկ. ԻԳ. 26***)։* 2 *Յոհ[աննէս] ասէ. «Ինքնին բարձեալ էր զխաչափայտն», զի հասեալ ի տեղին՝ [յ]ինքն առ զխաչն, նշանակեալ թէ որք այժմ բառնան զխաչ մարմնոյ՝ գնալ զհետ նորա ի կատարածի անդ յինքն ընկալեալ, թեթեւացուցանէ զնա յայնցանէ, որք սիրեցին բառնալ զնա։* 3 *Այլեւ ըստ*

---

[1] *Ձ՝ աշխարհիս, որ ծերացաւ անկաւ ի վերա*

[2] *Ձ՝ > գրեն*

աւրինի պատերազմաց թագաւորաց, զի նախ զինակիրն բառնայ զզէն թագաւորին, եւ հասեալ ի տեղի ճակատուն, յինքն առեալ վանէ զթշնամին։ 4 *«Եւ ելանէր ի տեղին, որ անուանեալ էր գագաթն, եւ ըստ եբրայեցւոցն կոչէր Գողգոթայ» (***Յվհ. ԺԹ 17***), որ էր տեղի կառափելոյ։* 5 *Զոր եւ Զաքարիաս մարգարէանայ. «Եւ եկեսցէ հասցէ Տէր Աստուած իմ եւ ամենայն սուրբք ը[նդ նմա]»։* 6 *Զի ընդ նմա էր Աբրաամ, որ խորհրդաբար զայս նշանակեաց, որ նախ իշոցն բառնայր զփայտն եւ հասեալ ի տեղին՝ դնէր ի վերայ Իսահակայ՝ որդւոյ իւրոյ (***տե՛ս Ծն. ԻԲ. 3-6***)։* 7 *Ընդ նմա գոլով եւ Եսայ. որ ասէ, թէ՝ «Մանուկ ծնաւ մեզ որդի եւ տուաւ մեզ»՝ յայտ է փրկանս, եւ «իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց» (***տե՛ս Եսայ. Թ. 6***). խաչն, զոր կամաւ բառնայր ի վերայ ուսոց իւրոց, որով էառ իշխանութիւն յերկինս եւ յերկրի։* 8 *Եւ հասեալ անդ, հանին զնա ի խաչ, զոր Մարկոս ասէ. |138բ| «էր ժամ երրորդ» (***Մրկ. ԺԵ. 25***). եւ Յոհ[աննէս]՝ «վեցերրորդ» (***Յվհ. ԺԹ. 14***)։* 9 *Մարկոս զցերեկն միայն ասէ, զի ի յերրորդ ժամու հանին զնա ի խաչ։* 10 *Եւ Յոհ[աննէս]՝ զերիս ժամս գիշերոյն, յորում սկիզբն արարին ի տան քահանայապետին չարչարանաց, ընդ տուընջեանն համարի։* 11 *Եւ ի ժամու, յորում ճաշակեաց նախահայրն ի պտղոյ մահաբեր ծառոյն, ի նոյն ժամու ծաղկեցաւ փայտն մահու*[1]*, եւ եղեւ ծառ կենաց, բերելով մեզ զանմահական պտուղն զՔրիստոս։* 12 *Ընդ նմա գոլով եւ նախամարգարէն Մովսէս, որ ասաց հրէիցն. «Տեսանիցէ՛ք զկեանս ձեր կախեալ*[2] *առաջի աչաց ձերոց, եւ զարհուրեսցիս զցայգ եւ զցերեկ, եւ ո՛չ հաւատացէք կենացն ձերոց» (***տե՛ս Բ. Օր. ԻԸ. 66***), զի զայն որ ասաց. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն, եւ կեանք» (***Յվհ. ԺԴ. 6***), զնա տեսին կախեալ զփայտէ՝ զցայգ եւ զցերեկ։* 13 *Զի աւր մեծի ուրբաթին այն՝ գիշեր էր, վասն խաւարման լուսաւորացն, եւ տիւ՝ վասն արեգականն ի վերնումն գոլով կիսագնդին։* 14 *Եւ նոքա ո՛չ հաւատացին, ո՛չ աւրինականացն, որ տպաւորեցան, եւ ոչ մարգարէիցն բանի, եւ ոչ նմին ինքեան, որ ասաց. «Ես յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսեան ձգեցից առ իս» (***Յվհ. ԺԲ. 32***) եւ թէ՝ «Յորժամ բարձրացուցանէք զիս յերկրէ*[3]*՝ յայնժամ գիտասջիք, թէ ես եմ» (***տե՛ս Յվհ. Ը. 28***) կեանքն ձեր, զի «Մովսէս վասն իմ գրեաց»։* 15 *«Եթէ հաւատայիք Մովսիսի, հաւատայիք եւ ինձ», ապա թէ Մովսիսի բանիցն չհաւատայք, զոր այնքան պատուով ունիք, ինձ՝ զոր թշնամի կարծէք, զիա՞րդ հաւատայք (***տե՛ս Յվհ. Ե. 46-47***)։*

ԺԵ. 1 *Վասն որոյ չհաւատացին, զորոց մտացն անհաւատութիւն տե-*

---

[1] *ձ՝ > մահու*
[2] *ձ՝ կանխեալ*
[3] *ձ՝ > եւ թէ... երկրէ*

սեալ յառաջագոյն մարգարէն |139ա| *Երեմիաս ասէ ի դիմաց հրէիցն. «Եկայք արկցուք փայտ ի հաց նորա եւ ջնջեսցուք յերկրէ զանուն նորա» (տե՛ս Երմ. ԺԱ. 19), զի զփայտ խաչին անաւրէն հրեայքն ձեռաւք ի հացն մեր արկին, յայն, որ ասաց. «Ես եմ հացն կենաց իջեալ յերկնից» (տե՛ս Յվհ. Զ. 35), զայս եւ Մովսէս նշանակեաց եւ Փրկիչն մեր Յիսուս կատարեաց՝ ասելով. «Որպէս Մովսէս*[1] *բարձրացոյց զաւձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ» (Յվհ. Գ. 14): 2 Մովսէս բարձրացոյց զաւձն պղնձի սակս ապրեցուցանելոյ զԻսրայէլ, եւ Տէրն բարձրանայ ի Խաչին՝ վասն ապրեցուցանելոյ զորդիս մարդկան յառաջին աւձէն եւ յաւձաձեւ ցանկութեանցն, որ թիւնաւք մեղացն խայթեալ զմեզ մահացոյց: 3 Յաւձն պղնձի, որ հայէր հաւատով, ոչ խածանիւր եւ խածեալն ապրէր, եւ զՏէրն ի խաչին, որք հաւատով հայեցան եւ հային, ի թիւնից իմանալի աւձին կեան վիրաւորեալքն, եւ ողջքն ոչ վնասին: 4 Զոր Տէրն յերեկոյացեալ ժամանակի բեւեռեաց զզաւրութիւն մահու ընդ խաչափայտին, զայս Յեսու յառաջագոյն տպաւորեաց, ի մտանել արեգականն կախեալ զթագաւորն Գայեայ զերկճղի փայտէ, ընդ նմա գոլով ի տեսանել զաւրինակացն տպաւորութիւն ի կատարումն ածեալ ճշմարտութեամբ (տե՛ս Յեսու, Ը. 29): 5 Զսոյն եւ քահանայքն ղեւտացիք ի մատուցումն պատարագացն իւրեանց աւրինակէին զայս ճշմարիտ զէնման եւ2 պատարագի խորհուրդ զերկու հաւսն, զոր մատուցանէր քահանայն, զմիւսն վասն մեղաց, եւ զմինն յողջակէզ: 6 Եւ որ վասն մեղացն է՝ խառնեսցէ զգլուխն յուլանէ անտի, եւ մի հատցէ եւ թեւքն (հմմտ. Ղեւտ. Ա. 14-17)* |139բ| *ջախջախեալ ի վերայ մոխրակուտին՝ խորհուրդ չարչարանաց Տեառն մերոյ, զի թռչուն երկնից ասի նա, վասն ի յերկնից եւ երկնաւոր լինելոյ Բանին: 7 Եւ եղեւ մարմին ըստ Յոհանու՝ պատարագել վասն մեղաց մերոց քաւութեան, եւ ո՛չ յաւշեալ, որպէս եւ Աբրահամ ո՛չ յաւշեաց զթռչունսն (տե՛ս Ծն. ԺԵ. 10), քանզի ոչ մասնականապէս եւ բաժանականաբար, այլ ամենակատար եւ բովանդակապէս մատոյց զինքն վասն մեր Աստուծոյ Հաւր՝ ի հոտ անուշից, եւ չարչարեալ այլ ո՛չ բաժանեալ, քանզի այս է*[3] *պարանոցին խառիլն*[4]*, զի ո՛չ թողաւ յիւրմէ աստուածութենէն, իբրեւ զարհուրեալ ի չարչարանացն, եւ անփոփեալ ի չարչարողէն, որպէս ոմն ասէ, «այլ ընդ գլխոյն», այսինքն՝ ընդ աստուածութեանն միով բնութեամբ միացեալ մարմինն՝ անբաժանելի մնաց ի չարչարելն, յաղագս*

---

[1] *ձ՝> մովսէս*
[2] *ձ՝> եւ*
[3] *ձ՝ ասէ] այս է*
[4] *ձ՝ խառնիլն*

որոյ էր, եւ ասի. «Ի մահուանդ՝ կեանք եւ ի վերայ նորա բժշկութիւն մեզ» (**հմմտ. Եսա. ԻՁ. 19**)։ **8** *Իսկ թեւոցն ջախջախումն ի վերայ մոխրակուտին, զի թէպէտ ըստ թեւոցն աւրինակի երկնաւոր էր եւ ի կերպարանս Աստուծոյ, այլ զծառայի առեալ զկերպարանս, եւ գոչէր՝ «Ուսարուք յինէն, զի հեզ*[1] *եմ եւ խոնարհ սրտիւ* (**Մտթ. ԺԱ. 29**)*, որ է ջախջախեալ ոգով։* **9** *Իսկ «ի վերայ մոխրակուտին»՝ նշանակ չարչարանացն է մոխրակուտն, զի սուրբ է եւ նոյն ինքն մոխիրն, այսինքն՝ չարչարանք նորա։*

ԺՁ. **1** *Եւ զայս զեկուցանէ մեզ Պաւղոս. «Մոխիր,- ասէ,- երնջուցն ցանեալ զպղծեալսն սրբէր»* (**Եբր. Թ. 13**)։ **2** *Ըստ այսմ եւ ա՛յլ աւրինական պատարագացն մոխիրն նշանակէն զսրբեցողական չարչարանացն Քրիստոսի զզաւրութիւն, զոր եւ մեզ պարտ է բերել յանձինս զսոյն աւրինակ։* **3** *Մեռան|140ա|ել ախտից իբր խառեալ պարանոցաւ եւ սուրբ լինի եւ միտք ըստ գլխոյ յեղանակի եւ պիտոյ է եւ խոնարհութիւն, զոր «թեւոցն բեկումն» նշանակէ։* **4** *Իսկ «ի վերայ մոխրին», զի թէեւ գերազանց է ոք առաքինութեամբ, պարտ է ո՛չ անբարտաւանել, այլ ընդ խոնարհս զիջանել, որոց պայման է մոխիրն, զոր եւ ուսոյց մեզ Տէր մեր՝ ի կատարումն այսոցիկ աւրինակաց։* **5** *Այլեւ վասն բորոտութեանն սրբելոյ առնոյր «Քահանայն երկուս հաւս կենդանիս եւ սուրբս, եւ փայտ եղեւնեայ եւ կարմիր մանեալ, եւ զոպա, եւ սպանանել զմի՛ հաւն յաման խեցեղէն ի վերայ ջրոյ կենդանւոյ, եւ արեամբ նորա թանայր զհաւն կենդանի եւ զփայտն եղեւնեայ, եւ զկարմիր մանեալ եւ զզոպայն, եւ ցանեսցէ ի վերայ սրբեցելոյն ի բորոտութենէ եաւթն անգամ եւ սրբեսցէ եւ զհաւն կենդանի արձակեսցէ ի դաշտ»* (**տե՛ս Ղեւտ. ԺԴ. 5-7**)*, որ նշանակէր բորոտն զմարդկային բնութիւնս բորոտեալ պէսպէս եւ զանազան մեղաւք։* **6** *Իսկ երկու հաւն նշանակ Աստուածութեանն Բանին եւ մարդկութեանն՝ յերկուց կատարեալ բնութեանց միացեալ անճառապէս։* **7** *Եւ սպանանել զմի հաւն ի վերայ կենդանի հաւոյն. Քրիստոս մեռեալ ստուգապէս մարմնովն եւ ճշմարիտ կենդանի աստուածութեամբն ի վերայ խաչին, փոխանակ եղեւնեայ փայտին։* **8** *Եւ կարմիրն՝ արեանն խորհուրդ, որում հաւասարեաց արեան եւ մարմնոյ։* **9** *Եւ զոպայն ջերմ՝ Հոգւոյն Սրբոյ։* **10** *Իսկ արեամբ սպանեալ հաւոյն թանալ զհաւն կենդանի, զի Աստուծոյ ասի մահն եւ չարչարանքն, զի Աստուծով լիցի եւ փրկութիւնն մեր։* **11** *Եւ զի փայտն եղեւնեայ եւ զոպայն եւ կարմիրն թացան արե |140բ| ամբ պատարագեալ հաւոյն, եւ նոքաւք սրսկեալ ի վերայ բորոտին՝ սրբեալ լինէր, զի փայտ խաչին ներկեալ արեամբն Քրիստոսի, զոր նշանակէր կարմիրն, եւ զոպայն՝ Հոգւոյն*

---

[1] *Ճ՛ զի ես*

Սրբոյ շնորհք եւ ջուրն, որ յամանն խեցեղէն, սոքա սրսկեալ ի մեզ զշնորհ եւ զխորհուրդ արեանն Քրիստոսի՝ սրբեն զմեզ ի յանցանացն եւ ի մեղաց բորոտութեանցն, որպէս եւ մեծն Յոհաննէս Աւետարանիչ ասէ. «Սոքա երեք են, որ վկայեն. հոգին եւ ջուրն եւ արիւնն։ 12 *Եւ երեքեան սոքա մի են, քանզի զմի ունին խորհուրդ ի սրբելն զմեզ խորհրդիւ մահուն Քրիստոսի» (***Ա. Յովհ. Ե. 8***)։* 13 *Ջուր աւազանին, որով մկրտիմք ի մահն Քրիստոսի։* 14 *Եւ խաչն, որով մեռանիմք ընդ նմա։* 15 *Եւ Հոգին Սուրբ, որ մահուամբն Քրիստոսի տուաւ մեզ։*

ԺԷ. 1 *Ըստ որում, եւ զայս ամենայն մարգարէական հոգւով տեսեալ Զաքարիայ ասէ. «Եւ եկ[եսցէ] հա[սցէ] Տէր Աստուած իմ, եւ ամենայն սուրբք ընդ [նմա]» (***Զfr. ԺԴ. 5***)։* 2 *Բանիւքն իւրեանց եւ աւրինակաւք, զի զբեւեռսն, զոր ընկալաւ ի ձեռսն ի զաւակէն Աբրահամու Զաքարիայ մարգարէն, ի դիմաց հրեշտակացն հարցանէ. «Զի՞նչ վերքդ այդոքիկ ի մէջ ձեռաց քոց»։* 3 *Եւ պատասխանէ Տէրն, զոր. «վիրաւորեցայ ի տան սիրելւոյ իմոյ»*[1] *(***Զfr. ԺԳ. 6***)։* 4 *Եւ Դաւիթ ի դիմաց Տեառն զյանդգնութիւն կատաղի հրէիցն ասէ. «Շուրջ եղեն զինեւ եւ շու[նք բազումք] եւ ժող[ովք] չար[աց] պաշար[եցին զիս]։* 5 *Ծակ[եցին] զձե[ռս իմ] եւ զոտս [իմ], եւ բաժանեցին զհանդերձս» (***Սղմս. ԻԱ. 17-19***)։* 6 *Եւ եղիցի յաւուր յայնմիկ ոչ եղիցի լոյս։* 7 *Վասն զի խաւար եղեւ ի վերայ երկրի ի վեց ժամէ աւուրն մինչեւ ցինն ժամն եւ խաւարեցաւ արեգակն։* 8 *Որպէս եւ մարգարէն Յովէլ ասէ յերկոտասանիցն. «Զայնք հնչեցին ի ձորն դատաստանի. արեգակն եւ լուսին խաւարեցաւ, եւ աստեղք ծ|141ա|ածկեցին զլոյս իւրեանց, եւ Տէր ի Սիոնէ գոչեսցէ եւ յԵրուսաղէմէ՛ տացէ զձայն իւր, եւ շարժեսցին երկինք եւ երկիր։* 9 *Այլ Տէր խնայեսցէ ի ժողովուրդ իւր» (***տե՛ս Յովել, Գ. 14-17***)։* 10 *Եւ դարձեալ նոյն մարգարէ ասէ յերեսաց Աստուծոյ. «Տաց նշանս յերկինս ի վեր եւ [նշանս] յերկիր ի խոնարհ. արեգակն դարձցի [ի] խաւար եւ լուսինն՝ յարիւն» (***Յովել, Բ. 30, 31***)։* 11 *Նշան աստուածութեանն Քրիստոսի, զոր եւ հրեայքն համարէին իբրեւ զմարդ խաչեալ։* 12 *Նշան ետ Աստուած Հայր, եթէ Աստուած է ճշմարիտ. յերկինս ի վեր խաւարումն լուսաւորացն, եւ յերկիր ի խոնարհ՝ արիւն անբիծ Գառինն՝ նշան յերկրի, որով գնեաց զմեզ ի մեղաց. եւ ջուրն, որով շիջոյց զհուր յանցանացն Ադամայ եւ մրրիկ ծխոյ՝ նախատինք չարչարանացն, որ ի խաչահանուացն, այլեւ փոշին յաւդս ծառացեալ ի շարժելոյ եւ ի փլմանէ վիմացն։* 13 *«Արեգակն դարձցի ի խաւար, տեսեալ զչարչարանս Արարչին, եւ լուսինն՝ յարիւն զազգակցութիւն որակի կերպարանաց*

---

[1] *ձ՛ > իմոյ*

Ստեղծչին արեան յինքն բերելով. «Մինչ չեւ եկեալ իցէ աւր Տեառն մեծն եւ երեւելի» (հմմտ. Յովել, Բ. 31), յորում այսպիսի հրաշք նշանաց եղեն։ 14 *Եւ զի խաւարեցաւ արեգակն եւ լուսին, թէպէտ անզգայք են, այլ նշանակ էր պատկառանաց, ո՛չ կարացեալ հայել ի մերկութիւն Արարչին՝ քո՛ղ զստուերն արկանէին պատկառանացն։* 15 *Այլեւ խաւարմամբն իւրեանց ծածկէին զմերկութիւն Արարչին, զի մի՛ տեսցէ ակն անարժանիցն։*

ԺԸ. 1 *Եւ զայս խորհուրդ յառաջագոյն տպաւորեցին որդիքն Նոյի՝ Սէմ եւ Յաբեթ, զի յորժամ արբեալ գինով մերկացեալ էր Նոյ՝ հայրն իւրեանց, եդին զհանդերձս ի վերայ թիկանցն |141բ| իւրեանց, եւ յետս ընդդէմ գնալով ծածկէին զհաւրն զմերկութիւն ինքեանք ոչ հայէին եւ յայլոց տեսլենէ ծածկէին (տե՛ս Ծն. Թ. 20-23)։* 2 *Այսպէս արեգակն եւ լուսինն՝ տեսին զՏէրն արբեալ սիրով մարդկան եւ մերկ տարածեալ ի խաչին, զխաւար ծածկոյթ արարին մերկութեան Տեառն իւրեանց։* 3 *Ասէ եւ զսոյն սքանչելի նահատակն Յոբ. «Ասէ արեգական եւ ո՛չ ծագէ եւ ընդդէմ աստեղաց կնքէ» (Յովբ, Թ. 7), եւ զտիւ եւ զգիշեր փոխարկէ։* 4 *Եւ զի՞նչ կնքեալն իցէ, զի կնքեաց ընդդէմ լուսաւորացդ, եթէ չեն աստուածք, որպէս եւ ասէ ոմն ի հարցն, եթէ ի թագաւորել ճշմարտութեանն՝ ամենայն կարծեցեալ զաւրութիւնք խափանեսցին։* 5 *Եւ երկրորդ կնքեաց ընդդէմ աւդոյդ՝ եթէ այլ ո՛չ եւս տիրէ իշխանն աւդոյ սատանայ ի վերայ հոգւոց մարդկան յայնմ հետէ, որ ասաց Տէրն. «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղկ. ԻԳ. 46)։* 6 *Եւ երրորդ, որպէս տերեւ յորթոյ թաւթափեալ, կամելով աստեղացն ի սոսկման ահագին աւուրն՝ կնքեալ հաստատեաց զնոսա ի կայանս իւրեանց, զոր նշանակաբար իմանամք աստեղք զհրեշտակսն, որք յանգանելն սատանայի իբրեւ զփայլակն՝ մնացին յայնմ դասուէ յերկինս եւ ի կարծիս էին անգանելոյ, կնքեաց ընդդէմ նոցա եւ հաստատեաց եւ եբարձ զկարծիսն զայն՝ չարչարանաւք խաչին, որով ապրեցոյց զմարդիկ։*

ԺԹ. 1 *«Եւ ցուրտ եւ պարզ եղիցի աւր մի» (հմմտ. Զfr. ԺԴ. 6-7)։* 2 *Եւ զի ցուրտ էր աւրն այն, ի Պետրոսէ իմանամք՝ այնչափ մերձ գնացեալ առ խարոյկին, մինչ զի ի լուսոյն երեւմանէ ծանուցեալ լինէր տեսողացն, որում եւ ասէին, եթէ՝ «Դու ի նոցանէ ես» (Մտթ. ԻՁ. 73), որ նշանակէր զսառն |142ա| կռապաշտութեան եւ զանհաւատութեան, որ ունէր զերեսս երկրի։* 3 *Որպէս եւ մարգարէն Դաւիթ ասէ. «Արկանէ զսառն որպէս պատառս եւ դնէ զձիւն որպէս մէգ» (տե՛ս Սղմս. ՃԽԷ. 16-17), որ եւ գալստեամբ Բանին Աստուծոյ հալեցան սառն կռապաշտութեան եւ բուսան ծաղիկք յոգնազան առաքինութեան։* 4 *«Ոչ տի՛ւ իցէ [եւ] ո՛չ գիշեր» (Զfr. ԺԴ. 7). Տիւ ո՛չ էր, զի խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի, եւ ո՛չ էր գիշեր, զի*

արեգակն ո՛չ էր խոնարհեալ ի ներքնում կիսագնդին։ 5 *«Եւ ընդ երեկս եղիցի լոյս»* (**Զfr. ԺԴ. 7**) *զի յե՛տ երից ժամու խաւարմանն ի վեցերորդ ժամէն մինչեւ յինն։* 6 *Դարձեալ ընդ երեկս եղեւ լոյս, զի անհաւատիցն խաւար եղեւ գալուստ իմանալի արեգականն. եւ ընդ երեկս լոյս, զի ի լրման աւուրց անըստուեր լոյս ծագեաց հեթանոսաց։* 7 *Եւ ա՛յս է գրեալն՝ «աւր խաւարի եւ մթգի»* (**Յվլ. Բ. 2**), *որոց վա՛յ տայ մարգարէն։* 8 *Վա՛յ, որ ցանկան աւուրն տեառն, զի նա խաւար է եւ ո՛չ լոյս։* 9 *Բայց զի նորանշա՛ն էր աւրն այն յամենայն աւուրս ժամանակաց, վասն որոյ ո՛չ տիւ էր՝ ըստ բնութեան այլոց աւուրց եւ ոչ գիշեր՝ ըստ նմանութեան գիշերաց, եւ ոչ խաւարն այն ըստ բնական խաւարման լուսաւորացդ, զի խաւարումն լինի արեգական ի ծնունդս լուսնի, յորժամ ի միում կենդանակերպի եւ մի՛ աստիճան գան ի միասին, եւ անդ հանդիպի վիշապն կոչեցեալ՝ արգել եւ ծածկոյթ լինի արեգականն։* 10 *Իսկ խաւարումն լուսնի լինի, յորժամ հանդէպ եւ կշիռ արեգականն լինի ի լրմանն իւրում, վեց կենդանակերպաւք հեռի՛ ի մի[մ]եանց գոլով, անդ հանդիպելով վիշապին՝ գլխոյ եւ կտտան* |142բ| *ոմն յաստիճան արեգականն, եւ ոմն լուսնին, զի հանդէպ միմեանց լինին։* 11 *Իսկ այս նոր իմն յեղանակ եւ աւտար ի բնական պատահմանէ, զի լուսինն ի լրման՝ էր հեռի յարեգակնէն ՃՄ. եւ Զ. (180) աստիճանաւք եւ ի մտանել արեգականն յարեւմուտս՝ պարտ էր լուսնոյն յերեկորեայ յարեւելս ելանել։* 12 *Իսկ յայսմ ուրբաթի՝ ի վեց ժամ աւուրն, ի միասին եկին*[1] *եւ երկոքին իսկ խաւարեցան՝ զհինգետասան աւուրցն ճանապարհ, զվեց կենդանակերպսն, որ են ՃՄ. եւ Զ.(180) աստիճանք ի միում քթթել ական ընթացեալ։*

Ի. 1 *«Յաւուր յայնմիկ բխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ»* (**Զfr. ԺԴ. 8**), *Զաքարիա ասէ։* 2 *Եւ Յովել ասէ. «Եղիցի Երուսաղէմ սուրբ, եւ այլազգիք ո՛չ եւս անցցեն ընդ նա։* 3 *Եւ եղիցի յաւուր յայնմիկ բխեսցեն լերինք զքաղցրութիւն, եւ բլուրք յորդեսցեն զկաթն, եւ ամենայն աղբեւրք Յուդա բխեսցեն ջուրք։* 4 *Եւ աղբեւր ի տանէ Տեառն ելցէ եւ արբուսցէ զձորն վիճակաց»* (**տե՛ս Յովել. Գ. 18-19**)։ 5 *Եղիցի Երուսաղէմ սուրբ ի ժամանակ խաչելութեանն Տեառն, յորում սրբեցան տիեզերք, եւ այլ ոչ եւս տիրեն աղտեղութիւն մեղաց ըստ Պաւղոսի. «Մեղք ձեզ ոչ եւս տիրեսցեն»* (**տե՛ս Հռմ. Զ. 14**) *լերինք եւ բլուրք՝ առաքեալքն, զաւետարանին քաղցր վարդապետութիւն եւ տկարացն՝ կաթն։* 6 *Աղբեւր ի տանէ Տեառն ելցէ, արիւն, որ ի կողէ կենարարին եւ շինեսցէ զեկեղեցի զքարինս ազգաց հեթանոսաց, զի ի կողէն հողածին Ադամայ՝ կին մա՛յր մարմնոց, եւ ի կողէ*

[1] *Ճ իսկ եկին*

երկնաւորն Ադամայ եկեղեցի մայր հոգւոց, որպէս ասէ մարգարէս «Յաւուր յ[այնմիկ] բխե[սցէ] ջո[ւր] կենդ[անի] յԵրուսաղէմ»։ 7 |143ա| *Զի ի մեռեալ մարմնոյ ջուր ելանէ, իսկ ի կենդանւոյ՝ արիւն։* 8 *Իսկ Տէրն, զի թէպէտ մեռաւ ի վերայ խաչին ըստ մարմնոյ, յորում ջուրն վկայէր, այլ կենդանի էր անմահ աստուածութեամբն, զոր եւ արիւնն ցուցանէր. այլեւ ջուրն կենդանի էր եւ կենդանարար, զի ի մահն նորա մկրտելով կենդանանամք ի մեղացն մահուանէ։* 9 *Զոր եւ սուրբն Գրիգոր Աստուածաբան ասէ. «Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուսաւորեալ»։* 10 *Արիւն եւ ջուր ի կողիցն բխեալ մինն իբրեւ զմարդոյ, եւ միւսն առաւել քան զմարդոյ, զի եւ ջուր ի կողից նորայ՝ իբրեւ զմարդոյ, զի ի մեռեալ մարմնոյ ջուր ելանէ, եւ միւսն առաւել՝ քան զմարմնոյ, զի եւ ի նմանէ արիւն կենդանական, որ առաւել էր, քան զմարդոյ, այլ աստուածութեամբն միշտ կենդանւոյ. «Կէս նորայ ի ծովն, որ առաջին եւ կէս նորա ի ծովն երկրորդ»* (**հմմտ. Զfr. ԺԴ. 4**)։ 11 *Զայս խորհուրդ հրաշալի եւ մարգարէն Եզեկիէլ տեսանէր, որ եւ ասէ. «Ահա ջուր հոսէր ի ներքոյ վարագուրաց տաճարին. եւ հոսէր ի հիւսիսոյ ի սեղանն կոյս»* (**տե՛ս Եզկ. ԽԷ. 1**)։ 12 *Եւ վարագոյր եւ տաճար է մարմինն Քրիստոսի։* 13 *Ըստ Պաւղոսի, եթէ՝ «Վարագուրաւ մարմնոյ իւրոյ»* (**հմմտ. Եբր. Ժ. 20**)։ 14 *Եւ ինքն Տէրն. «Քակեցէք զտաճարս զայս, եւ ես զերիս աւուրս կանգնեցից զնա»* (**Յվհ. Բ. 19**)։

ԻԱ. 1 *Եւ «Ասէր վասն տաճարի մարմնոյ իւրոյ»*[1] (**Յվհ. Բ. 21**)։ 2 *Յայսմ վարագուրէ ել ջուր եւ արիւն, որով տուաւ մեզ շնորհ պարգեւաց հոգւոյն՝ մկրտութեամբ աւազանին։* 3 *Եւ զի ընդ հիւսիս գնայր ի սեղան ողջակիզացն ջուրն՝ նշանակ մարդկային բնութեանս, որք սառնացեալ էին մեղաւք յաստուածային սիրոյն ջերմութենէ* |143բ|, *յորում արեգակն արդարութեան Քրիստոս՝ զջուր վարագուրի մարմնոյ իւրոյ եհեղ ի մեզ եւ ջեռոյց ի սէրն աստուածային։* 4 *Եւ զի ընդ աջմէ սեղանոյն իջանէր ջուրն, որ նշանակ խաչին, զի խաչիւն տուաւ շնորհ Հոգւոյն Սրբոյ ազգի մարդկան։* 5 *Եւ զի ջուրն ի Գալիլիէ ելանէր ընդ արեւելս, եւ ապա իջանէր յԱրաբիայ զի Քրիստոսի ի Գալիլեայ ծնեալ անդի ելանէր։* 6 *Եւ նախ արեւելից ծագեաց լոյս, ըստ մարգարէին, թէ «Արեւելք ի բարձանց լոյս տեսցեն» եւ իջանէր յԱրաբիայ՝ ի կողմ հարաւոյ յարեւմուտս, ըստ Դաւթի, թէ՝ «Հնդիկք ձեռնատու լիցին առ Աստուած»* (**տե՛ս Սղմս. ԿԷ. 32**), *եւ գալ մինչ ի ծովն, որ նշանա՛կ է աշխարհի, ըստ մարգարէիցն բանի՝ Դաւթի եւ Դանիէլի։* 7 *Զի որպէս ծով ժանդահոտ եւ անընթելի, եւ ազգ մարդկան*

[1] *ձ՛> եւ ինքն... մարմնոյ, յիւրոյ*

բնակեալք յաշխարհի՝ ժանդացեալ մեղաւք։ 8 *Իսկ քաղցր ջրոյն՝ բխեալ ի կենարարին կողէ ի խորհուրդ մկրտութեանն՝ բժշկեցան միտք մարդկան։* 9 *Եւ խորհուրդ յորում եհեղ սատանայ զթիւնս դառնութեան մեղացն, պղտորեաց զխոհականութիւն մտաց մարդկային բնութեանս։* 10 *Եւ զհոգին, զոր ի ստեղծմանն ընկալան, եւ վասն մարմին լինելոյն՝ ի բաց թքին եւ հաւասարեցին անասնոց։* 11 *Դարձեալ զնոյն հոգի մկրտութեամբ աւազանին ընկալան եւ կենդանացան։* 12 *Եւ ծառքն, որ յափն գետոյն բուսեալք, մի՛ հնասցին եւ պտուղն մի պակասեսցէ, զի որք տնկակիցք եղաք մահուն Քրիստոսի աւազանաւն, պտուղ հոգւոյն ի նոցանէ մի պակասեսցէ, եւ մեղաւք մի՛ հնասցին։*

ԻԲ. 1 *Արդ, հաւասար այսմ եւ մարգարէիս Զաքարիայ տեսանի բան, որ ասէ.* |144ա| *«Կէս նորա ի ծովն, որ առաջին, եւ կէս նորա ի ծովն ե[րկրորդ]»։* 2 *Այսինքն՝ յարեւելս եւ յարեւմուտս, ուր ընթացաւ խորհուրդ մահուն Քրիստոսի։* 3 *Եւ կամ նախ ի հրէից ժողովուրդն, ուստի եւ մարմին իսկ էառ, եւ ապա ի հեթանոսս, որպէս գրէ առաքեալ. «Զեզ նախ պա՛րտ էր քարոզել զբանն Աստուծոյ» (*Հմմտ. Բ. Տմթ. Դ. 2*)։* 4 *Իսկ որովհետեւ ոչ ընկալայք, այսուհետեւ դառնամք ի հեթանոսս։* 5 *Եւ դարձեալ, ջուրն կենդանի, որ բխեաց յԵրուսաղէմ ի կողէն Քրիստոսի, «կէս նորա ի ծովն առաջին», այսինքն ջուրն յաւազան մկրտութեան, եւ «կէս նորա ի ծովն երկրորդ»՝ ի սեղանն սուրբ, ուր բաշխի մարմին եւ արիւնն տէրունական, զի նախ մկրտիմք յաւազանին ջուր՝ ի խորհուրդ մահուանն Քրիստոսի, եւ ապա ճաշակեմք զարիւնն եւ կենդանանամք՝ ոչ տեսանել զմահն յաւիտենից։*

ԻԳ. 1 *Վասն որոյ՝ բխեաց ջուրն վասն փրկութեան եւ սրբութեան մեղաց մերոց, եւ արիւնն՝ վասն սրսկման հաւասարութեանն մերոյ, զոր սրսկեալ ի մեզ քահանայապետն մեր Քրիստոս եւ սրբեաց, զոր եւ աւրէնքն զսոյն խորհուրդ նշանակէին ի զենումն զուարակին, որ վասն մեղաց, զոր մատուցանէին զուարակ անարատ յանդոյ վասն մեղաց, ածելով ի դուռն խորանին, վկայութեան դնելով ծերոցն զձեռն*[1] *ի գլխոյ զուարակին, եւ սպանանել զուարակն առաջի Տեառն, որոյ ճշմարտութիւն խորհրդոյն այսաւր բացափայլեալ ցուցաւ։* 2 *Իբրեւ զուարակ ի զենումն ածաւ անարատն ամենայնիւ Քրիստոս, եւ առ ի մեղաց նվիրէ անբիծն ի մարմնի, եւ առ ի դուռն խորանին վկայութեան։* 3 *Այսինքն՝ ո՛չ հրաժար|144բ|եաց ի չարչարանաց՝ յաղագս եկեղեցւոյ իւրոյ, որ եւ ասէր ի վերայ նոցա։* 4 *«Ես սուրբ առնեմ զանձն իմ» (*Յվհ. ԺԷ. 19*). այսինքն է՛*

[1] *ձ՛> զձեռն*

մատուցանեմ։ 5 *Եւ ծերոցն դնել զձեռն ի վերայ զի որ յԱդամայ սկսեալ հնացեալ մեղաւք մարդկան ազգ, զգործս իւրեանց զամենայն, որով մահու եղեն պարտական, եդին ի վերայ Քրիստոսի, զի ձեռն գործոյ է նշանակ*[1]*։* 6 *Իսկ առաջի Տեառն զենեալ, այսինքն՝ առաջի Աստուծոյ Հաւր տեսանելոյ, եւ որպէս թէ ակնարկելով, թէ պա՛րտ է եւ պատշաճ վասն մեր մեռանել Որդոյ, վասն փրկութեան աշխարհի։* 7 *Ըստ Եսայեայ. «Նա՛ բառնայ զմեղս մեր եւ վասն մեր չարչարի»* (**տե՛ս Եսայ. ԾԳ. 4**)*։* 8 *«Իսկ եւթն անգամ քահանային մատամբն սրսկել յարենէն ի վերայ վարագուրին սրբոյ»* (**տե՛ս Ղեւտ. Դ. 6**)*։* 9 *Եւ զեւթն իմանամք ժամանակաց չափ, եւ զգայարանաց թիւ, եւ կատարելութեան նշանակ։* 10 *Զի զեւթ աւուրքք շրջագայութեամբ կենցաղաւարեալ Քրիստոս յեւթ դար կենցաղոյս եւ եւթ զգայութեամբ ախտացեալք, կատարեալապէս քաւեաց արեամբն իւրով Քրիստոս, եւ միշտ քաւեսցէ յիշատակաւ մահուն իւրոյ եւ արեան։*

ԻԴ. 1 *Վասն որոյ ասէ. «Զամառն եւ զգարուն նոյնպէս եղիցի»* (**Զfr. ԺԴ. 8**) *զոր Եզեկիէլ ասաց. «Ծառատունկքն, որ յափն գետոյն, մի հնասցին, եւ պտուղ նոցա մի պակասեսցին»* (**տե՛ս Եզեկ, Խէ. 12**)*։* 2 *Զաքարիայ ասէ. «Զամառն եւ զգարուն նոյնպէս եղիցի», զի որք արեամբն Քրիստոսի ի հնութենէ մեղաց նորոգեցան, եւ առաքինութեանցն մասամբք ծաղկեցան եւ զպտուղ հոգւոյն յանձինս պտղաբերեցին, իբրեւ յաշնանային աւուրս մի՛ ցամաքեալ տերեւաթափ լիցին։* 3 *Եւ իբրեւ ի ձմերայնի՝ մի խամրացեալ անպտղութեամբ դատարկեսցին*|145ա| *այլ իբրեւ զգարուն ծաղկափթիթ եւ իբրեւ զամառն պտղալից նոյնպէս մնասցեն, զի այլ ո՛չ եւս տիրէ սառն կռապաշտութեան, ծագելով մեզ արեգակն արդարութեան, եւ զհոգեւորական առնելով գարուն։* 4 *Վասն որոյ ասէ. «Եւ եղիցի Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի»* (**Զfr. ԺԴ. 9**)*։*

Իե. 1 *Երկու են դէմք, որոց ի մի յարմարութիւն գալով թագաւորութիւնն հաստատուն եւ սեփհական լինիցի. յայնմանէ որ թագաւորութիւնն ունիցի եւ որք*[2] *ընդ թագաւորութեանն հնազանդութեամբ կացցեն։* 2 *Արդ, որ ըստ արարչութեանն եւ ըստ աստուածութեանն էր թագաւորութիւնն Քրիստոսի՝ թագաւորէր ընդ Հաւր իւրում եւ Հոգւոյ։* 3 *Բայց այս Աստուծո՛յ միայն գիտելի, իսկ մարդկան ո՛չ էր յայտնի, եւ ո՛չ էին հնազանդեալք ընդ թագաւորութեամբ նորա այլ մինչեւ ցայն վայր տիրեալ էր իշխանութիւն չարին ի վերայ երկրի, եւ իբր ձեռագրաւ ունէր զմարդկութիւնս ընդ ձեռամբ իւրոյ իշխանութեանն։* 4 *Որպէս եւ ի փորձութեանն*

---

[1] *Ձ՝ օրինակ] նշանակ*
[2] *Ձ՝ արդ] որք*

*ասէր ի լերինն. «ինձ տուեալ է, եւ ում կամիմ, տամ զսա» (*Ղկ. Դ. 6*):* 5 *Եւ զի՞նչ էր ձեռագիրն, որով տիրէր մեզ իշխանութիւն չարին, այլ պատուէր Արարչին, զոր եդ ի վերայ նախահաւրն, թէ՝ «Յորում աւուր ուտիցես՝ մահու մեռցիս» (*տե՛ս Ծն. Բ. 17*):* 6 *Եւ զի եկեր, վասն այնորիկ թագաւորեաց մահ յԱդամայ մինչ ի Մովսէս, զդատակնիք զվճռին ի ձեռին ունելով զաստուածային հրամանն:* 7 *Իսկ ի հրէիցն ձեռագիր զայն բան, զի ասացին Մովսէսի, թէ՝ «Զամենայն զոր ինչ խաւսեսցի Տէր Աստուած մեր՝ լուիցուք եւ արասցուք» (*տե՛ս Ելք ԺԹ. 8*), եւ ոչ արարին:* 8 *Որպէս գրեաց Պաւղոս, թէ՝ «Յանցանել ըստ աւրէնսն՝ զԱստուած անարգէք» (*Հռմ. Բ. 23*):* 9 *Վասն որոյ դատավճիռ տուաւ նոցա, |145բ| թէ՝ «անձն, որ մեղիցէ նոյն եւ մեռցի» (*հմմտ. Ղեւտ. Ե. 17*):* 10 *Եւ միշտ մեղանչէին եւ հանապազ մահու պարտական գտանէին:*

Իզ. 1 *Եւ երրորդ, զի հնազանդութիւն, զոր Աստուծոյ պարտ էին, իբր արարածք Արարչի, զայն թշնամոյն եւ աւտարին ընդ ձեռամբ արկեալ, նմին ընդ հնազանդութեամբ կային:* 2 *Իսկ հզաւրագոյն յամենայնի թագաւորն արարածոց Քրիստոս եկեալ, զկարծեցեալ հզաւրն կապեաց, եւ զդատակնիք յանցանացն եւ մահու ի ձեռաց նորա հանեալ, եւ զգիր պարտաւորութեանն մերոյ պատառեալ, եւ ըստ իւրում բանի՝ զտուն նորա յաւարի առեալ, եւ զսպառազինութիւնն, յոր յուսացեալն էր հանէ ի նմանէ:* 3 *Որպէս գրէ առ կողոսացիսն. «Մերկեաց զիշխանութիւնսն եւ զպետութիւսն սատանայի եւ դիւացն, յայտ յանդիման խայտառակեալ, նշանակեաց զնոսա յանձին իւրում (*տե՛ս Կղս. Բ. 15*):* 4 *Վասն որոյ եւ յետ յարութեանն ասէր. «Տուա՛ւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (*Մտթ. ԻԸ. 18*):* 5 *Այսինքն՝ զոր ի սկզբանէ ունէի սեփհական, ըստ իմոյ արարչական տէրութեանն, այժմ տուաւ ի Հաւրէ, վասն անպարտական մահուն իմոյ, իբր գնովք ստացեալ ժառանկութիւն:* 6 *Ըստ Պաւղոսի. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից աւրինացն» (*Գղտ. Գ. 13*), եւ ի մարդկանէ կամաւոր հնազանդութեամբ պատիւ եւ պաշտաւն առ նա դարձաւ:* 7 *Եւ «Նմա կրկնի ամենայն ծունր եւ երկրպագութիւն, եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր Յիսուս Քրիստոս է ի փառս Աստուծոյ Հաւր (*տե՛ս Փլպ. Բ. 10-11*):*

Իէ. 1 *Եւ բարձաւ իշխանութիւն չարին եւ տէրութիւն մեղացն, եւ թագաւորութիւն մահու:* 2 *Վասն որոյ եւ մարգարէն Դաւիթ հայցէր. «Մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք» (*Սղմս. ՃԺԸ. 133*):* 3 *Եւ առաքեալ ի կատար|146ա|ումն ժամանեալ ասէ. «Այսուհետեւ մեղք ձեզ*[1] *ո՛չ եւս տիրեն, քան-*

[1] *Ճ՛ ձեր] ձեզ*

զի ոչ էք ընդ աւրինաւքն, այլ ընդ շնորհաւք» (**տե՛ս Հռմ. Զ. 14**)։ 4 *Եւ Եսայիաս ողբայր. «Զթագաւորեալն մահու ի վերայ բնութեանս, զաւրացաւ մահ եւ եկուլ»* (**տե՛ս Եսյ. Իե. 8**)։ 5 *Եւ դարձեալ նկատէ մարգարէական հոգւովն զազատիլն ի մահուանէ, եւ ասէ դարձեալ. «Եհատ Աստուած զամենայն արտասուր յամենայն երեսաց»* (**Յյտն. Է. 17**)։ 6 *Եւ Ովսեայ մարգարէանայ, զոր հեթանոսք ոտնահար եղեալ, այպանելով ասեն. «Ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո, ո՞ւր են դժոխք խայթոցն քո»* (**տե՛ս Ովս. ԺԳ. 14**), *զի զոր մեղաւքն խայթէիր՝ յանյագ որովայն քո ի դժոխս ընբռնէիր*[1], *եւ այժմ խաչիւն Քրիստոսի անկաւ քո թագաւորութիւնդ։* 7 *Զոր եւ սուրբ հայրն ձայնակցեալ ասէ. «Խաչիւն կործանեցար, կենարարա՛ւն կորեար, ի բարձունս խայտառակեա՛լ ես»։* 8 *Զայս սքանչելի խորհուրդ տեսեալ մարգարէն Զաքարիաս ասէ. «Եղիցի Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի»* (**Զքr. ԺԴ. 9**)։ 9 *Զոր եւ յաղաւթսն հայցեմք միշտ՝ «Եկեսցէ արքայութիւն քո»* (**Մտթ. Զ. 10**)։

ԻԸ. 1 *Զայսյեղանակ թագաւորութեան տեսեալ իմաստնոյն, ասէ յերգսն. «Ելէք դստերք Սիոնի՝ հայեցարուք յարքայն Սողոմոն ի պսակն, որով պսակեաց զնա մայր իւր՝ յաւուր փեսայութեան իւրոյ եւ յաւուր ուրախութեան սրտի իւրոյ»* (**Երգ. Գ. 11**)։ 2 *Յորդորէ զեկեղեցիս ամենայն ազգաց, որ դստերք եղեն*[2] *վերնոյն Սիոնի, թէ ելէ՛ք ի խաւարաբնակ արգելարանէ մարմնոյդ՝ իմանալի հայեցողութեամբ մտաց, եւ հայեցարուք յարքայն Սողոմոն, այսինքն՝ ի թագաւորն խաղաղութեան Քրիստոս ի պսակն, որով պսակեաց զնա մայր իւր, զա՛յն սքանչելի անուն, որ արար զ|146բ|հարսանիս զայս որդւոյ իւրոյ։* 3 *Տէրն յաւետարանին Հայր ասէ, եւ Յոհաննէս սէր անուանէ եւ իմաստունն մայր կոչէ։* 4 *Զի որ յարգանդէ «յառաջ, քան զԱրաւսեակ ծնաւ»* (**Սղմ. ՃԹ. 3**) *զորդի անախտաբար, ո՛չ է տարադէպ զերկոսին ծնաւղական անուանսն ի վերայ միոյ եւ նորին առնուլ, որ այսաւր անճառելի սիրով պսակեաց զորդի եւ խաչաչարչար մահուամբ՝ յաւուր փեսայութեան որդւոյ իւրոյ յորում սիրով հարսինն՝ իբր անապակ գինով արբեալ, ուրախ էր սրտիւ։*

ԻԹ. 1 *Եւ զի՞ նա ինքն է արքայն խաղաղութեան։* 2 *Պաւղոս գոչէ առ կողոսացիսն. «Խաղաղութիւն մեր Քրիստոս է, որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ»* (**տե՛ս Կղս. Ա. 20**)։ 3 *Վասն զի զպատերազմն շիջոյց, եւ զթշնամիսն ի հաշտութիւն ած, եւ այսոցիկ միջնորդ լինելով հինգ իրս զարմանալիս գործեաց։* 4 *Առաջին, զի թշնամութիւնն ի մէնջ*

---

[1] *ձ՛ > յանյագ... ըմբռնէիր*
[2] *ձ՛ ի] եղեն*

էր, եւ զհաշտութիւնն ինքն կամեցա՛ւ եւ արա՛ր։ **5** *Եւ երկրորդ. զի անձամբ ուղղեաց եւ ո՛չ այլոյ ումէք միջնորդութեամբ։* **6** *Եւ երրորդ. ո՛չ անձամբ միայն, այլեւ ի մահ ետ զանձն վասն մահու պարտականացս։* **7** *Չորրորդ. զի ո՛չ մահ հասարակաց, այլ խաչի*[1] *եւ չարչարանաց եւ նախատանաց մահ։* **8** *Հինգերորդ. ո՝չ ըստ այլոց խաչեցելոցն չափու չարչարեալ, այլ արեամբ իսկ, որ ի խոցուածոյ գեղարդեաննն հարմամբ զինուորին*[2] *բխեաց։* **9** *Եւ այսպէս՝ ոչ բանիւ միայն արարեալ զհաշտութիւնն, այլեւ զանձն մատնեաց եւ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկիր. Վասն զի քակ|147ա|եալ էր երկինք յերկրէ եւ մարտ պատերազմի ունէին հրեշտակք ընդ մարդկան, զի տեսանէին թշնամանեալ զՏէրն իւրեանց։*

Լ. **1** *Եւ զի՞նչ պատճառ թշնամութեան հրեշտակաց եւ մարդկան։* **2** *Զի մարդիկ միշտ մեղանչելով եւ զանդամս մարմնոյ աղտեղութեամբ պղծելով, թշնամիք լինէին Աստուծոյ, եւ հրեշտակք հանապազ պատիժս եւ պատուհաս ըստ յանցանացն ածելով, ո՛չ շիջանէր թշնամութիւնն։* **3** *Այլ Քրիստոս արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ եւ եղեւ հաշտութիւն, իջանելով երկնաւորացն յերկիր, հանելով եւ զերկրաւորսս յերկինս եւ զաւտարացեալսն ած յընտանութիւն։* **4** *Վասն որոյ որ յառաջ սակաւք էին հրեշտակք յերկրի ըստ ազգաց, ըստ այնմ կացոյց սահմանս հեթանոսաց՝ ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ։* **5** *Իսկ այժմ ո՛չ թուոյ ազգաց, այլ ըստ հաւատացելոցն թուոյ, ըստ այնմ. «Մի զոք արհամարհիցէք, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հաւր իմոյ, որ յերկինս» (տե՛ս* **Մտթ. ԺԸ. 10***)։* **6** *Զայս խաղաղութեան եւ հաշտութեան յեղանակ յայտնագոյնսն առ եփեսացիսն գրելով Պաւղոս ասէ. «Զի միջնորմն ցանկոյն քակեաց» (***Եփս. Բ. 14***). զմեղքն զհասարակաց բնութեանս՝ զչարութիւն այսպէս անուանէ. կրէր թշնամութիւն ի մէջ մեր եւ Աստուծոյ։* **7** *Եւ զի այն է միջնորմն, ասէ մարգարէին. «Մեղքն ձեր որոշեն ընդ իս եւ ընդ ձեզ» (տե՛ս* **Եսայ. ԾԹ. 2***)։* **8** *Եւ զի նոյն է թշնամութիւն, ասէ, «Խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած» (***Հռմ. Ը. 7***)։* **9** *Զայս թշնամութիւն, ասէ Պաւղոս, սպան «զթշնամութիւն ի մարմնի իւրում» (***Եփս. Բ. 14***), եւ թէ՝ հաշտեցոյց |147բ|, զմեզ անդամաւք մարմնոյ իւրոյ» (տե՛ս* **Կող. Ա. 22***)։*

ԼԱ. **1** *Եւ որպէ՞ս իմանամք զսպանումն թշնամութեանն, զմեղսն, որ տիրեալ էր յանդամս մարմնոց մերոց։* **2** *Սպա՛ն զայն Քրիստոս յիւրում մարմնի ո՛չ մեղանչելովն, այլեւ ի կատարելն զամենայն աւրէնս արդա-*

---

[1] *Ձ՝ այլ մահ խաչի*
[2] *Ձ՝ որ ի զինուորին*

րութեան ի մարմնի։ 3 *Անգործ մնաց մեղք ի մարմինն Քրիստոսի իբր զմեռեալ։* 4 *Եւ նոյն անդամաւք մարմնոյ, յորում եւ զմեղս եսպան, նովիմք հաշտեցոյց զմեզ ընդ Աստուծոյ, որպէսզի զվրէժն, զոր պարտ էին մարդիկ ըստ չափու յանցանացն, եւ ըստ թուոյ անդամոցն եւ զգայարանացն, զայն յանձն իւր ընկալաւ Քրիստոս։* 5 *Դատապարտեցաւ ի քահանայիցն յԱննայէ եւ ի Կայիափայ, փոխանակ դատապարտութեան մերոյ յանցանացն։* 6 *Ածաւ յատեան առաջի Պիղատոսի՝ թագատրն արարածոց ընդ ամենայն բնութեանս, որք պարտական էաք ատենի եւ պատասխանոյ։* 7 *Ընդ արձակման հեշտասէր ցանկութեան նախահաւրն, ցանկանալով ցանկացաւ Տէրն այսր աւուր չարչարանաց։* 8 *Զծունկս գթուցեալ ի ծառն ընթացմամբ, բժշկեաց ծնդրադրութեամբ հայցմամբ աղաւթիցն։* 9 *Ընդ ձգման ձեռինն ի հրաժարացուցեալ պտուղն, աշխարհաստեղծ ձեռինն ի հրաժարացուցեալ պտուղն, աշխարհաստեղծ ձեռինն ի խաչ բեւեռեալ, ընդ քաղցր պտղոյն ճաշակման բերանոյ զդառնութիւն լեղւոյն եւ զկիրս քացախին ընկալաւ իւրով բերանով։* 10 *Ընդ անպատկառ դիմաւք պատասխանիս Արարչին, թո՛ւք ընկալաւ ի բերանոյ պղծոց՝ ի դէմս աստուածային երեսացն։* 11 *Ընդ զգայութիւն մերկութեանն, որ եղեւ նախահաւրն, մերկացեալ Արարի|148ա|չն ի խաչ տարածէր։* 12 *Ընդ թզենոյն տերեւոյ ծածկութիւն ամաւթոյն, խաւարազգեաց աւդով ծածկէր մերկութիւն Արարչին։*

ԼԲ. 1 *Ընդ անզղջական մնալոյն ի խոստովանութիւն յանցանացն, Տէրն ի դէմս նորա գոչէր. «Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»* (**Մտթ. Իէ. 46, Մրկ ԺԵ. 34**) *եւ հեռի եղէ ի փրկութենէ իմմէ, վասն բանից յանցանաց իմոց։* 2 *Եւ ոչ միայն, որ յայսմ աւուր զկիրս պատուհասի յանցանացն մեր կրեալ, այլեւ յամենայն աւուրս մարմնոյ իւրոյ ընդ ամենայն կիրս մարդկային անցեալ, բա՛ց ի մեղաց, հաշտեցոյց զմեզ անդամաւք մարմնոյ իւրոյ։* 3 *Եւ այսպէս, տարածմամբ ձեռինն ի խաչ, զգիր պարտաւորութեան մերոյ պատառեաց եւ զարարչական բանիւ ստացեալքս վերստին ստացաւ չարչարանաւք Իւրոյ մարմնոյն եւ մեծագին արեամբն Իւրով։* 4 *Եւ զդուռն դրախտին, որ փակեցաւ ի ձեռն Ադամայ արդարոյ, որ պարտաւորեցաւ, եբաց ի ձեռն աւազակին պարտաւորեցելոյ, որ արդարացաւ։* 5 *Եւ եղեւ Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի ըստ մարմնոյ, որ միշտ թագաւորէր աստուածութեամբն, զի իշխանութիւն չարին եւ անուանք կռոցն բարձան յերկրէ։* 6 *Եւ պատկերին Հաւր, որ զկերպարանս ծառայի էառ, երկիր պագանէին ամենայն ազգք։* 7 *Վասն որոյ լուիցուք ընդոստուցիչ բանի իմաստնոյն, եւ թէ զառաջին ստեղծումն, որ աստուածային բանիւն, եւ զարարչական սիրոյն խնամսն մոռասցի ոք։* 8 *Հայեցարուք ի*

խաղաղութիւն մերոյ Թագաւորն Քրիստոս, եւ ի պսակն խաչի եւ չարչարանաց մահուն, որով Թագաւորեաց ի մեզ, եւ մի՛ մոռասցուք զերախտիս եւ |148բ| զսէր Արարչին։ 9 *Մի՛ զմեռեալ Թշնամութիւնն ի մարմինն Քրիստոսի զմեղսն դարձեալ վերստին կենդանացուսցուք յանդամս մարմնոց մերոց, եւ զմիջնորմն ցանկոյն, զոր քակեաց զմեղացն որոշող պարիսպ, մի՛ խտրոց ի մէջ արկցուք եւ յԱրարչին բարեաց զմեզ*[1] *ի բաց զատուսցուք, այլ առցուք զխաչ չարչարանաց մահուն Քրիստոսի եւ գնասցուք զհետ նորա, զի վասն այնորիկ յերկնից յերկիր խոնարհեցաւ, զի զմեզ յերկինս առ ինքն հանցէ, անձամբ եկն ի խնդիր մոլորելոցս եւ հրաւիրեաց ի տունն մեր հայրենի, զի ընդ հետս շաւղաց նորա գնալով, վերստին յառաջին փառսն ելանիցեմք։* 10 *Ոչ արար մեղս ի մարմնի, զի մեք զմարմինս մեր մի՛ շաղախեսցուք մեղաւք։* 11 *Ոչ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել, եւ տալ զանձն փրկանս՝ փոխանակ բազմաց, զի մեք անձամբ յաւգուտ ընկերաց եւ այլոց բազմաց փութասցուք։* 12 *Անտուն շրջեցաւ յաշխարհի եւ ապա բարձրացաւ ի խորանսն անճառելի, եւ գործով եւ բանիւ ուսոյց մեզ Թողուլ զտունս եւ զերկրաւոր ցանկալիս, զի ընդ նմա ի յերկնաւոր բարիսն վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս։*

[1] *ձ՛ > խտրոց... զմեզ*

ԺԲ.

|148բ| ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆՆԷՍ] ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑԻՈՅ ՅՈՐԴՈՐԱԿ, ԱՍԱՑՈՒԱԾ Ի ԵԿԵՂԵՑԻՈՅ, Ի ԽՆԴՐՈՅ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՒՌԻԿՈՍՑԻՈՅ

Երկը համառոտ, սակայն գեղարվեստական մեծ արժեք ունեցող ստեղծագործություն՝ նվիրված եկեղեցու պանծացմանը: Վերնագիրը եւ բովանդակությունը հուշում են, որ այն գրվել է Երուսաղեմում՝ Ստեփանոս Կուռիկոսցի վարդապետի խնդրանքով: Պետք է ենթադրել, որ այս վարդապետի հետ Հովհաննես Երզնկացին բարեկամական ջերմ հարաբերություններ է ունեցել, քանզի ոչ միայն նույն վարդապետի հորդորով նա գրել է նաեւ մեկ այլ ընդարձակ ուսումնասիրություն, այլեւ Երզնկայից կիլիկյան հայ արքայազներին գրած իր նամակում հիշատակում է նույն Ստեփանոս վարդապետին, որը իբրեւ նվիրակ ուղեւորվել էր Հայաստան, այդ թվում նաեւ Երզնկա, եւ բարենպաստ տեղեկություններ էր հաղորդել կիլիկյան իշխանավորների մասին[1]:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 148բ-50ա) եւ 2854 (Ճ. 133բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Բայց զի՞նչ քեզ ընծայս արժանաւոր մեծի եւ անզուգական բարեաց առիթ մեզ եւ պարգեւատու եւ ամենունակ գանձ բարեացն*[2] *Աստուծոյ շտեմարան՝ տ|149ա|ո՛ւն եւ տեղի՛ եւ տաճա՛ր տենչալի, անտանելոյ բնութեանն չափաւոր բնակութիւն, խորան կառուցեալ յանշնչական արձանաց եւ գերազանց, քան զբանական կենդանութեան հրաշագործաւղ, կառք մարգարէահրաշ եւ կենդանատո՛ւ, եւ իշխո՛ղ մահու ի կենաց հեռացելոյ: 2 Դո՛ւ խորան խորհրդական մեծ՝ հիմնացեալ յառաքելական դասուն, եւ մարգարէիցն նկարագրեալ տեղի եւ պատիւ քո խորհրդական ի բանաւորէ կառուցեալ մարդոյ. տիպ իմն զարմանաւոր եւ մեծ, քան զմարդ: 3 Դո՛ւ երկնի՛ բարձրութեանն գերամբարձ տաճար, կենդանի՛ եւ կենաց միջնորդ, եւ ճշմարիտ տեսակ կերպի երեւակիս բանականի: 4 Մարմին քո նիւթական քարանց շարայարելոց եւ շաւշափականաց, գոյակից հարազատ զգայականաց մարմնոց սրբոց եւ իմանալի քո խորհուրդ*[3] *հոգւոյս բանական ներգործաւղ անճառաբար զգայարանաւք: 5 Դո՛ւ լռութեամբ բանի բարբառով բարձր, եւ ի խաւսս պանծալի խաւսիս ո՛չ լե-*

---

[1] *Տե՛ս Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացու խրատական արձակը, էջ 205:*

[2] *Ճ գանձիցն] գանձ բարեացն*

[3] *Ճ խորհրդական*

զուաւ մարմնոյ, այլ հրեշտակացն անմահից բանիւ, ո՛չ յաւդական կոչես ձայնիւ եւ զպատգամս գործոցն Քրիստոսի համարէն ազանց հոչակեալ պատմես։ 6 Դու մայր հոգեւոր, խորհուրդ երկնաւոր, պայծառ եւ լուսաւոր, Տիրամարն անուամբ յորջորջեալ, Աստուածածնի կուսին պատկեր նկարեալ, մարգարէիցն բանիւ ներբողեալ իբրեւ զնա, յաշակերտաց վերնոյն սպասաւորեալ եւ նոցին ձայնիւ յանուն մարն լուսոյ կնքեալ եւ աւծեալ։ 7 Դու դո՛ւռն երկնի եւ քաղաք Աստուծոյ կենդանւոյ, մա՛յր կեն-դ|149բ|անեաց[1] եւ ազատիչ պարտեաց, համեմատութեամբ մարն կենաց՝ մաքրազարդեալ եւ բարգաւաճեալ նա՛ հոգւովն Աստուծոյ մաքրեալ, ծնաւ զԱստուած Բանն Միածին անխախտելի կուսութեամբ, ե՛ւ դո՛ւ նոյն հոգւով կենդանի ծնանիս Աստուած զորդիս Ադամա։ 8 Յարգանդ քո մաքուր սուրբ աւազանի, եւ միշտ ծնաւղ եւ նոյն անարատ եւ կոյս ծննդեամբ։

Բ. 1 Դու ծնաւղ նորահրաշ եւ զարմանաւոր, ոչ միայն ծնանիս, այլեւ կաթնասուն արարեալ զարգացուցանես, եւ գերագոյն գրգաւք գգուես, եւ «ի չափ կատարեալ հասակի» (**տե՛ս Եփս. Դ. 13**) իմաստից եւ գործոց յարմարես։ 2 Կաթն ստեանց քոց արիւնն Քրիստոսի, որով հաղորդեալ լինիմք երկնաւորին Հաւր Որդի, եղբարք Քրիստոսի՝ ժառանկք եւ ժառանգակիցք Աստուծոյ։ 3 Դո՛ւ բարձրելոյն Աստուծոյ տաճար, մարգարէական ձայնիւ ներբողեալ[2]՝ դրախտ կենդանի եւ բանաւոր տնկոցն տեղի։ 4 Այգի վայելուչ որթոյն ճշմարտի, ուրախարար բաժակին բաշխիչ, լեառն սուրբ եւ սիւն ամբեղէն, բարձրացուցիչ մեզ եւ լուսատու։ 5 Դո՛ւ մեզ բարեաց երկնաւոր բաշխաւղ, դո՛ւ աստուածեղէն գանձուցն շնորհաւղ[3] դո՛ւ ծնաւղ մեզ Հոգւովն Սրբով մաքուր ծննդեամբ։ 6 Ընդ հովանեա՛ւ քո հաւաքեալ հանգչիմք, վէմդ կենդանի, ճանապարհին մեր թաւշակ աւծման՝ ի մարէդ[4] կենաց, որպէս Յակոբայ։

Գ. 1 Յաւտար վայրի մեզ գութ վերարկու վեհի քո փառացդ՝ դարձմանն ընդունակ, ծնաւղդ որդեսէր, սրբիչ լուացմամբ, վասն որոյ զմարգարէականն երգեցից երգս. «Ուրա՛խ եղէ ես ոյք աս[էին ցիս], ի տուն [Տեառն] երթ[իցուք մեք]»։ 2 Եւ ահա|150ա| «հասեալ կան ոտք մեր առ դրունս Երուսաղէմի» (**Սղմ. ՃԻԱ. 1**)։ 3 Զոր յուսայի եւ որում ըղձայի՛, ահա ի նոյնն եւ ժամանեցի, զդրունս վերնոյն Երուսաղէմի տեսի, ի ծփա-

---

[1] ձ՛> մայր կենդանեաց
[2] ձ՛ ներբողիչ
[3] ձ՛> դու... շնորհող
[4] ձ՛ է մօրէդ

նաց ծովու աշխարհիս՝ առ նաւահանգիստս ժամանեցի, զշահ վաճառոյս[1] իմոյ ի պատի՛ւ փառաց քոց ընծայեցի զպտո՛ւղ վաստակոց իմոց եւ քրտանց երախայրի՛ս քեզ նուիրեցի՛, զստացուածոց իմոց տասանորդս ի տաճարդ հանգոյն երկնի մատուցի։

Դ. 1 *Ընկալ մայրդ հոգեւոր եւ հաճոյասցին քեզ՝ փոքունք եւ նուազք յոգւոյ տկարէ։* **2** *Ըստ մեծութեան քում ո՛չ արժանաւորս՝ կամ զուգականս եւ համանմանս, եւ ըստ համեմատութեան կարի ո՛չ առանց երկանց եւ քրտանց, այլ ի գութ սիրոյ խառնեսցի եւ բարեմտութիւն հարց հոգեւորաց եւ պատկառելի ալեաւք ծերունեաց եւ եղբարց հասարակաց, եւ ազնուագութ բարեկամաց, զի զաւրասցի՛ սիրոյ ձեր բազմալոյս ճառագայթ, եւ ցրուեսցէ՛ զստուերատեսակ ծածկոյթն սիրոյ, եւ յայսպիսի լուսո՛յ ծագմանէ ցուցցի՛ն գործք ձեր առ իս բարոյ՝ ի փառս եւ ի գոհութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

[1] *ձ՛վարձոյս] վաճառոյս*

ԺԳ.

|150ա| ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆՆ՝ ՆՈՒԱՍՏ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՂՆԿԱՅԵՑԻՈՅ ՇԱՐԱԴՐԵԱԼ ՅԻՄԱՍՏՆՈՅՆ ԲԱՆԻՑ, Ի ԽՆԴՐՈՅ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԵՐԿԵՂԱՋԱՐԴ ՊԱՏԱՆԻՈՅՆ ՊԱՐՈՆ ՎԱԽԹԱՆԿԱՅ

Հովհաննես Պլուզ Երզնկացին տիեզերական մարմինների եւ բնագիտական երեւոյթների մասին այս նշանավոր ճառը, ի թիվս այլ քարոզների, կարդացել է պատմիչների կողմից Փայտակարան անվանված Տփխիս քաղաքում՝ հայոց մեծ իշխան Քարիմատնի հորդորներով՝ վերջինիս հայր հռչակավոր Ամեկ իշխանի կառուցած եկեղեցում:

Երզնկացու ճառը այնպիսի մեծ տպավորություն է գործել ունկնդիրների վրա, որ Ամեկի կրտսեր որդու եւ մոր կողմից Խաչենի մեծ իշխան Ջալալի թոռ Վախտանգի, ինչպես եւ ազնվազարմ տեր Հովհան եպիսկոպոսի խնդրանքով այն գրի է առնվել: Գրառված ճառը մեծ տարածում է գտել ինչպես Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, որտեղ կիլիկեցի Ապլոց իշխանի խնդրանքով Երզնկացին այն նախապես գրել էր չափածո՝ Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» պոեմի հանգով:

Հետագա դարերում եւս Երզնկացու այս երկը բարձր է գնահատվել: Պատահական չէ, որ ստեղծագործության ինչպես արձակ, այնպես էլ չափածո տարբերակները դեռեւս 1792 թ. հրատարակվել են Նոր Նախիջեւանում, Ռուսաստանի հայոց հոգեւոր հովիվ Հովսեփ Արղության Երկայնաբազուկ արքեպիսկոպոսի կողմից, վերջինիս հակիրճ, բայց շատ իմաստալից առաջաբանով՝ ուղղված գիտության ծարավի հայորդիներին:

Ուշագրավ է, որ հրատարակչի կողմից երկի հեղինակ է անվանված Հովհաննես Ծործորեցին, ինչը հետեւանք է արդեն ԺԸ. դարում երկու նշանավոր Հովհաննես Երզնկացիների շփոթության:

Թեեւ «Յաղագս երկնային շարժման» բնագիրը Երզնկացու արձակի մյուս երկերի հետ վաղուց պատրաստ էր ութ ձեռագրերի եւ վերը նշված տպագրի համեմատությամբ, սակայն հատորի հրատարակությունը հետաձգվեց, իսկ մինչ այդ ականավոր Երզնկացիների բազմաշխատ ուսումնասիրող Արմենուհի Երզնկացի Տեր-Սրապյանի աշխատասիրությամբ հրատարակվեց «Յաղագս երկնային զարդուց...» երկի չափածո տարբերակը: 2001 թ. Մատենադարանի գիտաշխատող Լուսիկ Ստեփանյանի աշխատասիրությամբ վերահրատարակվեց 1792 թ. Նոր Նախիջեւանում հրատարակված բնագիրը՝ համեմատված Մատենադարանում պահվող ութ ձեռագրերի հետ, նաեւ՝ երկի անգլերեն թարգմանությունը:

Հրատարակվում է Մատենադարանի յոթ ձեռագրերի (2173՝ Ա. 150ա-6բ, 2174՝ Գ., 2189՝ Ե. 398բ-413ա, 573՝ Թ. 268ա-74բ, 3527՝ Լ. 69ա-90բ, 682՝ Ծ. 38բ-42ա, 2992՝ Ջ. 106ա-11ա) եւ 1792 թ. տպագրի (Տ) համեմատությամբ:

Ա. 1 *Ամենայն ոք, որ զբան,* |150բ| *որ է ծնունդ անմարմին մտաց, գրով ի քարտիսի կամիցի դրոշմել, պարտի եւ զնորին պատճառն յանդիման կացուցանել, որպէսզի վերջին ժամանակին ծննդոց մարդկան, յաւժարութիւն ի սէր խնդրողի բանին եւ աշխատանք տուողի խնդրոյն, մի ծածկեսցի ի բանասիրաց եւ յաշխատասէր*[1] *անձանց, զի կարաւտքն բանի, իբրեւ զերկիր ծարաւուտ զցաւղ քաղցրութեանն երկնի խնդրեսցեն, եւ ապա սպասաւորքն բանի, իբրեւ զամբ ընդունակ ցաւղոյ, զառեալն յանսահման ծովէ իմաստից*[2] *եւ ի գետոց հոսմանէ յաղագս ծուլութեան մի՛ արգելցեն։*

Բ. 1 *Ըստ որում եւ ես՝ նուաստ Յոհ[աննէս] Եզնկայեցի, աշակերտ հոգելից հաւրն եւ սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր սուրբ գրոց բանի ի թուին ՉԼԳ. (1284) պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս վրաց, ի հռչակաւոր եւ ի մեծ մայրաքաղաքս ի Տփխիս, Փայտակարան կոչեցեալ՝ ի գիրս պատմողաց եւ հանդիպեցաւ խաւսել մեզ բանս քարոզութեան՝ ի դուռն եկեղեցւոյն, մեծապատիւ եւ խոհեմամիտ եւ մեծ իշխան Հայոց պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր եւ բարիհոգի հայրն նորա պարոն Ոմեկն։* **2** *Եւ էր խաւսեցեալ բանն յաղագս երկնային շարժմանն։* **3** *Վասն որոյ ախորժելի եղեւ զուարթամիտ պատանոյն Վախթանգայ, որ էր որդի կր[տ]սեր հռչակաւոր անուան պարոն Ոմեկին, եւ մայրենի ազգաւ թոռն մեծի իշխանին Ջալալի՝ տեառն Խաչենոյ, որդի մաւր բարեպաշտի, որ էր Քրիստոսի աւրինաւքն զարդարեալ հոգի, եւ ի խնդիր բանիս յորդորող զորդի։* **4** *Սա խնդրեաց ի մէնջ յաղագս երկնի եւ նորին շարժմանն, յոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր մեծազգ եպիսկոպոսն տէր Յոհ[անէս]* |151ա|*, ազնուական զարմից եւ բարետոհմիկ հարց ծնունդ։* **5** *Որ եւ շարժեալ ի սիրոյ եւ ի յուսոյ խնդրողաց, եւ ակն առեալ ի պատուոյ շնորհաշուք տեառն եւ գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, ի նրբաշաւիղ եւ ի կորովամիտ բանից սուրբ հարցն եւ վարդապետաց մերոց, եւ իմաստախոհ արանց, պարզեալ գրեցի համառաւտ բանիւ եւ աշխարհական խաւսիւք վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողաց։*

Գ. 1 *Արդ, որ գրէք յաղագս աւգտի զսակաւ աշխատութիւնս մեր, գրեսջիք եւ զայս նախադրութիւնս եւ զբան յիշատակի անուան խնդրո-[ղա]ց եւ գրողի սորին, գրեալ լիջիք եւ դուք ի գիրն կենաց։* **2** *Եւ որ ծուլանայ եւ թողու զսա՝ ո՛չ լիցի առանց պատժոց, իբր յոլով աշխատութեանց զիւր սակաւն գին տալ ո՛չ կամեցող այլոց*[3]*։*

---

[1] *Ջ յաշխատաւոր*
[2] *Ջ ծովէ իմաստնոց*
[3] *Թ> ամենայն ոք... ոչ կամեցող այլոց*

Ա. |151ա| ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՆԻ, ԹԷ ՔԱՆԻ՞ ԵՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ ՈՐՊԷՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ ՅԱՆԳՈՅԻՑ ԵՂԵՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ

Դ. 1 *Արարիչն Աստուած իմաստութեամբ եւ զաւրութեամբ արար զաշխարհ ամենայն։* **2** *Եւ երեւի զաւրութիւնն նորա, զի յոչնչէ արար զամենայն արարածս։* **3** *Եւ տեսանի իմաստութիւնն, զի գեղեցիկ արուեստիւ յաւրինեաց զերկինս եւ զերկիր։*

Ե. 1 *Չորս նիւթ*[1] *արար Աստուած ի պէտս շինութեան աշխարհի՝ հուր եւ հողմ, ջուր եւ հող։* **2** *Սոքա սկզբունք եւ արմատք են ամենայն գոյիցս եւ են հակառակ միմեանց*[2]*, իսկ այլ արարածս ծայրք եւ ծնունդք ի սոցանէ յառաջ եկեալ եւ խառնեալ ընդ միմեանս, յորմէ ստեղծ անեղականքս՝ բուսականք եւ կենդանիք։* **3** *Եւ պիտոյ էր այս չորս տարերքս, զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մարմին, եւ ոչ առանց ջրոյ շաղղումն եւ միաւորութիւն։* **4** *Եւ առանց աւդոյ, որ է հողմ, շարժումն ո՛չ լինէր*[3]*, եւ ոչ առանց հրոյ գոյներեւումն։* **5** |151բ| *Վասն որոյ ստեղծ զամենայն զգալի եւ նիւթական եղեալքս ի հողոյ, եւ դալարացոյց ջրովն, եւ շարժումն ի յաւդոյն, եւ երեւումն եւ գոյն ի հրոյն։* **6** *Եւ ա՛յս է, զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զ[երկիր]»* (**Ծն. Ա. 1**)։ **7** *Զի երկինքն երկու իրք է՝ հո՛ւր եւ աւ՛դ։* **8** *Եւ երկիրս երկու իրք է՝ հո՛ղ եւ ջո՛ւր։* **9** *Եւ յորժամ ստեղծ զայս չորք տարերս, արուեստ իմաստութեանն Աստուծոյ երեւեցաւ ի ստեղծուածն*[4] *իւր, զի հողն ծանր էր՝ զներքի վայրն էառ. եւ ջուրն ի վերայ հողին զետեղեցաւ. եւ աւդն, որ թեթեւ էր, քան զջուրն՝ ի վերայ ջրոյն կայացաւ. եւ հուրն, որ առաւել*[5] *թեթեւ էր, քան զաւդն՝ ի վերոյ, քան զնա սահմանեցաւ։* **10** *Վասն զի յաւդն*[6] *գիջութիւն ջրոյ կայ։* **11** *Եւ քեզ աւրինակ բանիս, թէ առնուս աւա՛զ եւ ջո՛ւր եւ ձէթ, եւ արկանես յաման մի խեցեղէն, աւազն յատակն նստի, ջուրն ի վերոյ գա, եւ ձէթն ի վերոյ՝ քան զջուրն, եւ խեցեղէն ամանն զամենայնն ի ներքոյ իւր ունի։* **12** *Ըստ այնմ նմանութեանս*[7] *եւ չորք տարերքս դասեցան։* **13** *Հուրն, զի թեթեւ բնութեամբ եւ զշարժումն ի վեր ունի, եւ գնդաձեւ շրջապատեաց զայլ երեք տարերքն։* **14** *Եւ զի հողմն*[8] *ի ներքոյ անցեալ՝ փչեաց, փեռեկեաց ի վեց կողմ ի վե՛ր եւ ի վայր, եւ չորս կողմ*

---

[1] *Գ նախ նիւթս*
[2] *ԱՏ > գոյիցս եւ են հակառակ միմեանց*
[3] *Ե եւ ոչ առանց հողմոյ շարժումն լիներ*
[4] *Ե յառնուլն] ի ստեղծուածն*
[5] *Ե այլ] առաւել*
[6] *Ե ի հողմն] յօդն*
[7] *Ե օրինակի] նմանութեանս*
[8] *Զ հողն] հողմն*

աշխարհի, եւ զհետ հրեղէն երկնի ձեւացաւ։ **15** *Եւ հողմ կարգեցաւ ի ծոց նորա, որպէս յաման արկեալ։* **16** *Եւ երկիրս, որ է հո՛ղն եւ ջո՛ւրն, ի միջոցի երկնից կառուցաւ*[1]*։*

Զ. **1** *Ահա ա՛յս է հրեղէն երկինքն, զոր արար Աստուած յառաջին աւուր արարչութեանն, որ բաժանեցաւ յերկուս կիսագունդ, զի որպէս ի վերոյ երկրի կամարաձեւ է եւ բոլոր, նոյնպէս եւ ի ներքոյ երկրի, վասն զի հեռի է յերկրէս ի վեց* |152ա| *կողմանէ։* **2** *Ի վերոյ երկրի, որպէս տեսանես զմիջոցս զայս, որ ի վեր է երկինքն յերկրէս։* **3** *Նոյնպէս եւ այս չափովս ի ներքոյ երկրի ներքի փորուածն եւ ծոցն։* **4** *Այսպէս, ընդ արեւելս եւ ընդ արեւմուտս, ի հիւսիս եւ ի հարաւ հեռի է երկինք յերկրէ։*

Բ. |152ա| ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՆԻՑՆ ԵՒ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ԹԷ ՈՐՊԷՍ Է

Է. **1** *Արդ, առաջին երկին հրեղէնն է, որ ասացաւ՝ զոր եթեր անուանեն, իսկ որ ի հետ սորա երկրորդ երկինք*[2] *հաստատութիւնն է, զոր արար Աստուած յերկրորդ աւր արարչութեանն։* **2** *Զի ասաց Աստուած. «Եղիցի [եւ] հաստատութիւն ի մէջ ջրոցդ եւ եղիցի մեկնեալ ի մէջ*[3] *ջրոցդ եւ ջուրց։* **3** *Եւ եղեւ այնպէս» (տե՛ս Ծն. Ա. 6) զի ջուրն զերեսս երկրի ծածկեալ ունէր։* **4** *Հրամանաւն Աստուծոյ ի մէջ ջրոյն եմուտ աւդն, որ է հողմ, եւ վերացոյց*[4] *զկէս ջրոյն ի վեր՝ կամարաձեւ, որպէս խորան։* **5** *Եւ այսպէս աւդն եւ ջուրն, որ ի վերայ աւդոյն կոչեցաւ հաստատութիւն։* **6** *Եւ է այս երկրորդ երկինք ի յաւդոյ եւ ի ջրոյ, ի ներքոյ առաջին եւ ի վերին երկնիցն, որ է հրեղէն։* **7** *Եւ է երրորդ երկին աւդեղէն, յորում են արեգակն եւ լուսին եւ աստեղքն։* **8** *Եւ երկինք*[5] *կոչեն գիրք. ըստ այնմ*[6] *արար զլուսաւորս, եւ եդ զնոսա ի հաստատութեանդ։* **9** *Եւ այս երեք երկինքս հեռի՛ են ի միմեանց, զի որպէս աւդն՝ յորում լուսաւորքն, հեռի է յերկրէս, նոյնպէս ջրեղէն կամարն հեռի է յաւդոյն*[7]*։* **10** *Այսպէս եւ հրեղէն երկինն հեռի է ի ջրոյն*[8]*։* **11** *Եւ այս երեք երկինքս անդադար շուրջ գան զերկրաւս։* **12** *Հրեղէն երկնիցն շուրջ գալն անտեսանելի է աչաց եւ անթուելի համարոց եւ անչափելի է։* **13** *Իսկ այս երկինս, որ աչաց երեւի շուրջ գալն՝ եւ լուսաւորքդ տեսան, աստի* |152բ| *իմացաք զվերինն։* **14** *Եւ թէ անհաւա-*

---

[1] *Ե կարգեցաւ] կառուցաւ*
[2] *Ե > երկրորդ երկինք*
[3] *Ե > ջուրցդ... ի մեջ*
[4] *Ե Աստուծոյ եմուտ հողմն ի մէջ ջրոյն եւ վերացոյց*
[5] *Ե եւ զսա երկինք*
[6] *Ե ըստ այնմ որ ասէ*
[7] *Ե յօդեղէն երկինքն] յօդոյն*
[8] *Ե յրեղէնն ի ջրեղինէն] հրեղէն... ջրոյն*

տալի թուի[1] քեզ, թէ որպէ՞ս ջուրն դադարի ի վերայ աւդոյն եւ ի շուրջ գալն որպէ՞ս ի վայր[2] ոչ հոսի, քեզ վկայ[3], որ հաւատաս, զամպն տե՛ս[4]. զի ամպն ի ծովէ եւ ի գետոց առնու զջուրն եւ վերանայ եւ ածէ անձրեւ ի վերայ երկրի։ 15 *Եւ թէպէտ ջրովն ծանրացեալ[5] է, այլ առնու եւ վերանա՛յ զջուրն, եւ հողմք[6] ի ներքոյ անցեալ՝ առեալ գնան ընդ երկինս, եւ ո՛չ թափի ի վայր ջուրն, այլ կա՛յ ամենազաւր հրամանաւն ծրարեալ յաւդս եւ ըստ ակնարկութեանն Աստուծոյ՞ անձրեւէ ուր կամի։* 16 *Նոյնպէս եւ ջրեղէն երկինքն, որ է ի ներքոյ հրեղինին եւ վերոյ աւդոյս, շուրջ գայ անդադար, որպէս զնոսա։*

Գ. |152բ| ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՐԻ[8], ԹԷ ՈՐՊԷՆ ՇՈՒՐՋ ԳԱԼՈՎՆ ԵՐԿՆԻ՝ ԵՐԿԻՐՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՅ ԵՒ ԵՐԿԻՆՔՆ ՄԻՇՏ ՇԱՐԺԻ

Ը. 1 *Ասեն իմաստունքն վասն երկրի, թէ որպէս սկուտեղ է, եւ այլք՝ թէ բոլոր որպէս զգունդ է, եւ երկինքն պատեալ է զերկիրս, եւ երկիրս ի մէջ կայ։* 2 *Երկնիցն հողմն, որ ի ներքոյ երկրի կայ եւ ի վեր փչէ, եւ ոչ թողու, որ ի վայր գնայ երկիրս, եւ իւր բնական ծանրութիւնն ո՛չ թողու, որ ի վեր շարժի։* 3 *Եւ այսպէս հաստատուն կայ ի միջոցին։* 4 *Եւ են ի մէջ երկրի հրոյ երակք[9]. եւ է ջրոյ երակք[10], եւ կայ քամոյ երակք։* 5 *Եւ զի երկիրս ծա՛նր է՝ ի վայր հակէ եւ հողմ ի վեր մղէ։* 6 *Ջուրն, որ ի միջոցին է՝ մզի[11] ընդ հողն եւ յիրուր կափչի եւ լինի սալայատակ, եւ խտանայ եւ պնդի երկրային մարմինս։* 7 *Ի տեղի, ուր հրոյն[12] երակքն կայ՝ ջուրն տաք գայ ի վեր, եւ ուր քամոյն երակն կայ, թէ հնչէ քամին ի ներքոյ երկրի, տեղիք[13] որ նաւսր լինի՝ յերեսք ելանէ եւ շարժ լինի հրամանաւն[14] Աստուծոյ, յորժամ կամ|153ա|ենայ խրատել զմեզ[15]։*

Թ. 1 *Եւ այսպէս, երկինքն իւր արագ շրջագայութեամբն ո՛չ թողու զեր-*

---

1 *Ե է] թուի*
2 *Ե զիարդ] որպէ՞ս ի վայր*
3 *Լ օրինակ] վկայ*
4 *Զ > զամպն տե՛ս*
5 *Ե ծանր] ծանրացեալ*
6 *Ե օդք] հողմք (այսպէս՝ այլուր)*
7 *Ամ > աստուծոյ*
8 *Զ իսկ երկրի*
9 *Ե ջրոյ երակ] հրոյ երակք*
10 *Ե եւ է հրոյ երակ, Զ հրային երակք*
11 *Ե մղի] մզի*
12 *Ե եւ ելանեն գետք եւ աղբիւրք եւ ուր հրոյն] յիրար... ուր հրոյն*
13 *Ե > տեղիք*
14 *Ե բանիւն] հրամանաւն*
15 *Ե կամիցի խրատել զմեզ եւ յայլ տեղի յիրար կապչի եւ լինի սալայատակ եւ խստանայ եւ պնդի երկրային մարմինս եւ այպէս երկինքն։*

կիրս, որ ի ներքին կիսագունդն իջանէ։ **2** *Եւ զի երկիրս ծանր է*[1]*, եւ ջուրք ծովուն ի վերայ երկրի է, նա հողոյն եւ ջրոյն ծանրութիւնն ո՛չ թողու, որ ի վեր տանի, եւ հողմն, որ ի ներքոյ կայ ոչ թողու ի վայր գնալ։* **3** *Եւ թէ աւրինակ խնդրես, թէ որպէ՞ս կայ երկիրս ի մէջ երկնիցն, քեզ աւրինակ ձու հաւին՝ բոլոր դեղնուցն, որ ի մէջն կայ, է՛ նման երկրիս։* **4** *Եւ սպիտակուցն*[2] *աւդոյն նման, եւ միզն բարակ, որ հետ սպիտակին է, այն ջրեղէն կամարն, եւ խեճեպն*[3]*՝ հրեղէն երկինն։* **5** *Է՛ եւ այլ աւրինակ։* **6** *Ի Կրէտէս կղզի խանդ ու մանդ քարէ տաճար*[4] *է շինած եւ պողվատ երկաթէ պատկեր է արարած, եւ ի մէջն*[5] *թողած*[6]*։* **7** *Ծանրութիւն երկաթին ի վայր հակէ, եւ զաւրութեամբ*[7] *ադամանդ քարին ի վեր քարշէ, եւ կայ այսպէս հաստատեալ ի միջոցին ի կախ*[8]*։* **8** *Նոյնպէս եւ երկիրս ի մէջ երկու կիսագնդին երկնից կայ հաստատեալ՝ բանիւ հրամանին Աստուծոյ, որ ասէ. «Ես հաստատեցի զսիւնս նորա»* (**Սղմ. ՀԴ. 4**)։

Դ. |153ա| ՎԱՍՆ ԾՈՎՈՒ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՋՈՒՐՑ

Ժ. 1 *Յերրորդ աւուր արարչութեանն*[9] *հրամայեաց «Աստուած ժողովեսցին ջուրքտ, որ ի ներքոյ երկնից՝ ի ժողով մի եւ երեւեսցի ցամաքն. եւ եղեւ այսպէս։* **2** *Եւ զժողով ջուրսն կոչեաց ծովս»* (**Ծն. Ա. 9,10**)։ **3** *Վասն որոյ*[10] *ասեն իմաստունքն, թէ ի ներքոյ երկրի եւ ի մէջն, եւ շուրջ զեզերաւքն ջուրք են յամենայն կողմանց։* **4** *Եւ զի ի ներքոյ երկրի ջուր է, վկայէ սաղմոսն. «Նա ինքն ի վերայ ծովու հիմունս արկ երկրի»* (**Սղմ. ԻԳ. 2**)։ **5** *Եւ ի վերայ երկրիս են ջուրք*[11] *ծովուն, զոր Ատղանդական*[12] *ծով ասէ։* **6** *Եւ շուրջ երկրիս ջուր*[13] *է, զոր ովկիանոս ծով անուանեն*[14]*։* **7** |153բ| *Եւ յայս ծովս, որ շուրջ զերկրաւս է, ոչ նաւ ելանէ ի վերայ եւ ոչ կենդանի կարէ բնակիլ ի նմա, զի սաստիկ սուր եւ արագապէս խառնմամբ հողմոյն շուրջ գայ զերկրաւ։* **8** *Իսկ յայս ծովս, որ ի վերայ երկրիս է, ելանեն նաւք եւ բնակեն կենդանիք, զի կան ի մէջն լերինք եւ բլուրք*[15]*։*

---

1 *Գ «ծանր է»ից սկսած թերի է մինչեւ Ի.8 ներառեալ*
2 *Ե սպիտակուցն լինի այն*
3 *Ե կեճեպն*
4 *Ե եկեղեցի] տաճար*
5 *Ե պողպատէ խաղ մի ի մէջն] երկաթէ... ի մէջն*
6 *Ե կախած] թողած*
7 *Ե զօրութիւն] զօրութեամբ*
8 *Զ միջոցի անդ կախ*
9 *Ե > արարչութեանն*
10 *Ե նոցա] որոյ*
11 *Ա > ջուրք*
12 *Ե անդլական] ատղանտական, Լ անտանդական*
13 *Ե ծով] ջուր*
14 *Ե ասեն] անուանեն։*
15 *Ե մեծամեծ*

Ե. |153բ| ԵՒ ԹԷ ՅԻՆՉ ՊԷՏՔ ԵՆ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ՋՈՒՐՔՍ[1], ՋՈՐ ԱՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ[2]

ԺԱ. 1 *Այս է պատճառն, զի յամենայն ինչ խառնէ հուրն, վասն պիտոյից, զի*[3] *տուն[կ]ք եւ պտղաբերք՝ ջերմութեամբ հրոյն հասանեն:* 2 *Եւ այս հուրս, զոր մարդիկ ունին ի պէտս*[4]*, յայտնի է:* 3 *Այլեւ ի հարաւոյ կոյսն կարի ջերմ է եւ սաստիկ տաք, ո՛չ միայն վասն արեգականն տապոյն, այլ բնական հուր խառնեալ է ընդ աւդոյն եւ իբրեւ զջուր՝ թանձրացեալ է աւդն, զոր հրեղէն ծով անուանեն:* 4 *Վասն որոյ Արարիչն իմաստութեամբ մեծաւ՝ նոյն չափովն եւ կշռովն արար եւ զջուրն, զի կացցէ ընդդէմ հրոյն:* 5 *Եւ վասն այսորիկ պիտոյ էր վերի ջրեղէն կամարն, զի մի հողմոյն բռնութիւնն, որ ի ներքոյ նորա կան, որպէս սիւնակք*[5] *ի վեր փչեսցէ եւ պատառեսցէ զերկնային կամարն:* 6 *Եւ կամ յիւր սահմանեալ տեղւոյն ի վեր մղեսցէ, որպէս եւ յամպս է տեսանել, զոր պատառէ հողմ, որ եւ զհերձումն՝ որոտ անուանեմք:* 7 *Եւ զի ջրեղէն կամարն ի միջոց է հողմոյն եւ հրեղէն երկնիցն, արգել լինի հողմոյն, եւ որպէս զհողմ ի վա՛յր արգելէ թանձրութիւն ջրոյն, նոյնպէս եւ կայ ընդդէմ հրեղէն երկնիցն, եւ լինի նմա կերակուր, զի մի կիզեսցի աշխ|154ա|արհ ի սաստիկ հրոյն, զի ի ջերմութենէն արեգականն եւ հրեղէն երկնից կիզեալ այրէր*[6] *աշխարհ:* 8 *Վասն այնորիկ ջուր ծովու արեգական կերակուր լինի եւ ա՛յլ լուսաւորացդ:* 9 *Նոյնպէս եւ ջրեղէն երկինն հրեղէն երկնից դիմակ լինի:* 10 *Եւ զի որպէս լոյս ճրագին պատրուգովն զձէթն ծծէ եւ պակասեցուցանէ, եւ բժիշկքն սրուակովն զարիւնն ծծեն եւ քարշեն, այնպէս լուսաւորքդ եւ հրեղէն երկինն՝ զջուրսն*[7]*:* 11 *Եւ թէ հատանէր ջուրն՝ անցանէր աշխարհ, որպէս ի հատանել ձիթին անցանէ ճրագն:* 12 *Իսկ ա՛յն ջուրն, որ շուրջն, որ շուրջ զեզերաւք երկրիս կայ, արտաքոյ քան զինքն ո՛չ լերինք եւ ոչ այլ դադարք կան, որ արգել լինի ջրոյն, այլ սաստիկ հողմ խառնեալ ընդ ջրոյն եւ արագապէս շուրջ գալով, պնդէ զեզերս երկրի, որ կայ ի վերա ոչնչի՝ հրամանաւն Աստուծոյ:*

---

1 *Ե ջուրքս որ ի վերայ երկրի*
2 *Ե > արար աստուած*
3 *Ե զի ծառք եւ բոյսք պտղաբերք*
4 *Ջ ի պիտոյս*
5 *Ե սիւն] սիւնակք*
6 *Ե այրեսցէ*
7 *ԵՏ այսպէս արեգակն եւ հրեղէն երկինքն զջուրս] եւ բժիշկն... զջուրն*

Զ. |154ա| ՋՈՒՐ ԾՈՎՈՒՆ ՎԱՍՆ Է՞Ր ԱՂԻ Է, ԿԱՄ ՉԻ՞ՆՉ Է ՊԱՏՃԱՌՆ, ՈՐ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ԳԵՏՔՍ Ի ԾՈՎՆ ԳՆԱՆ ԵՒ ԾՈՎՆ Ո՛Չ ԼԻՆԻ ԼՅԵԱԼ[1] ԵՒ ՅԻՒՐ ՉԱՓԷՆ[2] Ո՛Չ ԵԼԱՆԷ[3]

ԺԲ. 1 *Վասն այն աղի են ջուրք ծովուն, զի ջերմութեամբ[4] արեգականն ծծէ եւ քաղէ զքաղցր եւ զյիստակ եւ զանոյշ ջուրսն, եւ յաւդդ հանէ։* **2** *Եւ որ մնա ի տեղին՝ թանձր է եւ աղի, եւ լեղի[5] եւ պղտոր։* **3** *Եւ վասն այն միակշիռ մնան ջուրք ծովու, զի զոր մտ[ան]ելով գետոցն յաւելու, զայն ծծէ արեգակն եւ պակասեցուցանէ։* **4** *Զոր աւրինակ, թէ լնուս ջուր լի պղնձով եւ եփես հրով, շոգին՝ որ ելանէ, պակասեցուցանէ զջուրն, եւ թէ ո՛չ լնուս ջուր՝ ամենեւին պակասի եւ հատանի։* **5** *Նոյնպէս իմացիր ու զայս, որ թէ ոչ մտանէին գետք ի ծով, արեգականն ջերմու|154բ|թիւնն սպառէր եւ հատուցանէր զջուր ծովուն։* **6** *Եւ այլ աւրինակ քեզ, որ գիտենաս[6], թէ զյստակ եւ զանոյշ ջուրն ծծէ, վասն այն ջուր ծովուն աղի՛ եւ դառն է։*

ԺԳ. 1 *Ասեն, թէ յորժամ պակասի ջուր նաւորդացն եւ ո՛չ գտանեն ջուր ըմբելոյ, վասն զի դառն է ջուր ծովուն, առնուն զաղի եւ զդառն ջուր ծովուն[7] եւ լնուն ի կաթսայս եւ եռացուցանեն, եւ դնեն սպունգս մեծամեծս՝ այն զոր ամպ ասեն՝ խփունս կաթսայիցն, եւ գոլոշին, որ ելանէ՝ ժողովէ սպունգն զհիւթն, եւ քամելով զայն ժողովեն ջուրս քաղցր եւ ըմբեն։* **2** *Է՛ եւ ա՛յլ պատճառ, որ ո՛չ յաւելուն եւ ոչ պակասեն ջուրք ծովուն, զի որ ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ի ծովն եւ յաւելուն՝ այն ի ներքոյ երկրի երակաւք քամին եւ ելանեն, եւ ի լերինս եւ ի դաշտս աղբիւրանան։* **3** *Եւ այս, որ մտանելով գետոցն յաւելուն, ելանելովն աղբիւրացն՝ պակասի։*

Է. |154բ| ՎԱՍՆ ՕԴԵՂԷՆ ԵՐԿՆԻՑ, ՅՈՐՈՒՄ ԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՔԴ[8]

ԺԴ. 1 *Աստուածային գիրն ասէ, թէ արար Աստուած զլուսաւորսդ եւ եդ զնոսա ի հաստատութիւնդ երկնից՝ լուսատու լինել[9]։* **2** *Այս երկինս, որ ի յաւդոյ է[10], բաժանի ի ութ։* **3** *Եւթ մոլորակացն կոչի եւ ութ մոլորա-*

---

1 *Ե լիանայ] լինի լցեալ*
2 *Ե > յիւր չափէն*
3 *Ե պակասի] ելանէ*
4 *Ե > ջերմութեամբ, ՁՏ ջերմութիւն*
5 *Ե > եւ լեղի*
6 *Ե > որ գիտենաս*
7 *Ե > վասնզի... ծովուն*
8 *Ե մոլորակքն] լուսաւորքդ*
9 *Ե լուսատու լինել երկրիս*
10 *Ե օդեղէն] ի յօդոյ է*

գունդ[1] *անուանի. զայն որ մոլորականքն են, եւթ պարունակ եւ եւթ գաւ-*
տի, եւ եւթ երկինք անուանեն, եւ յամէն երկինք է մոլորական մի։ **4** *Եւ*
ա՛յս են եւթ մոլորականքն՝ ի վերուստ ի վայր սկսեալ[2]*. Զոհալ,*
Մուշթարի, Մառեխ, Արեգակն[3]*, Զոհրա, Օտարիտ, Լուսին*[4]*։* **5** |155ա| *Այս*
տաճիկ[5] *լեզուով անուանքն է, իսկ ի հայ լեզու՝ Երեւակ, Լու[սնթագ],*
Հրատ, Արեգակն, Լու[սաբեր], Փայլածու, Լուսին։ **6** *Ի վերոյ, քան*
զամենայն՝ Զոհալն, եւ ի ներքոյ ամենայնէ՝ Լուսինն։ **7** *Եւ ա՛յն, որ*
անմոլար գունդն է՝ են երկոտասան կենդանակերպքն։ **8** *Եւ բոլոր*
երկի՛նքն է երկոտասան բաժին եւ ամէն կենդ[անակերպ] յերկիրս[6] *իւր*
տեղի ունի։ **9** *Վասն որոյ եւ իմաստունքն զերկիրս երկոտասան բաժին են*
արարեալ եւ ի վերայ կենդանակերպիցն եւ իւրեանց բնութեանն
բաժանել են[7]*։*

ԺԵ. **1** *Եւ է՛ աշխարհս մարդակերպ։* **2** *Խոյն ունի զգլուխն, որ է Պարսից*[8]
աշխարհն, Ցուլն՝ պարանոցն, որ են բաբելացիք։ **3** *Եկաւորն ձեռքն եւ*
ուսն, որ ունի զաշխարհն Գամրաց[9]*։* **4** *Խեծգ[ետինն]՝ լանջք, որ են*
Հայք[10]*։* **5** *Առիւծն ողինն եւ կողիցն*[11]*, որ է Ասիա*[12]*։* **6** *Կոյսն ներքին որո-*
վայնն, որ է Էլլադա[13]*։* **7** *Կշիռն՝ երկու կուշտն, որ է Լիբրա։* **8** *Կարիճն ան-*
դամն, որ են կրետացիք[14]*։* **9** *Աղեղնաւորն՝ բարձք եւ երիքն*[15]*, որ են լի-*
կիացիք[16]*։* **10** *Այծեղջիւրն՝ երկու ծունգն, որ են Ասորեստան*[17]*։* **11** *Ջրհոսն՝*
սրունքն, որ են Եգիպտոս[18]*։* **12** *Ձուկն՝ երկու*[19] *թաթ ոտիցն, որ է Հուն-*
դուստան[20]*։* **13** *Եւ է երկոտասան կենդանակերպքն յերկինս՝ երկոտասան*
ամիս տարոյն։ **14** *Եւ ամէն կենդանակերպ է երեսուն աստիճան, որ է*

---

[1] *Ե ութն անմոլորագունդ*
[2] *Ե > ի վերուստ... սկսեալ*
[3] *ԵՏ շամս (շէմս)] արեգակն*
[4] *ԵՏ զամար] լուսին*
[5] *Ե պարսիկ] տաճիկ*
[6] *Զ > երկիրս, Տ երկինս] երկիրս*
[7] *ԵՏ կենդանակերպիցն բաժանեցին*
[8] *Տ զգլուխ մարդոյն եւ պարսից*
[9] *Ե որ են գամիրք] որ... գամրաց*
[10] *Տ եւ աշխարհ զհայաստան] որ են հայք*
[11] *Տ ողն եւ կողքն*
[12] *Ե աջ ձեռն որ են ասիացիք] ողինն... ասիա, Տ եւ աշխարհ զԱսիա] որ է Ասիա*
[13] *Ե են ելլադացիք, Տ եւ զաշխարհ զելլադա] որ է Էլլադա*
[14] *Ե որ են լիբիացիք, Տ եւ աշխարհ կրետացիք] որ են կրետացիք*
[15] *Ե > եւ երիքն, Լ երանքն որ է յիտրալիա, Տ երանքն*
[16] *Ա ելլադա] որ են լիկիացիք, Տ եւ աշխարհ զիտալիա] որ են լիկիացիք*
[17] *ԵՏ ասորիք*
[18] *ԵԽ եգիպտացիքն*
[19] *ԵՏ > երկու*
[20] *Ե հնդիկք*

երեսուն աւր ամսոյն։ **15** *Եւ է բովանդակ երկինքն 360 աստիճան, որ է 360 աւր տարոյն։* **16** *Իսկ աւել աւուրքն, որ է հինգ*[1] *աւր՝ այլ մանրամասանց հաշիւ կայ՝ այն անտի լինին։* **17** *Եւ գիտացի՛ր, զի յերկնիցն ի շուրջ գալոյն լինին ժամքն, որ է երկոտասան*[2] *պահ աւուրն։* **18** *Եւ ի ժամուցն լինին աւուրքն, եւ յաւուրեղոյն՝ շաբաթքն, [եւ ի շաբաթոյն ամիսք]՝ եւ յամսոյն՝ տարիքն, եւ ի տարերցն լինի ժամանակն։* **19** *Եւ է ժամանակն ծնունդ*[3] *շարժման շրջագայութեանն երկնից։*

Ը. |155բ| ԹԷ ՈՐՊԷՆ ՇԱՐԺԻ ԵՒ ՇՈՒՐՋ ԳԱՅ ԳՈՒՆԴ ԵՐԿՆԻՑՆ, ԵՒ ՈՐՊԷՆ ԳՆԱ. ԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՍՏԵՂՔ

ԺԶ. **1** *Եթէ կամիցիս գիտել, թէ որպէ՞ս ի շուրջ գայ երկինքն, եւ յայն շուրջ գալուն թուեալ համարին ժամքն եւ աւուրքն է այսպէս։* **2** *Ի շրջիլ երկնից, յորժամ կէս կենդանակերպ[ին] ի վեր գայ ի վերայ երկրիս, որ է կէս կենդանակերպն հնգետասան աստիճան, եւ հնգետասան աստիճան*[4] *պահ*[5] *մի, որ է՛ ժամ մի*[6]*։* **3** *Եւ երբ ի լման կենդանակերպ մի գայ ի*[7] *վեր՝ ելաւ յաւրէն երկու պահ*[8]*։* **4** *Եւ հասկացի՛ր այս աւրինակաւս*[9]*։* **5** *Համարեաց, թէ գարունն է եւ արեգակն ի Խոյն, երկու ժամ պահն*[10] *Խոյն գայ ի վերայ*[11]*, երկու ժամ պահ*[12] *այլ՝ Ցուլն, երկու ժամ Եկաւորն, երկու Խեծգետինն*[13]*, երկու Առիւծն, երկու պահ*[14] *այլ Կոյսն։* **6** *Այս վեց կենդանակերպս ի երկոտասան պահ աւուրն գայ ի վեր ի տիւն, եւ ապա երիկուն լինի, եւ Խոյն մտանէ*[15] *ընդ*[16] *արեւմուտս՝ ի ներքի կիսագունդն, եւ կշիռն ելանէ յարեւելս, եւ այսպէս՝ հետ Կշռին վեց*[17] *կենդանակերպն այլ ի վեր*

---

[1] *Զ եօթ] հինգ*
[2] *Ե ժամ երկոտասան աւուրն, Տ քսան եւ չորս] երկոտասան*
[3] *Ա > եւ ի շաբաթոյն ամիսք, Ե աւուրք եւ յաւուրցն շաբաթք եւ ի շաբաթացն ամիսք եւ յամսոցն տարիք եւ ի տարերցն ժամանակքն եւ ի ժամանակացն ծնունդք] աւուրքն... է ժամանակն ծնունդ*
[4] *Զ > եւ հնգետասան աստիճանն*
[5] *Ե ժամ] պահ*
[6] *Ե > որ է ժամ մի*
[7] *Ե երբ կենդանակերպ մի լման ի վեր գայ, Զ եւ երբ լինի կենդանակերպ մի գա*
[8] *Ե ժամ] պահ*
[9] *Ե եւ զայլն իմանաս այս օրինակաւս եւ այնպէս համարեաց*
[10] *Ե > պահն*
[11] *Ե ի վեր գայ*
[12] *Ե > պահ*
[13] *Ե ժամ խեցգետինն երկու ժամ*
[14] *Ե ժամ] պահ (այսպես՝ այլուր)*
[15] *ԱԼԶ ի սոյն մտէ] խոյն մտանէ*
[16] *Ե > ընդ*
[17] *Ե հինգ] վեց*

գայ մինչեւ ի լոյսն[1], ի երկոտասան[2] պահ գիշերոյն, եւ լինի ընդ աւրն եւ ընդ գիշերն քսանչորս պահ։ **7** *Եւ դարձեալ Խոյն ելանէ, որ արեգակն ի ներս ի յինքն կա։* **8** *Այս մին կենդանակերպովս իմացի՛ր զերկոտասան[սն]։* **9** *Եւ զի հանապազ վեց կենդանակերպ ի վերոյ[3] երկրիս լինի, եւ վեց ի ներքոյ, եւ ընդ աւրն[4] եւ ընդ գիշերն մին շուրջ գայ երկինքն, եւ զԱրեգակն եւ զԼուսին եւ զաստեղս հետ ի՛ր[5] ի շուրջ ածէ։*

Թ. |155բ| ՈՐՊԻՍԻ՞ ՅԵՂԱՆԱԿԱՒ[6] ԳԻՏԱՍՑՈՒՔ ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԱՅԼ ԼՈՒՍԱՒՈՐՔԴ ԸՆԴ ԱՐԵՒԵԼՍ[7] ԵՐԹԱՆ

ԺԷ. **1** *Բայց գիտացիր[8] եւ զայս, զի[9] երկինքն յարեւելից յարեւմուտ շրջի, եւ Արեգակն, Լուսին եւ աստեղք[10] |156ա| յարեւմտից յարեւելս գնան, եւ առ ի շեղ ընդ հիւսիսոյ ի հարաւ իջանեն։* **2** *Եւ դարձեալ ի հիւսիս բարձրացեալ[11] ելանեն, եւ լուսաւորքդ[12] հակառակ երկնային շարժմանն[13]։* **3** *Զոր աւրինակ, մարդ մտէ ի գետ եւ ջուրն ի վեր գնայ։* **4** *Գետն յորում է[14] փութով անցանէ եւ գնայ եւ մարդն ջուր ի վեր[15] ի փոքր փոքր կարէ գնալ։* **5** *Կամ, զոր աւրինակ, թէ զմրջիմն դնես ի վերայ ջաղցացն ի քարին, յոր կողմանէ քարն ի շուրջ գայ, մրջիմն ընդդէմ եւ հակառակ նմայ ի մին՝ այլ[16] կողմն շարժի եւ գնայ, զի արագ շրջագայութիւնն երկանին[17] յետս գլէ զնա, եւ նա՝ ի հարկէ[18] ի մին այլ[19] կողմն ընթանայ, եւ երկանն իւր արագութեամբն տանի՛ զնա ընդ իւր շրջելով։*

ԺԸ. **1** *Ուսանիս եւ զայս ի լուսնէն, զի յորժամ նոր ծնունդ առնու ընդ[20]*

---

1 *Ե յառաւոտն] ի լոյսն*
2 *Ե ելանէ ընդ յարեւելս եւ Կշիռն մտանէ ընդ յարեւմուտս այսպէս, իմացիր եւ զայլսն] ելանէ... զերկոտասան*
3 *Ե > ի վերոյ*
4 *Տ տիւն*
5 *Տ զկնի իւր] հետ իր*
6 *Տ օրինակաւ] յեղանակաւ*
7 *Ե ...յաղագս թէ արեգակն եւ լուսին եւ աստեղքդ ընդ] թէ... ընդ արեւելս*
8 *Զ գիտելի է*
9 *Ե > զի*
10 *Ե եւ լուսաւորքն] արեգակն, լուսին եւ աստեղք*
11 *Ե > բարձրացեալ*
12 *Ե այսպես արեգակ եւ լուսին եւ աստեղք] եւ լուսաւորքդ*
13 *Ե շարժմանն շրջին*
14 *Ե > յորում է*
15 *Ե մարդն սակաւ սակաւ կարէ գնալ ջուր ի վեր*
16 *Ե ի միւս] ի մին այլ*
17 *Ա երկնաին] երկանին*
18 *Ե ակամայ] ի հարկէ*
19 *Ա ի միւս] ի մին այլ*
20 *Ե զհետ] ընդ*

մտանել արեգականն՝ յարեւմտից կոյսն երեւի, եւ աւր քան զաւր՝ դէպ յարեւելս առնէ զգնացսն։ **2** *Եւ երբ հնգետասան աւուր լինի, որ լրումն առնու*[1]*՝ յարեւելս երեւի։* **3** *Ասի ուսիր, թէ այն որ յամէն աւր կու ելանէ յարեւելից եւ մտանէ յարեւմուտս, այն երկինքն է, որ զնա ընդ իւր տանի եւ պատէ*[2] *զաշխարհ, այլ ինքն իւր գնացաւքն ընդ արեւելս ընթանայ։* **4** *Եւ այլ վկայ քան զարեգականն գնացքն, զի կենդանակերպքն ի կարգի եւ կից են ընդ միմեանս։* **5** *Խոյն եւ Ցուլն, Եկաւորն եւ այլն եւ Արեգակն կատարէ զԽոյն եւ ի Ցուլն մտանէ, եւ զՑուլն վճարէ եւ յԵկաւորն մտանէ։* **6** *Եւ այսպիսի տարին վճարէ զերկինքն եւ զերկոտասան*[3] *կենդանակերպսն։* **7** *Եւ այն զոր տեսանես, որ յամէն աւր կու ելանէ յարեւելից եւ մտանէ յարեւմուտս, այն երկինքն է, որ զնա կու բերէ*[4]*։*

Ժ. |156բ| ՅԱՂԱԳՍ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿԱՑ ՏԱՐՈՅՆ[5]

ԺԹ. **1** *Է՛ եւ այլ ազգ շարժումն եւ ընթացք լուսաւորացդ, որ ի հիւսիսոյ ի հարաւ իջանեն, եւ ի հարաւու ի հիւսիս ելանեն, եւ աստի լինի չորս յեղանակ տարոյն. գարունն եւ ամառն, աշունն եւ ձմեռն, զի չորս կողմ է աշխարհի՝ արեւելք եւ արեւմուտք, հիւսիս եւ հարաւ։*

Ի. **1** *Եւ արարեալ են իմաստունք զաշխարհ [երկո]տասան ասեն։* **2** *Եւ ի եւ*[6] *մէջ աշխարհի զներքին Հնդիկս ասեն։* **3** *Եւ ի Հունդուստան[այ] դէպ ի կողմ հարաւոյ եւթ բաժին յաշխարհէս ա՛յն է, որ անմարդաբնակ է եւ անշէն, զի սաստիկ ջերմ է եւ հրախառն աւդն, վասն որոյ այրեցեալ գաւտի ասեն, եւ ի Հունդուստանայ դեպի հիւսիս եւթ*[7] *բաժին։* **4** *Այս միջոցս է բարեխառն եւ առողջ հաւայ եւ մարդաբնակ եւ շէն աշխարհ։* **5** *Եւ որ յայս եւթանս յայն կոյս է*[8]*՝ ի կողմանս հիւսիսոյ, ի սաստիկ ցրտոյն եւ ի սառնամանեացն անբնակ է ի մարդկանէ եւ շտեմարան եւ տեղի է ցրտոյ եւ սառն աւդոց եւ հողմոց։* **6** *Եւ զի կողմ հարաւոյ հուր եւ ջերմ, տաւթ եւ տապ, վասն որոյ այն աշխարհին մարդիկ՝ յաւելի ջերմութենէն որպէս*[9] *արջասպով ներկած են, թխացած։* **7** *Եւ այժմ [զի գիտացիր]*[10] *զչորս կողմ աշխարհիս*[11]*, ապա իմացիր, զի այն տասներկու կենդանակերպն, որ յեր-*

---

[1] *Ե > որ... առնու*
[2] *Զ պատէ զնա*
[3] *Ե > երկոտասան*
[4] *Ե տանի ու բերէ*
[5] *ԳԵ > յաղագս չորս եղանակաց տարոյն, Զ > եղանակաց տարոյն*
[6] *Ա.Ժ. բաժին եւ] երկոտասան ասեն եւ ի եւ*
[7] *Տ չորս] եւթ*
[8] *Ե եւ որ այն սահմանացն յայն կոյսն է*
[9] *Ե յառաւել տաքութենէն թուխ են որպէս թէ*
[10] *ԱԶ > զի գիտացիր*
[11] *Ե > թխացած... աշխարհիս*

կինսն են[1], ի վերա աշխարհիս բաժանած են, զի յորժամ ի խոյն մտնէ Արեգակն, ուստպապ պահամալ լինին[2]։ **8** *Խոյն մէջ[3] երկնիցն է, եւ իր դիմաց կշիռն յարեւմուտս, վասն այն աւրն եւ գիշերն հաւասար լինի ի գարնանամուտն, եւ յայնմ հետէ տիւն յամէնայն աւր մասն մի աճէ, զի արեգակն բարձրանայ դէպի հիւսիս[4] |41ա| յամէն աւր մասն[5] մի երեք կենդանակերպովն խոյ, ցուլ, եկաւոր[6]։[7]*

ԺԱ. ՎԱՍՆ ԵԱՒԹ ԳԱՒՏԵԱՑՆ, ՈՐ ԱՍԵՆ ԵԱՒԹ ՊԱՐՈՒՆԱԿ ԵՒ ԿՈՉԻ ԵԱՒԹ ԵՐԿԻՆՔ[8]

ԻԱ. |4ա| **1** *Այս[9] եաւթ երկինքս մոլորականացն տեղի են[10]։* **2** *Եւ մոլորականքն ա՛յս են. Զոհալ, Մուշթարի, Մառեխ, Արեգակն[11], Զոհրա, Աւտարիտ, Լուսին[12]։* **3** *Յորժամ յերկրէս ի վեր իմանաս, առաջի գաւտին Լուսինն է, որ կոչի հոռոմերէն՝ Սիլինոս, ֆռանկերէն՝ Լունա[13], տաճկերէն՝ Ղամար եւ հայերէն՝ Լուսին[14]։* **4** *Եւ է մաւտ ի յերկիրս, քան զամենայն աստեղս, եւ իւր գնացիցն աստիճանքն նուրբ է եւ կարճ, զի իւր կամարն փոքր է, քան զամենայն, վասն ցածութեանն։* **5** *Կենայ |4բ| յամէն աստիճան Բ. (2) ժամ, պակաս Դ.(4) մասն։* **6** *Ի կենդանակերպն Բ.(2) աւր եւ կէս եւ քսան[15] յինն (29) աւր եւ կէսն վճարէ զամենայն երկինքն այլ եւ նոր ծնունդ առնու, եւ լինի նորէ ի նոր ԻԹ. (29) աւր եւ կէս։* **7** *Երկրորդ գաւտի, որի վերեւ Լուսնին, է Փայլածուն։* **8** *Հոռոմն Եռմի՛ս ասէ,*

---

1 *Ե եւ կենդանակերպքն որ երկինս են] ապա... են*

2 *ԱԵՋ ուաֆտ տապպա համալ լինին] ուստպապ պահամալ, Լ ուաֆտ տապ պահամալ*

3 *Ե ի մէջ*

4 *Ա.156բ էջից յետոյ թերթ ընկած. յաջորդող «յամէն աւր... ցուլ, եկաւոր» տողը՝ ձեռ. 682 (Ծ), 41ա էջից*

5 *Ե > յամենայն օր*

6 *ԵՏ խոյ, ցուլ, եկաւոր եւ գարնան եղանակ լինի զի սկսանել գարնան եղանակի արմատք եւ բոյսք*

7 *2173 (Ա) եւ 2992 (Զ). ձեռագրերից թերթեր են պակասում։ Ա ձեռագրի յաջորդ՝ 157ա էջում նոր նիւթ է սկսւում։ Բնագրի շարունակութիւնն ըստ 2174 ձեռագրի (Գ. 4ա-10ա), համեմատութեամբ 2189 (Ե) ձեռագրի եւ տպագրի (Տ)։ Տպագիրը եւ 3527 (Լ) ձեռագրի այս մասը համընկնում է 2174 ձեռագրի «Յաղագս գարնան եղանակի եւ ի կենդանակերպսն» ենթագլխին, որի հետ եւս համեմատւում է տպագրի այս գլուխը։ Ըստ էութեան տիեզերական մարմիններին նուիրուած այս ճառի համար հիմք ենք ընդունել 2173 եւ 2174 ձեռագրերը (երկուսն էլ ԺԴ. դ.)։*

8 *Ե Յաղագս թէ զինչ է եօթ գօտիքն որ ասի եօթ պարունակ եւ կոչի եօթ երկինք*

9 *Ե արդ] այս*

10 *Ե մոլորականաց տեղի է եւ այս է մոլորականքն*

11 *ԵՏ Շամս] արեգակն*

12 *ԵՏ ղամար] լուսին*

13 *Գ > ֆռանկերէն լունա*

14 *Ե > եւ... լուսին*

15 *Գ > քսան*

տաճիկն[1]՝ Աւտարիտ, եւ վճարէ զիւր երկինքն ի Ժ. (10) ամիսն[2]։ **9** *Երրորդ գաւտին Լուսաբերն է։* **10** *Հոռոմն Ափրոդիտէս[3] ասէ[4], տաճիկն[5]՝ Զոհրա։* **11** *Ի Ժ. (10) ամիսն վճարէ եւ սա։* **12** *Զորրորդ[6]՝ Արեգակն է. հոռոմն Իլիոս[7] ասէ, [ֆռանկն՝ Սալ], տաճիկն՝ Շամս[8]։* **13** *Հինգերորդ[9] վերեւ Արեգականն[10] Հրատն է. հոռոմն՝ Արէս, [ֆռանկն Մարոզ], տաճիկն՝ Մառեխ[11]։* **14** *[Վեցերորդ]՝ վերեւ Հրատին Լուսնաթագն է. հոռոմն՝ Զեւս, ֆռանկք՝ Յուպիտեռ[12] տաճիկն՝ Մուշթարի[13]։* **15** *[Եւթներորդ], վերեւ Լուսնթագին, Երեւակն է, հոռոմն՝ Կռոնոս ասէ, տաճիկն՝ Զաւհալ[14]։*

ԺԲ. ՅԱՂԱԳՍ ԱՒԴՈՅՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀՈՂՄ[15]

ԻԲ. **1** *Աստուծոյ աքանչելի արուեստն զմի բնութիւն իրաց ի բազումս բաժանէ, եւ բազում անուամբք կոչին[16], զի ի Դ. (4) տարերացն մինն քամին է, որ աւդ ասեմք։* **2** *Եւ այս մինս ցեղացեղ |5ա| անուանք ունի, զի ասի հողմ, քամի եւ աւդ[17]։* **3** *Եւ աստի[18] լինի ամբն, ձիւնն, եղեամն, աղեղն՝ որ իջանէ[19], որոտն շանթիւքն, ցոլմունքն, փայլակն եւ այլ բազում իրս։*

---

[1] *ԼՏ հոռոմերէն եռմիս ասի, դաղմատերէն մէրգուռուշ, տաճկերէն*
[2] *Ե եւ սա վճարէ երկինքն յեօթ ամիսն*
[3] *Գ ափոդիկէս*
[4] *Տ ասէ ֆրանկն վէնուս վեյերուս*
[5] *Ե եւ պարսիկն] տաճիկն (այսպէս՝ այլուր)*
[6] *Ե չորրորդ գօտին*
[7] *Ե լիոս*
[8] *Տ ելինոս ասէ ֆռանկն սօլ, տաճիկն շամս եւ 30 օր կենայ ի կենդանակերպն*
[9] *Գ > հինգերորդ*
[10] *Տ > վերեւ արեգականն*
[11] *ԼՏ քառասուն օր կենայ ի կենդանակերպն վեցերորդ վերեւ, Լ > վեցերորդ*
[12] *Լ ֆրանգք մառոզ] յուպիտեռ, Տ զեւս ասէ ֆռանկն իւպիթեռ, տաճիկն՝ մուշթարի, ի մի աստիճանս երկոտասան օր կենայ։ Եօթներորդ՝ վերեւ լուսնթագին երեւակն է, հոռոմն կռոնոս ասէ, ֆռանկն՝ սաթուռնոս, տաճիկն՝ զօհալ. սա ի մի աստիճանն կենայ 30 օր եւ ի 30 տարին պատէ զերկոտասան կենդանակերպսն, Տ հինգերորդ՝ հրատն արեւս ասէ, ֆռանկն մարոշ, տաճիկն մառեխ*
[13] *Լ մուշթարի ի մի աստիճան .ժբ. օր կենայ*
[14] *Ե կռօնոս ասէ եւ պարսիկն զօհալ, սա երկու ամ ու կէս ի կենդանակերպսն... (անընթեռնելի) ամն պարունակէ զամենայն բովանդակ լուսնթագն մի ամ կայ եւ ի 12 ամն պարունակէ, արեգակն 30 օր կայ եւ մի ամ պարունակէ, լուսաբեր 26 օր կայ եւ ի 10 ամիսն պարունակէ, փայլածուն 18 օր եւ 7 ամիսն պարունակէ, լուսին 2 ժամ պակաս 4 մասն եւ յերկու օր ու կէսն պարունակէ զամէն կենդանակերպն, Լ լօհալ, սա ի մի աստիճան կենայ .լ. ամի .Լ. դարձն պատէ զտասներկու կենդանակերպաւն*
[15] *Ե > որ կոչի հողմ*
[16] *Ե > եւ ... կոչին*
[17] *Ե եւ զանազան անուանք ունի զի ասի քամի հողմ եւ օդ] եւ օդ*
[18] *Գ > աստ*
[19] *Գ > որ իջանէ*

ԺԳ. ԹԷ ՈՒՍՏԻ ԼԻՆԻ ԱՅՍ ՅԱՒԴՆ ԵՒ ՈՐՊԷՍ

ԻԳ. 1 *Երկու գոլոշիք, որ ելանեն յերկրէս ի վեր, որ ասեն Պուխար*[1]*, եւ ի վեր բարձրանան նաւար եւ անտես աչաց, մինն գէճ է եւ միւսն՝ չոր։* **2** *Այն որ գէջն է՝ յաղբիւրաց, ի գետոց, ի ջրոց*[2] *ելանէ, եւ այն որ ցամաքն է, ի չոր եւ ի ցամաք գոլոշե[ա]ցն լինի եւ ի հողմոցն, եւ որպէս զծուխ վերանայ։* **3** *Այն, որ է գէջն, անտի լինի բալն, սառնամանիք, ամպք, անձրեւք*[3]*, ձիւն, կարկուտք։* **4** *Եւ այն, որ չոր շոգին*[4] *է, որ է բուխարն յաշխարհէս, անտի լինի*[5] *ազգի ազգի հողմք, որոտմունք, փայլատակմունք*[6]*, կայծակն, հրձգութիւն եւ այլ ինչ, որ սոցին նման է։*

ԺԴ. ՁԻՆՁ Է ԲԱԼՆ

ԻԴ. 1 *Բալն ի զաւրութենէ ամպոցն է, զի յորժամ աւդն թանձրանայ՝ ի բալ դառնայ։* **2** *Եւ բա|5ր|լն՝ քան զաւդն թանձր է եւ քան զամպն՝ նաւար, եւ ունի սակաւ մի՛ գիջութիւն, որ խոնաւեցուցանէ զերեսս երկրի, զոր կոչեմք եւ մառախուղ։*

ԺԵ. ՁԻՆՁ Է ՈՐՈՏՆ ԵՒ ԿԱՅԾԱԿՆ

Իե. 1 *Յորժամ հողմ, որ է քամին*[7]*, բռնութեամբ հնչէ եւ ի մէջ ամբոցն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառէ եւ լինի ճա[յ]թմունք ի պատառմանէն, զոր եւ որոտ անուանեմք։* **2** *Եւ ի հողմոյն յիրար շփելոյն եւ ի ճնշելոյն՝ հուր փայլէ, զայն փայլատակմունք ասեն եւ կայծկտալ*[8]*, զի հուր յամենայն արարածս խառնէ եւ աւելի՝ յաւդդ*[9]*։* **3** *Եւ երբ հատանի հուրն յամպոյն, թէ թանձր ելանէ՝ յերկիր անկանի*[10] *եւ վնաս առնէ, եւ թէ նաւար ելանէ՝ ոչ թողուն աւդքն յերկիր, այլ ընդ աւդն ցնդի անվնաս։*

ԺԶ. ՁՄԵՌՆ ՈՐՈՏ Է՞Ր ՈՉ ԼԻՆԻ[11]

Իզ. 1 *Վասն զի ձմեռն ամբն նաւարցեալ է, զի ձմեռն հիւսիսային հողմն հնչէ եւ այն նաւարցնէ զամպն, եւ ստերջ դառնայ ամպն, զի հարաւային աւդն է, որ թանձրացնէ զամպն։*

---

[1] *ԵԼՏ բուխար*
[2] *Ե գետոց, ի ծովէ եւ յամենայն ջրոց*
[3] *Գ > անձրեւք*
[4] *Ե այն չոր գոլորշին որ է, Տ գոլորշին] շոգին*
[5] *Ե յերկրէ աստի] յաշխարհէս անտի*
[6] *Ե > փայլատակմունք*
[7] *Ե > որ է քամին*
[8] *Ե կայծակ տալ.*
[9] *Ե եւ այլ առաւել յօդն*
[10] *Ե օդքն որ յերկիր անկանի*
[11] *Ե վասն է՞ր ձմեռն որոտ չլինի, ԼՏ լինի եւ կայծ*

ԺԷ. |6ա| ՅԻՆՉ ՊԷՏՔ Է ՈՐՈՏՆ[1]

Իէ. 1 *Վասն զի ի թանձրութենէ ամպոյն[2] եւ ի բռնութենէ հողմոյն[3] չկարէ անձրեւն յամպոյն ի վայր հոսել, իսկ ի գոռալն եւ ի պատառիլն թուլանայ հաւասար եւ արկանէ զանձրեւն: 2 Եւ, զոր աւրինակ, մայր զմանուկն յորժամ ծնանի՝ մեծաձայն գոռայ[4], զի զհոգին յինքն քաշէ[5], որ զշնչական երակքն նեղէ եւ զմանուկն ի վայր բերէ եւ ծնանի: 3 Նոյնպէս եւ երկիր սառուցեալ եւ պաղեալ ի ձմեռնային ժամանակն, եւ պնդեալ զբնութիւն հողոյն, վասն այնորիկ պիտոյ է ձայն որոտալոյն, զի թուլացի բնութիւն հողոյն եւ բոյսք եւ սերմանք յերկրէ ի վեր ծնանիցին, եւ ծառքն ծաղիկս փթթեսցեն, եւ ամենայն ի ձմեռնային կապանացն[6] արձակին:*

ԺԸ. ՎԱՍՆ ՁԻՒՆԻ ԵՒ ԱՆՁՐԵՒԻ

Իը. 1 *Յորժամ արեգակն ի հարաւային կողմ ցածանայ ի խոնարհ[7], յայնժամ հիւսիսային հողմն զաւրանայ[8] եւ զաւդն յիրուր խառնէ եւ թանձրացնէ, որ ամպ լինի եւ կտրատի եւ ի |6բ| վայր հոսի սպիտակ եւ փրփրատեսակ, զի ցուրտ քամին զնաւսրութիւն ջրոյն այսպէս առնէ եւ թանձր[9] մեծ եւ մեծ թափի ի վայր, այն որ տաղտարա՛փ ասեն: 2 Եւ որ նաւսր է եւ մանր, այն ձիւն[10] կոչի: 3 Իսկ ի գարնան ժամանակի[11] եւ յամառն եւ յաշունն աւդն ժողովէ զջուրն ի ծովէ եւ ի գետոց, եւ առեալ յերկրէ ի վեր բարձրանայ: 4 Եւ ի քաջ ամբո[ց] թաւթափմանէ լինի անձրեւ, զի ի գարնան ժամանակն աւդն պարարտանայ ի գիջութենէ ջրոյն եւ յարեգականն ջերմութենէն թանձրանայ, զի հողմ[12] ի ներքոյ անցեալ՝[13] առեալ տանին: 5 Եւ հողմոյն գոռալովն եւ որոտալովն աւդն պատառի եւ թուլանայ[14], եւ զանձրեւն ի վայր հոսէ:*

---

[1] *Լ եւ թէ յինչ, Եվ որոտալն*
[2] *ԵՏ > ամպոյն*
[3] *Գ > ի բռնութիենէ հողմոյն*
[4] *ԵվՏ գոռայ եւ վասն այն գոռայ զի*
[5] *ԵՏ քարշէ*
[6] *Ե կապանացն ի բաց:*
[7] *Ե > խոնարհ*
[8] *Լ կողմն զօրանայ*
[9] *Տ երբ թանձր*
[10] *Ե անձրեւ] այն ձիւն*
[11] *Ե յեղանակս] ժամանակի*
[12] *ԵՏ թանձրանայ եւ խոնարհի ի ծովն եւ առեալ բարձրանայ, զի հողմն*
[13] *Լ մնացեալ] անցեալ*
[14] *Գ > եւ որոտալովն, Ե օդն թուլանայ եւ պատառի եւ զանձրեւն*

ԺԹ. ՎԱՍՆ ԿԱՐԿՏԻ

ԻԹ. 1 *Կարկուտ լինի ի սաստիկ եւ ի ցուրտ քամոյն*[1]*, որ շնչէ ի հիւսիսոյ կողմանէ եւ ի սաստիկ շփմանէ*[2] *հողմոյն*[3] *ոլորելով՝ բոլորէ եւ պնդէ զնաւսրութիւն ջրոյն եւ շաչելով յերկիր թափէ*[4]*։* |7ա| **2** *Է՛ որ ուժով եւ խի՛ստ եւ է՛ որ նուազ։* **3** *Եւ այս լինի ի խրատ եւ ի պատուհաս մեղուցելոց*[5]*։*

Ի. ՈՒՍՏԻ՞ ԻՑԷ ՑԱՒՂ ԵՒ ԵՂԵԱՄՆ

Լ. 1 *Լուսաւորքդ աւդով զջուրն ծծեն եւ ի վեր քարշեն։* **2** *Երբ արեգակն ծագէ՝ թուլացնէ զաւդն եւ այն, զոր մնացեալ է յաւդն՝ ի գետինն իջանէ եւ ցաւղ կոչի*[6] *այս։* **3** *Իսկ ի ցուրտ ժամ*[7] *թերասառուցց լինի եւ կոչի եղեմն։*

ԻԱ. ՁԻՆՁ Է ԱՂԵՂՆ[8]

ԼԱ. 1 *Պատճառ աղեղն իջանելոյն*[9] *գիջութիւն աւդոյն եւ ջերմութիւն արեգականն է, զի ի փարատել անձրեւին՝ գիջութիւնն, որ յաւդն է մնացեալ եւ արեգականն ջերմութիւն յիրար խառնին։* **2** *Աւդոյն գիջութիւնն ի ներքեւ*[10] *է եւ՛ արեգականն նշուլքն ի վերեւէ միաբանին*[11]*՝ եւ նաւսրութիւն աւդոյն գոյնագոյն եւ երբն երբն*[12] *երեւի կամարաձեւ, որպէս զերկնային զգունդն*[13]*, զի գոյն երկրիս եւ կանաչագեղ բուսոց եւ ջրոց եւ հրոյ յիրար խառնին եւ այնպէս երեւին։* **3** *Թէ մի է գաւտին*[14]*, որ երեւի, նշան դադարելոյ* |7բ| *անձրեւին է եւ պարզելոյ, եւ թէ Բ. (2) երեւի յայլեւայլ դէհ*[15]*, զյորդ եւ զսաստիկ անձրեւ նշանակէ։* **4** *Եւ ի սկզբանէ աշխարհի էր*

---

1 *Ե օդոյն] քամոյն*
2 *ԼՏ փչմանէ*
3 *Ե եւ ցրտաշունն եւ յառաւել հնչմանէ հողմոյն*
4 *Ե շաչելով թափէ երկնիցն*
5 *Ե վասն մեղաց] մեղուցելոց*
6 *Ե կոչի որ է շաղ*
7 *Ե ժամանակն*
8 *ԵԼՏ աղեղն որ իջանէ, ԼՏ որ ասեն տէրունի գօտի*
9 *Ե աղեղանն որ իջանէ այս է*
10 *Տ ի ներքուստ] ի ներքեւ*
11 *Տ ի վերուստ միաբանին եւ ի*
12 *ԼՏ եւ երփներփն] եւ երբն երբն*
13 *Ե զգոյն] զգունդն*
14 *Ե մէկ է կամարն] մի է գօտին, ԼՏ մէկ մի է*
15 *Ե > դէհ*

սա, զի հետեւանք է տարերցս, որպէս է ծուխն հետեւանք[1] հրոյ, որ քամի՛ ի գէջ խոնաւութիւնն ի հրայի[2] կրակոյն եւ ապա յստակի բոց հրոյն։ **5** *Վասն այսորիկ զսա ետ Աստուած նշանս ի յորդութեան անձրեւացն դադարման[3]։*

ԻԲ. Թէ ՁԻՆՁ Է ՀՈՒՐՆ, ՈՐ Ի ՅԵՐԿՆԻՑ ԱՆԿԱՆԻ ԵՒ ՔԱՆԻ՞ ԱԶԳ ԵՆ

ԼԲ. **1** *Է՛ ազգ մի, որ շանթիք ասեն, որ ի հրեղէն երկնիցն կտրատի[4] եւ ի վայր հոսի եւ չդադարէ ուրէք, այլ յորժամ անկանի[5]՝ ծակէ զթանձրութիւն երկրի եւ զոր ինչ գտանէ՝ այրէ[6] եւ ընդ թափն ի վա՛յր անցանէ ի ներքի կիսագունդն[7]՝ յիւր ազգակիցն, ուստի անկեալ է։* **2** *Եւ է ազգ մի, որ յորժամ ի սաստիկ ամպոյն[8] հողմով[9] ծովն խառնակի, որ ատակ[10] ծովոյն, եւ աւազն յերեսն շրջի, եւ աւդն առնու զաւազախառն ջուրն եւ ի վեր վերացնէ ջրովն եւ տանի ի բա|ձա|ր՝ եւ ի հրախառն եւ ի տաք աւթն շփէ[11] եւ վառէ որպէս զհուր եւ ի վար թափէ։* **3** *Եւ յորժամ յերկիր հասանէ, յոր ինչ դիպի՝ այրէ եւ անցանի եւ մնայ որպէս երկաթ ի քափշա[12]։* **4** *Եւ է ազգ մի, որ ասեն թէ աստղ թռաւ։* **5** *Եւ աստղն ո՛չ թռչի, այլ յորժամ ընդ շրջագայ պարունակսն երկնից շնչէ քամի ինչ[13] եւ սաստիկ [եւ] արագապէս անցանէ ընդ որ գնայ, զաւդ, որ տաք է եւ հրախառն, որպէս ձոր, պատառէ եւ երկայնութեամբ երեւի, եւ թուի[14] թէ աստղ թռաւ։* **6** *Եւ է ազգ մի, որ ի պատառել աւդոյդ ի սաստիկ հողմոյն վերին լոյսն հրակերպ երեւի, եւ աւդն՝ որ պատառեցաւ՝ յիրուր գալն եւ ի կցիլն ծածկի դարձեալ, եւ մենք զայսոսիկ ասեմք[15], թէ աստղ թռաւ։* **7** *Նոյնպէս եւ այն կայծկտալ ասի[16], զի յորժամ ամպն պատառի եւ ի գոռալոյն որոտն լինի եւ յիրուր շփելոյն կայծակն լինի[17]։* **8** *Զի որպէս հրահան*

---

[1] *Գ հետերթանք*
[2] *Ե հրոյն որ ելանէ գէջ խոնաւութիւն ի հրային] հրոյ... ի հրային*
[3] *Ե եդ Աստուած զնա յորդութիւն եւ ի դադարումն] ետ... դադարման*
[4] *ԵԼՏ կոտորատի*
[5] *ԼՏ յերկիր անկանի*
[6] *Ե > այրէ*
[7] *Ե անցանէ եւ գնայ մինչեւ ի յիւր] ի... կիսագունդն*
[8] *Ե ամպոցն*
[9] *Ե > հողմով*
[10] *Ե եւ յատակ*
[11] *ԼՏ փչէ եւ շփէ*
[12] *Ե > եւ անցանի... քափշա*
[13] *ԼՏ > շնչէ քամի ինչ, Գ > քամի ինչ*
[14] *Ե եւ այնպէս թուի, Տ որ պատառեալ*
[15] *Ե յիրար գայ եւ կցի եւ զայս ասեն] յիրուր... ասեմք*
[16] *Ե որ կայծ տալ ասեն*
[17] *Ե ի հողմոյն եւ գոռայ եւ յիրար շփելոյն կայծակն լինի] ի գոռալոյն... լինի*

երկաթն, որ զկայծքարն բախէ՝ ելնէ ձայն եւ էլ|8բ|նէ հուր, նոյնպէս եւ երբ հողմն զամբն պատառէ, [ի] պատառեալն զորոտն առնէ եւ հողմն յամբոյն զհուրն հանէ, եւ ի տեղի, ուր անգանի՝ վնասէ։ 9 *Յառաջ որոտն է եւ ապա կայծակն, բայց մենք յառաջ զհրոյն լուսն տեսանեմք, եւ ապա զորոտն լսեմք*[1]*, զի աչքն այլ սուրէ, քան զականջն*[2]*, եւ ակն զհեռուն տեսանէ եւ ականջն զմատն լսէ*[3]*։* 10 *Վասն այնորիկ զլոյսն ի հեռուստ տեսանեմք, եւ յորժամ ձայնն ի վայր հասանի [եւ] մատի ի մեզ, եւ ապա*[4] *ականջն լսէ։* 11 *Եւ այս, յորժամ ի պարզ ժա՛մն լինի, թռուցած*[5] *աստղ ասեմք։*

ԻԳ. ՉԻՆՉ Է ԲԱԿ ԼՈՒՍՆԻՆ[6]

ԼԳ. 1 *Թանձր աւդ, որ ունի բոլոր զճառագայթս լուսնին եւ նշուլքն ի դուրս ելեալ ընդ թանձր աւդն՝ բոլորակ լինի, եւ է նշանակ ամբոց*[7]*։*

ԻԴ. ՅԱՂԱԳՍ ԳԱՐՆԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԵՒ Ի ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՍՆ

ԼԴ. 1 *Խոյ, Յուլ, Եկաւոր՝ գարնան յեղանակ լինի*[8]*։* 2 *Արմատք |9ա| բոյս արձակեն, մարգք զուարճանան, ծաղիկք*[9] *պայծառանան եւ անասունք եւ թռչունք*[10] *ի ծնունդս գան։* 3 *Եւ այս երեք կենդանակերպովս գնալով ընդ հիւսիս եւ ի վճարել գարնան յեղանակին, մտանէ արեգակն ի խեցգետինն [տ]իրէ սորա տանն*[11]*, եւ սկիսբն լինի ամռան եղանակին։* 4 *Եւ լինի այնժամ*[12] *աւրն ԺԵ. (15) ժամ եւ գիշերն Թ. (9)։* 5 *Եւ յամելով*[13] *ի հիւսիսակողմն՝ երեք ամիս*[14] *կենդանակերպովն, որ է ի խեցգետինն, Առիւծ, Կոյս, առնէ զեղանակ ամարան, յամէն աւր մասն մի ցածանալով, եւ զի ի*

---

1 *Գ > եւ ապա զորոտն լսեմք*
2 *Ե սուր տեսանէ*
3 *Ե > եւ ակն... լսէ*
4 *Գ > ապա*
5 *Ե թռած*
6 *Ե զինչ է, որ լուսինն բակ առնու*
7 *ՄՄ 3527 (Լ) ձեռագիրը եւ տպագիրն այս տողով աւարտւում են։ Յաջորդ ենթագլուխը դրուած 2174 (Գ) ձեռագրի «Յաղագս գարնան եղանակի եւ ի կենդանակերպսն» վերնագրով եւ հետեւեալները ներառուած է (սկիզբը թերի) տպագրի 13րդ էջում «Յաղագս չորս եղանակաց տարոյն» ենթավերնագրի տակ։ 2189 (Ե) ձեռագիրը սկզբից չունի «Յաղագս գարնան եղանակի եւ ի կենդանակերպսն» գլուխը, այն սկսվում է 2173 (Ա) ձեռագրի «Յաղագս չորս եղանակաց տարոյն» գլխից եւ համեմատւում է այստեղ։*
8 *Ե եւ յորժամ եղանակն լինի, Լ զի ի սկսանել գարնան եղանակի արմատք եւ բոյսք արձակին*
9 *Ե բոյսք] ծաղիկք*
10 *Գ > եւ թռչունք*
11 *Ե > տիրէ... տանն, Գ սարատանն*
12 *Ե յայնմհետէ] այնժամ, Լ յայնմ օրն*
13 *Ե հաւելով] յամելով*
14 *Ե > ամիս*

հիւսիսակողմն է, յայնժամ արեգակն[1] *զցուրտն հալածէ ի ներքոյ երկրի, եւ զաւդս, որ ի վերայ երկրի՝ ջեռուցանէ եւ զխոնաւ գիջութիւնն, որ ի ներքոյ երկրի է՝ ծծէ, եւ զսերմանիս եւ զպտուղս պարարեալ պնդէ եւ հասուցանէ։* **6** *Եւ ի վճարել զամարան, կենդանակերպսն |9բ| մտանէ ի Կշիռն եւ սկսանի այնուհետեւ աշունն, եւ լինի քաղցրախառն եւ միջակ աւդն։* **7** *Եւ դարձեալ հաւասարին տի՛ւն եւ գիշե՛րն, եւ ապա՝ փոքր փոքր ամենայն աւուր*[2] *մասն մի խոնարհի եւ իջանէ*[3] *ընդ հարաւ։* **8** *Եւ փոքրանայ աւրն եւ ցրտանայ աւդն եւ գայ մտանէ ի յեղանակս ձմերան։* **9** *Եւ հեռանալ արեգականն ընդ հարաւ, ի*[4] *ցածանալն՝ գիշերք մեծանան եւ հիւսիսային հողմն զաւդն սառուցանէ եւ հնչեն հիւսիսային*[5] *սառնամանիքն, եւ լինի ձիւնաբեր բերմունք*[6]*։* **10** *Եւ այս վասն այնորիկ լինի, զի արեգականն ջերմութիւնն ի հարաւէ՛ ի ցած կոյսն*[7] *[աշխարհի]*[8] *[եւ] հիւսիսային հողմն*[9] *զաւրացել՝ հալածէ զհարաւային ջերմութիւն*[10]*, ի ներքոյ երկրի արգելեալ փակէ եւ սառուցեալ պնդէ զերեսս երկրի։* **11** *Վասն այնորիկ աղբիւր ակունքն ձմեռն տաք եւ ջերմն բղխէ, զի արեգականն ջերմութիւնն եւ հարաւային հրոյն*[11] *զաւրութիւնն ի ներքոյ երկրի մտել եւ ջեռուցել զբնութիւն ջրոց, |10ա| որպէս եւ յամարային եղանակն, որ արեգակն ի հիւսիս բարձրանայ, զցուրտն հալածէ եւ ի ներքս երկրի փակէ։* **12** *Վասն այնորիկ աղբիւրք սառն եւ ցուրտ բղխեն։* **13** *Յորժամ այս երեք կենդանակերպովս կատարէ զձմեռն, որ է Այծեղջիւրն, Ջրհոսն եւ Ձուկն, մա՛ն մա՛ն աճէ եւ բարձրանայ եւ հասանէ ի մէջ երկնիցն եւ ի Խոյն [մտանէ]*[12]*, որ եւ գարուն լինի։* **14** *Եւ այսպէս ծանիր զշրջանն երկնից եւ զգնացս լուսաւորացդ եւ փոփոխումն յեղանակացտ։* **15** *Եւ Աստուծոյ փառք այժմ եւ յաւէտ*[13]*։*[14]

---

[1] *Ե յայնմ աւուրքն արեգակ*
[2] *Ե յամենայն օր*
[3] *Ե ցածանայ*
[4] *Ե > հարաւ ի*
[5] *ԳԼ > հողմն... հիւսիսային*
[6] *Ե հիւսիսային կողմն զօդն սառուցանէ եւ հնչեն հիւսիսային սառնամանիքին եւ լինի ձմեռն եւ ձիւնաբեր բերմունք] հիւսիսային... բերմունք*
[7] *Տ դիհն] կոյս*
[8] *Գ > աշխարհի*
[9] *Ե այսորիկ ի հարաւէ եւ ի ցած կողման աշխարհի եւ ի հիւսիսային հողմն] ի հարաւէ... հողմն*
[10] *ԵԼ Տ ջերմ օդն] ջերմութիւն*
[11] *Ե հողմոյն] հրոյն*
[12] *Գ > մտանէ*
[13] *Ե եւ օրհնեա զԱրարիչն Աստուած ամեն] եւ յաւետ, Լ Տ > եւ Աստուծոյ... յաւետ*
[14] *«Յաղագս երկնային շարժմանն» ճառի գլուխներն ըստ՝ Մ 2173 ձեռագրի էջերի. [Նախաբան]՝ 150ա, Ա.՝ 151ա, Բ.՝ 152ա, Գ.՝ 152բ, Դ.՝ 153ա, Ե.՝ 153բ, Զ.՝ 154ա, Է.՝ 154բ, Ը.՝ 155բ, Թ.՝ 155բ, Ժ.՝ 156բ. ըստ Գ 2174 ձեռագրի էջերի. ԺԱ.՝ 4ա, ԺԲ.՝ 4բ, ԺԳ.՝ 5ա, ԺԴ.՝ 5ա, ԺԵ.՝ 5բ, ԺԶ.՝ 5բ, ԺԷ.՝ 6ա, ԺԸ.՝ 6ա, ԺԹ.՝ 6բ, Ի.՝ 7ա, ԻԱ.՝ 7ա, ԻԲ.՝ 7բ, ԻԳ.՝ 8բ, ԻԴ.՝ 8բ։*

ԺԴ.

|157ա| ՅՈՀԱՆԻՍԻ ԵԶՆԿԱՑԵՑԻՈՅ Ի ԺԷ. ՍԱՂՄՈՍՆ. «ՍԻՐԵՑԻՑ ԶՔԵԶ ՏԷՐ». Ի ԲԱՆԻՑ ԺՈՂՈՎԵԱԼ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Այս քարոզում Երզնկացին ինքնության է առնում համընդհանուր սիրո քրիստոնեական գաղափարը, որտեղ խնդրո առնչությամբ տրվող բացատրությունները ստանում են գործնական որոշակի իմաստ: Նկատելով, որ սերն առ Աստված իմացական է՝ «գիտնական» եւ միշտ անփոփոխ, նույն կերպ ընկալելի, նա կարեւորում է սերն առ մարդը, քանզի առանց դեպի մարդը ունեցած «գործնական» սիրո, սերը մեռած է, անիրական: Սակայն «գործնական» սերը առ մարդը փոփոխական է, նա է, որ ամեն վայրկյան փոփոխվող իրադրության մեջ թելադրում է գործել: Մինչդեռ իրական կյանքը մարդկային տարբեր գաղափարների պայքարի պատմություն է, ուստի նախ պետք է սիրել յուրայիններին՝ քրիստոնյաներին, ապա՝ ողջ մարդկությանը:

Սակայն Երզնկացին, որ շատ լավ հասկանում էր մարդկային բարդ փոխհարաբերությունները եւ իր բազմաթիվ գործերում այն միտքն է անցկացնում, թե այդ հարաբերություններն են, որ «աննիշխան» եւ «ի ծնդէ հաւասար» մարդկանց բաժանում են տիրողների եւ ենթակաների, չէր կարող մարդկային սերը թեկուզ քրիստոնեական շրջանակներում միատար համարել:

Սերը մարդու նկատմամբ նա բաժանում է երեք տեսակի. «զորդիականն, զվարձկանն եւ ծառայականն» (ՄՄ 2173, 161ա): Ընդ որում, որդիական սերը բնական է համարում, որովհետեւ այն պարտադրված չէ, այլ թելադրված է միայն դեպի ծնողն ունեցած հարգանքով: Սիրո մյուս տեսակներն են «վարձկան» կամ «կարեւորք», որ աղքատները տածում են հարուստների կամ հիվանդները բժիշկների նկատմամբ եւ, վերջապես, «ծառայական» կամ «հարկատրի» (ՄՄ 2173, 161բ), որ իշխանութեան ներքո եղողները դեպի իշխաններն ունեն եւ փոքրերը՝ մեծամեծերի հանդեպ:

Երզնկացին, որ իր ճառերում եւ քարոզներում հաճախ է անդրադառնում արդարության խնդրին, գտնում է, որ հողեղեն ծնունդ մարդ արարածը չի կարող լինել անսխալական, որ հատուկ է միայն Արարչին, այդ իսկ պատճառով կարեւորում է ներողամտություն մարդու նկատմամբ, միաժամանակ կոչ անելով մեղանչողներին իրենց հետագա գործունեությամբ լինել միշտ արդարախոս, ինչը, ի վերջո, մարդուն կդարձնի արդարագործ, եւ նրա համար փրկության դուռ կբացվի այս եւ հանդերձյալ կյանքում: Բարեգործության երեք հիմնական տեսակ է նշում Երզնկացին, որոնք հատուկ են ինչպես Աստծուն, այնպես էլ մարդուն՝ վանել թշնամու զորությունը, հզորացնել իրենց վստահողներին, անիրավացի զրկվածներին արդարացնել եւ վերադարձնել նրանց հասցված վնասը: Այնուհետեւ խստորեն պախարա-

կում է բոլոր նրանց, ովքեր ոչ միայն իրենց ազգակիցների եւ արյունակիցների, այլեւ իրենց ծառայակիցների նկատմամբ չեն վարվի գթասրտությամբ եւ սիրով:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 157ա-68ա), 2992 (Ձ. 111ա-119բ), 2854 (Ճ. 133բ-136բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Երանական եւ անսահման բնութեանն Աստուծոյ անկարաւտ եւ միայնոյ բարոյն պատկեր եւ կերպարան բարոյ բանաւոր կենդանիս այս մարդ, բաղձանաւք սիրոյ բնաւորեալ ունի հպիլ յանհասանելիսն՝ յարափափագ տենչմամբ:* **2** *Մանաւանդ Սկզբնատպին ամենայն բարեաց, առ որ զնմանականն ունի ազգակցութիւն, կատարմամբ լինելութեանն եւ յուսով, զոր եւ լինելոցն եմք, ըստ ճշմարիտ սիրոյն սիրելոյ եւ աստուածաբանին բանի:* **3** *Եւ թէպէտ բաղձանք սիրոյն բնաւորեալ ունի միաւորական իմն եւ շարակալու զաւրութիւն, այլ անհասութիւն ըղձալոյն առաւել յորդէ զփափագ տոչորման ծարաւոյն. ըստ որում ասէ, որ այսմ ճաշակաց*[1] *էր ցանկացեալ մարգարէն Դաւիթ. «Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած. ե՞րբ իցէ, զի յագեցայց յերեւել երեսաց փառաց քոց (տե՛ս Սղմս. ԽԱ. 3):* **4** *Եւ յայսմանէ գիտասցուք ո՛չ հասու գոլ մարդկային մտաց անհասանելի բնութեանն Աստուծոյ:*

Բ. 1 *Եւ վասն է՞ր արար զինքն անհասանելի:* **2** *Ո՛չ յաղագս նախանձու մախանաց, քանզի հեռի է յաստուածային բնութենէն մախանք՝ յանախտ, եւ միայն բարւոյն եւ սիրականէն, ո՛չ զի անհասանելեաւն զպատուականութիւն ունիցի եւ զպաշտաւն, այլ յաղագս բազմ|157բ|առրակի պատճառաց իմաստասիրականաց, գիտելիք միայն մերձաւորաց Աստուծոյ, որք եւ անքննելի նորա դատաստանացն եղեն հայեցողք:* **3** *Թերեւս արդեաւք, զի դիւրագոյն գտանելովն՝ դիւրագոյն լիցի ստացուածոյն ի բաց անկումն, քանզի սիրէ աշխատութեամբ ստացեալն մանաւանդ մնալ:* **4** *Իսկ դիւրաւ ստացեալն ի բաց ոստանել վաղավաղակի, որպէս թէ դարձեալ առնուլ կարողութիւն է:* **5** *Եւ այս բարեգործութիւն ի մեզ հաստատի, զի մի զանկելոյ զԱրաւսեկին կրիցեմք մեք զկիրս, վասն զի բովանդակ լոյսն տեսանելոյ յանդիման առաջի Տեառն ամենակալի, ընդվզելն եւ յանկանկելն յամբառնալոյն, անկումն, որ քան զամենայն ողորմելի է:* **6** *Եւ դարձեալ զի առաւել ինչ փոխարէնս ընկալցուք յամենառատ պարգեւատուէն՝ փոխանակ աշխատասիրութեանն եւ պայծառ վարուցն, որք աստէն մաքրեալքս եւ երկայնամիտ իցեն*[2] *առ փափագելին:* **7** *Վասն զի*

---

[1] *Ձ ճաշակեաց*

[2] *Ա երկայնամտից են*

անհասութեամբն սքանչելի երեւի, եւ սքանչելի երեւեալ՝ առաւել եւս փափաքելի է, եւ փափագելի լեալ՝ սրբէ, իսկ սրբեալն աստուածատեսս գործէ. եւ այսպիսիք լեալ՝ իբրեւ ընդ ընտանիս խաւսի։

Գ. 1 *Համարձակի իմն զաւրաւորագոյն բանս Աստուած ընդ Աստուածս միաւորեալ եւ ծանուցեալ, եւ այնքան հաւասարապէս, որքան ճանաչէ զծանուցեալսն։* **2** *Որպէս գովելին ի գումարս ամենայն մարգարէիցն եւ ցանկալին ի դասս թագաւորաց, բանաւոր քնարն քաղցրախաւս ամենահանճար հոգւոյն մարգարէն Դաւիթ զիւր անյագապէս բաղձանս սիրոյ առ Տէրն եւ Արարիչն իւր բազմաւք ներբողական բանիւք, որ առ ինքն երախտագործութեանց ի մէջ բեր|162ա|եալ ցուցանէ՝ ասելով. «Սիրեցից զքեզ, Տէր, զաւրութիւն իմ»* (**Սղմս. ԺԷ. 2**)*։*

Դ. 1 *Արդ, նախքան զտեսութիւն զաւրութեան սիրոյս, եւ որ ի կարգի բանական ընծայից գոհութեանս, պարտ է զվերնագրիս տեսանել զմիտս, որ ասէ. «Ի կատարած, ի վերայ, պատերազմող նահատակի, ծառայի Տեառն Դաւթի, որ խաւսեցաւ զաւրհնութիւնս զայս, յաւուր յորում փրկեաց զնա Տէր ի ձեռաց ամենայն թշնամեաց իւրոց եւ ի ձեռաց Սաւուղի, եւ ասէ. «Սիրեցից զքեզ, Տէր զաւրութիւն իմ»։* **2** *Վերջին ցուցանէ վերնագիրս զայս բան Դաւթի, զի յաւրինակ Տեառն իւրոյ նահատակեցաւ ընդդէմ երեւելի թշնամեաց եւ յաղթող գտաւ, զի յԱստուծոյ շնորհեցաւ այս նմա՝ լինել աւրինակ ըստ մարմնոյ Որդւոյ իւրոյ ո՛չ միայն բանիւ, այլ սակաւ մի եւ իրաւք այնու, զի Գողիադու ո՛չ երկեաւ։* **3** *Եւ ի վերջին փղշտացւոյն գրեալ է, թէ [ոչ] երկեաւ, որպէս եւ Տէրն ի փորձութեանն ո՛չ երկեաւ։* **4** *Եւ ի ժամ չարչարանացն գրեալ է, թէ՝ Զարհուրեալ էր։*

Ե. 1 *Այլ մանրամասնաբար մեկնութիւն առնել վերնագրիս, ելանէ ըստ չափ շարադրութիւն*[1] *բանիս։* **2** *Այլ զզաւրութիւն առաջիկայ սաղմոսիս քննելի է, իբրու զի ունի զխորհուրդն էմանուիէլի. զմահ նորա եւ զյարութիւն, զհամբառնեալն յերկինս եւ զկոչումն հեթանոսաց, այլեւ զերկրորդ գալստեանն նշանակ, զոր պատմէ Դաւիթ յայսմ սաղմոսի, եւ զիւր երախտեացն զգոհութիւն զոր մատուցանէ Աստուծոյ պատարագ։* **3** *Այլեւ զմարդկային բնութեանս անհամեմատ բարեացն, որ եղեւ տնաւրէնութեամբ Բանին Աստուծոյ։* **4** *Զամենեցունց գոհութիւն, եւ զբանական նուէրս ընծայից բարձեալ յաստուածակազմ սկուտեղ հոգիաշարժ լեզուին՝ ընծայէ բնութեանս Ար|162բ|արչին, ասելով. «Սիրեցից զքեզ, Տէր, զաւրութիւն իմ»։*

Զ. 1 *Արդ սիրոյն անուն մի է եւ բազում։* **2** *Մի՛ է, որպէս սեռ գոլով՝ եւ*

---

[1] *Զ շարադրութեան*

բազում եւ անթուելի՝ յաղագս յոքնատեսակ զանազանութեանցն՝ զի որպէս սեռ ի տեսակս եւ կամ բոլոր ի մասունս բաժանի։ 3 *Եւ որպէս զի ա՛յլ է համանգամայն գեղեցկութիւնն երկնի եւ աւգտաբերութիւնն, եւ ա՛յլ ըստ մասանցն վայելչութիւն եւ սննդագործութիւն արեգական եւ լուսնի եւ այլոց մոլորական եւ անմոլար գնդին, նոյնպէս եւ բոլոր սիրոյն առաքինութիւն եւ մասանց նորա գեղեցկութիւն։*

Է. 1 *Արդ, ահա զանազանութիւն եւ միաւորութիւն ի միասին գեղեցկացեալ եւ առ անձնապէս բաժանեալ։* 2 *Նաեւ տարերց առհասարակ՝ ի բազմաց եւ ի զանազանից, ըստ զաւրութեան եւ դրից, եւ այլութեան կերպարանաց եւ ձեւոց, եւ գոյացութեանց բնաւորականաց*[1]*՝ մի աշխարհ Արարիչն բաղկացոյց։* 3 *Այսպէ՛ս եւ մի առաքինութիւն սիրոյ ի յոլովից գոյանա, մասանց, ո՛չ անջատեալ եւ քայքայեալ միաւորութեանն հաստատութիւն եւ շնորհ, այլ վասն մոլորական հոմանունութեանն ի գեղեցկանուն կոչման է սիրոյն, մարմնատեսակն, եւ թանձրաձեւագոյնն, եւ ժանդականն՝ հեռի ի բանէս, եւ որոշեալ ընկեցեալ ի բաց կայցեն, իսկ արժանաւորն անուան եւ բանի ընկալցի այժմ ըստ տրամատական*[2] *յեղանակի բաժանումն տրոհութեան, ըստ մասանց եւ տեսակաց, կամ գլխոց շարունակողաց զմասունս։*

Ը. 1 *Արդ, է՛ սորա առաջ եւ նազելի եւ մեծ քան զամենայն իշխանականն առաքինութեան եւ բամբիշն, որ առ Աստուածն է սէր։* 2 *Իսկ երկրորդ, ըստ հետեւման եւ զաւրութեան դասեալ առ նորին լրումն կատարելոյ եւ մեծի մարդա|160ա|սիրութեան*[3]*, զոր կրկին աւրինաւք Ստեղծիչն մեր ի մեզ հաստատեաց բանականաւն, զոր ի բնութիւնս մեր տնկեալ ամրացոյց եւ գրաւորական աւրինացն պատուի[ր]անաւք, զոր ընկալաք։* 2 *Ըստ այնմ՝ «Սիրեսցես*[4] *զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն զաւր[ութենէ քումմէ] եւ յամենայն մտաց քոց» (Ղկ. Ժ. 27)։*

Թ. 1 *Այս մեծ եւ առաջին պատուիրան. եւ երկրորդ՝ նման սմին. «Սիր[եսցես] զընկեր քո իբրեւ եւ զանձն քո» (Մտթ. ԺԹ. 19), զոր եւ աւետարանական շնորհիւն ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ աւանդ ընկալաք։*

Ժ. 1 *Արդ յայս երկուս պատուիրանս ամենայն աւրէնք եւ մարգարէք կախեալ կան։* 2 *Զի որպէս շարժմամբն երկնի եւ կալովն եւ դադարմամբն երկրի բնութիւնք մասանց արարածոցս ունին զգոյացութիւն, այսպէս եւ մարդ՝ սիրոյն Աստուծոյ մշտաշարժութեամբ եւ ի սէրն, որ առ մարդիկ,*

---

[1] *Ա բանաւորականաց] բնաւորականաց*
[2] *Ա արմատական] տրամատական*
[3] *Ա մարդասիրութիւն*
[4] *Ա սիրեաց*

հաստատուն պնդութեամբ ի փոփոխելի իրաց ժամանակի անփոփոխ ունել եւ անմոռաց զսիրոյ ճշմարտութիւն։ 3 *Զի որպէս երկիր պտղաբերի ի ջերմութենէ հրոյ եւ գիջութեամբ ջրոյ, այսպէս եւ մարդ՝ սիրովն Աստուծոյ եւ մարդկան՝ պտղալի յամենայն գործս բարութեան։* 4 *Եւ որպէս միաւորութեամբ հոգւոյ առ մարմին մնա մարդ կենդանի, այսպէս սիրովն Աստուծոյ եւ մարդկան ունիմք զճշմարիտ եւ զգովելի կենդանութիւնն։* 5 *Եւ զի որպէս մարդ կերպարան եւ պատկեր Աստուծոյ է, նոյնպէս եւ սէրն զգալի, որ առ մարդիկ, կերպարան եւ նմանութիւն սիրոյն Աստուծոյ ասի։* 6 *Զի որպէս Աստուած երիւք այսոքիկ կերպարանի՝ բարեաւն եւ գիտնականաւն եւ կարելեաւն, այսպէս եւ որ սիրեն զԱստուած, զայսոսիկ բերէ յինքեան զձեւ կերպարանաց, զի որպէս Աստուած բարերար եւ խնամածու է ամենայնի, նոյնպէս եւ բարեգործն խնամակալութիւն սիրոյ կալցի առ ամենիսեան։* 7 *Եւ որպէս Աստուած զամենայն ինչ գիտէ, նոյնպէս եւ որ սիրեն զԱստուած, որ|160բ|չափ կարող գոյ եւ կամի, զսիրոյն հաղորդութիւն ցուցանել առ ամենիսեան արժան է։* 8 *Վասն որոյ աստուածային եւ մարդկային սիրոյն գեղեցկազարդ պատկերաւ կերպարանեալն՝ մարգարէն Դաւիթ ասէ. «Սիրեցից զքեզ Տէր, զաւրութիւն իմ»։*

ԺԱ. 1 *Այլ, վասն զի ըստ իմաստասիրութեանն բաժանման յեղանակի՝ նախ յերկուս որոշեցաք զմիաւորական անուն սիրոյն, զի որպէս իմաստասիրութիւնն ի տեսականն եւ ի գործնականն բաժանի, եւ իմաստասիրութիւնն շնորհ յԱստուծոյ է, վասն զարդարելոյ զհոգիս մարդկան։* 2 *Եւ զի երկու են զաւրութիւնք հոգւոյն՝ գիտնականս եւ կենդանականս։*3 *Զգիտնականսն զարդարեսցէ ի ձեռն տեսականին, եւ զկենդանականսն՝ ի ձեռն գործնականին։* 4 *Որպէսզի մի՛ զսուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք, եւ մի չար ինչ գործեսցուք։* 5 *Այսպէս եւ սէրն. է՛ որ աստուածային է, եւ է՛ որ մարդկային։* 6 *Աստուածայինն տեսական է, զի մտաց տեսութեամբ եւ խոհականին իմաստութեամբ մի՛շտ ի նոյնն խոկալ արժան է։* 7 *Իսկ մարդկայինն գործնականին է, զի գործով զկատարումն եւ զզաւրութիւն սիրոյն, եւ սպասաւորական պաշտմամբ ունի։*

ԺԲ. 1 *Դարձեալ եւ ա՛յլ յոլով տեսակս զաւրութեան սիրոյն երեւեցուսցուք, զոր ուսուցանէ մեզ իմաստասէրն աթենացւոց եւ առաքելական լուսազարդ քարոզութեանցն աշակերտեալն մեծն Դիոնէսիոս՝ ի տոփականացն աւրհնաբանութիւնսն ասելով. «Եթէ զտարփալի փափագումն սիրոյն, թէպէտ աստուածային, թէպէտ հրեշտակական, թէպէտ իմանալի եւ թէպէտ անձնական եւ թէպէտ բնական ասասցուք, միաւորական իմն եւ շարակալու զաւրութիւն էիցս իմասցուք»։* 2 *Արդ, աստուածային ասի,* |161ա| *վասն զի առաջի պատճառ երկնայնոցն տոփմանն ա[ս]է, վասն*

զի սէր է, որպէս եւ գրեալ է, թէ՝ «Աստուած սէր է» **(Ա. Յվհ. Դ. 8)**, *ըստ Յոհաննու։* **3** *Եւ անտուստ հաղորդեցուցանելով յառաջ գայ ի հրեշտակս, ուստի եւ հրեշտակական ասէ, ուրանաւր միաւորութեանն են փափագաւղք, զի ո՛չ է ամբոխումն ի նոսա։* **4** *Ապա յետ հրեշտակականացն իմանալի՛ ասէ, այսինքն՝ յաստուածիմաստ*[1] *արս, որք յեկեղեցւոջ, առ որս Տէրն ասաց. «զի իցեն մի՛, որպէս եւ մեք մի եմք»* **(տե՛ս Յվհ. ԺԷ. 11)**, *զի արդ եւ յաղագս քրիստոնէից զայն նախ իմասցուք, իսկ երկրորդ՝ վասն ամենայն մարդկան։* **5** *Իմանալիս ասաց յաստուածայնոց մտացն ասացեալ զայս։* **6** *Իսկ շնչական զանասնոցն ասէ զգայականն, քանզի յզգայականէս յայսմանէ զաւրութենէ եւ թռչունք երամացեալ թռչին, եւ որ ի ցամաք եւ ի ջուրս՝ զմիաւորական յարակցութիւն պահեն։* **7** *Իսկ բնական ասի անշնչիցն եւ անզգայիցն ըստ ունակութեան, այսինքն որակութեան եւ պատեհութեան։* **8** *Փափագելով Արարչագործին, պահելով ի հաստատութիւն։*

ԺԳ. **1** *Արդ, զի այսմ սիրոյ բաղձանաւք փափագեն իմանալիքն եւ բանաւորքն գիտողապէս, եւ նուաստագոյնքն՝ քան զնոսա զգալապէս, եւ այլքն գոյեղինիւ եւ բնաւորական պատեհութեամբ, յորոց մարգարէն յամենեցունց զակն ի վեր առեալ, ասէ. «Սիրեցից զքեզ, Տէր, զաւրութիւն իմ»։* **2** *Արդ, զիւրենքեան*[2] *սիրոյն անվճար պարտուցն համարս խոստովանի, եւ զմեր իսկ զմիտս զարթուցանէ զմտաւ ածել զբազմադիմի պատճառս սիրոյն Արարչին եւ բարերարի Տեառն, զոր եւ ի մէջ յոքնամասնեայ տեսակաց սիրոյն, երեք գլխաւորական որոշումն տեսանեմք. զորդիականն, զվարձկանն եւ զծառայականն։*

ԺԴ. **1** *Արդ, որդիական է, որ եւ բնական կոչի, զոր արարածք|161բ| առ Արարիչն ունին, եւ որդիք առ ծնաւղս։* **2** *Իսկ վարձկան է, որ եւ կարեւորք կոչին, զոր աղքատք առ փարթամս ունին եւ հիւանդք՝ առ բժիշկս։* **3** *Եւ ա՛յս է պատճառականն։* **4** *Իսկ ծառայակա՛ն է, որ եւ հարկաւորք կոչին, զոր իշխեցեալք առ իշխանսն եւ փոքունք առ մեծամեծս ունին, զորոց զանազանութիւն ունակութեանց յաստուածային սուրբ գրոց ուսանիմք։* **5** *Զոր եւ աւետարանիչն Յոհ[անէս] ցուցանէ. «Երկեղ ո՛չ գոյ ի սէր»* **(Ա. Յվհ. Դ. 18)**։ **6** *Այսինքն՝ որդիական սէրն առանց երկեղի է՝ միայն վասն*[3] *հաւրն պատուոյ, եւ ո՛չ ծառայաբար երկեղի, կամ ըստ մշակացն վարձու, այլ միայն զի մի՛ յորդիական պատուոյն անկցին, զորոց Դաւիթ ասէ. «Երկերու՛ք ի Տեառնէ ամենայն սուրբք նորա»* **(Սղմ. ԼԳ. 10)**։ **7** *Եւ վասն այսպիսի երկեղի ասէ. «Սո՛ւրբ է եւ մնայ յաւիտեան»* **(տե՛ս Սղմս. ԺԸ. 9)**։

---

[1] *Զ աստուած ի մօտ] յաստուածիմաստ*
[2] *Զ զիւրինքեան] զիւրենքան*
[3] *Զ > վասն*

ԺԵ. 1 *Արդ, բնական սիրոյն պարտապան եմք, իբր արարածք առ Արարիչն մեր, որ ծնաւ զմեզ բանիւն արարչական, եւ գութ ունի ծնելոցս, որպէս հայր ի վերայ որդւոց։* 2 *Եւ կամ իբր մշակք վաստակասէրք, աշխատեսցուք ի գործ պահպանութեան պատուիրանաց Նորա՝ վասն վարձուն ակնկալութեան եւ մերում բազմադիմի կարեացն. հիւանդքս՝ բժշկին եւ մահկանացուքս՝ տուողին կենաց, խաւարք գոլով՝ լուսոյն եւ տկարք՝ զաւրաւորին։* 3 *Եւ կամ իբրեւ ծառայք զարհուրեսցուք ի բազմատաղանդ պարտուցն վճարմանէ, ի տիրական սէրն բեւեռելով, ի տանջողական նորա զաւրութենէն երկուցեալք, ի գործ զտաղանդ պատուիրանին արկցուք, որպէսզի յամենայնի ի կարգէ ապրեցելոցն մի՛ վրիպեսցուք՝ ի մարգարէական բանից զաւրութենէ եւ ի կամացն յաւժարութենէ ուսեալք, որ ասէ. «Սիրեցից զքեզ Տէր, զարութիւն իմ»։* 4 |159ա| *Եւ քանզի եռակի տարորոշի մարդ՝ հոգի եւ մարմին եւ որ արտաքոյ մարմնոյն պիտոյք նորա, որպէս եւ Պիթագորաս ասէր. «Ե՛ս եւ իմն եւ իմոյքն։* 5 *Ես՝ հոգին եւ իմ՝ մարմինն, եւ իմոյք՝ ստացուածք ընչից, որ վասն մարմնոյն»։* 6 *Քանզի երեք են զանազանութիւնք գլխաւորական բարեաց. հոգեւորականն եւ որ զմարմնովն եւ արտաքոյ մարմնոյն։* 7 *Եւ են հոգեւոր բարիք ուսմունք իմաստութեան եւ գործք առաքինութեան*[1]*։* 8 *Իսկ որ զմարմնովն՝ առողջութիւն, քաջզգայութիւն*[2]*, գեղեցկութիւն եւ զաւրութիւն։* 9 *Իսկ, որ արտաքոյ մարմնոյն՝ մեծութիւն եւ փառք, տոհմաւորս, սիրելիս, իշխանութիւնս բազմաց եւ որ ինչ նման սոցին։*

ԺԶ. 1 *Արդ, յորժամ սոքա հակառակ սիրոյն Աստուծոյ գտանին, պարտ է արհամարհել, զի թէեւ իմաստութեան ուսմանցն սէր եւ առաքինական գործոցն ոչ ըստ հաճոյիցն Աստուծոյ լինի, պարտ է արհամարհել եւ զսիրոյն Աստուծոյ զհաճոյսն խնդրել, որպէս խրատէ առաքեալ. «Գիտութիւն հպարտացուցանէ, իսկ սէր շինէ»* (**Ա. Կրնթ. Ը. 1**)*։* 2 *Նոյնպէս եւ գեղեցկութիւնք մարմնոյ եւ առողջութիւն, թէպէտ սիրելիք են, այլ Տէրն խրատէ. «Որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։* 3 *Եւ որ գտցէ վասն իւր՝ կորուսցէ*[3] *զնա»* (**տե՛ս Մտթ. Ժ. 39, ԺԶ 25**)*։* 4 *Նոյնպէս եւ որ արտաքոյ մարմնոյն բարիք են. փարթամութիւն ընչից եւ իշխանական ճոխութիւն, եւ բազմութիւն սիրելեաց, պարտ է զմտաւ ածել զտէրունական բանն. դժուարաւ, որ զինչսն ունին, մտանել յարքայութիւնն* (**հմմտ. Ղկ. ԺԸ. 25**)*։* 5 *Եւ վաճառելովն զայն յաղքատսն ընթանան զհետ սիրոյն Աստուծոյ։* 6 *Եւ առ սիրելիսն, թէ ըստ աջոյ ական, կամ ձեռին չափ իցէ սէրն, պարտ է*

---

[1] *Զ գործք առաքինութեան*
[2] *Զ > քաջազգայութիւն*
[3] *Ճ կեցուսցէ] կորուսցէ*

հատանե՛լ, զի մի յաստուածային սիրոյն հատցի, զոր ոչ արար Հերոդէս, այլ պարտական արեան մեծի մարգարէին գտաւ։ 7 *Վասն որոյ մարգարէս ասէ. «Սիրեցից [զքեզ, զՏէր]»։* 8 *Ոչ զհոգւոյ բարիսն, յորժամ ի սէր քո ոչ իցէ* |159բ| *գործակից, եւ ոչ զմարմնոյ զգեղեցկութիւն կամ զզաւրութիւն, եւ ոչ որ արտաքոյ մարմնոյն մեծութիւն կամ իշխանութիւն, այլ զքեզ, Տէր գոլով եւ ամենեցունց սոցա տուող զաւրութիւն։*

ԺԷ. 1 *«Սիրեցից [զքեզ, զՏէր]»։* 2 *Ոչ ասէ սիրեցի, իբր թէ ժամանակաւոր եւ անցական, եւ վասն պատճառի, այլ՝ «սիրեցից»՝ յարաձգական եւ մշտնջենաւոր, անվճար եւ անեզրական, անսպառ եւ անյագապէս ունելով զծարաւ սիրոյն եւ մնացեալ միշտ անլի՛ր եւ անկատար, վասն զի սէր ո՛չ երբէք անկանի։* 3 *Ըստ որում ասէ. «Սիրեցից [զքեզ, Տէր զաւրութիւն իմ]»։* 4 *Վասն զի սիրեցեալն միշտ սիրողին զաւրութիւն է։* 5 *Եւ այս ճշմարտապէս իսկ ասասցի յաղագս Աստուծոյ, վասն զի ամենեցունց*[1] *զաւրութիւն ի յինքն յառաջագոյն ունելով, եւ ինքն է պատճառ ամենայնի զաւրութեան, բոլորից եւ մասանց զաւրացուցիչ։* 6 *Ի նմանէ են հրեշտակացն զարդուց զաւրութիւն, իմանալի եւ անմահ մշտաշարժութիւնն անոնուազ փափագումն բարոյն, զի բարոյն Աստուծոյ փափագումն նոցա զաւրութիւն եւ գո՛լ է։* 7 *Յետ սոցա եւ ի մարդիկ զհոգւոյ եւ զմարմնոյ շաղկապութիւն շարունակէ, զբոլոր բնութիւն կենդանեաց զաւրացուցանէ. զմիաւորեալսն՝ ի սէր եւ ի կցորդութիւն, եւ զբաժանեալսն ըստ սահմանի իւրեանց, անշփոթ եւ անխառնակ բարեկարգութեամբ տնկոց՝ սննդական եւ աճողական զաւրութեամբ զի վերշարժութիւն եւ զգոյեղէնսն՝ բնաւորական իւրեանց զաւրութեամբ, զերկնի եւ զլուսաւորացդ, զտարերցս իւրաքանչիւր*[2]*, զի ամենեցունց նա է զաւրութիւն, ըստ*[3] *իւրաքանչիւր յարմարական կարգի։*

ԺԸ. 1 *Վասն որոյ ասէ. «Սիրեցից զքեզ, Տէր, զաւրութիւն իմ»*[4]*։* 2 *Վասն զի մարդ յիմաստնոց փոքր աշխարհ ասացաւ, զի զամենայն, որ ինչ յաշխարհի է, ունի յինքն զգանազանութիւն կենդանութեան հոգւոց. զսննդականն եւ զաճողականն ունի* |158ա| *ըստ մարմնոյ, որ եւ առ տունկսն է բնաւորեալ եւ զգայականն, զոր եւ անասունք ունին, եւ զբանականն, որով հաղորդի վերին բանականացն։* 3 *Վասն որոյ եւ աւրէնսդիրն զբոլորն զսոսա ի սէրն Աստուծոյ յորդորէ։*

ԺԹ. 1 *«Սիր[եսցիս] զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քում[մ] է»։* 2 *Սիրտ*

---

[1] *Ջ վասն] վասնզի ամենեցուն*
[2] *Ջ իւրաքանչիւր յարմարական կարգի, վասն որոյ ասէ*
[3] *Ճ՛> զի... ըստ,*
[4] *Ջ> զի... զաւրութիւն իմ*

ասելով նշանակէ զթանձրատեսակ մարմինն, յամենայն անձնէ եւ ի զաւրութենէ, այսինքն՝ ի զգայականէն, զի սոքա են զաւրութիւնք անձին եւ յամենայն մտաց, որ է բանական հոգին, ակն ունելով զմիշտսն, զոր խրատէ զամենայն զաւրութիւն կենաց ի սէրն Աստուծոյ ունել։

Ի. 1 *Եւ զիա՞րդ մարգարէս զՏէր անուն յիշէ՝ տուող զաւրութեան եւ ո՛չ զԱստուածն։* **2** *Քանզի Աստուած անունն արարչական եւ բարեգործակ զաւրութենէն է, որով արար զաշխարհ, եւ քաղցրութեամբ գթոյ նախախնամէ։* **3** *Իսկ Տէր անունն արքունական եւ պատժողական, եւ դատող զաւրութեանն է, որովք խրատէ զյանցաւորսն, որք վասն ներողութեան*[1] *եւ երկայնմտութեանն Աստուծոյ՝ յանդգնեցան ընդդէմ բարեգործ եւ քաղցր Արարչին։* **4** *Վասն որոյ եւ այժմ մարգարէն Դաւիթ զարքունականն յիշէ անուն, որովք վրէժս առ ի թշնամեաց նորա երեւելեաց, եւ յաներեւոյթ թշնամոյն մերոյ բնութեանս հակառակի։* **5** *Վասն որոյ ընդ ամենայն բարեացն, զոր ետ մեզ, ո՛չ գոյ նմա արժանաւոր պատարագ, քան զսէրն, զոր Մովսէս աւրինադրեաց եւ Տէրն երկրորդեաց, եւ յաւել մեզ նորագոյն զաւրութիւն։* **6** *Ըստ որում ասէ. «Սիրեցից զքեզ, զՏէր, զաւրութիւն իմ»։*

ԻԱ. 1 *Զաւրութիւն զայն ասէ, զոր Քրիստոս տնաւրէնութեամբն իւրով շնորհեաց մեզ, ասելով. «Քաջալերեցարուք զի ես յաղթեցի յաշխարհի» (**Յվհ. ԺԶ. 33**)։* **2** *Սոյն սա է, զոր առաքեալ աղաւթէր Եփեսացւոց գիտել. «Լուսաւոր արասցէ Աստուած զաչս սրտից ձերոց» (**տե՛ս Եփս. Ա. 18**), առ ի գիտել զի՞նչ է յոյս կոչմանն մեր, զոր յաջողեաց ի Քրիստոս, զոր յարոյց զնա ի մեռելոց եւ նստեցոյց ընդ աջմէ իւրմէ։* **2** *Եւ այս է մարդկան զաւրութիւնն, որով կարէ ամենայն դիմամարտիցն գերիվերոյ ելանել, յորժամ զմտաւ ածէ* |158բ|, *թէ Քրիստոս իմս մարմնովս ընդ աջմէ Աստուծոյ է, եւ ինձ ըստ իւր անսուտն աղաթիւք այն տեղն է պատրաստեալ, որով զաւրացեալ՝ շնորհաւքն Աստուծոյ անցիցէ ընդ կենցաղս՝ ժառանգել զփառսն։*

ԻԲ. 1 *«Տէ՛ր հաստատիչ իմ» (**Ողմս. ԺԷ. 2**)։* **2** *Արդ, առաջին բարի եւ իմաստութիւն է չմեղանչելն, այլ մնալ յառաջին շնորհն՝ անշարժելի եւ անխախուտ հաստատութեամբ։* **3** *Եւ զի այս անհնա՛ր հողեղէն բնութեանս, եւ բազմաց կարաւտ առ ի պէտս իւրոյ աղքատութեանն։*

ԻԳ. 1 *Երկրորդ բարի է յետ մեղանացն ապաշաւելն եւ գտանել թողութիւն։* **2** *Եւ յերկարելն յապաշաւանսն լինի հաւասար չմեղուցելոցն։* **3** *Ըստ խրատու ուրումն իմաստնոյ, թէ արդարագործ չեղէր, արդարախաւս լեր, եւ թէ յերկարես ի նմին եւ արդարագործ եւս լինիս, զոր եւ Տէրն իսկ գո-*

---

[1] *Ձ՝ նեղութեան] ներողութեան*

վեաց զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար անցաւորաւքս զանմահական[1] *կենացն ստանալով ժառանգութիւն, զոր ո՛չ ունին որդիքն լուսոյ յազս իւրեանց (տե՛ս Ղկ. ԺՁ. 1-8), այլ մեզ տուաւ այս մեծութիւն պարգեւի, վասն դիւրասխալ եւ հողեղէն յարկիս մարմնոյս կազմածի, զոր եթէ խախտիմք ապականագործ ախտիւք դարձեալ հաստատիմք ըստ առաջին շինուածոյն գեղեցկութեան զառաքինութեանցն յարմարել շինուածս, որպէս եւ ասէ. «Տէր, հաստատիչ իմ»։* 4 *Յետ մեղացն շարժման հաստ[ատիլ]՝ յայտ է ի ծփմանէ եւ ի խռովութենէ, զի ոգի որքան գերեալ*[2] *է ի մարմնոյս պատրանս ի ծովի է եւ [ի] խռ[ովութեան] մահուն երկեղիւն եւ տանջանաց յիշատակաւն։* 5 *Յայսմանէ «հաստատիչ» եղեւ Քրիստոս, զի հանեալ զմիտսն արտաքոյ սիրոյ անցաւորիս՝ յիւր սէրն, այլ ո՛չ երկնչի, այլ հաստատեա՛լ է, զի խարիսխն, յոր պնդեցաւ, ի ներքին կողմ վարագուրին ունի, որպէս ասէ առաքեալ. «Ապաւէ՛ն իմ» (տե՛ս Եբր. Ձ. 19)։* 6 *Զոր աւրինակ, ամրութիւն տեղւոյ, որ ի կարծրութենէ քարանց |167ա| շուրջանակաւ պարսպաւ պատեալ է, փախուցեալք ի թշնամեաց դաւաճ[ան]ութենէ՝ աներկեղ եւ անկասկած մնա[ն] ի ներքոյ ամրութեանն։* 7 *Այսպէս խոտորեալք յուղեղ ճանապարհէն, եւ յանցաւորութեամբ արտաքս ելեալք ընդ պարիսպ պատուիրանացն Աստուծոյ, եւ անգեալք*[3] *ի ձեռս վնասակար ախտից եւ պատրող թշնամոյն, յորժամ զղջացեալ դարձցին՝ մտեալ ընդ պատուիրանին քաղցր լծով, լինի նոցա ապաւէն եւ ամուր ապաստանի։*

ԻԴ. 1 *«Եւ Փրկիչ իմ»։* 2 *Զի որպէս փրկեաց զԴաւիթ ի պատերազմացն պարտութենէ եւ զբնութիւնս ի պատերազմող բանսարկ[ո]ւին պատերազմէ, նոյնպէս եւ՝ զամենայն էսս յիւրեանց բարեացն անգմանէ փրկէ, եւ զեղծեալսն ի բարի ունակութեանց եւ զապականեալսն յախտից՝ զերծուցանէ, եւ յարուցեալ ի չարեաց՝ ի բարիս կանգնէ, եւ զանկարգութիւն եւ զանզարդութիւն զարդարէ, վասն որոյ եւ ի սոյն միտս փրկութիւն եւ փրկանք անուանեմք։*

ԻԵ. 1 *«Աստուած աւգնական իմ, եւ ես յուսամ ի նա»* (Սղմ. ԺԷ. 3)։ 2 *Այժմ ի դէպ եւ ի պատշաճ տեղւոջ զԱստուած անուն, որ բարեգործակ զաւրութենէ առնու ի կիր, զի որ արդարադատ իրաւամբք զզրկող թշնամիսն տիրաբար վանեաց, անդ զարքունականն յիշէ անուն։* 3 *Իսկ յոյժամ իւրում*[4] *յուսացելոյն աւգնութիւն մատուցանէ, զարարչականն եւ զբարեգործակն ի մէջ առնու անուն զԱստուածն, ասելով. «Աստուած աւգնական իմ»։*

---

[1] *Զ զանանցական] զանմահական*
[2] *Զ գերերեալ*
[3] *Զ պնդեալք] անկեալք*
[4] *Զ յիւրոյն] իւրում*

ԻԶ. 1 *Երեք են յեղանակ աւգնականութեան. զզաւրութիւն պատերազմող թշնամեացն վանել եւ զտկարութիւն իւրոց յուսացելոցն զաւրացուցանել, եւ զանիրաւաբար զրկանսն իրաւամբք դարձուցանել եւ լնուլ զպակասութիւն բարեացն, որ եղեւ այս Դաւթի ընդ իւրում թշնամիսն, եւ բնութեանս հասարակաց ի Փրկչէն մերմէ Յիսուսէ, որ ընդ մահու |167բ| անգեալ բնութեանս աւգնեաց, զանմահութեանն տալով շնորհ, եւ զհայրենի ժառանգութիւնն, զոր դաւաճանութեամբ չարին կորուսաք այսրէն՝ դարձոյց, եւ զթշնամին կենաց մերոց ես<ս>պան, որ զմահ մեզ ժառանգեցոյց՝ փոխանակ անմահական կենացն: 2 Եւ վասն զի այսքան բարձրագոյն բարեաց ոչի՛նչ այլ ունիմք նպաստաւորութիւն, բայց միայն զյոյսն, զոր աստուածայինն առաքեալ ասէ. «Յոյս ո՛չ երբէք ամաչեցուցանէ»[1] (Հռմ. Ե. 5), եւ սա թէ՝ «Ես յուսամ ի Նա» զայն միայն ունելով յանձնէ գործակցութիւն ի բարին:*

ԻԷ. 1 *Իսկ Նա ապաւէն լինի եւ «եղջեւր փրկութեան»: 2 Զի որպէս եղջիւր եզին է զէն եւ զարդ, եւ քո բարձր զաւրութիւնդ՝ ինձ, ասէ մարգարէն: 3 Իսկ մեզ, որք հաւասարեցաք անասնոց անբանից՝ ցանկութեան մարմնոյ ծառայելով անասնաբար, եւ խորտակեցան երկու եղջիւրք մեր՝ իմաստութեանն տեսութիւն եւ առաքինական գործոցն կատարողութիւն, որովք պահպանեալ լինեաք մեք հարկանելով զթշնամիսն, ինքն իսկ Քրիստոս եղեւ մեզ եղջիւր փրկութեան: 4 Ըստ այնմ՝ «Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի» (Ղկ. Ա. 69): 5 Զի, զոր աւրինակ, եղջիւրն ի բոլոր մարմնոյն է, եւ ոչ ունի նմանութիւն մարմնոյ, եւ ոչ մասն բոլոր մարմնոյն է, աննման գոլով[2] մարմնոյն, զի ոչ մարմի՛ն է, ոչ ոսկր, ոչ ջիլ, ոչ երակ, եւ ոչ այլ ինչ, որ ի մարմնի է: 6 Այսպէս եւ Քրիստոս, առ ի մարդկանէ գոլով եւ ոչինչ ունելով զնմանութիւն մարդկան առ մեզս, յիրաւի կոչեցաւ Եղջիւր, վասն զի ո՛չ աւրինաւք բնութեան ճանապարհորդեաց, այլ ծնաւ ի Կուսէ անապականէ, եւ իւրով մարմնոյն անմեղութեամբ, իբր զաւրութեամբ եղջեր խո[ր]տակեաց[3] զթշնամին մեր, որ արար զբնութիւնս ընդունակ մեղաց:*

ԻԸ. 1 *«Ընդունելի իմ»: 2 Զի հայրաբար գթով զգիրկս տարածեալ ընդունի|166ա|, որք յուսով բարւոյ մասին դիմեն առ նա, որպէս եւ քաղցր կոչմամբ ձայնի ժողովէ առ ինքն զդիմեալսն. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ» (տե՛ս Մտթ. ԺԱ. 28), եւ ընդունի զդարձ անառակի որդոյն: 3 Վասն որոյ ասէ. «ընդունելի իմ է: 4 Աւրհնելով կարդացի առ Տէր, եւ ի թշնամեաց իմոց ապրեցոյց զիս» (Սղմ. ԺԷ. 3-4):*

---

[1] *Ժ ամենեցուցան] ամաչեցուցանէ*
[2] *Զ բոլոր] գոլով*
[3] *Ա խոտակերաց] խորտակեաց*

ԻԹ. 1 *Դաւիթ ո՛չ միայն կռուելով ընդ թշնամիսն, ըստ մարմնական պատերազմող մարտից աւրինի յաղթահարէր, այլեւ աւրհնելով եւ աղաւթական բանից հայցուածով ապրէր ի թշնամեացն։* 2 *Եւ ստուգաբանի «աւրհնելովն» պատմելով, քանզի ո՛չ ասէ պարզմտութեամբ միայն աղաւթեցի, այլ պատմեցի զիւր մարդասիրութիւնն, եւ զիմ տկարութիւնս եւ զթշնամեացն ատելութեամբ դրժողութիւնն։* 3 *Եւ «կարդացումն» է՛ սաղմոսքդ, որ մինչեւ ցայժմ ասացան. «Մի ասա[սցէ] թշն[ամին իմ], թէ յաղթ[եցի նմա]* (**Սղմ. ԺԲ. 5**) *եւ այլն։* 4 *Եւ ապրումն է այն, որ ժամանեաց ի ճաշակ սիրոյն Աստուծոյ, որում այլ ոչ յաղթեն թշն[ամիքն] ըստ առաքելոյն. «Ով մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի»* (**Հռմ. Ը. 35**)։

Լ. 1 *Եւ այժմ սուրբ եկեղեցի Քրիստոսի ո՛չ ունի պատերազմ ընդ արեան եւ մարմնոյ, այլ ընդ իշխանութիւն եւ ընդ պետութիւն եւ ընդ աշխարհակալս խաւ[արի], ընդ այսս չար[ս], որ ի ներքոյ երկնից։* 2 *Յաղագս որոյ միշտ աւրհնելով կարդ[աց]ուք առ Տէր, զի որ ապրեցոյց ի թշնամո՛ւն՝ եւ ի խաւարային նորա զաւրացն միշտ ապրեցուսցէ։*

ԼԱ. 1 *Եւ զի՞նչ է աւրհնելով կարդալն։* 2 *Ընդ առեալ պարգեւացն աւրհնել, այսինքն՝ գոհութեամբ յայտնել*[1] *զբարեաց նորա զառատութիւն, եւ վասն ակն ունելեացն կարդալ պաղատանաւք։* 2 *Եւ պարտիմք աւրհնել զնա ո՛չ միայն վասն բարի կրելոյ, այլեւ յամենայն կիրս փորձանաց, զի այնու առաւե՛լ ցուցանեմք զսէրն, որ առ Աստուած։* 3 *Եւ աւրհնել ո՛չ միայն վասն երկրաւոր բարեաց յաջողման, այլեւ վասն շնորհացն Աստուծոյ, որով ճոխանամք, զի շնորհեաց* |166բ| *մեզ զաստուածային հոգին մարտակից, որ տկարութեանս մերոյ միշտ ի թիկունս հասանէ, որով կարեմք յաղթող լինել ի վերայ ախտից մարմնոյ, որ են ընտանի թշնամիք, եւ ի վերայ աներեւոյթ թշնամեացն, որք պատերազմին ընդ մեզ մերովք բնական կրիւք, եւ անդամաւք մարմնոյ, եւ համբերութեամբ տանել, որք յաշխարհի վիշտք եւ նեղութիւնք գայցեն յազգակցաց մարմնոյս, որով եւ զարժանն իսկ զաղաւթս մատուցանեմք երկնաւոր Հաւրն։*

ԼԲ. 1 *Արդ, զնոյն մարգարէական բան, որ զառ ի յԱստուած սէրն ստացաւ ինքեան զաւրութիւն. եւ հաստատութիւն, ապաւինութեան տեղի եւ փրկութեան, աւգնական ի մարտս պատերազմաց եւ զէն փրկագործ, իբրեւ զծաղիկ զաւրաւոր եւ բժշկարար մեզ կազմեսցուք դեղս առողջականս եւ ախտահալած։* 2 *Վասն զի սէրն, որ առ Աստուած, զաւրութիւն է աստուածասիրին, յոքնամասնական այլոց սիրոյ։* 3 *Զի որպէս շառաւեղք*[2]

---

[1] *Զ պատմել] յայտնել*
[2] *Զ շաւիղք] շառաւեղք*

տնկոյ յարմատոյն, եւ բոյսք ամենայն ի սերմանց վերաբուսեալ աճէն, այսպէս սէրն Աստուծոյ արմատ եւ սէրմն ի սրտի մերում տնկեալ. սէրն, որ առ մարդիկ ծնեալ եւ աճեալ բազմանայ։ **4** *Եւ որպէս ճառագայթք յարեգականէ եւ վտակք ամենայն յաղբիւրէ, այսպէս ամենայն սիրոյ մասունք ի սիրոյն Աստուծոյ լուսափայլ ծագեն եւ յանհատական յայնմ աղբիւրէ յորդառատ բղխեն։*

ԼԳ. **1** *Եւ արդ, զոր աւրինակ արդարութիւնն գլուխ է ամենայն առաքինութեանց մասանց հոգւոյն եւ յարմարական կարգի եւ դասաւորութեան նոցա, այսպէս արդարապէս կարգ եւ դա՛ս է ի մասունս սիրոյն՝ ըստ պատուոյ եւ արժանաւորութեան։*

ԼԴ. **1** *Արդ, է առաջին բարեպաշտութիւն եւ սէր կատարեալ առ աստուածութիւնն ամենայնի սկզբնեղագոյն եւ գլուխ աւանդութեանց եւ աւրինաց մերոց։* **4** *Եւ երկրորդ մասն սիրոյ, որ առ ծնաւղս, յետ* |164ա| *Աստուծոյ եւ զնոցայն տալ պատիւ։*

ԼԵ. *Երկրորդ՝ զնոսա համարել զգալի աստուածս, քանզի պատճառք են ծննդոց ծնաւղքն, որպէս ամենայնի՝ աստուած, եւ գործիք եղեալ, Աստուծոյ՝ առ ի պետս ապականացու ազգին աճման եւ սերելոյ*[1]*, եւ սպասաւորք կամացն Աստուծոյ, որում պարտական են մանկունք սիրել եւ պատուել՝ իբրեւ զերկրորդ պատճառս վասն որոյ ծնանն եւ սնուցին։*

ԼԶ. *Իսկ հարց պատուէր տա Առաքեալ ո՛չ զայրացուցանել զորդիս, այլ սնուցանել խրատու եւ իմաստութեամբ Տեառն, զի այն է սէր ճշմարիտ։*

ԼԷ. *Իսկ որ համազգեացն եւ մերձակայիցն արեան ո՛չ տանի խնամ գթութեամբ սիրով, սաստէ՝ ասելով. «Եթէ ոք իւրոցն եւ մանաւանդ ընտանեացն խնամ ո՛չ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է եւ չար եւս քան զանհաւատսն է» (Ա. Տիմթ. Ե. 8)։* **2** *Եւ զայս ոչ միայն նոցա, որ յարենէ սնիցեն, ասէ, այլ համանգամայն առ որս ի տանն իցեն եւ ընդ ձեռամբ՝ ծառայս եւ աղախնայս, առ որս մի խստասրտութեամբ վարեսցին, այլ գթով սիրոյ հայեսցին ի նոսա։*

ԼԸ. **1** *Սիրել զայլագաւառեայս եւ զաւտարազգիս, հիւրասիրութեան աւրինաւք եւ լրջմտութեամբ։*

ԼԹ. **1** *Իսկ երախտաւորացն մերոց պարտս հատուցանեմք, եւ ոչ եթէ շնորհս ինչ առնեմք, զոր եւ հեթանոսք եւ մեղաւորք իսկ առնեն, զի այս բնութեամբ իսկ է, զոր եւ անասնոցդ ազգ ճանաչեն զբարերարս գործս եւ զանազանապէս ձեւով*[2] *շողոքորթանաց ցուցանեն զհամբոյրս սիրոյ։*

---

[1] *Զ սիրելոյ*
[2] *Զ > ձեւով*

Խ. 1 *Իսկ նենգագործացն եւ ատելեացն Տէրն ուսուցանէ զաւրէնս սիրոյն. «Բարի արարէք ատելեաց ձերոց եւ աղաւթս ի վերայ այնոցիկ, որ լլկեն զձեզ եւ նեղեն»* (**տե՛ս Մտթ. Ե. 44**)*, այլեւ զպէտս նոցա լնուլ:* **2** *Եւ զայս ի Տեառնէ եւ ի սրբոց նորա ուսանիմք արարեալ:*

ԽԱ. 1 *Ամենայն աղքատաց արժան է սիրով ողորմել, զի միոյ մաւր բնութեանս են ծնունդք:*

ԽԲ. 1 |164բ| *Բայց առաւել*[1] *բարս մեր յաւէտ ունել գթութիւն եւ սիրոյ հաղորդութիւն, զոր եթէ ոչ առնեմք ջերմ սիրով եւ յաւժարութեամբ, ի ժամանակի կարաւտութեանն, գտանել մասն ինչ ողորմութեան ո՛չ ունիմք, ըստ աւրինակի ընչեղին եւյիմար կուսիցն* (**տե՛ս Մտթ. Իե. Ղկ. ԺՁ.**)*:* **2** *Բայց որք զպէտս կարեաց եւ կարաւտութեան նոցա լցին՝ զքաղցրն զայն լուիցեն բարբառ, որ յաջեա դասուցն. «Եկայք աւրհն[եալք] ժառ[անգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութիւն]»* (**Մտթ. Իե. 34**) *եւ այլն:*

ԽԳ. 1 *Ահա աստուածասիրութեան եւ մարդասիրութեան սերմանցն ժամանակ հնձոց, զոր հանդերձ արտասուաւք ի ճանապարհի սերմանցն բերումն:* **2** *Ահա վայելից եւ խնդութեան ժամանակ:*

ԽԴ. 1 *Իսկ անկարաւտիցն, զոր ինչ դէպ իցէ պիտոյից եւ խնդրոյ, սիրով ցուցանել մերձաւորութիւն:*

Խե. 1 *Իշխանաց հնազանդութիւն եւ զերկեղ հատուցանել, եւ այլոց՝ որ ինչ անկանէ*[2]*, զի մի՛ ումեք պարտապան գտանիցիմք:*

ԽԶ. 1 *Որբոց եւ այրեաց, վասն զի ըստ ինքեանց են ողորմելիք, զրկեալք այցելու խնամածուաց, որբք ի ծնաւղաց եւ այրիք յարանց:* **2** *Որ հայրն է որբոց եւ դատաւորն այրեաց Աստուած՝ հրաման տա ո՛չ զրկել եւ ոչ յաղթահարել զորբ եւ զայրի, զեկ եւ զպանդուխտ, եւ դատաւորաց խնդրել զիրաւունս պատուիրէ*[3]*, եւ ո՛չ կաշառաւք կուրանալ:* **3** *ԶՅովբ առնուլ աւրինակ, որ հայր էր որբոց եւ վերակացու այրեաց, ընդդիմակաց զրկելոց եւ ապաւեն հարստահարելոց:* **4** *Եւ դուռն նորա բաց էր ամենայն կարաւտելոց. աղքատ՝ ունայն գոգով եւ մերկ, անվերարկու՝ առանց ծածկութի ոչ դառնայր ի դրանէ նորա:* **5** *Եւ արտասուէր եւս ի վերայ, թշուառացելոց, առ ի ջնջումն արտասուաց նոցա, զի լալն ընդ լացողս եւ սգակից լինել հիքացելումն, զնա արծարծեալ կանգնէ եւ մխիթարէ, եւ ինքեան գանձէ զմշտնջենաւոր խնդութիւնն:*

Խէ. 1 *Եսայի գոչէ. «Բրդեա՛ քաղցելոց զհաց քո, եւ զ<յ>ա|165ա|ղքատս անյարկս տար ի տուն քո»* (**Եսյ. ԾԸ. 7**)*, եւ այլ ըստ կարգի խրատք բարեգործութեանն:*

---

[1] *Ա՛ առեալ] առաւել*
[2] *Ա ակն է] անկանէ*
[3] *Ձ՛ պատուիրանէ*

ԽԸ. 1 *Եւ զսէրն, որ առ եղբարս՝ մի՛ բանիւք միայն, այլ եւ արդեամբք եւ ճշմարտութեամբ։*

ԽԹ. 1 *Մեծն Աբրահամ պանդուխտ էր ի վիճակ Քանանու տոհմին, այլ սակայն զամենիսեան սիրովն յամենեցունց լինէր սիրեցեալ։*

Ծ. 1 *Զինչ եւ Սարեփթացի այրոյն առ Եղիայ մարգասիրութեան եւ աւտարսիրութեանն գործ, զարմանալի քննողաց զբան պատմութեանն, եւ զզաւրութիւն գործոյն։* **2** *Եւ թէ զչպակասել եղոյն յամանս*[1] *նոյն*[2] *եւ ալերն ի կափսակէն բերէ ոք ի մեջ (տե՛ս* **Գ. Թգ. ԺԷ. 14, Ղկ. Դ. 26***)։* **3** *Ահա մեզ ի Տեառնէ յաւիտենական կեանք է խոստացեալ, եւ ոչ ընդոստնումք ի սէր աղքատացն եւ յողորմութիւն։* **4** *Զսիրով ընդունելութիւն հիւրոցն Պաւղոս ուսուցանէ։* **5** *Զգութ սիրոյ, որք ի բանդի եւ ի կապանսն են ի Տեառնէ ուսանիմք յԱւետարանին. «Աւտար էի, եւ ոչ ժողովեցէք զիս], հիւանդ եւ ի բանդի եւ եկ՞ [ոչ տեսէք զիս]» (***Մտթ. Իե. 43***)։* **6** *«Ի պէտս սրբոց հաղորդեցարուք» (***Հռմ. ԺԲ. 13***) առաքեալ ուսուցանէ, զի դու զխոստովանողն Քրիստոսի հանգուցանես՝ սպասաւորելովն ի վշտաց, նորա խոստովանութեանն կցորդ լիցիս՝ առանց չարչարանաց։* **7** *Եւ զի ընդ ձեռամբ անգեալ ծառայիցն ո՛չ մարմնոյ միայն, այլեւ հոգւոց խնամ տանելի է։* **8** *Եւ զայս Պաւղոս ուսուցանէ վասն Ոնէսիմայ առ Փիլիմոն գրելովն (տե՛ս* **Փիլիմ. 8-21***)։* **9** *Այլեւ տէրանց առ ծառայս եւ ծառայից առ տեարս զչափ սիրոյ ուսուցանէ։* **10** *Պարտ է զծերունիսն պատուել, որք կասեալք ի զաւրութենէ եւ պակասեալք ի զգայութեանց, թարշամեալ ծաղիկ մարմնոյն եւ հնացեալք երկայն աւուրքք։* **11** *Զերիտասարդս երկնաւոր սիրով խրատել, զոմանս վարժել եւ զայլս ի մարտի զաւրացուցանել, որպէս եւ մեծն գրէ Յոհան[նէս]. «Գրեցի ձեզ երիտասարդք, զի էք դուք հզաւրացեալք եւ յաղթեցէք դուք չարին» (տե՛ս* **Ա. Յովի. Բ. 14***)։*

ԾԱ. 1 |165բ| *Իսկ որոց «աշխարհ ի խաչ ելեալ է, եւ նոքա՝ աշխարհի» (***հմմտ. Գղտ. Զ. 14***) սիրեսցուք իբր զաւթեւանս երիցս ի միում*[3] *աստուածութեանն, զի եւ զԱստուած ի նոսա սիրեսցուք։* **2** *Սիրել զառաքինիսն*[4]*, իբրեւ զհոգի աշխարհի։* **3** *Գթալ եւ ի մեղուցեալսն իբր ի վիրաւոր անդամ, եւ բժշկաբար խնամ տանել։* **4** *Սիրել զփարթամսն, որք հաճոյսն Աստուծոյ են իբրեւ զվերակացուս եւ տնտեսս տէրունի գանձուցն։* **5** *Սիրել զաղքատսն գոհացողս, իբրեւ զեղբարս սիրելիս, բերող զնմանութիւն աղքատութեանն Քրիստոսի։* **6** *Զիմաստունսն տեսութեամբ եւ վարուք*

---

[1] *Ձ՛ > յամանս*
[2] *Զձ՛ > նոյն*
[3] *Ձ՛ իմում] ի միում*
[4] *Զ զառաքինությունը*

երեւելիս սիրեսցուք իբրեւ զծնաւղս հոգեւորս եւ դաստիարակս ի Քրիստոս բարիոք կենացն։ **7** *Ողորմել տգիտաց իբր տղայոց անզգայից եւ խնամ տանել անկատար հոգւոցն՝ ի կատարեալ գիտութիւն ածելով։* **8** *Իսկ որք պարզամիտք են ուսմանց եւ բարի գործոյ նախանձաւորք, սիրեսցուք իբրեւ հետեւողս բարեաց ճանապարհաց։* **9** *Եւ Պաւղոս զերիցունս կրկին պատուոյ արժանի ասէ եւ առաւել եւս որք աշխատին ի բան վարդապետութեանն եւ զայլսն ըստ կարգի, զոր ուսուցանէ (հմմտ. Հռմ. Թ. 13)։* **10** *Եւ զաշակերտեալսն յիմաստութիւն եւ ի գործս առաքինութեան առ ոտս դեգերեալ վարդապետաց, սիրեսցուք զնոսա առաւել գթով, զքաջաբոյսսն մտաւք արժանոյն, որպէս անաւթս*[1] *շնորհաց։* **11** *Իսկ անբանագունիցն, թէպէտ պատիւն ո՛չ հաւասար, այլ զսիրոյն չափ մատուցանել, զի եւ տունկք ազազունք եւ վտիտք, ի խնամս վայելել տնկագործաց, բազում անգամ հաւասար են քաջապտղութեան ի սկզբանէ ունողաց տնկոց, որչափ եւս առաւել բանական տնկոցս լիցի այս։*

ԾԲ. **1** *Արդ, յամենայն մասունս սիրոյն զ|163ա|անազանութիւն բազում է, որպէս եւ իմաստունս հոգւոյն առաւելեալ է բանականն, այսպէս եւ սիրոյն մասանց ոմն իշխանական, եւ այլոց ընդ նովաւ կարգեալ եւ յարմարեալ։* **2** *Բայց մեզ*[2] *ամենայնք են պատուելիք եւ յոյժ սիրելիք*[3]*, քանզի որ սիրեն զԱստուած ըստ ճշմարտութեան՝ ո՛չ զմիով իւիք ի մասանց սիրոյն զանց արասցէ, եւ մանաւանդ զի չիք հնար առնուլ զլրումն առ Աստուած սիրոյն՝ եթէ ոչ զառ միմեանս սիրոյն պատուիրանս ամենայն փութով եւ յաւժարութեամբ ջանասցուք կատարել։* **3** *Եւ իբրեւ նահատակք առաքինիք աւծեալք եղով հոգւոյն, ամենայնի ընդդիմակաց սիրոյն աւրինեաց, արտաքնոց եւ ներքնոց ճէպիցիմք տալ պատերազմ, զի զլրումն աւրինաց ի վերայ ամենայնին բովանդակութեան, զորս արժան է գործել, իբր զպսակաց նահատակաց հանդիսի, եւ զկնիք արքունական ձեռին եւ պատկերի՝ սէր է, որում չի՛ք վախճան, մշտահաճոյն լինելով*[4]*։* **4** *Եւ որ ոչն երբէք անկանի, եւ առնու յագուրդ կատարածի, ըստ զանազան յեկեղեցւոջ կարգեալ շնորհաց՝ առանց սիրոյն, մինչ ի վկայական խոստովանութիւն եւ ի ձեռն հրոյ վախճան, ամենայնն անաւգուտք են եւ ապաշնո[ր]հականք, քանզի ամենայն վասն նորա տուեալ եղեն յԱստուծոյ։*

ԾԳ. **1** *Այլեւ մարդն լինել Որդի*[5] *Աստուծոյ եւ գալ ի չարչարանս խաչի,*

---

[1] *Ձ աղաւթս] անաւթս*
[2] *Ջ > մեզ*
[3] *Ձ Ջ > եւ յոյժ սիրելիք*
[4] *Ձ լինելով*
[5] *Ա որդոյ*

ո՞յր աղագաւ, եթէ ոչ անճառելի սիրոյ պարգեւեցաւ աշխարհի։ 2 *«Քանզի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զորդին իւր Միածին[ն] ետ»* (**Յվհ. Գ. 16**)*, որոյ հատուցումն ընտանեգոյն եւ արժանաւոր ոչ այլ ինչ, որպէս զսէր։* 3 *Քանզի տրիտուր ընդ սիրոյ, եւ սիրոյն վայելչական եւ քաջապատշաճ է սէր*[1]*։* 4 *Յայսմ ծան[իմք] ամենիք[եան] եթէ իմ աշ[ակերտք էք] սիր[իցէք] զմիմեանս։* 5 *Եւ պատ[ուիրան] որ տամ ձեզ, «զի սիր[իցէք] զմիմեանս»*[2] (**Ա. Յվհ. Գ. 12**)*, որպէս եւ ես զձեզ սիրեցի։* 6 |163բ| *Եւ զի այսպէս սքանչելի եւ մեծ է, այլով իւիք տարացուցական եւ հաւանելի բանիւք ցուցից, որպէս ասէ մեծն Յոհաննէս՝ Աստուած սէր է* (**Ա. Յվհ. Դ. 8**)*։* 7 *Ոչ ասաց, թէ անուն նորա սէր է, այլ զինքն զանուանելի ենթակա մեծ եւ միայն առակոչ է այսու անուամբ, իբր առ ընչիւ, քանզի ա՛յլ է անուն, եւ այլ անուանելի, որպէս ա՛յլ է թիւ եւ այլ թուէլի։* 8 *Եւ անուն ոչ է անուանելի ենթակայ, այլ ոմն սոցա գոյացութիւն է, եւ ոմն ի վերա գոյացութեան ասացեալ եւ անգոյ՝ ըստ ինքեան։* 9 *Վասն որոյ ո՛չ բնութեամբ անուն ի վերայ իրիք էութեան, այլ դրութեամբ միայն։* 10 *Արդ, վասն այսորիկ ոչ զանուն նորա ասաց գոլ սէր, այլ զինքն զէն, որպէսզի ծանուցեալ զանբաղդատելի առաքինութեան եւ վերնայնոյն բարետոհմ պայծառութեան քաջաշնորհութիւն զանգիտեալ*[3] *պատկառեսցուք, եւ ըստ արժանւոյն արարեալ պատիւ, յաղագս Սկզբնատպին մի իշխեսցուք իբրեւ զփոքու իւիք եւ զաղաւտագունիւ զանց առնել։* 11 *Եւ ամենայն, որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է, զի Կայէն նախ ատելութեանն ծխով խաւարեցոյց զաչսն, եւ ապա զեղբայրասպան եղեւ։* 12 *Իսկ որ կայ ի սէրն, այսինքն յԱստուած, ի նմա բնակեալ է եւ յինքեան զնա բնակեցուցանէ։* 13 *Զի թէ Աստուած սէր է, ընդունակն սիրոյ, զիա՞րդ ոչ յինքեան զԱստուած բերէ։* 14 *Եւ թէ այս այսպէս է, ապա ատեցողքն տարապարտուց զոք, կամ զեղբայր, զսատանայ ունի բնակիչ, յոր եւ ինքն բնակէ։* 15 *Արդ ներբողական գլխովք պսակել զսա կամ զբոլորն պատմել առաքինութիւնս, ոչ դիւրին է ումէք։* 16 *Վասն այսորիկ ի տրամաբանութիւն ուրումն իմաստնոյ արտաքնոցն, ոչ անտեղեկագունի, որպէս եւ կարծեմ եւ ի մերոց աւրինացս սրբոց, գրիլ զսա նմ*|168ա|*անութիւն Աստուծոյ, եւ առ նոյն ինքն շաղկապ եւ տոգոր։* 17 *Վասն որոյ ամբաստանելով զմարդկանէ, ոչ զնա ունողաց, եւ ոչ զբարութիւն աւգտութեան նորա գիտաւղաց, ասէ զնա ինչ մի գոլ պիտանի ամենեցուն, եւ ոչ ի միջի։* 18 *Այսինքն՝ տեսեալ եւ արհամարհեալ, որպէս ի ծնէ կուրաց՝ գեղեցկութիւն եւ մեծու-*

---

[1] *Ձ՝ քաջապաշտ աճէ սեր*

[2] *Ձ՝ պատուեր նորա տամ ձեզ՝ սիրացէք միմիանս*

[3] *Զ սկզբնատպին կամէին նոյն ինքն սիրոյ մի, Ձ՝ զանգիրեալ սկզբնատպին կամէին*

թիւն արարածոց, կամ տեսլեան դիմաց պատշաճագեղութեան եւ որակութիւն զանազան գունոց ի ծաղիկս եւ յայլ ենթակայ նիւթս զայսոսիկ բերողաց։ 19 *Յիրաւի ապա խրատէ Պաւղոս զհետ երթալ սիրոյ, որպէս յարձակումն առողջ աչաց առ լոյս, եւ նովաւ առ ամենայն տեսանելիս, առանց որոյ անաւգուտ զամենայն մեծամեծ շնորհս եւ զազգի ազգի առաքինութեանց ունակութիւնս ասէ (***հմմտ. Եփս. Ե. 2-14***)։* 20 *Վասն որոյ չի՛ք ինչ ի հոգէկանաց կամ մարմնականաց արտաքո՛յ սիրոյ եւ ոչ ի չարեաց ամենայն՝ առանց ատելութեան, զորոյ ոչ զկատարուած գործոյն, այլ զսկիզբն ծննդեանն մարդասպանութիւն ասէ մեծն Յոհաննէս (***հմմտ. Ա. Յվհ. Գ. 15***)։* 21 *Զի որպէս սէրն արմատ եւ պատճառ է անթուելի բարեաց, եւ ատելութիւնն՝ ծնաւղ եւ սկիզբն անհուն եւ անզրաւ դժնդակութեանց։* 22 *Վասն որոյ, փախիցուք ի նմանէ եւ բուռն հարցուք զսիրոյ, զի զԱստուած ի մեզ բնակեցուսցուք եւ մեք յԱստուած ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։*

ԺԵ.

|168ա| ՆՈՐԻՆ Ի ԼԴ. ՍԱՂՄՈՍՆ, «ԴԱՏԵ՛Ա, ՏԷՐ, ԶԱՅՆՈՍԻԿ, ՈՅՔ ԴԱՏԻՆ ՁԻՍ». Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՁՕՐՈՒԹԵՆԷ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ

Ամենայն հավանականությամբ սաղմոսների հառային մեկնությունների շարքը գրվում եւ կարդացվում էր հոգեւոր դասի համար Հայաստանի եւ Կիլիկիայի վարդապետարաններում, որոնց ունկնդիրները հասու էին դասական լեզվի նրբություններին եւ աստվածային արարչագործության Աստվածաշնչային մեկնաբանությունները խորությամբ ընկալելուն:

Բնաբան ընդունելով Դավիթ մարգարեի ԼԴ. սաղմոսի «Դատեա՛, Տէր, զայնոսիկ, ոյք դատին զիս» աղերսը՝ Երզնկացին ո՛չ միայն հանգամանալի բացատրություններ է տալիս խորհրդանշական իմաստ արտահայտող մտքերին, այլեւ արդարության ու արդարադատության վերաբերյալ բազմաթիվ հարցերի:

Մասնավորապես արժեքավոր են դատի, դատավարության, դատարանի իրավունքի եւ դատական գործընթացի անհրաժեշտ վայրի ու մասնակիցների մասին եղածները, որոնք թեեւ անուղղակի, սակայն կարեւոր վկայություններ են հայ իրականության մեջ իրավագիտական մտքի եւ դատարանական համակարգի զարգացածության մասին:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ 2173 (Ա. 168ա-78բ), 2992 (Ձ. 119ա-127բ) եւ 2854 (Ճ. 136բ-39բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Աստուածային երջանիկ եւ բարի բնութեանն ամենառատ եւ աննախանձ բարերարութենէն*[1]*, ամենայն բնութիւնք բանականաց լրմամբ մասանց արարածոցս պարտականք գոլով անվճարական երախտեաց, անսպառ մշտնջենաւորութեամբ աւրհնութիւն եւ գոհութիւն եւ պաշտաւն մատուցանեն:* **2** |168բ| *Մանաւանդ որք զկենդանականն ընկալան զվիճակ եւ գեղ կերպարանաց տեսակի, եւ վայելչական արարածովք զուարճացեալ բերկրին, զսկիզբն կենդանութեան արարածոցս, զգեղն ցանկալի եւ*[2] *զանյագ վայելչութիւնն իմանալի եւ զգալի բանականաց, բանական իմաստութեամբ արարածոցս գեղեցկութեամբք գովեն:* **3** *Եւ զի պարտական ասացի, պարտ է իմաստութեամբ խոկալ եւ զպատճառս պարտուցն, զգլխաւորագոյն մասունսն, որք եւ յայլ անթուելի մասունս բաժանին:*

Բ. 1 *Առաջին պատճառ, զի արարածք են ամենաբարի Արարչին:* **2** *Երկրորդ, զի թէպէտ արարան*[3] *ոչ յիմեքէ ի նիւթոյ նիւթականքս, այլ յանգո-*

---

[1] *Ձ՝ բարերարութեան*

[2] *Ձ՝ ցանկալի ամենայն խաւնոց եւ*

[3] *Ճ՝ արարն՝ փոխ արարան*

յից եւ յանէից ի գոյութիւն եւ յէութիւն եկին եղականք ամենայն։ **3** *Երրորդ, զի ոչ վաստակաւք կամ աշխատութեամբ, այլ բանիւ հրամանի միայն։* **4** *Ըստ այնմ՝ «Ասաց, եւ եղեն, հր[ամեաց], եւ հաստ[ատեցան]»* **(տե՛ս Սղմ. ԼԲ. 9)**։ **5** *Զի թէ մեր ասելն եղականացս անաշխատ է, որքան անեղական եւ արարչական հրամանն։* **6** *Չորրորդ, զի որք եղենն, հաստատեցան եւ կան ի նոյն հաստատութիւն*[1] *ամենիմաստ նախախնամութեամբն անսասանութեամբ սերտեալք, եւ յարամնայութեամբ ի նոյնութիւն մնացեալք*[2]։ **7** *Հինգերորդ, իմաստք գեղեցիկ, զի ո՛չ խառնակս ինչ եւ շփոթեալս եթող զեղեալսն, այլ կարգ եդ եւ դաս, եւ որոշումն պատուոյ վերին լինել միջին եւ ներքին, իմանալիք եւ զգալիք, բանաւորք եւ անբանք, իշխանք եւ իշխեցեալք։*

Գ. **1** *Եւ այս դաս եւ կարգ յամենայն ազգս կենդանեաց՝ յիմանալիս եւ ի զգալիս, եւ ի բնական նիւթեղէն գոյացութիւնս։* **2** *Եւ կացոյց զնախախնամութիւնն կառավար եւ պահապան կալ իւրաքանչիւր բնութիւնսն, ըստ այնմ սահման ե՛դ, որ ո՛չ անցանեն։* **3** *Ըստ որում* |169ա| *ասէ. «Եդի ծովու սահմանս եդեալ դրունս եւ փականս, ասելով ցայդ վայր եկեսցես եւ մի զանցանիցես»* **(տե՛ս Յոբ ԼԸ. 10-11)**։ **4** *Նմանապէս ի վերուստ սկսեալ ամենայն բնութիւնք արարածոց սահման ունին յԱրարչէն։* **5** *Որպէս եւ վերին երկնի հրեղէն արփոյն տուեալ բնութիւն թեթեւ եւ սրընթաց, վերամբարձ եւ մշտաշարժ, գնդաձեւ, եւ շրջագայութիւն ունելով անթուելի եւ անտեսական, վարագոյր գոլով աստուածութեանն անեղական եւ անհանդուրժելի լուսոյ եւ եղանակաց դասուց լուսեղինացն, որպէս եւ երկինս երկրորդ մեզ՝ հողանիւթիցս։*

Դ. **1** *Իսկ անմարմին եւ իմանալի բանաւորացն եդեալ սահման կայանի եւ շարժութեան. շարժիլ անկարաւտ եւ անաշխատ բնութեամբն իւրեանց ի սպասաւորութիւն պաշտամանն Աստուծոյ եւ ի վարդապետութիւն նուաստագունիցն եւ կան ի նոյն անփոխաբնապէս, զոր ընկալան ըստ չափոյ տարողութեան յամենիմաստ Բաշխաւղէն։* **2** *Իսկ երկրորդ երկնի կամարայարկ խորանի հաստատութեանդ եդ միջնասահման եւ անջրպէտ լինել ջրեղէն կամարին մեծի, որ կայ ի վերոյ նորա*[3]*, սահման տուեալ նման հեռակցութեան ի սմանէ, որպէս եւ սմա յերկրէ, զծանրութիւն երկրի թեթեւացուցեալ եւ զկիզողական ջերմութիւն հրոյն արգելեալ, եւ ընդ վերին երկնի եւ հաստատութեան աւդոյս գնդաձեւ շրջագայութեամբ, եւ նա ձեւացեալ։* **3** *Այլեւ աւդեղէնս խորան լուսաձեւ ծաղկաւք եւ մշտա-*

---

[1] *Ճ՛ հաստատութեան*
[2] *Զճ՛ > եւ ... մնացեալք*
[3] *Ճ՛ ի վերա նորա*

զուարճ, անթառամելի գեղով յարապայծառ, մշտասահ լուսեղինացն ընթացից, կայից եւ շարժութեան նոցա տեղի, բացակայութեան եւ հեռաւորութեան, ծագման լուսոյն սահմանել ժամանակաց, եւ զայլսն ամենայն որքան գեղեցկապէս դասն սահման[1] *ընկալան։*

Ե. 1 *Եդեալ իմաստութեամբ մեծաւ եւ* |169բ| *սահման երկրի, վասն բնական ծանրութեանն զոչ ի վեր շարժելն ուժգնակի հնչմամբ հողմոյն ի ներքոյ փչմամբ, զոչ ի վայր բերիլն անսիւն եւ աննեցուկ, ըստ արարչական բանին զվերամբարձութեամբ հաստատութիւնն։* **2** *Ըստ այնմ՝ հաստատեաց զերկիր ի վերայ «հաստատութեան զի մի սասանեսցի յաւիտեան»* (**տե՛ս Սղմ. ՃԳ. 5**)*, իսկ զկենդանեաց բնութիւնս եւ զզանազանութիւնս*[2]*, զտեղիս եւ զբարս, զկերակուրս եւ զպէտս, որ եւ պահեն զիւրաքանչիւր սահմանս բնութեանն՝ խառնմունք եւ զատուցմունք, որպիսութիւնք ձեւոց եւ կերպին, կայից եւ տեղեաց, ծննդեան եւ սննդոց։* **3** *Եւ ժամանակաց յեղանակաւոր փոփոխմանց տուընջեան եւ գիշերոյ զուգամասնութիւնք, կարգաւորապէս աճմունք եւ նուազութիւնք, որպէս եւ է՛ տեսանել ի սկզբանէ լինելութեան մինչեւ ցայժմ, եւ կան եւ մնան յաւիտեան անճառելի եւ հրաշալի եւ լի զարմացմամբ, եւ խոկումն մեծ խորհրդոյ զցայգ եւ գցերեկ։*

Զ. 1 *Այսր ամենայնի կարգի եւ սահմանի՝ պահպանութիւն եւ առողջական շարժումն, եւ ըստ բնութեան գովելի եւ գեղեցկապէս կարգի եւ դասու բնաւորականի ունակութեամբ զարդարունք։* **2** *Իսկ անկարգութիւն եւ անդասութիւն, եւ ի բնական սահմանէն բացակայութիւն՝ հիւանդականք եւ պարսաւելիք, խռովարարք եւ անհամբոյրք։* **3** *Որպէս եւ ի ծովս պակասութիւն քան զչափ սահմանին՝ աղբիւրաց նուազութիւնք եւ ցամաքութիւնք, եւ զեղովն առաւելութեամբ՝ երկրի եւ գաւառաց ապականութիւնք եւ խոպանութիւնքն*[3]*, եւ խռովական եւ եռանդնոտ շարժումն ալեկոծութեան՝ բախմունք եւ նաւաբեկութիւնք։* **4** *Նոյնպէս եւ յառաւել ուժ*|170ա|*գնակի հողմոց շնչմանէ առ ի ներքոյ յերկրի՝ դղորդմունք եւ կործանական շարժմունք եւ պատառմունք թանձրայատակ հաստատութեանն երկրի։* **5** *Նմանապէս եւ կենդանեաց, որ ի ջուրս եւ որ ի ցամաքի եւ յաւդս, արտաքոյ իւրեանց բնական սահմանին յեղափոխութիւնք՝ ապականութեան առիթ, վնասականք եւ մահաբերք։* **6** *Եւ տարերաց չափոյ եւ կշռի յաւելմունք եւ նուազութիւնք՝ ցաւաբերք եւ հիւանդարարք։* **7** *Նոյնպէս եւ որ յաւդս լուսաւորացդ անբնական եւ արտաքոյ սահմանին պա-*

---

[1] *Զ դասս եւ սահման*
[2] *ԶՃ՛ > զզանազանութիւնս*
[3] *Զ > խոպանութիւնք*

տահմունք՝ աւդոց փոփոխման պատճառք, սառամանիք ցրտութեան, բուսականաց եւ տնկոց, եւ զգայական կենդանեաց, պտղոց եւ ծննդոց սխալականութիւնք։ **8** *Եւ կիզանող տաւթոյ եւ տարադէպ ջերմութեան եւ խորշակի բերմունք՝ ցաւաբերք եւ հիւանդարարք։* **9** *Այլեւ աւդոց այլայլմունք եւ վերին հողմոյն անսահմանաւրէն բախմունք առնեն հրացանութիւնս եւ ժանդեաց ի վերուստ բերմունս, ամպք կարկտածինք եւ այլ զանազան յեղմունս՝ ահաբեկիչք եւ երկեղականք*[1]*։*

Է. **1** *Նոյնպէս եւ իմանալեացն բանաւորաց. արտաքոյ իւրեանց բնական շարժութեանն եւ աստուածադիր սահմանին ունակութեանց, աշխարհի ամենայնի խռովարար ամբոխք եւ դժնդակութիւնք կրից տրտմականաց եւ անբժշկելի հարուածոց առիթ։* **2** *Սակս որոյ եւ զնախադրութիւն բանիս յերկարեցի։* **3** *Վասն զի ոմն յերկնաւորաց դասուցն ի վերնայնոցն եւ ի բարձրագունիցն, եւ յառաւել անտեսանելոյն Աստուծոյ հպաւորականաց, թողեալ զկարգ եւ զդաս սահմանին, զոր յարարչութեանն*[2] *ընկալաւ, խոտորմամբ շեղեցաւ եւ յուղղական ձեւոյն թիւրեցաւ, եթէ վասն առաւել բարձրագոյն |170բ| փառացն եւ պատուոյ գերազանցեալ ճոխութեանն, ո՛չ կարացեալ տանել, անբարտաւանական ախտիւ արբեալ յիմարացաւ, եւ եթէ զոր ունէրն ըստ իմաստութեան Տուողին չափոյ, յայն ո՛չ բաւականացեալ ժպրհեցաւ յանհասանելին ինքեան բարձրութիւն, հպարտութեամբ արժանի վարկուցեալ։* **4** *Եւ եթէ յիւրական դասուն սահմանեալ փառաւորութեանցն, զոր ի սկզբանէ ունէին՝ լռեալ դադարեաց մեծամտութեամբ, զառեալն ի վեհագունիցն ո՛չ կամեցեալ տալ յայլս, եւ ո՛չ զանձն արկեալ առաջի Վէհի միոյ վսամապետի։* **5** *Այլ սակայն որպիսի պատճառաւ եւ իցէ զվայրաքարշ մարմնոցս ծանրութիւն ախտի ընկալեալ փոխարկաբար յիւր անմարմին եւ վերնաշարժ բնութիւնն, վասն որոյ հակատրեալ կործանմամբ անկաւ անկումն չար եւ անկանգնելի, զոր մարգարէն այպն արարեալ ասէ. «Զիա՞րդ անկաւ [երկնից] Արուսեակն, որ ընդ առաւաւտն ծագէր»* **(Եսայ. ԺԴ. 12)**։ **6** *Անգեալ*[3] *ի հիւանդութենէ*[4] *դժնդակ եւ անբժշկելի, ի լուսոյ խաւար լեալ եւ անուանեալ ի բարոյն հեռաւորութեամբ չարացեալ, եւ վերստին դարձի առ բարին անյոյս մնացեալ, այլեւ նոյն գտեալ չարութենէն հետեւեալ եւ զվնասակար ախտին դառնութիւն յանբաւ եւ յանթիւ հոյլս աճեցուցեալ, զայս կենդանի եւ բանական անդաստան հողանիւթ արարչական ձեռինն*

---

[1] *Զ երկչականք*
[2] *Զձ՛ յարարչութենէն*
[3] *Զ անկաւ*
[4] *Զ հիւանդութեան, ձ՛ ի հիւանդութեան*

ստեղծեալ, անմեղ եւ մաքուր ի ստեղծմանէ եղեալ, իւրոյ չար սերմանցն տեղի գտեալ, ժանդացուցեալ ապականեաց, եւ որոմնաբեր բուսոց եւ խոցոտիչ փշոց անդաստան արարեալ զբարի սերմանցն խոպանեաց պտղաբերութիւն։ 7 *Վասն զի որ զիւրն ո՛չ պահեաց տեղի բարձրութեան եւ փառաց, տեսեալ զայսքան հրաշ|171ա|ալի եւ մեծ ստեղծուած պատկեր եւ նմանութիւն անեղին փառաց, սքանչելի խառն[ո]ւած եւ կապումն անմահին ընդ մահկանացուիս, նախ ընդ ստեղծուած կազմածիին հիացեալ ափշէր, թէյորպիսի իրս լինելոց է կատարումն փառաց սորա։* 8 *Վասն զի եւ է իսկ զարմանալի, թէ զիա՞րդ միեւնոյն կենդանի մահկանացու եւ անմահ՝ զմինն փոփոխմամբ եւ զմինն լինելութեամբ, մինն արտաքսեալ, եւ մինն ի ներքս եմուտ, որպէս ի հոսման գետոց, որ ո՛չ կայ մնայ, եւ թէ որպէս պատկեր Աստուծոյ եւ ընդ վատթարի մարմնոյս կապեալ։* 9 *Զինչ լծակցութիւնն եւ միաւորական շաղկապութեանն խորհուրդ՝ ընդ երկնաւորին եւ անմահի ժամանակաւոր եւ մահկանացու*[1] *նիւթոյս։*

Ը. 1 *Այլ այս յոլովս տայ նիւթ իմաստնոց եւ աստուածամերձից անձանց, զոր եւ սակաւս ի նոցունց յիշատակեցից։* 2 *Վասն այնորիկ հոգի անմահ ընդ մահկանացւի մարմնոյս լծակցեցաւ։* 3 *Մի՛, զի նահատակութեամբ եւ մարտնչելով առ ստորին նիւթս, զվերին փառսն ժառանգիցեմք, որպէս ոսկի հրով՝ աստ քննեալ։* 4 *Եւ առաքինութեան մրցանակ, այլ ո՛չ Աստուծոյ պարգեւ միայն ունիցիմք զյուսացեալսն։* 5 *Երկրորդ. որպէսզի թէ վատթարութիւն ինչ ձգիցէ առ ինքն՝ եւ լուծանիցէ առ սակաւ թանձրութեամբն, զի որպէս Աստուած հոգւոց, նոյնպէս եւ հոգի մարմնոց լիցի, եւ դաստիարակ իցէ ինքեամբ սպասաւոր նիւթոյն, եւ ընտանեցուսցէ Աստուծոյ զծառայակիցն։* 6 *Երրորդ. զի կրկին կազմածովն կրկին պարգեւաւք գերազանցեալ գտաւ, քան զամենայն եղականաց բնութիւնս, զի յետ մահու յարութեան յուսայ եւ յետ սխալական մեղացն՝ թողութեան. զյարութիւն՝ վասն անմահական հոգւոյն եւ թողութեան մեղաց՝ վասն տկար եւ նիւթական մարմնոյն, որում ո՛չ էր հնար այս անգելոյ Արաւսեկին՝ |171բ| հոգի միայն գոլով, ո՛չ ունելով մարմին, որով տաժանելի կրիւք ապաշխարեալ արդարանայր։* 7 *Եւ չորրորդ. միջնասահման կարգեցաւ բանականին եւ անբանի, թէ մարմինն կոյս շեղեսցի եւ զմարմնոյն նախապատուեսցէ զվարս, ընդ անասունսն համարեալ լիցի, իսկ եթէ ի բանականն տարցի, արհամարհելով զանասնական հեշտութիւնս, եղիցի որպէս երկնաւորն եւ զհոգեղինացն ժառանգեսցէ զտեղի՝ ի դաս լուսեղինացն, յորմէ անգեալ նոքա խաւարեցան։* 8 *Վասն որոյ ո՛չ*

[1] *Ճ եւ մահ եւ մահկանացու*

այնքան ընդ իւրոյ փառացն անգումն դժկամակ եղեալ անախորժական կրիւք խոցոտէր, որքան ընդ մարդոյն ճոխական գերազանցութիւն[1] *պատուոյ նախանձուն հրով տոչորէր, յարութենէ կանգնելոյ յառաջին փառսն ակն ո՛չ ունելով, զպատկեր նմանութեան փառացն Աստուծոյ դաւաճանելով՝ ընդ ինքեան կործանէր։*

Թ. 1 *Խորմանկութեամբ եւ պատրանաւք դրժեալ, դաւաճանութեամբ աւձին խաբելով, զանմահականն եւ զանեղծանելին ընդ մահու եւ ապականութեամբ արկեալ, եւ անողորմաբար յարձակմամբ ի վերայ դիմեալ, զպատկերն Աստուծոյ ի նմանութիւն անասնոց իջուցանէր, յանմահական նորա ժառանգութենէն գերեալ արտաքս ընկենոյր։* **2** *Եւ զի Աստուծոյ հակառակ գտեալ, յորմէ եւ սատանայ անուանեցաւ, ընդ նմա կամեցեալ մարտ պատերազմի եւ նախանձու ունել։* **3** *Եւ զի անբաւական եւ մեծի տերութեանն ոչ կարացեալ ընդդիմանալ, զդառնութիւն նախանձուն ընդ պատկերաւ պատուեալ նախաստեղծ մարդոյն արկանէր, եւ այս որպէս հետամտեալ զամենայն տեսակս գարշութեան*[2] *ախտից ի ծնունդս նոցա հեղոյր, մինչ զիմանալի ակն տեսութեան նոցա ժանդահոտ*[3] *ծխով մեղացն խաւարեցոյց, եւ զստեղծ|172ա|իչ եւ զնախախնամաւղ բարերարն Աստուած ի մոռացանս արարեալ, զաստուածականն անուն ստեղծական արարածոցս ետ կոչել։* **4** *Եւ այսպէս՝ յանցաւորութեամբ պատուիրանին զմարդկային բնութիւնս մահուամբ եւ ապականութեամբ դատապարտէր։* **5** *Վասն որոյ եւ մարգարէն ի դիմաց բնութեանս, հանգոյն այլոց մարգարէիցն դասու, առ վրէժխնդիրն Տէր ձայն արձակեալ ասէ. «Դատե՛ա, Տէ՛ր, զայնոսիկ, որ դատեն զիս»։*

Ժ. 1 *Այլ նախքան զլուծումն մեկնութեան պաղատելի եւ աղերսական բանիցս եւ զարդար իրաւանցն Աստուծոյ վրէժխնդրութիւն, զոր հայցէ, տեսցուք զվերնագիր սաղմոսիս*[4]*. «Ի կատ[արած] Սաղմոս Ի. Դաւիթ»։* **2** *Զի յորժամ հալածեր Դաւիթ ի Սաուղայ, երգեաց զսաղմոսս զայս յիշէ եւ զեփեսացիսն*[5]*, այլեւ եդովմայեցիքն պատերազմէին ընդ Դաւթի։* **3** *Իսկ ճշմարտապէս մարգարէութիւն է վասն չարչարանաց Տեառն մերոյ, զոր կրեաց ի հրէիցն։* **4** *Եւ կարդալոյն առ Հայր, այլեւ վասն սուրբ առաքելոցն նորա, նաեւ ամենայն մարդկային բնութեանս, զոր բազմահոյլ ախտիւք չարչարէ բանսարկուն, վասն զի բազմադիմի խորհրդով բերէր Դաւիթ*

---

[1] *Ա գերազանցութիւն, Զձ յարութեան*
[2] *Զձ չարութեան*
[3] *Ձ ժանդախոտ*
[4] *Զձ սաղմոսիս որ ասէ*
[5] *Ա զիփացիսն*

զաւրինակ Տեառն իւրոյ, զի որպէս հալածեցաւ Դաւիթ ի Սաւուղայ, եւ որդի նորա՝ յորդոցն Սաւուղայ եւ բնութիւնս յանմարմին թշնամոյն։ 5 *Այսն չար խեղդէր զՍաւուղ եւ Դաւիթ դիւրէր նմա, եւ Սաւուղ խորհէր մահ նմին (տե՛ս* **Ա. Թգ. ԺԶ. 14-15, 23***)։* 6 *Նոյնպէս Տէրն մեր, որդին Դաւթի, զդեւս հրէիցն հալածէր, եւ նոքա խորհէին մահ նմա։* 7 *Եւ բանսարկուն սատանայ խորհէր ջնջել զմարդկային բնութիւնս։* 8 *Վասն որոյ նկարեալ ի Դաւիթ խորհուրդ Տեառն մերոյ, եւ փրկութիւն ամենայն բնութեանս, որպէս եւ հայցէ իսկ պաղատանաւք. «Դատեա՛, Տէր, զայնորիկ, որ դատին զիս»։*

ԺԱ. 1 *Այլ եթէ զի՞նչ դատաստ|172բ|անն իցէ, զոր հայցէ եւ կամ զի՞նչ մարտ պատերազմին, ընդ որում մարտիցէ, ո՛չ դիւրատես եւ ծանծաղագոյն մտաւք իմասցի։* 2 *Վասն որոյ զգլխաւորագոյն մասունս, որովք դատաստանին իրողութիւնք բաղկանայ՝ ի միջի դիցուք, յորմէ եւ այլ բազմութիւնք մասանց բաժանին։* 3 *Եւ է՛ առաջին գլուխ եւ նիւթ դատաստանի Աւրէնսդրականն, այսինքն՝ աւրէնք պատուիրանին յիմաստնոյ ումեքէ եդեալ, որովք պահեն դատաւորք զիրաւացին առ հաւանեալսն։* 4 *Երկրորդ. դատաւորական իշխանութիւնն։* 5 *Երրորդ. տեղի՝ դատաստանին։* 6 *Չորրորդ, ինքն իսկ իրաւունք դատաստանին. եւ երկոքեան սոքա միմեամբք կոչին, վասն զի դատաստան յիրէ եւ ի տեղւոջէ բաղկանայ։* 7 *Յիրէ, որ է դատ, այսինքն՝ քննե՛լ, եւ ի տեղւոյ, որ է աստան, որպէս եւ տեղի բնակութեան ազգաց անուանին՝ Հայաստան։* 8 *Իսկ հինգերորդ. դատելոցն անձինք, որ զնիւթոյ տեղի ունին առ դատողականն։* 9 *Վեցերորդ. դատախազքն, վասնզի ի դատաւորէ քննաւղէ եւ ի դատախազաց, ի տեղւոջ ուրէք յաւրինի իրք դատաստանի։* 10 *Արդ, սոքա վեց գլխաւորական մասունք տեսանին յիրս դատաստանի։* 11 *Այսոքիկ այժմ յայտնի եղելոյ։*

ԺԲ. 1 *Տեսցուք զի չորք են սեռականագոյն դատաւորաց անուանք, որ ցուցելովք մասամբքս վարին. բարոյականն, տնտեսականն, քաղաքականն, համաշխարհականն։* 2 *Եւ յիրաւի այսոքիկ։* 3 *Զի յորժամ զարդարէ ոք զբարս, կամ զմիոյ ուրուք զարդարէ զբարս եւ լինի բարոյական, եւ կամ զտան, եւ լինի տնտեսական։* 4 *Եւ կամ զքաղաքի, եւ լինի ք|173ա|աղաքական։* 5 *Իսկ համաշխարհականն Աստուծո՛յ վայել է։* 6 *Ըստ այնմ՝ «Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է» (տե՛ս* **Սղմ. ԽՁ. 3***)։* 7 *Եւ թէ «Աստուած դատաւոր արդար» (***Սղմ. Է. 12***), վասն զի նա՛ է ճշմարիտ եւ առաջին դատաւոր, յորմէ ամենայն ազգ մարդկան ընկալան զդատողութեանն անուն։* 8 *Եւ զի մի՛ երկարասցի շարադրութիւն բանիս, ո՛չ աստ ի մէջ բերցուք զբարոյականն, զտնտեսականն եւ զքաղաքականն,*

եթէ զինչ աւրինակ դատողութեանն է ի նոսա՝ ըստ իմաստասիրացն դրից, այլ զայս գիտասցուք, զի յիսկզբան լինելութեան մարդոյն զայսոսիկ գլխաւորական մասանցս իշխանական դատողութիւն ետ Աստուած նախաստեղծ մարդոյն, յետ զաւրհնութեան շնորհսն բաշխելոյն, ասելով. «Աճեցէ՛ք եւ բազմացարուք եւ լց[է՛ք] զերկ[իր]։ 9 *Եւ իշխ[եցէք] ձկանց ծովու եւ թռչնոց երկնից, անասնոց եւ ամենայն սողնոց» (Ծնն. Ա. 22, 28)։* 10 *Նախ զայն ցուցանէ, զի բարոյական դատողութեամբ զիւրն յառաջագոյն դատեսցի ախտից մասունս, զոր սողունս եւ գազանս ասէ։* 11 *Սողուն կոչելով զհեշտ ցանկութիւնսն, զտրտմութիւն, զերկեղ, որք խոցոտեալ ծակոտեն եւ վիրաւորեն։* 12 *Եւ ձկունս, որք զխոնաւ եւ զվիժանուտ կեանս սիրեն, եւ ոչ զառողջամիտ ժուժկալութիւնս, եւ գազանս՝ զսրտմտական եւ զչար խորհուրդսն։* 13 *Եւ թռչունս՝ զթեթեւամիտ ամպարտաւանութիւնն, որոց սիրելով*[1] *սոցա եւ զմասունս զայսոսիկ ընդ դատողութեամբ մտացն կարգաւորելով՝ զխոհականութիւն բանին իշխան եւ դատաւոր կացուցեալ ի բնութեանն դատարանի, զաւրանայր*[2] *տիրել եւ արտաքին գազանաց եւ սողնոց, եւ լինել տան եւ քաղաքի, եւ աշխարհի դատաւոր եւ իշխան։*

ԺԳ. 1 *Արդ, զի՞ յաղթեցաւ յիւրոց ընտանի գազանացն եւ սողնոց*[3]*, ո՞չ հնազանդեցան նմա արտաքին գազանք եւ սողունք։* 2 |173բ| *Եւ զի՞ եդ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել զայսոսիկ, եթէ զդրախտին գեղեցիկ տնկոց իմասցիս գործ եւ պահպանութիւն։* 3 *Եւ թէ զիմաստութիւն հանճարոյն, զոր տնկեաց Արարիչն յիշխանական առաջնորդին ի բանական հոգւոջն։* 4 *Զի դրախտ է՛ իմաստութիւնն աստուածային եւ մարդկային եւ սոցայցն պատճառաց։* 5 *Եւ ծառք ի նմա տեսակք*[4] *եւ մասունք իմաստութեանն*[5]*, զոր հրամայեաց Արարիչն գործել եւ պահել խոհականին իմաստութեամբ, որով եւ տնկազարդն այն դրախտ պահեալ շինէր իւրն ի բնակութիւն։* 6 *Արդ, զի՞ պատրանաւք չարին գերեցաւ նախահայրն ի վայրէն փափկութեան, կորոյս եւ զդատողակա՛ն իշխանութիւնն եւ զսեփհականն իւր ժառանգութիւն, եւ անկաւ ընդ ծառայութեամբ ախտից, եւ ընդ դատապարտութեամբ Դատախազին կենաց մերոց։* 7 *Եւ ընդ նախահաւրն պարտեաց եւ ամենայն ծնունդք նորա ի նոյն պատիժս պարտուց պատուհասի դատապարտեալ լինէին։* 8 *Վասն*

---

[1] *Զձ տիրելով*
[2] *Զձ > զարանայր*
[3] *Զձ > եւ լինել տան... եւ սողնոց*
[4] *Զձ տեսարանք*
[5] *Զ իմաստութեամբն*

որոյ ի դէմս ամենայն մարդկային բնութեանս մարգարէն Դաւիթ յամենեցունց Տեառնէն դատաստան հայցէ. «Դատեա՛, Տէր, զայնոսիկ, որ դատին զիս»։ **9** *Եւ զի ոչ անտես արար Բարերարն զգործս ձեռաց իւրոց եւ լուա՛ւ զպաղատանս նահապետացն եւ մարգարէից, որ աղաչէին գալ ի դատաստան արդարադատ իրաւամբք, վասն որոյ եկեալ, ասէ. «Ի դատաստան եկի յաշխարհս յայս» (**Յվհ. Թ. 39**) եւ թէ՝ «Այժմ իշխ[ան] աշխ[արհիս] այսոր[իկ] դատապարտեալ է (**Յվհ. ԺԶ. 11**)։* **10** *Եւ թէ զի՞նչ էր, որով դատէրն զմեզ թշնամին, եւ զի՞նչ իրաւունք դատաստանին, որով դատեաց Տէր մեր զմերն անիրաւ դատապարտաւղ, քննեսցուք ճշմարտութեամբ։*

ԺԴ. **1** *Արդա՛ր է Աստուած, վասն զի ար|174ա|ար զմարդն ի պատկեր բարերարութեանն Իւրոյ յարդարութիւն եւ յանմեղութիւն, տուեալ նմա անձնիշխանութիւն, անմահ եւ անապական կենաց կցորդութիւն, աւրհնութիւն*[1]*, աճման ի բազմութիւն՝ ի վերայ զգալի եղականացս, թագաւորական իշխանութեամբ տէրութիւն, ընդ որ նախանձեալ բանսարկուն՝ դաւաճանեալ խաբեաց խորամանկութեամբ նախ զԱրարիչն չարախաւսելով, իբր թէ յաղագս նախանձու ո՛չ կամեցաւ ձեզ ճաշակել ի պտղոյն, զի մի կերեալ աստուածք լինիցիք, որում հաւանեալ խրատու նենգաւորին, կորոյս զաստուածային պարգեւացն զճոխութիւն, փոխանակ արդարութեանն եւ անմեղութեանն պատուիրանին յանցաւորութեամբ*[2] *եղեւ մեղանչական։* **2** *Ընդ աւրհնութեանն աճման ժառանգել զերկիր անիծից, փշաբեր եւ տատասկայծին, եւ զանասնական ծնունդս՝ երկամք եւ ցաւաք կնոջն։* **3** *Ի վեհ եւ յիշխանական տերութենէն անգեալ ընդ ծառայութեամբ ախտից զանազան կրից մեղանացն։* **4** *Եւ ապա՝ ի վերջոյ ամենայնի, մատնեալ ի ձեռս յետին թշնամոյն մահու. մարմնոյն ի հող դատապարտեալ՝ ապականութեամբ, եւ հոգւոյն ըստ մեղանացն ի դժոխս կրել զպատիժ պատուհասի յանցմանն։*

ԺԵ. **1** *Արդ, այսու ամենայնիւ դատապարտեցաւ մարդկեղէն բնութիւնս դաւաճանութեամբ չարին, որ թիւրեաց զբնութիւնս յիւր բնական վայելչութեան գեղոյն, որ եւ բազմապատիկ մեղաւքն իւրեանց արարին չարախաւս զնա առաջի Աստուծոյ, իբր թէ կամաւ սիրեն նոքա զչարութիւն, որպէս եւ ինքն։* **2** *Սակս որոյ յարդարութենէն դատապարտեալ լինէր, եւ լինէր վկայ չարախաւսութեան նորա, զի ոչ ոք ընտրեցաւ ի բնութենէս ի ծննդոց նախահաւրն այնպէս արդար, որպէս ստեղծ զնա Աստուած։* **3** *Զի*

---

[1] *Զձ՛ > անմահ եւ... օրհնութիւն*

[2] *Ձ՛ անցաւորութեամբ*

ամենեքեան զաչս մտաց, որում արժան էր ի վեր նայել |174բ| կափուցին[1]*, զգայարանաւք ընդ ստորինս ցնդեալ յաճախեցին ի չարիս։* 4 *Եւ լինէր այն ներգործութեամբ*[2] *սատանայի, եւ ոչ եթէ բնութիւնն, զոր անմեղ արար Աստուած։* 5 *Վասն որոյ*[3] *եւ ոչ ոք ի մարդկանէ կարաց զնա սուտ առնել։* 6 *Վասն որոյ զամենեսեան դատապարտէր, թէ վասն կամաւոր եւ բնաւորապէս մեղանչելոյն իւրեանց կրեցին զանեծս եւ ժառանգեն զմահ եւ զապականութիւն։* 7 *Եւ զի թէպէտ մարդիկ զարդարութիւն, եւ յայտ անտի՛ է, զի գովեցին զնա, բայց ոչ ամենայնիւ կարացին մնալ յարդարութիւն, վասն դաւաճանելոյ ի բանսարկուէն։*

ԺԶ. 1 *Ըստ որում, ամենայն ծնունդք նախահաւրն ի նոյն պատիժ պատուհասի դատարպատել լինէին։* 2 *Վասն որոյ ամենայն բնութեանս բերան եւ լեզու եղեալ մարգեարէն Դաւիթ, ձայն պաղատանաց առ արդարադատ Տէրն առաքեալ, ասէ. «Դատեա՛, Տէր, զայնոսիկ, որ դատին զիս»։* 3 *Վասն որոյ գթութեամբ եւ ողորմութեամբ Հաւրն եւ առաքմամբ, եւ հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ, եկեալ բանն Աստուծոյ եւ Միածին Որդին, խառնեցաւ ի մարդկեղէն բնութիւնս, զի պահեսցէ զսա*[4] *ի բնական արդարութիւնն իւր, զոր ստեղծ, եւ զհայր մեղացն դատապարտեսցէ։* 4 *Եւ զի կրեաց մարմնով զմարմնոյ կիրս, որպէս զամենայն մարդ, եւ հոգւովն զհոգւոյն, եւ ի կրելն ո՛չ մեղաւ, զի լոյս աստուածութեանն խառնեալ ընդ լուսոյ մտացն, եւ նովաւ ընդ մարմինն եւ զխաւար նորին բնական կրիցն պահէր ի սահմանս իւր, եւ ոչ տայր չարութեանն հաւր սերման առ ինքն մերձենալ։* 5 *Ուստի եւ յամենայն տեղիս, ուր դատապարտէր զբնութիւնս սատանայ զամենիսեան դատարան գործեալ, Տէրն յամենայնի դատապարտեաց զնա արդար իրաւամբք դատաստանի, զերկանցն պատուհաս ի ձեռն երկանցն եբարձ յայրի անդ, ուր էր գերեզման|175ա| նախամաւրն, կուսական ծննդեամբ զախտաւոր խառնիցն ծնունդ մաքուր եւ հոգեւոր ծնունդ մեզ պարգեւելով։*

ԺԷ. 1 *Իսկ զմեղս հասարակաց ազգի մարդկան, որ են խայթոցք մահու եւ դժոխոց ի վերայ երկրի՝ դատապարտեալ եբարձ, ասելով ցանդամալոյծն. «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (**Մտթ. Թ. 2**)։* 2 *Իսկ զանիծիցն*[5] *բարձումն ի վերայ փայտին արար, բեւեռելովն ի խաչին ըստ առաքելոյ, եւ զգիր պարտաւորութեանն մեր պատառեաց։* 3 *Իսկ զապականութեան քակտումն ի գերեզմանի արար, դնելովն ի գերեզմանի անապական*

---

[1] *Ա յաջորդում է ջնջած՝ եւ ընդ*
[2] *Ձ գործութեամբ*
[3] *Ձ ըստ որում] վասն որոյ*
[4] *Ջ զնա*
[5] *ՋՁ քոյ զնոյն իշխանութիւն տուեալ եւ գլխաւորին առաքելոց իսկ զանիծիցն՝ փոխ քո... զանիծիցն*

թաղմամբն։ 4 *Իսկ զմահու լուծումն ի դժոխս արար, ուր*[1] *արգելեալ եւ փակեալ կային ամենայն հոգիքն, եւ ոչ ոք կարէր լուծանել զերկունս մահու յանցանէ, զորս յղացեալ ունէր դժոխք։* 5 *Եւ ի վերայ ամենայնի արդար իրաւամբք յաղթող եղեւ, զի զայն մարմինն, յոր չունէր իշխանութիւն մահ մերձենալ կամ անէծք, որք են մեղաց պատուհաս, Տէրն կամաւորաբար, մահ ընկալաւ, եւ անէծս անուանեցաւ վասն մեր, զի մեզ ի մեղացն եւ յանիծիցն ազա[տեսցէ], որ առաջին Ադամաւ սփռեցաւ, երկրորդ Ադամ սրբեսցէ, եւ մեղացն մեր պարտական զառիթն եւ զդաւաճանող՝ դատապարտեսցէ արդարութեամբ։* 6 *Զի այն մարմինն եցոյց, թէ ամենայն մարմին[ք] անմեղք էին իւրեանց կրիւքն, եթէ ոչ էիր դու պատրեալ։*

ԺԸ. 1 *Եւ այսմ դատաւոր եղեւ Հայր եւ արդարացոյց զդատաստանն որդւոց եւ սատանայ դատապարտեցաւ պատճառ մեղաց մեր եւ դատապարտութեան։* 2 *Եւ մեք վերստին գրեցաք դարձեալ յարդարութիւն։* 3 *Եւ զա՛յս հայցէ մարգարէս ասելով. «Դատեա՛, Տէր, զայնոսիկ»։* 4 *Այսինքն՝ զսատանայ եւ զկիրս ախտիցն, որովք դատ|175բ|էր զմարդկեղէն բնութիւնս։*

ԺԹ. 1 *«Մարտիր ընդ այնոսիկ, ոյք մարտնչին ընդ իս»* (**Սղմ. ԼԴ. 1**)։ 2 *Որովք մարտեան յայնժամ ընդ նախաստեղծիցն, որպէս եւ որդիս, որին յերգսն ասէ. «Որդիք մաւր իմոյ մարտեան ընդ իս»* (**Երգ. Ա. 5**) *մարտնչին եւ այժմ ընդ նոցունց ծնունդս։* 3 *Եւ այսոքիկ էին նմա զէն պատերազմական մարտին դիւրահաւան դէմք կնոջն, զոր եգիտ խաբմանն տեղի աւձին մարմին, ընդ որով պատրուակեալ ծածկեցաւ։* 4 *Կեղծաւորական բանքն պատրանաց, որով խաբեաց զպարզամիտսն նախաստեղծիցն ունկնդրութիւն, որով ջամբեաց զդառնութիւն մահուն։* 5 *Փայտն գիտութեան բարւոյ եւ չարի, զորոյ զպտուղն ստեղծիչն հրաժարեցուցանէ, եւ նա խրատ տայ ուտել, վասն որոյ հաճոյ աչաց հայելոյ եւ քաղցր ի կերակուր թվէր այն, որ փորձիւ քան զամենայն լեղի դառնագոյն։* 6 *Այսոքիւք մարտեաւ յայնժամ եւ կողոպտեաց ի կենաց զնախամայրն առաջին, եւ նովաւ զմարդն աստուածաստեղծ, թէպետ ո՛չ խաբեալ, այլ հաւանեալ ողորմելի դիմաց կնոջն, որ եւ կենաց կցորդն՝ մահու եղեւ*[2] *կցորդ։* 7 *Վասն որոյ ասէ. «Մարտի՛ր ը[նդ այնոսիկ որ մարտչին ընդ իս]»։* 8 *Եւ թէ որո՞վ մարտնչի*[3]*, ասէ՝ «Առ զզէն եւ զասպար»* (**Սղմ. ԼԴ. 2**)։ 9 *Արդ ոչ զինուց պէտք են եւ ոչ ասպարոյ, զի եւ ոչ Աստուծոյ զէն է եւ ոչ ասպար է, այլ զբանն Աստուծոյ կոչէ, որ ասէ եւ լինի եւ զտանջողական զաւրութիւն նորա։*

---

[1] *Զձ՛ որ] ուր*
[2] *ձ՛ > եղեւ*
[3] *Զ > եւ թէ... մարտնչի*

Ի. 1 *Եւ դարձեալ զի որպէս թշնամին*[1] *կենաց մերոց մարտնչելով ընդ մեզ, զէն իւր եւ ասպար զգեցաւ, նոյնպէս Տէրդ մեր, որ փոխանակ մեր մարտնչիս, առ զզէն Աստուածութեանդ քո, եւ ասպա՛ր մարմին ի մարդկային բնութենէս «եւ մարտի՛ր ընդ այնոսիկ, որ մարտնչին ընդ իս»։* **2** *Զի յայտ լիցի, թէ չէ տկար եւ թոյլ մարմնոյ բնութիւն ի ստեղծմանէ, այլ մեք արարաք զնա տկար։* **3** *Եւ, զոր աւրին|176ա|ակ, ասպար զնետն*[2] *առնու եւ ոչ ապականի, այլ շիջանի զաւրութիւն նետին, նոյնպէս մարմինն Տեառն ոչ վնասեցաւ ի չարչարանացն, եւ յաստուածութիւնն ո՛չ եհաս չարչարանքն։* **4** *Եւ վասն զի բանսարկուն երեքումք սոքաւք մարտեաւ ընդ նախաստեղծիցն ի դրախտին՝ որկորստութեամբ, զի ցանկալի եցոյց զպտուղն. եւ փառասիրութեամբ, զի յետ ուտելոյն յոյս ետ աստուածանալոյ. եւ ագահութեամբն, զի ոչ ետ բաւական համարել զամենայն ծառոցն վայելս, այլեւ ի միոյն, յորմէ հրաժարեցոյց Աստուած, ստիպեաց ուտել։* **5** *Արդ, ըստ հնոյն Ադամայ աւրինի եւ ընդ նորոյս Ադամայ մարտեաւ սոքաւք յետ մկրտութեանն յանապատի անդ։* **6** *Ի կատարման քառասնից աւուրցն եցոյց զինքն քաղցեալ, եւ եղեւ այն իբրեւ զկերակուր պատեալ զկարթիւ, զի կլցէ զնա փորձանաւքն իբրեւ զմարդ, եւ ըմբռնեսցի ի քիմս նորա, որպէս յԱստուծոյ կործանեալ եւ յաղթահարեալ։* **7** *Վասն որոյ յառաջ մատ[ուցեալ] ասէ. «Թէ որդի ես Աստուծոյ, ասա քարանցս այսոցիկ, զի հաց լիցին»* (**Մտթ. Դ. 3**)*, զի թէ յանձն առեալ լցցէ զխնդրելին, ծանիցէ թէ արդարեւ Աստուած է, եւ թէ ոչ՝ յանդիմանեսցի մարդ գոլ։*

ԻԱ. 1 *Իսկ Տէրն փոքր եւ ամենիմաստ պատասխանեաւն կարճէր զհպարտութիւն նորա ո՛չ հացիւ եւ նիւթական կերակրով կեալ մարդոյ ըստ մարմնոյ, այլ աննիւթական բանիւ բերանոյ Աստուծոյ ըստ հոգւոյ, վասն զի կրկին է մարդ։* **2** *Եւ ապա մարտեաւ փառասիրութեամբն. «Թէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր»* (**Մտթ. Դ. 6**)*։* **3** *Որպէս եւ առ մարդն առաջին չարախաւսէր զԱստուծոյ, թէ՝ «խաբեա՛ց զձեզ ոչ ուտել ի պտղոյ»* (**տե՛ս Ծնն. Գ. 2-3**)*։* **4** *Նոյնպէս եւ աստ. «Թէ որդի ես Աստուծոյ», եւ ոչ խաբեաց ձայնն Հաւր ի վերուստ, կամ «ասայ քարիս հաց լինել», որպէս վայել է Արարչի, կամ անգանել ի խոնարհ, զի ի մնալն անվնաս հաւատասցեն քեզ որպէս*[3] *Աստուծոյ։* **5** *Իսկ Տէրն յաղթեաց խոնարհութեամբ եւ երկայնմտութեամբ, եւ ո՛չ ցասմամբ։* **6** *Գրեալ |176բ| է, ասէ, «Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո»։* **7** *Եւ ապա ագահութեամբն մարտուցեալ՝*

---

[1] *ԱՁ զխորապես] զի որպէս թշնամին*
[2] *ՁՃ ասպարեզէն զնետն*
[3] *ՁՃ որդի] որպէս*

«Քեզ տաց զամենայն փառս աշխարհի յերկրպագելն[1] *ինձ»* (**տե՛ս Մտթ. Դ. 9**)։ **8** *Այսու ժպիրհ բանիւ կամեցաւ զայրացուցանել, զի առ ի չհանդուրժեալ լրբութեանն յայտնեսցէ զիւր աստուածական զաւրութիւնն։* **9** *Այլ Տէրն ո՛չ արժանի համարեալ զնա պատասխանոյ, այլ տիրաբար սաստեալ ասաց. «Երթ յետս իմ, սատանայ»* (**Մտթ. Դ. 10**)։

ԻԲ. **1** *Ընդէ՞ր աստ սաստէ եւ յառաջինսն ոչ։* **2** *Վասն զի աստ ի Հայր մեղանչէր զնորա արարածն իւր առնելով։* **3** *Այլ ոչ այս միայն, այլ ամենայն զինուք, որով բանսարկուն մարտեաւ, նովին ընդդիմակաւքն յաղթահարի։* **4** *Անդ ի կնոջէ սկիզբն կորստեան մահու եւ ի կուսութեանն մոլորութիւն եւ ախտաւոր ծնունդ, իսկ աստ*[2] *արդարադատ Փրկիչն մեր եւ ազատարար, ի Կուսէ անարատէ կեանք եւ ծնունդ անախտ կուսութեամբ եւ հոգեւորական մաքրութեամբ։* **5** *Անդ ի ձեռն մարմնոյ աւձին ծածկեալ դաւաճանող նենգութիւն, եւ աստ «Բանն մարմին եղեալ» ըստ Յոհաննու* (**տե՛ս Յվհ. Ա. 14**)*, զբնութիւն աստուածութեանն ընդ թանձրութեամբ մարմնոյն ծածկեալ, եւ զի աւձաձեւ է բնութիւնս մեր հինգ զգայութեամբս, եւ ձայնականի եւ սերականի գործեաւք։* **6** *Անդ ի կնոջէ տրտմութեամբ եւ ցաւաւք ծնունդ, անիծեաւք դատապարտութիւն մահու, եւ աստ ի Կուսէ ուրախութեան եւ խնդութեան աւետիս, երկանց եւ ցաւոց բարձումն, աւրհնութենէ եւ անապականութենէ բղխեալ աղբիւր*[3]։ **7** *Անդ ի գիտութեան փայտէն պտուղ մահաբեր եւ աստ ի փայտէն խաչի եւ մահու, կենաց եւ անմահութեան պտուղ։* **8** *Անդ ճաշակումն պտղոյ, եւ աստ հացն կենաց իջեալ յերկնից, պտուղ կենաց մեզ պարգեւեցաւ։*

ԻԳ. **1** *Եւ այսպէս, ի ձեռն որոց մահ յաշխարհ մտին, նոքումք եւ կեանք ի մեզ աղբիւրացան։* **2** *Եւ զի՞ այժ|177ա|մ եւս տակաւին մարտնչի ընդ մեզ գիտութեան բարոյ եւ չարի պտղովն, այսինքն՝ մերով խոհականաւն։* **3** *Քանզի մարդկային գիտութիւնս խառն է, ո՛չ կարէ պարզ եւ լուսաւոր տեսանել եւ իմանալ, որոշելով զհակառակսն։* **4** *Զոր աւրինակ, ստուերք տեսողական երեսացն խափան լինին, նոյնպէս խաբկանք աշխարհիս մտաց եւ մարդկային իմաստութեանս։* **5** *Վասն որոյ միշտ մարգարէական բանիւս առ Տէր գոչեսցուք. «Մարտի՛ր ընդ այնոսիկ, ոյք մարտնչին ընդ իս։* **6** *Եւ առ զզէն եւ զասպար քո եւ արի յաւգնել ինձ»* (**Սղմ. ԼԴ. 2**)։ **7** *Արի՛ ի ներողութենէ երկայնմտութեանդ, արի՛ յաւգնել ինձ, որ զստեղծեալս ի քէն բնութիւն մարմնոյս տկար ցուցի ի մարտ պատերազմի, աւգնելովդ*

---

[1] *Զձ երկիր պագանել*
[2] *Զձ > աստ*
[3] *Զձ օրհնութեան անապականութեան աղիւր բխեալ*

քո զաւրաւոր ցուցցի[1] *եւ յաղթող իմոյ յաղթողին:* 8 *«Հան զսուր քո ընդ-*
դէմ հալածչաց իմոց» (**Սղմ. 3**)*:* 9 *Բանն Աստուծոյ, որ հատու եւ սուր է,*
քան զամենայն սուր երկսայրի, զի հալածիչն իմ ի դրախտէն եւ յանմահ
կենացդ, որ լրբութեամբ ի վերայ վազեաց Ադամայ, զնոյն մարմին տե-
սեալ, յորժամ բանդ ծածկեալ ընդ նովիմբ, նմանապէս ի վերայ դիմեաց
եւ ի սրոյ բանէդ խոցոտեալ՝ պարտեցաւ: 10 *Եւ յետ պարտելոյ զթշնամին,*
քաջալերեա՛ զիս, տալով վստահութիւն, քաղցր քո ձայնի կոչմամբդ: 11 *Եւ*
ասա դու ցանձն իմ, թէ «փրկութիւն քո ես եմ»: 12 *Զի ոչ հրեշտակ յերկ-*
նից եւ կամ մարդ ոք փրկեաց զմեզ, այլ Բանն Աստուած, մերովն միա-
ցեալ մարմնով: 13 *Ըստ որում եւ յետ գտանելոյ զոչխարս մոլորեալ ձայ-*
նեա՛. «Ես եմ հովիւն քաջ» (**Յվհ. Ժ. 11**)*, եւ թէ՝ «Եկայք առ իս աշխա-*
տեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուց[ից] զ[ձեզ]» (**Մտթ. ԺԱ. 29**)*:* 14 *Եւ*
որք ի խաւարի էք, տեսէք զի «Ես եմ լոյս աշխ[արհի]» (**Յվհ. Ը. 12**)*:* 15 *Վասն*
որոյ զայսպիսի տեսեալ փրկութիւն եւ զարդար իրաւունս դատաստանի,
յարդարադատ եւ ի բարերար Տեառնէն:

ԻԴ. 1 |177բ| *Եւ տեսեալ չարին զինքն միայն կամաւորաբար խոտորեալ*
ի չարութիւն, իսկ մարդիկ իւրովք պատրանացն խաբմամբ անյաւժարա-
բար եւ զղջմամբ հետեւեալ չարին: 2 *Եւ այս յա՛յտ արդար եւ յանմեղ*
մարմնոյն Քրիստոսի եղեւ, զոր ոչ կարաց յիւրն խոտորեցուցանել ճանա-
պարհ չարի, ամաչեալ պարտաւորեցաւ, իբրեւ զգտիչ չարի եւ զաւանդիչ
եւ պարտական մեղաց աշխարհի: 3 *Նշաւակեալ խայտառակեցաւ եւ զաւ-*
րութիւն մահու, յորոյ վերայոտն հարկանելով ասեմք. «Ո՞ւր է մահ յաղ-
թութիւն քո» (**Ա. Կրնթ. ԺԵ. 55**)*:* 4 *Եւ աւերեալ կործանեցան ամրութիւնք*
արգելարանի դժոխոց, նիգք յուսահատութեան լուծան, փականք դատա-
պարտութեան փշրեցան, դրունք պղնձիք՝ իշխանութիւնք դիւացն խոր-
տակեցան: 5 *Իշխանն աշխարհի առ ոտս կոխեալ կործանեցաւ, հոգիք*
ամենայն ընդ հոգւոյն Քրիստոսի ազատեալք ի դժոխոց՝ յերկինս ճանա-
պ[արհ]որդեցին: 6 *Բնութիւնս մեր ընդ բանին Աստուծոյ բարձրացեալ՝*
աթոռակից Հաւր եղեւ: 7 *Վասն որոյ «ամաչեցին եւ յամաւթ եղեն, ոյք*
խնդրէին զանձն իմ» (**տե՛ս Սղմս. ԼԹ. 15, ԿԹ. 3**)*:* 8 *Յայտ է, խնդրէին, այլ*
ոչ զաւրեցին զհոգիս մարդկան արգելուլ յԱստուծոյ, վասնզի ո՛չ ներէ
նմա Աստուած, որպէս եւ վասն Յոբայ ասէր, եթէ՝ «յոգի նորա մի՛ մեր-
ձեսցիս» (**տե՛ս Յոբ Ա. 12**)*, բայց զմարմինն զանազան կրիւք չարչարե-*
ցին: 9 *«Դարձցին յետս եւ ամաչեսցեն յամենայնէ, զոր «բնութեանս» էին*
խորհեալ չարիս. «ունայն եւ ամաւթալի դարձցին» (**հմմտ. Սղմս. ԿԹ. 3-4**)*:*

---

[1] *Զձ զօրացուցի] զաւրաւոր ցուցցի*

ԻԵ. 1 *Եւ արդ, որովհետեւ արդար դատաստանաւն Աստուծոյ ազատեցաք ի չարախաւսութենէ բանսարկուին, եւ ի մարտ մտանելովն գլխոյն մերոյ Քրիստոսի յաղթող եւ զաւրաւոր ցուցաւ մարմնոյ բնութիւն, եւ ամաչեցեալ պարտաւորեցաւ բռնաւորն, մի այսուհետեւ յաղթահարեսցուք ի նմանէ, որպէս զտկարս, զի Տէր |178ա| մեր կոխան ետ զնա հաւատացելոց իւրոց, ասելով. «Ահա ետու ձեզ իշխ[անութիւն] կոխել զաւձս եւ զկար[իճս] եւ զամենայն զաւր[ութիւն թշնամւոյն]»* (**Ղկ. Ժ. 19**)*:* 2 *Եւ որպէս մարտեաւ Տէր մեր եւ յաղթեաց, եւ ուսոյց մեզ զաւրինակ կռվոյն եւ ետ քաջալերութիւն, զի մի՛ տկարասցուք ի պատերազմին, ասելով. «Քաջալեր[եսցուք] զի ես յաղթեցի աշխարհի»* (**Յվհ. ԺՁ. 33**)*:* 3 *Եւ զի այժմ տակաւին չարախաւսէ զմեզ առաջի Աստուծոյ, որպէս զնախաստեղծսն, որպէս եւ զՅոբ չարախաւսէր. «Միթէ՞ ձրի պաշտէ Յոբ զՏէր»* (**Յոբ Ա. 9**)*:* 4 *Եւ զնոյն մարտ, որ առ նախաստեղծսն մարտեաւ եւ ընդ մեզ մարտնչի, զնոսա յադինական դրախտէն եւ ի կենաց պտղոյն մերժեալ որոշեաց:* 5 *Իսկ մեզ ի դրախտէ եկեղեցւոյ եւ ի կենսատու պատուիրանացն Աստուծոյ, եւ յերկնից իջեալ հացէն եւ յանմահական ճաշակացն հեռացուցեալ որոշեսցէ:* 6 *Եւ որպէս ընդ Տեառն մերոյ մարտեաւ յետ մկրտութեանն, նմանապէս ըն[դ] մեզ ունի զնոյն մարտ կուոյ, որք որդիացաք Աստուծոյ աւազանաւն, եղբայր եւ ժառանգակից Քրիստոսի անուանեցաք:*

ԻՁ. 1 *Բայց զի տկար է, ոչ եթէ զաւրութեամբ յաղթէ, այլ հնարիւք խաբեութեան, եւ ո՛չ մերկ մարտնչի յայտնի չարութեամբ, այլ մերովք անդամաւք մարմնոյս եւ բնական կրիւքս, ընդ որում խառնէ զիւր խորամանգութեան հնարսն:* 2 *Արդ, եթէ կերակրով մարտնչի ընդ մեզ, որպէս ընդ նախաստեղծսն առաջին, եւ ընդ Տեառն մերոյ եւ երկրորդ Ադամայ, որպէս եւ ուսաք զաւրինակ կռվոյն՝ ժուժկալութեամբ կերակրոց եւ ըմբելեաց յաղթեսցուք, ո՛չ ցանկալ ապականացու կերակրոց, այլ հոգիացուցիչ եւ աստուածեղէն Բանին եւ իմաստութեան ճաշակացն, որ ի նոսա, եւ ելեր այնուհետեւ որպէս յաշտարակ տաճարին:* 3 *Եւ յորժամ ելանեմք յայնպիսի բարձրութիւնն, մի փառասիրութեամբ եւ մարդահաճութեամբ անկցուք ի խոնարհ, այլ ըս|178բ|տ կամացս տուողին խաւսեսցուք զԲանն եւ զհաճոյսն Աստուծոյ գործեսցուք:* 4 *Եւ յորժամ կատարեմք զայն, ելա՛ք ի լեառն բարձրագոյն իմաստից եւ առաքինութեանն, յորմէ հայե՛լ տայ ի սէր նիւթականացս եւ հնար ի արկանել յախտ ագահութեան:* 5 *Եւ յորժամ այնու եւս յաղթեմք, հալածեալ գնա ի մէնջ, եւ ի հրեշտակաց սպասաւորիմք:*

ԻԷ. 1 *Եւ այսպէս նմանեսցուք որդւոց միեղջերուաց, ընդ որում պատերազմիլ վիշապ կամեցաւ, եւ ասաց ի դաշտի պատերազմել, որպէս թէ եղջիւր ի հարթ տեղւոջ ո՛չ կարէ ածել, իսկ նա ոտիքն կոխեալ պարտէր, եւ փախուցեալ վիշապին յորջս մտանէր։ 2 Եւ մտեալ*[1] *ի ջուր, ուստի ըմբէր եղջերու, զի հարցէ զնա, իսկ նա եւ անդ եւս կոխէր եւ յաղթէր յամենայնի։*

ԻԸ. 1 *Ըստ այսմ յարմարական աւրինակի պատերազմեսցուք եւ մե՛ք ընդ մարմին վիշապին, եթէ երկրաւոր մարտնչի, առ ոտն զերկրաւորս կոխեսցուք, մանաւանդ որք հրաժարեցաք յաշխարհէ եւ եթէ նեղութեամբ եւ վշտաւք մարմնոյ՝ խորհրդով եւ իմաստութեամբ յաղթահարեսցուք։ 2 Եւ եթէ ի գիտութիւն մխի, զի անտի հարեալ խոցեսցէ, եւ անտի եւ՛ս հալածեսցուք, ունելով զհոգին գիտութեան եւ իմաստութեան, հանճարոյ եւ աստուածպաշտութեան, խորհրդոյ եւ զաւրութեան, եւ յամենայնի զաւրաւոր եւ յաղթողք լեալ՝ զնա ամաչեցուսցուք պարտութեամբն, եւ մեք ուրախասցուք յաղթութեամբն ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք*[2] *յաւիտ[եանս. [ամէն]*[3]*։*

---

[1] *Զձ՝ մտաներ իսկ շնչովն եւս մեր եւ մտեալ*
[2] *Զձ՝ որում վայել է փառք*
[3] *Զձ՝ > յաւիտեանս. ամեն*

ԺԶ.

|178բ| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵԶՆԿԱՑՈՅ Ի ԾԲ. (52) ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ Ի ԳԼՈՒԽ ԿԱՆՈՆԻՆ «ՄԻ ՆԱԽԱՆՁԻՐ... ԵՒ ՎԱՍՆ ՁՕՐՈՒԹԵԱՆ, ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԱՆՁԳԱՄ ՄԱՍԻՆՆ»

Երզնկացին քարոզում քննության է առնում ներքին եւ արտաքին մարդու, հոգու եւ մարմնի փոխկապվածության խնդիրը, նկատելով, որ արտաքին մարդը՝ մարմինը, պատկերն է հոգու, որովհետեւ ինչպես չորս տարրերի համաչափությունը նպաստում է մարմնական զորությանը, առողջությանն ու գեղեցկությանը, այնպես էլ մարդկային հոգին է, որը ունի «բան, ցասումն եւ ցանկութիւն» եւ չորս տարրեր, որոնց համաչափությունը ծնում է արիություն, արդարություն, խոհականություն եւ ողջախոհություն, մինչդեռ անհամաչափությունը առաջ է բերում անզգամություն, վախկոտություն կամ հանդգնություն:

Նկատելով, որ մարդկային բացասական հատկանիշները լինում են ինչպես ի ծնե, այնպես էլ ձեռքբերովի՝ նա գտնում է, որ ինչպես մարմնական, այնպես էլ հոգեկան հիվանդությունները ենթակա են բուժման, շնորհիվ ճիշտ դաստիարակության ու գիտելիքների: Ընդ որում, ինչպես իր մի շարք այլ ստեղծագործություններում, այստեղ եւս հորդորում է ծնողներին իրենց զավակների դաստիարակությամբ զբաղվել վաղ հասակից, որպեսզի մարմնական ուժերի զարգացմանը զուգընթաց աճեն նաեւ նրանց մտավոր ունակությունները:

Խոսելով մարդկային արատների մասին՝ Երզնկացին խստիվ պարսավում է ֆծնանքը, մարդ արարածի անհարկի փառաբանումը: Խոսքը ուղղելով հատկապես հասարակության վերին շրջանակներին՝ համարձակորեն նշում է, որ ոմանք, իրենց առօրյա շահերի համար ֆծնելով տիրակալներին եւ աստվածացնելով նրանց, ոչ միայն խախտում են մարդու սխալականության մասին քրիստոնեական սկզբունքը, այլեւ խանգարում են նկատելու իրենց սխալները՝ դրանով դրդելով ավելի լուրջ սխալներ կատարելու:

Ինչպես այլ առիթներով, այստեղ եւս իր մտքերը հաստատելու համար Երզնկացին բազմաթիվ օրինակներ է բերում Աստվածաշնչից եւ մարգարեների ու առաքյալների ասույթներից:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ 2173 (Ա. 178բ-86բ), 2992 (Զ. 127բ-134ա) եւ 2854 (Ճ. 139բ-41բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Որք մակացութեան բժշկական արհեստին են հմտութեամբ վարժեալք, յաղագս մարդկային մարմնոյ զաւրութեան եւ առողջական կենաց եւ գեղեցկութեան կերպարանի* |179ա| *այսպիսի իմն բնախաւսեն սահմանաւրէն բացայայտութեամբ եթէ մարմնոյ եւ հոգւոյ յարադրութեամբ*

մարմնոց եւ ջլաց եւ այլոց բարեխառնութիւն՝ զաւրութիւն է, ջ[ե]րմոյ եւ ցրտոյ, ցամաքի եւ խոնաւի բարեխառնութիւն առողջութիւն է, իսկ բարեչափութիւն անդամոց՝ հանդերձ վայելուչ գունով, գեղ[ե]ցկութիւն առնէ մարմնոց։ 2 Եւ իրաւի այսոքիկ այսպէս են, վասն զի ողջութիւն մարմնոյ եւ պնդութիւն ջլաց, կառուցեալ ընդ կարծրութիւն ոսկերաց, զաւրութիւն է մարմնոյն։ 3 Իսկ առողջութեան պատճառ լինի յարդարակշիռ հաւասարութենէ տարերց եւ ի բարեխառնութենէ որակացեալ ծայրից նոցա։ 4 Վասն զի տարերք են չորք, որք նիւթք են ամենայն տեսակաց կենդանեաց եւ անկենդանեաց։ 5 Եւ են այսոքիկ՝ երկիր, ջուր, աւդ, հուր։ 6 Եւ ամենայն մարմին ի չորից տարերցս է խառնուած եւ արիւնաւոր կենդանեացն ի չորից հիւթոցս, որ ի խառնուածոյ տարերց. յարենէ, ի մաղասոյ, ի խարտէշ մաղձոյ եւ ի սեաւոյ։ 7 Եւ նմանեցուցանէ երկրի զսեաւ մաղձն, ջրոյ՝ զմաղասն, աւդոյ՝ զարիւնն եւ հրոյ՝ զխարտէշ մաղձն։ 8 Եւ իւրաքանչիւր[1] ի տարերցս երկու որակութիւնս ունին զտեսակարարն զնոսա։ 9 Քանզի է՛ երկիր չոր եւ ցուրտ, իսկ ջուր՝ ցուրտ եւ գէջ. աւդ՝ խոնաւուտ եւ ջերմ. հուր՝ ջերմ եւ չոր։ 10 Արդ, յորժամ[2] այսոքիկ որակութիւնքս ոչ ըստ բարեխառնութեան լինին, այլ առաւելուն եւ նուազեն ըստ բնական չափաւորութեան կշռոցն, գտանին կենդանւոյն պատճառ հիւանդութեան։ 11 Նոյնպէս եւ մասունք անդամոց մարմնոյն. դրութիւն աչաց, կամ ըռնկաց, միջասահմանութիւն ատամանց կամ շրթանց գեղեցկամասնութիւն՝ հանդերձ այտիցն գեղազարդութեամբ գունոյ՝ գեղեցկութիւն է կենդանւոյն։ 12 Եւ սոցունց պատահեալ հակառակն |179բ| գարշատես եւ զազրալի զկենդանւոյն ցուցանէ զկերպարանս։

Բ. 1 Բայց առ ինչ այսպիսի նախադրութիւն բանից այժմ մեզ յիշեցան։ 2 Վասն զի արտաքին եւ ներքին մարդ Պաւղոս անուանէ (**տե՛ս Հռմ. Է. 22, Բ. Կրնթ. Դ. 16**), որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ բաղկացութիւն այսմ կենդանւոյ։ 3 Եւ է՛ արտաքին մարդս մեր տեսանելի ցուցական հայելի անմարմին[3] կերպարանաց հոգւոյն։ 4 Եւ զոր աւրինակ, չորից տարերցս խառնուածոյ հաւասարութիւն, զաւրութիւն, առողջութիւն եւ գեղեցկութիւն առնէ, եւ անյարմարութիւն սոցա՝ տկարութիւն, հիւանդական ցաւք եւ տգեղութիւն կերպարանաց, նոյնպէս է տեսանել եւ ի մասունս հոգւոյն։ 5 Քանզի եռամասնեայ ոգի ունի բան, ցասումն եւ ցանկութիւն։

---

[1] Ա իւրաքանչիւր ոք
[2] Զձ՛ > յորժամ
[3] Զ ի մարմին] անմարմին

Գ. 1 *Եւ չորք են առաքինութիւնք հոգւոյ*[1], *որպէս եւ տարերք մարմնոյ։* **2** *Եւ են այսոքիկ. արիութիւն, արդարութիւն, խոհականութիւն, ողջախոհութիւն։* **3** *Վասն զի իւրաքանչիւր մասն հոգւոյ իւրական առաքինութեամբն զարդարի։* **4** *Բանն՝ խոհականութեամբ, բարկութիւնն՝ արիութեամբ, իսկ ցանկութիւնն՝ ողջախոհութեամբ*[2]*։* **5** *Եւ վասն զի ո՛չ միայն պարտ է իւրաքանչիւր մասին առանձնականաւ զարդարիլ առաքինութեամբ, այլեւ յարմարութիւն իմն առ միմեանս եւ բարեկարգութիւն պահել։* **6** *Վասն այսորիկ եւ արդարութիւն ընդ ամենիսեան անցեալ երեւի, զի յամենայն մասունս բարեկարգութիւն եւ յարմարութիւն պահեսցի, որ է հոգեկան առողջութիւն, եւ արդարութիւն եւ անմեղութիւն անձին կոչեցեալ։* **7** *Յորժամ զչարութիւն այսոցիկ մասանցս ի բա՛ց դնիցէ, ոք եւ ըստ կարգի առաքինութիւնքն ի նե՛րքս ածանին։* **8** *Եւ է չարութիւն ցանկականին գիջութիւնք շռայլութեանց եւ [ժլատութեան], իսկ առաքինութիւն՝ ողջամտութիւն, եւ սրտմտական|180ա|ին վատթարութիւն է՛, ըստ գերազանցութեան՝ յանդգնութիւն։* **9** *Իսկ ըստ պակասութեան՝ երկեղածութիւն յիրս, որ ո՛չ իցէ արժան։* **10** *Եւ առաքինութիւն սորա հակամարտ յանդգնութեանն չափատրութիւն, որ է միջին, զոր կոչեմք արիութիւն։* **11** *Սորա է եւ քաղցրութիւն, որ եւ անուանի հեզութիւն։*

Դ. 1 *Իսկ բանականին, որ է իշխան այլոց մասանցն, է չարութիւն նորա անզգամութիւն, զոր այլովք անուամբք կոչեն անհանճարութիւն եւ անմտութիւն։* **2** *Իսկ առաքինութիւն սորա իմաստութիւն, զոր եւ խոհականութիւն անուանեմք. զոմն առ իմանալիսն, ըստ կալման, իսկ զմիւսն առ գործելիսն։* **3** *Արդ, հակառակացն չարութեանց տեղի տուելոց եւ առաքինութեանցն ի ներքս մտելոց. բովանդակն կոչի արդարութիւն։* **4** *Իսկ չարութեան մասանցն զաւրացելոց, յանկարգութենէ անտի անուանի անիրաւութիւն։* **5** *Որպէս է՛ այժմ գլխաւորագոյն մասինն չարութեամբ հիւանդացելոյ անզգամ յիմարութեամբ, որ բովանդակ հոգւոյն է կորստական մահու պատճառ յաղագս այլոց մասանցն իշխանականին անգելոյ ընդ ապականութեամբ ախտ։*

Ե. 1 *Ասէ մարգարէն Դաւիթ. «Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած» (Սղմս. ԺԳ. 1)։* **2** *Արդ, առաջին տեսցուք, եթէ զինչ է անզգամութիւն։* **3** *Երկրորդ. զինչ իրք եւ գործք հետին անզգամութեան։* **4** *Երրորդ. ուստի՞ յառաջ եկեալ ծնանի անզգամութիւն։* **5** *Չորրորդ. որք վա-*

---

[1] *Չ ոգոյ*

[2] *Հոգու «եռամասնեայ» լինելու, ինչպէս նաեւ նրա առաքինութիւնների վերաբերեալ՝ Պլատոնին վերագրուող այս միտքը միջնադարում լայնօրէն տարածուած տեսակէտ էր. տե՛ս Գ. Հ. Գրիգորեան, Յովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երեւան, 1980, էջ 130։*

րեցան անզգամ յիմարութեամբ, զորպիսի՞ պատիժս դատապարտութեան կրեցին։ 6 *Հինգերորդ. որո՞վ յեղանակաւ ազատեսցէ ոք զանձն յախտէս յայսմանէ եւ ի ներքս բերեալ ստասցի զներհակ սորին զառաքինութիւն, որ է խոհեմական իմաստութիւն։* 7 *Վեցերորդ. զի՞նչ ներբողական գովեստ իմաստութեանն ընդդիմակային պարսաւելի ախտի անզգամութեանն։*

Զ. 1 *Արդ, նախքան զայսոցիկ գլխոց տեսութիւն, զվերնագրի սաղմոսի տեսցուք զզաւրութիւն ի կատարած, վասն մաղաղե|180բ|թա իմաստութիւն ի Դաւիթ։* 2 *Զմաղաղէթն Սիմաքոս գեղ թարգմանեաց, Թէոդիտոն՝ գաւառ, Ակիւղաս՝ տեղի, ուր սատակեցան զաւրքն ասորւոց։* 3 *Եւ զնոյն ունի սաղմոսս զաւրութիւն, որպէս եւ երեքտասան սաղմոսին են միտք ի վերայ սատակման Ասորեստանոյն զաւրացն Սենիքերեմայ որ ի ձեռն Ռափսակայ ժողովեցան ի վերայ բարեպաշտ արքային Եզեկիայ եւ ի վերայ Երուսաղէմի (տե՛ս* **Դ. Թգ. ԺԹ., Եսյ. ԼՋ.***), որ բերէր զաւրինակ սատանայի, որ պատերազմ եւ անհաշտ խռովութիւն ունի ընդ մարդկային բնութիւնս։* 4 *Այլ եւ զանզգամութիւն հրէիցն ցուցանէ, որ ուրացան զԱստուածութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։* 5 *Որպէս եւ ասէ. Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ո՛չ գոյ Աստուած»։* 6 *Այլեւ մաղաղէթն գունդ ասի կամ ցնծութիւն, զի գնտին ասորւոց սատակումն ցնծութիւն էր Եզեկիայի։* 7 *Այլեւ գունդն հրէից ի վերայ Տեառն եկեալ ցնծացին, յորժամ գտին եւ կալան։*

Է. 1 *Արդ, նախ տեսցուք զառաջին գլուխն, եթէ զի՞նչ է անզգամութիւն։* 2 *Անզգամութիւն է ընտրելն չարաչար զիրողութիւնն անիմաստ խորհրդով, ո՛չ կարելն ընտրել զչարն ի բարւոյն յամենայն իրս կենցաղոյս, ես ո՛չ զհաճելիսն ի պարսաւելեացն, չարաչար խորհեալն չարաչար ի կիր արկանել, զհասեալ բարութիւնսն ստաբար կարծել յաղագս որ ի կենցաղումս են գեղեցկագունիցն եւ բարութեանց, եւ ո՛չ ճանաչել ճշմարիտ բարիսն եւ զստուգապէս գեղեցիկսն, ո՛չ երբէք կարելն իմանալ զժամանակ բանի կամ գործոյ, ո՛չ կարելի յիշել հմտաբար ի դէպ ժամու զպիտանիսն*[1]*։* 3 *Իսկ ըստ երկրորդ գլխին հետեւեալ լինի անզգամութեանն համանգա[մա]յն այս ամենայն կամ մի ըստ միոջէ։* 4 *Որպէս եւ ինքն իսկ բանսարկուն առաջին ի բանական բնութենէ անմարմնոցն անզգամացեալն, եւ այսու ամենայն մասամբք յիմարեալն, անընտրողապէս եւ անհանճարաբար յընտրութիւնս իրաւղութեանցն, ընդ բարձրացուցիչ խոնարհութեանն, զկործանական անբարտաւանութիւնն,* |181ա| *զպարսա-*

[1] *Զձ՛ > ոչ երբէք... զպիտանիսն*

ելի գործն ընդ հաճելեացն, խաւար ընդ լուսոյ, չար փոխանակ եղեալ բարոյ։ **5** *Եւ նոյն մասամբք ամենայն անզգամից բացեալ դուռն կորստեան եւ վիհ խաւարի։* **6** *Վասն որոյ ապականեցան եւ պղծեցան յանաւրէնութիւն իւրեանց իւրով հաւանեալ դասիւն, եւ չարութեան աշակերտելովքն ընդ անապական անմահութեանն, անգմանն մահու ապականեալ եւ պեղծ ի սրբութեանն ելեալ եւ անուանեալ, եւ ո՛չ ոք էր, որ առնէր զքաղցրութիւն ապաշաւանաց եւ զղջմանն, ընդ դառն մեղաց անզգամութեանն, զի այս ո՛չ եղեւ տուեալ նոցա։* **7** *Զինչ եւ Կայէն, զի թէ նշխար իմաստութեան կամ դոյզն ինչ կայծական նշոյլս ստացեալ էր, եղբայրասպան ո՛չ լինէր, եւ զերծեալ յայնպիսի նզովիւք դատապարտեալ կենաց լինէր, որով ապականեցաւն իսկ եւ պղծեցաւ, եւ ոչ ո՛ք էր, որ առնէր զքաղցրութիւն (տե՛ս Ծն. Դ.)։* **8** *Զի թէպէտ եւ կոչեցաւ յապաշխարութիւն խոստովանութիւնն*[1] *հարցանելովն Աստուծոյ, այլ զքաղցրաճաշակ զայն դեղ բժշկական ո՛չ էարբ։* **9** *Ոչ վասն անհանճար եւ անզգամ խորհրդովք կելոյ սատակումն ջրհեղեղաւ եհաս ի վերայ ծննդոցն, որ առ Նոյիւ դարուն*[2] *մարդկան (տե՛ս Ծն. Զ-Է.)։*

Ը. **1** *Եւ զի՞նչ այլ յիմարութիւն մեծ քան խորհել յերկինս ելանել շինուածով աշտարակի (տե՛ս Ծն. ԺԱ.)։* **2** *Ոչ եւ Քամ յիմարութեամբ արարեալ, զմերկութիւն հաւրն ծաղր արարեալ պատմէր արտաքոյ, վասն որոյ որդին իւր Քանան կրէր տրտմութիւն յաղագս անիծից եւ ծառայն լինելոյ։* **3** *Բայց որոց իմաստութիւն եւ հանճար էր սիրելի, Սէմ եւ Յաբէթ ծածկելով զսուրբ ծերունի նահապետն, պտուղ իմաստութեանն իւրեանց զմարգարէական աւրհնութեամբ հաւրն ժառանգեցին (տե՛ս Ծն. Թ. 22-25)։* **4** *Կամ ո՞ր յիմարութիւն զուգական իցէ ժանդ մարդկանն սոդոմացոց քաղաքին, զի ամենայն հասակ մարդկան անամաթ յանդգնութեամբ ի վերայ սուրբ զուարթնոցն դիմէին, այլեւ յետ կուրութեան հարման, տակաւին ի նոյն մնային |181բ| լիրբ եւ յանդուգն անառակութեան, որպէս եւ ասէ Բանն, թէ «Լքան զդուրսն խնդրելով» (Ծն. ԺԹ. 11)։* **5** *Վասն որոյ ապականեցան եւ պղծեցան յանաւրէնութեանն իւրեանց, զարդար դատաստան պատուհասին երկնառաք հրովն կրեցին։*

Թ. **1** *Կամ քանի՞ յիմարութիւն էր այնոցիկ թողուլ զԱրարիչն ամենայնի եւ զկառավար, եւ գործոց ձեռաց երկիր պագանել։* **2** *Եւ կարի եւս անմիտ յիմարութիւն զքարինս եւ զփայտս պաշտելով, զթիւնաւոր եւ զանարգ ճըճիս, եւ զվայրենի գազանս եւ զայլ անարգագոյնս ի սողնոց եւ ի զեռ-*

---

[1] *Ձ՝ խոստովանութեանն*

[2] *Ձ՝ տարուն*

նոց։ **3** *Կամ զի՞նչ անզգամութիւն մեծ եւ յիմարութիւն, քան զփարաւոնին եւ զեգիպտացոցն, որք զայնքան մեծամեծ եւ զզարմանալի տեսին գործ սքանչելեաց եւ հաստատեալք կային ի նոյն յիմարութեան։* **4** *Եւ փարաւոն ասէր. «Զտէրն ո՛չ գիտեմ եւ զԻսրայէլ ոչ արձակեմ»* (**Ելք Ե. 2**)*, եւ յետոյ զԿարմիր ծովուն տեսեալ զաւրութենէն Աստուծոյ զբաժանումն, իբր զթմբրեալ ոք յարբեցութենէ, կամ զմի յանբանից յանդգնէին զհետ մտանել։* **5** *Նաեւ ինքն իսկ Իսրայէղ, որ վայելեաց յայնքան երախտիս, որթաձեւոյն երկիր պագանէր եւ ասէր. «Ա՛յս են աստուածք քո, Իսրայէղ, որ հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց»* (**Ելք ԼԲ. 4**) *եւ նոյն յիմարութեամբ ընդ ժամանակս ժամանակս*[1] *զսուրբ մարգարէիցն բանիւք քամահելով եւ զաւրինաւքն, զորս ընկալանի ի ձեռն Մովսիսի, կռոց զոհէին եւ զաւրութեանց երկնից։* **6** *Եւ կամ ուստի՞ Սենիքերիմ գրգռեալ գրէր զհայհոյութեան հրովարտակ, եւ պատգամաբերաւք զնոյն խաւսէր, եթէ ոչ անզգամ յիմարութեամբն էր արբեալ* (**տե՛ս Բ. Մնց. ԼԲ. հմմտ. Եսայ. ԼԷ. 17**)*։* **7** *Կամ թէ ոչ յիմարութեան գինով արբեալ որդիքն Յակովբայ, զկենարարն ուրացեալ խնդրէին զայր մի մահապարտ, եւ զնա տուեալ ի ձեռս հեթանոսաց՝ խաղ առնէին եւ այպն կատականաց, եւ բեւեռեալ ի փայտի զԻշխանն ամենայնի եւ զՏէր՝ սպանանէին, ո՛չ ի կանխասացութենէ մարգարէիցն աւգտեալք, եւ ոչ յաստուածագործ սքանչելեացն ակն ածեալ պատկառէին։*

Ժ. **1** *Արդ, այս ամենայն ան|182ա|զգամ յիմարութեանն գործաւնեայք ապականեալ պղծեցան յանաւրէնութեան իւրեանց, վասն զի ո՛չ ոք էր, որ զդառնութիւն բարուց նոցա քաղցրացուցանէր։* **2** *Մանաւանդ զի այնոքիկ, որ յիշխանութիւնսն են եւ ուսման, իմաստութեան անտեղեակք եւ անպարտաւանութեան ախտիւ լցեալք, կրկին եւ երեքկին դառնութեան գինով արբեալք զինչ ոչ գործեն յանզգամութեան չարեացն, մանաւանդ թէ ոչ զոք ունիցին, որ առնէ զքաղցրութիւն խրատ*[2] *ուսման աստուածային աւրինացն։* **3** *Եւ կամ թէ ունին, եւ ոչ լինին ունկնդիր լսելովք։* **4** *Վասն զի իբրեւ զտիղմ ինչ մոռացեալ՝ ուռուցեալ են արքունիքն. ամենայն հպարտք, ամենայն ուռուցեալք անպարտաւանութեամբ, անդր ժողովին։* **5** *Իսկ վարժն գրովք անդ պատահեալ բժշկէ՛ զնոսա, եւ զդառնութիւն խորհրդոց բանից եւ գործոց նոցա քաղցրացուցանէ իւրովքն աստուածատուր հանճարական խրատովք։* **6** *Իսկ որ մնան յանխրատ եւ յանիմաստ անզգամութեանն, ապականին ի սուրբ հաւատոց, պղծեալք գարշութեան գործովք, վասն ոչ ընդունելով զքաղցր դեղն եւ զառողջական*

---

[1] *Ձ՛> ժամանակս*

[2] *Ձ՛ խրատական հանճարովք*

զաստուածային աւրինացն զխրատ։

ԺԱ. 1 *Արդ, եթէ որքա՞ն եւ որչա՞փ են անզգամութեանն չարիք, ասացելովքս բանիւք համառաւտիւ ցուցաւ, այլ բազում գոլով, քան զնոսա։* 2 *Տեսցուք եւ զերրորդ գլուխն, թէ ուստի՞ յառաջ եկեալ ծնանի անզգամութիւնն կորուսիչ ախտ։* 3 *Եւ կամ այլոց մասանց հոգւոյն չարութեանն անուանեալ տեսակք։*

ԺԲ. 1 *Արդ, լինին չարք ախտք անձին ի ձեռն երիցս այսոցիկ ի չար հրահանգից, յանուս[ու]մնութենէ, ի չար ունակութենէ, քանզի ոչ բարիոք վարժեալ ի մանգութենէ, որպէսզի կարող գոլ, յախթկու լինել ախտիցն՝ յանչափութիւն նոցա անկանիմք։* 2 *Իսկ յանուս[ու]մնութենէ չար դատումն բուսեալ ի խոհեցողականի անձին, որպէսզի կարծել զչարսն պիտանիս գոլ եւ զպիտանիսն չարս։* 3 *Դարձեալ լինի ինչ եւ ի* |182բ| *չար ունակութենէ մարմնոյ, վասն զի բնաւորական իմն չարութիւնք եւ առաքինութիւնք հետեւի մարդոյն ի խառնուածոյ մարմնոյն։* 4 *Զի որպէս բնութեամբ առողջք եւ հիւանդոտք են ի խառնուածոյն, այսպէս ոմանք բնութեամբ դառնամաղձեալք եւ բարկացողք են, այլք՝ երկչոտք եւ վայրաբերք։* 5 *Խարտեաշ մաղձն, զի ջերմ է, սրտմտոտ առնէ, բայց եւ արի։* 6 *Պլղամն յաւելեալ՝ վատասիրտ եւ թոյլ, նոյն եւ վաւաշոտ ախտիւ։* 7 *Սեւ մաղձն՝ ծոյլ եւ հեղգ, նմանապէս եւ ի չարիսն դժուարաշարժ։* 8 *Իսկ որ ազն առաւելեալ լինի՝ ծանծաղախել, բայց եւ պարզամիտ*[1]*։*

ԺԳ. 1 *Արդ, բժշկելի է զչար սովորութիւնն սովորութեամբ բարւոյ, իսկ զանուս[ու]մնութիւնն՝ ուսմամբ եւ մակացութեամբ։* 2 *Ի սկզբան մանկական հասակին ոչ տալ թոյլ արտաքս ընդ զգայութիւնս ցնդիլ մտացն, այլ որպէս ի մամուլս խելամտութեամբ մեծաւ յամենայն կողմանցն յուսմունս իմաստութեան շարապնդել, մինչ զի բնաւորապէս ընտանասցի իմաստութեանն հանճարոյ, եւ ընդ աճել մարմնական տիոցն՝ աճեսցի ընդ նմա եւ մտաւորական զաւրութիւն իմաստիցն։* 3 *Իսկ զչար ունակութիւնն ողջացուցանելի է մարմնապէս դեղովք՝ ըստ կարի, ի միջինն փոխադրելով խառնուած։* 4 *Եւ այսպէս, պիտոյ է անձին հպատակ լինել, զի կազմեսցէ զնա իւր գործարան լինել ըստ պատեհութեան։* 5 *Եւ զայս առնէ ի ձեռն բանից եւ սովորական հրահանգից, որպէս յաւդմամբ զոմանս թուլացուցանել, եւ զոմանս պնդել, զի պատշաճ իւր կազմեսցէ, եւ մի ընդ նմա թիւրեսցի, որպէս ոք երաժիշտ զհետ երթիցէ*[2] *թիւրութեան քնարի,*

---

[1] *Մարդու խառնուածքը կազմող չորս տարրերի վերաբերեալ այս տեղեկութիւնը լայնօրէն տարածուած է միջնադարեան հայ բժշկագիտութեան մէջ. տե՛ս Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, աշխատ. Ս. Մալխասեանց, Երեւան, 1940, էջ 94։*

[2] *Զ իցէ*

եթէ ոչ նախ զնա բարիոք կազմեսցէ: **6** *Վասն որոյ այսքան մասամբ անզգամացեալք մարդկային բնութիւնս ի սկզբանէ ելից դրախտին, սովորաբար հետեւմամբ չարին, եւ ի նոյնն հրահանգելով:* **7** *Վասն որոյ անգիտութեանն խաւարաւ ծածկեալք ո՛չ կարացին բնաւորական աւրինա|183ա|ցն ուսմամբ յարարածոց աստի իմանալ եւ ուսանել զարարչականն պաշտաւն, այլ իբր թէ ո՛չ գոյր Աստուած, արարածոցս մատուցին*[1] *պաշտաւն, եւ ի չարութեան հետեւեցին գործոց, եւ ապականեցան, եւ պղծեցան յանաւրէնութենէ իւրեանց:* **8** *Այսպէս եւ Սենեքերէմ ընդդէմ Եզեկիա (տե՛ս* **Բ. Մնց. ԼԲ***), եւ Ակիտոփէլ ընդ[դէմ] Դաւթի (տե՛ս* **Բ. Թգ. ԺԷ.***), որք ասացին*[2]*, թէ ո՛չ առնէ Աստուած արդար դատաստան, եւ այն այնպիսի է, որպէս թէ չիցէ Աստուած, զի այս յատուկ Աստուծոյ է ստեղծող գոլ եւ դատաւոր:* **9** *Այլ նոքա, որ զայս ասեն՝ յանխնայ գործեն զչարիս, եւ ապականեալ պղծին յանաւրէնութեան իւրեանց:* **10** *Եւ զի*[3] *ո՛չ ոք էր ի զաւրաց նորա, որ զդառն եւ զանիմաստ բարսն*[4] *քաղցրացուցանէր:* **11** *Վասն որոյ յաներեւոյթ սրոյ հր[է]շտակին սատակեցան հարիւրութսունչորս հազարքն:*

ԺԴ. **1** *Եւ անզգամ հրէիցն պղծեցաւ տաճարն ի Տիտոսէ եւ ի Վէսպիանոսէ, որ առին ի նոցանէ զվրէժ անարգանաց Տեառն մերոյ, զոր անզգամութեամբ ուրացան զաստուածութիւն նորա՝ ի կորուստ եւ յապականութիւն իւրեանց:* **2** *Վասն որոյ ասէ. «Տէր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան տեսա[նել], թէ իցէ ոք [իմաստուն], որ խնդ[րիցէ զԱստուած]:* **3** *Ամենիք[եան] խոտ[որեցան] եւ անպիտանացան» (***Սղմս. ԺԳ. 2-3***):* **4** *Ի միւսում սաղմոսին ասէ*[5]*. «Աստուած յերկնից նայեցաւ» (***Սղմս. ԼԲ 13***) վասն զի Արարիչն երկու զաւրութեամբք նախախնամէ զիւրական արարածս. արարչական եւ բարեգործակ զաւրութեամբն, որոյ Աստուած է անուն, եւ արքունականաւն եւ դատողականաւ, որ Տէր անուանի:*

ԺԵ. **1** *Արդ, զի մոռացան մարդիկ զԱրարիչն եւ զառատաբուխ բարեաց նորա զերախտիս, եւ մոլորեցան մտաւք ի մասունս արարածոցս, վասն որոյ ոչ մնաց Հոգին Աստուծոյ ի նոսա, եւ հեռացուցին զԱրարիչն յինքեանց:* **2** *Վասն որոյ յերկնից ասէ նայել, զի ո՛չ ետուն հանգիստ նմա յերկրի երկրաւոր բանականքս:* **3** *Եւ նայեցեալ յերկնից տե[ս]ան[ել] եթէ իցէ՞ ոք իմաստուն, որ ի պարգեւաց նորա, զոր վայե|183բ|լեն, խնդրիցէ*

---

[1] *Զ մատուցանէին*
[2] *Ձ՛ ասէին*
[3] *Ձ՛ > զի*
[4] *ՁՁ՛ բարս նոցա*
[5] *ՁՁ՛ > ի միւսում... ասէ*

զպարգեւատուն. Եւ ո՛չ գտաւ, զի «Ամենիքեան խոտ[որեցան] ի միասին եւ անպիտանացան»։ 4 *Վասն որոյ պատժողական զաւրութեամբն հայի Տէրն, զի բազմացան չարիք նոցա եւ վերացաւ գթութիւն նորա յանզգամաց, որչափ բարձր են երկինք յերկրէ, թերեւս պատուհասիւ խրատուն զարթուսցէ զնոսա յերկեղ դատաստանին, որովք խրատեաց զնոսա իւրաքանչիւր դարս*[1]։ 5 *Եւ ոչ այնու զգաստացան, զի ամենիք[եան] խոտ[որեցան] յուղեղ ճան[ապարհ] էն, որովք առ Աստուած երթային, եւ անպիտանացան գործովք գարշութեան*[2]։

ԺԶ. 1 *«Ո՞չ ոք է, որ առնէ զբարի». ի միւսումն՝ «քաղցրութիւն» ասէ. «Եւ չէ ոք մինչեւ ցմի, որպէս ոչ ծ[անիցեն ամենեքեան] «ոյք գործ[են անաւրէնութիւն]» (տե՛ս* **Սղմս. ԺԳ. 1-5***)։* 2 *Ոչոք էր ի մարդկանէ, որ քաղցրացուցանէր զԱստուած բարի գործաւք ի ցասմանէ խոնարհել եւ գալ առ մեզ, այլ անձամբ յինքեան բարութենէ եկն Տէրն, եւ եղեւ մարդ գթութեամբն եւ ողորմութեամբն իւրով, սակայն մնացին նոյնպէս չարք։* 3 *Վասն զի «Ո՞չ ծանիցեն զնա ամենիքեան, ոյք*[3] *գործեն զանաւրէնութիւն», զի յաճախութիւն չարեաց նոցա կալաւ զաչս մտացն՝ ո՛չ տեսանել իմաստութեամբ արարածոցս զԱրարիչն, որպէս եւ հրէայքն յաստուածագործ սքանչելեացն զաստուածութիւն բանին ի մարմնի։* 4 *«Ոյք ուտէին զժողովուրդ որպէս կերակուր հացիւ, եւ առ Տէր ոչ կարդ[ային]։* 5 *«Անդ երկ[իցեն] զերկեղ, ուր ոչ իցէ երկեղ զի Աստուած ցր[ուեսցէ] զոսկերս մարդահաճոյիցն»* (**Սղմս. ԾԲ. 6***), վասն զհասարակաց մարդկանէ. ասաց. «Ամենիքեան խոտ[որեցան] ի մի[ասին] եւ ոչ ոք է, որ [առնէ զքաղցրութիւն]»։* 6 *Այժմ զմեծամեծսն յանդիմանէ, որք զգլխաւորական իշխանութիւնսն ունէին, եւ չարութեամբ վարէին ի վերայ ժողովրդեանն, եւ լինէին պատճառ մոլորութեան նոցա։* 7 *Նոյնպէս դպիրքն եւ փարիսեցիքն եւ քահանայապետքն հրէից՝ զժողովուրդն։* 8 *Ըստ այնմ, թէ ուտեն զտունս այրեաց. վասն որոյ եւ աւելի դատաստան ընկալցին։* 9 *Որք եւ զփականս արքայութեան ունէին, ինքեանք ոչ մտանէին եւ զայլս արգելուին։* 10 *Եւ թողեալ զծանր աւրինացն Աստուծոյ զդատ|184ա|աստան, եւ տասանորդաւքն եւ նուիրաւքն ուտէին զժողովուրդն, եւ որպէս հացիւ՝ սնոտի բանիւք խաբէին զնոսա։* 11 *Եւ թագաւորքն չար եւ իշխանքն զհացն առնուին զժողովրդեան եւ զրկանաւք ուտէին զնոսա, եւ առ Աստուած ոչ կարդ[ային]։* 12 *Այսինքն՝ ոչ յիշէին զԱստուած եւ ոչ ի նմանէ համարէին զբարիսն եւ կամ երկնչէին յաւելի դատաստանէն, որպէս ի ստանալն զա-*

---

[1] *Զձ՛ արս*
[2] *Զձ՛ չարութեան*
[3] *Ճ՛ որք*

ելին ունին փոյթ։

ԺԷ. 1 *«Անդ երկիցեն զերկեղ, ուր ոչ իցէ երկեղ, զի Աստուած ցր[ուեսցէ] զոսկերս մարդահաճոյիցն», վասն «զի անզգայացեալքն ի բարեաց որք անխտրաբար բերին յամենայն չարիս, վասն զերկեղն Աստուծոյ արհամարհելոյն լինի. եւ ուր ոչ ունին կասկած երկեղի անդ ժամանեսցէ նոցա երկեղ դատաստանին Աստուծոյ։* 2 *Որպէս ասորոյն յԵրուսաղէմ, ուր ոչ ունէին կարծիս, եհաս սատակումն հարիւր ութսունեւթ հազարացն։* 3 *Եւ հրէայքն՝ յետ խաչելոյն զՏէրն անհոգացան, եւ եհաս ի վերայ նոցա դատաստանն արդար, զոր կրեցինն ի հռովմայեցւոցն։* 4 *«Զի Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից»։* 5 *Որպէս Հռափսակ գովէր զիւր թագաւորն, եւ հրէայքն զթագաւորութիւն Փրկչին ուրացեալ ասէին. «Զիք մեր թագաւոր, բաց ի կայսերէ»* (**Յվհ. ԺԹ. 15**)։ 6 *Նոյնպէս եւ ամենայն մարդահաճոյք, որ առաջի թագաւորաց եւ իշխանաց զհաճոյս կամաց նոցա խաւսելով, ցրուեն զմտածութիւն բարեաց ի խորհրդոց նոցա եւ ոչ տան թոյլ հայել յիւրեանց սխալանսն, այլ շոգմոգ բանիւ պատրեն եւ գովեն եւս ի գործս չարութեան իւրեանց, եւ վասն իւրեանց առաւրեայ շահին զհաւիտենականն տան նոցա ժառանգել կորուստ, զորոց ցրուեսցէ Աստուած զոսկերս այնպիսի մարդահաճոյից։*

ԺԸ. 1 *Ի միւս սաղմոսի ասէ, «զի Աստուած է յազգս արդարոց»* (**տե՛ս Սղմս. ԺԳ. 6**)։ 2 *«Անդ երկ[իցեն] զերկեղ»։* 3 *Երկեղ է եւ յեկեղեցիս քրիստոնէիցն՝ այլ ոչ որպէս հրէիցն, զի նոցայն ծառայական էր, եւ եկեղեցւոյ իբր որդի պատկառէ ի Հաւրէ, նախքան զանկեալն ի մեղս, այնպիսի յուսով, «զի Աստուած է յազգս*[1] *արդա[րոց]», որք աւազանաւն արդարացան, որոց* |184բ| *Տէրն ասաց. «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատ[արած] աշխ[արհի]»։* 4 *«Ամաչ[եսց]են եւ յամաւթ [լիցին], զի Աստուած անարգեաց զնոսա»* (**Սղմս. ԾԲ. 6**)։ 5 *Անարգեաց զասորեստանեայսն, զի ոչ եղեն արժանի ի պատերազմ գումարելոյ ի վերայ Եզեկիա։* 6 *Եւ հրէայքն անարգ են, քան զամենայն ազգս, ընդ*[2] *ամենայն տիեզերս։* 7 *Այլեւ զմարդկային բնութիւնս եթող Աստուած ի միտս անարգութիւն գործել զանարժանս, զորս թուէ առաքեալ։*

ԺԹ. 1 *«Ո տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայէղի* (**Սղմս. ԾԲ. 7**)։ 2 *Զի անդ համարէին զԱստուած եւ անտի ել հրեշտակն սատակեաց զասորիս, եւ ազատեցան գերեալքն ի նոցանէ, եւ դարձեալ մտին ի քաղաքն։* 3 *Եւ ցնծացաւ Յակովբ, Յուդա եւ Բենիամին, եւ ուրախ եղիցի ի տասը ցեղքն։*

---

[1] *Ձ՛յազգս*
[2] *Զձ՛ > ընդ*

4 «Ո՛ տացէ ի Սիոնէ զփրկ[ութիւն] Իսրայէղի»։ 5 Իղձք է այս եւ բաղձանք մարգարէիցն, զի յամենայն հնարից փրկութեան, որ ի մարդկանէ, յուսահատեալ էր բնութիւնս, զի ամենիքեան ի ճանապարհէն ճշմարտութեան խոտորեցան անզգամ յիմարութեամբ, ի հաւատոց ապականեալք եւ գործովք պղծեալք։ 6 Եւ ոչ ոք էր, որ քաղցրացուցանէր զդառնութիւն բնութեանս եւ կամ ի քաղցրութիւն ածէր գթած Հայրն, տալ անառակ որդեացս զհոգւոյն շնորհ, զոր վասն մարմին լինելոյն կորուսաք, այլ անպիտան գան ի գործս չարեացն։ 7 Վասն որոյ պաղատի մարգարէս եւ կարաւտելի բաղձանաւք զերկնաւորն հայցէ բժիշկ ի Սիոնէ տալ փրկիչ՝ զԲանն Աստուած զծոցածին ծնունդն Հաւր ի վերին Սիոնէ, եւ զմարդ լինելն ի բնութենէս, զի Սիոնն մայր ասի, որ է բնութիւնս, որում ըղձայ մարգարէս։ 8 Զի ի սոյն բնութենէ, որ զտիրական պատկերին կորոյս զգեղեցկութիւն, եւ ի բանսարկու թշնամոյն պատրեալ խաբեցաւ, եւ զմարմինն կոխան ետ ախտից։ 9 Ի նոյն բնութենէ լինել հայցէ Փրկիչ, յորմէ տուաւ Յիսուս, որ է փրկիչ Իսրայէղի, այսինքն՝ ամենայն ազգաց, քանզի մինչեւ ծնաւ զերկոյտասան ազգն։ 10 Յակովբ կոչիւր նահապետն եւ ապա Էսրայիլ կոչեցաւ, որ է՝ տեսեալ զԱստուած[1]։

Ի. 1 Եւ Տէրն մեր մի՛ կոչիւր նախքան զառնուլն զերկոտաս|185ա|ան անդամ բնութեանս, եւ ապա գլուխ անդամոց կոչեցաւ լրման եկեղեցւոյ, եւ մեք գլխովն մեր Իսրայէլ կոչեցաք, «զի զԱստուած ոչ ոք ետես, բայց» գլուխն մեր «Միածին, որ ի ծոց Հաւր» (Յվհ. Ա. 28), ի դարձ[ուցանել] զգեր[ութիւն] ժող[ովրդեան] զգերեալսն ի սատանայէ ի ծառայութիւն ախտից եւ մեղաց մահու եւ դժոխոց։ 2 «Ցնծասցէ Յակովբ» (Սղմս. ԾԲ. 7). արդարքն առաջին, որք խաբեցան զհեշտութիւն մարմնոյ, զի Յակոբն թաթող եւ կարթող թարգմանի (Ծն. ԻԷ. 26), «եւ ուրախ եղիցի Իսրայէղ», որք տեսին զԱստուած ի մարմնի, որոց եւ Տէրն երանէր. «Ձեր երանի աչաց եւ ականջաց, զի տեսանէք, զոր բազ[ում ի] արդ[արոցն] ցանկացան տեսանել, զոր ոչ տեսին, եւ լսել, զոր ոչ լու[ան]» (Ղկ. Ժ. 23-24)։ 3 Այլ եւ նոյն ինքն տէրն Յակոբ եւ Իսրայէղ կոչեցաւ։ 4 Ցնծացաւ եւ ասաց. «Գոհանամ զքէն Հայր, Տէր երկնի[ց] եւ երկրի զի ծածկեցէր զայս անճառ խորհուրդ փրկութեան յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտնեցէր անմեղ տղայոց» (տե՛ս Ղկ. Ժ. 21)։

ԻԱ. 1 Արդ ցնծասցուք եւ մեք ընդ խորհուրդ փրկութեան մերոյ, որպէս եւ ի ծննդեան նորա հրեշտակքն հովուացն տային աւետիս։ 2 «Աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժող[ովրդեանն], զի

[1] Իսրայէլ անվան սուրբգրային ստուգաբանությունն է։ Տե՛ս Ծն. ԼԲ. 28։

ծն[աւ] ձեզ Փրկիչ, որ է աւծեալ Տէր[1]*» (*Ղկ. Բ. 11*) եւ մեծ ուրախութիւն է, զի յԱստուծոյ Հաւրէ տուաւ գթութեանց պարգեւ, անլոյծ եւ մնացական պատիւ, որ եղեւ մեզ, որք ժողովուրդք Քրիստոսի եղաք։* 3 *Եւ տուաւ մեզ Փրկիչ ո՛չ հրեշտակ յերկնից եւ կամ մարդ յերկրի, արդարոցն դասք մարգարէիցն, եւ կամ նահապետաց, այլ Աստուած Բանն եւ Որդի Հաւր, որով փրկեցաք ի չար գերութեանց բանսարկուին, եւ ժողովեցաք ի մի հաւատ միոյ ճշմարիտ Հովվին, եւ հրաւիրեալ կոչեցաք յիմաստութեանն Հաւր սեղան ի ծառայիցն, որք առաքեցան կոչել զամենիսեան յայս ուրախական հրաւէր, առաքելովքն սրբովք եւ վարդապետաւք եկեղեցւոյ, որոց ասէ թողուլ զառաջին անզգամութեանն կորստական ճանապարհ եւ մահու, զի կեցջիք զանմահական կեանսն, եւ խնդրեսցուք զիմաստութիւն, զի ապրեսջիք, զի ո՛չ միայն բաւական է ի չարեացն <հեռա|185բ|ն> հեռանալն, այլեւ զիմաստութեան բարեաց բուռն հարկանել։* 4 *Վասն զի Իմաստութիւնն Հաւր Յիսուս Քրիստոս ո՛չ այլ աղագաւ եղեւ առաւել մարդ, եւ զհոգին գիտութեան եւ իմաստութեան շնորհեաց մեզ վերստին, քան եթէ զի զերծեսցէ զմեզ յիմարութենէ եւ յափշութենէ անգիտութեանն։* 5 *Վասն զի անզգամութիւն, որ է անգիտութիւն խաւար ոգոց, մահ իմանալի եւ զգալի, անծանաւթութեան Աստուծոյ առիթ, աւրինաց նորա բարեաց եւ սրբոց անգիտութիւն, ուրացութիւն յերկեղէ նորա կեցուցանողի։* 6 *Իմաստութեան չարի գտիչ եւ վարդապետ։* 7 *Իմաստուն են ասէ, ի չար գործել եւ բարի ինչ առնել*[2] *ո՛չ գիտացին, զի որպէս խաւար ներհա[կ] կայ ի լուսոյ, այսպէս եւ անզգամութիւն իմաստութեան։* 8 *Բայց ի զգալի խաւարէ աստի վնաս ինչ ոգի ոչ կրէ, իսկ յանգիտութենէ իմաստութեանն բիւրք եւ մեծամեծ բուսանին չարիք, յորոյ ոչ միայն հոգիք, այլեւ մարմին բազում անգամ կրէ անհնարին չարչարանաց պատուհաս, որպէս եւ ցուցաւ յառաջ ասացելովքդ։* 9 *Վասն որոյ փախուցեալք յանզգամութեան խաւարէն՝ զհետ լուսոյ իմաստութեանն գնասցուք, որով մարգարէն Դաւիթ զուարճացեալ խնդայր։* 10 *«Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստ[ուն եղէ], զի զպատ[ուիրան քո] քննեցի»* (տե՛ս Սղմս. ՃԺԸ. 99)*։* 11 *Եւ իմաստունն խրատէ՝ «Լաւ է զվաճառն զայն գտ[անել], քան զամենայն գանձս ոսկ[ւոյ] եւ արծաթ[ոյ]» (Առակ. Գ. 14)։* 12 *Եւ ոսկին սոփերայ եւ քարինք պատուականք ոչ ընդ նմա կշռին, որ «սկիզբն*

---

[1] *Ձ տէր իս*

[2] *Ձ եւ բարին չառնել] բարի ինչ առնել*

ճանապարհաց քարոզի, եւ առ դրունս հզաւրաց յաճախէ, եւ ի հրապարակս համարձակութիւն բերէ» (հմմտ. Առկ. Ա. 20)։ 13 *Եւ Պաւղոս զայսպիսի իմաստութիւն ընդ կատարեալսն խաւսի։* 14 *Գովէ եւ զՏիմոթէոս, վասն զգիրս սուրբս ի մանկութենէ գիտելոյ, զբաւականս իմաստուն առնել զնա (տե՛ս Բ. Տմթ.Գ. 15)։* 15 *Եւ ինքն Տէր հրամայէ քննել զգիրս եւ տեսանել, իսկ առաքեալ եւ զմանկունս հասակաւ խրատ տայ սնուցանել ծնողաց իմաստութեամբ եւ խրատու Տեառն։*

ԻԲ. 1 *Եւ ո՞ զամենայն կարասցէ թուել յիմաստութիւն յորդորականսն* |186ա| *ի գիրս եւ զխրատականս։* 2 *Ո՞ եւ զայնու ցանկալիսն եւ զհռչակաւորսն յիշատակել յանուանէ եւ կամ զաշխատութիւնս երկոց յայնոսիկ ջանասիրաց, ո՞ մի ըստ միոջէ կարասցէ յանդիման կացուցանել։* 3 *Եւ կամ կեանք առանց իմաստութեան զինչ այլ իցեն, եթէ ոչ անբանութիւն անասնական։* 4 *Վասն որոյ յանասնական անբանութենէ փախուցեալք զերկնայինն ճաշակեսցուք իմաստութեան քաղցրութիւն։* 5 *Եւ համեմատաբար ընդդէմ անզգամութեանն վատթարութեան մասանց, զնազելի եւ զպարկեշտ անուն, եւ զքաղցր ճաշակ իմաստութեանն չափեսցուք զյոլովագոյն շահից աւգտութիւն։*

ԻԳ. 1 *Իմաստութիւն աթոռակից Աստուծոյ, մշտնջենաւորութեան նորա անբաժանաբար հաղորդ, ազգակից էին եւ միայն բարւոյ. չիք ինչ եղեալ ի նմանէ անխորհրդապէս, զի շրջագայութիւն երկնի եւ հաստատութիւն երկնի (=երկրի) եւ ամենայն մասանց արարածոց վայելչութիւն*[1] *իմաստութեամբ յԱստուծոյ եղեն, եւ նախախնամութիւն՝ իմաստութեամբ զամենայն։* 2 *Բայց զի ամենառատ է Պարգեւատուն, բարերար Փրկիչն եւ ստեղծաւղ, ո՛չ եթող զմարդն անբաժ յամենատենչիկ բարոյն, եհեղ զլոյս իմաստութեանն եւ յազգս հողածնաց։* 3 *Վասն որոյ եւ ոմն յարտաքնոցն կոչիլ զսա աստուածային կոչէ։* 4 *Եւ այլ ոմն ասէ, եթէ ոչ ի բարեաց այսպիսի ինչ եկն եմուտ յաշխարհ։*

ԻԴ. 1 *Իմաստութիւն լոյս իմանալի եւ բազմածաւալ, սնունդ սքանչելի պատկերին եւ զարգացանող զբնաւորականն ի մեզ իշխան։* 2 *Իմաստութիւն ամենամաքուր հայելի, զանտեսանելին եւ զբացարձակ բնութիւնն եւ յամենեւին կացեալն գերամբարձութեան*[2]*, յայտնապէս ցուցանող ընդ աղաւտագոյն։* 3 *Սա*[3] *զորս ըմբռնէ*[4]*, սիրելիս իւր ծանուցեալ՝ շաղեալ*

---

[1] *Ձ՝ երկնի եւ ամենայն հաստատութիւն արարածոց վայելչութեան] երկնի... վայելչութիւն*
[2] *Ձ՝ գերամբարձութիւն*
[3] *Ձ՝ եւ] սա*
[4] *Ձ՝ ըմբռնեալ*

պնդէ զանձամբ, իբր կապով, բայց հոգիս մտառուաց զինքն բնակել քարոզէ։ **4** *Իմաստութիւն միայն զիշխանութեան ունի գաւազ|186բ|ան ի վերայ մարդկան ազգին, մակացութեան ամենայնի գտիչ եւ ժողովոյ բերման նոցա այցելու՝ առ ի յարմարութիւն միաւորութեան եւ դիւրասահման միոյ անուանակոչութեան։* **5** *Սա ձեռակերտիկ, յոգնաձեւ, բազմատեսակ արուեստից կենցաղաւգտոց հնարագէտ եւ վարդապետ, եւ զմեծն քան զամենայն ասել առ Աստուած սիրով հաղորդութեան, եւ յանճառելին մերձաւորութեան լոյս եւ ամենակատար բարի։*

Իե. **1** *Ո՞ իցէ այլ պատճառ եւ նախաշաւիղ, եթէ ոչ իմաստութիւն։* **2** *Եւ, զոր աւրինակ, զգալի երկրին զարդարեալ*[1] *լուսաւորաց*[2] *պայծառագեղութեամբ, եւ ամենեքումք կոչի մի գեղեցկութիւն։* **3** *Եւ թէ արեգակն ոչ իցէ*[3]*, անկատար ամենայն կազմութիւնն երկնի հանդիպէր, եւ կենդանեաց եւ բուսականաց ոչ գոյանալ փոխանորդութեամբ։* **4** *Այսպէս մեծ եւ գեղեցիկ եւ բազմալոյս յամենայն տեսակս իմաստութեան՝ առ Աստուած ընտանութիւնն է, ի ձեռն մաքուր եւ յստակութեան*[4] *մտաց եւ վարուց առաքինականաց մարմնով կատարելոց, որով բովանդակ զաւրութիւն անձին մասանց լիապատար եւ ճառագայթայեղց լուսով յղփացեալ զարդարի, եւ թեթեւացեալ ի վայրաբեր ծանրութենէս, ի գաւառն վերին ամբարձեալ բերի, եւ աստուածային տեսութեամբն անպայման խնդութեամբ լնու ի լոյս*[5] *անճառելի իմաստութեանն ճոխացեալ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր*[6]*, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ ամենասուրբ Հո[գւոյն]*[7]*։*

---

[1] *Զձ զարդարեաց*
[2] *ձ լուսաւորեաց*
[3] *Զձ ոչ է*
[4] *Զձ յատկութեան*
[5] *ձ եւ լոյս*
[6] *Զձ մեր որում փառք*
[7] *Զձ > որ է... հոգւոյն*

ԺԷ.

|186բ| ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆԷՍ] ԵԶՆԿԱՑԵՑԻՈՅ Ի Հ.ԵՐՈՐԴ (70) ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ Ի ԳԼՈՒԽ ԿԱՆՈՆԻՆ «ՈՂՈՐՄԵ՛Ա» ԵՒ ՎԱՍՆ ԶԱՒՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՍՈՅՆ, ՈՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Այստեղ Հովհաննես Եզնկացին զարգացնում է այն միտքը, որ Աստված մարդուն ստեղծեց իր նման ոչ միայն մարմնով եւ արտաքնապես, այլեւ անմահությամբ, լուսավոր իմաստությամբ, մարդասիրությամբ եւ, որ շատ կարեւոր է՝ անձնիշխանությամբ, որպեսզի մարդը տեր լինի այն գործերին, որոնք թելադրվում եւ կատարվում են իր ցանկությամբ:

Նկատելով, որ մարդկային հասարակության մեջ խախտվել են արդարությունը եւ ներողամտությունը, կոչ է անում մարդկանց երբեւէ չհուսալքվելու, չկորցնելու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ: Ասելիքը հաստատելու համար նա իր սովորության համաձայն օրինակ է բերում քրիստոնեության մեծագույն սրբերին՝ Պողոս առաքյալին, որը հալածիչ էր, ապա դարձավ առաքյալ, եւ Մատթեոս ավետարանչին, որ նախապես մաքսավոր էր: Դժվար չէ պատկերացնել, թե միջնադարում ինչպիսի ցնցող տպավորություն կարող էին թողնել նման օրինակները ե՛ւ հավատացյալ, ե՛ւ անգամ ամենածանր հանցանքներ գործած մարդկանց վրա՝ նրանց փրկության հույս ներշնչելով եւ հորդորելով փոխել իրենց կենցաղն ու վարքը:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ 2173 (Ա. 186բ-98ա), 2992 (Զ. 134բ-144ա) եւ 2854 (Ճ. 141բ-5ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Կերպարան եւ պատկեր եւ նմանութիւն Աստուծոյ եղեւ մարդ, ըստ արարչական բանին: 2 Եւ այս ո՛չ ըստ ձեւոյ կերպարանաց մարմնոյ եւ յաւդակապութեամբ ջլաց եւ ոսկերացս դրիցս, այլ է կերպարան ըստ հոգւոյ անմարմնական եւ անմահ բնութեան եւ ըստ սրբութեան: 3 Եւ պատվեր ասի ըստ մտացն անախտ եւ լուսաւոր իմաստութեան*[1]*: 4 Եւ նմանեալ լինի ըստ զանազան |187ա| մասանց առաքինութեանն կատարմամբ գործոյ, ողորմածութեամբ ողորմածին եւ մարդասիրին մարդասիրութեամբ: 5 Եւ այսոքիւք գրեալ կերպարանի պատկերին նմանութեան շնորհ, եւ ոչ գեղեցկափայլ երանգոց գունազարդութեամբ: 6 Մանավանդ թէ անձնիշխանական զաւրութեամբն, զոր ի բնութեան մերում հաստատեաց Արարիչն, տէր գոլով գործոցն յոր ինչ*[2] *յաւժարին միտքս մեր: 7 Վասն զի բնաւորեալ է բանական մտացն խորհրդական գոլ, եւ հարկ է ամենայնիւ, որ ունի զխորհելն, եւ տէր գոլ գործոցն եւ տէր գոլով գոր-*

---

[1] *ՁՃ՝ > եւ... իմաստութեան*

[2] *Զ > որ ի... գործոցն, Ճ՝ զոր ի գործոյն որ ինչ] որ... յոր ինչ*

ծոցն[1], ամենայն իրաւք անձնիշխան եղիցի, եւ զի մեզ է առնելն, ո՛չ անկարելեացն եւ որքան հնարինն։ **8** *Այլ որք հաւասարապէս ի հնարաւորացն են, զոր կարող եմք առնել զիրն եւ զնորին հակակայն[2], որպէս տալն եւ ոչ տալն, խնդալն ընդ որս պարտ է եւ ոչ խնդալն, եւ որքան[3] այսպիսիք են, որք են չարութեան եւ առաքինութեան գործք։* **9** *Եւ ամենայն, որ ինչ հետեւի գով[4] կամ պարսաւ՝ ի մեզ են եւ կամաւորապէս գործեմք։* **10** *Եւ արդ յայտ եղեւ ասացելովքս, եթէ անձնիշխան եմք յորս յաւժարիմք կամաւք։*

Բ. **1** *Վասն է՞ր վատթարացն եւ պարսաւելեացն հետեւի մարդ՝ իմաստուն գոլով եւ բանական։* **2** *Վասն զի ո՛չ միայն հոգի բանական է՛ միտք, որով հպի յանմարմինսն եւ յիմանալի զաւրութիւնսն, այլեւ զգայական եւ շնչական, որ եւ անասնոցդ է բնաւորեալ։* **3** *Եւ ոչ միայն զգայական, այլեւ բնական եւ նիւթական, որ եւ կերակրական աճմամբ առ տնկոցն տեսանի բնութիւն, զոր եւ անուանեն իմաստունք միտք եւ բնութիւն եւ նիւթ։* **4** *Արդ, որքան միտքն կցորդութիւն ունի առ սկզբնատիպն նմանութեան, ըստ կերպարանի լաւին եղեալ, եւ իբրեւ հայելոյ ի ձեւոյն, որ երեւի նմա կերպարանեալ, յայնժամ եւ բնութիւնն, որ է զգայականն, ի մտացն զարդարի, իբրեւ ի ցուցական հայելոյ։* **5** *Եւ ի սմանէ նիւթական մարմնոյն զարդարի բնութիւն, բարեշարժս եւ մաք|187բ|ուրս լինելով յախտից։*

Գ. **1** *Եւ այսպէս, գեղեցկութիւն էին ընդ ամենեսեան թափանցանց եղեալ, մինչդեռ բուռն հարեալ ունիցի զայլմէ այլն։* **2** *Իսկ ի հակառակն դարձեալ, յորժամ վերինքն զհետ երթիցեն ներքոյն, յայնժամ նիւթական մարմնոյն ապականեսցի բնութեան գեղեցկութիւն, եւ ի նմանէ մթացեալ ծածկի մտացն լուսաւորութիւն, եւ ոչ յայնժամ տեսանի զկերպարանն Աստուծոյ ի ձեւ ստեղծուածոյն, քանզի իբր հայելի իմն ի թիկանց կուսէ զբարեացն տեսիլ միտքն արարեալ, ի բաց հանէ զնշոյլ բարոյն զի նմա երեւոյթս։* **3** *Եւ աստի գոյանայ չարին ծնունդ, ի բաց բարձելոյ բարոյն։* **4** *Իսկ որոց, ըստ իմաստնոյն բանի, զաչսն ի գլուխն ունիցին, այսինքն՝ զտեսողական միտսն առ սկզբնատիպն բարեաց, խոյս տուեալ յանմտութեան շրջող խաւարէ, զկերպարանին գեղեցկութիւն եւ զնմանութիւն պատկերին զանազան տպաւորութեամբ տպաւորէ յանձին։* **5** *Արդ, որպէս միտք ի յոգւոջ ակն տեսողական, նոյնպէս եւ յոյսն ակն[5] է հաւատոյն, եւ հաւատն ամենունակ էութիւն, իբրեւ զգեղեցիկ կենդանի անձնաւոր եւ զգայական, եւ ունի ակն զյոյսն աներեւոյթիցն տեսող։*

---

[1] *Զ > եւ տէր գոլ գործոցն, Ճ՝ եւ տէր գոլ գործոցն ամենայն իրոք] տէր գոլ... ամենայն իրաւք*
[2] *Ճ՝ հակայն*
[3] *Զ որք] որքան*
[4] *Զ գոլ] գով*
[5] *ԶՃ՝ ունակն] ունի ակն*

Դ. 1 *Ըստ առաքելոյ. «Հաւատ է յուսացելոցն իրացն հաստատութիւն, եւ յանդիմանութիւն, որոց ոչն երեւին»* **(Եբր. ԺԱ. 1)**: **2** *Եւ զի բազում են մասունք յուսոյն, ոչ միայն տեսանեն նովաւ, այլեւ լսէ*[1] *զձայն ի կոչումն, որպէս ունկամբ, եւ հոտոտայ անմահացուցիչն հոտ անուշից, խաւսի որպէս լեզուաւ, եւ պատմաբանէ զանճառելեացն վայելչութիւն, ճաշակէ որպէս բերանով զհայրենի սեղանոյն աստուածակազմ կերակրոցն ախորժականութիւն, շաւշափէ զանհպելին*[2] *երեւման եւ գործէ առաքինական ընթացիւք, գնալով փառաց ի փառս եւ զաւրութենէ ի զաւրութիւն: 3 Եւ զոր աւրինակ, զգայարանք մարմնոյն հպին առ զգալիսն իւրեանց որակութիւնս, եւ մասունք հոգւոյ առ հարմարականն առաքինութիւն, նոյնպէս եւ* |188ա| *զաւրութիւնք յուսոյն, որ են զգայարանք հաւատոյ, առ անտեսական եւ աներեւոյթ խոստմանցն վայելչութիւն, զոր եւ մեծն Դաւիթ, որ ի կենդանեաց երկրին բարութեանց տեսանող, ցնծութեան եւ ուրախութեանն ձայնի լսող, քա[ղ]ցր տէրութեանն ճաշակաց պատմաւղ ասէ յայսմ սաղմոսի. «Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցիցս յաւիտ[եան]»* **(Սղմս. Հ. 2)**:

Ե. 1 *Արդ, նախ քան զաւրութիւն եւ զշահաւէտ աւգտութիւն յուսոյն քննել, զվերնագիր սաղմոսիս տեսցուք*[3]*, որ ասէ. ի կատարածի Դաւիթ որդոցն Յովնադաբու եւ առաջին գերութեանն եւ անվերագիր եւ ինքն խոստովանի, թէ չէ առաջնոցն վերագիրս: 2 Յորժամ Յովաբ կռվէր ընդ Յեբուս թէ որդի Սաւուղայ, ասաց Դաւիթ զսաղմոսս, որ ունիցի զդէմս գերոյն որ ի Բաբելոն, եւ բնութեանս, որ ի բռնութենէ սատանայի, եւ զփրկութիւնն, որ Քրիստոսի[ւ] եղեւ: 3 Իսկ որդիքն Յովնադաբու ղեւտացիք էին՝ ազգականք Երեմիայի, եւ յոյժ աւրինապահք, որ յաւուրս նոցա գերեցաւ Երուսաղէմ երիցս անգամ, եւ նոքա զերծեալք ի գերութենէն, մեծաւ յուսով աղաւթէին*[4] *վասն դարձի ժողովրդեանն: 4 Որ եւ բնութիւնս գերելոյ ի սատանայէ եւ մահու եւ դժոխոց, նահապետք ամենայն եւ դասք մարգարէիցն, դարձ գերութեանս մերոյ հայցէին, եւ յուսովն, որ առ Աստուած, վստահանային: 5 Որպէս եւ մարգարէն Դաւիթ ասէ. «Ի քեզ, Տէր յո[ւսացայ,] մի՛ ամաչեցիցս յաւիտ[եան]»:*

Զ. 1 *Արդ, պարտ է արուեստիցն հաւանել որոշմանց եւ չորք զայսոսիկ խնդրել զգլուխս եթէ է եւ զի՞նչ է, որպիսի՞ ինչ է*[5] *եւ վասն է՞ր է. 2 Եւ*

---

[1] *Զ այլ եւ լսեն] այլ եւ լսէ զձայն, ճ՛ > այլեւ լսէ*
[2] *Զճ՛ շոշափէ զնա հպելին*
[3] *Զճ՛ > տեսցուք*
[4] *Զճ՛ օթէին] աղօթէին*
[5] *Զճ՛ > որպիսի ինչ է*

արդ, եթէ է յոյս աներեւութից եւ անյայտիցն տեսող՝ յայտ է։ 3 *Իսկ եթէ զի՞նչ է խնդրել եւ յանդիման կացուցանել, ըստ մասանց արժան է եւ ըստ կարգի։* 4 *Նախ սահմանաւրէն ըստ բոլորի ասել, քանզի ո՛չ եթէ յաղագս միոյ |188բ| ուրուք մասին է խնդիրս, եթէ զբաժանելն նախադասեսցուք։*

Է. 1 *Արդ, յոյս է ակնկալութիւն բարեաց հանդերձելոց ըստ առաքելոյ, եթէ յոյս տեսանելի՝ չէ յոյս։* 2 *Քանզի զոր տեսանէ ոք, զի՞ եւս յուսայ։* 3 *Եւ այլուր դարձեալ ըստ մարմնոյ տարացուցականաւ սերմանելոյն եւ կա-ս[է]լոյ զվայելումն յուսով գոլ ասէ։* 4 *Եւ յաղագս նախնեացն առաքի-նեաց ասէ. յուսով ակն ունել հանդերձելոց բարեացն։* 5 *Վասն որոյ քաջքն եւ առաքինիք ի նոցանէ խոստովան լինէին աւտարս եւ պան-դուխտս գոլ զինքեանս յայսմ աշխարհի։* 6 *Քանզի թէ զայն յիշէին գաւառ, ուստի ելինն, գոյր ժամանակ անդրէն դառնալոյ եւ դիւրին էր, բայց ազնուական իմն ցանկացեալ էին. այսինքն՝ երկնաւորին յայտ է գաւառի եւ քաղաքի, որոյ ճարտարապէտ եւ արարիչ Աստուած է։* 7 *Որ եւ հի-մամբք հաստատեալ է, յոր ակնակառոյց ի հեռաստանէ ինքն եղեալ, ասէր. «Զառ ի յետոյսն մոռացեալ եմ, եւ յառաջադէմսն նկրտեալ, եւ ուշ եդեալ ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուսի Տէր մեր»* (**Փլպ. Գ. 13-14**)*։*

Ը. 1 *Տեսանե՞ս զակնկալութիւն յուսոյ հեռաւորացն բարեաց. զիա՞րդ արագահայեաց եւ կորովի աչաւք ի յոյժ կարի հեռաստանէ տեսեալ երանելոյն՝ եւ զամենայն մոռացեալ մինչեւ զի եւ զիւր արդարութիւնն, որ յաւրինաց անտի եւ ի բնաւէ ուրացեալ ունի յետս դառնալ ճեպով եւ յուսալիսն փութայր։* 2 *Այսպէս ձգէ եւ յամենայնէ ըստ կենցաղոյս իրաց, մինչ զի ի հարկացն իսկ եւ ոչ յաւելորդացն միայն կորզիչ ունելով զաւ-րութիւն յուսալ ի վայելչութիւնք բարեացն, զոր եւ ի հեռաստանէ ասէ. տեսին եւ ցնծացան, ի պատճառս որոյ*[1] *յուսով խնդալ եւ նեղութեան համբերել՝ աւրինադրակից Տեառն լինելով խրատէ զծանաւթս։*

Թ. 1 *Սահմանեն եւ այսպէս. Յոյս է սկիզբն կցորդութեան բարեաց։* 2 *Եւ ունի տեսութիւն բանիս այսպէս. բարիք հեռաւորք եւ անտեսանելիք, թէ|189ա|պէտ եւ լի առնեն զոգիս խնդութեամբ, իմանալեաւ վայելումն մերձաւորապէս ո՛չ ունելով, դժուարահաւատ ըստ կարծեաց երեւին ան-կատարից անձանց, որպէս եւ ասեն իսկ. բարիք եթէ ի ներքս՝ ի յոգւոջն է խնդութիւն՝ առնէ, եթէ մատ՝ յոյս*[2]*, եթէ հեռի՝ դժուարահաւատութիւն*[3]*, եթէ եւս հեռի՝ անհաւատութիւն։* 3 *Եւ այս անկատարիցն մտաց, ուստի ո՛չ*

---

[1] *Զ պատճառ սորա*
[2] *Զ մոտոյս] մատ յոյս*
[3] *Զ դժուարահաւատութիւն առնէ*

վախճան, այլ սկիզբն կցորդութեան բարեացն զնա սահմանեցին, ոչ հեռի ինչ եւ աւտար յառաքելական դիտաւորութենէն, քանզի եթէ յոյս ոչ տեսանելեաց, այլ ի վերայ անտեսիցն գոլ ասացաւ առ ի նմանէ, յիրաւի ապա ո՛չ աւարտ, այլ սկիզբն կցորդութեան բարեաց է յոյս, որ ըստ իւրում ժամանակի երթեալ հասեալ վայելմամբ հաղորդեսցի։ 4 *Վասն զի, որպէս ամենայն իրի ժամանակ որոշեալ սահմանէ իմաստունն, այսպէս յուսոյ եւ ընդունելութեան բարեաց, զոր ի ձեռն սահմանացս եդելոց ուսաք, թէ զի՞նչ է յոյս։* 5 *Իսկ եթէ զինչ յուսացեալ բարիքն իցեն, որոց ակնկալեալ սպասէին նախնիքն՝ արդարքն առաջին, եւ ընդ ամենայն դասս արդարոցն, որ ի բնութենէս եւ մարգարէս մաղթէ։* 6 *«Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցիցս» յոչ առնուլն զխոստացեալ բարիսն, որում յուսով սպասեմք։*

Ժ. 1 *Արդ, յուսալի բարիս յայս, որում ամենայն արդարքն ակն ունէին, է՛ որ արարչութեամբ գործոյ է, եւ է՛ որ խոստմամբ բանի։* 2 *Եւ որ ներգործութեամբն արարչական է, այն իսկ է, զի ասաց Աստուած. «Արասցուք մարդ ըստ պատկերի» (Ծնն. Ա. 27)։* 3 *Եւ արար Աստուած զմարդ պատկեր իւր. անմարմին հոգի, իբրեւ զԱստուած, անմեղ անդէն՝ ի ստեղծմանն բանաւոր եւ իմաստուն, եւ անքննելի ի գիտութենէ։* 4 *Արդ, այս մեծահրաշ ստեղծուած անմարմին եւ վերնական զաւրացն զարմանալի, ո՛չ էր հնար, եթէ մնասցէ անկատար։* 5 *Ի սկզբնատպին բարեացն նմանութենէ*[1] *է պատկերն լինելոյ, իսկ մարդ յանցմամբ պատուիրանին ոչ մնաց ի նմանութիւն պատկերին անմարմինն, յախթե|189բ|ցաւ ի մարմնոյ, անմեղն ձգեցաւ ընդ գլորմամբ մեղաց, իմաստուն բանաւորն անբանական ախտիւ տգիտացեալ՝ յիմարեցաւ։*

ԺԱ. 1 *Եւ արդ զի՞նչ։* 2 *Մի՞թէ ասելն Աստուծոյ եւ առնելն զմարդն պատկեր՝ ստացաւ։* 3 *Քա՛ւ լիցի։* 3 *Այլ զի մարդակերպ երեւեալ որդի ստեղծ զնա ի գութն իւր, եւ զի բարի է Աստուած եւ նախագէտ, շարժեցաւ բարին առնել զԱդամ եւ զԵւա։* 4 *Նախ գիտութիւնն, որ ի նմա՝ գիտաց որ ինչ լինելոցն էր, բայց ոչ արգել զբարի շարժումն Աստուծոյ յառնելոյ զմարդն, այլ եցոյց կերպարանաւք պատկերի մարդոյ երեւմամբն ի ստեղծանելն զհնարս պատկերին բանի ամբողջ մնալոյն, եթէ ի վախճանի աւուրց առնելոց է զիւրական ստեղծեալ պատկերն եւ լինելոցն, որ Ադամ, զի զկերպարանն ոչ պահեաց հինն Ադամ՝ պահեսցէ, եւ զմարմինն, որ արար մահկանացու՝ անմահացուսցէ։* 5 *Եւ զի որ հաղորդ եղեւ վեհագունին՝ նուաստացաւ, հաղորդի վատթարագունիս, զի բարձ-*

[1] *Ձ՛նմանութեան է*

բացուսցէ։ 6 *Եւ այսմ տեղեկացեալ արդարոցն դասք, յուսով սպասեալ մնացին։* 7 *Իսկ որ խոստմամբն է, այս է ասելն տեառն Աստուծոյ. «Ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի մէնջ ճանաչել զբարի եւ զչար։* 8 *Եւ արդ, ահա, գուցէ ձգիցէ զձեռն իւր առնուց[ու] ի ծառոյն կենաց [ուտիցէ] եւ կեցցէ յաւիտեան» (***Ծնն. Գ. 22***)։*

ԺԲ. 1 *Ոչ հենգնական է բանս, զի ոչ վայել է Աստուծոյ յոտնահար լինել իւրում ձեռագործին, այլ ճշմարտելով ասէ. «Եղեւ Ադամ ճանաչող բարոյ եւ չարի». զոր մեք բնութեամբ ունիմք, սա փորձիւ գիտաց։* 2 *Եւ զի ցանկացաւ Ադամ լինել իբրեւ զմի ի մէնջ, ահա եղեւ նմա ի կամս մեր միանալ նորայոյն բնութեան եւ լինել երկրորդ Ադամ, որոյ խորհուրդն յառաջ քան զյաւիտեանս ծածկեալ գոյր ի մեզ։* 3 *Եւ արդ, ահա, հիմն արկցի խորհրդոյն, մինչեւ առցէ զկատարումն եւ ձգիցէ զձեռն իւր ի ծառն կենաց, որ բուսանի ի պտղոյ արդարութեանն, եւ տայ զպտուղն ի ժամու իւրում, ասելով. «Այս է հացն յերկնից իջեալ, զի որ ուտիցէ՝ զմահ մի տեսցէ յաւիտ|190ա|եան» (***Յվհ. Զ. 50-52***)։* 4 *Եւ արդ ասէ. «Գուցէ զձեռն իւր ի ծառն կենաց առնուցու եւ կեցցէ յաւ[իտեան]»։* 5 *Անժամանակ եւ անպատեհ է ասէ, արդ ուտել ի ծառոյ կենաց եւ կեալ, զի Աստուծոյ բանն գործ է կատարեալ, որ ասաց. «Յորում աւուր ուտիցէք՝ մահու մեռա[նիցեք]» (***Ծնն. Գ. 5***)։* 6 *Ընդ ուտելն եւ մահն եհաս։*

ԺԳ. 1 *Արդ, այսմ դիպող ժամանակի գալստեան Աստուծոյ բանին, զի մերով բնութեամբս զմերն պատրաստեալ բարեաց վայելս ի մեզ դարձուսցէ. զդրախտին կենաց փափկութիւն եւ զկենդանեաց երկրին ժառանգութիւն, եւ զաստուածութեանն փառաց նմանութիւն, որում ծարաւեալ ծնունդ Ադամայ, որք զակն հոգւոյ եւ հաւատոյ ի մեղաց աղտոյն եւ չարութեան ծխոյն ոչ նսեմացուցին, այլ մտաւք մաքուր եւ ակնկալութեամբ յուսոյ յարաժամ հայցէին։* 2 *Ըստ որում եւ այժմ Դաւիթ ասէ. «Ի քեզ, Տէր, յուս[ացայ] , մի՛ ամաչեցից»։*

ԺԴ. 1 *Արդ այսու յուսով Ենովս «յուսացաւ կոչեալ զԱստուած» (***Ծնն. Դ. 26***) նշանակելով ի ձեռն անուանն, թէ առանց յուսոյ՝ հոգի*[1] *տարագրեալ է ի մարդկային տեսակէ, ըստ այլասերից բնութեան կենդանածնաց։* 2 *Քանզի Ենովս քաղթէրէն ի մերս մարդ ասի, որպէս եւ սա խոյս տուեալ յանասնական բնութենէն մարդ ցուցեալ պատկեր Աստուծոյ, բուռն հարկանէ զյուսոյ, որ կայ եւ մնայ յաներեւոյթ կեանսն։* 3 *Եւ այս է մարդ, քան զայլ կենդանիս, յուսոյ սննդակից եղեալ, զի որ անբաժ է ի յուսոյ, մարդակերպ գազան է եւ ոչ մարդ։* 4 *Յաղագս որոյ ուղղութիւն*

---

[1] *Զ ոգի*

ցուցեալ եւ պարկեշտս՝ յուսացաւ թէ գոյ հատուցումն գործոց բարեաց, եւ կոչեաց զանուն Տեառն Աստուծոյ յաւգնականութիւն, եւ ոչ որպէս զմոռացեալ, քանզի մեղուցեալ[1] *Ադամ եւ Եւայ եւ Կային սպանաւղ եղբաւրն, յուսահատեալ եղեն մարդիկ մնացեալ, իբր թողեալ ի ձեռաց Աստուծոյ, եւ ամաւթով լցեալ։* **5** *Իսկ Ենովս, որդի ջրարբուին Սեթայ, որ զծարաւ ծնաւղացն շիջոյց՝ անարատ կեանս ստացեալ, «եւ յուսացաւ կոչել» զանուն Տեառն, թէ չգարշի ի ծառայից իւրոց, եւ զԱստուծոյն, թէ ոչ վասն* |190բ| *կորստեան զմեզ աստ էած, այլ ի կեցուցանել։* **6** *Եւ թէպէտ մեք կորուսաք զկեանս, այլ նա վերստին տացէ եւ զմեզ ի յուսահատեալ եւ յամաւթալի կենաց ազատեսցէ եւ յառաջին բարիսն դարձուսցէ։*

ԺԵ. **1** *Եւ այսոքիկ Ենովսայ յուսոյն ակնկալութիւնք, զի՞նչ եւ վասն Ենովքայ հաճոյ եղեալ Աստուծոյ ոչ ուրէք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած։* **2** *Եւ որո՞վք առաքինութեամբ հաճոյ եղեւ, եթէ ոչ յուսովն, զի ճԿԵ. (165) ամ հասարակաց վեցից նահապետացն կացեալ, քանզի ասաց. «Եթէ բունքն մեր չեղեն հաճոյ Աստուծոյ եւ մեռան՝ ես ժրացայց ի հաճոյս կամացն Աստուծոյ եւ յաղթեցից մահու», որպէս եւ եղեւ իսկ ըստ յուսոյն եւ ոչ ամաչեաց. յետ ծնանելոյ որդիս աւրինաւք բնութեան, փոխի ի կարգս հրեշտակաց եւ ի վիճակ անմահիցն՝ յամաւթ այնոցիկ, որք ասէին, թէ ոչ կարեր անմահ լինել հողեղէն մարմինն։* **3** *Եւ զի յոյս կալաւ, թէ յանցումն պատուիրանին եւ ճաշակումն պտղոյ հանեալ ի դրախտէն մահացոյց պահպանութիւն պատուիրանին անդրէն տարցի դրախտն եւ յանմահական կեանս, վասն որոյ ոչ ճաշակէ պտուղ, որով յանցեան նախաստեղծքն։* **4** *Եւ ծածկոյթ արարեալ զգայութեանցն ոչ հայել յերկինս, այլ առանձնական կէնաւք, սրբութեամբ եւ մաքուր սրտիւ եւ միամտութեամբ կեցեալ ի կեանս զամս ԲՃ. (200)։* **5** *Եւ որում*[2] *սպասեացն յուսով, ա՛ռ ըստ ակնկալութեանն, եւ ո՛չ ամաչեաց ըստ յուսոյն իւրոյ, այլ դարձաւ ի դրախտին կեանս, յորմէ ելին առաջնաստեղծ մարդքն։*

ԺԶ. **1** *Այլեւ երկրորդ հայրն աշխարհի՝ Նոյ, զոր կոչեաց հայրն «հանգիստ» մարգարէութեամբ (* **հմմտ. Ծնն. Ե. 29***), զի հանգոյց յաղտեղի գործոց, որ չարչարէին զմարդիկ եւ ի տրտմութեանց ձեռաց, զոր ոչ իշխէին համբառնալ առ Աստուած, լի գոլով արեամբ, եւ յանիծից փշաբեր երկրի, որով չարչարէին, սա հանգոյց զամենիսեան, նախ զանձն կուսութեամբ եւ առանձնական կենաւք, եւ ապա զիւրսն այլ ճշմարտութեամբ ի Քրիստոս կատարեցաւ, որ հանգ*|191ա|*ոյց զմեզ մարդեղութեամբն իւրով եւ*

---

[1] *Ճ մոռացեալ] մեղուցեալ*
[2] *ԲՂՃ որ մանաւանդ ընդ Աստուծոյ առնէ եւ որում*

խորհրդով տնաւրէնութեանն։ 2 *Եւ մկրտութեամբն իւրով ետ մեզ մաքուր ծնունդ հոգեւոր, եւ աւրհնեաց զբնութիւն տարերցս՝ զերկիր շրջելովն եւ զջուր մկրտելովն, եւ զաւդ եւ զհուր, խ. (40) աւր*[1] *ի նմա կալով, նախքան*[2] *զհամբառնալն յերկինս։* 3 *Իսկ Նոյ առեալ յԱստուծոյ, ըստ առաքինութեան յուսոյն, կրկին շնորհս մի՝ զի ո՛չ կորեաւ ընդ այլսն ամենայն, եւ երկրորդ՝ զի փրկութիւն լինէր տան իւրոյ եւ սերման կենդանեաց ամենայն ազգաց, եւ կատարումն առաջնոցն եւ սկիզբն վերջնոց։* 4 *Եւ սա ի յուսոյն իւրոյ ոչ ամաչեաց։* 5 *Զսոյն եւ մարգարէս հայցէ. «Ի քեզ, Տէր, յուսա[ցայ], մի՛ ամաչեցից յաւիտեան»։* 6 *Եւ յայլում սաղմոսի. «Ի քեզ յուսացան հարքն մեր»* (**Սղմս. ԻԱ. 5**)։ 7 *Այսինքն՝ Աբրահամ, Իսահակ, Յակովբ, Մովսէս եւ ամենայն նահապետքն եւ մարգարէիցն հանդէսք «յուսացան ի քեզ եւ ո՛չ ամաչեցին»։* 8 *Զի Աբրաամ ի յոյս աւրհնեալ եւ աւրհնիչ զաւակին եւ ժառանգութեան տնաւրինական տեղեացն եւ վերին գաւառին պանդխտանայր յերկիր աւտար։* 9 *Իսահակ ի հոտ հանդերձի որդւոյն, առնոյր զանմահական հոտ այնմ, որ զգենլոց էր ի նմանէ մարմին։* 9 *Եւ ասէ. «Ահա հոտ հանդերձի որդւոյ իմոյ»* (**Ծնն. ԻԷ. 27**)*, յայտ է՝ մարմնոյն Քրիստոսի, «որպէս զհոտ անդոյ լիոյ»*[3]*, որ է դրախտն, լի գոլով միշտ մրգով եւ հոտով։* 10 *Որպէս եւ Տէրն եղեալ մարդ, եկաց մնաց Աստուած ի հոտ անուշից ընլով զեկեղեցի։*

ԺԷ. 1 *Նահապետն Յակովբ ի դէմս Տեառն մերոյ աւրհնէր զՅուդա, տալով նմա շուք*[4] *թագաւորութեան՝ զՔրիստոսին ցուցանելով հրաշագործ թագաւորութիւն եւ զհրաշից ներգործութիւն։* 2 *Մովսէս ասէր. «Մարգարէ յար[ուցէ] ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց, իբրեւ զիս նշանագործ, նմա լուիջիք»* (**Բ. Օր. ԺԸ. 15**)։ 3 *Արդ այսու յուսով բերան եղեալ մարգարէքն մարդկեղէն բնութեանս, ընդ որս եւ մեծն Դաւիթ խառնէ զյուսոյն դիտաւորութիւն ասելով. «Ի քեզ, Տէր, յուս[այ], մի՛ ամաչեցից յաւ[իտեան]»։* 4 *Վասն զի երդմամբ խոստացաւ սմա, ըստ այնմ «Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեան*[5] *եւ ոչ |191բ| ստեաց նմա»* (**Սղմս. ՃԼԱ. 11**)։ 5 *Եւ թէ ո՞ւր երդուաւ, այն է, զի*[6] *ասէ. «Մի անգամ երդուայ ի սրբութեան իմում, թէ Դաւթի ես ոչ ստեցից»* (**Սղմս. ՃԼԱ. 11**)։ 6 *«Զաւակ նորա յաւիտեան կացցէ»* (**Սղմս. ՁԸ. 37**)*, որ է Յիսուս, «եւ աթոռ Նորայ» որ է սուրբ եկեղեցի, «որպէս զարեգակն առաջի իմ» զի մարմին Քրիս-*

---

[1] *ձ խաւարի] .խ. օր*
[2] *ձ յետ] նախքան*
[3] *ձ անդ ղիոյ*
[4] *ձ հրաշագործ] շուք*
[5] *ձ ճշմարտութեամբ*
[6] *ձ որ] զի*

տոսի է. կոչի անուամբ, որպէս եւ գլուխն իւր ասի արեգակն արդարութեան, «իբրեւ զլուսին, զի հաստ[ատեալ է] յաւ[իտեան] վկայ հաւ[ատարիմ] յերկրի»[1] **(Սղմս. ՁԸ. 38-39)**: 7 *Զի որպէս լուսին փոփոխական է, կրելոց է եկեղեցի փոփոխումն, լիութիւն եւ պակասութիւն, մինչեւ կատարի «վկայ հաւ[ատա] յերկինս»* 8 *Իբր այլուր ասէ. «Եթէ կարէք զուխտն իմ, որ ընդ տուընջեան եւ գիշերոյ խափանել՝ չլինել տիւ եւ գիշեր, նոյնպէս զուխտն իմ, որ ընդ Դաւթի:*

ԺԸ. 1 *Եւ վկայ հաւատարիմ Հայրն է, որ ձայնեալ յերկնից ասաց. «Դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հ[աճեցա]»* **(Մտթ. Գ. 17)**: 2 *Եւ զի Դաւիթ բազում ցանգութեամբ հայցէր տեսանել զտեղի տղայանալոյ Բանին, զոր եցոյց նմա Հոգին, որ եւ ասէ. «Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ»* **(Սղմս. ՃԼԱ. 6)**, *որ է «բացումն», զի անդ բացեալ յայտնեացաւ անճառ խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտեանցն եւ յազգաց:* 3 *Վասն որոյ ասէ. «Մտցուք ի յարկս նորա»* **(Սղմս. ՃԼԱ. 7)** *ուր կաթնկեր տղայն ծնաւ:* 4 *«Երկիր պագեաց*[2] *ի տեղւոջ, ուր կա զոտք նորա»՝ տեղի է մսուրն, ուր մարմինն եդաւ, որ ասի «ոտք» զի գլուխ է աստուածութիւնն, եւ ոտք՝ մարդեղութիւնն, իբր զվերջինն այլեւ յամենայն տեղիս տնաւրինականս, ուր ոտիւք շրջեցաւ խաչեցաւ եւ եդաւ ի գերեզման, ուր տակաւին գան յամենայն աշխարհէ եւ երկրպագեն:*

ԺԹ. 1 *Նմանապէս եւ զտեղի հանգստեան*[3] *արդարոցն բացեալ եցոյց սմա, զոր տեսեալ զանճառելի փառացն վայելչութիւն, ասէ. «Ես ասացի ի զարմանալն իմում, եթէ ամենայն մարդ սուտ է»* **(Սղմս. ՃԺԸ. 11)**, *որ համարձակի պատմել զտեղոյն, զոր ժառանգելոց են հաւատացեալքն ի Քրիստոս, մնացեալքն յարդարութիւն եւ դարձեալքն ապաշխարութեամբ:* 2 *Զոր եւ յայլում տեղւոջ ասէ. «Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր եւ յուսացուցեր զիս»* **(Սղմս. ՃԺԸ. 49)** *զոր առ ինքն է խոստումն երդմամբ:* 3 *Եւ թէ զոր ասեն. Յետ ելանելոյ Ադամայ ի դրախտէն եւ կոծել ի սուգ անմխիթար, յոյս տուեալ նմա Աստուծոյ բանին, զիւր |192ա| գալուստն, եւ սա մխիթարէ զիս ի խոն[արհութեան] իմում զի Բան քո, Աստուած Հայր, եկեալ կեցուսցէ զմարդկային բնութիւնս:* 4 *Եւ այժմ, վասն այսմ սպասելոյ յուսոյ, ասէ. «Ի քեզ, տէր յուսաց[այ], մի՛ ամաչեցից յա[ւիտեանս]»:* 5 *Վասն զի նախաստեղծիցն գրեալ է, թէ էին մերկ ի դրախտի անդ եւ ո՛չ ամաչէին:* 6 *Վասն զի որպէս տղայք ոչ ամաչեն մերկ գոլով, նոյնպէս եւ նոքա տղայք՝ վասն տհասութեան, եւ նոքա՝ վասն անմեղու-*

---

[1] *ձ՝ յերկինս] յերկրի*
[2] *ձ՝ երգրպագեսցուք*
[3] *ձ՝ > հանգստեան*

թեան։ 7 Եւ զի ունէին զանապականութիւն վերնայնոցն նմանեալ դասուց, ուր ոչ կայ ոստայնանկութիւն հանդերձի, եւ զի դեռ[1] աներկեղք էին, զի[2] ոչ էին առեալ պատուիրան որ ծնանէր զերկեղ եւ երկեւղ՝ զգուշութիւն, եւ զամաւթոյ մտածութիւնս, իսկ յետ ստունկանելոյ զպատուիրանն, երկոքեան կողմանքն ամաչեցին՝ խաբաւղն եւ որ խաբեցաւ։ 8 Նոքա, զի կերան եւ ոչ աստուածացան, իսկ չարն ամաչեաց, զի ոչ ի նմին աւուր մեռան, որպէս եւ կարծէրն։ 9 Արդ, ասէ թէ վասն մեղաց ամաւթալի եղեւ բնութիւնս, այլ յաւիտեան մի՛ ամաչեցից բանիդ կեցուցանելով զիս։ 10 Այլ եւ ամենայն ոք, որ ամաչէ ի մեղանչելն՝ յուսով գթութեանցն Աստուծոյ, դարձիւ եւ ապաշխարութեամբ նոր կեանս ստացեալ ասասցէ. «Ի քեզ, Տէր, յուս[ացայ], մի՛ ամաչեցիցս յա[ւիտեան]։ 11 Յարդարութեան քում փրկեա՛ եւ ապրե[ցո՛] զիս։ 12 Եւ այս է, որ անամաչելի արար զմեզ, զի մեր ոչ գոլով արդարութիւն, Քրիստոսին մեզ համարեալ եղեւ։

Ի. 1 Եւ արդ. զի՞նչ է արդարութիւն, զոր մեք ոչ ունէաք։ 2 Արդարութիւն է ունակութիւն հասարակութեան բաշխաւղ։ 3 Եւ կրկին է արդարութիւն։ 4 Է՛ որ ըստ իրի, եւ է՛ որ ըստ դիմաց։ 5 Ըստ դիմաց ասելով այն է, յորժամ ոք ըստ դիմացն արժանաւորութեան բաշխէ զամենայն ինչ, ի մէջ Աստուծոյ Արարչի եւ արարածական բնութեան, այժմու կենացս անցաւորի եւ հանդերձելոյ անմահական կենացն, հոգւոյ լուսեղինի եւ նիւթական մարմնոյ։ 6 Արդ զայս յիսկզբան անդ կորուսին նախաստեղծքն. ոչ արդարապէս ընտրեցին թէ զՍտեղծողի եւ զԱրարչի զբարերար եւ զգթած Տեառն պարտ էր ընտրել զխրատ, եւ ոչ զաւտարի եւ զնենգաւորի։ 7 |192բ| Ի վերին կեանսն յաւժարիլ, որով հոգւովն ընդ հոգեղէնսն դասեսցի, եւ մի՛ ընդ անասնականս եւ ախտաւորս, զհոգւոյ ընթանալ զհետ եւ մի՛ զվայրաքարշ մարմնոյ։

ԻԱ. 1 Եւ արդ, ընդէ՞ր ոչ ընտրեցին զայս[3] արդարութիւն։ 2 Վասն զի որ ըստ իրի էր արդարութիւն, այսինքն՝ անձնական մասանցն կարգ եւ նոցուն պատկանաւոր առաքինութեանցն, ո՛չ յարմարեցին, զի պարտ էր բաժանել բանականին զխոհեմութիւն, որ է իմաստութիւն ցասմնականին՝ զհեզութիւն եւ զարիութիւն, ցանկականին՝ զողջախոհութիւն եւ զժուժկալութիւն, որով լինի բոլոր անձինն արդարութիւն։ 3 Արդ, զի ոչ կացոյց զբանն իշխան ի վերայ անասնական մասանցն, վասն այսորիկ անարդարապէս անգաւ ի կարգս անասնոց անբանից եւ հաւասարեաց նոցա։

---

[1] ձ՛> դեռ
[2] ձ՛> զի
[3] ձ՛ զյիսուս] զայս

4 Զոր եւ մարգարէս ասէ, եթէ մեք կորուսաք զմերն արդարութենէ կեանս. «Յարդարութեան քում փրկեա՛ եւ ապր[եցո՛]» (Սղմս. Լ. 2). 5 Որ եւ եկեալ Տէրն գթութեամբ եւ ողորմութեամբ առ զնոյն բնութիւնս, եւ արդարացաւ մարմնով ըստ առաքելոյն եւ յայտնեցաւ այս հրեշտակաց նա միայն գոլ այսմ արդարութեանս[1] կարգի յարմարապէս պահող՝ զմարմնոյ բնութիւն յանմեղութիւն եւ յարդարութիւն, որպէս ի ստեղծմանն եղեւ յԱստուծոյ։ 6 Եւ ոչ միայն այս, այլեւ զաւրինացն արդարութիւն, զոր ոչ պահեցաք, եւ վասն այնորիկ անկաք ընդ անիծիւք։ 7 Եւ զայն եւս պահեաց Տէրն, ըստ որում ասաց առ Յովհաննէս, թէ՝ «Այսպէս պարտ է լնուլ մեզ զամենայն արդարութիւն աւրինացն» (Մտթ. Գ. 15) մկրտելովս ի քէն, զի զայլսն ամենայն կատարեցի։

ԻԲ. 1 Այս միայն է, որով կատարի արդարութիւն աւրինացն, զոր հայցէ մարգարէս. «Յարդարութեան քում փրկեա՛ եւ ապրեցո՛ զիս»։ 2 Փրկեա՛ ի գերողէն եւ ի մեղաց եւ յանիծիցն դատապարտութենէ, եւ ապր[եցո՛] ի մահու եւ ի դժոխոց։ 3 «Խոնարհեցո՛ առ իս զունկն քո» (Սղմս. Լ. 3)։ 4 «Զորաւրինակ հիւանդ ոք ի ցաւոցն սաստկութենէ ի զաւրութենէ նուազեալ եւ ձայնական գործեացն ո՛չ կարելով յառաջ բերել ձայն յաւդաւոր[2] վասն նուա|193ա|զելոյն, եւ ո՛չ ոտիւք առ բժիշկն գնալոյ ունելով զաւրութիւն, աղաչէ զմարդասէր բժիշկն ինքեան խոնարհիլ եւ գալ, եւ զունկն խոնարհեցուցանել առ շրթունս հիւանդին եւ լսել զկիրս դառն եւ անհանդուրժելի ցաւոյն։ 5 Այսպէս եւ հիւանդացեալ բնութիւնս զԱրարիչն եւ զԲժիշկն աղաչէ գալ տեսանել զմեզ, զոր եստեղծ առողջ եւ անցաւ, եւ այժմ բազմադիմի ցաւաւք պաշարեալ, զի դարձուսցէ վերստին յառաջինն իւր յառողջական կեանսն»։ 6 «Խոնարհեցո՛ առ իս զունկն Քո», զի թէպէտ լի է ականջ Քո ի քաղցրաձայնութենէ մաքուր բնութեանց լուսեղինացն, որ կացին մնացին յանմեղութիւն, եւ մատուցանեն զանդադար եւ զանլռելին փառաբանութիւն, այլ խոնարհեալ հայեաց յերկրաւոր եւ ի հողեղէն բանականքս, յորդիքս կրսեր եւ մեղուցեալ, յոչխարս մոլորեալ եւ թագաւորական պատկերս կորուսեալ։ 7 «Խոնարհեցո՛ զունկն Քո» եւ ի մերս փառաբանութիւն, ստացիր Քեզ կրկին եկեղեցիս, խառնեալ զերկրաւորսս ընդ երկնաւորացդ, զմոլորեալսս ընդ որս կացին մնացին[3], զծածկաւղս զգեղ պատկերին յաղբս ախտից, վերստին ձուլել ի քուրայս աստուածային հրոյդ միագործելով։ 8 Եւ դարձեալ՝ «Խոն[արհեցո՛յ] զունկն Քո», զի երկին բարձր եւ երկիր խոնարհ եւ երկրաւորքս տկար եւ

[1] Ձ՝ այս մարգարէութեան] այսմ արդարութեանս
[2] Ձ՝ յօտարաւոր] յաւդաւոր
[3] Ձ՝ կային եւ մնացին

նուաստացեալ, այլեւ ի ճանապարհէն ճշմարտութեան մոլորեալ, եւ ոչ կարեմք գալ առ Քեզ։ 9 *Եւ զամենայն գեղեցկութիւնս ի մասունս արարածոց տեսեալ, զՔեզ կարծեմ։*

ԻԳ. 1 *Արդ, «Խոնարհեցո՛ առ իս զունկն Քո» եւ լուր ինձ, երեւեցո՛ զերեսս Քո ի մեզ եւ ողորմեա մեզ. ցոյց ինձ զդէմս քո, ես լսելի արա զձայն Քո եւ կեցո՛ զիս։* 2 *Որ ասացեր. «Ե՛ս եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք»* **(Յվհ. ԺԴ. 6)** *եւ ազատելով ի դժոխոց եւ ի մահուանէ, եւ առանջնորդեա՛ ինձ առ Հայր Քո։* 3 *Դարձեալ. խոնարհեցո՛ առ իս զունկն Քո։ Վասն զի ամենայն զգալի արարածոցս բերան* |193բ| *եւ բան ստեղծեր, գլուխ եւ իշխան. եւ աւրհնեն զՔեզ ամենայն արարածք, իբրեւ անդամք ամենայն բերանով միով, եւ ի ձեռն իմ տան Քեզ աւրհնութիւն։*

ԻԴ. 1 *Արդ, Դու «խոնարհեցո՛ առ իս զունկն Քո» եւ լսէ միջնորդաւ ականջաց քոց հրեշտակաց բարեխաւսութեամբ, որ են մարդասէրք եւ աստուածասէրք, եւ ընկալ զիմ բանական պատարագս, զոր նուիրեմ Քեզ, եւ ելցէ յականջս Քո, իբր ի վերայ սեղանոյ, եւ մի՛ թողուր զիս քարանց եւ փայտից ասել Հայր իմ եւ Աստուած։* 2 *«Այլ դո՛ւ լեր իմ Աստուած ապաւէն»* **(Սղմս. ԺԵ. 9)** *զոր Ակիղաս «Վէմ» ասէ, յորոյ վերայ*[1] *շինեցիս զիմս հաւատոյ շինուած, որ ի հողմոց եւ ի հեղեղաց մեղաց անկործան մնացիս։* 3 *Լինել եւ մեզ իբրեւ զվէմս կենդանիս, ի շինուած հոգեւորական տաճարի եւ տեղի ամուր կեցուցանել զիս։* 4 *Ոչ Երուսաղէմ լիցի ինձ տեղի, զոր ոտք գերաւղացն կոխեցին, եւ ոչ դրախտն, ուր խաբէութիւնն մտեալ զմեզ արտաքսեաց, եւ ոչ երկին, զի եւ անտի փոփոխումն եղեւ անմարմնական բանակացն, այլ անճառելի ծոց աստուածութեանդ Քո լիցի ինձ տեղի ամրութեան, ըստ մարգարէական բանիս, որով յուսացոյց, թէ ի ծոց իւր կրեսցէ զնոսա եւ մխիթար լիցի յղեացն, որք առաքինութեամբ*[2] *զսերմն պատուիրանին ունին յղացեալ։* 5 *Զի հաստ[ի՛ չ] եւ ապաւէն իմ դու ես։* 6 *Եթէ գայթակղեալ գլորիմ յուսալն, որ առ Քեզ՝ վերստին հաստատեցայց։* 7 *Եթէ թշնամին կենաց եւ սպանաւղն առաջին պատերազմի, առ քեզ դիմեալ ապաւինիմ, քան զամենայն պարսպի ամրութիւն ամրագոյն՝ ի Քոյդ ապաւինիմ գթութիւն*[3] *եւ մարդասիրութիւն, եւ ի ծոց Քոյին խնամոցդ ամրացայց անսասանութեամբ,* |194ա| *զի ապաւինեալքս ի քեզ ընդ մարգարէին ասասցուք, եթէ՝ «Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ»* **(Սղմս. ԺԵ. 9)** *որ է հոգիս կենդանական։* 8 *«Ցնծաս-*

---

[1] *Ձ՛ վասն] վերայ*

[2] *Ձ՛ առաքինութեան*

[3] *Ձ՛ քանզի ընդ ամենայն ապաւէ իմ գթութեան] քան զամենայն... գթութիւն*

ցէ լեզու իմ ի կոչելն զՔեզ Հայր, եւս եւ մարմին իմ բնակեսցէ յուսով», զի դեռ մարմնով չեմք անտ՝ ի[1] *յուսացեալ բարիսն, քանզի «ակն ունիմք փրկութեան մարմնոյ» (Հռմ. Ը. 23), ասէ Պաւղոս, զի յուսով ապրեցաք։*

Իե. 1 *Եւ արդ, վասն զի յայտ եղեւ, եթէ զի՞նչ է յոյս եւ զի՞նչ յուսացեալ բարիքն, որում ակն ունիմք, զնոյն եւ Տէր մեր եկեալ յաշխարհ, ուղղեաց զյոյսն մեր առ Հայր եւ յինքն եւ յինքենէ խոստացեալ բարիսն, որում եւ մեծն Յոհաննէս տայ քաջալերութիւն յուսոյ «Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք եւ չեւ եւս յայտ, եթէ զի՞նչ լին[իցիմք]։ 2 Գիտեմք զի յորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լին[իմք]» (Ա. Յվհ. Գ. 2) զի յաղագս այնորիկ եղեւ նման մեզ, զի եւ մեք եղիցուք նման Նմա։ 3 Եւ վասն այսորիկ որդին Աստուծոյ որդի մարդոյ եղեւ, զի եւ որդիք մարդոյն որդիք Աստուծոյ եղիցուք։ 4 Վասն որոյ ասէ. «Ամենայն, որ ունի զայս յոյս յանձին, սրբէ զանձն իւր որպէս եւ նա սուրբ է» (Ա. Յվհ. Գ. 3)։ 5 Եւ մեծն Պաւղոս յորդորէ զվերինն խորհել. «Եւ զվերինն խորհ[ել], ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ մի՛ զայս, որ յեր[կրի]*[2]*, քանզի մեռ[արուք] կեանքն ձեր ծածկ[եալ են ընդ Քրիստոսի]։ 7 Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանք ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտն[եսցիք] փառաւք» (Կղս. Գ. 2-4)։ 6 Վասն որոյ վերստին զյուսոյն մերո նկատեալ տեսցուք զամենառատ եւ զբազմամասն գեղեցկութիւն, ըստ խոստման երրորդ գլխին քննելով ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ի՞նչ է յոյս։*

Իզ. 1 *Բայց առաջին է սորա, եթէ մասն պարտ իցէ ասել եթէ տեսակ, նախ պատուելի եւ բարգա[ւա]ճագոյն ամենայնին առաջին եւ միայն բարի մշտնջենականն* |194բ|*, եւ է ապա յոյս, զորմէ եւ այլքն յեռեալ մի ըստ միոջէ եւ բուռն հարեալ անընդմիջաբար կախին, զոր ամենաբարիոք եւ քաջավայելուչ գոլ, քան ի մարդիկ կամ ի յիշխանս յուսալ։ 2 Դաւիթ սահմանէ, զի որքան բարոյ առ չար, եւ լուսոյ առ խաւար, եւ կենաց առ մահ է տեսանել եւ իմանալ զհեռաւորութիւն եւ զ[ը]նդդիմութիւն, այսպէս եւ առ Աստուած յուսոյն, եւ առ մարդկան է տեսանել։ 3 Զի որ առաւել ունէր զգութ սիրոյ առ մարդիկ, սքանչելին Յերեմիաս ասէ. «Անիծեալ որ դիցէ զյոյս իւր առ մարդ, եւ ապաստանեսցի ի զաւրութենէ բազկի նորա» (Երմ. ԺԷ. 5)։ 4 Եւ յաւելու յասել, եթէ՝ «ի Տեառնէ ի բաց եկաց անձն նորա» (Երմ. ԺԷ. 6) վասն ի մարդ յուսոյն եւ անպիտանութեան վայրենո[յ]*

---

[1] *Ձ անտի] անտ ի*
[2] *Ձ յերկրի աստի*

եւ անտառականի[1] *նմանեցուցանէ տնկոյ յամենայն աւգտութենէ շահի, բաժանելոյ*[2]*, ոչ յատուկ յաղագս անպտղութեանն, այլ զի ոչ ի նիւթ*[3] *շինուածի կամ գործոյ իմիք արուեստականի պատկանաւոր եւ յարմարական է։*

Իէ. 1 *Արդ, որպէս անպտուղ եւ տարամերժական յԱստուծոյ եւ անիծաբեր՝ ի մարդ յուսալն է, այսպէս եւ հակառակ նմին քաջապտուղ եւ մերձեցուցիչ առ բարին, եւ պատճառ գովութեան վերնոյ եւ ամենայն բանից բարեաց եւ իրաց՝ յոյսն, որ առ Աստուած, զի ամենայն առաքինութեանց նախապտղովք ի յաւիտենիս այսորիկ ժամանակի՝ յուսով բարեաց վստահեցելոց ընձուղեալ բուսանին, եւ ոռոգմամբ նովին, որպէս յաղբիւրէ աճեալ զովանան, եւ ի ժամանակի կթեալ եւ հնձեալ ամբարին, շտեմարանեալ ի պէտս վայելման։ 2 Վասն որոյ ասէ առաքեալ, եթէ՝ «Երկիր, որ ընբէ զանձրեւ, բազում անգամ եկեալ ի վերայ նորա*[4]*, եւ ծնանիցի արդիւնս շահեկանս, ընկ|195ա|ալցի զաւրհնութիւն» (Երբ. Զ. 7). զո՞ր արդեաւք։ 3 «Եկայք, ասէ աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մտթ. Իե. 34)։ 4 Եւ զարդեանցն պտուղս յուսաւորացն միլստմիոջէ համառաւտագոյն արտաձայնեալ պատմէ զբարերարութիւնն առ կարաւտեալս։ 5 Քանզի որք զբանականն անդաստան կակղեցին, յառաջագոյն սերմանելով առատութեամբ առ յոյս հնձոցն, եւ հոսանաւք աստուածային անձրեւաւքն ոռոգելոյ, ժամանակն այն աւրհնութեա՛ն է, նոյն ինքն եւ հնձոցն առանց ճշդութեան. «Հերկեցէ՛ք, ասէ ձեզ, հերկս յարդարութեան, եւ հնձեցէք զպտուղ կենաց» (Երմ. Դ. 3)։*

ԻԸ. 1 *Արդ այս են յուսոյ բարութիւնքն, եւ յոլովագոյն եւս, քան զսոյն ունելով բազմութիւն մասանց։ 2 Զոր եւ մարգարէն Դաւիթ ասէ. «Ի քեզ, Տէր, յուսացայ»։ 3 Եւ զի ցուցաւ հաւատն յաւրինակ անձնաւոր կենդանւոյ զգայականի, եւ զյոյսն՝ ակն բազմալոյս ունակութեամբ տեսանող բացակայիցն, այժմ այլով աւրինակաւ ցուցցուք զզաւրութիւն յուսոյն։ 4 Զի նաւ է գեղեցկաշէն հաւատն, հաւաքարան համայնից ազանց, եւ խարիսխ ամրութեան կողմանց նորա յոյսն, որով կայ մնայ*[5] *առանց տատանման եւ անդրդուելի։ 5 Եւ նաւաստի այսմ նաւի եւ ճարտարապէտ ամենահմուտ Տէրն, վարիչք՝ առաքեալք եւ մարգարէք. նաւազք՝ ժողով հաւատացելոց,*

---

[1] *Ձ անառական ի վայրենոյ*
[2] *Ձ անբաժացելո] բաժանելոյ*
[3] *Ձ ոչ նիւթ*
[4] *Ձ նոցա] նորա*
[5] *Ձ եւ կայ եւ մնայ*

եւ հաղորդք ուղղչացն՝ վարդապետք եկեղեցւոյ, իսկ հաւատոյ մանկունք յայսմ ծովու աշխարհիս ծովամուխ եղեալք՝ վստահութեամբ յուսոյն հանդերձելոյն եւ անխռով նաւահանգստին, եւ վասն շահից մեծագանձ փարթամութեանն՝ քամահանս առնեն, |195բ| ալեացն հակառակ յարուցելոց՝ ճեպին յարագութիւն[1] *հոգւոյ, ժամանել վաղվաղակի յոր ուշն եդին յուսոյն ակնկալութեամբ։* 6 *Եւ այս ոչ միով յեղանակաւ, այլ ըստ ծառայականին եւ ըստ վարձկանացն կարգի, եւ որդիական սիրով բաղձացելոցն։*

ԻԹ. 1 *Եւ է ծառայիցն Աստուծոյ այսպէս ակնկալութիւն յուսոյն, զի չար, եթէ ի ներքս ի յոգւոջ է՝ տրտմութիւն առնէ, եւ թէ մաւտ*[2]*՝ երկեղ, եւ թէ հեռագոյն՝ քաջալերութիւն, եւ թէ եւս հեռագոյն՝ արհամարհութիւն։* 2 *Արդ, վասն հեռագոյն գոլոյ տեղեաւ եւ ժամանակեաւ*[3]*՝ չարաչար պատիժք մերոց*[4] *չարեացն, եւ սակս այսորիկ արհամարհաւղ ոք՝ յամենայն կարգէ ապրեցելոցն տարագրեալ գտանի։* 3 *Իսկ յերկեղէ պատուհասին խոշտանգանաց, իբր խթանաւ ընդոստուցեալ, եւ վասն յուսոյ թողութեան մեղաց, ի չար սովորութենէն գործոյն հեռացեալք, եւ զապաշաւանաց բուռն հարկանեմք զղջմամբ, եւ հաշտեցուցանեմք զտէրունական սպառնալեացն սրտմտութիւն, զծառայութեանն սահման եւ զաւրէն կարգի կատարեալ լնումք, եւ այնպէս ի ներքոյ արքունական գաւթին լինիցիմք, որ ընդրելին է մանաւանդ, քան թէ զթագաւք բարգաւաճանս պայծառութեան ի յարկս մեղաւորաց։*

Լ. 1 *Եւ այսպէս, երկեղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ, այլեւ գնայ եւս ի ճանապարհս նորա։* 2 *Իսկ վարձկանացն կարգ յուսոյ է զբարեգործակն ճանաչել եւ պատուել զզաւրութիւն, եւ քրտամբ՝ աշխատութեամբ յայգոջ տանուտեառն ըստ մտի եղեալ հաճոյանան։* 3 *Ուստի այլ, քան թէ վարձուն ակնկալութեամբ շարժեալք ի խոստմանէն եկին յայս զանագանութիւն աւուրն, սակս առատութեան իշխանին, ոչինչ խտրանաւք |196ա| զմտաւ ածեալք, երկպատիկ յուսով աւծեալք*[5] *պարգեւասիրութեամբ հրաւիրողին, եւ փափագանաւք վարձուն, առանց կաղալոյ՝ փոյթ ընդ փոյթ անյապաղաբար զհրաման գործոյն կալան յանձին կատարել, յոյս ունելով զդահեկանին ստանալ զվարձ, այսինքն՝ զնման նմա լինելն, ըստ ակնկալութեան խոստմանն։*

ԼԱ. 1 *Իսկ երրորդ, ի դասուն տեսութիւն եւ կարգ, կատարեալ եւ բարձ-*

---

[1] *ձ՝ յարդարութիւն] յարագութիւն*
[2] *ձ՝ իսկ թէ մօտ*
[3] *ձ՝ > ժամանակեաւ*
[4] *ձ՝ մեղաց] մերոց*
[5] *ձ՝ > երկպատիկ... ըծեալք*

բագոյն, քան զերկոսեան սոսա։ 2 *Վեհագոյն եւ անբաղդատելի գոլով մասն յուսոյս այսորիկ, որ եւ սիրոյն համարելի է եւ ամենեցուն զաւրութիւն, քանզի որոց բարեաց ակնկալութեան յոյսք, անհրաժեշտ*[1] *ի տրտմականաց՝ այնպէս զաւրեսցեն թեթեւացուցանել զոգիս կամ լնուլ բաղձանաւք երանութեան կատարածին, որպէս վիճակագրութիւն յորդիութիւնն Աստուծոյ։* 3 *Որդի, ասէ, պատուէ զհայր, եւ ծառայ երկնչի ի Տեառնէ անդր, քան զերկեղածութիւն ամբարձեալ աշտիճան, զի երկեղ ընդ տանջանաւք է եւ անկատար ի սէր զերկիղածն։* 4 *Իսկ սա ջեռեալ եւ արտաշէկ սիրովն եղեալ, տենչանացն փութայ հասանել։* 5 *Ամենայն բարեյուսութեան քաղցրութիւն եւ զանճառելի մեծութեան եւ խնդութեան վայելս, փոքր ամենեւին եւ երկրորդ գոլ*[2] *այնմ վարկանի, աներեւոյթ վստահութեամբ զուարճանայ, զքաջալաւ եւ զամենաբախտն իմանալով տոհմաւորութիւն խնդութեամբ լցանի, մոռանայ զվատազգութիւն եւ զերբեմն անկարծութիւն եւ զթշուառութիւն, եւ յաղագս այնր յուսոյ ի վիշտս եղեալ ոչ տրտմութեամբ ծմրի եւ ոչ յակնկալութենէ* |196բ| *չարի եւ նեղութեանն վրդովեալ երկեղիւ պակնու, այլ յուսով մեծաւ կարդայ առ Աստուած, եւ ընթերակայ զփրկութիւնն տեսանելով, առ նոյն ինքն աղաւթէ՝ «Ի Քեզ, Տէր, յուսացայ, ասելով, մի՛ ամաչեցիցէ»։* 6 *Եւ յայլում սաղմոսի. «Աստուած աւգնական իմ, եւ ես յուսամ ի Նա»* (**Սղմս. ԺԷ. 3**) *եւ «Դու ես վստահութիւն իմ, եւ ես յոյս իմ ի մանգութենէ իմմէ»* (**Սղմս. Հ. 5**)։

ԼԲ. 1 *Եւ արդ, ահա յայտ եղեւ, եթէ զի՞նչ է յոյս, իսկ եթէ վասն է՞ր է յոյս վասն թռուցանելոյ զոգիս, եւ զանջրպետութեան ժամանակական հեռաւորութեամբ քամահանս արարեալ, զվայելել բարիսն ընծեռէ։* 2 *Յոյս բարձեալ ունի զաւրէն խարսխի չդեղեւել, եւ ոչ շարժմամբ այսր անդր զմիտս դրդուել ի ծանրութենէ երկոց միտել յերկբայութեան տարակուսութիւնս։* 3 *Վասն որոյ ասէ առաքեալ. «Յոյս ո՛չ երբէք ամաչեցուցանէ»* (**Հռմ. Ե. 5**)։

ԼԳ. 1 *Եւ զի՞նչ արդեաւք ի բարեաց իցէ յԱստուծոյ առ մարդիկ եղելոց, որ ոչ ի ձեռն յուսոյ եկն ի փրկութիւն, որոց այնմ սպասեալ ակն կալան։* 2 *Կամ որպիսի՞ք եւ որքանի՞ք պատժոց եւ յապականագործ սաստէ պատուհասիցն կայցեն, որք ոչ յաղագս վստայուսութեան եւ խիստ բարոյից ճարակեալ ջնջեցին զանթիւ եւ զանհամար բիւրս ի մարդկանէ։* 3 *Ո՞ զփարաւոն, ո՞ զքաղաքս գաւառին սոդոմացւոց հանդերձ գաւառաւն, կամ զծնունդս դարուն Նոյի դարձոյց յապականութիւն կորըստեան, եթէ ոչ որ*

---

[1] *ձ՛ հրաժեշտ] անհրաժեշտ*
[2] *ձ՛ > խնդութեան... գոլ*

անյուսութեան ախտէ բանք[1] *եւ գործք, ոչ Սենեքերիմ արքայ Ասորեստանեաց, սակս թշնամանաց զյուսացեալն ի Տէր, զարդարն Եզեկիայ պահանջեալ հատուցանէր առհասարակ զաւրաւքն զսատակումն։* 4 *Իսկ որոյ անշարժ եւ հաստատ*|197ա|*ուն էր յոյսն, առանց զանգիտելոյ եւ ընդ միտ ինչ ածելոյ, աներկբայ խորհրդով ի տաճարն փութացեալ ընթանայր, եւ զհրովարտակ հայհոյութեանն առաջի տարածանէր Աստուծոյ, եւ անդ բանիւք փրկութեան աւետեաց յաւժանդակէն աղաւթից ի մարգարէէն մեծ ուրախացեալ յուսով լինէր, եւ տեսեալ զանզգամին ի նմին գիշերի ընկալեալ զպատուհաս, գոհանալով ասէր. «Արք արիւնահեղք եւ նենգ[աւորք] մի հ[ասարակես]ցեն զաւ[ուր] իւրեանց, այլ [ես ի քեզ, Տէր,] յուսացայ» (**Սղմս. ԾԴ. 24**)։* 5 *«Յարուց[եալք] ի վերայ իմ, զամաւթ կրեցին*[2]*, այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ» (**Սղմս. ՃԸ. 28**)։* 6 *Նոյնպիսի զարմանագործութիւնք եւ առ հիւանդութեամբն կատարէին, զի անգեալ կայր ի դժնդակ ախտս, սակայն առ Աստուած յուսովն եւ յամենայն եւ հանապազ ամբողջ եւ զաւրաւոր էր։* 7 *Լայր լալիւն մեծ եւ հաշտեցուցիչ զառ Նա անցրտանալի բորբոքեալ սիրով, առ յինքենէ գործոցն յիշեցուցանէր զարդարութիւն առաքինութեան, եւ ի մահճաց անտի աղաւթիցն հաճոյականաց աղերսալի բանք, եւ յորդութիւն արտասուացն, լցորդակիցք քաջք կաթիլք եւ վտակք ամբարձեալ ի վեր անցանէին ընդ երկինս երկնից, յիշատակաւ մեծաւ լինել յանդիման երեսացն Աստուծոյ, եւ զմահուն հրամանաբեր հրեշտակ ստիպաւ ճեպոյ անդրէն դարձուցեալ յետս, իջուցանէր հրաւիրեցելումն ի մահ, փրկութեան եւ կենաց, եւ արտաքուստ անհերքելի խաղաղութեան հրովարտակ անշուշտ եւ լի ամենայն հաստատութեամբ։* 8 *Իսկ Դանիէլ երկիցս անգամ արկեալ ի գուբ՝ կերակուր գազանաց, եւ վասն զի յուսացաւ յԱստուած իւր որպէս եւ ասէ գիր, առան վնասու եւ ապականութեան զերծեալ եւ ապրեալ լինէր*|197բ| *(**տե՛ս Դնլ. Զ**)։* 9 *Զինչ եւ վասն գործակցաց եւ ուսումնակցաց նորա ասել պարտ իցէ անանիանցն, որք յամենաժողով ատենի նաւակատեացն աներկեղաբար բարբառէին առ մեծազաւր անուանեալ թագաւորն. «Է. մեր Աստուած, որ կարող է ապրեցուցանել զմեզ ի ձեռաց քոց, արքայ եւ փրկել ի հրոյ հնոցին» (**Դնլ. Գ. 17**)։* 10 *Եւ այնպէս ի սաստկապէս*[3] *ջեռուցեալ գային արտաքս անարատք եւ անվնասք, մինչ*[4] *զի եւ հոտ անգամ հրոյ ոչ հարկանէր ի նոցանէ, վասն զի հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ*

---

[1] *Ճ՝ բանք է ախտ*
[2] *Ճ՝ կրեսցեն*
[3] *Ճ՝ > այնպէս ի սաստկացեալ*
[4] *Ճ՝ > մինչ*

նոսա, վասն յուսոյն իւրոյ հաստատնոյ, եւ արար ի հնոցի անդ, որպէս հողմ ցաւղագին, զի շնչեսցէ, յիրաւի ապա ոչ մերձենայր ի նոսա հուրն, ոչ տրտմեցուցանէր եւ ոչ նեղէր զնոսա, վասն որոյ ամենայն արարածովքս տային աւրհնութիւն Աստուծոյ, ընդ նմին եւ զխոստովանութիւն մեղաց՝ փոխանակ ամենայն ժողովրդեանն (Դնլ. Գ.)։

ԼԴ. 1 *Արդ, տեսէք զանտեսանելի յուսոյն կատարած եւ զվախճան, եւ հայեցարուք ընդ որակութիւն զարմանագեղ վայելչութեան սորա, եթէ որքան բարեաց[1] առիթ եւ պատճառ են յուսացելոցն։* **2** *Իսկ անյոյսութիւնն անբարշտութեան մայր, սկիզբն ամենատեսակ գործոց անաւրէնութեան, հայհոյութեան մեծին, բոլոր չարեաց ամենայն վարդապետ, աղբեւր անզգամութեան եւ գտիչ ամենայն անկարգ ցանկութեան, եւ գործոց անիրաւութեան <եւ անիրաւութեան>։* **3** *Վասն որոյ խոյս տալով յանյուսութեան խաւարէն, ի լոյս քաղցրութեան յուսոյն դիմեսցուք։* **4** *Մի՛ մեղուցեալն յանյուսութիւն մնալով կորիցէ, եւ մի արդարն յանձն ապաստան եղեալ գայթագղեսցի, քանզի ցսա ասէ, թէ՝ որում թուի թէ կացցէ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի» (հմմտ. Առկ. ԺՁ. 25), եւ ցնա. «Միթէ որ անգանին՝ չառնէ»։* **5** *|198ա| Վասն որոյ քաջալերէ մարգարէն, թէ՝ «Զձեռս լքեալս եւ զծունկս գթոտս հաստատեցէք» (Եբր. ԺԲ. 12), սոցա ասէ՝ «Արթուն կացէք» (Մտթ. ԻԴ. 42, Մրկ. ԺԳ. 35), եւ նոցա՝ «Արի, որ ննջեսդ, եւ կանգնեաց ի մեռ[ելոց], եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս» (Եփս. Ե. 14), վասն զի ոչ արքայն զՄանասէ այլ հաշտեցոյց զԱստուած։* **6** *Եւ ո՛[2] երանելի, քան զԴաւիթ եւ Սողոմոն, բայց մերթ բարի եւ մերթ չար եղեն։* **7** *Յուդա երանելի՛, այլ եղեւ մատնիչ, Պաւղոս հալածիչ, այլ կոչեցեալ յառաքինութիւն, Մատթէոս մաքսաւոր, այլ եղեւ աւետարանիչ։*

ԼԵ. 1 *Արդ, մեղուցեալքն կանգնեսցին ի գաւազան յուսոյ յեցեալ, եւ արդարքն՝ յուսով զգուշասցին, զի մի անգանիցին։* **2** *Սոքա յուսով խոստմանցն պահեսցեն զառողջութիւն, եւ հիւանդացեալքն մեղաւք՝ ապաքինեսցին յախտէն, վասն զի բազումք ի հիւանդաց ողջացան, եւ յոլովք յողջոց հիւանդացան։* **3** *Առ նոսա ասէ Բանն «Ահաւադիկ ողջ[ացար], այլ մի եւս մեղ[անչէր], զի մի՛ չար ինչ լինիցի քեզ» (Յվհ. Ե. 14)։* **4** *Եւ ընդ նոսա, թէ կամիս ողջ լինել[3], «Առ զմահիճս քո եւ գնա» (Մտթ. Թ. 6, Մրկ. Բ. 9)։* **5** *Արդ, չար անդամալուծութիւն է մեղացն դժնդակութիւն, քան զանկելոյ անդամալուծին։* **6** *Ապաւինեսցուք յուսով ի Քրիստոս, զի եւ մեղաւք անդամալոյծքս բժշկեսցէ եւ յարուցեալ կանգնեսցէ, եւ Նմա փառք*

---

[1] *Ձ՝ բարեաց*
[2] *Ձ՝ եւս երանելի] եւ ո՞*
[3] *Ձ՝> եւ ընդ... լինել*

յա[փոեան]։

ԺԸ.

|198ա| ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆԻՍԻ] ԵԶՆԿԱՅԵՑՈՅ, ԶԸ. ՍԱՂՄՈՍԻՆ, «ԶՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՍ ՔՈ, ՏԷՐ, ՅԱՒԻՏԵԱՆ ԱՒՐՀՆԵՑԻՑ» (ԶԸ. 2)

Տարբեր առիթներով նշվել է, որ Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի պաշտամունքը բացառնակության է հասցրել, եւ փորձեր են արվել բացատրելու դրա պատճառները: Առանց խորանալու աստվածաբանական բազմաշավիղ մեկնաբանությունների մեջ, որոնց պատիվը եւ պարտականությունը, ինչպես առիթով նշել ենք, պատկանում է բաջահմուտ աստվածաբաններին, նկատենք միայն, որ սույն բառոզում Երզնկացին երիցս եւ ավելի անգամ անդրադառնում է Աստծո կողմից մարդ արարածին իր պատկերի նմանությամբ եւ բարությամբ, գիտությամբ ու կարողությամբ ստեղծելուն, միաժամանակ անընդհատ շեշտում է ոչ միայն մարդ արարածի, այդ թվում՝ սրբերի ու առաքյալների, այլեւ երկնային արարածների եւ Աստծո միջեւ եղած տարբերությունը:

Աստվածայինի եւ մարդկայինի այս հակադրությունը իր մեջ կրում է ոչ միայն տեսական իմաստ, այլեւ դրանից բխեցվում է հիրավի խիստ մարդասիրական, ողջ միջնադարի եւ, ընդհանրապես, մարդկության պատմության համար էական միտքը, որ մարդ արարածը, ով էլ նա լինի, սխալական է, ինչից հետեւում է նրա իդեալականացման ժխտումը, հեռուն գնացող հետեւություններով, որոնք ինչպես Երզնկացու, այնպես էլ Հայոց եկեղեցու այլ երեւելի գործիչների մոտ հաճախ ընդունում են բաղաքական եւ սոցիալական լուրջ մոտիվներ: Մարդու իդեալականացման դեմ պայքարը, որն իսկապես շատ սուր է արտահայտված Հովհաննես Երզնկացու մի շարք գործերում, արդյոք արձագանքը չէ՞ր Արեւմտյան եկեղեցու այն պնդումի, թե Հռոմի պապը Պետրոս առաքյալի հաջորդ եւ Աստծո փոխանորդն է երկրի վրա, անսխալական է, եւ միայն նրա միջնորդությամբ է տնօրինվում ինչպես բանի (հոգեւոր), այնպես էլ սրի իշխանությունը երկրի վրա:

Մինչդեռ, ժխտելով մարդ արարածի, անգամ առաքյալների, մարգարեների ու սրբերի անսխալական լինելը, Երզնկացին միաժամանակ նշում է, որ Աստված ինքն է դեռեւս երկնքում տնօրինել խնդիրը՝ իշխանությունը բաժանելով երկու քերովբեների միջեւ «մինն արարչական... եւ միւսն արքունական...» (ՄՄ 2173, 199ա): Քարոզում շարունակելով շարադրել քրիստոնեական մարդասիրական սկզբունքները՝ կոչ է անում ողորմությունը չդիտել իբրեւ վաստակի վարձ, այլ այն համարել ձրի պարգեւ, առանց որեւէ ակնկալիքի: Միաժամանակ պահանջում է մարդկանց նկատմամբ պահպանել ճշմարտություն, հիշեցնելով, որ դա ողորմություն չէ, այլ պարտականություն:

Բնագիրը հրատարակվում է 2173 (Ա. 198ա-210ա), 2992 (Զ. 144ա-152ա) եւ 2854 (Ճ. 145ա-147բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Անքննելի խորոցն Աստուծոյ տեսողն եւ անճառելեացն բանի լսաւղ աստուածային խորհրդոցն մեծ հազարապետն, Քրիստոսիւ կենդանին եւ նորին բարբառող բերանն, հանրական քարոզն տիեզերաց Պաւղոս, ի Հռովմայեցւոց թղթին իմաստս տրամաբանականս մեզ բացայայտէ, ասելով. «Աներեւոյթքն Աստուծոյ երեւելի* |198բ| *արարածովքս իմացեալ տեսանի» (**Հռմ. Ա. 20**): 2 Այսինքն՝ մշտնջենաւորութիւն եւ զաւրութիւն եւ աստուածութիւն նորա: 3 Վասն զի երեք են ի բնութիւն եղական արարածոցս գլխաւորական գիտութիւնք, որք ուսուցանեն մեզ զաներեւոյթն Աստուծոյ. էութիւն եւ զաւրութիւն եւ ներգործութիւն, որ բնաւորեալ է այս յամենայն եղականն. ի զգայական կենդանիս, եւ ի բնութիւն տնգոց եւ բուսոց, եւ ի նիւթական գոյութիւնս անկենդան*[1]*: 4 Զի ամենայն էութիւն զաւրութիւն ունի եւ ամենայն ազգումն, որ ի զաւրութենէ՝ զներգործութիւնն ցուցանէ: 5 Եւ այսոքիւք ուսանիմք զգերագոյն գոյութիւնն եւ զանբաւ զաւրութիւնն եւ զնախախնամական ներգործութիւնն Աստուծոյ: 6 Եւ զի մշտնջենաւորապէս կան յարարչականն եղեալ սահման, եւ ոչ անցանեն յեղանակաց եւ ժամուց փոփոխմունք, զի միշտ են եւ զյաւիտենական բարին քարոզեն:*

Բ. 1 *Նմին իրի եւ մեծի նախամարգարէին Մովսիսի հրամայեաց Աստուած առնել երեւելի աւրինակս աներեւոյթ փառաց աստուածութեան, զի բնաւորական աւրինացն գիտութեամբ ոչ իմացան արարածովքս զԱրարիչն, յաւել զգրաւորականն, եւ զայն ո՛չ առանց աւրինակաց, այլ նիւթական կեպարանաւք զհանդերձելոց*[2] *բարեացն նկարեալ եցոյց զխորհուրդ: 2 Որպէս ասէ Առաքեալ՝ «ըստուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնքն» (**Եբր. Ժ. 1**), զի ընդ*[3] *ստուերական ծածկութի*[4] *նիւթոյն, այլ իմն անմարմին եւ անճառելի*[5] *ճշմարտութեան էին աւրինակք: 3 Եւ այս էին երեւելի կերպարանքն, զոր հրամա[յ]եաց Աստուած Մովսիսի առնել տապանակ յանփուտ փայտից, եւ պատեալ ոսկով ներքոյ եւ արտաքոյ, եւ առնել զսեղանն քաւութեան եւ դնել ի վերայ տապանակին՝ ըստ չափոյ երկայնութեան եւ լայնութեան նորա. առնել եւ երկուս քե*|199ա|*րովբես յոսկոյ ճախարակեայ եւ դնել ի վերայ քաւութեան եւ դնել ի նման զաւրէնս աստուածագիծ տախտակացն: 4 Եւ ասէ, եթէ «խաւսեցայց ընդ քեզ անտի ի քաւութենէն ի միջոցէ քերովբէիցն» (**հմմտ. Ել Իե. 22**), զի ի միջոցի սեղանոյն տեսակ ինչ շրթանց ձեւացուցեալ եւ շարժէր ընդ խաւսելն*[6] *Աստուծոյ ընդ արժանիսն:*

---

[1] *Ճ անկենդանեաց*
[2] *Ջ եւ հանդերձելոց*
[3] *Ճ ըստ] ընդ*
[4] *Ա ծածկութիւն] ծածկութի*
[5] *ՋՃ ճառելի*
[6] *Ճ ըստ խօսելն*

Գ. 1 *Արդ, է. (7) են ըստ թուոյ ասացեալքս. տապանակն եւ որ ի նմա գանձեալ աւրէնքն, եւ գերիվերոյ սորա հաշտարանն, եւ ի վերայ հաշտարանին քերովբէքն, եւ գերիվերոյ սոցա հանդէպ միջոցին ձայն եւ բան, եւ գերիվերոյ նորա ասաւղն, ուստի ձայնն։* **2** *Արդ, նշանակք են սոքայ անմարմնական եւ անճառելի իմաստից աստուածային։* **3** *Եւ է գերիվերոյ ամենայնի, որ քան զամենայն մի եւ զմիակ եւ քան զսկիզբն իրիցագոյն*[1] *է՛ն, Աստուած Հայրն ամենակալ, եւ բան եւ ձայն ի նմանէ, Որդի եւ բան Հաւր, որ է ծնունդ անճառելի ծոցոյ Հաւրն*[2]*։* **4** *Եւ Հոգին Սուրբ բխեալ անհատաբար ի Հաւրէ եւ երեւեալ յՈրդոյ, որով բանիւ եւ հոգւով երկինք եւ երկիր հաստատեցան՝ յերից անձնաւորութեանց, միով կամովք եւ բնութեամբ, եւ աստուածութեամբ, ի Հաւրէ եւ յՈրդոյ եւ յամենասուրբ Հոգւոյն։*

Դ. 1 *Իսկ երկու քերովբէքն նշանակ են երկու գլխաւորական զաւրութեանց Աստուծոյ. մինն արարչականն, ըստ որում արար զամենայն ինչ եւ զարդարեաց արուեստագէտն. սա Աստուած անուանի, որ եւ խնամ տանի եղելոցն, զի մի՛ ի նմանէ լուծցին։* **2** *Եւ միւսն արքունականն, ըստ որում իշխան է եղելոցն, եւ կոչի Տէր անուն։* **3** *Եւ յայսց երկու զաւրութեանցս բուսածնեալ երեւին եւ այլքն եւս. յարարչականէն հաշտականն, որոյ իսկ անուն է բարեգործակ, եւ հաշտէ արժանաւորացն, որոյ նշանակ էր հաշտարանն, որ ի վերայ տապանակին։* **4** *Իսկ յարքունականէն երեւի աւրէնսդրականն, որոյ անուն է Դէպուղ|199բ|եղ սատակիչ, որ է դատող պատժապարտացն, որոյ նշանակ էր աւրէնքն, որ ի տապանակին, զորս վկայութիւնն կոչեաց։* **5** *Եւ առ սոքաւք է տապանակն, որ է նշանակ անմարմին եւ մտաւոր աշխարհին, որոյ նիստն ի ներքսագոյնսն*[3] *ի Սրբութիւն սրբութեանցն։* **6** *Եւ որպէս տապանակն անփուտ եւ ոսկէտեսակ, նոքայ անապականք եւ աստուածատեսակք։* **7** *Իսկ չափն ցուցանէ, զի ամէն ինչ չափեալ ընտիր եւ անշփոթ է, որ եւ պարտ էր վերնոցն լինել այսպէս։* **8** *Իսկ հինգ կանկունն, զի ի չորից տարերցս, յորմէ մահկանացուքս, արտաքոյ են նոքա, անմարմին եւ անմահ բանականքն։* **9** *Իսկ կէսն ցուցանէ, զի յետ Աստուծոյ են, եւ ոչ ամենակատար, իբրեւ զնա, ներքուստ եւ արտաքոյ ոսկով։* **10** *Ներքոյն ցուցանէ, զի ըստ բնութեան աստուածատեսակք եղեն, եւ արտաքոյն՝ զհանապազ յաւելուած բարոյն։*

Ե. 1 *Եւ զի ասաց, եթէ «Խաւսեցայց ընդ քեզ անդուստ ի քաւութենէն ի*

---

[1] *Ձ երիցագոյն*
[2] *Ջ որ է անճառելի ծնունդ ծոցոյ*
[3] *Ջ ներքոյագունսն*

միջոյ քերովբէիցն», յայտ առնելով, եթէ նախ առ[1] անմարմին աշխարհն խաւսի անմարմնայպէս ընդ[2] ամենայն գերաշխարհիկ դասապետութիւնն՝ նախ, ի նոսա հեղլով առատապէս զիմաստութիւն եւ զհանճար, եւ նոքաւք՝ յայլսն ամենայն ի զգալի արարածս։ **2** *Վասն որոյ Ճախարակեայ եւ յոսկոյ ասէ, զի քերովբիմն թարգմանի բազում գիտութիւնն եւ հանճար մեծութեան եւ հեղումն իմաստութեան[3]։* **3** *Եւ Ճախարակեայ, այսինքն արուեստաւոր, զի աստուածային զաւրութիւնքն գիտութեամբ եւ իմաստութեամբ բազմաւ եւ հանճարական արուեստիւ զաշխարհ ամենայն կարգաւորեն, եւ մաքուրք են եւ աստուածայինք։* **4** *Եւ հովանի ունել քերովբեցին, զի երկու զաւրութեամբք հովանի առնէ Աստուած, իբրեւ թեւաւք ամենայն մասանց արարածոց ծածկեալ եւ պահպանեալ ի խնամս թեւոց իւր|200ա|ոց։* **5** *Եւ զի դէմք միմեանց յիրեարս հային քերովբեիցն, զի արարչական եւ արքունական զաւրութիւնքն յիրեարս հային, զանձանց գեղեցկութիւնն տեսանելով։*

Զ. **1** *Եւ է գեղեցկութիւն արարչականին ողորմածն լինել եւ բարերար։* **2** *Եւ արքունականին գեղեցկութիւն է ճշմարիտն դատել եւ իրաւամբք։ Վասն որոյ յիրեարս հային, խառնելով զողորմութիւն ընդ դատողութիւնն։* **4** *Եւ երկոքեանն ի հաշտարանն հային, քանզի թէ ո՛չ էր հաշտ աստուածութիւնն, ո՛չ գործեցեալ լինէր ի ձեռն արարչականին եւ ոչ աւրինադրեալ[4] ի ձեռն արքունականին։* **5** *Բայց ըստ ժամանակի, վասն աւգտութեան աշխարհի, ամենիմաստ արուեստիւն Աստուծոյ փոխարկել զմիմեանս. երբեմն ողորմութեամբ բարեգործել եւ[5] երբեմն ճշմարիտ դատաստանաւ պատժել։* **6** *Վասն որոյ եւ այժմ մարգարէն Դաւիթ զաստուածային զաւրութեանցն իմաստաբար ներգործութիւնն յայսմ սաղմոսի թարգմանեալ բացայայտէ՝ ասելով. «Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան աւրհնեցից։*

Է. **1** *Այլ պարտ է զվերնագիր սաղմոսիս տեսանել, որ ասէ. «Իմաստութիւն Եմանայ եզրայելացոյ», զոր ոմանք Եթանայ ասեն։* **2** *Եզրայելն գեւղ էր քահանայիցն. անտի գոյին երգիչքն, որք առեալ ի սաղմոսացն Դաւթի երգէին, ուստի եւ Եմանն էր, որ թարգմանի ցնծութիւն կամ ժողով, զի ցնծայր ի պարգեւսն Աստուծոյ եւ զմիտսն առ նայ ժողովէր, յամենայն*

---

[1] *Զձ > առ*

[2] *Զձ ըստ] ընդ*

[3] *«Քերովբէ» բառի այս ստուգաբանութիւնը գալիս է Դիոնիսոս Արիսպագացուց, արտայայտուած է Սանահնեցու «Վաղարշապատի ներբողում». «Գիրք որ կոչի ժողովածու», Կ. Պոլիս, 1747, էջ 457։*

[4] *Զ օրինադրել*

[5] *Ձ > երբեմն... եւ*

զգալի արարածոցս վեր ամբարձեալ։ 3 *Եւ զի շնորհեաց Աստուած Դաւթի եւ սմայ երգել վասն Միածնի Բանին մարդեղութեանն։* 4 *Եւ էր Եման որդի Զարեհի, որդւոյ Յուդայի, ազնուական ոմն եւ երեւելի, զոր առեալ ի սաղմոսացն Դաւթի յեղանակէր զաւրհնութիւնս Աստուծոյ, եւ երգէր եւ մեկնէր զմիտսն ժողովրդեանն եւ հոգւով ցնծութեամբ |200բ| լնոյր զլսողսն բանին Աստուծոյ (***տե՛ս Ա. Մնց. Զ. 33****)։* 5 *Ունի եւ սաղմոսս մաւտ ի կատարածին վասն աւերմանն Երուսաղէմի, որ եւ ասէ յառաջնումս.* 6 *«Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան աւրհնեցից, ազգէ [յազգ] պատմ[եցից] զճշմ[արտութիւնս քո] բեր[անով իմով]» (**Սղմս. ՁԸ. 2**)։*

Ը. 1 *Արդ, եթէ զի՞նչ է ողորմութիւն, եւ կամ զի՞նչ ճշմարտութիւն, քննելի է։* 2 *Եւ է ողորմութիւն ո՛չ վարձ վաստակոց եւ ո՛չ վճար բարեգործութեանց, այլ ձրի պարգեւք եւ անակնունելի շնորհ, եւ անարժանիցն յուսոյ ակնկալութիւն։* 3 *Իսկ ճշմարտութիւն է արդար դատաստանաւ եւ իրաւամ[բ]ք հատուցանել ըստ արժանւոյն՝ բարեգործացն հատուցումն բարեաց, եւ չարագործացն պատիժ պատուհասի, զի ամենայն ճանապարհ Տեառն ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ են։* 4 *Ողորմութեամբ, զի մեղուցելոցն եւ անարժանիցն ցանկայ ողորմել, եւ ճշմարտութեամբ է, զի զճշմարիտ բարեգործսն ճանաչէ եւ պսակէ զնոսա։* 5 *Վասն որոյ ի նոյն սաղմոսի ասէ. «Յարդարութիւն եւ յիրաւունս հաստատեալ է աթոռ քո։* 6 *Ողորմութիւն եւ ճշմարտութիւն գնասցէ առաջի երես[աց ժողովրդեան]» (**Սղմս. ՁԸ. 15**)։* 7 *Վասն զի ամենայն ուրէք եւ միշտ եւ յամենայն ժամանակի արդարութեանս իրաւունքն*[1] *Աստուծոյ յառաջ են, քան զողորմութիւն։* 8 *Իսկ յորժամ խտրոց տան մարդիկ, այսինքն՝ դառնալով ի չարէն եւ ի մուտս բարեաց դրանցն յաւժարին, եւ սկիզբն առնեն լաւանալոյ, միջոց եդին ընդ իրաւացի դատաստանն Աստուծոյ, եւ ձգեն յինքեանս զողորմութեան Նորա շնորհ։* 2 *Եւ յապացոյց առցուք մեզ զաւազակն, որ մինչ ի յետին շունչն տիրէր ի վերայ Նորա ճշմարիտ եւ արդար իրաւունքն, եւ ըստ արժանեաց գործոյն կրէր զպատիժ պատուհասին, իսկ մերձեալ ի յետի շունչն, ետ խտրոց արդարութեան եւ ձգեաց յինքն զողորմութիւն, արքայութեանն Տէր դաւանելով, զանարգութեամբ բեւեռեալն ի խաչին։*

Թ. 1 *Նոյնպէս արդար իրաւունքն Աստուծոյ տիրէր ի վերայ մարդկան, ըստ պարտեաց ն|201ա|ախահաւրն կրել զդատապարտութիւն մահու եւ դժոխոց, եւ քրտամբք վաստակել յերկիր անիծից։* 2 *Իսկ յորժամ մերձեցան ի դրունս մահու, հասեալք ի վերջին շունչն, ի յետին ժամանակս ի խնդիր ելին ճշմարտին*[2] *Աստուծոյ, ապա ընկալան զողորմութիւն ի նմանէ։*

---

[1] *Զ արդար] արդարութեանս, Ճ՝ արդարութեանս իրաւունքս] արդարութեանս իրաւունքն*

[2] *ԶՃ՝ ի խնդրելին ճշմարտին*

Ժ. 1 *Եւ զի՞ ելին մարդիկ ի խնդիր յայտեայս բանիւ եւ իրաւք։* **2** *Բանիւ, որպէս յայտ առնէ Պաւղոս առ աթենացիսն խաւսելով. «Արք աթ[ենացիք] զոր դուք յանծանաւթս պաշտէք, մեք զնոյնն ձեզ քարոզեմք»* (**հմմտ. Գրծ. ԺԷ. 22-23**)։ *Յայտնէ բանիւն, զի խնդրէին զճշմարիտն Աստուած, եւ յոչ կարելն գտանել, կանգնեցին նմա բագին, որ անծանաւթ էր նոցա տեսութեամբ։* **3** *Եւ իրաւք այն իսկ է, զի ելին ի խնդիր ստուգութեամբ։* **4** *Եւ զայս ի դարձէ անառակին ուսանիմք. «Յարուցեալ գնացից առ Հայր իմ»* (**Ղկ. ԺԵ. 18**)։ **5** *Եւ ասելն, թէ «Յարուցեալ գնացից» յայտ առնէ, զի անկեալ կայր ընդ ծառայութեամբ տարերցս, եւ անասնաբար կորացեալ յերկիր ունէր զհայեցուածս տեսողականին, եւ ի սքանչելի գործոց Արարչին ո՛չ ուսանէր զհրաշագործսն։*

ԺԱ. 1 *Արդ, ասելով, թէ «յարուցեալ գնացից», յայտ առնէ, թէ վեր ակնեաց, եւ զդէմս իմանալի տեսութեանն ի բարձունս ուղղեաց, եւ զառաքինութեանն մասունսն գտեալ, աշտիճանս եւ սանդուխս ելից գործեաց բարձրութեանն երկնի, եւ զառիվեր զգնացսն առնել յաւժարեաց։* **2** *Վասն որոյ եդին աւրէնս քաղաքականս արդարադատն լինել, եւ գտին արուեստս իմաստական հանճարոյ, զոր արարիչն եդեալ էր ի բնութիւն արարածոցս։* **3** *Եւ սկսան ընթեռնուլ զլուսաւոր տառս աստեղացն, որ են գիր մատանց Բարձրելոյն զանխաւսնական բանի, եւ զաշխարհալիր բարբառսն առանց ձայնի վարժ|201բ|ել ուսան զդպրութիւնն, որք եւ պատմաւղք են փառացն Աստուծոյ, եւ աղբիւրաբար ի տուէ եւ գիշերի բղխեն զբան հանճարոյ ամէնիմաստ արուեստաւորին։* **4** *Վասն որոյ տեսեալ հայրն գթած, ողորմի ի հեռաստանէ։* **5** *Զի որդին վարանէր ի դպրոցս ուսման ամենախնամ Արարչի*[1] *եւ Հաւրն գթածի, բայց ոչ զաւրէին աշտիճանք սանդղոց արդարագործ մասանցն առաքինութեանց վեր ամբառնալ զծանրութիւն մարմնոյ, եւ ոչ ընթերցմունք լուսեղէն տառիցն զանմարմին եւ զանեղական լուսոյն ցուցանել եւ կամ թարգմանել զկերպարան լուսոյ։* **6** *Վասն որոյ եւ զայսպիսի յաւժարութիւն կամաց եւ զանկարութիւն գործոյ տեսեալ ամենողորմն Հայրն ի հեռաստանէ, գթացաւ ի նա եւ ընդառաջ ել որդւոյն եւ համբուրեաց։* **7** *Եւ այս է «ելանելն ընդ առաջ», զի խոնարհեցաւ յանճառ փառաց աստուածութեան իւրոյ եւ համբուրեաց, այսինքն՝ խառնելով զաստուածային անմարմին եւ անմահ բնութիւնն ի նիւթական եւ հողեղէն մարմնի, միաւորեալ անճառելի եւ անթարգմանելի տնաւրէնութեամբ։*

ԺԲ. 1 *Եւ այսպէս ողորմելով անարժանիցս, երեւեցոյց զերեսս իւր ի*

---

[1] *Զձ՛ արարածի] Արարչի*

մեզ, եւ աւրհնեաց զմեզ, եւ դարձոյց առ մեզ զփառսն առաջինս եւ զգեցոյց զպատմուճանն անապական զարդու, եւ ետ զմատանին ի ձեռս անառակին։ 2 *Վասն որոյ զայսքան մեծութիւն բարեաց պարգեւեաց տեսեալ մարգարէս, ասէ. «Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան աւրհնեցից»։* 3 *Վասն զի ամենայն պարգեւք բարութեանց, զոր առաք եւ զոր առնումք, շնորհաւք է, որ է ողորմութեամբ, եւ ոչ ըստ արժանեաց։* 4 *Վասն որոյ մեծի մարգարէին Մովսէսի միջնորդութեամբ պատուիրէր Աստուած որդոցն Իսրայէղի, թէ՝ «զամենայն ճարպ պատարագացն եւ զարիւնն մի՛ ուտիցէք յամենայն բնակութիւնս ձեր» (տե՛ս Ղեւտ. Է. 23, 26)։* 5 *Զայս մեզ աւանդ|202ա|դելով խորհուրդ բանին, եթէ զյաջողուածս ընչից հոգւոյ կամ մարմնոյ, որ է ճարպ, գիրութիւն եւ զմասն կենաց անմահութեան յուսոյն, որ է արիւն, մի՛ անձանց ինչ արժանաւորութեան համարիք յամենայն բնակութիւնս ձեր, թէ յորժամ ի դրախտին էիք, եւ թէ այժմ յեկեղեցի, որ է դրախտ հոգեւոր, եւ թէ ի վերինն Երուսաղէմ, որում յուսով սպասեմք։* 6 *Զբովանդակն բարեացն Աստուծոյ տուք եւ ողորմութեանն, ասելով. «Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան աւրհնեցից»։*

ԺԳ. 1 *«Յաւիտեանն» ոչ ժամանակ է եւ ոչ ժամանակի մասն, այլ որպէս է մեր ժամանակ արեգական բերմամբ չափեալ, նոյնպէս եւ մշտնջենաւորացն յաւիտեանն ընդ նմայ երկարաձգեալ, զի որպէս Աստուած յաւէտ եւ միշտ, անմահ եւ անվախճան է, նոյնպէս եւ ողորմութիւնն իւր յաւիտեան է, եւ ոչ որպէս մարդկան՝ ժամանակաւոր եւ անցական։* 2 *Վասն որոյ յաւիտեանն երկար եւ անմահ ասի։* 3 *Բայց է, զի եւ զժամանակս այս յաւիտեան կոչեն, ըստ Պաւղոսի բանին, եթէ Աստուած «յաւիտենիս այսորիկ» (Եփս. Բ. 2) որ են տարերքս, այլ եւ յաւիտեան կոչի անցեալն եւ ներկայն եւ ապառ[ն]ին։* 4 *Արդ, ասէ մարգարէս, թէ յայսմ յաւիտեանիս որչափ ի տկար եւ սխալոտ մարմնի եմք եւ ի դիւրայանց կենցաղումս ողորմութեան կարաւտիմք*[1] *եւ զողորմութիւնն աւրհնեմք եւ գովեմք եւ յայտնաբանեմք։*

ԺԴ. 1 *«Ազգէ յազգ պատմեցից զճշմարտ[ութիւն] բերան[ով իմով]» (Սղմս. ՁԸ. 2)։* 2 *Ի հանդերձեալ յաւիտենին ի պսակել արդարոցն, ի հրապարակս հրեշտակացն. «Պատմեցից զճշմարտութիւն բերանով իմով»։* 3 *Զի անդ ոչ է ողորմութիւնն, այլ ճշմարտութիւնն բերանով իմով, որ է Հոգին Սուրբ, զոր Տէրն ասաց, եթէ՝ տաց ձեզ բերան եւ իմաստութիւնն» (Ղկ. ԻԱ. 15)։* 4 *Եւ դարձեալ, ազգէ յազգ պատմեցից», զի զիւրաքանչիւր դարս եւ ի ժամանակս ողորմութեամբ եւ |202բ| ճշմարտութեամբ նա-*

---

[1] *Ձ՛ կարոտ եմք*

խախնամէ[1] *զարարածս, թէպէտ ի հանդերձեալնէ սահմանեալ ժամանակ պսակելոյ զսուրբս, եւ պատժելոյ զյանցաւորս, բայց ազգէ յազգ ճշմարիտ դատաստանաւ խրատէ զյանցաւորս, զի մի՛ յողորմութիւնն վստահացեալ, յանհոգս լիցին, այլ հաւատասցեն, թէ գոյ արդարութեամբ դատաստան ըստ արժանւոյն, այլեւ փառաւորէ զսուրբսն եւ զարժանիսն փառաց, զի մի՛ յուսահատեսցին, թէ ո՛չ գոյ Աստուած վրէժխնդիր եւ բարերարացն երախտահատոյց։* 5 *Վասն որոյ ասէ. Զողորմութիւն աւրհնեմք, իսկ զճշմարտ[ութիւն] ազգացն, որ զկնի գան, պատմ[եցից] զի զմեզ ողորմու[թիւն] մխիթարէ, եւ ոչ ճշմարտու[թիւն] որ է արդարութեամբ դատելն։* 6 *Վասն որոյ ասէ. «Ազգէ յազգ պատմեցից»։*

ԺԵ. 1 *«Ասացէր, թէ՝ աշխարհ ողորմութեամբ շինեսցի»* **(Սղմս. ՁԸ. 3)**։ 2 *Ո՛չ ասէ թէ շինեցաւ՝ զանցեալն միայն, այլ թէ՝ «Շինեսցի», որ շինաւ վերստին Որդւովն, զի թէպէտ եւ առաջինն եւս ողորմութեամբ շինեցաւ, գիտելով եթէ մեղանչէ Ադամ, վասն որոյ զաշխարհս առնէ, սակայն արար ողորմութեամբ։* 3 *Եւ ո՞ւր ասաց վասն առաջնոյն. Դաւիթ ասաց Հոգին Սուրբ. «Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր» եւ բանիւ եւ հոգւով բերանոյ»* **(Սղմս. ԼԲ. 6)**։ 4 *Իսկ աստ ասէ. թէ «Թողցեն որդիք զաւրէնս իմ եւ զպատի[ուիրաւնս իմ]։ Հարիւ գաւազանաւ, բայց զողորմ[ութիւն իմ ոչ արգելիցՁ զաւակ նորա յաւ[իտեան կայցէ]* **(Սղմս. ՁԸ. 31-37)**։ 5 *Ասացեր, թէ՝ «աշխա[րհ] ողորմ[ութեամբ] շինեսցի»։* 6 *Զի վասն այն նախաստեղծիցն բանսարկուն ետ ճաշակել ի պտղոյն, զի մահացեալ մեռցին, եւ հատցի արմատ մարդկութեանս, եւ աւեր, ամայի մնասցէ բնակութիւնն ի բնակողէն։* 7 *Այլեւ մեծն այն աշխարհի կազմած կենդանի շինուածոյ գեղեցկայարմար յաւդակապութիւնն մարմնոյն քակտեսցի, եւ աւերեալ ի հող դարձցի։* 8 *Իսկ յորժամ ետես, զի ծնան զայլս, գրգռեաց զԿայ|203ա|էն ընդ Աբէլի եւ ետ սպանանել, զի մի՛ աճեսցի մարդկութիւնս, ոչ գիտելով զխորհուրդ ամենիմաստ Արուեստաւորի շինողին։* 9 *Իսկ յորժամ ետես աճեցեալս եւ բազմացեալս, եւ լցեալ զաշխարհ՝ ըստ աւրհնութեանն Աստուծոյ, կատաղեալ մոլորեցոյց զարս ցանգութեամբ առ կանայս ի դարն Նոյի, որպէս ասի ի պատմութեանն*[2]*, եթէ «Ի. (20) այր մեռանէին ի վերայ միոյ կնոջ», գիտելով սատանայի, թէ ի յաճախ խառնիցն սխալեալ սերմանցն՝ զաւակ ոչ լինի։* 9 *Եւ այնու կամէր բառնալ զծնունդ աճմանն, զոր Մարդասէրն, ընդդէմ նմայ առնելով, ստեղծանէր զհսկայսն, ի յոլովութեանց սերմանցն մածուցեալ կազմէր զանճառնի*

---

[1] *Զձ՛ խնամէ*

[2] *Զձ՛ պատմութենէ*

հասական։ 10 *Ապայ այնուհետեւ սկսաւ չարահնարն զերկնաւոր յոյս նոցա հատանել՝ անասնական ախտիցն գարշութեամբ, յարարչական խնամոցն տարամերժեալ։* 11 *Վասն որոյ ասաց. «Մի մն[ասցեն] հոգի իմ ի մարդ, վասն լին[ելոյ] դոց[ա] մարմ[ին]»* (**Ծն. Զ. 3**)։ 12 *Եւ զայս կամեցեալ, զի վերին գաւառին բնակութիւն իւրոյ անգմանն տեղի եւ լքեալ դասակարգութիւն մի՛ ի նիւթական ստեղծուածոյ մարդկութեանս վերստին շինեսցի։* 13 *Այլ գթած Տէրն ողորմութեամբ խոնարհեցաւ առ մեզ եւ քաւեաց զմեղս մեր եւ եբարձ, զի ընդ այնմ տանէր մահն եւ աւերէր զշինուած բնութեանս, եւ իւրով անմեղութեամբն արդարացոյց զբնութիւնս։* 14 *Եւ ողորմութեամբ եկեալ զհետ մոլորելոցս եւ դարձոյց, եւ զգիրկս տարածեալ զանառակ որդիսս ընդալաւ, եւ աշտարակ բարձր եւ սանդուխք երկնահաս կանկնեալ զփայտ Խաչին իւրոյ, զի զմեզ յերկինս հանցէ. չարչարակից լինել մահու Նորա եւ կցորդ յարութեան Նորա, զի հողացեալ մ|203բ|արմինք մեր վերստին շինեսցին ի յարութեանն աւուր, եւ տեղի անկելոցն լցցի եւ վերինն Երուսաղէմ մայրաքաղաքն հոգեղինաց շինեսցի ի յոգնազան ազանց, զորոց բազմութիւն տեսեալ մարգարէն Դաւիթ փառաւորեալն խաւսեցաւ. «Ահաւասիկ քաղ[աք] Աստուծոյ։* 15 *Յիշեց[էք] զՌահաբ զԲաբ[ելովն ոյք ճանաչեն զիս] ահա այլ[ազգիք] եւ Ծուր, եւ ժող[ովուրդք] հնդկ[աց] սոք[ա] եղ[են] անդ»* (**Սղմս. ՁՂ. 3-4**)*, զի սոցա «հաւաքմամբն աշխարհն վերին շինեսցի»*[1]։ 16 *Վասն որոյ ասէ. «Ասացէր, թէ աշխ[արհս] ողորմութեամբ շին[եսցի], յերկինս պատր[աստ] ճշմարտութիւն քո»* (**Սղմս. ՁԸ. 3**)։ 17 *Զի հիմն շինութեանն նորոյ աշխարհի անդ արկաւ, որ ճշմարիտ դատաստանաւ շինելոց էր Որդի զաշխարհ վերստին, զի նախ անդ լուան ի Հաւրէ եւ եկին աւետաւորք աշխարհի, որպէս Գաբրիէլ կուսին տայր աւետիս. «Ուրախ լեր բերկրեալ»* (**Ղկ. Ա. 28**)։ 18 *Եւ հրեշտակքն հովուացն աւետարանէին «Ծնաւ ձեզ Փրկ[իչ], որ է աւծ[եալ] Տէր ի քաղ[աքի]*[2]*»* (**Ղկ. Բ. 11**)։

ԺԶ. 1 *Այլ եւ եկեղեցի երկին է, վասն որոյ ասէ Պաւղոս «Մատուցեալ էք ի Սիոն եւ յԵրուսաղէմ յերկինս եւ ի բիւրաւոր բանակս»* (**Եբր. ԺԲ. 22**)։ 2 *Այլ եւ աշխարհս այս ողորմութեամբ Աստուծոյ մնայ միշտ ի շինութիւն, զի թէ ճշմարտութեամբ դատէր, ոչ կարէր աշխարհ բառնալ զծանրութիւն մեղաց մերոց, այլ ի յակնարկելն Աստուծոյ եւ ի հայելն*[3] *քննութեամբ սասանեալ դողայր եւ կործանէր։* 3 *«Այլեւ յերկ[ինս] պատր[աստ է] ճշմար-*

---

[1] *Զձ > աշխարհն... վասն*
[2] *Զձ ի քաղաք դաւթի*
[3] *ձ հանելն] հայելն*

տութիւն քո»։ 4 *Ուր երկնաւորքն են անմարմին եւ անկարաւտ*[1] *բանականքն, եւ թափանցանց լուսոյ աստուածային իմաստութեանն կրողք, անդ պատրաստեալ են նոքա, զի ի ճշմարտութեամբ քննելն արդար գտանին։* 5 *Զաշխարհ ողորմ[ութեամբ] կառավարէ եւ զերկ[իր] ճշմ[արտութեամբ], վասն որոյ զյանցաւոր մարդիկ ողորմութիւնն ներելոյ եւ* |204ա| *թողութեան արժանի արար, իսկ զերկնաւոր հրեշտակս ապստամբեալս, ճշմարտութիւնն աննեռելի պատուհասեաց։* 6 *Եւ այսմ որքանութիւնն գիտութեանն անհաս է ի մէնջ։* 7 *Զայս միայն կարեմք իմանալ, թէ երկրաւորք զղջացան, ողորմ[ութեան] արժանացան, իսկ երկն[աւորքն] անբարտաւանութեամբ անզեղջ կացեալ, զրկեցան ի նմանէ։* 8 *Վասն որոյ ասաց Քրիստոս. «Որդիք աշխ[արհիս] այս[որիկ] իմաստն[ագոյնք են, քան զորդ[իս] լուսոյ յազգս [իւրեանց]»* (**Ղկ. ԺԶ. 8**)։ 9 *Արդ դատ[աւոր] երկն[աւոր] ճշմ[արիտ] են, իբրեւ զանկարաւտ, եւ երկր[աւորքն] ողորմ[ութեան] արժանացան, շին[եաց] վերստին Քրիստոսիւ, որպէս զկարաւտն եւ զպատրանաւք մեղ[ուցեալք]*[2]։ 10 *Ի վերայ ակամայ եւ դաւաճանաւք մեղուցելոցն ողորմ[ած] դատաւոր, իսկ ի վերայ կամակորիցն եւ անզղջիցն ճշմարտ[ացս] պատրաստական քննիչ։* 11 *Եւ զի ողորմութեամբ է շինութիւն աշխարհի, յերկինս պատր[աստեցեր] ճշմ[արտութիւն] քո, զի ճշմարիտ պահես զբանն քո, որպէս առ Նոյիւ ասացէր. «Ոչ եւս յաւելից հարկանել զամենայն երկիր վասն մեղաց. զաղեղն իմ եդից յամպս նշանակ ընդ իս եւ ընդ ձեզ», որ եւ ասէ. «Յերկ[ինս] պատր[աստ] ճշմ[արտութեամբ] քո»։* 12 *Ուր նշանն է, եւ աղեղն դնէ զնշանն, ոչ հասարակ ջնջել զամենայն երկիր, այլ մասամբ, իբր նետ յաղեղնէ արձակեալ, զմի՛ ոք*[3] *հարեալ խոցէ ի մէջ բազմութեանն։*

ԺԷ. 1 *Նոյնպէս Աստուծոյ խրատն ողորմութեամբ է. գաւառաց՝ որպէս Սոդոմայն թագաւորաց՝ որպէս փարաւոնին, քաղաքաց՝ իբրեւ զԵրիքովի, արանց եւ տանց՝ իբր Դադանայ, Աբիրոնի եւ Կորխայ, եւ միոյ՝ իբրեւ Արքայաբու, եւ յայլսն ողորմութեամբ խնայէ, զի խրատեսցին։*

ԺԸ. 1 *«Եդի ուխտ ընտրելոց իմոց»* (**Սղմս. ՁԸ. 4**)։ 2 *Զայս նորոյ աշխարհիս վերստին շինելն ողորմութեամբ, ընդ ընտրեալսն իմ ի խ*|204բ|*որհրդակցութիւնն ուխտիւ հաստատեցի, ասէ, որպէս Աբրաամու ասէր. «Ի զաւակէ քումմէ աւրհն[եցան] ամենայն ազգ երկրի»* (**Ծն. ԻԲ. 18**)*, որ է Քրիստոս, յորում աւրհնեցան ամենայն արարածք. եւ ասելով «Արարիչ զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից»* (**Ծն. ԻԲ. 17**) *զհաւատոյ որդիսն, որք*

---

[1] *Զձ կարոտ] անկարաւտ*
[2] *ձ մեղանչեալ] մեղացեալք*
[3] *ձ զմի ոք*

աստեղացան բազմութիւնք քրիստոնէից, որով շինեցաւ եկեղեցին կենդանի եւ աստուածակազմ լուսաւորաւք զարդարեալ։ 3 *Իսկ աւազոյն բազմութիւն լինին յԻսմայելէ եւ Աբրահամէ՝ հայր երկնաւորաց եւ երկրաւորաց։* 4 *Երկնաւորացն հայր է Իսահակաւ, եւ երկրաւորաց՝ Իսմայելիւ։* 5 *Եւ զիա՞րդ լինի հայր երկնաւորաց եւ երկրաւորաց, եթէ ոչ այն, որ խաւսէր ընդ նմա լինի մարդ ի զարմից նորա։* 6 *Վասն որոյ եւ կոչեցաւ հայր ընտրեալ հնչման, զի հաճեցաւ Աստուած առնել զնա իւր հայր, ըստ Աւետարանին, որդի Աբրաամու։* 7 *Եւ առ Իսահակ խոյիւն եցոյց զուխտին հաստատութիւնն։* 8 *Զի որպէս խոյ փոխանակ տուեալ Իսահակայ, գնեաց զնա ի սպանմանէ, այսպէս եւ զարիւնն իւր փոխանակ տուեալ գնեաց զմեզ ի մահուանէ։* 9 *Եւ առ Յակոբ ի տեսիլ սանդղոցն եւ նկարեալ գաւազանաւքն յընտրութիւնն խաշանցն նշանակեաց։* 10 *Եթէ խաչիւն ժողովելոց է վերստին զորդիսն Ադամայ եւ արեանն հեղմամբ իբր խախաց կաթին ի մի յարմարութիւնն մածեալ, միացոյց զշինուած անդամոցս ի գլուխն յաւդեալ, եւ ընդ նմա յառնել եւ ընդ նմա նստել յերկնաւորս ի Քրիստոս։* 11 *Իսկ առ Դաւիթ երդմամբ հաստատէ զուխտն, որպէս եւ ասէ. «Երդուայ Դաւթի ծառ|205ա|այի իմոյ»* (**Սղմս. ՁԸ. 4**)*։* 12 *Որպէս եւ ասէ ի ՃԼԱ. (131) սաղմոսին. «Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստ[եաց]*[1] *ի պտղոյ յոր[ովայնէ] նստ[ուցից] յաթոռ ՃԼԱ. 11»* (**Սղմս. ՁԸ. 4**)*, զանկեալն եւ զկործանեալն վերստին շինել։* 13 *«Եդի ուխտըն տէր». ի դիմացն Աստուծոյ ասէ մարգարէս, թէ «Ով հիմն շին[է] նորոյ աշխ[արհի]» զի ընտր[եաց] Դաւթէ Տէր Յիսուս Քրիստոս, որ յազգէն Դաւթի երեւ[եցաւ], որում վկ[այէաց] Հայր. «Դա է որդ[ի] ընտրեալ, զոր Հայր եդ ուխտ զՈրդ[ի], որպէս առնու առաքեալ, զոր առ Երեմիաս, Եդից տանն Դաւթի եւ տանն Յուդայ ուխտն», որ եւ է այս. «Զաւրէնս իմ ի միտս նոցա եւ ի սիրտս նոցա գրեց[ի] եւ ամենեք[եան] ծանից[ին] զիս»։*

ԺԹ. 1 *Եւ այս է ուխտ, զոր եդ Հայր ընդ Միածնին իւր, զի մահուամբ եւ արեամբ նոր ուխտ խաղաղութեան լիցի մեզ ընդ Աստուծոյ։* 2 *Եւ ուխտեաց մեզ Աստուած նոր արեամբն ամենեցուն սրբիլ, եւ զայս երդ[ուաց], որպէս ասաց ցԱբրաամ. «Յանձն իմ երդն[ում], զի ի զաւ[ակաց] աւրհնեսցին ամենայն»։* 3 *Վասն որոյ եւ աստ ասէ. «Յաւիտեան հաստատեցից*[2] *զզաւակ քո, շինեցից ազգէ յազգ զաթոռ քո»* (**Սղմս. ՁԸ. 15**)*։* 4 *Եւ յաւիտեան հաստատումն այլում վայել է, քան թէ Նմա, յորմէ աւրհնին ամենայն ազգ, որ եղեւ ըստ մարմնոյ զաւակ Դաւթի, ըստ Պաւղոսի՝ «ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ»* (**տե՛ս Տմթ. Բ. 8**)*։*

---

[1] *Ճ՚ ոչ արեաց նմա*

[2] *Ճ՚ հաստատումն*

Ի. 1 *Եւ որպէս սահմանաւ յայտ եղեւ գոլ*[1] *որդի Աստուծոյ։* 2 *Նախ ի մարգարէիցն քարոզութենէ. երկրորդ՝ ի կուսական հրաշիւք*[2] *ծնընդենէն. երրորդ՝ ի սքանչելի գործոցն եւ ի բազում զաւրութենէն. չորրորդ՝ ի բաշխմանէ հոգւոյն ի հաւատացեալքս, որով սրբեցանն. հինգերորդ՝ ի յարութենէ մեռելոց, զի նա՛ միայն ինքն զինքն յարոյց։* 3 *Եւ այս իսկ է շինութիւն աթոռոյ իւրոյ լրումն անդամոց նորա, յոր եւ հանգեաւ։* 4 *Վասն* |205բ| *որոյ ասէ. «Շինեցիր ազգէ յազգ զաթոռ քո»։* 5 *«Եւ աթոռ նորա է եկեղեցի սուրբ, զոր Եսայեաւ ասէ. «Երկինք աթոռ իմ են եւ երկիրս պատ[ուանդան] ոտից իմոց»* (**Եսյ. ԿՁ. 1**)*։ Նա ինքն արար զեկեղեցի երկինք ի վերայ երկրի։* 7 *Եւ որպէս զերկինս շինեցին ճշմարտութիւնք նորա, եւ զերկիրս ողորմութիւնք նորա, նոյնպէս եւ եկեղեցի ճշմարտութեամբ եւ ողորմութեամբ մնայ ի շինութիւնն։* 8 *Զոր ասէ. «Ազգէ յազգ շինեցիր զաթ[ոռ]», «ազգէ» յայժմու վարուցս մարմնով, եւ զգալի եւ ցուցական կերպարանաւք եւ աւրինակաւք։* 9 *Բերեմք զաւրինակ հանդերձելոյ ճշմարտութեանն մինչեւ յազգն, յորում հրեղէն նորոգին ամենայնքն, եւ զոր այժմն տեսանեմք իբր ընդ հայելի, յայնժամ դէմ յանդիման* (**տե՛ս Ա. Կրնթ. ԺԳ. 12**)*, յորժամ ի փոքու յայսմ գիտութենէ ի մեծն յայն ժամանեմք, խառնելով ընդ եկեղեցի վերնոցն։* 10 *Եւ զի եկեղեցի աշխարհ է՝ շինեալ ողորմութեամբ նորա, եւ երկինք պատրաստական տեղի ճշմարտութեան նորա ոչ որ ի քարանց եւ ի փայտից տեսանի, զի այս յարացոյցք են մեծի եկեղեցւոյ այսմ, որ ի խաւսուն վիմաց եւ ի կենդանի քարանց յանկեալ եւ ի կործանեալ բնութենէս Ադամայ, ի մի հաւատս հաւաքեալ շինեցաք ի հիմն մեր*[3] *հաւատոյ եւ ի գլուխն կենդանի Յիսուս, զորոյ նիւթ շինուածոյն որդին Դաւթի Սողոմոն ասէ, զոր շինեաց ճշմարիտն Սողոմոն. «Գահաւորակ արար իւր արքայ Սողոմ[ոն] ի փայտիցն Լիբ[անանու]»* (**Երգ. Գ. 9**)*։ Ինքն եղեւ արուեստաւոր գործոյն նորոյ աշխարհի եւ հանգստեանն իւր աթոռոյ՝ եկեղեցւոյ սրբոյ, որ հարսն կոչի, եւ մարմին եւ անդամք ի*|206ա|*ր, որ նախ անպտուղ փայտ Լիբանանու։*

ԻԱ. 1 *Ազգք հեթանոսաց եղեն զանազան եւ գեղեցիկ նիւթք ոսկեղէնք ի յարմարութիւն շինուածոյ մարմնոյն Քրիստոսի, գահաւորակ թագաւորական, իբրեւ զՊաւղոս, որ Քրիստոսի կայր եւ Քրիստոս նովաւ խաւսէր։* 2 *Արդ, սիւն է այսմ շինուածոյ՝ ճշմարտութիւն, խարիսխ՝ հաւատոյն հաստատութիւն եւ արծաթեղէն լինել սեանն, ընտիր բանն պարզ եւ լուսատեսիլ ճշմարտութեամբ, եւ խոստովանութիւն ուղեղ հաւատոյն, ծիրանի*

---

[1] *Զ եւ գոլ*
[2] *Ճ՛ ծննդեան*
[3] *Զ՛Ճ՛ մերոյ*

թագաւորական՝ խոհեմական իմաստութիւնն. կողմանոցքն ոսկի՝ յոյսն եւ սէրն մաքուր, մէջն ականակապ՝ սրտին ջերմն յաւժարութիւնն չորսիւք[1] *առաքինութեամբ կապեալ է սէրն Աստուծոյ, եւ ընդ մայր վերնոյն Երուսաղէմի լինել նմա դստերս հրեէից եւ հեթանոսաց եկեղեցեաց:* **3** *Եւ այս է, զոր յայլում տեղւոջ ասէ. «Իմաստութիւնն շին[եաց] իւր տուն»* (**Առկ. Թ. 1**)*:* **4** *Եւ Դաւթի խոստանայ ասելով. «Յաւիտեան հաստատ[եցից] զզաւ[ակ] շինեցից ազգէ յազգ զաթ[ոռ] յաւ[իտեան] հաստ[ատեցից] զզաւ[ակ] հայր առ Քրիստոս ասէ»:* **5** *Եւ զաւ[ակ] Քրիստոսի են եկեղեցւոյ մանգ[ունք] առ որս ասէր. «Որդ[ի] իմ», որք ի բանէ սերմանց նորա ծն[ան] յարգանդէ մաւրս մեր եկեղ[եցւոյն] եւ կոչ[եցան] անդամք նորա, որ եթէ ի հոսանուտ կենցաղս սխալական մեղաւք պատր[է] սատ[անա]յ, ի գլխ[ոյ]. բաժանիմք:* **6** *Ասէ առ նա Հայր, թէ զսասանեալսն ո՛չ թող[ից] կործանիլ, այլ մինչեւ յապայ հաստատեմ, որպէսզի յորժամ սասանիմք մեղաւք, ոչ տիրէ նայ մեզ, այլ ածեալ զուխտ արեան Քրիստոսի, որ վասն մեր հեղաւ առաջի Հաւրն, միջնորդ թողու զյանց[անաց], որով սասանեաց եւ հաստ[ատեաց] ի նոյն սրբ[ութիւն]:* **7** *Ըստ այնմ, «Արիւնն Յիսուսի սրբէ»:* **8** *Եւ շին[ուած] զաթ[ոռոյն] եւ աթոռ Քրիստոսի են ընտրելոցն անձնիք, որպէս ասաց. «Ես ի ձ|206բ|եզ եւ դուք յիս»* (**Յվհ. Ա. 7**)*:* **9** *Այս շինի ի քայքայելոյն մեղաւք արեան Նորա ուխտիւ քաւութեան:*

ԻԲ. **1** *Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, եւ ճշմարիտ յեկեղեցիս սրբոց:* **2** *Զի նախ երկնաւորքն գիտացին զայս մեծասքանչ խորհուրդ, զոր հրեշտակ մեծի խորհրդոյն եւ սքանչելի խորհրդակիցն Հաւր, կամաւ Հաւր եւ հաճութեամբ հոգւոյն զգեցաւ մարմին, զի իւրով միջնորդութեամբն զհաւատ մեր եւ զյոյս, եւ զսէր հաստատեսցէ առ Հայր, եւ զճշմարիտ խոստովանութիւն միոյ բնութեանն եւ երից անձանցն յատկութեանն դիցէ յեկեղեցի իւր սուրբ:* **3** *Ըստ որում ասէ. «Ճշմարտութիւն քո», յեկեղեցիս սրբոց, զի ճշմարտութիւնն նախ նոքա քարոզեցին յեկեղեցւոջ՝ իմաստուն եւ հրեղէն բանաւորքն, եւ նիւթական եւ զգալի լուսաւորքն, որպէս հրեշտակքն հովուացն քարոզս աւետեաց հնչէին, եթէ յայսմ հետէ ի մարդկանէ լինելոց է փառաբանութիւնն Աստուծոյ, եւ յԱստուծոյ եւ ի հրեշտակաց նորա խաղաղական հաշտութիւն առ մարդիկ:* **4** *Եւ աստեղք զթագաւորսն մոգուց ի հեռաստանէ ածելով յերկրպագութիւն տղայացելոյն եւ ամենայն աշխարհի ճշմարիտ Թագաւորին, ուստի եւ զնորածին Մանուկն խորհրդական ընծայիւք*

---

[1] *Զ զոր սիւիք] չորսիւք*

դաւանեցին Աստուած ամենայնի եւ Թագաւոր աշխարհի, եւ յաղագս մեր՝ մեռեալ մարմնով, անմահն աստուածութեամբ, եւ անմեղն մարդկութեամբ։ 5 *Վասն որոյ ընդ այս երախտեաց ձիր եւ սքանչելի փրկ[ին] եւ երկն[ային] հրեշտ[ակ] ասէ խոստովանին եւ գոհաբանեն եւ ասեն. «Փառք ի բարձունս Աստուծոյ, վասն յերկիր խաղաղութիւն»* **(Ղկ. Բ. 14)** *առնելոյ եւ ճշմարտ[ութիւն] յեկեղ[եց]իս ի հանուր եկեղ[եաց] ժողովս, որք արեամբն Քրիստոսի սրբեցան։*

ԻԳ. 1 *Ճշմարտութիւնն յեկեղեցիս Աստուծոյ փայլէ, զի արդարացոյց զձեզ ոչ զաւր|207ա|ութեամբ, այլ իրաւամբք եւ արդարութեամբ ի ձեռն Միածնին մահուան։* 2 *Զի որպէս անհնազանդութեամբն Ադամայ զորդիս իւր ճշմարտութիւնդ Աստուծոյ ի մահ դատապարտեաց, նոյնպէս եւ հնազանդութեամբն Քրիստոսի զհաւատով իւր զաւակս կենդանացոյց եւ յարդարութիւնս*[1] *գրեաց, վասն որոյ ասէ. «Ո՞վ է յամպս, որ հաւ[ասար է քեզ]», ամբողն զիմանալի երկինն նշանակէ, եւ երկնիւ՝ զերկնաւորսն, որ թէպէտ գթած են, այլ ո՛չ հաւասարին գթոյ կամ խոնարհութեանն Քրիստոսի, զի հրեշտակք ետուն աւրէնս խիստս, եւ յերեւելն իւրեանց ցուցին պատժողական զաւրութիւն, իսկ Որդին Աստուծոյ քաղցր եւ հեզ, եւ աւրէնքն իւր՝ լուծ թեթեւ, իսկ զպատժողական զաւրութիւնն ի թզենին, եւ ո՛չ ի մարդիկ, կամ «Ո՞վ նմ[անեցից] յորդ[իս] Աստուծոյ»* **(Ղկ. Բ. 14)**։ 3 *Նոյն զհր[եշտակաց] ասէ, «յորոց ոչ ոք նման է Քրիստոսի գթ[ածի], այսպիսի սէր ոչ, [ոք ունի] զի զանձն ի վերայ բարեկամ[աց դիցէ]»* **(Յվհ. ԺԵ. 13)**։ 4 *Իսկ Նա եդ ի վերայ թշն[ամւոյն], զի մինչ թշն[ամին] հաշտ[եցաւ] ընդ Աստուծոյ՝ մահուամբ միածնին։* 5 *Վասն որոյ ասէ. «Ո՞վ է յամպս, որ հաւասար է Քեզ»։*

ԻԴ. 1 *Սիմաք[ոս] յեթերն ասէ։* 2 *Այլ եւ ամպ անուանէ զմարգարէսն եւ զսուրբքն որք առին իբրեւ ամպ ի ծովէ, զի որպէս ամպ յերկրէ եւ ի ծովէ*[2] *ունի զծնունդն*[3] *եւ երկնագնաց լինի նոյնպէս եւ նոքա մարմին ունելով երկրային՝ երկնային վարուք յերկինս շրջէին։* 3 *Եւ որպէս ամպ յինքենէ ոչ ցաւղէ, այլ յաղբիւրաց եւ ի գետոց եւ ի ծովէ, նոյնպէս եւ սուրբքն ո՛չ յինքեանց, այլ ի Հոգւոյն Սրբոյ, իբր յորդառատ աղբիւրէ եւ ի հոսանաց գետոց, եւ յանսահման ծովէ իմաստութեանն Աստուծոյ առնուն եւ ցաւղեն։* 4 *Եւ որպէս ամպ*[4] *ոչ ուր կամի տեղայ, այլ ուր Տէր կամեսցի, նոյնպէս եւ նոքա ըստ հրամանի հոգւոյն զբանն քարոզէին։* 5 *Եւ*

---

[1] *Զձ՛ յարութիւնս՝ չի յարդարութիւնս*
[2] *Զձ՛ > զի ի ծովէ*
[3] *ձ՛ ունի եւ զծնունդն*
[4] *ձ՛ եւ ամենայն որպէս ամպ*

որպէս անձրեւ ի պար|207|արտ անդաստանս ազդէ, եւ ոչ ի կարծր քարինս եւ ի փայտս գաւսացեալս եւ ի ճանապարհս անկոխս, այսպէս եւ մարգարէք եւ առաքեալք ոչ քարացելոցն սրտիւք եւ անդարձից, այլ՝ կակղահոգի եւ բարի արանց։ 6 *Արդ, ասէ մարգարէս. «Ո՞վ է յամբս, որ հաւասար է քեզ»։* 7 *Այսինքն՝ ի սուրբ ամենայն, յառաքեալս եւ մարգարէս. տեղեաւ կամ բնութեամբ, գիտութեամբ եւ կամ զաւրութեամբ։* 8 *Եւ ոչ հաւասարին տեղեաւ, զի թէպէտ յերկինս ելին առաքինութեամբ, այլ ոչ ի բունն, ուր երկինք երկնից ասի։* 9 *Եւ յերկին*[1] *ոչ միշտ եւ ի սկզբանէ էին, որպէս եւ Տէրն ասաց. «Ոչ ոք ել յերկ[ինս], եթէ ոչ որ էջն յերկ[իր]*[2]*՝ Որդին մարդոյ, որ էն յերկ[ինս]*[3]*» (***Յվհ. Գ. 13***)։*

Իե. 1 *Եւ զի թէպէտ եւ նման եւ պատկեր Աստուծոյ ասի մարդ, բարութեամբ, գիտութեամբ եւ կարողութեամբ, այլ ո՛չ հաւասարապէս, քանզի այլաբար են սոքա առ Աստուծոյ եւ առ մարդոյ, քանզի բարին էակցեալ է առ Աստուծոյ։* 2 *Եւ էութիւն Աստուծոյ բարին է, եւ անկարութիւն է ընդունակ լինել չարին, որպէս եւ արեգական ընդունակ է խաւարի։* 3 *Իսկ մարդ ունակութեամբ ունի զբարին, ուստի եւ ընդունակ է չարութեան*[4]*, որպէս եւ աւդ ըստ ունակութեան ասի ընդունակ լուսոյ, ուստի ի ծագել արեգականն լուսաւորի եւ ի մտանելն խաւարի։*

ԻԶ. 1 *Նոյնպէս եւ գիտութիւնն ասի, լի Աստուած միշտ եւ միաբան զամենայն գիտէ, եւ ո՛չ է ժամանակ, յորում ոչ գիտէ, իսկ մարդ ոչ միշտ եւ ոչ զամենայն գիտէ, այլ երբեմն եւ մասնաւորաբար։* 2 *Նոյնպէս եւ կարողութիւնն, զի Աստուած զամենայն զոր ինչ կամի՝ զնոյնն եւ կարէ, իսկ մարդ, զոր ինչ եւ կարէ, զայն միայն կամի, եւ ա՛յն է իմաստութիւն նորա ոչ |208ա| ցանկալ անհասիցն եւ անկարելեաց։* 3 *Նաեւ սուրբք ամենայն, թէպէտ եւ բանիւ պատմողք*[5] *են եւ գովաւղք Արարչին, այլ ո՛չ է ի նոցունց, որ բանիւ հաւասարեալ կարէ ըստ բնութեան կամ ըստ զաւրութեան, կամ զաքանչելի գործս Արարչին պատմելով։* 4 *Ըստ այնմ. «Ո՞ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն» (**Սղմս. ճե. 2**)։* 5 *Եւ աստ, եթէ «ո՞վ է յամպս, որ հաւ[ասար է քեզ]» եւ կամ ո՞վ նման իցէ Տեառն յորդիս Աստուծոյ։* 5 *Որ շնորհաւք կոչեցան յորդիութիւնն, եւ ի լրութենէ նորա առին առաքեալք եւ մարգարէք եւ երամք սրբոցն, եւ ոչ նմանին Նմա, զի Նա բնութեամբ որդի եւ Հաւր հաւասար, իսկ սոքա շնորհաւք արժանացեալ որդիութեան, եւ*

---

1 *Զձ՝ յերկիր] յերկին*
2 *Ա եթէ ոչ էջն, ձ՝ էջն յերկնից] էջ յերկիր*
3 *Զձ՝ > որդին... յերկինս*
4 *Զձ՝ չարին] չարութեան*
5 *Զձ՝ սրտմտողք] պատմողք*

վասն Բանին Աստուծոյ առնլոյ ի մէնջ մարմին, եւ ի հոգւոյն իւրմէ ի մեզ բաշխելոյն։ 6 *Նա սկզբնատիպ բարոյ ամենայնի, իսկ սոքա պատկերեալք եւ կերպարանեալք, իբր պատկերի յարացոյց կենդանւոյ։* 7 *Վասն որոյ եւ ասէ. «Աստուած փառաւորեալ ի խորհ[ուրդս] սրբոց իւրոց»* (**Սղմս. ՁԸ. 8**)։ 8 *Ի սուրբս փառաւորի եւ ոչ յանսուրբս, որք աղտեղացուցին մեղաւք զպարզութիւն մտացն, եւ զերախտ[իսս] Աստուծոյ ոչ կար[ացին] տեսանել եւ ոչ փառաւորել, իսկ որք սրբ[ութեամբ կեցին]*[1]*, անյագ են ի փառատրելն։ որպէս ասէ առաք[եալ]. «Նմա փառք յեկեղ[եցւոջն] եւ ի Քրիստոս Յիսուս յամենայն յաւիտ[եանս]»* (**Եփս. Գ. 21**)։

Իէ. 1 *Զի թէպէտ տկարքն գայթակղին վասն երեւելի մարմնոյն, եւ զկերպարանս ծառայի զգենլոյ, եւ աղքատապէս խոնարհելոյն, եւ հերձուածողքն լեզուագարին, այլ խորհրդաւորքն փառաւորեն զնա ի խորհուրդս իւրեանց եւ յոգիս։* 2 *Եւ ո՛չ լեզուաւ միայն, այլ «ի ներքին մարդոյն»* (**հմմտ. Հռմ. Է. 22**) *անմռունչ հեծութիւնն, ընդ որ հաճի Աստուած եւ զզաւրութիւնն խորհրդոյն, իբր յանմահական դրախտէ պտուղս քաղցր եւ ախորժելի, զծնունդս մտաց իւրեանց* |208բ| *մեզ մատուցանեն, որ են վկայութիւնք աստուածութեանն ի գիրս սուրբս. եթէ ոք յաւժարեսցի եւ կարող լիցի հաւաքել։* 3 *«Մե՛ծ եւ ահաւոր ի վերայ այնոցիկ, որ շուրջ են զնովաւ»* (**Սղմս. ՁԸ. 8**)։ 4 *Շուրջ են զԱստուծով, որք զսիրտս*[2] *սրբեցին եւ յերկինս մտին իմացականին հայեցողութեամբ, որպէս եւ ասաց Քրիստոս. «Ուր ես են եմ եւ դուք անդ լին[իցիք] կաց[ջիք] յիս եւ ես ի ձեզ»* (**հմմտ. Յվհ. ԺԷ. 21-23**)։ 5 *Ի վերայ սոցա Աստուած ըստ քաղցրութեանն է, եւ ահաւոր եւ մեծ, յորոյ ահէ զանձինս աշխարհի մեռուցանէին*[3] *եւ ի փոքր ինչ գայթակղելն ըստգտանաւք խոցոտին։* 6 *Իսկ որք ոչ են շուրջ զԱստուծով ոչ այնպէս է ի վերայ նոցա, այլ քաղցր է ի վերայ տգ[իտ]ութեամբ մեղուցելոցն։* 7 *Նաբ[աղ] եւ Աբ[իգեա], որ շուրջ էին*[4] *զԱստուծով, վասն փոքր սխալանացն զսոսկ[ալի] մահն մեռան* (**տե՛ս Ա. Թգ. Իե. 5, Բ. Թգ. Բ. Գ.**) *եւ ժող[ովուրդն] ի բազմապատիկ յանցանսն մնայր անպատիժ, ըստ Տեառն. «Ծառայ, որ գիտէ եւ ոչ պատրաստի ըստ կամ[ացն]՝ արբ[ի] գան բազում»* (**հմմտ. Առկ. ԺԷ. 10**)։ 8 *Եւ դարձեալ, զի ամենայն բանականք իմանալիք եւ զգալիք, շուրջ զԱստուծով ասին, ոչ տեղեաւ ինչ պարագրական, եւ ոչ իմաստութեամբ բանի բովանդակելով, այլ ըստ յաւժարական ախորժակաց եւ ըստ աշտիճանի փառացն, զոր*

---

[1] *Զձ > կեցին*
[2] *Զձ զանձինս] զսիրտս*
[3] *ձ > աշխարհ մեռուցանէին*
[4] *Զձ զսոսկ] զսոսկալի*

առաքինացեալքն քաջութեամբ եւ կամ վերջացեալքն հեղգութեամբ դաս ընգալան։ 9 *Զի յետոյ Աստուծոյ ասին ի թիկանց անգէտ սուրբքն, զի թէպէտ զհետ քաղցր ձայնի աստուածային պատուիրանացն են հետեւեալ, այլ զի զլոյս իմաստութեանն ո՛չ են ստացեալ յանձին, ի թիկանց ասին, վասն զի ո՛չ զաւրեն տեսանել զերեսն ահաւոր, վասն տգիտական անգիտութեանն։*

ԻԸ. 1 *Եւ ի ձախմէ ասին ծառայքն, որք երկնչին ի ձախոյ ձեռանէն եւ յուլուցն դասէ, եւ վասն անպտղութեան ի սպառնալեաց գեհենոյն եւ յաւիտենից տանջանացն։* 3 *Իսկ յաջմէ* |209ա| *ասին վարձկանքն, որոց ասէ. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ, առէք զվարձս ձերոց վաստակոցն՝ զարքայութիւնն պատր[աստ է] «ձեզ ի սկզբանէ աշխարհի, զի քաղցեա եւ ետուք ինձ ուտել» (**Մտթ. Իե. 34-35**)։ Եւ թուէ զմասունս բարոյն, զոր ակնկալութեամբ վարձուն գործեցին։* 4 *Եւ յերեսաց կուսէ են որդիքն, վասն զի ոչինչ այլ յաշխարհի էր նոցա ըղձալի, բայց միայն Հաւրն սքանչելի գեղ կերպարանաց, սակս որոյ եւ զամենայն արհամարհեցին եւ այնմ միայնոյ բաղձացեալ ցանգացան։* 5 *Այլ զի եւ զկամս Հաւրն ծանեան, եթէ ոչ ախորժէ զորդի սիրեցեալ հեռանալ Հաւրն յերեսաց, այլ միշտ առաջի ունել տեսութեան, վասն զի սիրէ Հայր զուարճանալ ի բարի շարժումն որդւոյ, եւ խնդայ ի բոյս բարուցն գեղեցկութեան։*

ԻԹ. 1 *«Տէ՛ր Աստուած զաւրութեանց, ո՞վ նման Քեզ» (**Սղմս. ՁԸ. 9**)։* 2 *Երկնային զաւր[ութիւն] Տէր կոչէ եւ ասէ «Ո՞վ նմ[ան] գթութեամբ» հզաւր ես ոչ ի պատժելն, այլ յողորմելն, զի հրաման ունին պատժող զաւրութեան, յայտ է ի Սոդոմ եւ ի Հռափսակայ զաւրացն։* 3 *Բայց զայս զաւրութիւնս ոչ ունէին, վասն ճշմարիտ եւ արդար իրաւանց գալ մարմնաւոր ազգին եւ զնոյն արդար երեւեցուցանել։* 4 *Վասն որոյ ընդ քո առնելն զայս՝ սքանչացեալ զարմացան։* 5 *Այլեւ ի յեղական բնութենէս ո՛ նման է բնութեան Քո սահմանելի*[1]*, կամ յիմաստնոցն կոչեցելոց ամենիմաստ արուեստի քո արարչութեան, եւ կամ ի տերանց եւ ի դատաւորաց տիրական դատաստանի Քո եւ արդար իրաւանց, կամ ի հզաւրաց* |209բ| *եւ զաւրաւորաց ամենակարող զաւրութեան Քում անպարտելի*[2]*, զի բնութեան ամենայնի ես Արարիչ եւ անչափելի է հանճար իմաստութեան Քո, եւ տերութիւն Քո մեծ եւ անբովանդակելի։* 6 *Նոյնպէս մեծամեծք են զաւրութիւնք տերութեանդ Քո Մեծի, ըստ մարգարէիս Դաւթի. «Մեծ է Տէր մեր եւ մեծ է զաւրութիւն նորա, եւ իմաստութեան նորա ոչ գոյ չափ» (**Սղմս. ՃԽՁ. 5**)։* 7 *Որ համառաւտ աստուածաբանութիւն է Սրբոյ Երրորդու-*

---

[1] *Ձ՝ ո՛ անսահմանելի*

[2] *Ձ՝ անպատմելի] անպարտելի*

թեանն, ծնողի Հաւր եւ պատճառի, եւ ծնիցելոյն Որդւոյի ի պատճառէդ, եւ բղխեցելոյ Հոգւոյդ Սրբոյ անհատաբար, որում ոչ են նման անուանելքն հայր եւ կոչեցեալքն որդի, եւ հոմանունաբար[1] ասացեալքն հոգի, վասն զի արարածք որք[2] մնացեալ էին ի ստոյգ եւ ի ճշմարիտ յայսոցիկ անուանակոչութենէ, եւ ի պատճառէդ եւ ի սկզբնատպէդ ամենայն բարեաց առեալ զայսոսիկ անուանին[3]։ **8** Վասն որոյ ասէ. «հզաւր ես դու, Տէր, այսինքն՝ կարող ես յամենայնի։ **9** Եւ ճշմարտութիւն քո ըստ արժանւոյն պսակէ զայնոսիկ, որ շուրջ ասացաւ զՔեւ։ **10** Ոմանց զհարիւրաւորն եւ զհայրենեացն ժառանգութիւնն, ոմանց զվաթսունաւորն[4] վարձ վաստակոց, ոմանց զութսունաւորն»[5] (**տե՛ս Մտթ. ԺԳ. 8**) փոխանակ դարձի եւ ապաշխարութեան։ **11** Զի սակս զքաղցելոցն եւ զծարաւեացն պէտսն լնլոյն, յանմահականն վայելեսցեն սեղան, ընդ զգեցուցանելոյն զմերկս՝ զլուսեղէնն զգեցցին զպատմուճան։ **12** Ընդ ժողովելոյ զաւտարս՝ ի գոգ նահապետին Աբրաամու գրգեալ հանգիցեն, եւ զհիւանդսն եւ զարգելեալսն ի բանդի|210ա|ն արգահատելոյն ի բանին Աստուծոյ բարբառոյ ներբողեալ գովեսցին։ **13** Եւ այս է ճշմարտութիւն շուրջ զԱստուծով ըստ արժանւոյն տալ զվարձս փոխարինին։ **14** Եւ տեսակ է այսպիսի ասացեալս յարմարութեան բանից, այլ Նա ափով իւրով բովանդակեալ ունի զամենայն։

Լ. **1** Եւ արդ, զի ողորմութեամբ աւրհնեմք զՏէրն եւ զԱրարիչն, եւ խոստովանիմք, զի ողորմութեամբ շինեաց զաշխարհ այլեւ զմեղաւք քակեալ եւ զկործանեալ բնութիւնս մեր ողորմութեամբ շինեաց վերստին իւրով մարդեղութեամբն, եւ վարձ ողորմածացն զարքայութիւնն իւր խոստացաւ։ **2** Եւ թէպէտ բազում մասամբք բարեգործութեանցն պատկեր եւ նմանութիւնն ասի մարդ[6] Աստուծոյ[7], այլ առաւել, քան ամենեքումք, ողորմութեամբն զուարճանայ ամենեցունց Տէրն, եւ զնա կամի քան զամենայն իրս հաճելիս, ըստ որում ասէ. «Զողորմութիւն կամիմ եւ ոչ զպատարագ» (**Ովս. Զ. 6**)։ **3** Վասն որոյ եւ մեք զողորմութիւն սիրեսցուք, զի ողորմութիւն գտցուք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալք յաւիտեանս[8]։

---

[1] ձ՝ համանունաբար] հոմանունաբար
[2] Զձ՝ որք՝ որք
[3] ձ՝ անուանքն] անուանէին
[4] ձ՝ զիսնաւորն] զվաթսունաւորն
[5] Զձ՝ զերեսնաւորն] զորսունաւորն
[6] ձ՝ մարդոյ
[7] ձ՝> աստուծոյ
[8] Ա գրչից՝ «Թէ պիտի՝ երկար յորդորակ արա՛յ ի վերայ ողորմութեանն»։

ԺԹ.

|210ա| ՆՈՐԻՆ Ի ՃԷ. ՍԱՂՄՈՍՆ «ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՏԵԱՌՆ, ԶԻ ՔԱՂՑՐ Է»

Հովհաննես Երզնկացին քրիստոնյայի կյանքում կարեւորում է խոստովանությունը, բացատրում, որ այն չի սահմանափակվում միայն անհատի գործած սեփական հանցանքների ու վատթար արարքների խոստովանությամբ, այլ իր մեջ ներառնում է դավանանքի խոստովանությունը՝ գերակայության, Աստծո դատաստանի արդարացիության եւ բարի արարչագործության նկատմամբ: Քաջատեղյակ լինելով ժամանակի իրավական ըմբռնումներին եւ ամենուր արդարադատություն պահանջելով՝ նա այնուամենայնիվ մարդու ճիշտ դաստիարակության միջոց է համարում ոչ թէ երկյուղը, այլ պատկառանքը եւ սեփական արարքների համար ամոթը, որը կարող է անհատին ետ պահել իր սխալները կրկնելուց: Խոսքն առավել ընդունելի դարձնելու համար բազմաթիվ ուշագրավ օրինակներ է բերում ինչպես Աստվածաշնչից, այնպես էլ առօրյա կյանքից:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 210ա-24ա), 2992 (Զ. 152ա-162բ) եւ 2854 (Ճ. 148ա-51ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Սկիզբն եւ պատճառ ամենայն բարեաց Աստուած է, եւ ինքն անսկիզբն եւ անպատճառ յամենայնէ: 2 Ամենայն եղականաց եւ սահմանելեաց ինքն է Արարիչ եւ գոյացուցիչ անուան, եւ ինքն անեղ եւ անսահմանելի, բայց յարարածոց աստի անուանեալ լինի Արարիչն, եւ յեղանակաց եւ ի սահմանելեաց կոչի բա|210բ|զմանունաբար Անսահմանելին ամենայն անուան: 3 Ընդ ամենեքումք*[1] *անուանի, զի ստուգեսցէ զամենեցունց թագաւորութիւն, զի ի նա է ամենայն եւ նորա յաւրինեալ, որպէս պատճառի, եւ ինքն է ամենեցունց գոյացուցիչ, եւ սկիզբն եւ կատարումն, շարունական պահպանումն, սնունդ եւ առ ինքն դարձուցանող: 4 Բազմանուն է վասն բարերական նախախնամութեանն եւ պատճառին, որովք ի պատճառաւորացս աւրհնաբանի եւ ի նախախնամելոցս բոլորից եւ մասանց ամենայնի նախախնամողն կոչի: 5 Բարերարութեան բազմանուանութեամբ տուողն բարւոյ եւ իմաստութեան, բարի եւ իմաստուն եւ այլ յոլովիւք մասամբք անուանի:*

Բ. 1 *Եւ յաղագս երկուց պատճառաց ամենայնիւ անուանեմք զնա. վասն բաշխելոյն ի մեզ զզանազան պարգեւսն եւ վասն զյարացոյցսն*

---

[1] *Ճ՛ արդ ամենեքումք աստուած շարունակական*

յինքեան ունելոյն, եւ ի գիտութիւն եւ ի կամս իւր, զի է Քրիստոս պատկեր եւ նմանութիւնն են յարացուցին, որ յաստուածային գիտութիւնն։ 2 Եւ է առաջինն ի բարոյն բաշխմանէ, զի որպէս արեգակն բազում ճառագայթս արձակեալ զամենայն նիւթականսն ըստ ընդանի բնութեան իւրեանց հաղորդեցուցանէ, եւ ինքն մնայ ինքեան միութիւնն[1]*, եւ յորոց հաղորդէ անուանեն զնա։ 3 Եւ ըստ երկրորդ մտացն, զի ի նմա է յարացոյցն եւ սկզբունքն եւ պատճառն սոցա ամենայնի. եւ զոր ունիմք մեք՝ տեսակ է այնոցիկ, զոր միեղինաբար ունի Աստուած ի գիտութիւն եւ ի կամս իւր։ 4 Զոր եւ յառաջ, քան զյաւիտեան սահմանեաց, եւ նախքան զլինել եղական|211ա|ացս, ըստ առաքելոյն, եւ առ յԵրեմիաս բանիցն։ 5 Վասն որոյ յայսմ սաղմոսի յիւրական բարեացն եւ յարացուցիցն*[2]*, որ յինքեան՝ ուսուցանէ խոստովանել զտուողն ամենայն բարոյ եւ զսկզբնատիպն։ 6 Եւ յարացոյց, որպէս եւ ասէ. «Խոստ[ովանեղերուք Տեառն] զի քաղցր է, զի յաւ[իտեան]»։ Իսկ վերնագիրն, որ ասէ. «Ալելուիա՛», որ է աւրհնեցէք զՏէր, եւ կամ գովեցէք զոր էնն, որ եւ այս խոստովանութիւն է արարածովքս եւ մասամբք ամենայն բարեաց, որ յարարչական խնամոցն, աւրհնել եւ գովե՛լ զԱրարիչն, որ է՛ յայտնի առնել զյորդութիւն եւ զառատութիւնն պարգեւաց նորա։ 8 Այլ եւ ունի զապերախտութիւն հրէիցն եւ զայռնելն ի վերայ Մովսէսի։ 9 Եւ ցուցանէ զնորոյ ժողովրդեանս ընտրութիւն դէմք սաղմոսիս, որք ճշմարիտ երկրպագուք եւ աւրհներգուք բարերար խնամոցն Աստուծոյ եղեն, որոց ասէ. «Խոստով[ան եղերուք Տեառն] զի քաղցր է, զի յաւ[իտեան]»։*

Գ. 1 *Ըստ չորից յեղանակաց ասի խոստովանութիւն մեր յԱստուած խոստովանել զմի տէրութիւն եւ աստուածութիւն, եւ զերիս անձնաւորութիւն։ 2 Առաջին է, որ ըստ դաւանութեանն, որ է ուղեղ խոստովանութիւն հաւատոյն, եւ երկրորդ՝ ըստ դատողական արդարութեանն, որ է տիրական անուանն խոստովանութիւն, եւ երրորդ՝ խոստովանել զամենաստեղծ եւ զբարի արարչութիւնն եւ զամէնիմաստ արուեստաւոր նախախնամութիւնն եւ չորրորդ՝ խոստովանելն զմեղս մեր, որով զլացաք զբարեացն պտուղ, զոր պարտիմք Արարչին։*

Դ. 1 *Եւ այսքան*[3] *գլխաւորական յեղանակք խոստովանութեան ի սաղմոս|211բ|յայս տեսանի։*

Ե. 1 *Արդ, դաւանական խոստովանութիւնն է, յորժամ ուղղափառ հա-*

---

[1] *Զ միութեանն*
[2] *Զ յարացուցին*
[3] *Ձ՛քան] այսքան*

ւատով[1] *խոստովանիմք զգերագոյ երրորդութիւնն եւ զգերաստուածութիւնն եւ զգերագոյն բարերարութիւնն, եւ զգերազանցեալ, քան զամենայն սկիզբն՝ էութիւնն, եթէ*[2] *զիա՞րդ աստուածային եւ բարի բնութիւնն միական ասի, զիա՞րդ երրորդական, եւ զի՞նչ հայրութիւնն եւ որդիութիւն եւ հոգւոյն աստուածաբանութիւն։* 2 *Եւ զիա՞րդ յաննիւթ եւ յանբաժանելի բարոյն սրտէ բղխէ բան եւ լոյս։* 3 *Եւ կամ զիա՞րդ գերագոյն էութեամբ մարդկաբնիւք ճշմարտապէս գոյացաւ Բանն Հաւր։*

Զ. 1 *Իսկ երկրորդ՝ խոստովանիմք զահաւոր դատաստան Նորա, եւ զարդար իրաւունս սրբոցն եւ անսրբոց։* 2 *Վասն որոյ խորհեցան, խաւսեցան եւ գործեցին զբարի՛ կամ զչար, որ յայտնելոց են յատեանն մեծ եւ ահաւոր, յորժամ բանին դպրութիւնք մատէնից անմոռաց յիշմանն Աստուծոյ։*

Է. 1 *Այլեւ այժմ, որքան եմք՝ աշխարհի խոստովանիմք զնա Աստուած մերձաւո՛ր առ ամենեսեան եւ ո՛չ հեռաւոր։* 2 *Վասն որոյ զոր ինչ խորհին մարդիկ ի միտս իւրեանց, բարի՛ եւ կամ չար, իմանայ զամենայն, եւ զոր խաւսին բանս լեզուաւ՝ լսէ անսխալ, եւ զոր գործեն մարմնով ի ծածուկ՝ տեսանէ յայտնապէս, զի չի՛ք արարած աներեւոյթ առ ի նմանէ։* 3 *Եւ ոչ է հնար ճողոպրել յարդարացի իրաւանց նորա, թէ յայժմու աշխարհիս եւ թէ ի հանդերձեալ յաւիտենին, որպէս եւ գիտէ զընտրութիւնն խորք մեծութեան անքննելի՛ դատաստատանաց նորայ։*

Ը. 1 *Եւ երրորդ. խոստովանիմք հաւ|212ա|ատով զբարի արարչութիւն Նորա, զոր եւ առաքեալ ուսուցանէ. հաւատով իմանալ հաստատեալ զյաւիտեանս բանիւն Աստուծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ։* 2 *Եւ պէտք են հաւատոց, զի չէր ոք մատ եւ զի մի յառասպելս հեթանոսական բանիցն անկցուք։* 3 *Վասն որոյ յաներեւութից խոստովանիմք եղեալ ոչ ինքնեղ եւ ոչ յաւետակից Աստուծոյ, եւ կամ ի հիւղէ մանրամաղ փոշոյ, ոչ ի խաւարէ եւ յանդնդոց, եւ կամ ի ստուերէ Աստուծոյ, եւ կամ ի բնութենէ, այլ տարերք չորք՝ յոչ էից ստեղծեալ, եւ ի չորից անտի զամենայն զգալի արարածոց մասունս. զկենդանիս եւ զանկենդանս, զբուսականս եւ զանբոյսս, զբանականս եւ զանբանս, որ ինչ յերկինս եւ յերկրի, յաւդ եւ ի խորս ջուրց, որք ի ծովս եւ ի գնացս գետոց, եւ զամենեսեան զեղեալսն իւրով նախախնամական զաւրութեամբն պահպանէ՛ եւ միոյ բարոյն զամենեսեան հաղորդեցուցանէ։*

Թ. 1 *Վասն որոյ եւ չորրորդ յեղանակ խոստովանութեանն հարկաւոր է*

---

[1] *Զձ՛ դաւանութեամբ] հաւատոս*
[2] *Զձ՛ եւ թէ] եթէ*

եւ պիտանացու, զի յամենայն կարգէ ապրեցելոցն զպակասութիւն բարի մասինն, որ ի մեզ պարտիմք խոստովանութեամբ տալ զհամար սխալական յանցաւորութեան։ 2 *Եթէ յանճառելի եւ յէական բնութենէ եւ ի զաւրութենէ եւ փառաց Հաւրն ոչ պատկառեցաք իբր որդիք սիրելիք եւ կատարողք բարի կամացն, որոյ գործ է կեալն մեր եւ ի գիտութիւն ճշմարտութեան գալ։* 3 *Եւ թէ վասն արարչական սիրոյ Նորա եւ նախախնամական գթոյ ոչ բերաք պտուղս հաճոյ|212բ|ական տնկագործին մերոյ եւ պիտոյիւք դարմանոց նախախնամաւղին։* 4 *Եւ եթէ յանկաշառ դատաստանաց Նորա ո՛չ զարհուրեցաք եւ ծառայական երկեղիւ ի տէրունական եւ դողացուցիչ անուանէն*[1] *երկուցեալք, կալով ի պատուէր հրամանի Նորա։*

Ժ. 1 *Եւ արդ, որով մասամբ եւ յանցեաք, թագաւորական գոլով պատկեր եւ ոսկիաձոյլ կերպարան կազմեալք հրով հոգւոյ ի ջուրս մաքրութեան աւազանին, եւ մեղացն աղտիւ ժանգահարեալ տգեղացաք, որոց պարտ է վերստին մտանել ի բով ապաշխարութեանն եւ խոստովանել զյանցանս մեր, որովք զառողջ եւ զանցաւ բնութիւնս մեր թիւնաւք մեղացն հիւանդացուցաք։* 2 *Վասն որոյ ասէ. «Խոստո[վան] եղերուք Տեառն, զի քաղցր է»։*

ԺԱ. 1 *Արդ, ասելովն՝ «խոստ[ովան] եղ[երուք] Տեառն» Տիրական անուամբն, որ դաւանութեանն է խոստովանութիւն, եւ ահեղ դատաստանին ակնկալութիւն յայնոսիկ յորդորէ, իսկ ասելն «քաղցրն» գոլ եւ յաւիտենական զողորմութիւն, զարարչութեանն Նորա եւ զնախախնամական սիրոյն ուսուցանէ զխոստովանութիւն՝ ի հնումն եւ ի նորումս, զի քաղցրութիւն Աստուծոյ յաղթեաց ապերախտին Իսրայիղի, եւ ողորմութեամբ ի լրումն էած զուխտն, որ առ նախնիսն եւ ետ նոցա զերկիրն եւ ի նորս այնքան յաճախեաց քաղցրութիւնն, զի «Մինչդեռ մեղաւորք էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ» (Հռմ. Ե. 8) եւ ողորմած եղեւ մեզ քահանայապետ քաւութեան|213ա| միշտ, որով խոստովանիմք զբազում ողորմութիւն Նորա առ բազմամեղս, եւ զբարերարութեանն Նորա սքանչելիս առ զղջացեալսն, զի ամենայն քաղցրութիւն հետ Նորա է եւ ի Նմանէ։* 2 *Եւ ողորմութիւնն յաւիտեանական է, որով ընտրեցաք նախքան զլինելն աշխարհի, զի որքան դառնութիւն մեղացն մերոց ածեն զմեզ յանյուսութիւն, առաւելապէս քաղցրութիւնն ողորմութեանն Նորա կոչէ զմեզ ի խոստովանութիւն եւ յապաշխարութիւնն։*

ԺԲ. 1 *Իսկ զդաւանական խոստովանութիւնն անճառ աստուածութեան Նորա եւ անհասական բնութեան ցուցնէ, ասելով. «Ո՛ խաւսեսցի զզաւ-*

[1] *Զձ՛ անուն*

րութիւնս Տեառն, լսելի արասցէ զամենայն աւրհնութիւնս» (**Սղմս. ճԵ. 2**)։ **2** *Ոչ բաւական է զզաւրութիւնն պատմել, թող թէ զէութիւն բնութեան, այլ եւ ոչ զարժանաւոր աւրհնութիւն նորա լսելի առնել, վասն զի անճառելի եւ անսահմանելի է բնութիւն աստուածութեան նորա։*

ԺԳ. 1 *Եթէ զիա՞րդ միութիւն եւ երրորդութիւնն իմանի եւ ասի, կամ հասարակութիւն եւ յատկութիւն յանհասական բնութիւնն երեւի։* **2** *Եւ որպէս համագոյութիւնն խոստովանիմք Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ըստ դիմաց բաժանեալ եւ ըստ բնութեան միաւորեալ, եւ ոչ երիս սկզբունս խոստովանել ի բաժանելն, կամ ի մի դէմ՝ ի միաւորելն, այլ երրորդութիւն ի միութեանն, եւ միութիւնն յերրորդութեանն։* **3** *Եւ ասեմք զմիութիւնն յաղագս բնութեանն, եւ երրորդութիւնն վասն անձանցն յատկութեանն. հասարակութիւն*[1]*, վասն մի գոլոյ յերեսին աստուածութեանն, եւ երեքեան մի, յորս աստուածութիւն* |213բ| *եւ տէրութիւն եւ զաւրութիւն եւ գործոյ արարչութիւնն, եւ կամացն յարմարութիւն։* **4** *Իսկ յատկութիւն վասն Հաւր անծնելութեան*[2] *եւ որդւոյ ծնելութեան եւ Հոգւոյն Սրբոյ ելողութեանն։*

ԺԴ. 1 *Եւ դարձեալ խոստովանիմք զՄինն յահեղ եւ ի Սուրբ Երրորդութենէն յառաջ, քան զյաւիտեանս զծնեալն ի Հաւրէ, զՄիածինն անժամանակ եւ անմարմին էութեամբ։* **2** *Զկնի ժամանակի խոստովանիմք ի Կուսէն ծնեալ անճառաբար եւ առանց ապականութեան, ստուգապէս առեալ ի նմանէ մարմին՝ հոգւով, բանականաւ եւ մտաւք. ի յառման անդ կորուսեալ ապականութիւն բնութեան առելոյն ի յառողէն, քանզի առելոյն բնութիւն եղեւ, որ ինչ առողին էր զաւրութիւն։* **3** *Որպէս մեծն Գրիգոր Աստուածաբան վկայէ, եւ ի ձեռն այսոցիկ խոստովանի. «Եղեցի*[3] *մարմնացեալ Բանին Աստուծոյ մի բնութիւն ո՛չ զէութիւն մարմնոյն բարձեալ, զի մի շփոթեսցի անշփոթելի տնաւրէնութիւնն Քրիստոսի, այլ զապականութիւն բնութեան կորուսեալ, որով անճառելի միութիւն Բանին Աստուծոյ լինիցի։*

ԺԵ. 1 *Եւ այս է, որ առնէ զհերձուածողացն մոլորութիւն կամ յանշփոթութեան հարկաւոր բնութեամբ բաժանել, որ է ուրացութիւն փրկութեան անձանց իւրեանց։* **2** *Կամ մի միով բնութեամբ միաւորելն՝ ի բաց բարձումն ասել էութեան մարմնոյն եւ շփոթել, կամ ոչ իսկ առնուլ զկար բնութեան, որպէս Ապաւղինարէս*[4]*, կամ բնաւ ոչ իսկ առնուլ, որպէս*

---

[1] *Զձ՝ հասարակութեանն*
[2] *Զձ՝ > եւ... ծնելութեան*
[3] *Զձ՝ խոստովան եղիցի*
[4] *Զձ՝ ապողինար ասէ*

Եւտիքէսն, որ է ապախտ առնել զտնաւրէնութիւնն, որպէս եպիկուրեանցն՝ զաստուածութիւնն։ 3 *Բայց եկեղեցիք ուղղափառաց ընդ սուրբ հարցն խոստ|214ա|ովանութեան, զերկոսեանն բարեպաշտապէս խոստովանին, ճառելի եւ անճառելի դաւանութեամբ խոստովանեալք։* 4 *Վասն որոյ ասէ. «Ո՛վ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն եւ կամ լսելի արասցէ արժանապէս զաւրհնութիւնս նորա»։* 5 *Եւ դարձեալ, զաւրութիւն նշանացն, որ յԵգիպտոս, ո՛ կարասցէ խաւսել, եւ զամենայն աւրհնութիւնս, որք դարձեալքն ի Բաբելոնէ տային, ո՛ «լսելի արասցէ»։* 6 *Եւ դարձեալ. «Ո՛վ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն»։* 7 *Վասն զի ի ճշմարիտ Աստուած՝ միակն բնութիւն ո՛չ մի զաւրութիւն է, այլ բազո՛ւմ։* 8 *Եւ իւրաքանչիւրն նմանապէս զիւրն ունի, եւ զանազանապէս բաժանի ըստ ժամանակի եւ ըստ տեղւոյ եւ ըստ կերպարանացն դիմի, երբեմն տանջողական զաւրութեամբ խրատել եւ երբեմն հայրաբար գթով նախախնամել։* 9 *«Ո՛վ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն», վասն զի բազում են ո՛չ միայն մասամբք, այլեւ՝ տեսակաւ. եւ ոչ տեսակաւ միայն, այլ եւ սեռիւ, որ եւ նախ յերկուս բաժանի. յարարչականն եւ յարքունականն, զի արարչական գթութեամբ եւ արքունական դատողութեամբ զխեռեալ եւ զստամբակեալ արարածս խրատեալ հարկանէ արդարադատ Տէրն ցասմամբ։* 10 *Այլեւ խառնէ զգութն աստուածական եւ արարչական սիրոյն, զի մի խպառ կորիցէ աշխարհ։* 11 *Եւ զայս երկու զաւրութեանցս չափ եւ սահման որքանութեան. զբարկութեամբ խրատուն եւ զողորմութեան պարգեւս բարոյն, իբր զպատկեր եւ զկերպարան ամենայն աշխարհի նկարեալ ցուցանէ յերկու ազգս եւ յաշխարհս. ի փարաւոն եւ յԵգիպտոս*[1]*, յԵրուսաղէմ եւ աշխարհն պարգեւաց։* 12 *Եւ զպատիժ պատուհասի յանցաւորացն եցոյց յանարժանն բարոյ ի փարաւոն, զի մի՛ չարքն|214բ| ի մարդկանէ առաւել յանդգնեսցին։* 13 *Եւ զառատ ողորմութեան իւրոյ զշնորհս եւ զնախախնամական սիրոյն զկերպարան բարոյ եցոյց ի յԻսրայէլ, զի մի՛ բարեգործքն կարճամտեալ տագնապեսցին։* 14 *Եւ զոր աւրինակ բժիշկ հանճարեղ եւ իմաստուն զմահապարտ ոք առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ եւ ազգի ազգի կոտանաւք եւ կեղեքելով, մինչ գտանէ զամենայն յաւդուածոցն եւ զջլացն, եւ զերակացն եւ զփորոտեացն զորպիսութիւն, ի ձեռն միոյն լլկանաց՝ բազմաց արասցէ աւգուտ, զի մի խստասցին եւ հակառակեսցին իւրեանց փրկութեանն իբրեւ զնա։* 15 *Վասն որոյ,*

[1] *Զձ՛ իսրայէլ] երուսաղէմ*

*ասէր, թէ ես խստացուցից զսիրտն փարաւոնի, վասն զի ոչ սպանանեմ զնա վաղվաղակի յընդդիմանալն ինձ, այլ յաճախեցից նշանս եւ արուեստս յԵգիպտոս (**Ելք Գ.**)։* 16 *Որպէս ասեն մարդիկ, թէ ես եմ արարեալ զայդ, զի ներելով թոյլ ետու քեզ։*

ԺԶ. 1 *Արդ, ուսցին ամենայն արարածք զզաւրութիւն եւ զիրաւունս Աստուծոյ յայսմանէ, այլեւ նոյն ինքն յԻսրայիղէ, զոր երբեմն վասն արժանաւորութեան հարցն ողորմութեամբ եւ նշանաւք սքանչելեաց բարձրացոյց, եւ երբեմն վասն չարութեան նոցա եւ զպարգեւս բարերարութեանն Աստուծոյ մոռանալոյն պատուհասեալ խրատեաց, վասն որոյ*[1]*. «Ո՛ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն, լսել զամենայն։* 2 *Երանի ոյք պահ[են] զիր[աւունս] եւ առն[են] զարդ[արութիւն] յամենայն ժ[ամանակ]» (**Սղմս. ճԵ. 2-3**)։*

ԺԷ. 1 *Արդ, նախ յորդեաց, ըստ զանազան յեղանակաց ի խոստովանութիւն տիրական եւ աստուածական բարի բնութեանն եւ ամենառատ պարգեւասիրութեան։* 2 *Եւ ապա զարմացմամբ ասէ. «Ո՛ խաւսեսցի զզաւրութիւնս Տեառն եւ կամ լս[ելի արասցէ] զամենայն աւրհն[ութիւնս], որ վայել է ամենակալ Նորա տէրութեանն»։ Եւ այժմ զերանու|215ա|թեանն շնորհ խոստանայ այնոցիկ, ոյք պահեն զիրաւունս հաւատոյն եւ առնեն զարդարութիւն գործոյն։* 4 *Եւ այն է իրաւունք հաւատոյն, որք իբրեւ ծառայք մտերիմք պատուեն զՏէրն, եւ ուղեղ հաւատոյն դաւանութեամբ խոստովանին զանճառելի էութիւնն եւ զանքննելի Տէրութիւն եւ Աստուածութիւն նորա, եւ յարդարադատ իրաւանց նորա երկուցեալք եւ նովին գովելի երկեղիւն խորշին ի չարէն։* 5 *Եւ յառատաձիր պարգեւաց նորա, զոր արարչական սիրովն բաշխէ յամենայն մասանց*[2] *արարածոց եւ ի նախախնամական գթոյն, որով*[3] *պահպանին արարածք, խոստովանին հաւատով զԱրարիչն եւ զամենայնի խնամածուն եւ զդարմանիչ, եւ արդարութեան գործովք տան զպտուղ վաստակոցն, այնմ, որ տնկեաց զնոսա յայգի աշխարհիս եւ ի դրախտի եկեղեցւոյ։* 6 *Եւ զայս ո՛չ ի միում ժամու, այլ՝ յամենայն ժամ, եւ ո՛չ ի մի մասն բարեգործութեան, այլ յամենայն։* 7 *Եւ զի այս անհնար է ամենայն ումէք ըստ արժանոյն հաճոյ գտանիլ յիրաւունս հաւատոյն եւ կամ յարդարութիւն գործոյն ասէ. «Յիշեա՛յ զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քում եւ այց արա մեզ ի փրկ[ութեան քում]»։* 8 *Տեսցուք մեք զքաղցր[ութիւն] ընդր[ելոց]։* 9 *«Յի-*

---

[1] *Ճ՛ որոյ ասէ*

[2] *Ճ՛ արանց] մասանց, Զ ամենայն արանց արդարոց*

[3] *Զ սիրով] որով*

շեա զմեզ Տէր ընդ հաճոյս» (**Սղմս. ՃԵ. 4**)*, զի զազգս զայս եւ ժողովուրդս ընտրեաց Աստուած վասն արժանաւորացն, որ հաճոյ եղեն նմա, յորմէ աւետեաց զաւակն էր ծնանելոյ:* **10** *Եւ ի յոյս լաւացն եւ արժանեացն ընտրեցան յոռիքն եւ վատթարք, որպէս հող եւ քարինք եւ խեցեմորթք, վասն գոլոյ ի նոսա ոսկի եւ արծաթ, մարգարիտ եւ ակունք պատուականք:* **11** *Նոյնպէս եւ ի պատճ[առ]ս միոյ Մարիամու սրբուհւոյ՝ ազգն ամենայն, ուստի ելին եւ սուրբք բազում, մարգարէք եւ առաքեալք, եւ արդարոցն* |215բ| *դասք, որք հաճոյացան Աստուծոյ. Աբրաամ՝ աստուածսիրութեամբն եւ մարդասիրութեամբ, Իսահակ՝ հնազանդութեամբն, Յակոբ՝ ժուժկալութեամբն, Յովսէփ ողջախոհ պարկեշտութեամբն, Մովսէս՝ հեզութեամբն, եւ այլքն ամենայն իւրեանց անձնական առաքինութեամբն, որովք հաճոյացան, զի Մովսէս եւ Ահարոն, Յեսու եւ Քաղեբ մնացին ի խոստումն Աստուծոյ եւ գտան երանելիք:* **12** *Զոր եւ հայցէ մարգարէս*[1]*, թէ զոր ինչ հաճոյիցն քոց արարեր, եւ մեզ արասցես, եւ զխոստումն առ նոսա յիշեսցես եւ կատարեսցես:* **13** *«Եւ այց մեզ ի փրկութեան քում» յորժամ վասն խոստման հարցն, Փրկիչ զաւակ երեւիս աշխարհի:*

ԺԸ. **1** *«Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց»* (**Սղմս. ՃԵ. 5**)*, զոր ի նոսա լուաք, որ յիւրաքանչիւր ժամանակս քաղցր եւ հայրենի գթով վերակացու եղեր եւ հովանի ի տաւթոյ փորձանաց, զնոյնն եւ ի մեզ ցոյց զքաղցրութեանն ներգործութիւն:* **2** *Այլ եւ ընդ հեթանոսս ամենայն փրկիլ աղաւթէ, զի սոքա են ընտիր ազգքն, որպէս գլուխն առաքելոց Պետրոս ասէ. «Դուք ազգ էք ընտիր քահանայութիւն, թագաւորութիւն. ա՛զգ սուրբ»* (**Ա. Պտր. Բ. 9**)*:* **3** *Վասն զի ազգ անուանեցան Քրիստոսի եւ խառնեցան ի նմա «եւ մարմին եղեն ի մարմնոյ նորա, եւ ոսկր՝ յոսկերաց»* (**հմմտ. Եփս. Ե. 30**)*:* **4** *«Եւ գովեսցուք մեք ի ժառանգութեանն քում»* (**Սղմս. ՃԵ. 5**) *զի գովելի ժառանգութիւն եղեն Քրիստոսի. ըստ այնմ, թէ այնմ, թէ «տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն»* (**Սղմս. Բ. 8**)*:* **5** *Եւ մարգարէս ի դիմաց Փրկչին ասէ. «Ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ»* (**Սղմս. ԺԵ. 6**)*, զոր եւ հայցէ մարգարէս, թէ եւ մեք ընդ նոսա խառնեսցուք ընտրութեամբ եւ ազգակցութեամբ եւ գովելի ժառանգք լինելով:* **6** *Եւ ապա զյեղանակն մեղացն խոստովանութեան յառաջ բերէ, որովք սովոր է բարեգործակն բնութիւն շարժել ի գութ ողորմ*|216ա|*ութեան:*

ԺԹ. **1** *«Մեղա՛ք մեք եւ հարքն մեր, անաւրինեցաք եւ յանցեաք»* (**Սղմս. ՃԵ. 6**)*:* **2** *Իբր ժառանգութիւն կալաք որդիք ի հարանց զմեղանչելն, յորոց անպարտ են հեթանոսք, զի ոչ վարժեցան այնպիսի աւրինաւք իբրեւ*

[1] *Զձ հայցեմ ես] հայցէ մարգարէս*

զմեզ, եւ ոչ զայն հրաշք սքանչելեաց տեսին, որպէս եւ մեք յԱստուծոյ աւրինադրութիւն եւ ի Մովսիսի միջնորդութիւնն։ 3 *Արդ, յայնպիսի հրաշիւք եւ զարմացմամբ տուեալ աւրինաց՝ անաւրինեցաք, եւ անցանելով զպա[տ]ուիրանաւքն, որ ի նմա, յանցաւորք գտաք։* 4 *Եւ մեզ՝ նորոյ ժողովրդեանս հարկաւոր է այս մասն խոստովանութեան, զի ո՛չ միայն գրաւորական աւրինաւքն վարժիմք, այլեւ զաւետարանականն ընկալաք կենաց աւրէնս, եւ նոյն ինքն զՔրիստոս ունիմք աւրէնք, որ ի Քրիստոս մկրտեցաք։* 5 *Վասն որոյ յանցաւոր գտեալ ուրուք*[1] *յայսմ սոսկալի աւրինաց, որ քան մեծ է յանցանք մեղացն, ընդ նմին եւ պատիժ պատուհասին։* 6 *Եւ առ այս զաւրաւոր դեղ ունիմք զշնորհս խոստովանութեան, զի խոստովանելով զվատթարութիւնս գործոցն բնաւորեալ է զհետ երթալ պատկառանք եւ ամաւթ եւ մեծ զէն է ի մեղացն փաղչելոյ։*

Ի. 1 *Պատկառանք յԱստուծոյ եդեալ ի բնութիւնս մեր, զի մեզ խոտորումն ի չարեաց այնպիսի ոգոյս կիրք լինիցի, որով երկոքումք մեղք խափանին, զի բազում անգամ պատկառանք առաւել, քան զերկեւղ փաղչել ի սխալանացն դաստիարակէն։* 2 *Այլ սակայն ամաւթ զհետ երթալով յանդիմանութեանցն, ողջախոհացուցանէ զսխալեալսն՝ ոչ միւս անգամ ի նոյնն դառնալ։* 3 *Ապա բարիոք է խոստովանութիւն մեղացն, զի նովաւ զիւր անձն գոյ հնար ամաւթոյն զինու ամրացուցանել։* 4 *Զոր աւրինակ, եթէ* |216բ| *ոք անչափ որկորաժետութեամբ դժուարահալական մաղձս ոմանս յինքեան ժողովէ, եւ ապա այտուցեալ մարմինն հատանելով եւ խարանաւք բժշկիցի հիւանդութիւնն, իբրեւ զդաստիարակ ոմն անառակութեամբ յառաջի կեանս զսպի խարանին ի վերայ մարմնոյն տեսանէ, նոյնպէս որ արձանացուցանէ զինքն զգաղտնիսն խոստովանելով, յիշատակաւ ամաւթալի իրաց՝ ի խրատ յառաջիկայ կեանս։* 5 *Եւ կամ, զոր աւրինակ, եթէ ոք*[2] *զդեղեալ մեղր անյագաբար ուտիցէ եւ ի չար մաղձ նմա փսխիցի, ի փսխելն առնուցու զխառնել դեղին զգայութիւն, արտաքս թքանելով ընդ մեղուն։* 6 *Եւ յաղագս այնորիկ յիշատակաւ տաղտկալեացն ատեայ եւ զմեղրն, որոյ յագեցութիւն դեղոյն զորձալն գործեաց։* 7 *Նոյնպէս որ հեշտալի ցանգութեամբն յագի, ի խոստովանելն, որպէս մահացու դեղի զհամն առնելով՝ զգործեցելոցն զամաւթ դժուարի եւ ատէ զախտաւոր կենաւք կեանս զայսոսիկ։* 8 *Ըստ Սողոմոնի, եթէ «Ատեցի զկեանս, զի չար ինձ արարածն եղեւ ընդ արեգակամբս»* (**Ժղվ. Բ. 17**), *ոչ այլ ումէք ասէ, այլ՝ «ինձ ինքեան» զի եկաց մնաց յեղելոցն եւ ոչ ինչ,*

---

[1] *Ա ուրուք] ուսուք*
[2] *Զձ՛ > եթէ ոք*

բայց միայն «զոր ինչ գործեցի»։ 9 *Զնոյն եւ մարգարէս զհնոյ ժողովրդեան պատմելով զյանցանս եւ զնոցին մեղանացն զգործ, ի մեզ ի խրատ եւ յուսում խոստովանութեան։* 10 *Որպէս եւ ասէ. «Մեղաք մեք եւ հարքն մեր. անաւրինեցաք եւ յանցեաք» եւ սկսանի թուել զյանցանսն։* 11 *«Հարքն մեր յԵգիպտոս ոչ իմացան զսքանչելիս քո»* (**Սղմս. ճԵ. 7**)*, զոր ի բարեգործակ զաւրութեանցն Աստուծոյ սքանչելիք, որ առ հարսն մեր, եւ զպատժողական զաւրութեանցն խրատ,* |217ա| *որ առ թշնամիսն, ո՛չ իմացան, ասէ, հարքն մեր։* 12 *Եւ զի ամենայն աշխարհի էր խրատ, նոցայն պատուհաս, զոր Ժ. (10) թուով կրեցին եգիպտացիքն*[1]*, զի Ժ. (10) են արարածք, եւ կատարումն ամենայն թ[ու]ոց Ժ.եկն (10) է, եւ Ժ. (10) զգայութիւնք ի մեզ հոգւոյ եւ մարմնոյ։* 13 *Վասն այնորիկ Ժ. (10) հարուածաւք խրատեաց զարժանիսն պատուհասի։*

ԻԱ. 1 *Առաջին, պատժողական զաւրութիւն, որով եհար զնոսա, ջուրք գետոյն, զոր յարիւն դարձոյց, զի ի ձգելն Ահարոնի զգաւազանն ի վերայ ջրոյն, եղեւ արիւն ամենայն ջուրքն, որք կային յամենայն սահմանսն Եգիպտոսի, յայտ արարեալ, եթէ ո՛չ է մոռացեալ Տէր զարիւն տղայոցն, որոց փոխարէն ետ նոցայ արիւն զէ. (7) աւր։* 2 *Եւ մեռան ամենայն ձկունքն, որ ի ջուրսն, գուշակ մահու անդրանկաց նոցա, եթէ ոչ զղջասցին* (**տե՛ս Ելք Է. 20-21**)*։* 3 *Մի բնութիւնն ջրոյն դառնայր սքանչել[ե]աւք յորակութիւնս Բ. (2), ըստ արժանեացն եւ անարժանից, յաւրինակ Տեառն մերոյ մի եւ նոյն գոլով «ի գլորումն եւ ի կանկնումն*[2] *բազմաց»* (**Ղկ. Բ. 34**) *եւ մարմինն, որ ի կեանս եւ յանապականութիւն, եւ յերկուց սքանչելապէս միաւորութիւն։*

ԻԲ. 1 *Երկրորդ հարուած. դատեցաւ զնոսա գորտովք, զի գարշեսցին, վասն զի զազրագործք էին եւ բորբոսեալ ամենայն աղտեղութեամբ, եւ գարշք երեւեալ առաջի Աստուծոյ։* 2 *Եւ որպէս թէ տղայքն, զոր հեղձուցին ի ջուրն, կենդանացեալք ըստ թուոյ բազմութեանն, մտանէին յամենայն անաւթս նոցա։* 3 *Եւ յաղաղակելն Մովսէսի առ Տէր, սատակեցան գորտքն, զի հանգիցեն հարուածեալքն։*

ԻԳ. 1 *Եւ վասն զի ո՛չ զղջացան* (**տե՛ս Ելք Ը. 6-7, 13**)*։* 2 *Երրորդ հարուած հանէ նոցա զմունն, հարկանելով Ահարովնի զհող երկրին գաւազանաւն, եւ ել ի մարդ եւ յանասուն, նեղեալ զնոսա, որ եւ թռչէր իսկ ի յանդ*|217բ|*իմանութիւն մանրակծու բարուց նոցա, եւ կծուակիծ եւ խոցոտիչ բանիցն* (**տե՛ս Ելք Ը. 16-18**)*։*

---

[1] *Ձ՝ > եգիպտացիքն*
[2] *Ջ յանկումն] ի կանգնումն*

ԻԴ. 1 *Չորրորդ հարուած շանաճանճն յամենայն Եգիպտոս, բայց ի Գեսեմ, ուր Իսրայէլ էր, ոչ երեւեցաւ, զոր եւ մանր զեռունքն ճանաչէին զբարւոյ եւ զպատժոց արժանիսն, ի յանդիմանութիւն շնաբարու ազգին, եւ ի մոլիսն ցանկութեամբ ի գործ շնութեան:* 2 *Վասն որոյ ի շանց ելեալ թիւնալից ճանճքն, սատակէին զբազումս ի կենդանեաց՝ զմարդ եւ զանասուն, զի իբրեւ զշունս կատաղիս էին առ Իսրայէլ (* **տե՛ս ելք Ը. 24***):*

ԻԵ. 1 *Հինկերորդ հարուած յանցաւորացն*[1] *մահ անասնոցն (* **տե՛ս ելք Թ. 6***), վասն զի վարեցան Ե. (5) զգայութեամբք իբրեւ զանասունս, ոչ ունելով զբանն եւ զիմաստութիւնն առաջնորդ, այլ մատակախազք եղեն իբրեւ զձի, եւ խեռաբարու՝ իբրեւ զէշ, ծամածուռ՝ իբրեւ զուղտ, եւ ոխապահ ընդ Իսրայէլ:* 2 *Եւ անասնոցն տայ զմահն ցասմնական, խնայելով ի բանականսն, թերեւս զղջասցին:*

ԻԶ. 1 *Վեցերորդ. կեղն քերքեշե[ա]լ մորթոց երեսաց մարմնոցն, եւ խաղաւարտք ի վեր եռացեալ քրքջե[ա]լ մորմոքէին, որ տարածեցաւ ընդ ամենայն Եգիպտոս, եւ եղեւ այն ի մոխրոյ հնոցի, զոր ցանեաց Մովսէս. (* **տե՛ս ելք Թ. 9-11***) ի մի տեղի առնէր զնշանսն եւ յամենայն երկիրն տարածանէր, յաւրինակ խաչին նշանի, որ միում տեղւոջ կանգնեալ՝ ծաղկեցաւ եւ տիեզերք ամենայն լցան պտղովք նորա:* 2 *Եւ առաւել ի կախարդսն լինէր հարուածք ցաւոցն:*

ԻԷ. 1 *Եւթներորդ, կարկուտն հրախառն (* **տե՛ս ելք Թ. 23-25***):* 2 *Երկու հակառակք միաբանեալ՝ հուր եւ ջուր, սառն եւ հուր ի միասին կապեալ:* 3 *Կարկուտն բեկանէր եւ հուրն այրէր, զի ցուր|218ա|տ էին յատել զԻսրայէլ, եւ ջերմ ի տանջել:* 4 *Եւ ցուրտք ի սէրն Աստուծոյ, եւ ջերմ՞ ի սէր սնոտեացն:* 5 *Եւ զի խիստ բանիւ զաստուածապաշտսն կոշկոճէին, վասն որոյ հպարտքն բանիւ եւ հայհոյիչքն խրատին կարկտիւ:* 6 *Այլեւ բարբառս եւ ձայնս պատառման ամբոց դողացուցիչս զարհուրեցուցանէր զնոսա:* 7 *Բայց խառնեաց զողորմութիւն ընդ բարկութեանն, ասելով՝ ժողովեսցին ի տուն մարդ եւ անասուն (* **տե՛ս ելք Թ. 19***):* 8 *Եւ որք հաւատացին՝ ապրեցան ի բարկութենէն:* 8 *Եւ խնայելով ի բանականսն եհար զտունկս եւ զբոյսսն եւ զանասունսն, զոր իբրեւ զԱստուած պաշտէին:*

ԻԸ. 1 *Ութերորդ հարուած մարախով տանջէ զնոսա, վասն բազմապատիկ չարեացն:* 2 *Եւ զանյագ եւ զամենակեր գողք եւ կախարդք յարարս այլոց եւ ի վաստակս որդոցն Իսրայիղի:* 3 *Եւ եկն մարախն հողմով հարաւոյ, սնեալ այլ ուր, ի պատուհաս աշխարհի եւ առ փարաւոն եւ յԵգիպտոս բերեալ, որ եկեր զմնացեալն ի կարկտէն, զոր եւ մարգարէս յաւելու*

---

[1] *Զ անցաւորացն*

խառնիճ, որ է այլ մանր, եւ ուտէ զբոյս երկրին, զի լի էին դառն ճըճիւք սիրտք նոցա, եւ բոյս բանական բարուց ո՛չ էր ի նոսա։ 4 *Եւ ժանգ եւս ասէ, զի ժանգով նենգութեան լի էին միտք նոցայ, զոր մեղա ասելն փարաւոնի եւ հայցուածքն Մովսէսի, եւ հողմ Հիւսիսոյ տարեալ ելից ի ծով (տե՛ս ելք Ժ. 13-19)։*

ԻԹ. 1 *Իններորդ հարուած խաւար եւ մութն, որ եղեւ ի վերայ նոցա զերիս աւուրս, որ շաւշափելի ասի, վասն թանձրութեանն. կամ զի շաւշափելով եւ խարխափելով շարժէին, զի նստեալն ոչ կարեր յառնել, եւ որ յոտն էր՝ ոչ կարէր նստել։* 2 *Յայտ է, թէ* |218բ| *թանձրացաւ աւդն*[1]*, եւ հուր եւ լոյս ճրագի ոչ ներգործէր, նշանակ խաւարման մտաց նոցա, ի պաշտաւն գարշելի զեռնոցն (տե՛ս ելք Ժ. 22-23)։* 3 *Բայց Իսրայիղի լոյս էր, զի զլոյս աստուածպաշտութեանն ունէին։*

Լ. 1 *Եւ ապա Ժ.երորդ (10) հարուած՝ մահ անդրանկացն (տե՛ս ելք ԺԲ. 29-30)։* 2 *Զի յայնմ մեծախորհուրդ գիշերի, յորում ելին յԵգիպտոսէ որդիքն Իսրայիղի, եւ արեամբ գառանցն աւծեալ զսեմս դրանցն եւ զբարաւորս՝ անդրանիկքն Իսրայիղի փրկեցան։* 3 *Եւ էանց Տէր սատակել զանդրանիկ եգիպտացոց, զի զանդրանիկ խորհուրդ աստուածպաշտութեան սպանին յանձինս իւրեանց։* 4 *Որ եւ Տէրն իւրով խոնարհութեան գալստեամբն զանդրանիկ խորհուրդն սատանայի բառնալոց էր՝ զհպարտութիւն եւ զկռապաշտութիւն, եւ տանջել զսիրողսն այնպիսի ախտից անդ՝ ի մարդոյ մինչեւ յանասուն, եւ Քրիստոսիւ ի գիտնոց մինչեւ յանգէտս։* 5 *Զայսպիսի մեծասքանչ խորհուրդ եւ զարքունական եւ զարարչական զզաւրութեանն գործ սքանչել<ել>եաց։*

ԼԱ. 1 *Ասէ մարգարէս, եթէ՝ «հարքն մեր յԵգիպտոս»՝ տեսողքն այսմ սքանչելեաց «ո՛չ իմացան», եւ «բազում ողորմութիւնս քո», որ առ նոսա, «ո՛չ յիշեցին»։* 2 *Որ մի եւ նոյն գիշեր աստուածատեսաց ազգին առաջնորդեաց սեամբ լուսոյ, փարատիչ խաւարի, եւ սեամբ ամբոյ ի տուէ, ո՛չ միայն առաջնորդ, այլեւ հովանի եւ ծածկոյթ լինել ի տապոյ արեգականն, նկարագրելով զՀոգին Սուրբ, որ հովանի լինի եկեղեցւոյ՝ աւետարանին լուսով ի գիշեր կենցաղոյս, եւ ցաւղաւոր ամբով մարմնացելոյն ի ծագման մեծի եւ աներեկ աւուրն, պահելով ի տապոյ աշխարհակէզ գեհենոյն եւ որպէս սիւն ամպոյն զնոսա ճանաչէր եւ երթայր զհետ եւ* |219ա| *Հոգին Սուրբ զծնեալն յինքենէ։*

ԼԲ. 1 *Արդ այսպիսի երախտեաց եւ անվճար բարեաց նորա*[2] *պարտա-*

---

[1] *Ա աւթն, ԱԲԳ.՝ օդն*
[2] *Զձ՛ > նորա*

կանք գոլով՝ ո՛չ գոհացան։ 2 *Այլ ասէ. Բարկացուցին զքեզ յանցանելն իւրեանց ընդ ծովն կարմիր (* **Սղմս. ճԵ. 7** *)։* 3 *Զի յելանելն փարաւոնի զհետ նոցա Զճ. (600) կառաւք, եւ ամբն անջրպետ էր ի մէջ նոցա, զի ամբարձաւ հրեշտակն Աստուծոյ եւ եկաց յետուստ կողմանէ, հանդերձ ամպովն բաժանել ի մէջ Իսրայիղի եւ Եգիպտոսի։* 4 *Եւ Մովսէս ձգեալ զխաչանիշ գաւազանն ի վերայ ծովուն, ասէ. «Այիա*[1]*, Աստուած իմ առաջի իմ. յաջմէ ձգեալ ասաց». Շրաիայ, դու հաներ զմեզ Աստուած։* 5 *Ի ձախն ձգեալ ասաց. «Ադոնիա՛, Տէրդ տէրանց ընդ մեզ»։*

ԼԳ. 1 *Եւ ցամաքեցաւ յատակ ծովուն լայն եւ ընդարձակ, մինչ ԲԺ. (12) ցեղքն Իսրայիղի հանդէպ միմեանց մտին։ «Եւ ջուրն պարիսպ էր ընդ աջմէ եւ ընդ ահեկէ» զի որ արար նմա լոյծ եւ թոյլ բնութիւն, աստ դարձեալ փոխեաց ի պնդութիւն (* **տե՛ս ԵԼ ԺԴ. 21-22** *)։* 2 *Ոչ ԲԺ.ան (12) փողոց, ըստ ոմանց, այլ ըստ Դաւթի հերձ զծովն եւ բաժանեաց յերկուս մասունս։* 3 *Եւ գիտէր, զի բարկացուցանելոց էին զնայ*[2] *չար գործովք։* 4 *Բայց փրկեաց զնոսա, վասն անուանն իւրոյ, զի ողորմած է եւ բարերար։* 5 *Զի ծանիցեն զզաւրութիւնս նորա, ընդելանան եւ վարժին, ասէ, եւ ծանիցեն ի զաւրութենէն՝ զզաւրաւորն, եւ ի սքանչելեացն՝ զսքանչելագործն, եւ ի բղխմանէ բարեացն՝ զբարերարն։*

ԼԴ. 1 *«Սաստեաց ի ծով Կարմիր, եւ ցամաքեցաւ»* (**Սղմս. ճԵ. 9**)։ 2 *Խստութեամբ հողմոյ սաստեաց ծովուն, եւ ցամաքեցաւ, զի հողմն քակեաց զգիշերն ամենայն զջուրսն եւ բաժանեաց յայս կոյս եւ յայն, եւ առաջնորդեաց որդոցն Իսրայիղի անորմ եւ անցանկ, իբր, ընդարձակ անապատ* (**Սղմս. ճԵ. 9**)։ 3 *Եւ կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց* |219բ| *նոցա, եւ փրկեաց ի ձեռաց թշնամեաց նոցա, զի ատէին իսրայէլացիքն զեգիպտացիսն, գիտելով եթէ թշնամիք են իւրեանց։* 4 *Վասն որոյ ծածկեաց ծով զնեղիչս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ ապրեցաւ։* 5 *Նոյն հողմ՝ բաժանիչ ծովուն, ի պատժողական զաւրութենէն Աստուծոյ, վարէր ընդդէմ եգիպտացոցն, եւ վարէր զանիւս կառաց նոցա, մինչեւ մտին ի մէջ նոցա, կարծելով թէ եւ նոցա գնալի է որպէս աստուածատես ազգին։* 6 *Վասն որոյ եհան զԻսրայէլ ի միջոյ նորա, զի յաւ[իտեան] է ողորմութիւն նորա եւ ընկղմ[եաց] զփարաւոն եւ զզաւրս իւր։*

ԼԵ. 1 *Իսրայիղի ողորմութիւն եւ Եգիպտ[ոսի] կորուստ՝ վասն արդար դատաստանին Աստուծոյ։* 2 *Զի սերմն սուրբ Աբրաամու հեղձուցանէին, եդ Աստուած զողորմութիւնն ի կշիռս, զի ոչ էած զմտաւ փարաւոն զբաժանիչ ծովուն, եւ ոչ զայն, թէ չէ նմա գնալ ի այն ճանապարհ, վասն որոյ*

---

[1] *Զճ՛ շրայիայ] այիա*
[2] *ճ՛ զնոսա] գնա*

դարձոյց Աստուած զլոյծ եւ զտարած ջուրն ի սահմանեալ բնութիւն իւր, եւ թաւթափեաց ի նմա զեգիպտացիսն եւ իսրայէղցիքն ի նոյն հոգւոյ առին նո՛ր լեզու, մոռանալով զեգիպտացին, զի զհայրենին յԵգիպտոս էին մոռացեալ։ 3 *Եւ զոր առին նման էր հայրենի լեզուին, եւ աստ կոչեցան եբրայեցիք, որ է «անցիք»։* 4 *Եւ կամ նոր լեզու, զոր ոչ գիտէին եւ լուան, զայն ասէ, զի Աստուծոյ խաւսս չէին լուեալ եւ լուան*[1]*, զոր ոմանք զքաղթեացին ասեն, եւ այնու երգեցին զաւրհնեսցուք։*

ԼԶ. 1 *Վասն որոյ ասէ. «Հաւատացին ի բան Նորա»* (**Սղմս. ՃԵ. 12**) *եւ ոչ ի նա, այլ առ ժամանակն լսելով զխոստումն։* 2 *Եւ աւրհնեցին զաւրհն[եալն] ո՛չ ի սրտից իւրեանց, այլ ուսեալք ի Մով[ս]իսէ, զի Մովսէս արանց, եւ Մարիամ կանանց առաջնորդէր յաւրհնութիւնսն։* 3 *«Վաղվաղ|220ա|եցին*[2] *եւ մոռացան զգործս նորա»։* 4 *Զայս ամենայն գործս սքանչելեաց մոռացեալ, ապերախտք եղեն։* 5 *Եւ յետ ԵԺ.ան (15) աւուր ընդ ծովն անցից Իսր երկուսն տրտնջեն վասն կերակրոյ։* 6 *Եւ ոչ անսացին խորհրդոց Նորա։* 7 *Այս էր խորհուրդն*[3]*, զի փորձէր զնոսա կարաւտութեամբ հացի եւ ջրոյ։* 8 *Յանկացան զցանկութիւն յանապատի։* 9 *Յայնպիսի տեղւոջ, ուր Աստուած յայտնապէս էր ընդ նոսա։ Եւ փորձեցին զԱստուած յանջրդի։* 10 *Ի Մեռայն փորձեցին, զի յորժամ եկին ի ջուրսն Մեռայի, որ էր դառն, վասն որոյ Մեռայ եւ դառնութիւն կոչեցաւ, եւ եցոյց տէր Մովսիսի փայտն որ ստեղծեալ, որով քաղցրացոյց զջուրն։* 11 *Ջուրն դառն՝ նշանակ բնութեանս, որ դառնացեալ էր մեղաւք, զոր առ Տէրն եւ արկ ի նմա զփայտ խաչին։* 13 *Փայտ ի հացն մեր արկեալ* (**տե՛ս Երմ. ԺԱ. 19**)*, ըստ մարգարէին, եւ փոխեաց զդառնն ի քաղցրութիւն։*

ԼԷ. 1 *Նոյնպէս եւ վասն կերակրոյ ցանգացան եւ փորձեցին զՆայ։ Ըստ այնմ, «Փորձեցին զԱստուած ի սիրտս իւրեանց, առ ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց»* (**Սղմս. ՀԷ. 18**)*։* 2 *Ոչ խնդրեցին իբր ի կարողէ, այլ իբր զփորձողս, որպէս թէ ասեն. «Եթէ ոչ տացէ, զոր խնդրեմք, ոչ առնեմք՝ զոր ասեն»։* 3 *Վասն որոյ ետ նոցա զխնդրուածս նոցա. առաքեաց զլիութիւն յանձինս նոցա։* 4 *Ըստ այնմ եւ ասէ Տէր. «Տաց դոցա հաց ընդ առաւաւտս, եւ միս՝ ընդ երեկս»*[4] (**Ելք ԺԶ. 8**) *զի վասն այնորիկ աղաւթիւք զառաւաւտն առ Աստուած արասցեն եւ ի գիշերի գոհասցին զհանգուցչեն եւ զտուողէն աւուրն ի գործ մարդկան։ Եւ որպէս Հ. (70)*

---

[1] *Ջձ՛ > զայն... եւ լուան*
[2] *Ջ վազվազեցին] վաղվաղեցին*
[3] *Ջ վասն խորհրդոց*
[4] *Ճ՛ ընդ երեկո*

*երորդ սաղմոսին ասէ. «Զհաց երկնից ետ նոցա եւ զհաց հրեշտակաց կերան մարդիկ» (***Սղմս. ԻԷ. 25***):* 6 *Կամ զի հրեշտակաց մաքրութեան վայել էր, կամ զի միջնորդութեամբ հրեշտակաց տուաւ:* 7 *Եւ նոքա ասեն, «զի՞նչ է սայ»:* 8 *Եւ մանանայ կոչեցաւ կամ վասն մանրութեան |220բ| կամ թարգմանի «զի՞նչ սայ» որպէս եւ հրեայքն Տեառն ասէին. «Զի՞նչ նշան ցուցանես, հարքն մեր մանանայ կերան» (***Յվհ. Զ. 31***):* *Եւ ի ժամ երեկոյին լորամարգ տայր նոցա, որոյ համն նման էր մսի խոզոյ, որում ցանգային, եւ պարարտութիւն գիրութեան:* 10 *Եւ որպէս մանանայն հրաշք է, նոյնպէս եւ լորամարգն. նո՛ր ի ծովէ գոյաւորեալ, գայր աւդով եւ հողմով հարաւոյ եւ դադարէր հիւսիսոյ, ըստ այնմ. «Տեղեաց ի նոսա միս որպէս զհող եւ որպէս զաւազ ծովու զթռչունս թեւաւորս, զոր արկ ի մէջ բան[ակի նոցա] եւ, շուրջ զվրանաւք նոցա» (***Սղմս. ՀԷ. 27***), զի մի հեռի գնալովն աշխատիցին:* 11 *Եւ զայս վասն տրտնջելոյ նոցա բարկութեամբ ետ, աստի եւ անտի աւուր միոյ ճանապարհ, Բ. (2) կանգնաչափ թանձր, կամ Բ. (2) կանգնաւ բարձր երեւէր, զոր եւ մանր տղայքն կարէին առնուլ:* 12 *Եւ զի յուսահատեցան չլինել վաղիւն կոտորեցին եւ ապխտեցին, որպէս ասէ. «Առաքեաց զլիութիւն յանձինս նոցա» (***Սղմս. ՃԵ. 15***), զի զամենայն ինչ լիութեամբ ետ եւ ոչ կարաւտիւ, եւ ո՛չ գոհացան:* 13 *Եւ բարկացաւ Տէր, եւ հարուածեալ մեռան յոլովք:* 14 *Եւ կոչեցաւ տեղին գերեզման ցանգութեան եւ հրայրեաց, զի հուր ել ի Տեառնէ եւ այրեաց զմասն ինչ ի բանակէ նոցա:* 15 *Արդ, սոքա որ կերան զմանանայն, եւ արբին ջուր ի վիմէն. մանանայն մարմնոյն Տեառն աւրինակ, եւ ջուրն ի վիմէն կողահոս աղբիւրն:*

ԼԸ. 1 *Ասէ. «Բարկացուցին զՄովսէս ի բանակի» (***Սղմս. ՃԵ. 16***):* 2 *Զայնպիսի հեզն եւ զքաղցր ոգին:* 2 *Ի բարկութիւն շարժեցին եւ զԱհարոն սուրբ տեառն, որ եւ զնա ընտրեաց Աստուած:* 3 *Վասն որոյ ասէ. «Բացաւ երկիր եւ եկուլ զԴադան» (***Սղմս. ՃԵ. 17***):* 4 *Վասն հպարտութեան բարուց նոցա կրեցին զայն պատուհաս ի Տեառնէ, զի բացին զբերանս իւրեանց ի հայհոյութիւնն Աստուծոյ, եւ որ յԱստուծոյ տուեալ նոցա առաջնորդ, նորանշան եւ խայտ|221ա|առակ կորստեամբ կորեան:* 6 *Սոքա ի ցեղէն Ռուբենի էին, եւ որպէս զանդրանիկ՝ խնդրէին զիրիցութիւն եւ զառաջնորդութիւնն Մովսիսի, որ փոխանակ առին զանէծս հաւրն Յակոբ, իբրեւ զջուր մտեալ ի հող, եւ չեռալ ի վեր:* 7 *«Եւ հուր վառեցաւ ի ժողովս նոցա, եւ բոց մաշեաց զմեղ[աւորս]» (***Սղմս. ՃԵ. 18***):* 8 *Զի Կորխ ղեւտացի էր, ի ցեղէն Կահաթու, եւ նախամեծար, քան զայլսն եւ խնդրէր զպատիւն*

Ահարոնի։ 9 *Որ եւ ՄԾ. (250) այր ժողովեցան ի վերայ Ահարոնի, յորոց ժողովս հուր վառեցաւ, որ եվ ի բուրվառաց նոցա եւ այրեաց զնոսա* (**տե՛ս Թիւ. ԻՁ. 10**)։ 10 *«Եւ բոց մաշեաց զմեղ[աւորս]», զի իբրեւ զծծումբ լինի մեղքն հրոյն։* 11 *Զոմանս երկին, եւ զկէսս երկիր ապականեաց, զի ասաց «Հուր ելի Տեառնէ»* (**Ղեւ. Թ. 24**)։ 12 *Ի վերուստ է իմանալ, զի քահանային մեղքն մանաւանդ շարժէ զերկին, զայրացուցեալ զհրեշտակս, որոց նմանող պարտ էր լինել։*

ԼԹ. 1 *Իսկ զԴադան, որ երկրաւոր իշխանութիւն խնդրէր, երկիր պատժեաց զանարժանն։* 2 *Եւ Կորխ երկնաւոր խնդրէր, յերկնից պատուհասեցաւ։* 3 *Իսկ բուրուառն Ահարոնի ոսկիացաւ, նշանակ աստուածահաճոյ խնկարկութեանն եւ զկատաղեալսն ի վերայ նոցա եւ զկուտեալսն սկսաւ Տէր սատակել։* 4 *Եւ Ահարոն կացեալ ի մէջ՝ քաւէր*[1] *բուրուառաւն, կալով ի մէջ մեռելոց եւ կենդ[անեաց] միջնապարիսպ, նմանութիւն Փրկչին, որ եկաց ի մէջ մեռ[ելոց] եւ կենդ[անեաց], զմեռելոցն զհոգիսն ազատելով, եւ զկենդանիսն ի մեղաց եւ ի ցաւոց բժշկելով։*

Խ. 1 *«Արարին զորթն ի Քորեբ, երկիր պագին պատկերի եւ փոխեցին զփառս իւրեանց, նմանութեան որթուն խոտակերի»* (**Սղմս. ՃԵ. 19**)։ 2 *Քննել պարտ է զառաւել չարութիւն նոցա, թէ յոր|221բ|ո՞ւմ ժամու եւ յո՞ր տեղւոջ արարին զայսպիսի մեծ լրբութիւն։* 3 *Զի յորժամ մեծն Մովսէս եւ պաշտաւնեայ նորա Յեսու ելին ի լեառնն, եւ զծերսն Հ. (70) թողու[ն] առ լերամբն, եւ զԱհարոն եւ զՈվր ընդ ժողովրդեանն։* 4 *Եւ ծածկեաց զլեառնն ամպով, զի լեառն որպէս տաճար էր Աստուծոյ, ծածկի ամպով, զանճառութիւնն Աստուծոյ յայտնելով, զի ամբ եւ մեգ շուրջ է զնովաւ։* 5 *«Եւ իջին փառքն Աստուծոյ ի լեառնն»* (**տե՛ս ելք ԻԴ. 16**), *որ են անմարմին զաւրք հրեղինացն, զի փառք թագաւորի է զաւրքն իւր։* 6 *Այլ եւ զհուրն եւ զամպն փառք կոչէ։* 7 *Եւ վեց աւր վաստակէ Մովսէս արտաքոյ ամպոյն, եւ յէ.անն (7) ի ներս ի յամբն կոչէ, զի պատուել կամեցաւ զՄովսէս, քան զԱդամն առաջին, զի նա ի հողոյ եւ ի Զ. (6) աւրէին ստեղծաւ, եւ սա ի հրոյ եւ յէ. (7)եանն։* 8 *«Եւ անդ էր զԽ. (40) տիւ եւ զԽ. (40) գիշեր առ Աստուծոյ»* (**ելք ԻԴ. 18**) *վասն զի լաւագոյն ծնունդ կամէր ծնանել զնայ։* 9 *Ըստ քանիաւնութեան աւուրց շնչաբերութեան արուի յամէ՛ անդ, մինչեւ կատարեալ հոգեւորեսցի եւ ծնցի մարդ երկնաւոր, հոգին ի լուսոյ եւ ի հրոյ նորոգեալ, եւ մարմինն ի գիշերոյ եւ յամպոյ։* 10 *Եւ հրամայեաց նմա գրել կարգաւ ի հիմնարկութենէ զլինելութիւն աշխար-*

---

[1] *ձ՛ > քաւէր*

հի, զոր եցոյց առաջի նորա մանրամասնաբար զաւուրս Խ. (40)։ 11 *Եւ ցուցանէ նմա զնիւթ եւ զձեւ եւ զկազմուած խորանին, ուսուցանէ եւ զաւրինակ քահանայական զգեստուն եւ զամենայն սպասուց եւ զարդուց խորանին, եւ զարկղին կտակարանաց։* 12 *Եւ յետոյ յամենայնի տայ նման*[1] *երկուս տախտակս քարեղէնս, գրեալ աստուածային մատամբն, ոչ ի զգալի մատունս կազմելով, այլ արարչական հրամանաւն այլ մատունք զարու|222ա|եստն յայտ առնէ։*

ԽԱ. 1 *Իսկ ի յամելն Մովսիսի յայնպիսի աստուածահրաշ գործոցն տեսութիւն, յայնժամ գործեցին ժողովուրդն զայնպիսի յանդգնութիւնն, վասն զի կարաւտին ի պաշտաւն եգիպտացւոցն։* 2 *Կուտեցան ի վերայ Ահարոնի եւ ասեն. «Արա՛ մեզ աստուածս, որ երթայցեն առաջի մեր, զի Մովսէսն այն, որ եհան զմեզ յերկրէն*[2] *եգիպտ[ացւոց], ոչ գիտեմք զի եղեւ նմա» (**Ելք ԼԲ. 1**)։* 3 *Եւ բազում անգամ ողոքեալ*[3] *Ահարոն, ո՛չ լսեն նմա։* 4 *Ապա ասէ. «Կողոպտեցէ՛ք զզարդս կանանց եւ ուստերաց եւ դստերաց ձերոց, եւ բերէք առ իս» (**Ելք ԼԲ. 2**) թերեւս թէ խնայեսցեն։* 5 *Իսկ նոքա բորբոքեալ ցանկութեամբ բերին վաղվաղակի։* 6 *Եւ Ահարոն ընկեց զայն ի հուրն։* 7 *Գիտելով սատանայի զի ցանկութիւն նոցա յարջառսն եգիպտացւոց էր տպաւորեաց յորթ։* 8 *Եւ կոչեաց Ահարոն քանդակագործս եւ ետ գործել ի կերպս որթոյ։* 9 *Եւ թէպէտ նոքա բազումս խնդրեցին, թէ արա մեզ աստուածս, այլ զաւրութիւն Տեառն ո՛չ ետ թոյլ ի բազումս պատկերանալ, զի ի միոյն կարծեաց մի աւտարասցին։* 10 *Սակայն նոքա ի բազմաստուած ձայնէն ոչ*[4] *կացին ի բաց այլ ասեն. «Այս են աստուածք քո Իսրայէլ, որ հան[եցէր] յԵգիպտոսէ»։* 11 *«Եւ ասաց Ահարոն՝ Տաւն Տեառն է վաղիւն» (**Ելք ԼԲ. 4-5**), ակն ունելով գալստեանն Մովսէսի։* 12 *Իսկ նոքա առաջի որթոյն նստան յուտել եւ յըմբել, եւ յարեան ի խաղալ, զի հաճեցան ի գործն։*

ԽԲ. 1 *Եւ այս է, որ ասէ. «Արարին զորթն ի Քորեբ» (**Սղմս. ՃԵ. 19**)։* 2 *Յայնպիսի պատուեալ յԱստուծոյ տեղի, ուր կային փառքն Աստուծոյ Իսրայիլի։* 3 *Եւ երկիր պագին պատկերի, ոչ որթոյ կենդանւոյ, այլ պատկերի որթոյ։* 4 *Եւ փոխեցին զփառս իւրեանց զԱստուած, զի Աստուած է փառք մարդոյ, եւ գործն աստուածսիրութեանն |222բ| զայն նմանութեան որթոյն խոտակերի փոխեցին։ Ո՛ մեծի լրբութեան, որպէս Պաւղոս ասէ. «Փոխեցին զփառս Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելոյ» (**Հռմ.***

---

[1] *Զձ՛ > նմա*
[2] *Զձ՛ > յերկրէին*
[3] *Զձ՛ ողոգել զնոսա*
[4] *ձ՛ ի բազմաց ձայնէն*

Ա. 23)։ 2 «Մոռացան զԱստուած կենարարն իւրեանց, որ արար զմեծամեծս իւր յԵգիպտ[ոս]» որպէս եւ ասացաք զմեծամեծս գործս եւ զնշանսն, զոր արար անդ, եւ «Զսքանչելիս իւր յերկիր Քամայ եւ զահ իւր ի վերայ Կարմիր ծով[ուն]» (**Սղմս. ՃԵ. 22**) զարմանայ, թէ զորքան եւ զորպիսի իրս մոռացան։ 3 Վասն որոյ ասաց սատակել զնոսա, թէ ոչ Մովսէս ընտրեալ կայր առաջի նորա։ 4 Վասն զի յորժամ իջանէր Մովսէս ի լեառնէն, ազդ արար Աստուած Մովսիսի զգործս նոցա, թէ անաւրինեցաւ[1] ժող[ովուրդ] քո, զոր հան[եցեր] յԵգ[իպտոս]է։ 5 Նմա կարդաց «զժող[ովուրդ] յիշէ» եւ (**Սղմս. ՀԳ. 2**) զԵգիպտոս, յուշ առնելով զաշխատութիւնս նորա, զի զնա ի գութ եւ ի բարեխաւսութիւն շարժեսցէ։

ԽԳ. 1 Եւ ասէ. «Թոյլ տուր ինձ սատակել զդոսա, զի ժողովուրդ խստապարանոց է, իբր ուռուցեալ պարանոց եղին, որ ոչ առնու զլուծ։ 2 Եւ զքեզ արարից յա՛զգ մեծ» (**Ելք ԼԴ. 9, Բ. Օր Թ. 14**)։ 3 Փորձանք էր այս Մովսէսի, եւ ցուցանել կամէր խստապարանոց ազգին զսէրն, զոր ունէր առ նոսա, որք երբեմն կամէին քարկոծ առնել։ 4 Այլեւ ամենայն առաջնորդ աւրինակ առնէ զՄովսէս։ 5 Այնպէս ճգնեալ վասն հաւատացեալ հաւտին իւրեանց։ 6 Եւ աղաղակեաց Մովսէս առաջի Տեառն, քանզի հաւատաց ազգմանն Աստուծոյ եւ իմացաւ մտաւքն, զոր արարին ժողովուրդն։ 7 Անգաւ առաջի Տեառն եւ ասէ. «Ընդէ՞ր բարկացար ժողովրդեան քում» ի նա դարձոյց զժող[ովուրդ], «զոր Դու հաներ» եւ ո՛չ ես, եւ այն ոչ փոքր զաւրութեամբ նշանաց։ 8 «Գուցէ ասից|223ա|են եգիպտացիքն, թէ առ չարութեանն եհան զժողովուրդն կոտորել զնոսա յանապատին», կամ զի չէին արժանի թաղելոյ աստէն յԵգիպտոս։ 9 Ասեն նոքա. «Դադարեա՛ ի բարկութենէդ, յիշեա՛ զԱբրաամ, զԻսահակ եւ զՅակովբ, որոց երդմամբ խոստացար» (**Ելք ԼԲ. 11-13**)։ 10 Դիր զչարութիւն սոցա առ բարութեան քո[2], եւ առ լաւութիւն նախնեացն եւ առ երդմանն քո։ 11 Կամ ասիցեն եգիպտացիքն, թէ չկարաց տանել յերկիրն խոստացեալ, կամ չգիտէր զհանդերձեալ մեղանչականութիւն նոցա։ 12 Եւ զի[3] ասէ Ուստի՞ առնիցես յազգ մեծ, եթէ յոչնչէ ածես յէութիւն, եւ թէ մարդիկ իցեն նոքա, այլ մեղանչեն, եւ թէ զնոսա եւս ջնջես։ 13 Եւ թէ յԵգիպտոս երթամ հանել այսր, ո՛չ ասեն եթէ զոր հաներն ի՛նչ եղեն։ 14 Եւ կամ թէ առ քանանացիսն երթայց քարոզեցից զքեզ, ո՞չ ասիցեն, թէ ո՞ւր է

---

[1] Ձ անօրէնս
[2] Զձ քում
[3] Զ զիս] զի

Աստուածն քո, այն որ խոստ[ացաւ] սիրելեաց իւրոց եւ ո՛չ եկաց ի բանի իւրում։ Զի՞նչ հարկ էր երդնուլ եւ ստել։ 16 *Ո՛ հաւատայ ինձ։* 17 *Եւ ես զիա՞րդ, ասէ*[1]*, կարացից տեսանել զոսկերս նոցա կերեալ ի գազանաց. որ լաւ է ինձ մեռանել, քան զմիայն*[2] *մնալն իմ։* 18 *Եւ եթէ յորդոց նոցա թողուս, մի՞թէ ոչ մեղիցեն որդիք գոլով նոցա եւ Ադամայ՝ առաջնոյ եւ մեղուցելոյ։*

ԽԴ. 1 *Եւ ցածեաւ Տէր ի չարեացն, զոր ածելոց էր, քանզի պատճառ միայն խնդրէր Գթածն, եւ գրգռէր զհաւատարիմն իւր ի բարեխաւսութիւն։* 2 *Եւ յորժամ դարձաւ Մովսէս եւ երկոքին*[3] *տախտակքն ի ձեռին իւրում՝ «Գործ Աստուծոյ եւ Գիր Աստուծոյ» (տե՛ս Ելք ԼԲ. 16), զոր ետ ի պատիւ զաւակին Աբրաամու, զոր ոչ այսպէս արար ամենայն* |223բ| *ազգաց Տէր։* 3 *Եւ ասէ Յեսու. Զայն պատերազմի է ի բանական։* 4 *Որում ասէ Մովսէս. Ո՛չ է ձայն նահատակաց յարիական սրտէ, եւ յողջ կամաց յուսով Տեառն զաւրացելոց այլ ձայն թուլացելոց վատասրտաց, անզգայացելոց*[4] *ի բարիոք իմաստից եւ մոլելոց ի գինոյ։* 5 *Եւ տեսեալ Մովսիսի՝ «զորթն եւ զպարաւորսն, ընկեց զտախտակսն եւ խորտակեաց» (Ելք ԼԲ. 19)։* 6 *Եւ զի՞արդ կարաց առնել զայն։* 7 *Յահագին սրտմտութենէ նախանձուն Աստուծոյ, ո՛չ կարաց տանել զայրացմանն։* 8 *Եւ վասն զի որոյ բերէր զտախտակսն այնպէս կորուսեալք էին։* 9 *Եւ, զոր աւրինակ թագաւոր ի հեռաստանէ եկեալ մերձ ի տուն իւր, եւ լուեալ զգոյժ մահու որդւոյն, ընկենու զթագն եւ զոր ունիցի զստացուածսն ի պէտս ժառանգութեան մանկանն, նոյնպէս արար Մովսէս։* 10 *Այլ եւ ո՛չ արժանի համարեցաւ զմեռեալսն մեղաւք կենդանի պատգամացն Աստուծոյ, աչաւք, որ տեսեալ էին զորթն եւ շրթամբք համբուրել, եւ շաւշափել ձեռաւք յաստուածագործն յայն հպել պղծեալ զգայութեամբք։* 11 *«Եւ առեալ զորթն խորտակեաց եւ մանրեաց փոշի, եւ ցանեաց ի վերայ ջրոյ, եւ արբոյց» (Ելք ԼԲ. 20) ժողովրդեանն, իբր կնոջ շնացելոյ, զոր եւ հանդերձեալ էր դնել աւրէնս, զի եւ սոքա շնային զճշմարիտն Աստուծով, որք հարսնացան Աստուծոյ մեծամեծ վարձանաւք եւ փրկութեամբ, որով յայտ եկն ի սրտէ եւ ի կամաց յանցաւորն։* 12 *Եւ յետ յանդիմանելոյ զԱհարոն, եւ կոտորելոյ զյանցաւորսն, ոգիք ԳՌ. (3000), եւ ինքն ելեալ առ Աստուած, ասէ. «Մեղաւ ժո-*

---

[1] *Զձ՛ > ասէ*
[2] *Զձ՛ > զմիայն*
[3] *Զձ՛ > զմիայն*
[4] *Զ անզգայելոց*

ղովուրդն մեղս, որ անհնար է գտանել մեծ, քան զնա, բայց այլ շատ[1] *զինչ ասացից եւ նեղեցից զքեզ։* **13** *Եթէ թողցես*[2] *դոցա՝ թող, ապա թէ ոչ եւ զիս ջնջեա ի գպրութենէն, յոր գրեցեր»* (**Ելք ԼԲ. 31-32**)։ *Քանզի*|224ա| *ունէր ի մտի, թէ արարիցզքեզ յազգ մեծ, զի դպրութիւնն է կենաց յիշատակն Աստուծոյ, որ պահէ անմոռաց զամենայն վարս եւ զաստուածպաշտութիւն մարդկան, եւ հատուցանէ ի ժամու։* **15** *Ասէ՝ «Ջնջեա՛ յայնմանէ, եւ թէ ոչ՝ թող», զի այս է կատարեալ առաջնորդի խնամք. վասն անձին հեզ լինել, եւ վասն Աստուծոյ՝ խիստ՝ ուսեալ յԱստուծոյ, զի առ իւր մեղուցեալսն ներող է, եւ առ ծառայսն բարկանայ, սակայն զկնի վրեժխնդրութեանն յաղաչանս դառնայ առ Աստուած, եւ այսպիսի բանս խաւսի։* **16** *Որպէս եւ ասէ. «Դարձաւ առ Տէր եւ անցոյց զբարկ[ութիւն], զի մի սատ[ակեսցին] նոքա»* (**Սղմս. ՃԵ. 23**)։ **17** *Եւ հաշտեցոյց դարձեալ Խ.նաւրեա (40) պահաւք։* **18** *Վասն որոյ պարտ է առաջնորդացն այսպիսի լինել։*

Ի վերայ այսմ խորհրդոյ յորդորակ արա, եւ թէ շատ թուի ասացուածս՝ ի վերջն թող եւ զոր քեզ պիտի՝ ասա։

---

[1] *Ջ > շատ*
[2] *Ջ > թողցեն*

Ի.

|224ա| ՆՈՐԻՆ՝ ՃԺԸ. ՍԱՂՄՈՍԷՆ, Ի ԲԱՆՆ ՈՐ ԱՍԷ. «ԻՇԽԱՆՔ ՀԱԼԱԾԵՑԻՆ ԶԻՍ Ի ՆԱՆ[ԻՐ]» (**ՍՂՄՍ. ՃԺԸ. 161**)

Երզնկացին տարբեր առիթներով իր գործերում չափազանց կարեւորում է աղոթքը՝ իբրեւ միջոց, ոչ միայն Աստծու հետ հաղորդակցվելու, այլեւ պայքար շարի եւ նրա իշխանության դեմ: Մեկ առ մեկ բացատրելով քրիստոնյայի օրական յոթ անգամ աղօթելու անհրաժեշտությունը, նա շեշտը դնում է հատկապես ննջելուց առաջ երեկոյան աղոթքի վրա, երբ մարդ հաշիվ է տալիս իր արած գործերի համար՝ հույսը դնելով Աստծո ողորմածության վրա:

Երզնկացին, իր բնավորության համաձայն, աստվածաշնչական իմաստությունները մարդկանց ավելի մատչելի ու հասկանալի դարձնելու համար հաճախ է դիմում իրական կյանքից բերված օրինակների, որոնք երբեմն իրենց մեջ շատ հետաքրքիր տվյալներ են պարունակում ժամանակի բարքերի, մադկային եւ դասային փոխհարաբերությունների վերաբերյալ:

Մասնավորապես այս քարոզում Երզնկացին խոսում է երեկոյան աղոթքի անհրաժեշտության մասին, ուշագրավ տեղեկություններ հաղորդում այն տվայտանքների եւ հոգսերի մասին, որ ունենում են վաճառականները ծովեր եւ ցամաքներ կտրելիս, եւ իրենց բնակության վայր ժամանելուց հետո երկյուղում են իշխանների վերաբերմունքից, ընկերակիցների նախանձից եւ խորհում իրենց հարազատների անվտանգության մասին: Արտահայտված մտքերը չափազանց համահունչ են Երզնկացու մեկ այլ նշանավոր ստեղծագործության՝ «Սահմանք եւ կանոնք միբանութեան եղբարց...»-ում տեղ գտածների հետ, ինչը ապացույց է հայ իրականության մեջ առևտրական եւ արհեստավորական դասերի զարգացման, որոնք ձգտում են համախմբվելու սեփական իրավունքների եւ ունեցվածքի պահպանության համար:

Բնագրերը հրատարակվում է 2173 (Ա. 224ա-34բ), 2992 (Զ. 162բ-170ա) եւ 2854 (Ճ. 151ա-153բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Սաղմոսս այս բազում դէմս իմաստութեան եւ ճանապարհս յոլով ուղղութեան ցուցանէ, վասն որոյ ասէ սուրբն Եփրեմ, թէ այս սաղմոս, կամ որ ինչ անցք անցին ընդ Դաւթի ի մանկութենէ մինչեւ ցծերութիւն պատմէ, եւ կամ ի վերայ տանն*[1] *Դանիէլի եւ մակաբայեցւոցն, որք յաճախեցին, պահեցին զպատուիրանսն Աստուծոյ, զոր այլքն անարգեցին:* **2** *Կամ Հոգին Սուրբ եկաց ի դէմս*[2] *ամենայն արդարոցն յաղաւթս, որք*

---

[1] *Ճ՝ > տանն*

[2] *ՁՃ՝ ընդդեմ] դեմս*

պահեցին զաւրէնսն Աստուծոյ[1] *եւ խնդրեցին զդարձ գերոյն, որ աւրինակ էր գերութեան բնութեանս։* **3** *Եւ կամ ինքն Դաւիթ եկաց յաղաւթս ըստ թուոյ եւ գրոյ ալփափետացն, զի յորդորեսցէ զորդիս ժողովրդեան իւրոյ փութալ պահել զպատուիրանսն Աստուծոյ, որ եւ խրա|224բ|տ ուսման է ամենայն մարդկութեանս։* **4** *Զոր ուսուցանէ մարգարէն ի սաղմոսս յայս յոլով եւ զանազան յեղանակս կրից զոր ունէր, եւ զպէս պէս պատահմունս դիպուածոց յաւուրս եւ ի կեանս իւր՝ ուրախութեանն եւ տրտմութեան, յաղթութեան պատերազմի եւ պարտութեան, արդարութիւնս եւ մեղանս, եւ դարձեալ վերստին զղջումն մեղաց։* **5** *Զայս ամենայն ի մի հաւաքեալ՝ վասն մարդկան շահաւետ վարդապետութիւնս, զծոյլսն ժրացուցանելով եւ զարիսն հաստատելով։* **6** *Եւ թէ զի՞նչ պատճառ եւ խորհուրդ ունի, որք այժմ երգեն զսա ի յիշատակ ննջեցելոցն։*

Բ. **1** *Ասեն ոմանք ի հոգեշնորհ վարդապետաց, թէ ի վերայ գերեզմանին Ադամայ ասաց մարգարէն զսաղմոսս զայս, զի անց զաւրինաւք եւ զպատուիրանաւ, եւ զվկայութեամբն Տեառն, սակայն յորդոց նորա, յոլովք զգուշացան եւ պահեցին, եթէ՝ «Թող վճարի, ասէ, նոքաւք հայրենի պարտքն»։* **2** *Վասն այսորիկ ասեմք ի Քրիստոս ննջեցելոցն յիշատակի, զի մի՛ են քրիստոնեայք՝ մարմին միոյ գլխոյն եւ երերաց անդամք, զի շնորհք գլխոյն եւ անդամակցացն սփռեսցի, տարեծեսցի ի լաւացն ի սխալեալսն։* **3** *Եւ ալելու ոչ ասեմք, յորժամ ննջեցելոցն սաղմոսեմք զսա։*

Գ. **1** *Այսպիսի մտաւք է եւ այս, զի ի հին աւրէնսն ի պատարագն, որ վասն մեղաց մատուցանէին, խունկ ո՛չ խառնէին։* **2** *Եւ այս սաղմոս պատարագ է վասն մեղաց ննջեցելոցն եւ ալելուն. անուշահոտ խունկ եկեղեցւոյ ո՛չ խառնեմք ի մեղաց պատարագն։* **3** *Այլ եւ իբրեւ զքաղաքաշինու փոխեր է, զի յամենայնէ կայ աստ զաւրութիւնն։* **4** *Եւ զի Աստուած անունն ո՛չ կա աստ, այլ Տէրն եւ Տեառն եւ դատաւորի, զի յետ|225ա| աստի գնալոյն յատեան դատաւորին կան։* **5** *Զդատաւորն աղերսեմք հաշտիլ մինչեւ յաւրն հատուցման, զի հաշտն եւ բարեգործակն յայնմ աւուր յինքն առցէ զվճիռն ի վերայ քրիստոնէիցն՝ հաւատով ննջեցելոցն։* **6** *Վասն որոյ եւ հասեալ ի տեղիս յայս, որ ի է Ի. (20) եւ Ա. (1) երորդ (քսանմէկերորդ) համար ալփափետացն եբրայեցոց, որ է Շին*[2]*։*

Դ. **1** *Եւ ասէ. «Իշխանք հալածեցին զիս ի նանիր». այլ զի ի գլուխ կանոնին հասեալ ի տեղիս յայս, առաւել եւս բարձրագոչ եւ ողբերգական ձայնիւ ասեն, թէ «Իշխ[անք] հալած[եցին զիս ի նանիր]», որպէս թէ*

---

[1] *Զձ՛ > կամ հոգին... աստուծոյ*
[2] *Զձ՛ չին] ջին*

զզրկանս անձին եւ զկիրս վնասուն եւ զաղէտ տարակուսանացն, զոր կրեացն նախաստեղծն ի թշնամոյն, եւ զդառն ճաշակմանն ազդումն կրեցին ծնունդք նորա մարդկային բնութիւնս, զոր այժմ զբանս զայս ի բերան առեալ երգեն, զի ի գութ ողորմութեան յանու զԱրարիչն շարժեսցեն, ասելով՝ «Իշխանք հալածե[ցին զիս] ի նանիր»։

Ե. 1 *Այլ քննել արժան է, թէ ո՞յք արդեաւք իշխանքն իցեն եւ կամ որպիսի՞ յեղանակ հալածանացն, եւ հալածեալն յորմէ՞ վայրէ, յորո՞ւմ տեղիս հալածի։* 2 *Վասն զի ամենառատ Հայրն եւ բազմագութ, որ ստեղծ զաշխարհ ողորմութեամբ՝ որպէս զԱրարիչ, եւ գութ ունի ստեղծուածոցս որպէս զծնող, զի արարչական բանիւն ծնաւ եւ բաժանեաց զկայանս եւ զստացուածս բազմաւորակի բարեացն, իբր զժառանգութիւն հայրենի յորդիս։* 3 *Անմարմին բանականացն ետ զանմարմին աշխարհն վերին, ըստ անեղծ եւ անապական բնութեան իւրեանց, անմահ եւ անվախճան կենացն, իսկ մարմնական բանականացս՝ մարդկային ազգիս* |225բ| *ետ զդրախտին վայելչութիւն, որ է թաւ վայր եւ ամենապատիկ տնգովք լի, եւ թանձրայատակ, ըստ հողային բնութեան բնակողին ի նմայ՝ անեղծ եւ անապական եւ մշտազուարճ, ըստ անմարմին եւ մշտաշարժ հոգւոյ բնութեան։* 4 *Եւ որպէս մարդ յերկուց է՝ հոգւոյ եւ մարմնոյ, այսպէս եւ դրախտն զերկոցունց ունի զնմանութիւն. բարձրութեամբն զհաւասարութիւն երկնի, եւ թանձրատեսակ նիւթովն՝ ըստ բնութեանն երկրի։* 5 *Իսկ անբան կենդանեացն ետ զերկիր ի բնակութիւն, ապականացու եւ մահկանացու ազգին զապականելի եւ զմահկանացու տեղիս։*

Զ. 1 *Եւ այսպէս, ուղեղ բաժանմամբ որոշեալ տրոհեցան կայանք կենդանեաց, ըստ յարմարական բնակողացն բնութեան, ըստ տէրունեան առակաւոր բանին բաժանեալ որդոցն զկեանսն։* 2 *Իսկ մի ոմն յանմարմին բանականացն, իշխանասիրութեան ախտիւն հիւանդացեալ, եւ ատեցող հնազանդութեան բարեացն եղեալ, ո՛չ մնաց ի բարձրութիւնն իւրոց փառացն, այլ վասն բարձրավազութեան՝ ի խոնարհ անկեալ՝ սակս ամբարտաւանութեան, զԱստուած ունելով հակառակ, ըստ այնմ, «որ բարձր[ացուցանէ զանձն] խոն[արհեսց]ի» (**Սղմս. ԻԳ. 12**), եւ թէ «Տէր ամպարտաւանից հակառակ կայ» (**Առկ. Գ. 34**)։ Եւ այսմ ոչ զայլ ոք ունելով պատճառս, քան թէ իւրով բարուցն չարութեամբ հեռացեալ եղեւ ի բարոյն։* 4 *Իսկ աստուածաստեղծ մարդոյն ինքն եղեւ պատճառ դառնութեամբ նախանձուն եւ հնարիւք խաբէութեան հանէ՛ զնայ յիւր բնակութեան վայրէն եւ ածէ ի տեղի, ուր ինքն անկեալ կայր յաքսորս, իբր զծառայ չար եւ ապստամբ։* 5 *Եւ զի*|226ա| *յաղթեաց պատրանաւք եւ խաբմամբ նախահաւրն եւ ծննդոց նորին, համարեցաւ զինքն իշխան այնոցիկ, զորս*

մոլորեցոյց խաբեութեամբ։ 6 *Եւ զի ներեաց նմա Աստուած յետ անկմանն կալ յաւդտ եւ յերկրի, իշխան աւդոյ կոչեցաւ եւ տէր աշխարհի զինքն համարեցաւ (*հմմտ. Եփս. Բ. 2*)։* 7 *Որ եւ ի մարտ մտեալ ընդ Տեառն, ասէր վասն աշխարհի, եթէ՝ «Ինձ տուեալ է, եւ ում կամիմ տամ զսա» (*Ղկ. Դ. 6*)։ Վասն որոյ ասէ մարգարէս ի դիմաց բնութեանս. «Իշխ[անք] հալ[ածեց]ին զիս նանիր»։*

Է. 1 *Զ Դաւիթ Սաւուղ հալածէր, որ զթագաւորականն ունէր իշխանութիւն, եւ ոչինչ մեղաւ նմա, այլ եւ բազում բարիս գտեալ էր ի նմանէ։* 2 *Եւ զմարդկային բնութիւնս, որք իշխանք աւդոյ կոչին՝ բանսարկուն եւ դեւք, զորոց առ եփեսացիսն ասէ Պաւղոս*[1]*. «Ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ ար[եան], այլ ընդ իշխ[անութիւնս] եւ ընդ պէտ[ութիւնս] եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ» (*Եփս. Զ. 12*)։* 3 *Եւ թուի, եթէ որպէս յերկինս իշխանութիւնք եւ պետութիւնք են, այսպիսի անուանս գոյ եւ առ նոսա։* 4 *Այլեւ իշխանք կոչին, որոց յաղթեն եւ հնազանդեն ի գործ կամացն իւրեանց. եւ որոց տիրենն՝ պետաբար վարին առ նոսա։* 5 *Եւ աշխարհակալք են ոչ գիշերային խաւարի, այլ չարութեան գործոցն։* 6 *Զայսցանէ ասէ մարգար[էն]. «Իշխանք հալածեցին զիս ի նանիր», որ եւ ընդ Տեառն ի մարտ մտեալ, ի նանիր հալածէր, յոր ոչինչ գտանէր յիւրոցն, ըստ Տեառն բանին, թէ «Գայ իշխ[ան] աշխարհիս այսորիկ, եւ յիս ինչ ոչ գտանէ» (*Յվհ. ԺԴ. 30*) զոր եւ դատապարտեաց Տէրն իւրոյ մարմնոյն անմեղութեամբ, իբր զպատճառ մեղաց աշխարհի, եւ հալածելոյ մարդկան յանմեղութենէ եւ յանմահակ|226բ|ան կենացն ժառանգութենէ։* 7 *Եւ քաջալերէր զիւր հաւատացեալսն, ասելով. «Իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է» (*Յվհ ԺԲ. 31*), ընդ որ եւ Պաւղոս ի պատերազմ յորդորէ (*հմմտ. Եփս. Զ. 12, Բ. Տմթ. Դ. 7*)։* 8 *Զի նոցա չար իշխանացն ո՛չ է ընդ մեզ պատերազմ քաջութեամբ մարտի, այլ քծնելով եւ շողոքորթելով, եւ խաբէութեանն հնարիւ։* 9 *Իսկ մեզ ընդ նոսա սաստիկ է մարտ պատերազմի առաքինական վարուք, իբր ընդ ի սկզբանէ մարդասպան եւ հալածիչ մեր ի բարի ժառանգութենէն եւ զի ո՛չ ի յերկրաւորացս զրկէ, այլ ի յաւիտենական բարեացն, եւ ո՛չ եթէ ընչից եւ ստացուածոց է վնասակար, այլ անձանց եւ արդարութեան գործոցն*[2] *դրժող։*

Ը. 1 *Արդ, զի ողորմած եղեւ մեզ Քրիստոս, քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեան իւրոյ, եւ զփորձ էառ մարմնաւորացս կրից, զի աւգնական լիցի փորձանաւորացս,*

---

[1] *Ձ՛ եւ պօղոս*

[2] *Զձ՛ գործոց է վնասակար*

եւ արդար իրաւամբ ի բաց եհան ի ձեռաց թշնամոյն զազգս մարդկան, չարչարանաւք խաչին Իւրոյ եւ անպարտական մահուամբն, որով կորեաւ նորա իշխանութիւնն։ 2 *Զի որպէս կշիռք իրաւանց ի մէջ եդ զինքն Քրիստոս բարոյն եւ չարի, լուսոյն եւ խաւարի, եւ այնպէս միջնորդ մարդկան եղեւ, եւ ընկեց զչարախաւսն մեր, զիշխանն կարծեցեալ, զոր մեծն Յոհանէս ի տեսլեանն ասէ. «Անկաւ չարախաւսն եղբարց մերոց»* (**Յյտն. ԺԲ. 10**)։ 3 *Եւ ի նոյն սաղմոսի ասէ. «Քանզի նստան իշխանք եւ չարախաւսէին զինէն»* (**Սղմս. ՃԺԸ. 23**)։ 4 *Եւ աստ ասէ. «Իշխանք հալածեցին զիս ի նանիր»։* 5 *Զի ես ոչինչ եղէ պատճառ նորա չարանալոյն, եւ ոչ* |227ա| *ունէի ոխս ընդ փառաց նորա ճոխութեան*[1]*, եւ ոչ նախանձ դառնութեան մթերել ի սրտի, այլ ինքն վասն իմ կալաւ զայս ամենայն, որպէս ասէ իսկ Յոբ. «Եթէ վասն իմ թողին զգործս իւրեանց»* (**Եմմտ. Յոբ ԼԹ. 11**)*, այլ «... ի բանից Քոց երկեաւ սիրտ իմ»* (**Սղմս. ՃԺԸ. 161**)։ *Դաւիթ, թէպէտ եւ բազում անկամ ի ձեռս նորա անկաւ Սաւուղ, այլ զի բանիւն Աստուծոյ աւծեալ թագաւոր էր, երկեաւ սիրտն եւ ոչ մերձեցաւ ի նա։* 7 *Իսկ Նախաստեղծն իւրովք ծննդովքն ասէ, թէ՝ «Ի բանից քոց երկեաւ սիրտ իմ»։*

Թ. 1 *Կրկին բանք են Աստուծոյ, յորմէ անգաւ երկեղ ի վերայ մարդկութեանս։* 2 *Մի ա՛յն, որ ասաց. «Արասցուք զմարդն ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան յարարչագործութեանն»* (**Ծն. Ա. 26**)։ 3 *Եւ երկրորդ, զի յետ յանցանացն ասաց. «Հո՛ղ էիր եւ ի հող դարձցիս»* (**Ծն. Գ. 9**)։

Ժ. 1 *Յայսցանէ երկեաւ սիրտ իմ, թէ յորպիսի՞ բարձրութենէ յոր անգայ նուաստութիւն. լոյս էի եւ զխաւար զգեցայ, զկերպարան բարոյն ի չարութիւն յեղափոխեցի, զաստուածային նմանութեան տիպ՝ յանասնականն իջուցի հաւասարութիւն, ընդ փառս փափկութեան դրախտին՝ զփշալից ժառանգեցի երկիր, ընդ յուսոյ երկնախորանացն կայանի՝ ի գուփ գերեզմանի եւ յարգելանս դժոխոց հրաւիրեցայ։*

ԺԱ. 1 *Զսոյն եւ Արարիչն Ադամայ էառ ողբս ի վերայ իւրում ձեռագործին, զի զոր ստեղծ ձեռամբ, հիւանդայտես գայ ոտիւք, եւ ողբայ ձայնիւ. «Ո՞ւր ես, Ադամ»* (**Ծն. Գ. 9**)։ 2 *Աւաղական է բանս։* 3 *«Ո՞ւր ես» յորմէ՞, փառաց յո՞ր* |227բ| *անկար տառապանս։* 4 *Թագաւորդ արարածոց ծառա՛յ եղեր ախտից։* 5 *Իշխանդ երկրաւորաց ի գերութիւն վարեցար, զոր սիրով ի սեղան բարեաց աշխարհիս ածի։* 6 *Քրտնաջան երկոց եւ վաստակոց եղեր մշակ, զոր ի հողոյ պայծառութիւն ոսկոյ մաքրեցի, եւ ի պատկեր եւ յանուն իմ նկարեցի։* 7 *Աղբիւ կորուսեալ ծածկեցար, մոռացար զարարչականն իմ պատուէր*[2]*, թողեր զաստուածաշէն տունդ քո սեփհական, ո՛չ*

---

[1] *Ա. ճոխութիւն*

[2] *Զձ՛ տաս պատուէր*

պահեցեր զայգի իմ, զոր յարազուարճ տնկովք զարդարեցի։

ԺԲ. 1 *Արդ զայսոսիկ եւ բազումս քան զայս յաստուածային հարցական բանսն է տեսանել, զոր եւ ասէ մարգարէս ի դիմաց բնութեանս, թէ «ի բանից Քոց երկեաւ սիրտ իմ», զոր հարցէր, եթէ՝ «Ո՞ւր ես»։* 2 *Զի որ ամենատես ակամբդ միշտ տեսանես, զիա՞րդ հարցանես, եթէ հաշտ իցես բարերարդ։* 3 *Այլ գիտեմ, զի աւտարացուցանես, տարագրես հեռաւորութեամբ, ի բաց գնաս յայսմ հետէ, իբր յանարժանէ։* 4 *Բարձեալ թողուս զիս՝ գնալ ի կամս սրտի, վասն թողլոյն իմ զկենաց պատուիրան Քոյին հրամանի։* 5 *Զի «Ի բանից քոց երկեաւ սիրտ իմ», որ ասացեր. «Անիծեալ լիցի երկիր ի գործս քո, փուշ եւ տատ[ասկ բուսացէ] քրտամբք [երեսաց քոց կերիցես զհաց քո]» (**Ծն. Գ. 18, 19**)։* 6 *Զրկիմ յաւրհնեալ վայրէս եւ յերկիր անիծից՝ զի՞արդ կարեմ հանգչել։* 7 *Բայց զի անիծից գործեցի զգործ, զանիծից տաս ճաշակել զպտուղ. փուշ մեղաց բուսուցի յերկիր մարմնոյս, փշալի ա|228ա|նդաստանի առնես զիս գործաւնեայ. յամենալի[1] սեղանոյ դրախտիս հանես եւ քրտամք վաստակել զհաց հրամայես։ Գիտե՛մ, զի ուր քիրտն մարմնոյ հոսի, անդ եւ այլ յոլով կիրս ցաւոց ծնանի. յաւդոյ փոփոխականէ, ի ցրտոյ եւ ի խորշակէ, ուստի եւ մարմին բազում հարուածս ցաւոց կրէ յապականացու յայս կեանս, քան զերկեղ մահուն։ Դառնակսկիծ եւ ցաւալի կեանս տաղտկալի է ինձ, զոր եւ Յոբ հեծեծելով ասէր. «Գիշերք ցաւագինք տուեալ» (**Յոբ է. 3**), եւ թէ՝ «Լի ցաւաւք լինիմ յերեկորէ մինչեւ ցառաւաւտ» (**Յոբ Դ. 20**)։ Եւ ապա, յետ ամենայն պատժոց, մատնեցեր զիս յետին թշնամոյն մահու։* 11 *Վասն որոյ «ի բանից Քոց երկեաւ սիրտ իմ»։*

ԺԳ. 1 *Վեց են մասունք երկեղի, զոր կրէ բնութիւնս, քանզի լինի երկեղ ի պակուցումն, ի հիացումն, ի զարհուրումն, ի տագնապ, ի խորշումն, յամաւթ, որ զայս ամենայն կրեաց նախահայրն, յորժամ լուաւ, թէ՝ «Հող էիր եւ ի հող դ[արձցիս]»։* 2 *Զի պակումն է մածումն արեան եւ ընդարմացումն հոգւոյ։* 3 *Երկեղ ապառնոյ ներգործութեանն, զի թէպէտ դեռ յապառնին էր մահու ներգործութիւնն, եւ մնաց ի վերայ այնր հրամանի Թձ. եւ Լ. (930) ամ, այլ զսոսկալին զայն լուեալ անուն ահաբեկ լինէր, կենդանական արիւն լինէր մածեալ, եւ ընդարմանայր որպէս թմբրեալ։* 4 *Իսկ զարհուրումն երկեղ է յանսովոր տեսութենէ, զոր պատահեալ տեսանէր ինքն նախահայրն, զի յորժամ ել ի լուսոյ վայրէն, |228բ| եւ հասանէր ի վերայ նորա արհաւիրք գիշերոյն, եւ ներքոյ երկրի ծածկեալ տեսանէր զլոյս արեգականն. թխազգեաց լինէր տարածումն աւդոյդ, ի գոյն գէշ եւ*

[1] *Զձ յամենակալի] յամենալի*

գարշելի ներկելով, զոր եւ գիշեր իսկ[1] *անուանեմք։* 5 *Եւ լուաւ ձայն սուղման*[2] *սողնոց, եւ մռնչիւն եւ գոչուն*[3] *գազանաց վայրենաբարոյից, յորմէ զարհուրեալ երկեղէր եւ կայր ի տագնապի։* 6 *Զի տագնապ երկեղ է ի կործանմանէ, այսինքն ի վրիպանաց գործոյ յահագին տեսլեանցն եւ ի կերպարանաց դժուարայհայեաց դրացեացն, զոր ետես յերկիր։* 7 *Կասկածէր կործանումն հասանել նմա եւ տագնապ[էր]։* 8 *Իսկ խորշումն երկեղ է յակնկալութենէ պարսաւանաց, զի ընդ ճաշակման պտղոյն եհաս նմա եւ այս մասն երկեղի։* 9 *Եւ խորշեալ յամաւթոյն ծածկէր զինքն ընդ տերեւով թզենոյն, որ եւ զամաւթոյն կրեաց զերկեղ, զի որ յառաջ քան զայս՝ սակաւ մի էին մերկք եւ ոչ ամաչէին, այժմ զամաւթ զգեցեալ լինէր ի վերայ գործեցեալ չարեացն, որով ոչ անյոյս մնայ եւ այսու ի փրկութենէ։*

ԺԴ. 1 *Ի սոյն միտս եւ յայլում սաղմոսի ասէ. «Սիրտ իմ խռ[ովեաց]*[4] *եւ երկեղ մահու անկաւ ի վերայ իմ»։* 2 *Եւ այս է խռովիլն զի աղբիւր է սիրտն կենդանական շնչոյն եւ ջերմութեան, որ ի նմա, զի յայսքան մասանց երկեղիս ամենայն ջերմութիւնն՝ արեամբն հանդերձ ի սիրտն ժողովի, որպէս զաւրք ամենայն առ զաւրագլուխն, եւ կամ ընդ պարսպով քաղաքին յամրոց, եւ ի վերջէ մասնէ ոտիցն, եւ ի բարձրութենէ գագաթա|229ա|նն ամենայն ուստէք ամբոխեալ եւ ընթացս առեալ անդր ժողովեալ գումարին։* 3 *Վասն այսորիկ զսիրտն ասէ տեղի երկեղին, ըստ որում եւ ի գոյանալն նախ կենդանանայ, եւ ի մահուն՝ յետոյ մեռանի։* 4 *Յառաջագոյն ջերմանայ եւ յետոյ զովանայ։* 5 *Յաղագս որոյ ասէ. «Ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։* 5 *Ցնծացայ ես ի բանս Քո, որպէս այն, որ գտանէ աւար բազում[մ]» (* **Սղմս. ՃԺԸ. 161-162** *)։*

ԺԵ. 1 *Դաւիթ ասէ, եթէ Բանք աստուածային հրամանաց Քոց, զոր գտանէի յառակաւոր իմաստս աւրինաց եւ մարգարէից, ցնծութիւն էր ինձ, քան թէ յաւարն Ադրիազարու եւ ի բազմութիւն գանձուցն, որ անտի (* **տե՛ս Բ. Թգ. Ը. 3-4, Ա. Մնց. ԺԸ. 3, ԺԹ. 6** *)։* 2 *Այլ եւ բնութիւնս Ադամայ ցնծացաւ յաստուածային Բանէն, զոր խաւսեցաւ Տէրն ընդ առաքեալսն, եւ ասաց. «Բազում մարգ[արէք] եւ արդ[արք] ցանգացան տեսանել զոր տես[անէք] եւ լսել, զոր լս[էք] եւ ոչ լու[ան], բայց ձեր երանի աչ[աց], զի տես[անէք] եւ ականջ[աց] զի լսէք» (* **տե՛ս Ղկ. Ժ. 23-24** *)։* 3 *Եւ թէ որում նման իցէ այն ցնծութիւնն. իբրեւ զայն, որ գտանէ աւար բազում։* 4 *Այսինքն՝ իբրեւ զՏէրն, որ էառ յաւարի զհոգիսն ի դժոխոց։* 5 *Եւ զի որպէս ցնծութիւն էր յարգելական բանդէն ելանել հոգւոցն, այնպէս ցնծու-*

---

[1] *Զձ՝ > իսկ*
[2] *Զձ՝ սուլման*
[3] *Զձ՝ գոչումն*
[4] *Զձ՝ խռովեցաւ*

թիւն եղեւ մեզ Աստուծոյ Բանն, որ կենդանացոյց զմեզ եւ եհան ի դժոխական եւ յանգիտութենէ խաւար կենացն։ **6** *Ըստ որում եւ ի հարցանելն Տեառն առ աշակերտսն ԲԺ.ան (12), «Մի՞թէ եւ դուք կամիք գնալ»։ Պատասխանի ետ Պետրոս. «Տէր, առ ո՞վ երթիցուք բանս կենաց յաւիտ[ենականաց ունի] եւ մեք հաւատացաք եթէ՝ «Դու ես Որդին Աստուծոյ»* **(Յվհ. Զ. 69-70)**։ **7** *Եւ ինքն |229բ| Տէրն ասէ. «Բանն զոր խաւսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք»* **(Յվհ. Զ. 64)**։ **8** *Եւ արդ, զի «հոգի է եւ կեանք», կենդանածնէ զբանականքս։* **9** *Վասն որոյ ցնծամք այսպիսի բանիւք, իբրեւ զայն որ գտանէ աւար բազում։* **10** *Զի Բանն, որ խաւսեցաւ՝ Քրիստոս, եւ կոչեաց զինքն լոյս եւ կեանք ճանապ[արհ] եւ ճշմարտութիւն*[1] *եւ դուռն, իմաստութիւն եւ զաւրութիւն, հաց յերկնից իջեալ, եւ ջուր կենդանի բղխեալ, արքայութիւն, եւ խնդութիւն, եւ խաղաղութիւն, հարսանիք, եւ տուն, եւ սեղան, քահանայապետ եւ պատարագ, եւ գառն բարձող մեղաց աշխարհի (տե՛ս* **Յվհ. Դ. 10-14, Զ. 35, 48, Ը. 12, Ժ. 7, 9, ԺԴ. 6, Ա. Կրնթ. Ա. 24)**։ **11** *Վասն որոյ ցնծացաք մեք այսպիսի բանիւք, իբր զի գտաք աւար բազում, զի գտաւ խաւարելոցս լոյսն, մահացելոցս՝ կեանք, մոլորելոցս՝ ճանապարհ, ունայնութեանն հետեւելոցս՝ ճշմարտութիւնն. առ Հայրն իւր մտանելոյ՝ դուռնն, անգիտութեան մերոյ՝ իմաստութիւնն, տկարացելոցս՝ զաւրութիւնն, քաղցելոցս՝ հաց երկնային, եւ ծարաւեացս՝ ջուր կենդանարար, ի դրախտէն զրկեալքս՝ զարքայութիւն, տրտմեցելոցս սգով՝ խնդութիւն։* **12** *Վասն որոյ ցնծացաք ի բանս նորա, որ ետ մեզ աւար բազում, զի Նա մարգարիտ եւ մեք՝ վաճառական, Նա գանձ յագարակի, եւ մեք գտողք գանձուն, Նա հիմն եւ մեք շինուած, Նա գլուխ եւ մեք մարմին եւ անդամք, որով ցնծացաք եւ ցնծամք միշտ ի Տէրն մեր եւ ի Բանս նորա, որ կոչեաց զինքն Որդի մարդոյ, փառք եւ պարծանք մարդոյ, լոյս եւ իմաստու|230ա|թիւն մարդոյ։* **13** *Վասն որոյ ամենայն ոք, որ առնու զայսպիսի ճաշակացս քաղցրութիւն, պարտ է հեռանալ յամենայն դառնութենէ մեղաց, ըստ մարգարէական բանիս, որ ասէ. «Զմեղս ատեցի եւ անարգեցի, եւ զաւրէնս քո սիրեցի»* **(Սղմս. ՃԺԸ. 163)**։ **14** *Վասն զի ամենայն ոք, սիրէ զլոյս, ատէ՛ զխաւար։*

ԺԶ. **1** *«Եւ պատուիրանք աւրինացն Աստուծոյ՝ լոյս են եւ լոյս տան շաւղաց»։* **2** *Եւ աւրէնք Տեառն անբիծ են, այսինքն՝ անբամբաս եւ անարատ։* **3** *Եւ զաւրինապահն ոչ թողու անկանել ընդ բամբասանաւք, այլեւ դարձուցանեն զոգի ի սնոտեաց եւ ի մարմնականաց հեշտութեանց՝ առ ճշմարիտ բարին։* **4** *Եւ զի աւրէնքն սահմանք են, որ են գործք եւ բանք Քրիստոսի, զի զոր բանիւ ուսոյց՝ զնոյն եւ գործով կատարեաց։*

ԺԷ. **1** *Եւ ամենայնն ի մեր վարդապետութիւն յաղագս որոյ ասէ. «Է. (7)*

---

[1] *Զ ճշտութիւն*

անգամ յաւուր աւրհնեցից զքեզ՝ վասն իրաւանց եւ արդարութեան քո»։
2 *Մարգարէն Դաւիթ, ի շնորհաց հոգւոյն շարժեալ, որպէս զամենայն երգս սաղմոսացն, ետ աւրէնք եւ կանոնք կարգաւորութեան եկեղեցւոյ։*
3 *Նոյնպէս եւ զժամս աղաւթիցն որոշեալ սահմանէ։* 4 *Զի որպէս ինքն Դաւիթ է.ն (7) աղի քնարաւն է.ն (7) անգամ յաւուրն աւրհնէր զԱստուած ընդ տիւ եւ ընդ գիշեր, նոյնպէս եւ եկեղեցւոյ մանգունք է. (7) զգայարանաց մաքրութեամբ է. (7) անգամ յաւուրն աւրհնեն զԱստուած, զգոհութիւն եւ զաղաւթս նուիրելով վասն իրաւանց եւ արդ[արութեան]։*
5 *Զի ըստ է. (7) աւուրցն շաբաթու, տունջեան եւ գիշերոյ յորում է. (7) աւրեայ արարչութեան Աստուծոյ շնորհս վայելեմք մի|230բ|անգամայն, եւ է. (7) անգամ յաւուրն յէիցս բարեացն լցեալ լինիմք։*

ԺԸ. 1 *Իրաւունք է մեզ զմինն է. (7) [նա]պատկել յաւրհնութիւն Աստուծոյ ի շնորհակալութիւն, եւ փոխարէն պարգեւողին Աստուծոյ եւ պէս պէս բարեացն։* 2 *Եւ որ յոյժ խորհրդականն է՝ սահմանեալ ժամուցս*[1] *կարգաւորութիւն տեսցուք՝ հայելով առ շնորհս իրաւանցն Քրիստոսի, զոր արար մարդկային բնութեանս, ազատելով ի պարտեացն Ադամայ։* 3 *Զի յորում ժամու եղեւ յանցումն եւ տրտմական կիրք նախահաւրն, եւ ըստ նմին ժամու լուծանելով զյանցանս շարչարանաւք խաչին, փրկչին մերոյ Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի, յայնմ ժամու զգուշանամք հայցմամբ աղաւթից, փրկիլ ի նորա նման պատուիրանազանցութենէն, որ ի հնարից թշնամոյն։* 4 *Եւ Փրկչին մերոյ Աստուծոյ գոհութիւն եւ փառաբանութիւն, հանդերձ երկրպագութեամբ, նորա մարդասիրութեան մատուցանեմք, զի հարքն սուրբ մեզ այսպէս աւանդեցին, եթէ յետ յանցմանն Ադամայ որքան ժամս յամեաց ի դրախտին, նոյնչափ Քրիստոս ի խաչին եկաց ի չարչարանս։* 5 *Եւ զի աւետարանիչն Մարկոս յերրորդ ժամ ասաց ելանել ի խաչ որդոյն Աստուծոյ, որով յայտ է ի նմին ժամու ընդունել զհրապուրանս բանսարկուին յաւձէն Եւայի, եւ ցանգանալ պտղոյն ճաշակման, եւ գերիլ ի նորա խաբէութեանն պատրանսն, եւ դիմել մոլեկան ընթացիւք ի ծառն մահաբեր։* 6 *Վասն որոյ ի սոյն ժամու Տէրն երթայ ի տեղի կառափման, զի մերով բնութեամբս զանկեա|231ա|լն վերստին կանկնեսցէ, եւ բեւեռմամբ ոտիցն եւ ձեռացն զյանդուգն ընթացս եւ զձեռագիր յանցանաց կտակին խափանեսցէ։*

ԺԹ. 1 *Ի նոյն ժամու եւ Հոգին Սուրբ եկն ի դասս առաքելոցն, զի ի նմին ժամու, յորում գլորեցաւ մարդն, ի նոյն ժամու բարեգործեսցի, յորում ժամու պարտ է մեզ պատկառ կալ աղաւթից եւ խնդրել զՀոգին*

[1] *Ճ՝ ժամանակացս*

սուրբ աւգնական եւ առաջնորդ՝ հասանել յերկիրն պարգեւաց եւ գոհանալ վասն իրաւամբք եւ արդարութեամբ փրկութեանն, զոր արար մեզ որդին Աստուծոյ։ **2** *Իսկ Զ. (6) ժամն, որ է հասարակ աւուրն, զի յառաջ, քան զայն, սակաւ մի կայր Ադամ հրճուալից ուրախութեամբ, իսկ յայնմ ժամու զէ.եկի (7) պարգեւսն կորուսանէր՝ է.եակ (7) յանցանաւքն, եւ եւթանասնեկին է. (7) ժառանգէր տրտմութիւն։* **3** *Եւ կայր ջերմացեալ հիւանդութեամբ, զմահաբերն ճաշակելով պտուղ, յայտ է՝ յերրորդ ժամէ մինչ ի Զ.ն (6) աղաչանաւք հաւանեցուցել կնոջն զնախահայրն, մինչ յանձն առ ճաշակել ի հրաժարեցուցեալ ծառոյն պտղոյ, որով լուծան յաւդք ոտիցն եւ ձեռացն ի բարեացն շարժմանէ։* **4** *Կարկեալ լեզուն անխոստովանութեամբ, եւ որպէս մեռեալ անզգայ, խաւարամած խորհրդով պաշարեալ ի մէջաւրէին, որպէս ի մէջ գիշերի կայր ի տարակուսի։* **5** *Վասն որոյ Բանն Հաւր յայնմ ժամու կալով ի տանջանս ցաւոցն, նեղութեամբ զնեղութիւն նախաստեղծին բժշկէր եւ խաւարմամբ լուսաւորացն զկարծեցեալ լոյս մարդկան ձ|231բ|ախողակի խաւարեցուցանէր զաստուածայինն տնկեալ լոյս ի սիրտս մարդկան, եւ փոխանակ քաղցր ճաշակմանն, ճաշակեաց Փրկիչն աշխարհի Քրիստոս Աստուած մեր քացախ՝ ընդ լեղի խառնել։* **6** *Վասն որոյ պարտ է ժուժկալեալ եւ ձանձրութենէ դիւին զգուշանալ, որ ծանր է, քան զամենայն դեւս։*

Ի. **1** *Եւ յոլով մեղկութեամբ գողանայ զմիտս մեր յիւր կամսն։* **2** *Վասն որոյ յիրաւի յայսմ ժամու աղաւթեմք, եւ ճաշակեմք յաղաւթսն առողջ մտաւք միայն զողորմածն Աստուած, եւ յիշեմք զբժշկութիւն մեր տնաւրէնութեամբն Քրիստոսի, որ ազատեաց զմեզ չարչարանաւք՝ ի չարչարանաց, եւ իրաւամբք արդար դատաստանի դատապարտեաց զթշնամին կենաց մերոց։* **3** *Իսկ Թ. (9) երորդ ժամն, զի յայնմ ժամու անզղջական խոստովանութեամբ մեղաց նախաստեղծիցն, դատապարտեալ զնոսա պատուհասող հրամանին՝ եհան ի դրախտէն։* **4** *Իսկ երկրորդն Ադամ, Փրկիչն աշխարհի, ի նմին ժամու աւանդեալ զհոգին եւ երթեալ ի դժոխ՝ զկապանս արգելելոցն ելոյծ, ազատելով զհոգիսն, եւ զլուսաւորսն ի խաւարմանէ փարատէր։ Եւ զի յայն ժամու է՛լ Ադամ ի դրախտէն, վասն անզղջական մնալոյն ի խոսովանութենէ, յաղագս որոյ եւ Տէրն զաւազակն սակս խոստովանութեան հաւատոյն ի նմին ժամու ընդ իւր ի դրախտն հրաւիրեաց մտանել։ Եւ զքաղցրն զայն բարբառ հրամանի լսէր եւ ինքն Ադամ՝ աւազակին ունկամբ, եթէ «այսաւր ընդ իս իցես ի դրախտին» (*Ղկ. ԻԳ. 43*)։*

ԻԱ. **1** *Եւ եղեւ դարձ մարդոյն ի |232ա| խաւարէ ի լոյսն եւ մուտ ընդ երեկս ի ծառն կենաց, զի ի նոյն ժամու արտաքսեցաւ, եւ ի սոյն ժամու*

բղխեաց ջուրն կենդանի ի յԵրուսաղէմ. կէս նորա ի ծովն, որ առաջին, ի ժողովուրդն, որ ակն ունէր փրկութեանն Երուսաղէմի, եւ կէս նորա ի ժողովուրդն, որ յետոյ փրկին կենդանի ջրովն, որ ի Կենարարին կողէ: Յայնմ ժամու կատարեցան գրեալքն յաւրէնսն եւ ի մարգարէս: 3 Ի սոյն ժամու հալածեցաւ ի մերում տապանէ ագռաւն, մահացան անդարձ ի մեղաց, եւ ընկալաք տերեւ ձիթենոյ աւետաբեր ընդ երեկս բանիւ կենաց, որով կարասցուք յամենայն ժամ պտղաբերել Աստուծոյ զհաճոյական պաղատանս եւ զչարչարանսն Քրիստոսի, որ յայսմ ժամու նկարեսցուք առաջի աչաց մերոց: 4 Եւ գոհութեամբ աղաւթից յիշեմք զերախտիս բարերարին Քրիստոսի, զոր արար իրաւունս եւ արդարութիւն ընդ մարդկային բնութիւնս:

ԻԲ. 1 *Իսկ ժամ երեկոյին աղաւթիցն գեղեցի՛կ ունի տեսութիւն զի յերեկոյին ո՛չ միայն բանականք, այլեւ անբան կենդանիք, որպէս թէ ընդոստուցեալք ի հասման երեկոյին լնուլ փութացեալք զորովայնս*[1]*, որովք յուսան յակաստան ի խաղաղանալ:* 2 *Իսկ մարդն՝ արտաքսեալ ի դրախտէն, ոչինչ այլ ունելով սփոփանս մխիթարանաց, բայց միայն զԼուսաւո՛րն մեծ, յոր պշուցեալ ընդ գեղեցկութիւն տարերն, զբաւսմամբ մխիթարեր ի մեծ տրտմութենէն, զի նովաւ տեսանէր զարարածս ի փառս Աստուծոյ:*

ԻԳ. 1 *Եւ այսոքիկ ի մետասան ժամուն գ|232բ|ործէին:* 2 *Իսկ տեսեալ զարեգակն խոնարհեալ, դարձեալ արհաւիրք զմիտս նորա փակէին. եւ կայր յուսահատեալ ի հանդիպել խաւարին եւ նորատեսիլ երեւմանցն:* 3 *Վասն որոյ զգիշերն ամենայն անհանգիստ հեծութեամբ անցուցանէր:* 4 *Իսկ ի միւսանգամ երեւման արեգականն, եւ լինել դարձեալ երեկոյ, յիշելով զմարդասիրութիւն Արարչին, սովորութիւն առնոյր*[2] *ի միջոցի տուընջեանն եւ գիշերոյն, որ է երեկոյն, աւրհնել զԱստուած, սակս անցանելոյ աւուրն խաղաղութեամբ, եւ որ գալոցն էր գիշերն:*

ԻԴ. 1 *Ի սոյն ժամու եւ Աբրաամ աղաւթէր, զի յորժամ ասացաւ. «Առ ինձ երինջ երամեան» (Ծն. ԺԵ. 9) եւ այլն, զոր եւ արար իսկ, ընդ մուտս արեւոյն արհաւիրք անգանէին ի վերայ:* 2 *Ի սոյն ժամու եւ կենարարն մեր Քրիստոս իջանէ ի հող մահու, ապականել հողածնին եւ հողադարձին Ադամայ, եւ ծննդոց նորա զապականութիւն շնորհել:* 3 *Ի նոյն ժամու երեւէր Տէրն աշակերտացն ի վերնատանն:* 4 *Վասն որոյ ի սոյն ժամու աղաւթեմք ի մէջ տուընջեան եւ գիշերոյ, վասն անձանց եւ նախահաւրն գլորման:* 5 *Եւ որպէս ի գիշերին «Հարցն», նոյնպէս եւ երեկոյին՝ «Ապրեցոյն» ի դէմս Ադամայ է, եւ «Ողորմեայն» եւ «Խոնարհեցոյն» Եւայի:*

---

[1] *Ձ՛Վորովայնս ի հասման*

[2] *Զձ՛յառնէր] առնոյթ*

ԻԵ. 1 *«Տուր զաւր[ութիւն] ծառ[այիս] եւ արայ առ իս նշա[ն] բարութեան»* (**Սղմս. ՁԵ. 17**) *զխաչին պահպանութիւն, զոր տեսցեն ատելիքն իմ դեւքն եւ յամաւթ լիցին»:* 2 *Վասն որոյ աղաւթեմք արժանապէս լուսաւորել զակն մտաց մերոց, ուղղակի խոստով|233ա|անութեամբ փառաւորել զԱստուած:* 3 *Իսկ հանգստեան ժամուն աղաւթք ի ժամ խաղաղանալոյ ի մահիճն*[1]*, սրբապէս պարտ է աղաւթել, զի ստուեր է այս գիշերոյ ննջումս այն մեծի գիշերոյն ի հող իջանելոյն, յուսով մնալ մինչ ի հանդերձեալ առաւաւտն յարութեան:* 4 *Որ եւ վասն այսպիսի խորհրդոյ աղաւթելի է, զի հասցէ ի լոյս առաւաւտոյ արեգականն արդարութեան, որպէս եւ այսմ լուսոյ սպասեմք:* 5 *Եւ զոր աւրինակ, վաճառական ոք բազում ճանապարհորդութեամբ անցեալ ընդ ծով եւ ընդ ցամաք՝ ի վերջինն հասեալ յաւթեւան յիւր քաղաք, յոլովագոյնս մտանէ ի հոգս, մտածել զնախանձ ընգերացն, զերկեղ*[2] *իշխանացն, զդրդումն վաճառին, զխոր[հ]ելն յընտանեաց:* Նոյնպէս եկեղեցի հասեալ ի ժամս յայս, առաւել զարհուրմամբ մատչի յաղաւթս, խնդրելով զպահպանութիւն գիշերոյն, որ է աւրինակ հանդերձելոյն: 7 *Ըստ այնմ. «Խաղաղութեամբ ննջեսցուք եւ զարթ[իցուք], զի դո՛ւ Տէր միայն առանձին յուս[ով քով] բն[ակեցուցէր զմէզ]»* (**Սղմս. Ժ. 10**)*:* 8 *Վասն որոյ հարկաւոր է աղաւթել, զի դադարումն առեալ ալեկոծութիւն կենաց մերոց, յապահովացեալք ի տուընջենային զբաւսանաց, մտցուք ի մահիճն, յորում մտածեմք զվաճառաշահութիւն անցելոցն, եթէ կենսաբե՞ր իցէ, թէ՞ մահաբեր, յիշել եւ զմահ, զաւր ելիցն ի մարմնոյ:*

ԻԶ. 1 *Եւ թէ որպէ՞ս հանդիպի արդարահատոյց ատենին, եւ արդարադատ Դատ|233բ|աւորին յաւուրն յետնում, եւ թէ առաքեալքն ո՛չ կարացին ժուժկալել երեւմանն ի Թափոր, որ աւրինակ էր այն մեծի աւուրն երեւման, ապա մեք զիա՞րդ ոչ հոգասցուք վասն այնպիսի փառաց աւուրն:* 2 *Իսկ ի հասարակ գիշերին աղաւթելն զՓրկիչն մերոյ եւ Աստուծոյ զյարութեանն ժամն նշանակէ, յորում ժամու դարձեալ միւս անգամ գալոց է, որպէս ինքն Տէրն իսկ յայտնեաց: Ասէ. «Ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա Փեսա գա. արի՛ք ընդ առաջ նորա»:* 4 *Յորում ժամու մեզ աղաւթելի է, ի նմին ժամու ի հանդիպման Նորա գալստեանն ողորմութեան արժանի լինել, զոր եւ մարգարէն գուշակեաց:* 5 *Ասէ. «Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ Քեզ, վասն իրաւանց եւ արդարութեան Քո»* (**Սղմս. ՃԺԸ. 62**)*:*

ԻԷ. 1 *Եւ այս է իրաւամք արդարութիւնն ըստ իւրաքանչիւր գործոց յայն աւուր հատուցմանք:* 2 *Իսկ առաւաւտին ժամ աղաւթիցն, զի յայն ժամ առնու համաւրէն ազգ մարդկան յարութեամբն ըստ արժանեաց*

---

[1] *Ճ.ժ. աւուրն խաղաղութեամբ... Ծ> խաղաղանալոյ ի մահիճն*

[2] *Ճ եւ զերկիւղ*

զհատուցումն պարգեւաց եւ պատժոց, եւ յայնժամ զատանին յաջմեացն եւ յահեկեացն դասք[1]*. ոմանք ի կեանսն անապականս, եւ ոմանք ի տանջանսն անվաղճան, զոր մարգարէն յառաջագոյն գուշակեաց զվերջին առաւատն, իբր աստուծոյ ասել. «Ընդ առաւատս սպանանէի*[2] *զամենայն մեղաւորս երկրի, սատ[ակեցից] ի քաղաքի Տեառն»* **(Սղմս. ճ. 8)**:

ԻԸ. 1 *Եւ որ յետ սորին պատմի, յորո՞ւմ ժամու ամենայն հաւատացելոց պարտ է աղաւթել, զապրուստ պատժոց ժամուն այնորիկ հայցել, եւ հանդիպել երան|234ա|ելեացն պարգեւաց:* **2** *Եւ յայսոսիկ ժամս կատարի երգ մարգարէիս*[3] *«Եւթն անգամ յաւ[ուր] աւրհն[եցիցք] վասն իրաւանց եւ արդարութեան քո»* **(Սղմս. ճԺԸ. 164)**:

ԻԹ. 1 *Այլեւ է. (7) խորհրդով պարտ է մեզ*[4] *աղաւթել է. (7) անգամ, զոր Տէրն յանձին կալաւ. յղութիւն, ծնունդ եւ մկրտութիւն, աճումն, չարչարանքն եւ մահն, թաղումն, յարութիւնն:* **2** *Քանզի ասէ ի Յոբն. «Վեցիցս փրկի*[5] *ի վշտաց, եւ յէ.ումն (7) ոչ հարկանի»* **(Յոբ Ե. 19)** *զի Տէրն այլ ո՛չ մեռանի:* **3** *Եւ մեք յէ. (7) զաւրութիւն հոգւոյն ոյժ առեալ, զէ. (7) խորհուրդ Տեառն զանձամբ արկեալ, ո՛չ հարկանիմք վասն իրաւանց եւ արդարութեանն, զոր արար Տէր Խաչիւն իւրով եւ կենդանարար մահուամբն:* **4** *Իսկ կատարելագունիցն Թ. (9) լինել ժամուցն որոշումն:* **5** *Այս նոցա՛ է, որ քրիստոսեանքն ասին, ըստ որում առաքելոցն, որք մարմնոյ կարեաւք խաչեալ են աշխարհի:*

Լ. 1 *Իսկ արեւգալս եւ արեւմուտս սահմանել ժամս աղաւթից:* **2** *Եւ այս մարգարէին իմանի, զի ասէ. «Աւրհն[եսցէք] զԱստուած եւ սաղմոս ասացէք այնմիկ, որ նստի ընդ արեւմուտս»* **(Սղմս. Կէ. 5)**: *Եւ դարձեալ ասէ. «Թագաւորութիւնք երկրի աւրհնեցէք զԱստուած, սաղմոս այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս»* **(Սղմս. Կէ. 34)**: **4** *Զոր եւ Գրիգոր Աստուածաբան զյետոյսն բանիս յառաջ դնելով ասէ. «Որ փառաւորեալն է ի յերկինս երկնից յիւրում փառսն եւ ի պայծառութեանն, եւ յարեւմտի՛ց փառաւորի ի մերմէ նուաստութենէս՝ ի մարդկութենէս, եւ Որդին Աստուծոյ ներէ որդի մարդոյ լինել եւ կոչել:*

ԼԱ. 1 *Արդ, ահա եւ այս |234բ| ըստ մարգարէին գուշակութեանն, եւ ըստ սուրբ առաքելոյ վերասացութեան, եւ ըստ մեծին Դիոնէսիոսի կարգաւորութեանն աթենացոց առաջին եպիսկոպոսի Արիոս[պա]գացոյ, յորում պարտ է մեզ ստէպ կալ աղաւթից յայսոսիկ ասացեալ ժամքս, ի խորհուրդ փրկութեանն մերոյ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, Որում փառք յաւ[իտեանս]:*

---

[1] *Ճ՝ յաջմեանքն, յահեկանաց դասքն*
[2] *ՁՃ՝ սպանանէ*
[3] *Ճ՝ մարգարէիցն*
[4] *ՁՃ՝ > մեզ*
[5] *Ձ փրկել, Ճ՝ փրկել*

ԻԱ.

|234բ| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑՈՅ ՅԵՐԳՍ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՆ ՄՈՎՍԻՍԻ ԵՒ ՈՐԴՈՅՆ ԻՍՐԱՅԻՂԻ

Այս ընդարձակ քարոզը, ամենայն հավանականությամբ, Հովհաննես Եզնկացու այն դասախոսությունների թվին է պատկանում, որոնք նա կարդում էր վանական հաստատություններին կից բարձրագույն դպրոցներում:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ըստ ՄՄ 2173 (Ա. 234բ-54բ) ձեռագրի:

Ա. 1 *Աստուածային հրաշիցն պատմութիւնք եւ լուր, եւ աստուածագործ սքանչելեացն տեսութիւնք բնաւորեալ է ահ եւ երկեւղ գործել մարդկային բնութեանս, որպէս եւ ասէ ոմն տեսանող սքանչելի. «Տէ՛ր, զլուր քո լուայ եւ երկեայ, նայեցայ ի գործս քո եւ զարհ[ուրեցայ]»* (**Ամբ. Գ. 2**)*:* **2** *Իսկ կիրք երկեղի եղեալ յումէք՝ սկիզբն է իմաստութեան, որպէս աստուածայինն Սողոմոն մեզ ուսուցանէ. «Սկիզբն իմաստութեան, ասէ երկեղն Տեառն» (Առակ. Ա. 7), վասն զի յանճառելիսն Աստուծոյ բուռն հարկանել տեսական իմաստութեամբ, նախ առաջին՝ երկեղն լինի դաստիարակ բարձրագունիցն եւ մեծաձայն բաղաձանաց հասողութեան:* **3** *Եւ այս իսկ էր պատճառ մարգարէիցն եւ աստուածամերձ արանց նախատեսութեան եւ իմաստութեանն աստուածային կցորդութեան:* **4** *Զի երկեղին երասանակաւք եւ սանձիւք վարժեալք, եւ զմաքուր սրբութիւն յանձինս ստացեալ, վասն այնորիկ, իբր ընդ հայելի պայծառ, զգործ սքանչելի իմաստութեանն Աստուծոյ տեսին, եւ զքաղ|235ա|ցրութեանն Նորա ճաշակ ուսումնական վարժողաց ջամբեցին:*

Բ. 1 *Եւ զի թէպէտ սեռականապէս մի՛ է անուն երկեղին, այլ ի զանազան տեսակս որոշեալ տեսանի, զի բաժանի երկեղ ի պակումն, ի զարհուրումն, ի հիացումն, ի տագնապ, ի խորշումն, ի յամաւթ:*

Գ. 1 *Եւ է՛ պակումն՝ մածումն արեան եւ ընդարմացումն, երկեղ ապառնոյ ներգործութեանն:* **2** *Որպէս դատաւոր ոմն Մանուէ անուն՝ յերեւման Աստուծոյ եղեալ, «Կորեա՛ք ո՛վ կին, ասէ, վասն զի զԱստուած տեսաք»* (**Դատ. ԺԳ. 22**)*: Իսկ հիացումն երկեղ լինի ի մեծ ինչ տեսութենէ, որպէս աստուածաբան մարգարէն Եսայիաս, տեսեալ զՏէր նստեալ յաթոռ բարձր եւ վերացելոյ եւ սերովբէք վեցթեւեանք՝ լուսակերպք եւ հրակիզողք՝ շուրջ զնովաւ, ասէ. «Վա՛յ ինձ, զի այր տառապեալ եմ ես, զի մարդ եմ եւ պեղծ շրթունս ունիմ, եւ զՏէր զաւրութեանց տեսի աչաւք իմովք»* (**Եսայ. Զ. 5**)*:*

Դ. 1 *Իսկ զարհուրումն երկեղ լինի յանսովոր տեսութենէ։* 2 *Որպէս որդիքն Իսրայիղի, ո՛չ կարելով բերել զփառս երեսացն Մովսիսի անհամեմատ մարդկային կերպարանի եւ դիմաց, լուսակերպեալ տեսանելով զդէմս երեսացն Մովսիսի, պատրուակի կարաւտէին, եւ զարհուրեալք ո՛չ իշխէին հայել։*

Ե. 1 *Իսկ տագնապ է՛ երկե՛ղ ի կործանմանէ եւ ի վրիպանաց գործոյ, որպէս մեծն Պաւղոս լոյս սաստիկ յերկնից ահաւոր տեսեալ, առաւել քան զչափ մարդկային տեսողութեան, յահագին տեսութենէն տագնապեալ յերկիր անգանէր, եւ շրջուցեալ յաչացն յահեղ ձայնէ բարբառոյն, ի կասկածի եղեալ կործանէր, որ ասէր. «Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալ|235բ|ածես զիս» (Գործ. Թ. 4, ԻՁ. 14)։* 2 *Եւ կամ որպէս վէմն հաւատոյ՝ գլուխն առաքելոցն Պետրոս, ի վերայ ընդդմիչ խորոցն ծովուն գնալով տեսանէր զՏէրն մարդկային մարմնով, եւ մերձ ի նաւն եղեալ, ասէ. Ի բա՛ց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես» (Ղկ. Ե. 8), վրիպումն եւ կործանումն կարծեալ զանսուրբն ի սուրբն հպիլ։*

Զ. 1 *Արդ, բազումք են յաստուածային գիրս պատմութիւնք սքանչելի գործոց, բայց ոչ այնքան մեծահրաշ եւ նորանշան սքանչելագործութիւնք, ահաւոր եւ զարմանալի, որպէս զԿարմիր ծովուն պատմութիւն, եւ զբաժանումն ջուրցն հզաւր՝ հրամանաւ բաժանողի մեծի նախամարգարէին Մովսէսի։* 2 *Որ եւ խառնեալ ունի յինքեան զամենայն մասունս երկեղին եւ երկուց ընդդիմակաց ներհական կրից զաւրութիւնք, ի միոյ իրագործութիւն տեսանի բաժանեալ։* 3 *Ոմանց անագին պակուցումն եւ պատճառ կորստեան, եւ կիսոց ուրախալից խնդութիւն եւ առիթ փրկութեան, որ եւ այս իսկ ի կարի յոյժ հիացումն ածէ զբոլորից ազինս։*

Է. 1 *Արդ, որ ինչ յայն ժամու տեսութիւնք հրաշից, եւ որ ինչ այժմ մեզ պատմութեանս լո՛ւր բոլորովին լի՛ է երկեղիւ եւ մտածութեանց զարմացումն, եթէ յիշելով զբան համբերող նահատակին Յոբայ (տե՛ս Յոբ Գ. 25, Դ. 6), եւ որպէս քիմք՝ զկերակուր, այսպէս մտաւք զճաշակս Բանին քննիցէմք, զոր ըստ կարգի ուսանիմք ի պատմութենէն, որ ասէ. «Յայնժամ երգեաց Մովսէս եւ որդիքն Իսրայիղի զաւրհնութիւնս զայս Աստուծոյ», եւ ասեն. «Աւրհնեսցուք զՏէր, զի փառաւք է փառաւորեալ» (Ելք ԺԵ. 1, 21)։*

Ը. 1 *Արդ, ի վերնագրէ աստի երեւին Զ. (6)* |236ա| *գլուխք արտասանութեան. ժամանակ եւ տեղիք, դէմք եւ իր, յեղանակ եւ պատճառ։* 2 *Զի ասելն յայնմ՝ «երգեաց Մովսէս եւ որդիքն Իսրայիղի», զկատարումն ժամանակի խոստման աւետեացն Աբրահամու ցուցանէ, եւ զյեղանակ փրկագործ ազատութեանն նոցա։* 3 *Իսկ զի դէմք Մովսէս եւ ամենայն որդիքն Իսրայիղի, բիւրաւոր բազմութիւնն արանց եւ կանանց, ծերոց, եւ*

տղայոց, երիտասարդաց եւ կուսից, յորոց միջի շքեղակերպ ծերունիքն Մովսէս եւ Ահարոն առաջնորդք եղեն ժողովոյն, եւ անբաւ պատերազմական արանցն, զայս նուագ աւրհնութեան հնչեցեալ երգէին։

Թ. 1 *Իսկ տեղիք հրաշագործութեանն Կարմիր ծովն, որոյ յատակն բացեալ լինէր կանաչագոյն երկիր եւ բարձրադէզ ջուրն՝ վերնական երկին։* 2 *Իսկ նորասքանչ իրագործութիւնն, զոր տեսին ի վեր՝ քան զսահման բնութեան, լինէր նոցա պատճառ անվճար երախտեացն Բարեգործին երգել զաւրհնութիւնս զայս եւ ասել «Աւրհնեսցուք»։*

Ժ. 1 *Բայց եթէ յորմէ հետէ արկաւ հիմն սքանչելի այսմ խորհրդաւոր փրկութեան, համառաւտ պատմաբանութեամբ ասելի է զժամանակն եւ զյեղանակն, ուստի սկսեալ գայր յարմարութեամբ ի կատարումն։* 2 *Վասն զի յելիցն Ադամայ՝ աստուածաստեղծ մարդոյն առաջնոյ, մինչեւ յերկրորդ հայրն աշխարհի՝ յարդարն Նոյ, լինին ամք ՍՄԽԲ. (2242), որ եւ Ժ. (10) նահապետաւք գայ՝ հասանէ սերմն եւ կայծակն աստուածպաշտութեան մինչ ի սրբասէրն Նո՛յ, որ պահեաց տապանաւն սերմն կենդանութեան աշխարհի, եւ յետ* |236բ| *ելանելոյ ի տապանէն, բաժանեաց զաշխարհ երից որդոցն։* 3 *Սեմայ ետ զաշխարհն Պարսից եւ զԱսորւոց, եւ զՊաղեստինէ մինչեւ Յոռնուկուրուրա՝ որ է Նեղոս գետ։* 4 *Եւ եղեւ բաժին Սեմայ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու ընդ մէջ երկրի Եփրատ գետով եւ Դկլաթաւ։* 5 *Եւ Քամայ յետ Յոռնոյկուրուրոյ մինչեւ ի Գադիրոն զկողմ հարաւոյ՝ յարեւելից մինչեւ ի մուտս, եւ գետ զԳեհոն, որ բաժանէ զսահմանս նոցա։* 6 *Իսկ Յաբեդի ետ ի Մադէէ մինչեւ ի Գադիրոն, զկողմ հիւսիսոյ՝ ի յակնէն Տիգրիս գետոյ, որ բաժանէ ընդ Մադէ եւ ընդ Պարս։* 7 *Իսկ Սէմ՝ անդրանիկն Նոյի, ժառանգեաց զոսկերս նախաստեղծիցն եւ անփոփեաց ի վիճակ կալուածոցն իւրոց, զի վշտացուցանէին զնա Քամ եւ որդիքն իւր։* 8 *Եւ լինին ի ջրհեղեղէն՝ մինչ ի շինութիւն աշտարակին ՇԻԵ. (525) ամ, իսկ յետ փլանելոյ աշտարակին եւ բաժանման լեզուացն՝ որդիքն Քամայ՝ Ժ. (10) ազգ եկին յերկիրն փըղշտացւոց, եւ առ լերամբն Կարմեղայ եւ Լիբանանու, եւ հայեցեալ ի պարարտութիւն երկրին եւ ի վայելչութիւն, բռնացեալ ի վերայ ազգին Սեմայ, առին զնա, եւ անկան կրկին ի նզովսն Նոյի, վասն ծիծաղելոյ զմերկութիւն հաւրն, եւ վասն փոխելոյ զսահմանս, յորմէ պարտ է խրատիլ որդոց եւ զգուշանալ յայսպիսի գործոց (տե՛ս Ծն. Թ. 20-27)։*

ԺԱ. 1 *Եւ լինին յաշտարակէն մինչեւ յԱբրահամ ՆԺԷ. (417) ամ։ Եւ ՀԷ. (77) ամին Աբրահամու արդարադատն Աստուած խոստանայ նմա զերկիրն, որ եւ ելեալ զհետ հրամանին Աստուծոյ, գայ մինչ ի Սիւքէմ եւ ի կաղնին բարձր, որում երեւեալ Աստուծոյ, ասէ. «Զաւակ* |237ա| *ի՛քում*

տաց զերկիրս զայս» (**Ծն. ԺԲ. 7**)։ 2 *Երկու խոստմունք լինի տեղւոջն. իշխանութիւն երկրին եւ ծնունդ զաւակին։* 3 *Եւ յետոյ կրկին եւս հաւատարմացուցանէ զխոստումն՝ առնել զզաւակս նորա անթիւ, իբրեւ զաստեղս երկնից եւ իբրեւ զաւազ ծովու, եւ ասէ. «Հայեա՛ց յերկիրդ, զի քե՛զ տաց զդա եւ զաւակի քում»* (**Ծն. ԺԳ. 15**)։ 4 *Որում հաւատաց Աբրահամ եւ արդարացաւ, որով եւ գովեցաւ իսկ, եւ ոչ մնայ երկբայութեան ինչ կարծիս ի նմա։* 5 *Բայց նշանակ խնդրէ հաստատութեան խոստմանն եւ ասէ. «Տէր, Տէր ի՞ւ գիտացից, եթէ զաւակն իմ ժառանգեսցէ զերկիրս զայս, որ լի է բնակչաւք քանանացւոցս»* (**Ծն. ԺԵ. 8**)։ 6 *Եւ ետ նմա Աստուած նշանակ զմատուցումն պատարագացն ի չորից կենդանեաց, եւ ասէ. «Գիտելով գիտասջիր, զի եղիցի զաւակ քո պանդուխտ յաւտար երկրի, որ ո՛չ իւր իցէ։ Եւ ծառայեցուսցեն զնա եւ չարչարեսցեն ամս չորեք հարիւր, բայց զազգն, որում ծառայեսցեն՝ դատեցայց ես»* (**Ծն. ԻԵ. 13**)։ 8 *Ասէ Աստուած, եւ ոչ եթէ գերի երթան, այլ կամաւ պանդխտանալ։* 9 *Եւ վասն այնորիկ թոյլ տամ չարչարել, զի հանգիստ գտանելով յերկիրն՝ յելանելն ո՛չ յաւժարին։* 10 *Եւ ո՛չ եթէ զԴՃ. (400) ամն նեղեցան, զի ԲՃ. եւ ԻԵ. (225) ամ եղեն նոքա յԵգիպտոս, զի ցորքան կենդանի՛ էր Յովսէփ, պատուով կացին։*

ԺԲ. 1 *Եւ ԴՃ. (400) ամք նոցա թուին այսպէս, սկսեալ յաւետեացն Աստուծոյ առ Աբրահամ, վասն երկրին աւետեաց, եւ վասն Իսահակայ։* 2 *Եւ յՀ. եւ Ե. (75) ամին Աբրահամու եղեւ նմա աւետիսն։* 3 *Եւ յետ ԻԷ. (27) ամին Ճ. (100) ամաց եղեալ Աբրահամ, ծնաւ զԻսահակ, ըստ աւետեացն։* 4 *Եւ Իսահակ Կ. (60) ամաց* |237բ| *ծնաւ զՅակովբ։* 5 *Եւ Յակովբ ՃԼ. (130) ամաց եմուտ յԵգիպտոս, որ լինի ԲՃ. եւ ԺԷ. (217) ամ։* 6 *Զայսքան ամս, որ յերկիր ժառանկութեան իւրեանց բնակեալ էին յԵգիպտոս, ի ծառայութիւնն համարեալ լինի։* 7 *Իսկ յորժամ եմուտ Յակովբ որդովքն իւրովք յԵգիպտոս, ի պատճառս սովոյն եւ ի համբաւ կենդանութեանն Յովսիփայ ասորւոց թարգմանն Հ. (70) հոգի ասէ, իսկ Հ. (70) թարգմանքն ոգիք ՀԵ. (75) ասեն* (**տե՛ս Ծն. ԻՁ. 27**)։ 8 *Եւ կացին յԵգիպտոս ԲՃ. եւ ԺԵ. (215) ամ, որք թուեալ համարին այսպէս, զի Զ. եւ Թ. (89) ամին իւրում ծնաւ Յակովբ զՂեւի եւ Ղեւի լեալ ամաց ԽՁ. (46) ծնանի զԿահաթ։* 9 *Արդ, ԽԱ. (41) ամաց էր Ղեւի, յորժամ մտին յերկիրն, եւ Ե. (5) ամ եղեալ յԵգիպտոս, ծնաւ զԿահաթ։* 10 *Կահաթ լեալ ամաց Կ. (60), ծնաւ զԱմրամ։* 11 *Ամրամ Հ. (70) ամաց ծնաւ զՄովսէս։* 12 *Մովսէս Զ. (80) ամաց եղեալ հանէ զժողովուրդն, որ լինի Ե.ն (5) եւ Կ.ն (60) եւ Հ.ն (70) ԲՃ. (200) եւ ԺԵ. (15) եւ կատարին ամք ԴՃ. եւ Լ. (430)։* 14 *Քանզի յետ մահուանն Յովսէփու, ապա մտին ի ծառայութիւն եւ ի չարչարանս եգիպտացւոցն,*

որ է այսպէս Յակովբ ՂԱ. (91) ամաց ծնաւ զՅովսէփ, եւ Յովսէփ ԺԵ. (17) ամաց վաճառեցաւ յեղբարց իւրոց եւ Լ. (30) ամաց եղեալ տիրեաց եգիպտացւոցն Զ. (80) ամ. եւ ՃԵ. եւ Ժ. (110) ամաց եղեալ վախճանեցաւ:
15 *Որպէս ասէ պատմութիւնն, թէ վախճանեցաւ Յովսէփ եւ ամենայն ազգն այն:* **16** *Քաղեցաւ ընդ նոսին եւ աստուածպաշտութեանն շնորհ, վասն որոյ ի Զ. (6) ամին Ամրամայ եւ ՄՁՁ. (286) ամի խոստմանն Աստուծոյ, յետ մահուանն Յովսիփու, մտին որդիքն Իսրայիղի ի ծառայութիւն:* **17** *Եւ եղեւ չարչարանքն եւ ծառ|238ա|այութիւնն նոցա ՃԽԴ. (144) ամ, քանզի յետ մահուանն Յովսէփու Զ. (6) ամ էր Ամրամայ:* **18** *Եւ Հ. (70) ամաց ծնաւ զՄովսէս եւ Մովսէս Զ. (80) ամաց հանէ զժողովրդն [ուրդն] ԿԴ. (64) ամ Ամրամայն եւ Զ. (80) Մովսիսին, որ լինի ՃԽԴ. (144) ամք ծառայութեանն:* **18** *Զի յետ մահուանն Յովսէփու՝ թագաւորեաց յեգիպտոս Քեբրոն՝ ամս ԺԳ. (13), եւ յետ նորա Ամենափթիս՝ ամս ԽԳ. (43):* **20** *Սա սկսաւ հեղձուցանել զտղայսն Իսրայիղի ի Նեղոս գետ:*

ԺԳ. **1** *Եւ ըստ կարգի այլոցն՝ ընգեցեալ լինէր եւ Մովսէս:* **2** *Եւ եբարձ զնա Թերմոթիս դուստրն Փարաւոնի, զոր եբրայեցիքն Մառի՛ կոչեն, որ եղեւ կին Քանաթրա թագաւորին Մեմփիս քաղաքի:* **3** *Եւ ապրեալ Մովսէս ի ջրոյն Յ. (300) ժամ ի խոստմանն Աստուծոյ, եւ եղեալ Ժ. (10) ամեայ՝ տրաւ յուսումն ի Յանէսն եւ ի Յամրէսն, որ էին վարժեալք քաղդէացւոց եւ յունաց ճարտարութեանն, յաւելին եւ զԵգիպտոսին:* **4** *Ի ԻԲ. (22) ամին Մովսիսի սկսաւ կաւագործութիւնն Իսրայիղի:* **5** *Ի ԻԸ. (28) ամին իշխանացաւ Մովսէս եւ շինեաց զՀերմոպալիս քաղաք եւ կոչեաց յանուն սնուցչին իւրոյ Մառիս:* **6** *Ի սոյն ժամանակի եթէոպացիքն, որ հարկատուք էին եգիպտացւոցն, ապստամբեալ՝ եկեալ գերեցին զԵգիպտոս եւ զՄառի զանուանեալ մայրն Մովսէսի:* **7** *Եւ Մովսէս եղեալ զաւրավար Եգիպտոսի, կռուեցաւ ընդ Եթովպիայ զԺ. (10) ամ, էառ զաշխարհն եւ զքաղաքն նոցա, եւ ա՛ռ զթագուհի նոցա զԹեսբաս, եւ զՄառի մայր իւր դարձոյց յԵգիպտոս:* **8** *Եւ ԻԲ. (22) ամէն Մովսիսի մինչեւ ի Խ. (40) ամն նորին ծանրացաւ գործ աղիւսարկու|238բ|թեան ի վերայ Իսրայիղի, յորում ժամանակի ե՛լ առ եղբարս իւր ողորմել եւ այց առնել նոցա, եւ ըստ կարի թեթեւացուցանել զսակ աղիւսոյն:* **9** *Իսկ յետ մահուանն Մառեայ՝ մաւրն նորա, նախանձ ունելով թագաւորն Մեմփեայ, որ առաքեաց զՔանթիս՝ չարչարիչն Իսրայիղի սպանանել զՄովսէս, որսալով պատճառս ինչ, որ եկեալ հարկանէր զոմն եբրայեցի, սակս հարկի աղիւսարկութեանն:* **10** *Զոր տեսեալ Մովսիսի, ասէ գիրն, զոմն եգիպտացի, զի հարկանէր զոմն եբրայեցի, սպան զնա եւ ծածկեաց ընդ աւազաւն (տե՛ս ելք Բ. 12), զի լցեալ էր ԴՃ. (400) ամն ծառայութեան նոցա:* **11** *Եւ զի*

յերկրորդ աւուրն խաղաղութիւն կամեցաւ առնել ի մէջ երկու եբրայեցի արանցն, որ վիճէին, եւ այն, զոր փրկեացն, ասաց, եթէ ահա երեւեցաւ մեզ փրկիչ։ 12 *Իսկ, որ զրկէրն զընդերն, հրապարակեաց զբանն, «Մի՞թէ սպանանել կամիցիս զիս, զոր սպաներ երէկ զեգիպտ[ացին]» (***Ելք ԺԴ.***)։*

ԺԴ. 1 *Եւ վասն այսմ բանի յաւելաւ Լ. (30) ամ ծառայութեանն, զի Ն. (400) լցեալ էր։* 2 *Եւ զի մայրն նորա մեռեալ էր, կամէր սպանանել զնա փարաւոն, զի այրն, զոր եսպան, իշխան էր զընտանի ոմն սպանելոյն, եդին թագաւոր յորմէ փախեալ Մովսէս ի Մադիամ, եւ թափեաց զդստերս քրմին ի զրկող հովուացն, եւ փեսայացաւ նմին ի Սեփովրա դուստր նորա, որոյ եղեալ որդի, կոչեաց նմա անուն զկիրս անձին իւրոյ Գերսամ, որ է պանդուխտ։* 3 *Իսկ յետ մահուանն եգիպտացւոյն, ի Մովսիսէ չարացան եւ նեղէին յոյժ սաստիկ զԻսրայէլ։* 4 *Եւ նոքա աղաղակէին ի վեր։* 5 *Եւ ել աղաղ|239ա|ակ նոցա առաջի Աստուծոյ, եւ այն ոչ երբէք մոռանայ։* 6 *Յիշեաց զուխտն իւր, որ ընդ Աբր[ահամ], եւ երեւեցաւ Մովսէսի ի մորենոջն հրով, կրկին տալով իմաստս՝ զլուսաւորական խնամսն ցուցանելով արժանաւորացն, եւ զկիզողականն՝ անարժանիցն։* 7 *Եւ անարգ թուփն յաւրինակ Մովսիսի, զի անդ երեւելովն եցոյց, թէ ի հեզս եւ ի խոնարհս հանգչի Աստուած, զոր եւ կոչեաց ի միջոյ մորենոյն եւ ասէ. «Զի՞ է»։* 8 *Եւ ասէ. «Լոյծ զկաւշիկս յոտից քոց, զի տեղիդ, յորում կաս, երկիր սուրբ է» (***Ելք Գ. 5***)։* 9 *«Մեռելութիւն խորհրդոյ եւ ախտ անասնական մի բերցի ընդ քեզ, զի ե՛ս եմ Աստուած հարցն քոց, Աստուած Աբր[ահամայ] եւ Աստուած Սահ[ակայ], եւ Աստուած Յակ[ոբայ], Հնազանդ լեր ինձ, իբրեւ զնոսա» (***տե՛ս Ելք Գ. 6***)։* 10 *Եւ ի վերայ երից անուանցն զԱստուածն ասելով, զանձնաւորութիւն երրորդութեանն յայտնեաց։*

ԺԵ. 1 *Լոյծ զկաւշիկդ եւ կոխեա զԵգի[պտոս] իբր զողկոյզ ի հնձանի, զի տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ, եւ յանհաս բարձրութենէ իմմէ իջի փրկել զնոսա եւ տանել ի խոստացեալն երկիր Աւետեաց, որ բխէ զկաթն եւ զմեղր։* 2 *Ե՛կ առաքեցից զքեզ առ փարաւոն։* 3 *Եւ զի ի մտի ունէր զերկեղ սպառնալեացն, ասէ. «Ո՞վ եմ ես, զի երթայց առ փարաւոն» (***Ելք Գ. 11***)։* 4 *Եւ ասէ. «Ե՛ս եկից ընդ քեզ»։* 5 *Եւ ես ընդ քեզ գոլով, ի մահու մի՛ երկիցես։* 6 *«Եւ այս նշանակ քեզ, զի ա՛ստ գտանէք զիս եւ պաշտեսջիք ի լերինս յայսմիկ» (***տե՛ս Ելք Գ. 12***)։* 7 *Եւ հարցեալ զանունն, ասէ. «Այսպէս ասասջիր, որ էն առաք[եալ] զիս առ ձեզ» (***Ելք Գ. 14***)։* 8 *Եւ այս ո՛չ բնութեանն է յայտնիչ, այլ՝ գոյութեանն եւ էութեանն, ընդդէմ չէիցն։* 9 *Եւ զի նոքա խաբեցին զժող[ովուրդ] իմ գնալ ի քանանացւոց երկրէն յԵգիպտոս եւ ազատութեամբ կալ, |239բ| խաբեա՛ եւ դու, եթէ աւուրց ճան[ապարհ] երթիցուք պաշտել զԱստուած։* 10 *Եւ այսպէս առ զվարձ աղիւսարկութեանն Աստուծոյ։ Եւ տուեալ զգաւազանն հրաշագործ ի ձեռս նորա, առաքէ յԵգիպտոս զաւրութեամբ նշանացն։*

ԺԶ. 1 *Եւ արար զՄովսէս միտք զաւրաւոր իմաստիւք, եւ զԱհարոն եղբայր նորա բա՛ն պատգամախաւս, զի սա պատմեսցէ զփառսն Մովսիսի։* 2 *Եւ արարեալ նշանս առաջի ծերոցն եւ ժողովրդեանն, երկիր պագին Տեառն եւ հաւատացին։* 3 *Եւ ապա մտեալ առ փար[աւոն] խաւսեցաւ զհրամանս պատգամացն Աստուծոյ։* 4 *Եւ փար[աւոն] անլուր եղեալ, ծանրացոյց գործ ժողովրդեան ո՛չ տալ յէրդ աղիւսագործութեանն, եւ պահանջել զնոյն թիւ, զոր յառաջն տային։* 5 *Եւ ո՛չ արձակեաց զժող[ովուրդ], մինչ տանջեաց զնա Աստուած Ժ. (10) հարուածովք, ի ձեռն Մովսիսի, եւ վերջին եւ ծանր հարուած՝ մահ անդրանկաց նոցա, զի անդրանիկքն եգիպտացւոցն սատակեալ լինէին ի գիշերի։* 6 *Եւ սեամք դրանց իսրայէլացւոց աւծեալ արեամբ գառանցն, ո՛չ մերձենայր ի նոսա սատակիչն։* 7 *Եւ առեալ ժողովուրդսն զհայսն ի կտաւսն մինչ չեւ խմորեալ էր եւ ելին՝ յաւրինակ խրատու, զի մի՛ առցեն ի չար խմորոյ եգիպտացւոցն ընդ ինքեանս։*

ԺԷ. 1 *Եւ չուեցին ժողովուրդն ՁՃՌ. (600.000) արանց հետեւակաց՝ ի քսան ամենից եւ ի վեր, եւ վաթսնից ի խոնարհ։* 2 *ՀԵ. (75) հոգիք մտեալք այսքան ելին, բա՛ց ի ծերոց եւ ի կանանց եւ ի տղայոց, զի յաւրհնութենէն Աբրահամու այսքան աճեցին ի պանդխտութեան։* 3 *Եւ յՀ եւ Ե. (75) ամէն Աբրահամու, մինչեւ յելսն լինին |240ա| ԴՃ. եւ Լ. (430) ամ։* 4 *Եւ յետ ԴՃ. եւ Լ. (430) ամին ելին զաւրութիւնք Տեառն յերկրէն եգիպտացւոց, որ բնակեալ էին անդ Յովսիփաւ զաւրութիւն Տեառն բազում, եւ ելին յերկրէ նոցա, զի փոխանակ բարոյն Յովսիփայ չար հատուցին, ելին շահեկանութիւն եւ շնորհքն Աստուծոյ յԵգիպտոսէ։* 5 *Եւ առաջնորդեաց Իսրայէլի Աստուած ընդ ծով եւ ընդ անապատ, զի մի զոք նեղեսցեն ընդ շէն երկիր, եւ նիւթ լիցի անապատն աքանչելեացն Աստուծոյ։*

ԺԸ. 1 *Եւ ա՛ռ Մովսէս զոսկերսն Յովսէփու ընդ իւր, լա՛ւ համարեալ քան զամենայն գանձսն եգիպտացւոցն։* 2 *Եւ առաջնորդեաց Աստուած սեամբ լուսոյ, ի գիշերի ցուցանել զճանապարհն, եւ սեամբ ամպոյ հովանի լինէր ի տուէ։* 3 *Եւ ել փարաւոն ՁՃ. (600) կառաւք զհետ նոցա եւ բազմութեան զաւրաւք։* 4 *Եւ հրամանաւն Աստուծոյ ձգեալ Մովսէս զգաւազանն եւ պատառեաց զծովն, անցուցանել զորդիսն Իսրայիղի։* 5 *Եւ ամբարձաւ հրեշտակն Աստուծոյ եւ եկաց յետուստ կողմանէ հանդերձ ամպովն, եւ կտրեաց ի մէջ Իսրայիղի եւ եգիպտացւոցն։* 6 *Եւ եղեւ խաւար եւ մէգ, եւ ո՛չ խառնեցան։* 7 *Եւ ձգեալ Մովսէս զձեռն խաչանիշ գաւազանաւն, ասաց. «Այիա, Աստուած իմ առաջի՛ իմ»։* 8 *Եւ յաջակողմ ձգեալ ասաց. «Շրայիա, դու հանէր զմեզ Աստուած»։* 9 *Եւ ի ձախն ձգեալ, ասաց. «Ադոնիա, Տէրդ տերանց ընդ մեզ»։*

ԺԹ. 1 *Եւ ցամաքեցաւ յատակ ծովուն լայն եւ ընդարձակ, մինչ երկոտասան ցեղքն Իսրայիղի հանդէպ երեսաց իւրոց մտին, եւ ջուրն պարիսպ էր աջմէ նոցա եւ ընդ ահեկէ։ 2 Զի որ ստեղծ զնա լոյծ բնութիւն, աստ փոխեայ ի պնդութիւն, ըստ նմանութեան կարծ|240բ|րագոյն քարանց հաստատութեան կալ խոնաւ բնութեանն։ 3 Եւ ըստ վկայութեանն Դաւթի. «Հե՛ր զծովն մեծ եւ բաժանեաց յերկուս մասունս, եւ անցոյց զԻսրայէլ» (Սղմս. Հէ. 13)։ 8 Եւ եղեւ յառաւաւտուն պահուն հայեցաւ Տէր ի բանակն եգիպտացւոց, զի առաւաւտուն անցին ընդ ծովն, եւ ելին զհետ փարաւոն եւ զաւրքն իւր, կարծելով թէ եւ նոցա գնալի է խորք ծովուն, որպէս աստուածատես ազգին։ 5 Իսկ այն, որ եբաց խաչանիշ փայտիւն, դարձեալ փակեաց, դարձուցանելով զջուրն ի սահման բնութեանն իւրոյ թաւթափելով զեգիպտացիսն ի նմա, զոր յանդէպ ժամու գոչեալ, ասէին. «Փախիցուք, զի Տէր պատերազմի ընդ եգիպտացիսս» (Ելք ԺԴ. 25)։*

Ի. 1 *Վասն որոյ ախորժելի զայն ժամու զհրաշիցն գործ փոքր բանիւ ի յիշատակ ածել լսողացդ, զի փոխանակ տեսանելեաց՝ լսելիք ձեր եղիցին. եւ զմասունս երկեղին միտք ձեր իմաստասիրեսցեն։ 2 Քանզի էր տեսանել անդ՝ յանդնդական խորս ծովուն միայար եւ համատարած ջուրցն բազմութեան յերկուց կողմանց յարուցեալ հատածս բարձրագոյն, եւ ի միջոցին զատուցեալ փողոցս՝ տարորոշեալս եւ բացակայս՝ յաջ եւ յահեակ պատառածս պարսպաւորս կանգնեալ։ 3 Եւ թէպէտ աստի-անտի ջուրք ծովուն դղորդմամբ յողդողդեալ, բռնութիւն ալեացն ամբոխեալ շարժէր, այլ ի նոյն պարիսպ հասեալ, իբր ընդ հաստատուն վիմի բախելով, անդրէն ընդ կ[տ]րուկ ընդգրկեալ ի նոյն դառնայր։ 4 Եւ նորաբաց յատակ ծովուն լինէր |241ա| պողոտայս լայնընթաց եւ արքունական ճանապարհ գնացից, յոգնախուռն ժողովրդեանն բազմութեան, յորոց միջի յուղղի անգեալ, ընդ նոր շաւեղն եւ ընդ ճանապարհն գործեալ հրաշիւք գնային, որոց հայեցուածք աչաց ո՛չ ի տեղի՛ գարշապարացն, այլ ի կատարս պարսպացն գլխամբարձ ամբառնային։*

ԻԱ. 1 *Յայսցանէ լինէր թշնամեացն կողման տագնապ եւ երկեղ կործանման, ահագնահայեաց երեւմանն կասկածելոյ, զի իբրեւ կապով շղթայից անխաղաց անուաց կառացն նոցա լինէր, եւ ո՛չ արագապէս շարժմամբ հոլովէին, այլ բռնադատեալք յեզր ծովուն քարշէին, եւ երիվարքն, իբրեւ կապեալք յոտից, ի վայր մղեալք լինէին։ 2 Եւ անդէն անզերծանելի տարակոյսք զնոսա պատեալ պաշարէին, երկեղ պակուցման, մածումն արեան եւ ընդարմացումն, յապառնոյ ներգործութեանն կասկածանաց՝ ակնկալութիւն ջրասոյզ լինելոյ, որ եւ ժամանէր նոցա երկեղն, յորմէ խիթային, զի պատառումն բարձրադէզ ջուրցն կոհակաց,*

զաւրութեամբն Աստուծոյ եւ բաժանող ձեռին՝ Մովսիսի վերաձգելով զի-ջուցեալ հաւասարէր, եւ զեգիպտացիսն խորասուզեալ ընկղմէր։ **3** *Իսկ իսրայէլեան ժող[ովուրդ]ն, թէպէտ երկեղ հիացման պատէր զնոսա ի մեծ եւ յահագին տեսութենէն, եւ զարհուրումն երկեղի լինէր յանսովոր երեւմանէն, այլ զշնորհաւորն զայն եւ առաւել քան զյոյս պաշտպանու-թիւն աջոյ Բարձրելոյն առ ինքեանս իմանային, եւ զթշն|241բ|ամենացն կործանումն տեսանէին։* **4** *Յանժամ յորդորական զուարթութեամբ զմի-մեանս արք եւ կանայք քաջալերէին եւ համաձայն նուագերգութեամբ զուգաբարբառ հնչմամբ պա՛ր առեալ ամբարձմամբ ձեռին յերկինս վեր առաքէին, ասելով. «Աւրհնեսցուք զՏէր, զի փառաւք է փառաւորեալ»* ***(Ելք ԺԵ. 1, 21)****։*

ԻԲ. **1** *Եւ ելին որդիքն Իսրայիղի յեգիպտոսէ՝ է. (7) շաբաթոջ աւուր եւ անցին ընդ ծովն ի կիրակէի։* **2** *Եւ էր յելիցն Ադամայ ՎՊԽԲ. (3842), եւ յԱբրահամէ ԵՃ. (500) եւ հինգ ամ։* **3** *Եւ ի նոյն Հոգւոյ, որ ի սիւն ամպոյ երեւէր նոցա, առին նո՛ր լեզու, մոռանալով զեգիպտոսին, որ զհայրենին յեգիպտոս էին մոռացեալ, եւ աստ կոչեցան եբրայեցիք, որ թարգման «անցիք»։* **4** *Եւ ետես Իսրայէղ մեռեալ զեգպտացիսն առ ափն ծովուն, եւ ետես Իսրայէղ զձեռն մեծ, որ եհար զեգիպտացիսն, եւ կալաւ զաջոյ ձե-ռանէ նոցա եւ աջողեաց նոցա։* **5** *Եւ հաւատացին յԱստուած եւ ի Մովսէս՝ ծառայ նորա։* **6** *Վասն զի նշանք եւ սքանչելիք սովոր են զարթուցանել ի հաւատս, ըստ առաքելոյ, թէ «Նշան ո՛չ հաւատացելոց է, այլ անհաւա-տիցն է»* ***(Ա. Կրնթ. ԺԴ. 22)****։* **7** *Յա՛յնժամ երգեաց Մովսէս եւ որդիքն Իսրա-յիղի զաւրհնութիւնս զա՛յս նոր լեզուաւն, եւ ասեն. «Աւրհնեսցուք զՏէր, զի փառաւք է փ[առաւորեալ]»։*

ԻԳ. **1** *Եւ արդ գիտելի է, զի աւրհնութիւն եւ գովութեանն գոհութիւնն եւ խոստովանութիւնն, զոր տամք Աստուծոյ, այլեւ մեծացուցանելն, եւ փառաւորելն, եւ բարձրացուցանելն զնա, զանազան բառիցս փաղառու-թիւնն, զմի եւ զնոյն ունին դիտաւորութիւնն, որպէս մարմնոյ միոյն գե-ղեցիկ կազմութիւն ի գեղեցկագիր մասանց եւ յանդամ|242ա|ոց երեւի, եւ միոյ բնութեան բարեզարդութիւն ի յոքնակի բարուց ցուցանի։* **2** *Եւ տամք զայսոսիկ Աստուծոյ, ըստ երից դիմաց. անցելոյ բարեացն, զոր ընկալաք գոհութիւն եւ շնո[ր]հակալութիւն, եւ յուսալեացն եւ որոց ակն ունիմք, աղերս եւ ընծայաբերութիւն։* **3** *Եւ բովանդակն ամենայն վկայութիւն է եւ դաւանութիւն անթուելի եւ անբաւ բարեացն Աստուծոյ։* **4** *Այլ յատուկ աւրհնութեանն այս իսկ է ստուգութիւն, զի պատմել ասի եւ յայտնաբա-նել եւ բանին չափով եւ կշռով չափել ըստ մերում կարի, զանսահման եւ զանչափ եւ զանկշիռ բարեացն Աստուծոյ զբխմունս։* **5** *Որպէս եւ այժմու*

երգս ի Մովսիսէ եւ յորդւոցն Իսրայիղի պատմութիւն է սքանչելեանցն Աստուծոյ, իւրեանց փրկութեանն եւ թշնամեացն կորստեան, գոհութիւն եւ խոստովանութիւն եւ ակնկալութիւն երկրին բարութեան, յոր յուսային մտանել եւ քանանացւոցն եւ այլոց ազգաց երկեղին եւ դողութեանն, զորս խլելոց էր Աստուած եւ զնոսա տնկելոց։ 6 *Ընծայք են եւ նուէրք եւ բանեղէն պատարագ եւ յապագայ ժամանակին ազգաց եւ ժողովրդոց, որք ծնանին՝ յայտնութիւն եւ վկայութիւն է փառացն Աստուծոյ եւ աւրինակ խրատու եւ հաստատուն յուսոյ, զոր թմբկաւք եւ պարաւք համաձայնեալ երգէին՝ «Աւրհնեսցուք զտէր»։* 7 *Զմիմեանս յորդորելով, որք [կցորդութեա]ցն կցորդեցին, զի եւ աւրհնութեանցն հաղորդեսցին, զի զայս միայն ունին մարդիկ տրիտուր Աստուծոյ, եւ ոչ թէ նոր տամք, այլ վկայեսցուք։*

ԻԴ. 1 *«Զի փառաւք է փառաւ[որեալ]»։* 2 *Որ ասաց փառաւորեցայց ի փարաւոն եւ ի զաւրսն իւր* |242բ|*, զի ընդդէմ զաւրաց նոցա եւ հեծելոցն երեւեալ լինէր բան<ան>ակ հրեշտ[ակ]աց, ի նմանութիւն կառաց եւ երիվարաց*[1]*, ըստ երգոյն, թէ՝ «Ձիոյն իմոյ ի կառս փար[աւոնի] նմանեցուցի զքեզ մերձաւոր իմ» (Երգ. Ա. 8)։* 1 *Զերիւարս եւ զհեծեալս նոցա ընդեց ի ծով, որ էին նիւթ հպարտութեան նոցա, եւ բազմութիւն զաւրացն, որ էին փառք թագաւորութեանն նոցա, ի փառացն հարեալ կործանեցան եւ յատակս ծովուն ընդդմեցան։*

ԻԵ. 1 *«Սա է իմ Աստուած եւ փառաւորեցից զսա» (Ելք ԺԵ. 2)։* 2 *Սա ասէ, որ մերձ է ի յաւգնել, ըստ խոստմանն, թէ «Ես Աստուած մերձաւոր եմ եւ ո՛չ հեռաւոր» (Երմ. ԻԳ. 23), զի ոչ երկինք արգելուլ կարեն զաւրութիւն աւգնութեան նորա, եւ ո՛չ երկիր ծածկեն զսքանչելիս փրկութեան Նորա։* 3 *Աստուած Հաւր իմոյ, եւ ոչ աւտար, այլ որ ընդ Հաւրն իմոյ Իսրայիղի էջ յԱսորիս եւ ել ընդ նմա, այն Աստուած, որ երեւեցաւ Լաբանու եւ հրամայեաց ոչ մեղանչել արդարոյն Յակովբայ։*

ԻԶ. 1 *Եւ երեւեալ բանակաւք հրեշտակաց զաւրացոյց ընդդէմ Եսաւա, գաւտէմարտ լինելով ընդ նմա ոչ ի քուն գիշերոյ, այլ զգաստ արթնութեամբ, որում ասաց. «Ժուժկալեցէր ընդ Աստուծոյ եւ ընդ մարդկան, զաւրաւոր լիցիս» (Ծն. ԼԲ. 28)։* 2 *Որ եւ յիջանելն յԵգիպտոս, եկեալ ի Մամբրէ եւ ի ջրհորն երդման մատուցանէ պատարագ Աստուծոյն Իսահակայ հաւրն իւրոյ, որում երեւեալ Աստուած քաջալերէ՝ մի՛ երկնչիլ, եթէ ոչ ելցեն որդիքն քո յԵգիպտոսէ յերկիրն Աստուծոյ, զի «Ես իջից ասէ, եւ ես հանից» (Ծն. ԽԶ. 4)։* 3 *Վասն որոյ Մովսէս ասէ, թէ ըստ խոստմանն*

[1] *Ա երեւիւվարաց*

Յակովբայ, որ հանէ զմեզ այսաւր «Աստուած Հաւր իմոյ է եւ բարձր արարի[ց] |243ա| *զսա»՝ քարոզելով զբարձրութիւն Նորա, եւ ի գիրս արձանացուցից ամենայն ազգաց զսքանչելիս նորա»։*

Իէ. 1 *«Տէ՛ր, խորտակէ զպատերազմունս»* (**Եր ԺԵ. 3**)։ 2 *Ով ամենիմաստ եւ դիպողաբար գործոյ անուանակոչութիւնս յերկուս դէմս զանազանեալ, զի իսրայէղացւոցն ասաց. «Սա է իմ Աստուած»։* 3 *Եւ վասն եգ[իպտացւոց], թէ՝ «Տէ՛ր, խորտ[ակէ] զպ[ատերազունս]», զի որպէս մի եւ նոյն կշիռ, այլ խնայէ յուղեղն եւ ի բաց հանէ զաւելորդն։* 4 *Մի՛ եւ նոյն եմ. այլ լուսաւորէ զառողջսն եւ ճայրոտեցուցանէ զտկարս։* 5 *Այսպէս մի՛ եւ նոյն է Ստեղծիչ, այլ բարեգործէ առ Իսրայէղ, ըստ խոստման հարցն, որում Աստուած անուանէ եւ տիրաբար դատէ զեգիպտացիսն, իբր զապստամբ ծառայս, որ Տէր ասէ. «Խորտ[ակէ] զպատ[երազմունս]»։* 6 *Տէր է անուն, նորա, զոր ի խաւսելն Մովսիսի եւ Ահարոնի զպատգամսն Աստուծոյ առ փարաւոն, ասեն, այսպէս ասէ. «Տէ՛ր Աստուած Իսրայիղի, որդի անդրանիկ ի մեղ[աւորս], արձակեա՛ զժող[ովուրդ], զի արասցեն ինձ տաւն յանապատի»* (**Եր Դ. 22-23**)։ 7 *Իսկ նա ըմբոստացեալ ասէր. «Ո՞վ է, որում լուայց ձայնի զՏէրն ոչ գիտեմ եւ զԻսրայէղ ո՛չ արձակեմ»* (**Եր Ե. 2**), *զի բնաւորեալ է այս առ մարդկան զԱստուած չգիտել ի բարեգործելն եւ զՏէրն ո՛չ ճանաչել, հրաժարելով ի պատժոցն, զոր այժմ ասէ. ծանեան զՏէր անունն, թէ իշխա՛ն է անուն նորա՝ զոմանս փրկել բարեգործականաւն եւ զոմանս պատժել պատուհասիւ։*

ԻԸ. 1 *Արդ, այսոքիկ տեսութիւն ըստ տեղւոյն եւ թանձր երեւոյթ մարմնոյ բանին։ Այսուհետեւ տեսցուք եւ զծածուկ միտսն* |243բ| *եւ զկենդանական հոգին, եթէ զի՞նչ խորհուրդ մեծագոյն իրողութեան ունի պատմութիւն բանիս, զի այսքան մեծապարգեւ խոստմամբ եւ աւետեաց ակնկալութեամբ տայր Աստուած զերկիրն Պաղեստինէ եւ զլեառն Սիոն Աբրահամու մեծի եւ զաւակի նորա արդարոցն։* 3 *Եւ անտի լինել զերթալն որդւոցն Իսրայիղի յԵգիպտոս ի պանդխտանալ եւ ի չարչարանս մտանել ծառայութեամբ, եւ անդրէն դառնալ ազատութեամբ, եւ ի նմին շքեղանալ քահանայութեամբ եւ գթութեամբ։* 4 *Այլ այս ամենայն լինէր ո՛չ առանց մեծագունի խորհրդոյ եւ զաւրութեան։* 5 *Վասն զի յայնմ լերին եդեալ ծածկեցաւ ոսկերք նախաստեղծիցն, ի զաւակացն Սէմայ անդրանկէն Նոյի։* 6 *Վասն որոյ փոխանակ դրախտին արար զսա՛ Աստուած, յորում եդ աննախաստեղծքն եւ ուստի ելինն, եւ աւրինակ վերնոյն Երուսաղէմի, յոր հրաւիրեցան որդիք Ադամայ։* 7 *Վասն որոյ մարգարէն Դաւիթ «մէջ երկրի»* (**Սղմս. ՀԳ. 12**) *կոչէ զսա, ուր արար զփրկութիւն Աստուած Բանն, որ զգեցաւ զբնութիւնն Ադամայ, եւ ինքն Փրկիչն «սիրտ*

երկրի» (**Մտթ. ԺԲ. 40**) *ասաց, յորմէ տարածեաց զկենդանական զաւրութիւնն յաշխարհ ի գերեզմանէն, յոր եդաւ աստուածային մարմնովն, իբր ի սրտէ ի բովանդակ անդամս մարմնոյ եւ իբրեւ զջերմ շնչոյ զաւրութիւն բխեալ ի սրտէ. անտի տարածեաց զճառագայթս լուսոյ քարոզութեան Աւետարա[ն]ին ընդ տիեզերս ամենայն:* 8 *Զայսմ տեղւոյ եւ Մովսէս ասէ ընտրեալ Տեառն Աստուծոյ, ուր դիցէ զանուն քաջութեան իւրոյ զոր ընտրութիւն Դաւիթ ցուցանէ. «Ընտրեաց, ասէ Նա զազգն յուդա լեառն զՍիոն, զոր եւ [սիրեաց]»* (**Սղմս. ԻԷ. 68**) |244ա| *եւ թէ «Հաճեցաւ Տէր ընտ Սիոն եւ ընտրեաց բնակիլ [ի նմա]»* (**Սղմս. ՃԼԱ. 13**)*:* 9 *Արդ յայսմ տեղւոջ տպաւորեաց զկերպարան ելիցն Ադամայ [ի դրախտէն եւ զաւրինակ մտանելոյն անդրէն ի դրախտն եւ ելանելոյն յերկինս, որպէս եւ գրէ առաքեալ. «Այն ամենայն ընդ նոսա աւրինակաւ անցանէր, բայց գրեցաւ» ի մեր վարդապետութիւն, «յորս վախճան յաւիտեանցն էհաս»* (**Ա. Կրնթ. Ժ. 11**)*:*

ԻԹ. 1 *Արդ, զլեառն Սիոն առցուք յաւրինակ եդեմական դրախտին, եւ զգնալն անտի Յակովբայ եւ որդւոցն զգալն Ադամայ յայս պանդխտութեան երկիրս:* 2 *Եւ որպէս մտին որդիքն Իսրայիղի ի չարչարանս յետ մահուանն Յովսէփու, զմտանելն մարդկան ի չարչարանս յետ մահկանացու լինելոյն:* 3 *Առցուք եւ զփարաւոն յաւրինակ սատանայի եւ զգործավարս նորա ի նմանութիւն չար դիւացն եւ զժողով որդոցն Իսրայիղի հասարակ մարդկային բնութեանս:* 4 *Եւ, զոր աւրինակ, նոքա թէ չէին մտեալ յԵգիպտոս, ո՛չ էին լծեալ ընդ ծառայութեամբ ծանրասրտին փարաւոնի, այսպէս եւ մարդկային ազգ, եթէ ոչ էաք անգեալ յեգիպտական տիղմ կենցաղոյս եւ ի զանազան ախտս մարմնոյ, ո՛չ էաք մատնեալ ի ձեռս աներեւոյթ փարաւոնի:* 5 *Եւ որպէս եգիպտացի գոռոզն ի գործ աղիւսարկութեանն եւ կաւոյն կեղէր զկեանս նոցա, այսպէս եւ աներեւոյթ գոռոզն գէջ եւ գարշ ախտիւք կեղէր զկեանս մարդկան:* 6 *Եւ որպէս փարաւոն հրամայէր զարուսն ի գետն ընկենուլ եւ զէգսն ապրեցուցանէր, այսպէս իմանալին փար[ավուն] զարու խորհուրդսն* |244բ| *որ ի մեզ, որ ըստ ողջամտութեանն եւ պարկեշտութեանն հեղձուցանէր եւ զէգսն եւ զգիջականսն ապրեցուցանէր:* 7 *Եւ որպէս նա՛ ի պատճառս միոյն Մովսիսի զտղայսն նոցա ի ջուրն հեղձուցանէր, այսպէս եւ սա՛ ի պատճառս միածնին Յիսուսի զտղայսն Բեդղէհէմի սրով կոտորէր:* 8 *Եւ որպէս անդ Մովսէս տապանակաւն ապրեցաւ ի հեղձմանէ ջուրցն, այսպէս եւ Քրիստոս տապականաւ Կուսին փախեալ յԵգիպտոս եւ ապրեալ ի սրոյն Հերաւդէի:* 9 *Իբրեւ ծնաւ Մովսէս թագուցին ամիսս երիս, զի տեսին կայտառ զմանուկն, ընգենու զնա մայրն պրտուեայ տապանակաւ ի խաղ մի գետոյն,*

զոր առեալ զնա սնուցանէ դուստր փարաւոնի, եւ Եգիպտոս ոչ իմանայր։
10 Ի խորհուրդ մանկանն Յիսուսի թագուցեալ ի Հերովդէէ առ մայր իւր
Մարիամ եւ սուրբք ամենայն, սկսեալ յԱբելէ ի գիրկս տարրեղէն մաւրն
իւրեանց աշխարհի, զանխուլ յիմանալի փարաւոնէ, որք զարգացեալ
տանջեցին զնա։ 11 Փար[աւոն] զարուսն Իսրայիղի ընգղմէր, եւ սատա-
նայ՝ զարու զաւակս տանն Ադամայ յանգիտութեան գետս կռապաշտու-
թեանն կորուսանէր։ 12 Մովսէս տապանակաւն ի գետն Եգիպտոսի շրջէր,
եւ Տէրն աշխարհի, արու մանուկ եղեալ, կուսական գրկովն առ Նեղոս
գետն երեւեալ մանուկ տղայն ի ծակ իժից եւ ի բո՛ւն կորեանց զձեռն ար-
կանէր եւ զձեռագործս եգիպտացւոցն շարժէր, զփոփոխումն ի կռապաշ-
տութենէ գուշակելով, եւ ի տիս Ադամայ եղեալ ի գետն Յորդանան զվի-
շապն ապստամբ թշուառացուցանէր, եւ զեկեղեց|245ա|ի դուստր երկնա-
ւոր արքայի անդ ծնանէր արեամբ եւ ջրովն, որ ի կողէն, եւ որ իմանալի
փարաւոնի դուստր անուանէր, մարգարէին Դաւթաւ կոչէր դուստր
երկնաւորն Արքայի (հմմտ. Սղմս. ԽԴ. 14), զայս աւրինակ պատկերեալ
տպաւորէր դուստր փարաւոնի, անսուրբն գտեալ զպատկեր Տեառն
մերոյ եւ առեալ ի գիրկս իւր, սրբեցաւ եւ մայր մեծին Մովսիսի կոչեցաւ։

Լ. 1 Այսպէս եկեղեցի յարմարելով ի Տէրն, մայր Քրիստոսի կոչեցաւ,
ծնանելով անախտաբար զանդամս նորա։ 2 Եւ որպէս Մովսէս զատեալ ի
մաւրէն, որդեգիր դստերն փարաւոնի կոչեցաւ, այսպէս մարդիկ հատա-
նելով ի բնական մաւրէն որդեգրեալք դստերն երկնաւորն Արքայի
եկեղեցւոյ սրբոյ զաւակք հոգեւոր կոչեցան։ 3 Մովսէս, ի զարգանալ
հասակին թափէր զիսրայէղացին յեգիպտացւոյն, զի իմասցին եղբարքն
նորա, թէ ի ձեռն նորա տալոց է Աստուած զփրկութիւն եւ յետոյ առնոյր
զվրէժ զրկանաց ազգին իւրոյ ի տանէ փարաւոնի։ 4 Այսպէս եւ Քրիստոս,
յորժամ աճեաց ըստ մարմնոյ հասակաւ եւ զարգացաւ իմաստութեամբ,
սկիզբն նշանաց արարեալ, զորդիսն Ադամայ ազատէր ի չարչարող դի-
ւացն եւ ի հիւանդութեանց մարմնոյ, եւ խնդրէր զվրէժ զրկանաց մարդ-
կայինս ազին ի տանէն աներեւոյթ փարաւոնի, որ է դժոխք, զոր մեծաւ
քինով աւերեաց զամուրս նորա։ 5 Մովսէս փախստական եղեւ գա՛ ի Մա-
դիամ առ ջրհորովն, թափէ ի հովուացն զդստերս քրմին մադիանացւոց,
գուշակելով զխորհուրդ մարդեղութեանն Տեառն, որ առ ջրովն Յորդա-
նանու խաւս|245բ|եցաւ զեկեղեցի ի հարսնութիւն իւր։ 6 Մովսէս զխա-
շինսն Յոդորայ արածէր եւ ած յանապատ ի ստուերագրութիւն քաջ հո-
վուին, որ հանելոց էր զհաւտն իւր յանապատն ի չարեացն յերկինս։ 7 Մո-
վսէս տեսանէր զմորենին վառեալ, որ ոչ այրէր, որպէս որդիքն Իսրայիղի
տանջեալ լինէին իբր հրով եւ ո՛չ սպառէին։ 8 Ի խորհուրդ կուսին Մա-

րիամու, որ կրէր իննամսեան ժամանակեայ զիմանալի հուր աստուածութեանն եւ ո՛չ կիզեալ լինէր։ 9 *Մովսիսի հրամայեաց լուծանել զկաւշիկս ոտից եւ ապա մերձենալ եւ ամենայն ոք, որ քահանայական աստիճանաւ մերձենայ առ Քրիստոս, արժան է մերկանալ ի յետին եւ ի սակաւ ախտից եւ յերկրակոխ հոգւոցն, եւ ապա մերձիլ։* 10 *Մովսիսի ասաց. «Տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ եւ իջի փրկել զնոսա եւ տանել յերկիր, որ բխէ զկաթն եւ զմեղր» (Ելք Գ. 7)՝ Թարգմանելով զխորհուրդ մարդեղութեան Բանին Աստուծոյ, որ էջ յերկնից, զի հանցէ զմարդիկ յերկրէ յերկինս։*

ԼԱ. 1 *Մովսիսի տայ Աստուած զգաւազանն նշան, որ ի ձգելն ի գետնի եղեւ աւձ, եւ ի բուռն հարկանել ձեռինն լինի գաւազանն։* 2 *Որպէս ժողովուրդն անգեալ Յովսէփաւ յԵգիպտոս, լինի աւձ ցանկութիւն չարի, նկարելով զխորհուրդն Ադամայ, որ անգեալ դրախտէն՝ աւձիւն խաբեալ եղեւ, աւ՛ձ որ է ցանկացաւղ երկրաքարշութեան։* 3 *Իսկ մարդասէրն Քրիստոս բուռն հարեալ ոչ զհրեշտակաց, այլ՝ զզաւակէն Աբրահամու, եղեւ գաւազան թագաւորական։* 4 *Մովսէս արկ զձեռն ի ծոցն եւ եղեւ բորոտ եւ երկրորդ անգամ արկեալ՝ լինի ողջ որպէս Իսրայէղ անգեալ յԵգիպտոս լինի խայտաբղետ չարութեան, եւ արկեալ ի ծոց խնամոցն Աստուծոյ* |246ա| *լինի ողջ, յաւրինակ Ադամայ, որ ելեալ ի դրախտէն, բորոտեցաւ պէս պէս մեղաւք, մինչեւ եկն Տէրն եւ արկ զբնութիւն նորա ի ծոց աստուածութեան նորա եւ արար զնա ողջ։* 5 *Այլեւ ձեռն Մովսիսի նշանակ էր զձեռն Հաւր զմիածին Որդին, որ էջ ի ծոցոյ Հաւր եւ էառ զաւձաձեւ բնութիւնս եւ անդրէն դարձաւ առ Հայր՝ ի նոյն բնութենէն ոչ կացեալ ի բաց։* 6 *Մովսէս զջուր գետոյն դարձոյց արիւն ի ցամաքի յաւրինակ Ադամայ, որ ելն ի դրախտէն, եւ եղեւ արիւն տաղտկալի եւ մարմին անհոգի, մինչեւ գթացեալ Տէրն եղեւ մարմին եւ արիւն կերակուր կեցուցիչ, արքայութեանն Աստուծոյ ժառանգիչ։*

ԼԲ. 1 *Այլեւ Ժ. (10) հարուածքն Եգիպտոսի, որ պատժեաց Մովսէս, աւրինակք էին հարուածոցն, զոր տանջեաց Տէրն զիմանալին փարաւոն։* 2 *Նոքա յԵգիպտոս ի ծառայութենէն ելին, եւ մեք՝ ի խաւարէ մեղացն եւ ի յուսահատութենէ։* 3 *Նոքա կերան զգառն Զատկին եւ ելին յերկիրն պարգեւաց, եւ մեք Քրիստոսի պատարագաւն սրբեցաք եւ զէնմամբ գառինն Աստուծոյ ելաք յերկինս հաւատով որդիք Աբրահամու եւ Յակովբայ։* 4 *Նոքա ի փար[աւոն]է եւ յայլ ազգի ժողովրդէնէն, եւ մեք ի սատանայէ եւ ի դիւաց։ Մովսէս գաւազանաւն հերձ զծովն եւ անցոյց զժողովուրդն, եւ Տէր մեր ի ձեռն խաչին հերձ զծով մեղացն եւ անցոյց զհաւատացեալ ժողովուրդս։* 6 *Մովսէս նախ մկրտեաց յամպն եւ ի ծովն եւ ապա հանկոյց*

յանապատին եւ կերակրեաց երկնատեղեաց հացիւն եւ արբոյց ջուր ի ծայրատաշ վիմէն, եւ Տէրն զկնի մկրտութեան աւազանին ապա հանգստեան արժանացոյց ի ծոց վերնոյն Երուսաղէմի, |246բ| յանապատն ի չարեաց եւ յերկիրն կենդանեաց։ **7** *Փարաւոն, զի ո՛չ խրատեցաւ անցիւքն Եգիպտոսի, ընդղմեցաւ ի խորս ծովուն, եւ սատանայ, զի ո՛չ խրատեցաւ չարչարանաւք խաչին, զի խայտառակեալ նշաւակեցաւ, ընկղմեցաւ իւրայաւքն ի ներքին տարտարոսս դժոխոց։*

ԼԳ. **1** *Եւ այսպէս ըստ աւրինակին համաձայն գտեալ իրողութիւն ճշմարտութեանս, ժողովուրդն ի վերայ սքանչելի փրկութեանն, որ եղեւ նոցա, պարս յարմարեալ երգէին՝ Մարիամ բախելով զթմբուկն, աւրհնեցէք զՏէր, զի փառաւորեցաւ ի ձին եւ ի հեծեալն, զորս ընկղմեաց ի խորս ծովուն։* **2** *Եւ մեք՝ նորս Իսրայէղ հաւատացեալ ժող[ովուրդ] զնոյն երգ արասցուք ի մերում կատարեալ փրկութեանս, զի Տէր մեր զաներեւոյթն փարաւոն ընդղմեաց ի ջուրսն Յորդանանու, վասն որոյ երգեմք նմա զյաղթական երգսն հոգեւորական՝ պարառութեամբ անարատ կուսիս Մարիամու։* **3** *Եկեղեցւոյ սրբոյ ասեմ, բախելով զթմբուկ հաւատոցն ցամաք բերանով յամենայն հերձուածողական գիջութեանց եւ Ժ. (10) գործական մատամբք հոգւոյ եւ մարմնոյ մասանց։* **4** *Զմարմին՝ ցամաքեալ յախտից, ձայնակից հոգէնուագ երգոյս մերում արասցուք, ասելով. «Աւրհնեսցուք զՏէր, զի փ[առաւք է փառաւորել]»։* **5** *Որում երգակից նորոյ Իսրայիղիս պարու եղեալ փողն փառաւորութեանն փառացն Քրիստոսի Պաւղոս եւ ասէ. «Աւրհնեալ է Աստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»* (**Բ. Կրնթ. Ա. 3**)*, որ աւրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր աւրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս, զի որքան մեծ է շնորհ պարգեւացն Քրիստոսի առ մեզ, այնքան առաւելագոյն աւրհնութեան պարտական եմք, զի նոցա փրկու|247ա|թիւնն ըստ մարմնոյ ի մարմնական նեղչաց եւ մարմնոյ բարութեանց խոստմունք։* **6** *«Եթէ լուիջիք ինձ, զբարութիւնս երկրի կերիջիք»* (**հմմտ. Բ. Օր. Է. 12**)*, եւ թէ՝ «Օրհնեցից զծնունդս որովայնի քո»* (**Բ. Օր. Է. 13**)*, եւ «Տարայց զձեզ յերկիր, որ բխէ կաթն եւ զմեղր»* (**Ելք Գ. 8, ԺԳ. 5, ՀԳ. 3, Ղեւտ. Ի. 24, Բ. Օր. Ա. 8**)*։* **7** *Իսկ մերն ամենայն հոգեւոր է եւ անապական, զի մերժեաց յերկրէ, զի եղաք ազատեալք ի մեղացն ծառայութենէ եւ եղաք որդիք Աստուծոյ եւ ժառանկք եւ ժառանկակիցք Քրիստոսի եւ թագակից եւ փառակից, որով երանելիք եւս լինիմք հալածեալք վասն արքայութեան։*

ԼԴ. **1** *Արդ, աւրհնեսցուք զաւրհնիչն մեր ամենայն հոգեւոր աւրհնութեամբ, զի «փառաւք եւ փառ[աւորեալ]»։* **2** *Զի որ անհասն էր երկրաւորացս եւ յերկայնոցն միայն փառաւորեալ, կամեցաւ փառք եւ զաւրք թա-*

գաւորութեանն Իւրոյ ստանալ յերկրաւորացս, զի որքան յանարուեստ եւ ի հրեղէնն հանգչէր քառակերպեան Աթոռ եւ անհաս էր երկրաւորաց, փառատրութիւն Նորա յանգեան մի աշխարհ լինէր եւ յազգ մի ազանց ի ժողովարանս եւ ի տաճարն հրէական։ **3** *Իսկ այժմ, զի ի քառակուսի կառս խաչին բարձրացաւ, եւ չորիւք աւետարանչաւքն ընդ չորեքծագեան տիեզերս քարոզեցաւ, եւ ի ձեռագործ շինուածս տաճարաց, եւ ի քառադէմ սեղանս սուրբ պատարագի յամենայն աշխարհ եւ ի լեզուս ամենայն ազգաց փառաւորի, զոր եւ յաղաւթսն հայցէր ի Հաւրէ. «Հա՛յր, փառաւորեա՛ զիս առ ի քէն փառաւքն, զոր ունէի յառաջ, քան զլինելն աշխարհի»* (**Յվհ. ԺԷ. 5**)*, որպէսզի փառք աստուածութեան իմ, որ վերին բանականացն միայն էր յայտնի, լցցեն եւ զերկիր, զի եւ ի հողեղէն բանակա-*[247բ]*ացս փառաւորեցայց։* **4** *Իսկ մարմնոյս բնութեան փառքն, զոր իմով խորհրդակցութեամբ կամեցար եւ արարեր զմարդն պատկեր քո, անապական կենաց եւ վերին փառացն ժառանգաւոր, յորմէ անկաւ Ադամաւ, վերստին ելցէ իմովս մարմնանալով եւ տնաւրէնութեանս կատարմամբ։* **5** *Վասն որոյ ասէ այսպիսի բարեացս ժառանգաւորաց։* **6** *Աւրհն[եցաք զՏէր] զի փ[առաւք է] փառ[աւորեալ]։*

ԼԵ. **1** *«Զհեծեալն եւ զերիվարն ընկեց ի ծով»։ Միաւոր անուամբ ասել զհեծեալն եւ զէրիվարն, զհամակամութիւն ի չարն բանսարկուին եւ իւրում հաւանեալ զաւրացն յայտնէ, զի հեծեալ կոչին իմանալին փար[աւոնի] եւ զաւրքն իւր՝ չար դեւքն, եւ կառք եւ երիվարք նոցա՝ մեհեանք դիւացն եւ պատկեր կռոցն ձուլածուք եւ կռածուք, այլեւ՝ կախարդքն եւ դիւթք, եւ չար թագաւորքն եւ բռնաւորք, յորս հեծեալ դեւքն, իբր յերիվարս ընթացուցանէին ի կամս իւրեանց յառաջ, քան զգալուստ Բանին, եւ յետ տնաւրէնութեանն կատարման յարուցին մարտ եւ հալածանս ի վերայ սրբոյ խորանի Աստուծոյ եկեղեցւոյ եւ Իսրայիղի նորոյ, զորոց «զհեծեալն եւ զերիվարն ընգէց ի ծով» զորոց անգումն Դաւիթ յառաջագոյն մարգարէանա։* **2** *«Թագաւորութիւնք երկրի ժող[ովեցան] եւ անգան ի միասին»* (**Սղմս. Խէ. 5**)*, զի ի վերայ հաստատուն վիմի զշինեալն եկեղեցի սուրբ ո՛չ կարացին սասանեցուցանել, զոր եւ Դաւիթ նաւք Թարսսի անուանէ։* **3** *«Հողմ սաստիկ, ասէ փշրէ զնաւն ի Թարսին»* (**Սղմս. Խէ. 8**)*, այսինքն՝ զաւրութիւն Հոգւոյն Սրբոյ զչար եւ* |248ա| *զկռապաշտ թագաւորսն, որք չարին խորհրդակցութեամբ հալածանս յարուցին ի վերայ եկեղեցւոյ, փշրեցան եւ անգան։*

ԼԶ. **1** *«Երիվարքն եւ հեծեալն անգան ի ծով»։* **1** *Որպէս եւ մեծն Յոհաննէս զԿինոպաս կախարդ, եւ սուրբն Բագարատ զպատկերն Փալկոնի, եւ այլք բազումք անմարմին եւ մարմնաւոր մարտնչողք եկեղեցւոյ, զոր*

տեսեալ հաւատացելոցն զաւգնութիւնն Աստուծոյ եկեղեցւոյ սրբոյ եւ զկործանումն եւ զխորտակումն թշնամեացն կողման խոստովանին եւ դաւանեն, ասելով. «Սա՛ է իմ Աստուած եւ փառաւոր առնեմ զսա»։ Սա՛, որ անհաս էր անմարմնոցն յերկինս եւ ծնեալ մարմնով յերկրի՝ եղեւ տեսանելի մարդկան եւ զանճառ սիրոյն իւրոյ զաւրութիւն խաչիւ եւ մահուամբ եցոյց յաշխարհի եւ զդեղ փրկութեանն մերոյ զմահուն իւրոյ յիշատակ մշտնջենաւոր պատարագ ետ յեկեղեցի[1] *եւ զզաւրութիւն Սուրբ Հոգւոյն մարտակից եւ աւգնական հաւատացելոց, զոր եւ ծանուցեալ խոստովանիմ զնա ո՛չ այժմ երեւեալ, յորժամ ես ծանեայ, այլ՝ «Աստուած Հաւր իմոյ» է հողածնին Ադամայ, որ յամենայն ժամանակս եւ ի դարս եւ յամենայն տեղիս նո՞յն Աստուած էր, թէեւ ոչ գոյութեամբ բնութեանն, այլ զաւրութեամբ բանի եւ ձայնի եւ ըստ պիտոյից ժամանակին կերպարանաւք դիմաց երեւեալ, զոր ասէ. «Աստուած հաւր իմոյ»* (**Եբ ԺԵ. 3**)*, զոր ինքն եղեւ ողբակից Ադամայ, մահակից զէնմանն Հաբելի, գործաւղ տապանին ընդ Նոյի, ի խորհուրդ եկեղ[եցւոյ], աւտարակից Աբրահամու եւ խանդաղատակից ի պատարագել զորդին, ընդ Յակովբայ իջեալ յԱս|248բ|որիս եւ ելեալ ընդ նմա, վաճառեալ ընդ Յովսիփայ եւ պանդխտակից եղեալ յԵգիպտոս որդոցն Յակովբայ, ընդ Մովսիսի ի մորենոյն խաւսեցեալ եւ հրաշալի նշանաց ներգործութեամբ յայտնեալ։* **4** *Սա՛ եւ այժմ մարմնով մեզ երեւեցաւ եւ զխորհրդով տպաւորեալսն առ հարսն ճշմարտութեամբ կատարեաց եւ զմեզ յեգիպտական ծառայութենէն եւ ի մեղացն ծովէ ազատեաց, եւ զնեղիչ թշնամիսն մեր խորտակեաց։* **5** *Վասն որոյ խոստովանեալ պատմեմք զերախտիսն, ասելով. «Սա՛ է իմ Աստուած եւ փ[առաւոր արարից զսա]. Աստուած Հաւր իմոյ՝ եւ բարձր ա[րարից զսա]»* (**Եբ ԺԵ. 3**)*։*

ԼԷ. 1 *Իսկ ըստ այլաբանութեան տեսակին, որ ի մեզ իմանի, որ ասի բնականաբար եւ բարուականապէս տեսցուք զանուանցս զաւրութիւն եւ թարգմանութիւն, զի ի բնութեանս մերոյ կազմածի գտանին մասունք եւ անուանք ամենայն, որ յաշխարհի։* **2** *Զի երբեմն տուն ասի, ըստ Յովբայ՝ «բնակեալք ի տունս կաւեղէնս»* (**Յոբ Դ. 19**)*, եւ թէ «Մովսէս հաւատարիմ յամենայն տան նորա, իբրեւ զծառայ, իսկ Քրիստոս իբր Որդի ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք»* (**Եբր. Գ. 5**) *գրէ առաքեալ։* **3** *Այսմ տան տնտես ասաց Տեառն, զի միտս մեր իմանալի եւ երբեմն քաղաք զբնութիւնս եւ դատաւոր՝ միտք այսմ քաղաքի։ Եւ երբեմն աշխարհ կոչի մարդ, որ յերկնէ եւ յերկրէ, այսինքն՝ հոգի իմանալի եւ մարմին զգալի։* **4** *Եւ որպէս յերկնի հրեշտակք, նոյնպէս հոգւոջ խորհուրդ եւ բան։* **5** *Եւ*

---

[1] *Ա յետեղեցի*

ըստ որում յերկրի զգալիք այսպիսի մարմնի սգայական մասունք։

ԼԸ. 1 *Արդ, ասացեալքս ամենայն պատմութիւն ի մեզ տեսանի. որդոցն Աբրաամու եւ Իսրայիղի գնալն ի* |249ա| *քանանացւոցն երկիր եւ իջանելն յեգիպտոս եւ առաջնորդութեամբն Մովսիսի ելանելն յեգիպտոսէ եւ անցանել ընդ ծովն։* **2** *Արդ, Աբրաամ թարգմանի հայր վերամբարձ եւ հայր ազգաց եւ յաւելուածով տառի այբին՝ հա՛յր ընտրեալ հնչման, եւ Իսրայէղն՝ աստուածատես, որ է ի բնութիւնս մեր հաստատեալ։* **3** *Միտք՝ հայր վերամբարձ, զի պատկեր եւ նման եւ կերպարան Աստուծոյ է միտք, որում եւ միշտ վերամբարձ լինել պարտ է եւ նորին բարեաւն կերպարանել։* **4** *Եւ հայր ազգաց է միտք, զի ծնաւղ է բազմապատիկ խորհրդոց։* **5** *Եւ է հայր ընտրեալ հնչման, զի ի բազմութենէ խորհրդոցն ընտրութեամբ զաստեղացեալսն եւ զլուսատեսիլսն պարտ է կերպարան եւ պատկեր լաւին համարել։* **6** *Իսկ Իսրայէղն աստուածատես, որ է միտքս մեր տեսող Աստուծոյ՝ իմանալի հայեցողութեամբ։* **7** *Իսկ որդիք սոցա են խորհուրդք երկնաւորք եւ իմացմունք աստուածային։* **8** *Եւ աւետեաց երկիր է սմա, յորում եւ լեառն Սիոն խոհականն եւ արիականն, զի որպէս դրախտն Ադինայ Ադամայ տուաւ ի ժառանկութիւն, յորմէ անգաւ յերկիր, այսպէս մտաց եւ բանի՝ խոհականութեան եւ իմաստութեանն դրախտ եւ հանճարոյ տունկք, որ ի նմա տուան ի վայելչութիւն, որ եւ Սիովն ասի, որ է դիտանոց, ուստ իբր ի գերակայ կայանից. ի դիտանոցէ խոհականութեանն ուղղէ զամենայն մասունս հոգւոյ եւ զգայարանաց։* **9** *Եւ որպէս Երուսաղէմ «սիրտ երկրի» կոչեցաւ (***Մտթ. ԺԲ. 40***), այսպէս ի սրտի բնաւորեալ է արիականն, զի որպէս ի սրտէ ամենայն կենդ*|249բ|*անական ներգործութիւնքն տարածին ի մարմնի, այսպէս արիականին ներգործութեամբ ամենայն իմաստք խոհականութեան զմարդկայինս բնութիւն ուղղեն։*

ԼԹ. 1 *Արդ, միտք որ է հայր աստուածատես եւ խորհուրդք, որ են ծնունդք եւ որդիք, որքան ի խոհականութիւն եւ յարութիւն են, իբր յիւրեանց պարգեւեալ գաւառ հանճարով եւ իմաստութեամբ կերակրին, իսկ յայսմանէ սովեալ եւ կարաւտեալ յայնժամ ի ցանկութիւն մարմնոյ եւ յախտս նորին իջանէ, որ է Եգիպտոս, զի Եգիպտոս խաւար թարգմանի եւ նեղիչ եւ հալոց երկաթի։* **2** *Եւ զի՞նչ այլ խաւար, քան զնիւթական եւ զթանձր մարմինս եւ նեղիչ լուսատեսիլ մտացն եւ նորին իմաստութեան խորհրդոցն, իբր Եգիպտոս որդւոցն Իսրայիղի եւ հալոց երկաթի, զի հոգւովք աշխարհական ցանկութեանց կեղեքէ եւ խոցոտէ յաղիւսագործութիւն կաւեղէն մարմնոյ ախտից։*

Խ. 1 *«Քաղաքս եւ տունս շինելով փար[աւոն]ի» (***Ելք ԺԵ. 3***), որ ասի վանումն, զի խորհուրդք մարմնոյն զաւրանան ի վերայ հոգեկանացն,*

որով վանեալ եւ հերքեալ լինին ի մտացն առաքինութեան խորհուրդքն, ծառայելով ապականացու եւ անցաւոր հեշտութեան եւ վայելչութեան մարմնոյ: 2 *Վասն որոյ ասէր Աստուած ցԻսահակ, թէ «Մի՛ իջանէր յԵգիպտոս» (*Ծն. ԻՁ. 2*). այսինքն՝ կատարեալ մտացն յառաքինութիւն ասէ:* 3 *«Մի՛ իջանէր ի մարմին», զի թէ որ զմիջակն ունին առաքինութիւն, նոքա իջանեն ի մարմին, այլ կատարելոյն ասէ, թէ դու մի՛ իջանէր:* 4 *Իսկ որք իջանեն յԵգիպտոս եւ դարձեալ |250ա| անդէն յաւժարին ելանել, տաղտկացեալք ի սնոտի՛ գործոյն, պիտոյ է Մովսէս ոմն աստուածատես առաջնորդ, որ ասի «ի ջրոյ վերաբերումն» (*տե՛ս ելք Բ. 10*) զի որ զանձն իւր ի ծովէ կենցաղոյս կորզէ, կարող է զայլս ի հեշտութեան մարմնոյ եւ ի մեղաց ծովէ հանել, որպէս Մովսէս զժողովուրդն:* 5 *Նա՛ գաւազանաւն, որ յԱստուծոյ, եւ սա գաւազանաւ խրատուն, որ է պարգեւք հանճարոյ եւ իմաստութեան տուեալ յԱստուծոյ, որով հերձեալ զընկղմիչ ծով մարմնոյ ախտից, անցուսցէ զժող[ովուրդ] հոգեկան մասանցն ի գերութենէ մարմնոյն զԻսրայէղ:* 6 *Վասն որոյ նոր երգովք աւրհնութիւն հանցէ Աստուծոյ, ասելով. «Աւրհնեա՛ս[ցուք զՏէր], զի փառաւք է փառ[աւորեալ]»:* 7 *Ըստ որում գրէ Պաւղոս. «Փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր» (*Ա. Կորնթ. Ջ. 20*), մաքուր սրբութեամբ եւ ըստ Տեառն ի տեսանել զգործս ձեր բարիս, փառաւոր արասցեն զՀայր ձեր, որ յերկինս:* 8 *Յաւելու եւ զաւրհնութեանն պատճառ:* 9 *«Զհեծեալն եւ զերի[վարն] ընդէց ի ծով»:* 10 *Արդ, հեծեալ իմանի միտք, իսկ երիվար՝ ախտք քառաքեաց ձիոյ նմանեալ:* 11 *Վասն որոյ միտք, որ յախտս մարմնոյ հեծանի, թէպէտ փախիցէ ընդ ջրովն, սակայն ի ծով անդր ընդգղմի:* 12 *Այսինքն, որ ընդ մարմնոյ ախտս շրջելով ընդ նմա բերի, թէպէտ յաւժարի փախչել՝ ի նոյն ընգղմի, զի ո՛չ ոք ձիթով զհուր շիջուցանէ, եւ ո՛չ զմարմին պարարելով ի մարմնոյ ախտից կարիցէ ապրել, զի եգիպտական է յեղումն եւ գերեալ է աւրինաւք մեղաց, որ յանդամս մարմնոյն, այլ Իսրայէղ ապրի |250բ| որ է միտք աստուածատես եւ ողջախոհութեան ցանկացաւղ, որում նահապետն Յակովբ աղաւթիւք ըղձար այսպիսի լինել որդւոյն:*

ԽԱ. 1 *«Եղիցի, ասէ, Դան աւձ դարանակալ ի ճանապարհի եւ հարցէ զգարշապար երիւարի եւ ընկեսցէ զհեծեալն յետս եւ սպասեսցէ փրկութեանն Աստուծոյ» (*Ծն. ԽԹ. 17*):* 2 *Եւ աւձն հոմանունակի է կոչումն, զի ասի ցանկութիւնն աւձ:* 3 *Եւ է ցանկութիւն, որ հեշտութեան մարմնոյ է, յորմէ խածանի յախտիցն թիւնաւորաց:* 4 *Եւ է՛, որ ողջախոհութեան ցանկայ այնպիսի աւձն դան կոչի, եւ թարգմանի դատաստան, այսինքն՝ որ դատէ եւ որոշէ զբարի ցանկութիւնն ի չարէն, նստելով դարանակալ ի վերայ ճանապարհի, որ է հոգիս մեր ճանապարհ, զի որպէս ճանապարհն*

կոխան է բանաւորաց եւ անբանից, ծերոց եւ տղայոց, տէրանց եւ ծառայից, այսպէս եւ հոգիս մեր անցարան է բազմատեսակ խորհրդոց։ 5 *Արդ, ողջախոհութեանն «բան աւձ դարանակալ ի ճանապարհ» առաքինութեանն եւ խածանէ «զգարշապար երիւարի», այսինքն՝ զշարժումն ընթացից չորից ախտիցն, որ խրոխտ եւ յարձակո՛ղ է իբրեւ զձի՛, եւ անկանի հեծեալն յետս, որ է միտք յախտից մարմնոյն յետս անգանելով եւ ոչ յառաջ, զի այլ մի՛ կոխեսցի։* 6 *Իսկ վերջացեալ յախտից եւ զողջախոհութիւն ստանալով փրկութեան Տեառն սպասեալ մնասցէ, եւ փրկելովն ի նեղիչ եւ ի խոցոտիչ ախտիցն, երգեսցէ երգն, որ եւ յաղթ|251ա|ական աւրհնութիւն ասելով։*

ԽԲ. 1 *«Աւրհնեսցուք զՏէր, զի փառ[աւք է] փառ[աւորեալ]»։ Զհեծե[ալ] եւ զերի[վար] ընգեցի աւգնական լինելով ինձ։* 3 *Զաւրացոյց ի վերայ ախտից մարմնոյ, եւ փոխանակ այնմ՝ ինքն եղեւ ինձ ընդունելի ի մաքրեալ հոգիս։* 4 *Զի որ ի չորից ախտիցն էի ընդունակ կառք, ի բա՛ց ընկեցեալ զայն, ըստ տեսլեանն Եզեկիէլի, եղեալ յաւրինեցայ կառք կայանի եւ աթոռ հանգստեան եւ զԱստուած յիս ընկալայ, ի միտս եւ ի խորհուրդս, զի ըստ մարգարէին Դաւթի «Աստուած փառաւորի ի խորհուրդս սրբոց իւրոց»* (**Սղմս. ՁԸ. 8**)*։* 5 *Վասն որոյ խոստովանիմ. «Սա՛ է իմ Աստուած եւ փառաւ[որ առնեմ զսա]», զի ի հոգիս սուրբս հանգչի Աստուած, փոխանակ վերին աթոռոցն, յորժամ կազմեմք զկերպարանս չորից կենդանեացն. զմարդն՝ զբանականն խոհեմութեամբ զարդարեալ։* 6 *Եւ առիւծ՝ զսրտմտականն արիականաւն զգաստացեալ։* 7 *Եւ զուարակ՝ պատարագելի զցանկականն ողջախոհութեամբ մաքրեալ։* 8 *Եւ արծուի բարձրաթռիչ՝ զգիտութիւնն եւ զարդարութեանն հասարակութիւն։* 9 *Եւ յայսպիսի աթոռ եւ ի տաճար սուրբ մտացս մերոց փառաւորի Աստուած։* 10 *Վասն որոյ ասէ. «Սա՛ է իմ Աստուած եւ փառաւոր առեմ զսա. Աստուած Հաւր իմոյ՝ եւ բ[արձր արարից զսա]»* (**Ելք ԺԵ. 3**)*։*

ԽԳ. 1 *Արդ, տեսցուք եւ ըստ հոգեւորն յեղանակի եւ զայս ընդ մարմնաւորն նոցա համեմատելով, զի յետ անցանելոյ զնոսա ի ծովն Կարմիր, ոչ անդէն վաղվաղակի եմոյծ զնոսա յերկիրն խոստացեալ, այլ աւրինադրեալ ի Սինեայ լեառն, եւ Ժ.բանեան (10) աւրինաւք զգայարանս նոցա բժշկէր։* 2 *|251բ| Հրամայէր եւ խորան գեղապաճոյճ կազմեալ, որպէսզի ցուցցէ թէ եւ ինքն ընդ նոսա ճանապարհորդ իցէ ի վերայ թշնամեացն եւ շրջեցոյց յանապատին զամս Խ. (40)։* 3 *Ուսոյց նոցա եւ զկարգ երկրին, յոր մտանելոց էին, եւ ապա հանդէս արարեալ զթիւ եւ զհամար զաւրաց նոցա՝ ըստ երկոտասան ցեղիցն, գալ բնակել նոցա յերկիրն խոստացեալ։*

ԽԴ. 1 *Այսպէս եւ նորոյ Իսրայիղի առաջնորդն Յիսուս, յետ անցուցանելոյ զժողովուրդ իւր ընդ ծով մեղացն մկրտութեամբ, որ Յորդանան, յաղթէ սատանայի ի փորձութեան լերինն, յաւրինակ սատանայի, փրկէ*

զժողովուրդ բազում յայսոց չարաց եւ ի հիւանդութեանց, յաւրինակ ժողովրդեանն, հանէ ի բարձութիւն լերինն ի խորհուրդ բարձր աւանդութեան հաւատոյն։ 2 *Ուսուցանէ զկարգ եւ զդուռն մտից երկնաւոր արքայութեանն եւ երկրին աւետեաց, տալով նոր աւրէնս, զինն երանութեանցն խորհուրդ ի Ժ. (10) աւարտելով, յառաւելուլն քան զդպրացն եւ փարիսեցւոցն։* 3 *Անդ զԺ. (10) բան աւրինացն ի տախտակս քարեղէնս եւ մեզ՝ նորոյս Իսրայիղի, ըստ մարգարէութեանն Երեմիայ, ի տախտակս սրտի մարմնեղէնս (տե՛ս* **Երմ. ԺԷ. 1***), եւ զպատուիրանս իւր գրեաց ի միտս լուսեղէնս եւ ետ մեզ ուխտ նոր, եւ ո՛չ ըստ հնոյ ուխտին առաջնոյ, եւ շինեաց զեկեղեցւոյ խորան ի խորհուրդ վերնոյն Սիովնի եւ երկնաւորն Երուսաղէմի, եւ հանդէս արարեալ առաքելոցն ԲԺ.ից (12) ըստ աւրինակի երկոտասան ցեղիցն, ահաւորացուցեալ ի վերայ դիւաց եւ հիւանդութեանց, որպէս զն|252ա|ոսա ի վերայ քանանացւոցն։* 4 *Եւ զոր աւրինակ Իսրայէղ ի պարգեւական երկիրն ուղեւորեցաւ, նոյնպէս Քրիստոս, կատարելով զաւրէնսն եւ զմարգարէսն ի Սիովն, եւ մեզ հրամայեաց պանդխտութեամբ եւ տառապանաւք բնակել յերկրի, ի խորանի եկեղեցւոյ ընդ մեզ հաւատալ զԱստուած եւ կալ ի սմա յուսով վերնոյն Սիովնի եւ քահանայագործել ի տիպ երկնայնոց քահանայութեանցն։* 5 *Զորս եւ խրատէ Միքիաս. «Յոտն կաց եւ գնայ աստի, զի ոչ գոյ քեզ հանգիստ, մերձեցարուք ի լերինսն յաւիտենական» (***Միք. Բ. 9***), զոր եւ Փրկիչն աշակերտացն ասէր. «Օն արիք գնասցուք աստի» (***Յվհ. ԺԴ. 31***), յաւթեւանս վերին փութացուցանելով. նոցա սիւն ամպոյ եւ լուսոյ առաջնորդ եւ մեզ շնորհք Հոգւոյն Սրբոյ եւ լոյս մարդեղութեանն Քրիստոսի. նոցա մանանայ ի կերակուր եւ մեզ մարմինն Տեառն Յիսուսի. նոցա աղբիւր ի վիմէ եւ մեզ ի կենարարին կողէ. նոցա ջուր բխեալ եւ մեզ վարդապետութիւն՝ ի բերանոյն Քրիստոսի, որոյ բանն հոգի է եւ կեանք։* 6 *Եւ որպէս նոքա, թէպէտ վայելէին զանապատին բարիսն, բայց ձանձրացեալ տագնապէին, զի ո՛չ հասին ի ժառանկութիւն երկրին բարութեան, այլ տաղաւարաւք բնակեցոյց զնոսա, այլուր զակնարկութիւն բնակութեանն արարեալ։* 1 *Այսպէս եւ զաւրագլուխն հաւատոց Յիսուս Քրիստոս, որ անցոյց զմեզ ի ծով մեղացն եւ լուաց աւազանաւն յեգիպտական տղմոյն։*

Խե. 1 *Արդ, թէպէտ եւ վայելեմք եւ լցեալ լինիմք ի բարութեանց տանն Աստուծոյ յեկեղեցի սուրբ, բայց ի տաղաւար մարմնոյս եւ ի տառապանս կե|252բ|նցաղոյս եւ ի խաւարաբնակ տուն աշխարհիս եւ սորին ցանկութեանցս պանդխտութեամբ շրջիմք ցաւալից մարմնով եւ աշխարհական հոգաւք, նեղիմք եւ տառապիմք ի քաղց եւ ի ծարաւ, ի մերկութիւն մարմնոյ եւ յախտս հիւանդարարս, ի վիշտս եւ ի խռովութիւնս, զորս թուէ*

առաքեալ։ 2 *Եւ զպանդխտական կեանս եւ ի խաւարչուտ տան աշխարհիս բնակելոց աւաղէ Դաւիթ. «Վա՛յ ինձ, զի ընդ երկար եղեւ պանդ[խտութիւն իմ]» (***Սղմս. ՃԺԹ. 5***)։* 3 *Եւ, զոր աւրինակ, յետ հաստատելոյ թագաւորութեան նոցա ի Սիոն պայծառացաւ աստուածապաշտութիւնն, նոյնպէս եւ մեք զարդարեցաք հաւատովքն Քրիստոսի։* 4 *Եւ որպէս նոքա յաւուրս բարեպաշտ թագաւորացն զաւրանային ի վերայ թշնամեացն եւ աւտար ազգաց, այսպէս եւ մե՛զ լինէր ի Քրիստոս հաւատացելոցս։* 5 *Նոցա Դաւիթ եւ Եզեկիա եւ Յովսի թագաւորք բարեպաշտք, մեզ՝ Կոստանդիանոս եւ Թէոդոս եւ Տրդատէս Հայոց։* 6 *Նոցա անցաւոր լինելով աւրինացն մատնէր Աստուած ի ձեռս թշնամեաց նոցին այլազգեացն, այսպէս եւ մեզ ի մեղանչելն յաւրէնսն Քրիստոսի մատնի եկեղեցի ընդ իշխանութեամբ այլասեռից։*

ԽԶ. *Զաւրանան եւ աներեւոյթ թշնամոյն զաւրք ի վերայ եկեղեցւոյ մանկանց. նոքա ի Բաբելովն գերեցան՝ վասն մեղաց եւ եկեղեցւոյ մանկունք ի խառնակութիւն կենաց աշխարհի։* 2 *Նոքա ի մէջ երկուց գետոցն, որ է Տիգրիս եւ Արածանի, եւ եկեղեցի յերկուց նեղչաց միջի՝ հոգկանաց եւ մարմնականաց, եւ ի վերջնում ժամանակին՝ սուտ Քրիստոսին եւ իւր մարգարէիցն։* 3 *Նոցա կտակք* |253ա| *աւրինացն յանպտուղ ուռիսն կոխեցան եւ մեր գիրք Աստուածաշունչ յանպտուղ եւ ի ցամաքեալ սիրոյ ժամանակ, զի ո՛չ ոք աշխատասէր ուսման եւ ոչ միտ դնող աշխատասիրի պատուասիրաբար։* 4 *Զնոցա գերութիւնն Դաւիթ մարգարէացաւ, եւ զմերս՝ Քրիստոս եւ աշակերտքն իւր։* 5 *Նոցա աւծեալն Աստուծոյ Կիւրոս արար գերէդարձ ի Սիովն, նոյնպէս եւ զմեզ աւծեալն Քրիստոս յարուցանէ ի մեռելոց եւ հանէ յԵրուսաղէմն վերին, առ դասս վերին զուարթնոցն եւ ի հանգիստ սրբոցն իւրոց եւ սիրելեաց։* 6 *Վասն որոյ խրատէ Պաւղոս՝ «Զվերինն խնդրեցէք զվերինն խորհեցարուք, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ» (***Կղս. Գ. 1-2***)։* 7 *Եւ առ Փիլիպեցիսն գրէ. «Մեր առաքինութիւնն յերկինս է, ուստի եւ Փրկչին ակն ունիմք, զի նորոգեսցէ զմարմին խոնարհութեանս մերոյ» (***Փլպ. Գ. 20***)։* 8 *Եւ զոր աւրինակ խլեաց զքանանացիսն ի Պաղեստինէ եւ տնկեաց զիսրայէղացիսն, այսպէս եւ յերկնային գաւառէն զհրեշտակսն ապստամբ, որք հակառակք եղեն կամացն Աստուծոյ, զոր խլեաց եւ ընգեց՝ զդեւսն անուանեալ։* 9 *Ի տեղի նոցա հանեալ բնակեցուցանէ զազգս մարդկան, զորդիսն Իսրայիղի ճշմարիտ աստուածատեսին, զի «զԱստուած ոչ ոք ետես, բայց Միածին Որդին»։* 10 *Եւ որք ի մահ նորա մկրտեցան եւ աւազանաւն որդիացան, նոցա տա՛ զվերինն Երուսաղէմ ի բնակութիւն։* 11 *Վասն որոյ զերծեալք զեգիպտական մարմնոյս չարչարիչ ախտից եւ յաղցաւոր կենցաղոյս եւ ի ծփական ծովէ*

աշխարհիս, ընդ հոգեղինացն զհոգեւորականն գոչեսցուք երգ։

Խէ. |253բ| 1 *«Աւրհնեսցուք զՏէր զի փ[առաւք] փառ[աւորեա]»։* 2 *Յայնժամ տիրապէս աւրհնութիւն եւ գոհութիւն տան սուրբքն ամենայն, որք արժանացեալ լինին տեսութեանն Աստուծոյ, ո՛չ ըստ առաջին գալստեանն ի մարմին խոնարհութեան տեսանելով, այլ ըստ Բանի տեսցեն զՈրդին մարդոյ եկեալ ի վերայ ամբոց՝ երկնից զաւրութեամբ եւ փառաւք բազմաւք։* 3 *Եւ գա հանել զմեզ ո՛չ յԵգիպտոսէ կամ ի Բաբելոնէ, այլ ի նեղութեանց երկրաւոր կենացս եւ զհողացեալ մարմինս ի գերեզմանաց, յորժամ մեռեալք լուիցեն ձայն ի որդւոյն Աստուծոյ եւ կեցցեն. եւ անցուցանէ ո՛չ ընդ ջուրս Կարմիր ծովուն, այլ ի հոսանս հրեղէն գետոցն եւ ծովուն, զի ըստ Դանիէլի՝ գետք հրեղէն առաջի նորա գնասցեն (տե՛ս* **Դնլ. է. 10***), եւ ըստ Դաւթի՝ «Հուր առաջի նորա բորբոքեսցի»* **(Սղմս. ԽԹ. 3***), եւ ըստ Պետրոսի՝ երկինք եւ երկիր հրոյ գանձեալ պահին յաւուրն դատաստանի (տե՛ս* **Բ. Պտր. Գ. 7***), եւ «Վերինք որպէս զմոմ հալին»* **(Սղմս. ՂԶ. 5, Եսայ. ԿԴ. 2***), եւ ծով եւ գետք ցամաքին, զի ըստ սաղմոսերգողին՝ «Դարձուցանէ զծովն ի ցամաք եւ ընդ գետս անցին յոտան[աւորք]»* **(Սղմս. Կե. 6***)։* 4 *Եւ որպէս ժողովուրդն Իսրայիղի հրոյ եւ ամբոյ առաջնորդեալք մտին յերկիրն Աւետեաց, այսպէս եւ զնորս Իսրայէղ ամբեղէն եւ հրեղէն կառաւք հանէ Տէրն յերկինս՝ ի տուն Հաւր իւրոյ, յաւթեւանսն բազում, եւ անդ տեսցեն զփառսն հայրենի, ասասցեն։*

ԽԸ. 1 *«Աւրհնեսցուք զՏէր, զի փ[առալք է փանռաւորեալ]»։* 2 *Եւ փառք նորա են զաւրքն լուսեղէն, որովք գայ ի դատել զերկիր, յորոց միշտ փառաւորի անկարաւտն փառաց զայս մեծահրաշ փառս, զոր տեսանելոց էին յանճ|254ա|առելի խորանն եւ ի հայրենի սեղանն։* 3 *Հայցէր Տէրն ի տնաւրէնութեանն իւրում ի Հաւրէ, վասն աշակերտացն եւ բանիւ հաւատելոցն նոցա. «Հայր, կամիմ, զի ուր եսն իցեմ եւ սոքա ընդ իս իցեն, զի տեսանիցեն զփառս իմ զհայրենի»* **(Յվհ. ԺԷ. 24***)։* 4 *Զայսմ փառաց եւ Պաւղոս ասէ. «Տեսանեմք այժմ, իբրեւ ընդ հայելի, իսկ յայնժա՛մ դէմ յանդիման»* **(Ա. Կրնթ. ԺԳ. 12***)։*

ԽԹ. *Զսոյն փառաց եւ Դաւիթ տայ զտարացոյց, ասելով. «Երկինք պատմեն զփ[առս]»* **(Սղմս. ԺԸ. 2***) այսինքն՝ զվերին անճառելի խորանին զփառս եւ զիմանալի երկնի՝ զգալի երկինքս այս պատմեն, զի թէ սա՛, որ յատակ եւ ներքոյ է նորա, այսքա՛ն գեղազարդ լուսաւորաւք զարդարեալ է, իսկ վերին խորանին, յորում փառքն Աստուծոյ բնակեալ ծածկեն՝ որքա՞ն եւս առաւել։*

Ծ. 1 *«Զհեծեալն եւ զերիվարն ընկեց ի ծ[ով]», որ են ամենայն թագաւորութիւնք երկրաւոր եւ գոռոզ իշխանութիւնք՝ անբարտաւանեալք ի*

հեծեալս եւ յերիվարս, որովք պարծինն եւ հպարտանան։ **2** *Եւ ըստ Դանիէլի մարգարէութեանն՝ թագաւորութիւն Նեռինն եւ հնազանդելոցն նմին արտաքս անգանին եւ ընկղմին ի ծով տարակուսանաց եւ յորձանս հրեղէն գետոցն, յետ որոյ այլ երկրաւոր թագաւորութիւն ո՛չ յառնէ, այլ երկնաւոր թագաւորութեանն արժանաւորացն կազմին աթոռք, որպէս պատմէ Դանիէլ. «Տեսանէի, զի աթոռք անգանէին» (***Դնլ. է. 9***), այսինքն՝ երկրաւորացն անկեալ կործանէին, եւ սրբոցն անգանելով կազմէին, որ են «աղքատքն հոգւով» (***Մտթ. Ե. 3***) եւ այլոց աւետարանական վարդապետութեամբն խրատելոցն, զորս ընդ|254բ|ունի Տէրն ի պատրաստեալն տեղի, զոր խոստացաւ. «Երթամ պատրաստեմ ձեզ տեղի, գամ եւ առնեմ զձեզ առ իս» (***Յվհ. ԺԴ. 2***)։* **2** *Զոր եւ սա՛ ասէ. «Աւգնական ընդունելի իմ Տէր, եւ եղեւ ինձ ի փրկ[ութիւն]» (***Եսք ԺԵ. 2***), վասն զի աւգնեաց բնութեանս, որ ազգակից եւ եղբայր եղեւ մեզ Քրիստոս եւ ազատեաց յընդդիմահար նեղութեանց հոգւոյ եւ մարմնոյ, զոր կրեմք աստեն, եւ առ ինքն ընդունեցաւ։* **3** *Վասն որոյ արժանաւորեալքն այնմ երանական կենաց անդ տեսանեն զթագաւորն Քրիստոս եւ զանճառելի փառս աստուածութեան նորա եւ ընդ աջմէ Հաւր նստեալ մարմնովն, զոր ի մէնջն էառ զպարս հրեշտակաց շուրջ զնովաւ կացեալ, զոգիս արդարոց կատարելոցն, որ ընդ Նմա, փառս անպատումս եւ կեանք անվախճան, ցնծութիւն յարազուարճ։* **4** *Յայնժամ աղքատացեալքն հոգւով եւ «սուրբքն սրտիւ» եւ այլովք երանութեան մասամբքն զարդարեալք, ըստ Յոհաննու ձայնին, «տեսցեն զԱստուած» դէմ յանդիման եւ ասասցեն «Սա՛ է իմ [Աստուած] եւ փառ[աւոր արարիչ զսա] Աստուած Հաւր իմոյ եւ բարձր արարիչ զՍա»։*

ԻԲ.

|255ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑԻՈՅ ԲԱՆ ՀԱՄԱՌՕՏ, ՔԱՂԵԱԼ ՅԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԳՐՈՅՆ, ՈՐ ԸՆԴԴԷՄ ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՅՆ

Բնագրի երկրորդ հրատարակությունն է: Առաջին անգամ այն հրատարակել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը (հետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս), «Արարատ» տարեգրքում, որտեղ Երզնկացու սույն երկի շնորհիվ կատարում է բանասիրական արժեքավոր ճշտում՝ հաստատելով, որ Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» հակաճառության մեջ եղել է մի հատված, որտեղ պաշտպանված է եղել արտաքին եկեղեցու սրբության գաղափարը:

Հրատարակվում է ըստ պահպանված միակ՝ 2173 (Ա. 255ա-7ա) ձեռագրի, որից է նաեւ Գարեգին վ. Յովսէփեանի տպագրածը. տե՛ս «Արարատ», 1914, էջ 921-924:

Ա. 1 *Երկու են մեզ տեսակք եկեղեցւոյ եւ երկոքեան սոքա հոմանունք եւ երկոքեան ի հարցմունս բանի մասանցն միապէս ստորոգին՝ ի սեռսն*[1] *եւ ի տեսակս, ի ձեւս եւ թիւս, ի հոլովսն եւ յենթանկեալ անուանցն տեսակս, այլ եւ ի զարմանազանութիւնս բարդիցն յԲ.ց (յերկուց) լիոց տարրանան: 2 Այս գունի սարասիւ եկ եղիցի փոխանակ եչիդ զինն եդեալ, վասն զի եւ ձայնորդքն փոխանակեն զմիմեանս, որպէս եւ եզանցն լծակցութիւն՝ նոյնպէս եւ տառք ձայնաւորք: 3 Եւ զի երիւք տեսակաւք գոյանայ դրութիւն անուան՝ յիրէն, յարուեստէն եւ ի ձայնէն, եւ որպէս ամենայն անուն նոյն եւ եկեղեցւոյդ անուն:*

Բ. 1 *Յառաջնոյ մասնէ իրին յատկացեալ ճանաչի եկաւորական գումարութեամբ եկեալ ի մի հաւաքումն եւ անուանադրեալ ըստ ժողովման՝ եկեղեցի, իսկ առ ստուգաբանելն այսպէս իմասցի, եկեալ, լցեալ եւ ակաղձեալ, որում եւ անունն ըստ իրին պատահեցաւ, այսինքն՝ ի գոլոյն լցեալ եւ բոլորեալ եւ կոչեալ բոլոր եկեղեցի: 2 Եւ զի ըստ ժողովոյն եւ անունդ սահմանի, թէ յանշարժ տարերց լինիցի գունդն եւ կամ գումարն, եւ թէ ի շնչաւորաց կամ ի բանաւորաց կենդանեաց, յիմանալեաց եւ ի զգալեաց, որ են հրեշտակք եւ մարդիկք:*

Գ. 1 *Անունդ միապէս ունի զսահման հասարակին եւ անհատին, ըստ իմաստասիրական ներագիծն վարժից: 2 Արդ, անունդ եկեղեցւոյ ժողովումն թարգմանի, որպէս ասացաւ ըստ բառին ձայնի: 3 Իսկ անուն*

---

[1] *Ա սերսն*

սեփհ|255բ|ական մաւրս մերոյ Սիոնի հասարակաբար ձայնեալ երկուց տեսակաց. նոյն եւ յատկաբար. ըստ ուղղափառ, վասն որ ի Քրիստոս հաւատոցն, որ կոչի կաթուղիկէ, այսինքն՝ բոլորակ, որ բնաւ ընթհանուր ընդ ամենայն տիեզերս միապէ՛ս, միատեսա՛կ, մի կաթուղիկէ եկեղեցի կոչի: 4 Եւ քանզի է եւ ասի, թէպէտ եւ զգալի անուամբ յոքնաբար տեսանի, այլ անուամբ եզական է եւ զաւրութեամբ միայնակ, որ վասն միոյ պատարագին, որ միապէս խորհրդածի յընդհանուր եկեղեցիս տիեզերաց, մի գոլով ի սմա եւ աւազանին զաւրութիւն, ի մի մկրտութիւն լուսաւորութեան ձրից Սուրբ Հոգւոյն:

Դ. 1 *Ունի դարձեալ կաթուղիկէ անունդ եւ այլ տեսակ զաւրութեան, զոր եւ արուեստագէտք բժշկաց, զնոյն անուն հոմանունաբար առեալ, կոչեն ի վերայ միոյ երակի եւ մայր եւ գլուխ ամենայն բոլոր երակացն զնա գոլ սահմանեն: 2 Քանզի որ ի նմանէ ասեն արեանն կաթուածք, գրէթէ փոխանակ ընդ ամենայն երակացն խաղացման բնութեանն բաշխեալ տայ զառողջութիւն բովանդակ մարմնոյն, զի որպէս նա, նոյն անուամբ գլուխ եւ մայր ամենայն առողջութեան լեալ եւ կոչեցեալ եւ տուիչ կենդանութեան բովանդակ անդամոց մարմնոյն: 3 Այսպէս եւ այս կաթողիկէ անդրանիկ եւ մայր եւ գլուխ հոգեւոր անդամոց բանաւոր եկեղեցւոյ լեալ եւ սահմանեալ ի բոլորիցն Արարչէ. նախ՝ զի ըստ անուանն ստուգաբանութեան արտափայլեալ տեսանի հոգեւոր շնորհաց գոլ աղբեւր եւ բխումն պարգեւաբաշխութեան: 4 Քանզի երիւք լծորդեալ տառիւք[1] փորձեալ ցուցանի այսր տեսութիւն |256ա| լինիւ, զատիւ եւ նոյիւ, որք են քմակիցք միմեանց, այսպիսի բառիւ բացատրեալ յայտնելով զԲանին զաւրութիւն. կաթան եւ կաթիլ եւ կայլակ, որ բազմամասնաբար տեսութեամբ ըստ բաշխման երակացն, որ ի մարմնին բաղկացեալ եւ ընդ միով նուաճեալ գերաբնին կաթողիկէիւ, յորմէ եւ առողջութեանն հանդիպի նոցա բաշխումն: 5 Եւս առաւել մանաւանդ որք առ սա ժողովեալ յայս կաթողիկէս, որ է զգալի եւ իմանալի, ըստ մարդոյն պատկերի, եւ ընդ սմա միացեալ հոգիայարդար շաղկապութեամբ, ըստ իմանալի աստուածային խորհրդածութեանն, յորում եւ շտեմարանեալ կան ամենայն գանձք հոգեւոր պարգեւաց գիտութեան եւ իմաստութեան Տեառն: 6 Այլեւ ցուցական երեւութիւ խաղան ի սմա երակ բաշխից Սուրբ Հոգւոյն շնորհաց, վասն առ ի յերկնից կաթելոյն ի սա աստուածային ճառագայթիցն շող եւ նշոյլք իմանալի ծագման արեգականն արդարութեան:*

Ե. 1 *Այսպիսի տեսակաւ գերակայեալ կայ յիւրական ի փառսն, ունելով*

---

[1] *Ա տաղիւք*

յինքեան զկաթանն մշտնջենաբուխ հոգէանունդ կաթինն՝ յերկաբոյս ստեանցն կառուցմանց. այս է՝ ի Հին եւ ի Նոր կտակարանաց, մանաւանդ թէ պարզաբար իսկ է ասել ըստ Պաւղոսի եւ ըստ միւսոյ մարգարէին, աղբեր ի տանէ Տեառն բղխեալ եւ եռավտակ յորձանք հոսանաց հոգւոյն ի սմա՛ աղբեւրացեալ, այսինքն՝ առաքելական եւ մարգարէական եւ վարդապետական մասին շնորհացն տեսակք, ըստ խորհրդական իւրում անուանն, որ յերիցն նախասացեալ տառից: 2 Նաեւ ո՛չ միայն իբր ի դուլէ ինչ ցայտեալ կաթիլ, այլ լցեալ եւ ծովացեալ ի|256բ|սմա բազում մասունք շնորհաց հոգւոյն մաքրութիւն աւազանին եւ քառանկիւն սեղանոյն հաստատութիւն, յորում իբր ի խաչին փայտի բազմեալ գառնն Աստուծոյ ի զէնումն պատարագի, յորմէ իբր ընդ ցնցուղ ինչ հոգեւոր երակաց, կայլակք արեանն արձակեալ, տուիչ կենդանութեան անդամոց մարմնոյ եկեղեցւոյ: 3 Այլեւ տուն եւ տաճար եւ եկեղեցի ասի, ըստ իմանալոյն զաւրութեան անուանն ձայն, որպէս տուն Տեառն եւ տաճար տերունական եւ եկեղեցի Քրիստոսի, քանզի ըստ պատուոյն է գոյացութիւն սուրբ եկեղեցւոյ: 4 Եւ ի ժողովմանէ բոլորման առ ընկալաւ զգոյացութիւնն, ստացեալ իւր գործ յատուկ զժողովելն եւ զգումարելն զցրուեալսն յազանց աւտարաց: 5 Եւ վերստին ծնանի յարգանդէ սուրբ աւազանին եւ եկեղեցուցեալ յինքն հաւաքէ զսէռս բանաւոր կենդանեաց, առնելով որդիս Աստուծոյ ընծայ յեկեղեցիս անդրանկաց յերկինս: 6 Յիրաւի՛ ապա զանունն ըստ գործոյն առ ընկալաւ, որպէս զՅիսուսն՝ փրկելոյն, եւ Սողոմոն՝ զխաղաղութիւնն, եւ եկեղեցի՝ ի ժողովելոյն: 7 Եւ դարձեալ, որպէս բանաւորն ի չորից տարերցս խառնեալ ունի զբաղկացութեանն լինելութիւն եւ կենդանական եւ բանական իմաստիւն պատուեալ ժողովի եւ գումարի ի մի խմբեալ դաս եւ եկեղեցի անուանի, յորժամ լինի Քրիստոս ի մէջ նոցա: 8 Նոյն տարազեաւ զսորայս իմասցիս զտեսակ ի հիւթական տարերց խառնեալ եւ գոյացեալ ներգործական ձեռամբ Արարչին, եւ փոխանակ բանի եւ մտաց՝ ունի զազգական զաւրութիւն ամենակալին Աստուծոյ: 9 Կոչի եւ կոչարան, քանզի կանկնեալ կայ գմբեթաձեւ խորանարդ, յաւրի|257ա|նակ վերինն Երուսաղէմի, եւ իբր ձայնիւ յինքն կոչէ զբանական կենդանիս սեռի մարդկան եւ հանգիտանման դշխոյի՝ զարդարեալ թագիւ խաչին նշանաւ:

Զ. 1 Սա եւ հոմանուն ասի եւ յարանուն եւ փաղանուն, ըստ իմաստասիրական ներհիւսիցն շարագծութեան: 2 Հոմանուն, զի զնոյն ունի զհոլովումն անուան եւ ձայնի, ո՞ր զան վերնոյն Երուսաղէմի եւ զանդրանկացն յերկինս: 3 Եւ յարանուն, վասն զի դրականաբար եդաւ եւ յարելութեամբ միացաւ ի մինն եւ ի պարզականն, եւ յարերալ ունի յինքն զնորայն նազելի խորհուրդ: Եւ փաղանուն, քանզի ի բազմաց նշանակի ի յանուանց:

ԻԳ.

|257ա| ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ[1], ՈՐՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՎՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՅԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵԱՆՑ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ, ՈՐ ԿՈՉԻ ԵԶՆԿԱՅ[2], Ի ԹՈՒԻՍ ՉԻԹ. (729): ԱՍՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ԵՒ ԾԵՐՈՒՆԻ[3] ՎԱՐԴԱՊԵՏՆ ԳՐԻԳՈՐ[4] ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՈՐ ԵՒ ԳՐԵՑԱՒ Ի ԳԼՈՒԽ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ[5]. ԵՒ ԵՍ՝ ՆՈՒԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՍ[6] ՅՈՀԱՆՆԷՍ[7] ԵԶՆԿԱՅԻ[8], ԳՐԵՑԻ ԶՍԱՀՄԱՆ ԵՒ ԶԽՐԱՏ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ ԵՒ ԶՇԱՀԱՒԷՏ ԱՒԳՈՒՏՆ[9], ՈՐ Ի ՍՄԱՆԷ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ

Բնագրի երրորդ հրատարակությունն է: Առաջին անգամ այս հետաքրքիր երկի վրա ուշադրություն է դարձրել, ապա նաեւ հրատարակել երջանկահիշատակ Լեւոն Խաչիկյանը՝ բացահայտելով միջնադարյան Հայաստանի քաղաքային միջավայրում մի շարք ուշագրավ երեւույթներ՝ մասնավորապես երիտասարդական աշխարհիկ կազմակերպությունների ներքին կառուցվածքի եւ նրանց ղեկավարների՝ մանկտավագների գործունեության վերաբերյալ[10]:

Ավելի ուշ բնագիրը հրատարակելիս մեզ հաջողվել է նոր աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ պարզել նման կազմակերպությունների առկայությունը վաղնջական ժամանակներում, եւ հետագա դարերում նրանց կրած փոփոխությունները: Փաստվել է նաեւ մանկտավագների գոյությունը գյուղական վայրերում: Վերջիններս ոչ միայն հանդես էին գալիս իբրեւ առանձին անհատների հոգեւոր դաստիարակներ՝ կնքահայրեր, այլեւ երիտասարդական խմբերի ղեկավարներ, իրենց սաներին փոխանցելով աշխարհիկ մասնագիտական հմտություններ՝ արհեստների, առեւտրի եւ այլ՝ անգամ ռազմական գործի բնագավառներում:

Բնագիրը հրատարակել է Է. Բաղդասարյանը՝ Հովհաննես Երզնկացին եւ

---

1 *Ժ եղբայրս*

2 *ԲԺ մեծ] որ կոչի եզնկայ*

3 *Է > սահման եւ կանոնք... եւ ծերունի (վերնագրի սկիզբը եղել է նախորդ՝ կորած թերթի վրայ)*

4 *Ժ > գրիգոր*

5 *Ժ միաբանութեան եղբայրութեան գլուխ, Է եղբայրութեանն*

6 *Է > վարդապետ*

7 *Ժ յոհանէս*

8 *Բ եզնկեցի, Ժ երզնկայի, Է եզնկայեցի*

9 *Ժ եւ աւգուտն*

10 *Տե՛ս Լ. Խաչիկեան, 1280 թուականին Երզնկայում կազմակերպուած «եղբայրութիւնը».- ՀՍՍՀ ԳԱ. «Տեղեկագիր», 1951/12, էջ 73-84, նոյնի՝ Երզնկա քաղաքի «եղբարց միաբանութեան» կանոնադրութիւնը (1280).- «Բանբեր Մատենադարանի», հտ. 6, Երեւան, 1962, էջ 365-377. վերահրատ.՝ Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Ա., Երեւան, 1995, էջ 216-27:*

նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 221-8: Այստեղ վերահրատարակում է ըստ ՄՄ 2173 (Ա. 257ա-260ա) ձեռագրի, համեմատությամբ՝ ՄՄ 2329 (Բ. 287բ-295ա), ՄՄ 2783 (Է. 4ա-7ա), ՄՄ 652 (Ժ. 70բ-75բ) ձեռագրերի:

Ա. 1 *Բանն Աստուած, որ բանիւ գոյացոյց զամենայն արարածս եւ զԲանն իւրական Հոգի կոչեաց եւ կեանք, բանիւն*[1] *իմաստութեամբ զարդարեաց զհոգիս մեր, զի որպէս հացիւ կերակրի մարմին, այսպէս*[2] *բանիւ հաստատի հոգի:* **2** *Արդ, հոգիացուցիչ բանն Քրիստոսի ուսուցանէ զմեզ, զի երկու են դուռն եւ ճանապարհ վարուց մարդկան, զոր ընտրեն եւ գնան ճանապարհորդք կենցաղոյս:* **3** |257բ| *«Նե՛ղ է դուռն եւ անծուկ է ճանապարհն*[3]*, որ տանի ի կեանսն, եւ սակաւք են, որք մտանեն ընդ նա*[4]*:* **4** *Լա՛յն է*[5] *եւ ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուստն եւ բազումք գնան*[6] *ընդ նա»* (**տե՛ս Մտթ. է. 13-14**)*:*

Բ. 1 *Արդ, նեղ եւ անծուկ ճանապարհ զառաքինութիւնն ասէ, եւ զբարեգործութիւնն, որ հեշտասէրքն եւ մեղաւք մոլորեալքն ո՛չ կարեն գնալ:* **2** *Եւ սակաւք են յաշխարհի, որք յաւժարական սիրով գնան ընդ նա:* **3** *Իսկ լայն եւ ընդարձակ ճանապարհ զմեղացն ասէ եւ զչար գործոցն, զոր մեղասասէր*[7] *եւ աշխարհասէր մարդիկ սիրեն եւ յաւժարին գնալ ընդ նա:*

Գ. 1 *Արդ, այս երկու ճանապարհիս երկու առաջնորդ են, որ կոչեն զմարդիկ գնալ զհետ*[8] *իւրեանց:* **2** *Բարի ճանապարհին առաջնորդ է Հոգին Սուրբ, զոր եւ մարգարէն Դաւիթ հայցէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ»* (**Սղմս. ՃԽԲ. 10**)*:* **3** *Եւ չար ճանապարհին առաջնորդ*[9] *սատանայ է, զոր վէմն հաւատոյ Պետրոս ասէ. «Ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ եւ խնդրէ, թէ զո՞յ*[10] *կլանիցէ»* (**Ա. Պտր. Ե. 8**)*:*

Դ. 1 *Արդ, եղիցի եղբայրութեանս*[11] *մեր Հոգին*[12] *Սուրբ*[13] *առաջնորդ, հանդերձ Հարբ եւ Միածնի Որդւովն, եւ առաջնորդեսցէ մեզ յերկիր ու-*

---

[1] *ԲԺ բանին, Է եւ բանին*
[2] *Է մարմին մարդոյ, այնպէս*
[3] *ԲԺ անծուկ ճանապարհն*
[4] *Ժ այն] նա*
[5] *Է որ լայն եւ*
[6] *Ժ մտանեն] գնան*
[7] *Բ զչարագործոցն զոր մեղսասէրքն:*
[8] *Ժ ի հետ:*
[9] *Ժ առաջնորդն*
[10] *Ժ զով*
[11] *Ժ արդ, եղբայրութիւնս*
[12] *ԲԺ հոգի*
[13] *Է մերոյ առաջնորդ հոգին սուրբ*

ղիղ բարի ճանապարհաւն ընդ[1] արքունի պողոտայն, առանց խոտորելոյ[2] յաջ կամ յահեակ[3], զի մի՛ ի զինուցն երկոցունց[4] խոցոտեսցուք։ **2** *Այլ իբրեւ ի վերայ[5] կամրջի գետոյ ընդ մէջն գնալով մի՛ վերոյ կամ ներքոյ[6] գետավէժ լիցուք։* **3** *Եւ զի ժողովասէր է բնութիւն մարդոյս եւ ընդունակ չարի եւ բարոյ՝ ըստ նմանութեան աւդոյս, զի զ|258ա|որ աւրինակ աւդ ի ծագել արեգականն լուսաւորի եւ ի գալ գիշերոյն սեւացեալ խաւարանայ, այսպէս եւ մարդ. եթէ զաստուածային բանն եւ զհոգեւոր խրատն եւ զլոյս պատուիրանացն Աստուծոյ առնու ի միտ, լուսաւորի եւ պայծառանայ։* **4** *Եւ թէ սատանայի ազդմանցն եւ մեղաց խրատուն լինի ընդունակ՝ նսեմանայ[7] եւ խաւարի։* **5** *Եւ զոր աւրինակ հող երկրի, զոր ինչ սերմանէ մարդ[8], զայն բուսուցանէ, այսպէս եւ[9] հողեղէն բնութիւն մարդոյս, զոր ինչ[10] սերմանեն՝ զայն պտղաբերէ. եթէ փուշ մեղաց եւ եթէ ծաղիկ[11] առաքինութեան[12]։* **6** *Արդ, լոյս պատուիրանացն Աստուծոյ լուսաւոր լիցի յոգի եղբայրութեանս, եւ ծաղիկք ամենայն բարութեանց բուսցին ի բնութիւն սոցա։* **7** *Բայց արժան է գիտել, եթէ քանի՞ տեսակք են եղբայրութեանն[13]։*

Ե. **1** *Առաջինն այս է, զի ի միոյ բնութենէ տարերացս միոյ Արարչին[14] ստեղծուածքն[15] եղբայր ասին։* **2** *Եւ այս հասարակաց է բանականաց եւ անբանից, կենդանեաց եւ անկենդանեաց։* **3** *Իսկ երկրորդ եղբայրութիւն այն է, որ ի միոջէ[16] ծնողաց ծնեալ լինին. եւ այս սակաւաւոր է։* **4** *Իսկ երրորդ եղբայրութիւն, որ եւ ճշմարիտն է եւ հոգեւորն, այն է, որ ի հոգւոյն Աստուծոյ ծնեալքն եւ ի մի աւազան մկրտեալքն եղբարք ասին միմեանց, եւ Քրիստոսի եւ երկնաւոր[17] Հաւրն որդիք, եւ արքայութեանն ժառանգա-*

---

[1] *Է > ընդ*
[2] *Է ոչ խոտորել*
[3] *Բ յահեք*
[4] *Է ի զինոց երկոցունցն*
[5] *Է մի ի վերոյ*
[6] *Է ի ներքոյ*
[7] *Ժ եւ նսեմանայ*
[8] *ԲԺ ոք] մարդ։*
[9] *Դ > եւ*
[10] *Է բնութիւնս մարդկան զոր ինչ ի միտս։*
[11] *Է առաքինութեանց։*
[12] *ԲԺ ծաղիկ։*
[13] *Ժ եղբայրութեանս, Է եղբայրութեան*
[14] *ԲԺ արաչի։*
[15] *Ժ ստեղծուածք*
[16] *Է միոյ։*
[17] *Ժ Քրիստոսի երկնաւոր։ Է եւս երկնաւոր] եւ եւ երկնաւոր։*

ւորք[1] եւ Քրիստոսի ժառանգակիցք։ **5** *Եւ այս քրիստոնէից[2] է պարգեւեալ շնորհք, որք[3] անուամբն, որք անուամբն Քրիստոսի կնքին։* **6** *Այլ, դուք, ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի* ձ|258բ|*երում, որ գրովն է եւ կանովնական[4] սահմանաւք, եւ բարեսէր ժողովմամբ, եւ ընկերակցութեամբ, եւ միաբանութեամբ, եւ[5] միով հաւատով եւ սիրով[6] եւ երկնաւոր ցանկութեամբ։* **7** *Եւ ո՛չ եթէ նոր է այս, այլ զոր քրիստովնէից վայել է[7] գործ, զա՛յն ուսուցանէ։* **8** *Եւ քաղցր է այս եղբայրութեան սահման, զի որպէս[8] բազմութիւն աստեղաց զերկինս զարդարեն, այսպէս եւ բազմութիւն եղբարց ժողովելոց[9] զեկեղեցի[10] պայծառացուցանեն։* **9** *Եւ որպէս բազմութիւն զաւրաց քաջամարտիկ զինուորաց միաբանելոց դիւրաւ յաղթեն թշնամեացն, այնպէս[11] եղբարցն բազմութիւն՝ քաջ հաւատով եւ հաւասար սիրով դիւրաւ յաղթեն[12] սատանայի եւ մեղսասէր դիւացն եւ չար մարդկան, որք շարժին ի սատանայէ։*

Զ. **1** *Եւ արդ, դիցուք զսահման մերոյ եղբայրութեանս, որ[13] են երեք սեռական գլուխք։* **2** *Առաջինն, եթէ[14] ամենայն ոք իւր անձամբն որպէ՞ս քաղաքավարի։* **3** *Երկրորդ, թէ զի՞նչ աւկտութիւն եւ շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, եւ ո՞ր է պտուղ միաբանութեան սոցա։* **4** *Երրորդ, թէ[15] որպէ՞ս ի հասարակաց կենցաղոյս ի մէջ աշխարհի եւ ի մէջ բազում ազգաց իմաստութեամբ գնասցեն ի շինութիւն տեսողացն եւ ի փառս անուանն Քրիստոսի։*

Է. **1** *Եւ արդ ասասցուք, զոր[16] պարտ է ամենայն[17] ումէք իւր անձինն ստանալ։* **2** *Զի, զոր աւրինակ, արեգակն հասարակաց ծագէ, բայց ում*

---

1 *Է երկնից ժառանգաւորք։*
2 *Բժէ այս յատուկ քրիստոնէից։*
3 *Ժ որ։*
4 *Բժէ կանոնական։*
5 *Է > եւ*
6 *Է հաւատով յուսով եւ սիրով*
7 *Է > է*
8 *Է զոր օրինակ] զի որպէք*
9 *Բժ սիրով ժողովելոց*
10 *Է զեկեղեցիս*
11 *Է նոյնպէս] այնպէս*
12 *Է որք յաղթին*
13 *Ժ ուր*
14 *Է զի] եթէ*
15 *Է եւ թէ*
16 *Է զայն զոր*
17 *Է նախ ամենայն*

տեսանելիքն առողջ են, նա՛ լուսաւորի[1]։ **3** *Այսպէս եւ աստուածային[2] աւրէնքն հասարակաց է ամեն* |259ա| *այն աշխարհի, այլ որ սիրէ եւ գործէ[3] նա՛ է աւրինազարդ եւ աստուածային լուսովն պայծառացեալ։*

Ը. **1** *Լուարո՛ւք երիտասարդք եւ տղահասակ մանկունք, որք միաբանէք յեղբայրութիւնս[4]։* **2** *Այս ձեզ առաջին աւրէնք. Սիրեցէք զԱստուած զԱրարիչն ձեր, եւ վասն սիրոյ նորա արհամարհեցէ՛ք զամենայն սէր աշխարհիս։*

3 *Երկրորդ. Պատուեցէ՛ք զծնողսն ձեր՝ զհայր եւ զմայր, որ հետ Աստուծոյ պատճառ են ձեր[5] ստեղծմանն[6], եւ ծերութեան նոցա խնա՛մ տարէք եւ հրամանացն[7] հնազանդ լերուք, զի աւրհնութեան նոցա արժանի լիցիք։*

4 *Երրորդ. պատուեցէ՛ք զքահանայսն Աստուծոյ, իբրեւ զհոգեւոր ծնողն, եւ ձեր քահանային, որոյ ժողովուրդ էք, խոստովանէցէ՛ք[8] եւ ի վաստակոց եւ յաշխատութեանց ձերոց տո՛ւք նոցա պտուղ, որպէս զի[9] աղաւթք նոցա, որ վասն ձեր մատուցանեն, Աստուծոյ ընդունելի լիցի։*

5 *Չորրորդ. Սո՛ւրբ պահեցէք զանձինս ձեր ի մեղաց եւ անարատ կուսութեամբ մնացէք, մինչ արժանի լինիք առնուլ զպսակն աւրհնութեան, որպէսզի Աստուծոյ նուէր լիցին անձինք ձեր, եւ մի՛ սատանայ[10], նման գայլոյ, գիշատեալ պատառեսցէ զձեզ։*

6 *Հինկերորդ. Յետ առնելոյ զպսակն աւրհնութեան եւ միաւորիլ սուրբ ամուսնութեամբ ընդ կողակցին ձերոյ, որ յԱստուծոյ պատշաճեցաւ, սո՛ւրբ պահեցէք զանձինս ձեր յաւտար եւ ի պիղծ անկողնոյ, զի մի՛ զպսակն աւրհնութեան կորուսանէք եւ անկանիք յանէծս սատակիչս եւ զրկիք ի քրիստոնէութեան անուանէ՝ շունք[11] կոչելով, վասն շնութեան մեղացն։*

7 *Վեցերորդ. Յամենայն աւր[12]* |259բ| *երեք անգամ յաղաւթս կացէք. ի լուսանալ աւուրն եւ ի ժամ ուտելոյ հացին, եւ երէկունն[13]՝ ի ժամ[14] քնոյն։* **8** *Յամէն ժամ՝ ԺԲ. (12) ծունր՝ այր մարդն եւ Ի. (20) ծունր կին մարդն, եւ որ այլ աւելի կարէ, զայն իւր հոգւոյն[15] զաւրութիւն եւ սէրն գիտէ, զոր առ Աստուած ունի։*

---

[1] *է լուսաւորի եւ տեսանէ*
[2] *Բ այս աստուածային*
[3] *է սիրէ եւ առնէ*
[4] *է որք գայք եւ մտանիք ի միաբանութիւն եղբայրութեանս*
[5] *Ժ ձեզ*
[6] *Ժ ի ծերութեան*
[7] *է հրամանաց նոցա*
[8] *է խոստովանեցէք եւ ոչ այլոց*
[9] *Ժ > զի*
[10] *է սատանայի որ*
[11] *է շուն*
[12] *Ժ յաւրն] յամենայն աւր*
[13] *է ժամ ճաշոյն եւ երեկոյին*
[14] *է հետ] ժամ*
[15] *է հոգոյ*

Թ. 1 *[Եւթներորդ]. Շաբաթն[1] աւրն[2] եւ կիրակէ աւրն անպատճառ[3] յեկեղեցին երթայք, որ զԱւետարանին[4] ձայնն լսէք ու[5] Քրիստոսի ձայնին լինիք արժանի, եւ զպատարագն տեսանելով՝ զՔրիստոս տեսանէք։* **2** *[Ութերորդ]. Յամենայն կիրակէի զշաբաթուն յանցանքն խոստովանեցէք եւ ի Խ. (40) աւրն հետ մի հաղորդեցէք, եւ յամենայն տէրունական տաւն յեկեղեցին ժողովեցէք, եւ զխորհուրդ տաւնին[6] հասկացի՛ք, եւ զկիրակին ի բան առնելոյ սուրբ պահեցէք[7]։*

3 *[Իններորդ]. Զբերանն[8], որ Աստուծոյ անուանն խոստովանող է[9], սուրբ պահեցէք ի յիշոցաց[10] եւ յամենայն աղտեղի խաւսից, եւ մի՛ զԱստուծոյ ստեղծուածն՝ զլեզուն, սատանայի առնէք գործի։*

4 *Զամենայն սգայարանս ձեր ամրացուցէ՛ք երկեղիւն Աստուծոյ. զաչքն ի յարատ[11] հայելոյ, զականջն[12] ի չար եւ ի մեղաց խրատէ, զձեռն[13] ի գրկելոյ եւ ի գողանալոյ եւ հարկանելոյ, եւ զոտքն ի մեղս ընթանալոյ[14]։* **5** *Այլ այսպէ՛ս արարէք. աչաւք զԱստուծոյ գեղեցիկ արարածս տեսէ՛ք եւ բերանով զԱրարիչն աւրհնեցէ՛ք, ականջով զպատուիրանս Նորա լսեցէ՛ք, ձեռաւք յաղաւթս եւ յաշխատութիւն գործոյ[15] եւ յողորմութիւն աղքատաց բարեգործիցէ՛ք, եւ զսիրտ ի չար խորհրդոց սրբիցէ՛ք։*

6 *Եւ այս ամենայն ումէք իւր անձինն զգուշութիւն[16] յաստուածային հրամանացն |260ա| եւ ի Գրոց[17] Սրբոց։*

Ժ. 1 *Իսկ երկրորդն, որ եղբարցն առնեն եւ[18] վասն սի[ր]ոյն Աստուծոյ, զեղբայրասիրութիւն[19] կատարեն. ա՛յս է, վասն զի աշխարհս այս[20] ծով է եւ մարդիկ ալեկոծին ի սմա՝ պէս պէս պատահմամբ գործոց։*

---

1 *Բժ շաբաթ*
2 *Է > աւրն*
3 *Է անպատճառ անխափան*
4 *Է գնացէ՛ք զԱւետարանի*
5 *Բժ լսելով] լսէք ու, Է լսէք եւ*
6 *Է ամէն տաւնս*
7 *Ժէ տօնին գիտացէք կիրակին սուրբ պահեցէ՛ք ի մեղաց եւ ի գործ առնելոց ձա՛յն տաք միմեանց եւ գնածէ՛ք եկեղեցին*
8 *Է զբերանս ձեր*
9 *Բէ խոստովանող է եւ հաղորդական, Ժ խոստովանող է եւ*
10 *Է յիշողաց ի տրրտնջանաց ի բամբասանաց ի խեղկատակութեանց*
11 *Է յայրատ] ի յարատ*
12 *Է զականջդ*
13 *Է զձեռդ*
14 *Բժ > եւ զուրքն ի մեղս ընթանալոյ*
15 *Է աշխատանս գործոց եւ յաղօթս*
16 *Բժէ աւրէնք եւ զգուշութիւն*
17 *Է գործոց*
18 *Ժ > եւ։*
19 *Ժ զեղբայրութիւն*
20 *Է > այս*

2 *Եթէ ոք յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի եւ ի*[1] *բոնաւորաց նեղիցի, ամենայն եղբարքն ջան եդեալ հանցեն զնա ի հասեալ*[2] *վշտացն, զի որ եղբայր եղեւ մեզ Քրիստոս, ասասցէ*[3]*. «Ի բանդի էի, եւ եկի՛ք առ իս» (**Մտթ. Իե. 36**):*

3 *Եւ եթէ ոք ի փորձութիւն մեղաց անկեալ ի ձեռս սատանայի մատնեսցի, ամենայն եղբարքն աղաւթիւք եւ բարի խրատով եւ ողոքանաւք, այլ եւ սաստիւք եւ ամենայն հնարիւք ազատեսցեն զանկեալն ի ծառայութիւն մեղաց եւ Քրիստոսի ընծայեսցեն, նմանեալ այնմ, որ գթացաւ*[4] *ի վերայ անկելոյն ի ձեռս*[5] *աւազակացն*[6]*:*

4 *Եւ թէ*[7] *ոք յաղքատութիւն անկանիցի*[8] *եւ ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան եւ ըստ ուժոյ աւգնեսցեն, եւ աղքատ եղբարն աւգնելով՝ Աստուծոյ փոխ տացեն, որ հազարապատիկ վճարէ յայսմ աշխարհի եւ ի հանդերձեալն*[9] *զկեանսն յաւիտենական*[10] *պարգեւեսցէ:*

5 *Եւ թէ*[11] *ոք ի տկարութիւն եւ ի ցաւ*[12] *հիւանդութեան մարմնոյ անկանիցի, յամենայն աւր յեղբայրութենէն*[13] *ի տեսութիւն գնասցեն եւ զհիւանդացեալն մխիթարեսցեն, եւ դեղով եւ բժշկով ձեռնտու լիցին, որպէս զի լուիցեն ի Քրիստոսէ, թէ*[14] *«Հիւանդ էի, եւ տեսէ՛ք զիս» (**Մտթ. Իե. 36**):*

6 *Եւ թէ*[15] *ումէք աւր վախճանին*[16] *հասցէ եւ փոխեսցի յանցաւոր կենացս, ամենայն եղբարքն զմարմինն պատուով ի գերեզման*[17] *տանիցեն*[18]*, որպէս վայել է, եւ զհողն |260բ| հողոյն տացեն, եւ ամեն եղբայր*[19] *մին աւր պատարագ տայ*[20] *առնել յանուն վախճանելոյն: 7 Եւ այս սահման է, զոր եղբարքն միմեանց առնեն, եթէ մաւտեւոր եւ եթէ*[21] *հեռաւոր լիցի եղբայրն*[22]*, սիրով եւ հաւատով ի մէջ իւրեանց*

---

1 *Բ > ի*
2 *Բժէ հասանել*
3 *Է ասաց*
4 *Է > գթացաւ*
5 *Է ձեռն:*
6 *Բժ աւազակաց*
7 *Բժէ եթէ*
8 *Բժ անգցի*
9 *Է հանդերձելումն*
10 *Բժէ յաւիտենականս*
11 *Բժ եթէ*
12 *Է ցաւս*
13 *Ժ յամէն աւր առողջ եղբայրքն] յամենայն աւր յեղբայրութենէն*
14 *Բժ եթէ*
15 *Բժ եթէ*
16 *Է վախճանի*
17 *Բ գերեզմանի*
18 *Ժ թաղեսցին ի գերեզմանի*
19 *Ժ եղբարք*
20 *Ժ տան*
21 *Ժ եթէ] եւ եթէ*
22 *Է եղբայր*

համարեսցին։

ԺԱ. 1 *Իսկ երրորդ գլուխն այն*[1] *է, որ եւ այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց եւ կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ*[2]*, աւգտին եւ աւգտեցուցանեն։*

2 *Եթէ վարդապետ եկեսցէ յայլ աշխարհէ, գլխաւորք եղբարցն ի տեսութիւն՝ երթիցեն*[3] *եւ պատուեսցեն զնա, եւ շահեսցին ի վարդապետական բանից*[4]*, եւ ժողովեսցին առ նա՝ ի քարոզութիւն Սուրբ Գրոց, եւ ի գնալն յուղարկեսցեն զնա սիրով, եւ ըստ մարմնոյ պիտոյիցն, ըստ կարին տացեն հոգեւոր սերմանողին զմարմնաւոր պտղաբերութիւնն։* **3** *Այսպէս եւ եպիսկոպոսաց արասցեն։* **4** *Նոյնպէս վանականաց եւ աղաւթարար եղբարցն, եւ ճգնաւորաց ասպնջական եւ հանգուցիչք*[5] *լիցին։*

ԺԲ. *1 Եւ*[6] *խաղաղասէրք լինիցին*[7] *եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ*[8] *ամենայն ազգ*[9] *մարդկան սիրով առնիցեն*[10] *զասել եւ զլսել, որ*[11] *յամենայն ազգէ*[12] *իմաստունք լիցին*[13]*, մեծարեսցեն եւ յիմաստութենէն շահիցին*[14] *առանց հակառակութեան՝ հե՛զ բարուք, հանդարտ գնացիւք, պարկեշտ կացաւք, իբրեւ զդահեկան ոսկի ի մէջ տղմոյ աշխարհիս անաղտ եւ յստակ մնալով։ 2 Իբրեւ*[15] *զլոյս արեւու ի մէջ*[16] *գարշահոտութեանց պայծառ մնալով, յիւրեանց բարոյն տա՛լ այլոց որպէս արեգակն լոյս, եւ յայլոց*[17] |294ա| *պղծութեանց ոչ ուսանիլ, որպէս եւ արեգակն*[18] *ոչ առնու յայլոց պղծութեանց։*

ԺԳ. 1 *Արդ, դուք, պատուական եղբարք, այսպիսի աւրինաւք զարդարեցէ՛ք զանձինս ձեր, զի լինիցիք*[19] *միմեանց որպէս*[20] *զպարիսպ ամուր*[21]*, զի որպէս բազմութիւն քարանց ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամրու-*

---

[1] *Ժ այս է*
[2] *ԺԷ > յայլ աշխարհ*
[3] *Է բանից նորա*
[4] *Է եղբարց*
[5] *ԺԷ հանգուցիչ*
[6] *Է այլ եւ*
[7] *ԲԺ լինին*
[8] *Է եւ ընդ*
[9] *Է ազգս*
[10] *Է արասցեն*
[11] *Է > որ*
[12] *Է այլ եւ իմաստունս յամենայն ազգաց*
[13] *Է > իմաստունք լիցին*
[14] *Է յիմաստութենէն նոցա շահեսցին, ԲԺ շահեսցին պարկեշտ կացուք*
[15] *Է որպէս*
[16] *Բ > արեւու ի մէջ*
[17] *2173 ձեռագրի բնագիրն այստեղ ընդհատում է՝ թերթեր ընկած, շարունակութիւնը՝ ըստ 2329 (Բ.) ձեռագրի՝ 294ա-5ա։*
[18] *Ժ արեգակն, Է արեգականն*
[19] *Է լինիջիք*
[20] *Է իբր*
[21] *ԲԷ պահապան ամուր*

թեան եւ պահպանութեան է քաղաքի, այսպէս եւ դուք իբրեւ զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէ՛ք ի հաստատութիւն։ 2 Եւ որպէս դրախտ բազում տնկաւք զարդարի, այսպէս եւ դուք եղերո՛ւք[1] իբրեւ զդրախտ Աստուծոյ՝ քաղցրաճաշակ պտղով զարդարեալ, եւ որպէս բուրաստան՝ անուշահոտ ծաղկաւք լիացեալ[2]։ 3 Եւ զոր աւրինակ Թգ. Թագաւորի ի[3] յոսկոյ եւ ի մարգարտոյ եւ յականց պատու|294բ|ականաց յաւրինի, նոյնպէս եւ դո՛ւք Թգ. պարծանաց լերուք[4] գլխոյն մերոյ Քրիստոսի, եւ իւրաքանչիւր[5] զիւր գեղեցիկ գործս փայլեցէ՛ք[6] իբրեւ զակն լուսատու, եւ որպէս ակունքն յոսկին շարեալ[7] միանան, նոյնպէս եւ դուք յանբիծ հաւատն եւ յանկեղծ սէրն յարմարեալ[8] գեղեցիկ եւ պայծառ լուսով փայլեցէք, եղերուք մաւր ձերոյ եկեղեցւոյ կենդանի գանձ եւ պարծելի որդիք, եթէ[9] ուտիցէք եւ եթէ ըմբիցէք՝ զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք։

ԺԴ. 1 Արդ, որ սիրէ զեղբայրութիւնս զայս եւ խառնի ի միաբանութիւն սոցա, պահեսցէ նա եւ զաւրէնս զայս եւ զսահման եղբարցս՝ գրեսցի[10] նա ի գիր միաբանութեանս, եւ Քրիստոս գրեսցէ ի դպրութիւն կենաց[11]. իսկ շնացաւղն եւ յիշոցնատուն եւ այլ զանազան մեղաւք վարեալն մի՛ կացցէ[12] ի գրի աստ. իսկ որ աւրինապահքն են, սիրով զմիմեանս շահ|295ա|եսցին։ 2 Աւագ եղբայրն քաղցրութեամբ[13] խրատեսցէ, եւ կրսերն հնազանդութեամբ[14] լուիցէ. որ գիտունն է, մի՛ հպարտասցի, եւ որ տխմարն է, մի՛ յուսահատեսցի, այլ իբրեւ զՔրիստոսի անդամ[15] միմեանց խնամ տանիցին, զմեծն եւ զիմաստունն պատուեսցեն եւ զփոքրն եւ զանուսումն գթով խրատեսցեն։

3 Տասին գլուխն[16] եւ քառասնին մեծն յամենայն ժամ ի վարդապետաց ուսցին[17] եւ զայլսն աւգտեցուսցեն[18], եւ զամենայն բան[19] բարի խրատով

---

1 է եղբարք] եղերուք
2 Ժ պտղովք լցեալ.] ծաղկաւք լիացեալ, է լրցեալ
3 է > ի
4 Ժ եղերոք
5 է իւրաքանչիւր ոք
6 է փայլեցուցէ՛ք
7 Բ շարել, Բ շարել
8 Բ յարմարել
9 է եւ թէ
10 է եւ գրեսցի
11 է > եւ քրիստոս գրեսցէ ի դպրուիւն կենաց
12 է վարեցեալն մի կացցէ
13 Ժ աւագ գիտուն եւ իմաստուն եղբայրն քարոզութեամբ
14 Ժ կրսերն եւ անմիտն եւ տգէտն հնազանդութեամբ
15 է զանդամս քրիստոսի
16 է տասնաւագն
17 է ուսանիցին
18 է աւգտեցուցանեն
19 է բանս

գլխաւորացն արասցեն[1]։

[1] *Է արասցեն ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ*

ԻԴ.

ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՑԵՑԻՈՅ ԿՐԿԻՆ ԿԱՆՈՆՔ ԵՒ ԽՐԱՏՔ ՏՂԱՅԱՀԱՍԱԿ ՄԱՆԿԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՅ, ՈՐՔ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐԱՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՎ ՎԱՐԵՆ ԶԿԵԱՆՍ ԱՇԽԱՐՀԻՍ, ԶՈՐՍ ԵՒ ՄԵՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՒԻՒՆԱՅՆ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՈՒՂՂԵՄՔ ԶԱՅՆՊԻՍԻՍՆ Ի ՀՈԳԵՒՈՐՆ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Բնագիրը հրատարակվում է երկրորդ անգամ: Թեեւ Հովհաննես Պլուզ Երզնկացու ինչպես «Եղբարց միաբանության սահմանը», այնպես սույն երկը առավելապես կանոնախրատական գործեր են եւ հրատարակվել են «Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը» ուսումնասիրության մեջ, սակայն նկատի առնելով, որ սույն հատորում ներկայացնում ենք 2173 ձեռագրում առկա բոլոր «ստեղծագործությունները, այստեղ ընդգրկեցինք նաեւ «Եղբարց միաբանության սահմանք»-ը: «Կրկին կանոնք»-ը թեեւ բացակայում է 2173 ձեռագրում, սակայն անմիջական աղերսներ ունի «Եղբարց միաբանութեան սահմանք»-ի հետ, ինչը եւ անհրաժեշտ դարձրեց այդ երկի հրատարակությունն այստեղ:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2783 (Է. 7ա-11ա) ձեռագրի, համեմատությամբ ՄՄ 848 (Զ. 50բ-56ա), Վիեննայի Մխիթարյան Հ^{մր} 1299 (Ը. 158ա-181ա) եւ Վիեննայի Մխիթարյան Հ^{մր} 29 (Ղ. 136ա-139բ) ձեռագրերի (մանրամասները տե՛ս Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 61-75, բնագիրը անդ, էջ 230-239):

Ա. 1 |7ա| *Աստուածային առաքեալն Պաւղոս գրէ առ հռոմայեցիսն, թէ՝ «Որ[ք] ըստ մարմնոյ[ն] են՝ զմարմնոյ[ն]* |7բ| *խորհին, եւ որք ըստ հոգւոյ[ն]՝ զհոգւոյ[ն]»: 2 Եւ [թէ]՝ «Խորհուրդ մարմնոյն մա՛հ է, եւ հոգւոյն*[1]*՝ կեանք եւ խաղաղութիւնն» (տե՛ս Հռմ. Ը. 5-6):*

Բ. 1 *Արդ, խորհուրդ մարմնոյ զանգիտութեանն եւ զմեղացն ասէ զգործ*[2]*, եւ խորհուրդ հոգւոյ՝ զշնորհն*[3] *Աստուծոյ եւ զգիտութիւն պատուիրանաց*[4] *նորա եւ զամենայն գործս բարիս: 2 Վասն որոյ պարտ է զխորհուրդ մարմնոյն, որ է անգիտութիւնն եւ մեղքն, փոխել ի հոգեւորն, որ է գիտութիւն եւ [սուրբ] կեանքն: 3 Պարտ է գիտել, զի Բ. (2) իրք է մարդն՝ հոգի եւ մարմին. հոգին բանական է, եւ մարմինն՝ գործնական: 4 Զամենայն իրք հոգին մտաւքն տեսնու, զի միտքն աչք*[5] *է հոգւոյն, եւ*

---

[1] *Զ հոգւոյն՝ զհոգոյն*
[2] *Զ զանգիտութիւնն եւ զմեղաց գործն ասէ*
[3] *Զ զշնորհքն*
[4] *Զ զպատուիրանին*
[5] *Զ աչքն*

ապա մարմինն գործէ ձեռաւք եւ այլ անդամաւք։ **5** *Եւ որ ոչ տեսանէ մտաւքն յառաջ եւ ապա գործէ՝ նման է անբան անասնոյ, որ անմտաբար*[1] *եւ առանց խորհրդոյ առնէ զամենայն։*

Գ. **1** *Բ. (2) ազգ է իմաստութիւնն՝ տեսական եւ գործնական։* **2** *Տեսականն գիտութիւնն եւ ուսումն է, որով իմաստասիրեալ քննէ յաղագս Աստուծոյ եւ աշխարհի եւ ամենայն գոյից։* **3** *Իսկ գործնականն այն է, որով գործէ զամենայն գործս*[2] *բարիս հոգեւորս եւ ուղղէ զինքն ի հաճոյսն Աստուծոյ։*

Դ. **1** *Արդ, է մարդ, որ զգիտութիւնն եւ զուսումն միայն սիրէ։* **2** *Եւ է, որ զգործն եւ զառաքինութիւնն միայն ունի անգիտութեամբ։* **3** *Եւ է՛, որ զերկուսն ունի՝ զգիտութիւնն եւ զգործն։*

Ե. **1** *Արդ, որ գիտութիւն ունի եւ ոչ գործէ, նման է մարդոյ, որ մի աչք ունի։* **2** *Նոյնպէս եւ որ գործէ եւ ոչ ունի զուսումն գիտութեան, եւ նա միակնի է*[3]*, իսկ որ ունի ուսումն եւ գիտութիւն եւ զայն*[4] *գործէ եւ առնէ զառաքինութիւն՝ Բ. (2) աչաւքն է լուսաւոր*[5] *եւ մարդ է կատարեալ։*

Զ. **1** *Արդ, եկեսցուք ի բանն*[6]*, որ պիտանացու է մեզ։* **2** *Տեսաք յաշխարհի գործ մի, որ սովորութեամբ լեալ է յաշխարհի*[7] *ի մէջ մարդկան, որ լինին ի մարդկանէ, որ անուանին մանկտաւագ, եւ կոչեն զտղայահասակ մանկունս իւրեանց յորդեգիրս, եւ տան նոցա գաւտիս։* **3** *Եւ* |8ա| *չկայր հնար, որ բառնայր այս ի յաշխարհէ, զի հին էր սովորութիւնն, եւ քաղցր եւ ախորժ թուէր նոցա, որք*[8] *զայս գործէին։* **4** *Բայց մարմնական եւ երկրաւոր եւ անգիտաբար էր գործն նոցա։* **5** *Վասն այսորիկ կամեցաք մեք նոցա գրել խրատ եւ ցուցանել նոցա*[9] *ճանապարհ, զի գիտութեամբ եւ իմաստութեամբ եւ աւրինաւք լիցի գործն, եւ անխառն ի չարէ, եւ վկայութեամբ Սուրբ Գրոց եւ մի՛ մոլոր գիտութեամբ*[10]*։*

Է. **1** *Պարտ է յառաջ գիտել զայս Գ. (3) իրս. նախ՝ թէ*[11] *որ են մանկտիքն, Բ. (2) եւ թէ որ*[12] *է արժանի լինել մանկտեացն աւագ, Գ. (3) թէ ուստի է սկսեալ այս գործս։*

---

[1] *Զ անբաւարար] անմտաբար*
[2] *Զ > գործս*
[3] *Զ միականեայ նմանէ*
[4] *Զ > զայն*
[5] *Զ աչաւք լուսաւորէ*
[6] *Զ բան*
[7] *Զ > յաշխարհի*
[8] *Զ որք*
[9] *Զ նոցա զոր առնէին*
[10] *Զ մի մոլորութեամբ*
[11] *Զ իրքս. առաջին՝ թէ*
[12] *Զ երկրորդ՝ թէ ով*

Ը. 1 *Արդ, մանկութիւնն*[1] *Գ. (3) իրք է. մինն այն է, զի զբարիսն*[2]*, որ յԱստուծոյ առեալ է, ամուր*[3] *պահէ եւ ոչ կորուսանէ*[4]*. Բ. (2) ի պատերազմն, յոր մտեալ է, արի կենայ եւ ոչ յաղթի*[5]*. Գ. (3) այնմ*[6] *իրաց*[7]*, որ խոստացած է, ջանք*[8] *դնէ, որ*[9] *չզրկի։*

Թ. 1 *Բարի, զոր առեալ է յԱստուծոյ, այն է, որ հոգւովն պատկեր է Աստուծոյ, սուրբ եւ անմեղ եւ անմահ է հոգին։* **2** *Մանուկ այն է*[10]*, որ*[11] *չկորուսանէ զպատկերին գեղեցկութիւնն եւ նման լինի անասնոց։*

Ժ. 1 *Պատերազմ է մեզ ընդ սատանայի, իբրեւ զմանուկ արիացի՛ր եւ յաղթէ՛, եւ մի՛ յաղթի՛ր եւ խոց առնուլ ի մեղացն նետից*[12]*։*

ԺԱ. 1 *Եւ Աստուած զարքայութիւնն*[13] *յերկինս է խոստացեալ եւ հանգիստ*[14] *յաւիտենական, ջանա՛ եւ փութացի՛ր մտանել յայն հանգիստն։*

ԺԲ. 1 *Արդ, որ յայսոսիկ ժիր գտանի, նա՛ է մանուկ, եւ որ զայս*[15] *առնէ եւ զայս*[16] *ուսուցանէ*[17]*, նա՛ է մանկտեացն աւագ*[18]*։*

ԺԳ. 1 *Արդ, պիտոյ է մանկտաւագին այս չորս իրքս. նախ՝ գիտութիւն*[19] *ի Սուրբ Գրոց եւ յԱստուծոյ պատուիրանացն, զի գիտունն լուսատու*[20] *ճրագի նման է, որ լուսաւորէ զմարդիկ, որ ի տանն իցեն։* **2** *Իսկ անգէտն նման է կուրի*[21]*, որպէս ասէ Քրիստոս, «Թէ կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է, եւ*[22] *երկոքեանն ի խորխորատ անկանին»* (**Մտթ. ԺԵ. 14**)*։*

ԺԴ. 1 *Բ. (2) Պիտոյ է մանկտաւագին սուրբ կեանք*[23]*, զի ի սուրբ վարուցն աւելի ուսանին տեսողքն, քան թէ ի բանից։* |8բ| **2** *Զի սուրբ կեանքն նման է անուշահոտ խնկի եւ ծաղկի, որ ամենայն մարդ հեշտանայ ի տեսն եւ ի հոտն։*

---

[1] *ՂԸ դարձեալ՝ եւ այս գիտելի է, զի մանկութիւնն*
[2] *Զ զբարիքն, Ը որ զբարիսն*
[3] *Ը > ամուր*
[4] *Զ ու չկորուսանէ*
[5] *Զ չյաղթվի*
[6] *Զ > այնմ*
[7] *Զ իրք*
[8] *Զ իւր ջանք, Ղ իրք*
[9] *ՂԸ > որ*
[10] *Ղ մին այն է*
[11] *Ը > մանուկն այն է, որ*
[12] *ՂԸ մեղաց ախտից*
[13] *Ը արքայութիւն*
[14] *Ը խոստացեալ յանգիստ*
[15] *Ը > զայս*
[16] *Ը > զայս*
[17] *Զ եւ ուսուցանէ մանկտաւագ*
[18] *Ղ նա է աւաք մանուկ եւ առնէ եւ ուսուցանէ նա է մանկանցն սրբոց քառասնիցն։*
[19] *Զ առաջին՝ գիտութիւն*
[20] *Զ պատուիրանացն եւ ուսանիլ յամենայն իմաստուն մարդոյ զպիտանի խօսս զի գիտունն լուսատու*
[21] *Զ նման կուրի որ հրամայեաց*
[22] *Զ > եւ*
[23] *Զ կացք*

ԺԵ. 1 Դ. *(3) Պիտոյ է մանկտաւ[ա]գին բարի գործք, որ լինի ողորմած, մարդասէր, զի մարդասէրն զամենայն մարդ շահի, եւ ողորմած բարուքն, որպէս զհայր*[1] *եւ զծնաւղ ժողովարան լինի անտիրաց եւ աւտարաց*[2]*, ողորմած, որ խղճայ եւ ողորմի աղքատաց եւ կարաւտելոց*[3]*, որբոց եւ այրեաց:* **2** *Եւ այնոցիկ, որ զրկած են յառաքինութենէ եւ ի գիտութենէ, խնամ տանի նոցա եւ ողորմի ցաւակցաբար:*

ԺԶ. 1 Դ. *Պիտոյ է մանկտաւ[ա]գին*[4]*, որ եկեղեցւոյ հնազանդ լինի եւ զամենայն ինչ նոցա խրատովն առնէ:* **2** *Զի Աստուծոյ շնորհաբաշխութեանն տեղի եկեղեցին է եւ արքունիք թագաւորութեանն Աստուծոյ*[5]*:*

ԺԷ. 1 *Եւ թէ ուստի սկսաւ այս մանուկ կոչիլ եւ ճանապարհորդ անուանիլ*[6]*. ասեմ, թէ*[7] *ի Քրիստոսէ եւ յիւր սուրբ առաքելոցն:* **2** *Զի մինչ ի մարմնով գալն Քրիստոսի, հնա[ց]եալ մեղաւք շրջէին մարդիկք եւ մոլար ճանապարհաւ ընթանային՝ մեղաւք եւ անգիտութեամբ եւ անաստուածութեամբ. Քրիստոս Աստուածն մեր աւազանին*[8] *մկրտութեամբն ի հնութենէ մեղաց մանկացոյց զմարդիկք*[9] *եւ Աւետարանին գիտութեամբն իմաստնացոյց*[10]*, աստուածային ձայնիւն կոչեաց եւ դարձոյց*[11] *ի մոլոր ճանապարհէն*[12]*:* **3** *ԶԱստուած Հայր եւ զինքն եւ զՀոգին Սուրբ ծանոյց աշխարհի եւ եցոյց զճշմարիտ ճանապարհն՝ ասելով. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք» (Յվհ. ԺԴ. 6):*

ԺԸ. 1 *Արդ, որք զհետ Քրիստոսի կոչմանն երթան, յերկինքն ելանեն եւ յարքայութիւնն հասանեն*[13]*, եւ այնպիսիքն*[14] *ճշմարիտ աստուածապաշտք են եւ կենդանիք Աստուծոյ:* **2** *Եւ յետ Քրիստոսի համբառնալոյն սուրբ առաքեալքն*[15] *եղեն քարոզք եւ ուսուցիչք աշխարհի, եւ յետ առաքելոցն՝ սուրբ հարքն եւ վարդապետքն*[16]*, որք*[17] *ուսուցանեն զճանապարհ աւրինացն Աստուծոյ:*

---

[1] *Զ շահի, եւ աւտարասէր որ իբրեւ զհայր*
[2] *Զ > օտարաց*
[3] *Զ կարոտելոց եւ որ զրկած*
[4] *Զ > պիտոյ է մանկտաւագին*
[5] *Զ թագաւորութեանն նորա*
[6] *Զ > եւ ճանապարհորդ անուանիլ*
[7] *Զ > ասեմ, թէ*
[8] *Զ քրիստոս մարմնով յաշխարհս երեկ եւ աւազանին*
[9] *Զ > զմարդիկք եւ*
[10] *Զ իմաստութեամբ*
[11] *Զ եւ ի մոլորութենէ դարձոյց*
[12] *Զ > ի մոլոր ճանապարհէն*
[13] *Զ յերկինքն հասանեն եւ առ աստուած ելանեն*
[14] *Զ > այնպիսիքն*
[15] *Զ առաքեալքն նորա*
[16] *Զ վարդապետք եւ քահանայքն*
[17] *Զ > որք*

ԺԹ. 1 *է. եւ այս սովորութիւն քրիստոնէից, որ զաստուածասէր եւ զբարի քրիստոնեայն կնքահայր առնեն եւ տղային հաւատոյն*[1] *երաշխաւոր առ Աստուած։* **2** *Եւ յորժամ տղայն մեծ|Ցա|անայ՝ պարտական է, որում երաշխաւոր կացեալ է, որ զհաւատն ուսուցանէ՝ տայ ի նա ուսուցանելովն եւ վճարէ, եւ ի պարտուց ելանէ*[2]*։*

Ի. 1 *Արդ, թէպէտ*[3] *ամենայն շնորհք յեկեղեցին բաշխի ձեռամբ քահանայիցն, բայց որ բարեգործ եւ սուրբ քրիստոնեայքն են, նոցա արժան է, որ լինին*[4] *մանկտաւագ եւ որպէս հայր եւ ծնաւղ գթայ ի հոգեւոր որդիսն, եւ յորդորեն զմանկունսն յամենայն գործս բարիս, եւ բանիւ եւ գործով առաջնորդեն նոցա, եւ տան գաւտի սրբասէր մանկանցն*[5]*։*

ՅԱՂԱԳՍ ԳՕՏՈՅ[6]

Թէ քանի՞ են գաւտիք, որ տուեալ լինին, եւ կամ թէ զի՞նչ է խորհուրդ նոցա եւ զաւրութիւն[7]*։*

Ա. 1 *Առաջին*[8] *գաւտի քրիստոնէականն է, որ յետ կնքոյն*[9] *յաւազանն զգեցուցանէ քահանայն սպիտակ հանդերձ եւ ածէ գաւտի ընդ մէջն՝ զնարաւտն*[10]*, մանեալ*[11] *կարմիր եւ սպիտակ։* **2** *Արդ, սպիտակ հանդերձն աւրինակ է Ադամայ անմեղութեանն*[12]*, մինչ*[13] *ի դրախտին էր*[14]*։* **3** *Զնոյն անմեղութիւնն, որ նա կորոյս*[15]*, գտանեն որդիք նորա*[16] *յեկեղեցիս, որ է նոր դրախտ, իսկ կարմիր եւ սպիտակն, որ գաւտի ածեն գլխոյն*[17] *եւ*

---

[1] *Զ > հաւատոյն*
[2] *Զ պարտական է որ զհաւատքն ուսուցանէ երաշխաւոր կացուցանէ եւ ելանէ ի պարտուց*
[3] *Զ արդ նոյնպէս թէպէտ*
[4] *Զ է լինել*
[5] *Զ > եւ յորդորեն... մանկանցն*
[6] *ՂԸ վասն գօտոյն*
[7] *ՂԸ թէ որքան է գօտին եւ զինչ խորհուրդ ունի*
[8] *Ղ եւ այս գիտելի է, զի առաջին։ Ը գիտելի է, զի առաջին*
[9] *Զ կնքելոյն*
[10] *Զ > ընդ մէջն՝ զնարաւտն։*
[11] *ՂԸ > մանեալ*
[12] *Զ > անմեղութեանն*
[13] *Զ յորժամ] մինչ*
[14] *ՂԸ դրախտին էր, որ զգեցեալ էր զսկիզբնական անմեղութեան պատմուճանն զթագաւորական կնիքն զաստուածային կերպարանն զտիրական պատկերն զսկզբնատիպ գեղեցկութեան նկարն։*
[15] *Ղ կորոյս ցանկութեամբ աստուած լինելոյն եւ քաղցրաճաշակ պտղոյն որովայնամոլութեամբ յորմէ մերկացաւ զսկզբնական մեղաց պատմուճանն եւ գտանեն զնա որդիք, Ը կորոյս ցանկութեամբ աստուած լինելոյն եւ քաղցրաճաշակ պտղոյն որովայնամոլութեամբ յորմէ մերկացաւ զսկզբնական ամնեղութիւնն պատմուճան եւ զգեցաւ զսկզբնական մեղաց պատմուճանն եւ գտանեն զնա որդիք*
[16] *Զ գտանեն նորա կնքածն եւ հաւատացեալքն ի Քրիստոս։*
[17] *Զ > գլխոյն։*

խաչիւն ի ճակատն կապեն[1]՝ *սպիտակն Քրիստոսի աստուածութեանն է աւրինակ, եւ կարմիրն՝ մարդկութեանն մարմնոյն արեանն, որ միաւորեաց Քրիստոս։*

Բ. 1 *Արդ, նոյնպէս ամենայն ոք, որ ի Քրիստոս հաւատայ եւ մկրտի յաւազանն նորա եւ հաղորդի*[2] *մարմնոյ եւ արեան նորա, պարտ է*[3]*, որ իմանայ զխորհուրդն։* **2** *Զի որպէս գաւտին զմէջսն պնդի, այսպէս*[4] *եւ քրիստոնեայն յԱստուծոյ սէրն պնդի եւ անքակտե[լի] զհոգին իւր ի Քրիստոս կապէ, եւ [ե]լանելով մեղացն ծառայութենէ՝ Աստուծոյ միշտ ծառայէ։*

Գ. 1 *Եւ*[5] *երկրորդ գաւտի քահանայականն է, որ տայ եպիսկոպոսն քահանայիցն եւ սարկաւագաց, զի շնորհսն, զոր առին յԱստուծոյ, պնդակագ[մ] եւ ժիր կայցեն, եւ ի գործ սպասաւորութեան եկեղեցւոյն՝ փո[յթ] եւ արագ*[6]*։*

Դ. 1 *Երրորդ գաւտի*[7] *ճգ[նաւոր]ացն է, զոր ունէրն Եղիա եւ*[8] *Յովանէս Մկրտիչն հանդերձ [ի ստ]եւոյ ուղտու*[9] *եւ գաւտի մաշ[կ|ցբ|ե]ղեն ընդ մէջ, զի որպէս մաշկն [մե]ռած մորթ է*[10]*, նոյնպէս եւ որ վասն Աստուծոյ սիրոյն ճգնի, զամենայն մեղք եւ զցանկութիւն եւ զախտ մեռուցանել եւ ցամաքեցուցանել պարտ է։*

Ե. 1 *Չորրորդ գաւտի զինուորականն է, որով զինուորն պնդէ զմէջսն, յորում եւ իցեն ամենայն*[11] *պատերազմական գործիքն։* **2** *Նոյնպէս եւ որ յայս կրաւնս քրիստոնէութեան զինուորի, ի կռիւ*[12] *է հետ սատանայի՝ եւ զկռուոյն զգեստն ի զգաւտին։* **3** *Սուրբ*[13] *առաքեալն Պաւղոս ուսուցանէ. «Զգեցարուք, ասէ, զրահ զարդարութիւն» (Եփս. Զ. 14), զի որպէս զրեհն ի բազում աւղից*[14] *է, նոյնպէս*[15] *եւ արդարութիւնն՝ ի յոլով առաքինութեանց։* **4** *[Եւ] ագուցէ՛ք*[16] *զոտս ձեր ճշմարտութեամբ, այսինքն՝ Աւետա-*

---

1 *ՂԸ ճակատն պահեն*
2 *Զ յաւազանն եւ հաջորդի*
3 *Զ արենէ պարտ*
4 *Զ նույնպէս*
5 *ՁՂԸ > եւ*
6 *Զ եկեղեցւոյն արագապէս, ՂԸ արագ լիցին*
7 *ՂԸ > գաւտի*
8 *Զ > Եղիա եւ*
9 *Զ իստեւ ուղտուց*
10 *ՂԸ մաշկեղէն մորթն մեռած է*
11 *Զ յորում են ամենայն, Ը > ամենայն*
12 *Զ յայս կեանքս կա ի կռիւ*
13 *ՂԸ > սուրբ*
14 *Ղ պատերազմօղից*
15 *Զ > նոյնպէս*
16 *ՂԸ եւ ագուցէ՛ք*

րանին[1] խրատովն, որպէս կաւշկով, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, այս է[2]՝ ճշմարտութիւնն գաւտի ածեալ՝ պնդէ զմէջսդ։ **5** *Առէ՛ք զվահանն հաւատոյ[3]։* **6** *Զհաւատն ասպար առ դէմ[4] երեսացդ եւ թիկանցդ։* **7** *Զյոյսն սաղաւարտ դի՛ր [ի գ]լխոյդ[5]։* **8** *Եւ զբանն Աստուծոյ զէն [եւ] սուսեր[6] առ ի ձեռինդ եւ այնպէս[7] կռուեաց ընդ սատանայի եւ ընդ դիւաց[8] նորա, որ եհան զքեզ ի դրախտէն, եւ այժմ ջանայ հանել յերկնից արքայութենէն։*

Զ. **1** *Հինգերորդ գաւտի ճանապարհորդացն է, որ գաւտի կապեն եւ զդրաւշակս հանդերձիցն[9] ի վեր զարնեն, որ ոտիցն[10] հեշտ լինի ի գնալն։* **2** *Զոր աւրինակ իսրայէլացիքն յորժամ ելին[11] յԵգիպտոսէ եւ գային յԵրուսաղէմ, այսպէս[12] հրամայեաց նոցա Աստուած եւ ասաց[13]՝ եղիցին գաւտիք ձեր պնդեալ ընդ մէջ եւ ցուպ ի ձեռին. եւ այնպէս յոտն կալով կերիցեն զգառն Զատկին։* **3** *Այսպէս եւ մեք, որ ի[14] ճանապարհի եմք յայս կեանքս՝ պարտ է մեզ զողջախոհութիւնն գաւտի ածել եւ այնպէս ընթանալ[15] զճանապարհ կենցաղոյս։* **4** *Եւ վասն այնորիկ ի վերայ միջացն ածեն զգաւտին առ ի սանձել զցանկութիւնն, զի ցանկութիւնն ի միջացն ծնանի ի ներքոյ կողիցն, ի լերդէն եւ յերիկամացն։*

Է. **1** *Արդ, գաւտի ած զսրբութիւնն եւ կապէ զմեծ վիշապն՝ զցանկութիւնն։* **2** *Եւ որպէս ճանապարհորդն զդրաւշակն ի վեր զարնու, որ հեշտ երթայ, նոյնպէս |10ա| եւ դու ի վեր քարշէ զցանկութիւնդ, զոր յաշխարհս ունիս. եւ յԱստուած դարձո զքո սէրն եւ զցանկութիւնն, որ հեշտ լինի քեզ ի յերկինս թռչել մտաւքդ եւ առ Աստուած ելանել յայսմ աշխարհէս, որ խաւար անուանեալ է եւ նեղութիւն[16]։*

---

[1] *Զ զոտսդ ամրացոյ աւետարանին*
[2] *Զ > պընդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, այս է*
[3] *Զ > Առէ՛ք զվահանն հաւատոյ*
[4] *Ղ ընդդէմ*
[5] *Ղ դիր գլխոյդ*
[6] *Զ զաստուծոյ բանն եւ զսերն սուր*
[7] *ՂԸ այնպէս ընդ*
[8] *Զ դեւս*
[9] *Ը > հանդերձիցն*
[10] *Ղ զարկնեն եւ հանգրիճեն ողիցն, Ը զարնեն եւ հանգրիճեն ոտիցն։*
[11] *Ղ > ելին*
[12] *Ղ սոյնպէս*
[13] *Ղ ասէ*
[14] *Ը > ի*
[15] *Ղ ընթանալով*
[16] *ՂԸ անուանեալ եւ նեղութիւն ըստ այնմ, թէ վայ զի ընդ յերկար (երկու օրինակներում էլ բնագիրը այստեղ ընդհատում է. խարունակութիւնը մի փոքր հատուած է Զ. բնագրի երրորդ՝ «Վասն գօտի տալոյն» գլխից)*

Ը. 1 *Արդ, որ ցանկայ գաւտի առնուլ ի մանկտաւագէ, զայս ամենայն*[1] *խորհուրդս ուսուցանել պարտի մանկտաւագն*[2]*, եւ որդեգիրն այս իմաստութեամբս*[3] *սիրէ զգաւտին*[4]*։* **2** *Արդ, պարտ է ուսանիլ զայս խորհուրդս, որ տայ զգաւտին եւ որ առնու, զի յորժամ հարցանէ ոք, պատասխանի ունիցին տալ։*

Թ. 1 *Եւ մի՛ սուտ եւ մոլար գիտութեամբ վարիլ եւ ճանապարհորդ կոչիլ, եւ ճանապարհ ոչ գիտենալ*[5]*։*

Ժ. 1 *Դու ըզքեզ ճանպհորդ գիտես,*
՝ւ ի ճանպհէդ ի դուրս կու գընաս,
2 *Սիրես մանկութեան անուն։*
ու նըսէֆ մանկան չունենաս։
3 *Ճանպահս է բարակ ու նեղ,*
դու խըփել ես զաչուիդ ու գաս։
4 *Քաղցր է մանկութեան անուն,*
դու լեղի ՝ւ անհամ կու կենաս։
5 *Ճանպհորդ քեզ յայնժամ ասեմ,*
որ զճանպհի հատըն գիտենաս։
6 *Ծընել ես ՝ւ յաշխարհս եկել՝*
տու՛ր խապար, թէ ուստի՞ կու գաս։
7 *Եկել ես յաւտար երկիր,*
մէկ ցուցո՛, թէ յի՞նչ կու կենաս։
8 *Մեռնիս դու ՝ւ ի հող մըտնուս,*
ինձ ասա, թէ յու՞ր կու գընաս։

ՎԱՍՆ ԳՕՏԻ ՏԱԼՈՅՆ

Ա. 1 *Յորժամ գաւտի տայ մանկտաւագն որդեգրին, թէ ի միաբանքն են, յառաջ զմիաբանից սահմանն կարդան, որ լսէ, եւ հարցանեն ցնա, թէ՝ հնազա՞նդ ես աւրինացս։* **2** *Եւ թէ նա հաւնի եւ ասէ՝ հնազանդ եմ, ապա ասէ մանկտաւագն. «Ով որդեակ, պատուիրեմ քեզ Ժե. (15) բանս, որոց առաջին այս է*[6]*՝ սիրե՛ա զԱստուած, որ քո*[7] *Արարիչ է, եւ ապա*[8] *վասն*

---

[1] *Զ > ամենայն*
[2] *Զ ուցէ մանկտաւագն*
[3] *Զ եւ որդեգիրն այս իմաստութեամբս*
[4] *Զ > սիրէ զգաւտին*
[5] *Զ բնագիրն այստեղ ընդհատվում է*
[6] *ՂԸ շարունակվում են «նախ եւ առաջին այս է» արտահայտությամբ*
[7] *ՂԸ > քո*
[8] *ՂԸ երկրորդ. եւ ապա*

Աստուծոյ սիրոյն՝ զմարդիկք սիրեա՛, որ [քո] ընկերք եւ եղբարք են, եւ զինչ[1] *իրք յաշխարհիս, որ Աստուծոյ սիրոյն արգելք ու խափան*[2] *լինին՝ ատեա՛ զնոսա*[3] *եւ ի բա՛ց թ[ող]»։*

Բ. 1 *Յամենայն աւուր Գ. (3) հետ անխափան*[4] *յաղաւ՛թս կացիր եւ յամ[ենայն] ժամ ԺԲ. (12) ծու՛ր ած՝ առ[աւ]աւտուն եւ ճաշոյ ժամուն եւ [յե]րեկոյին, զի որ զԱստուած սիրէ, [աղաւ]թիւք խաւսի ընդ նմա. [եւ ա]մէն*[5] *կիրակի զշաբաթու [մեղքն] խոստովանեա՛ քո*[6] *խոստո[վանահաւրն], |10բ| /// (համարեա 1 տող ջնջուած), զի որպէս հաքիմն հիւանդին աւգնէ, նոյնպէս եւ խոստովանահայրն՝ մեղուցելոյն։* **2** *Յամէն*[7] *շաբաթ*[8] *ու [կի]րակի ի ժամատեղն գնա։*

Գ. 1 *Քո*[9] *ծնողացն հնազա՛նդ կաց եւ պատուեա՛ զնոսա, զի յետ Աստուծոյ մարդոյն երախտաւոր ծնաւղքն են*[10]*։*

Դ. 1 *Սիրեա՛*[11] *զաշխատիլն, որ ի քո վաստակոցն դու ուտես եւ այլոց տաս, որպէս եւ ա[ս]է սաղմոսն, «Զվաստակս ձեռաց քոց կերիցես*[12]*, երանի է քեզ, եւ բարի*[13] *եղիցի»* (**Սղմս. ՃԻԷ. 2**)*։*

Ե. 1 *Ընդ*[14] *ամենայն մարդոյ զխաղաղութիւն կալ եւ մի՛ լինիր կռուասէր, զի խաղաղասէրն որդի Աստուծոյ է, եւ խռովարար կռուասէրն որդի սատանայի է։*

Զ. 1 *Որչափ*[15] *կարես, առանց կնոջ կալ, զանձն քո սուրբ պահեա՛ յաւտար մեղաց։* **2** *Եւ թէ կա[միս] ամուսնանալ՝ քեզ աւրինաւք եւ հալալ կին առ աւրհ[ն]ութեան պսակով եւ մի՛ հայիր [ց]անկութեամբ յաւտար կին, զի [շ]ուն կոչի, եւ ոչ է մարդ որ [յաւ]տար կին խառնակի։*

Է. 1 *Որ [զԱստուած]*[16] *սիրէ՝ նա զպատուիրանս Աստուծոյ պահէ, զոր*

---

[1] *Ղ երրորդ. եւ զինչ*
[2] *Ղ արգելեալք եւ խափանեալք*
[3] *ՂԸ > զնոսա*
[4] *ՂԸ > անխափան*
[5] *ՂԸ չորրորդ. եւ ամէն*
[6] *Ը > քո։*
[7] *ՂԸ հինգերորդ. յամէն*
[8] *ՂԸ > շաբաթ*
[9] *ՂԸ վեցերորդ. քո*
[10] *ՂԸ > են*
[11] *ՂԸ եւթներորդ. սիրեա՛*
[12] *Ը ձեռաց եւ առաքեալ ասէ ձեռք որ ոչ վաստակեցին կերիցեն մի*
[13] *Ղ բարի եւ առաքեալն ասէ ձեռք որ ոչ վաստակեցին կերիցեն մի*
[14] *ՂԸ ութերորդ. ընդ*
[15] *ՂԸ իններորդ. որչափ*
[16] *ՂԸ տասներորդ. որ ասուտած*

Աստուած եւ սուրբք նորա եդեալ են[1], *ըստ այնմ. «Եթէ սիրէ՛ք զիս*[2]՝ *զպատուիրանս իմ պահեսջիք*[3]» (**Յվհ. ԺԴ. 15**)։ **2** *Զի Ադամ վասն միոյ պտղին, որ առանց հրամանացն Աստուծոյ եկեր, ել ի դրախտէն։*

Ը. 1 *Մի՛*[4] *սիրել գինին եւ զարբեցութիւն, զի գինին չորս մեծ իրք կորուսանէ եւ մարդոյն, զիան ածէ եւ վնաս բերէ*[5] *զհոգին, զխելքն, զբոզակն եւ զհարկիքն։* **2** *Զոր աւրինակ նաւ յորժամ ծանր լինի՝ ի ծով ընկղմի, եւ զոր ինչ ի ներս կայ՝ կորուսանէ։* **3** *Նոյնպէս մարդ, որ ծանրանայ արբեցութեամբ, կորուսանէ զամենայն բարի։*

Թ. 1 *Հետ*[6] *վատ եւ մեղսասէր ընկերաց մի՛ շրջիր, զի թէ մարդ ի գոդոյն եւ ի պիսակոտէն եւ ի բորոտէն եւ յայլ յայսպիսի վատ ցաւոց գարշի եւ ի զատ կենայ եւ վախէ*[7], *թէ փոխիցի յինքն. քանի՞ աւելի յայն մարդկացն, որ զմեղաց բորն ունին յիւրեանց հոգին, ի զատ*[8] *պիտի կենալ եւ ի հետ սրբոցն եւ գիտնոցն եւ իմաստնոցն շրջիլ. ջանալ եւ նոցա նմանիլ։* **2** *Եւ յորժամ զայս խրատս տայ, եւ նա յանձն առնու, ապա տայ ն|11ա|մա գաւտի բարակ զունար եւ այսպէս ասէ. «Կուտամ*[9] *քեզ գաւտի ու կու կապեմ զքո մէջքդ յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»։* **3** *Գաւտովդ զքո մէջքդ պնդեա՛, եւ դու սրտովդ*[10] *յԱստուծոյ սերն պնդեաց։* **4** *Եւ վասն Աստուծոյ սիրոյն զԱստուծոյ պատուիրանն պահեա՛։*

Ժ. 1 *Զքրիստոնէութեան*[11] *անունդ, զոր առեալ ես ի վերայ քո, սու՛րբ պահեա եւ մի՛ թերանար։* **2** *Զոր աւրինակ Քրիստոս ի վերայ քո մեռաւ, որ անմահն էր, դու վասն Քրիստոսի մեռի՛ր, որ մահկանացուդ ես, եւ մի խնայեր զմարմինդ քո։*

ԺԱ. 1 *Զգանձս աշխարհիս, զփառս երկրաւորս զամէնն ուրացի՛ր, զաստուածպաշտութիւնդ եւ զհաւատդ [միայն] հաստատու՛ն*[12] *պահեա եւ զայլն ամենայն մի՛ խնայեր վասն հաւատոցդ։*

ԺԲ. 1 *Զկարիս*[13] *ընկերին քեզ համարեա՛, լաց*[14] *ընդ լացողսն եւ խնդա ընդ խնդացողսն.*

---

[1] *Ղ > են*
[2] *Ը > զիս*
[3] *Ը > իմ պահեսջիք*
[4] *ՂԸ մետասաներորդ. մի՛*
[5] *ՂԸ անէծ եւ վնասաբեր է*
[6] *ՂԸ երկոտասներորդ. հետ*
[7] *Ղ փոխի, աւելի փախչիլ պիտի*
[8] *Ղ եւ ի զատ*
[9] *ՂԸ տամ եւ կապեմ*
[10] *ՂԸ > սրտովդ*
[11] *ՂԸ երեքտասաներորդ. զրիստոնէութեան*
[12] *Ը > հաստատուն*
[13] *ՂԸ չորեքտասաներորդ. զկարիս*
[14] *Ղ համարեայ ըստ այն, թէ լաց*

2 Մի՛[1] լեզուովդ խաւսիր չար, թէ չէ դու[2] կորեար,
3 Թէ զմեղս քո խոստովանիս, դու արդարացար[3],
4 Աղաւթքն խաւսք է ընդ Աստուած, անտի մի՛ հեղգար,
5 Վաստակեա՛ ձեռաւքդ եւ տուր եւ առ մեկին հազար։

ԺԳ. 1 *Անգործ եւ պարապ մի՛ կենար, զի պարապ մարդն տեղի սատանայի է, եւ աշխատաւորն տեղի Աստուծոյ է։* 2 *Որպէս ասէ ոմն ի սրբոցն*[4], *թէ՝ «Յանձն [աշխա]տասէր հանգիցէ Հոգ[ին] Սուրբ»* (**Ծն. Գ. 19**)։

ԺԴ. 1 *Եւ Աստուած Ադամայ ասաց. «Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո». եւ Պ[աւ]ղոս ասէ, թէ*[5]՝ *«Զեռք, որ վաստակեսցի ոչ՝ կերից[ի] մի՛»։* 2 *Եւ մարգարէն ասէ՝ Աստուած[ա]հայրն Դաւիթ. «Զվաստակս*[6] *ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, եւ բարի [եղիցի]*[7]*»* (**Սղմս. ՃԻԷ. 2**)։ 3 *Եւ Տէրն ուսուցանէ*[8]. *«Յ[աղաւ]թսն հայցել զհաց մեր [եւ] ո՛չ զայլոց*[9]*». ա՛յս է, որ քո հալալ աշխատանաց[ն եւ] ի քրտանցն եղիցի եւ [ո՛չ] զրկանաց կամ ի գողու[թեանց] եւ ի վաստակոց աւտար[աց]։*

ԺԵ. 1 *Զայս ամենայն խրատս տայ մա[նկ]տաւագն որդեգրին [եւ կա]պէ զգաւտին ի մէջսն եւ [ասէ]՝ Աստուած շնորհաւոր առն[է, եւ աս]են եղբարքն՝ Ամէն եւ եղիցի*[10]։

---

1 ՂԸ հինգետասաներորդ. մի
2 Ղ դու
3 Ը դու ապրեցար
4 ՂԸ ի հարանցն
5 Ը > թէ
6 ՂԸ եւ դաւիթ. ասէ՝ զվաստակս
7 ՂԸ > ի ձեռաց քոց... բարի եղիցի
8 Ղ ցուցանէ] ուսուցանէ։
9 ՂԸ զայլոց եւ հայրն ասաց զհաց աւուրն քրտամբ երեսաց ասացաւ ուտել, եւ դու յաւիտենական կեանքն քնով կամիս ժառանգել, ի քո։
10 Ղ եղիցի, եղիցի, եղիցի։ Բնագրին հետեւում է «Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց» տաղի մի տարբերակ, որի վերնագիրը հատկապէս արժանի է ուշադրութեան. «Նորին Յոհանու առաքելաշնորհ եւ բանիբուն վարդապետի բան խրատական եւ յորդորումն յաղօթս զառաջին մանկտաւագն Յակոբ, զոր փոխեաց ի մարմնաւորէն ի հոգեւորն, աւրհնեաց զնա եւ ետ նմա գօտի եւ ասաց առ նա զերգս ոտանաւոր»։

ԻԵ.

|261ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵԶՆԿԱՑԵՑՈՅ Ի ԽԶ. ՍԱՂՄՈՍՆ ԴԱՒԹԻ, Ի ՄԵԿՆՈՂԱՑ ԲԱՆԻՑ ՅԱՐՄԱՐԵԱԼ

Երզնկացու շատ գործերում, այդ թվում եւ Դավթի ԽԶ. սաղմոսին նվիրված մեկնաբանության մեջ հեղինակը, ինչպես ընդունված էր միջնադարում, կարեւորելով հոգու եւ մարմնի հարաբերության խնդիրը, թեեւ իր ժամանակի համար խիստ առաջադեմ մտքեր է արտահայտում՝ գտնելով, որ հոգու եւ մարմնի պահանջները չպետք է հակադրվեն միմյանց. այլ մարդու զարգացումը պետք է ընթանա համաչափ, այդուամենայնիվ գերակայությունը տալիս է հոգուն:

Մասնավորեցնելով խոսքը իշխանությունների մասին՝ այն միտքն է զարգացնում, որ աշխարհիկ իշխանությունները անկայուն եւ անկատար են, եւ մարդը չպետք է իր հույսը դնի թագավորների ու իշխանների վրա, քանզի վերջիններս եւս սովորական մահկանացուներ են, ճակատագրի հարվածներին ենթակա, եւ կոչ է անում համախմբվել Աստծու եկեղեցու շուրջը:

Աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների նման հակադրումը թերեւս այլ պարագաներում դիտվեր եկեղեցու պայքար աշխարհիկ իշխանության դեմ: Սակայն, նկատի առնելով Երզնկացու՝ ազգային աշխարհիկ պետականության ամրապնդման համար թափած ջանքերը, կասկած չի կարող լինել, որ այն Հայոց եկեղեցու տեւական պայքարի արտահայտություններից մեկն է, երբ քաղաքական անկախությունը կորցրած եւ օտար իշխանությունների ներքո գտնվող ժողովրդին ձգտում են համախմբել ժողովրդի հավատականությունը ներկայացնող եկեղեցու շուրջը:

Ուշագրավ է, որ հայրենասեր հեղինակը հատկապես շեշտում է, թե եկեղեցին պատրաստ է ներելու նրանց, ովքեր գլորվել են մեղքերի ճահիճը, սակայն ցանկանում են վերադառնալ եկեղեցու գիրկը եւ քավել իրենց մեղքերը: Այս հանգամանքը հայկական միջավայրում ուներ քաղաքական մեծ նշանակություն՝ օտարացող տարրերին ետ պահելու կործանարար մտքից, ինչի մասին Երզնկացին գրել է բազմաթիվ առիթներով:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ ըստ ՄՄ 2173 (Ա. 261ա-9ա) ձեռագրի:

Ա. 1 |261ա| *Աւրհնեա՛ անձն իմ, զՏէր: 2 Ամենայն արուեստք եւ մակացութիւնք՝ բանաւորաց եւ ձեռագործից, երիցս այսոցիկ կարաւտանան պիտոյից. ենթակայի նիւթոյն, եւ զաւրութեան հանճարոյն եւ կատարման գործոյն: 3 Որպէս եւ աստեղաբաշխականն արուեստի նիւթ է էութիւն երկնային մարմնոյն, եւ հանճար հմտութեան նորին գիտել զշրջագայութեանն յեղանակ եւ զշարժումն ընթացից լուսաւորացն, իսկ կատարումն*

է ո՛չ առնելն նման նմա, այլ անվրէպ եւ անսղալ գիտութիւն նորին։ **4** *Նմանապէս եւ բժշկականն արուեստ նիւթ ունի զմարդկային մարմինն, զի յաղագս մարդկային մարմնոյ եղանի. եւ հանճար զաւրութեան արուեստի սորա է գիտել զխառնուածոցն առաւելութիւն եւ նուազութիւն, եւ ի շարժմանէ երակացն եւ ըստ ժամանակին եւ հասակին, եւ բնութեան տեղոյն դեղս կազմել յարմարական ծաղկանցն շարախառնութեամբ։* **5** *Իսկ կատարումն բժշկութեան է կամ զներկա առողջութիւնն պահել, կամ զի բաց գնացեալն վերստին դարձուցանել։*

Բ. **1** *Արդ, որքան վեհագոյն է հոգի՝ քան զմարմին, եւ բանք աստուածայինք՝ քան զծաղիկս երկրաբոյս, եւ անմահ կենացն վայելչութիւն՝ քան զմարմնոյ առողջութիւն, այնքա՛ն գերագոյն է եւ մեծ հոգեւորական բժշկութեանցն իմ|261բ|աստութիւնն, զոր ի Հոգւոյն Սրբոյ ընկալան մարգարէքն սուրբ, եւ առաքեալքն Քրիստոսի եւ երջանիկ հարքն եւ վարդապետքն եկեղեցւոյ, զի մարմնոյ բժիշկք ի պէտս կաւեղէն մարմնոյս առնեն զաշխատութիւն եւ հոսական բնութեանս, որ ամենայն հարկաւորութեամբ լուծանելոց է կապակցութիւնն, իսկ հոգեւորական բժշկացն փոյթս սակս անմարմին հոգւոց եղանի, որպէս յԱստուծոյ է եւ աստուածային եւ ի վերուստ զազգակցութիւնն ունի, եւ առ նա ճեպի, թէպէտ ընդ վատթարիս կապեցաւ մարմնոյ։* **2** *Իսկ զաւրութիւն հանճարոյ եւ արուեստ իմաստութեան հոգւոց բժշկողաց բազմապատիկ է յոյժ, քան զմարմնոյ եւ զնորին գիտութեան, զսովորութիւն բարուց եւ զշարժումն հոգւոց ախտից եւ զվարուց վատթարութիւն, եւ զյաւժարութիւն կամաց՝ բժշկել արուեստաբար եւ յուղղութիւն ածել։* **3** *Իսկ կատարումն է հոգեւոր բժշկութեան թռուցանելն զհոգի յերկնային կայանս, յափշտակել յաշխարհէ եւ տալ Աստուծոյ, եւ ըստ պատկերին գեղեցկութիւն թէ իցէ պահել եւ զի վայր ցնդելն վերստին անդրէն կոչել եւ ածել յառողջութիւն։* **4** *Արդ, զնոյն յեղանակ հոգւոց բժշկութեան եւ բազմահանճար իմաստութեան եւ յամենայն սաղմոսն Դաւթի է տեսանել, որոյ ուշ դիտաւորութեան է զհոգիս մարդկան աղաւթիցն եւ աւրհնութեանցն խաւսակցութեամբ յընտանութիւն ածել Աստուծոյ եւ անխզելի միութեամբ ի սէր Նորին կապել, յորմէ փառաց լուսոյ լինի մտացն պայծառութիւն, եւ հոգւոյ մասանցն արդարակշիռ եւ առողջական հաւ|262ա|ասարութիւն, որպէս եւ այս սաղմոս, որ առաջի կա մեզ ի քննութիւն։*

Գ. **1** *Ի սովորական պատմողացն գլխոց յերիս գլուխս զնոյն ցուցանէ հնարս բժշկութեան՝ դիտաւորութեամբ, պիտանացուաւն եւ վերնագրութեամբն, զի է դիտաւորութիւն մարգարէիս զհոգիս մարդկան յափշտակել ի սնոտի յուսոյ աշխարհի եւ յաստուածայինն վերացուցանել երանութիւն յուսոյ։* **2** *Վասն որոյ խրատական բանից իմաստութեամբ խորհրդակից լինի մարդկային ազգի։*

Դ. 1 *Եւ գիտելի է, զի ամենայն խրատ կամ յորդորական է, կամ հրաժարական. եւ է որ միջակաբար ունի։* 2 *Եւ պարտ է, որ յորդորէ յիրս՝ նախ զգեղեցկութիւն նորին գովութեամբ ներբողեալ ցուցանէ եւ զազնուականութիւն փառաց եւ պատուոյ նորին նազելի առնէ, որպէս զի ի ցանկութիւն զմիտս լսողին շարժիցէ։* 3 *Իսկ յորմէ հրաժարեցուցանէ, զընդդիմակն նորա արարեալ, զպարսաւելի՛ գարշութիւն նորա եւ զվնասս հետեւողաց նորին երեւեցուցանէ, որոց կարծեաւք բարին թուեցեալ լինէր։* 4 *Իսկ միջակ է, որոյ դէմքն ո՛չ է յայտնի, այլ հասարակաբար զխրատականն բան առաջի դնէ։*

Ե. 1 *Զսոյն աւրինակ խրատու եւ մարգարէս ցուցանէ յայսմ սաղմոսի, զի հանդերձեալ էր խրատել զմարդիկ ո՛չ յուսալ յիշխանս եւ ոչ ի մարդս մահկանացուս, այլ յԱստուած միշտ անմահ եւ յամենայնի կարող (**հմմտ. Սղմս. ճԽԵ. 3, Երմ. ԺԷ. 7**)։* 2 *Նախ յառաջին սաղմոսին եցոյց զանսահման մեծութիւն նորա եւ զգովելի գործս իմաստութեանն, զմեծ վայելչութիւն փառաց նորա եւ զանբաւ զաւրութիւն աստի եւ քաղցրութեան նորա։* 3 *Եւ զի անհաս է աստուածային մեծութիւնն, ասաց. «Մեծ է Տէր եւ աւրհնեալ է յոյժ» (**Սղմս. ԽԷ. 2**)։* 4 |262բ| *Մեծ ասելով զՏէր եցոյց զանսահմանութիւն նորա, զի որ զերկինս թզաւ չափէ եւ զերկիր քլաւ, եւ զջուրս ամենայն՝ ափով, ըստ Եսայեայ, ո՞ բաւ է մեծութեան նորա։* 5 *Եւ զի ամենայն մեծութիւն երկայնութեամբ եւ լայնութեամբ եւ խորութեամբ երեւի եւ նորա ո՛չ գոյ, զիա՞րդ ծրագրի մեծութիւն նորա։* 6 *Իսկ զգովելի գործսն եցոյց ասելով. «Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս քո»։*

Զ. 1 *Ամենայն ազգ, որք փոխեն զիրեարս ծննդեամբ, մինչեւ ի դադարումն ծնանելի բնութեանս, գովեն զկրկին գործսն Աստուծոյ, զարարչութիւն առաջին եւ զերկրորդս, զի քաղդէացիքն աստեղաբաշխական քննութեամբն գովաւղք եղեն սքանչելի գործոցն Աստուծոյ երկրաչափութեամբն՝ եգիպտացիք, նաւագնացք՝ յընթացս անհետ շաւղաց ծովու, գեղեցկասէրքն ի մարդկանէ յոսկոյ եւ յականց պատուականաց վայելչութիւնս գովեցին, եւ համեղութեամբ պտղոց, եւ ի զանազան կերպս կենդանեաց՝ դիմաց եւ բարուց։* 2 *Այլ գերագոյն հրաշիւք գովելի է գործ տնաւրէնութեանն Քրիստոսի, զի մեծ է աստուածացուցանելն զմարդ, քան ըստ պատկերի Աստուծոյ ստեղծելն, եւ յերկինս հանելն՝ քան իշխան երկրի կացուցանելն։*

Է. 1 *Յայտնեաց եւ զփառացն Աստուծոյ գեղեցկութիւնն յասելն. «Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան Քո խաւսեսցին» (**Սղմս. ճԽԴ. 5**)։* 2 *Ոչ միայն զոր երեւման է գոյիցս խաւսին, այլ եւ յամենայն եկեղեցիս խաւսին զմեծ վայլեչութիւն փառացն նորա, զի որ մեծատունն էր՝ վասն մեր*

աղքատացաւ (հմմտ. Բ. Կրնթ. Ը. 9), եւ զմեզ ճոխացոյց երկնային փառացն վայելչութեամբ եւ անճառելի լուսոյն պայծառութեամբ, որում անհամեմատ են փառք երկրաւ|263ա|որ թագաւորաց։ 3 *Եւ ծագումն լուսոյ արեգականն եցոյց եւ զաւրութիւնն Աստուծոյ ի սաստելն եւ յողորմելն՝ զզաւրութիւն ահի քո ասասցեն (Սղմս. ՃԽԴ. 6)։ Զջրհեղեղին, որ ի դարն Նոյի, զկորուստն փարաւոնի եւ զկլանելն երկրի զԴադան եւ զԱբիրոն, եւ ի նորումս յաւրէնս Աւետարանին զերկիւղ տանջանացն, զի ամենայն դատարկ բանից տալոց եմք պատիժս եւ զնմանս սոցին։* 5 *Եցոյց եւ զքաղցրութիւն խնամոց զաւրութեան նորա, զոր բխեն արարածք արեւ եւ անձրեւ, հաց եւ գինի, ծաղիկք եւ պտուղք։* 6 *Այս ամենայն բխողք են քաղցրութեանն Աստուծոյ, որով ցնծամք յարդարութիւն նորայ, որ գիտելով զկարիս մեր շնորհէ զամենայն։*

Ը. 1 *Այլեւ ի հոգեւորս միշտ յիշատակ քաղցրութեան նորա բխէ ի գիրս, որ պոռնկին մի արտասուաց զՃ.աւոր (100) մեղքն եթող (տե՛ս Ղկ. Է. 38)։* 2 *Զմաքսաւորն «Աստուած քաւեա» ասելովն արդարացոյց (Ղկ. ԺԸ. 13)։* 3 *Զանդամալոյծն ո՛չ միայն առողջացոյց, այլեւ զմեղսն եթող (տե՛ս Մտթ. Թ. 6)։* 4 *Խաչահանուացն աղաւթեաց եւ յարտասուս այրոյն գթացաւ, բաժակի մի ջրոյ վարձս խոստացաւ։* 5 *Եւ ցնծամք, զի իւրով արդարութեամբն զմեզ արդարացոյց եւ ի ներկա յաւիտենիս մարմնոյ եւ արեան նորա պատարագաւն եւ յիշատակաւ մահուն քաւիմք։* 6 *Ծանոյց եւ զողորմութիւն Նորա տէրութեանն եւ զգթութիւն, զի ողորմութիւնն ծա՛ռ է ծաղկեալ աշխարհալի, եւ գթութիւնն պտուղ համեղ եւ քաղցրաճաշակ, զի գթած է առ որդիացեալսն եւ ողորմած առ զղջացեալսն, երկայնամիտ առ անզեղջսն, բազումողորմ առ բազմապարտսն յապաշաւանս եկեալս։* 7 *|263բ| Եւ գլուխ ամենայնի՝ զի ողորմեցաւ մեզ, եւ մարմին զգեցաւ եւ գթաց ի մեզ եւ քաւեաց խաչիւն եւ մահուամբ։*

Թ. 1 *Նմանապէս եւ ըստ կարգի բանք այսմ Սաղմոսի պատմէ զքաղցրութիւնն Աստուծոյ եւ զգթութիւնն, զփառքն եւ զաւրութիւնն։* 2 *Ապա վկայէ եւ զհաւատարմութիւնն, զի հաւատարիմ է յամենայն բանս իւր, զոր խաւսեցաւ յաւրէնսն եւ ի մարգարէսն եւ ի խոստումն բարեաց Աւետարանին, որ «յոմտ մի, որ նշանախեց մի է, ո՛չ անցէ մինչեւ ամենայն եղիցի» (Մտթ. Ե. 18), իսկ թագաւորք երկրաւորք բազում անգամ ստեն խոստմանցն։* 3 *Եւ արդար է յամենայն գործս իւր՝ ի մեղաւորացն ի տանջելն, եւ ի պսակելն զարդարս, եւ անցաւոր կենաւքս ի տալն մեզ ի տանջանս եւ ի փորձանս, եւ ոչ է իբրեւ զմարդ, որ անարժանիցն տան պարգեւքս եւ զարժանաւորս զրկեն։* 4 *Այլ նա արդար է, զի մարդկան ազգ, որք զղջացան ի մեղաց եւ խնդրեցին զողորմութիւն՝ գտին, իսկ դեւքն, զի*

ամբարտաւան կամաւք անզեղջ մնացին, վասն այնորիկ անարժանացան ողորմութեան։ 5 *Ուսոյց մեզ եւ զայն, թէ լսող է Աստուած աղաւթից, որպէս ասէ. «Մերձ է Տէր առ ամենեսեան, որ կարդան առ նա ճշմարտութեամբ»* (**Սղմս. ՃԽԴ. 18**)*, որպէս Մովսէսի եւ Ահար[ոնի], Սամուէլի եւ այլոց սրբոցն, զի Եղիա յերկիր աղաւթէր եւ հուր յերկնից իջուցանէր, առաքեալքն զնշանս սքանչելեացն գործէին։*

Ժ. 1 *Եւ այսպէս միշտ զկամս երկեղածաց իւրոց կատարէ եւ ապա զայս ամենայն բխումն բարեաց բնութեամբ ունողի ասէ. «զՕրհնութիւն Տեառն խաւսեսցի բերան իմ»* (**Սղմս. ՃԽԴ. 21**) *այսինքն՝ զանբաւ բարեացն նորա ըստ կարի զյայտն|264ա|աբանութիւն նորա եւ զպատմելն։* 9 *Եւ զի՞նչ այս ամենայն սքանչելեացս, զոր պատմեաց պտուղ կամ ընծայք յեղականացս. աւրհնեսցէ ամենայն կենդանի զանուն սուրբ նորա՝ հրեղէնքն եւ անմահականք, մարմնաւորք եւ մահկանացուք, որք ունին զյոյս յարութեան, հոգւով կենդանիքն աւազանին ծննդեամբ, զգայական ազգ շնչաւորաց, որոց գլուխ է մարդն բանական։* 3 *Զաշխարհ ամենայն լրիւ իւրով յորդորէ յաւրհնաբանութիւն եւ ի փառս Աստուծոյ։* 4 *Եւ ապա լծակցէ զկատարածն անցելոյն ի սկիզբն այսմ ս[ա]ղ[մոս]իս եւ ի նոյն յարմարեալ դասէ, ասելով. «Աւրհնեա անձն [իմ Տէր]»* (**Սղմս. ՃԽԵ. 1**)*։* 5 *Զի այս իսկ է դիտաւորութիւն, զի եւ յառաջիկայ ս[ա]ղ[մոս]իս՝ իբր յանսահման ծովէ զանհասական բարեացն Աստուծոյ բխումն պատմելոց է եւ ի նոյն յարմարեալ դաս կարգի, զի յորդորելով յայսքան զանազան շնորհաց եւ պարգեւատուի սէր եւ յոյս, հաւատարիմ լիցի ի հրաժարեցուցանելն ի մարդկային սնոտի յուսոյ։*

ԺԱ. 1 *Արդ, ուսեալք զդիտաւորութիւն տեսցուք եւ զվերանգիրն, զի եդեալ է [«Ալէլուիա.] Անգեա եւ Զաքարիա»։* 2 *«Ալելուիա» թարգմանի «Աւրհնեցէ՛ք զՏէր», զի աւրհնութիւն է եւ այս սաղմոս։* 3 *Այլ զԱնգէոս եւ զԶաքարիա յիշել ո՛չ է եդեալ Հ. (70) իցն*[1]*, բայց ի դէպ է, զի որք ի դարձ գերոյն, որ ի Բաբելոնէ առ տեղեաւն մեկնեցին, զսաղմոսս կարգեցին զանուանս մարգարէիցն, որք յետ դարձան ի Բաբելոնէ, մարգարէանային։* 4 *Եւ որ ասէ. «Մի՛ յուսայք յիշխանս», զՆաբուգոդոնոսորէ ասէ, յորմէ ելին հոգին եւ կորեաւ խորհուրդ ամբարտաւանութեան նորա, |264բ| ըստ ասելոյն Եսայեա. «Դո՛ւ ասէիր ի սրտի քում, թէ ելից յերկինս»* (**հմմտ. Եսյ. ԽԷ. 8, 10**)*։ «Եւ դարձեալ, թէ՝ առնէ Աստուած իրաւունս զրկելոցն»* (**Սղմս. ՃԽԵ. 7**)*, եւ «Շինէ զերուսաղէմ եւ զցրուեալսն Իսրայիղի ժողովէ»* (**Սղմս. ՃԽԶ. 2**) *եւ դնէ զհիմունս նորա ի խաղաղութեան՝ ի ձեռն Զաւրաբաբելի։* 6 *Եւ ա՛յս է վերանգրիս զաւրութիւն, որպէս թէ երգ ս[ա]ղ[մոս]իս Դաւթի ի դիմաց Անգեա եւ Զաքարիա առեալ լինի։*

---

[1] *Միտքը քաղուած է Վարդան Արեւելցու «Սաղմոսաց մեկնութիւն»ից՝ էջ 491։*

ԺԲ. 1 *Ծանիցուք եւ զպիտանացուն յայսմ ս[ա]ղ[մոս]ի, զի ո՛չ միայն հնոյն Իսրայիղի, այլ յամենայն արարածոցս աւրհնութիւն է յամենեցունցն Աստուած, եւ խրատ է աւգտակար առ ամենայն ազգս մարդկան, եւ պատմութիւն է սքանչելի գործոց տնաւրէնութեանն Քրիստոսի:* 2 *Եւ զի՞նչ այլ պիտանացու եւ մեծաշահ բարի, քան զայսոսիկ:* 3 *Որպէս եւ ասէ մարգարէս. «Աւրհնեա՛ անձն իմ զՏէր»:*

ԺԳ. 1 *Ընդ այլ կենդանիս եւ դո՛ւ, ով անձն իմ, առաւել պարտական ես աւրհնութեան Արարչին, զի արար զքեզ պատկեր իւր բանական եւ անմահ:* 2 *Բայց քննել արժանի է զպատճառ դիտաւորութեանս, վասն որոյ երբեմն Աստուած խնդրէ ի մէնջ զաւրհնութիւն, եւ երբեմն սուրբքն գրովք իւրեանց խրատեն աւրհնել, եւ է՛ զի բնութիւնս ստիպեալ շարժէ զմեզ:* 3 *Արդ, խնդրէ ի մէնջ Աստուած զաւրհնութիւն, զի առաջին ժողովուրդն՝ կոչեցեալն Իսրայէղ, տայր Աստուծոյ զոհս եւ նուէրս մարմնականս, բայց զի զմտացն սէր ո՛չ խառնէր ի նմա, խոտեաց զայն Աստուած, եւ ի նոր ժողովրդենէս զանմարմին Հոգւոյն սէրն խնդրէ, եւ ո՛չ թէ աղբեւրն աւրհնութեան յաւրհնելն մեր զաւրանայ, կ[ամ] առաւելութիւն ինչ նմա լինի, այլ զի մարդասէր է կամի զմեզ աստուածասէրս լինել:* 4 *Եւ զի՞ սէրն յաւրհնու|265ա|թենէն երեւի:* 5 *Զի սիրոյ է ծնունդ աւրհնութիւնն վասն այնորիկ զաւրհնութիւն խնդրէ:* 6 *Եւ, զոր աւրինակ, մեծատունք, թէպէտ անկարաւտ են տրոց աղքատին, այլեւ ի մեծարելն եւ ի սիրով տուրսն սակաւ հանգչին, եւ յուղեղ մտաց բանք բարի գովութեանն հաճոյ թուի, քան զտուրսն ի հարկէ եւ բռնութեամբ:* 7 *Վասն որոյ եւ սուրբքն ամենայն, եւ առաւել մարգարէս Դաւիթ, յայս յորդորեն զմեզ, զի խնամածուք եւ խրատիչք են բնութեանս, կամին զմեզ միշտ սիրով ընդանութիւն ունել առ Աստուած:* 8 *Եւ սէրն յայնժամ պտղաբերի ի մեզ, յորժամ զսիրեցելոյն գերազանցութիւն իմանամք եւ զգեղեցկութիւնն, որ շարժէ ի սէրն, ապա գովութեամբ եւ գոհութեամբ աւրհնել, որով սէրն ծանուցեալ լինի իբր ծառ ի պտղոյ իւրմէ:* 9 *Նաեւ բնութիւնս մեր հաստատեալ է յայս, զի որ արդարադատ միտս ունի եւ պարտական է երախտեաց ումեք, ո՛չ առնու հանգիստ, մինչեւ փոխարինէ զտուրս ընդերին, ապա քանի՛ եւս առաւել զԱստուծոյն յիշել պարտ է զերախտիս անմոռաց եւ միշտ աւրհնութեան պարտական զանձն վարկանիլ, որպէս եւ այժմ ասէ մարգարէս. «Աւրհնեա՛ անձ[ն իմ զՏէր] աւրհնեց[ից զՏէր] ի կեանս իմ»: Զի որքան ի մարմնի եմ, ո՛չ յապաղեմ յաւրհնելն, զի աւր աւուր արարածք ամենայն բիւեն զպատճառ աւրհնութեանն:*

ԺԴ. 1 *«Սաղմոս աս[ացից] Աստուծոյ իմոյ մինչ[եւ եմ ես]»* (**Սղմս. ճԽ. 2**)*:* 2 *Զի՞նչ է սաղմոսն զոր խոստանայ ասել:* 2 *Սաղմոսն քնարաց եւ փողոյ*

անուն է, որով ի հինն երգէին զերաժշտականն ձայնն յաւրհութիւնսն խառնելով, զի առաւել տրամադրէ զհոգի յուրախականսն եւ ի տրտմականսն։ 4 |265բ| *Իսկ զայն խոտեաց Աստուած, զի մարմինն էր առանց ըղձից եւ սիրոյ, այլ մեզ փող եւ քնար է՛ մարմին եւ զգայարանք սորա, ընդ, որս խառնել արժան է զմտաւորական հոգւոյն երգ, եւ այսու հնչակցութեամբ աւրհնել զԱստուած յամենայն կեանս, որչափ եմք ի մարմնի, զի փող եւ քնար ժամանակաւ շարժի յարուեստաւորէն, եւ ի լռելն անբարբառ կայ մնայ, իսկ մարդ կենդանի Ժ. (10) ամբ զգայարանաւք, իբր Ժ. (10) աղի քնար յերաժշտական մտացն, իբր յարուեստաւորէ շարժեալ, յամենայն կեանս իւր աւրհնէ զԱստուած, որպէս եւ ասէ. «Սաղմոս աս[ացից] Աստուծոյ իմոյ մինչ[եւ եմ ես]»։*

ԺԵ. 1 *«Մի՛ յուսաք յիշխանս եւ մի յորդիս մարդկան»* (**Սղմս. ճԽԵ. 3**)։ 2 *Յետ ցուցանելոյ զանսահմանութիւն մեծութեանն Աստուծոյ եւ զգործսն գովելի եւ զփառացն մեծ վայելչութիւն, յաղագս որոյ եւ յաւրհնելն յորդորեաց, այժմ դնէ եւ զհրաժարականն խրատ. «Մի՛ յուսայք յիշխանս»։* 3 *Խրա՛տ է այս աւգտակար ամենայն ումեք, զի սովոր են միշտ առ դրունս մեծամեծացն կանխել եւ ի նոցանէ պէս պէս հայցուածս աղերսել եւ ընդ մեծութիւնն եւ ընդ փառս նոցա զարմանալ։* 4 *«Մի՛ յուսաք, ասէ, յ[իշխանս]» զի ո՛չ են միշտ իշխանք, եւ դիւրաթառամ է փառք եւ մեծութիւն նոցա իբրեւ զծաղիկ խոտոյ, եւ մի՛ յայլ «որդիս մարդկան», թէ արուեստագէտ է կամ բժիշկ, եւ թէ այլ ինչ յերկրաւորացս յաջողեալ։* 5 *Տե՛ս զբնութիւնն եւ մի՛ վստահանար, զի որդի մարդոյ է։* 6 *Եւ «ո՛չ գոյ փրկութիւն ի նոսա»։* 7 *Է՛, զի ո՛չ կամին, եւ թէ կամին՝ ո՛չ |266ա| կարեն, եւ թէ կամին եւ կարեն, եւ բարեմիտ են եւ իրաւարար, այլ սակայն զճշմարիտ փրկութիւնն ո՛չ կարեն ձեզ տալ, քանզի Փրկիչ այն է, որ ի յաւիտենից հրոյն զերծուցանէ։* 8 *Իսկ առ նոսա յոյսն ի տանջանս մղէ եւ ոչ փրկէ։*

ԺԶ. 1 *Ըստ ասելոյն Երեմիա, «անիծեալ է, որ դնէ զյոյս իւր ի մարդ»* (**Երմ. ԺԷ. 5**)*, զի ահա իշխանքն, ընդ որոյ ի պատիւն սքանչանաս, որոյ ծառայից ջոկք զքեզ զարհուրեցուցանեն, վաղիւն զհոգիսն ի բաց փչեն եւ ի հող դառնան։* 2 *Ըստ որում ասէ. «Ելցէ հոգի ի նոց[անէ] եւ դարձին անդրէն ի հող, եւ յայնմ աւուր կ[ատարի] ամենայն խորհ[ուրդ]»* (**Սղմս. ճԽԵ. 4**)։ 3 *Զի որ ինչ խորհեցան քեզ եւ խաւսեցան, իբրեւ մեծատունն այն, որոյ անդքն պտղածնեցան, եւ լուաւ, թէ անմի՛տ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն պահանջեն, զի՞ խորհիս քակել եւ շինել։* 4 *Այսպէս յելանել հոգւոյն՝ ամենայն ահարկութիւն պատուոյ նոցա յոչ էութիւն դառնայ եւ ամբարտաւան խորհուրդք իւր կորնչի։* 5 *Եւ ընդէ՞ր զնա առնես յոյս, որ*

անձին իւրում աւգնել ո՛չ կարէ, թողեալ զճշմարիտ յոյսն, որ առ Աստուած։ 6 *Յաղագս որոյ ասէ. «Երանի ազգի, որոյ տէր Աստուած Յակ[ոբայ] աւգն[ական է նմա] եւ յոյս նորա ի Տէր Աստուած է»* (**Սղմս. ճԽԵ. 5**)։

ԺԷ. 1 *Որպէս ցուցաւ վերագոյն, իշխան զՆաբուգոդոնոսոր ասէ՝ սատակեալ դարձաւ ի հող, եւ ազգ յուսացեալ Աստուած՝ զԻսրայէլ, որ աւգնութեամբ նորա դարձան ի գերութենէն ի ժամանակս Կիւրոսի։* 2 *Եւ արդ, նոյն երանութիւնս է եւ ի վերայ եկեղեցւոյ, քանզի, արդարեւ, երանի է եկեղեցւոյ, որ զՔրիստոսի յուսոյն կախեցաւ, եւ ո՛չ զմարմնական իշխանաց, որպէս եւ հեթանոսքն* |266բ|, *զի սա՛, որ մեր է յոյս երկնի եւ երկրի, ծովու եւ որոց ի նոսա՝ Արարիչ է եւ յամենայնէ, նա՛ խնամէ զմեզ։* 3 *Իսկ իշխանք, թէ կարեն առնել ինչ յերկրի, բայց սակայն բազում անգամ եւ ոչ ի սմա։* 4 *Բայց զՅակովբ յիշել յոլով իմաստս ցուցանէ, զի նա բազումս կրեաց վիշտս, եւ ի յուսոյն, որ առ Աստուած, ո՛չ նուազեցաւ, վասն որոյ ի կատարումն ամենայն բարեաց հասաւ, զաւրհնութիւնն Հաւրն ժառանկեաց նա, որպէս եկեղեցի հեթանոսաց զՔրիստոսին, զանդրանկութիւն եղբաւրն էառ, որպէս հեթանոսք՝ զհրէիցն։* 5 *ԶԱսորիս էջ գաւազանաւ մի եւ ել խաշանց բազմութեամբ եւ որդովք, որպէս եւ մեք Քրիստոսիւ։* 6 *Յեգիպտոս եմուտ եւ ետես զՅովսէփ թագաւորեալ։* 7 *Այսպէս եւ որ ըստ նորա աւրինակին ունիցի զյոյսն, յամենայն փառսն վայելեն եւ լինիցին իբրեւ զնա երանելի։*

ԺԸ. 1 *Տե՛ս եւ զանուն, զի Տէր է եւ Աստուած։* 2 *Տէր է կենաց եւ մահու, եւ Աստուած՝ բարի եւ բարերար։* 3 *«Որ արար զերկինս եւ զե[րկիր], զծ[ով] եւ զամենայն»* (**Սղմս. ճԽԵ. 6**)։ 4 *Զերկինս, ուր անտեսութիւնք են եւ հրեշտակք, զերկիր՝ որ մայր է ծննդեան եւ դայեակ սննդեան եւ գերեզման մահու։* 5 *Զծով, որ ակն է աղբեւրաց եւ փոխելոց է ի հուր զամենայն, որ ի նոսա բնակեալքն են։* 6 *Տե՛ս եւ զայն խորհեաց, որ անմահք են, զի անդ գնալոց եմք, եւ զի մի՛ ոք ասիցէ՝ առ իս զի՞նչ այդ։* 7 *Ասէ. վասն այնորիկ յուսաս ի մարդիկ, զի փարթամք են ճոխութեամբ, կամ իմաստունք եւ զաւրաւորք, կամ թէ արդար եւ ողորմած։* 8 *Այսու ամենայնի ցուցանէ քեզ զյոյս։* 9 *Վասն զի զի՞նչ այլ մեծատուն, քան զերկնի եւ երկրի եւ ծովու Տէրն, եւ զի՞նչ զաւրաւոր եւ իմաստուն, քան զայն, որ զսքանչելի կամ*|267ա|*արն երկնի յաւրինեաց՝ կառուցեալ ընդարձակ տարածմամբ, վայելուչ գունով եւ սքանչելի ձեւով, եւ եդ զհիմունս երկրի ի վերայ լոյծ բնութեան ջրոյ՝ ամրագոյն, քան ի վերայ կարծրութեան վիմի։* 10 *Եւ զի՞նչ այլ արդար եւ ողորմած, որոյ ողորմութիւնն մինչեւ յերկինս է լցեալ, եւ ճշմարտութիւնն մինչեւ յամբս, որոյ յամենայն բանք եւ գործք*

ճշմարիտ են եւ իրաւամբք, որպէս եւ ասէ. «Ո՞ պահէ զճշմարտութիւն Յակովբայ յաւիտեան եւ առնէ իրաւունս զրկելոց» (**Սղմս. ճԽԵ. 7**)։ **11** *Զոր խոստացաւ Աստուած Յակովբայ՝ ետ զերկրին ժառանգութիւնն եւ զգերութեանն դարձ։*

ԺԹ. **1** *«Առնէ իրաւունս զրկ[ելոց]՝ տանել յերկիրն իւրեանց։* **2** *Այլեւ զոր բնութեանս խոստացաւ, պահեաց զճշմարտութիւնն Քրիստոս զմարգարէիցն նախաճառութեան, զի ո՛չ եթող զնոսա ի դերեւ ելանել, այլ եկն զբանս ծառայից իւրոց եւ զխորհուրդս հրեշտակաց, ի ներկա՛յ յաւիտեանս տնաւրէնութեամբն իւրով ի ճշմարտութիւն գլխաւորեաց եւ ասաց. «Ամենայն ինչ կատարեալ է»* (**Յվհ. ԺԹ. 30**)։ **3** *Նոյնպէս եւ արար իրաւունս զրկելոցն ի սատանայէ, զի որոցն այն պատրանաւք զրկեաց ի դրախտէն եւ յանմահական կենացն, Քրիստոս իւր արեամբն ճանապարհ հորդեաց։* **4** *Տա՛ հաց քաղցելոցս, իբրեւ զե. (5) նկանակն. եւ զէ. (7) ետ քաղցելոց ժողովրդեանն, այլ յերկնից իջեալ Հացն կենաց Քրիստոս, հեթանոսացն ազգաց քաղցելոցն աստուածապաշտութեան ետ հաց զիւր աստուածութիւնն. եւ զհացն հանեալ յերկրէ զաստուածեղէն մարմինն ի կուսական արգանդէն, ետ ի կերակուր կուսածին որդոց եկեղեցւոյ աւազանին ծննդեան։* **5** |267բ| *Այլեւ զիմաստութիւն եւ զհանճար խորհրդոց տնաւրէնութեան իւրոյ՝ ի սեղանոյ Սուրբ գրոց, ամենայն աւուր ջամբէ կերակուր քաղցեալ հոգւոց մերոց, զոր եւ Տէրն ուսոյց մեզ հայցել, ասելով. «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ», զի ա՛յն է մեր սեփհական հացն, որով կերակրեաք ի դրախտին։*

Ի. **1** *«Եւ արձակէ զկապեալս, Տէր»* (**Սղմս. ճԽԵ. 7**), *որպէս զծերունին Սիմէոն, եւ զկինն կարկամեալ եւ զհեթանոսս ի կապանաց անհաւատութեանցն, ըստ մարգարէին. «Արձակեա՛ զկապեալս ի գփոյ եւ ի տանէ կապանաց»* (**Եսայ. ԽԲ. 7**), *որպէս եւ զհոգիս ի դժոխոցն ազատեաց։* **2** *Այլեւ զկապեալսն ի հեշտութիւն եւ ի սէր <աշխ>աշխարհիս սիրովն իւրով արձակեաց Քրիստոս եւ տակաւին եւ արձակէ, որ զաւրանան ի սէր նորա։* **3** *Եւ զիմանալի հոգիս կապեալ ի թանձրութիւն մարմնոյ եւ ի սորին կրից վշտացեալ, արձակէ յանդորր եւ ի հանգիստ բնակեցուցեալ, յուսով անմահական կենացն, որպէս զՂազարոս ի գոգն Աբրահամու հանգուցեալ։*

ԻԱ. **1** *«Տէր բանայ զաչս կուրաց»* (**Սղմս. ճԽԵ. 8**), *որպէս զծնէ կուրին, եւ որք ի ճանապարհին նստէին, եւ զհեթանոսս, որք խաւարեալ էին ի լուսոյ ճառագայթից աւետարանին Քրիստոսի։* **2** *Եւ որպէս կոյր խաբեալ՝ զքարն որպէս զակն պատուական շաւշափէ, այսպէս եւ նոքա զկուռսն,*

որպէս զճշմարիտ Աստուած պաշտէին։ 3 *Եւ լուսաւորեաց զնոսա երեւեալ արեգակն ի բարձանց, ըստ մարգարէին. «Ժող[ովուրդ] որ նստ[եալ] ի խաւ[արին], ետես զլոյս մեծ»* (**Եսյ. Թ. 2**)։

ԻԲ. 1 *«Եւ կանգնէ զգլորեալս Տէր»* (**Սղմս. ՃԽԵ. 8**)։ *Որպէս եւ կաղք եւ անդամալոյծք մատեան ի տաճարն եւ բժշկեաց զնոսա, այսպէս եւ զզանազան մեղաւք գլորեալս կանգնեաց Քրիստոս մկրտու|268ա|թեամբն հանել յարքայութիւնն երկնից։* 3 *Այլ եւ ակամայ գլորելոցն ողորմած է Աստուած, եւ բարեգութ, որք սղալանաւք գլորին. ոմանք ի հաւատոյն ճշմարտութենէ, որպէս Պետրոս, զոր կանգնեաց եւ արար զնա վէմ հաւատոյ, եւ ոմանք գլորեալք ի մեղս յարդարութեանն շաւղաց, որպէս զԴաւիթ։* 4 *Արդ, աւրինակաւ սոցա զբազումս կանգնեաց եւ կանգնէ շնորհ ողորմութեանն։*

ԻԳ. 1 *«Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդուխտս»* (**Սղմս. ՃԽԵ. 9**)։ 2 *Սիրէ Տէր զարդարս, որ յամենայն ժամանակս լինին եւ սիրեն զարդարութիւն, որպէս զՆոյ սիրեաց, եւ երկրորդ հայր աշխարհի արար՝ յետ նախաստեղծին։* 3 *Եւ զՅովբ սիրեաց եւ նովաւ յամաւթ արար զթշնամին եւ ետ զնա աւրինակ ամենայն համբերողաց։* 4 *«Տէր պահէ զպանդուխտս», իբրեւ զԱբրահամ եւ զՅակովբ եւ զորդիս նոցին, որք երկնաւոր գաւառին յուսով պանդխտութեամբ կացին յերկրի։* 5 *«Զորբս եւ զայրիս ընդունի Տէր», որք զրկեալ են ի ծնողաց եւ յարանց։* 6 *«Եւ զճան[ապարհ] ամբար[շտաց] կորուս[անէ]», զի ոչ հանիցեն ի գլուխ զամբարշտութեանն խորհուրդ, որպէս զփարաւոնին եւ զՆաբուգոդոնոսոր։*

ԻԴ. 1 *«Տէր սիրէ զարդարս», զոր սրբեաց Քրիստոս մկրտութեամբ աւազանին զեկեղեցի եւ արդարութեամբ հաւատով, ըստ Ամպակումայ, թէ՝ «Արդարն ի հաւատո՛ց կեցցէ»* (**Ամ. Բ. 4**), *եւ առաքեալ խրատէ, թէ՝ «Արդարացեալք ի հաւատոց խաղաղութիւն կալցուք առ Աստուած»* (**Հռմ. Ե. 1**)։ 2 *Տէր, զի սիրեաց զարդարացեալքս մահուամբն իւրով եւ խաղաղութիւն արար ընդ մեզ։* 3 *Վասն որոյ եւ պահէ զմեզ ի պանդխտութեան կեանս խնամաւքն իւրովք, զի պանդուխտ եմք |268բ| յայս կեանքս աքսորեալք ի դրախտէն, եւ յերկուց կողմանց պէտս ունիմք պահող ի հոգւոյ եւ ի մարմնոյ վշտաց։* 4 *Որ պանդուխտ եմք յառաքինութենէ՝ պահէ եւ երկայնամիտ լինի՝ ժամանակ տալով ապաշխարութեան, եւ որք ի ճանապարհ առաքինութեանն ընթացիցս սկիզբն առնեն դառնալ առ հայրն մեր, եւ հայրենիսն պահէ ի դժրող դիւացն։* 5 *Վասն որոյ ասէ. «Զորբս եւ զայրիս ընդունի Տէր»։* 6 *Զո՛րբ մնացեալքս յերկնաւոր հաւրէն եւ զայրի հոգիս ի սուրբ Փեսայէն, որ ետ համարձակութիւն յոյսն մեր Քրիստոս կոչել զԱստուած Հայր, եւ եկեալ մարմնով ծանոյց զինքն մեզ,*

եւ ի ձեռս առաքելոցն հրամայեաց խաւսել, իբրեւ զկոյս մի սուրբ զոգիս մեր յընդունելութիւն նմա։ 7 *Այլեւ առաքինութիւն զհաւր եւ զամուսնոյ զխնամածութիւն ունի առ ստացաւղն եւ զի ի պանդխտութեան կեանս գրկնարաս տանաւղի եղեւ մեզ, սակայն ոչ վասն այնորիկ անարգէ Աստուած, այլ ընդունի զմեզ։*

Իե. 1 *«Եւ ճանապարհս ամբարշտաց կորուսանէ»* (**Սղմս. ճԽԵ. 9**)։ 2 *Ոչ զամբարիշտս ի մարդկանէ, թէ կամիցին գալ առ նա, որ ճանապարհն է կենաց, այլ ամբարշտութեան ճանապարհն կորնչի։* 3 *Այլեւ զճանապարհս ամբարիշտ դիւացն կորուսանէ, զի եհատ զնոցա յոյսն եւ դատապարտ արար Քրիստոս յաւիտենական հրոյն։*

Իզ. 1 *«Թագաւորեսցէ յաւիտեան Աստուած քո Սիոն ազգէ մինչեւ յազգ»* (**Սղմս. ճԽԵ. 10**)։ 2 *Ուստի սկսաւ, ի նոյն աւարտեաց, զի ասաց. «Մի՛ յուսայք յիշխանս մահկանացուս եւ սակաւակեացս անզաւրս եւ տկարս, եւ երանեաց, որոց տէր Աստուած է յոյս, յամենայնի կարողն եւ զաւրաւոր, այժմ ասէ, թէ անմահ է եւ յաւիտենական։* 3 |269ա| *«Թագաւորեսցէ Տէր յաւ[իտեան]»։* 4 *Այն, զոր Գաբրիէլ ասաց՝ զասացեալն ի Դանիելէ. «Աստուած է նա քո Սիոն՝ սուրբ եկեղեցի, զոր թագաւորեաց Տէր ի ներկա յաւիտեան ի վերայ նորոյ Սիոնի»* որպէս եւ ասաց Քրիստոս. *«Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկիր ազգէ մինչեւ յազգ»* (**Մտթ. ԽԵ. 18**), *զի ազգ բազումք փոխեն զիրեարս եւ թագաւորն կայ եւ մնայ յաւիտեան, ո՛չ միում ազգի կամ երկուց, այլ յազգացն առաջնոց՝ մինչեւ յազգս նոր ի կատարած աշխարհի, որում յամենայն ազգաց եւ ի մէնջ փառք ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից։*

ԻԶ.

|269ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍ ԵՐԶՆԿԱՑԵՑՈՅ ԱՍԱՑՈՒԱՑԾՔ ԲԱՆԻ Ի ԲԱՆՍ ԱՂԱԻԹԻՑ ՍՐԲՈՒՀԻՈՅՆ ԱՆՆԱՅԻ, ՈՐ ԱՍԷ. «ՀԱՍՏԱՏ[ԵՑԱԻ ՍԻՐՏ ԻՄ Ի ՏԷՐ]»

Ինչպես շատ հաճախ, այս քարոզում եւս մինչ Աստվածաշնչին եւ քրիստոնեական վարդապետության նշանավոր հեղինակությունների ասույթներին անդրադառնալն ու հանգամանալի մեկնաբանելը, Երզնկացին դիմում է իրական կյանքից վերցրած բազմաթիվ օրինակների, առավել պարզ եւ ընդունելի դարձնելու համար իր հիմնական ասելիքը: Ընդ որում, նման օրինակները ոչ միայն խոսում են նշանավոր վարդապետի իրական կյանքի բազմաթիվ երեւույթների խորը իմացությունների մասին, այլեւ հաճախ ներկայանում են իբրեւ միջնադարյան գեղարվեստական առնակի նմուշներ:

Այլ առիթով նշել ենք, թե Երզնկացին ինչպիսի լուրջ պահանջներ էր դնում վարդապետների առջեւ, ինչպես ժամանակի պաշտոնական հայերենին՝ «զմիջերկրայն եւ զոստանիկսն» եւ հայոց ծայրագավառների, ինչպես եւ հարեւան ժողովուրդների լեզուներին տիրապետելու համար:

Հետեւելով միջնադարում ընդունված պատմության պարբերականացմանը «զհեթանոսաց եւ զհրեից եւ զքրիստոնեից», նա, Խորենացու օրինակով, պահանջում է ուսումնասիրել ոչ միայն օտար աղբյուրները, այլեւ վիպասան պատմությունները, քանզի այն, ինչ ասել են քերթողները «միով կամ երկու տաղիւ» անհրաժեշտ են եւ պիտանի:

Հասկանալի է, որ նման պահանջներ դնող վարդապետը ինքը եւս պետք է տիրապետեր առաջադրված պահանջներին, ինչը եւ հաստատվում է նաեւ Աստվածաշնչի տարբեր լեզուներով թարգմանություններին անդրադառնալիս:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ՝ ՄՄ 2173 (Ա. 269ա-91ա) եւ 2992 (Զ. 170ա-188ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Որք յանդնդական խորս լայնատարած ծովու մխին վասն յուսոյ շահի՛ ակնկալութեան, պա՛րտ է մտածել յառաջագոյն զպատահմունս դժնդակ կրիցն, որք կան ի ծովու ի խի՛ստ հողմոց զտարաբերութիւնս, ի գումարել ամպոց թանձրութիւնս, ի ծածկել գագաթունս վիմաց եւ յուզմո՛ւնս մարտի գազանաց, ի սով հացի՛ եւ ի ծարաւ ջրո՛յ, ընդ կամելն՝ եւ ո՛չ պատահել նաւահանգստի, ի նաւավարաց հակառակութիւնս, եւ վիշտս՝ ի կերակրոց նուազութենէ:* **2** *Զայս ամենայն յառաջագոյն արժան է տեսանել եւ ի կասկածի*[1] *կալ, եւ պատրաստել ամենայնի:* **3** *Նոյնպէս եւ*

[1] *Զ կասկածի կատարածի*

որք ի ծով աշխարհիս այսմիկ մխին, զոր Դաւիթ «Այս ծով մեծ» **(Սղմս. ՃԳ. 25)** *ասէ, եւ Դանիէլ ետես* |269բ| *ի չորից հողմոց երկնից բախել զծովս զայս մեծ* **(տե՛ս Դնլ. Է. 3)**, *եւ զի որք գան յաշխարհ ծննդեամբ ի ծովս յայս մխին, ասէ մարգարէ. «Եկի ես ի խորս ծ[ովու]»* **(Սղմս. ԿԸ. 3)**:

Բ. 1 *Արդ, անգանին նոքա ի խտղտմունս մարմնոց եւ յախտ հոգւոց, յորոց մինն իբր զհնչումն հողմոց տարաբերէ, եւ միւսն իբր զամպս մթացեալս՝ զպայծառութիւն հոգւոյ ծածկէ:* **2** *Պատահեն խորամանգութիւնք մարդկան եւ նենգութիւնք*[1]*՝ ծածկել ընդ կերպարանք սիրոյ, որպէս գագաթունք վիմաց ի խորս ծովուն:* **3** *Նոյնպէս եւ նոքա կեղծաւոր խաբէութեամբ, եւ է՛, զի յայտնապէս յանիրաւաց եւ ի գազանամիտ մարդկանէ վնասին, որպէս նաւք ի ծովային գազանաց, յաղքատութիւն եւ ի չքաւորութիւն կենցաղոյս իրաց, ի զրկանս եւ ի տանջանս անիրաւաց:* **4** *Ե՛ն եւ ի ծով կենցաղոյս սիրելեաց եւ բարեկամաց պատերազմունք, ընտանեաց եւ հարազատաց խռովութիւնս՝ վասն նիւթական իրացս անցաւորի, որպէս բազում անգամ նաւավարաց եւ նաւազաց հակառակութիւնս, այլեւ ի դիւաց փաղանգս եւ ի փորձանս զանազանս:*

Գ. 1 *Արդ, զի հարկ է լինել այսմ ամենայնի, վասն որոյ պարտ է երկու յեղանակաւք գտանել զհնարս փրկութեան, մինչ հասանիցի նաւս մեր ի նաւահանգիստն կրկին. մարմնոյս ի հող, յորմէ ստեղծաւ, եւ հոգի առ Աստուած, որ ետ զնա:* **2** *Այլ գիտել պարտ է, զի որք ի խորս ծովու նաւեն նաւուղեղք, որոց ո՛չ երկիր, ո՛չ լեառն, ո՛չ բլուր, ո՛չ դիտանոցք ինչ զցամաք նշանակեն, յաստեղս ոմանս նայելով՝ ուղղեն զնաւն առանց նաւաբեկութեան* |270ա| *մնալով:* **3** *Իսկ մեզ*[2]*, որոց ի խորս ծովու կենցաղոյս առաջի կայ նաւել, ո՛չ յաստեղս զգալի երկնի նայելով ուղղեմք զընթացս վարուց, այլ յաստեղս կենդանիս՝ յարդարսն առաջին եւ ի նահապետսն եւ ի հարսն սուրբ զակն մտաց յառելով*[3] *եւ փափագելով նոցին՝ զհետ նոցա հետոցն գնասցուք*[4] *ի նոյն նաւահանգիստ զնաւն հասուցանել, զորոց զվարս աստեղացեալ սրբոցն՝ ամենայն գիրք աստուածային հռչակեալ քարոզեն:* **4** *Որոց պարտ է մեզ ո՛չ միայն գովաւղք լինել նոցա, որք ի նիւթական բնութենէս լուսաւորք յաշխարհի*[5] *եղեն, այլեւ ի սէր նոցա վառելով՝ նախանձաւոր վարուցն նոցա լինիցիմք, զի Արարիչն բնութեանս՝ զարդասէրս եւ խնդրողս փառաց եւ պատուասիրութեան ցանկացողս*

---

[1] *Ջ > պատահեն... նենգութիւնի*
[2] *Ջ մերս*
[3] *Ջ անռնելով*
[4] *Ջ գնալով*
[5] *Ջ յերկրի*

արար զբնութիւնս, եւ զհարցն առաքինական նահատակութիւն, իբրեւ զզարդ առաջի եդ բնութեանս։ **5** *Զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զոր ախորժիցէ՝ ի նոցուն նահատակութիւնսն փոխել յարմարիցէ զինքն, զի վարդապետեն զհամբերութիւն, առաքինոյն Յովբայ նահատակութեան վարքն, զանոխակալութեանն Մովսէսին, հեզութեան Դաւթին, կուսութեան Եղիային, պահոց եւ աղաւթից Դանիէլին, պարկեշտութեան Յովսեփուն եւ Շուշանայն, երիտասարդացն՝ վարք ողջախոհութեանն, Յովսէփայ լիցի ըղձալի, եւ մանկամարդացն եւ որք մանաւանդ ընդ ամուսինսն կան՝ երանելին Շուշան աւրինակ բարեաց։* **6** *Իսկ կանանց՝ բարեպաշտութեան հանդէս առաջի կացցէ. Սառայ՛ն, Ռաբեկայ, Հռաքելին* |270բ| *եւ Աննայի բարեպաշտութիւնն, որք ի ձեռն աղաւթիցն զաւրութեան ի յամլութեանն կապանացն արձակեցան եւ ծնաւղք եղեն մեծափառ ծննդոց, թագաւորաց եւ ազգապետաց։*

Դ. **1** *Այլ այժմ առաջի՛ կայ ի քննութիւն սրբուհւոյն Աննայի բանք աղաւթիցն, որ եղեւ մայր քահանային մեծի, զոր պարտ է նախ զսկիզբն առաջիկայ գրոցս տեսանել եւ զյեղանակ պատմութեանս, որ եւ կարի գեղեցիկ Աստուածաշունչ գրոցս աւրինակ, զներբողական պատմողացն ցուցանէ զարարուածս արուեստի։* **2** *Զի նախ ցուցանէ զգաւառն եւ զտեղի, ուստի արմատքն եւ տունկ քաղցրաճաշակ եւ ախորժելի պտղոյն երեւեցան, եւ ապա ծանուցանէ զծնաւղսն սքանչելի ծննդոյն, որք գործիք Արարչական եւ աստուածային արուեստին եղեն ի ստեղծումն բարեշնորհ եւ տիրական պատկերին, եւ ապա զի պտուղ է աղաւթից եւ աղերսանք աստուածահաճոյից։* **3** *Եւ զի նախ, քան զծնանելն ի բարեպաշտուհի մաւրէն, Աստուծոյ ընծայեցաւ, որպէս թէ յանձն առնել Արարչին, թէ քո՛ է՝ զոր ստեղծանելոցն ես, ըստ հաճոյից կամաց քոց յաւրինեսցես զմասունս հոգւոյ եւ մարմնոյն պատշաճապէս։* **4** *Յետ որոյ եւ զծնեալն անտէն վաղվաղակի ի տղայական տիոց Աստուծոյ նուիրէր եւ քահանայի խանձարրոց ի պաշտաւն ահաւորին Աստուծոյ կացուցանէր։* **5** *Եւ այսպէս, սկիզբն եւ կատարած կենացն՝ հանդերձ միջոցաւն լի՛ է ամենայն ներբողենից եւ գովասանական դրուատից յարմարութեամբ*[1]*, որ եւ ասէ.* |271ա| *«Այր մի՛ էր յԱրեմաթեմայ՝ ի Սիփայի լեառնէ Եփրէմի»* ***(Ա. Թգ. Ա. 1)****։*

Ե. **1** *Սովորութիւն աստուածային գրոց համառաւտ նախադրական բանիւ գովել զերեւելի արս եւ զնշանաւորսն Աստուծոյ եւ զընտրեալսն, որպէս եւ զՅովբ ա՛յր մի էր Յովսիտ աշխարհէ, եւ Դանիէլ ա՛յր ցանկու-*

[1] *Զ մարգարեութեամբ*

թեանց եւ Եղիայ այր Աստուծոյ։ 2 Այսպէս եւ զսա ո՛չ աւտարացուցանէ յերեւելի պատուաւորացն, յաղագս մեծահռչակ եւ բարեհամբաւ որդւոյն, որում արժանացաւ հայր լինել մեծին եւ մեծի խորհրդոյ աւրինակին։ 3 «ՅԱրեմաթեայ»։ 4 Ոչ նուազ ինչ բարեբախտութեան շնորհ փոքր այն եղեալ մեծին քաղաք, որպէս Բեդղէ[հ]էմ մեծագունին եւ մեծի այսմ աշխարհի Արարչին, այսպէս եւ Արեմաթեմ Սամուէլի մեծի մարգարէին եւ քահանային տեղի ծննդեան եւ գերեզմանի հանգստեան, ուստի էր եւ Հովսէփն այն՝ փառաւորեալն, բազմաստացուածն եւ մեծահաւա՛տն, ասպնջականն յերկնից իջելոյ Բանին, զի եւ ի քաղաքս լիցի ինչ արժանի պատուոյ եւ պատուականաց ընծայաւոր։ 5 Վասն որոյ ասէ. «Եւ զծնաւղս նորա յԱրեմաթեմա»։

Զ. «Արեմաթեմ» անուն քաղաքին նոցա եւ «Սիփայ» լեառն, յորում քաղաքն շինեալ էր, որ էր վիճակ ցեղին Եփրեմի։ 2 «Եւ անուն նորա Եղկանայ, որդի յերեմիէլի, որդւոյ Հեղղեայ, որդւոյ Թովկայ ի նասիփ[1] Եփրեմի» այսինքն՝ ի բաժին Եփրեմի։ 3 Եւ զի համարեաց զանուանս նոցա, զի յայտ արասցէ եւ ցուցցէ, թէ քահանայ իսկ էր եւ ի ցեղէ անտի ղեւտացւոցն, որպէս եւ Գիրք մնացորդացն ցուցանէ (**տե՛ս Ա. Մնց. Զ. 34-35**)։ 4 Եւ վասն այսորիկ ուխտեաց Ա|271բ|ննա զՇմուէլ Տեառն, քանզի ոչ տային որդիքն Հեղղեայ կալ Սամուէլի ի սպասու տաճարին Տեառն, եթէ ո՛չ էր յազգէ քահանայիցն։ 5 Նմին իրի եւ ինքն իսկ Սամուէլ հանդերձեալ էր համարձակիլ մատուցանել զպատարագն Տեառն, վասն զի յորդոց անտի Ղեւեայ էր նա։ 6 Եւ զի ելանէր Եղկանայ հանդերձ կանամբքն իւրով Աննայիւ եւ Փեննայիւ ի տաւնս տարեկանս մատուցանել զպատարագն Տեառն ի Սելով։ 7 Արդ, նայեա՛ց եւ ի միտ ա՛ռ, զի ո՛չ եթէ մի տասնէ բերէր նա մատուցանել, զի ինքն զայլս տասանորդէր, այլ զպատարագն, որ վասն մեղաց անձին իւրոյ գայր մատուցանել, որպէս եւ առեալ իսկ էր հրաման քահանայիցն յաւրինաց անտի, բայց մատուցանէր զպատարագսն իւր ի ձեռն Ոփնեայ եւ Փենեհեզի, որդւոցն Հեղղեայ, զի նոքա էին քահանայք, որ պաշտէին ի ժամանակին յայնմ։ 8 Որպէս եւ ասէ. «Եւ անտ էր Հեղի, եւ երկու որդիք նորա՝ Ոփնի եւ Փենեհեզ քահանայք Տեառն» (**Ա. Թգ. Ա. 3**)։ 9 Եւ զի ետ ի զոհիցն Փեննայի կնոջ իւրում եւ ուստերաց եւ դստերաց նորա մասունս, եւ Աննայի՛ մասն մի, զի ո՛չ գոյր նորա որդի, բայց[2] զԱննա սիրէր առաւել, քան զՓեննա։ 10 Վասն զի արդարաբաշխ է պարգեւատուն, ետ նմա ծնունդս, զի այնու հաւասարեսցի առաւել

[1] Զ նասեփ
[2] Զ բայց զի

սիրեցելոյն, որպէս Լիա՛, եւ Հռաքելի եղեւ այսպիսի ինչ։ 11 *Իսկ զի բնաւորեալ է թեթեւամտացն, զի զսակաւ յաջողածս իրին նիւթ հպարտութեան անձանց առնուն, վասն որոյ Փեննայ, յաւր զոհիցն եւ ուրախութեանն նախանձաբեկ առնէր զԱննա բարկութեամբ* |272ա| *եւ նախատելով զամլութիւն նորա, տրտմեցուցանէր զնա։* 12 *«Եւ Տէր [փակեաց] զարգանդ նորա, զի ո՛չ ետ նմա որդի ըստ նեղութեան իւրում եւ տրտմութեան»* **(Ա. Թգ. Ա. 5-6)**։

Է. 1 *Եւ արդ, գիտելի է, զի որպէս ընդարձակութիւն եւ ուրախութիւն սրտի յոլով վնասակար ախտից ծնաւղք են, այսպէս եւ նեղութիւն եւ տրտմութիւն մեծաց բարեաց առիթ են։* 2 *Լուր Դաւթի, Բարի է ինձ, զի խոնարհ արարէր զիս, որպէս ուսոյց զիրաւունս արդարութեան քո* **(տե՛ս Սղմս. ՃԺԸ. 71)**։

Ը. 1 *Եւ ո՞ր են արդար իրաւունքն, զոր ուսաւ սա ի խոնարհութենէն եւ կամ որո՞վ մեք խրատիմք։* 2 *Այն իսկ է, զի յորժամ ի թագաւորութեան էր փառս՝ մեղաւ, վասն զի խնդա՛լն եւ փափկանալն խայտառակիչ է եւ անմտութիւն։* 3 *Եւ մինչ բոկ ոտիւք փախստական լինէր յԱբիսղոմայ, ասէր. «Դարձոյ զտապանակդ [փրկութեան], թերեւս ցուցցէ ինձ Տէր զվայելչութիւն դորա»* **(տե՛ս Բ. Թգ. ԺԵ. 25)**։ 4 *Եւ յանիծանելն Սեմէի ասէր. «Թերեւս տեսցէ Տէր զտառապանս իմ եւ հատուցցէ ինձ բարիս»* **(Բ. Թգ. ԺՁ. 12)**։ 5 *Վասն որոյ արդար իրաւամբք է այս, զի որք վասն հոգեկան եւ մարմնաւոր փառաց սնափառեալ ամբարտաւանին՝ խոնարհեցուցանէ ի փորձանս, զի զկիրս բնութեանս ուսցին։* 6 *Զնո՛յն եւ ի Փեննա եւ յԱննա՛ է տեսանել, զի ոմն բազմութեամբ զաւակաւքն բերկրեալ մեծամտէր, եւ ոմն ի նեղութենէ վշտացն եւ ի կարաւտութենէ ախորժակացն ճնշեալ ի տրտմութ[են]էն առ Աստուած դիմէր։* 7 *Վասն որոյ ասէ. «Փակեաց Տէր զարգանդ նորա առ ի չտալոյ նմա որդի»։* 8 *Ուստի ուսանիմք եւ թէ այս արդար իրաւունք է Աստուծոյ, զի ի նեղութիւնս* |272բ| *եւ ի վիշտս եւ ի կիրս տրտմութեան թոյլ տա Աստուած տագնապիլ սիրելեաց իւրոց։*

Թ. 1 *Առաջին, զի մի ընդ բարեացն ընդունելութիւն պանծացեալ՝ իւրոյ արժանաւորութեանն համարեսցի պտուղ եւ ո՛չ շնորհ ի պարգեւացն Աստուծոյ, եւ զայլսն իբրեւ զանարժանս զրկեալ համարեսցի։* 2 *Եւ երկրորդ, զի ի յաճախել վշտացն եւ նեղել կարաւտութեամբ ի բաղձանացն, որում ցանկայ, ե՛ւս բորբոքէ զջերմութիւն սիրոյն առ Աստուած եւ ժտելով խնտրեսցէ։* 3 *Եւ երրո՛րդ, զի մի՛ շնորհ միայն ունիցին սիրելիքն Աստուծոյ զտո՛ւրս բարեաց նորա, այլ եւ զվաստակս անձին, զհեղումն արտասուաց, զանմռունչ հեծութիւն, զանախտական սէր՝ ի սուրբ սրտէ գին պարգեւին տուեալ այնպէ՛ս ընկալցին։*

Ժ. 1 *Արդ, վասն այսոցիկ եւ բազմապատիկ իմաստից, քան զսո՛յնս, զոմանս ի բարձրութեանց խոնարհեցուցանէ եւ ոմանց զնեղութիւն կրել յապաղէ, որպէս եւ ի բարեպաշտուհին Աննա տեսանեմք, որ անգոսնելով կրէր նախատինս ի ներոյն իւրմէ:* 2 *Վասն որոյ ասէ. «Այնպէս առնէր ամի ամի յելանելն նորա ի տուն Տեառն» (***Ա. Թգ. Ա. 7***):* 3 *Յայտ առնէ, թէ ոչ ըստ պատահման եւ յանկարծադէպ մի անգամ տրտմեցոյց զնա, այլ թէ այսպէս սարտուցանէր Փեննա զԱննա ամ յամէ, յորժամ ելանէին ի մատուցումն զպատարագս իւրեանց առաջի Տեառն:* 4 *Եւ տրտմեցուցանէր զԱննա ներն իւր, յորում տեղւոջ մխիթարեաց զնա այրն իւր:* 5 *«Ոչ լաւ եմ ես քեզ քան զԺ. (10) որդի» (***Ա. Թգ. Ա. 8***):* 6 *Ուստի յայտ է, թէ տասն էին ուստերքն եւ դստերքն Փեննայի:*

ԺԱ. 1 *Եւ եկեր սակաւ մի, վասն հանգ|273ա|ուցանելոյ զկամս առն իւրոյ:* 2 *Եւ յարեա՛ւ յետ ուտելոյն եւ եկաց առաջի Տեառն, տեսողին զծածուկ ցաւս սրտի նորա:* 3 *Եւ ցաւագին անձամբ եկաց յաղաւթս առ Տէր, որ բժիշկն է ցաւոց անձին վշտացելոյ. ելաց լալով, որ է դիւրացուցիչ սպեղանի ոգոյ թաղծելոյ:* 4 *Եւ ասէ. «Ադոնա՛ Տէր» (***Ա. Թգ. Ա. 11***), որ է տերանց Տէր, որ յերկինս եւ յերկրի են անուանեալ տերութիւնք եւ պետութիւնք:* 5 *«Ելովէ Սաբաւովթ», այսինքն՝ Աստուած զաւրութեանց երկնայնոցն ասէ. զաւրութեանց հրեշտակացն, որք հանապազ տեսանեն զերեսս Հաւրն երկնաւորի եւ զարհամարհելոցն փոքունց եւ զհեծութիւն հառաչանաց նոցա, եւ զաղաղակ սրտի հանեն ի վեր, թէպէտ եւ տեսող է ամենայնի եւ անկարաւտ յիշման, եւ զերկոսին անուանս առնու ի կիր ի հայցուածս աղաւթիցն՝ զտիրական, որ է դատող եւ զարարչական, զբարեացն շնորհող:* 6 *Դատ խնդրէ զարհամարհողին եւ ողորմութիւն՝ իւրում կարաւտեալ անձինն:*

ԺԲ. 1 *Եթէ «Հայելով հայեսցիս ի տառապանս աղախնոյ քո» (***Ա. Թգ. Ա. 11***):* 2 *Արդ, հայի Աստուած միշտ եւ յամենայն ոք, այլ սա*[1] *զքաղցրութեամբ հայելն հայցէ եւ հայելով հայել, ո՛չ յողորմել ի ձեւ մարմնոյն միա՛յն, այլ ի տառապանս*[2] *ծածուկ սրտին, եւ տալ զհայցուածն, որում հանգչի վշտացեալ ոգին:* 3 *«Եւ յիշեսցես*[3] *զիս եւ տացես աղախնոյ քում զաւակ առն» (***Ա. Թգ. Ա. 11***):* 4 *Ոչ զոք մոռանայ Աստուած եւ ո՛չ յիշելոյ կարաւտի, քանզի շտեմարան է ամենայն բարեաց եւ պահէ զպարգեւսն ժամանակի իւրում, եւ ամենիմաստ նախախնամութեամբն յապաղէ զտուրսն, փորձելով զժուժկալութիւն համբ|273բ|երողաց, եւ ո՛չ դիւրաւ*

---

[1] *Զ այսպս ազգ] այլ սա*
[2] *Զ > տառապանս*
[3] *Զ յիշելով*

տայ զմեծամեծսն, զի մի արհամարհեսցեն գեղեցիկքն ի դիւրա՛ւ գտանելն, որպէս եւ հաւրն արդարոց եւ զուգակցի նորին Սառայի արար[1], *քաղց եւ ծարաւի՛ պահելով զամս ճ. (100), յաւրինակ մեծի խոստման աւետեացն, զոր տալոց էր բնութեանս մինչ ի Ռ. (1000) ամ, եւ ապա յայցել բազմատեսակ առաքինութեանն Սառայի, այն որ ոչ երբէք մոռանայ (տե՛ս Ծն. ՀԱ. 1-5)։* 5 *Արդ, զայս իմաստութեամբ երկայնամտութիւնս եւ պահել նախախնամութեամբ զամենայն ինչ իւրում ժամանակին, սա մոռացումն կարծէ, վասն որոյ յիշել հայցէ։* 6 *«Եթէ յիշեսցես զիս, ասէ, եւ տացես աղախնոյ քում զաւակ առն մարդոյ։*

ԺԳ. 1 *Արդ, զի՞ արու խնդրէ մանուկ, յա՛յտ է, բայց ասել զսակաւ առն մարդկան քննելի է։* 2 *Զի զի՞նչ այլ լինի ծնունդ մարդոյ քան մարդ, յայտ առնէ, զի են մարդք, որ անասնական շնչով միայն են կենդանի եւ կերպարանաւք մարմնոյ մարդ, այլ զաւակ մարդոյ են, որ զպատկերն Աստուծոյ զբարեացն սկզբնատպի կատարեալ ունիցին ի մասունս հոգւոյն եւ ի գործ զգայարանաց։* 3 *«Եւ ես տաց զնա առաջի քո» ուխտականութեամբ, փոխանակ այսոցիկ, որք պաշտեն զՔեզ որկորամոլութեամբ «մինչեւ ցաւր մահուանն իւրոյ։* 4 *Եւ գինի եւ արբեցութիւն մի՛ արբցէ, եւ երկաթ մի ելցէ ի գլուխ նորա» (Ա. Թգ. Ա. 11)։* 5 *Տալ խոստանայ զնա Աստուծոյ ոչ ամսոց կամ ամաց չափել ժամանակաւ, այլ մինչեւ ցաւր մահուանն։* 6 *Եւ ա՛յս էին յաւրինացն սահման ուխտականացն. զամենայն, որ ինչ յորթոյ ելանէ՝ ո՛չ ճաշակել եւ յընտանի եւ յազգական մեռեալ ո՛չ մտանել, եւ հ|274ա|եր գլխոյն ոչ սրբել, մինչեւ լցցին աւուրք ուխտի նորա։* 7 *Եւ ի կատարման աւուրցն մատուցանել զպատարագս իւր, ըստ աւրինացն եւ առ դուրս խորանին վկայութեան գերծցէ զգլուխն եւ դիցէ զմազն ի հուրն, ի վերայ զոհին փրկութեան (տե՛ս Թիւ Զ. 1-8, 18)։ Արդ, այսպիսի աւրինաւք տայ զնա ուխտ Աստուծոյ։*

ԺԴ. 1 *«Գինի եւ արբեցութիւն մի [արբցէ]» վասն չորից իրաց հարկաւորագունաց. դանդաղութեան, եւ մոռացման, քնոյ եւ անզգայութեան։* 2 *Քանզի գինին զմարմնոյ զաւրութիւն թուլացուցանէ, ուստի դանդաղութիւն լինի, որ է ծուլութիւն, եւ կալեալ զխելապատակն, բռնի ի քուն հարկէ՛ մտանել։* 3 *Եւ զոգոցն պնդութիւն լուծէ, եւ մոռացման եւ անզգայութեան պատճառ լինի։* 4 *Իսկ ուխտականն Աստուծոյ եւ քահանայն, որ ի սրբութիւնսն մատուցանէ պատարագ՝ վնասս այս դժնդակագոյն է այնչա՛փ, որչափ եւ յԱստուած մեղանչել։* 5 *Նաեւ ո՛չ այլ իրս, որ արբեցութիւն առնէ, եւ ոչ քացախ, զի ապականութեան ախտից է նշանակ։* 6 *Ոչ կորիզ*

[1] *Զ > հօրն... արար*

խաղողոյն, զի ապացոյց է գործոյ, որ ի բաց ընկնլի՛ է։ 7 *Ոչ խաղող, որ զբաւսանաց է նշանակ, զի ամենեքեան սոքա ո՛չ վայելեն ուխտականին Աստուծոյ։*

ԺԵ. 1 *«Եւ երկաթ մի՛ ելցէ, ասէ, ի գլուխ նորա», զի գլուխ նշանակ է մտաց, եւ միտք սեղան են Աստուծոյ, եւ որպէս հրամայեցաւ, մուրճ ոչ գծել ի վերայ սեղանոյն, նոյնպէս սուր ոչ տանել ի գլուխն, որ տաճար մտաց է ասացեալ յիմաստնոցն։* 2 *Իսկ յուխտին բուսեալ մազ գլխոյն, աւրինակ է զբուսուկս խորհրդոց իմաստից, յառաջ եկեալ ի մաքուր մտաց։* 3 *Եւ որպէս մազ գլխոյ ո՛չ զգա հեշտ|274բ|ութեանց եւ ոչ ցաւոց, նոյնպէս իմաստութիւն ծնեալ ի մտաց՝ անխառն պարտ է լինել ի մարմնոյ հեշտութեանց, եւ այնպիսի հուր սիրոյն Աստուծոյ ողջակիզեալ պատարագի ի հոտ անուշից։ Արդ, զոր աղաւթիւք հայցէր՝ այսպիսի ուխտիւ Աստուծոյ տայր*[1]*։*

ԺԶ. 1 *«Եւ ի յաճախելն յաղաւթս Հեղի*[2] *քահանայ*[3] *միտ դնէր բերանոյ նորա, եւ նա խաւսէր ի սրտի իւրում։* 2 *Եւ շրթունք իւր ո՛չ շարժէին, եւ բարբառ իւր ո՛չ լինէր լսելի։ Եւ լուսաւ նմա Տէր»* (**Ա. Թգ. Ա. 12-13**)*։* 2 *Ի խորս սրտի իւրոյ խաւսէր։* 4 *Զի ո՛չ եթէ ի բարբառ շրթանց եւ լեզուի հաճի Աստուած, որ ասէ ցԻսրայէլ. «Ի բա՛ց արա զձայն սրնգի եւ զերգոց», այլ յայնպիսի հայի յաղաւթս, որ ի խորոց սրտէ ելանեն*[4]*։* 5 *Եւ լինի այս յայն ժամ, յորժամ զմիտսն*[5] *ի ճապաղմանէ զգայարանացն յինքն ամփոփէ եւ միայն յԱստուած դարձեալ զիմանալի գեղեցկութիւնն զայն նկատէ ըստ ասողին. «Ի խորոց կարդացի առ քեզ»* (**Սղմս. ՃԻԹ. 2**)*։* 6 *Որ եւ Մովսէսի, որոյ շրթունքն ո՛չ շարժէին, ասէր. «Զի՞ գոչես առ իս»* (**Ելք ԺԴ. 15**)*։* 7 *Այլեւ ըստ առաքելական խրատուն էր ձեւ աղաւթիցն նորա, որ գրէ. «աւրհնել եւ սաղմոս ասել ի սիրտս ձեր Տեառն»* (**Հմմտ. Եփս. Ե. 19**)*, զի ո՛չ թէ բարձր բարբառով, իբրեւ զդատերս ժողովրդեանն մատուցանէր նա զաղաւթս, այլ միայն արտասուաւք եւ անմռունչ հեծութեամբ, իբրեւ զդատերս հեթանոսաց աղաչէր։* 8 *Եւ համարեցաւ զնա Հեղի արբեալ. եւ ասէ ցնա պատանեակն Հեղեայ. «Մինչեւ յե՞րբ կաս յարբեցութեան. թափեա՛ զգինի քո եւ գնա՛ յերեսաց Տեառն»* (**Ա. Թգ. Ա. 14**)*։* 9 *Վասն զի*

---

[1] *Զ > հայցէր... տայր*
[2] *Զ > եւ ի... հեղի*
[3] *Զ այսինքն քահանայիցն*
[4] *Զ > յայնպիսի... ելանեն*
[5] *Զ զմեղսն*

շառագունեցան երեսք նորա եռանդմամբ սրտին։ Համարեցաւ զնա Հեղի, թէ գինի կալեալ է զխելս նորա։ Իսկ նորա խոնարհութեամբ |275ա| տուեալ պատասխանի այնմ, որ անարգեաց զնա արբեցութեամբ եւ հանդարտ բանիւ եբարձ զգայթակղութիւն քահանային։

ԺԷ. 1 *«Ո՛չ այդպէս, Տէր, այլ կին վշտագնեալ եմ եւ գինի եւ արբեցութիւն ո՛չ եմ արբեալ»* **(Ա. Թգ. Ա. 15)**։ 2 *Վասն զի բնաւորեալ են վիշտք տրտմականք իբրեւ զարբեալս առնել, զի յառաւել տրտմութենէն ամփոփեալ երակքն բարակք եւ անաւսրունք, եւ գոլոշիք ջերմութեանն ի խելապատակքն ելեալ թմրեցուցանէ իբրեւ զարբեալս։* 3 *Եւ ի գոլոշեացն յայնցանէ ծնանին կաթիլք արտասուացն ընդ ակն։* 4 *Իսկ զստուգապէսն արբեցութիւնն ցուցանէ յասելն. «Եւ հեղում զանձն իմ առաջի Տեառն»* **(Ա. Թգ. Ա. 15)**։

ԺԸ. 1 *Եւ զի՞նչ է հեղուլն զանձն։* 2 *Յորժամ իմանալի հաւատովքն առ Աստուած ձգտի եւ զամենայն մասունս անձինն*[1] *առաջի Աստուծոյ հեղու։* 3 *Իմացական մտաւքն պաղատի, սրտին արիականաւն պնդի, ցանկականաւ ի սէր նորա վառեալ բորբոքի։* 4 *Յայնժամ եւ զգայարանքն ընդ նմա կցորդին։* 5 *Եւ այսպէս եւ անմռունչ սրտին հեծութեամբ զվիշտսն*[2] *իւր ցուցանէ գիտողին զբնութեանս կարիս։* 6 *Եւ որ մարմնով յերկրի պարփակեալ է տեղեաւ՝ իմացական տեսութեամբ յանձեռագործ տաճարն Աստուծոյ ամբառնայ եւ ընդ անտեսանելին հրեղինաց խաւսակցի։* 7 *Եւ յորժամ հոգին զայս կերպարան զգենու, ձեւ մարմնոյն իբր զարբեալ երեւի յաչս տեսողացն։* 8 *Վասն որոյ ասէ. «Մի համարիր զաղախին քո դուստր ժանդ, զի ի բազում տրտմութենէ եւ ի տխրութենէ վարանեալ կայ մինչեւ ցայժմ»* **(Ա. Թգ. Ա. 16)** *եւ ո՛չ ելից ի տեղւոջէս, մինչեւ առից զոր խնդրեցի ի նմանէ։* 9 *Իսկ քահանայն, որ տրտմեցոյց զնա ան|275բ|արգանաւքն, մխիթարեաց զնա աւրհնութեամբքն։* 10 *Եւ իբրեւ գնաց ի տուն իւր, այլ ո՛չ եւս տրտմեցաւ, զի յայտնի՛ եղեւ նմա, թէ ա՛ռ զխնդրելին։* 11 *Եւ ուստի՞ եղեւ յայտ ի վերանալ տխրութեան ամպոյն ի սրտէ նորա։* 12 *Որպէս գրէ մեծն Յոհաննէս «Զի եթէ գիտեմք, եթէ լսէ հայցուածոցն մերոց, ապա գիտեմք, եթէ զհայցուածն»*[3] **(Ա. Յվհ. Ե. 15)**։

ԺԹ. 1 *«Եւ յղացա՛ւ եւ ծնաւ որդի»* **(Ա. Թգ. Ա. 19-20)**։ 2 *Եցոյց եթէ յաղաւթից անտի եւ ի ձեռն աւրհնութեան քահանային կապեալ*[4] *արգանդն*

---

[1] *Զ > անձինն*
[2] *Զ > զվիշտսն*
[3] *Զ > հայցուածոցն... զհայցուածն*
[4] *Զ կալեալ*

ծննդական եղեւ։ «Եւ կոչեաց զանուն նորա Սամուէլ», որ ասի տուրք Աստուծոյ կամ հայցումն (Ա. Թգ. Ա. 20), զի հայցուածոց մաւրն եւ տալոյն Աստուծոյ եղեւ պարգեւ։

Ի. 1 *Եւ իբրեւ ծնա՛ւ, գնաց Եղկաննա, ըստ սովորութեան իւրում մատուցանել զսովորական պատարագն իւր։* **2** *Բայց Աննա եկաց մինչեւ հատոյց զմանուկն ի ստենէ եւ ապա ած կացոյց զնա առաջի երեսաց Տեառն, որպէս ուխտեաց զնա յաւուր խնդրուածոցն իւրոց։* **3** *Եւ եցոյց Հեղեա՛ քահանայի զմանուկն, զոր խնդրեաց յԱստուծոյ եւ առ։* **4** *Եւ ասէ. «Տամ զդա փոխ Տեառն զամենայն աւուրս*[1]*, որ չափ եւ կեցցէ եւ եղիցի դա փոխ Տեառն եւ երկիր պագին Տեառն» (Ա. թագ. Ա. 28)։* **5** *Եւ յաղաւթս եկաց Աննա եւ ասէ. «Հաստատեցա՛ւ սիրտ իմ ի Տէր եւ բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ» (Ա. Թգ. Բ. 1)։*

ԻԱ. 1 *Արդ, զաղաւթս Աննայի ոմանք ասեն գոհութիւն է, եւ այլք՝ խոստովանութիւն եւ մարգարէութիւն, բայց լիով ունի զերեսինն բան քաղցրութեան սորա։* **2** *Իսկ գոհութիւն եւ խոստովանութիւն բառիւք զանազան են ի միմեանց, բայց զմի՛ ունին երկոքին զդիտաւորութիւն։* **3** *Զի գոհութիւն է, յորժ|276ա|ամ զառատաբաշխ պարգեւսն Աստուծոյ վայելեմք, եւ այլ ոչ ինչ ունիմք փոխարէն, բայց միայն զգոհանալն, ըստ մարգարէին. «Գոհացայ զքէն, Տէր բոլ[որ] սրտ[իւ]» (Սղմս. Թ. 2)։* **4** *Իսկ խոստովանութիւնն նոյնպէս, յորժամ առնու ոք շնորհս ի պարգեւողէն, ոչ լինի երախտամոռաց, այլ գոհանա՛ խոստովանութեամբ եւ բարեհամբաւէ զբարեգործութիւնն, որով զուարճանայ տուաւղն ի յիշատակելն զտուրսն։* **5** *Նոյնպէս եւ Աստուած ուրախ լինի, յորժամ տեսանէ, թէ բանականապէս վայելեմք ի բարիսն եւ ո՛չ անասնաբար։* **6** *Վասն որոյ եւ սա գոհանայ եւ խոստովանի, այլեւ մարգարէանայ։* **7** *Խոստովանի գոհանալով առաջի երկնաւորաց եւ երկրաւորաց զարդար իրաւունսն Աստուծոյ, եւ զողորմութիւն նորա։* **8** *Զիրաւունսն, որ դատեաց զայն, որ ամբարտաւանութեամբ ոտնահա՛ր լինէր ի վերայ նորա, եւ նախատէր ամլութեամբ, եւ ողորմութիւն, զի հայեցա՛ւ ի տառապանս սրտի սորա, եւ փոխեաց յուրախութիւն զտրտմութիւնն։*

ԻԲ. 1 *Ծնեալ որդի մեծ, ասի, առ յարգանդէն ամուլ, այլեւ մարգարէութիւն է, վասն մեռանելոյ որդոց ներոյն իւրոյ, եւ սերանալ եւ բազմանալ ամլութեան նորա, եւ վասն զրպարտութեանն, որպէս թէ արար ինչ գետս մեռանելոյ որդւոց Փեննայի, եւ վասն փառաւորելոյ որդւոյն իւրոյ եւ մե-*

[1] *Զ ամուրս*

ծամեծ[1] *փրկութեանցն, որ լինելոց էր ի ձեռն նորա ժողովրդեանն։* 2 *Եւ զի յեղջիւրէ նորա աւծանելոց էին թագաւորք, եւ որ եւս մեծագոյն քան զայս, զի խորհուրդ փրկութեանն Քրիստոսի եւ աւրինակ կատարման երկուց ժողովրդոց իրագործութեան տպաւորեալ նկարեալ կայր ի գործ կենաց սոցա եւ ի բան աղաւթից սորին, որ եւ ասէ այսպէս.* |276բ| *«Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր»։* 3 *Ըստ ասորոց թարգմանութեանն է՛ այսպէս. «Ցնծացաւ սիրտ իմ ի Տէր»։* 4 *Եւ երկոքեանս յարմարապէս ունին տեսութիւնս, զի հաստատութիւնն յետ դրդուելոյն եւ տատանելոյն է, եւ ցնծութիւնն յետ տրտմութեանն եւ վշտացն, զի սա խռովեալ եւ դրդուեալ կայր սրտիւ, վասն իւր անմխիթար կենացն անգաւակութեան, եւ տրտմալի՛ եւ թաղծեալ կայր, զի զայրացուցանէր զնա Փեննա կսկծոտ բանիւ։* 5 *Վասն որոյ ճշմարի՛տ եւ արդար պարգեւտուն հաստատէ զսասանութիւն սրտի նորա եւ լնու ցնծութեամբ՝ փոխանակ տրտմութեանն անմխիթար, որ եւ ասէ. «Ցնծացաւ սրտի իմ ի Տէր»։* 6 *Ըստ որում եւ սրբուհի կոյսն զբնութեանս տրտմական կիրք տեսեալ, զի լուծանելոց էր միածինն իւր, ասաց. «Մեծացուցէ անձն իմ զՏէր, եւ ցնծասցէ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ»* (**Ղկ. Ա. 46**)*։ Եւ սա՝ «Հաստատեցաւ եւ ցնծացաւ սիրտ իմ Տէր»։*

ԻԳ. 1 *Զի ո՛չ է պարտ յա՛յլ իրս հաստատել զսիրտ կամ յուրուք վերայ ցնծալ յապականացուցս եւ դիւրալուծիցս։* 2 *Ո՛չ ի զաւրութիւն մարմնոյ, զի խո՛տ է* (**հմմտ. Սղմս. ճԱ. 5, ճԲ. 15**)*, եւ ոչ ի գեղեցկութիւն, զի ցամաքեալ չորանայ տգեղացեալ։* 3 *Ոչ ի փառս ճոխութեան, զի թաւթափի իբրեւ զծաղիկ, ո՛չ ի յինչս եւ ի փարթամութիւն, զի թէ իբրեւ զյորձանս հեղեղաց հոսի, այլ իբրեւ զնոյն ցամաքի։* 4 *Ոչ ի բարձրութիւն տոհմի, զի հող են, ոչ ի բազմութիւն զաւակաց, զի նի՛ւթ են մահու եւ պատճառ սգոյ։* 5 *Այլ ի Տէր ցնծալ եւ ի նա հաստատիլ, որ անմահական է, բարի եւ անտրտում ցնծութիւն եւ անսասան հաստատութիւն։*

ԻԴ. 1 *Ըստ որում ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր եւ բարձրացաւ եղջի[ւր]»։* 2 |277ա| *«Եղջերն» զաւրութեան անուն է, որպէս ի բազում տեղիս յա՛յտ է ի մարգարէիցն։ Նոյնպէս եւ սա ասէ. Բարձրացաւ եղջիւր իմ որդեկաւս, որ եղեւ ինձ զաւրութիւն, զի որ նախատէրն զիս ամլութեամբ եւ իւր բազմորդութեամբն հարեալ խոցոտէր զիս՝ իբր եղջերաւ, եւ ես կորագլուխ կայի վասն ամլութեան իմոյ եւ ափիբերան։* 4 *Արդ բարձրացա՛ւ գլուխ իմ եւ բացաւ բերան իմ, որպէս ասէ. «Ընդարձակեցաւ*

---

[1] *Զ մեծապես առ*

բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց», զի զայսքան ամս վասն անճետութեան իմոյ փակեալ կայր բերան իմ, իբր թէ զրկեալ յաւրհնութենէ աւրինացն եւ ո՛չինչ ունելով պտուղ ի բնութենէ, իբր զտունկ չորացեալ, այլ այժմ ընդարձակեցաւ բերան իմ, զերծեալ յամլութեան ամաթոյն, եւ զոր խնդրեցի՝ առի, եւ ո՛չ եղէ ծաղր թշնամոյն, զի ծիծաղին թշնամիքն, յորժամ ոչ առնու խնդրողն։ **5** *Այլ ուրախ արարեր զիս ի փրկութեան քում, զի որդւովս պարգեւիւ փրկեցայ ես յայպանողացն նախատելոյ։* **6** *«Զի ոչ գոյ սուրբ իբրեւ զՏէր եւ ո՛չ արդար, որպէս զԱստուած մեր, եւ չիք սուրբ բաց յԱստուծոյ մերմէ» (***Ա. Թգ. Բ. 2***)։*

Իե. **1** *Արդ, կուռքն հեթանոսաց եւ դիքն նոցա ո՛չ են սուրբ, եւ որ յերկինս եւ յերկրի սուրբք են եւ տեարք, ո՛չ են իբրեւ զՏէր, որոյ անհաս է բնութիւնն, զի ամենայն նորա են արարածք։* **2** *Եւ «սուրբ» անուանէ զՏէրն, վասն զի ոչ հպի ի նա անիրաւութիւնն, որպէս մեծն մարգարէից Մովսէս ասէ. «Աստուած հաւատարիմ է եւ ո՛չ գոյ ի նմա անիրաւութիւն» (***Բ. Օր. ԼԲ. 4***), որով մեք աղտեղեմք զսրբութիւն հոգւոյ։* **3** *Եւ արդա՛ր է, զի ոչ կաշառի ի դատաստանս իւր, եւ ոչ աշառանաւք առնէ զբարեգործութիւնն, եւ կամ զ|277բ|ընդրութիւն ումեք։* **4** *Այսպէս եւ սա ասէ. «Ոչ թէ վասն արժանաւորութեան քո բազմացան քեզ զաւակք, եւ ո՛չ վասն անարգութեան փակեաց զծնունդս արգանդի իմոյ, այլ նիւթ ետ երկոցունց ի փորձանս բարուց. քեզ մեծանալ զաւակաւքդ, ուստի ի բարձրանալն հպարտութեամբ խոնարհեալ անգար, եւ ինձ աղքատութիւն անզաւակութեամբ, որով խոնարհեալ նուաստութեամբ[1]՝ բարձրացայ։*

Իզ. *Արդ, «Մի՛ պարծիք եւ մի՛ խաւսիք զամբարտաւանս, եւ մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան» (***Ա. Թգ. Բ. 3***)։* **2** *Վասն բարձեալ խափանեցաւ նախատինք ձեր ինէն ի սերանալս իմ եւ ի բազմանալ։* **3** *Մի խաւսիք զմեծամեծս եւ զլի՛ ամբարտաւանութեամբ զրպարտութիւնս զինէն, իբր թէ կախարդութեամբ եղեն մահ որդւոց ձերոց եւ արձակելոյ կապանացն իմոց եւ ծնանել, զի Աստուած գիտութեանց տէր է եւ ծածկելոց, զի ո՛չ եմ բամբասելի առաջի նորա, որով զրպարտէքդ զիս, եւ ո՛չ ունիք գիտութիւն խորհրդոց, այլ խորամանկութիւն սրտի, որ ոչ մտանեն առաջի նորա[2], որ գիտողն է ճշմարտութեան։* **4** *«Աստուած գիտութեանց տէր, Աստուած պատրաստէ իւրով իմաստութեամբն զգիտութիւն յարարածս իւր» (***Ա. Թգ. Բ. 3***)։*

Իէ. **1** *Անհա՛ս է ի մարդկանէ խորք իմաստութեան նախախնամութեան*

---

[1] *Զ աղքատութեամբ*

[2] *Զ > որով զրպարտեքդ... առաջի նորա*

գործոցն Աստուծոյ, բայց միայն թէ ինքն, որ գիտութեանցն է տէր, պատրաստ է իւրով իմաստութեամբն, եւ յայտնէ զգիտութիւն յարարածս իւր։ 2 *Որպէս ասաց Յովսէփ առաջի փարաւոնի վասն տեսլեան երազոցն, թէ որ ինչ Աստուած առնելոց էր՝ եցոյց փարաւոնի,* |278ա| *եւ որպէս Դանիէլ ի յայտնել նմա Աստուծոյ զտեսիլն Նաբուգոդոնոսորայ, աւրհնեաց զԱստուած եւ ասէ. «Իմաստութիւն եւ հանճար եւ զաւրութիւն նորա՛ է, եւ նա փոփոխէ զժամանակս եւ զժամս, կացուցանէ զթագաւորս եւ փոխէ, տայ զիմաստութիւն իմաստնոց եւ զխորհուրդս*[1]*՝ խորհրդականաց, ինքն յայտնէ զխորինս եւ զգաղտնիս, որ կա՛ ի խաւարի՝ գիտէ, եւ լոյս ընդ նմա է»* **(Դնլ. Բ. 21-22)**։ 3 *Այսպէս եւ Նաբուգոդոնոսոր ասաց. «Զխորհուրդդ զայդ ո՛չ է իմաստնոց եւ մոգուց եւ գիտնո՛ց եւ ըղձից պատմել առաջի արքայի, այլ գոյ Աստուած յերկինս, որ յայտնէ զխորհուրդս»* **(Դնլ. Բ. 27-28)**։

ԻԸ. 1 *Արդ, զնոյն զաւրութիւն բանի մարգարէուհին Աննա ցուցանէ, ո՛չ դիւթութեան եւ ոչ կախարդանաց գո՛րծ է մահանալ որդոց քոց եւ կամ ծննդական լինել ամլութեանս իմոյ։* 2 *Այլ Աստուած գիտութեանց տէր, Աստուած պատրաստեաց իւրով իմաստութեամբ զգիտութիւն յար՛՛, զոր բնագիրքն ասէ. «Աստուած պատրաստեաց զարուեստս իւր»։*

ԻԹ. 1 *Եւ զի՞նչ է արուեստն, քան թէ յառաջախնամ տեսութեամբ եւ գիտութեամբ իմաստութեանն առնել զամենայն ինչ ի ժամանակի իւրում եւ ըստ պատշաճի, որպէս եւ ասէ իմաստունն. «Ամենայնի ժամանա՛կ է, եւ ժամանակ ամենայն իրի»* **(Ժղվ. Գ. 1)**։ 2 *Այսպէս մեռանելոյ եւ ծնանելոյ է ժամանակ, որպէս եղեւ մեռանել որդւոցն Փեննայի եւ ծնանել ամլոյն Աննայի, որ եւ յոլովս ունի տեսութիւնս իմաստից։*

Լ. 1 *Առաջին, զի ըստ ժամանակի եղեալքն քաղցր եւ ախորժելի թուին, որպէս գեղեցիկ է ծագումն արեւու յետ տխրատեսակ ամպոյ, եւ ախորժելի առողջութիւնն՝ յետ հիւանդարար ցաւոցն, եւ բարի՛ է լոյս՝ յետ մթութեան խաւարի։* 2 |278բ| *Այսպէս խնդութիւն մե՛ծ է եւ ցնծութիւն բարեաց ծնունդ յաւուրս եւ ի ժամանակս մարդկան չարացելոց երեւել։ Որպէս եւ զՍամուէլ պահեաց Աստուած իւրում ժամանակին եւ ետ զնա յաւուրս որդւոցն Հեղեա, որ երթալով երթային, եւ չա՛ր էր ճանապարհն նոցա, յորում իբր զդե՛ղ բժշկարար տուաւ սա դիւրացուցիչ հիւանդացելոյ ժամանակին։*

ԼԱ. 2 *Եւ երկրո՛րդ, զի մի՛ Աննա, քան զսանուհինսն իւր՝ զՍառա՛ եւ զՌեբեկա եւ զՀռաքէ՛լ, նուազագոյն երեւեսցի, եւ մի՛ ի կարգէ լաւացն արտաքս ելցէ, այլ եւ սորա ծնունդն սքանչելաւք լիցի եւ տուրք կարաւտութեան ժամանակի։*

---

[1] *Զ > զխորհուրդս*

ԼԲ. 1 *Եւ երրո՛րդ, զի մի՛ մեծի ճշմարտութեանն աւրինակեալ ծնունդքն բնութեան աւրինաց եւ մարմնոյ հեշտութեան եւ ախտի ծնունդք լինիցին, այլ մաքուր մտաց խնդիր եւ սուրբ սրտի հայցուած, եւ աղաւթի՛ց եւ պաղատանաց պտուղ, եւ աստուածային շնորհացն պարգեւ եւ տուրք։*

ԼԳ. 1 *Զորրո՛րդ, զի ուսցին մարդիկք ծնաւղքն ծննդոց եւ մի՛ անասնաբար հեշտութեան աղագաւ զաստուածազուգ միաւորութիւնն, այլ սակս գործիք լինելոյ աստուածային արուեստին, եւ աղաւթիւք գործակից լիցին հրաշալի ստեղծմանն։*

ԼԴ. 1 *Հինգեր<ր>որդ, զի զպատուականսն[1] եւ զհասարակաց անհամեմատ բարիսն ո՛չ խառն եւ ընդ հաւասարն տայ Աստուած, զի մի՛ գեղեցկութեանն շնորհ ծածկիցի ընդ նուազունսն, որպէս նուիրական գեղեցիկքն՝ լուսանշոյլ քարինք եւ ազնուական ոսկին ո՛չ դիւրագիւտ[2] է ամենայն ումեք, այլ սակաւուց ոմանց եւ նուազ, այսպէս եւ զգեղեցիկ պարգեւ|279ա|սն, զհոգեկանսն եւ զմարմնաւորսն՝ ո՛չ դիւրաւ եւ երկար ժամանակաւք, որպէս եւ զՍամուէլ յետ բազում տրտմութեանցն եւ հեծեծանաց մաւրն եւ նուազելոյ ծննդոց բարի ի ժամանակին։ 2 Վասն որոյ ասէ. «Աստուած պատրաստէ զարուեստս իւր»։ 3 Եւ զպատրաստութիւն արուեստին Աստուծոյ ա՛յս է, ըստ կարգի. «Հզորաց հաստ աղեղունք թուլացան եւ տկարք վառեցա՛ն զաւրութեամբ» (Ա. Թգ. Բ. 4)։ «Աղեղունք» կոչէ զխորամանկութիւն բարուցն եւ նետս արձակել զնենգաւոր խաւսս լեզուին, որք կսկծող բանիւ սլաքիցն խոցոտէին նախատելովն։ 5 Արդ, յայնմ զաւրութենէ թուլացան եւ լուեալ կարկեցան։ 6 «Եւ տկարք վառեցան զաւրութեամբ»։ Ո՛չ զրպարտելոյ զաւրութեամբ, որպէս նա, այլ բարեացն Աստուծոյ խոստովանութեամբ եւ գոհութեա՛մբ, իբրեւ զինու վառեալ զաւրացաւ Աննա։ 8 «Յա՛գք եւ լիք հացիւ նուազեցին եւ քաղցեալք լցին զերկիր» (Ա. Թգ. Բ. 5)։ 9 Այսինքն՝ զի որ յագեալն էր զաւակացն բազմութեամբ՝ նուազեցաւ, եւ որ քաղցն էր եւ կարաւտ՝ լցին զերկիր։ 10 Այլ[3] զի առաքինի եւ իմաստուն անձինք՝ երկրի՛ եւ աշխարհի՛ են լրումն պիտոյից եւ ո՛չ միայն տան միոյ։ 11 Եւ որպէս եղեւ ասացեալս ա՛յն էր, «զի ամուլն ծնաւ եւթ եւ յագեցաւ, եւ բազմածինն նուազեցաւ ի ծնունդս իւր» (Ա. Թգ. Բ. 5) զի սպառեցան մահուամբ։*

ԼԵ. 1 *Այսոքիկ տեսութիւն ըստ տեղոյն խոստովանութեան եւ ի գոհացողական բանս աղաւթիցն սրբոհոյն Աննայի։ 2 Բայց զի մարգարէութիւն է բանք աղաւթից սորա եւ նախատեսութիւնք մեծի խորհրդոյ զառ ի*

---

[1] *Զ զհրաշալին*
[2] *Զ դիւրագոյն*
[3] *Զ > այլ*

միտսն զաւրու|279բ|թիւն քննելի է, վասն զի Եղկաննա ի քահանայիցն էր եւ հայր քահանային մեծի, յաւրինակ առեալ լինի ամենեցունց Տեառն, եւ երկու կանայք նորա յերկու ժողովրդոց։ 3 *Իսկ բազմորդին խորհուրդ հրեական ժողովարանին է եւ ամուլն հեթանոսաց եկեղեցւոյ, որպէս անդ Փեննա, թէպէտ բազմորդի էր, այլ առն սէրն յԱննա միտագոյն*[1] *էր։* 4 *Նոյնպէս եւ ի ճշմարտութիւնս տեսանեմք. թէպէտ երբէմն ժամանակաւ աւրինաւոր պատուիրանն փթթեալ եւ ծաղկեալ էր բազմամարդութեամբ ժողովրդեանն, այլ երկնաւոր Առն եւ Արարչին սէրն, որ յառաջգիտութեամբն ճանաչէ զլինելոցն, ի հեթանոսս միտագոյն էր, եւ որպէս առ նոսա, յորժամ Աննայի տուաւ որդի, ներոյ նորա որդիքն տասնեքին մեռան։* 5 *Նոյնպէս եւ եկեղեցի, յորժամ սկիզբն առ ծննդեանն ի ձեռն աւազանին, յայնժամ հրէականքն ամենայն աւրինակաւ մահու բարձան ի միջոյ. որպէս անդ Փեննա ընդ սնունդսն Աննայի նախանձէր եւ չարանայր առաւել, քան ընդ մահ որդւոց իւրոց, այսպէս եւ առաջին ժողովարանն, քան ընդ իւրեանց անկումն ընդ հեթանոսայ փրկութիւն առաւել մախայր։* 6 *Եւ զոր աւրինակ Աննա առաջի Հեղեայ կայր յաղաւթս լուռ բերանով եւ լսելի՛ լինէր, այսպէս եւ եկեղեցի ի խորհուրդն մարգարէիցն, որք ընդ աւրինաւքն էին դրոշմեալ էր, բայց ի լռութիւն կայր, որպէս բարեկամք փեսային առ նմա բարբառէին։* 7 *«այտք քո որպէս կեղեւ նռան, ասէ, բացի լռութենէդ քումմէ»* (**Երգ. Դ. 3**)*։* 8 *Կեղեւ նռան կոչեաց զայտսն, վասն պատկառանացն, զի յոյժ դառնագոյն եւ խ|280ա|ոշո՛ր*[2] *է կեղեւ նռանն, որով միտքն սնանի. եւ մեզ պատկառանքն եւ ամաչելն ի վերայ վատթարիցն դառնագոյն է եւ խոշոր, այլ լսելի լինէր, քանզի զցանկութիւն տնանկաց լուաւ Տէր։* 9 *Իսկ «նստել կնոջն եւ սնուցանել զորդին»* (**Ա. Թգ. Ա. 23**)*, եւ այս դարձեալ զհաստատութիւն եկեղեցւոյ նշանակէ զանշարժութիւնն եւ զանառիկ ամրութիւնն, զոր եւ Դաւիթ «Լեառն մածեալ»* (**Սղմս. ԿԷ. 16**) *կոչէ։* 10 *Եւ քանզի եկեղեցի երկու ստինս ունի, բղխելով կաթն եւ գինի. անկատար ոգոցն՝ կաթն, կատարելոցն՝ գինի, որով անպակաս սնանին ոգիքն հաւատացելոցն, մինչեւ հատանին ի ստենէ, այսինքն՝ մինչեւ ի կատարումն այժմ ու յաւիտենիս։*

ԼԶ. 1 *Իսկ աղաւթքն Աննայի ի գոհութիւն է ի դէմս եկեղեցոյ այնմ, որ նմա բազմորդութիւն շնորհեաց, որ ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր եւ բ[արձրացաւ եղջիւր իմ յԱստուած] վասն զի սասանեալ եւ դղորդեալ եւ խռովեալ էին սիրտք մարդկան, որպէս ասէ Եսայիաս վասն կռապաշ-*

---

[1] *Զ մօտագոյն*
[2] *Զ > եւ խոշոր*

*տիցն, թէ՝ «Մոխիր է սիրտ նոցա» (**Եսայ. ԽԴ. 20**), զի զայն, որ ի կաւոյ եւ ի մոխրէ նիւթ բնակեցուցին ի սիրտս իւրեանց ուստի յա՛յտ է, թէ խոտորեալ էին սիրտ մարդկան յաստուածապաշտութեան հաւատոյ: 2 Եւ յա՛յտ է, զի տատանէին ի պաշտաւն բազմաստուածութեանն եւ զմին զճշմարիտն ո՛չ ճանաչէին: 3 Սասանեալ էին ծննդեամբ եւ կենաւք եւ մահուամբ, զի թէպէտ եւ ուսան հրեայքն ի Մովսիսէ, թէ նման եւ պատկեր Աստուծոյ արար Աստուած զմարդն, եւ հեթանոսքն բնական աւրինաւքն ծանեան զբնութեանս ուղղութիւն, որպէս եւ ասաց ոմն, թէ՝ նորա եւ ազգ իսկ եմք, բայց զի տեսանէին ախտաւոր ծննդեամբ լինել զաճումն մարդկան, իբր զանասնոց անբանից |280բ|, եւ աստուածային նմանութեանն ո՛չ ունելով ծնունդ եւ ոչ գիտելով: 4 Իսկ կենաւք վատթա՛ր եւս քան զանասուն, զի նոքա ի բնական սահմանէն, յոր ստեղծան, ո՛չ փոխեցան, եւ մարդիկ բազում իրաւք խոտորեցան. սասանեալ եւ խռովեալ էին մահուամբ, զի իբրեւ զխաշն ի դժոխս մատնէին՝ յարութեան յոյս ո՛չ ունելով, զի յղացեալ էր մահ զմարդկութիւնս եւ երկնէր, եւ ո՛չ ոք էր, որ զերկունս նորա լուծանէր: 5 Եւ յայսպիսի անյուսութեան անկեալ ի վիհ, կարծէին նման անասնոց գոլ զինքեանս: 6 Վասն որոյ մարգարէն Դաւիթ հայցէ. «Կարգեա՛ Տէր եւ աւրէնս դիր ի վերայ նոցա, զի ծանիցեն հեթանոսք, թէ մ[արդիկ են]» (**Սղմս. Թ. 21**):*

ԼԷ. 1 *Կրկին կարգս աւրինաց*[1] *հայցէ մարգարէն ազգաց հեթանոսաց՝ զբնականն եւ զքրիստոսական: 2 Զբնականն, որ ի ստեղծմանէ ունէին ի կարգ եւ ի սահման իւր կացուցանել զշարժումն մասանց հոգւոյ եւ զգործ զգայարանաց մարմնոյ՝ ի խոտորնակ եւ ի թիւր շարժմանէն: 3 Եւ զքրիստոսականդ քո աւրէնք կնիք եւ պահապան դիր բնականին, զի ազգ հեթանոսաց ծանիցեն, թէ ա՛յս է բնականութիւն մարդոյն եւ այսու աւրինակաւս է եւ ասի պատկեր Արարչին իւրոյ, եւ ո՛չ որք ի պատրանաց չարին մոլորէին միշտ:*

ԼԸ. 1 *Արդ, զայս սասանումս հաստատեաց Քրիստոս կուսական եւ անախտ ծննդեամբն, զաստուածայինն եւ զհոգեւորականն ետ մեզ ծնունդ, եւ զկեանս վարուց մարմնոյ իւրոյ ետ մեզ աւրէնք եւ աւրինակ մարդկային կենաց, ասելով. «Ամենայն ուռ, որ յիս հաստատեալ է հաւատո՛վ, նա՛ բերէ զպտուղ բարեաց գործոց, եւ Հայր իմ մշակէ՛, զի առաւել եւս պտղաբերեսցի» (**Յվհ. ԺԵ. 2**) եւ մահուամբ զմերն մ|281ա|եռուցեալ մահ՝ լուծեալ զերկունս մահու ընբռնեալ ի դժոխոց, եւ անապական ի գերեզմանաց յարուցեալ եւ ելեալ յերկինս՝ նստաւ ընդ աջմէ Հաւր, յոյս յարու-*

[1] *Զ կենաց*

*թեան տուեալ մարդկան, որք մահուն երկեղիւն կային վտարանդիք ի ծառայութիւն, զի ո՛չ գիտէին՝ զի՞նչ յետ մահու լինիցին, զոր հաստատեաց Քրիստոս յայսմանէ, հասեալ ի ներքին կողմ վարագուրին կարապետն մեր Յիսուս, որ եւ խնդրեաց ի Հաւրէ, թէ՝ «ուր է՛ն եմ, հա՛յր, կամիմ զի եւ սոքա ընդ իս լինեցին» (**Յվհ. ԺԷ. 24**)։ 2 Վասն որոյ ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր եւ բարձր[ացաւ եղջիւրն իմ յԱստուածն]»։ 3 «Եղջիւրն» զաւրութի՛ւն եւ զէ՛ն եւ փառք եզին է։ 4 Այսպէս եւ Քրիստոս մարդկային բնութեանս եղեւ, որպէս եւ մարգարէքն զայս անուն կանխա՛ւ վերձայնեցին, ըստ որում Զաքարիաս ասէ. «Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւիթ ծառայի իւրոյ» (**հմմտ. Զfr. ԺԲ. 10**)։ 5 Եւ Աստուած Հայր Դաւթաւ ասէ. «Անդ ծագեցից եղջիւր զԴաւիթ» (**Սղմս. ՃԼԱ. 17**), զի որպէս տեսանողն Զաքարիաս ասէ. «Այս եղջիւրք են, որ ցրուեցին զՅուդա, եւ զյերուսաղէմ» (**Զfr. Ա. 19, 21**), զի բանսարկուն սատանայ զաւրացեալ էր ի վերայ բնութեանս, իբրեւ եղջերբ հարեալ ցրուեաց զանազան ախտիւք, իսկ Աստուած Հայր զՄիածին իւր, որ որդի Դաւթի եւ Դաւիթ կոչեցաւ, ետ մեզ եղջիւր փրկութեան, այսինքն՝ փրկիչ զաւրութիւն, որով հարեալ խոցոտեցաք զթշնամին, որպէս եւ պարծի Պաւղոս. «Զաւրաւոր եմ ես յամենայնի այնո՛ւ, որ զաւրացոյցն զիս՝ ի Տեառնէ առեալ զաւրութիւն, որ ասաց. «Քաջալերեցարուքն, զի ես յաղթեցի աշխարհի» (**Յվհ. ԺԶ. 33**)։ 6 Վասն որոյ ասէ. «Բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած»։ 7 Եւ զի տեղի եղջիւրին գլուխն է, եւ գլուխ մարմնոյ |281բ| եկեղեցւոյ եւ անդամոց իւրոց Քրիստոս է, որպէս գրէ Պաւղոս. «Զնա եդ գլուխ եկեղեցւոյ, որ է մարմին նորա լրումն, որ զամենայն յամենայնի լնու» (**հմմտ. Կղս. Ա. 18**)։*

ԼԹ. 1 *«Եւ բարձրացաւ եղջիւր իմ»։* 2 *Զի՞նչ այլ բարձր, զի գլուխն մեր Քրիստոս, ուր եւ եղջիւր զաւրութեանն մերոյ է, ընդ աջմէ Հաւր նստեալ ի հրեշտակաց Աստուած երկրպագի, որ զի՞նչ լիցի այլ փառք բնութեանս։* 3 *Վասն որոյ ասէ. «Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց»։* 4 *Արդ, թշնամիք են հեթանոսաց եկեղեցւոյ ուրացող ժողովուրդն հրէից, որ ոչ ունին զգլուխն Քրիստոս, եւ որ զնոսա շարժէր սկզբնաչարն սատանայ, զի հրեայքն նախատէին զհեթանոսս, իբրեւ զաւտարս յաստուածպաշտութենէ եւ անծնունդք բարոյ, եւ զինքեանս լինել աւրինաւքն ժառանգք Աստուծոյ։* 5 *Եւ սատանա՛յ զրպարտէր զբնութիւնս, իբր թողեալս յԱստուծոյ եւ բնութեամբ գոլ մեղանչականս եւ կամակոր մտաւք յանցաւորս։*

Խ. 1 *Արդ, յայսցանէ՛ էր, զի սուտ յանդիմանեալ լինէր բանսարկուն, զի ոմանք յարդարոցն զբնութեանս ուղղութիւն ամբողջ պահեցին, բնական*

աւրինաւքն արդարացեալ։ 2 *Եւ է՛ր, զի յաղթահարեալք լինէին եւ անպատասխանի, որք ի նորա պատրանացն խաբեալք՝ մեղանչէին, այլ ո՛չ առանց կամաց. եւ զոր ընդ բնական կիրս մարդկան խառնէր խորամանգութեամբ զանբնակա՛նսն, եւ զաւտա՛րն, մարդիկ ո՛չ կարէին իմանալ եւ բաժանել զսերմանս որոմնացան թշնամոյն։* 3 *Իսկ Բանն Աստուած երեւեալ մարմնո՛վ եւ արդարացեալ հոգւով, որպէս գրէ առաքեալ, եւ նոյն բնութեամբ մերով յամենայն կիրս մարմնոյ եւ հոգւոյ արդարապէս վարելով, կատարեաց |282ա| զուղղութիւն մարմնոյ եւ զառաքինութիւն հոգւոյ, եւ ի լրումն ած զաւրինացն հրաման. յայտ արար, եթէ էին*[1] *պատրանք թշնամոյն՝ ո՛չ թիւրէր ուղղութիւն մարմնոյ եւ ոչ խոտորէին մասունք հոգւոյ յառաքինութենէ, եւ ո՛չ էին անգեալ յանէծս աւրինացն։* 4 *Եւ իւր սիրելովն զարդարութիւն, եւ ատելո՛վ զանաւրէնութիւն, եցոյց թէ ո՛չ է մեղանչական ի ստեղծմանէ բնութեանս։* 5 *Վասն որոյ ընդարձակեցաւ բերան մեր*[2] *ի վերայ թշնամեացն։* 6 *Որում եւ մարգարէն ոտնահար եղեալ ասէ. «Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո, ո՞ւր է դժոխք խայթոցն քո» (***Ովս. ԺԳ. 14, Ա. Կրնթ. ԺԵ. 55***) զի մեղաւքն խայթեալ մահացուցեր զբնութիւնս, այլ այժմ անմեղութեամբ մարմնոյն Քրիստոսի անմահացաք։* 7 *Վասն որոյ ասէ. «Ուրախ եղէց ի փրկութեան քում» (***Սղմս. Լ. 8***), զի անապական փառաց եւ անմահական կենաց հաղորդ եղէ վերստին մարմնանալովն Աստուածն Բանի։* 8 *«Զի ո՛չ գոյ սուրբ իբրեւ զՏէր, եւ ոչ արդար, որպէս զԱստուած մեր, եւ չի՛ք սուրբ, բաց յԱստուծոյ մերոյ» (***Ա. Թգ. Բ. 2***)։* 9 *Եւ զի՞նչ իմանամք զաւրութիւն բանիս, սուրբ եւ արդար ասել զՏէր, զոր սերովբէիցն համաձայն է։* 10 *Այսինքն, ի ստեղծումն բնութեանս եւ ի թոյլ տալն մեղանչելոյ սո՛ւրբ է, իսկ արդար է վասն իրաւամբ դատաստանի ընդ մարդիկ եւ ընդ սատանայ, եւ վասն ընտրելոյ զհեթանոս ի ժառանգութիւն, փոխանակ հրէիցն։*

ԽԱ. 1 *Արդ, ի Քրիստոսէ եւ որ Քրիստոսիւն խաւսէր, ուսցուք զտեսութիւն մտաց ասելոյս։* 2 *«Ոչ գոյ սուրբ իբրեւ զՏէր»։* 3 *Զի Տէրն ի վերայ աշակերտացն աղաւթս առնելով ասէր ի վերայ նոցա. «Ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմ|282բ|արտութեամբ» (***Յվհ. ԺԷ. 19***)։ Եւ սուրբ առնել զանձն Քրիստոսի ի վերայ աշակերտացն ա՛յն էր, զի վարժեաց զնոսա ամենայն իմաստութեամբ եւ աղաւթիւք եւս հաստատեաց։* 5 *Յետ որոյ թէ մեղանչեն՝ անձին նոցա է մեղադրութիւն։ Նոյնպէս Պաւղոս առ երիցունսն եփեսացւոց. «Սուրբ եմ ես յարենէ ամենեցուն, զի*

---

[1] *Զ ոչ էին*
[2] *Զ իմ*

ո՛չ խորշեցայ ի պատմելոյ զաւգտակարն»։ **7** *Ըստ այսմ մտաց Սուրբ կոչէ զՏէր, զի ստեղծ զբնութիւնս բարի եւ ուղեղ եւ կարող ի պահել զպատուիրանն։* **8** *Եւ յորժամ բանսարկուին հետեւեցին խաբէութեան կամաց, թոյլ ետ գնալ ըստ կամս անձանց իւրեանց, որպէս վարդապետ, յորժամ տեսանէ զաշակերտն, թէ համարի՛ զինքն գիտուն եւ ո՛չ հնազանդի ընդ պատուէր վարդապետին, թոյլ տա սղալել, զի ուսցի զհնազանդութիւնն։* **9** *Այսպէս Տէրն՝ ստեղծիչ բնութեանս, իբր կամաւ հեստելոց ի նմանէ, թո՛յլ ետ տիրել բռնութեան չարին, զի չարչարեսցին մարդիկ, որով հնազանդեցանն, սուրբ գոլով Տէրն ի պատճառէ յանցանաց մարդոյն, զի զգուշացոյց պատուիրանաւն։* **10** *Իսկ զի ոչ ոք է արդար, որպէս զԱստուած մեր, եւ ոչ համեմատ գթութեան նորա եւ սիրոյ, եւ ոչ խնամոց զաւրութեանն, յորժամ խնդրեցին զԱստուած ընդառաջել ողորմութեամբ եւ արդարութեամբ եւ իրաւամբք դատաստանի, փրկեաց ի թշնամոյն։* **11** *Իսկ զի հրեայք խոտեցան եւ հեթանոսք ընտրեցան, սուրբ եւ արդար է Տէր եւ ո՛չ գոյ ակնառութիւն առաջի նորա, զի հարքն նոցա արժանի՛ք էին, ետես յառաջագոյն, որոց եւ զմեծ աւետիսն խոստացաւ մարդ լինել ի զաւակէ նոցա, եւ վասն այսմ մեծի խոստմանն |283ա| ընտրեցան եւ զաւակքն, եւ ի յոյս լաւացն եւ պիտանեացն։* **12** *Պատուեցան եւ յոռիքն, որպէս հող եւ քարինք, վասն գոլոյ ի նոսա ոսկի եւ արծաթ եւ ակունս պատուականս։ Այսպէս եւ ի պատճառս միոյն Մարիամայ խնամեցաւ ազգն այն, ուստի եւ այլ ազնիւքն՝ առաքեալքն եւ մարգարէք եւ բազմութիւնք արդարոցն, որոց խոստացաւ տալ նոցա երկիր զտնաւրէնութեանն իւրոյ զտէղի, եւ ըստ Եսայեա հինաւուրցն Աստուած մանուկ ծնեալ ի նոցանէ, եւ զի ո՛չ ընգալան, տուաւ մեզ հեթանոսաց։* **14** *Ըստ որում Սամուէլ տուրք Աստուծոյ տուաւ Աննայի, ուստի բորբոքէր նախանձն Փեննայի, յաւրինակ նախանձաբեկ հրէական ազգին, զի կամէին թէ հրձիգ լեալ էին ընդ մուտն հեթանոսաց։*

ԽԲ. **1** *Եւ խոտեցան ծնունդքն Փեննայի եւ բարձան յաւրինակ հրէութեանն։* **2** *Վասն որոյ ասէ. «Մի՛ պարծիք եւ մի խաւսիք զամբարտաւանս եւ մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան»* (**Եսյ. Բ. 3**)*։* **3** *Ամբարտաւան են հրեայքն, որք ասէին. «Զաւակ Աբրահամու եմք, եւ ո՛չ ումեք ծառայեցաք»* (**հմմտ. Մտթ. Գ. 9, Յվհ. Ը. 39**)*. եւ համարէին զանձինս աւրինաւքն արդարանալ, զորոց ասէ Պաւղոս. «Օրինաւքն ո՛չ ոք կարէ արդարանալ»։* **4** *Արդ, այլ մի՛ եւս պարծեսցին, զի ծառայք եղեն մեղաց եւ կան յանէծս աւրինացն։ Իսկ մեք շնորհաւքն Քրիստոսի արդարացաք։*

ԽԳ. **1** *Ամբարտաւան է սատանայ, զի ինքնահաճու կամաւք ընդդէմ*

դարձաւ Արարչին, եւ զինքն ուղեղ համարելով ի նոյն համառեալ պնդի, եւ հպարտ է եւ մեծաբան, զի զբնութիւնս մեղանչական ասելով |283բ|, *յԱստուած էր հայհոյութիւն նորա եւ զմարդիկ յաւժարութեամբ յանցաւոր, անհնազանդ եւ ապստամբ ցուցանէր յԱրարչէն, որպէս եւ զինքն, որոց եւ սաստէ. «Մի՛ պարծիք եւ մի՛ խաւսիք զանբարտաւանս», զի գիտութեանց Տէր Աստուած պատրաստեաց իւրով իմաստութեամբ զգիտութիւն յարարածս իւր։* 2 *Յայտ առնէ, թէ այս մեծ խորհուրդ փրկութեանս մերոյ անգիտելի երկնաւորաց եւ երկրաւորաց ծածկեալ կայր առ Աստուծոյ, որ գիտութեանցն է Տէր։* 3 *Ըստ առաքելոյ, «Խորհուրդն որ ծածկեալ կայր յաւիտեանցն եւ յազգաց, այժմ յայտնեցաւ»։* 4 *Եւ Աստուած պատրաստեաց իւրով իմաստութեամբ զգիտութիւն յարարածս իւր։* 5 *Եւ նախատեսութեամբ տպաւորեաց զաւրինակսն առ նահապետսն, որք բնական աւրինաւքն արդարացն եւ ընդդիմակացք եղեն չարին եւ քարոզք աշխարհի, որք ոչ զաւրեցին աւգնել բնութեանս, յետ որոյ եւ կանխաձայնութեամբ թելադրեաց ի շրթունս մարգարէիցն, եւ խրատեաց աւրինաւքն՝ թերե՞ւս դարձուսցէ ի չարէն։* 6 *Իսկ մարդիկ անձնիշխան կամաւք անարժան գտան յաւիտենական եւ անանցանելի՛ խոստմանն եւ յանկատար մնալն երեք մեծամեծ վնասք լինէին։* 7 *Յառաջատես իմաստութեանն Աստուծոյ անգիտելի թուելով՝ ասել կամ առնել զայն, որ ո՛չ էր լինելոց։* 8 *Եւ սրբոցն իւրոց տրտմութիւն՝ խոստմանն Աստուծոյ առ նոսա ոչ կատարելով։* 9 *Եւ նահապետացն*[1] *եւ մարգարէիցն նախաճառութեանց ստութիւն, վասն ոչ ի գլուխ ելանելոյ։* 10 *Վասն որոյ մարդասէրն Աստուած եւ հաւատարիմն ուխտին*[2] |283գ| *իւրում եկն եւ եղեւ որդի սրբոցն իւրոց եւ սիրողաց, եւ զնկատեալն խորհուրդ եւ զխոստումն բարեաց եւ զաւրհնութիւն եւ զմարգարէութիւնս մարգարէիցն բովանդակ յանձն իւր ելից եւ կատարեաց եւ զսուրբսն իւր ուրախացոյց, որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Ընդ քեզ է սկիզբն աւուրց զաւրութեան»* (**Սղմս. ՃԹ. 3**)։ 11 *Այսինքն՝ ընդ անսկիզբն Բանդ ժամանակաւոր մարմինդ խառնեցաւ եւ զաւրացաւ ի վայելչութիւն սրբոց քոց, որք ի քեզ հաւատացեալ սրբեցան, պայծառացան եւ արդարացան, զոր ասէ «Աստուած պատրաստեաց զարուեստս իւր» անճառ իմաստութեամբ։* 12 *Որ եւ այս աստուածային արուեստին է, որ ասէ. «Հզաւրաց հաստ աղեղունք թուլացան եւ տկարք զ[գեցան զաւրութիւն]»* (**Ա. Թգ. Բ. 4**)։

ԽԴ. 1 *Աղեղունք են խորհուրդ խորամանգութեան եւ պատրանացն սատանայի, եւ նետք գործքն չարութեամբ, զորս զաւրացեալ ձգէր իբր հաստատուն աղեղամբ եւ հարկանէր զտկար բնութիւնս, եւ կարեվէր խոցոտէր մեղացն հարուածաւք, զորս եկեալ եգիտ Տէրն կիսամեռ՝ վիրաւո-*

---

[1] *Զ հայրապետացն*

[2] *ՄՄ 2173 ձեռագրում թերթահամարը կրկնուած՝ ունի 283աբ եւ 283գդ։*

րեալս յաւազակացն, եւ ձիթով մկրտութեանն աւծման, եւ գինով անապական արեանն իւրոյ բժշկեաց, եւ զնոյն ետ մեզ զէն ամրութեան: 2 *Վասն որոյ մեծն Յոհաննէս ասէ. «Արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց մերոց»* (**Ա. Յվհ. Ա. 7**)*, որով տկարացեալ ազգ հեթանոսաց վառեցան զաւրութեամբ, եւ հզաւրաց հաստ աղեղունք թուլացան հրէիցն, որք թլփատութեամբն պարծէին եւ աւրինացն աւրհնութեամբ:*

Խե. 1 *«Յագք եւ լիք հացիւ նուաղեցին եւ քաղցեալք լցին զ[երկիր]»* (**Ա. Թգ. Բ. 5**)*: Յա՛յտ է, զի հրեայք, որ ունէին զգիտութիւն աւրին|283դ|ացն եւ զմարգարէիցն զհոգւոյն հաց, որոց եւ հաց յերկնից ետ նոցա Աստուած, յայնմանէ նուաղեցին եւ քաղցեալք հոգեւոր կերակրոյն ազգ հեթանոսաց լցին զերկիր. յա՛յտ է՝ զեկեղեցի սուրբ, որ է երկիր կամացն Աստուծոյ եւ տեղի կենդանի հացին, ըստ Յովբայ. «Երկիր, եւ ի նմանէ ելցէ հաց»* (**Յոբ ԻԸ. 5**)*:* 3 *Եւ այս յառաջագոյն սպառնացաւ մարգարէիւքն՝ տալ հրէիցն սով ո՛չ մարմնաւոր հացի եւ ծարաւ ջրոյ, այլ լսելոյ զբանն Աստուծոյ, եւ կոչեցան հեթանոսք. Եկայք կերայք ի հացէ իմէ եւ արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ, «զի ամուլն ծնաւ եւթ եւ բազմածինն նուաղեաց ի ծննդոց»:* 4 *«Ամուլ» կոչէ զեկեղեցի հեթանոսաց, որ անծնունդ*[1] *էր մինչեւ ի հարսնանալն Քրիստոսի:* 5 *Իսկ յորժամ խաւսեցան զնա առաքեալքն եւ հարսնացուցին Քրիստոսի, եւ միացեալ սիրով ընդ փեսային ա՛ռ ի նմանէ զսերմն աւետարանական բանին, եւ եղեւ բազմածնունդ, որում աւետիս մատուցանէ Եսայի. «Ուրա՛խ լեր ամուլ, որ ոչ ծնանէիր, գոչեա՛ եւ աղաղակեա, որ ո՛չն երկնէիր, զի բազում են որդիք սկնդկիդ առաւել, քան զարամբոյ»* (**Եսյ. ԾԴ. 1**) *ժողովոյն հրէից:* 2 *Իսկ եւթն ասելն անթիւ բազմութեան է նշանակ, այլեւ զեւթնարփի*[2] *շնորհսն, զոր մարմնապէս ընկալաւ յինքն Աստուածն Բան եւ ետ զնա եկեղեցւոյ հեթանոսաց նշանակէ, որով ծնանի որդիս պէս պէս շնորհաց զանազանութեամբ:* 7 *Իսկ հրէական ժողովոյն մարմնական աւրհնութիւնքն խափանեցան, եւ բազմազաւակութիւն բարձաւ եւ ի հոգեւորն ո՛չ ժամանեաց:*

Խզ. 1 *Եւ այսոքիկ առ ի միտս ի խորհուրդ փրկագործ տնաւրէնութիւնն Քրիստոսի:* 2 *Այսուհետեւ ըստ այլաբանութեան իմաստից յայլ տեսակս դարձուսցուք զբանս:* 3 *Եղկաննա թարգմանի Աստուծոյ շնորհ:* 4 *Եւ ի մեզ Աստուծոյ շնորհք իմանամք զմիտսն, զոր գիրք աստուածային*

---

[1] *Զ ամուլ էր ամուլ] անծնունդ*
[2] *Զ զեօթնարփեան*

փչումն կոչեն, յորմէ մարդն կերպարան Աստուծոյ կոչի, եւ սորա կենակից առակաւ անուանեալ կանայք։ 5 *Երկու զաւրութիւնքն են հոգեկանք եւ մարմնականք*[1]*, եւ երկոցունցս ի միասին ծննդագործել անհնար է։* 6 *Քանզի յորժամ մարմնական խորհուրդք զգայութեամբքն յղանան եւ ծնանին զանաւրէնութեան մանկունսն, յայնժամ հոգւոյն արբանեկութիւն ի մեզ ամուլ եւ անգործ մնան, քանզի որ մարմնով են՝ Աստուծոյ հաճոյ լինել ո՛չ կարեն, քանզի «ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել» (Ղկ. ԺԶ. 13), մինչեւ բարերար Փրկիչն այցելութիւն արասցէ ամլոյն, որոյ անուն կոչի Աննա, որ թարգմանի արարած նորա, քանզի ճշմարիտ արարած եւ գործ Աստուծոյ ասի ի մեզ հոգիս, զոր գիրք գործք ձեռաց ասեն։* 7 *«Զեռք քո արարին եւ ստեղծին զիս» (Սղմս. ՃԺԸ. 73)։*

Խէ. 1 *Արդ, յորժամ սա յերկեւղէն Աստուծոյ յղանայ եւ ծնանի արու զանդրանիկն այսինքն՝ գործս բարիս, քանզի արո՛ւ են խորհուրդք առաքինիք, յայնժամ իշխան առաջնորդն ի մեզ ուրախանայ յոյժ ընդ ծնունդ ամլոյն։* 2 *Յայնժամ եւ մարմնականքն ամենայն մեռանին, որպէս եւ առաքեալ վկայէ, եթէ հոգին կենդանի վասն արդարութեան, ապա եւ մարմին մեռեալ վասն մեղաց բարիոք է։* 3 *Եւ անուն ծնիցելոյն տուրք Աստուծոյ կոչի, քանզի «Ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հաւրէն լուսոյ» (Յկբ. Ա. 17), որպէս առաքեալ* |284բ| *ասէ։* 4 *Աստուած է, որ յաջողէ ի ձեզ զկամելն եւ զյառնելն ըստ իւրում հաճոյիցն։* 5 *Իսկ նստելն հոգւոյն՝ խաղաղանալոյն նշանակ է, զի յորժամ մարմնական ախտք ի մեզ մեռանին, յայնժամ հոգին՝ անկասկած լեալ յամենայն վրդովմանց, սնուցանէ բարեպաշտուեամբ եւ խնամով զմանկունս, «մինչեւ հատուսցէ ի ստենէ», այսինքն՝ «ի չափ հասուսցէ, ըստ հասակի կատարմանն Քրիստոսի» (Եփս. Դ. 13)։* 6 *Իսկ ի տուն Տեառն ելանել եւ ընծայել զմանուկն Աստուծոյ, այս է՛ հոգի մաքրեալ յախտից եւ զվերինն խորհելոյ արժանացեալ, եւ ծնունդս բարեաց իւրոց Աստուծոյ նուիրել։* 7 *Յա՛յնժամ աղաւթիւք գոհութիւն խոստովանութիւն մատուցանէ, որ*[2] *զի թէպէտ ըստ մարդկային տկար բնութեանս եւ ըստ պատրանաց չարին գայթակղեալ սասանեցաւ յախտս մարմնոյ, այլ շնորհաւք արեանն Քրիստոսի եւ յուսով ապաշխարութեանն հաստատեցաւ վերստին, վասն որոյ ասէ. «Հաստ[ատեցաւ սիրտ իմ ի Տէր]»։* 8 *Վասն զի գրէ առաքեալ. եթէ՝ «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ» (Գղտ. Ե. 17)։* 9 *Որքան մարմին զգայական զաւրու-*

---

[1] *Զ > եւ մարմնականք*
[2] *Զ եւ] որ*

թեամբքն բազմածնունդ էր, բանական հոգւոյն զաւրութիւն ամո՛ւլ էր եւ անպտուղ, որպէս եւ ի ննջել զգայարանացն սա՛ արթո՛ւն է, եւ ի տկարանալ մարմնոյն՝ սա զաւրաւոր: 10 *Ըստ Պաւղոսի. «Յորժամ տկարանամ յայնժամ զաւրանամ» (***Բ. Կրնթ. ԺԲ. 10***), քանզի ի ցամաքել ախտից մարմնոյն բանական հոգւոյն զաւրութիւնք ծաղկին եւ պտղաբերեն եւ ծննդական լինին:* 11 *Արդ, մինչդեռ աւրէնք անդամոց մարմնոյն զինեալ էին հակառակ աւրինացն մտաց, յայնժամ գերեալ ուն|285ա|ին զմիտսն աւրինաւք մեղացն՝ ի գործ զգայարանացն. ակն՝ ի տեսանել զգեղ պատկերի եւ զնկարս ոսկեթել զարդուց, եւ ունկն՝ զհեշտալուր ձայնից հնչմունս բանից եւ յեղանակաց, բերան՝ յաւելորդ կերակուրս, եւ լեզու ի խաւսս անկարգս եւ անպարկեշտս, յայնժամ ընդ անասնական շնչոյն քարշին եւ զաւրութիւնք հոգւոյն, եւ փոխի ի սէր ցանկականին յախտաւորն, զոր առ Աստուած էր դնելի:* 12 *Եւ զսրտմտականն, որ ընդդէմ աւձին միայնոյ՝ յեղբայրն դարձուցանէ, եւ զխոհեմութիւն բանին՝ յիմացումն չարին:* 13 *Եւ այսոքիկ քո՛ւն ասի հոգւոյն, եւ հիւանդութիւն՝ եւ ամլութի՛ւն սասանեալ եւ խռովեալ, յորմէ տաղտկացեալ հոգի եւ տագնապեալ ի նախատանաց, ի ձեռն զղջական ապաշխարութեան եւ հեծութեան սրտին հառաչման, եւ ողբոց եւ արտասուաց բխման, զողորմութեամբ հայելն յԱստուծոյ՝ հայցէ հիշել զսէր պատկերին եւ արձակե՛լ ի շնչական եւ ի զգայական ախտիցն կապոյ, եւ ծնանել զանախտական եւ զմաքուր ծնունդն:* 14 *Եւ լինի այս նմա, յորժամ միտքն իմանալի տեսութեամբ յԱստուած ելանէ: Յայնժամ բանականն մասն զաստուածային մտածմունս ծնանի, եւ սէր ցանկականին զծարաւ բաղձանացն յԱստուած դարձուցանէ, եւ սրտմտականն արիացեալ ընդ հակառակամարտն զինի եւ յայս ժամանեալ ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ»:* 15 *Եւ որպէս Աննա ի տուն Տեառն ի ձեռն հեծութեան սրտին եւ անմռունչ աղաւթիցն եւ աւրհնութեան քահանային յամլութեան կապոյն արձակեալ ծննդական եղեւ:* 17 *|285բ| Այսպէս եւ հոգի յապաշխարութիւն եկեալ, յիմանալի տաճարն Աստուծոյ ելեալ մտաւք եւ ի քահանայապետն անցեալ, յերկինս հայեցեալ եւ յաւետարանական վարդապետութենէ նորա ուսեալ, ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր»:* 18 *Զի ուսաւ ի պատուիրանէն Տեառն, թէ՝ «Որ կորուսցէ զանձն իւր՝ գտցէ, զնա» (***հմմտ. Մրկ. Ը. 35***) ի յաւիտեանական կեանսն եւ աղքատութեամբն Քրիստոսի երանութիւնն վայելէ ի սուգ կալով յաշխարհի՝ անդ մխիթարութեամբն զուարճասցի:*

ԽԸ. 1 *Արդ, այսոքիւք կանգնեալ ի գլորմանէ, եւ միեղինութիւնն իւր ելեալ ի ճապաղմանէ զգայարանացն, ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր եւ բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած Փրկիչ իմ»:* 2 *Զի՞նչ այլ բարձ-*

րութիւն անհաս, քան զայն կայցէ, յորժամ միտք ի տղմական վարուց մարմնոյ զերծեալ, ի ներքին կողմ վարագուրին մտանէ, ուր կարապետն մեր Յիսուս եմուտ եւ անդ դնէ ի բարձրագունսն զեղջիւրսն, որ են զաւրութիւնք հոգւոյն։ **3** *«Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց»։* **4** *Բանական հոգին ասէ զայս, որ վասն յախտ մարմնոյն շաղախելոյ, փակեալ կայր բերան մտացն, զի զպատիւ պատկեր լինելոյն, անասնական ցանկութեանցն հետեւելով եւ ծնունդ իմաստութեան խոհականին կապեալ կայր, եւ լոյս հանճարոյ մտացն ծածկեալ էր ընդ հողով կաւեղէն մարմնոյս։* **5** *Իսկ այժմ տուեալ զհաշիւն, զերծայ յոսոխէն, ըստ Տեառն խրատուն, զի ա՛յս են թշնամիքն, որ ասէ. «Ընդարձակեցաւ բերան իմ ի [վերաթշնամեաց իմոց]»։* **6** *Զի դառն ոսոխ է հեշտութիւն մարմնոյ եւ ցանկ*[1]*|183ա|ութիւն մեղաց, եւ բանական մասն հոգւոյն է, որ միշտ բողոքէ առ անիրաւ դատաւորն ի զգայական շունչն եւ նախատեալ իբր զգոռոզն փարաւոն՝ ոչ արձակէ զԻսրայէլ, այսինքն՝ զաստուածատես միտսն ի կաւագործութենէ մարմնոյն, մինչեւ իրաւանց եւ արդարութեան Դատաւորն լսէ հեծութեան եւ աղաղակին եւ փրկէ զոգի ձանձրացեալ յախտից մարմնոյ։* **7** *Վասն որոյ ասէ. «Ուրախ եղեց ի փրկութեան քում»* **(Սղմս. Լ. 8)***, «որպէս հաւ զերծեալ ի ծաւ[=ու]ղակէ»* **(Առկ. Զ. 5)** *եւ հիւանդ ողջացեալ յիմաստուն բժշկէ։*

ԽԹ. **1** *«Զի ոչ գոյ սուրբ իբրեւ զՏէր»։ Սուրբ է Տէրն վասն ի զենման սրբութեան իւրոյ բնակէ՛ եւ ի խորհուրդս սրբոցն փառաւորի եւ ոչ որք աղտեղեցին զպարզութիւն մտացն պատրանաւք կենցաղոյս։* **3** *Եւ որպէս զլոյս արեգականն զսրբեալ աչսն լուսաւորէ, այսպէս եւ Աստուած ի սրբեալն ախտից մարմնոյ հանգչի։*

Ծ. **1** *Եւ ոչ արդար, որպէս զԱստուած մեր։ Ըստ որում եւ արդարութեան կոչի արեգակն, զի որք մտացն աչաւք ի նա հային՝ տեսանեն զնա։* **2** *Զոր աւրինակ զլոյս արեգականն նոքա՛ տեսանեն, որք բաց ու|183բ|նին զաչսն. եւ արդար է՛, զի ի միտս խնդրողին հայի եւ ըստ արժանոյ բաղձանացն շնորհէ զհայցուածն։* **3** *«Մի՛ պարծիք եւ մի՛ խաւսիք զանբարտաւանս»։* **4** *Առ պատրիչ դեւսն ասէ. Ապրեալն ապաշխարութեամբ հոգի մի՛ պարծիք ամբարտաւանութեամբ, թէ ձերով զաւրութեամբ յայտնապէս յաղթեցէք, այլ ի բնական կիրս անդամոց եւ զգայարանաց իմոյ մարմնոյս ծածկեալ թագուցիք զմեղացն աւրէնք, եւ խամբեութեամբ գերեցէ՛ք, այլ ոչ կարացէք բաժանել ի Քրիստոսէ։* **5** *Եւ մի՛ ուրախ լինիք, զի*

---

[1] *Այստեղ 2173ի թ. 285ից յետոյ ընկած է մէկ թերթ, շարունակութիւնն ըստ ՄՄ 2992 (Զ) ձեռագրի՝ 183ա-184ա, մինչեւ 2173ի էջ 286ա։*

թէ գլորեցայ, միւս անգամ կանգնեցայց, եւ ո՛չ տիրել ծառայեցուցին մեղքն, զի չեմք ընդ աւրինաւքն, այլ ընդ շնորհաւք: 6 Մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան: 7 Եթէ զաւծեալ Աստուծոյ հոգւովն եւ զսպիտակացեալն արեամբ գառինն աղտեղեցիք ի մեղս, արդ մի՛ պարծիք, զի արիւնն Յիսուսի սրբէ զխիղճ մտաց իմոց ի մեռելոտի գործոց անտի: 8 Զի «Աստուած գիտութեանց տէր է եւ Աստուած պատրաստեաց իւրով իմաստութեամբ»: 9 Այսպէս ասէ. Աստուած, որ տէր է ամենայն գիտութեանց եւ գիտէ ամենայն ուրէք զչարախաւսին մերոյ զմեքենայս, զի նախ հնարիցն պատրանաւք խաբէ, եւ մեք ո՛չ բռնութեամբ, այլ կամաւ մեղանչեմք, եւ նա՛ առաջի Աստուծոյ չարախաւս է, եւ զմերոյ բնութեանս տկարութիւնն: 10 Վասն զի մարմին զգեցաւ եւ ի չարէն փորձեցաւ, զի ողորմած լիցի մեզ քահանայապետ: 11 Եւ զփորձ առ, զի աւգնական լիցի փորձանաւորացս: 12 Վասն այսորիկ եւ Աստուած իւրով իմաստութեամբ պատրաստեաց զայս գիտութիւն յարարածս իւր, նորա՝ պատրելոյն եւ մեր գայթագղելոյն: 13 Բազում դեղոց բժշկանաց եւ ողջացուցիչ սպեղանեաց ուսոյց մեզ գիտութիւն, զի մի՛ յետ գայթագղելոյն պատրանաւք անկանգնելի կործանեսցուք եւ մի՛ յապաշխարութեանն դեղոյ անճաշակ մնալով՝ ի մահ փութասցուք. այլ ա՛հ եւ յերկիւղն Աստուծոյ յղասցուք եւ ծնցուք զհոգւոյ փրկութիւն: 14 Եթէ ծանրութեամբ եւ յանցանացն զարհու|184ա|բեցուցանէ չարն, լո՛ւր ողորմած մեր քահանայապետին, որ ասէ. «Ո՛չ եկի կոչել զարդարս[1] |286ա| այլ զմեղաւորս յապաշխարհութիւն» (Մրկ. Բ. 17): 15 Եւ թէ ասէ. բազում են մեղք քո, ո՛չ գոյ ժամանակ թէ կարիցես ապաշխարել: Իսկ Տէրն զաւրացեալ զգլուխն առաքելոց մի գիշերոյ արտասուաւք արդարացոյց: 17 Եթէ յուսահատիս եւ ասես՝ գարշի Աստուած ի մեղաւորաց, լո՛ւր զաւետաւոր բարբառ Աւետարանին, զոր պատմէ զՓրկչէն, զի ի պոռնկաց ուծաւ, ընդ մաքսաւորս ճաշակեաց, ի կնոջէ սամարացւոյ ջուր խնդրեաց, զքանանացոյն բժշկեաց զդուստրն, զաշակերտացն ոտս լուաց խոնարհութեամբ, ապտակողին ո՛չ բարկացեալ սաստեաց, խաչեցաւ վասն մերոյ պարտեացն, զխաչակից աւազակն ի դրախտն եմոյծ, ի վերայ խաչահանուացն աղաւթս առ Հայր մատուցանէր:

ԾԱ. 1 «Զայս ամենայն պատրաստեաց իւրով իմաստութեամբն» գիտութիւն յարարածս իւր, զի մի՛ ոք կորիցէ անյուսութեամբ եւ մի՛ պարծեսցի չարն անբարտաւանութեամբ: 2 Վասն որոյ ասէ. «Հզաւրաց հաստ աղեղունք թուլացան»:

[1] Այստեղից բնագիրը շարունակւում է ըստ ՄՄ 2173ի (Ա), որ համեմատված է 2854ի (Ճ) եւ 2992ի (Զ) հետ:

ԾԲ. 1 *Արդ, աղեղունք են խորամանգեալ պատրանք չարին եւ նետք խոցոտիչ, հեշտ ցանկութիւն ախտից մարմնոյն, որով խոցոտէ զհոգին, որ ո՛չ միայն նետս, այլ եւ աւձ անուանի ի գրոց, զի որպէս աւձ բազմամա՛ն է եւ ցանկութիւն բազմատեսակ։* **2** *Վասն որոյ այնոցիկ, որ յԵգիպտոս դառնալ յաւժարին, սատակիչ աւձս ածէ Աստուած ի վերայ, այսինքն՝ հոգի, որ ի մարմնոյ դառնայ ցանկութիւն, ի նոցուն սատակող թիւնիցն խոցի։* **3** *Եւ նոքա առ Մովսէս եկեալ՝ խոստովանեալ «մեղա» ասէին, որում հրամայեաց Աստուած այլ աւձ ընդդէմ սատակիչ աւձիցն կանգնել |286բ|, որով ապրեսցին, որ է ա՛յս ինչ՝ խայթելոցն ի հեշտ ցանկութեանց մեղա՛ ասել, եւ այլ ցանկութիւնք ընդդիմակք նորա կանգնել, այսինքն՝ զողջախոհութեանն զաստուածայինն եւ զմաքուրն։ «Եւ տկարք վառեցան զաւրութեամբ հոգւոյն» (**Ա. Թգ. Բ. 4**), եւ ըստ Պաւղոսի խրատուն սպառազինեցան, զգեցեալ զզրահն արդարութեանն գործոց, եւ ագուցին զոտս պատրաստութեամբ Աւետարանին խրատու, եդին զսաղաւարտն յուսոյ ի գլուխ, առին զհաւատոյն վահան ամրութիւն թիկանց (**հմմտ. Եփս. Զ. 14-17**), յոր ո՛չ մտանեն մխեալ սլաքիւք նետքն չարին։*

ԾԳ. 1 *«Յագք եւ լիք հացիւ նուաղեցան»* (**Ա. Թգ. Բ. 5**)։ **2** *Դեւքն չար*[1]*, որ յանդամոց մարմնոյս եւ ի մասանց հոգւոյս զգարշութիւն մեղացն ուտէին եւ յագենային, որպէս հացիւ, յորժամ սոքա ապաշխարութեամբ սրբեցան, նոքա սովով նուաղեցան, եւ մարդիկ քաղցեալք յերկնային կերակրոյն, որք ուտէին զմոխիր մեղացն, արդարացան եւ լցին զերկիր՝ ա՛յս է զվերին երկիրն զանկելոցն տեղի։* **3** *«Ամուլն ծնաւ եւթ»։* **4** *Ամուլ կոչէ զհոգի, որ ոսկեղէն պատկեր է թագաւորական, եւ թաղելովն յաղբ՝ մարմնոյն ախտից ծածկեցաւ։* **5** *Եւ կորուսանէ զեւթնեկի շնորհսն, զոր նախաստեղծն առեալ յԱստուծոյ եւ կորոյս մեղաւք, որ է. ա. մարգարէութիւն, բ. թագաւորութիւն, գ. քահանայութիւն, դ. իշխանութիւն, ե. իմաստութիւն, զ անմահութիւն, է. անմեղութիւն եւ անապականութիւն։*

ԾԴ. 1 *Արդ, ի բազմանալ մարմնական ախտից ծննդոց, հոգի ամուլ եւ անպտուղ մնա յեւթնեկի երկնաւոր շնորհացս այսոցիկ, իսկ ազատելովն ի ծառայ|287ա|ութենէ մարմնոյն ապաշխարութեանն երկամբք, վերստին ծնանի զսոսա, գտանելով զկորուսեալն դրամ, զի մարգարէանայ զհանդերձեալն, թագաւորէ ի վերայ անասնական մասանցն, քահանայագործէ՝ զինքն Աստուծոյ պատարագելով, իմաստասիրէ՝ զվերինսն խորհելով, իշխանաբար սաստէ մեղացն նոյն պատրողացն, անմահանա՛ առաքինութեանց մանկամբք եւ անմեղութեամբ զանապականութիւն զգենու անա-*

[1] *Զ > դեւքն չար*

պական փառացն յուսով։ 2 *Իսկ բազմածին վիշապն ցանկութեան եւ գազանն սրտմտութեան եւ անկարգ շարժմունք զգայութեանցս, որ ի սնոտիսն՝ նուաղեաց ի ծննդոց։* 3 *Այլ եւ զսոսա զեւթանասնական մասունս, յորժամ տիրէ իշխանաբար, բանական հոգի ծնանի՝ երկնաւոր եւ մաքուր վարուք։* 4 *Եւ այսոքիկ ըստ այլաբանութեան տեսակին։*

Մե. 1 *Արդ, տեսցուք եւ ըստ հոգեւորն. յեղանակի, զի որպէս ասացաւ, թարգմանի Եղկանն Շնորհ, զի շնորհք արարչական իմաստութեանն Աստուծոյ, որպէս կրկին արար զմարդ՝ հոգի եւ մարմին, այսպէս կրկին են աշխարհ եւ կեանք, զոր արար Աստուած ի վայելումն մարդկային ազգի։* 2 *Եւ յայսցանէ մինն մահկանացո՛ւ է եւ անցաւոր, եւ միւսն անմահ եւ անապական եւ մշտնջենաւոր։* 3 *Իսկ ժողովողն իմաստութեան, համեմատելով զերկոսեան առ միմեանս՝ զկեանս զայս անգոյ եւ ունայնութիւն կոչեաց*[1]*, առ ճշմարիտ կեանս բաղդատելով (տե՛ս* **Ժղվ. Ա. 2***)։* 4 *Եւ ունայնութիւն ասէ, զի ո՛չ է մնացական եւ ոչ հաստատուն փոյթ յաւժար*|287բ|*ութեանն, որպէս շինուած ի վերայ աւազոյ եւ մանգանց նետաձգութիւնն յաստեղս, կամ թէ՝ ոք փութայ ժողովել զհողմ ի գոգ (* **Առկ. Լ. 4***), եւ կամ հակառակել յառաջանալ նախ քան զստուեր իւրոյ գլխոյն։* 5 *Այսոքիկ ամենեքեան սնոտիք անուանին։* 6 *Նոյնպէս սնոտիք են եւ որ զկենցաղս անցաւոր փոյթ յանձին ունին ստանալ զվայելչութիւն։* 7 *Իսկ զյաւիտենական եւ զանմահ կենացն վայելչութիւն ուսանիմք ի Տեառնէ եւ յառաքելոյ, զի Տէրն ասէ, թէ՝ «Երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենական» (*__Մտթ. Իե. 46__*)։* 8 *Եւ առաքեալն թէ՝ «Երեւելիքս առ ժամանակ մի են, իսկ աներեւոյթքն՝ յաւիտենական» (*__հմմտ. Եբր. ԺԱ. 3__*)։* 9 *Եւ որպէս սոքա կրկին են, նոյնպէս յերկուս բաժանին կամք եւ յաւժարութիւն մարդկային բարուց։* 10 *Ոմանք խոկան զաստուածայինսն եւ զմահն, որ հարկ է բնութեանս, եւ ոմանք ի զգայարանացս ախորժեն լնուլ զցանկութիւնս ի փառս սնոտիս եւ ի ցանկութիւն մարմնոյ, որք ի յաւժարութենէն կամացն առնուն զանուանցն կոչումն արդարս եւ մեղաւորս անուանելով։*

ՄԶ. 1 *Արդ, որպէս անդ, թէպէտ բազմորդի էր Փեննա եւ անծնունդ Աննա, այլ առաւել սիրելի էր Աննա, քան զՓեննա։* 2 *Նոյնպէս եւ աստ թէպէտ միոյ Արարչի պարգեւք են այժմու կենացս եւ յաւիտենականին բարութիւնք, այլ սիրելի Աստուծոյ նոքա՛ են, որք երեւելաւքս զաներեւոյթսն խոկան, աստ սերմանելով զառաքինութեան սերմանսն եւ անդ ծնանին։* 3 *Եւ որպէս Փեննա ի ծնունդս իւր հպարտացեալ նախատէր, եւ ոտնհար լինէր Աննայի՝ վասն ամլութեանն*|288ա|*, այսպէս եւ աշխարհասէրք, որք*

[1] *Զ կոչեաց*

բազումս ծնանին անիրաւութիւն եւ յոլովս աճեցուցանեն զցանկութիւն չարեաց, ոսկէթել նկարիւք հանդերձից պճնին, բազմութեամբ ծառայից ամբարտաւանին, արծաթսիրութեանն ախտիւ բորբոքին, անպատշաճ ուրախութեամբ ի տան սգոյ աշխարհիս բերկրին, զուարճանան ի պանդխտութեան կենցաղս, զաւտար աշխարհս ինքեանց վարկանին սեփհական։

Մէ. 1 *Արդ, սոքա զերկնաւոր բարեացն ցանկացողսն արհամարհեն եւ կրկին վշտաւք լնուն զնոսա։* **2** *Մի՛, զի զանիրաւութեամբ վայելումն նոցա տեսեալ՝ տագնապին, եւ մի, զի ի բարի ընթացս կենաց իւրեանց ի չարացն նախատին, զի գործաւնեայք ամբարշտութեանն, որք պատուհասի են արժանիք՝ փափկանան, եւ սուրբք եւ սիրելիքն Աստուծոյ՝ չարչարին։* **3** *Եւ որպէս անտ ի ծնանելն Աննայի ծնունդքն Փեննայի մեռան եւ յանկարծակի բարձան, այսպէս որք տրտմական սգով եւ վշտաւք վճարեցին զկենցաղս՝ յուսով հանդերձելոյ փառացն, յորժամ նոցա առաքինութեանն մանգունք ծնանին, եւ արհամարհեալքն ի յանիրաւաց ի պարակցութիւնս հրեշտակաց խառնին, եւ որոց ո՛չ գոյր ստացուած երկրի՝ զվերին քաղաքն ժառանկեն, յայնժամ աշխարհասիրացն ամենայն ինչ սպառեալ, պակասին մարմնոյն գեղեցկութիւնն, որպէս խոտ ի խորշակի ցամաքի (հմմտ. Սղմս. ՃԱ. 5, Եսայի. Է. 27), կերպասիւք պճնեալն մերկ ի գերեզմանի դնի, տէրն ծառայից անաւգնական ի մահու յաղթի, ըստ այնմ՝ «Փոքր մի՝ եւ այլ ո՛չ եւս իցէ ամբար |288բ| իշտն խնդրեսցես զտեղի նորա եւ ո՛չ գտցես» (Սղմս. ԼԶ. 10), այսինքն՝ ո՛չ գտցի եւ ո՛չ երեւի տեղի փառաց նորա եւ գործոյ։* **4** *Եւ որպէս Աննա լուռ բերանով եւ անմռունչ հեծութեամբ ի Տեառնէ Աստուծոյ հայցէր վշտացն մխիթարութիւն, եթէ հայելով հայեսցիս յիս եւ յիշեսցես զիս, նոյնպէս եւ սուրբքն եւ սիրելիքն Աստուծոյ, եւ որք երկնչին ի Տեառնէ եւ զպատուիրանս նորա պահեն, որք եւ ոչ ըստ արժանւոյն չարչարին յանաւրէն բռնաւորաց, եւ նեղեալ ի տառապանացն ի խորոց սրտէ առ Տէր աղաղակեն։* **5** *Եւ ո՛չ միայն հասարակաց մարդիկ, որ եղեն հասու խորոցն Աստուծոյ, այլեւ մարգարէքն հոգիընկալ եւ աստուածամերձ՝ զայսպիսի անհանդուրժական կիրս եւ զզրկանս աղքատաց տեսեալ, ընդ բնութեանս Ստեղծիչի դատ մտեալ, զանճառ նախախնամութիւնն գիտել հայցէին, զոր եւ Յովբ տարակուսեալ հարցանէր. «Ընդէ՞ր են ամբարիշտք ի խաղաղութեան հնացեալք եւ ի մեծութեան, որոց որդիք առեալ սաղմոսարան եւ քնար՝ են յուրախութեան» (Յվհ. ԻԱ. 7, 11-12)։* **6** *Իսկ Ամբակում՝ ընդէ՞ր արարեր զմարդիկ իբրեւ զձկունս, զի մեծամեծք[ն] կլանեն զփոքունսն (հմմտ. Ամբ. Ա. 13), «Նախանձեցայ ընդ անաւրէնս զխաղաղութիւն մեղաւորաց տեսանէ, զի ո՛չ գոյր վրէպ մահու նոցա», այսինքն՝ ո՛չ վրիպեն յախորժելի եւ ի բարի կենաց։* **7** *Եւ որպէս Աննա յաղաւթիցն հայցմանէ եւ պատասխանոյ քահանային Հեղեայ մխիթարեալ, եւ յետոյ յղացաւ եւ ծնաւ որդի եւ ասաց զա-*

*զաւթս զայս գոհութեան խոստովանութեան՝ «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր», այսպէս եւ մարգարէիցն տարակուսանաց եւ յԱստուծոյ զանճառութիւն իրին հա|289ա|յցողաց, առնէ հոգին պատասխանի ամենեցուն նոյնպէս եւ Դաւթայ ասէ, թէ՝ «Վասն նենգութեան անիրաւացն տարագիր արասցէ զնոսա Աստուած եւ կործա[նեսցի] յամբ[արտաւանութեան իւրեանց]» (**Սղմս. ՀԲ. 18**)։ 8 Եւ եղեն ամենայն փառաւորութիւնք նոցա «որպէս երազք զարթուցելոց» (**Սղմս. ՀԲ. 20**), եւ պատկերք հոգւոց նոցա անարգին ի տիեզերական հրապարակին։ 9 Վասն որոյ հաստատեալ ի գայթակղելոյն, ասէ. «Ինձ մերձենալ առ Աստուած բարի է եւ դնել առ Տէր զյոյս իմ» (**Սղմս. ՀԲ. 28**)։ 10 Ըստ որում եւ սրբուհին Աննա ասէ. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր եւ բարձր[ացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ]»։*

ԾԸ. 1 *Զայս կիրս տակաւին եւ այժմ կրեն ազգ քրիստոնէից՝ ի քրիստոսուրաց ազգաց անաւրինաց, ունայնացելոցն ի ճշմարտութենէ հաւատոյն, եւ զճշմարիտ աստուածապաշտից հայհոյեն զհաւատս։* 2 *Եւ նոքա յամենայն իրս կենցաղոյս յաջողեալք, եւ սոքա անարգութեամբ ի ծառայական ստրկութեան անգեալք։* 3 *Գարշացեալք ի գործոյն Սոդոմայ եւ նոցա հրովն ո՛չ կիզանին։* 4 *Սպանողք են նման Կայենի անողորմաբար, եւ նորա անիծիւքն ո՛չ երերեալ տատանին, լցեալք անիրաւութեամբ՝ եւ զքրտամբք սակաւ վաստակս արդարոյն յափշտակեն, եւ առանց փորձանաց վայելեն զկեանս, եւ արդարք ի բազում փորձանաց տագնապին, ոչինչ ունելով հնարս եւ յո՛յս ապաստանի, բայց միայն՝ զաղաղակելն եւ զհեծութեամբ առաջի Տեառն մաղթելն։* 5 *Ուստի եւ մեծն Դաւիթ ջան եդեալ ի սրբութիւնսն Աստուծոյ մտանել եւ ի միտ առնուլ զկատարած երկոցունց սոցա՝ զյղփացելոցն եւ զաղքատաց, զտառապեցուցչացն եւ զտառապելոցն, զյագութեամբ |289բ| լցելոց եւ զքաղցելոցն անսուաղութեամբ։* 6 *Որ եւ ճշմարիտ եւ ստուգապէս զայսոսիկ տարակուսանաց լուծումն եցոյց յոյսն մեր Քրիստոս, ի սրբութենէ անտի եկեալ պատմութեամբ մեծատան եւ Ղազարու եւ երանութեանցն վարդապետութեամբ, զաղքատացն հոգւով եւ զսգաւորացն, զքաղցելոցն եւ զծարաւեացն արդարութեան, եւ զհալածելոցն զմիտս ի վեր հանել՝ առ Աստուած հաստատէ, եւ մեծատանցն եւ յագեցելոց, եւ որք ծիծաղին այժմ՝ զվայն արձանց նոցա վիճակէ, որք սգայցեն եւ լայցեն։* 7 *Վասն որոյ յայսցանէ զաւրացեալ ասեն. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր եւ բարձ[րացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ]»։* 8 *Զի որպէս ամենայն կարծեցեալ բարիքն անցաւորիս նուազին, եւ արդարոցն դասք որպէս զարմաւենիս բարձրացեալ ծաղկին, այսպէս եւ եղջիւր զաւրութեան նոցա խոնարհին եւ եղջիւր փառաց աստուածապաշտիցն առ Աստուած բարձրանան։* 9 *Եւ մեղաւորացն եղջիւր է անյուսութիւն եւ անիրաւութիւն եւ մեղք, որով յԱստուած պա-*

տերազմէին եւ զմարդիկք խոցոտեալ վիրաւորէին։ 10 *Արդ, այնոքիկ յարդար ատեանն Քրիստոսի խորտակեալ փշրին, եւ եղջիւրք զաւրութեան առաքինեացն գերագոյն՝ քան զարեգակն բարձրացեալ փայլեն։* 11 *Ըստ Տեառն. «Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն»* (**Մտթ. ԺԳ. 43**)։

ԾԹ. 1 *Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց։* 2 *Զի հալածեալքն եւ նեղեալքն աստէն եւ նախատեալքն ի գոռոզամիտ ամբարտաւանից, որք խուլ եղեն ի լսելն եւ խոնարհեցան ի համբերելն, զ Դաւիթ այն ասելով. «Լուռ եղէ եւ ոչ բ[ացի զբերան իմ]»* (**Սղմս. ԼԸ. 10**)։ 3 *Այսինքն՝ Քո անճառ ի|290ա|մաստութեանդ է հրաման եւ գործ լռել աստ եւ երկայնամտել եւ համբերութեամբ ստանալ զոգիս։* 4 *Իսկ անդ՝ հասեալ յիրաւացի եւ արդար ատեանն, ասէ. «Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմ»։* 5 *Որպէս եւ իմաստունն բազում բանիւ ցուցանէ*[1] *զլինելոցն. «Յայնժամ կացցէ արդարն բազում համարձակութեամբ յադիման նեղչաց իւրոց, եւ որք անգոսնէին*[2] *զվաստակս նորա տեսեալ՝ խռովին անհնարին երկիւղիւ»* (**Իմաստ. Ե. 1-2**), *որք եւ ի համարձակախաւս բերանոյ արդարոցն յանդիմանին ո՛չ ոտնահարութեամբ, որպէս աստ են նոքա, այլ հեզ եւ հանճարեղ բանիւ։* 6 *Որպէս Աբրահամ արդարոցն հայր, կաթի մի ջրոյ կարաւտացելոյ ընչեղին եւ ի բոց տապոյն հաշեցելոյ ասէ. «Որդեակ, յիշե՛ա զի ընկալար զբարիսն քո ի կեանս քո, եւ Ղազարոս զչարչարանս»* (**Ղուկ ԺՁ. 25**)։ 7 *Արդ, սա ա՛ստ մխիթարի եւ դու այդր պապակիս։* 8 *Եւ իմաստուն կուսանքն յիմարացն ասէին, որոց ջահք հաւատոյն զնիւթ լուսաւորութեան գործոյն ո՛չ ունէին, եւ ո՛չ կուսութեանն լապտեր զեղն ողորմութեան, եւ յանդէպ ժամու հայցողացն ասէին. «Երթայք առ վաճառականսն եւ գնիցէք»* (**Մտթ. ԻԵ. 9**)։ 9 *Որոց ի գնալն փակի դուռն եւ արտաքոյ մնան հարսանեացն։* 10 *Եւ իմաստունքն ասեն. «Ուրախ եղիցուք ի փրկութեան քում։* 11 *Զի ո՛չ գոյ սուրբ իբրեւ զՏէր եւ ո՛չ արդար որպէս զԱստուած մեր»* (**Ա. Թգ. Բ. 2**)։

Կ. 1 *Սուրբ եւ արդար է Տէր, զի ոչինչ պակասեցոյց ի կեցուցիչ խնամոց իւրոց յաղագս մերոյ փրկութեան։* 2 *Զի ի ժամանակս յայս եւ յառաւրեայ կեանս արգելեալ փակեաց զվարս եւ զգործս մարդկան, իսկ անդ զիրացն քննութիւն։* 3 *Զայս|290բ|ոսիկ տեղի ետ իմաստասիրելոյ եւ անդ զպտուղ իմաստութեանն վայելելոյ, աստ սակաւ մի տանջիլ եւ անդ անմահապէս փառաւորիլ։* 4 *Որոց յորդորական բանիւ խրախոյս տա մարգարէն։* 5 *«Ո՞ իցէ հանճարեղ եւ իմասցի զայս»* (**Ովս. ԺԴ. 10**), *այսինքն՝ զիմաստութիւնս զայս աստուածային, զոր կրկին աշխարհ առաջի եդ մեզ*

---

[1] *Զ ասէ*
[2] *Զ անկանեն*

ի պատճառս իմաստասիրելոյ, զանց առնել զանցաւորաւքս եւ յարիլ ի մնացականսն, զայսոսիկ արհամարհել եւ այնմիկ զհետ ընթանալ, թողուլ զստուերագրութիւնս եւ սիրել զճշմարտութիւնն։ **6** *Գիտել եթէ երկրաւոր եւ ստորին խորանս քակտեսցի եւ վերին քաղաքին տաճար յաւիտենական եւ անմահական է։* **7** *Ճանաչել զխաւար կենցաղոյս եւ ընթանալ ի լոյսն անստուեր։ Լքանել զկա՛ւ եւ զտիղմ ծանրութեանս եւ ի սուրբ երկիրն փոխիլ։* **9** *Գնել մերձաւորաւքս եւ անցաւորաւք զհանդերձեալն եւ զմնացական, շահել ցնդելի փարթամութեամբս զոչ քակտելին, եւ երեւելաւքս՝ զանտեսանելին։*

ԿԱ. **1** *Արդ, երանի այնմ, որ եգիտ զայս իմաստութիւն, եւ մահկանացու, որ ետես զհանճար, եւ ե՛լս ի սրտի դնիցէ ի հովտէս տրտմութեան, ըստ Դաւթայ. «Ի վեր յարիցէ եւ գնասցէ աստի, ուր ո՛չ գոյ հանգիստ, եւ մերձեսցի ի լերինն յաւիտենական» (տե՛ս* **Միք.** *Բ. 9), ըստ Միքիայ «Արիք երթիցուք աստի» (***Մտթ. ԻԶ. 46***), լուիցէ ի Քրիստոսէ, եւ զհետ գնասցէ Բանին եւ ժամանեսցէ ի հանգիստն։* **2** *Իսկ որք մշտնջենաւոր կարծեն զանցաւորս եւ կապեալ կայցէ ընդ ոչ մնացականսն, եւ խաբեալ հեշտութեամբ անցաւորիս՝ ծառայէ կենցաղոյ, եւ ամբարտաւանութեան ախտիւ փքացեալ՝ արհամարհէ զերկեղածս Աստուծոյ եւ հպարտ սրտիւ մեծաբանութիւնս*[1] *ի բ|291ա|արձունս խաւսեսցի, սաստէ այնպիսեացն եւ ասէ. «Մի՛ պարծիք եւ մի՛ խաւսիք զանբարտաւանս» (***Ա. Թգ. Բ. 1-2***) ասելով՝ յԱստուծոյ է այս*[2]*, զի մեք փառաւորեսցուք եւ մեծասցուք*[3]*, եւ խնդութեամբ զկեանսն վայելեսցուք։* **3** *Իսկ ա՛յլք չարչարեսցին եւ աղքատութեամբ պանդխտեսցին եւ ծառայեսցեն, զի մեք ըստ արժանեաց կրեմք զուրախականս, եւ նոքա ըստ չարութեան՝ չարչարեալ տանջին։*

ԿԲ. **1** *Արդ, «Մի՛ պարծիք եւ մի՛ խաւսիք զայդ բան ամբարտաւանութեան, զի Աստուած գիտութեանց տէր է եւ Աստուած պատրաստեաց իւրով իմաստութեամբ զգիտութիւն յարարածս իւր» (***Ա. Թգ. Բ. 3***), թէրեւս զի ոմն վասն չարութեան առաւել, քան զչափ՝ բարձրանայ, եւ միւսն վասն առաքինութեան փորձի՝ զամենայն լքանելով, եւ իբրեւ զախտ ինչ՝ պատառեալ զիւր չարութիւնն, զի տանջեսցի նորագոյնս, իսկ սա, որ ի խոնարհութեան, կայ եւ ի նուաստութեան, ըստ ոչ կարծեաց ճնշեալ չարչարի, զի իբրեւ զոսկի ի բովս փորձեալ, եթէ ինչ փոքր ունէր չարութեան նշմարանս, եւ այն հալեալ մաքրեսցի*[4]*։*

---

[1] *Զ մեծաբնութեամբ*
[2] *Զ > այս*
[3] *Զ ցնծասցուք*
[4] *Թերի է թւում. գրիչը շարունակութիւնը հաւանաբար ձեռքի տակ չի ունեցել. այս՝ 291ա էջի մէկ երրորդը եւ յաջորդ 291բդ թերթը բաց՝ չգրուած են. 291ա էջի վերջում եւ 292ա էջում կան այլ ձեռքով՝ դեղագիր եւ հետագայ՝ ԺԶ. դ. յիշատակագրութիւն։ Սակայն ՄՄ 2992 (Զ) օրինակը եւս աւարտւում են նոյն տողով։*

ԻԷ.

|293ա| ՆՈՐԻՆ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ՅԱՂԱԻԹՍ ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ («ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲՔ ԿԱՅՑԵՆ ԱՌ ՔԵԶ»)[1]

Հովհաննէս Երզնկացին իր ճառերում եւ քարոզներում հաճախ է անդրադարձել աղօթքի խորհրդին: Ինչպես Ա. Տեր-Սրապյանի կազմած Երզնկացու «Ի ՃԽ. սաղմոսն, որ ասէ. «Տէր կարդացի առ քեզ»՝ Յովհաննես Երզնկացւոյ ասացեալ ատեան Դրազարկոյն ի հոչակաւոր եւ ի մեծ անապատին, գնալով անտի...» ճառը հրատարակելիս նշել է Մեսրոպ քահանա Արամյանը՝ «ըստ Հովհաննէս Երզնկացու Աղոթքը... մարդու զորությունների միասնական ակտ է. եւ Աստծուն պետք է դիմել խորհուրդներն ուշադրությամբ ի մի բերելով սրտի ջերմեռանդությամբ եւ մտքի խոհությամբ...» (տե՛ս Գանձասար, է., էջ 385):

Արդ, այս ճառում Երզնկացին դարձյալ անդրադառնում է նույն խնդրին՝ նշելով. «Արդ, շոքք են պատճառ եւ եղանակ ընդունելութեան աղաւթից: Ի յարմարական ձեւոյ եւ ի դիմաց աղաւթականին եւ ի ներգործութենէ իրաց աղաւթականին անձին եւ ի խորհրդական ժամուն, յորում նուիրէ զբանական նուէրն Աստուծոյ» (ՄՄ 2173, 294բ): Բացատրելով շորս խորհուրդների տեղը, իմաստն ու բովանդակությունը՝ դարձյալ իր սովորությունը հավատարիմ, ասելիքը առավել մատչելի դարձնելու համար դիմում է նաեւ իրական կյանքից վերցրած օրինակների, նշելով, թե այնպես, ինչպես մահապարտները թագավորի առջեւ գլխիկոր կանգնած՝ ոչ ոքի չեն նայում, այլ միայն արքային, որից փրկություն են ակնկալում, ճիշտ այդպես աղոթող քրիստոնյան խոնարհությամբ եւ պաղատանքով պարտավոր է կանգնել Աստծու առջեւ եւ թողություն աղերսել:

Բնագիրը հրատարակվում է ՄՄ 2173 (Ա. 293ա-8ա) եւ 7032 (Կ. 114բ-122ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Անմարմին եւ անհասական բնութիւն է Աստուած, ի բնաւորական գոյացութեանց անսահմանելի, անորակ եւ անգննին ի հասողական զգայութենէ, վասն անտեսական եւ անշաւշափելի գոլոյն, անքանակ եւ անչափելի մեծութեամբ եւ անթուելի սքանչելի զաւրութեամբ:* **2** *Անուր եւ անտեղի ի պարագրական տեղւոյ պարունակութենէ:* **3** *Աներբ եւ անժամանակ յարեգակնային բերմանց եւ երկնային շրջագայութեանցն մասնաւորութենէ:*

---

[1] *Կ քարոզ յովհաննէս վարդապետի երզնկացոյ ի բանն սաղմոսին, որ ասէ «յաղօթս կայցեն» առ ի խորհուրդ սուրբ պատարագին*

Բ. 1 *Արդ, բանն Աստուած, արարչակից եւ համագոյ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն, եւ ամենայն գիտական մասանց իմաստասիրականաց անքննին եւ անգիտելի, կամաւ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն էառ զբնաւորական գոյացութիւն*[1] *մարդոյ եւ անսահմանն յէութեանն ըստ եղականացս*[2] *եղեւ սահմանելի:* **2** *Անորակն զգայական երեւութիւ եւ բնութեամբ անտեսականն, եւ անքանակն անբաւելի բարձրութեամբ, ընդ քանակութեամբ ի նուաստութիւն մարմնոյ միացեալ չափաւորի*[3]՝ *ընդ թուով աւուրց, ամսոց եւ ամաց մտանելով, ընդ երկրային տեղւոյ յարկի եւ ծածկութի տաղաւարելով՝ առնել գործս տեսանելիս եւ կրել կիրս զարհուրելիս:* **3** *Մարդասեր գոլով՝ մարդկայնովս զաստուածայինսն հրաշագործէր:* **4** *Եւ ո՛չ մի այս, այլեւ արարչական Բանն, որ ոչ միշտ գործէ, եւ ոչ հանապազ լուէ*[4]*, այլ ըստ արարչութեանն յաւուրս վեց գործեաց, եւ* |293բ| *մշտնջենաւոր յաւիտենիս միշտ նախախնամէ:*

Գ. 1 *Զնոյն եցոյց եւ ի նորում արարչութեանս, զի Արարիչն ամենայնի քաղցրութեամբ եւ ողորմութեամբ Իւրով*[5] *ամենայնիւ նման մեզ մա՛րդ եղեւ եւ հաւասար մեզ, զմերս զամենայն առեալ՝ բա՛ց ի մեղաց, եւ միաւորեցաւ ընդ բնութիւնս մեր, վասն զի ետ մեզ զիւրումն պատկերին եւ նմանութեանն զանձն եւ զմիտս իւրովքն առաքինութեամբք. եւ մեք ո՛չ պահեցաք:* **2** *Առնու*[6] *ինքն զաղքատ եւ զտկար բնութիւնս մեր, զի սրբեսցէ՛ եւ անապականացուսցէ, եւ հաղորդ աստուածութեանն ցուցցէ դարձեալ*[7]*:* **3** *Այլ պարտ էր, զի ոչ սկիզբն բնութեանս միայն*[8] *հաղորդէր վերագոյն աստուածային բնութեան, այլեւ ամենայն մարդ, որ եւ կամեսցի, երկրո՛րդ ծնունդ ծնցի վերստին ծննդեամբն եւ նորո՛գ կերակրովն, որ եւ նմա՛ն գոյր նոր ծննդեանն սնանիցի:* **4** *Վասն այսորիկ, սակս նորոգութեանն մերոյ, խառնէ զաննիւթ եւ զանտեսական աստուածութիւնն ընդ նիւթական եւ տեսական գոյացութիւնն հացիս եւ բաժակիս, եւ տայ զինքն կերակուր անապական ի ճաշակս որակաց քաղցրութեան համոյ եւ հոտոյ:* **5** *Եւ չափաւորի անքանակ բնութիւն Բանին ի ձեւ չափոյ տպաւորական հացին եւ բաժակի:* **6** *Եւ անտեղին յարկի եւ ծածկութի*[9]՝ *բարձրացեալ բազմի ի վերայ սրբոյ սեղանոյս: Եւ անաժամանակ եւ անսկզբ-*

---

[1] *Կ գոյութիւն*
[2] *Կ ստեղծականացս] ըստ եղանակացս*
[3] *Կ չափաւորութիւն ծածկոյթին*
[4] *Կ լուէ] լոէ*
[5] *Կ իւրովին*
[6] *Կ էառ] առնու*
[7] *Կ դարձեալ վերստին*
[8] *Կ > միայն*
[9] *Կ ծածկութիւն*

նաբար ծնունդն Հաւր, ամենայն աւուր ի ժամ երրորդի պատարագեալ՝ զենանի միշտ զենումն անմահ եւ անծախելի ի նոյն ժամու, յորում պա-
տարագե|294ա|ցաւ ի վերայ խաչին, պատարագեալ բաշխի ի վերայ սրբոյ սեղանոյս, զի որպէս ծնաք յԱդամայ զիւրն ծնունդ, եւ նմանեալք նմա ժառանգեցաք զանէծս եւ զապականութիւն, այսպէս եւ ի նմանէ ծնանելով նմանեսցուք նմա, եւ ժառանգեսցուք զանապականութիւն, զաւրհնութիւն եւ զփառս։

Դ. 1 *Ըստ որում ասէ մարգարէս. «Վասն այսորիկ յաղաւթս կացցեն առ Քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի»* (**Սղմս. ԼԱ. 6**)։ 2 *Վասն ո՞յր*[1]*, զոր առաջին տունք սաղմոսիս ունի զզաւրութիւն։* 3 *Վասն զի ամենիմաստ Արարիչն՝ բնութեանս, որ ի մարմին եւ յարիւն միաւորեաց զհոգի՛ եւ զմիտս զի՛ւրն ազգ, եւ ինքն ի նոսա գոլով բարերարութեամբ, իսկ զկնի յանցանացն եւ ի մահ մատնելոյն, զարիւն եւ զմարմին մեր միացոյց ընդ իւրն աստուածութիւն զսկիզբն զանկուածոյս մերոյ, որով եւ ծնաւ Տէրն ծննդեամբ մեր, եւ ապա զամենայն մարդիկ միաւորեաց ընդ ինքն հաւատով եւ վերստին ծննդեամբ. ետ նոցա զհացն եւ զբաժակն, յորոց էր ի՛ւրն մարմին, ուտել նոցա զի՛ւր մարմին եւ արիւն։* 4 *Եւ միաւորեցաւ ընդ մեզ մարմնով ի մարմի՛ն, արեամբ՝ յարի՛ւն, հոգւով՝ ի հոգի՛, մտաւք՝ ի միտք, եւ եղեւ ի մեզ կատարեալ ի մի։* 5 *Ըստ այնմ, թէ որ ուտէ զմարմին իմ եւ ըմբէ զարիւն իմ, նա յիս բնակի եւ ես ի նա։* 6 *Եւ թէ որպէս «Հայր յի՛ս եւ ե՛ս ի նա»*[2] (**Յվհ. Ժ. 38**)։ 7 *Զոր եւ յիսկզբան սաղմոսիս քննելով զզաւրութիւն՝ զայս ցուցանէ միտս ասելով. «Երանի՛ ում թող[ութիւն] եղեւ մեղաց»*[3]*, մինչեւ ցայս բան։* 8 *Վասն այսորիկ յաղաւ|294բ|թս կացցեն առ քեզ «Ամենայն սուրբք ի ժամ ընդ[ունելի]»* (**Սղմս. ԼԱ. 1**)։

Ե. 1 *Արդ, չորք են պատճառ եւ յեղանակ ընդունելութեան*[4] *աղաւթից։* 2 *Ի յարմարական ձեւոյ եւ դիմաց աղաւթականին։ Եւ ի պատշաճաւոր տեղոյն, յորում զաղաւթս մատուցանէ։* 3 *Եւ ի ներգործութենէ իրաց աղաւթականին անձին։* 1 *Եւ ի խորհրդական ժամուն, յորում նուիրէ զբանական նուէրն Աստուծոյ։*

Զ. 1 *Եւ է յարմարական ձեւ եւ դէմք աղաւթականին այսպիսի՛։* 2 *Զի, զոր աւրինակ, մահապարտք առաջի թագաւորաց սարսեա՛լ եւ սասանեա՛լ, եւ գլխակոր դիմաւք կան եւ կապեալ լեզուով, եւ ի խաւսե՛լ թագաւորին ո՛չ յայլ ոք հային, այսպէս առաւել քան զայս եւ մեզ պարտ է կեր-*

---

[1] *Կ > վասն ոյր*
[2] *Կ > եւ թէ... ի նա*
[3] *Կ մեղաց եւ ծածկեցան ամենայն հանցանք նոցա մինչեւ*
[4] *Կ ընտրութիւն*

*պարանել ժամ աղաւթիցն. ահի՛ւ եւ դողութեամբ, արտասուաք եւ պաղատանաք կալ առաջի Աստուծոյ եւ խնդրե՛լ զթողութիւն ո՛չ մտաւք մոլորական, այլ ժտել ի ժամ աղաւթիցն, ըստ Տեառն բանի. «Հայցեցէք եւ գտջիք» (**Մտթ. Է. 7**), եւ ըստ մարգարէին՝ «Ժտեա՛ ի խնդրելն»*[1] *(**տե՛ս Սղմս. Լ. Զ. 4**), որպէս կինն այրի՝ յանիրաւ դատաւորէն (**տե՛ս Ղկ. ԺԸ. 2-8**) եւ ժողովուրդն՝ ի հովիտսն տրտմութեան (**տե՛ս Սղմս. ՁԳ. 7**), որով մաքսաւորն ի տաճարին էառ զքաւութիւն (**տե՛ս Ղկ. ԺԸ. 13**), եւ քանանացին՝ զդստերն վտանգեցելոյ՝ զբժշկութիւնն: 3 Եւ բազումք հաւասա՛ր սոցա ըստ հաւատոյն հայցմանն առին զշնորհս եւ զպարգեւս ողորմութեանն յԱստուծոյ:*

Է. 1 *Իսկ երկրորդ ընդունելութեան աղաւթիցն է տեղին պատշաճաւոր, որ է՛ եկեղեցի սուրբ, շինեա՛լ արեամբն Քրիստոսի* |295ա| *ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից: 2 Եւ, զոր աւրինակ, թագաւորացն է՛ ատեան դատողական յարքունական պաղատանն, որ թէպէտ եւ զաւրութիւն տերութեան թագաւորին ի վերայ ամենայն աշխարհա՛ցն է, բայց ինքնութիւն փառացն ի տանն պարփակի: 3 Վասն որոյ հա՛րկ է անդ զերկրպագութիւնն մատուցանել: 4 Այսպէ՛ս եւ Աստուծոյ իշխանութի՛ւնն եւ նախախնամական զաւրութիւնն ի վերայ ամենեցո՛ւն է, բայց ինքնութիւնն փառացն յեկեղեցւոջ իւրում է, զի վասն այսորի՛կ հաճեցաւ անտանելի բնութիւնն շինե՛լ ինքեամբ չափ բնակութիւն, որպէսզի հնարաւոր լիցի մեզ լալով եւ պաղատանաք խնդրել եւ ի տան իւրում գտանել զնա: 5 Վասն որոյ այն, որ հաճեցաւ բնակի՛լ ի սմա, տա՛ մեզ պաղատելոյ եւ հայցման՝ մարգարէին*[2] *ասելով. «Զորս սորա՛ է աւրհնելով աւրհնեցից, եւ զաղքատս սորա ի բարեաց գործոց լցուցից հոգեւո՛ր եւ երկնաւոր հացիւ» (**Սղմս. ՃԼԱ. 15**):*

Ը. 1 *Իսկ երրորդ պատճառ ընդունելութեան աղաւթիցն է ներգործութիւն անձին իրաց աղաւթականին. սուրբս լինե՛լ ի խաւսելն ընդ սրբոյն, ըստ մարգարէական ձայնիս «Յաղաւթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի»*[3] *(**Սղմս. ԼԱ. 6**): 2 Սո՛ւրբս կոչէ զայնոսիկ, որք աւազանին սրբութեամբն անսխալապէս կա՛ն յանմեղութեան, եւ սո՛ւրբ են ի խղճէ մտաց՝ անգայթակղելի մնացեալ ի մեղացն գլորմանէ: 3 Իսկ երկրորդ սրբութիւն ասի* |295բ| *ա՛յն, յորժամ յետ մարդկաւրէն սխալանացն եւ աղտեղելոյ զանապական պատմուճան հոգւոյն, վերստին սրբեալ*

---

[1] *Կ ժտեա ի տեառնէ եւ նա տացէ քեզ զխնդութիւն որպես*
[2] *Կ մարգարէութիւն*
[3] *Կ > ընդունելի*

մաքրի ի բով ապաշխարութիւնն՝ ուղեղ խոստովանութեամբն[1] արդարացեալ եւ ի մեղացն գարշութենէ սրբեալ։ **4** *Այլեւ սուրբ սրտիւ կալով յաղաւթս, յանմաքուր խորհրդոց սուրբ լինելով, եւ աննենգ եւ անկեղծաւո՛ր սիրով լինել առ մարդիկ եւ ոչ ծածկել խաբեութեամբ զդառնութի՛ւն մեղաց ընդ քաղցրութեան որակաւ, իբրեւ զդեղս մահացու, որ եւ այսպիսի աղաւթք ընդունելի՛ լիցին Աստուծոյ։* **5** *Եւ յորժամ[2] գիտէ, թէ ինքն ո՛չ անլուր եղեալ առ ինքն պաղատողի, յա՛յնժամ հաւատասցէ, թէ տեսողն ծածկելոց սրտին ընդունի զաղաւթս մատուցողին։* **6** *Եւ յորժամ անոխակալ սրտէ՛ իցէ, եւ հաշտեա՛լք իցեն ի խռովութենէ, ըստ Տեառն բանի, թէ՝ «Երթ նախ հաշտեաց ընդ եղբ[աւր քում] եւ ապա եկ[եալ] մատուսջիր զպատ[արագ քո]» (**Մտթ. Ե. 24**)։ Ով մեծի մարդասիրութեանն զի՛ւր պաշտաւնն խափանե՛լ տայ վասն սիրոյ եղբաւրն, զի եւ այն պատարագ մեծ է առաջի Աստուծոյ եւ պատճառ ընդունելութեան աղաւթիցն։*

Թ. **1** *Իսկ չորրո՛րդ է խորհրդական ժամն ընդունելութեան աղաւթիցն, որ է ժամ սուրբ պատարագին երրորդ ժամ աւուրն, յորում ժամու եւ տէրն ի խաչին պատարագեցաւ եւ իւրով անմեղ մահուամբն ի դատապարտութենէ մեղացն մահու եւ անիծիցն ազատեաց զմեզ։* **2** *Եւ արեամբն անա|296ա|պական ի ծառայութենէ բանսարկուին գնեաց զմեզ։* **3** *Եւ արդարութեամբն իւրով զգիր պարտաւորութեան մերոյ պատառեաց, եւ անմահական կեա՛նս մեզ պարգեւեաց, եւ զյիշատակ կենարար մահուանն յառաջ, քան զժամ մահուն աւանդեաց միշտ զայն առնել ի յիշատակ նմա եւ կատարել զխորհուրդ փրկութեան մերոյ եւ մատուցանել զյիշատակ մահու Միածնին նուէ՛ր[3] հաշտութեան Հաւրն գթածի եւ մարդասիրի։*

Ժ. **1** *Յաղագս որոյ ասէ մարգարէս «ժամ ընդունելի»։* **2** *Վասն զի ընդունելի՛ է ժամ պատարագին[4], որ եւ ասի յիմաստնոց, թէ երեք ժամանակ ասի Քրիստոսի յաթոռ դատողական նստել, եւ արդարադատ կշռովք առնել իրաւունս դատաստանի։*

ԺԱ. **1** *Եւ է առաջին աթոռ խաչն, յորում բարձրացաւ։* **2** *Ըստ ա՛յնմ՝ «Նստար յաթոռ դատաւոր արդարութեան» (**Սղմս. Թ. 5**)։* **3** *Եւ ըստ որում ինքն Տէրն ասէր՝ «ի դատաստան եկի յաշխարհս» (**Յվհ. Թ. 39**)։*

---

[1] *Կ խաւսութեամբն*
[2] *Կ որ] յորժամ*
[3] *Կ > նուէր*
[4] *Կ Սուրբ պատարագին*

ԺԲ. 1 *Իսկ երկրորդ աթոռ դատաստանի*[1] *ասի սեղանն, յորում բարձրացեալ բազմի, եւ ամենայն երկնային զաւրքն իջեալ սպասաւորեն։* **2** *Եւ որպէս ասէ Լուսաւորիչն մեր Գրիգորիոս*[2]*, թէ՝ «Ամենայն աւուր բարեա՛ց գործքն մեր եւ անաւրէնութիւնք մեղացն կշռին յարդա՛ր կշիռ իրաւանցն Աստուծոյ, եւ ի հակել ծանրութեան մեղացն, դնեն հրեշտակք ի կողմ արդարութեանն զխորհուրդ պատարագի ամենայն աւուր, որ միշտ մատուցանի»։* **3** *Եւ այսպէս առաւելեալ կողմ արդարու|296բ|թեանն Քրիստոսի պատարագին աւգնելով, անտե՛ս առնէ երկնաւորն Հայր զմեղացն մեր համար, որպէս եւ ի ժամ խաչին եթող զպարտս մեղաց ամենայն աշխարհի։*

ԺԳ. 1 *Իսկ երրորդ*[3]*. դատաստանի աթոռ ասի դատողական ատենին ահեղ եւ մեծի աւուրն, որ է միւս անգամ գալստեանն, զոր եւ առնէ անաչառ եւ անկաշառ դատողութեամբ։*

ԺԴ. 1 *Իսկ այժմ, որքան եմք յաշխարհի եւ տամք ամենայն աւուր նուէր հաշտութեանն Հաւր զՈրդի, ի շնորհա՛ց եւ յողորմութեանն աթոռն ասի*[4]*, զոր եւ առաքեա՛լ ասէ*[5] *«Ժամանակ ընդունելի եւ աւր*[6] *փրկութեան»* (**Բ. Կրնթ. Բ. 2**)*։* **2** *Զսո՛յն իսկ եւ մարգարէս ժամ աղաւթից ընդունելի* (**հմմտ. Սղմս. ԼԱ. 6**)*, յորում ժամու աղաչեն հրեշտակք եւ հրեշտակապետք վասն մեր, ունելով իւրեանց աւգնական զխորհուրդ պատարագին եւ նովաւ շարժեն ի գութ զբնութեանս Արարչին։* **3** *Զոր աւրինակ մարդիկ ոստս ձիթենեաց հատանելո՛վ շարժեն զթագաւորս տնկովն յողորմութիւն եւ մարդասիրութիւն նոցա յիշեցուցանեն, նոյնպէս եւ հրեշտակք յայնժամ, փոխանակ ոստոց ձիթենեաց, զնո՛յն ինքն զտէրունական մարմինն առաջի դնեն եւ աղաչե՛ն յաղագս մարդկային բնութանս զխորհուրդ տնաւրէնութանն, որ վասն նոցա յիշեցուցանեն եւ ի գութ քաղցրութեան ածեն զնա, որ վասն մեր զա՛յն ամենայն կիրս փրկագործս յանձի՛ն կրեաց, զմեզ ի մեղաց ազատելով։* **4** *Վասն որոյ*[7] *ժամ ընդունելի ասեմք զժամ պատարագին, զի որ ի խաչին պատարագեցաւ, իբր ի վերայ*[8] *սեղանոյ, եւ այժմ զնոյն նշան խաչի ընդ ամենա՛յն*[9] *տեղիս տեսանելով, զի թեւոցն տարածմամբ անբարբառապէս բարեխաւսէ եւ |297ա| զչարչարանս Միածնին Հաւրն յիշեցուցանէ։* **5** *Եւ Հայր հայելով ի մարմին Բանին իւրոյ, «ի*

---

1 *Կ դատողական*
2 *Կ գրիգոր*
3 *Կ չորրորդ*
4 *Կ նստի*
5 *Կ ասէ ահա*
6 *Կ ահա աւր*
7 *Կ այն] որոյ*
8 *Կ > վերայ*
9 *Կ այնմ*

բացումն տիգին եւ ի խոցումն գեղարդեանն, որ ո՛չ է կցեալ, այլ համագաղափար մեր, սպիացեալ մնայ ի յարուցելումն», որպէս եւ ասէ ոմն ի սրբոցն։ 6 *Եւ զինչ այլ այս, եթէ ոչ զմշտնջենաւորութիւնն եւ զյարակայութիւնն*[1] *այս սուրբ զենմանս հաւատարմասցուսցէ, որպէս յայն ժամ ի խաչին տեսեալ հաշտեցաւ ընդ մեզ մահուամբ Որդւոյ իւրոյ, զնոյն զենումն այժմ ի վերայ սրբոյ սեղանոյս տեսանելով, անտե՛ս առնէ զսխալանսն մեր աւրստաւրէ։* 7 *Եւ վասն այնորիկ տեղին սպիացեալ մնայ ի յարուցելումն մարմին մինչ ի վախճան աշխարհի, զի որքան ի մարմնի եմք եւ մեղանչեմք կամայ եւ ակամայ, վասն այսմ մեծի խորհրդոյս թողութիւն մեղաց գտանեմք, զի որ այժմ ի վերայ սրբոյ սեղանոյս տեսանի, զնո՛յն զեկուցանէ խորհուրդ։*

ԺԵ. 1 *Վասն այնորիկ եւ խորհո՛ւրդ կոչեմք, զոր յայսմ սոսկալի ժամուս կատարի, զի այլ՝ ինչ տեսանի, եւ ա՛յլ իմանի։* 2 *Զի որ երեւիս հա՛ց եւ գինի, եւ որ իմանի մարմին եւ արիւն որդւոյն Աստուծոյ, դարձեալ խորհուրդ կոչի, զի յայտնի՛ եւ բացափայլագո՛յն է սրբոցն, եւ ծածո՛ւկ եւ թաքնաբար եւ անյայտ պղծոցն եւ անարժանիցն։* 3 *Ըստ այնմ. «Մի՛ տայք զսրբութիւնն շանց»*[2]*։* 4 *Եւ զոր աւրինակ թագաւոր ընդ իշխանակիցս իւր ի խորհուրդ մտանէ, վասն խաղաղութեան եւ շինութեան աշխարհին եւ յաղթութեան թշնամոյն, եւ հարկ է իշխանացն առ տէրն իւրեանց համարձակապէս խաւսել վասն բարութեան աշխարհին, այսպէս եւ քահանայքն խորհրդակիցք են Աստուծոյ. աւ|297բ|ուր աւուր ի խորհուրդ մտանեն, զՄիածնի Որդւոյն զչարչարանսն յուշ ածեն եւ հաշտութիւն խնդրեն յերկնաւոր Հաւրէն։* 5 *Վասն որոյ ասէ. «Յաղ[աւթս] կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդ [ունելութեան]»։*

ԺԶ. 1 *Եւ ընդունելի ժա՛մ է ժամ պատարագին, զի զմարմին եւ զարիւն Որդւոյն Աստուծոյ ունիմք նուէր եւ պատարագ հաշտութեան։* 2 *Զոր աւրինակ ծառայք Տեառնն մատուցանեն պատարագ ըստ կարի, եւ ակն ունին առնուլ թագաւորէն զողորմութիւնն։* 3 *Եւ զի Քրիստոս ի խաչին զմարմինն եւ զարիւնն իւր պատարագեաց Հաւր եւ զյանցանս մեր եբարձ, վասն որոյ ի մեղանչելն մեր ի ժամանակի կենցաղոյս զաւանդեալն ի Քրիստոսէ զմահուն իւրոյ յիշատակ Աստուծոյ Հաւր պատարա՛գ մատուցանեմք՝ վասն թողութեան յանցանաց մերոց։* 4 *Եւ յայսմ պատարագի խառնելով զաղերս պաղատանաց աղաւթիցս, հաւատամք՝ ընդունելի*[3] *լինի։* 5 *Վասն որոյ ասէ. «Յաղաւթս կացց[են] ամենայն սուրբք ի ժամ*

---

[1] *Կ զյարականութիւնն*
[2] *Տե՛ս «Դաւիթ Անյաղ փիլիսոփայի մատենագրութիւնէ... Վենետիկ 1932 էջ 14։*
[3] *Ա ընդելի (Կ ընդունելի)*

ընդ[ունելի]։ **6** *Զի յայսմ ժամու, յորում բաշխի մարմին եւ արիւն Որդւոյն Աստուծոյ, ի միասին եկեալ զանազան բազմութեանս՝ սովաւ ի միանձնաւորութիւնն, վասն որոյ եւ հաղորդութի՛ւն անուանեմք, զի ի մարմնական վայրաքարշութեանց այլայլեալքն՝ սովաւ գան ի միատեսակ աստուածանմանութիւն։* **7** *Նոյնպէս եւ անդամքս Քրիստոսի խտրոցեալ մեղաւք միանամք ապաշխարութեամբ։* **8** *Եւ իջանէ կենդանութիւնն ի գլխոյն մերմէ Քրիստոսէ յանդամքս, եւ լինիմք մի՛ հոգի ի բաժանեալ մարմինս, եւ խոստովանութեամբ*[1] *մաքրեալք եւ հաղորդեալքս միոյ Հոգւոյ եւ ի միոյ Մարմնոյ, եւ յարենէ Տեառն ճաշակելով։* **9** *Եւ յաղագս այսպիսի յուսոյ «յաղաւթս կ|297գ|ացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի»։*

ԺԷ. **1** *Եւ արդ, զի ընդունելի է Աստուծոյ այս ժամ աղաւթից, վասն զի բացեա՛լ են դրունք ամենառատ ողորմութեան նորա, մի՛ հեղգ գտանելով*[2] *ի ժամոյս յայսմիկ, զրկեսցո՛ւք զանձինս յայսքա՛ն մեծութենէ պարգեւիս, այլ զամենայն հոգս մարմնական եւ զամենայն յոյս շահավաճառութեան թողեալ*[3]*, այսմ անկապոյտ գանձոյ զանձինս հաղորդս արասցուք։* **2** *Եւ զոր աւրինակ հաւաքումն որդւոց զմայր որդէսէր զուարճացուցանէ, այսպէս եւ միոյ աւազանի ծնունդք միոյ մաւր՝ եկեղեցւոյ ժողովմամբն իւրեանց՝ ուրախ առնեն զմայրս մեր հոգեւոր։* **3** *Վասն որոյ գլուխն մարմնովն եկեսցէ այսինքն՝ այրն կնաւն եւ մակամբքն ծնիցելովք, զի եթէ ծառ վայելուչ է տեսանել, որ յերկրէ ունիցի շառաւեղս ի վեր բուսեալ, եւ բազմախիտ տերեւովք զուարճացեալ, որչա՞փ եւս առաւել զմարդ մանգամբք, քան զամենայն ձիթենի քաջազուարճ եւ գեղեցիկ է տեսանել։*

ԺԸ. **1** *Յայսմ ժամու, յորում յաղթեա՛ց Տէրն զթշնամին կենաց մերոց, մարտիցո՛ւք եւ մեք՝ Քրիստոսի զինուորքս եւ յաղթեսցո՛ւք*[4]*։* **2** *Եւ զոր աւրինակ աղեղնաւոր ուղե՛ղ կայ ընդդէմ նպատակին նկատե՛լ զնետաձգութիւն, նոյնպէս եւ դու, որ հանդերձեա՛լ ես նետաձիգ լինել ի գլուխ բանսարկուին, զխորհուրդտ ուղղեա՛։* **3** *Ըստ որում ի ժամուս յայսմիկ խրատիմք ի սարկաւագէն*[5]*. «Ահի՛ւ կացց[ուք] երկեղ[իւ] բարիոք կացց[ուք]»*[6]*։*

ԺԹ. **1** *Յայսմ ժամու փարատեցաւ սուգ մեղաց եւ անիծիցն Ադամայ։*

---

[1] *Կ խստութեամբ*
[2] *Կ զի հեզ գտցուկ] մի հեղգ գտանելով*
[3] *Կ թողեալ*
[4] *Կ յաղթեսցուք սատանայի*
[5] *Կ սարգաւագէն որ ասէ*
[6] *Քաղվածք Ս. Պատարագից։ Տե՛ս «Ժամագիրք Հայաստանեայ Ս. եկեղեցւոյ՝ արարեալ Թարգմանչաց մերոց Սահակայ եւ Մեսրովբայ...» Վաղարշապատ, 1902, էջ 534։*

2 Փարատեսցո՛ւք յոգոց մերոց զխաւար մեղաց եւ զտրտմաբեր յանցանացն։ 3 Զի զոր աւրինակ ամպոցն խստութիւն ի սկզբ|297դ|անն մթագոյն առնէ զաւդն, իսկ ի թափել անձրեւացն խաղաղական եւ պայծառ գործէ զտեսիլն, նոյնպէս եւ տրտմութիւնքն[1] ցորքան ի ներքս ամբոխին՝ խաւարեցուցանեն զմիտսն, բայց յորժամ աղաւթիւք եւ արտասուաւք թափէ՝ յոգին ամբարէ զպայծառութիւնն։

Ի. 1 Մի՛ ոք ի ժամոյս յայսմիկ անմասն յաստուածայինս պարգեւաց մնասցէ, եւ կամ դատարկ յընծայաբեր լինելոյ Աստուծոյ[2]։ 2 Եթէ յարքայական պատուոյ[3] կամ յիշխանական ճոխութենէ իցես, ընդ մոգուցն փութասցիս[4], զի զԲանն Աստուած բազմեալ ի մսուր տեսանիցես, անդ՝ ի յայրին եւ աստ՝ ի խորանի Աստուծոյ. անդ՝ յանբանից մսուր եւ աստ՝ ի սրբութեան սեղանոյս անդ՝ խանձարրաւք եւ աստ՝ սուրբ կտաւովք։ 3 Նոքա ոսկի պայծառ իբրեւ թագաւորի, դու զանբիծ հաւատս ուղղափառութեանն։ 4 Նոքա կնդրուկ որպէս Աստուծոյ, դու՝ վարս անուշահոտ, զոր սիրէ Աստուած։ 5 Նոքա զմուռ, որպէս մեռելոյ, դու զախտս մարմնով[5] մեռուցանել վասն մահուն Քրիստոսի։ 6 Նոքա զաստղն պայծառափայլ, դու զարդարութեան արեգակն զՔրիստոս։ 7 Թագաւո՛ր էր եւ Հերովդես, այլ վասն նենգութեան բարուցն զրկեցաւ[6] յայսմ բարի պարգեւաց։

ԻԱ. 1 Եթէ կարաւտի՛ ոք գերեզմանին Քրիստոսի կամ ահեղ աւուրն, յորում բեւեռեալ կայր Տէրն ի խաչին, զհաւատոյ աչսն բացեալ զնո՛յն խորհուրդ տեսանէ ի վերայ սրբոյ սեղանոյս. «Մշտնջենաւո՛ր եւ անմա՛հ զենմանն տեղի եւ աստուածային մարմնոյն խորհրդական սպասիւք ծածկողի՞ ըստ գերեզմանին գովելոյ, յորում միշտ փառաւորեմք զՓրկիչն մեր Յիսուս Քրիստոս ընդ Հաւր եւ ամենայ|298ա|սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ[8]։

---

1 Կ տրտմութիւն
2 Կ > աստուծոյ
3 Կ > եթէ ... պատուոյ
4 Կ փարթամասցիս
5 Կ > մարմնով
6 Կ զրկեալ եղեւ
7 Կ ծածկողին ծածկողին
8 Սրան, նոյն ձեռագրով, հետեւում է այսպիսի յիշատակագրութիւն. «Ով սուրբ եւ երջանիկ բաբունի Ստեփ[աննոս], զվերափոխեալ եղբայրն իմ յիշե՛ա առաջի զենմանն Քրիստոսի եւ Քրիստոս զքեզ յիշէ յիւր զարհուրելի գալուստն»։

ԻԸ.

|298ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԵԶՆԿԱՑՈՅ ԱՍԱՅՈՒԱԾ ԲԱՆԻ Ի ՃԼԱ. ՍԱՂՄՈՍԷՆ. «ՔԱՀԱՆԱՅՔ ՔՈ ԶԳԵՑՑԻՆ»1

Ինչպես միջնադարյան այլ հայ նշանավոր հեղինակների՝ Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Մխիթար Գոշի, այնպես էլ Հովհաննես Պլուզի ստեղծագործություններում հավատի թուլացման, բարեի անկման, հոգեւոր արարողությունները քահանաների կողմից առանց տվյալ ծիսակատարության ներքին՝ խորհրդանշական իմաստի մեջ խորանալու, անպատշաճ եւ թերի կատարելու մասին դատողությունների հաճախ ենք հանդիպում:

Հարկ է ենթադրել, որ Երզնկացու այս ընդհարձակ ճառը այդ իմաստով շատ պահանջված էր: Հեղինակը սկզբում անդրադառնում է այն հարցին, թե ի՛նչ է իրենից ներկայացնում քահանայությունը, ե՛րբ, ո՛ւմ կողմից եւ որտեղի՛ց առաջ եկավ այն, ապա մանրամասն նկարագրում է երկնային եւ երկրային քահանայության եւ քահանայապետության դասերի աստիճանակարգությունը:

Բացառիկ մանրամասնությամբ նկարագրելով քահանաների օծման ծեսը, բացատրում է ծիսակատարության յուրաքանչյուր հատվածի խորհրդանշական իմաստը: Նույն բծախնդրությամբ վերից վար նկարագրում է հոգեւորականության տարբեր աստիճանավորների կանոնական պարտադիր զգեստավորումը: Բազմիցս նշվել է, որ Երզնկացու ճառերն ու քարոզները ինքնին գիտության ու արվեստի ամենատարբեր բնագավառների ուսումնասիրության համար մեծ արժեք ունենալով հանդերձ, երբեմն հետաքրքիր անակնկալներ են պարունակում գիտության ու արվեստի զանազան ճյուղերի՝ շինարարության, ճարտարապետության, նկարչության վերաբերյալ: Նման անակնկալներից մեկն էլ, անշուշտ, այս ճառում առկա բացատրությունն է, թե նկարիչներն ինչ սկզբունք էին կիրառում մարդուն պատկերելիս: Ըստ Երզնկացու՝ «ամենախմաստ» նկարիչները մարդուն պատկերելիս նկարել են ոչ թե վերից վար, այլ հակառակը՝ սկսելով ոտքերից մինչեւ գլուխը:

Կարծում ենք, որ այս ակնարկը պետք է հետաքրքրի հայ եւ ընդհանրապես քրիստոնեական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին: Ավելացնենք, որ Երզնկացին այս երեւույթը բացատրում է այն փաստով, որ Տէրը առաքյալներին նախ պետք է բժշկեր մարմնական ախտերից, բժշկելով բոլոր անդամները՝ սկսելով ոտքերից, եւ ապա նրանց հոգին բարձրացնել Լեռը եւ լիովին նվիրեր պատարագին:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա) ձեռագրի՝ 298ա-319բ, 334ա-336բ, 320ա:

---

[1] *Խորագիրն այլ ձեռքի նոտրգրով է:*

Ա. 1 *Յիսկական եւ բուն բարւոյն բնաւորեալ են բարեացն ամենայն առատաբաշխ բարետրութիւնք, ըստ առաքելական բանին, եթէ «Ամենայն տուրք բարիք եւ պարգեւ կատ[արեալք] ի վերուստ [են իջեալ] առ ի [Հաւրէն] լուսոյ» (Յակ. Ա. 17) զի նա է ամենայնի պատճառ եւ լցողական, որ մասամբ զբոլորման պայման պահելով, եւ ո՛չ մասն եւ ոչ բոլոր գոլով, զի ի վեր է, քան զնոսա:* 2 *Եւ բոլոր եւ մասն, որպէս զամենայն, եւ մասն եւ բոլոր յինքեան առեալ եւ գերագոյն եւ նախ ունելով:* 3 *Կատարուն յանկատարսն, որպէս կատարողապետ, իսկ անկատար ի կատարեալսն, որպէս գերակատար՝ տեսակ տեսակ արար յանտեսակսն, որպէս տեսակապետ, անտեսակ ի տեսակս, որպէս գերատեսակ:* 4 *Էութիւնն ամենայն էութեան եւ յամենայն էութենէ արտաքս որոշեալ:* 5 *Պատճառ ամենայնի եւ ինքն անսկիզբն եւ անպատճառ, որ եւ կալո՛վ եւ շարժմա՛մբ զլինելութիւն այնոցիկ, որ ո՛չն են, եւ զկալ մնալ էիցն հնարեցաւ:* 6 *Այսինքն՝ կալով եւ դադարմամբն երկրի եւ արագապէս շարժմամբն երկնի, որպէսզի լինել որ ինչ յեսս է, ծնունդ շարժման եւ կայանի, որ եւ սահման ասի բնութեան:* 7 *Վասն զի բնութիւնն, որ է աստուածային արուեստ, շարժութեամբն երկնի եւ կայական բնութեամբն երկրի գոյացուցանէ զամենայն մասունս աշխ|298բ|արհի, սքանչելի իմն եւ աստուածային արուեստիւն:* 8 *Վասն զի ըստ գործոյն բազում հեռաւորութեամբ ի միմեանց բաժանեալ են. հաստատուն բնութիւն եւ անհաստատ շրջաբերութիւն, զի ոչ երկիր յիւր կայէն փոփոխեալ լինի, եւ ոչ երկին ուժգնութեան թոյլ տայ:*

Բ. 1 *Արդ, այսքան ընդդիմացս եւ հեռաւորացս ի միմեանց բաժանեցելոց, ի ձեռն միջնատարերցն մասամբ առընթեր եղելոցն կցորդութիւն կալեալ, եւ հակառակաց ծայրիցն՝ հաղորդութիւն եւ խառնուած:* 2 *Քանզի առ մշտայխաղաց եւ հրային բնութիւն երկնի նմանութիւն ունի աւդ ջերմ եւ թեթեւ բնութեամբն եւ առ ի շարժումն դիպաւորապէս:* 3 *Իսկ ի հաստատուն բնութենէ երկրի ո՛չ աւտարացեալ, զի ո՛չ յաւէտ անշարժ է եւ ոչ հանապազ հոսանուտ, այլ առ երկոսեանն ընտանութեամբ, միջնասահման ընդդիմակացն լինի:* 4 *Ըստ սմին բանի եւ ջրոյ բնութիւն, ծանրութեամբն երկրի գոյ ազգակից եւ ըստ հոսանուտ ծորմանցն եւ գնայուն գործոյն ո՛չ ամենեւին ի շարժել ի բնութենէ երկնի աւտարացեալ, այլ է եւ ի ձեռն սորա խառնուած ընդդիմակացն:* 5 *Եւ այսպէս շարժմամբ եւ հաստատուն կայիւք պնդեալ պահէ զեղական բնութիւն արարածոցս:*

Գ. 1 *Արդ, նոյն հրաշագործ եւ ամենիմաստ արուեստ հանճարոյ եւ զարմանագործ արարչութիւնն աստուածային յերկուս բաժանի՝ յառաջին եւ յերկրորդս. զոմն լինելութեամբ յոչ էից, եւ զոմն նորոգմամբ յապակա-*

նութեանց։ 2 *Եւ որքան տաժանելի՛ է երկրորդս, քան զառաջինն, այնքա՛ն հրաշափառագոյն եւս, զի որ|299ա|քան յայնժամ ի վեհագունէն ետ բարեաց ամենայնի սկզբնատիպն զփառաւորութիւն բարձրութեան իւրում պատկերին, ի վերջին նորոգմանս առնու ի վատթարագունէ ի մերմէ բնութենէս, զի վերստին տացէ մեզ զանմահ եւ զանապական բարեացն նմանութիւն։* 3 *Եւ նորոյ երկնի եւ նորոյ երկրի, ըստ մարգարէին՝ արար հաղորդութիւնն, միջնորդութեամբ անապական մաքրութեամբն Մարիամու, որով հաղորդութիւն եղեւ երկուց բնութեանցն. երկնայնոյն եւ իմանալոյ ընդ երկրային եւ զգալի, ծանր եւ վայրաքարշ բնութեանս, եւ միացեալ յԱստուածն Բան՝ անորիշ եւ անքակ միաւորութեամբ, որով արար զեկեղեցի երկին ի վերայ երկրի։*

Դ. 1 *Ի նոյն նմանութիւն դասու եւ կայանի յերիս երրեակս բաժանեալ քահանայապետութիւն, ըստ նոցա պաշտամանն եւ մշտնջենաւոր փառատրութեանն։* 2 *Զոր եւ կազմեաց բարձրացեալ բազկաւ Բանն Հաւր եւ եդ համանմանս գերազարդիցն։* 3 *Նախ զառաքեալս, երկրորդ՝ զմարգ[արէս], երրորդ՝ զվարդ[ապետս] եւ զայլսն ըստ կարգի, զորս բացայայտէ աստուածայինն առաքեալ։* 4 *Վասն զի ի ճշմարիտն Աստուած միակն բնութիւն ո՛չ մի զաւրութիւն է, այլ բազում, եւ իւրաքանչիւր ոք իւրապէս զիւրն ունի, զի որ ծնաւն մաքուր ծննդեամբ ի Կուսէն, ետ մեզ ծնունդ հոգեւոր ի կոյս աւազանէ, զի եւ եկեղեցի աստուածածին գոլով՝ ծնանի զորդիս մարդկան յորդիս Աստուծոյ։* 5 *Եւ ըստ որում կոչեցաւ Բանն Հաւր փեսայ հարսին եկեղեցւոյ. արկ զբանն իւրական ի մաքուր արգանդ նորա, որ եւ ծնանի զմանկունս իւր ի փառս բարձրագոյնս եւ մեծարէ |299բ| յաշտիճանս անճառելի՛ շնորհաց։* 6 *Եւ զորս արար ինքեամբ աստուածաբար, գործ է եւ ի ձեռն այլոց նախախնամական զաւրութեամբ, զի ո՛չ միայն պարզաբար արարիչ է Աստուած, այլեւ արարչագործ։* 7 *Վասն որոյ Արարիչ գործեաց զմարդ զպատկերն իւրական, եւ զոր ինչ արար՝ միշտ առնէ զաւրութեամբն ամենակարող, ինքն եղեալ քահանայապետ քաւութեան մերոյ եւ պատարագ՝ փոխանակ պարտեաց մերոց յանցանաց։* 8 *Հոգւովն Սրբով տնաւրինեալ զամենայն, ե՛տ եւ մարդոյն զայս մասն շնորհաց առնուլ ի շնորհաբաշխ բարւոյն, տալ եւ զնոյն համասեռից զՀոգի՛ն Սուրբ ունելով տնաւրէն գործոյն։* 9 *Զի ամենայն կարգք եւ աշտիճանք նովաւ լինին յաջողեալ, ըստ առաքելոյ, թէ՝ ումեմն ի հոգւոյն տուեալ է բան իմաստութ[եան], այլում բան գիտ[ութեան]։* 10 *«Զայս ամենայն յաջողէ միեւնոյն Հոգի»* (**Ա. Կրնթ. ԺԲ. 8, 11**)*, որում եւ մեք ակն-*

կալեալ ժողովեալքս, յանունն ահաւոր եւ պարգեւաբաշխ, զի եկեսցէ եւ հանգիցէ ի ժողովս եւ ի տաճարս սուրբ, եւ տաճարացուսցէ ինքեան զնուիրեալսս ի գործ հոգեւոր պաշտաման։

Ե. 1 *Տացէ եւ մեզ բան բաւակա՛ն լինել բացատրել զխորհուրդս խորինս քահանայական ներգործութեան։* 2 *Եւ թէ ո՛չ ըստ բաւականին, այլ որքան ինքն կամեսցի։* 3 *Ամենա՛յն իրաւք մերձ կացցէ Հոգին հանճարոյ եւ իմաստութեան, եւ կենդանութիւն մերոց հոգւոց, որպէսզի եղիցի բանս մեր եւ արդիւնս հոգեպէս եւ հանճարեղաբար։* 4 *Բայց նախ զաւրացեալ Հոգւովն՝ քննեսցուք. առաջին, թէ զի՞նչ է քահանայութիւն, երկրորդ՝ |300ա| ի քանի՞ս բաժանի քահանայութիւն, երրորդ՝ ուստի՞ սկսաւ կարգ քահանայութեան, չորրորդ՝ յորո՞ւմ տեղւոջ կամ ժամանակի ընգալեալ եղեւ աշտիճանաց սորա զանազանութիւն, հինգերորդ՝ որպիսի՞ անուամբք նշանակի բազմադիմի գործ վերակացութեան քահանայից եւ պատոյն առաւելութիւն վեցերորդ՝ վասն է՞ր տուաւ քահանայութիւն, եւթներորդ՝ որպէ՞ս է քահանայագործութեան աւրինակ, ութերորդ՝ զի՞նչ երկու ցուցանէ խորհուրդ վայելչական արարողութիւն, զոր ի ժամ ձեռնադրութեանն կատարեմք, իններորդ՝ զմարգարէական բանիս տեսցուք զմիտս, ըստ խորհրդոյ գործոյս զաւրացեալք ի նոյն Հոգւոյ, որ ի նա խաւսեցեալ երգեաց զբանս զայս. «Քահանայք քո զգեցցին»* (**Սղմս. ՃԼԱ. 9**)։

Զ. 1 *Արդ, եթէ զի՞նչ է քահանայապետութիւն եւ քահանայութիւնն եւ զի՞նչ նոցին դիպաւորութիւն։ Քահանայապետութիւնն է կարգ սրբազան, հանճա՛ր եւ ներգործութի՛ւն առ աստուածատեսակն նմանութիւն, որպէս հասանելի՛ է։* 2 *Եւ ա՛յս իսկ է դիտումն քահանայութեան առ Աստուած, որպէս հասանելի՛ է նմանութիւն եւ միաւորութի՛ւն, զնա ինքն ունելով ամենայն սրբազան հանճարոյ եւ ներգործութեանն առաջնո՛րդ։* 4 *Ի նմանէ լուսաւորի՛լ եւ զայլս լուսաւորե՛լ։* 5 *Որպէս հայելի՛ երկատեսակ եւ անաղաւտ ընդունել ի սկզբնալուսին եւ աստուածպետականին ճառագայթից եւ զնո՛յն դարձեալ առատապէս յա՛յլս վերափայլել*[1]։ 6 *Եւ քահանայապետութիւն, յորժամ ասիցէ ոք զսրբազան իմն՝ բոլորովին յայտնէ զզարդ, իբր գլխով զանդամս՝ զամենայն լրումն եկեղե|300բ|ցոյն նշանակելով։* 7 *Եւ զանազանի իբր սահմանադրութիւնն ի սահմանէ, եւ հանուր՝ ի մասնականէ. այսպէս քահանայապետութիւն ի քահանայապետէ։*

Է. 1 *Եւ է իւրաքանչիւր քահանայապետութեանն կատարումն, ըստ ընտանի համեմատութեանն՝ համբառնա՛լն յաստուածային նմանութիւնն, Աստուծոյ գործակի՛ց եմք»* (**Ա. Կրնթ. Գ. 9**), *որով ցուցանէ զաստուածա-*

---

[1] *Բնագրում՝ վերափայլեալ*

յին ներգործութիւն յինքեան երեւեալ, ըստ կարողութեան։ 2 *Որպէս եւ առադրի ի սահմանս իմաստասիրութեան. նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան։* 3 *Ուստի եւ զառաւե՛լ գերադրական պատիւ մերոյս քահանայութեան ճշմարիտ քահանայապետն Յիսուս Քրիստոս ցուցանէ. «Որ հաւատա՛ յիս, զոր ինչ Ե՛ս գործեմ՝ եւ նա գործեսցէ, եւ զմեծամեծս քան զնոյնն գործեսցէ» (*Յվհ. ԺԴ. 12*)։* 4 *Վասն զի նա յանկարաւտ գոլով տա կրկին շնորհս՝ իմանալի՛ եւ զգալի՛ մերոյս ստեղծուածոյ։* 5 *Եւ մեք կարաւտ բնութեամբ՝ զնոյն գործեմք, որ մեծ եւ հրաշափառագոյն։* 6 *Վասն որոյ քահանայութիւն է կարգ բարձր, աշտիճան սուրբ, որով բարձրանայ առ Աստուած ըստ կարի, եւ լինի գերագոյն, քան զամենեսեան, որոց քահանա՛յն է։* 7 *Եւ է միջնորդ բարձրութեան եւ նուաստութեան, որ բերէ ի վա՛յր եւ տանի ի վե՛ր, բերէ զբաշխումն աստուածային շնորհացն եւ խաղաղութեան, եւ տանի զհայցուածս եւ զպաղատանս եկեղեցւոյ, ի նե՛րքս մուծանէ եւ արտաքս հանէ յանհաւատութենէ ի հաւա՛տս, եւ յաստեացս ի հանդերձեալն։* 8 *Եւ ո՛չ ոք անձամբ առնու զքահանայութիւնն,* |301ա| *այլ կոչեցեալն յԱստուծոյ։* 9 *Եւ է՛ նա շնորհ աստուածեղէն սուրբ, որ ասէ ցքահանայսն. «Սո՛ւրբ լերուք, զի Ե՛ս սուրբ եմ եւ բնակե՛մ յարժանաւորսն»։* 10 *Որպէս լոյս ընդ աւդ միաւորեալ եւ հուր՝ ընդ երկաթ, ներքուստ ի ներքս խաւսի զկամս Աստուծոյ եւ դնէ ի սրտի զփականս արքայութեանն, եւ զբանալի դրանն երկնից. եւ մտին առ Աստուած։*

Ը. 1 *Եւ բաժանի քահանայապետութիւն բաժանմամբ եւ ստորաբաժանմամբ։* 2 *Զի նախ առաջին յերկուս բաժանի. յերկնային եւ յերկրայինս, որ է իմանալի եւ զգալի։* 3 *Եւ ապա ստորաբաժանմամբ բաժանի երկնայինն՝ յերի՛ս երրեակս դասուց եւ յերիս քահանայապետութիւնս։* 4 *Սապէս եւ երկրայինս ի նոյն նմանութիւն։*

5 *«Եւ է՛ առաջին քահանայապետութի՛ւն» երկնայնոցն, ի ծայրագունէն սկսեալ. Աթոռք, եւ Քերովբեք եւ Սերովբեք. երեք դասք։* 6 *Եւ Քահանայապետութիւնն մի՝ շուրջ զԱստուծով միշտ մերձաւորագոյն եւ անընդմիջաբար հաղորդեալք անճառ գիտութեան նորա եւ սիրոյ, որպէս մի՛ եւ համակարգք գոլով, «քան զորս ո՛չ է, այլ աստուածատեսակագոյն»*[1]*։*

Թ. 1 *Իսկ երկրորդ, որ յետ սոցա, միջին քահանայապետութիւնն երկնային՝ ի խոնարհ կոյս, քան զառաջինն եւ վեհագոյն, քան զվերջինսն, որք են Տէրութի՛ւնք, Զաւրութի՛ւնք եւ Իշխանութիւնք։* 2 *Ըստ որում, առաջինքն յԱստուածութենէ անտի, սոքա յառաջնոցն վեհից ընդունին միշտ*

[1] *Տե՛ս* Ս. Դիոնիսիոս Արիսպագացի. *Յաղագս երկնային քահանայապետութեան, VI, 2, էջ 19։*

զհոսումն իմաստութեան, իբր յաղբերէ բղխեալ վարդապետաւրեն։ 3 Եւ սոքա աշակերտաբար վարժին յառա|301բ|ջնոցն եւ հաղորդեցուցանեն երրորդին քահանայապետութեան. Պետութեանցն, Հրեշտակապետա՛ցն եւ Հրեշտակացն։ 4 Եւ սոքա ներհմտացեալք ի միջնոցն աստուածայնո՛յն իմաստից եւ քահանայապետեալք ի նոցունց, հաղորդեցուցանեն զմարդկային ազգս երկրածնաց, զի սոցա են կարգեալ վերակացու, եւ նախախնամիչք, եւ վերաբերողս յաստուածայինսն իմաստութիւն։ 5 Եւ այսպէս յառաջնոցն մինչ ի բուն նուաստագոյնսն իջանէ շնորհ քահանայութեանն եւ անճառաբար բաշխումն աստուածային իմաստութեան, ըստ յետին հնչման իմն ապացուցի։ 6 Բայց յաղագս ստուգաբանութեանն անուանց երկնային քահանայապետութեանցն եւ գործոյ փառաբանութեան նոցա, եւ կարգի եւ կայանի, յոլով ժամս ծախին առ ի քննութիւն։

Ժ. 1 Այլ այժմ վասն եկեղեցական մերոյս քահանայութեանն փոքր ինչ տեսցուք, ըստ համեմատութեանն երկնայնոցն դասուց։ 2 Արդ, է՛ առաջին դաս պատրիարգ, որ է հայրապե՛տ։ 3 Զգեստ նոցա առաքելակա՛ն եւ նափորտ հինգ կրկին։ 4 Որ ձեռնադրէ զարքեպիսկոպոս ի չորս կողմ երկրի եւ չորս եպիսկոպոս ունել ընդ ի՛ւր։ 5 Եւ հրամա՛ն տալ նոցա ժողով առնել վասն կարգաց եւ կրաւնից։ 6 Զսա Բ. (2) արքեպիսկոպոս ունին իշխանութիւն ձեռնադրելոյ։ 7 Երկրորդ, արքեպիսկոպոսք, որ Թարգմանին եպիսկոպոսապետք, եւ ունին նափորտ չորեքկին, ձեռնադրէ զայնս ամենայն, որ ի ստորն ինքեան։ 8 Երրորդ |302ա| դաս նետրապալիտք։ 9 Թարգմանին մայրաքաղաքացիք ծայրագոյն վարդապետք, որք ունին զնոյն սքեմ՝ նափորտ երեքկին։ 10 Չորրորդ. քորեպիսկոպոս. Թարգմանին այցելուք, սքեմ նոյն, նափորտ Բ. (2), կրկին ձեռնադրեն զվիճակաւորս, աւրհնել եկեղեցի, սեղան եւ աւազան։ 11 Հինկերորդ դաս. եփսունք եւ պապասք՝ Թարգմանին քահանայք եւ իրիցունք։ 12 Քահանայք՝ ի քաղաքս, իրիցունք ի գեղս։ 13 Նափորտ կրկի՛ն. պատարագ մատուցանել, մկրտե՛լ, աւազա՛ն եւ խա՛չ աւրհնել, եւ պատկե՛ր, եւ զամենայն կահս սրբութեան, եթէ հրաման առեալ է յեպիսկոպոսէն։ 14 Վեցերորդ. դիակոնք, որ են սարկաւագք. սպասաւո՛րք, սքեմ նոյն է նոցա, այլ հոլանի կալ եւ առանց գաւտոյ, զահեկ ուսովն արկանել ուրար. գործ է նոցա քարոզել եւ զհաց պատարագին առնել, զսկիհն ի սենեկէն բերել ի սեղանն, եւ զքշոցն, եւ ի սեղանոյն արտաքս ածել ի բաշխումն, ի սպասու կալ քահանային, խունկ ծխել, եւ զայլ ամենայն գործ սպասաւորութեան։ 15 Եւթներորդ դաս. կէս սարկաւագ. եւ սոքա ունին փակեղն զահեկ բազկովն, կապեալ ի վերայ արմ[ն]կանն՝ ի կախ ունելով կրկին. եւ գործ է նոցա ընթեռնո՛ւլ զառաքելական գիրս, կրել մոմեղէն եւ գրակալ. եւ զեկեղեցին

նոքայ |302բ| զարդարեն[1]։ 16 *Ութերորդ դաս. անագնոսք, որ կոչին գրակարդացք. գործ է նոցա ընթեռնուլ զգիրս եւ հաստատուն պահել զժողովուրդսն ի հաւատսն Քրիստոսի։* 17 *Ինն դաս. կղերք, որ թարգմանին մանկունք եկեղեցւոյ։* 18 *Գործ է նոցա ուսանել եւ կալ միշտ ի պաշտամանն ճշմարիտ հաւատով։* 19 *Եւ ոմանք անուանեն փսաղտք, որ են սաղմոսասացք։* 20 *Գործ է նոցա ասել ալելու եւ մեսեդի եւ սաղմոս։*

ԺԱ. 1 *Արդ, այսոքիկ այսպէս։* 2 *Բայց զի ո՛չ յերկնայնոցն էութեանց, ոմանք են ի թիւ իններեակ դասուցն, եւ ոմանք ո՛չ, այլ բոլոր եւ բովանդակ ամենեքեան։* 3 *Այսպէս պարտ է եւ յեկեղեցւոջ լինել. որ ինչ մի անգամ ի Քրիստոս հաւատացեալք են, պարտ է ամենեցուն լնուլ զթիւ ինն դասուցն։* 4 *Եւ է՛ ըստ սրբոյն Դիոնէսիոսի այսպէ՛ս. եպիսկոպոսապետ, եպիսկոպոս եւ քահանայ[2]։* 5 *Յերից դասուց քահանայապետութիւն մի, որ են առաջին եւ գեր ի վերոյ, շուրջ զսեղանովն։* 6 *Յաւրինակ աստուածութեանն Յիսուսի, եղեալ վասն մեր սեղան աստուածութեամբն, պատարագ հանեալ ի հաշտութիւն Հաւր զմարմինն, ի մերմէ՛ բնութենէս, հաստատեալ ի բեմին, որ է յերկինս երկնից։* 7 *Եւ սոքա հուպ գոլով ընծայեն զաղաւթս եւ իջուցանեն զխաղաղութիւն։* 8 *Եւ երկրորդ դաս՝ սարկաւագ, կէս սարկ[աւագ] եւ սաղմոսասացք։* 9 *Սոքա սպասաւորելով առաջնոցն, առեալ ի նոցանէ զառ ի յաստուածուստն պարգեւ, եւ իջուցանեն յետնոցն, եւ ուսո|303ա|ւցանեն ի ձեռն քարոզին, արժանաւո՛ր լինել շնորհին։* 10 *Երրորդ դաս քահանայապետութեան, սրբազան ժողովուրդքն, երախայքն եւ ապաշխարողքն։* 11 *Սոքա առնուն ի միջնոցն եւ յինքեանս նահանջեն։* 12 *Եւ թէ ուստի՞ է սկիզբն քահանայութեանս։*

ԺԲ. 1 *Արդ, սկիզբն քահանայական շնորհիս է անժամանակն Աստուած, որպէս եւ ամենայն բարեաց. քանզի «Ամենայն տուրք բարիք եւ պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հաւրէն լուսոյ» (***Յակ. Ա. 17***), յորոց առաջին եւ անդրանիկ է յայլսն պարգեւս այս քահանայական զարդ, զոր ինքնութեամբ անսկզբնաբար ունի ապենիազն Աստուած՝ ո՛չ յումեքէ առեալ եւ ոչ զոք ունելով գերագոյն ինքեան, որում քահանայեսցէ եւ փառաւորեսցէ։* 2 *Եւ վասն այնորիկ ո՛չ է ի ներքոյ հարկի միայն նորա քահանայութիւն, այլ բաժանելով եւ բաշխելով զշնորհս իւր է նա քահանայ։* 3 *Այս է առաջին եւ անստացական ի բնութենէ քահանայութիւն, անձինք երեք ծանաւթականք. ծնողի Հաւր եւ ծնիցելոյ Որդւոյ եւ*

---

[1] *301բ էջի վերին տողերից մինչեւ այստեղ կան այլ ձեռքով արուած ջնջումներ եւ լրացումներ։*
[2] *Տե՛ս Դիոնիսիոս Արիսպագացի. Յաղագս եկեղեցական քահանայապետութեան, VI, հ 1, էջ 1։*

ելողի Հոգւոյն սրբոյ, կատարելապէս իմացեալք եւ մնացեալք ի նոյն բնութեան եւ յէութեան, եւ յաստուածութեան եւ ի զաւրութե՛ն, եւ յանմահ մշտնջենաւորութեան, անզատապէս բաժանեալ եւ անխառնապէս միաւորեալ։

ԺԳ. 1 *Իսկ երկրորդ քահանայութիւն սկսանի առ զաւրս լուսեղինացն ի Հաւրէ, յՈրդւոյ եւ ի Հոգւոյ, գոյացութեամբն երկնի, որ է բնակութիւն նոցա եւ խորան անձեռագործ, բանիւ կատարեալք եւ հոգւով լցեալք, ըստ վկայութեան գրոց. «Ողորմութեամբ Տեառն լի [եղեւ երկիր] եւ Բանիւ Տեառն երկ [ինք հաստատեցան] եւ Հոգւով բեր[անոյ նորա] ամենայն զաւրութիւնք նոցա» (**Սղմս. ԼԲ. 6-7**) անմարմինք եւ անմահական |303բ| կենդանիք, մշտաշարժք ի բարիս եւ անշարժք ի չարիս։* **2** *Եւ թէ յաջողակ թուեսցի ումեք ասել դժուարաշարժս, յաղագս խաւարեալ Արաւսեկին, զոր ասեն առաջին եւ վեհագոյն ամենայն դասուց գոլ զնա (**Եսյ. ԺԴ. 12**)*[1]*։* **3** *Եւ յաղագս այնորիկ հպարտացեալ աստուածանալ կամելով անձամբ, որ է առաջին ցաւ մտեալ ի կամս բանաւորաց, եւ պատճա՛ռ անկմանն ի բարձրութենէ փառաց, եւ այլք կան եւ մնան, վասն զի խրատեցան առաջին հիւանդովն, եւ զի այժմ տեսանեն զՈրդին Աստուծոյ մարմնով եւ երկեւղ երեւեցելո՛յն պահէ զնոսա։* **4** *Որպէս առնէր անտեսութիւնն զանհոգութիւն, նախքան զմարդեղութիւն, տուաւ նոցա շուք եւ աշտիճան փառաց, այն զոր Դաւիթ ասէ. «Արար զհրեշտակս իւր հոգիս, եւ զսարկաւագունս իւր ի հուր անկիզանող» (**տե՛ս Սղմս. ՃԳ. 4**)։* **5** *Եւ դարձեա՛լ ասէ. «Աւրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա» (**տե՛ս Սղմս. ՃԽԸ. 2**)։ Եւ է գործ նոցա աւրհնել զԱստուած եւ փառաւորել, ըստ Եսայեայ եւ Եզեկիելի (**տե՛ս Եսյ. Ջ. 3, Եզկ. Ժ**)։*

ԺԴ. 1 *Այլեւ առաքինի սպասաւորութիւն այնոցիկ, որ ժառանգելոց են զարք[այութիւն]։* **2** *Եւ են բաժանեալ կարգաւ կայանին, առեալ զփառս եւ զիշխանութիւն վարդապետութեանն, որպէս ցուցաւ բաժանումն քահանայապետութեան նոցա եւ դասո՛ւց։* **3** *Եւ քանզի առաջինն գեղեցկապէս ունէր նմա խորան լուսեղէն, հրեղինաւք լցեալ պաշտաւնէիւք, անճառելի՛ փառաւք, եւ անթիւ բազմութեամբ եւ անքանակ բարձրութեամբ։* **4** *Երկրորդ ապա ստեղծանէր Բանի՛ւ, հաստակառուց հիմամբ եւ աննեցուկ եղելութեամբ կառուցեալ խորան խորհրդական, եւ յոգնաժողով եկեղեցի, զնիւթականս զայս աշխարհ, որոյ գլ|304ա|ուխ եւ իշխան կազմէր զԱդամ, տալով նմա շուք քահանայութեան, որ է գեղ պատկերի իւրոյ. եւ դնէ զնա ի լուսընկալ բեմի բարձրացելոյ արեւելեան մասինն, յարա-*

[1] *Նկատի ունի Արուսեակ հրեշտակի անկումը։*

զուարճ դրախտին փափկութեան, ի յարացոյցն հոգեւոր եւ անթառամ իմաստութեանն Աստուծոյ, զոր հոգիացոյց զնա փչմամբ հանճարոյն, զի այնու քահանայասցի Աստուծոյ Մշտնջենաւորին մշտնջենապէս։

ԺԵ. 1 *Եւ այսու աւրինակաւս է՛ջ շնորհ քահանայութեանն ի ներքին բանականքս ընդարձակեալ։* 2 *Որով շնորհիւ աւժանդակեալ Ադամ՝ կոչեաց զանուն Արարչին իւրոյ Աստուած, որ է ածիչ ի գոյութիւն յանգոյից։* 3 *Եւ տեսեալ զաւրս Արարչին իւրոյ ընդ նմա, անուանեաց զնոսա հրեշտակս, որ է բանատարս, զի տանէին առ նա բանս ի յԱստուծոյ։* 4 *Եւ ապա ամենայն շնչոյ կենդանեաց կոչեաց անուանս յարանունաբար, որ կա՛ն մինչեւ ցայսաւր ժամանակի, ի յիշատակ իմաստութեան արմատոյն մարդկութեանս, եւ շնորհ ի քահանայութեան նորա ի՝ փառս տուողին Աստուծոյ։*

ԺԶ. 1 *Եւ ո՛չ միայն քահանայութիւն, այլեւ մարգարէութիւն եւ թագաւորութիւն*[1]*։* 2 *Եւ երեւի մարգարէութիւն յայնմանէ, զի կոչեաց մարգարէաբար զանուան կնոջն Կեանս, ի դէմս Մաւրն կենաց։* 3 *Եւ թագաւորութիւն՝ ի տիրելն ամենայն կենդանեաց, եւ քահանայութիւն, զի եդ անուանս ամենայն կենդանեաց, զի այս գործ քահանայից է։* 4 *Բայց զի անարատից վայել էր աշտիճանս, տուաւ յանմեղութեանն, եւ ի մեղանչելն նուազեցաւ շնորհն, թէպէտ եւ ոչ ամենեւին բարձաւ, այլ էանց եւ ի ծնունդս նորա,* զ|304բ|*որ եւ ցուցանէ Աբել՝ արդար որդին Ադամայ մեղաւորին, որ քահանայական աւրինաւք՝ ըստ հրեականին մատուցանէր յանբանից պատարագ Աստուծոյ։* 5 *Եւ մեծացեա՛լ ի նա շնորհին՝ մատեաւ անձամբ պատարագ Աստուծոյ անարժան ձեռաւք յաւրինակ Տեառն իւրոյ եւ Աստուծոյ, պեղծ քահանայիւն նուիրեալ եւ ողջակիզեալ։* 6 *Սակայն Կային անկաւ ի շնորհէն զոհիւն իւրով՝ յաւրինակ այնոցիկ, որ զՏէրն պատարագեցին ղեւտացիքն եւ անկան ի քահանայական շնորհէն զոհիւն իւրեանց եւ որդովք։* 7 *Որպէս եւ Կայէն տարագրեալ յերեսացն Աստուծոյ եւ յազգէն Սեթայ, անաւթն վնասակար, ո՛չ աջողեալն ի տան Աստուծոյ, որպէս այժմ անարժան քահանայք անկեալ լինին յեկեղեցւոյ եւ ի ժառանգութենէն, զոր Հեղի աւրինակեաց։* 8 *Այլ սակայն էանց պարգեւն այն ի Յենովս, որ զյոյսն պատարագեալ Աստուծոյ եւ էառ վստահութիւն կոչել զՏէրն անուն ի յաւգնութիւն անկեալ ազգին, եւ զմոռացեալն ի բազմաց յիշեաց, որ է գործ քահանայից։* 9 *Իսկ զանարժանիւքն զանց արարեալ քահանայական պատուոյն, երեւեցաւ ի Յենովք, որ յաւելի յոյսն Ենովսայ զպահս*

[1] *Թվարկում է Քրիստոսի երեք տնօրինական պաշտօնները. տե՛ս Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեաց Ս. եկեղեցու քրիստոնէականը, Տփխիս, 1900, էջ 181-202։*

եւ զաղաւթս, պատարագելով Աստուծոյ զամս ՃԿԵ. (165) հաշտեցոյց զԱստուած ընդ բնութեանս կործանելոյ իմացեալ, թէ վասն հեշտասիրութեան եւ ճաշակման պտղոյն անգան նախաստեղծքն ի դրախտէն։ **10** *Վասն որոյ ոչ ճաշակէ զամս ՃԿԵ. (165), այլ յուսով սպասէր վայելման դրախտին եւ քահանայաւրէն քաւէր զյանցանս նախահաւրն։* **11** *Վասն որոյ եւ ըստ խնդրոյն Ենովսայ աւգնեաց եւ է|305ա|առ զքահանայն արժանաւոր ի դրախտն, ուստի ելինն, եւ յոյս ետ նովաւ անմահութեան կենաց մահակուլ ազգիս, եւ կա՛ մնա քահանայ միշտ ի Տէր։*

ԺԷ. **1** *Իսկ յետ նորա ծածկեցաւ դարձեալ ի մեղաւորացն, եւ ծաղկեցաւ ի Նոյ արդարն փառքս այս, որ եգիտ շնորհս յԱստուծոյ, ըստ վկայութեան գրոց, քանզի պատարագէր Աստուծոյ զսրբութիւն կուսութեանն ամս Շ. (500), եւ արդարութեամբն իւրով եմուտ ի տապանն, յաւրինակ եկեղեցւոյ։* **2** *Իսկ յանցաւորքն ջնջեցան ջրհեղեղաւն, զի մարմինք եղեն, եւ ո՛չ ետ նոցա Աստուած հոգի քահանայութեան, եւ եթող զնոյ եւ զարդարութիւնն իւր միայն, որ եւ յետ ջրոյն մատուցանէր զՀաբելին պատարագ առաքինութիւն, յոր հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից նախ ի Նոյ եւ ապայ ի զոհս նորա։ Եւ անփոփել շնորհին ի կռապաշտիցն ցուցաւ ի Յոբ սքանչելի՝ յորդոցն Յեկտանայ, զոր այլք ասեն Եսաւայ, որ աւուր-աւուր մատուցանէր ըստ թուոյ որդւոցն պատարագ Աստուծոյ, յորոյ վերայ եւ զկիրս փորձութեանցն համբերութեամբ եւ յաղթող գտեալ յամենայնի՝ հաշտութիւն բարեկամացն մատուցանէր։*

ԺԸ. **1** *Իսկ ի յաւելուլ արդարութեանն եւ ի յաճախման հաւատոցն Աբրաամու, բացափայլեաց պարգեւք աշտիճանին ո՛չ միայն յԱբրաամ եւ յորդիս իւր, այլ եւ ի Մելքիսեդեկ, որ գերազանցեալ գտաւ քան զամենեսեան, զոր եւ գիրն յայտնապէս կոչէ զնայ անուամբ «քահանայ Աստուծոյ Բարձրելոյ», բարձր քան զբնաւ արդարոցն ցուցեալ խորհուրդս, զոր եւ Պաւղոս խոստովանի, ածելով զնայ ամենեւին յաւրինակ մեծին, եւ ո՛չ մասամբ, որպէս յայլսն, |305բ| որ եւ զտիպն ճշմարտութեան մատուցանէր Աստուծոյ պատարագ հա՛ց եւ գինի, զոր եւ Աբրաամու մատուցանէր կամ ընծայէր, եւ աւրհնեաց զնա յԱստուծոյն Բարձրելոյն (տե՛ս Եբր. Է. 2-3)։*

ԺԹ. **1** *Մելքիսեդեկ ասի Թագաւոր արդարութեան, որոյ ազգ ոչ գրեցան, այլ անհայր, անմայր՝ նմանեալ որդւոյն Աստուծոյ, քանզի Իսրայէլն եւ Մելքիսեդեկ պարգեւք Աստուծոյ են, հայր եւ մայր ոչ ունին, իսկ Սեմն եւ Յակոբն ունին ծնողս, որ զայն կոչեցին նոցա անուանս։* **2** *Զի որպէս ասէ Եփրեմ՝ «Յազգէն Սեմա էր Սեմ, եւ անուն Սեմ, որոյ երեւեա՛լ Աս-*

տուած, փոխեաց զանուն նորա Մելքիսեդեկ»[1]*։* 3 *Իսկ յԱբրաամ յաւրինակ Տեառն մերոյ աւրհնեցաւ եղեւ քահանայ, եւ զորդին մատուցանէր Աստուծոյ, զՀաւրն երկնաւորի բերելով զնմանութիւն, տալով զմիածինն ի փրկութի՛ւնն աշխարհի։* 4 *Եւ Իսահակ անձամբ անձին լեալ մատուցիչ ընդ հաւրն, որպէս եւ Քրիստոս յինքենէ եւ ի Հաւրէ մատեաւ, եւ զերկեւղն այլովք ընծայիւք մատուցանէր Աստուծոյ։*

Ի. 1 *Եւ յետ սորա որդի միջնոյն, որդի՛ որդւոյ առաջնոյն, նախապետն Յակոբ, զնոյն շնորհ յինքն ձգեաց յաւրհնութենէ Հաւրն, զոր առեալ երթայր յԱսորիս, եւ տեսանէ՛ զխորհուրդ եկեղեցւոյ։* 2 *Եւ կոչէր զտեղին տուն Աստուծոյ եւ աւծանէր զվէմն՝ կանկնելով արձան։* 3 *Եւ զծնունդս աւազանին, որ խորհրդեամբ խաչին եւ մահուն Քրիստոսի տպաւորեա՛ց ի գաւազանսն նկար դնելով յաւազանսն, յորմէ զկծելով խաշինքն՝ գորշախայտս եւ խայտախարիւս ծնանէին, զպէս պէս շնորհս ծննդոց աւազանին նկարագրելով, որ ի ձեռն* |306ա| *քահանայիցն։* 4 *Եւ ի դառնալն յասորւոց պատարագ մատոյց Աստուծոյ, ըստ ուխտի՛ն իւրոյ։*

ԻԱ. 1 *Այլ եւ Յովսէփ ընգալաւ զշնորհս զայս խորհրդով տեսլեամբ երազոցն, եւ իջեալ յԵգիպտոս, որ է Մծրայիմ, այսինքն է Մսր, եւ զողջախոհութիւն մատուցանէր Աստուծոյ պատարագ։* 2 *Եւ յայնմհետէ իմաստասիրէր քահանայական շնորհիւն եւ փրկէր հացիւ զԵգիպտոս։* 3 *Բայց առ Մովսէսի բազմաւորակի ցուցաւ քահանայութեան խորհուրդ. ծննդեան աւազանին եւ Տէրունեան մարմնոյ եւ արեանն բաշխումն, զի աւրինակք էին առ նովաւ գործեցեալքն նորոյս ճշմարտութեան. ծովն՝ ջրոյ աւազանին, ամպն՝ հովանի հոգւո՛յն Սրբոյ, գաւազանն՝ խաչին պարծանաց, ժողովուրդն՝ ծննդոց աւազանին։* 4 *Եւ որպէս քահանայից է յետ մկրտութեանն հաղորդեցուցանե՛լն, այսպէս ի ձեռն Մովսէսի մանանայն մարմնո՛յն Տեառն նշանակ, եւ ջուրն վիմաբուխ կողահոս աղբերն։* 5 *Իսկ ի ՁԵ. (85) ամին Մովսիսի ընգալաւ Ահարոն զպատիւ քահանայութեանն, յԱստուծոյ կոչեցալ եւ ի նմանէ առին որդիք նորա։* 6 *Առ որում զպէս պէս պայծառութիւնն քահանայական զարդուց ցուցանելով, հրամայեաց Մովսիսի առնել Ահարոնի եւ որդւոց իւրոց հանդերձս պաշտաման, զի ի մտանելն առաջի Աստուծոյ զարդարեսցեն զանձինս իւրեանց։* 7 *Եւ մատուցանէին պատարագս յաճախապէս շնչաւորս եւ անշունչս, զի տաղտկասցին եւ ձանձրասցին զանշահաւորն մատուցանելով, կարաւտասցին* |306բ| *աւգտակարին, եւ շնորհապարտք լիցին համառաւտ եւ ձրի՛ փրկողին։* 8 *Եւ*

---

[1] *Քաղուած է Եփրեմ Ասորու Արարածոց մեկնութիւնից. տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, հ. Ա. Վենետիկ, 1836։*

թէպէտ ստուեր էր, եսպան զմոռացկոտսն զՆաբատ եւ զԱբիուդ, որք Բ. (2) անգամ ծխեցին խունկս, եւ այն աւտա՛ր հրով, զոր մի՛ անգամ աւրէն էր սեղանոյն ծխել հրով քահանայապետին Ահարոնի, եւ ո՛չ Բ. (2) որդւոցն. եւ զայն կատարեալ էր հայրն իւրեանց ի ժամու։

ԻԲ. 1 Արդ, կեցեալ Ահարոն ի քահանայութիւնն ամս ԼԸ. (38) կատարեցաւ, թողեալ զքահանայութիւն Եղիազարու, որ եւ պաշտեաց ամս Խ. (40)։ **2** Փոխեաց զնա Փենէէ զամս Զ. (80), նախանձաւորն Աստուծոյ, որ սուրբ ձեռաւք զարժանաւոր զոհն մատոյց Աստուծոյ ի պէ՛ղծ կենդանեաց ի գարշելի խորանին զզամբրի եւ զքասբի՛։

ԻԳ. 1 Յետ սորա քահանայք ԺԸ. (18) մինչ ի Դաւիթ, որ ի սայ ցուցաւ եռակի շնորհն, որ տուաւ Ադամայ, այսինքն՝ քահանայութիւն է՛ւ թագաւորութիւն է՛ւ մարգարէութիւն, զի նախնի Քրիստոսի եղեւ եւ նշանաւոր յամենայն Իսրայէլի։ **2** Եւ զի թագաւոր եւ մարգարէ է՛ յայտնի՛ է, բայց թէ քահանայութեան շնորհի եհաս, ասասցուք։

ԻԴ. 1 Տէրն ստուգեաց, որ կայ ի գիրս թագաւորացն Իսրայէլի, բայց եւ զայս եւս գիտացաք, թէ առ զեփուտն զծածկոյթ սեղանոյն եւ արկաւ զիւրեաւ եւ եհարց զՏէր, զի երկեաւ վասն քահանայիցն եւ ոչ ետ նոցա հարցանել, զի մի երդնուցուն սուտ եւ կամ զճշմարիտն ասելով մեռցին, այլ ինքն եհարց եւ ոչ մեղադրեցաւ, զի Հայրն Քրիստոսի ո՛չ էր պարտ, թէ մտցէ իբրեւ զծառայ ընդ աւրինաւքն։ **2** Այլեւ կարգեաց ԻԴ. (24) դասս սաղմոսաց եւ երգել հրամայէր երիցս յաւուրն՝ յերրորդ ժամն, ի վեցն ի յինն |307ա| զոր եւ արդ իսկ կարգեալ է յեկեղեցի, եւ ի սմանէ ի Յեսու եւ ի Զաւրաբաբէլ քահանայք Խե. (45)։ **3** Եւ անտի ի ճշմարիտ քահանայապետն Քրիստոս քահանայք Իե. (25), եւ ապա ըստ Յակոբայ մարգարէութեանն եւ ըստ վճռին, զի բարձեալ էին աւծութիւնքն յԻսրայէլէ։ Եկեալ աւծեալն Աստուծոյ ինքնակալ իշխանութեամբն եւ բնաբար թագաւորութեամբն, զի աւրինակք նորայ էին ամենայն թագաւորք եւ մարգարէք, իշխանք եւ քահանայք, եւ նա միայն էր ճշմարիտ Մարգարէ եւ Թագաւոր եւ Քահանայ։ **5** Որ եւ զբարիսն, զոր ետ Ադամայ զերիս աշտիճանսն ի փառս Երրորդութեանն, պարգեւեալ ի Հաւրէ եւ յՈրդւոյ եւ ի Սուրբ Հոգւոյն. թագաւորութիւնն, մարգարէութիւնն եւ քահանայութիւնն, բաշխեաց զայն սուրբ եկեղեցւոյ իւրոյ ի ձեռն սուրբ առաքելոցն։

Իե. 1 Բայց պարտ է քննել եւ զայս, թէ ո՞ւր ընկալան առաքելաքն զաշտիճանացս այսոցիկ զանազանութիւնն ի գերագոյն եւ ի ճշմարիտ քահանայապետէն, զի վասն այնորիկ եկն Տէրն յաշխարհ, զի զնախաստեղծին զշնորհս եւ զփառսն առաջին՝ անդրէն դարձուցանել նոր եւ երկրորդն՝ Ադամ՝ յորդիս հնոյն եւ առաջնոյն Ադամայ։ **2** Այն, որ իբրեւ զճար-

տար եւ զամենիմաստ նկարիչ, սկսեալ յոտիցն եւ աւարտեալ ի գլուխն, զնո՛ր մարդկութեանս կազմած զիւրականն բարեաց պատկեր. զի նախ զմարմնական ախտսն բժշկելով, սկսեալ յոտիցն զամենայն անդամսն, եւ ապա հանեալ ի բարձրութիւն լերինն, զի զհոգի՛ս նոցա բժշկեսցէ, եւ զբովանդա՛կն սրբեսցէ նուէր պատարագի։ 3 *Եւ նշանակաւ զգալի լերինն. զիմանալիս գծագրելով, յորում լինին աստուածային շնորհաբաշխութիւնք։* 4 *Եւ անդ՝ ինն բանիցն երանութեամբ, ե՛տ աշակերտացն զաշտիճան դպրութեան։* 5 *Իսկ յետ այսորիկ* |307բ| *յորժամ ետ զեղն աւծութեան, եւ առաքեաց զնոսայ բժշկել զհիւանդս եւ աւծանել եղով, անդ ընկալան զսարկաւագութիւն, զի այս գործ սարկաւագա՛ց է։* 6 *Դարձեալ ետ նոցա զպատիւ քահանայութեան, յորժամ շրջեցուցանէր ընդ արտաւրեայսն ի շաբաթու. եւ աշակերտքն հասկ կորզեալ շփէին ընդ ափ եւ ուտէին։* 7 *Եւ քահանայից էր այն վիճակեալ, զի այն էր հացն առաջաւորութեան։* 8 *Եւ Տէրն յառաջ, քան զլինելն նկարեաց, թէ վերանալոց է քահանայութիւն ի հրէից, եւ տուեալ զայն առաքելոցն, զի տացեն հեթանոսաց։* 9 *Եւ քանզի ամենայն քահանայ ունի նիւթ պատարագի, իսկ Տէրն զանձն մատոյց Խաչիւն երկնաբերձ սեղանովն, յաղագս գերազանցեալ գթութեանն իւրոյ առ մարդիկ, աստուածային կամաւքն եւ բազկաւքն իւր բաշխեցաւ յաշակերտսն իւր սիրով, եւ նոքաւք ամենայն աշխարհի, զենլի անծախելի եւ միշտ կենդանի, եւ փոխեաց զհինն ի նորս ի կատարման ստուերին ի վերնատանն խորհրդեան, ի մեծի հինգշաբաթին հին Զատկին, զոր եւ հրամայեաց առնել զայն յիւր յիշատակ մինչ ի միւսանգամ նորայն գալուստ, այլեւ յետ յար[ութեան] պատու[իրեանց] երթ[ալ] աշակեր[տացն] մկրտել յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն։* 10 *Եւ այսոքիկ գործ քահանայից է։* 11 *Իսկ յետ յարութեանն յաւուրս Խ. (40) երեւեա՛լ նոցա եւ խորին խորհրդոյ խորհրդագետ արարեալ, եւ ի կատարեալ աւուրցն հանեալ զնոսա ի լեառն Ձիթենեաց, տարածեալ զաստուածային զձեռս իւր, աւրհնեաց զնոսա եպիսկոպոսու|308ա|նս, եւ կաթողիկոսս։* 12 *Եւ խոստացաւ նոցա առաքել տալ զՀոգին Սուրբ, որով հաստատեսցին ի շնորհն եւ բաշխեսցեն զնոյն հաւատացելոցն Բանի քարոզութեանն նոցա։*

ԻԶ. 1 *Արդ, քննեսցուք եւ այժմ զզանազան վերակոչութիւն անուանց քահանայական դասուն, թէ զորպիսի՞ զաւրութիւն գործոյ ընդ անուանցն նշանակեն։* 2 *Բժիշկք*[1] *կոչին, յաղագս արուեստաբար բժշկելոյն զոգիս*

[1] *Այստեղից սկսած ձեռագրի լուսանցներում որոշ բացթողումներով եւ սխալներով նշուած են այն տասնութ (Ա-ԺԸ.) վերակոչումները, որ տրուել են քահանայական դասին։*

մարդկան ի դժնդակ խածմանց կամակոր աւձին եւ ի բնաւորականացն եւ յանբնականաց ախտից, յանձն առնլով զերկայն աշխատութիւնս, ըստ Պաւղոսի. եւ քաջահմուտ լինել անթառամ ծաղկանցն, որ ի դրախտի Աստուածաշունչ տառիցն, յորմէ եւ կազմեն յարմարական խառնմամբ ի պէտս բարեկրթութեանն անձին։

Իէ. 1 *Քաւիչ անուանին յաղագս նախանձու եւ վրէժխնդրութեանն Աստուծոյ, քանզի եւ Փեննէզի կացելոյ ի մէջ եղեւ քաւութի՛ւնն եւ արգելաւ մահ։* **2** *Կամ խաղաղականաւքն աղաւթիւք ընդունելովք Աստուծոյ, առնելով թողութիւնն պարտաւորացն, որպէս Մովսէս, քանզի եթէ թողուս սոցա, ասէ՝ զմեղս թող, ապայ թէ ոչ՝ եւ զիս ջնջեա՛ ի գպրութենէն, յորս գրեցեր։* **3** *Ով անբաղդատական ի սիրոյն առ մեղանչականսն, վասն փառացն Աստուծոյ եւ ուխտին հաստատութեան, որ առ Աբրահամ։* **4** *Կամ՞ արեամբ եւ խնգով, ոչ որպէս Ահարոնն եւ յաջորդք իւր, այլ Գառինն Աստուծոյ՝ բարձողին զմեղս մեր (տե՛ս* **Յվհ. Ա. 29***), մտանել ի սրբութիւնսն վայելչապէս եւ ամենայն պարկեշտութեամբ զծերունականն եւս խունկն, ըստ Յոհաննու, ոսկեղինաւք մատուցանել՝ բերել զազատութիւն յանցաւորութենէ։*

ԻԸ. 1 |308բ| *Հայր կոչի, սակս ոչ անձին, այլ որդւոցն գանձելոյ, զորս ծնաւ ի Յիսուս Քրիստոս Աւետարանաւն եւ սնուցանելով զնոսա իմաստութեամբ եւ խրատու Տեառն, որ եւ կոչի ծնաւղութիւն երկրորդ, եւ անախտ երկունք, եւ դաստիարակութիւն անապական ծննդեանն, այլեւ ի գաւազանս աստի եւ յանդիմանութեանն, խրատել խնամով որպէս աւրէն է հարց զորդիսն բազմայեղանակ կարգաւք ի պիտանիսն վարժել եւ խրատել վարդապետաւրէն եւ ջերմագութ գորովով դայեկաբար սնուցանել։*

ԻԹ. 1 *Հովիւ, ո՛չ զանձինս, այլ սակս զխաշինսն արածելոյ, քաջ հովուին նմանեալ (տե՛ս* **Յվհ. Ժ. 11***), եւ ոչ վարձականացն ի մարմին սերմանողաց, եւ անփոյթ առնողաց զմեծագնի ոչխարացն զգայլսն հալածեալ, զվիրաւորսն բժշկեալ եւ զգաստ արթնութեամբ պահեալ, եւ զայլ ամենայն հովուականսն ի կիր արկանել զգործ։*

Լ. 1 *Ջաւրագլուխ կոչի, զորոց զաւրէն պատերազմին ուսուցանէ առաքինի զաւրապետն Պաւղոս, «Ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ արեան» (Եփս. Զ. 12), եւ զպիտանացուսն այսմ ճակատու զսպառազինութիւնն ուսուցանէ։*

ԼԱ. 1 *Այլեւ լոյս ասի աշխարհի, զՏեառնն եւ զԱստուծոյ ընկալեալ զանուանս ծառայիցն, լուսաւորելով զաշխարհ կրկին լուսով։* **2** *Գիտութեամբ Բանին եւ առաքինական վարուքն լուսաւորել զըմբռնեալսն խա-*

ւարաւ աշխարհիս, լուսաւորել զանզգամսն իմաստութեամբ, եւ զանգիտութեամբ խաւարեալսն՝ գիտութեանն լուսովն, եւ զանկնիքսն՝ մկրտութեամբ սրբոյ աւազանին։

ԼԲ. 1 *Տնկագո՛րծ կոչ|309ա|ի առ բանաւո՛ր եւ իմաստուն տունկսն աշխատելոյ՝ ըստ Պաւղոսի ձայնին. «Ես տնկեցի, Ապաւղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց» (**Ա. Կրնթ. Գ. 6**), եւ Եսայեաւ. «Ես տնկեցի որթ բերրի» (**Եսյ. Ե. 2**)։ 2 Արդ, տունկ երկնային եւ բոյս սքանչելի մարդ յիմաստնոցն անուանի, որոց պա՛րտ է քահանայից զվնասակարսն պտղոց յապաւել եւ առ ի պտղաբերութիւն յարմարապէս պատշաճել, ոռոգանել ջուրբ վարդապետութեանն, շուրջ բրել եւ կակղացուցանել, որ առ արմատովն անպտղաբերին զխստութիւն եւ զայլ եւս զերկրագործականն ի կիր արկանել զաշխատութիւնն, ըստ աւրինի տնկագործ մշակաց, ըստ այնմ որ եւ վասն թզենոյն աղաչէր (**տե՛ս Ղկ. ԺԳ. 6-9**)։*

ԼԳ. 1 *Գլուխ յետ Քրիստոսի մարմնո՛յ նորա, որ է եկեղեցի, եւ զանդամոց իւրոց՝ մանաւանդ թէ զՔրիստոսի անդամոց եւ ոչ մի ինչ իրաւք իւիք առնել անփոյթ։ 2 Զի որպէս գլուխն, յորում եւ զգայարանքն է, ոչ արգելու զգայական զաւրութիւնս յանդամոց մարմնոյն. զտեսանել աչաց, կամ զլուր ականջաց եւ զայլսն, այլ զսպասաւորականն կարգ բաշխէ իւրաքանչիւր գործիականաց մասանցն։ 3 Եւ թէ ոչ՝ եւ ինքն ընդ նոսա ի վայր անկեալ կորնչի. գլուխն ընդ մարմնոյն։ 4 Նոյնպէս եւ առաջնորդն եկեղեցւոյ գլուխ. եթէ անփոյթ առնիցէ, իբր ի գագաթանէ յոյժ բարձուէ եւ ի ծայրագունէ անկցի՛ ի խորխորատ անտանելի եւ տարտարոսական վհին, որ է՛ բաժին ժառանգութեանն յաւիտենական առաջնորդաց կուրաց, տարացոյց որդւոցն Հեղեայ անունկնդրութիւնն հաւրն (**տե՛ս Ա. Թգ. Գ. 11-18**)։*

ԼԴ. 1 *Տեսուչք անուանին, զի եւ ի փոքուն|309բ|ցն թուեցելոց ո՛չ արասցեն անտես, այլ ընթանան ի գիւտ ոչխարի միոյ մոլորելոյ, եւ դրամի միոյ կորուսելոյ, որով ուրախութիւն լիցի երկնաւորացն։*

Լե. 1 *Սոքա եւ հրաւիրակք ասին այժմ ի խրախճանութիւնս, այլեւ յապագայսն ի սեղանն անճառելի եւ ի գիներբուսն զուարճութեան։ 2 Ըստ այնմ՝ «առաքեաց զծառայս իւր» (**Մտթ. ԻԱ. 34**). յա՛յտ է՝ իմաստութիւն Աստուծոյ, կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր։*

ԼԶ. 1 *Այլ եւ լուանողք կոչին զոմանս ի ձեռն մկրտութեանն աւազանին, որով յորդեգրութիւն Աստուծոյ մուծցեն։ 2 Եւ կիսոց յետ այսորիկ գլորելոց՝ աւճառաւք ապաշխարութեան, ըստ զանազանութեանն գործոցն մեղանաց, ըստ ժամանակին երկայնութեանն, ըստ պատճառանա՛ց հասակին, տեղոյ՝ յեղանակի, դիմաց երկոցունց. եւ մաքրեալ ընծայեցուցանեն վերստին Քրիստոսի եւ Աստուծոյ Հաւր, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ։*

ԼԷ. *Որսորդք մարդկան ի մահուանէ ի կեանս, ի ձեռն ուղկանի Աւետարանին, ի հակառակէն ի բաց լինել, զոր ասէ. «իբրեւ վարմ ձգեալ ի տաբիրոն կամ թէ ի գլուխ գահավանդի» (***Ովս. Ե. 2***):*

ԼԸ. 1 *Այլեւ գանձ ունին ի պահպանութիւնն, որ է Բանն հաւատոյ, զոր Տէրն արքայութիւնն երկնից անուանէ, ծածկեալ յագարակի քարոզութեանն, եւ գնեալ ընդ ամենայն պատճառանաց կենցաղոյս. նաեւ ընդ կելոյ եւ ընդ արեան:* **2** *Է՛ եւ քաջութիւնն եւ ազնուականութիւնն մանկանց պարծանաց եւ գոհութիւնն զՏեառնէ:* **3** *Ըստ այնմ՝ «Ահաւասիկ ես եւ մանկ[ունք իմ»] (***Եբր. Բ. 13***):* **3** *Այլեւ անձնական առաքինութիւնն գա՛նձ է իւրաքանչիւր ումեք, վասն որոյ, ըստ* |310ա| *ասորոց լեզուին, «քահանայն» «Փարթա՛մ» ասի, որ է երկնաւո՛ր հարստութիւնն, եւ անմահական գանձուն պահուստ եւ բաշխումն:*

ԼԹ. 1 *Զգեցուցանող կոչին, որ է յոքնատեսակ. Ա. յետ մերկանաց զհին մարդն գործովք իւրովք՝ ի ձեռն մկրտութեանն աւազանին ի Հոգին Սուրբ եւ ի ջուր զգեցուցանեն զՔրիստոս, ըստ որում ասէն առաքեալ:* **2** *[Բ]. Իսկ մերկացելոցն գլորմամբ, թէպէտ եւ տաժանելի՛ է զգեցուցանողին եւ զգեցողին, ապաշխարութեամբ վերստին երկնել մինչեւ նկարեսցի Քրիստոս, ըստ առաքելոյ:* **3** *Գ. ի նահատակութիւնն մարտի զՔրիստոսի զինուորքն ընդդէմ չար ախոյանին կազմել ի կռիւ եւ զսպառազինութիւնն Քրիստոսի զգեցուցանել:* **4** *Դ.որդ (չորրորդ) ոչ ըստ մասանցն եւեթ զաւրականս, այլ զբոլորն եկեղեցի յոսկէհուռն զարդարեալ եւ պաճուճեալ, որպէսզի կացցէ ընդ յաջմէ Տեառն:*

Խ. 1 *Արդ, քննեսցուք եւ զայն, թէ վասն է՞ր տուաւ քահանայութիւնն:* **2** *Յաղագս այսորիկ տուաւ քահանայութիւնն, զի ըստ ասացելոյ անուանցս՝ ցուցցէ եւ զիւրաքանչիւր զզաւրութիւնն գործոյ:* **3** *Այլեւ մաքրիչ եւ սրբիչ լինել ժողովրդեանն, որպէս եւ անունն յայս իսկ թարգմանի*[1]*:* **4** *Առաջին մաքրութիւնն, զի զաղաւթսն ընծայեսցէ ի դիմաց ժողովրդեանն Աստուծոյ նուէր հաշտութեանն, եւ զխաղաղութիւնն Աստուծոյ իջուցանէ ի մաքրութիւնն ախտից նոցա:* **5** *Երկրորդ սուրբ պատարագաւն զանդամս ցրուեալ եւ վարատեալ ի գլուխն Քրիստոս յարեցուցանէ:* **6** *Երրորդ՝ զերախայսն սրբարար աւազանաւն որդիս Աստուծոյ եւ եղբարս Քրիստոսի գործէ:* **7** *Չորրորդ՝ զմեղուցեալսն թողութեամբ ի բով ապաշխարութեանն* |310բ| *արկեալ, իբրեւ զոսկի ի հուր, վերստին ձուլեալ ի ժանգոյ մեղաց,*

---

[1] *«Քահանայ» բառի նոյնիմաստ ստուգաբանութիւնը տալիս է նաեւ Ներսէս Լամբրոնացին. տե՛ս Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին, Վենետիկ, 1847, էջ 135:*

սրբէ եւ լուսատեսիլ առնէ։ **8** *Հինգերորդ. զբարեգործեալսն եւ զաւրինացն Աստուծոյ հնազանդեալսն՝ աւրհնութեամբ ի նոյնն յորդորէ եւ գործս բարիս աւրըստաւրէ զաւրացուցանէ, զի սրբեալ սրտիւ՝ տեսլեանն Աստուծոյ արժանասցին։*

ԽԱ. **1** *Իսկ եթէ որպէս քահանայագործելն հրեշտակ լինել յԱստուծոյ առ մարդիկ եւ ի սոցանէ՝ միջնորդ խաղաղութեան։* **2** *Եւ աւրինակ բանիւ եւ գործով, զի քահանայն հրեշտակ Տեառն ամենակալի՛ է եւ պատգամք ի բերանոյ նորա լսին։* **3** *«Վասն որոյ շրթունք զգուշասցին գիտութեան» (Մաղ. Բ. 7) Մաղաքիայ ուսուցանէ, վասն զի հրեշտակք ո՛չ զիւրեանց ինչ, այլ զառաքչին առանց յաւելուածոյ եւ պակասութեան պատմեն բանս, առանց երկեւղի եւ պատկառանաց։* **4** *Իսկ որ վասն կաշառաց կամ աչառանաւք երեսաց շոքմոգէ նենգաբանութեան, ոչ հրեշտակ պատգամաբեր այնպիսին եւ խաղաղութեան միջնորդ, այլ մատնիչ եւ բանսարկու կոչեցեալ. յանուանցն եւ յիրացն երեւեսցի՛ եւ զիրաւացին առցէ ի ժամանակի դատաստան, ո՛չ իբր զակամայ գտցէ ողորմութիւնն, այլ զնախայաւժար կամաւք յանցաւոր սատակեսցի, ըստ հրամանի աւրինացն։* **5** *Սոյնպէս եւ յԱստուծոյ առ մարդիկ բերողք զբան եւ կացելոց գլուխ ժողովրդեան։* **6** *Իսկ հաւատարիմն եւ աննենգն ի բան Աստուծոյ, ճշմարիտ աւրինաւք վարի հրեշտակութեանն։* **7** *Եւ, զոր աւրինակ հրեշտա՛կ, առաքեալ ի թագաւորէ, ո՛չ միայն պարզաբար զբանսն ասէ, այլ հնարի հնազանդեցուցանել, առ որս առաքեցաւն, այսպէս եւ քահանայն զպատուիրանսն Աստուծոյ առն|311ա|է եւ ուսուցանէ, ըստ զանազանութեանն հասակացն, պէս պէս աւրինակաւք։* **8** *Եւ ապա իբրեւ հրեշտակ թագաւորի հնազանդեցուցեալ զաշխարհն՝ առ նա դառնայ վերստին, եւ զայն, որ քաղաքացեացն բուռն ասէր՝ զի զարհուրեսցին, եւ զքաղաքացիսն ստամբակ՝ զի հնազանդեսցին, մտեալ առ թագաւորն եւ զքաղցրութիւն յիշեցուսցէ, եւ զնոցա հնազանդութիւնն, ըստ այսմ եւ քահանայն առնէ. ժողովրդեանն ցուցանէ ահաւո՛ր զպատուիրանն Աստուծոյ, եւ դառնայ առ Աստուած եւ աղաւթիւք զմարդասիրութիւնն յիշեցուցանէ, եւ զնոցա վտանգն, զի անմարմին ունի թշնամի եւ զբնական կիրս մարմնոյն, եւ աղերս տանի Աստուծոյ Հաւր զՔրիստոս զփրկանքն աշխարհի։* **9** *Եւ այսպէս քահանայագործելովն արժանասցի պատուոյ եւ բարգաւաճանաց եւ ուրախութիւնն յաւիտենական, ընդ որս կանն առաջի Աստուծոյ՝ ընդ հրեշտակս հանդիպեսցի։*

ԽԲ. **1** *Իսկ եթէ զինչ խորհուրդ ցուցանէ մեզ վայելչական արարողութիւնն, զոր ի ժամ ձեռնադրութեանն կատարեմք։* **3** *Վասն որոյ առեալ*

քահանայապետին զդասս պաշտաւնէիցն, ժողովին ի միասին առ դուրս եկեղեցւոյն, զարդարեա՛լ փառաւք, որ է նշանակ Տեառն մերոյ երկնագումար հաւաքմանն, որում հանդերձեալ էր տալ իւրոց ընտրելոցն կնիք հաստատութենէն եւ ձեռնադրութիւն քահանայութեան, որ ցուցանէ զգեստուցն պայծառութիւնն, զարդարեւ բարեպաշտութիւնն կղերիկոսացն, այսինքն՝ բեմականացն, գեղեցկապէս պայծառացեալ հրաշալի առաքինութեամբ։ 3 Իսկ նուիրեալն՝ գաւտելոյծ եւ բացաւ գլխով կայ առաջի դրանն ի |311բ| մէջ պաշտաւնէիցն։

ԽԳ. 1 *Իմանալ պարտ է, զի փոխանակ դրախտին՝ տուաւ եկեղեցի սուրբ ի զանազանի՛ց յարմարեալ գիտութեամբ։ 2 Զոր աւրինակ նախաստեղծն յառաջնումն կորոյս զտուեալ շնորհսն քահանայութեան եւ մարգարէութեանն՝ յանցանաւքն, յայսմ դրախտի եկեղեցւոյ վերստին ընդունիմք Քրիստոսիւ զպարգեւս աստուածային կոչմանն, որ է մարգարէութիւն եւ քահանայութիւն։ 3 Ըստ որում եւ ի մարգարէութիւն կատարեցաւ ամենայն ինչ նորա։ 4 Ուստի մեծաձայն հնչմամբ երգեն զնուագս Դաւթեան երաժիշտ նուագով յասելն «ուրախ եղէ ես, ոյք ասէին ի տուն Տեառն» (***Սղմս. ՃԻԱ. 1***), որ է այս ուրախութիւնն նուիրելոցն մտանել ի տուն Աստուծոյ իմանալի դրախտին ճշմարիտ քահանայապետն Քրիստոս, հանդերձ հաւատացելովք, ի փառս աստուածատուր կոչմանն։ 5 Իսկ գաւտելոյծ լինել նուիրելոյն եւ գլխիբաց, նշանակէ լուծանել զկապ գետնանախանձ կենցաղոյս խոստովանութեամբ եւ պա՛րզ մտաւք կալ առաջի ծածկագիտին Աստուծոյ։ 6 Եւ վասն զի զգլուխ «մտաց տաճար» ասացին իմաստունքն առաջինք, զտաճարն մտաց պարզաբար տարածեալ առաջի տեսողին մտաց եւ այսպէ՛ս ի կարգ զինքն բոլոր ամենայն զգայութեամբք եւ շարժմամբք ընծայել Աստուծոյ։ 7 Ընդ նմին եւ այլ եւս սաղմոսերգութիւնքն եւ ընթերցմունք մարգարէական եւ առաքելական բանից եւ աւետարանական հրամանք։*

ԽԴ. 1 *Այսոքիկ միանգամայն խրատք զգուշութեանն եւ պատրաստութիւնն ընծայելոյն եւ առ ի յորդորումն աստուածպաշտութեանն, աւրըստաւրէ յառաջանալ ի ճշմարտութիւնն։ 2 Իսկ դասուց քահանայիցն դնել զձեռն ի |312ա| վերայ գլխոյ ընծայելոյն վկայութիւնք են ճշմարիտ կենցաղավարութեան առաքինասէր կամաց, որով ինքնայաւժար կամաւք ընդունելո՛ց է զպատիւ քահանայութեան։ Եւ ձեռնադրեն ի դրան եկեղեցւոյն կէս սարկաւագ, իբրեւ զի աշտիճանաւք՝ զաւրէն սանդղոց, ելանել ի բարձրութիւնն մեծապատիւ փառացն, զի նախ փորձեսցեն զինքեանս եւ ապայ ի պաշտաւնն մատիցեն, զի անարատք իցեն։ 3 Իսկ աղաւթքն՝ վերաճառեալ յեպիսկոպսէն. յասելն Աստուած ամենայնի եւ Տէր զաւրու-*

*թեանց, նշանակէ մեծի խնամակալութեանն հայրաբար սիրով աղաչել եւ պաղատանս մատուցանել ի վերայ կոչեցելոյն, իբրու զի անարատ եւ անբասիր վճարեսցէ զպաշտա՛ւն սպասաւորութեանն սրբոյ եկեղեցւոյ, ըստ նմանութեանն Տեառն՝ խնդրելով ի Հաւրէ ի դէմս աշակերտացն, որ եւ ասէր զայս «Աղաչեմ, զի պահեսցես զսոսա յաշխարհէ աստի չարէ» (**Յվհ. ԺԷ. 15**):*

ԽԵ. 1 *Դարձեալ զկնի այսորիկ կատարման իջուցանեն ի գուշ յահեկ ծունկն, որ նշանակէ զահեկ կողմն, որ է մարմնականն, խոնարհեցուցանելով առաջի աջակողմանն, այսինքն՝ հոգեւորին, մանաւանդ դնել խոստովանութեամբ զամենայն ձախողակի մտածմունս առաջի հաւրն հոգեւորի եւ զամենայն բոլոր ահեկեայսն, դարձուցանել յաջ, որ է բարի մասինն առաւելութիւնն, որով ընտրին աջեայք բազմեալ յաջակողման դասուն յարքայութեանն երկնից: 2 Իսկ բացաւ գլխով, որպէս ցուցաւ իսկ, բայց եւ յայտնի ունելով զմտացն տեսարան, զի աննենգ եւ առանց կեղծաւորութեանն վարեսցէ զսպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ:*

ԽԶ. 1 *Եւ դարձեալ մի ոտամբն կրկնել ծունր, ցուցանէ մի աշտիճան* |312բ| *ունել գլխաւորութեան. ընթեռնուլ գիրս եւ ելանել ի բեմ մերձ առ քահանայն, եւ հաղորդել մարմնոյ եւ արեանն Տեառն, եւ խնկարկութեամբ զանոյշ առաքինութիւնն բուրել յաւրինակ պաշտաւնէիցն: 2 Իսկ խաչատեսակն կնիք իւրաքանչիւր ձեռաւք քահանայիցն դնել ի վերայ թիկանց քահանայութեան նուիրելոյն, զամենայն մարմնական ցանկութիւնն նշանակէ անգործ մնալ եւ յաստուածատեսակ կեանսն անխոտորաբար հայել, զմահն Քրիստոսի եւ զչարչարանս խաչին բերելով հանապազ ի մտի, ընդ նմին նշանակելով իւրոյ անմեղութեան՝ խաչատեսակ պատկերաւն:*

Խէ. 1 *Եւ դարձեալ սաղմոսք եւ ընթերցուածք միանգամայն եւ աղաւթք ճառեցեալ ի վերայ նո՛ր քահանային: 2 Այսոքիկ պաղատանք են առ Աստուած եւ միջնորդութիւն ուխտադրութեան ի ձեռն առաքելականին եւ առակախաւսն ի Սողոմոնի բանիցն, միշտ անմեկնելի՛ եւ առանց երկբայութեանն յառաջանալ ի սէրն Աստուծոյ:*

ԽԸ. 1 *Եւ ապա ասեն սաղմոս. «[Մտէք ընդ դրունս նորա] խոստովանութեամբ» (**Սղմս. ՂԹ. 4**): «Եւ բացէք զդրունս [արդարութեան]» (**Սղմս. ՃԺԷ. 19**) եւ մտանեն յեկեղեցի. վասն զի Բան ի դուռն արքայութեանն խոստովանելոցն յանուն Տեառն, որով եւ մեծաւ հանդիսիւ առաքինութեամբ մտանեն յեկեղեցի արժանացեալքն: 2 Այսպէս կոչմամբ յասելն. «Եկայք առ իս ամենայն աշխ[ատեալք] եւ բեռն[աւորք] եւ ես հանգ[ուցից զձեզ]» (**Մտթ. ԺԱ. 29**): 3 Իսկ հերացն կտրումն խաչանման՝ նշանակ է զանզգայութիւն մտացն ի բաց կտրել իմանալի սրով բանին Աստուծոյ:*

ԽԹ. 1 *Եւ խաչանման, վասն զի խաչազգեացք եղեն, նուիրեալն բառնալով զլուծ խոնարհութեան չարչարանացն Քրիստոսի։ Ըստ այնմ, եթէ՝ «Զարչար[անացն] կց[որդ] լին[իմք] եւ փառ[ացն] հաղ[որդ լինելոց եմք]» (Հռմ. Ը. 17), եւ ապա սկսանին «զերանեալ անբ[իծք ի ճանապարհի]», ցուցանելով երանելիք գոլ, որք միանգամայն հետեւեցան անբիծ եւ ան|313ա|արատ ճանապարհորդութեամբ ելանել ի բարձրութիւնս երկնից։ 3 Եւ առեալ զձեռանէ նուիրելոյն, քահանայապետն հանէ ի բարձրութիւնն բեմին, ցուցանելով զաւրինակ մերոյն քահանայապետի Քրիստոսի, մտանելով ի սրբութիւն սրբոցն, ընդ նմին կոչելով զամենայն նուիրեալսն յիւր արքայութիւնն։ 4 Եւ ի փառս։*

Ծ. 1 *Իսկ մատուցումն առաջի սրբո՛յ սեղանոյն նշանակ է զընծայութիւնն հաւատացելոցն բոլոր հոգւով եւ մարմնով առաջի Աստուծոյ, ինքնայաւժար կամաւք մատուցողացն։ 2 Եւ դարձուցանելն յարեւմուտս՝ զընծայելն, եւ կոչե՛լ զանուն նորա, հրաժարումն է յամենայն պատրողական խաբմանցն սատանայի, ըստ նմանութեան նորա կնքիցն աւրինակի։ 3 Եւ դարձեալ յարեւեալս դարձուցանել է՛ խոստովանութիւնն դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն։ 4 Դարձեալ մի ոտիցն կրկնումն զաներեւութից անձինն մաքրութիւնն ցուցանէ կոչիցելոյն։ 5 Եւ վերաճառութիւնք անուանն յիշատակի, յայտ առնէ յաստուածուստ ընկալեալ զնուէր կոչմանն արժանապէս սպասաւորութիւն։*

ԾԱ. 1 *Իսկ ի կատարման սարկաւագին պնդել զգաւտին եւ դնել զուրարն ի վերայ ահեկ թիկանն, ցուցանէ ի նմին պնտակազմ եւ արի՛ գոլ ի գործ սպասաւորութեան, պնդելով զմէջս ճշմարտութեամբ Աւետարանին խաղաղութեան, եւ խաչանման ուրարովն խաչակից գոլ սրբոյն Ստեփաննոսի եւ որ նովաւ զաւրացան վկայքն առաջին ի սպասաւորութիւնն անուանն Աստուծոյ։ 2 Եւ խնկարկութիւնն զանուշահոտութիւնն աղաւթից նշանակէ։ 3 Ապա յետ այսորիկ մատուցման մատչի ի քահանայութիւնն, նմանապէս մատչելով ի գուճ Բ. (2) ոտիւքն, ցուցանելով ո՛չ միայն աներեւութիւք մաքրեց|313բ|ելոց անձանց, որպէս յաղագս սարկաւագին ծանուցաք, այլեւ երեւելաւք սրբազնագործէ հոգւով եւ մարմնով, մաքրեալ կենացն կատարելոյ։*

ԾԲ. 1 *Իսկ վերաճառութիւն ձեռնադրութեանն ասելն աստուածային եւ երկնային շնորհ, կոչէ զայս անուն ի սարկաւագութենէ ի քահանայութիւնն՝ Տեառն ի ծառայութիւնն։*

ԾԳ. 1 *Այսոքիկ յայտնեն յԱստուծոյ գոլ զընտրութիւնն կոչեցելոյն, եւ ո՛չ իւրովի կամ ի հարկէ եպիսկոպոսնուն ի ածել զհրաւիրեալն ի կոչումն, որպէս ունիմք իմանալ ի հինսն, զի ոչ Մովսէս զԱհարովն եղբայր իւր*

իւրովի աւծանէր ի քահանայութիւն, մինչեւ յԱստուծոյ շարժեալ յայսպիսի պատիւ յառաջանայր, որպէս ասէ Պաւղոս. «Ոչ որ զանձն ընծայեցուցանէ, այլ կոչեցեալն յԱստուծոյ, որպէս Ահարոն» (Եբր. Ե. 4)։ 2 *Եւ յորժամ կոչեցաւ ի սպասաւորութիւնն ի ձեռն մարգարէական եւ առաքելական վկայութեանց եւ զգուշացուցիչ հրամանաց, եկն յայն աշտիճան։* 3 *Նմանապէս եւ ի կոչմանն ի քահանայութեանն վերաճառութիւնք գրոց սրբոց. Սուրբ Աւետարանին քահանայական աղաւթիւք, յառաջագահ ի յաշտիճան քահանայութեանն Քրիստոսի Աստուծոյ։* 4 *Այլեւ «աստուածպետական եւ առաջին նուիրակատարն Յիսուս ո՛չ զանձն իւր փառաւորեաց ըստ ասացելոցն, այլ որ խաւսեցաւն առ նա, թէ՝ «Դու ես քահ[անայ] յաւ[իտեան] ըստ կարգ[ին Մելքիսեդեկի»*[1]*։* 5 *Վասն որոյ եւ ինքն ի քահանայական կատարումն ածելով զաշակերտսն, սակայն յամենասուրբն Հայր, Հոգւովն Սրբով վերագրէր զքահանայապետաբար կատարելագործութիւնն, «պատուէր տայր նոցա յԵրուսաղէմէ մի՛ մեկնել, այլ սպ[ասել յաւետեացն Հաւր], զոր լո[ւարուքն յինէն]։* 6 *Զի Յով[հաննէս] մկ[րտեաց ի ջուր], այլ դուք մկ[րտիցիք] ի Հոգին Սուրբ» (Գրծ. Ա. 4-5)։* 7 *«Այլեւ գլուխն առաքելոց Պետրոս, տասնեակ թւովք առաքելաւքն յԲԺ.աներորդ (12) աշակե|314ա|րտին եկեալ կատարումն, զընտրութիւնն յաստուածպետութիւն թողոյր երկեղի, «Յայտնեա՛ զմի ոք ի սոցանէ, զոր ընտրեցեր» (Գրծ. Ա. 24)։* 8 *Եւ ել վիճակն Մատաթիայ եւ համարեցան ընդ մետասան առաքեալսն։* 9 *Եւ զի՞նչ էր վիճակն այն, բայց աստուածային ազդումն, զոր յայտնեաց քահանայապետական դասուն այնորիկ ընտրե՛լ եւ աղաւթել, զի յայտնեսցէ նոցա, թէ ո՛ յերկուցն զտեղի անգելոյն լցցէ, ստասցի որ վիճակեալն էր եւ անգաւ։* 10 *Վասն որոյ ո՛չ է պարտ քահանայապետին, որպէս յանձնէ առնել զքահանայապետական կատարելագործութիւնս, այլ յԱստուծոյ շարժեալս։*

ԾԴ. 1 *Իսկ ի վաղխճանի քահանայական կատարմանն համբոյրն ի քահանայապետէն եւ ի քահանայիցն վասն զի փափաքելի համակարգիցն եւ սրբազանիցն դասու եղեւ։* 2 *Ընդ աստուածատեսակ գեղեցկութիւնն ուրախացեալք՝ խնդակիցք լինին. ովմանք, զի ի նոցանէ ի գերագոյնսն, քան զնոսա, պատիւ ամբարձաւ ողջունեն եւ յուղարկեն. եւ ովմանք, զի համատեսակ եւ կցորդ նոցունց կարգի եղեւ. սիրական համբուրիւ փարին եւ պատուոյ մեծարանաւք վեր ամբառնան եւ ընդունին։*

ԾԵ. 1 *Արդ, վասն զի այսպիսի խորհրդական եւ աստուածազարդ*

---

[1] *Քաղուած է Ս. Դիոնիսոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» երկից, V 3.5, է 105։*

աւանդութիւնք են եւ սրբազնագործ եւ գեղեցկավայելուչ կատարողութիւնք, վասն այսորիկ զարժանապէս զարդարանս զգեստու քահանայական պայծառութեանն յառաջաձայնեալ մարգարէս շնորհաբաշխ հոգովն ասէ. «Քահանայք քո զգեցցին զարդարութիւնն» (**Սղմս. ՃԼԱ. 9**)*:* **2** *Եւ արդ, վասն զի բազում զանազանութիւնն քահանայական բանս եցոյց, պա՛րտ է գիտել վասն ո՞յր մարգարէս զայս ասէ, յորմէ եւ քննելի՛ է թէ զի՛նչ զգ|314բ|ենոյր զարդարանս անձին հնոյն քահանայութիւնն, որով եւ զնորս իմասցուք, թէ ուստի՞ գտին զձեւ քահանայական հանդերձից:* **3** *«Վասն զի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնքն»* (**Եբր. Ժ. 1**)*: Աստուածայինն առաքեալ ասէ:* **4** *Զի ամենայն աւրինակք նորոյս էին, վասն որոյ ընգալաւ եկեղեցի զաւրինական քահանայիցն զհանդերձ, զոր ընգալան յԱստուծոյ:* **5** *Եւ այսպէս եւ զպատարագողքս պատուեցաք:*

ԾԶ. **1** *Եւ այս հնոյն զգեստ քահանայական: Պատմուճանն պճղնաւոր եւ ի վերայ նորին վակասն զուսովն եւ զլանջաւքն:* **3** *Եւ վտաւակս պճղնաւորս եւ տախտակ դատաստանի, յորս ԲԺ.ան (12) ակունք ընդ վակասն յեռեալ, եւ խոյր ի գլուխն, եւ թիթեղն ոսկի ի վերայ խոյրին եւ զանկակք ընդ ստորոտով պճղնաւորին:* **4** *Արդ, «պճղնաւորն ի Դ. (4) ից նիւթոց՝ աւրինա՛կ էր չորից տարերց ի բեհեզոյ, որ է երկրի նշանակ, զի վուշ յերկրէ է բուսեալ, կարմիրն՝ հրոյ, կապուտակն՝ աւդոյ, ծիրանին՝ ջրոյ, վասն զի ի ջրո՛յ գոյանայ:* **5** *Եւ ա՛յս է նիւթ երկնի եւ երկրի, զոր զգենոյր քահանայապետն եւ դնէր յուսանոցն զԲԺ. (12) ակունսն ի խորհուրդ ԲԺ. (12) կենդանեացն եւ ԲԺ. (12) ցեղիցն Իսրայիղի, որ ի վերայ լանջացն գայր յագանելն զուսանոցն:* **6** *Երկու զմրխտեայ ակունքն ի կռանն՝ զերկուս կիսագունդս, զի բոլո՛ր է, եւ երկնագոյն ակնս այս եւ խորհուրդ ծովու եւ ցամաքի, ուր բնակեն ամենայն մարդիկ»*[1]*:* **7** *Եւ Զ. (6) անուն յիւրաքանչիւր ակն, զի Զ. (6) կենդանակ[երպս] կայ յիւրաքանչիւր կիսագունդ:* **8** *Եւ ի վերայ բանակին Դ.եք (4) կարգ են ակունք. երիս-երիս ի մի՛ կարգ, զչորս յեղանակս յերից ամսոց նշանակէ:*

ԾԷ. **1** *Եւ զայս ամենայն զգեցեալ քահանայապետն, զերկինս եւ զերկիր, զծով եւ զցամաք, ուր բնակեն ամենայն մարդիկ, եւ |315ա| ի ժամ քահանայական աղաւթիցն զՈրդին իւր զաշխարհ ընդ ինքն տարեալ հաշտեցուցանել ընդ Աստուած, եւ նուէր տալ նմա զերկին եւ զերկիր, «զի քահանայն հայր է աշխարհի, եւ քահանայապետն՝ քահանայից իշխան, իբր հա՛յր հարանց»:* **2** *Դարձեալ է՛ եւ այլ բարձրագոյն խորհուրդ իմանալ, զի զգենուլն Ահարոնի զպճղնաւորն, զմարմնանալն Բանին*

[1] *ԻԳ. պարբերությունը քաղուած է Վարդան Արեւելցու «Սաղմոսաց մեկնություն»ից, էջ 445:*

Աստուծոյ նշանակէ, զի որպէս զգենոյր քահանայն զհանդերձ վակասին, այսպէս զգեցաւ Տէր մեր զհանդերձ խոնարհութեանն քառանիւթեայ՝ կապուտակաւն՝ երկնի՛ եւ երկնաւորացն նմանիլ առաքինութեան, կարմրովն մանուածու՝ զանապական արեանն եցոյց զկցորդութիւնն, որով հաւասարեաց մեզ մարմնոյ եւ արեան, եւ բեհեզովն սպիտակաւ՝ զաստուածութեանն ընդ բնութեանս մեր խառնումն, եւ ծիրանեաւն՝ զանճառելի տնաւրէնութեանն զխորհուրդ զծածկեալն յայտնէ: 3 *Եւ Բժ. (12) ակունքն Բժ. (12) առաքելոցն խորհուրդ, զի սիրտ եւ կամք եղեն Քրիստոսի: Նոյնպէս եւ ա՛յլն մի ըստ միոջէ՝ մեծի խորհրդոյ էին աւրինակք:*

ԾԸ. 1 *Եւ զի այսպէս էր հնոյն ամենայն տպաւորութիւնք նորոյս, վասն այսորիկ եւ նորա զգենու ի ներքոյ զպճղնաւոր պատմուճանն:* 2 *Եւ ի վերայ զվակասն, զոր այժմ ուսանո՛ց կոչեմք, ի զանազան եւ ի գեղեցկերանկ նիւթոց:* 3 *Եւ զտախտակ դատաստանին միայն քահանայապետն ունի յաջ կողմն բարձիցն:* 4 *Եւ զվտաւակն պճղնաւոր ի վերայ, որ այժմ կոչի նափորտ:* 5 *Եւ պարտ է գիտել, զի պատմուճանաւ, եւ հոլանի, եւ առանց գաւտոյ կալն ամենեցուն է ժառանգաւորաց եկեղեցւոյ:* 6 *Իսկ սարկաւագացն՝ պատւոյ եւ առաւելութեան նշանակ:* 7 *Վակասն, որ ի վերայ ահեկ ուսոյն ի վերայ պատմուճանին՝ քահանայիցն առաւելութիւն, զի Բ. (2) ուսովն բառնայ, |315բ| բայց քահանայապետիցն ընդ վակասն եւ զտախտակ դատաստանին ծայրագոյն պատիւ, եւ ի վերայ նափորտին զպատուական եմիփորոնն խաչիւք զարդարեալ, զի Քրիստոս խաչիւ փառաւորեցաւ. եւ նստի յաթոռն փոխանակ Քրիստոսի:* 5 *Եւ զի Քրիստոս ո՛չ վայրապար, այլ խաչիւ եւ մահուամբ ժառանգեաց զհատս զայս:* 9 *Վասն այսորիկ քահանայապետն զեմիփորոնն*[1] *խաչիւք զարդարեալ զգենու, յորոյ վերայ Ե. (5) խաչ, որպէս թէ ասէ. Աշխարհի խաչեալ եմ Ե. (5) զգայարանաւքս, եւ կամաւ մեռայ ընդ Քրիստոսի աշխարհի, եւ կենդանի՛ է յիս Քրիստոս, եւ միայն մարմնով կամ վասն առաջնորդելոյ հաւտիս:* 10 *Իսկ եպիսկոպոսն, որ է բազպանն, որ եւ այս քահանայապետական պատո՛ւն է՝ պատրաստ ունելոյ զձեռնն ի քահանայագործելն:* 11 *Իսկ տախտակ դատաստանին ի վերայ բարձիցն, թէ որպէս ի հնումն քահանայապետն Բժ.ան (12) ակամբք զերկոյտասան նահապետացն անուանն առաջի Աստուծոյ տանէր, վասն քաւութեանն որդեացն բարեխաւս այսպէս եւ ես՝ զանուն փրկչին Քրիստոսի միջնորդ եւ բարեխաւս հաշտութեանն Աստուծոյ:* 12 *Իսկ վակաս եւ նափորտ Բ.որդ (12) որք դասու քահանայիցն տուաւ, զի ի գործ պատուիրանին Աստուծոյ վաստակեսցին*

[1] *ձեռագրում՝ զեփիփորոնն*

անաշխատ։ 13 *Եւ զի աշխատին, վասն այնորիկ արժանի՛ եղեն զառաջնորդութիւնն ժողովրդեանն ժառանգել։* 14 *Իսկ նափորտն՝ զարքունական պատիւն, զի զներքին մարդն բովանդակ ի ներքոյ լծոյն Քրիստոսի եդին, վասն այնորիկ առաջնորդ եւ վերակացու եղեն։* 15 *Իսկ սարկաւագքն, թէպէտ եւ ունին վտաւակ, պատմուճան եւ իշխանական, այլ թեզանաւք՝ վասն գործոյն։* 16 *Եւ վասն ի վերայ ահեկ ուսոյն, յայտ արարեալ, թէ զլուծ պատուիրանին միայն մի՛ ուսով կարացաք բառնալ ներքին մարդոյն, վասն այսորիկ իշխանք կարգեցաք պաշտելոյ եւ սպասաւորելոյ, եւ* |316ա| *ո՛չ առաջնորդելոյ։*

ԾԹ. 1 *Արդ այսոքիկ գեղեցկայարմար ձեւք զարդու քահանայական հանդերձի ի հնոյն ստուերաւք եւ աւրինակաւ պաշտեցեալ եւ ի նորոյս ճշմարտապէս ընդալեալ։* 2 *Բայց զառաւելութիւնն նորոյս գերազանց ճոխութեանն եւ զաննիւթ պայծառութիւնն, որով ոգի՛ զարդարի, ցուցանէ՛ մարգարէս սգեստ եւ ասէ. «Քահանայք քո զգեցցին զա[րդարութիւն]»։* 3 *Յայտնապէս զնորս քահանայութիւնն բացայայտէ բանիւս, զի հինն ամենայն մարմնական եւ նիւթական պաշտամամբք կատարեալ լինէր։* 4 *Զոր աւրինակ, թէ ախորժէ ոք գծագրութեամբ դեղոց պատկե՛ր նկարել, զպէսպէս երանգս դեղոցն ի կի՛ր ածէ, եւ այնպէս եդեալ զուշ դիտաւորութեանն, զի ի ձեւ եւ ի հասակ կենդանւոյ յաւրինեսցէ, զի որպէս զկենդանի հաճոյ թուեսցի։* 5 *Այլ մարդ բանաւո՛ր եւ կենդանի՝ այսոցիկ երանգոց ո՛չ կարաւտի, այլ բանական հոգին միայն ներգործէ զբնական շարժումն անդամոցն եւ զկենդանական գեղեցկութիւնն ցուցանէ*[1]։ 2 *Ըստ այսմ աւրինակի՛ երիւեալ անկենդան յարացուցին գծագրաւղ, որք ի մեղացն Ադամայ տիրեալք, ո՛չ զաւրեցին առնուլ ի պաշտաւն քահանայութեանն իւրեանց զհոգին Աստուծոյ, այլ կերակրաւք եւ ըմբելաւք, եւ պէսպէս մկրտութեամբ, եւ մարմնոյ արդարութեամբ ջանային զճշմարտութիւն գծագրել։* 7 *Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոց բարեացն, եւ է՛տ մեզ զՀոգին Սուրբ զկենդանին եւ զկենդանարար, զոր ունելով ընդ մեզ, ո՛չ կարաւտիմք նիւթական գեղեցկութեան, այլ աննիւթ առաքինութեամբք պայծառանամք։* 8 *Զորոյ զտարացոյցն տայ հոգի ընդալ մարգարէս, եւ ասէ. «Քահան|316բ|այք քո զգեցցին զ[արդարութիւն]»։*

Կ. 1 *Արդ, եթէ զի՞նչ է արդարութիւն ըստ մեզ եւ զի՞նչ՝ ըստ արտաքին իմաստասիրացն, սահմանաւրէն քննութեամբ ցուցցուք։* 2 *Արդարութիւնն*

---

[1] *Ձեռ.՝ ցուցանել, 4րդ եւ 5րդ նախադասութիւնները բերուած են Ներսես Լամբրոնացու Ատենաբանութիւնից, Վենետիկ 1812, էջ 140։*

է բնութիւնն բաժանողական զուգութեանն, ըստ արժանաւորութեանն իւրաքանչիւր ումեք։ **3** *Եւ դարձեալ՝ արդարութիւնն է համախոհութիւնն անձին, նմին եւ բարեկարգութիւնն անձին մասանց առ իրեարս եւ զիրեարաւք։* **5** *Եւ կրկին է սահման արդարութեան. է՛ որ ըստ դիմաց, եւ է՛ որ ըստ իրի։*

ԿԱ. **1** *Արդ տեսցուք զայն, որ ըստ դիմացն է, որ թուի զքաղաքականն զեկուցանել։* **2** *Վասն զի առն քաղաքավարի որոշել ուղեղ դատմամբ՝ պարտ է ըստ դիմացն արժանաւորութեան, զամենայն ինչ վայելչականացն. քաղաքի՛ եւ ազի՛ն, եւ իւրաքանչիւր անձանց։* **3** *Որպիսի՛ ինչ, եթէ ոք ընչից բաժանման լիցի տէր, որ առ հասարակութիւնն հայի, եւ ի չափաւորութիւնն պիտոյից է ընդունողացն տրոյ։* **4** *Եւ եթէ ոք ի դատե՛լ զիշխանութիւն առնուցու, ո՛չ առ ի շնորհս ինչ, եւ առ թշնամութիւնն զվճիռն բերիցէ, այլ բնութեան իրացն զհետ երթալով, պատժիցէ զարժանաւորն եւ զապրեցուցանող վճիռն առ անպարտսն բերիցէ, ճշմարիտ զդատաստանն առնելով։* **5** *Եւ որ զհարկսն ընդ ձեռամբ անկելոցն կարգիցէ, ըստ զարութեանն չափոյ արկանել, եւ տանտէ՛ր, եւ քաղաքի իշխան, եւ ազանց թագաւո՛րն յարմարաբար հնազանդելոցն ուղղութեամբ, զհնազանդեալսն դատելով։* **6** *Իսկ ըստ իրի ասելով, զանձնական մասանցն կարգ եւ նոցին պատկանաւոր առաքինութիւնսն ցուցանէ. բաշխե՛լ ըստ արժանաւորութեանն, բանականին՝ զխոհեմութիւնն, որ* |317ա| *է իմաստութիւն։* **7** *Իսկ ցասմնականին՝ զհեզութիւնն եւ զարիութիւն. իսկ ցանկականին՝ զողջախոհութիւնն եւ զժուժկալութիւնն, որով լինի բոլոր անձինն արդարութիւնն։* **8** *Դարձեալ, արդարութիւնն է՛ զբարիսն չարեացն ընդդէմ չափել. բարկութեանն՝ զհեզութի՛ւնն, եւ երկչոտութեանն՝ զարիութի՛ւնն, զեղխութեանն՝ զողջախոհութիւնն, եւ շռայլութեանն՝ զժուժկալութիւնն, եւ անազատականութեանն՝ զազատականութիւն, եւ փոքրահոգիութեանն, որ է կարճմտութիւն, զմեծահոգիութիւնն, որ է երկայնմտութի՛ւնն։*

ԿԲ. **1** *Իսկ ըստ մեզ. Արդարութի՛ւնն է, յորժամ ո՛չ հոգւո՛յս կամք զմարմնոյս զրկէ, եւ ոչ մարմնոյ զհոգւոյս, եւ ոչ մեք զիրեա՛րս եւ ոչ զԱստուա՛ծ։* **2** *Այլ տալ զիմացումն մտաց իմացութեանն Աստուծոյ, եւ ո՛չ սնոտի զբաղմանց, եւ զներգործութիւնն աշխատութեանն մարմնոյ՝ իւրում պիտոյիցն եւ իրերաց առնել, զոր մեք մեզ պահանջեմք։* **3** *Ըստ որում ասաց Քրիստոս. «Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ» (Ղկ. Զ. 31)։* **4** *Արդ, յորժամ յայսոսիկ լինիմք անթերի, զգեցաք զարդարութիւնն։ Եւ դարձեալ եւս պարզագոյն ասել. Արդարութիւնն է, որ զամենայն մասունս առաքինութեանն ընդ միմեանս յեռեալ՝ յանձին պարագրէ, յոր եւ առաքեալն յոր-*

*դորէ զգենուլ զրահն արդարութեանն (**Եփս. Զ. 14**)։ **5** Զի, որպէս զրահ ի բազում աւղից կազմեալ ի մի յարմարումն՝ զգեստ լինի զինուորական, այսպէս արդարութիւնն ի բազում առաքինութեանց միացեալ՝ զգեստ լինի քահանայական։*

ԿԳ. 1 *Եւ է՛ արդարութիւնն առաջին առ հոգի եւ մարմին՝ ումեմն տալ զվեհագոյնն պատիւ, ըստ արժանաւորութեանն պատկերին, առ սկզբնատիպն նմանութեանն, եւ ումեմն ըստ նիւթական բնութեանն, զհարկաւ|317բ|որն ընձեռեալ պաճարանս կենաց, ոգւոյն նրբութեամբ ընդունակ լինել աստուածային շնորհացն, եւ մարմնոյն նուաստութեան հայելի հողեղէն բնութիւնն, եւ ո՛չ ամբառնալ ի վեր, քան զարժանն։*

ԿԴ. 1 *Եւ է Բ. (2) արդարութիւնն առ այժմու կեանս եւ հանդերձեալն, ոչ զառաւրեայս եւ զանցաւորս մնացակա՛ն, եւ ոչ զհանդերձեալն եւ յաւիտենականն, իբր զթեթեւագոյն, այլ տալ ըստ Սողոմոն իմաստունս Է.անց (եաթանց) կենցաղոյս. գանձել եւ Ը.երորդին (8) հանդերձեալ կենացն։*

ԿԵ. 1 *Երրորդ. արդարութի՛ւնն է առ Աստուած եւ մարդիկ, որ կարի պահանջի ի քահանայից ոչ զմարդկայինս արհամարհել՝ սակս աստուածայնոցն, եւ ոչ զաստուածայինսն անտես առնել՝ սակս մարդկայնոց, այլ ըստ շնորհին տուչութեանն առնուլ զաստուածայինսն սրբազան խորհուրդ եւ ածանցել ի մարդիկ, լինելով աւրինակ բանիւ եւ գործով։ **2** Ո՛չ վասն հեղգութեանն եւ կամ նախանձու թաքուցանել զարծաթեղէն եւ զոսկիաձոյլ բանն տէրունի, եւ ոչ վասն ակնառութեանն արկանել զմարգարիտն առաջի տղմասէր եւ խոզաբարու մարդկան. ո՛չ աներկեղութեամբ առ ի ցոյցս մարդկան մերձենալ յանպարունակելին պարգեւ, եւ ոչ հեղգութեամբ եւ դանդաղանաւք անճաշակ մնալ յարդարացուցիչն խորհրդոյ։*

ԿԶ. 1 *Չորրորդ. արդարութի՛ւնն է հատուցանե՛լ իւրաքանչիւր ումեք զպարտս, եւ ըստ արժանոյն զպատիւ ծերունեացն՝ ալեաւք եւ իմաստութեամբ, իշխանաց եւ ճոխագունից՝ իմաստնոցն բանիւ, եւ առաքինեացն՝ վարուք, ծնաւղաց՝ որ ըստ մարմնոյ եւ հոգւոյ։ **2** Եւ այսպէս յամենայնի ընդ միջինն գնալ անխոտոր ճանապարհ, եւ ոչ խոտորիլ յաջ|318ա| եւ կամ յահեկ (**Առկ. Դ. 27**)։ **3** Եւ զարդարութիւնն արկեալ զգեստ զանձամբ, նախ ինքն եւ ապա արդարացուցանել եւ զայլս, զի արդարութիւնն ներքին մարդոյն է պճղնաւոր եւ ագանելիք, որ է պատուական եւ աստուածագեղ եւ ազնի՛ւ, քան զարտաքինն, որ թէպէտ զարմանալին էր, այլ զհոգեւորն զգենուլ պարտ է զպատմուճան, որ է արդարութիւնն, եւ այնպէ՛ս քահանայագործել, ըստ մարգարէիս. «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն»։*

ԿԷ. 1 *Բայց քննելի է եւ այս, վասն զի չորք են առաքինութիւնն հոգւոյ՝*

արիութի՛ւն, արդարութի՛ւն, ողջախոհութի՛ւն, խոհեմութի՛ւն, զի՞ զմիննմիայն յիշեաց զարդարութիւնն։ 2 *Եւ պարտ է գիտել, զի եռամասնեայ գոյ ոգի. ունի բան, ցասումն եւ ցանկութիւնն։* 3 *Եւ չորք են առաքինութիւնք հոգւոյ՝ արիութի՛ւնն, արդարութի՛ւնն, ողջախոհութի՛ւնն, խոհեմութիւնն։* 4 *Եւ այսոքիկ յիրաւի՛, զի պարտ է զիւրաքանչիւր մասն հոգւոյ իւրակա՛ն զարդարիլ առաքինութեամբ, ուստի բանն խոհականութեա՛մբ զարդարեալ գոյ, իսկ բարկութիւնն՝ արիութեա՛մբ, իսկ ցանկութիւն՝ ողջախոհութեա՛մբ։* 5 *Եւ վասն զի ո՛չ միայն պարտ է իւրաքանչիւր մասին իւրականա՛ւ զարդարիլ առաքինութեամբ, այլեւ յարմարումն եւ բարեկարգութիւնն առ միմեանս պահել*[1]։ 6 *Վասն այսորիկ արդարութի՛ւնն ընդ ամենեսեան թափանցանց երեւի։* 7 *Եւ զի մի՛ միայն ի միում մասին, այլ յամենայն մասունսն տեսանեմք զբարեկարգութիւնն պահել։* 8 *Եւ որպէս յամենայնում տեսանեմք, զոմանս իշխա՛ն միայն, որպէս զաստուածայինն, եւ զոմանս իշխան եւ ընդ իշխանութեամբ, որպէս մարդկայինն. քանզի մարդկայինքն ընդ իշխանութեամբ են աստուածայնոցն, եւ իշխե՛ն անասո՛ւն կենդանեաց, իսկ այլք՝ ընդ իշխանութեա՛մբ միայն, որպէս անաս|318բ|ո՛ւն կենդանիք*[2]։ 9 *Ըստ նմի՛ն աւրինակի եւ ի մարդո՛ւմ, իբր ի փոքր աշխարհում։* 10 *Ըստ Դիմոկրիտոսի այսոքիկ տեսանին. ովմանք իշխան միայն, որպէս բան, եւ ովմանք իշխեն եւ իշխին, որպէս բարկութիւնն, քանզի բարկութիւնն իշխի ի բանէ եւ իշխէ ցանկութեանն։* 11 *Իսկ ոմանք միայն իշխին, որպէս ինքն ցանկութիւնն։* 12 *Եւ վասն զի արդարութիւնն առաւելագոյն է, քան զայլ առաքինութիւնս, որպէս իշխան եւ պահող բարեկարգութեանն, վասն այնորիկ զնայ միայն ասէ զարդ քահանայական։* 13 *Ըստ այնմ՝ «Քահանայք քո զգեցցին զարդարութիւնն»։* 14 *Քանզի արդարութիւնն հաւասարաբաշխութիւնն է, զի խոհականն թէ աւելի՛ է, նենգաւո՛ր է, թէ պակաս՝ անմիտ, իսկ հաւասարակշիռն՝ արդա՛ր։* 12 *Նոյնպէս արիակա՛ն. առաւելեալն յանդուգն եւ լիրբ, եւ պակասն՝ երկչո՛տ, իսկ հաւասարն՝ արդար։* 16 *Այսպէ՛ս ողջախոհութիւնն պակասեալն՝ արբշիռ է եւ իգամոլ, եւ աւելին՝ անխայող մարմնոյն եւ սպանող, եւ զուգականն՝ արդա՛ր։*

ԿԸ. 1 *Եւ զի՞ այսքան հարկաւոր է չորրորդ առաքինութիւնս, որ է արդարութիւնն, վասն որոյ քահանայից հրամայէ մարգարէս զգենուլ զարդարութիւնն։* 2 *Եւ դարձեալ՝ զարդարութիւնն յիշելով զամենայն առաքինութիւնս միանգամայն առեալ եցոյց, զի յերիս բաժանի առաքինու-*

---

[1] *Հմմտ. Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 446։*

[2] *Միտքը քաղուած է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանօք»ից.- «Բանբեր Մատենադարանի», 3, 1956, էջ 299։*

թիւնն. ի բնակա՛նն, ի բարոյականն, ի մակստացականն։ 3 *Բնակա՛ն է, որ մի անգամ ըստ խառնուածոյ մարմնոյն գոյանայ, որք ոչ հետեւին միմեանց, քանզի որ ի խառնուածոյ մարմնոյն է ողջախոհ, նայ ո՛չ ամենայն իրաւք խոհեմ եւ արի՛ եւ արդա՛ր կարէ լինել։* 4 *Եւ ա|319ա|յսպիսի տեսակ առաքինութեան ծառայականք կոչին եւ անբա՛նք։* 5 *Ծառայականք՝ որպէս ի հարկէ հետեւեալ խառնուածոյ մարմնոյն, զի որ ի ցուրտ խառնուածո՛յ է, նա ի հարկէ ողջախոհ է։* 6 *Եւ անբանք կոչին, վասն ոչ գիտելոյ զպատճառն, թէ վասն է՞ր պարտ է ողջախոհ լինել։* 7 *Եւ դարձեալ, զի յանբան կենդանիստ բնաւորեցաւ այսպիսի առաքինութիւնն լինել, որպէս տատրակ՝ ողջախոհ եւ ուղտ՝ խոհեմ, առիւծ՝ արի՛ եւ արագիլ՝ արդա՛ր։*

ԿԹ. 1 *Իսկ բարոյական առաքինութիւնն է, որ յաւանդութենէ եւ ի պատուիրելոյ գոյ ողջախոհ, զորոյ ո՛չ գիտէ զպատճառն, որք ոչ հետեւին միմեանց։*

Հ. 1 *Իսկ մակստացական առաքինութիւնն է ստացեալն աշխատութեամբ, որք հետեւին միմեանց, իբրեւ զշարս շղթայից՝ բուռն հարեալ զիրերաց։* 2 *Քանզի է, որ պատճառաւ է ողջախոհ, այսինքն՝ գիտէ զպատճառն, թէ վասն է՛ր է պարտ լինել ողջախոհ։* 3 *Վասն զի յանիրաւութենէ՛ ժլատութիւնն եւ ագահ անիրաւութիւնք լինին։* 4 *Եւ գիտելով զայս նա ի հարկ է եւ արի՛ գոյ զախտսն ստորադասելով։* 5 *Այնպիսին եւ խոհե՛մ կարէ լինել, գիտելով զպատճառն ստորադասելոյ ախտին։* 6 *Այնպիսին եւ արդա՛ր գոյ, գիտելով թէ ի մարմնական հեշտախտութեանց լինին անիրաւութիւնք։* 7 *Եւ զի այսպէս, իբրեւ զգլուխ պարու ի պարաւորսն է արդարութիւնն։* 8 *Վասն այնորիկ զնա միայն յիշէ, զի զձեռանէ կալեալ զայլոց առաքինութեանցն ընդ ինքեան մուծցէ։* 9 *Ըստ որում ասէ. «Քա[հանայք] քո զգեցց[ին զարդարութիւն]»։*

ՀԱ. 1 *Բայց, ուրեմն, զանազանեալ է արդարութիւնն յարդարոյ, որպէս սեռ ի տեսակ|319բ|է, եւ բոլոր ի մասնէ, զի արդարութիւն ընթհանրակա՛ն է եւ զարդարիչ՝ որ զգեցեալն է, եւ արդա՛ր մասնակա՛ն է՝ առեալ յարդարութենէն։* 2 *Յորմէ գիտելի՛ է, զի արդարութիւն ասի Քրիստոս, ըստ Պաւղոսի ձայնին, որ եղեւ մեզ յԱստուծոյ Հաւրէ արդարութի՛ւն, եւ սրբութի՛ւն, եւ փրկութի՛ւն (Ա. Կոնթ. Ա. 30), յորմէ ընդալան արդարքն՝ զարդարութիւնն, եւ սուրբք՝ զսրբութիւն, եւ փրկեալք՝ զփրկութիւն։* 3 *Եւ քահանայք ընդալան զպատիւ քահանայութեանն, որոց զնոյն ինքն զարդարութիւնն զՔրիստոս՝ զգենուլ ասէ, իբրեւ զհանդերձ։* 4 *Եւ աւրինակաւ նորայն բարեաց, որով եղեւ մեզ ապացոյց, զարդարել զանձինս ըստ բանի մարգարէիս. «Քահ[անայք] քո զգեցց[ին զարդարութիւն]»։*

ՀԲ. 1 *Եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։ 2 Ովմանց այսպէս թուեցաւ, թէ սուրբն առաւելութիւնն է արդարոյն, ուստի եւ զանչափ անիրաւն անսուրբս կոչեմք։ 3 Այլ զանազանեա՛լ է սուրբն եւ արդարն, զի արդա՛ր է, որ զզուգութիւնն հոմատեսակացն պահէ, իսկ սուրբ է, որ յաստուածայնոցն ունի փոյթ յանձին։ 4 Բայց աստ եւ ա՛յլ ինչ ցուցանէ նրբայհայեաց իմն յարմարումն բանի, զի նախ զարդարութիւնն զՔրիստոս, որ զամենայն մասունսն առաքինութեանն ի մարմնի՛ իւրում բովանդակեաց, եցո՛յց զգեստ քահանայական, եւ ապայ զայնպիսի զգեստաւորեալսն նո՛յն նմանութեամբն ցուցանէ զարդարեալս։ 5 Զի սուրբ ասելն միայն Աստուծո՛յ է սեփհական, զոր սերովբեքն սրբասաց եռակի ձայնիւք ի մի՛ հաւաքէին սրբո՛յն սրբոց։ 6 Եւ զի ոչ ոք յեղանակացս զգալեաց գտանի այսպէս, վկա՛յէ Սողոմովն «Ով պարծեսցի սիրտ սուրբ ունել, կամ ով համարձակեսցի, թէ սո՛ւրբ է ի մեղաց»* (**Առկ. Ի. 9**)*։ 7 Այլ զոր իւր սեփհական գոյր ի բնութենէ, արժանաւորեա՛ց զմեզ նոքի|334ա|մ*[1] *անուանիլ շնորհաւք։ 8 Զի որպէս ինքն «հոգին երեսաց մերոց Տէր Քրիստոս»* (**Ողբ. Դ. 20**)*, որ է աւծեալ, կոչեաց եւ զմեզ աւծեալս, որ եմք քրիստովնեայք։ 9 Եւ ըստ Դանիէլի վէմն առանց ձեռին հատեալ* (**տե՛ս Դնլ. Բ. 34**)*, անուանեաց եւ զգլուխն առաքելոց վէմ, յորմէ եւ մեք կոչեցաք վէմ։ 10 Դուք, ասէ, իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանարատ քահանայութիւն։ 11 Նոյն եւ որ ասաց. «Ես եմ լոյս աշխ[արհի]»* (**Յվհ. Ը. 12**)*։ 12 Անուանեաց եւ զաշակերտսն «լոյս» ըստ այնմ. «Դուք էք լոյս աշխ[արհի]»* (**Մտթ. Ե. 14**)*։ 13 Այսպէս եւ զամենայն բարեաց տեսակ ի բնութենէ ունելով, ետ եւ մեզ կցորդութիւնն։*

ՀԳ. 1 *Նոյնպէս եւ որ միա՛յն սուրբն է ճշմարտապէս, այնու անուամբ եւ զսրբեալսն ի նմանէ անուանէ մարգարէս, ասելով. «Սուրբք քո ցնծալով ցնծասցեն»։ 2 Իսկ զի՞նչ ցուցանէ մեզ երկուց կրկնապատկութիւն անուանցն. «Ցնծալո՛վ ցնծասցեն»։ 3 Բազո՛ւմ ինչ յաստուածային գիրս է գտանել այսպիսի, որ զգերազանցութիւնն իրին յայտնէ այսպիսի բանիւ։ 4 Որպէս «թագաւոր թագաւորաց» ասելով զԱստուա՛ծ նշանակեմք, եւ «իշխան իշխանաց»՝ զթագաւորէ յայտ առնեմք, «արհեստ արհեստից»՝ զիմաստասիրութիւնն ցուցանեմք, եւ «գործ գործոյ» զառաքինութիւնն բացայայտեմք, այսպէս ի Գիրս Սուրբս ասելով «երգս երգոց»՝ զգերադրականն եւ զանհամեմատն այլոց երգոց եւ զխորագոյնն իմաստից պարունակող։ 5 Եւ «Սուրբ Սրբոց»՝ զանմատոյցն հասարակաց մարդկան եւ*

[1] *Այստեղ ձեռագրի գրիչը տողատակ նշել է. «ԺԴ. (14) թուղթ յառաջ գնա՛», որ ձեռագրի 334ա էջն է, սրա վերեւում եւս գրիչը նշել է. «ԺԴ. (14) թղթի պակասն այս է»։*

միայն մաքրութեամբքն արժանաւորաց մտանելի։ 6 *Եւ «Երկինք երկնից»՝ ուր միայնակ Ինքն ամենայսուրբ Երրորդութիւնն ասի բնակել*[1]*, արտաքոյ թողեալ զամենայն արարածս։* 7 *Այսպէս՝ «ցնծալով ցնծալ» ասէ մարգարէս, որ անհասարա՛կն է այլոց* |334բ| *ցնծութեանց։*

ՀԴ. 1 *Զնոյն եւ երկուս ուրախութիւնս յաստուածայինն առաքելոյ ուսանիմք. «Ուրախ լերուք ի Տէր։* 2 *Դարձեալ ասեմք՝ ուրախ լերուք» (***Փլպ. Գ. 1***), յաւելու եւ զպատճառս երկուցն։* 3 *«Հեզութիւնդ ձեր յայտնի լիցի» (***Փլպ. Դ. 5***) այս առաջի՛ն ուրախութիւնն, զի այսպիսի առաքինութեամբ վարիլն բաւական ուրախութիւն է։* 4 *Իսկ Բ. (2) որդն, որ է «ուրախութիւնն ուրախութեանց», զի ասէ, «Տէր մերձ է, մի՛ ինչ հոգայք» (***Փլպ. Դ. 6***)։* 5 *Զնոյն եւ ի Տեառնէ ուսանիմք. բարիոք քաղաքավարելոցն Ճ.ապատիկ (100) առնուլ աստէն յայսմ աշխարհի, որ է ցնծութիւնն եւ ի հանդերձելումն զկեանսն յաւիտենից ժառանգել, որ է «ցնծութի՛ւնն ցնծութեան»։* 6 *Այսպէս եւ մարգարէ՛ս ասէ. «Սուրբք քո ցնծալով ցնծասցեն»։* 7 *Ցնծա՛լ հրամայէ ազատ գոլով ի խղճէ մտաց, եւ զի ցնծութիւնն առաւելութիւնն է խնդութեանն, որպէս թէ՝ եռալ եւ զուարճանալ եւ ծաղկիլ հոգւովն։* 8 *Եւ կրկի՛ն ասելն՝ «ցնծալով ցնծալ», կրկի՛ն մարդովն յա՛յտ է, զի գրեալ է. «Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթ են եւ ծաղկեալ» (***Առկ. ԺԵ. 13***)։*

ՀԵ. 1 *Բայց պարտ է որոշումն առնել երկուց ցնծութեանցս, զի յայտնեսցին իմաստքն ի սկզբանէ բանիս ցուցանելով յարմարական կարգիւ. զի քահանայք արդարութեամբ զգեստաւորեալք եւ սրբութեամբ սրբոյն՝ սրբոցն նմանեալք կրկին ցնծութիւնս վայելեն՝ զայժմուս եւ զհանդերձեալն։* 2 *Զայժմուս, զոր ի քահանայագործելն խորհրդապէս վայելեն, եւ զհանդերձելոյն զոր ի բաց մերկացեալ ի զգալեացս, բացափայլ եւ յայտնի՛ տեսանեն։* 3 *Եւ ճշմարիտ ցնծութիւնն է՛ ամենայն ինչ, որ յեկեղեցի կատարի սրբազնագործութիւնն, զի ի ջուր աւազանին մկրտելով զմահն եւ զյար|335ա|ութիւնն Քրիստոսի նշանակեմք. ի հաց եւ ի գինի մարմնոյ եւ արեանն Քրիստոսի հաղորդեմք, զգիրս Աստուածաշունչ ընթեռնլով՝ յամէնանոյշ պտղոց դրախտին վայելեմք, ի սմայ զնո՛րն տեսանեմք Ադամ, փոխանակ հնոյն։*

ՀԶ. 1 *Ա՛ստ է եւ ճշմարիտ Մայրն կենաց, յորմէ ծնեալն կուսութեամբ Որդի կեանս պարգեւեաց աշխարհի։* 2 *Զի սա է դրախտ աստուածատունկ, տապա՛ն ապրեցուցի՛չ, աշտարա՛կ անմատոյց, խորան խորհրդաւոր, լեա՛ռն Սինեայ՝ իջմանն Աստուծոյ տեղի, վրան Մովսիսեան եւ ամե-*

[1] *Այս միտքն առկայ է նաեւ Գրիգոր Աստուածաբանի Յովհան Մայրագմեցու, Յովհան Օձնեցու երկերում։*

նայն, որ ինչ ի հնումն ստուերագրեցաւ, աստ բացափայլ ցուցաւ, որ է ստուերին ճշմարտութիւնն եւ հանդերձելոյն աւրինա՛կ։ 3 *Վասն որոյ կատարողքն այսմ խորհրդոյ, ցնծալով յայսպիսի սրբազնագործութիւնս, ցնծասցեն ի հանդերձեալն, յորժամ զբոլորն բովանդակապէս իմասցին՝ ի սեղանն Հաւր բազմելով, յՈրդոյ պաշտպանեալք։* 4 *Եւ զոր «այժմ տեսանեն իբրեւ ընդ հայելի, յայնժամ տեսցեն դէմ յանդիման այժմ փոքր ի շատէ, յայնժամ փոքրս ի շատէն խափանեսցի»* (**տե՛ս Ա. Կրնթ. ԺԳ. 12**)։ 5 *Զոր եւ մեծն Յոհաննէս ասէ. «Սիրելիք, այժմ որդի՛ք Աստուծոյ եմք», որ է ցնծութիւնն, եւ «գիտեմք, զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելո՛ց եմք»* (**Ա. Յովհ. Գ. 2**)*, որ է ցնծութիւնն ցնծութեանն։* 6 *Որոյ ցնծութեանն եւ այժմ դուք՝ եղբարք բաժանակիցք եւ ժառանգորդք հանդերձեալ էք նուիրիլ եւ կոչիլ ի քահանայութեանն բարձրագահն վիճակ, միջնորդք քաւութեան եւ զաղերս աղաւթից բոլորի՛ց Տեառն նուիրող, որոց պարտ է զամենայն առաքինութեանց տեսակ զարդ զանձամբ արկանել, սրբութե՛մբ ի սուրբն մերձենալ եւ մաքրութեամբ զմաքրութի՛ւն* |335բ| *ընդունել. պատրա՛ստ լինել ձեզ եկաւորութեանն շնորհաց հոգւոյն, որով կարասջիք լինել քահանա՛յ ի տաճարի Տեառն եւ տաճա՛ր կենդանի քահանայապետին Քրիստոսի, անշէջ պահելով զլոյս շնորհաց հոգւոյն, զոր եւ մեծն առաքեալ զգուշացուցանէ. «Զհոգին մի՛ շիջուցանէք»* (**Ա. Թես. Ե. 19**)։ 7 *Զի, զոր աւրինակ, ճրագ լուցեալ եւ եդեալ ի տան՝ ջրո՛յ արկելոյ ի վերա՛յ շիջանի, եւ հողով ծածկելո՛յ եւ ի հողմոյ ընդ պատուհան հնչելոյ, եւ ի պակասութենէ ձիթոյ, եւ ի հեղգութենէ կազմողի։* 8 *Այսպէս եւ լոյս շնորհաց հոգւո՛յն սրբոյ շիջանի՛ հոսանուտ իրաւք կենցաղոյս, որպէս ջրով, եւ ծածկի ի գետնաքարշ խորհրդոց, որպէս հողո՛վ, եւ ի հողմոյ փորձութեանց՝ ընդ զգայարանս մտելոց, եւ ի պակասելոյ առաքինութեանցն ձիթոյ, եւ ի հեղգութենէ եւ դանդաղանաց։* 9 *Վասն որոյ պնդեալ զմէջս մտացն ձերոց, անշէջ պահեսջիք զիմանալի լուսոյն ի ձեզ զպայծառութիւնն։* 10 *Վասն զի ահայ, ըստ տերունեան բանին, ճրագ լուցանիք եւ յաշտիճան փառաց բարձրանայք, զոր ոչ է պարտ թաքուցանել ընդ գրուանաւ* (**տե՛ս Մտթ. Ե. 15**)։ 11 *Եւ զի՞նչ է գրուան. չափոյ անուն. զի որով չափով եւ մեղանչեմք, այնքա՛ն շիջուցանեմք զլուսոյն պայծառութիւնն։*

Հէ. 1 *Իսկ եթէ կամիք իմանալ զյեղանակ, թէ որպէս լուցանիք ճրագ, ցուցանեմ ի ճշմարտութենէն ի Տեառնէ եւ յառաքելոցն։* 2 *Զի յորժամ փչեաց ի նոսա, ասելով՝ «Առէ՛ք Հոգի Սուրբ», նոյն ժամայն պայծառացան վառեալք հրով Հոգւոյն Սրբոյ։* 3 *Որոց եւ Տէրն եցոյց բանիւ. «Դո՛ւք էք լոյս աշխարհի»։* 4 *Այսպէս եւ այժմ, որ Քրիստոսի՛ է փոխան, եւ մեզ*

քահանայապետ գործ|336ա|ակցութեամբ Հոգւոյն, եւ զձե՛զ լուցանէ ճրագ, քանզի ունիք զհողանիւթ մարմին, իբրեւ զճրագ, եւ զառաքինութիւնն հոգւոց արկեալ ձեթ, եւ զմիտս մաքուրս իբրեւ զպատրոյգ պատրաստեալ, եւ դնելով աջոյն՝ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ վառեալ պայծառանայք։ 5 *Եւ դնէ զձեզ ի բարձր աշտանակի յեկեղեցի՛ սուրբ, զի եւ զայլս լուսաւորեսջիք։* 6 *Արդ, զգոյշ կացէք, զի որպէս լուցանիլն ո՛չ միայն վասն ձեր է, այլ եւ բազմա՛ց, այսպէս եւ շիջանիլն ո՛չ միայն անձին առնէ վնաս, այլեւ յոլովից եւս գործէ կորուստ։* 7 *Վասն որոյ համարս պահանջելոց էք ընդ ամենայնի. ո՛չ միայն ընդ անձին, այլ յաղագս որոց դնիք լուսաւորիչք։* 8 *Եւ որպէս քահանայք կրկին պատուոյ արժանի են, յորժամ զինքեանս աւգտեսցեն եւ զայլս, այսպէս եւ կրկին պատժոց արժանի լիցին, յորժամ անձանց եւ բազմաց գործեսցեն վնասս։* 9 *Եթէ ի հասարակաց մարդկանէ մարդ մարդոյ մեղանչէ, զԱստուա՛ծ աղաչեսցեն։* 10 *Ոչք այնոքիկ աղաչողքն իցեն, եթէ ոչ քահանայք։* 11 *Իսկ յորժամ յԱստուած մեղանչեն, զո՞ ոք արդեաւք աղաչեն։*

ՀԸ. 1 *Եւ ստուգապէս յԱստուած մեղանչել քահանայի՛ցն է, որք քաւիչք կարգեցան, զի թէ քաւիչքն անքաւելի՛ մեղանչեն, մեղուցեալքն յումմէ՞ ունիցին զքաւութիւնն։* 2 *Եւ թէ բժիշկքն անբժշկելի՛ պաշարիցին ցաւաւք, հիւանդացեալքն զի՞նչ յոյս առ նոսա ունիցին։* 3 *Նաւավար զգաստ եւ իմաստուն զաստեղս երկնից նշմարէ եւ ժրաջան աշխատութեամբ, զորս ի նաւին, բազում շահիւք ի նաւահանգիստն հասուցանէ։* 4 *Իսկ ծոյլն եւ անիմաստ՝ հանապազ ծովածուփ եւ մոլար շրջի, եւ նաւաբեկութեամբ բազում արեանց պարտական գտանի։* 5 *Այսպէ՛ս եւ զնաւ|336բ| եկեղեցւոյ, որ է հաւատն ուղղափառութեանն, եւ նաւեալք ի սմա՝ ծնունդք աւազանին եւ անդամք Քրիստոսի։* 6 *Եւ գլուխ նաւուն քահանայք եւ առաջնորդք եկեղեցւոյ։* 7 *Եւ ծով երեք ալեաւք ծփեալ աշխարհս այս բազմավրդով։* 8 *Յորժամ առաջնորդք եկեղեցւոյ զաստեղս նշմարեն, այսինքն՝ զլուսատեսիլ բանս առաքելական եւ մարգարէական Գրոց Սրբոց, եւ նոցուն խրատիւք առ նաւահանգիստն Քրիստոս հասուցանեն։* 9 *Իսկ ծոյլք եւ մարմնասէրքն, եւ տգիտութեամբ խաւարեալքն անդնդասոյզ ընկղմին եւ զբազումս ընդ ինքեանս ջրահեղձուց առնեն։*

ՀԹ. 1 *Վասն որոյ, աղաչեմ զձեզ, յաւրինակացս յայսցանէ լուեալ ուղղեցէ՛ք զանձինս ձեր, խոտորելով ի չարէն, եւ առնել միշտ զբարի, զի ճշմարիտ բարոյն լիցիք կերպարան։* 2 *Անշա՛րժ մնալ ձեզ յաշտանակդ փառաց, յորում բարձրացայք, անշէջ պահել ի ձեզ զկայծակն շնորհացն, որով եւ լուսաւորիք։* 3 *Ո՛չ տալ թոյլ ընդ պատուհանս զգայարանաց, որ են մուտք մահու եւ կենաց, մտանել հողմոյ փորձութեան եւ շիջուցանել*

զլոյս շնորհաց աստուածային հոգւոյն այլ իմաստութեամբ խոհականին իմասջիք զառաւելութիւնն պարգեւիդ, որում ճոխանայք. երկնաւորացն լինիք համադասք եւ երկրաւորաց հրեշտակք հաշտութեանն, եւ պատգամաւորք քաւութեան՝ ի յերկրի կապողք եւ ի յերկինս փակողք, յերեսս երկրի արձակողք եւ երկնաւոր բարեացն հաւասարողք։ **4** *«Աստուածագործութեանն Յիսուսի» բաժանորդք եւ եւս յաւէտ, քան զնոյն՝ հրաշագործողք։* **5** *Տէրունեան գանձուն պահանորդք եւ երկնաւոր փարթամութեանն գտաւղք, որում պարտ է խնդութեամբ եւ դողութեամբ*[1] |320ա| *սպասաւորել, զի ունիցիք ի դէպ ժամու տալ զպետս ծառայակցացն, եւ արկանել զարծաթ Տեառն ձերոյ ի գործ վաճառաշահութեանն, զի հաւատարիմ կոչիցիք ծառայք, եւ բազում քաղաքաց ընկալջիք զիշխանութիւնն ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք, պատիւ եւ զաւրութիւն այժմ եւ յաւիտեան։*

[1] *Այս էջի վերջում եւս գրիչը նշել է. «ԺԷ. (17) թուղթ յետ գնա՛ եւ սոցա պակասն գի՛տ»։*

ԻԹ.

|320ա| ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆՆԻՍԻ], ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՐԴՈՅՆ ԵՒ ՄԱՀՈՒ, Ի ԲԱՆ ԻՄԱՍՏՆՈՅՆ, ՈՐ ԱՍԷ. «ԱՍՏՈՒԱԾ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԶՄԱՐԴՆ ՅԱՆԵՂԾՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ՊԱՏԿԵՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՅ ԱՐԱՐ ԶՆԱՅ»

Թեեւ երկու ձեռագրերում էլ այս ճառը ցավալիորեն ամբողջությամբ չի պահպանվել, սակայն ելնելով բովանդակությունից՝ կարելի է ենթադրել, որ 2173 ձեռագրում այն գրեթէ ամբողջական է, եւ բացակայող հատվածն աննշան մաս է:

Բնագրում հեղինակը ինքնության է առնում մարդկությանը հավիտենապես հուզող մի շարք գիտական, փիլիսոփայական խնդիրներ՝ Աստվածային արարչագործության, բնության եւ կենդանական աշխարհի վրա ժամանակի ամենազոր ներգործության, կյանքի եւ մահվան անխուսափելի հաջորդականության եւ բազմաթիվ այլ խնդիրներ:

Երզնկացին բնականաբար չի հակադրվում աշխարհաստեղծման եւ աշխարհընկալման կրոնափիլիսոփայական հայացքներին, սակայն օգտվելով Սուրբ Գրքի եւ հույն իմաստասերների ու իր նախորդների եւ սեփական փորձի ու համոզմունքների վրա՝ գտնում է, որ ոչ միայն աշխարհը նյութական է եւ իմանալի, այլեւ մարդուն Աստծո տված հինգ զգայարանների միջոցով նա կարող է առնչվել եւ ճանաչել նաեւ երկնային երեւույթներ: Ավելին՝ նա համոզված է, որ աշխարհը ճանաչելու եւ զգալու համար մարդուն օգնում է հենց բնությունը, իր «անբարբառ» ու «անյօդական» լեզվով խոսում եւ պատմում է իր մասին:

Քարոզում Երզնկացին բավական ընդհարձակ անդրադարձ է կատարում հանդերձյալ կյանքի՝ հոգիների հավիտենականության եւ միանմանության մասին: Ինչպես եւ ժամանակի յուրաքանչյուր մտածող, Երզնկացի վարդապետը եւս համեմատության մեջ դնելով երկրային եւ երկնային կյանքերը, նախապատվությունը տալիս է միապաղաղ հավիտենական կյանքին: Սակայն իր հայրենիքին, աշխարհին ու նրա գեղեցկություններին սիրահար բանաստեղծը անթաքույց ցավով է նշում մարդկային կյանքի վաղանցիկության մասին, գրելով. «Երազ եմք, ոչ կայուն, երեւումն իմն՝ ոչ՝ ըմբռնելի թռիչք հաւու անցանելս ընդ աւդ նաւ ի վերայ ծովու՝ հետս ո՛չ ունելով, փոշի, գոլորշի, առաւտեան ցաւղ, ծաղիկ ժամանակաւ բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ...» |333աբ|:

Բնագիրը հրատարակվում է ՄՄ 2173 (Ա. 320ա-333բ) եւ 7032 (Կ. 122ա-129ա) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *«Ամենայնի*[1] *ժա՛մ եւ ժամանակ է ի ներքոյ երկնից»* **(Ժղվ. Գ. 1)**, *ասէ*[2] *իմաստնացեալն յԱստուծոյ Սաղոմովն արքայ, ընդ որում եւ ընդ այլ եղեալսն ի ժամանակի, զորս թուէ, ասէ եւ զայս. «Ժամանակ շինելոյ եւ ժամանակ քակելոյ»* **(Ժղվ. Գ. 3)**:

Բ. 1 *Արդ, զի թէպէտ բազմադիմի՛ են դրունք իմաստից ի բան իմաստնոյս, այլ մեզ միո՛վ դիմաւք բացայայտեալ լիցի, զի ժամանակս այս արեգական բերմամբ չափեալ ըստ շրջաբերութեան երկնից, որ ինչ պարունակեալք են ընդ երկնաւ, շարժականք եւ փոփոխելիք են, ժամանակաւ գոյացեալք, ըստ շինելոյն աւրինի, եւ ժամանակաւ ապականեալք, ըստ քակելո՛յն:* **2** *Վասն որոյ «ժամանակ շին[ելոյ] եւ ժամ[անակ] քակելոյ»:* **3** *Երկոքեան պատճառս ունելով ըստ պատշաճի եւ խորհրդոյ գործոյն զբերումն ժամանակին, որպէս եւ շինեալ լինի երբեմն ստեղծմամբ եւ ծննդեամբ բանական կենդանիս այս մա՛րդ, շնչական եւ շարժական քաղաք՝ խորհրդակա՛ն եւ բարեզարդ ձեւով սքանչելի՛, լայնանիստ եւ բարձրակառոյց, արքայանիստ*[3] *խորանաւք կազմեալ*[4]*, յամենիմա|320բ|ստ արուեստէ արարչագործ զաւրութեան Աստուծոյ յարմարապէ՛ս շինեալ եւ գեղեցկադիր մասամբք անդամոց յաւրինեալ. գլխոյ գերագո՛յն կացեալ, եւ ակն դիտապետ*[5] *բարձրայաւն բազմեալ, ըստ ընդունք սահմա՛ն իմն ի միջոցի կառուցեալ, ձեռն ի գործ գեղեցիկ կազմեալ եւ մատունք ի պէտս արուեստի բնաւորեալ:* **4** *Այլ ոմն այլո՛յ իրիք պատշաճագոյն սահմանեալ, եւ ամենեքեան առ ամենեսեան ի միոյ շինուածոյ վայելչութիւնն հաւաքեալ:*

Գ. 1 *Եւ զարմանահրաշ անաւթ իմն թագաւորական գործի, ի ճահ եւ դէպ զբնութիւնս մեր քա՛ջ եւ առաքինի արուեստագետն արարեալ, յերի՛ց սկզբնաւորագունից կենդանական արմատոց կարգաւորել բոլորիմբ զկենդանին. ի գլխոյն ի սկզբանէ շարժութեան ջի՛լ, որովք, իբր մեքենայիւք, իւրաքանչիւր ոք յանդամոցն շարժին եւ ի խելապատակէ անտի լո՛յս եւ իմաստութիւնն Բանին ծնանի:* **2** *Իսկ ի սրտէ՛ն ի սկզբանէ կենդանականին՝ շնչերակ ամա՛ն շնչոյ, որովք կենդանական ջերմութիւնն ընթանայ ընդ մասունս մարմնոյն:* **3** *Իսկ ի լերդէ՛ն ի սկզբանէ արեան կերակրականի, երակ ամա՛ն արեան:* **4** *Երեքեան սոքայի ի միասին գոլով, զառ միմեանց աւգուտն ընդունին:* **5** *Երակ կերակուր բաշխէ ջլի՛, եւ շնչերակ հաղորդեցուցանէ զերակ ջերմութեան բնաւորականի՛ եւ շնչո՛յ կենդանա-*

---

[1] *Կ ամենայն*
[2] *Կ > ասէ*
[3] *Կ > եւ բարձրակառոյց արքայանիստ*
[4] *Կ կամեալ*
[5] *Կ դիտապետ կացեալ*

կանի։ 6 *Ուստի ո՛չ է շնչերակ առանց նուրբ արեան, եւ ոչ երակ առանց*[1] *շնչոյ։* 7 *Որով եւ զայս կենդանի եւ շնորհալի շինուած, իբր աշխարհ իմն գնացիւք գետոց եւ բղխմամբ աղբեւրաց, զտնկոցն եւ զբուսո|321ա|ցն աճեցուցանել զգեղազարդ վայելչութիւն։* 8 *Զի ի միոյ հիւթոյ ջրոյ ներգործութենէ ի տունկս եւ ի բոյսս զանազանապէս փոփոխին որպիսութիւնս որակաց, զի ջերմ զաւրութիւնն գործէ ի քրքմի՛, եւ զովացուցիչս՝ յապրսամի. եւ միջակ ի ջերմոյ եւ ի ցրտոյ ի մի կոնիոն արմատի, ի դափնի եւ սքինոսի*[2]*. քաջաշունչ իմն ներգործութիւնն ի թզենոջ քաղցրանայ, եւ յորթոյ ողկոյզ գինի գործէ ուրախարար։* 9 *Եւ ի խնծորիսն ա՛յլ իմն հիւթ համոց տպաւորէ։* 10 *Ի վարդ կարմրութիւն գունո՛յ եւ անուշութիւն հոտոյ։* 11 *Կապուտակ եւ ծիրաներանգ ի մանուշակի, սպիտակափայլ տեսութիւնն՝ ի շուշանի, եւ յայլս ա՛յլ երփնափայլ գո՛յնս, եւ համադամ հոտս եւ համ եւ գեղեցկութիւնս, ըստ ձեւոյն եւ ըստ տեսակին վերաբուսուցանէ երկիր ի խոնաւութենէ ջրոյ։*

Դ. 1 *Այսպէս ի կենդանի եւ ի հոգեւոր յաշխարհի յայս ի մարդում, ի միոյ կերակրական զաւրութենէ հիւթոյ յամենայն մասունս մարմնոյն զանազանապէս տարածի։* 2 *Նախ՝ համեղագո՛յն եւ պարզագոյնն*[3] *ի խելապատակն ելեալ մարգեն զնա, իբր զկառավար եղեալ, կրկին պարզել՝ ի ձեռն երակաց ոմանց, առաքէ ընդ ամենայն մասունս մարմնոյն. յա՛կն տեսողական գործէ զաւրութիւնն, ի լսելեացն հոսեալ մասունս ի լսակա՛նն խառնեսցի, ի շրթան շուրթն եղեալ շնորհալի, եւ յոսկերս կառուցեալ՝ կարծրանայ, եւ յուղեղն կակղանա՛յ եւ պնդի ընդ ջլի՛։* 3 *Ընդ երակացն ձկտի եւ ի հերաց ծնունդ մանրագործեալ շինի։*

Ե. 1 *Արդ, ժամանակ է շինելոյ, յորժամ այսոքի՛կ այսպէ՛ս ներգործին, իսկ ժամանա՛կ է քակելոյ, յորժամ սոցա բնաւորական ներգործ|321բ|ութիւնք խափանին, եւ կենդանական զաւրութիւնն ո՛չ ազդէ յիւրաքանչիւր մասունսն։* 2 *Վասն որոյ եւ սահմանաւրէն բացայայտութեամբ զներգործութիւնս զայս, որ է՛ կեանք, ասեն ունակութիւնն եւ պատճառ գոլոյ, իսկ զխափանումն սորին, որ է մահ, պակասութիւնն եւ պատճա՛ռ ոչ գոլոյ։* 3 *Զոր եւ յառաջի եդեալ բանէ իմաստնոյս ուսանիմք զերկոցունց սոցա զաւրութիւնն զկենդանական յարմարութիւնն շինուածոյն, եւ զմահուամբ քակտումն եւ զբաժանումն յաւդուածոյն, զոր աստուածային իմաստութեամբն Սաղոմոն արքայ, Դաւթի մարգարէի եւ թագաւորի որդի, ասէ այսպէս. «Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւնն» (Իմաստ. Բ. 25)։*

Զ. 1 *Եւ արդ, տեսցուք, թէ զի՞նչ է անեղծութեան հաստատութիւն, եւ կամ զիա՞րդ եղեւ յեղծումն եւ յապականութիւնն։* 2 *Ովմանք յիմաստնոց*

---

[1] *Կ > նուրբ... առանց*
[2] *Կ ասքինոսի*
[3] *Կ > պարզագոյնն*

ասացին յերից հաստիլ զմարդն. ի մարմնոյ, եւ ի հոգւոյ, եւ ի մտաց, այլ ասելով զհոգի եւ ա՛յլ զմիտս։ 3 *Բայց ովմանք ո՛չ որոշեցին ի հոգւոյ զմիտս, այլ նորին էութեանն իշխանական գոլ զիմացակա՛նն համարին, այսինքն՝ զմիտս։* 4 *Ուստի յա՛յտ [է], եթէ ըստ երի՛ց որոշման կազմածոյն երեքո՛ւմք հաստատեցաւ մարդն յանեղծութիւնն. մտաւք՝ իմացական իմաստից եւ գիտութեան եւ հանճարոյ քննողական տեսութեամբ գոլ անեղծանելի։* 5 *Եւ իմանալի հոգւոյն իւրո՛վ մասամբքն գոլով յարդարութիւն եւ յանմեղութիւն։* 6 *Եւ զգալի մարմնովն*[1] *ունելո՛վ զանապականութիւնն, զանապակա՛նն ունելով բնակութեան տեղի։*

Է. 1 *Եւ այսպէս, իմաստութեամբ հա[ն]ճարոյն եւ արդարագործ մասանցն անմեղութեամբ ունէր մարմինն զանապականութիւնն եւ* |322ա| *զանեղծութիւնն, եւ բոլոր կենդանին զանմահութիւնն, որով եւ պատկեր բարերարութեանն Աստուծոյ եղեւ։* 2 *Ըստ որում եւ ասէ. «Ի պատկեր բարերարութեան իւրոյ արար զնա»* (**Իմաստ. Բ. 23**)։ 3 *Ըստ որում անեղծ եւ անմահ է մարդոյս գոյացութիւնն, թէեւ ստեղծականաւս վիճակեցաւ մահու, եւ ըստ բարոյն նախատպի կերպարանեցաւ եւ սայ, թէեւ յետոյ կրող եղեւ չարի՝ ըստ պատրանացն, որով եղեւ անեղծակա՛նն եւ անմահ[ն] եղծանելի՛ եւ մահկանացու, զիմաստութեան եւ զանմեղութեան կորուսանելով շնորհ, որով սկզբնատպին ի նմա պայծառանայր գեղ կերպարանի։ Եւ արդ, ի տեղւոջս յայս քննեսցուք զերիս գլուխս բանի, բազում մասունս ունելով ախորժելի իմաստուն տեսողաց։* 5 *Առաջին, թէ ըստ քանի՞ յեղանակաց ասի մարդն պատկեր եւ նման Աստուծոյ։* 6 *Երկրորդ վասն է՞ր յետո՛յ, քան զայլ արարածս առնէ զայսքան*[2] *պատուական ստեղծուած։* 7 *Երրորդ յաղագս որո՞յ պատշաճի լծակցեալ կապեցաւ անմարմին հոգի ի տկար եւ ի նիւթական մարմնում*[3]։

Ը. 1 *Եւ արդ, տեսցուք զառաջինն, զի ըստ բազում յեղանակաց ասի մարդ պատկեր եւ նման Աստուծոյ։* 2 *Ըստ բանականութեան, ըստ մտաւորութեան, ըստ ծննդեան մտացն զբա՛ն, եւ ըստ ելողութեան հոգւո՛յ, ըստ իշխանութեա՛ն եւ ըստ անձնիշխա՛ն կամացն։* 3 *Այլեւ ըստ լինելութեան, ըստ անծնելութեանն Ադամա՛յ, ըստ ծնելութեան Սեթա՛յ եւ ելողութեան Եւայի՛։*

Թ. 1 *Եւ ասի պատկեր ըստ բանականութեան, զի յերիս բաժանի բանական բնութեանս սեռք. յաստուածայինն, ի հրեշտակա՛նն եւ ի մարդկայի՛նն։* 2 *Եւ է աստուածայինն իմանալի՛,* |322բ| *պա՛րզ եւ անե՛ղ։* 3 *Եւ է-*

---

[1] *Կ մարմնոյն*
[2] *Կ զայս] զայսքան*
[3] *Կ մարմնայ*

ղեալքս ամենայն ի նմանէ՛ ունին զզաւրութիւն բանին, որպէս եւ զամենայն բղխմունս բարեաց։ 4 *Իսկ հրեշտակական իմանալիք, այլ ստացակա՛նք, սակայն պարզս եւ երանականս ունին իմացմունս. ո՛չ բաժանականաւք կամ ի բաժանականաց, կամ ի զգայութեանց, կամ ի բանից ճանապարհորդականաց ժողովե՛լ զաստուածային գիտութիւնն, այլ անխա՛ռն եւ անարատ մաքրութեամբ պայծառացեալ։* 5 *Իսկ մարդկայինս՝ ստացակա՛ն եւ շարադրելի՛, զի յիմանալոյ միանգամայն եւ ի զգալո՛յ է բաղկացեալ. բանական հոգւովն ընդ իմանալիսն եւ նիւթական մարմնովն ընդ զգալիսս։* 6 *Ըստ որում կրկնակի՛ ունի զԲանին զաւրութիւնն, բնաւորեալ ի գերագոյակն էութենէ։* 7 *Եւ սովին զաւրութեամբ բացորոշիմք ի զգայնոցս անյաւդաւո՛ր ձայնից եւ յանզգայականաց գոյից տարրականա՛ց։* 8 *Եւ պատկեր եւ նման ասիմք*[1] *Աստուծոյ մտաւորութեամբ եւ բանաւորութեամբ, զի Միտք եւ Բան աստուածութիւնն է։* 9 *Ըստ այնմ՝ «Ի սկզբանէ է՛ր բանն»* (**Յվհ. Ա. 1**)։ 10 *Եւ որք*[2] *ըստ Պաւղոսի զմիտս*[3] *Քրիստոսի ունին զա՛յն, որ ի նոսայն խաւսի։* 12 *Այսպէս եւ ի մեզ բան եւ միտք, ըստ նմանութեան էին բանի՛ եւ մտաց։*

Ժ. 1 *Եւ դարձեալ, պատկեր Աստուծոյ ասիմք, ըստ ծննդեան մտացն զբան եւ ըստ ելողութեան Հոգւո՛յ. վասն որոյ զնախագաղափարին եւ զսկզբնատպին Աստուծոյ բարիսն կերպարանեալ տեսանեմք ի պատկերն իւրական, զոր եւ ասաց*[4]*. «Ար[ար] մարդ ըստ պատկ[երի] եւ ըստ նմանութեան»* (**Ծն. Ա. 27**)։ 2 *Զի թէպէտ ի խոնարհ մնայ, որպէս պատկեր անշունչ ի նախատիպ կենդանւոյն, ո՛չ ունելով զնմանութիւն բնութեան կամ զզաւրու|323ա|թեան, այլ մի՛այն զձեւ եւ յատուկ անձնաւորութեան։* 3 *Արդ, է՛ իմանալի եւ բանական մեր հոգիս էութի՛ւն պա՛րզ, եւ աննիւթակա՛ն, եւ անմահ, եւ իմաստուն յընտրութիւն բարւոյ եւ չարի։* 4 *Եւ ունի բա՛ն, ցասումն եւ ցանկութիւնն։* 5 *Եւ բերէ յառաջ բան, ըստ երից մասանցս այսոցիկ։* 6 *Եւ բանն յառաջ եկեալ ի նմանէ, անձնաւորի՛ ի նմա է, եւ ա՛յլ է ամենայն իրաւք, քան զնա. եւ տեսանի որի՛շ ի նմանէ, որպէս ծնո՛ւնդ. եւ է՛ առ նմա*[5]*, որպէս համաբնութիւն։* 7 *Այսպէս եւ աւետարանիչն վասն բանին Քրիստոսի՛ ասէ. «Ի սկզբանէ է՛ր Բանն եւ Բանն էր առ Աստուա՛ծ եւ Աստուած էր Բանն»։ Իսկ այս բանս, որ անձնաւորեցաւ ի միտսն եւ է՛ առ նմա, կամաւք ծնողի մտացն արտաքս բղխէ եւ ելանէ առ Աստուած իմա-*

---

[1] *Կ եմք] ասիմք*
[2] *Կ > որք*
[3] *Կ թէ զմիտս*
[4] *Կ ըստ այնմ] զոր եւ ասաց*
[5] *Կ նման] առ նմա*

նալի՛ խաւսակցութեամբ, կամ իջանէ ի զգայարանս եւ սփռի առ մարդիկ լեզուոյ պաշտամամբ կամ ձեռին սպասաւորութեամբ։ 8 *Եւ է՛ խաւսս բղխեալ ա՛յլ, քան զբան ծնեալ։* 9 *Եւ անձնաւորի ի մտացն եւ ի բանէն անձնաւորութիւն խաւսիցն բանին, առ ծնողի մտացն անշա՛րժ մնալով։* 10 *Այսպէս եւ Քրիստոս, յաղագս Հոգւո՛յն Սրբոյ ասէ*[1]*. «Հոգի՛ն ճշմարտութեան ի Հաւրէ ելանէ, եւ յԻմմէ՛ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ»* **(Յվհ. ԺԶ. 14)**։

ԺԱ. 1 *Եւ այսպէ՛ս. է՛ Հոգին ծնո՛ղ, եւ Բանն՝ ծնո՛ւնդ, եւ խաւսքն՝ արտաքս բղխումն։* 2 *Եւ այս պատկերաւս իմանամք զնախագաղափարն Աստուած. մի՛ բնութիւն եւ երեք անձնաւորութիւնն, որ արար զմարդն պատկեր իւր, եւ վկայեա՛ց արարչական Բանիւն։*

ԺԲ. 1 *Դարձեալ, պատկե՛ր եւ նմա՛ն ասի, ըստ իշխանութեան։* 2 *Եւ այս երկակի՝ ըստ ձեւո՛յն եւ ըստ գործո՛յն։* 3 *Ըստ ձեւոյն, զի ուղե՛ղ*[2] *է մարդոյն ձեւ|323բ| եւ առ երկին ի վե՛ր հայի։* 4 *Իշխանակա՛ն է այս եւ զթագաւորական պատիւն ցուցանէ, որ ո՛չ է այս այլոց կենդանեաց, այլ միայն որ իշխա՛նն եղեւ կենդանեաց՝ յԱստուծոյ կարգեալ։* 5 *Եւ այսո՛ւ պարտ էր ըստ Աստուծոյ կեպարանիլ, ըստ գրեցելոյն*[3]*. «Ուղե՛ղ է Տէր Աստուած մեր»* **(Սղմս. ՂԱ. 16)**։ 6 *Եւ ոչ միայն արտաքուստ կենդանեացն իշխէ, այլ զի բնութեամբ տիրէ հոգի ի վերայ անբան շնչոյս, որով ներգործէ ի զգայարանս եւ իշխէ մարմնոյս, արդարութեամբ վարելով զսա եւ զանասնական ախտսն խոհականութեամբ Բանին սանձելով, որով առաւե՛լ պատկեր Աստուծոյ կոչեցաւ։* 7 *Եւ է՛ մարդ, քան*[4] *զհրեշտակ, վասն զի հրեշտակք ո՛չ են ստացեալ բնութեամբ ծառայս, եւ ոչ են բնութեամբ տէ՛ր։*

ԺԳ. 1 *Դարձեալ ասի պատկեր եւ անձնիշխանութեամբ, թէպէտ եւ յայս իսկ զանազանի։* 2 *Զի հոմանունաբա՛ր ասի անձնիշխանութիւնն՝ ա՛յլ աւրինակաւ զԱստուծոյ եւ այլ զհրեշտակա՛ց, եւ այլապէս ի վերայ մարդոյ։* 3 *Աստուծոյն ի վե՛ր, քան զգոյութիւնն գոլով անձնիշխանութիւն։* 4 *Իսկ հրեշտակա՛ցն իբրեւ զկնի ընթանալով ձեւոյն՝ ի ձեռնարկե՛լն, եւ ամենեւին ո՛չ ընդունին զյամելն ժամանակաւ, այլ անդադար ներգործեն ըստ անձնիշխանութեան, ո՛չ ունելով հակառակ զմարմնականս կիրք։* 5 *Իսկ մարդոյն անձնիշխանութիւն իբր ձեռնարկողի՛ ընդ ժամանակա՛ւ, յառաջնադրելով յանձնէ եւ ի կերպէ կամելոյն, զի ընդ բնական իշխանութեան ունի եւ մարտս դիւաց, եւ զշարժութիւն մարմնոյ, որով պակասե-*

---

[1] *Կ > ասէ*
[2] *Կ ուղիղ*
[3] *Կ գրելոյն թէ ուղիղ*
[4] *Կ քան առաքելական*

ցուցանէ զձեռնարկումն անձնիշխան գործոյն։ **6** *Ասի մարդ պատկեր Աստուծոյ եւ ըստ լինելութեան. ըստ անծնելութեան Ադամայ եւ ըստ ծնելութեան Սէ|324ա|թայ, եւ ըստ ելողութեան Եւայ։* **7** *Զի որպէս յաստուածութիւնն է յատուկ անձնաւորութեանցն առանձնաբար անուն Հաւր անծնելութիւն, եւ Որդւոյ՝ ծնելութիւնն, եւ Հոգւոյն Սրբոյ ելողութիւնն, ունի եւ զայսոսիկ զձեւ անուանցս պատկերն իւր եղակայն։*

ԺԴ. **1** *Եւ զի նախ պատկեր ասաց եւ ապա ըստ նմանութեան։* **2** *Զոր աւրինակ, որք զարքայական եւ զիշխանական պատկերսն նկարագրեն զսկզբնատիպին գեղ կերպարանի ի ձեռն երանգոց ի տախտակս նկարեն, զի զսկզբնատիպին գեղեցկութիւն փոխեսցեն ի նա, այսպէս եւ Ստեղծիչն մեր առ իւր գեղեցկութիւնն զպատկերն շուրջ ծաղկեալ, ի մեզ ցուցանէ զիւր իշխանութիւնն ոչ կարմրոյ կամ սեւագեղոյ իրիք նիւթով, այլ փոխանակ այսոցիկ՝ անախտութիւնն, անցիւ երջանկութիւնն, ամենայն չարի աւտարութիւնն։* **3** *Եւ, զոր աւրինակ, որք զպատկերս իշխանացն գրեն նմանութեամբ եւ արկանեն ծիրանիս զնովաւ, զարքունական իշխանութիւնն ընդ նմա գրեն եւ ասի, ըստ սովորութեան, եւ պատկերն թագաւոր։* **4** *Այսպէս եւ մարդկային բնութիւնս, վասն զի յիշխանութիւնն այլոցն հաստատեալ լինէր առ թագաւորն ամենայն նմանութեամբ, իբր շնչաւոր իմն պատկեր եղեալ կանկնեցաւ՝ փոխանակ ծիրանեաց զառաքինութիւնն զգեցեալ, քան զամենայն զգեստ արքունականագոյն*[1]*. փոխանակ ոսկի մականի*[2] *երանութեամբ անմահութեան հաստատեալ եւ փոխանակ արքունական թագին՝ արդարութեան պսակաւն զարդարեալ։* **5** *Վասն որոյ*[3] *պատկեր եւ նման ասի Աստուծոյ, զի անմեղ հոգւով, անմարմին, անտանելի, իմաստուն մտաւք, անվայրապահ, անապակն մարմնով։* **6** *Դարձեալ, |324բ| սէր է Աստուած եւ սիրոյ աղբիւր, ըստ Յոհաննու* (**Ա. Յովհ. Դ. 8**)*։* **7** *Եւ զայս մեզ կերպարանեաց դէմս եւ նմանութիւնն այսու ծան[ուցեալ]. «Թէ իմ աշ[ակերտք էք]*[4] *եթէ սիր[իցէք] զմիմեանս»* (**Յովհ. ԺԳ. 35**)*։* **8** *Զամենայն ինչ տեսանէ եւ քննէ եւ լսէ աստուածութիւնն։* **9** *Նոյնպէս եւ մեք, ի ձեռն երեսաց եւ լսելեաց զէիցս ընդունելութիւնն զշաւշափման եւ զկենդանական, եւ զզննական, զէիցս միտս խորհրդոց։*

ԺԵ. **1** *Եւ վասն է՞ր յետոյ, քան զայլ արարածս առնէ զայսքան մեծասքանչ կենդանի եւ բարոյն Աստուծոյ պատկեր։*

---

[1] *Կ արքունական*
[2] *Կ մատանէ] մականէ*
[3] *Կ այն] որոյ*
[4] *Կ > թէ իմ աշակերտ էք*

ԺԶ. 1 *Վասն զի նախ պատկեր թագաւորութեան պատրաստել, եւ ապա զթագաւո՛րն աշխարհի ի ներքս ածել, զի մի՛ ի թափուր վայր ածիցէ*[1]*, այլ զի բազմապատիկ բարութեամբ զարդարեցելոյ երկրի տիրեսցէ։*

ԺԷ. 1 *Եւ կամ, զոր աւրինակ, զթագաւոր եւ կամ զիշխան ի սէր պատուոյ ոք մեծարիցէ, նախ զտունն պատրաստեսցէ, եւ զսեղանն կազմիցէ կերակրաւք եւ ըմբելեաց ախորժական ճաշակաւք, զերգեցիկս ուրախական նուագաց*[2] *եւ զայլ ամենայն պէտսն պատրաստեսցէ, եւ ապա զթագաւորն ի վայելումն պատրաստեալ բարեացն ածիցէ։* 2 *Զնոյն առնէ եւ Արարիչն. յետ զարդուն երկնի, որպէս ձեղուան, եւ երկրի, որպէս հիմնացեալ տա՛ն, եւ որ ի միջոցս երկնի եւ երկրի գեղեցկապէս զարդարելոյ, ապա՛ զմարդն յաշխարհ մուծանէ, զի զսէր եւ զերախտիս Արարչին իւրոյ ծանիցէ։*

ԺԸ. 1 *Եւ կամ, զոր աւրինակ ծառ՝ յաղագս պտղոյն վայելչութեան ի տնկագործէն մշակի, եւ յետ սաղարթաւո՛ր վարսագեղելոյն եւ տերեւախիտ զարդարելոյն, եւ ծիծաղափայլ գունով ծաղկաւետելոյն, ապա յետոյ զանուշաճաշակ պտղոյն զհեշտալի տեսութիւնն երեւեցուսցէ։* 2 *Ըստ այսմ աւրինակի գեղեցկապէս եւ ըստ պատշաճի յե|325ա|տո՛յ զմարդն առնէ։* 3 *Նախ, զառ ի պէտս նորա պատրաստել եւ ապա զնա, որ վայելէրն։* 4 *Զի ամենայն արարածք վասն մարդո՛յն եղեւ, որպէս ծառ՝ վասն պտղոյն։*

ԺԹ. 1 *Եւ վասն է՞ր կապի հոգի ընդ մարմնոյ։ Եւ այս յոլո՛վս ունի մտաւոր տեսութիւնն։* 2 *Առաջին*[3]*, զի նահատակութեամբ եւ մարտնչելով առ ստորինս՝ զվերին փառն ժառանգիցեմք, որպէս ոսկի հրով աստ քննեալք, որպէսզի առաքինութեա՛ն մրցանակ, այլ ո՛չ Աստուծոյ պարգեւ միայն ունիցիմք զյուսացեալսն։* 3 *Ա՛յս էր առաքինութիւնն բնութեանս ծայրագոյն բարի՝ առնե՛լն զբարին եւ մեզ, ո՛չ բնութեամբ միայն սերմանել, այլ եւ յաւժարութեամբ մշակե՛լ եւ երկոքումք ինքնիշխանական շարժմամբն։*

Ի. 1 *Եւ Բ.որդ (2), որպէսզի թէ վատթարութիւն ինչ ձգիցէ առ ինքն եւ ի վերուստ լուծանիցէ առ սակաւ սակաւ թանձրութեամբն, զի որպէս Աստուած հոգւոց, նոյնպէս եւ հոգի մարմնոց լիցի եւ դաստիարակեսցէ ինքեամբ սպասաւոր նիւթոյն եւ ընտանեցուսցէ*[4] *զծառայակիցն։*

ԻԱ. 1 *Երրորդ, զի մանաւանդ*[5] *ա՛յս իսկ էր ծանաւթութիւնն ամէնի-*

---

[1] *Կ վարս մտանէ] վայր ածիցէ*
[2] *Կ նուագարանաց] ուրախական նուագաց*
[3] *Կ նախ] առաջին*
[4] *Կ ընդ ունեսցէ] ընտանեցուսցէ*
[5] *Կ > Զի մանաւանդ*

մասամբ արուեստաւորի Արարչին մեծի՛ իմաստութեան եւ ամենառատ բարերարութեան՝ յիմանալի եւ ի զգալի արարածոցս խառնե՛լ ի միաւորութիւնն։ 2 *Եւ զայս կամեցեալ ցուցանել, առնէ կենդանի մի յերկուց յաներեւութէն եւ յերեւելի բնութենէն զմարդն, ի նիւթոյն առնելով զմարմինն, անդէն կանխաւ եղելոյ յինքենէ, եւ զկենդանութիւնն ի նմա եդ, զոր իմանալի հոգի եւ կերպարան Աստուծոյ գիտէ բանս, իբր աշխարհ իմն երկրորդ, ի փոքու զմեծն ի վերայ երկրի կացուցանէ, զի զերեւելի արարածս տեսցէ*[1] *եւ իմա|325բ|նալոյն ի խորհո՛ւրդ եկեսցէ, որոց ի վերայ երկրի թագաւորեսցէ, եւ ընդ թագաւորութեամբն վերնո՛յն հնազանդեսցի՛։* 3 *Վասն որոյ արար զնա երկնային եւ երկրային, ժամանակեա՛յ եւ անմա՛հ, տեսանելի եւ իմանալի՛, միջոց մեծութե՛ան եւ խոնարհութեան, մարմին՝ վասն ամբառնալոյն, եւ հոգի յաղագս շնորհին. ոմն, զի չարչարեսցի՛, եւ ոմն զի կեցցէ եւ փառաւորեսցէ զբարեգործն կենդանի՛։ Ա՛ստ մատակարարեալ, եւ այլո՛ւր փոփոխեալ, եւ վաղխճան խորհրդոյն առ Աստուած նայելովն՝ աստուածանա՛լ, քանզի յայսոսիկ իսկ զանազանի չափաւորութիւնն։* 5 *Աստանաւր ճառագայթք ճշմարտութեան՝ զպայծառութիւն Աստուծոյ տեսանել եւ կրել արժանաւոր կապողին եւ արձակողին եւ դարձեալ բարձրագո՛յն կապողին։*

ԻԲ. 1 *Եւ դարձեալ, զի կամեցաւ ամենիմաստ արուեստագէտն աշխարհի զամենայն արարածոցս զաւրինակն ի միում կազմուածի ցուցանել. հոգւովն՝ զիմանալի աշխարհն, եւ մարմնովն՝ զերեւելիսս։* 2 *Զի պա՛րտ էր իմացականի էութեան եւ երեւելոյս լինել շաղկապ երկաքանչիւրոցն։* 3 *Արդ, եղեւ որ շաղկապէ զերկաքանչիւր բնութիւնս մարդն՝ միջնասահման բանականի եւ անբանի բնութեան կարգեալ։* 4 *Զի եթէ ի մարմինն կոյս շեղեսցի եւ զմարմնոյսն առաւելագոյնս սիրեսցէ՝ զանասնոցն առընգալցի յինքն զվարս, եւ ընդ նոսա՛ եղիցի թուակից, եւ հողեղէն կոչեսցի՝ ըստ Պաւղոսի ձայնին, եւ լուիցէ. «Հող էիր եւ ի հող դարձցիս»* (**Ծն. Գ. 19, Ա. Կրնթ. ԺԱ. 47, 49**)*, եւ հաւասարեսցի անասնոց անմտից եւ նմանեսցի նոցա։* 5 *Իսկ եթէ ի բանակա՛ննն տարցի եւ արհամարհեսցէ զմարմնականսն ամենայն հեշտութիւնս՝ զաստուածայինսն եւ զսիր|326ա|ելիսն Աստուծոյ խնդրեսցէ կեանս, եւ զնախկինսն մարդոյն եղիցի, որպէս երկնաւորն, ըստ ասացելոյն, թէ՝ «Որպէս հողեղէնն, նոյնպէս հողեղենքս, եւ որպէս երկնաւորն, նոյնպէս եւ երկնաւորքն»* (**Ա. Կրնթ. ԺԵ. 48**)*։*

ԻԳ. 1 *Եւ է բանականին բնութեան գլուխ փաղխչել եւ ի բաց դառնալ ի չարեաց, եւ փոխիլ եւ զհետ երթալ բարեաց։* 2 *Վասն որոյ յոմանց իմաս-*

[1] *Կ տեսանէ*

տասիրեցաւ միջնասահմա՛ն լինել զմարդն անմահին եւ մահկանացուի բնութեան, զի թէ մարմնոյն հետեւեսցի ախտից, ի մարմնականն[1] անկցի փոխադրութիւն, իսկ եթէ զհոգւոյն նախապատուեսցէ զբարութիւնս՝ անմահութեան արժանաւորեսցի։ 3 *Իսկ ոմանք՝ եթէ մահկանացու կազմեցաւ, կարող գոլով ի յառաջադիմութենէն կատարեալ անմա՛հ լինել, այսինքն է՝ զաւրութիւնն ունելով անմա՛հ լինել։* 4 *Իսկ վասն զի ո՛չ էր յաւգուտ նախքան զկատարումն զի՛ւր բնութիւնն գիտել, հրաժարեցո՛յց զնա ճաշակե՛լ ի փայտէն գիտութեան, զի ո՛չ կամէր Աստուած նախքան զկատարումն գիտել զիւր բնութիւնն, զի մի՛ գիտացեալ կարաւտ բազմաց մարմնակա՛ն պիտոյից հո՛գ տարցի, թողեա՛լ զհոգւոյն խնամակալութիւնն։* 5 *Իսկ նորա ստունգանել եւ գիտացեալ զինքն, ի կատարմանէն ի բա՛ց անկաւ եւ եղեւ ընդ մարմնական պիտոյիւք[2]։*

ԻԴ. 1 *Իսկ զպատճա՛ռ[3] ստունգանելոյն եւ բնութեանս ընդ մահուամբ անկանելոյն հետագայ բանիւս իմաստունն ցուցանէ, ասելով. «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխ[արհ]» (Իմաստ. Բ. 24)։*

ԻԵ. 1 *Արդ, քննե՛լ արժան է. առաջին. վասն է՞ր եղեւ նախանձ բանսարկուին ընդ մարդոյն, եւ որպէ՞ս ի նախանձու անտի՝ մահ, կամ զիա՛րդ կորոյս զկերպարանին գեղեցկութիւնն եւ զնմանութեան պատիւ, եւ եղեւ անեղծականն եւ անմահն՝ եղծանելի մեղաւք եւ մահու։* 2 *Երկրորդ. ի քանի՞ տեսակս բաժանի մահ։* 3 *Երրորդ. վասն զի խափանեաց Քրիստոս զմահ, որպէս եւ ուսանիմք ի Սուրբ Գրոց, վասն է՞ր տակաւին եւս տիրէ ի վերայ բնութեանս։ Չորրորդ, որպէ՞ս բաժանի հոգի ի մարմնոյ։* 5 *Հինգերորդ. եթէ կայ սահման մարդոյ, զի ի լնուլ աւուրցն սահմանելոյ հասանէ մահ եւ թէ ո՛չ։*

ԻԶ. 1 *Եւ արդ, տեսցուք զպատճառ նախանձուն, վասն զի բնաւորեալ է ճոխագունիցն փառաւք մեծութիւնն պատուոյ ի նախանձ շարժել զանփառունակ անձինսն, որպէս եւ բանսարկուն անկեալ ի բարձրութենէ փառացն՝ նախանձի ընդ անզուգական փառս մարդոյն, մանաւանդ զիւրն տեղի փառաց կորուսեալ եւ խաւա՛ր ի լուսոյ եղեալ, եւ փոխանակ բարոյն՝ չարացեալ։* 2 *Եւ տեսեալ զմարդն ի պատկեր նմանութեան Աստուծոյ պատուեալ, եւ ի փառս դրախտին փափկութեանն եղեալ, եւ աւրէնս աստուածայինս նիւթ ինքնիշխանութեան նորա տուեալ, որպէսզի պահպանութեամբ պատուիրանին եւ առաքինութեան կատարմամբ յիւրում ժամանակի ի գիտութեան փայտէն ճաշակեսցէ։* 3 *Եւ յետ այնորիկ ի փայտին*

---

[1] *Կ զի թէ ի մարմնոյ կողմն շեղեսցի եւ մարմնոյն*

[2] *Ձեռ. 7032, 129ա՝ այստեղ աւարտւում է, բնագիրը՝ թերի։*

[3] *Կ > սկսած «իսկ պատճառ»ից*

կենաց անմահացուցիչ պտղոյն կերիցէ եւ ի դրախտին վայրէ յերկնային գաւառն եւ ի տեղի անգելոց հրեշտակացն փոխադրեսցի, աստուածացեալ եւ յաստուած հպաւորութեամբ մերձեսցի։ **4** *Եւ այսոքիկ եղեն բանսարկուին պատճառ նախանձու ո՛չ այնքան ընդ իւրոյ փառացն եւ պատուոյն հեռաւորութիւնն զայրա|327ա|ցեալ, որքան ընդ փառս մեծութեան մարդոյն խանտացեալ, որպէս եւ ասէ. «Նախանձու բան[սարկուին] եմուտ մահ»։* **5** *Զնախանձ բանս[արկուին] ընդ մարդոյն մեծն մարգարէից Մովսէս ո՛չ յայտնէ, այլ աւձին տայ զդաւաճանելն եւ կնոջն ախտացեալ իբր կակղագոյն եւ Ադամայ ընծայեալ՝ իբր հաւանակա՛ն։*

ԻԷ. **1** *Եւ այսպէ՛ս, պատուիրանին յանցմամբ պատուհասի յԱրարչէն, եւ հաստատեալն յանեղծութիւն, եւ արարեալն ի պատկեր բարերարութեան՝ լինի եղծական մահուամբ եւ ապականութեամբ։* **2** *Վասն զի եղծի՛ն զիմաստութիւն մտաց, եւ ո՛չ քննելով որոշեցին զպատուիրան բարի Արարչին ի չա՛ր խրատու թշնամոյն, յաղագս որոյ եղծին զանմեղութիւն հոգւոյ եւ զարդարութիւն, անիրաւելով յաւրէնսն աստուածադիր եւ մեղանչելով պատուիրանին յանցմամբ։* **3** *Վասն որոյ կրեն պատուհաս զտրտմութեան եւ զցաւոց երկունս, քրտամբք եւ վաստակաւք տաժանումն յերկրի։* **4** *Եւ յետ յամենայնի անգանին յեղծումն մահու եւ ապականութեան, լսելով թէ՝ «Հող էիր եւ ի հող դարձցիս»։*

ԻԸ. **1** *Արդ, զի թէպէտ Մովսէս ո՛չ յայտնեաց եթէ ի նախանձու բանսարկուին կրեաց մարդն զայսոսիկ, այլ ի Քրիստոսէ ուսանիմք զայս յասելն վասն բանսարկուին «նա մարդասպա՛ն է ի սկզբանէ»* **(Յվհ. Ը. 44)**, *ուրեմն՝ որ մարդասպա՛ն է, նա՛ էած զմահն։* **2** *Իսկ նախանձն յայտ է աւձին խաւսակցութենէն, զի չարախաւս եղեւ զԱստուծոյ, եւ զպարզամիտսն ընդ իւր ստորաքարշեաց։* **5** *Յայս փորձս, ասէ, անգանին ի մարդկանէ վիճակեալքն սատանայի։* **4** *Եւ զայս վիճակ մի՛ իմանար ակամայ, այլ անձնիշխան |327բ| կամաւք խոտորումն, զի կարելի էր եւ այլ մարդկան, ըստ Ենովքայ, հաճոյ գտանիլ Աստուծոյ, եւ յանմահութիւն վիճակել, բայց ո՛չ կամեցան։*

ԻԹ. **1** *Իսկ եթէ քանի՞ տեսակք են մահու։* **2** *Արդ, բաժանի մահ ըստ Ե. (5) յեղանակս, զի է՛ մահ, որ բնութեամբ է, եւ է՛ որ պատահմամբ. է՛ մահ անձնիշխանութեամբ, եւ է՛ որ կամաւորական յաւժարութեամբ, եւ է՛ որ ամենատես նախախնամութեամբն Աստուծոյ։* **3** *Արդ, բնութեամբ է, յորժամ ծերանայ մարդ եւ նուազի զաւրութիւնն մարմնոյն եւ պակասէ գործ զգայարանացն՝ տկարանայ եւ մեռանի։* **4** *Իսկ որ ըստ բնութեան կենացն սահման է, ոմանք ՃԻ. (120) ամ ասեն, ըստ աստուածային բանին առ Նոյ, թէ յայսմ հետէ եղիցին ամք մարդկան ՃԻ. (120) ամ, իսկ ի Դաւթայ*

Հ. (70) ասացաւ եւ առաւելն՝ Զ. (80)։ 4 *Իսկ որ աւելին է, քան զայս՝ ցաւաւք եւ հեծ[ութեամբ]։* 5 *Իսկ պատահմամբ է, որք գան մահք զանազան յորոգայթից, ի գետոց կամ ի գազանաց, յաւազակաց եւ կամ վասն ագահութեան. եւ ովմանց յահէ եւ յերկեղից չարչարանաց։* 6 *Եւ ո՛չ թէ ամենեքեան, որք յորոգայթից մահու մեռանին գահավիժեալ կամ ի գետոց եւ գազանաց, եւ այլ, զոր կրեն պէսպէս՝ ի մեղաց լինի ամենայն։* 7 *Եւ այս յայտ ի Տեառն բանէն է. «Եթէ նոքա ութուտասանքն, յորոյ վերայ անկ[աւ] աշտ[արակն] ի Սելոամ միթէ մեղ[աւորք էին], քան զամենայն գալ[իլեացիք]»* (**առե՛ս Ղկ. ԺԳ. 2-5**)։ 8 *Եւ յայս բանէ ուսանիմք, եթէ ոչ ամենեքեան, որք դառնագոյն մահու մեռ[անին], մեղաւորք եւ ամբարիշտք են։* 9 *Զի ահա որդիքն Յովբայ արդարք էին, եւ Զաքարիայ եւ Յովհաննէս, այլ արդար, եւ չարաչար մեռանելովն մաքրին ի չափաւոր յանցանացն։* 10 *Եւ անձնիշխանութեամբ է, յորժամ սպա|328ա|նանէ ոք զանձն իւր եւ կամ զընկերին։* 11 *Իսկ կամաւոր եւ յաւժարական մահ ա՛յն է, որ մեռուցանէ զանձն աշխարհի որպէս ճգնաւորքն, որք ի խաչ հանին զանձ[ինս] կարեաւք եւ ցանգութեամբ հանդ[երձ], եւ որպէս մարտիրոսքն եւ նահատակքն սուրբ, որք յաւժարութեամբ ետուն զանձինս իւրեանց ի մահ։* 12 *Իսկ նախախնամութեամբ է, որ գայ մահ յԱստուծոյ, որպէս եւ գիտէ Ամենատեսն ըստ իւրաքանչի՛ւր ումէք աւգտի, կամ կարճելով աւուրց ի տղայական հասակի, կամ յերկարելով ի ծերութիւնն բազմաժամանակեայ աւուրց։* 12 *Եւ այս ի յոլով մասունս բաժանի, զոր ասասցուք ի Ե. (5) երորդ գլխին, եթէ կայ աւուր եւ ժամ մահու սահմանեալ։*

Լ. 1 *Տեսցուք եւ զայն, զի եթէ խափանեաց Քրիստոս զմահ, վասն է՞ր եւ այժմ տիրէ բնութեանս։* 2 *Արդ, վասն զի մահ ի մեղաց զաւրացաւ եւ նոր-վաւ, իբր ձեռամբ բուռն հարեալ զգարշապարէ մարդկութեանս զամենեսեան, իբր ի գայռագղի արգելեալ թակարդեաց, եւ ի վերայ յարձակեալ զթագաւորս յաթոռոյ յարուցանէր եւ զիշխանս՝ յիշխանական գահոյից, զհզաւրաց ձեռս լքուցանէր, զերիտասարդական գեղ թառամեցուցանէր, զտղայական տիս՝ իբրեւ զծաղիկ գարնայնոյ՝ չար աւդով հարեալ ցամաքեցուցանէր, եւ յալիս ծերոց բուռն հարեալ ի պատուական ժամանադրութենէն քարշեալ՝ յարգելանս դժոխոց արկանէր։* 3 *Եւ այսպէս զաւրացա՛ւ մահ եւ եկուլ զամենեսեան, եւ ոչ ոք գտաւ ի մարդկանէ, որ զվարմն նորա կոխեաց եւ անց զգուշութեամբ, մինչեւ եկն ի բարձանց, որ ազատն էր ի մեղաց, եւ եգիտ զմեզ կալանաւորս մահու եւ մեղաւք պարտապանս լեալ |328բ| նորա, յորմէ ո՛չ գոյր յոյս ազատութեան. եկն եւ զիւր զանմեղ անձն ընդ մեր պարտական եդ ի մահու, եւ իւրով մահուամբն զմեզ ի մահուանէ ազատեա՛ց, որպէս ասէ առաքեալ. «Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց, ըստ գրոց»* (**Ա. Կրնթ. ԺԵ. 3**)։

ԼԱ. 1 *Արդ, զի երեք տեսակք էին յայնժամ մահու, մի, որ մարմնով մեռանէին, եւ Բ. (2), զի յետ մահու ի դժոխս հանդերձէին արդարք ընդ մեղաւորաց, եւ Գ. (3) գեհենին մահն, որ յո՛յժ է զարհուրելի։* 2 *Արդ, Քրիստոս իւրով մահուամբն զԲ.որդ (2) մահն, որ դժոխոցն է, աւերեաց եւ հետակորոյս արար, որ եւ տեղի յիշատակի ո՛չ ելթող, թէ ո՞ւր է։* 3 *Իսկ յԳ.որդ (3) մահուանէն զգուշացոյց, վասն զի այն ըստ կամա՛ց է։* 4 *«Երկերո՛ւք, ասէ, յայնմանէ, որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի»* (**Մտթ. Ժ. 28**)*։* 5 *Իսկ առաջնոյն թոյլ ետ, զի ախտք մեղացն, որ զկնի պատուիրանազանցութեան մտին ի մեզ, եւ զաստուածանման կերպարանն այլայլեալ՝ յանասնական դէմս փոխեցին, զի ի ձեռն մահու մարմնոյս քերեալ ի բաց կործիցէ եւ ապա յարութեամբ դարձեալ յառաջինն վերստին ածցէ զարդ։* 6 *Վասն այնորիկ զհոգին անմահ առեալ՝ գրաւական տանի, զի հաւատարիմ արասցէ զյոյս յարութեան։*

ԼԲ. 1 *Իսկ եթէ որպէ՞ս բաժանի հոգին ի մարմնոյն, ասելի՛ է։ Ի չորից գոյութեանց հաստատեցաւ մարմին մարդոյ. ի հրոյ եւ յաւդոյ, ի ջրոյ եւ ի հողոյ։* 3 *Եւ նմանութեամբ չորից տարերցս են ի մեզ նմանամասունք սոցա, որով ունի մարդն զկենդանութիւն. յարենէ եւ խարտեաշ մաղձոյ, ի մաղասոյ եւ ի սեաւ մաղձոյ։* 4 *Արդ, սոցա հաւասարակշիռ լինելով՝ լինի մարմնոյն պատճառս առողջական կենաց, իսկ յառաւելուլն կամ ի նուազելն՝ հիւանդարար ցաւոց լինին։* 5 |329ա| *Ի վերա սոցա բնակի մարմինն։* 5 *Եւ ի նմանութիւն աղաւնոյ արգելեալ ի նմա հոգին, նրբագոյն շնչովն կապեալ ընդ արեանն, եւ արեամբն ընդ բոլոր մարմնոյն։* 6 *Իսկ ի քակել ի միմեանց չորից տարերցս, որպէս եւ տան քաջապինդ որմոց, ելանէ արգելեալ աղաւնին։* 7 *Այսպէս ի բաժանել չորից գոյութեանցս նոյնպէս ելանէ հոգի՛ ի մարմնոյն։* 8 *Իսկ հրեշտակն, որ պահապան կարգեալ է նմա յԱստուծոյ, մերձ եկեալ ի ժամ վաղխճանին, առեալ զոգին, թէ արդար եւ սուրբ՝ խնդայ եւ ուրախ լինի, եւ առեալ սլանայ յիմանալեացն կայանսն եւ հանգուցանէ «ընդ հոգւոց արդարոցն կատարելոցն»* (**Եբր. ԺԲ. 23**)*։ յերկինս, ըստ Պաւղոսի, եւ ցուցանէ նմա զհանդերձեալ փառսն եւ զտեղի հանգստեանն, զոր ընդունելո՛ց է ի յարութեան։* 9 *Եւ այնպէ՛ս յարազուարճ բերկրանաւք ցնծայ հոգին արդար՝ յուսով կենացն յաւիտենից։* 10 *Իսկ եթէ ի մեղս եւ յանդարձ չարութեան եհաս նմա վաղխճան, տրտմի՛ հրեշտակն սուրբ յաղագս կորուսելոյն։* 11 *Սակայն առեալ զայրագին եւ ահարկու կերպարանաւք, որպէս դահիճ ի մահ վարելով զմահապարտս, հանէ՛ զնա յաւդս եւ աւդային դիւացն շուրջ պատեալ՝ դատախազէն զնմանէ, իբրու թէ մե՛ր է բաժին, քանզի մերումս հետեւեաց կամաց ի կեանս իւր։* 12 *Եւ թոյլ տուեալ հրեշտակին նեղե՛լ,*

տագնապե՛լ զնա, զի ծանիցէ որոց ծառայե՛րն, մինչ զի յանդգնին, եւ յափշտակեալ զնա, որոյ ո՛չ ներեալ՝ սաստէ՛ եւ տանի դասել ընդ գործակցաց իւրոց ոգւոցն, եւ ցուցանէ զվճիռ դատաստանին իւրոյ, որ պահի՛ նմա ի հանդերձելումն։ 13 *Եւ է՛ զորս արգելուն, զ|329բ|ովմանս ի հոգւոցն ելանել ի յերկինս, այլ մնան յերկրի յարգելանս դժուարին տեղեաց եւ կրեն վիշտս ի դիւաց անտի, մինչ ողորմութեամբ եւ պատարագաւք թեթեւասցին ի տեղի հանգստեան։*

ԼԳ. 1 *Քննե՛լ արժան է եւ զայս, եթէ կա՛յ աւր եւ ժամ մահու, եւ թէ ոչ։* 2 *Արդ, եթէ կայ, զիա՞րդ ասէ Դաւիթ. «Մի՛ ընկենուր զիս, Տէր, ի ժամ[անակի] ծեր[ութեան]»* (**Սղմս. Հ. 9**)։ 3 *Եւ թէ ոչ գոյ սահման, զիա՞րդ ասէ Սաղոմոն. «Մի՛ լինիր խիստ, զի մի՛ մեռանիցիս յաւուր, որ ո՛չ է ժամանակ մահու քո»* (**Ժղվ. Է. 18**)։ 4 *Գիտել պարտ է, զի ոչ եթէ սահմանեալ է ժամանակք ամացն, զի ի վաղխճանել կենացն գայ ի վերայ մահ, զի Եզեկիա եւ Նինուէացիքն խնդրեցին կեանս եւ յաւելաւ։* 5 *Եւ Սոդ[ոմ] եւ Գոմ[որ] միթէ հաւասա՞ր պարտ էր մեռ[անիլ] ի միում աւուր. եւ թէ ա՛յն էր սահմանեալ նոցայ աւր, ապա չէին չարագործ, եւ ո՛չ էր այն խրատ վասն յանցանաց։* 6 *Իսկ եթէ խրա՛տ էր, պա՛րտ է իմանալ, զի ո՛չ գոյ ժամ մահու։* 7 *Եւ առ եղիփազ Թեմնացին ասէ Աստուած. «Մեղա՛ր դու եւ երկու բարեկամք քո։* 8 *Եւ թէ ոչ էր վասն Յոբայ ծառայի իմոյ՝ սատակէի զձեզ»* (**Յոբ ԽԲ. 7**)։ 9 *Եւ յա՛յտ է, զի վասն Յոբայ ո՛չ մեռան։* 10 *Եւ ովմանք ի մեռանելն մեղաւք, զսուրբ արս բարեխաւս կալեալ, զի ապաշխարեսցեն։* 11 *Եւ շնորհէ Աստուած ժամանակս։* 12 *Եւ ովմանք ի ծնողաց փոխարէն տան զինքեանս. եւ լսէ՛. եւ թէ ա՛ւր կայ։* 13 *Զիարդ ասէ. «Պատուեայ զհայր քո եւ զմայր, զի երկա՛յն աւուրքք լինիցիս»* (**Ելք Ի. 12, Բ. Օր. Ե. 16**)։ 14 *Այլ ա՛յս է ճշմարիտն, զի Աստուծոյ կամքն է ամենայնի սահման. ում կամի երկա՛յն շնորհէ ժամանակս եւ ովմանց կարճէ, որպէս եւ գիտէ զիւրաքանչիւր աւգուտ, եւ նախախնամէ արդարակշիռ իրաւամբք։*

ԼԴ. 1 *Զի՞ լինին տարաժամ |330ա| մահ արդարոց եւ մեղաւորաց։* 2 *Եւ արդարոցն վասն այսմ պատճառի, որպէս ասէ. «Յափշտակեցա՛ւ նախքան զչարիսն, զի մի չարութիւնն փոխեսցէ զիմաստութիւնն հանճարոյն»* (**Իմաստ. Դ. 11**)։ 3 *Կամ որպէս վասն Յովսիայ ասէ գիր. «Ա՛ռ զնա, Աստուած, զի մի՛ տեսցէ զգալոցն չարչարանս»* (**տե՛ս Բ. Մնց. Լե, Ա. Եզր Ա.**)։ 4 *Եւ ոմանք ի տղայական տիս վաղխճանին, մանգունք հաւատացեալ ծնողաց՝ առաջի՛ նոցա, վասն յանցանաց հարցն, զի նոքա ողջախոհասցին եւ ինքեանք մաքուր մատչին առաջի Աստուծոյ։* 5 *Եւ է՛, զի չարագոյն ի կենցաղս կալոց են՝ յափշտակէ՛ զնոսա, զի ծնաւղքն զգաստացեալ՝ զինչսն, որ է բաժին մանգանցն, աղքատա՛ց բաշխեսցեն, եւ գոհութեամբ*

տանե՛լ վշտացն, քաւի՛ն յանցանք ծնողացն։ 6 *Իսկ ովմանց երկա՛յն տուեալ լինի ժամանակս արդարոց, զի աւրինակ բարեաց լիցին աշխարհի, որպէս Պաւղոս ասէր. «Կացից մնացից վասն ձերոյ աւգտի» (տե՛ս* **Փլպ. Ա. 23***), որ լաւ վարկանէր զելսն առ Քրիստոս։* 7 *Եւ որպէս զԱբրահամ ի ծերութենէ ի մանգութիւն նորոգէ, վասն սերելոյ ի նմանէ զաւակ։* 8 *Իսկ մեղաւորք չե՛ն արժանի կեալ, սակայն թողեալ լինին երկայն ժամանակս, զի կամ ապաշխարեալ արդարասցին կամ անպատասխանի լեալ՝ երկա՛րս տանջեսցին։* 9 *Է՛ եւ միւս եւս անճառ եւ զարմանալի մահ դառնաշունչ ի դառն Հերովդէէ տղայոցն կոտորածոյ, որք ոչ վասն արդարութեան եւ ոչ վասն մեղաց սպանան, եւ ոչ յափշտակեցան նախքան զչարիս, այլ յայլոց դառն մտաց, ի չար հրամանէն Հերովդէի։* 10 *Եւ առ ջրհեղեղաւն անմեղքն ընդ մեղանչականսն հեղձան եւ յԵգիպտ[ոս] մանգտին Իսրայիղի՝ ի ջուրս գետոյն։* 11 *Եւ անդրանիկքն* |330բ| *եգիպտացոց՝ ի գլուխ հարուածոցն։* 12 *Եւ սոքա զանազանս ունին պատճառս ջրհեղեղին եւ եգիպտացւոցն, վասն հարցն մեղաց։* 13 *Եւ Իսրայիղին, որ յԵգիպտոս՝ յառաջ եւ ի Բեդղէեմ յետոյ, վասն այնց թագաւորացն չարութեան։*

Լե. 1 *Եւ զլինելոցսն նախատեսէ Աստուած. զի թէ չարք յետոյ լինելոց էին՝ զերծցին, եւ թէ բարիք ինչ՝ ոչ վնասին, զի յարատոյ իսկ սղալման անվնասք չոգան, եւ զոր կամէինն լինել բարիս, իբրեւ զլեալս նախատեսէ Աստուած եւ ընդունի, ընդունի եւ պահէ զնոսա։* 2 *Որպէս է եւ ասէ հետակայ բանս. «Բայց հոգիք արդարոցն ի ձեռին Աստուծո՛յ են եւ ոչ մերձենայ ի նոսա մահ» (***Իմաստ. Գ. 1***)։* 3 *Նաեւ այս խորհուրդ զանխլաբար թողաւ յայլոց մարգարէիցն, բայց զսորայ կանխատեսութիւնն Քրիստոս լուսաւորեաց յեղելո՛ց իրաց ի յայտնութիւն, որ ի մեծատունն եւ Ղազար, զի ի մարմնաւորաց այս նմա միա՛յն է գիտելի, որ Տէրն է հոգւոց, զոր եւ յայտ արար, թէ հոգի՛ արդարոյն Ղազարու ի հրեշտակաց ի հանգիստ գոգոյն Աբրահամու անփոփեցաւ (տե՛ս* **Ղկ. ԺԶ. 22-23***)։* 4 *Որ եւ սակաւ բանիւ յայսմ տեղւոջ քննելի՛ է։* 5 *Եթէ ո՞ւր իցեն յառաջ գնացեալ հոգիքն, եւ թէ ընդալա՞ն միանգամայն արդարքն զբարիսն եւ մեղաւորքն՝ զտանջանսն։* 6 *Երկրորդ. եթէ ճանաչե՞ն զմիմեանս հոգիք գնացելոցն ի մէնջ եւ կամ այց արասցեն մեզ, որք կամք աստեն յաշխարհի։*

ԼԶ. 1 *Արդ, լուաք ի գրոց, եթէ մեղաւորացն ի դժոխս, ի ներքոյ երկրի եւ ծովու, ըստ Սաղմոսին. «Եղին զիս ի գբի ի ներք[նումն] ի խաւ[արի] եւ ի ստ[ուեր մահու]» (***Սղմս. ՁԷ. 7***)։* 2 *Եւ Յո՛բ ասէ. «Յերկիր խաւարային եւ ի մէգ» (***Յոբ Ժ. 21***), իսկ արդարոցն զկնի գալստեանն Քրիստոսի՝ ի*

դրախտն, զի ո՛չ թէ վասն աւազակին միա՛յն բացաւ[1]*, այլ վասն ամենայն* |331ա| *արդարոցն։* 3 *Եւ արդարքն ունին յուսով զխնդութիւն եւ զուրախութիւնն։* 4 *Եւ այս մասնաւո՛ր վայելումն է նոցա։* 5 *Զոր աւրինակ հրաւիրի ոք ի թագաւորէ ուտել ճաշ ընդ նմա եւ ակն ունի վայելել ի պէս-պէս խորտիկսն, իսկ մեղաւորքն, ակն ունելով տանջանաց տրտմութեամբ մաշին որպէս մահապարտք ի բանդի։*

Լէ. 1 *Իսկ ա՛յն, եթէ ճանաչե՞ն անդ զմիմեանս։* 2 *Յայտ է, զի արդարքն շնորհս առեալ յԱստուծոյ՝ ճանաչե՛ն, իսկ մեղաւորքն՝ ոչ։* 3 *Զի հոգիքն անմարմինք են եւ միմեանց նման, որպէս մեղուք, որ ո՛չ փոփոխին կերպարանաւք ի միմեանց, այլ միակե՛րպ են, նոյնպէս ի յարութեանն ամենեքեան ի կերպարանս Ադամայ յառնեն. ո՛չ երեւի արու եւ էգ, եւ ոչ մեծ եւ փոքր, թուխ կամ սպիտակ, զի ընդ ախտից սերմանցն լինի այս եւ ընդ ապականութեան եղծանի, վասն ո՛չ գոլոյ մարմնական նշանաց։* 4 *Եւ շնորհ գիտութեան ոչ ունին մեղաւորքն, վասն այնորիկ ոչ ճանաչեն։* 5 *Իսկ սուրբքն, եւ որք ի մեղաց զղջացեալ ապաշխարեցին, հոգա՛ն զմեզ, եւ որչափ մե՛րձ են առ աստուած, վստահութեամբ հայցեն մեզ բարիս, եւ որ ինչ վասն նոցա ողորմութիւնն եւ պատարագ լինի ի մէնջ ընդունելի՛ է Աստուծոյ, եւ նոքա զգա՛ն, որպէս ի ծաղկել այգոյն ազդ լինի գինոյն յամանն։* 6 *Իսկ մեղաւորացն ո՛չ է անդորրութիւն յիշել զմեզ, եւ ոչ զԱստուած անգամ, ըստ Դաւթի. «Ոչ ոք է, որ ի մահու յիշէ [զքեզ]»* (**Սղմս. Զ. 6**)*։* 7 *Իսկ արդարքն, որք ի ձեռին Աստուծոյ են, թուեցան յաչս անզգամաց, թէ մեռան, եւ համարեցան չարչարանք ելք նոցա եւ գնալն ի մէնջ բեկումն։* 8 *Քանզի անզգամն հոգւոյ անմահութեան անյո՛յս է, ընդ մարմնոյ լուծման համարի վճարել զկեանսն, եւ զի տաժ*|331բ|*անմամբ աստ եկաց արդարն, այպանէ զնա ի մահն, որպէս ասէր Պաւղոս. «Եթէ այս կեն[ալքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս] ապա ող[որմելի եմք], քան զամենայն մարդիկ»* (**Ա. Կրնթ. ԺԱ. 19**)*։* 9 *Բայց նոքա են ի խաղաղութեան, զի թէպէտ եւ յաչս մարդկան տանջեցան, այլ յո՛յս նոցա լի է անմահութեամբ եւ սակաւ ինչ խրատեալ գտցեն մե՛ծ բարութիւն։* 10 *Զխաղաղութիւնն արդարոցն յայտնեաց Ղազարու հանգիստն ի փոխե՛լն ի մարմնոյն։* 11 *Իսկ զտանջանացն եւ զխրատուն փոխարէնն՝ աղաղակէ Պաւղոս. «Ո՞չ են արժ[անի] չար[չարանք ժամանակիս] հանդ[երձելոց փառացն]»* (**Հռմ. Ը. 18**) *եւ Քրիստոս։ «Արդ[արքն] ծագ[եսցեն] իբրեւ զարեգակն յարք[այութեան երկնից]»* (**Մտթ. ԺԳ. 43**)*։* 12 *Եւ այժմ են ի խաղա-*

---

[1] *Հեռաւոր ակնարկ է Քրիստոսի հետ խաչուած աւազակներից մէկի միջոցով դրախտ բացելու վերաբերեալ խորհրդածութեան, որ առկայ է Եփրեմի, Յովհան Ոսկեբերանի եւ Եղիշէի երկերում։*

ղութեան յայտ է, զի ոչ առանց գործոյ են, այլ ընդ հրեշտակս հոգիք սրբոցն Հոգւովն Սրբով ներգործեն, զԱստուած աւրհնեն եւ ի յուսացեալ բարիսն ցնծան։ 13 *Իսկ մեղաւորացն ո՛չ բարի եւ ոչ չար գործել կարող են, որպէս նուագարան, յորժամ ո՛չ իցէ հարկանող՝ խափանեալ լռեալ կայ։*

ԼԸ. 1 *Եւ ընդէ՞ր ոչ թողաւ գալ հոգւոցն եւ պատմել՝ զիա՞րդ են ի դժոխս եւ զի՞նչ կրեն։* 2 *Վասն զի յայսմանէ բազում մոլորութիւնս ծնանէր. զի դեւք ի ձեւ մարդկան կերպարանէին եւ բազում չարիս եւ հերձուածս սերմանէին, եւ վասն հեշտութեան կենցաղոյս խաբէին, եւ բազմա՛ց լինէր կորուստ։* 3 *Զի եւ ոչ արդարոցն է այս գալ եւ երեւել այսրէն։* 4 *Եւ այն, որք երեւին ի տաճարս, որք շինեալ են յանուն սրբոցն, ո՛չ հոգիք սրբոցն են, այլ հրեշտակք երեւին նոցա՛ կերպարանաւք յԱստուծոյ առաքեալ հայցելով սրբոցն, այլ զի եւ արարչական գթովն խնամ տանի ամենայնի։*

ԼԹ. 1 *Եւ զիա՞րդ սրբոցն հոգիքն ի միում ժամու երեւին ի տեղիս բազումս ի բիւր տաճարս, զի եւ ոչ* |332ա| *հրեշտակաց կարելի՛ է, բայց Աստուծո՛յ միայն, զի եւ իմանալի՛ զաւրութիւնքն, յորժամ ի սպասաւորութիւն առաքին, պակասին ի փառաբանութենէն։* 2 *Այլ սուրբքն ի խաղաղութեան կալով, անմահական յուսով լի ակնկալեալ մեծի բարութեանն՝ եւ մեզ բարեխաւսեն առ Աստուած։* 3 *«Զի Աստուած փորձեա՛ց զնոսա եւ եգիտ իւր արժանիս։* 4 *Իբրեւ զոսկի ի բովս քննեաց զնոսա եւ իբրեւ զողջակէզս զոհից ընդալաւ զնոսա» (***Իմաստ. Գ. 6***)։*

Խ. 1 *Փորձեա՛ց Աստուած մարմնոյ չարչարանաւք իբրեւ զՅոբ եւ զամենայն սուրբս, եւ եգիտ զնոսայ անշարժ յիւր յոյսն եւ ի սէրն։* 2 *Արդ, այն չարչարանքն մարմնո՛ցն ասէ, իբրեւ բովն զոսկին ի ժանգոյ մեղաց, զԱստուծոյ ծառայսն մաքրեաց եւ իբրեւ զողջակէզս բոլորովին հաճո՛յ գտան Աստուծոյ, յամենայն թերութենէ մաքրեալք փորձանաւք չարչարանացն եւ հասեալք առ ինքն, որպէս ասէր Դաւիթ, «Փորձեց[եր] զմեզ Աստուած եւ քննեցեր, որպէս եւ քննի արծաթ» (***Սղմս. Կե. 10***)։* 3 *«Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջ[ուր] եւ հան[եր զմեզ] ի հանգ[իստ]» (***Սղմս. Կե. 12***)։* 4 *«Եւ ի ժամանակի՛ այցելութեան իւրեանց պայծառասցին։* 5 *Եւ իբրեւ կայծակն ընդ եղեգն ընթասցին» (***Իմաստ. Գ. 7-8***)։*

ԽԱ. 1 *Այցելութիւնն ի Քրիստոսի միւսանգամ գալուստն, յորում զպայծառութեան որքանն զարդարոցն. Քրիստոս արեգակա՛ն բաղդատէ։* 2 *Եւ որպէս կայծակն զեղեգն բորբոքէ, լուսաւորութիւն ոգոցն զմարմինն զարդարէ։* 3 *«Դատեսցին զազգս, եւ կալցին զժողովուրդս, եւ թագաւորեսցէ նոցա Տէր յաւիտեան» (***Իմաստ Գ. 8***)։* 4 *Համաձայնի աստ Տեառն*

մերոյ, որ ասէ. «Նստջիք յԲԺ.ան (12) յաթոռ, դատել զԲԺ.ան (12) ազգն Իսրայիղի» (Մտթ. ԺԹ. 28)։ 5 *Եւ դշխոյն հար[աւոյ] յար[իցէ] ի դատ[աստանի] ընդ ազգիս ընդ[այսմիկ] եւ դատ[ապարտեսցէ զսա], զի եկն* |332բ| *ի ծագ[աց երկրի] լսել զիմ[աստութիւն Սողոմովնի]։* 6 *«Եւ ահա մեծ, քան զՍողոմովն է աստ» (Մտթ. ԺԲ. 42-43)։* 7 *Այս է դատելն, զի կշտամբանք լինին հաւատացեալքն իւրաքանչիւրոցն, որք յանհաւատութեան մնացին։* 8 *Ի նոյն կարգսն եւ ի ժամանակն յետ այսորիկ լինի Աստուած ամենայն յամենայնի, եւ թագակիցքն մնան ընդ թագաւորին Քրիստոսի յաւիտեան։*

ԽԲ. 1 *Եւ արդ, զի՞ յաղագս կենաց եւ մահու եւ բնութեանս մարդկային ի բանից գրոց սրբոց սակաւուք իմաստասիրեցաւ։* 2 *Այսուհետեւ ձեզ տրտմութեամբ զգացելոցս եւ որք ցաւակցաբար եւ մտերիմ սիրով ի մխիթարութիւն վշտիս էք հաւաքեալք, զզանազանութիւն մահու եւ կենաց դարձեալ ճառեսցուք։*

ԽԳ. 1 *Կեանք եւ մահ յոլովագո՛յն ի միմեանց թուին փոփոխումն եւ հակառակական, զի մինն ապականութեան սկիզբն առնէ, ի մայրն մեր եւ յապականութիւնն ճանապարհորդելով, միշտ ի մերձակայէս ի բա՛ց կացեալ, եւ յապականութիւն կործանէ զկենացս այսոցիկ զլուծումն։* 2 *Իսկ միւսն յաստի չարեացս զվճարումն ունի, եւ առ վերինսն բազում անգամ փոփոխէ զկեանսն։* 3 *Ո՞չ գիտեմ, թէ տիրապէս կոչեսցի մահ անուամբ առաւել, քան թէ իրաւք զահն ունի, եւ զիա՛րդ մեք, որ ինչ ոչ են ահաւոր՝ երկնչելով, եւ յորմէ զարհուրելն արժանաւոր է՝ իբրեւ զլաւագունաւ փարիմք։* 4 *Մի կեա՛նք, որ առ կեա՛նսն հայիմք մի մահ՞ մեղք, որ հոգւո՛յ է սատակումն, բայց այլք, զոր իմանան՝ ոմանք երազոցն են դէմք, հակառակ էիցն խաղալով, եւ հոգւո՛յն պատրող երեւմունք։* 5 *Զի՞նչ արդեաւք դժնդակս կրեցաք հաստատ, եթէ առ ճշմարիտ կեանսն աստի* |333ա| *փոխադրեցաք։* 6 *Եթէ ի ցնորիցս եւ ի թմբրութեանցս եւ ի շուայտութեանցս, եւ ի գարշելի՛ հարկատրութեանցս ի բաց վճարեալք, ընդ կայունսն եւ ընդ ոչ հոսանուտսն եղիցուք՝ փոքր լուսով ի մե՛ծ լոյսն պարիցեմք, որքա՞ն ինչ աստ չարչարիցիմք։* 7 *Եւ զի ոչ ամենայն կեանք մարդկան առ աստուածային բնութեան անմահութիւնն համեմատեալք, թո՛ղ թէ կենաց նշխարք եւ մուտք, որպէս ասիցեմք մարդկան շնչոյս եւ ժամանակ է ի ասպարիսիս վերջինք։* 8 *Որքա՞ն ինչ, քան զմեզ յառաջեաց վաղխճանեալս, ո՞չ ապաքեն եւ մեք ի նոյն ճեպիմք յաւթեւան. ո՛չ նոյն ի վերայ դնի մեզ կափարիչ. ո՞չ նոյն փոշի յետ սակաւուց եղիցուք։* 9 *Զի՞նչ շահիմք ի փոքունս յայսոսիկ յաւուրս, քան զառաւե՛լ չարիս՝ զոմանս տեսանելով, եւ զկէսս կրելով, եւ զայլս եւ գործելով, թերեւս սպաս տարեալ բնու-*

թեանս աւրինաց զհասարակա՛ց զհարկն զանշարժելի՛ն։ 10 *Եւ ոմանց զհետ գալ, եւ քան զոմանս յառաջ երթալ, զայլսն՝ լալ, եւ յայլոց ողբացեալ լինել, եւ յայլոց փոխարէն առնուլ զորս յառաջագոյն ի ներքս բերաք այլոցն զարտասուաց հանկանակս։*

ԽԴ. 1 *Այսպիսի՛ են, եղբարք, կեանք մեր կենդանեացս. ժամանակեայք այսպիսի ի վերայ երկրի խաղս. ոչ եղեալք՝ լինե՛լ, եւ լեալ՝ անդէն լուծանիլ։* 2 *Երա՛զ եմք ո՛չ կայուն, երեւումն իմն՝ ո՛չ ըմբռնելի, թռի՛չք հաւու՝ անցանելոյ ընդ աւդ, նա՛ւ ի վերայ ծովու՝ հե՛տս ոչ ունելով. փոշի՛, գոլոշի՛ առաւաւտնեայ ցաւդ. ծաղիկ ի ժամանակի բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ։* 3 *«Մարդոյ, իբրեւ զխոտոյ աւու|333բ|րք իւր. իբրեւ զծաղիկ ի վայրի այնպէս ծաղկեալ գեղեցկապէս»* **(Սղմս. ՃԲ. 15)**։

ԽԵ. 1 *Աստուածայինն Դաւիթ յաղագս տկարութեանս մերոյ իմաստասիրեաց։* 2 *Եւ այնոքիկ դարձեա՛լ բանիւք զնուազութիւնն աւուրց իմոց պատմեա՛ ինձ, եւ լքաւ չափով զմարդկային կեանս սահմանէ։* 2 *Մի՛ ցասցուք, որ ի բաց վճարեցաւ ի չարեացս, այլ զմեզ յորպիսի՞ս մնացեա՛լ եմք ի չարիս։* 3 *Լքանելով զերկի՛ր՝ Վերնայնոյն հարազատապէս զհետ երթիցուք։* 4 *Նոքին վտանգաւորք կարճամտացն եւ թեթեւք առաքինեացն ո՛չ է տրտմելի վաղխճանն, այլ ընդ պանդխտութեա՛նս երկայնութիւնն, զոր Դաւիթ խորանս խաւարի՛ կոչէ, ա՛յս են վրանք կեդարու (տե՛ս* **Սղմս. ՃԺԹ. 5)** *եւ տեղի չարչարանաց, ըստ այնմ. «Խոնարհ ար[արեր զմեզ] ի տեղի չարչարանաց, տիղմ անդնդոց եւ ստուերք մահու»* **(Սղմս. ԽԳ. 20)**։

ԽԶ. 1 *Արդ, եթէ զկեանս զայս, յորում խաբեութի՛ւն եւ անկարգութի՛ւն, եւ անհարթութի՛ւն, եւ ալեկոծութեամբ ի վայր եւ ի վեր բերումնս է, կշռեսցուք ընդ միւս կեանս, որ ի սուրբսն յաւելու եւ հաստատունն, եւ յաստուածատեսակն, եւ որ նո՛յնպէս ունի՝ եւ ի խռովութենէ եւ խառնակութենէ ազատն։* 2 *Եւ զայս իմաստասիրեալս ոչ եւս տրտմեցուցանէ զմեզ կանխաւ գնացեալն, այլեւ հեշտացուցանէ՛ եւս, աստ ի բաց տանելով եւ ի վերնագոյնսն դնելով։* 3 *Եւ զմերձակայիս տաղտկութիւնն ծածկէ հանդերձեալն եւ հաւանեցուցանէ թէ՝ եւ մե՛ք առ բարի՛ Տէրն ճեպիմք. եւ լաւագո՛յն է բնակութիւնն, քան զպանդխտութիւնս։* 4 *Եւ, զոր աւրինակ, նաւելոցն անքոյթ նաւահանգիստ. նոյնպէս եւ աստ մրրկեցելոցս, անդ փոխումն. եւ փոխ*[1]*։*

---

[1] *Այս էջով նիւթը մնում է թերի, գրիչը տողատակում նշել է. «Այս տեղս եւս պակաս է, բայց ո՛չ գոյ եւ ո՛չ գտանի»։ Նկատի ունի նաեւ նախորդ էջերի ետեւառաջութիւնը։ Հաւանաբար նախօրինակի ամբողջական չլինելու հետեւանքն է։*

Լ.

|337ա| ԱՍԱՅՈՒԱԾՔ Ի ԲԱՆՆ ՏԵԱՌՆ, ՈՐ ԱՍԷ. «ԵՍ ԵՄ ՀՈՎԻՒՆ ՔԱՋ» (Ա. ԿՐՆԹ. ԺԲ. 28). ԵՐՋԱՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅԵՑՈՅ ԱՐԱՐԵԱԼ Ի ԽՆԴՐՈՅ ԵՒ Ի ՀԱՅՑՄԱՆԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱՐԻ[ՈՐ Ի ԴՐԱՆԷ ՍՐԲՈ ԿԱՐԱՊԵՏԻՆ[1]

Երզնկացու քրիստոնաբանությունը կուռ, համապարփակ եւ ամբողջական է, ըստ նրա՝ մարդկության ողջ պատմությունը, արարչագործությունից հետո, մինչեւ Քրիստոսի ծնունդը, ավելի ճիշտ՝ Ադամի եւ Եվայի մեղսագործությունից ու դրախտից վռնդելուց հետո, մարդկության փրկության նախապատրաստությունն է, որը կանխատեսվեց մարգարեների միջոցով, բացատրվեց առաքյալների կողմից եւ ուսուցանվեց հայրապետների միջոցով:

Շատ ուշագրավ միտք է հայտնում Երզնկացին եկեղեցու պատմության եւ քրիստոնեական վարդապետության կազմավորման մասին: Նա նշում է, որ եթե մարգարեները քրիստոնեական գաղափարախոսության մեջ սերմնացաններն էին, իսկ առաքյալները՝ խնամողները եւ պտուղ աճեցնողները, ապա հունձքը հավաքողները սուրբ հայրերն էին. Երզնկացին աշխատում է բացատրել սուրբ հայրերի մոտ տեղ գտած հակասությունները.

«Եւ զի ո՛չ էին սոքա ի միում ժամանակի, թէպէտ եւ զմիաստուածութիւն Երրորդութեանն քարոզէին, եւ զմի ճանապարհ ճշմարտութեան գնային, այլ յայլեւայլ ժամանակս եղեն, վասն մեծի խորհրդոյն, զՆորոյ պատճառն յայտնեցին սուրբքն աստուածամերձք» (ՄՄ 2173, 338ա):

Երզնկացին փաստորեն ընդունում է երկու քաղաքակրթություն՝ նախաքրիստոնեական-հեթանոսական եւ քրիստոնեական, անշարժ անփոփոխելի: Սակայն նա նշում է, որ այդ անցումը մեկ անգամից տեղի չունեցավ, այլ աստիճանաբար, որովհետեւ մարդկանց մեջ չի կարելի բռնությամբ հավատ ներարկել:

Ինչպես միշտ, Քրիստոսի հայտնության եւ մարդկության փրկության այս երկար ընթացքի անհրաժեշտության բացատրության համար օրինակներ է բերում գիտություններից, առօրյա կյանքից, արվեստներից եւ կենցաղից: Զցանկանալով ծանրաբեռնել մեր խոսքը հավելյալ մեջբերումներով եւ ընթերցողին հոգնելով կարդալու մեծ վարդապետին, անկարող ենք սակայն չնշելու այն չքնաղ նկարագիրն եւ բացատրությունը, թե ո՞վ եւ ի՞նչ է «Հովիւն քաջ» եւ ովքե՞ր են նրանք եւ ինչպե՞ս նրանցից յուրաքանչյուրն իր տեղում եւ ժամանակին հովվեց մարդկության հոտը: Երզնկացին իր ժամանակակիցներին հորդորում է հետեւելու նրանց օրինակին:

Հրատարակվում է ՄՄ 2173 (Ա. 337ա-53ա) եւ 2187 (Դ. 267ա-86ա) ձե-

---

[1] *Վերնագիրը գրեթե լրիւ ջնջուած է եւ բաւական մեծ դժուարութեամբ կարողացանք վերծանել (Է. Բ.): Համեմատուող 2187 ձեռագիրը խիստ թերի է եւ դատելով հակիրճ վերնագրից՝ կարելի է ենթադրել, որ ԺԷ. դարի գրչի ձեռքին եղած նախօրինակը եւս թերի է եղել:*

ռագրերի համեմատությամբ. ցավոք երկու ձեռագրերում էլ բնագիրը թերի է: 2173 ձեռագրում բացակայում է մի հատված, որը բարեբախտաբար առկա է 2187 ձեռագրում, իր կարգին 2187 ձեռագրում բնագիրը սկզբից թերի է եւ սկսվում է Ի. պարբերության «Ասէ ոմն յիմաստնոցն Աստուծոյ» հատվածից եւ վերնագրված է. «Ի բանն, որ ասէ՝ ես եմ հովիւն քաջ, Յոհանէս վարդապետէ մականուն Պլուզ»:

Ա. 1 *Սիովնի ի վերնոյն եւ համայնից մաւրն երամից սրբոցն ազատածին զաւակն եւ որդին նազելի, երրորդական երկնի բարձրութեան կայանին սրատեսիլ բբաւք աչաց հոգւոյն տեսողն եւ զարմացուցիչ բանիւ պատմողն՝ բանին Հաւր ծածուկ ծննդեանն անճառելոյ արտաբերական ձայնի շարժական լեզուն՝ գեղեցկայարմար բանի աշխարհալուր բարբառողն եւ տիեզերահամբաւ քարոզն վերին եւ ներքին բանականացս, անաւթն ընտրութեան հոգւոյն մե՛ծ առաքեալն Քրիստոսի Պաւղոս, զկարգ դասու եկեղեցւոյ սրբոյ ուսուցանէ մեզ ասելով. «Զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս»* (**Ա. Կրնթ. ԺԲ. 28**)*: 2 Նախ՝ յաղագս շնորհին եւ ճշմարտութեանն. երկրորդ՝ յաղագս ստուերին եւ գծագրութեանն. երրորդ՝ ըստ չափոյ պիտոյիցն եւ մեկնողութեան: 3 Զի թէպէտ դասիւ յառաջ էին մարգարէքն պատգամաւոր հնոյ ժողովրդեանն, որպէս յառաջ է երեւումն ստուերի մարմնոյն, քան զմարմնոյն մակերեւութիւնն, եւ նախագիծ պատկերին նշանակեալ կապարաւ, քան զկերպարանին նկարագրութիւն, բայց սակս անծանաւթ եւ աննշան տպաւորութեանն, երկրորդ է ըստ պատուոյ կենդանւոյն շարժողի եւ մարմնոյ յերեւականի, եւ գեղանկար պատկերին ծաղկերանկ գունոցն յարախառնութեան: 4 Այսպէս, որ երկրորդ ըստ ժամանակի՝ առաքելոցն դաս, որ առ նորս եւ ճշմարտութիւնս առաջին է դաս, վասն զշնորհսն Քրիստոսի պատմելոյն եւ զճշմարտութիւնս հնոյն քարոզելոյն: 5 Եւ երրորդ կարգ է զհարցն սրբոց եւ զվարդապետացն դաս, իբր |337բ| երկոցունց նոցուն բանից թարգման եւ բանաւոր բուսոյ նոցին գեղազարդ ծաղկանցն որոճաւղ եւ ի կաթին բնութիւն փոխարկաւղ:*

Բ. 1 *Եւ դարձեալ, ըստ այլում ապացուցի իմանամք զկարգ դասու առաքելադիր սահմանիս, զի ամենայն ուրէք նախադասին հանուրքն մասնականացն: 2 Այսպէս, որ հանուրց աշխարհի լոյս կոչեցան, նախ դասին առաքեալքն յեկեղեցի, քան զմարգարէսն, որք ի հողեղէն բնութենէս լուսաբեր պատուհանից նմանեցին, զի նոքա զլոյս աստուածութեանն ըստ չափոյ ընդունողացն ի նսեմացեալ տուն աշխարհիս նշոյլս ճառագայթից*

մուծին։ 3 *Իսկ առաքելոցն դասք, իբր զկենդանակերպս արեգակնաբերս զհամատարած լոյս արդարութեանն արեգական յամենայն մասունս արարածոց սփռեալ փայլեցուցին։* 4 *Իսկ հայրապետքն սուրբք, աշակերտք առաքելական քարոզութեանն՝ որդիքն հարցն բանից ծնողաց ծնունդք աւետարանչաց աստուածաբանութեան՝ երրորդ կարգին՝ յետ մարգարէիցն եւ առաքելոցն։* 5 *Զի նախ Աստուած Հայր յայտնեցաւ մարդկան եւ առաքեաց պատգամախաւս զմարգարէսն, զի ծանուսցեն ամենայն աշխարհի զճշմարիտն Աստուած, եւ զսուտսն յանդիմանեսցեն, թէ չեն աստուածք։* 6 *Զոր եւ վկայեցին իսկ ճշմարտութեանն, թէ «Սա է Աստուած Աստուած մեր [յա]վիտենս յաւիտենից] եւ սա հով[ուեսցէ զմեզ] մինչեւ յ[աւիտեան»* (**Սղմս. Խէ. 15**)։ 7 *Եւ վասն կռոցն ասէին. «Կուռք հեթան[ոսաց] դեւք են եւ տէր զերկ[ինս] արար»* (**Սղմս. Ղե. 5**)։ 8 *Եւ այսպէս միջնորդք եւ պատգամախաւս աստուածածանաւթութեան եղեն մարդոյ դասք մարգարէիցն, եւ քարոզեցին զգալուստ Որդւոյն Աստուծոյ յարարածս եւ վկայեցին տնաւրէնութեանն խորհրդոյ։* 9 *Իսկ յորժամ կատարեցաւ խորհուրդն Հաւր, զոր յայտնեաց իւրոյ մարգարէիցն, եւ նոքաւք գծագրեալ տպաւորեաց ի սիրտս մարդկան զանճառութիւն խորհրդոյն, ապա եկն Որդին Աստուծոյ եւ ծնեալ մարդ ի կուսէն, ելից եւ կատարեաց զբանս ծառայից իւրոց մարգարէից, եւ ընտրեաց իւր ԲԺ.ան (12)* |388ա| *առաքեալս, ո՛չ վասն զլինելոցն պատմելոյ, որպէս մարգարէքն, այլ զկատարումն տնաւրէնութեանն քարոզէին, որպէս գրէ Պաւղոս, «Մեք քարոզեմք զխաչեալն Քրիստոս»* (**Ա. Կրնթ. Ա. 23**)։

Գ. 1 *Եւ այսպէս, զոր մարգարէքն գուշակեցին, առաքեալքն ականատես եղեալ՝ քարոզեցին եւ զՈրդւոյ աստուածութիւնն ընդ Հաւր յայտնեալ, նշանացն եւ արուեստիցն վկայութեամբ հաստատեցին։* 2 *Իսկ ի կատարումն ածեալ Որդւոյ զխորհուրդ տնաւրէնութեանն եւ յիւրականն ամբարձեալ փառս, ըստ աւետեացն Հաւր կանխաձայնութեան եւ խոստմանն Որդւոյ առաքեալ զմխիթարիչ Հոգին Սուրբ ի դասս առաքելոցն, որ եւ եկեալ Հոգին ճշմարտութեան համափառն եւ արարչակիցն Հաւր եւ Որդւոյ, առնու իւր աշակերտս զերջանիկ սուրբ հայրապետսն, զաշակերտեալսն աւետարանական քարոզութեանն սրբոց առաքելոցն, զոր խաւսեցան Հոգւովն Սրբով, զի վասն սոցա ասաց Քրիստոս. «Աղաչեցէք զՏէր հնձ[ոց] զի հանցէ մշակս ի հունձս ի[ւր]»* (**Մտթ. Թ. 38**)։ 3 *Եւ դարձեալ ասէ. «Այլ է, որ սերմանէ, եւ ա՛յլ է որ հնձէն եւ ժողովեն զպտուղն ի կեանսն յաւիտենից»* (**Յվհ. Դ. 37**)։ 4 *Եւ զայս վասն սրբոց հայրապետացն, ասէր, զի զոր սերմանեցին մարգարէքն, զպտուղն աճեցուցին եւ բազմացուցին առաքեալքն։*

Դ. 1 *Իսկ ժողովեալ ի կեանսն յաւիտենականս՝ սրբոց հայրապետաց է։* 2 *Եւ զի ո՛չ էին սոքա ի միում ժամանակի, թէպէտ եւ զմիաստուածութիւն երրորդութեանն քարոզէին, եւ զմի ճանապարհ ճշմարտութեան գնային, այլ յայլեւայլ ժամանակս եղեն, վասն մեծի խորհրդոյն, զնորոյ պատճառն յայտնեցին սուրբքն աստուածամերձք։* 3 *Վասն զի Բ. (2) եղեն փոփոխմունք վարուց երեւելիք յամենայն յաւիտենէ, որք եւ Բ. (2) կտակք կոչին։* 4 *Առաջին՝ շարժումն ի կռոցն յաւրէնսն եւ երկրորդ յաւրինացն յաւետարանս եւ երրորդ՝ շարժմամբ փոփոխիմք յայն, որ ո՛չ շարժի եւ ո՛չ սասանի։*

Ե. 1 *Եւ ընդէ՞ր ոչ միով շարժմամբ յանկարծակի փոխեցան. զի մի* |338բ| *բռնադատութեամբ լիցի աստուածպաշտութեանն խորհուրդ, այլ հաւանութեամբ, զի ակամայքն ո՛չ մնան հաստատուն, որպէս եւ ոչ յորդութիւնք հոսմանց արգելցին բռնութեամբ, կամ ի բնական բուսմանէ թիւրեալքն տունկ ուժգնութեամբ ուղղին։* 2 *Եւ ո՛չ էր վայելուչ Աստուծոյ ակամայ զբարին առնել, եւ ո՛չ ընդունողաց բարոյն տրտմութեամբ կրել, այլ զի կամաւոր լիցի բարեգործելն, վասն որոյ դայեկաբար դաստիարակութեամբ սնուցանէ զմարդկութիւնս. զոմն ի բաց բառնայ ի հայրենե[ա]ցն, եւ զոմն թողացուցանէ, զի հեշտութեամբ եւ ախորժելով տեղի տայցեն, եւ որպէս յիմաստուն բժշկէ զդեղատուութիւն ընկալցին։* 3 *Վասն որոյ յառաջնումն զկռապաշտութիւնն ի բաց հատանելով զոհիցն նեբեաց։* 4 *Իսկ երկրորդ զոհսն բառնալով, զմարմնոյ կամաց զենումն խնդրելով պատարագ, որպէս գրէ մարգարէն Դաւիթ. «Ընդ զոհս եւ ընդ պատարագս ո՛չ հաճ[եցաւ]. մարմին հաստատեցեր»* (**Սղմս. ԼԹ. 7**)։

Զ. 1 *Եւ այսպէս առ սակաւ փոփոխմամբն բերէ յԱւետարանն։* 2 *Եւ եղեն փոխանակ հրէից քրիստոնեայք, յանաստուածութենէն եկեալ ի մի աստուածգիտութիւն, ուսեալք ի մարգարէիցն, որք քարոզէին զմի Աստուած Հայր յայտնապէս։* 3 *Իսկ ի նորումս՝ զորդի եցոյց առաքելոցն քարոզութեամբ, եւ զՀոգւոյ աստուածութիւնն ծածկեաց, եւ ապա սրբովք հայրապետաւքն ընձեռէ զհոգւոյն ճշմարտութիւնն, եւ յայտնէ նոքաւք զերրորդութեանն զանճառ խորհուրդ աստուածաբանութեան, զի ո՛չ եւս զգուշագոյն էր չեւ եւս զՀաւր աստուածութիւնն խոստովանելոց, զՈրդի յայտնապէս քարոզել եւ ոչ զՈրդի ընդունողացն՝ զՀոգին Սուրբ, զի որպէս բեռին ծանրութիւն՝ քան զկարն վնասիչ է կրողին, եւ արեգակնային լոյս՝ տկար աչաց, եւ կերակրոյ յղփութիւն առաւել քան զզաւրութիւնն՝ վտանգաւոր։* 4 *Իսկ բարիոք է առ սակաւ-սակաւ յաւելուածովն ընդունելութիւն, որպէս ասաց մարգարէն Դաւիթ* |339ա| *ի վեր ելանելով փառաց ի փառս եւ գնալով զաւրութենէ ի զաւրութիւն։* 5 *Եւ այնպէս Երրոր-*

դութեանն լոյս ծաւալեսցի ի յընդունաւղսն։ 6 *Այլեւ յիւրաքանչիւր ժամանակս մարգարէքն եւ առաքեալք եւ հարքն սուրբ՝ իմաստուն եւ արուեստաւոր բժշկի նմանեցին եւ քաջ եւ արի զաւրավարի, զի որպէս հմուտ բժշկի՝ եւ այս երկոքին են գործ մարտնչել ընդ ցաւն եւ հաստատել զառողջութիւնն, եւ զաւրավարին՝ վանել զաւտարսն եւ պահել եւ խնամել զիւրսն։* 7 *Այսպէս եւ սոքա առնէին մարգարէիցն ճշմարտախաւսքն՝ ընդ ստոցն էր պատերազմ, որպէս Մովսիսի ընդ Յանէսն եւ Յամրէսն եւ ընդ կախարդսն եգիպտացւոց, եւ Եղիայ ընդ Աքաաբ եւ ընդ քուրմսն Բահաղու եւ մարգարէս նոցին։* 8 *«Այսպէս եւ առաքելոցն մարտ էր ընդ սուտ առաքեալսն, որպէս Դէմասեւ Հերմոգինէս, որք ասէին թէ չի՛ք յարութիւն մեռելոց»* (**հմմտ. Բ. Տմթ. Բ. 17-18**)[1] *զի որք յապականութիւն աշխարհիս շաղեալք են՝ դիւրին է նոցա լսել, թէ ո՛չ [գայ] յարութիւն։* 9 *Վասն որոյ սոքա եւ այլք, որ ստութեանն էին սպասաւորք, յանդիմանեալք ի ճշմարիտ առաքելոյն, որպէս գրէ Պաւղոս առ Գաղատացիսն. «Թէ ոք աւետարանեսցէ ձեզ» աւտար Քրիստոս, զոր մեքն ո՛չ քարոզեցաք, կամ հոգի աւտար, զոր դուքն ո՛չ առէք, կամ ասել թէ յարութիւն արդէն իսկ եղեալ է, այսպիսին թէ հրեշտակ յերկնից է եւ թէ մարդ երկրաւոր, «նզովեալ եղիցի»* (**Գղտ. Ա. 9**)։ 10 *Նմանապէս սոցին, առաքեցան եւ սուրբ հայրապետքն, զի յանդիմանեսցեն զսուտ հայրապետսն, որք ըստ առաքելական բանին զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան, որք եւ սուտանուն գիտութեամբ յարեան հակառակ ճշմարտապատում սրբոց հայրապետացն եւ ընդ քաղցր կերակուրսն զմահացու դեղսն խառն|339բ|էին ի ճաշակումն դիւրահաւան յամրայմիտ մարդկան, զի մարմին որքան յառողջութիւն է՝ ո՛չ ի երկիւղ մահու, եւ որք ի լոյս են՝ ո՛չ տիրէ նոցա խաւար, եւ որք ի գիտութիւն ճշմարտութեան կան՝ ո՛չ մոլորին յուղիղ ճանապարհէն։*

Է. 1 *Եւ այսպիսիք ոմանք էին թիւրեալքն ի ճշմարտութենէ հերձուածողացն ժողովք, որք զգիտութիւն եւ զվարդապետութեան ունելով զանուն, հակառակ զինեցան վարդապետութեան Հոգւոյն, որպէս Արիոս Աղէքսանդրի, որ ուրանայր զաստուածութիւնն Որդւոյ եւ արարած եւ մարդ դաւանէր։* 2 *Եւ Նեստոր ո՛չ խոստովանէր Աստուածածին զմիշտ կոյսն Մարիամ եւ Բ.ս (2) որդիս ասէր։* 3 *Եւ Մակեդոն հոգեմարտ, որ ո՛չ ասէր զՀոգին Սուրբ հաւասար Հաւր եւ Որդւոյ։* 4 *Եւ Արտեմոն բաժանաւղն միութեան խորհրդոյ տաւնից եւ միաւորութեանն Բանին*[2]*։* 5 *Եւ ժողովքն*

---

[1] *Դէմասի եւ Հերմոգինէսի փոխարէն նշուած են Հիմենոս եւ Փիլետոս։*

[2] *Հայ մատենագրութեան մէջ յաճախ յիշատակւում եւ դատապարտւում են վերոյիշյալ աղանդաւորները։*

Քաղկեդոնի՝ հաւանեալքն ընթերցուածոցն Արտեմոնի եւ հայհոյութեանցն Լեւոնի Հռոմայեցոյ: 6 *Սոքա կաթողիկոսի*[1] *անուն ունէին,եւ զկարգ եւ զկրաւնս սրբոց հարցն քակտէին, զոր եւ երկարութիւն բանից է այժմ յայտնի առնել զմոլորութիւն Արիոսի եւ զաստուածասաստ պատուհասն նորին, զոր կրեաց ըստ արժանւոյն, զի որ զերկայնմտութեամբն Աստուծոյ եւ զներելովն արհամարհէ ըստ անզեղջ սրտին՝ զպատուհաս բարկութեանն Աստուծոյ իւրում անձինն գանձէ:*

Ը. 1 *Արդ, հարք կոչեցան սուրբ հայրապետքն, որ յետ առաքելոցն հոգայբարձութիւն հաւատոյ ծննդոցն նոցին յանձնեցաւ:* 2 *Եւ զի հայրք ո՛չ միայն* |340ա| *ծնանին զորդիս, այլեւ աշխատութիւնս կրեն վասն նոցա, նա եւ զգանձս բարութեան եւ զվաստակս աշխատութեան յանուն որդոցն գանձեալ պահեն, որպէս գրէ առ[աքեալն], թէ՝ «Պարտական են հարք Որդւոցն գանձել» (Բ. Կրնթ. ԺԲ. 14):* 3 *Վասն որոյ եւ սուրբ հարքն զորս ծնան աւազանաւն եւ բազում աշխատութեամբ սնուցին առաւել քան զմարմնոյ ծննդոցն սնունդ, զի ծնաւղքն հոգեւոր ո՛չ երբէք կարեն հանկչել ի սաստիկ վնասէ հերձուածողացն, զի մարմնոյ ծնաւղաց հարկ է պահել ի հրոյ եւ ի ցրտոյ, ի սրոյ յաւազակաց վնասողաց:* 4 *Իսկ հոգեւոր հարցն հարկ է պահել ի չարաթուն հերձուածողացն բանից, որ սաստիկ է, քան զամենայն տապ հրոյ եւ զսառնամանեաց ցրտութիւն, եւ զաւազակաց խոցումն սրոյ եւ զկողոպտումն կենաց:* 5 *Վասն որոյ ո՛չ միայն հարք կոչեցան եւ ծնաւղք, այլեւ դայեակք եւ դաստիարակք, զի զորս ծնան իբրեւ զմարս եւ սնուցին իբրեւ զդայեակս հոգեւոր կաթամբն քաղցրաճաշակ վարդապետութեամբն:* 6 *Եւ զի որպէս տղայն ո՛չ սնանի առանց կաթին, եւ ո՛չ զարգանայ, եւ ո՛չ անկատարն յիմաստութենէ՝ առանց վարդապետութեան ուսման հասանէ ի հաստատութիւն հաւատոյ:* 7 *Եւ զորս սնուցին զանկատար հասակն հոգեւոր, նոցա եւ զգանձս փարթամութեան քաղցրախաւս ճառիցն եւ մեկնութեանց աստուածաշունչ գրոց զերկս վաստակոցն իւրեանց ամբարեցին:* 8 *Այլեւ մշակք կոչեցան բանաւորն անդաստանի, որոց եւ Տէրն ասաց արժանի գոլ մշակն վարձոյ, որք աշխատին յեկեղեցի սուրբ,* |340բ| *զի աշխատութիւնն մշակաց է, վարձն աշխատաւորաց:* 9 *Զի որ սերմանեաց զսերմն բարի Քրիստոս, որ Տէրն է աշխարհի, իսկ որոմնացան՝ թշնամի. սատանայ եւ նորին հաւանեալքն՝ չար հերձուածողքն Արիոս եւ այլ որոմնացան մշակքն անիրաւ:* 10 *Սակս որոյ եւ մշակքն հոգեւոր ջան եդին խլել զորոմն սերմանեալ ի մէջ ցորենոյն, զի փուշ եւ խոտք վնասակարք ամենայն՝ որոմն*

[1] *Բառը թւում է ոչ հեշտ ընթեռնելի, որ «ճշտված» է լուսանցում*

կոչին, զոր եւ Տէրն զհոգս աշխարհիս փուշ կոչեաց՝ հեղձուցիչ Բանին ճշմարտութեան։ 11 *Այլեւ ըստ տնկագործութեանն աւրինաց ի յեկեղեցի սուրբ՝ ի նորոյ դրախտիս բուրաստանի առ բանաւոր եւ իմաստուն տունկսն զաշխատասէր հարսն մշակ կոչել ի դէպ է։* 12 *Ըստ Պաւղոսի. «Ես տնկեցի, Ապաւղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց»* (**Ա. Կրնթ. Գ. 6**)*, զի առաւել քան յանբան տունկսն եւ յանկենդան, յերկնային տունկսն եւ ի սքանչելի բոյսսն առ բանաւորս մարդ աշխատելի է. զանաւգուտսն եւ զվնասակարսն պտղոց խլել եւ յապաւել, զի մի՛ խափան լիցի պտղոցն շահէկանութեան։* 13 *Եւ ո՛չ միայն մշակք անդաստանի եւ տնկոյ եղեն, այլ մարգարէական եւ առաքելական որայիցն որայիցն հաց արարք։* 14 *Եւ յաւրինաւղք զանազանութեան խորտկաց եւ ճմլաւղք ուրախարար ողկուզին ի բաժակս բերկրութեան ճառից եւ մեկնողութեան բանիցն իւրեանց խառնեցին յուրախութիւն երկնի եւ երկրի։* 15 *Եւ զի բանական եւ իմաստուն է այս՝ սերմանեաց անդաստան, զորս երկրագործ են եւ խաւսուն տունկք են, զորս տածեալ խնամեն, եւ հոգւոց կերակուր են խորտիկք, զորս կազմեն, վասն որոյ եւ վարդապետք* |341ա| *կոչեցան հարքն սուրբք, զի որք սիրեն յաստուածայինն մտանել դպրոց, կարողք եղեն տալ զիմաստութեանն գծագրութիւն եւ զանազան վարժ վարդապետութեան սոցա. ոմանց զնախակրթականն խրատ եւ այլոց զմիջինն իմաստ հանճարոյ, եւ այլոց զծայրագոյնն։* 16 *Այլեւ վարժող եւ մարզիչ եղեն բազմահմուտ հանճարով, զի քան զձիավարութեան եւ զաղեղնաւորութեան եւ մրցականացն եւ բռնամարտութեանն կրթութիւն՝ զկարգ քրիստոնէութեանս վարժողացն մեծ հանդէս կայ առաջի, որով զամենայն աւրինակ իմաստութեան ցուցին յանձինս՝ հարքն երանելի։*

Թ. 1 *Եւ զի ո՛չ է առաջիկայս մեզ շարագրութիւն ներբողական գովեստի հարցն սրբոց, զի բազմազան գործոյ նոցա զյոքնակի անուանս ի մէջ առցուք զամենայն, այլ զմի՛ս զայս, որ առաջի կայ մեզ ի քննութիւն, ո՛չ է զանց առնելի, զի հովիւք կոչեցան սուրբ հայրապետքն, որք ճշմարտութեամբ եղեն վերակացուք հաւտին. ո՛չ զանձինս, այլ զխաշինս արածելով, զքաջ հովուին բերելով զպատկեր նմանութեան, որ ոչ անձին խնդրեցին հաճոյ լինել, այլ բազմաց, զի ապրեսցին, յորոց վերայ եդ զանձն կամաւորութեամբ եւ ի գազանին ժանեաց ի բաց կորզել թափեաց, զորոյ զՏեառն եւ զհովուապետի նմանութիւն գործոյ ցուցին յանձինս ծառայք հաւատարիմ։* 2 *Հարքն սուրբ եւ առաջնորդքն եկեղեցւոյ, որ ո՛չ նմանեցին վարձականացն եւ ի մարմին սերմանողացն, այլ զժամանակս կենացն իւրեանց ընդ գազանային պատառող հերձուածսն մարտեան եւ յաղթեցին, եւ յամբարիշտ բռնաւորացն հանդէս զանձինս ի վերայ մե-*

ծագնի ոչխարացն |341բ| ի չարչարանս եւ ի մահ եդին՝ Յիսուսիւ կազմեալ բժշկական դեղովն ձիթով եւ գինով զվիրաւորսն պատեցին, որով ուրախ լինի եւ զուարթանայ հոգի՝ ո՛չ զոքետուն գողանալ յարաւտական խաշանցն բանաւոր. ո՛չ զքնով անկեալ կորուսին զգտեալսն ի բարերար Փրկչէն՝ ո՛չ ետուն թոյլ յանծանաւթ վայրին ճարակել յարաւտս ի տգիտական եւ յաւտարոտի ուսմունս, այլ զգազանսն հալածեցին եւ յարաւտն կենաց սնուցին եւ ի փարախն հոգւոց յեկեղեցի սուրբ եւ յԵրուսաղէմն վերին հրաւիրեալ կոչեցին, որպէս եւ ամենայն սուրբ հարքն եւ մանաւանդ որոյ այսաւր է յիշատակ, վասն որոյ եւ զՏէրն եւ զվարդապետի եւ զքաջ հովուի զառաքութիւն անուան արժանի եղեւ կոչել եւ անուանիլ: **3** *Սակս որոյ եւ ի տաւն սոցա կարգեալ է բան տէրունական, որ ասէ. «Ես եմ հովիւն քաջ»* (**Յվհ. Ժ. 11**)*:*

Ժ. 1 *Ասէ ոմն յիմաստնոցն՝ յԱստուծոյ Հոգւոյն եւ ի Բանէ նորին զաւրացեալ առ բանն, եթէ «Մի՛ է սկիզբն գեղեցկաբան խորհելոյ. գիտելն զգիտաւորութիւն իրին, յաղագս ոյր է մտածութիւնն, եւ թէ ո՛չ գիտէ՝ վրիպէ յամենայնէ, որ ինչ բանին կամ իրին բնութիւն են եւ հետեւմունք»: Վասն որոյ ի քննութիւն տերունեան բանիս հարկաւոր է գիտել զԴ. (4) գլուխս զայսոսիկ. զգիտաւորութիւն, զդէմս, զպիտանացուն, զմասունս բանի եւ զանուանս ստուգաբանութեան:*

ԺԱ. 1 *Եւ է՛ գիտաւորութիւն տէրունի բանիս այսպէս. զի սովորութիւն էր Տեառն մերոյ յամենայն նշանս սքանչելեաց երկոքում[բ]ք գլխաւք վարիլ. բանականաւն եւ գործնականաւն, յորս հակաբաժանեալ լինի իմաստասիրութիւն*[1] *առ ի մարդկանէ, զի յորժամ |342ա| վարդապետել կամէր բանիւ, նախ նշանս ինչ գործէր, զի հաւատարիմ լիցի բանն ասացեալ ի գործոյն կատարմանէ, եւ կամ նախ զվարդապետականն ճառէր իմաստս եւ ապա՝ զկնի այնորիկ ցուցանէր զնշան սքանչեացն, որպէս եւ յորժամ կամէր բանիւ հաստատել զասելն, թէ «Ե՛ս եմ հացն կենաց, իջեալ յերկնից»* (**Յվհ. Զ. 42**)*:* **2** *Նախ զնկանակսն եւ զձկունսն աճեցոյց:* **3** *Բ. (2) ձկամբք եւ Ե. (5) գարեղէն նկանակաւ զԵՌ.սն (5000) կերակրեաց, եւ ապա բանիւ ասաց. «Ես եմ հացն կենաց իջեալ, որ գայ առ իս, ո՛չ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս, ո՛չ երբ[էք] ծարաւ»* (**Յվհ. Զ. 35**)*:* **4** *Եւ ի տաւնի տաղաւարահարացն, յորժամ էր յԵրուսաղէմ, եւ յանցանելն ետես զայրն կոյր ի ծնէ, զորոյ զպատճառն հարցին աշ[ակերտք]ն եւ լուան պատասխանի, թէ՝ «Ո՛չ դորա վնաս է եւ ո՛չ հաւր եւ մաւր իւրոյ, այլ վասն փառացն Աստուծոյ է, եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առա-*

[1] *Դ իմաստութիւն*

քեացն զիս, մինչ աւուր կայ, գայ գիշեր, յորում ո՛չ ոք կարէ գործել, զի մինչդեռ յաշխարհի եմ՝ լոյս եմ յաշխարհ» (տե՛ս **Յվհ. Թ. 3-5***):* **5** *Զի որպէս լուսով արեգական ամենայն գործք մարդկան կատարին, այսպէս եւ ես արեգակ եւ լոյս հաւատացելոցն յիս, որով ամենայն բան եւ գործք նոցայ երեւին:* **6** *Եւ զայս ասացեալ արար կաւ ի թքոյն եւ ստեղծագործեաց զաչս կոյրին եւ եցոյց, թէ՝ ո՛չ միայն զպակասութիւն անաւթոցն ստեղծագործեմ, այլեւ տեսանող զաւրութիւն շնորհեմ:* **7** *Եւ այսպէս, ի ձեռն գործոյն զբանն հաստատեաց:*

ԺԲ. **1** *Եւ ապա առ հակառակող փարիսեցին ասէ. որք ասէին չէ՛ այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ո՛չ պահէ, ասէ. «Ի դատաստան եկի յաշխարհ, զի որք ոչն տեսան|342բ|են՝ տեսցեն, եւ որք տեսցեն՝ կուրասցին»* **(Յվհ. Թ. 39***):* **2** *Որպէս թէ ասէ փարիսեցւոցն, թէ՝ որպէս դուք դատաւորք եղէք եւ զայր, որ լուսաւորեցաւ եւ վկայեաց վասն իմ, հանէք ի տաճարէն, նոյնպէս եւ ես ձեզ եղեց դատաւոր՝ հանել աստի ի տաճարէն եւ յերկնից արքայութենէն:* **3** *Սոցին նման եւ զայս իսկ ցուցանէ, զի նախքան զասելն՝ «Ե՛ս եմ հովիւն քաջ» զգործ եւ զճանապարհ զճշմարիտ հովութեանն ցուցանէ, եւ զխաբեբայ սուտսն յանդիմանէ, վասն որոյ ասէ*[1]*. «Ամէն ասեմ ձեզ, զի որ ո՛չ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ, նա գող է եւ աւազակ, իսկ որ մտանէ ընդ դուռն՝ հովիւ է ոչխարացն» (Յվհ. Ժ. 1-2):*

ԺԳ. **1** *Արդ, քննել պա՛րտ է իմացմամբ մտաց, եթէ զի՛նչ է դուռն եւ կամ գաւիթն, զի մտանաւղքն*[2] *ի նոյն՝ հովիւ են ճշմարիտ, եւ որք ելանեն արտաքս ի ճանապարհէ դրանն՝ գո՛ղք են եւ աւազակք:* **2** *Եւ գիտելի է, զի նախակրթութիւն իշխանութեան է հովուականն անուն եւ գործ, եւ նկարագիր պատկերի թագաւորութեան եւ մարգարէութեան*[3] *եւ քահանայութեան:* **3** *Զի որպէս կրկին գործիք են հովուաց գաւազան ուղղիչ խաշանց, եւ ցուպ ստուար հարկանող գազանաց, այսպէս եւ թագաւորացն է խնամով պահել եւ ուղղել զիւրսն, եւ զինուորք*[4] *մարտնչել ընդ աւտարսն, նոյնպէս եւ մարգարէիցն եւ քահանայիցն՝ քաղցր բանիւ խրատու խնամել*[5] *զհաւանեալսն, եւ սաստիւ պատուհասակոծ առնել <զապ> |343ա| զապարասանսն:* **4** *Եւ յայտ է, զի բազում թագաւորք եւ իշխանք, եւ մարգարէք եւ քահանայք եղեն հովիւք, զի Աբել արդար հովիւ էր խաշանց, եւ*

---

[1] *Դ > վասն... ասէ*
[2] *Դ Ընթացողն*
[3] *Դ > մարգարէութեան*
[4] *Դ զինուք*
[5] *Դ > խնամել*

Աբրահամ նահապետն մեծ, առ որ եղաւ ուխտն ժառանկութեան, զՅակոբ ի հովուաց առ եւ զՄովսէս ի խաշանց եհան ի մեծ պատիւ իշխանութեան եւ մարգարէութեան։ **5** *Եւ Դաւիթ ի խաշանց կոչեցաւ ի թագաւորութիւն Իսրայիլոյ։* **6** *Նաեւ այլք ի մարգարէիցն։* **7** *Եւ սոքա ամենեքեան ըստ կամացն Աստուծոյ եղեն հովիւք արաւտից մարդկան, որ յառաջ հովիւք էին անասնոց, զի նախ ուսցին ի խաշանցն, թէ որպէ՞ս է հոգաբարձութիւն հովուին վասն խաշանց իւրոց, զի զմոլորեալն խնդրեալ դարձուսցէ, զհիւանդսն կերակրեսցէ, զբեկեալսն պատեսցէ, զբորոտն աւծանիցէ։* **8** *Զի որպէս հովիւն խոնարհի յայս ամենայն, նոյնպէս փոյթ լիցի նոցա վասն արաւտից մարդկան՝ ուսեալք ի խաշանցն զհոգաբարձութիւնն եւ զխնամածութիւն։*

ԺԴ. **1** *Արդ, սոքա ամենեքեան պատկերք եւ նկարագիրք էին ճշմարիտ հովութեանն Տեառն մերոյ, որք ընդ դուռն մտանելով ի գաւիթ ժողովրդոցն եւ եղեն հովիւ բանաւորաց։* **2** *Եւ նախնի մարդոյն աստուածաստեղծ ի Ադամայ այսոքիկ տուան շնորհք յԱրարչէն՝ թագաւորութիւն, որոց ի վերայ երկրի, եւ քահանայութիւն, զի գործս բարիս ընծայեսցէ Աստուծոյ, եւ զի եդ անուանս ամենայն կենդանեաց, եւ մարգարէութիւն, զի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս (տե՛ս Ծն. Գ. 20)։*

ԺԵ. **1** *Արդ, զայսոսիկ բարձրագոյն պատիւ շնորհաց ընկալեալ նախահայրն ի ստեղծմանն, եւ զի ո՛չ եմուտ ընդ դուռն ոչխարացն հովութեան, կորոյս զ|343բ|նոսին։* **3** *Եւ դուռն է շաւիղ պատուիրանացն Աստուծոյ, զոր պատուիրեաց նմա*[1] *յորոց ճաշակելի էր ի պտղոյն եւ յորմէ հրաժարելի։* **4** *Վասն որոյ*[2] *զհետ նախնի մարդոյն, որք բնական աւրինաւքն ընդ պատուիրանացն Աստուծոյ շաւիղս գնացին, նոքա հովիւք եղեն եւ կոչեցան յաւրինակ Տեառն մերոյ։* **4** *Ի վերայ, որոյ աւել եւ զգրաւորական աւրէնսն, եւ եդ զնա մարդկան՝ միջնորդութեամբ մեծի նախամարգարէին*[3] *Մովսիսի։* **1** *Եւ այս էր շնորհաբաշխութիւն աւրինացն, զի խորհրդական կազմել եղով, զոր հրամայեաց Աստուած առնել Մովսիսի, որք ընդ աւրինացն Աստուծոյ ընթանային շաւիղս, լինէին մարդկան հովիւք մարգարէութեամբ, քահանայութեամբ եւ թագաւորութեամբ։* **6** *Եւ սկսեալ ի Մովսիսէ մինչ ի Յովհաննէս ըստ կարգի՝ դասք մարգարէիցն պահապանք էին այսմ դրան մտից. իսկ Յովհաննէս միջնորդ հնոյն եւ նորոյս կայր ի պահպանութիւն դրանն. ա՛յս է աւրինացն Աստուծոյ եւ պատուիրանին մտից։* **7** *Իսկ Տէր մեր, որ ասաց՝ «Զամենայն զոր ինչ պատուիրեաց ինձ Հայր,*

---

[1] *Դ նոցա*
[2] *Դ > որոյ*
[3] *Դ մարգարէին*

այնպէս առնեմ» (**Յվհ. ԺԲ. 49**)*, սկսեալ ի ծննդենէ ընդ շաւիղս պատուի-*
րանի աւրինացն գնաց. եւ կատարելով զամենայն աւրէնս, գայ առ Յով-
հաննէս ի մկրտութիւն: **8** *Հրաժարէր մկրտիչն, զարհուրեալ յաստուածու-*
թեանն հրոյ, զգաստացուցանէր Տէրն. «Թոյլ տուր այժմ» ի ճառելոյ զաս-
տուածութենէս. «զի այսպէս վայել է մեզ» խոնարհութեամբ եւ մարդկա-
բար «լնուլ զամենայն արդարութիւն» (**Մտթ. Գ. 15**) *եւ գնալ զհետ շաւ-*
ղաց աւրինացն եւ մարգարէից, ի ճշմարտութիւն ածել զաւրինակսն եւ ի
կատարումն զաւրէնսն: **9** *Վասն որոյ եւ Յովհաննէս եդեալ զձեռն ի վերայ*
|344ա| *գլխոյն բարձրագունի, քան զերկինս, յորոյ վերայ եւ ձայնն Հաւր*
եւ Հոգին աղաւնակերպ իջմամբ վկայէ, եթէ՝ Դա՛ է Տէր խաշինն, որ ընդ
ամենայն շաւիղս աւրինացն գնաց անթիւրելի:

ԺԶ. **1** *Ե. այսպէս, զաստիճանսն բարձրագոյն, զոր կորոյս առաջին*
Ադամն հին՝ պատուիրանին արտաքս ելանելովն, Յովհաննէս մկրտելովն՝
յերկրորդ Ադամն եւ ի նորն յանձնէ հանդերձ խաշամբքն: **2** *Այս է, զոր*
ասաց, թէ՝ «Որ ո՛չ մտանէ ընդ դուռն» եւ ընդ շաւիղս պատուիրանացն,
«նա գո՛ղ է եւ աւազակ: **3** *Իսկ որ եմուտ ընդ դուռն՝ հովի՛ւ է ոչխարացն*
եւ նմա դռնապանն եբաց» (**Յվհ. Ժ. 1-3**)*:* **4** *Յովհաննէս, որ վկայէ, թէ «չեմ*
ես Քրիստոս, այլ ձայն եմ բանին բարբառողին յանապատի» (**տե՛ս Յվհ.**
Ա. 23) *աշխարհիս յաստուածպաշտութենէ, զի դարձուցիչ զմոլորեալ*
հաւատն առ Տէրն իւր, եւ «չեմ արժանի լուծանել զխրացս կոշկ[ացն]
նորա» (**Յվհ. Ա. 27**)*:* **5** *Այսինքն՝ ի մարմնականացն, զոր յանձն առ տնաւ-*
րինաբար եւ թէ՝ ահա գառն որ բ[առնայ զմեղս աշխարհի»] (**Յվհ. Ա. 27**)*,*
զոր աւրէնքն ստուերական գառամբն նշանակէ, եւ թէ՝ «Տես[անէի] զՀո-
գին զի իջան[էր յերկնից իբրեւ հանգչէր] զաղաւնի եւ հ[անգչէր] ի վ[ե-
րայ նորայ]» (**Յվհ. Ա. 32**)*, իբր մատամբն ցուցանելով զարարչակիցն*
հաւր, եւ «Որ առաքեացն զիս մկ[րտել ջրով], նա ասա՛ց ցիս. յոյր վե-
[րայ] տես[անիցես] զՀ[ո]գ[ին], զի իջան[ից] է եւ հանգչ[իցի ի վերայ
նորա], նա է, որ մկրտէ զձեզ Հոգւովն Սրբով» (**Յով. Ա. 33**) *աւծմամբ եւ*
հոգւով դրոշմելով զիւր խաշինսն: **6** *Եւ ո՛չ միայն հովիւ եւ խաշինս, այլ*
փեսայ եւ արքայ վկայեաց լինել զնա, ասելով՝ որ ունի զհարսն, նա՛ է
փեսայ բարձրագոյն եւ անճառ սիրոյ, քան զհովուի առ խաշինս: **7** *Վասն*
որոյ Տէր մեր հովիւն քաջ |344բ|*, որ եկն ի խնդիր մոլորեալ ոչխարին, յա-*
մաւթ առնէ զփարիսեցիսն եւ զդպիրսն, որք արտաքս[1] *աւրինացն ընթա-*
նալով, գողաբար եւ աւազակապէս ի պատճառս փառասիրութեան դար-

[1] *Դ արտաքոյ*

ձանաւք[1] *յինքեանս ձգէին զիշխանական փառսն եւ զվերակացութիւն հաւտին, որպէս Յուդայ գալիլէացի եւ Թեւդաս, սադուկեցիքն եւ փարիսէցիքն, զի եկին ոմանք ի պատճառս ծննդեան նորա։* **8** *Գողքս գան եւ աւազակք ի պատճառս երկրորդ գալստեան նորա, յաղագս որոյ պատուիրէ եւ զայն, թէ՝ յորժամ բազմանան համբաւք նոցա սուտ քրիստոսացն, թէ աստ է կամ անդ, մի՛ ելանիցէք եւ մի՛ հաւատայցէք (տե՛ս* **Մտթ. ԻԴ. 24, Մրկ. ԺԳ. 22***)։* **9** *Իսկ տէր խաշինն այն է, որ մտանէ ընդ դուռն եւ հովիւ է ոչխարացն։*

ԺԷ. **1** *Եւ գաւիթ կոչէ զժողով ժառանկութեան իւրոյ, զի որպէս նորս եկեղեցի գաւիթ է վերնոյն Երուսաղէմի, այսպէս հինն հրէականի խորանն եւ տաճարն նորոյս, յոր եմուտ Տէրն յայտնի եւ համարձակ։* **2** *Կոչի գաւիթ նշանաւք եւ արուեստիւք եւ քաջութեամբ, եւ ո՛չ թաքստեամբ։* **3** *Եթէ կարաւտանային*[2] *խնդրողքն նորա, նմա դռնապանն բանա։* **4** *Ի սկիզբն աւրինացն Մովսէս եբաց, ասելով. «Մարգարէ յեղբ[արց քոց իբրեւ զիս յարուցցէ]» (***Բ. Օր. ԺԸ. 15***)։* **4** *Եւ եցոյց զնա մարգարէ նշանագործ, իբրեւ զինքն, որ Աստուած անուանեալ էր փարաւոնի։* **5** *Եւ ի միջինն, վասն*[3] *քահանայութեան նորա եցոյց Դաւիթ արքայ վկայութիւնն Հաւր ի վերայ Որդոյ, թէ՝ «Դո՛ւ ես քահանայ ըստ կ[արգի] Մել[քիսեդեկի]» (***Սղմս. ՃԹ. 4***)։* **6** *Իսկ ի վախճանի աւրինացն վկայէ Յովհաննէս զնա գոլ փեսայ հարսինն (տե՛ս* **Յվհ. Գ. 29***) եւ հովիւ խաշինն, որ եմուտ ընդ դուռն գաւթին, առ ընդ աւրինաւք ժողովեալսն, եւ զիւր ոչխարսն կոչէ եւ հանէ յաւրինացն յԱւէտարանն, եւ* |345ա| *առաջի նոցա երթայ հովուական արուեստիւ, եւ ոչխարքն՝ զկնի նորա։* **7** *Եւ ապա, որ ասաց զինքն ընդ դուռնն մտեալ, յաւելու եւ ասէ. «Ես եմ դուռն, զի որ եմուտ ընդ» (***Յվհ. Ժ. 9***) դուռն աւրինացն եւ եհան յԱւետ[ար]անն եւ ի հրէական տաճարէն՝ յեկեղեցի, այժմ ինքն լինի Դուռն, զի որ հաւատան ի Նա աւազանին շնորհաւք՝ նովաւ մտցեն առ Հայր եւ յԵրուսաղէմն վերին, որոյ գաւիթ եւ ժողովարան է եկեղեցի սուրբ։* **8** *Իսկ որ ոչ հաւատայ, կրէ զսատակումն՝ ո՛չ հոգւով միայն, այլեւ մարմնով, որպէս Թեւդաս եւ Յուդայ եւ նմանք նոցին։* **9** *«Ընդ իս եթէ ոք մտցէ, [կեցցէ]. մտցէ, եւ ելցէ եւ ճարակ գտցէ» (***Յվհ. Ժ. 9***)։* **10** *Մտցէ հաւատով եւ ելցէ յերկինս յուսով եւ ճարակ գտցէ։*

---

[1] *Դ դարանօք*
[2] *Դ կարոտացին*
[3] *Դ վեհ] վասն*

11 Զմարմին եւ զարիւն իմ ճաշակել մարմնով, զի վասն այնորիկ[1] եկի յերկնից եւ տնաւրինեցի մարմնով, զի զկեանսն ունիցին, եւ ի մահուն, որ տիրեալ մարդկան, ազատեսցին։ 12 Եւ կեանք ո՛չ բազմայժամանակեայ, ըստ խոստման աւրինացն, այլ յաւիտենական կեանս եւ անսպառ թագաւորութիւնն, վասն որոյ ասէ. «Ես եմ հովիւն քաջ»։

ԺԸ. 1 Արդ, աստէն իսկ վաղվաղակի ցուցանէ մեզ զերիսն ի մասանցն բանին. զդերանուն, եւ զանուն, եւ զյաւդ, եւ ի ձեւս անուանն զյարայբարդականն։ 2 Եւ դերանունութիւն է, որ փոխանակ անուան ասի թերի անուն, որ եւ զդէմս նշանակէ, որպէս այն՝ Ե՛ս, դո՛ւ, նա՛։ 3 Եւ են դէմ Գ. (3) նախ՝ յորմէ՞ բանն. երկրորդ՝ առ ո՞վ բանն. երրորդ՝ յաղագս որոյ բանն։ 4 Արդ, առ ով բանն էր ասացաւ, որ յերկուս կողմանսն՝ առ սատուգեցիսն եւ փարիսեցիսն յանդիմանութիւն եւ առ հաւատացեալ հաւտն ճշմարիտ հովուին ծանաւթութիւն։ 5 Իսկ յաղագս |345բ| որո՞յ բանին դիտաւորութիւն՝ վասն սուտանուն հովուացն, որ ո՛չ մտին ընդ դուռն ի գաւիթ ոչխարացն եւ հովուին քաջի, որ ընդ շաւիղս աւրինացն եւ մարգարէիցն եմուտ ընդ դուռն գաւթին։ 6 Իսկ յորմէ՞ Բան՝ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ յերկուց կատարեալ բնութեանց անճառաբար էր միաւորեալ. մի որդի եւ մի դէմ, ծնեալ ի Հաւրէ յառաջ, քան զյաւիտեանս, նոյն եւ ի վաղխճան աւուրցս Հոգւովն Սրբով ծնեալ ըստ մարմնոյ՝ ի սրբոյ կուսէն Մարիամայ՝ մի՛ դէմ, մի անձնաւորութիւն՝ յերկնային աստուածութենէն եւ ի մարդկային մարմնոյն։ 7 Եւ ըստ որում մարդն էր, ամենեւին Աստուած էր եւ ամենեւին մարդ բոլորովին Աստուած եւ հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն միայն Աստուած. բոլորովին մարդ եւ հանդերձ աստուածութեամբն, այլ ո՛չ աստուածութեա՛ն մարդ։ 8 Ըստ որում եւ ինքն զանճառ միաւորութեանն յայտնեաց զխորհուրդ, ասելով. «Ես եմ հացն կենաց յերկնից իջ[եալ]» (Յվհ. Զ. 41)։ 9 Եւ հաց, ո՛չ եթէ զմարմնոյն ինչ ճառեաց, այլ զաստուածութենէն իւրմէ, զի իջեալ յերկնից աստուածութիւնն էր, իսկ միաւորելովն ընդ մարմնոյն մի այնուհետեւ էր հացն կենաց՝ ո՛չ երկնից իջեալ մարմինն, այլ ընդ իջելոյն միաւորեալ անորիշ հատմամբ։ 10 Ըստ այսմ իմասցիս եւ զասելն. «Յառաջ քան զլինելն Աբր[ահամու] եմ ես» (Յվհ. Ը. 58), եւ թէ «Որ ետեսն զիս ետե՛ս զՀայր» (Յվհ. ԺԴ. 9)։ 11 Նոյնպէս եւ զոր այժմ ասէ. «Ե՛ս եմ հովիւն քաջ»։ 12 Եսն ասելով զանորիշ եւ զանբաժանելի միութիւնն ցուցանէ, որ ըստ աս-

[1] Դ այնմիկ

տուածութեանն հովուէր զվերին զաւրսն լուսեղինաց յերկինս զտեսողս իւրում աստուածային փառացն։ **13** *Ըստ այնմ՝ «Արածէի զխաշինս հաւր իմոյ» (տե՛ս Ա. Թգ. ԺԷ 34). եւ զորդիսն Աբր[ահամու] եւ Իսրայիղի* |346ա| *հովուէր յերկրին պարգեւաց։* **14** *Նոյն ինքն ըստ մարդկութեանն եղեւ հովիւ հաւտի իւրոյ, թողեալ ի Ճ. (100) ոչխարացն զՂԹ. (99), եւ եկել զհետ միոյ մոլորելոյն եւ ի միում դիմի եւ անձնաւորութեան միացեալ ասէ. «Ե՛ւ եմ հովիւ»։*

ԺԹ. **1** *Եւ գիտելի է, զի ամենայն անուն երիս ձեւս ունի ստուգաբանութեան. յիրէն, յարուեստէն եւ ի ձայնէն։* **2** *Արդ, հովուականս անուն յարուեստէն եւ ի գործոյն ունի զկոչումն անուանն ի հովասուն առնելոյ զխաշինսն, զի ա՛յս է նորա գործք. աւդ բարեխառն, հովանիք տնկոց եւ վիմաց. մարգս ջրայինք եւ դալար վայր՝ լերինք բարձունք եւ ծաղկածինք, ջուր ցուրտ եւ ընդ շքով անկեալ, կաղնիք հովանաւորք եւ եղեգունք։* **3** *Արդ, անբան խաշանցն հովիւ զայսոսիկ դիտէ եւ սոքաւք զխաշինսն տածեալ խնամէ, վասն որոյ եւ մարգարէական հոգւովն ի դէմս հարսինն բարբառի իմաստունն. «Պատմեա՛ ինձ», որ վասն իմ եղեր եւ կոչեցար հովիւ, եւ «սիրեաց անձն իմ. ո՞ւր հովուէես, ո՞ւր հանկուցանես» (Երք. Ա. 6)։ Հաստատեա՛ զբանաւոր հաւտս քո յուսով, թէ ո՞րք են բանեղէն հանճարուն մարգք, յորմէ կերակրիմք, իմաստութեանն սնուցիչ ջուր, որով զովանամք։* **5** *Զո՞ր երկնային վայր տալոց ես մեզ տեղի հանկստեան, որ յաւէտ դալար եւ միշտ անթառամ, որ մինչ չեւ ասացեալ էր քո, թէ՝ «Ե՛ս եմ դուռն»՝ ո՛չ էր վայրն այն մեզ մտանելի, այլ ի մէջ գազանաց եւ անասնոց յախտս մարմնաւորս արածէաք։* **6** *Ո՞ւր հանկուցանես ի միջաւրեայ տապոյն յուսահատութեամբ կամ ձանձրութեամբ զտագնապեալքս, առ որս ձայնէ* |346բ| *ճշմարիտ հովիւն եւ ասէ. «Ես եմ հովիւն քաջ», որ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարացդ։* **7** *Եւ զնոյն տամ քաղցելոցդ՝ յարաւտ, վիրավորացդ՝ դեղ, մահացելոցդ՝ կեանք եւ կարաւտիցդ ամենայնիւ ամենայնի լրումն։*

Ի. **1** *Բայց զի՞նչ եւ յաւդին յաւելուած մեզ ուսուցանէ, որ ասէ. «Ես եմ հ[ովիւն քաջ]»։* **2** *Արդ, յաւուելաւծ աւդին, որ է նու*[1]*, զի զմին եւ զմիայնակն եւ զյատկացեալն ի հոմանուն հովուացն նշանակէ, զի առանց յաւդի ասացեալքն համազաւրք են հանրականացն, եւ հանդերձ յաւդիւ ասացեալքն համազաւրք են մասնականաց։* **3** *Այլ այժմ ի միոյ տառէս յաւդ կոչեցելոյ բազում դրունս իմաստից մեզ առաջի բացեալ երեւի։*

---

[1] *Դ > որ է նու*

ԻԱ. 1 *Առաջին ցուցանէ, թէ նա է, զոր մարգարէքն հայցել պաղատէին։* 2 *Երկրորդ սա է, զոր արդարքն ամենայն տպաւորեալ նկարագրեցին։* 3 *Երրորդ՝ նոյն ինքն է, որ խաւսեցաւ յառաջնումն ընդ մարգարէիցն, անմարմինն ի նիւթական ձեւի երեւեալ, եւ այժմ ճշմարիտ*[1] *մարմին զգեցեալ։* 4 *Չորրորդ, զի ինքն խոստացաւ գալ եւ լինել հովիւ հաւտի իւրոյ։* 5 *Հինկերորդ, զի աւետաւորք եղան մարգարէքն, թէ գա եւ կատարէ զխոստումն ծառայից իւրոց մարգարէիցն։* 6 *Վեցերորդ. ձայն տայ մոլորեալ ոչխարին, որ շրջէր ի խնդիր հովուին եւ ո՛չ կարէր գտանել։*

ԻԲ. 1 *Արդ, զայսոսիկ «գլուխս ըստ կարգի դիտաւորութեանս տեսցուք ի բան Տեառն, որ ասէ. «Ես եմ հովիւն քաջ»։* 2 *Ցուցանէ, թէ զոր հայցեն մարգարէքն, եկի ի լրումն ածել զպաղատանս նոցա, որք ասէին, թէ որ հովուեսդ Իսրայիղի աւրինաւք եւ մարգարէիւք՝ նայեաց ի մեզ յաղագս հեթանոսաց, խնդրեա՛ ի Հաւրէ քումմէ եւ առ զհեթանոսս քո ի ժառ[անգութիւն] եւ իշխ[անութիւն] զամենայն ծագ» (տե՛ս* **Սղմս. ՀԲ. 2***), եւ զմեզ հովուեա՛ գթութեամբ եւ ողորմութեամբ, եւ զսատանայ |347ա| եւ զդեւսն, զհակառակսն մեր՝ գաւազանաւ երկաթի, եւ փշրեա (***հմմտ. Սղմս. Բ. 9***) զնոսա սաստիւք եւ բարկութեամբ, որ իբրեւ զառիւծ գոչէ «զո՞ կլանիցէ»*[2] (***Ա. Պտր. Ե. 8***)։*

ԻԳ. 1 *Եւ դարձեալ, ասելովն՝ «Ես եմ հովիւն», յայտ առնէ, թէ նա՛ է, զոր մարգարէքն եւ արդարքն աւրինակեցին, ոմանք զմահն տպաւորելով, զի զոմանս ի նոցանէ սպանին, եւ ոմանք ապրեցան եւ թագաւորեցին։* 2 *Եւ, զոր աւրինակ, նկարի պատկեր թագաւորի ի մանկութեան, յերիտասարդութեան եւ ի ծերութեան իւրում եւ ի թագաւորութեանն, նոյնպէս եւ այս ամենայն հովիւքս ի ժամանակս իւրեանց եղեն պատկեր կերպարանաց Քրիստոսի, զի պատկեր թագաւորին, որ նկարի ի մանկութեանն, զնոյն պահէ զնմանութիւն զտղայականն կերպ, նոյնպէս կատարեալ հասակին եւ ծերութեանն։* 3 *Եւ յորժամ թա՛գ առնու՝ իւրաքանչիւրն զնոյն նմանութիւն պահեն։* 4 *Այսպէս ի սուրբսն ամենայն նկարեցաւ պատկեր հովուութեանն Քրիստոսի, զի առաջին արդարն Աբէլ եղեւ հովիւ քահանայ եւ յանդրանկաց խաշանց իւրոց մատոյց պատարագ Աստուծոյ եւ ընդունելի եղեւ, եւ յետոյ սպաննաւ ի յերէց եղբաւրէն իւրմէ։* 5 *Եւ Աստուած*[3]*, որ գիտէր զնենգութիւնն Կայենի, ո՛չ ընկալաւ զպատարագ նորա։* 6 *Նոյնպէս եւ Քրիստոս եղեւ հովիւ քահանայ, մատոյց Աստուծոյ պատարագ. եւ վիրաւորեցաւ ի ժողովրդենէն, որ երէց էր քան զնա ծննդեամբ,*

---

[1] *Դ ճշմարտութեամբ*
[2] *Դ գոչէ եւ խնդրէ թէ զո՞ կլանէ*
[3] *Դ > աստուած*

զի նենգեցին զնա։ 7 Եւ զոր աւրինակ ո՛չ ընկալաւ Աստուած զպատարագ Կայենի, զի ձեռք նորա լի՛ էր արեամբ, եւ պատարագն սպաննելոյն ընդունելի՛ եղեւ։ 8 Սոյնպէս եւ Աստուած ընդունի զպատարագն մեր, զի երթամք զհետ հովուի եւ քահանայի սպաննելոյ։ 9 Եւ հրէիցն ո՛չ եղեւ ընդունելի, որք գնացին զհետ դպրացն եւ փ|347բ|արիսեցոցն, որոց ասէր Եսայեաւ. «Յայգեալ եմ ողջակիզաւք ձերովք» (Եսյ. Ա. 11) եւ որ ըստ կարգի ասացեալքն ի մարգարէէն։ 10 Յակոբ նահապետ հարցն հովիւ էր Իսահակայ հաւր իւրոյ, եւ հալածական եղեւ յերէց եղբաւրէն եւ ընկալաւ իւր խաշն յասորւոց։ 11 Նոյնպէս եւ Քրիստոս եղեւ հովիւ հրէից խաշինն առաջնոյ, իբրեւ հալածեցաւ ի Հերովդէէ, եղեւ հովիւ հեթանոսաց։ 12 Եւ իբրեւ եղեւ Յակոբ հովիւ խաշինն Լաբանու, որոշեաց Լաբան խաշն սեփհական Յակոբայ, զի ամենայն ոչխար գորշախայտ եւ խայտապիսակ Յակոբայ լիցի, եւ համակ սպիտակն՝ Լաբանու։ 13 Նկարեաց Յակոբ գաւազան ըստ բանին Տեառն եւ արկ յաւազանն առաջին խաշանցն, եւ նմանեցին ծնունդքն խաշանց ի գոյն կերպարանաց նկարու գաւազանացն, եւ գնացին ընդ Յակոբայ յերկիրն աւրհնեալ իսրայէլացոցն։ 14 Եւ մայրքն[1] միագոյնք մնացին անդէն։

ԻԴ. 1 Սո՛յնպէս եւ մեք եղաք խաշինք Հովւին քաջի Քրիստոսի եւ ծնաք ի հեթանոսութենէ եւ եմք խայտախայր ի բազմանկար առաքինութեամբ ի նմանութիւն Խաչին Քրիստոսի, եւ երթամք զհետ արդար Հովւին յերկիրն աւրհնեալ։ 2 Եւ հարքն կռապաշտք, որք ո՛չ առին զնշան գաւազանին, մնացին յերկիրն պիղծ։ 3 Եւ, զոր աւրինակ, Յակոբ հալածանաւք դարձոյց զաւտար խաշինսն յերկիրն Իսրայիղի, նոյնպէս Քրիստոս՝ հալածեալ ի հրէիցն, դարձոյց զհեթանոսս յաստուածպաշտութիւն։ 4 Յովսեփայ եղբարք երիցունք էին հովիւք։ 5 Առաքեաց զնա հայրն տեսանել զեղբարս իւր հովիւս։ 6 Եւ նախանձելով ընդ նա եղբարցն, վասն զի սիրէր զնա հայրն, խորհեցան |348ա| սպանանել զնա։ 7 Եւ, ըստ բանին Յուդայի, վաճառեցաւ Յովսէփ ի գին արծաթոյ։ 8 Եւ բերին զհանդերձս նորա առ հայրն, իբր թէ գազան եկեր զՅովսեփ։ 9 Եւ Յովսէփ[2] եղեւ կերակրիչ երկրին, ուր վաճառեցաւ, որք հնազանդեցան նմա։ 10 Սո՛յնպէս եւ Քրիստոսի եղբարք էին երիցունք հովիւք։ 11 Եւ առաքեաց զնա Աստուած Հայր իւր տեսանել զհովիւս եւ զխաշինս նոցա[3]։ 12 Եւ ըստ բանին Յուդայի վաճառեցաւ եւ սպաննաւ, եւ յարուցեալ տիրեաց ի վերայ ամենայնի։ 13 Եւ որ հաւատայ ի նա, կերակրէ հացիւն անմահական։ 14 Եւ զոր աւրի-

[1] Դ միայն] մայրքն
[2] Դ զնա] յովսէփ
[3] Դ իւր] նոցա

նակ, սով եղեւ յայնժամ ընդ ամենայն երկիր, եւ որդիքն Իսրայիղի չոգան գնել իւրեանց կերակուր ընդ այլ ամենայն մարդկան, կերան ի հացէ, բայց ո՛չ յագեցան մինչեւ գնացին յերկիրն, ուր տիրեալ էր վաճառեալն։

Իե. 1 *Նոյնպէս եւ յայսմ ժամանակի սով մե՛ծ է, զի քաղցեա՛լ եմք բանին Աստուծոյ եւ ուսմամբ վարդապետութեանն Քրիստոսի միայն հաստատեմք զսիրտս մեր։* 2 *Իսկ յորժամ գնամք յերկիրն կենդանեաց առ Քրիստոս, յայնժամ յագիմք ի սեղան Հաւրն բազմեալ*[1]*։* 3 *Եւ, զոր աւրինակ, եղբարքն Յովսէփայ ո՛չ ճանաչէին զնա, վասն իշխանական փառացն, եւ զի ո՛չ գիտէին թէ կենդանի է։* 4 *Նոյնպէս եւ Քրիստոս, յորժամ տեսանեն ապաննողքն եւ վաճառողքն, ո՛չ ճանաչեն վասն*[2] *մեծութեանն, եւ զի ո՛չ հաւատան զնա թէ կենդանի է։* 5 *Այլ Դաւիթ հովի՛ւ էր եւ կրսեր եղբարց իւրոց. եւ հաճեցաւ ընդ նա Աստուած եւ ընտրեաց ի միջոյ յեղբարց իւրոց։* 6 *Նոյնպէս Քրիստոս հովիւ եւ վարդապետ ճշմարիտ եւ հաճոյ Աստուծոյ, քան զդպիրսն եւ զփարիսեցիսն։* 7 *Եւ որպէս Դաւիթ հալածէր զայսն ի Սաւուղայ, նոյնպէս եւ Քրիստոս՝ զհրէայսն։* 8 *Տեսեալ, զի* |348բ| *յաղթահարեալ լինին ի դիւաց անտի եւ բժշկեալ զժողովուրդն գովեցին*[3]*, զնախանձ կալաւ ընդ նա Հրովդէս հալածել զնա։* 9 *Եւ, զոր աւրինակ առաքեաց Սաւուղ սպանանել զԴաւիթ, եւ փախեաւ եւ եհաս ի թագաւորութիւն, նոյնպէս եւ Քրիստոս ապրեցաւ ի մահու եւ եղեւ թագաւոր յաւիտենական։* 10 *Ի Հաբէլ հովիւն առաջին նկարեցաւ մահն Քրիստոսի, զի ճշմարիտ սպաննաւ, եւ Դաւիթ, որ ապրեցաւ, նկարեցաւ յարութիւնն Քրիստոսի։*

Իզ. 1 *Արդ, զի այսպէս նկարագրութիւն խորհրդոց ի Քրիստոս էր կատարելոց, իբրեւ եկն ի կատարել, ասէ. «Ես եմ հովիւ[ն քաջ]»։* 2 *Ծանութիւն տայ ձայնին, որ խաւսէր առ մարգարէսն, Մովսիսի ասաց. «Ե՛ս եմ, որ էն եւ ես եմ Աստուած Աբրահամու, Սահակայ եւ Յակոբայ»* (**Ելք Գ. 14**)*։* 3 *Եսայի. «Ե՛ս եմ առաջին եւ Ես եմ առ յապա. քան զիս ո՛չ ոք է, եւ զկնի իմ ոչ ոք եղիցի»* (**Եսյ. ԽԴ. 6**)*։* 4 *Յորմէ սկսեալ անսկիզբն, եւ անվաղճան զնա խոստովանիմք։* 5 *Եւ թէ՝ ես հաստատեցի զերկիր եւ զմարդն ի վերայ նորա, եւ թէ՝ ես պատմեցից զարդարութիւն եւ զիրաւունս փրկութեան։* 6 *Եւ ամենայն որ ինչ այսպիսի յաւդական դիմաց նշանակութիւնք են ի գիրս*[4] *մարգարէիցն։* 7 *Եւ այժմ ասելով՝ «Ես եմ հովիւն քաջ», ցուցանէ, թէ նա ինքն է, որ խաւսեցաւ մարգարէիցն միջնորդութեամբ, այժմ ինք-*

---

[1] *Դ բազմելով*
[2] *Դ զնա վասն*
[3] *Դ գովէին զնա եւ նախանձ*
[4] *Դ գիրքս*

*նադիմաբար բարբառի, որպէս գրէ Պաւղոս առ եբրայեցիսն. «Բազում մասամբ եւ բազում աւրինակաւք խաւս [եցաւ Աստուած] ընդ [հարսն մեր] մարգարէիւք, իսկ ի [վախճան աւուրցս] խաւս[եցաւ] ընդ մեզ Որդովն» (**Եբր. Ա. 1**), որ ասէ. «Ես եմ հովիւն քաջ»։* **8** *Զոր մարգարէիւն Եզեկիէլիւ յանդիմանեալ զհովիւսն Իսրայիղի, խոստացաւ գալ եւ լինել հովիւ հաւտի իւրոյ, որպէս գրէ Եզեկիէլ. «Եւ եղեւ բան Տեառն առ իս», եւ ասէ՝ Որդի մարդոյ մարգարեաց ի վերայ հովուացդ Իսրայիղի եւ ասացես. |349ա| Այսպէս ասէ Տէր. Ո՞ հովիւքդ Իսրայիղի, մի՞թէ հովիւք զանձինս արածեն, ո՞չ հովիւք զխաշինս արածեն։* **9** *Արդ, ահաւադիկ զկաթդ ուտէ՛ք եւ զասրդ ագանիք, զպարարտսն զենուք եւ զխաշինս իմ ո՛չ արածէք, զտկարացեալն ո՛չ զաւրացուցանէք եւ զհիւանդացեալն ո՛չ բժշկէք զչարչարեալն ո՛չ յանձանձէք եւ զբեկեալն ոչ պատեցէք, զմոլորեալն ոչ դարձուցանէք*[1]*, եւ զկորուսեալն ո՛չ խնդրէք։* **10** *«Եւ ցրուեցան խաշինքն իմ, զի ո՛չ գոյին նոցա հովիւք, եւ եղեն կերակուր գազանաց անապատի» (**Եզկ. ԼԴ. 1-5**)։* **11** *Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. «Ահաւասիկ ես ի վերայ հովուացտ եւ պահանջեցից զխաշինս իմ ի ձեռաց դոցա, եւ դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաշինս իմ» (**Եզկ. ԼԴ. 10**)։* **12** *«Զոր աւրինակ խնդրիցէ հովիւ զհաւտ իւր, եւ ժողովեցից զնոսա յամենայն տեղեաց, ուր ցրուեցան ի նոսա յաւուր միգի եւ մառախղի։ Եւ արածեցից զնոսա ի վերայ լերանց Իսրայիղի, եւ հանկուցից զնոսա, եւ ծանիցեն, թէ Ես եմ Տէր» (**Եզկ. ԼԳ. 12-14**)։*

Իէ. **1** *Եւ բազում այսպիսի բանս խաւսեցաւ ի պատգամսն Եզեկիէլի, եւ այժմ կատարելով զխոստումն իւր, ասէ. «Ե՛ւ եմ հովիւն քաջ»։* **2** *Վասն որոյ եւ Ասայիաս աւետաւոր եղեալ, ասէ. «Ահաւասիկ Աստուած մեր, ահաւասիկ Տէր, Տէր գայ զաւրութեամբ եւ բազուկն տերութեամբ իւրով իբրեւ հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր եւ բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինսն եւ ի ծոց իւր կրեսցէ զնոսա, եւ մխիթար լիցի յղեացն» (**տե՛ս Եսայ. Խ. 10-11**), որ եւ եկեալ ըստ աւետաւորութեանն Եսայեայ, ասէ. «Ես եմ հովիւն քաջ»։*

ԻԸ. **1** *Արդ, ամենայն անուն կամ պարզ է, կամ բարդ եւ կամ յարաբարդ [եւ] ըստ երիցն տեսանի շարաբանութիւն, զի հովիւն անուն պարզ ձա՛յն է, թէպէտ եւ գործոյն ստուգաբան|349բ|ութիւնն բաղադրեալ է, իսկ յաւդիւն բարդեալ՝ զատեալ ուրուշեալ է ի հոմանուն հովուացն, իբր զմայրն մարմնացելոյ*[2] *յամենայն կուսից։* **2** *Իսկ յարաբարդեալ ի վերայ*

---

[1] *Դ > զբեկեալն... դարձուցանէք*

[2] *Դ մարմնացելոյ բանին*

«զքաջն», ցուցանէ զզաւրաւորն գոլ ի գործ հովութեանն եւ հմուտ։ **3** *Եւ զի ամենայն անուն յորակութեանն են անուանեալ, կամ յարանունաբար ասի, կամ հոմանունակի, կամ չեզոքապէս։* **4** *Եւ յարանուն է, որպէս յառագինութենէն՝ առաքինի։* **5** *Իսկ հոմանուն, որպէս ձեւ ի վերայ նիւթոյ երկոքինն հոմանունակի եռանկիւնի կոչին, որ ա՛յլ են բնութեամբ։* **6** *Իսկ չեզոքապէս, որպէս յառաքինութենէն քաջ զոք անուանեն, վասն արի եւ փոյթ գոլոյն յառաքինութիւն։* **7** *Ըստ այսմ նշանակութեան է եւ այս, որ ասէ. «Ես եմ հովիւն քաջ»։* **8** *Իսկ «քաջն» ի յունական թարգմանութիւնն «բարի» եղեա՛լ է, զի «քաջն» յերկուսն ներգործութիւնս որոշի՝ ի բարին եւ ի հոմանուն սեռին քաջն, որ է փո՛յթ եւ արի՛ լինելն, զներգործութիւն բարոյն առ խաշինսն ածել ի գործ, եւ զփոյթ՝ քաջութեանն ի վանումն գազանացն վարատուղաց հաւտին։*

ԻԹ. **1** *Եւ թէ որպէ՞ս է յեղանակ քաջութեանն, եւ յորպիսի՞ իրս ասէ. «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց»* (**Յվհ. Ժ. 11**)։ **2** *Արդ, միաւորական անուամբ ասել զանձն յերկուց կատարեալ բնութեանց՝ յաստուածութենէն եւ ի մարդկութենէն զանճառ միութիւնն ցուցանէ, զի բնութիւն մարդոյն, որ է՝ մարմի՛ն, հոգի՛, միտք եւ աստուածութիւն Բանին, յորում սոքա միացեալ գոյին, զմերս զամենայն առեալ, զի նմանեաւն զնմանն սրբեսցէ, դնելով ի վերայ իւրոց խաշանցս։* **3** *Որպէս ասէ. «Հովիւ քաջ զանձն իւր դիցէ ի վերայ ոչխար[աց] իւրոց»։* **4** *Եւ թէ որպէ՞ս դնելն զանձ|350ա|ն զմարմինն իւրով զգայութեամբքն եւ զմասանց հոգւոյն ներգործութիւն եւ զկիրս։* **5** *Եւ զաստուածական զաւրութիւնն եւ զխնամս եդ ի վերայ բանաւոր ոչխարացն, զմարմինն ի չարչարանս դնելով, զի ի չարչարանաց մարմնոյ ազատեսցէ, եւ զգայարանք մարմնոյն ի վէրս տալով՝ զզգայութեանցս մերոց վէրս բժշկեսցէ, ցանկականաւն՝ զմահն ախորժելն, զի զախտաւոր ցանկութիւնն մեր դադարեցուսցէ։* **6** *Բանականաւն հոգայր եւ տրտմէր, զի զտրտմականսն յուրախութիւն դարձուսցէ։ Կրէր զամաւթն, որ հոգեկիրք*[1] *զգայական, զի զամաւթալի յանցանսն մեր քաւեսցէ։* **8** *Եւ զմարմինն ի մահ տալով՝ ի ծառայութենէ երկեղի մահուն ազատեսցէ։* **9** *Եւ յարուցեալ նովին մարմնովն, զի զեկեղեցի իւր զխաշն արաւտի իւրոյ իւրով մարմնովն կերակրեալ՝ նստաւ*[2] *ընդ աջմէ Հաւր, զի յայնմ դալար վայրի զմեզ արածեսցէ, յորում եւ Պաւղոս խրատէ «Զվերինն խորհ[ել]»*[3] (**Կղս. Ժ. 11**)*, եւ թէ՝ որ ո՛չ գիտեմք զերեւելիսս, այլ՝ զաներեւոյթսն։*

---

[1] *Դ հոյ է կիրք*
[2] *Դ կերակրեալ ապրեցուսցէ եւ ելեալ նստաւ*
[3] *Դ զվերինն խնդրեցեք, զվերինն խորհացենք*

Լ. 1 *Իսկ զաստուածական զաւրութիւն եւ զխնամարկութիւնն եդ ի վերայ մեր*[1], *զոր Դաւթաւ խոստացաւ «Եդից զփրկութիւն իմ» ի վերայ ոչխարացն եւ «համարձակեցայց ի նոսա»* (**Սղմս. ԺԱ. 6**) *բարկութեան սաստիւ, որք մոլորեցուցիչք եղեն իմոյ ոչխարին, որպէս եւ ինքն ասէր. «Վասն այսորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց իմոց»* (**Յվհ. Ժ. 17**) *զի հատուցից զվճար պարտուց նոցա:* 2 *Որում եւ Դաւիթ շնորհակալութիւն մատուցանէ Աստուծոյ Հաւր. «Զգեցեր զձեռն Քո, եւ փրկեաց զմեզ աջ Քո Միածին Որդիտ, եւ Տէր հատուսցէ ընդ իմ»* (**Սղմս. ՃԼԷ. 7-8**), *զի մեռանելովն փոխանակ մեր*[2], *իրաւամբք եւ արդարութեամբ փրկեաց զմեզ:* 3 *Վասն որոյ յայտ առնէ, եթէ ո՛չ* |350բ| *վասն ինքեան մեռանի, զիւր պարտս ինչ*[3] *վճարելով որպէս մարդ այլ փրկութեան հաւտին կրէ զմահ:* 4 *Եւ յաղագս այնորիկ առակաւոր բանիւք ճառէ առ աշ[ակեր]տսն եւ առ հրէայսն վասն*[4] *զիւր մահուն:*

ԼԱ. 1 *«Իսկ վարձկանն, որ ո՛չ է հովիւ, որոյ ո՛չ իւր են ոչխարք»* (**Յվհ. Ժ. 12**)*:* 2 *Վարձկան կոչէ զարդարսն առաջին՝ զնահապետսն եւ զմարգարէսն, զառաքեալս եւ զնոցին փոխանորդ սուրբ հարքն, վասն զի յայն եդ զնոսա Աստուած, զի կռոցն որոշեալ*[5]՝ *փրկեսցեն*[6] *զհոգիս նոցա:* 3 *Այլ նոցայն ո՛չ էր հանգոյն իմոյս, վասն որոյ ո՛չ կարացին, զի ո՛չ էին որդիք եւ տէր ոչխարաց Հաւրն, այլ վարձկանք:* 4 *Զի որք վասն Աստուծոյ սիրոյն զմահ յանձինս իւրեանց կրեցին, վարձուն հատուցման ակն ունելով, ըստ մշակութեան կարգին, կամ ծառա[յա]բար երկեղիւ տանջանացն զանձինս ի մեղաց պահելով, այլ որ ոչ*[7] *որդիական ընդանութեամբ վասն պարտեաց հաւտին մեռանելով:* 5 *Վասն որոյ, «իբրեւ տեսանէ զգայլն, զի գայ, թողու զոչխարս եւ փախչի»* (**Յվհ. Ժ. 12**)*:*

ԼԲ. 1 *Արդ, գայլ անուանէ զսատանայ եւ զնորին գազանակից զդեւսն մահաբեր ժանեաւք զխոցաւղսն ի մահ:* 2 *Որ եւ տեսանելով զհաւտն կործանեալ չար գործս նորա, թէպէտ իմանային՝ այլ ո՛չ կարէին հնարել զփրկութիւն, այլ զանձինս միայն ապրեցուցանէին, զի եւ ինքեանք ընդ կարեաւք մարմնոյ եւ ընդ պարտեաւք բնութեանս էին գրաւել:* 3 *«Եւ գայլ յափշտակէ զնոսա եւ ցր[ուէ]»* (**Յվհ. Ժ. 12**)*:* 4 *Եւ զի վարձկան էին ար-*

---

1 *Դ > որոշեալ*
2 *Դ > մեր*
3 *Դ > ինչ*
4 *Դ այլ վասն*
5 *Դ որոշեսցեն*
6 *Դ > փրկեսցեն*
7 *Դ > այլ որ ոչ*

դարքն առաջին, թէպէտ դիմեցին[1] *մարդկային բնութեանս, իբր ոչխար մոլորեալ առ հովիւ, ո՛չ կարացին փրկել, վասն զի Ադամաւ ելեալ բնութիւնս ի փարախէն՝ ի փափկութեան դրախտէն, եւ մոլորեցաւ որպէս զոչխար յարարչական խնամոցն |351ա|, որ հովուէր զստեղծուածն իւր, եւ վարատեալ ցրուեաց գայլն գազանաբարու բանսարկուն:* **5** *Եւ զի սովորութիւն է մոլորելոցն աղեկիզեալ սրտիւ ողորմաբար զակն արկանել եւ ամենայն ուրէք հայել, թերեւս գտցէ զայն, յորմէ մոլորականն եղեալ, վասն որոյ տեսեալ*[2] *զարդար հովիւն զԱբել մեղուցեալ ծնաւղքն, զի զընտիրսն*[3] *ի գառանց Աստուծոյ պա[տարա]գեր, եւ ասեն. «Միթէ դո՞ւ իցես*[4] *հովիւն, զի արդար քո պատարագաւդ յառաջինն զմեզ դարձուցանես վայրն ցանկալի»:* **6** *Իսկ նորա հեղեալ արիւն յեղբաւրէն գոչէր եւ յետ մահու կենդանին:* **7** *Չե՛մ ես այն հովիւ, այլ աւրինակ անմեղ պատարագին եւ անբիծ հովուապետին:* **8** *Ապա եկեալ բնութիւնս մոլորեալ առ Աբրահամ հայրն արդարոց պատարագաւղն իւրում միածնին, եւ ասեն. Դո՛ւ իցես հովիւն, որ պատարագաւդ քո դարձուցանես զմոլորեալ հաւտս:* **9** *Եւ ասէ. «Չե՛մ ես հովիւն այն, այլ հող եմ եւ մոխիր բարի հովին, որ զխնդութեան զաւակն իմ զէնումն պատարագի տալով, խոյ փոխանակ առի, եւ տեսի զաւրն, յորում տալոց է Հայրն երկնաւոր զՄիածինն իւր՝ փոխանակ հաւտին, զի դարձուցանէ ի հովիւն առաջին»:* **10** *Եւ ապա եկեալ առ Յակոբ նահապետն ԲԺ.ան (12) տոհմին, եւ ասէ[ն]. «Միթէ՞ դու իցես հովիւն հաւտի, զի որպէս դարձուցէր զխաշինսն յասորոցն յերկիրն Իսրայիղի, եւ զմեզ դարձուսցես յադինն վայրի»:* **11** *Եւ ասէ. «Ո՛չ եմ հովիւն, այլ պատկեր եմ նորա, զի յիմոյ եղբաւրէն հալածեցայ եւ ի խաշանցն հեթանոսաց մեծացայ, եւ ծանեայ թէ նա՛ է հովիւն, որ խաչի ի հրէից եւ Աստուած խոստովանի ի հեթանոսաց»:* **12** *Իսկ տեսեալ Եգիպտ|351բ|ոսի եւ ամենայն տան Յակոբայ զողջախոհն զՅովսեփ, զկերակրիչն հացիւ ի ժամանակի սովոյն, եւ ասեն. «Դո՛ւ իցես հովիւն, զի կերակրեսցես զմեզ ի վայրի դալարոջ»:* **13** *Եւ ասէ. Ոչ եմ այլ ծառայ նորա՝ ծախեալ Լ. (30) արծաթոյ յեղբարցն իմոց:* **14** *Մեծացայ յազգ եւ յերկիր աւտար եւ եղէ հացատու՝ յաւրինակ այնմ, որ վաճառելոց է Լ. (30) արծաթոյ, եւ ծանեայ, թէ նա գնեսցէ զձեզ մեծագին իւրով արեամբն, եւ նովիմբ կերակրեսցէ եւ դարձուսցէ ի սեփհականն ձեր հայրենի:*

ԼԳ. **1** *Նմանապէս եւ առ մեծ նախամարգարէն Մովսէս, եւ որ զհետ*

---

[1] *Դ դիպեցին*
[2] *Դ տեսանէ*
[3] *Դ զնտանիրսն*
[4] *Դ էս*

նորա մարգարէք եւ քահանայք, որք հովիւք եղեն մարդկան, դիմելով յամենեսեան եւ ո՛չ զոք գտին դարձուցիչ մոլորեալ հաւտին, զոր եւ ինքն Տէրն Եսայեաւ ասաց. «Տեսի՛, եւ ո՛չ ոք էր աւգնէր[1]*. հայեցայ եւ ոչ ոք ի թիկունս հասանէր» (**Եսյ. ԿԳ. 5**)։ 2 Վասն որոյ Արարիչն երկնաւոր եւ Հովուիչն նախախնամող լինի մարդ եւ հովիւ երկրաւոր, եւ ձայն տուեալ մոլորեա՛լ ոչխարին, ասէ. «Ե՛ս եմ հովիւն քաջ, որ եկի գտանել զդրամտ կորուսեալ եւ զոչխարտ իմ մոլորեալ (**հմմտ. Ղկ. ԺԵ. 9**)։ 3 Եւ զի երիցս ասաց զինքն Հովիւ քաջ, յառաջնումն եցոյց, թէ հովիւն, որ փրկել կարող եմ՝ ես եմ։ 4 Եւ երկրորդաւն զքաջութիւն փրկութեանն այնքան, զի վասն սիրոյ հաւտին մեռանիմ։ 5 Եւ երրորդ, զի քաջապէս զհաւտն ճանաչեմ, զի եւ այս գովելի գործ հովուական է՝ ճանաչել զիւրսն յաւտարէն։ 6 Վասն որոյ ասէ. «Ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն» (**Յվհ. Ժ. 14**)։ 7 Որպէս եւ առ Երեմիասն ասէր. «Մինչ չեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնէ, գիտեմ զքեզ» (**Երմ. Ա. 5**), եւ Պաւղոս. «Ընտրեաց զմեզ Աստուած յառաջ, քան զլինել աշխարհի» (**Եփս. Ա. 4**)։ 8 Եւ թէ զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հր|352ա|աւիրեաց։*

ԼԴ. 1 *Նոյն եւ աստ ասէ. «Ճանաչեմ զիմսն»։ 2 Այսինքն՝ զսիրողսն զիս եւ բարեգործութեամբ ընդանացեալսն ինձ։ Եւ ճանաչիմ յիմոցն, որք հաւատոյն աչաւք տեսանեն եւ բարեգործութեանն ծանուցանեմ զիս նոցա եւ յաւուրն հատուցման լինիմ Փրկիչ եւ ապրեցուցիչ նոցա, զի ընդ իս թագաւորեսցեն։ 4 Եւ որպէս գիտէ զիս Հայր բնութեամբ Որդի իւր, եւ նոյն գոլով ըստ զաւրութեան, ըստ արարչութեան, ըստ իշխանութեան, այսպէս եւ ես զնա գիտեմ. մի բնութեամբ Հա՛յր եւ ծնաւղ, եւ պատճառ անսկզբնաբար եւ անժամանակ։ 5 «Եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարացն։ Նաեւ այլ եւս ոչխարաց իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ, եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր» (**Յվհ. Ժ. 15-16**)։*

ԼԵ. 1 *Եւ զի՞նչ է կրկնելն, թէ՝ Զանձն դն[եմ] ի վերայ ոչ[խարացն]։ 2 Ի վերայ բերէ, թէ նաեւ զայլ ոչխարսն պարտ է ինձ ածել այսր։ 3 Զի որ ասաց յառաջնումն, թէ՝ «հովիւ զանձն իւր դիցէ ի վերայ ոչ[խարաց]», այն իսկ է, զի ծնեալքն յԱդամայ հետէ, որք ժառանկեցին ի նմանէ զանէծս, զապականութի՛ւն եւ զմա՛հ, այսպէս ծնեալքն աւազանաւն երկրորդ Ադամաւն, որ է Տէր յերկնից մահուամբ նորա, որ եդ զանձն ի վերայ խաչին, ժառանկեցին զաւրհնութիւն եւ զանապականութիւն եւ զկեանս։ 4 Իսկ այժմ ասելն՝ «Զանձն իմ դնեմ ի վերայ ոչխ[արացն] եւ այլեւ ոչխարք են, զորս պարտ է ինձ ածել այսր», ցուցանէ, թէ որ յետ*

[1] *Դ որ աւգնէր*

տնաւրէնութեանն կատարման, որք այժմ արտաքոյ այսմ գաւթի եկեղեցւոյ՝ հեթանոսաց ազգք եւ ժողովարանք, եւ որք յետոյ ծնանին մարդիկք մինչ ի կատարած աշխարհի, եւ զնոսա պարտ է ինձ աւծել յեկեղեցի եւ ի վերայ նոցա «դնեմ զանձն իմ»։ 5 |352բ| *Այսինքն՝ զխորհուրդ մահուն իմոյ դնեմ յեկեղեցի սուրբ, զի ընդ ամենայն ժամանակս, որք գան ծննդեամբ յաշխարհ եւ կցորդին պարտեաց առաջին մարդոյն, մահուն իմոյ խորհրդով եւ նոքա՛ փրկեսցին ի յանցուածոց մեղացն, ուտելով զհացն եւ զգինին, յորոց է իմ մարմին, եւ միաւորեսցին ընդ իս հաւատով, եւ ես ի նոսա միաւորելով՝ մարմնով ի մարմի՛ն եւ արեամբ յարիւն*[1]*, հոգւով ի հոգի՛ եւ մտաւք ի մի՛տք։* 6 *Ըստ այնմ. «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմբէ*[2]*, նա յիս բնակեսցէ եւ ես ի նա»* (**Յվհ. Զ. 57**)։ 7 *Ըստ այնմ «Դու Հայր յիս եւ ես ի նոսայ, զի եղիցին կատարեալք ի մի՛»։* (**հմմտ. Յվհ. ԺԴ. 20**)։ 8 *«Եւ ձայնի իմում լ[ուիցեն] եւ զկնի*[3] *իմ գան»* (**Յվհ. Ժ. 16**)։ 9 *Զի, զոր աւրինակ հովիւ, զի ինքն երթայ առաջի խաշանցն յամենայն տեղիս՝ ի դժուարինս եւ ի դիւրինս, ի լերինս եւ ի ծորձորս, յանջրդիս եւ ի ճահիճս, եւ խաշինքն զկնի նորա երթան, նոյնպէս եւ Տէրն զամենայն, զոր ինչ ուսոյց բանիւ, նախ ինքն արար, զի երանեաց զաղքատսն եւ նախ ինքն աղքատացաւ, որպէս գրէ առաքել. «Որ մեծատունն էր, վասն մեր աղքատացաւ»* (**Բ. Կրնթ. Ը. 9**)։ 10 *Երանեաց զհալածեալս եւ ինքն հալածեացաւ։* 11 *Ուսոյց մեզ՝ թէ եւ յետ մահու կեցջիք, նախ ինքն մեռաւ եւ յարեաւ։* 12 *Եւ զի խոստացաւ նստուցանել զմեզ ընդ աջմէ Հաւր, նախ ինքն ել եւ հորդեաց*[4] *ճանապարհ։* 13 *Եւ զոր աւրինակ, խաշինքն զհետ հաւտին*[5] *երթան, եւ որ մոլորի՝ գազանաց լինի կերակուր, նոյնպէս եւ եկեղեցի, զոր քաջալերեաց Տէրն. «Մի՛ երկնչիր հ[աւտ] փոքրիկ, զի [հաճեցաւ հայր] ձեր»* (**Ղկ. ԺԲ. 32**) *երթեալ զհետ շաւղացն Քրիստոսի։* 14 *Եւ որ մոլորի ի հաւատոց անտի, երթայ ի կորուստ* |353ա| *եւ ի սատակումն եւ ի տանջանս հրոյ։* 15 *Եւ ամենայն եկեղեցիք երթան զհետ արդար հովուին։* 16 *Աստ ի մի կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի, ի մի հաւտի հրէից եւ յամենայն ազգաց հեթանոսաց մի հովուին, եւ ի վերինն Սիոն յանդրանկացն եկեղեցի*[6]*, մի հաւտ ի հրեղինաց եւ ի հողեղինաց բանաւորաց յառաջին եւ վերջին արդարոց։*

---

[1] *Դ > եւ... յաիւն*
[2] *Դ ըմբէ*
[3] *Դ զհետ] զկնի*
[4] *Դ հրդեաց մեզ*
[5] *Դ հովվին] հաւտին*
[6] *Դ > մի հօտի հրէից... յանդրանկացն եկեղեցի*

17 |284ա|[1] *Եւ արդ, լուարո՛ւք հովիւք հոգեւորք եւ ոչ|284բ|խարք բանաւորք՝ կենարար ձայնին հովվի քաջի եւ երկնաւորի, զի թէպէտ ոմանք հովիւք եւ այլ խաշինք կոչեցայք, այլ ճշմարիտ հովուին ամենիքեան էք ժողովուրդք եւ խաշն արաւտի:* 18 *Լուարո՛ք, հովիւք, զաւրինակ հովվելոյն ի Տէառնէ եւ ուսարո՛ք, զի այն է քաջ հովիւ եւ պատկեր ճշմարիտ նորայ սիրոյն, որ զանձն իւր ի մահ դնէ ի վերայ ոչխարացն, զոր եւ երիցս հարցմամբ ի Պետրոսէ պահանջեաց, որ գլուխն էր առաքելոցն՝ եւ էր իր անգամ զդաւանութիւն սիրոյն գրաւական առեալ, տայ նմա զարեամբ գնեալ հաւտն ի ժառանգութիւն առաջնոյ սիրոյն զգառինսն աւազանածին յանձնէր նմա, եւ երկրորդին զոչխարսն, որ զգառինսն ծնանին՝ զքահանայիցն դասս:* 19 *Իսկ զերրորդն կարի իմն ահեղ եւ զարմանալի սէր հովվական, խնդրեաց՝ ասելով. Ե՛կ զհետ իմ ի շարշարա՛նս ի խա՛չ, ի մա՛հ, զի պա՛րտ է հովվաց եւ զա՛յդ եւս կրե՛լ ի վերայ հաւտին, որ ինքն իսկ քեալն սուրբ՝ բանիւ եւ արդ|285ա|[ե]ամբք խրատեալ ի Քրիստոսէ զնոյն քաղցր խրատ եւ այլոց եկեղեցւոյ վերակացուաց մատուցանէ, ասելով՝ զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակիցս, զեպիսկոպոսունս եւ զերիցունս ասէ, որ պատուակից եղեն՝ եղեն առաքելական դասուն, այլեւ վկայք շարշարանացն Քրիստոսի, որպէս զայնոսիկ, որ աչաւք տեսան շարշարել զՔրիստոս, եւ յայտնելոց փառացն, յաւր երեւմանն Քրիստոսի հաղորդ լինելոց էք, եւ յորժամ եցոյց զմեծութեան նորա պատիւն, ապա եւ զգործի պահանջէ:* 20 *Արածեցէ՛ք, որ ի ձեզ հաւատ է Աստուծոյ, զի յԱստուծոյ ձեզ յանձնել հաւատացաւ, եւ պարտական էք զաւանդողին զնոսա ձեզ համարս տալ:* 21 *Զնոյն գրէ եւ Պաւղոս. «Զգո՛յշ կացէք անձանց եւ ամենայն հաւտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ՝ տեսուչ եւ առաջնորդ»:* 22 *Եւ զի՞նչ է արածելն եպիսկոպոսաց եւ քահանայից, այսինքն՝ յիմաստս աստուածեղէն գրոց արածել, որպէս ի բուրաստանս ծաղկանց՝ խրատել յաւրէնս եւ ի պատուիրանս Աստուծոյ, ուսուցանել զբան ճշմարտութեան հաւատոյն: Ի ջուր կենարար |285բ| վարդապետութեանն հանգուցանել ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեանն Քրիստոսի կերակրել, ժողովեալ ի սուրբ եկեղեցի, որպէս ի փարախ եւ յամրոցն հոգեւոր, զվիրաւորեալն յախտից ողջացուցանել, զմոլորեալն մեղաւք դարձուցանե՛լ եւ ա՛յս, եւ որ ինչ նման է սոցին, է՛ գործ հոգեւոր հովվութեան եւ արածելոյ, զոր ասէ. Մի՛ ակամայ, որ ո՛չ գոյ վարձ, այլ*

[1] *Շարունակութիւնն ըստ ՄՄ 2187 (Դ) ձեռագրի՝ 284ա-286ա. դատելով շարադրանքի ոճից եւ այն հանգամանքից, որ երգնկացին իր երկերն աւարտում է Քրիստոսին նուիրուած օրհնաբանութեամբ, ենթադրում ենք որ այս հատվածը եւս հեղինակային է, ուստի եւ կցում ենք 2173 ձեռագրում առկայ բնագրին:*

կամաւ՝ ըստ Աստուծոյ, այսինքն՝ զոր Աստուած խնդրէ եւ հաճի, եւ վարձս շնորհէ ըստ Պաւղոսի, եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ։ **23** *Մի՛ զաւշաքաղութեամբ՝ այս է՝ դիւրութիւն անձին խնդրել, եւ սիրոյ եւ հարստութիւն ընչից հետեւել՝ մի զերկնաւոր շնորհ, զոր առէք ձրի, արծաթոյ վաճառէք, այլ յաւժարութեամբ եւ ցաւակցաբար հովվեցէք զհաւատն Քրիստոսի՝ մի՛ տիրէք վիճակացն, որպէս մարմնաւոր իշխանք, զի զայդ հեթանոսական գործ ասաց Տէրն եւ անաստուածութիւն է յոյժ։* **24** *Մի տիրելով վիճակին՝ զշնորհսն Աստուծոյ գահասիրութեան պատճառս առնէք, մի՛ իբրեւ անբան անասնոց, կամ անդաստանաց երկրի, հայրենիս եւ ժառանգութիւն խնդրէք, եւ սակս այսորիկ տ|286ա|գիտական անուսումնութեամբ զանձն ի կորստեան վիհն եւ ի խաւարային խորխորատն արկանէք կոյր կուրի առաջնորդելով՝ կորնչիք, եւ զայլս կորուսանէք եւ դուք քրիստոսադաւան ժողովուրդ, փառաց թագաւորինն հաւատ փոքրիկ, եւ խաշն արաւտի կենար հովվին, լուարաւք քաղցր ձայնին, որ ասաց, թէ՝ «Ճանաչիմ զիմ հաւատսն եւ ճանաչիմ յիմոցն»։* **25** *Արդ, ճանաչէ զձեզ Տէրն, որ դրոշմեաց աւազանաւն եւ զկնիք հաւատոյն յոգիս ձեր գաղափարեաց եւ տպաւորեալ զձեզ ի տիպն տիրական Քրիստոս լցոյց զձեզ, աւծ զսեմս դրանց ձերոց, եւ զբարաւորս տանց, զգործ եւ զբան, զշրթունս եւ զբերան արեամբն սոսկալի, եւ մեծ քան զգառանցն, որ յԵգիպտոս, զի մի մերձեսցի սատակիչն անդրանկաց, ներկեալ պայծառացոյց զշրթունս ձեր, իբրեւ լար կարմիր, պատմեալ զշնորհս արեանն Քրիստոսի, որ զձեզ արդարացոյց, եդ նշան ի ճակատս ձեր, ըստ տե[ս]լեանն Եզեկիէլի, եւ զգիր գառինն՝ ըստ տեսլեան Յոհանու։* **26** *Լսեցէք զձայն իմաստնոյն, որ ասէ, թէ՝ «Ոչ ծանիցեն զքեզ՝ գեղեցիկդ ի կանայս, ելեր ի գարշապարէ հաւտիցն եւ արածեա՛ զուլսն ի վրանս հովուացն, այսինքն՝ մի խառնիր ի հաւտս, որ յաւտար հովուացն արածեցան, որ գայլք էին եւ ոչ հովիւք, մի՛ ելանէք ի գարշապարէ անբիծ հաւտին եւ մի՛ հետեւիք գայլաբարո հովուաց, զի մի՛ յուլուցն խառնիցիք դաս, որ ի ձախմէն, այլ յաջակողմեանն արժանի լիցուք դասու ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեան։*

ԼԱ.

|353ա| ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՑՈՅ ՅԱՂԱԳՍ ԱՂԱՒՆՈՅՆ ՄԻԱՄՏՈՒԹԵԱՆ

Նկատի առնելով Երզնկացու այն հաղորդումը, թէ ինքը բազմաթիվ ժողովածուներ է կազմել կամ կազմել տվել այլոց, ապա մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ ՄՄ 2173 ձեռագիրը ընդօրինակված է Երզնկացու կազմած օրինակից: Որ այս ձեռագիր ժողովածուն կամ նրա նախօրինակը կազմված է եղել Երզնկացու կողմից, երեւում է հետեւյալ փաստից. «Յաղագս աղաւնոյն միամտութեան» քարոզի սկզբում հեղինակը հայտնում է, որ ինքն արդեն կարդացել է օձի խորամանկության մասին մեկ այլ վարդապետի գրած քարոզը, մինչդեռ նշված քարոզը տեղադրված է «Յաղագս աղաւնոյն միամտության» քարոզից հետո եւ հավանաբար ընդօրինակողի կողմից ավելացված է. «եւ աստ ըստ կարգի եդեալ եղեւ ըստ պատշաճի»: Ուրեմն կամ այս ձեւով ինքը՝ Երզնկացին է խմբավորել, կամ նախօրոք եղել է նրա կազմած օրիակը, որի վրա կատարվել է փոքրիկ ճշտում: Ամեն դեպքում նկատելի է, որ ժողովածուն կազմվել է որոշակի սկզբունքով եւ նյութերի ընտրությամբ[1]:

Ամենայն հավանակությամբ սույն քարոզը մեկ ամբողջություն է կազմում եւ Երզնկայի Սուրբ Կարապետ վանքում կարդացած դասախոսությունների շարքից է:

Ինչպես իր բազմաթիվ այլ գործերում, թերեւս այս ստեղծագործության մեջ եւս հեղինակը հանդես է գալիս ոչ միայն որպես իմաստուն եւ ճարտար քարոզիչ, այլեւ՝ իր հայրենիքի եւ ժողովրդի հոգսերով ապրող եւ մարտնչող հայրենասեր: Թվարկելով աղավնու բազում դրական որակները՝ նա անդրադառնում է իր ժամանակներում արդեն ցավալի իրականություն դարձած արտագաղթին, ինչպես եւ օտար կրոնների ու դավանանքների թողած կործանարար երեւույթներին հայ իրականության մեջ, կոչ անելով մարդկանց հետեւել աղավնու օրինակին, որը երբեք չի լքում իր բույնը: Նույն մտահոգությամբ Երզնկացին խորհուրդ է տալիս օրինակ վերցնել օձի խորագիտությունից, որը վտանգի դեպքում զոհում է պոչը՝ գլուխը փրկելու համար, եւ դարձյալ կոչ է անում անգամ ծանր պայմաններում գնալ զոհաբերությունների, փրկելու համար հայրենիքը, հավատը եւ եկեղեցին: Իր խրատներն ու խորհուրդներն առաւել ընդունելի դարձնելու համար նա անգամ դիմում է քրիստոնեության ամենակառկառուն սրբերից Պողոս առաքյալի օրինակին, որը, ելնելով իրավիճակից՝ փոփոխում էր իր գործելակերպը. «Գիտէր նուաստանալ, գիտէր եւ բարձրանալ», ինչպես Աթենքում լինելով՝ գործեց առավել «խորամանկութեամբ, անմեղութեամբ» |361բ|:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 353ա-362ա) ձեռագրի:

---

[1] *Տե՛ս Է. Բաղդասարյան, Հովհ. Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 84-85:*

Ա. |353ա| 1 *Որ ինչ յաղագս խորագիտութեան աւձին էր, ասացաւ մեզ ի խրատ զգաւնութեան արարեալ աշխատասիրի ումեմն վարդապետի։* 2 *Այժմ տեսցուք եւ զաղաւնոյն միամտութեան աւրինակ, զի հեզ է թռչունս այս եւ հանդարտ, ընդելասէր բարուք եւ մաքուր սրբութեամբ։*

Բ. 1 *Առաջին, զի հեզ եւ հանդարտ է այս թռչուն։* 2 *Եւ է հեզութիւն առաքինութիւն ցասմնայտեսակին. քա՛ղցր եւ անցասումն առ ամենեսեան լինել, մանաւանդ առ դառնացուցիչսն, զի բնաւորեալ ունի աղաւնի միամտութիւն առ դաւողսն եւ նենգործսն, թէպէտ եւ զձու եւ զձագս նորա առնուցուն եւ զենիցեն, ո՛չ պահէ ոխս զրկողացն եւ ոչ փոխի ի տեղոյ բնակութեանն։*

Գ. 1 *Այս եւ սրբոց առաքելոցն աւրինադրեցաւ ի Տեառնէ. հարկանողին զծնաւտն մատուցանել զմիւսն (տե՛ս* **Մտթ. Ե. 39, Ղկ. Զ. 29***) եւ որ մղոն մի [տարապարհակ] վար իցէ, գնալ ընդ նմա եւ Բ. (2) (***Մտթ. Ե. 41***)։* 2 *Եւ սիրելն ո՛չ միայն զընկերն, ըստ հնոյ աւրինացն, այլեւ զթշնամին աւրհնել [եւ] զանիծիչն, եւ բարի առնել ատելեաց (տե՛ս* **Մտթ. Ե. 44, Ղկ. Զ. 28***), եղբաւրն յանցաւորի թողուլ ո՛չ միայն է. (7), այլեւ եւթանասնիկ է. (7) (տե՛ս* **Մտթ. ԺԸ. 22***)։* 3 *Եւ այսպէս զաննենգ եւ զանցասումն* |353բ| *եւ զպարզ բարս ուսուցանէ ի բնաւորական բարուց աղաւնոյն ի մեզ հաստատել մակստացականապէս։*

Դ. 1 *Երկրորդ, միամտութեան սորա առ մարդիկ այս է աւրինակ, զի ոչ միայն բնակութեան սորա լեռնային կամ դաշտական, եւ կամ առ մի ազգ մարդկան, որ յաշխարհի միում, այլ ընդ ամենայն տեղիս, ուր ամենայն ազգ մարդկան բնակեալ են, է բնակութիւն սոցա։* 2 *Այսպիսի միամտութիւն եւ սէր հրամայէ առնել աշակերտացն առ ամենայն ազգս մարդկան, զոր եւ Դաւիթ մարգարէանայ «ընդ ամենայն երկիր ե[լ] բար[բառ նոցա] եւ մինչ ի ծագս [աշխարհի] են խաւսք նոցա» (***Սղմս. ԺԸ. 5***)։* 3 *Եւ թէ՝ կա-ց[ուսցէ զնոսա] իշխ[անու] ընդ ամենայն [երկիր], զի յիշ[եսցի անուն քո ընդ ամենայն] (***Սղմս. ԽԴ. 17***)։*

Ե. 1 *Երրորդ աւրինակ միամտութեամբ աղաւնոյն. զի ոչ բնաւին վայրաբնակացն նման է թռչնոց անձեռընտելից, եւ ոչ այնքան հպաւորութեամբ մերձի առ մարդիկ, զի ի ծխոյ աղտեղութեան նոցա ներկանի։* 2 *Այսպէս խրատէ լինել եւ զքարոզսն ճշմարտութեան. ո՛չ լինել ամենեւին անընտել բարուք եւ անցաւակից առ մարդիկ, եւ ոչ այնքան ընդելակ առ մարդիկ սովորութեամբ լինել շողոքորթս, մինչ զի կցորդել հեշտասէր եւ ախտաւոր բարուց մարդկան, այլ յերկուց ծայրից զմիջինն ունելով կենցաղավարութիւն, մի լինի դժուարին եւ դառն, զի թքանիցեն իբր զանուտելի, եւ մի՛ քաղցր այնքան, զի կլանիցեն արհամարհելով։*

Զ. 1 *Զորրորդ՝ բնաւորական ներգործութիւն աղաւնոյ, զի սրաթեւ է եւ արագաթռիչ, որով ի բարձրագոյնն արփիագնաց լինի։ 2 Եւ յայսմ աւրինակէ խրատէ Տէրն զաշակերտսն բարձրագոյն եւ երկնային կայանիցն լինել ցանկացող* |354ա|*, որոց ասէր. «Մի՛ ընդ այն խնդաք, զի դեւք հնազանդին ձեզ, այլ խնդացէք, զի ան[ուանք ձեր], գրեն յերկ[ինս]» (***Ղկ. Ժ. 20***)։ 3 Եւ Պաւղոս գրէ, թէ՝ «Մեր առաքինութիւնն յերկինս է» (***Փղպ. Գ. 20***), զի անդ թռիցուք ի վերինն Երուսաղէմ յազատն, որ է մայր մեր ամենեցուն։*

Է. *Հինկերորդ, զի բազում երանկ գունով որակացեալ է ազգ աղաւ<ղ>նեացն. ոմանք սպիտակաթոյրք եւ ձիւնափայլք, այլք ծիրաներանգք՝ կայսերակերպեալք, եւ կէսք ոսկեճաճանչ գունով երփնագեղեալ։* 2 *Զառաքելոցն տալով տարացոյց, որք ձիւնացեալ սպիտակացան ի Սաղիմ հոգւոյն մաքրութեամբ, գումարեալ թագն յերկնաւորէն եւ յաղաւնակերպ երեւեալ հոգւոյն, արծաթապատ թեւաւքն ամբարձան, այսինքն՝ իմաստիցն շնորհաւք սլացմամբ մտացն վերացան յերկինս, եւ ի թիկնամէջս ընկալեալք ի Հոգւոյն յերանգս ոսկւոյ ներկից կան եւ սրբեցան։*

Ը. 1 *Վեցերրորդ, զի աղաւնին մերձ է մտաւք յիմաստս բանաւորաց. կոչողացն լսել եւ զհրամանս կատարել։* 2 *Ըստ որում առաքեալքն սուրբ լան կոչաւղ ձայնի եւ գնացին զհետ, զոր աւետաբերս առաքեաց ընդ ամենայն աշխարհի՝ հեղեղալսն կռապաշտութեամբ, որք դառնալով իբր առ Նոյի տապանն, աւետիս տալով Տեառն, թէ՝ «Դեւք հնազանդին մեզ յանուն քո» (***Ղկ. Ժ. 17***)։*

Թ. 1 *Եւթներորդ, զի աղաւնիք ո՛չ իջանեն ի գարշահոտ տեղիս, այլ զանուշահոտն ախորժեն վայր։* 2 *Այսպէս եւ առաքեալքն, հոտ անուշ եղեալ Քրիստոսի առ Աստուած, ո՛չ երբէք մեկնեցան ի նմանէ, ասելով. «Տէ՛ր, յո՞վ երթիցուք, զի բանս կենաց* |354բ| *յաւիտենականաց ունիս» (***Յվհ. Զ. 69***)։*

Ժ. 1 *Ութերրորդ. ողջախոհ է թռչունս այս, զի ոչ խառնի ի յաւտարազգսն, այլ յիւր համանմանսն։* 2 *Որ եւ այս խրատ է առաքելոցն եւ քարոզողացն՝ զբան վարդապետութեան ոչ լինել կցորդ այլափառացն եւ աւտարացելոցն յուղիղ հաւատոյն, այլ ուղիղ հաւատացելոցն աւանդել զողջամիտ վարդապետութիւնն, ըստ Տեառն խրատու. «Մի՛ տայք զսրբութիւն շանց եւ մի արկանէք զմարգ[արիտս ձեր] առ[աջի խոզաց]» (***Մտթ. Է. 6***)։*

ԺԱ. 1 *Իններրորդ՝ արդարամիտ աղաւնեացն ազգ, զի ի տունս, յորս բնակէ, ո՛չ հեռանայ անտի իւրովք ծննդովքն եւ փոխի առ աւտարս։* 2 *Այսպէս եւ Տէրն ուսոյց առ[աքելոցն]. «Մի՛ փոխիք տանէ ի տուն» (***Ղկ. Ժ. 7***) զի մի՛ տրտմեսցի առաջինն եւ մի՛ թեւեսցի վասն որովայնի ի հեշտութիւն փոխել զասպնջականսն։*

ԺԲ. 1 *Տասներրորդ, զի բազմութեամբ երամացեալ շատանան աղաւ-*

նիք, թէպէտ ո՛չ ի միում ժամու երկայնամիտ եղեալ երամանայ իւր զաւակացն զարմիւքն։ 2 *Աւրինակ խրատու է եւ այս աշակերտացն, թէպէտ ոչ ի միում ժամու, այլ երկայնամիտ եղեալ եւ ժամանակի սպասեալ, ի բազմութիւն աճեալ հաւատ ծննդովքն որպէս եւ Պաւղոս պարծէր. «Զամենեսեան զձեզ Աւետարանաւն ծնայ ի Քրիստոս Յիսուս»* (**Ս. Կրնթ. Դ. 15**)։

ԺԳ. 1 *Մետասաներրորդ, զի մահ աղաւնեացն ո՛չ է նման անսուրբ եւ անուտելի հաւուց, որք արտաքս ձգեցեալ լինին, այլ պիտանի են մարդկան ի կերակուրս եւ Աստուծոյ պատարագ հաշտութեան։* 2 *Այսպէս եւ Տէրն զաշակերտսն քաջալերէր. «Մի՛ երկնչիք յայնց, որ զմա[ռմինն] սպ[անանեն] եւ յետ այնորիկ այլ ինչ ոչ կարիցեն առնել»* (**Մտթ. Ժ. 28**)*, զի մահ, որ վասն Քրիստոսի է, ցանկալի է, եւ զենում|355ա|ն պատարագ է Աստուծոյ, զորոյ զշահն գիտելով, Պաւղոս ասէ. «Ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանելն ինձ շահ»* (**Փլպ. Ա. 21**)*, եւ «Աշխ[ար]հ ինձ խաչ ելեալ է եւ ես աշխարհի»* (**Գղտ. Զ. 14**)։ 3 *Վասն որոյ Տէրն ի նոյն յարեալ ասէ։*

ՈՒՄԵՄՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԱՒՁԻՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ԲԱՆԻՑ ԵՒ ԱՍՏ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԴԵԱԼ ԵՂԵՒ ԸՍՏ ՊԱՏՇԱՃԻ[1]

«Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց» (**Մտթ. Ժ. 16**)։

ԺԴ. 1 *Ամենայն գիրք աստուածայինք ի խրատ եւ ի յուսմունս մեր գրեցան ի Հոգւոյն Սրբոյն։* 2 *Եւս առաւել աւետարանական հրամանքս, զի որպէս արեգակն պայծառ է քան զաստեղս, նոյնպէս եւ բանք Աւետարանիս՝ քան զայլոց գրոց։* 3 *Եւ այս յաւէտ յիրաւի է, զի յայլսն պատգամաւք խաւսեցաւ Աստուած, իսկ յԱւետարանն դէմ յանդիման։* 4 *Եւ զի՞նչ է խաւսեցեալն։*

ԺԵ. 1 *«Ահաւասիկ ես [առաքեմ զձեզ]». Պատկեր Աստուծոյ է խոնարհութիւնն, եւ այսու ծանեաք զԱստուած եկեալ առ մարդիկ։* 2 *Վասն զի առաջին մարդն ամբարտաւանութեամբ կործանեցաւ։* 3 *Եւ ուստի՞ գտաւ ամբարտաւանութիւնն։* 4 *Զի սատանայ, որ յերկնից անկաւ եւ խաւար եղեւ, որպէս ասացաւ, եգիտ զդեղս զայս զաւրաւոր եւ արբոյց մարդոյն առաջին։* 5 *Զոր աւրինակ, եթէ ոք զթշնամի դաւել կամիցի, նախ զդեղն փորձիցէ եւ ապա տացէ։* 6 *Նոյնպէս եւ սատանայ եգիտ զսա զաւրաւոր*

---

[1] *Այս մուծումն արել է ինքը՝ Երզնկացին, ինչպէս ասում է գործի սկզբում, որ պէտք է գրուած լինէր աւելի առաջ, եւ նոր միայն շարունակուէր. «Այժմ տեսցուք եւ աղաւնոյն միամտութեան օրինակ» (353ա)։ Այս հատուածը շարադրելուց յետոյ Երզնկացին դարձեալ անդրադարձել է աղաւնու միամտութեանը՝. «Ե՛կ այսուհետեւ երթիցուք առ միամտութիւն աղաւնոյ» (361ա)։*

իրք. գիտաց, թէ որ զինքն խաւար արար եւ մերժեաց յերկնից գաւառէն, կարէ եւ զմարդն՝ ի դրախտէն։ 7 *Վասն որոյ հիւանդացաւ բնութիւնս մեր ամբարտաւանութեամբ եւ չեղեւ հնար գտանել զբժշկութիւն։* 8 |335բ| *Աւրինակ իմն, որպէս թէ ոք ի դժն[ե]այ հիւանդութիւն լինիցի եւ ապա հմուտ բժիշկ ածիցեն. նախ զերակն զննիցէ եւ զպատճառն ուսանի, թէ յորմէ՞ հիւանդութիւնն գործեցաւ, զի հաճ եւ դէպ զդեղն կազմիցէ եւ հիւանդին առողջութիւն շնորհիցէ։* 9 *Սայապէս եւ իմաստուն բժիշկն Յիսուս, որոյ անունն վերագրի բժիշկ ի քաղդէարեն ձայնին, ետես եթէ մեր բնութիւնս ի յամբարտաւանութենէ խաւթացեալ, այն որ ի դրախտին աստուածանալ կամեցաւ, վասն այնորիկ եւ ինքն խոնարհութեամբ սկիզբն արար, զի բժշկեսցէ զհիւանդութիւն առաջին մարդոյն, որպէս ասաց Եսայի. «Նա զհիւանդութիւնս մեր եբարձ եւ զցաւս վերացոյց»* (**Եսյ. ԾԳ. 4**)*, վասն այնորիկ զաշակերտսն ի խոնարհութիւն կամեցաւ յորդորել։* 10 *Ասէ. «Ահաւասիկ ես»։* 11 *«Ահաւասիկն» զմերձաւոր ժամանակն ցուցանէ, վասն զի զտիեզերս հնազանդեաց նոցա եւ զամենայն դուռն ի բաց արար։* 12 *«Ես առաքեմ զձեզ» ասէ։* 13 *Զիւր պատիւն առաքելոցն շնորհեաց, զի ինքն առաքեալ էր ի Հաւրէ, եւ զնոսա ինքենէ առաքեաց։* 14 *Բայց զանազանութիւն է ընդ նա եւ ընդ նոսա, զի Քրիստոս առաքեցաւ ի Հաւրէ եւ ի տեղի ո՛չ փոխադրեցաւ, զի աստուածութեամբն ո՛չ փոփոխի, այլ եկաց լիով յերկինս եւ լիով յերկիր։* 15 *Ըստ Երեմիայի՝ «Զերկինս եւ զերկիր ես լնում»* (**Երմ. ԽԳ. 24**)*. ասէ Տէր։* 16 *Իսկ առաքեալքն ի ծագս տիեզերաց հասին, զխաւարն լուսաւորեցին, զկրաւնս չարին քակեցին, զփիլիսոփայից բերանսն կարգեցին, զխաչեալն Աստուած քարոզեցին,* |356ա| *Աւետարանին ուռկանաւ զտիեզերս ամենայն ի Քրիստոսի հնազանդութիւնն կոչեցին։*

ԺԶ. 1 *Եւ զիա՞րդ առաքեցան որպէս զոչխարս ի մէջ գայլոց։* 2 *Զի թէ զաւրութեամբ առաքեալ էր զնոսա եւ պատուիրեալ, թէ որ ոչ լսեն ձեզ եւ ոչ հնազանդին՝ հարէք, հալածեցէք։* 3 *Փոքր հաւտ էին առաքեալքն՝ ԲԺ. (12) այր։* 4 *Գեաւղ մի բաւական էր զնոսա սպանանել, եւ աշխարհ ամենայն առանց քարոզի մնայր։* 5 *Այլ ասաց թէ՝ այնպէ՛ս զգաւն եղերուք, որպէս զոչխար հեզ։* 6 *Որպէս ոչխարն թէ հարկանի, թէ յասրացն մերկանայ, ո՛չ ընդդէմ դառնայ կտրչի։* 7 *Նոյնպէս ասէ, թէ զձեզ դիւահար կոչեն, թէ կախարդ, թէ մոլորեցուցիչ, ընդդէմ մի՛ դառնայք, զի խոնարհութեամբ տիրէք աշխարհի, եւ այն, զի ի մէջ գայլոց։*

ԺԷ. 1 *Ո՛, Տէր ամենակալ, զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի թէ մարգարէքն առ մի թագաւոր եւ առ մի ազգ երթային՝ զարհուրէին որպէս*

*Մովսէս երկնչէր երթալ առ փարաւոն, պատճառէր թէ՝ «Նրբաձայն եւ ծանրալեզու եմ» (***Ելք Դ. 10***) եւ Եսայի՝ թէ՝ «Ի մէջ պղծաշուրթն [ժողովրդեան, բնակեալ եմ ես]» (***Եսյ. Զ. 5***)։* **2** *Եւ Երեմիա զմանկութիւն պատճառէր (***հմմտ. Երմ. Ա. 7***)։* **3** *Բայց տե՛ս զհամարձակութիւն սոցա, որ առ ամենայն ազգս եւ առ ամենայն թագաւորս հանդերձեալ էին գնալ եւ խաւսել, մանաւանդ առ գայլսն։* **4** *Զի թէ Բ.ան (12) էին գայլքն եւ ամենայն տիեզերք ոչխարք, բաւական էին արեան ճաղպախիս առնել, թող թէ Բ.ան (12) են ոչխարք եւ ամենայն տիեզերք գայլք, զի՞նչ կարիցեն առնել Բ.ան (12) ոչխարք ի մէջ այնքան գայլոցն։* **5** *Արդ, տե՛ս զզաւրութիւն վարդապետին, զի ո՛չ զգայլսն սպանին կամ խորտակեցին, այլ յիւրեանց բարսն |356բ| դարձուցին եւ զգազանութիւնն ի հնազանդութիւն փոխեցին, եւ այս խրատովս որսացան. «Եղերուք խորագէտք իբրեւ զաւձս եւ միամիտք իբրեւ զաղաւնի»։*

ԺԸ. **1** *Եւ արդ, Տէրն եւ Արարիչն հանդերձեալ էր զիւր զաշակերտսն ի քարոզութիւն առաքել, ընդէ՞ր ո՛չ ի սրբոցն կենդանեացն եւ մաքրոց ետ զաւրինակն։* **2** *Որպէս ուսաք ի խոհեմահանճար արանց, որք զբնութիւն էիցս քննեցին եւ աւանդեցին մեզ, թէ ամենայն կենդանակերպք են յԱստուծոյ ստեղծուածս։* **3** *Են որ աւդայինք են, եւ է՛ն որ ցամաքայինք են, եւ որ ծովայինք։* **4** *Ի բաց եթող զմեծ եւ զպատուականքն, եւ զգազանն, որ ի սկզբանէ անիծաւ, զնա ետ նպատակ առաքելոցն, ասելով՝ «Եղերուք [այսուհետեւ խորագետք իբրեւ աւձս]»։*

ԺԹ. **1** *Արդ, որպէս գտաք ի բաղադասութիւն բժշկացն Գաղիանոսի եւ Ասկղէպիդիեայ զազգս նոցա եւ զբարս նոցա, գրեցաք ի կարգի։* **2** *Որք հմտութեամբ քննեցին եւ իմաստութեանն պարապեալք ասեն այսպէս, թէ Ի. (20) եւ Դ. (4) ազգ են նոքա, եւ զիւրաքանչիւր ազգսն յայտնեն զանունն, զոր մեք աւելորդ համարեցաք դրոշմել։* **3** *Բայց ո՛չ ամենայն ազգք նոցա մեղանչականք են, այլ Դ.քն (4) միայն։* **4** *Իսկ Ի.ն (20) վանիչք են չորիցն։* **5** *Եւ այս Աստուծոյ նախախնամութեանն գործ, քանզի ո՛չ յայնժամ առաքելոցն միայն ասացաւ, այլ մեզ յաւգուտ գրեցան, որ յառաքելոցն ընկալաք զհաւատս։*

Ի. **1** *Առաջին խորամանկութիւն աւձին ա՛յս է, զի ոչ առ Ադամ գնաց, զի ի լուսոյ էր ստեղծեալ, այլ առ կինն գնաց, որ ի քնոյ էր առեալ։* **2** *Վասն զի գիտէր |357ա|, թէ արու բնութիւնն անխաբելի էր, եւ կինն դիւրաւ պարտելի։* **3** *Նոյնպէս եւ սատանայ յորժամ զմեր միտքս լուսաւոր տեսանէ, ի բա՛ց խոտորի։* **4** *Եւ ե՞րբ լինի միտքս լուսաւոր։ Յորժամ երկրա-*

ւոր փառացն արհամարհանս առնիցեմք եւ զվերինն խնդրիցեմք գաւառ, քանզի ազգակից է միտքս վերինն պայծառութեանն։ **5** *Ապա եթէ քնով միտքս յիմարի եւ զհետ հեշտութեանն երկրաւորիս լինի, սատանայ ի վերայ յարձակի եւ պէս պէս մեղաւք զմեզ վարակէ, մինչեւ ի տիրապէս բարոյն մերկացուցանէ։*

ԻԱ. **1** *Բ. (երկրորդ) խորամանկութիւն նորա ա՛յս է, որպէս աւանդեցաւ յիմաստնոց։* **2** *Որպէս ասեն, թէ յորժամ զմարդն մերկ տեսանէ, բաղձայ, իսկ եթէ ագուցեալ է, ի վերայ յարձակի։* **3** *Սապէս եւ թշնամին կենաց մերոց. թէ զմեզ ունայն տեսանէ ի բարի գործոց՝ սիրէ, վասնզի կամակից է չարին եւ ատեցող բարոյն։* **4** *Իսկ եթէ ագուցեալ տեսանիցէ զրահիւք առաքինութեան, ի վերայ յարձակի, ջանայ խափանել զգնացս մեր, որ ըստ Աստուծոյ է։*

ԻԲ. **1** *Գ. (երրորդ) բարք խորամանկութիւն աւձին այս է։* **2** *Գ. (3) են աղի սեռք. է, որ ի քարանց, եւ է, որ ի ջրոց բաղկանայ, եւ է, որ ի հողոյ ծնանի։* **3** *Յայս վայրացս խոյս տայ՝ ուր աղն լինի, զի կուրացուցիչ է նորա։* **4** *Վասն այնորիկ, իբրեւ ծերանայ՝ ծանրանայ եւ ո՛չ կարէ երագ ընթանալ, այլեւ կուրանայ իսկ, խնդրէ տեղի մի յապահով եւ երթեա՛լ կայ անսուաղ զաւուրս Խ. (40)։* **5** *Եւ յետ քառասուն աւուրն թուլանայ մորթն եւ ընդ նուրբ ծերպ վիմաց անցեալ, զհնութիւնն* |357բ| *մերկանայ։* **6** *Ապա թէ դէպ լինիցի միոյ հատոյ մանանխոյ չափ ի հին խորխէն մնալ ի վերայ, պատճառ լինի սատակման նորա։*

ԻԳ. **1** *Տէրն եւ Արարիչն զինչ մեզ խրատէ յայսցանէ, զի ո՛չ առաքելոցն միայն նպատակ ետ զնա, այլեւ մեզ ուսուցանելով, թէ՝ Ով մարդ, յորժամ կուրանայ աչք հոգւոյդ եւ ծանրանաս մեղաւք՝ ո՛չ ընթանալով յաստուածային շաւիղն, խնդրեա՛ քեզ տեղի ապաստանի զպահոցն սրբութիւն զԽ. (40) աւուրսն, զոր Մովսէս եւ Հեղիաս պահեցին։* **2** *Եւ Տէրն յետոյ Քրիստոսի մարմինն յանդիմանեսցէ զամենայն մարմին, զի թէ նորա մարմնոյն պէտք եղեն սպառազէն պահոցն, մեք պարարելով, ուտելով եւ ըմբելով զիա՞րդ գերիվերոյ կարիցեմք լինել թշնամոյն։* **3** *Եւ ի պահելն խոստովանեսցես, զի մի՛ մնասցէ առ քեզ մասն։* **4** *Որպէս նորա հին խորխն ապականիչ լինի, նոյնպէս եւ մասն մի մեղացն, որ ոչ խոստովանի՝ սպանանէ զոգին։*

ԻԴ. **1** *Դ. (չորրորդ) խորամանկութիւն նորա ա՛յս է, զի յորժամ ոք ի վերայ յարձակի, զամենայն մարմինն ի սուր տայ, զգլուխն միայն պահէ, զի գիտէ նա, թէ որքան գլուխն կենդանի է, եւ թէպէտ բոլոր մարմինն ապականի, երթայ առնու ծաղիկ մի՝ անունն շամրաս, եւ զապականեալ մարմինն նովաւ ողջացուցանէ։* **2** *Իսկ եթէ ի գլխոյն վրիպի եւ ի կենդա-*

նութենէն վրիպի, անհնար է նմա զառողջութիւն գտանել։ 3 *Վարդապետն բարի աշակերտացն գեղեցիկ խրատ ընձեռեաց, թէ յորժամ հալածանք կամ նեղութիւն ի վերայ գայցէ, փորձութիւն կամ սով, կամ սուր, զամենայն համբերու|358ա|թեամբ տանիցիք, բայց միայն որքան հաւատն կենդանի՛ է, զամենայն արկածս մեղաց բժշկեմք ծաղկովն այնորիկ, որ բխեաց յարմատոյն Յեսեայ, ապա թէ դէպ լինի ի հաւատոյն վրիպել, անհնարին է մարդոյ զփրկութիւն գտանել։*

Իե. 1 *Ե. (հինգերորդ) եղանակ ուսաք ի տրամաբանութենէն Գաղիանոսի, զի ասէ այսպէս. թէ որպէս գոն յարմատքդ եւ ի ծաղիկք զաւրութիւն բժշկութեան, եւ առողջութիւն, որք զմահաբեր աղտսն հալածեն, այսպէս յարմատքդ եւ ի ծաղիկդ՝ մահաբեր եւ դժնդակք գոն, զոր երթեալ աւձն արքայիկ, առեալ ի փոշետեսակ թփոյն՝ դեղէ զբիբ ականն, եւ վասն այնր ամենայնի տեսականութիւնն ունի զմեղանչականութիւն։* 2 *Իսկ մանկունք բժշկաց առեալ զծաղիկն զուիրակ՝ դեղեն զաչս իրեանց. եւ դէտ ակն կալեալ նմա ստէպ եւ պատրաստութեամբ հային, զի թէ նա նախ զմարդն տեսանէ՝ մեռանի մարդն, ապա եթէ նախ մարդն զաւձն տեսանէ՝ աւձն մեռանի։* 3 *Եւ իբրեւ մեռանի աւձն, առեալ թզաչափ ի գլխոյն եւ ի տտնոյն՝ ի բաց հատեալ, իբր վնասու պատճառ, եւ զայլն ուտիցէ եւ այնու զամենայն ծաղկոց եւ զարմատոց գիտէ բժշկութիւն, զի թէպէտ եւ չար է կենդանին, Աստուծոյ բարերարութիւնն զայս նորա պարգեւեա՛լ է։* 4 *Այլ մեք զի՞նչ ի տերունական բանէս ուսանիմք, զի արքայիկ աւձն, որ է սատանայ, դեղեալ զաչս իւր պէս-պէս դեղով եւ ցանկութեամբ, եւ պատրել զմեզ գեղեցկութեամբն, ագահութեամբ, վաշխիւ եւ տոկոսիւ, փառաւք աշխարհիս, զի սպանցէ զմեր զհոգիս։* 5 *Դեղեսցուք եւ մեք զակն ոգոյս մերոյ աստուածային աւրինաւքն. սրբութեամբ, պարկեշտութեամբ, ողորմածութեամբ, խոնա|358բ|րհութեամբ, համբերութեամբ, զի մեռցի՛ սատանայ եւ լիցի կոխան, եւ մեք ազատեալք ի նորա դաւաճանութենէն, լիցուք ժառանգք երկնից արքայութեանն։*

Իզ. 1 *Զ. (վեցերորդ) յեղանակ խորամանկութիւն նորա այս է. Հերակլիտոս մակագրէ այսպէս, թէ յաւուրս ամարայնոյ, յորժամ լինի նա յորջի իւրում եւ տապ արեգականն վտանգէ զնա, երթայ խնդրէ ջուր, եւ յերթալն զթիւնսն արտաքս ձգէ։* 2 *Եւ յըմբելն զջուրն վերստին ընդ նոյն ճանապարհ ո՛չ դառնայ, քան[զի] գիտէ թէ ի թիւնից վիրաւորի, զորս ձգեացն։* 3 *Զի՞նչ յայսցանէ աւանդէ մեզ խրատ. թէ յորժամ տապ իմանալի արեգականն, այսինքն՝ բանսարկուին սատանայի զմեզ վտանկէ, եւ դու մի՛ զարմանար, թէ սատանայ արեգակն ասի, զի ահա զայս ի յաստուածեղէն գրոց ուսանիմք, որպէս ասէ Սողոմոն, թէ՝ «Խեթիւ հայեցաւ*

յիս արեգակն» (**Երգ. Ա. 5**), *քանզի նախանձեցաւ ընդ փառս մեր եւ եհան զմեզ ի խրախարար տեղւոյն, որոյ անուն ադին ասի:* **4** *Վասն որոյ մաղթէ մեծն Դաւիթ արեգակն ի տուէ* (**տե՛ս Սղմս. ՃԻ. 6**), *զի ո՛չ զայս արեգականէ ասէ, այլ առակաբար զսատանայ նշանակէ, զոր Տէրն յԱւետարանին տիրաձայնեաց, թէ «ի ծագել արեգականն բոյսն չորացաւ»* (**Մտթ. ԺԳ. 6**)*:* **5** *Կոչի Արեգակն Քրիստոս այլ յաւելուածովն, զի ո՛չ պիտակաբար, այլ արդարութեան Արեգակն ասի:* **6** *Արդ, ուսուցանէ, թէ յորժամ ի սատանայէ վտանգիմք եւ բոցով ցանկութեանն տոչորիմք, խնդրեսցուք զջուրն կենդանի, որ է Քրիստոս բղխեալ յԵրուսաղէմ:* **7** *Եւ յերթալն առ Քրիստոս զամենայն զմեղսն ի բաց դիցուք խոստովանութեամբ, զի նախ պարտ է սուրբ լինել* |359ա| *եւ ապա ի սուրբն հպել:* **8** *Յորժամ լուսաւորիս ի Քրիստոսէ, ընդ նոյն ճանապարհ մեղաց մի՛ դարձցիս, զի մի՛ իբրեւ զշուն ի փոխած դարձցիս, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմն թաւալեալ, այլ կայցես մնասցես ուղիղ, զի այնպէս զարքայութիւնն ժառանկեսցես:*

ԻԷ. **1** *Է. երորդ (7) յեղանակ խորամանկութիւն նորա այս է, զի ի պատելն եւ յերթալն Ե. (5) անգամ մանեւորի:* **2** *Եւ է մարմին նորա կարծր եւ կակուղ:* **3** *Յերթալն զկարծրն ընդ երկիր քարշէ եւ զկակուղն վերամբարձ ունի, զի մի՛ վիրաւորեսցի ի քարշմանէն յերկրին:*

ԻԸ. **1** *Պարտ է եւ զմեզ խրատել յիրագործութենէ նորա, զի, Ե. (5) են ի մեզ տիրականք, որ զգայութիւնք կոչին, որով հոգիս կամ վիրաւորի կամ փառաւորի, զի աչս ետ մեզ Աստուած, որով զարարածոցս տեսանեմք զգեղեցկութիւն եւ գովեմք զԱրարիչն մեծութիւն:* **2** *Եւ ականջս շնորհեաց մեզ, զի զաստուածային զպատգամսն լսիցեմք:* **3** *Եւ հոտոտելիք ընկալաք, զի անուշահոտութեամբ աստուածային գրոցն զմայլեսցուք:* **4** *Բերան ունիմք, զի բացցուք եւ ընկալցուք զհոգին:* **5** *Ձեռս ետ մեզ, զի զբարիս գործեսցուք:* **6** *Իսկ եթէ ընդդէմսն դարձուցաք զ Ե. (5) զգայութիւնս, փոխանակ բարոյ չարին ծառայելով՝ աչաւք յարատ տեսանել եւ զատար գեղեցկութիւն զննել, կամ ականջաւք զբանբասանս լսել, կամ զայլ չարութիւն, եւ զհոտոտելիս իգացուցանել ի պէս պէս հոտս գարշելիս, եւ ճաշակելաւքն կերակրոցն ծառայել, եւ ձեռաւքն հարկանել եւ սպանանել, յայնժամ խաւարի տիրապէս հոգւոյն գեղեցկութիւնն:* **7** *Այլ որպէս նա Ե. (5) գալար առեալ երագ ընթանայ ի վերայ երկրի, նոյնպէս եւ մեք՝ Ե. (5) զգայութեամբքս* |359բ| *ուղիղ եւ արդար գնասցուք, զի որպէս նա է կարծր եւ կակուղ, նոյնպէս ի մեզ կարծր է մարմնիս, զի հողոյս ազգակից է, եւ պատուական է հոգիս, զի, հրեշտակաց նման է:* **8** *Ի շրջելն մեր ի վերայ երկրի զհոգիս գերագոյնս պահեսցուք, զի մի՛ երկրաւոր տգեղութեամբ ապականեսցի:*

ԻԹ. **1** *Ը. եր<ր>որդ (8) յեղանակ խորամանկութիւն նորա այս է, զի*

*ազգ մի ի նոցանէ, զոր իժ կոչեն, քանզի չարագոյնք են եւ անընդելք, զի էգն զսերմն ընդ բերանն առնու եւ զերկաւորին ատամացի կտրէ էգն եւ մեռանի այրոյն, որ է հայրն, եւ ի ծնանելն, վասն զի որովայն ո՛չ ունի, կորիւնն պատառէ զարգանդն եւ ելանէ, եւ այսպէս զմայր սպանանէ, զոր կենաց կարապետն Յովհաննէս զհրէից ազգն ընդ սոսա համայդասէ եւ ասէ «ծնունդք իժից» (**Մտթ. Գ. 7, ԺԲ. 34, Ղկ. Դ. 7**), այսինքն թէ՝ որպէս ի սերմանելն զհայր սպանանէ, եւ ի ծնանելն՝ զմայրն նոյնպէս հրէայքն սպաննին զմարգարէսն, որ իբրեւ զհայր դաստիարակէին զնոսա, եւ զառաքեալսն, որ իբրեւ զմայր սնուցանէին զնոսա։ 2 Զի ամենայն ազգ աւձիցն ի թովչացն ըմբռնի, իսկ իժն՝ ո՛չ զի յորժամ իմանայ, թէ թովիչն կամի երդմնեցուցանել զնա եւ ածել ի հնազանդութիւն, զտուտն իբրեւ զանուր արարեալ, ընդ ականջսն թափա[ն]ցանց հանեալ, եւ այնպէս ո՛չ լսէ զձայն թովչի, զոր մեծն Դաւիթ հեգնէ իբրեւ զիժի, զի խցեալ է զականջս իւր, զի բազումք են ի մարդկանէ, իբրեւ զիժ [եւ] յաստուածային պատգամացն անլուր են։*

Լ. 1 *Թ.եր<ր>որդ (9) յեղանակ խորագիտութեան նորա այս են, զոր յաստուածեղէն գրոց ուսաք, թէ են ազգք մի ի հնդկաց անապատին, որ ոչ ի վերայ երկրի սողեն համաքատակ* |360ա| *այլոց, այլ իբրեւ զթռչունս վերամբարձ գնան։* 2 *Պահապանք են նոքա յանապատին, զոր մեծն Մովսէս, մինչդեռ զաւրավար էր յԵգիպտոս, հնարիւք մտանէր յերկիրն Սաբա։ Զի մի մուտէ երկրին, աւդապարիկ աւձքն պահապանք են մտին։* 3 *Սնուցանելով ամենիմաստն Մովսէս երամս արագլոց՝ առեալ զկնի իւր, եւ երամս ոչխարաց՝ առաջի իւր եւ այսպէս անցեալ ընդ դաւաճանութիւն նոցա։* 4 *Եւ զի չարագոյն են նոքա, որպէս փորձիւ ուսանիս, զի թէ զմի արմատ եղեգան հարկանէ, առհասարակ բոլորն վաղվաղակի չորանայ, որպէս վիպասանեն, թէ զմի մարդ հարկանէ՝ բոլոր ընտանիքն մեռանի, զի այս առասպեալք է։* 5 *Յիշէ եւ զսա Մովսէս ի գիրն իւր, թէ՝ «Լար առանց բժշկութեան արձակեցից ի վերայ նոցա» (**Բ. Օր. ԼԲ. 24**)։* 6 *Այսպէս պարտ է մեզ իմանալ, թէ որպէս նա ի մի արմատն հարկանելով զբոլորն անպիտանացոյց, թէ սատանայ մի մեղաց մուտ արար ի մեզ, զբոլոր հոգին անպիտանացուցանէ։* 7 *Եւ ոչ զայն ինչ ասեմ, թէ մի՛ մեղանչէր, զի անհնար է հողեղէն բնութեանս, զի այս Աստուծոյ վայել է անմեղութիւն, որ ունի զանեղութիւն, իսկ արարածական բնութիւնս մեղանչական է, եւ ո՛չ եթէ յԱստուծոյ այնպէս գոյացեալ, զի ի սկզբանէ անարատ էր եւ յետոյ ի ձեռոյ ի ձեռն ծուլութեան մեղկացաւ։* 8 *Վասն որոյ ոմն ի մարգարէիցն ընդդէմ բերէ զառաջին պայծառութիւն եւ զվերջին վատութիւնս, եւ ողբայ ասելով՝ «Մարդ ի պատուի էր եւ ոչ [իմացաւ]» (**Սղմս. ԽԸ. 13, 27**)։*

ԼԱ. 1 *Ժ.եր<ր>որդ (10) յեղանակ խորագիտութեան նորա այս է։* 2 *Ասկ-*

ղիպիդէս մակագրէ այսպէս, թէ ի շնչել հողմոյ յաւուրս գարնայնոյ, յորժամ ծաղիկք |360բ| փթթին եւ անկեալ սիգն ի համասփիւռն ծաղիկ եւ զվայրսն անուշահոտութեամբ լնու, իսկ աւձն արքայական ստէպ ստէպ զբերանն բանայ եւ յանուշահոտութենէն յինքն ձգէ եւ անդի ընձայի թիրակէն ի գլուխն, իբրու լինի իմն դեղնագոյն եւ գեղեցկատես։ 3 Բազում են ազգ թիւրակէին, բայց այն ազգն առ թագաւորն Հնդկաց միայն գտանի, եւ ունի փորձ այսպէս, զի թէ ոք յաւձից կամ ի կարճաց հարկանի, կամ մահացու դեղ ըմբէ, եւ զնա ի ջուր անցուցանեն եւ տան ըմբել, վաղվաղակի բժշկի, եւ որ մերձ ի դրունս մահու լինի, թիւրակէսն դարձուցանէ։ 4 Եւ ո՛չ միայն այս, այլեւ զգոդութիւն եւ զպիսակութիւն բժշկել կարէ, յորժամ ջրով նորա աւծանեն զախտացեալն, եւ վասն այնորի՛կ է պատուական թիւրակն։ 5 Եւ դու տես զխնամք Արարչին, թէ զիա՞րդ ի չար գազանէն աւգուտ եւ բարիոք է սահմանել, զի ուսանիցիմք թէ չի՛ք ոք չար, որ մասն մի բարի ո՛չ ունիցի, եւ չիք ոք բարի, որ մասն մի չար ո՛չ ունիցի, զի երեւեսցի սեռն եւ յստակ բարի Աստուած միայն։

ԼԲ. 1 *Այլ խորագիտութիւն աւձիս ի մեր խրատ գրեցան զգարունն ծաղկաւետ Քրիստոսի գալուստն, եւ հողմոյ շնչելն՝ Հոգւոյն Սրբոյ երեւումն, իսկ համասփիւռ ծաղիկն, որ անուշահոտութեամբ զվայրս ելից՝ առաքելոցն քարոզութիւնն է, որ ընդ տիեզերս ծաւալեցաւ եւ հոտ անուշ՝ Աւետարանին բուրումն, որպէս ասաց աստուածազանն Պաւղոս, թէ՝ «Հոտ անուշ եմք ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն» (Բ. Կրնթ. Բ. 15)։ 2 Իսկ աւձն, որ ստեպ ստեպ բանայ զբերանն ընդդէմ ծաղիկն, այսպէս եւ մեք բացցուք զբերանս մեր եւ առցուք |361ա| զանուշահոտութիւն հոգւոյն, որպէս ասաց աստուածայինն Դաւիթ. «Զբերան իմ [բացի եւ առի յՀոգի»] (Սղմս. ՃԺԸ. 131)։ 3 Յաստուածեղէն գրոց զանուշահոտութիւնն ի մեզ ձգեսցուք, զի որպէս ի նա թիւրակէն ընձայի, եւ ի մեզ հաւատն զաւրանայ, որով զամենայն զմահաբեր զմեղսն բժշկել կարասցուք եւ լուսաւորել ի տէրունական հրամանացն, որ ասէ. «Եղերուք խորագէտք իբրեւ զաւձ եւ միամիտք իբրեւ զաղաւնիս»։*

ԼԳ. 1 *Եւ արդ, փոքր ի շատէ ծանուցաք զխորագիտութիւն աւձին, զոր առաքելոցն հրամայեաց առնուլ եւ նոքաւք մեզ։ 2 Եկ այսուհետեւ երթիցուք առ միամտութիւն աղաւնոյն։ 3 Եւ զի կարի դժուարին է իմաստնոց եւ կատարելոցն, թող թէ անհմտիցն համեմատութիւն առնել ընդ աւձն եւ ընդ աղաւնին։ Նա աւանիկ մինն ի վերայ երկրի սողի եւ մինն ընդ յերկինս թռչի։ 4 Եւ ո՛չ թէ տեղաւքն միայն զանազանի, այլ բարուքն, զի աւձն գազան է եւ անընդել, թիւնաւոր եւ չարաբարոյ։ 5 Եւ աղաւնին հաւ է զգաւն եւ հանդարտ։*

ԼԴ. 1 *Եւ ընդէ՞ր զսոսա ընդ իրեարս լծեաց, որոյ այսչափ որոշումն եւ զանազանութիւն կայ ի միջի։* 2 *Այլ ի խրատ մեզ գրեցան, զի որ կամիցի յերկրաւոր կենցաղս հանդիսանալ եւ զհոգւոյն ճառագայթն աննուազելի պահել, պարտ է առնուլ յաւձին խորագիտութենէն, ոչ զդաժան բարսն կամ զչար թիւնիցն զխածատումն, որ զստեղծուածս Աստուծոյ մահացուցանէ, այլ զբարին եւ զաւկտակարն, զոր մեզ յաւգուտ է եւ ի խրատ, զոր վերագոյնն ցուցաք։* 3 *Իսկ ոմանք չարաբարուք եւ անագորոյնք զխորամանկութիւն աշ[խ]արհիս* |361բ| *ինքեանց փառս համարէին՝ զեղբայրն խածատելով եւ խորամանկելով զդէմս բարեկամի ցուցանել, եւ զգործս թշնամոյն գործէ։* 4 *Այնպիսին դատապարտի ընդ խորամանգին սատանայի։* 5 *Եթէ զաւձին չար խորամանկութիւն միայն ունի, չար եւ որդի չարին է, եւ եթէ զաղաւնոյն անմեղութիւն միայն, նմանապէս չար այն։* 6 *Վասն այսորիկ ո՛չ կարի պարզամիտ հրամայէ լինել եւ ոչ բնաւ խորագէտ, այլ զերկոսին ընդ միմեանս խառնեալ, զի յերկոցունցն մի ինչ առաքինութիւն յարդարեսցի։* 7 *Եւ զխորագիտութիւն տայ ունել զաւձին, զի մի յազդոյ յանդամս քո վիրաւորեսցի, եւ զմիամտութիւն աղաւնոյն՝ առ ի չխնդրել վրէժս ի վնասակարացն եւ ո՛չ քէնս ի նենգագործացն։* 8 *Եւ այնպէս ընտրեսցէ զժամանակն, թէ որպէս պարտ է անմեղութեամբ կալ, եւ որպէս պարտ է խորամանկութեամբ, որպէս երանելին Պաւղոս առնէր. զի յորժամ յԱթենս չոգաւ՝ խորամանկութեամբք առաւել յաղթեաց, քան անմեղութեամբն։* 9 *Գիտէր նուաստանալ, գիտէր եւ բարձրանալ, որպէս ասէր. «Եղէ ընդ [աւրինաւք իբրեւ զայնոսիկ որ ընդ աւրինաւքն էին, իբրեւ ոչ եթէ ընդ աւրինաւք էի, այլ զի եւ որ ընդ աւրինաւքն իցէն՝ եւ զնոսայ] շահ[եցայց]»* (**Ա. Կրնթ. Թ. 21**)։ 10 *Եւ միամիտ աղաւնի լեալ, գրէր թէ «Ո՞ մեկնեսցէ զիս ի սիրոյն Քրիստոսի»* (**Հռմ. Ը. 35**)։ 11 *Վասն որոյ ասէ. «Եղերուք միամիտք իբրեւ զաղաւնիս»։*

ԼԵ. 1 *Այսպիսի աղաւնի միամիտն ո՞ էր, որ ի չար ժամանակին բարետոհմիկ երեւեցաւ։* 2 *Եւ այն էր սքանչելի, զի թէ ի մէջ սրբոցն սուրբ ոք էր եւ եւս՝ ցի չէ զարմանք, զի որ ի ժամանակին էին ի հնգէտասան ամէն ի շնութիւն զառածեցան, բայց նա միայն եկաց միամիտ ի սէրն Աստուծոյ. զՇ. (500) ամ ի կուսութիւն կացեալ,* |362ա| *եւ զի մի ոք կարծիցէ, թէ չէր ձեռնհաս վասն այնորիկ ոչ մեղաւ, բայց զի ազգին թագաւոր էր, ունէր ծառայս եւ աղախնայս եւ ոչ թէ աղքատ ոք էր։* 3 *Բայց ոչ թագաւորութիւն եւ ոչ հարստութիւն զնա աղտեղեցուցին։* 4 *Ետես Աստուած զմիամտութիւն նորա, ընտրեաց զնա, որպէս ասէ գիրն, այր արդար։* 5 *Կարէր Աստուած պահել զնա ի տեղւոջ ուրէք, որպէս զԳ. (3) մանկունքն ի հնոցին, կամ զԴանիէլն ի գբին, կամ զՅունան ի կէտին։* 6 *Վասն այսորիկ Աս-*

տուած տայր հրաման կազմել տապան, զի տեսեալ հարցանիցեն զնա եւ նա ասասցէ զպատճառն, զի թերեւս ապաշխարեսցեն։ **7** *Եւ զի կամէր ի մի ամ վաղվաղակի շինել զտապանն, վասն այնորիկ յամր ձգէ զամս Ճ. (100), եւ զի ոչ դարձան այլքն՝ կորեան, եւ նա ապրեցաւ։ Սորին վասն ասէ. «Եղերուք միամիտք իբրեւ զաղաւնի»։*

ԼԶ. **1** *Ուսարուք ի բնախաւս արանց, որ զբարս ամենայն կենդանեաց քննեցին, թէ աղաւնին լեղի ունի, բայց դառնութիւն նմա ո՛չ է եւ ի գարշ տեղի ո՛չ նստի, զմեզ խրատէ ի մեղաց խորշել։* **2** *Այլեւ միամիտ է, զի թէ ի բունէն հալածի կամ ի ձագուցն կողոպտի, ի տեղւոյն ո՛չ հեռանայ։* **3** *Այսպէս եւ մեք, թէ հալածիմք, թէ չարչարիմք՝ սիրոյն Քրիստոսի ո՛չ հեռասցուք։*

ԼԷ. **1** *Այսպիսի աղաւնի միամիտք էին մարգարէքն, որ պէս պէս ճգանց համբերեցին եւ յԱստուծոյ սիրոյն ո՛չ հեռացան, այլ համարձակութեամբ պատմեցին զգալուստն Քրիստոսի։* **3** *Նոյնպէս աղաւնի միամիտք էին աստուածարեալ առաքեալքն, որ յամենայն տեղիս տանջանաց համբերեցին եւ վկայութեամբ կատարեցան վասն սիրոյն Քրիստոսի, եւ նմա փառք [յաւիտեան]։*

ԼԲ.

|362ա| ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՂԸՆԿԱՑՈՅ, Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՍՆ

Սուրբ առաքյալներին նվիրված այս հակիրճ ներբողը եւս մի գեղեցիկ օրինակ է ինչպես հայերենի ճոխ հնարավորությունների, այնպես էլ հեղինակի կողմից այդ հնարավորությունները Մեծն Նարեկացու հետեւությամբ կիրառելու:

Բնագիրը հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 362ա-3բ) ձեռագրի:

Ա. 1 |362բ| *Եկեղեցւոյ երկնի կենդանակերպք ճշմարիտք եւ Քրիստոսիւ միշտ կենդանիք, զարեգակ արդարութեան բերողք ընդ ծագս տիեզերաց, այլեւ յարեգակեն արեգակնացեալք գիջութեան չարին ցամաքեցուցիչք, բանական բուսոց դարմանիչք, անձնաւորական տնկոց վերածիչք, սառնացելոց մտաւք հրացուցիչք, ի ծովայինն ծփմունս աշխարհի՝ աստեղապէս ուղղիչք:*

Բ. 1 *Նորազուարճ դրախտի եկեղեցւոյ, յորում տունկ կենաց Քրիստոս, եւ դուք ի տնկոյն կենաց ընձիւղեալք, քաղցրաճաշակ որթոյն բարունակք: 2 Այլեւ ի նոյն ինքն ճշմարիտ որթոյն, յարմարեալ ուռոցն բանաւոր տնկոցն տնկագործք, ըստ այնմ «Ես տնկեցի, Ապաւղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց» (Ա. Կրնթ. Գ. 6):*

Գ. 1 *Աստուածակազմ խորանի նորոյ եկեղեցւոյ աշտանակք ոսկեղենք եւ գունդ ի վերայ եւ այլն:*

Դ. 1 *Ի վերայ բազմապատիկ վիմին հիման հաւատոյ, ամենիմաստ արուեստիւ շինաւղք եւ ճարտարապետք:*

Ե. 1 *Իմաստութեանն Հաւր շինեցեալ գինւոյն արբեալք եւ յանճառելի խրախճանութիւնսն աշխարհի հրաւի[ր]աւղք:*

Զ. 1 *Այլեւ յապագայսն ի սեղանն անճառելի եւ ի գինարբուսն զուարճալի. ըստ այնմ առաքեաց զծառայս իւր կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր:*

Է. 1 *Բանին Հաւր փեսացելոյ փեսայաւերք փառաւորք, եւ ի զուարճութիւն հարսանեաց կոչաւղք, ըստ այնմ «Խաւսեցայց զձեզ առն միում իբրեւ զկոյս մի սուրբ յանդիման լինել փեսային Քրիստոսի» (Բ. Կրնթ. ԺԱ. 2):*

Ը. 1 *Ճշմարիտ եւ քաջ հովուապետին հովուակիցք եւ հմուտք, եւ ի վայրի դալարոջ Քրիստոսի հաւտին արածողք եւ այլոց յորդորիչք:*

Թ. 1 |363ա| *Պատուական մարգարտին վաճառականք իմաստունք, գանձին ծածկելոյ գտաւղք, եւ գնաւղք նորին գանձու մեծ հազարա-*

պետք, որ է բան հաւատոյ եւ քարոզութիւն Աւետարանին կենաց։ 2 *Եւ իբրեւ զպարտական ծնաւղք զնոյն գանձ հոգեւոր որդե[ա]ցս գանձաւղք եւ զնոյն յամանս խեցեղ[են] կրաւղք։*

Ժ. 1 *Յամենակալ պանդոկի եկեղեցւոյ, վասն Բ. (2) դահեկանի վարձուն բժիշկ, եւ ապաքինիչք յիւանդարար ցաւոց մարդկան, ի բնական եւ յանբնական ախտից եւ ի դժնդակ խածմանաց կամակոր աւձին ողջացուցիչք։*

ԺԱ. 1 *Ամենազաւր արքային զաւրագլուխք. «Ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխ[ան]ութիւնս, եւ ընդ պ[ետ]ութիւնս, եւ ընդ աշխարհակալս [խաւարիս] այսորիկ ընդ այս չարութեան, որ ի ներքոյ երկնից»։*

ԺԲ. 1 *Ճրագունք լուսատուք վառեալք եւ ի Քրիստոսէ լոյս կոչեցեալք եւ ի վերայ աշտանակի եկեղեցւոյ եդեալք։* 2 *Որսորդք մարդկան ի մահուանէ ի կե[անք], ըստ մարգարէի ասելոյ. «Առաքեցից ի վերայ ձեր որսորդս բազումս, եւ որսասցեն»* (**տե՛ս Երմ. ԺՁ. 16**) *զձեզ յամենայն ազգաց, ուր ցրուեցի զձեզ անդ։*

ԺԳ. *Ի գթած Հաւրն հրաւիրմանէ անապական եւ առաջին պատմուճանին անառակ որդւոյն զգեցուցիչք, հին մարդոյն մերկացուցիչք եւ զնորն աւազանաւն զգեցուցիչք։* 2 *Եւ դարձեալ զնոյնն շնորհս մերկացելոցն դաւաճանութեամբ եւ պատրանաւք խաբաւղին գլորմամբ վերստին զգեցուցիչք, ըստ Պաւղոսի. «Այսուհետեւ զաւրացարուք Տերամբ եւ կար[ողութեամբ] զաւրութեան նորա, եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ»* (**Եփս. Զ. 10-11**)*։*

ԺԴ. 1 *Պատգամաւորք անաչ|363բ|առութեամբ դատողական ատենին, վասն որոյ ասէ. «Պատգամաւոր եմք ձեզ աղաչել զձեզ, վասն Քրիստոսի հաշտել ընդ Աստուծոյ հաւր»* (**հմմտ. Բ. Կրնթ. Ե. 20**)*։* 2 *Թագ[աւոր]եալք աւծութեամբ հոգւոյն, ըստ այնմ. «Ի գում[արել] երկնաւորին զթագ[աւորս ի վերայ նորա] ձիւնասցին ի սաղմոն»* (**Սղմս. Կէ. 15**)*։* 3 *Իշխանք պանծացեալք եւ պէտք գլխաւորք, ըստ այնմ՝ «Եթու ձեզ իշխ[անութիւն] կոխ[ել] եւ զամենայն զաւրութիւն թշն[ամւոյն]»* (**Ղկ. Ժ. 19**)*։* 4 *Անդրանկին Հաւր ժառանկակիցք եւ եղբարք փառաց Միածնին եւ Քրիստոսի եղբայրացելոցս աւետաւոր, վասն որոյ ասէ, թէ «Գթաց Հայր զայն, որ ոչ գիտէր զմեզս, վասն մեր մեղս արար, զի մեք նորա արդարութեամբն կեցցուք»* (**Բ. Կորն Ե. 21**)*։*

ԼԳ.

|363բ| ՆԱԽԵՐԳԱՆ ԱՌԱԿԱՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ

Ինչպես հայտնի է, Հովհաննես Պլուզ Երզնկային պարբերաբար տեւական ժամանակով ինչպես իր հայրենի գավառի Լուսավորչի լեռների, այնպես էլ Կիլիկիայի մի շարք վանքերում աստվածաբանական եւ գիտության այլ բնագավառների թեմաներով դասախոսություններ է կարդացել: Հասկանալի է, որ իր դասախոսությունների ընթացքում աղյուծի բաժինը պետք է հաղվեր Աստվածաշնչից կամ ուղղակի վերաբերեր նրա առանձին գրքերի լուսաբանմանը: Կարծում ենք, որ սույն «Նախերգանքը» այդ շարքի դասախոսություններից մեկն է, որում հեղինակը հանգամանալի բացատրություններ է տալիս առակի ժանրի առանձնահատկությունների մասին:

Բնագիրը հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 363բ-4բ) ձեռագրի:

Ա. 1 *Եկեսցուք ի վերնագիր առաջիկայ գրոց, որ ասէ Առակ[ք] Սողոմոնի:*

Բ. 1 *Արդ, ամենայն գիրք աստուածայինք առանձին անու[ան]ագրութեամբք յարգեանցն եւ յիրացն կոչեցան, որպէս Ե. (5) գիրքն Մովսիսի, Պատմութիւնն Արարածոց, Ծնունդ եւ Ելք եւ այլովք անուամբքն մագագրեցան:* **2** *Նմանապէս եւ այլ գիրք մարգարէիցն եւ պատմութիւնք թագաւորացն եւ ի նորս՝ Աւետարանն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:* **3** *Արդ, ի սոցանէ ոմանք յանուն պատմողացն կոչին, եւ են որք յիրացն եւ յարդեանցն եւ ի գործոցն զանուանցն կոչումն բերեն յինքեանս:* **4** *Իսկ Սողոմոնի գիրքս ո՛չ այնպէս, այլ Առակք անուանեալ կոչի, զի ոչ միոյ իրաց նշանակէ, այլ զամենայն խրատ իմաստութեան եւ խորհրդոյ ունի յինքեան:* **5** *Եւ ո՛չ միայն մարգարէութիւն է, եւ ո՛չ յատուկ պատմութիւն, զի ո՛չ հայցեաց սա մարգարէութիւն եւ ո՛չ թագաւորութիւն, այլ խնդրեաց զիմաստութիւն, որ զամենայն տեսակս բարութեան յինքեան պարունակեալ ունի:* **6** *Զի թէ թագաւորութիւն հայցեալ էր յԱստուծոյ յիմաստութենէն անբաժ |364ա| էր մնացել, եւ թէ մարգարէութիւն՝ նա կարծիս գոյր, թէ այլ երկուցն ո՛չ հասանէր՝ թագաւորութեան եւ ընթանուր իմաստութեան, զի թագաւորութիւնն ի սէր աշխարհիս քարշէր եւ մարգարէութիւնն ըստ պիտոյից ժամանակին ի յայսմանէ հոգւոյն խաւսեցեալ լինէր:* **7** *Իսկ զսեռական բարիսն հայցելով՝ հաստատեցաւ նմա թագաւորութիւնն՝ հաւելաւ եւ շնորհ մարգարէութեանն, զի բանիւ եւ իրաւք յայտնեաց զխորհուրդ տնաւրէնութեանն Քրիստոսի:*

Գ. 1 *Եւ դարձեալ, զի ամենայն գիտութիւն եւ հանճար յերկուս բաժանի. ի պարգեւականն եւ յուսումնականն:* **2** *Պարգեւականն՝ որպէս մարգարէիցն սրբոց, ուսումնականն, որ յաշխատասէր ջանուց եւ ի տրամաբանական քննութենէ:* **3** *Սա յերկուցունցն արժանացաւ, վասն զիմաստու-*

թեանն շնորհն խնդրելոյ, որ աղբիւրն է ամենայն բարութեան, եւ ուսեալ եղեւ յԱստուծոյ առանց վաստակոց: 4 Եւ զոր աւրինակ հայր սորա՝ Դաւիթ պետութեան հոգի ընկալաւ, այսինքն՝ թագաւորութեան, եւ վասն առաւել յորդութեան շնորհացն՝ ընկալաւ եւ հոգի մարգարէութեան, որով եւ մարգարէանայր իսկ: 5 Այսպէս եւ Սողոմոն իմաստուն հոգի ընկալեալ յԱստուծոյ, խառնեցաւ ընդ նմին եւ հոգի մարգարէութեան, որ եւ յոլովակի իրաւք զխորհուրդ տնաւրէնութեանն Քրիստոսի նշանակէ՝ առակաւք եւ աւրինակաւք յայտնելով զնոյն: 6 Վասն որոյ եւ գիրք սորա Առակք կոչի: 7 Եւ զի ամենայն առակքն այլապէս ձեւանայ, եւ ոչ յայտնէ առ տեղեաւն զցուցումն ճշմարտութեանն, քանզի ո՛չ նոյն է զաւրութիւն բանին եւ առակին, այլ այլ է զաւրութիւն առակին, եւ այլ ստուգութիւն ճշմարտութեանն: 8 Զի եւ այսու եցոյց Սողոմոն զաւրինակն Քրիստոսի յինքեան, որ բազում ինչ առակաւք խաւսէր ի քարոզութիւն Աւետարանին. մանանխոյ, եւ խմորոյ եւ վաճառականի, եւ մարգարտի, եւ ուռկանի նմանեցուցանելով զարքայ|364բ|ութիւնն (տե՛ս Մտթ. ԺԳ. 31, 33, 45-47), եւ այլ բազում իրաւք նշանակելով:

Դ. 1 Եւ ահա տեսանեմք, զի ա՛յլ է միտք եւ տեսութիւն իրացն, եւ ա՛յլ ասացելոց անուանցն կերպարանք: 3 Զի թէ պարզ տեսութեանն իմանամք, զիա՞րդ նմանեալ լիցի արքայութիւնն երկնից հատոյ մանանեխոյ, որոյ այնքան ընդարձակութիւն մեծութեանն, որոյ արքայութեան թագաւոր Աստուած Հայր եւ Աստուած Բանն Որդի Նորա Միածին, եւ Սուրբ Հոգին Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ, յորում բնակեալ են հրեշտակք եւ հրեշտակապետք, եւ ամենայն երկնային զաւրութիւնքն՝ Աբրահամ, Իսահակ, Յակոբ եւ ամենայն մարգարէք եւ արդարք: 3 Նոյնպէս եւ զայլսն իմասցիս առակաւոր բանս:

Ե. 1 Նոյնպէս եւ որ յԱւետարանս եւ յամենայն Սուրբ Գիրս, յաղագս Որդւոյ զանազան անուանս առակաւ կոչեցաւ. ճանապարհ եւ դուռն, սիւն եւ ամբ, առիւծ եւ գառն, ճրագ եւ ղամբար, եւ արեգակն եւ հրեշտակ վէ՛մ եւ քար, եւ եզն նաեւ որդն եւ այլ անուանս նուաստականս (տե՛ս Մտթ. Է. 14, ԻԱ. 42-44, Յվհ. Ժ. 7-9, ԺԴ. 6, Եր Ժ. 21-22, ԺԴ. 24): 2 Բայց ա՛յլ է զաւրութիւն մտացն եւ տեսութեանցն, որք յայտնի են քննասիրացն: 3 Ճանապարհ կոչի, զի նովաւ գնամք յարքայութիւն նորա: 1 Եւ դուռն, զի ընդ նմա մտանեմք առ Հայր: 5 Սիւն յաղագս հաւատոյս հաստատութեանն: 6 Վէմ՝ վասն անշարժութեանն: 7 Քար՝ յաղագս հիմնացեալ զաւրութեանն: 8 Արեգակն արդարութեան՝ վասն լուսաւորելոյն զա[մենայն]: 9 Ամպ՝ վասն անձրեւելոյն զցաւղ կենարար վարդապետութեանն: 10 Առիւծ՝ յաղագս թագաւորական ճոխութեանն: 11 Գառն՝ յաղագս պատարագելոյն: 12 Նոյնպէս յայտնի են եւ այլոց անուանցն տեսութիւն: 13 Այսպէս եւ սա՝ յաւրինակ փառաւոր վարդապետութեանն Քրիստոսի, առակաւք խաւսեցաւ ընդ աշակերտեալ մանկունսն:

ԼԴ.

|364բ| ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՑՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ. ԱՍԱՑՈՒԱԾԻ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՍ, ՅԱՂԱԳՍ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Երզնկացին իր ստեղծագործություններում հաճախ է անդրադառնում իրավունքի եւ արդարության խնդիրներին՝ գտնելով, որ ինչպես հոգեւոր, այնպես էլ աշխարհիկ շրջանակներում արդար իրավունքն է իշխանության, թագավորության եւ օրինականության հիմքը, մինչդեռ բռնությունը եւ հափշտակությունը տանում են դեպի կործանում:

Այդ իմաստով պատահական չէ, որ Աստվածաշնչային թեմաներին անդրադառնալիս, ամենից ավելի հաճախ է դիմում քրիստոնեության ամենասիրված հերոսներից՝ Դավիթ մարգարեին: Դավթի վարքը եւ գործունեությունը, ինչպես եւ մատաղ հասակը ամենից հարմարն էր մի կողմից մարդկանց մեջ ամրապնդելու քրիստոնեական հավատը, մյուս կողմից հայրենասիրության եւ իր ուժերի վրա հավատ ներշնչելու արդար գործի, արդար պայքարի հաղթանակի համար, որի լավագույն օրինակը պատանի Դավթի պայքարն էր Գողիաթի դեմ: Այս ճառը շարադրելիս Երզնկացու համար աղբյուր է հանդիսացել Հովան Ոսկեբերանի, Եփրեմի եւ Հիպոլիտի անունով մեզ հասած «Մեկնութիւն թագաւորութեան վասն Դաւթի...» շարադրանքը:

Բնագիրը հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 364բ-380բ) ձեռագրի, համեմատությամբ ՄՄ 2992 (Ձ. 188ա-200ա) օրինակի:

Ա. 1 |365ա| *«Եւ զղջացաւ Տէր, զի թագաւորեցոյց զՍաւուղ»* **(Ա. Թգ. ԺԵ. 35)**:

Բ. 1 *Աստուածային բնութիւնն պարզ է եւ անյաւդական եւ արտաքոյ այսպիսի կրից, որ ի մարդկային բնութիւնս գործի:* **2** *Արդ, յորժամ յաղագս Աստուծոյ ասեն գիրք զղջումն կամ ցանկութիւն, կամ բարկութիւն, մի՛ մարդկաբար այլ աստուածավայելչապէս իմասցիս, զի այսոքիկ աւտար են Աստուծոյ:* **3** *Վասն զի զղջումն ի տրտմելոյ եւ յապաշաւելոյ լինի:* **4** *Եւ տրտմութիւնք եւ ապաշաւանք վերջինք են, յաղագս այլոյ իրի երեւեալ ի մեզ սակս անգիտութեան, որ ո՛չ իմանամք զլինելոցն:* **5** *Իսկ Աստուած ո՛չ է իբրեւ զմարդ, որ ի սկզբանն եւ զկատարածն ո՛չ գիտէ:* **6** *Այլ Աստուած հաւասարապէս տեսանէ զլեալն եւ զլինելոցն:* **7** *Այլ զղջանալ եւ տրտմեալ ասի Աստուծոյ՝ ըստ Բ.ուց (2) յեղանակաց:* **8** *Մի՝ ըստ այնմ, որ ասաց Մովսես «Զղջացաւ Տէր, զի արար*[1] *մարդն ի վերայ երկրի»* **(Ծն. Զ. 6)**. *ո՛չ վասն առնելոյն զի արար, այլ զի ո՛չ եկաց յայնմ պատուի, զոր արար:* **9** *Զղջացաւ*[2]*, թէ յո՞ր բարձրութենէ յորքան նուաստութիւն էջ:* **10** *Իսկ*

---

[1] *Զ > այլ... արար*

[2] *Զ զղջացաւ այլ*

երկրորդն է, վասն զիջանելոյ ըստ մեզ, եւ մերովս վարիլ աւրինակաւ, ցոյց տալով մեզ, թէ տրտմեալ եւ զղջացեալ է վասն մեր։ 11 *Զի մեք տրտմեսցուք եւ զղջասցուք ի վերայ մեղացս մերոց, երկուցեալք՝ գուցէ տրտմիցի Աստուած ընդ բարի առնելն մեզ։*

Գ. 1 *Արդ, զի Սաւուղ, որ էառ զթագաւորութեանն պատիւ, ո՛չ պահեաց ի մտի զերկիւղս զայս եւ ոչ ուսաւ զգեղջ եւ զապաշաւ, այլ հեռացաւ ի նմանէ։* 2 *Վասն որոյ զղջացաւ Տէր, զի թագաւորեցոյց զՍաւուղ եւ ա՛ռ ի նմանէ զթագաւորականն շնորհ։* 3 *Գիտել արժան է, զի Յակոբ Յուդայի ետ զթագաւորութիւնն՝ հրամանաւ Տեառն։* 4 *Վասն է՞ր Սաւուղ թագաւորեաց ամս Խ. (40), փոխանակ Յուդայի, որ ո՛չ էր անկ նմա։ Յաղագս այսոցիկ պատճառաց։*

Դ. |365բ| 1 *Առաջին, զի յելանելն յԵգիպտոսէ եւ յանցանելն ընդ ծովն Կարմիր, մինչ Մովսէս խաչանիշ գաւազանաւն հերձեաց զծովն, եւ ջուրն բաժանեցաւ յաջմէ եւ յահեկէ, քանզի ահագին էր տեսիլն, եւ արհաւիրքն։* 2 *Եւ ի յԲԺ. (12) ցեղիցն ոչ ոք իշխեաց մտանել զհետ Մովսիսի ի ծովն, բայց միայն ցեղն Բենիամենի։* 3 *Եւ զայս թուի, թէ երկնաւոր պարգեւ ետ նոցա զթագաւորութիւնն, ըստ Պաւղոսի, թէ՝ «Նուազին առաւել պատիւ ետ Աստուած» (***Ա. Կրնթ. ԺԲ. 24***)։*

Ե. 1 *Եւ երկրորդ, վասն Աքարայ մեղացն։* 2 *Յորժամ եկն յերիքով Աքար Յուդայեան, գող գտաւ ի նզովից անտի (***տե՛ս Յեսու, Է. 1-26, Ա. Մնց. Բ. 7***), եւ Յեսու՝ որդի Նաւեայ բաժանեաց իւրաքանչիւր զվիճակս նոցա, ըստ ազգաց իւրեանց, եւ գտեալ պատժեաց զանցաւորն։* 3 *Եւ զի անյարմար է թագաւորականն զարմի գող գտանել եւ աւրինազանց, առաւ ի նոցանէ թագաւորականն գահ։*

Զ. 1 *Երրորդ, վասն զի յաղթահարեաց յուդայեան ցեղքն, եւ Դ. (4) քաղաքս յափշտակեցին յորդոցն Բենիամենի։* 2 *Վասն այնորիկ ընդ <միո> միոյ քաղաքի Ժ. (10) ամ փոխանակեաց, որ լինի Խ. (40) ամ. եւ այս ի տուգանս անիրաւութեան նոցա։* 3 *Զի իրաւունքն ի թագաւորական հանէ յաթոռ, իսկ յափշտակութիւնն ի սեպհական ժառանգութենէն զրկէ։*

Է. 1 *Չորրորդ պատճառ, վասն զի յուդայեան ցեղն խնդրեցին ի Սամուելէ թագաւոր, որպէս թագաւորքն հեթանոսաց, եւ զԱստուած արհամարհեցին, որ ի ձեռն Սամուէլի թագաւորէր ի վերայ նոցա։* 2 *Վասն այսորիկ ասէր Տէր ցՍամուէլ. «Ո՛չ զքեզ արհամարհեցին, այլ զիս թագաւորել ի վերայ նոցա» (***Ա. Թգ. Ը. 7***)։*

Ը. 1 *Եւ լուաւ Տէր եւ ետ նոցա կռփիչ զՍաւուղ եւ ոչ թագաւոր։* 2 *Եւ անարգեաց զցեղն Յուդայի, որ կամէին թագաւորել առանց հրամանին Աստուծոյ, եւ ի փոքր ցեղէն ետ նոցա թագաւոր, որոց ոչ գոյր ակնկալու-*

թիւն։ 3 |366ա| *Եւ չորս Ժ.ն (10) ներեաց Աստուած, վասն չորից պատճառանաց, եւ ապա ետ զթագաւորութիւնն Յուդայի։* 4 *Եւ ասէ Տէր ցՍամուէլ. «Մինչեւ յերբ սուգ ունիցիս ի վերայ Սաւուղայ։* 5 *Եւ ես անարգեցից զնա չթագաւորել ի վերայ Իսրայիղի» (Ա. Թգ. ԺԶ, 1), զի թէ ծնաւղքն մարմնոյ սուք առնուն ի վերայ ծննդոց մարմնով մեռելոց, որչա՞փ որ հարքն են հոգւոց, անմխիթար ունիցին սուգ ի վերայ անզղջապէս ի մեղս հոգւով մեռելոց եւ յազնուական պատուոյն յանարգութիւն անկելոց։* 6 *Վասն որոյ Աստուած մխիթարէ զսուգն Սամուէլի եւ ասէ. «Լի՛ց զեղջիւր քո իւղով եւ եկ առաքեցից զքեզ առ Յեսսէ մինչեւ ցԲեդղեհէմ, զի տեսի ես յորդւոցն նորա թագաւորել ինձ» (Ա. Թգ. ԺԶ, 1)։*

Թ. 1 *Ծածկեաց զանուն Դաւթի յաղագս երից պատճառի. նախ զի եղջիւրն յայտնեսցէ զնա զաւրութեամբ հոգւոյն, որ յեղն աւծութեանն, զի մի՛ մարդկային ընտրութեամբ լիցի, այլ աստուածային։* 2 *Ըստ այնմ՝ «Գտի զԴաւիթ՝ ծառայ իմ եւ եղով սրբով իմով աւծի զնա» (Սղմս. ՁԸ. 21)։* 3 *Եւ երկրորդն, զի ապրեցուսցէ զնա ի նախանձուէ եղբարց իւրոց, զի մի՛ կրեսցէ զայն, զոր կրեաց Յովսէփ յեղբարցն, վաճառեալ վասն թագաւորելոյն։* 4 *Նոյն երկիւղ էր եւ Դաւթի յիւր*[1] *եղբարցն։*

Ժ. 1 *Երրորդ, զի թէ հարցանիցի Սամուէլ ի Սաւուղէ՝ երդուիցէ եթէ ո՛չ գիտեմ զայրն, որ հանդերձեալն էր աւծանիլ։* 2 *«Եւ ասէ. Սամուէ՛լ, զիա՞րդ երթայց։* 3 *Եւ լուիցէ Սաւուղ եւ սպանցէ զիս։* 4 *Եւ ասէ տէր. Առ դու ինձ երինջ մի յարջառոց, եւ ասասցես՝ Զոհել Տեառն եկի, եւ կոչեսցես զՅեսսէ ի զոհն, եւ ցուցից քեզ զինչ առնիցես եւ աւծցես, զոր ես ասացից քեզ։* 5 *Եւ արար Սամուէլ որպ[էս] խաւսեցաւ ընդ նմա Տէր» (Ա. Թգ. ԺԶ. 2-4)։* 6 *Երկեաւ Սամուէլ երթալ, թէ գուցէ գի|366բ|տասցէ Սաւուղ եւ սպանցէ զնա, եւ զԴաւիթ եւ զամենայն տուն հաւր նորա։ Ետ նմա Աստուած պատճառս, զի զնա ի սպաննութենէն արգելցէ, եւ զԴաւիթ եւ զտուն Յեսսէի մահուանէս ապրեցուսցէ։*

ԺԱ. 1 *«Եւ եկն ի Բեդղէհէմ, եւ զարհուրեցան ծերք քաղաքին ի պատահել նմա, եւ ասեն. Խաղաղութիւն եմուտ քո տ[ու]ն, եւ ասէ. Խ[աղա]ղութիւն [է, զի] զոհել Տեառն եկի, սրբեցարուք եւ ուրախ լերուք ընդ իս այսաւր։* 2 *Եւ սրբեաց զՅեսսէ եւ զորդի նորա, եւ կոչեաց զնոսա ի զոհն» (Ա. Թգ. ԺԶ. 4-5)։* 3 *Վասն այնորիկ զարհուրին ծերք քաղաքին, զի իբրեւ տեսին զսայլն, զոր տարաւ ընդ իւր ծերակոյտն*[2] *Բեդղէհէմ ի գեղջ, զահի հարան։* 4 *Թուեցաւ նոցաւ, թէ սպաննումն ինչ գտաւ ի սահմանա-*

---

[1] *Ձ > յիւր*

[2] *Ձ > տեսին զսայլըն... ծերակոյտն*

կիցս նոցա։ 5 *Եւ եկեալ տեսանէ, զի ի ձեռն սայլին գիտասցէ, թէ*[1] *ի սահմանս որոյ գեղջ գտաւ, ասաց զճշմարիտ զրոյցն ընդ ծերակոյտն, որ հարցին զնա, եւ ած զնոսա ի պատարագն։* 6 *Եւ զի երկմտեցան ի բանէն, եցոյց նոցա արդեամբք զգործն եւ արտաքոյ քան զաւրէնս, հրամանաւ Տեառն մատոյց զպատարագն ի տեղի, ուր չէր համարձակ եւ արձակեաց զծերակոյտն։*

ԺԲ. 1 *«Եւ եղեւ ի մտանել նոցա ետես զԵղիաբ, եւ անց առաջի Տեառն, եւ ասէ Տէր ց[Ս]ամուէլ. Մի՛ հայիր ընդ տեսիլ դորա եւ մի՛ ընդ գեղեցկութիւն հասակի դորա, զի անարգեցի զդա, զի ո՛չ որպէս տեսանէ մարդ*[2] *տեսանէ Աստուած։* 2 *Մարդ յերեսս հայի, իսկ Աստուած՝ ի սիրտն»։* 3 *Եւ կոչեաց Յեսսէ զԱմինադաբ եւ անց առաջի Սամուէլի, եւ ասէ. «Եւ ոչ զդա ընտրեաց տէր»։* 4 *Եւ անցոյց Յեսսէ զեւթնեսին զորդիսն իւր։ Եւ ասէ Սամուէլ. «Ո՛չ ի դոցանէ ընտրեաց Տէր» (Ա. Թգ. ԺԶ. 6-10)։* 6 *Եկն Սամուէլ եղջերբ եղով առ Յեսսէ, եւ ասէ. «Առաքեաց զիս Աստուած* |367ա| *առնել թագաւոր զմի յորդոց քոց»։*

ԺԳ. 1 *Եւ Յեսսէ կարծեաց պատեհագոյն զառաջինն։* 2 *Եւ ասէ Սամուէլ. «Ո՛չ հաճեցաւ Աստուած ընդ նմա զերկրորդն, զերրորդն, զչորրորդն, զհինգեր<ր>որդն, եւ խնդրելին ո՛չ գտանի»։* 3 *Ասաց Աստուած ց[Ս]ամուէլ, թէ՝ «Ա՛ւծ զմի յորդոցն Յեսսէայ», բայց ո՛չ ասաց, թէ զով աւծցէ նա, այլ ասէ՝ «Յոյր վերայ տեսանիցես նշան, նա է»։* 4 *Արդ՝ ունէր նա զեւղ սրուակին, զի եղջիւր եւղոյն ի ձեռին իւրում Սամուէլ, իբրեւ սկսան որդիքն Յեսսեայ անցանել առաջի, ոչինչ ետես նշան։* 5 *Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. «Առաքեա՛ եւ կոչեա զնա, զի ոչ բազմեսցուք մինչեւ ի գալ նորա այսր» (Ա. Թգ. ԺԶ. 11)։* 6 *Եւ առաքեաց եւ կոչեաց զնա։* 7 *Մի ոք զմանուկ պախարակեսցէ եւ զծեր գովեսցէ, յոլովք ի մանկութեանն իմաստութիւն ցուցին, եւ ի ծերութեան ընկճեցան, զի երեք մանկունքն զհուրն իբրեւ զկաւ կոխեցին, եւ Դանիէլ ԲԺ.ան (12) ամեայ զառիւծն ոչխար արար, զգազանութիւն նոցա հաւատով սանձեաց, եւ ընդ ժողովս եբրայեցւոցն վիճէր։* 8 *Եւ Պաւղոսի մանկութեանն զեկեղեցիսն կողոպտէր եւ ի ծերութեանն հաստատէր հաւատով։* 9 *Թէ իցես փոյթ առաքինութեան, ո՛չ վնասէ զքեզ տարաժամ հասակն, ապա թէ պղերք՝ ո՛չ աւգնեսցեն քեզ սպիտակ հերքն։* 10 *Եւ առաքեաց Յեսսէ եւ կոչեաց զԴաւիթ։*

ԺԴ. 1 *«Եւ նա էր կարմիր եւ աչաւք գեղեցիկ, եւ բարիոք տեսանելեաւ Տեառն» (Ա. Թգ. ԺԶ. 12)։* 2 *Դաւիթ բազում իրաւք աւրինակ էր Քրիստոսի*

---

[1] *Զ > եւ եկեալ... թէ*
[2] *Զ > տեսանէ... մարդ*

խարտեաշ, այսինքն՝ կարմիր եւ սպիտակ։ 3 *Սպիտակութիւնն զաստուածութիւնն նշանակէ, իսկ կարմրութիւնն զմարդեղութիւնն, զի հաւասարեաց մարմնոյ եւ արեան, զոր եւ միացոյց ընդ իւրում աստուածութեանն, որպէս Սողոմոն ասէ. «Եղբ|367բ|աւրորդին իմ կարմիր է եւ սպիտակ, ընդրեա՛լ ի բիւրուց» (***Երգ. Ե. 10***)։* 4 *Եւ գեղեցիկ էր աչաւք, զի աչքն հայելի եւ պատկեր է հոգւոյ եւ յամենայն հայեացս շարժմանն զոգոյն ցուցանէ կերպարան։* 5 *Վասն որոյ գեղեցկութիւն աչացն զհոգւոյն երեւեցուցանէր զծածուկ գեղեցկութիւնն։* 6 *Բարիոք է տեսանելովն Տեառն։* 7 *Եւ զի որ բարիոքն ետես զնա վկայէ. «Գտի զԴաւիթ որդի [Յեսսեայ] այր ըստ [սրտի Իմոյ] որ ար[ասցէ] զամենայն կ[ամս իմ]» (**Գրծ. ԺԳ. 22**)։* 8 *Այսինքն՝ թէ որպէս ի սրտէ իմէ եւ յէութենէ ծնայ զորդի, ըստ այնմ, թէ՝ «Բղխեսցես ի զբան քո բարի» (**տե՛ս Սղմս. ԽԴ. 2**)։* 9 *Նոյնպէս եւ Դաւիթ, ըստ սրտի իմում կատարիչ կամաց իմոց շնորհաւք որդիացեալ։*

ԺԵ. 1 *Արդ, զոր արդիւաք զսորայս գովեցից յառաջագոյն զգործոցն առաքինութիւն, եթէ զբանիցն մարգարէութիւն, երկոքումբք ընտրեալ, մարգարէացեալ բանիւք զհանդերձեալսն, եւ գործովք նմանեալ Քրիստոսի, արդ, ո՞վ ո՛չ երանեսցէ զարդար հայրապետսն, որք ոչ բանիւ միայն զլինելոցն քարոզեցին մարդկան, այլեւ գործովք, ըստ աւետարանին Քրիստոսի՝ չարչարեալ կատարեցան։* 2 *Իմասցուք, որ յառաջագոյն երանելին Դաւիթ աւրինակ Քրիստոսի եղեւ, եւ յետոյ առ Փրկիչն կատարեցաւ, եւ շնորհաւք առաքելոցն եկեղեցւոյ սրբոյ տուաւ։* 3 *Եւ ասէ Տէր ցՍամուիէլ «Արի, ա՛[ւ]ծ զդա, զի դա է բարի, եւ զի բնութիւն բարի Աստուած է»։* 4 *Եւ արդ, որ բարեացն ամենայնի է սկզբնատիպ եւ աղբեւր, վկայ է, թէ «արի աւծ զդա, զի դա՛ է բարի»։*

ԺԶ. 1 *Եւ ստուգապէս, կերպարան ճշմարիտ բարոյն՝ բարի էր Դաւիթ ախորժականաւք բարուցն, քաղաքավարութեամբ կենացն, ընտրութեամբ գործոցն։* 2 *Զի այս Դաւիթ մանուկ էր փոքր, յաննշան հաւրէ, ի քաղաքաց փախչէր եւ յամբոխ|368ա|ից, եւ յանապատի զիմաստութիւնն ցուցանէր, եւ ոչինչ հաղորդութիւն ընդ կենցաղս ունէր, այլ յառաջին հասակին դաստիարակ էր առաքինութեան, հէզութեան կենակից լինէր, իբրեւ ի նաւահանկստի նստելով խաղաղութեանն, զհովուականն ընտրեալ զգործ, ոչխարացն խնամ տանէր։* 3 *Գթութեամբ տածելով զանբանսն՝ ի թագաւորութիւն մարդկան վարժեցաւ, տղայ հասակաւ՝ ալեւոր մտաւք եւ տղայութիւնն ո՛չ խափանեաց զառաքինութիւնն։*

ԺԷ. 1 *«Եւ առ Սամուէլ զեղջիւր իւղոյն եւ աւծ զԴաւիթ ի մէջ եղբարց իւրոց։* 2 *Եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յաւրէ յայնմանէ եւ [առ] յապա» (**Ա. Թգ. ԺԶ. 13**)։* 3 *Իսկ իբրեւ եմուտ Դաւիթ, եռաց ի վերայ եղջեր*

եղոյն եւ խաղաց Հոգին եւ եւղն ի միասին ի վերայ Դաւթի։ 4 *Եկն Դաւիթ գտեալ զիւղն՝ աւծաւ հրամանաւ Աստուծոյ։* 5 *Մարդոյ սպասաւորութիւն եդ զեւղն ի վերայ նորա, փոխանակ ծիրանեաց։* 6 *Եւ գնաց Դաւիթ ունելով զթագաւորութիւն՝ ոչ զրահս, ո՛չ տէգս, ոչ վահան, այլ զկամս Աստուծոյ, զաւրաւոր քան զամենայն։*

ԺԸ. 1 *Արդ, այս Բ. (2) աւծմունք լինէին յերանելոյն Սամուէլէ. մի՛ ի վերայ Սաւուղայ, երկրորդ՝ ի վերայ Դաւթի։* 2 *Եւ Սաւուղ աւծանի համարձակութեամբ ո՛չ իբրեւ արժանի Աստուծոյ ընտրեալ, այլ իբրեւ մարդկան անցելոց զաւրինաւքն, եւ թագաւոր խնդրելոյ իբրեւ զհեթանոսս, զի պաշտեսցեն կուռս։* 3 *Եւ բարկացաւ Տէր եւ ետ զնա նոցա կռփիչ, որպէս երբեմն Հերովդէս յանցաւոր աւրինաց մարդկան մեղաւորաց թագաւորեաց։* 4 *Եւ Դաւիթ աւծանի գաղտ ի Բեդղէհէմ, երկնաւոր թագաւորն ծնանել ի զաւակէ նորա*[1]*։* 5 *Եւ սա գաղտ աւծաւ, որպէս եւ Քրիստոս ի Հաւրէն աւծեալ* |368բ|*, եւ ո՛չ յայտնի, ըստ ասելոյն, «Աւծ զքեզ Աստուած՝ Աստուած քո, որ գաղտ եւ ծածուկ յաշխարհի երեւեցաւ»։* 6 *Իսկ ասելն՝ «Ա՛ռ Սամուէլ զսրուակ իւղոյն եւ եհեղ ի գլուխն Սաւուղի, եւ վասն Դաւթի ասէ. «Առ Սամուէլ զեղջիւր եղոյն եւ աւծ զնա ի մէջ եղբարց իւրոյ»։* 7 *Արդ, սրուակն զապակեղէն եւ զխեցեղէն անաւթ, եւ զդիւրաբէկ նշանակէ եւ զանաճն, իսկ եղջիւրն՝ զհաստատունն, զզաւրաւորն, զաճողականն։* 8 *Վասն որոյ Սաւուղ եղջերբ խեցեղինաւ աւծաւ, վասն զի վայր*[2] *լինելոց էր թագաւորութիւն նորա եւ դիւրաւ փշրելոց։* 9 *Իսկ Դաւիթ հզաւր եղջիւրաւ աւծաւ, յառաջագոյն նշանակեալ մարգարէին, զայն, որ փառաւոր եղջերբն զյաղթութիւնն յարուցանել կարող էր ի վերայ մահու, որպէս ինքն իսկ Դաւիթ ասէ. «Փրկեա՛յ յեղջիւրէ միեղջիւրուի զխոնարհութիւն իմ»* (**Սղմս. ԻԱ. 22**)*։* 10 *Զորոյ կատարեալ Հայր զխնդիրն ասէ Դաւթաւ. «Անդ ծագեցից եղջիւր զԴաւիթ»* (**հմմտ. Եզկ. ԻԹ. 21**)*։* 11 *Եւ Մովսէս յաւրհնութիւնսն ասէ. «Անդրանիկ ցլու գեղ նորա, եւ եղջերք միեղջիւրուի ի վերայ նորայ»* (**Բ. Օր. ԼԳ. 17**)*։* 12 *Եւ Յոբ ասէ, թէ «Կամեցաւ քեզ միեղջիւրուն ծառայել եւ հանկչել առ մսուրս քո»* (**Յոբ ԼԹ. 9**)*։*

ԺԹ. 1 *Վասն այնորիկ Տէր հրաման տայր Սամուէլի. «Լի՛ց զեղջիւր քո ձիթով եւ եկ առաքեմ զքեզ ի Բեդղէհէմ, զի տեսի ես յորդոցն Յեսսեայ թագաւորել ի վերայ ժողովրդեան իմոյ»։* 2 *Յառաջագոյն ցուցանէ մարգարէին զլինելոցն, իսկ ի գալն Դաւթի յայտնութիւն եղեւ ի վերայ Սամուէլի։* 3 *«Սա է աւծեալն»։* 4 *Եռաց եղջիւր իւղոյն, իբրեւ աւծ։* 5 *Եւ յա-*

---

[1] *Զ նմանէ] զաւակէ նորա*
[2] *Զ > վայր*

րեաւ Սամուէլ գնաց Յարեմաթէմ։ 6 *Եւ հոգի Տեառն վերացաւ ի Սաւուղայ, եւ խեղդէր զնա այս չար* |369ա| *ի Տեառնէ։* 7 *Եւ ասեն ցնա ծառայք Սաւուղայ. «Ահա այս չար ի Տեառնէ խեղդէ զքեզ։* 8 *Խաւսեսցին ծառայք քո առաջի քո եւ խնդրեսցեն Տեառն մերում այր մի, որ գիտիցէ երգել քնարաւ եւ լիցի հասանել ի վերայ քո այսոյն չարի, որ յԱստուծոյ երգեսցէ քնարաւ, եւ դիւր լիցի քեզ եւ հանկուսցէ զքեզ»։* 9 *Եւ ասէ Սաւուղ ցծառայս իւր. «Տեսէք ինձ այր մի, որ բարիոք երգիցէ, եւ ածէք զնա առ իս»։ Պատասխանի ետ մի ոմն ի մանկտոյ նորա եւ ասէ. «Ահա տեսի զորդի Յեսսէէ զբեղղահեմացի, եւ գիտէ սաղմոս, եւ այր իմաստուն եւ պատերազմող, եւ այլ հանճարեղ եւ ճարտարաբան, եւ այր գեղեց[ի]կ տեսլեամբ, եւ Տէր ընդ նմա»* (**Ա. Թգ. ԺԶ. 15-18**)*, եւ այլն ըստ կարգի։*

Ի. 1 *Հեռացաւ ապա Հոգին Սուրբ ի Սաւուղայ, վասն անուղղագնացութեանցն։* 2 *Եւ ունէր զնա ոգի չար ի Տեառնէ, եւ այն յիրաւի։* 2 *Վասն զի պարտ էր զանցաւորն աւրինաց հրեշտակի յանցաւորի մատնել, եւ զընտրեալն ըստ սրտի Աստուծոյ զԴաւիթ Երկնաւորաւ զարդարեալ, որում կարաւտացաւ Սաւուղ բժշկութեանն երկնաւորի։* 3 *Եւ արդ պատանին, որ ի մանկտոյն Սաւուղի, որ վկայեաց իմաստութեանն Դաւթի, ոչ յիւրմէ հմտութենէ խաւսեցաւ զայն, այլ շարժեալ ի հոգւոյն, փոքր բանիւ ներբողեալ գովեաց զամենայն գեղեցկութիւն նորա, զհոգւոյ եւ զմարմնոյ մասանց եւ զգործ նոցին։* 4 *Եւ զի ասաց, թէ գիտէ սաղմոս, ո՛չ յայլմէ ուսեալ եւ ոչ մարդկային վարժապետութեամբ վարժեալ, այլ աստուածային հոգւոյն սկիզբն սաղմոսերգութեանն յանդաստանս մտաց նորա սերմանեալ եւ ի ծայրս լեզուի նորա ծաղկեալ,* |369բ| *ի շնորհէ շրթանցն, եւ շարժմանէ ձեռինն, քաղցր պտուղ ընդ տիեզերս տարածեալ, եւ յետ մեծի եւ առաջի մարգարէին Մովսիսի գրելոյն զաւրէնս։*

ԻԱ. 1 *Երկ[ր]որդ, զհետ նորին գրով սաղմոսացս երգ ի սմանէ մարդկան եղեւ աւանդեալ։* 2 *Մովսէս հրամանաւն Աստուծոյ շինէ զխորանն, կարգէ եւս զդասս քահանայիցն, եւ ուսոյց զաւրէնսն պաշտել նոքաւք զԱստուած զոհիւքն եւ պատարագաւք։* 3 *Բայց թերի էր առանց բանաւոր երգոց պաշտաման։* 4 *Տայ Աստուած Դաւթի անդէն ի մանկական հասակին երգել զսաղմոսս յանմեղ հասակին, արածել զգառինս անմեղս, եւ երգել զհրեշտակական երգս սուրբս եւ երգ սաղմոսացս, որին խառնեցաւ իբր զիմանալի հոգի ընդ զէնումն զոհիցն, որպէս ի նիւթական մարմնի, զի քաղցր եւ ախորժելի երաժշտական երգովքն զոգիս մարդկան սէրն Աստուծոյ տրամադրեսցէ։* 5 *Իսկ ասելով Այր իմաստուն, գովէ զառաքինութիւն բանի նորա՝ զխոհականութիւնն, զի առաքինութիւն բանին խոհեմութիւն է, եւ պտուղ խոհեմութեանն՝ իմաստութիւն։* 6 *Ասելով Պա-*

տերազմող, եցոյց զարիութիւնն, որ առաքինութիւն ցասմնականին է, որով վանէր զբնական գազանս ներքին, եւ մարտնչէր ընդ արտաքինսն, եւ յաղթեաց զգազանագէմն Գողիադ։ 7 *Իսկ հանճարեղ ասե[լ]ն ծանոյց զհնարագիտութիւն նորա յերեւեալ ի բան, իբր բնակարան գոլ զնա ճարտարապետին ամենայն հանճարոյ Հոգւոյն Սրբոյ։* 8 *Եւ ճարտարաբան ասել, եցոյց զար|370ա|տաբերական բանի նորա կարգաւորութիւն եւ զպայծառ եւ զանսղալ շարադրական յարմարութիւն։* 9 *Եւ այս յա՛յտ է, որով յատեանն արքունական ի մէջ բազմամբոխ պատերազմող*[1] *զաւրացն ճարտարաբանեալ խաւսէր։* 10 *Եւ այր գեղեցիկ տեսլեամբ ասելով, զչափակցութիւն անդամոցն եւ զգեղազարդութիւն գունոյ, զուարթահայեաց դիմացն, որ ի բերկրութենէ սուրբ սրտի, եւ զհամեղութիւն*[2] *հայեցուածուն, եւ զշնորհաւոր շարժումն անձին նշանակէ։* 11 *Իսկ ասելն, թէ Տէր ընդ նմա, զգերագոյն գլուխն եւ զգագաթն ամենայն գովութեան, անհամեմատ եւ անհաս եւ անբաղդատելի բանի ցուցանէ, զի թէ Տէրն եւ Արարիչ բոլորից էիցն ընդ նմա է, զի՞նչ թերութիւն փառաց կամ նուազութիւն բարեաց գտանի։*

ԻԲ. 1 *Արդ յայսպիսի գովութեանց շարժեալ ի յիղձս բաղձանաց, Սաւուղ առաքէ առ Յեսսէ։* 2 *Եւ խնդրեաց զԴաւիթ, եւ կայր առաջի նորա, եւ նուագէր ձեռամբ զքնարն եւ հանկուցանէր զՍաւուղ, եւ մեկնէր ի նմանէ այսն չար։* 3 *Բայց Սաւուղ չար նախանձով լցեալ՝ խորհէր սպանանել զնա։*

ԻԳ. 1 *Արդ, հանճարասէր մտաւք քննեսցուք զիմաստ խորին խորհրդոյս, թէ զիա՞րդ Դաւիթ քնարաւն իւրով հալածէր զչար այսն ի Սաւուղայ։* 2 *Եւ զայսոսիկ տեսցուք բնականապէս եւ մտաւորաբար։* 3 *Վասն զի բնական է յարմարութեանն ի բաց բառնալ զանյարմարութիւն, որպէս ի քնարական լարիցն յարմարութիւն այսոքիկ տեսանեն. յաւդաւորութիւն ձայնի՛ զանյաւդաւորութիւն եւ ի շարախառնութիւն տարերց մարմնոյ։* 4 *Հաւասարութիւնն, որ առողջութեանն է ընդ|370բ|ունակ, զանհաւասարութիւնն՝ հիւանդարար։* 5 *Այսպէս Դաւիթ ի յարմարութիւն եւ յարդարակշիռ հաւասարութիւն ունելով զմասունս հոգւոյն եւ զշարժումն զգայութեան մարմնոյն, յարմարութեամբ ձայնի իւրոյ քնարին ի բաց հալածէր զչար այսն զանյարմարութեանն եւ զանհաւասարութեան գտաւղն, որ եւ յայնպիսիսն բնակեալ հանկչի։* 6 *Իսկ մտաւորն ունի մեծ խորհրդոյ աւրինակ, զի Սաւուղ բերէ զնմանութիւն չար հոգւոյն, որ եւ ի նմա բնակէր, եւ Դաւիթ՝ զմարդկային բնութեանս, որ զշնորհն Աստուծոյ ընկալաւ, եւ զտեղի նոցա*

---

[1] *Ջ > պատերազմող*
[2] *Ջ զհհամաւորութիւն*

ժառանկէր։ 7 *Զի, զոր աւրինակ, Սաւուղ յԱստուծոյ ի թագաւորական պատիւ աւծաւ, եւ զի յաւրինաց նորա խոտորեցաւ, ի թագաւորական փառացն խոտեցաւ եւ դիւաց բնակարան գտաւ։* 8 *Իսկ Դաւիթ յանարգ եւ ի հովուական գործոյ կամաւք Աստուծոյ աւծաւ, եւ զհոգին Աստուծոյ ընկալաւ։*

ԻԴ. 1 *Այսպէս եւ սատանայ արարած Աստուծոյ էր եւ ի պարս հրեշտակաց, հակառակ Աստուծոյ եղեւ եւ ի փառացն կործանեցաւ, որպէս Սաւուղ՝ ի թագաւորութենէն։* 2 *Իսկ մարդկային բնութիւնս յանարգ նիւթոյ կամաւն Աստուծոյ ստեղծաւ, եւ փչմամբ հոգւոյն Աստուծոյ աւծաւ, եւ պատկեր Աստուծոյ եւ թագաւոր յերկրի կոչեցաւ։* 3 *Եւ որպէս Սաւուղ զԴաւիթ հալածէր, զոր եւ տարապարտ ի յաւծմանէ մինչեւ առ յապա, այսպէս եւ սատանայ զբնութիւնս ի ստեղծմանէ մինչ ի վաղճան հալածէ։* 4 *Եւ որպէս Դաւիթ ոչ ընդ Սաւուղ պատերազմէր, այլ ընդ այսն չար, որ ի նմա, այսպէս եւ մարդիկ ոչինչ ունին պատերազմել ընդ սատանայի, այլ ընդ չար խորհուրդսն, որ ի նմա, զոր սերմանէ յանմեղ բնութիւնս եւ տարապարտուց եւ զուր հալածէ։* 5 *Եւ ապա, զ|371ա|կնի այնորիկ Գողիադ զաւուրս Խ. (40) արձանանայր, ախոյեան խնդրելով յԻսրայէլէ։* 6 *Նշանակէ Գողիադ զսատանայ եւ Դաւիթ զՔրիստոս, որ աւուրս Խ.ունս (40) փորձեալ ի սատանայէ, եւ զգետնեց զնա։* 7 *«Եւ ժողովեցին այլ ազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ եւ գումարեցան ի Սոկքով Հրէաստանի։ Եւ Սաւուղ եւ արք իւր ժողովեցան ի հովիտսն»* (**Ա. Թգ. ԺԷ. 1, 3**)։

ԻԵ. 1 *Արդ, նախ տեսցուք զպատճառս պատերազմի այլազգեացն ընդ որդիսն Իսրայիղի՝ ըստ տեղւոյն, եւ ապա զմիտսն քննեսցուք։* 2 *Վասն զի եհան Աստուած զորդիսն Իսրայիղի յԵգիպտոսէ եւ ետ նոցա ի ժառանկութիւն զՊաղեստինէ, ուր բնակեալ էին Ժ. (10) ազգ քանանացւոց, եւ Յեսու ջնջեաց զնոսա յերկրէն եւ բնակեցոյց զԻսրայէլ։* 3 *Իսկ շուրջ զգաւառաւն Հրէաստանի մնացին Ե. (5) քաղաք այլազգեացն, որք պատերազմէին ընդ նոսա հանապազ, ոխս ի սրտի ունելով, վասն ժառանգելոյ նոցա զերկիրն։* 4 *Արդ, այն ամենայն, որ անցանէր ընդ որդիսն Իսրայիղի, աւրինակ էր, եւ ըստ Պաւղոսի գրեցաւ ի մեր վարդապետութիւն, զի ազգ քանանացւոցն նշանակէին զազգս դիւացն։* 5 *Եւ որպէս եհան Աստուած զայլազգիսն ի Հրէաստանէ, եւ ետ զերկիրն որդւոցն Իսրայիղի, զի փոխեաց յԵգիպտոսէ, նոյնպէս մերժեաց զդեւսն յերկնային կայանիցն եւ փառացն եւ ետ զտեղի նոցա՝ զերկնային երկիրն աւետեաց ի ժառանկութիւն որդւոց Ադամայ։* 6 *Եւ որպէս այլազգիքն, թշնամութիւն ունելով պատերազմէին ընդ Իսրայիղի, նոյնպէս եւ դեւքն, ոխս ունելով ընդ մարդկան ազգի, միշտ մարտ եւ հակառակութիւն ունին ընդ նոսա։* 7 *Եւ զի ի*

գալն Դաւթի[1] *ի բանակն խռովեցան այլազգի*|371բ|*քն եւ խնդրէին զպատերազմն, նշանակելով զայն, որ ի Դաւթէ գալոցն էր Փրկիչ աշխարհի, եւ զարմացեալ վասն անուան նորա ազգ անհաւատիցն յարուցին հալածանս ի վերայ սրբոցն*[2]*:* 8 *Եւ Բ. (2) լերինքն ցուցեալ նշանակեն զերկուս կտակարանս. Մինն, որ աւրինաւքն էր, եւ երկրորդն՝ որ բանիւ, որ է բնական աւրէնքն:* 9 *Եւ գրաւորն էր*[3] *հրէական ազգին, եւ բնականն ամենայն հեթանոսաց:* 10 *Եւ տափարակ էր ի մէջ երկուց լերանցն:* 11 *Տապարակ ասի հեշտութիւն կենցաղոյս եւ վայելչութիւն զգալեացս, զի այնու ցուցցէ զխաբեութիւն եւ զցանկութիւն աշխարհիս այսորիկ, յորում ոմանք արիացեալ յաղթեն:* 12 *Եւ այլք ցանկացան լաւութեան՝ եւ կորնչին:*

ԻՁ. 1 *Եւ զի ասաց «Ել այր ի բանակէ այլազգեացն Գողիադ անուն նորա»* (**Ա. Թգ. ԺԷ. 4**)*:* 2 *Զայս նշանակէր, զի սատանայ, որ այլազգաւքն գործէր զիւր կամսն, եւ զնոսա զգեցեալ իբրեւ զզէն պատերազմել ընդ Իսրայիղի, նա*[4] *իսկ ի դիւացն գնդէն յառաջի մատչի պատերազմել ընդ աշխարհ, արհամարհելով զսուրբս եւ նախատելով զթլփատեալն:* 3 *Վասն այսորիկ պարծեցեալ ասէր. «Ոչ ես այլազգի եմ եւ դուք եբրայեցիք Սաւուղայ»* (**Ա. Թգ. ԺԷ. 8**)*, զի եւ սատանայ յայտնի արհամարհեալ, է անհաւատ եւ աւտար աստուածպաշտութենէ եւ այլազգ եղել, քան որ ի ստեղծմանէ, այսինքն՝ ի բարոյ չար լեալ եւ կոչեցեալ:* 4 *Վասն որոյ Գողիադ իւրոյ անճոռնի հասակին բարձրութեանն չափով, եւ ամրակուռ զինուն նիւթով եւ կշռոյ ծանրութեամբ զսատանայի բերէր կերպարան, զի նովաւ զայն, որ ի նմա ազդէրն, գիտասցուք:* 5 *Եւ զի ասաց զերկայնութիւն նորա ի Զ. (6) կանկնոց եւ թգաւ, զի որ* |372ա| *ի Զ. (6) երեկին ստեղծաւ մարդն, եւ Զ. (6) աւրեայ արարածոցս իշխան կարգեցաւ, ընդ նմա դիմամարտեալ պարտեաց վեցակի շարժմամբ, իսկ թգաւն, զի յաւել բարձրացաւ հպարտութեամբ, եւ դէմ Աստուծոյ ի մարտ մտեալ, ընդ որում՝ իբրեւ Ադամայ հնոյն մարդոյ մարտուցեալ որպէս յԱստուծոյ կործանեալ*[5] *յաղխթեցաւ:* 6 *Եւ զի ասաց, թէ զրահ շղխթայաձեւ էր զգեցեալ, յայտնապէս եցոյց նա զաւձին ծակն, յոր բունեալն էր, եւ զնորա բազմամեքենայ խայթոցսն, եւ զյոքնակի ցանկութիւն շարժմունսն:* 7 *Եւ զ ԵՃ. (500) սկեղ կշռոյ զզրահ նորա անուանեաց, վասն զի Ե. (5) դարս ի թիւս Ե. (5) հազար ամաց եւ ի Ե. (5) հարիւրից, որ ի վեցերորդ դարուն մինչեւ*

---

[1] *Զ թագաւորին] դաւթի*
[2] *Զ սրբոյն*
[3] *Զ > էր*
[4] *Զ նախ*
[5] *Զ որպէ կործանեալ*

ի գալուստ Փրկչին, խրոխտայր նա դիմամարտեալ ընդ մարդկային բնութիւնս։ 8 *Եւ որպէս ի գալ Դաւթի՝ Գողիադ սատակեցաւ, նոյնպէս եւ ի գալստեան Բանին Աստուծոյ բանսարկուն զաւրաւքն իւրովք կործանեցաւ, եւ գլուխ աւձին հատեալ փշրեցաւ։*

ԻԷ. 1 *Էր Գողիադու սաղաւարտն պղնձի ի վերայ գլխոյ իւրոյ, եւ սռնապանքն պղնձիք ի վերայ կարթուց նորա, եւ վահան պղնձի՝ ի վերայ թիկանց նորա, որ եւ զյանդգնութիւն նորա եւ զահաւորութիւն ցուցանէր, ազգի ազգի զինուք զարդարեալ եւ աւտար մարդ, եւ ոչ որպէս ի սկզբանէ ստեղծաւ յաշխարհի երեւեսցի։* 2 *Արդ, սաղաւարտն պղնձի ցուցանէ, զի որպէս սուրբքն ոսկեղէն հաւատոյ մաքրութեամբ եւ առ Աստուած յուսովն զգլուխն՝ որ տեղի սգայարանաց ամրածածուկ պսակեն, այսպէս եւ չարն զոսկոյն նմանութիւն կերպարանէ զպղինձ, զժահահոտ պղծութիւն եւ զառ ի յԱստուծոյ հայհոյութիւնն* |372բ| *եդեալ ի գլուխ ծածկոյթ սաղաւարտի եւ վահան պղնձի ի վերայ թիկանց նորա, զբոլորակաձեւ եւ ամենայն աշխարհի ժողով յինք ըմբռնեալ, որպէս եւ Յոհաննէս ասէր. «Եթէ աշխարհ ամենայն ի չարի կայ»* (**Ա. Յվհ. Ե. 19**)։

ԻԸ. *«Եւ նիզակ նորա էր իբր զստոր ի ոստայնանգաց»* (**Ա. Թգ. ԺԷ. 7**)։ 2 *Որ ոստայնանգաց ասէ, եթէ ոչ այնոցիկ, որ զսնոտիս խորհին եւ սատանայի հաւատան, որպէս Եսայի ասէ, եթէ՝ «Ոստայն նոցա ոչ եղիցի հանդերձ*[1]*, քան զի ոստայն սարդի անգանեն, եւ ոչ զգեցին զգործս*[2] *ձեռաց իւրեանց, քանզի գործք նոցա գործք են անաւրէնութիւն»* (**Եսյ. Ծ. 5-6**)։ 3 *Եւ զի ասաց հազար սկեղ զգեղարդն նորա՝ կատարեալ թվովն, եցոյց եթէ հանդերձեալ է գալ մոլարն, եւ Քրիստոս զինքն*[3] *անուանէ, որ է ինքն Նեռնն։* 4 *Սա հպարտացեալ սրտիւ, եւ միայն ի զէն իւր յուսացեալ, եկաց ի մէջ բանակին, գոչեա՛ց եւ ասէ. «Տուք ինձ այր մի, որ ելցէ ինձ նահատակ եւ պատերազմեսցուք երկոքեան»* (**Ա. Թգ. ԺԷ. 10**)։

ԻԹ. 1 *Տեսէք, սիրելիք, զի աւտար է բանն եւ լի ազդեցութեամբ սատանայի, զի ասաց եթէ նահատակեսցուք, այս է մենամարտեսցուք։* 2 *Եցոյց այսու, եթէ որ այժմ լինին յաշխարհի տեսիլք, ոչ այլ իւիք լինին, այլ այնու, որ ի սկզբանէն, որ ի Կայէն ազդեցոյց*[4] *եւ զեղբայրն իւր՝ զԱբէլ սպան։* 3 *Եւ յառաջ յաշխարհի սպաննումն վասն նախանձու եւ ագահութեան եգիտ։* 4 *Եւ այժմ նովաւ Գողիադ զԴաւիթ նախատեաց եւ զամենայն ժողովուրդն արհամարհեաց։* 5 *Վասն որոյ Սաւուղայ տեսեալ զզէն*

---

[1] *Ջ հանդերձս ձեռաց իւրեանց*
[2] *Ջ> հանդերձ... զգործս*
[3] *Ջ> զինքն*
[4] *Ջ դարձուած՝ որ կայենի ազգդեցոյց*

նորա եւ զյանդգնութիւնն, եւ զհասակին մեծութիւնն, եւ զմեծապանծ ուսեալ, երկեաւ եւ ահաբեկեցաւ սրտիւ, որպէս եւ ի սատանայէ վատասիրտք երկնչին, եւ ոչ քա|373ա|ջքն հաւատով։ **6** *Եւ յիրաւի, պարտ էր Սաւուղայ յերկիւղէ յաղթահարիլ, որպէսզի երանելին Դաւիթ փառաւորեսցի, եւ նովաւ պատերազմ վճարեսցի, որպէս եւ Քրիստոսիւ մերն դիմամարտ յաղթահարեսցի, քանզի ամենեցուն յաղթէր վիշապն, եւ զամենեսեան դիւրաւ ըմբռնէր, եւ զամենեսեան կենդանւոյն վանէր։* **7** *Վասն այսորիկ Գողիադով գոչէր եւ ասէր. «Տո՛ւք ինձ այր մի եւ նահատակեսցուք երկոքեան», վասն զի ո՛չ գտանէր ոք, որ հաւասարէր զինու նորա։*

Լ. **1** *Եւ զի՞ ասաց, «Տո՛ւք*[1] *ինձ այր մի եւ մենամարտեսցուք», եւ ոչ ոք գտանէր, որպէս եւ սատանայ խնդրէր յամենայն բնութիւնս մարդկան այր մի, որ զբնական առաքինութեանն զէն ունիցի, զոր ի ստեղծման եդ Աստուած եւ ոչ ոք գտաւ, զի թէպէտ գոյին ոմանք արդարք, այլ դատակնիք նախահաւրն ի վերայ ամենայն որդոց իւրոց գտանէր։* **2** *Եւ որպէս յորդոցն Իսրայիղի, ոչ այլ ոք կարաց ելանել ախոեան ընդդէմ Գողիադու, մինչ եկն Դաւիթ, նոյնպէս յամենայն որդոց Ադամայ ոչ ոք կարաց յաղթել սատանայի մինչ եկն Տէրն, որ եղեւ որդի Դաւթի եւ Դաւիթ կոչեցաւ։* **3** *Եւ որպէս նախատէր Գողիադ զամենայն ժողովուրդն, մինչեւ յաղթեաց նմա Դաւիթ եւ եբարձ զնախատինս նորա յորդոցն Իսրայիղի։* **4** *Այսպէս եւ սատանայ նախատէր եւ արհամարհէր զորդիս Ադամայ, մինչեւ եկն Ստեղծաւղն Ադամայ եւ եղեւ որդի նորա եւ եբարձ զնախատինսն սատանայի ի մարդկանէ։* **5** *Արդ, այս ամենայնի եղեալ, ամենեցուն ահայ յաղթեալ, եւ մահու երկեղիւ ահա ըմբռնեալք։*

ԼԱ. **1** *Ասաց երանելին Դաւիթ ցՍաւուղ. «Մի՛ ահաբեկեսցի սիրտ Տեառն իմոյ եւ թագաւորի, զի ահա ընդդէմ նորա երթիցէ ծառայ քո եւ պատերազմեսցի ընդ այլազգոյն ընդ այնմիկ»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 32**)։ *|373բ| Եւ այս նշանակէր, զի մանկամբն որ ծնաւ ի զաւակէ Դաւթի, յաղթահարեսցի ամենայն զաւրութիւն թշնամոյն դիմադարձին մերոյ։* **2** *Եւ Սաւուղ մարդ երկնչոտ էր, վասն զի զմարդ խորհէր եւ զԲանին խորհուրդ ոչ իմանայր։* **3** *Վասն որոյ պատասխանեալ նմա ասէր. «Ոչ կարես երթալ ընդդէմ այլազգոյն այնորիկ, զի դու մանուկ ես նա այր գոռոզ եւ պատերազմող ի մանկութենէ իւրմէ»* (**Ա. Թգ. ԺԷ. 33**)։

ԼԲ. **1** *Տեսանե՞ս զիարդ յայտնապէս ուսուցանեն մեզ գիրք զճշմարտութիւնն։* **2** *Եւ զի ասաց ցնա, եցոյց զզաւրութիւն Բանին բնակութեանն ի նմա եւ զգաւազանին բղխելոյ յարմատոյ նորա եւ զգեղեցկածաղիկ տղա-*

---

[1] *Զ ասասցաք] ասաց տուք*

յացելոյ Բանին, որ է տղայ խարտեաշ եւ գեղեցիկ աչաւք, ունելով ի Հաւրէ զիշխանութիւն դատաւորութեան։ 3 *Փոքրիկ մարմնով տեսանելով եւ հոգւով մեծ իմանալով։* 4 *Եւ զայս խորհուրդ ո՛չ գիտելով Սաւուղ արգելոյր զնա, բանիւք խափանէր, ասելով, թէ՝ պատերազմող է ի մանկութենէ իւրմէ։* 5 *Եւ այսու զեղեալն եցոյց, քանզի որ ի սկզբանէ ընդ ամենեսեան պատերազմաւ մոլարն է, կործանեաց։* 6 *Եւ երկոքին որդիքն Յեսսեայ մեծամեծք երթեալ էին ի պատերազմ զհետ Սաւուղայ։* 7 *Եւ Դաւիթ յառաջագոյն գնացեալ էր ի Սաւուղայ՝ արածել զխաշինս հաւր իւրոյ ի Բեդղէհէմ։* 8 *«Եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ. Ա՛ռ դու զարդուս փոխնդոյս եւ զտաս նկանակ տար եղբարցն քոց»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 17**)։ 9 *Եւ կանխեաց Դաւիթ, ընդ առաւաւտն գնաց։* 10 *Եւ եկն ի բանակն, եւ զաւրն ելանէր ի ճակատն։* 10 *Եւ աղաղակեցին իսրայէլ[ացիք] եւ այլազգիքն յանդէպ միմեանց։* 11 *Եթող Դաւիթ զկարասին |374ա| ի ձեռն վանապանին, եւ գնաց ի ճակատն եւ եհարց զողջունէ զեղբարց։* 12 *Եւ ահա Գողիադ ելանէր եւ ի Գէթայ՝ ի կողմանէ այլազգեացն, եւ խաւսեցաւ ըստ առաջին բանիցն։* 13 *Եւ լուաւ Դաւիթ եւ Իսրայէլ զբանս այլազգոյն։* 14 *Եւ զարհուրեցաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայէլ։* 15 *Եւ ասէր Սաւուղ. «Եթէ իցէ այր, որ սպանանիցէ զնա, մեծացուսցէ զնա արքայ եւ զդուստր իւր տացէ նմա, եւ տուն նորա արասցէ ազատ ի մէջ Իսրայիղի»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 25**)։

ԼԴ. 1 *Եւ երթայր Դաւիթ տեսանել զփայլատակեալ պատերազմ։* 2 *Եւ յոլովք անկեալք ի սրոյ. հովիւն ի պատերազմի, եւ պատերազմողքն յուլացեալք եւ ո՛չ զձայն լսել կարէին. հովիւն որ ի լերինն եւ ի հովիտս յաղբերս շրջէր։* 3 *Եւ յիրաւի երկնչէր Սաւուղ, զի Դաւիթ փառաւորեսցի եւ պատերազմն յարդարեսցի։* 4 *Եւ խաւսեցաւ Դաւիթ ընդ արսն, որ շուրջ կային եւ ասէ. «Զի՞նչ առնիցէ այրն, որ սպանիցէ զնա»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 26**)։ 5 *Եւ իբրեւ լուաւ երէց եղբայր նորա, բարկացաւ ի վերայ նորա եւ ասէ. «Ընդէ՞ր բնաւ իջէր այսր, եւ յո՞յր ձեռն թողեր զսակաւ ոչխարսն։* 6 *Գիտեմ զհպարտութիւն քո, զի վասն տեսանելոյ զպատերազմս իջեր»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 25-29**)։ 7 *Որ ոչ էր հպարտութիւն, այլ հաւատք, ոչ ամբարհաւաճութիւն, այլ՝ երկեղածութիւն, վասն որոյ ոչ զրահս սգենոյր, այլ՝ հաւատս. ո՛չ հայէր ի նորա մեծութիւնն, որ ամային էր յԱստուծոյ։* 8 *Մեծ էր նաւն, այլ զնաւուղիղն ո՛չ ունէր, ո՛չ երկնչէր Դաւիթ ի նմանէ, զի թշնամի էր*[1] *Աստուծոյ, թէպէտ եւ զաւրաւոր էր, այլ ի վերուստ հրամանէն տկար էր։* 9 *Փոքր էր Դաւիթ եւ տկար, այլ մեծ էր Տէրն, տրուպ էր նաւն, այլ որ առաքեացն՝ զաւրաւոր էր։* 10 *Եւ ասէ եղբայրն. «Ընդէ՞ր իջեր այսր». ո՛վ նախանձ հուր անշէջ։*

ԼԴ. 1 *Զոր |374բ| աւրինակ ասրն զորթն ծնանի, որ ուտէ զնա, եւ ժանկ*

---

[1] *Զ > աստուծոյ... թշնամի էր*

զերկաթ, եւ որթն զփայտ ծնեալ ի նմանէ, նոյնպէս եւ նախանձ զնախանձոտն մաշէ եւ ընդում նախանձին պայծառագոյնս պատրաստեսցէ։ 2 *Այսպէս եւ Յովսէփ ատեցեալ յեղբարցն, ի ծառայութիւն ածեալ եղեն նմա, եւ Յովսէփ թագաւորեաց։* 3 *Եւ Դաւիթ ասէ. «Եւ արդ զի՞նչ արարի ոչ ապաքէն բանք են» (տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 29)։* 4 *Եւ զի՞նչ Դաւիթ իմաստուն այրն ասէր, եթէ տեսանելոյ աղագաւ զպատերազմս եկի, զի նախանձիս բան տեսէր եւ ոչ բարաւորութիւն եւ ո՛չ համբերեա։* 5 *Դարձաւ ի նմանէ ի միւս կողմն եւ խաւսեցաւ ընդ նմին բանիցն։* 6 *Եւ ետ նմա պատասխանի ժողովուրդն ըստ առաջին բանիցն։* 7 *Եւ լու եղեն բանքն Դաւթի առ Սաւուղ եւ առ զնա առ ի[նք]ն։* 8 *«Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ». Մի՛ անկցի սիրտ Տեառն իմոյ ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգոյն»։* 9 *Թագաւոր պակուցեա՛լ յերկիր նայեր։* 10 *Ասէ Դաւիթ. «Ընդէ՞ր տխրեցան դէմք Տեառն իմոյ, ո՞վ է նա, որ ոչ երթայց եւ ի բաց առիցց զգլուխ նորա»։* 11 *Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. «Դու մանուկ ես եւ նա պատերազմող այր ի մանկութենէ»։* 12 *Ասէ Դաւիթ. Մի՛ հայիր յերեւելիսս, այլ յիմանալին, մի՛ տեսանէր զի փոքրիկ եմ, այլ զի մեծ են իմաստքն։* 13 *[Սաւուղ] ըստ մարդկան խորհէր, եւ ո՛չ ըստ բանին Աստուծոյ իմանայր։* 14 *Դաւիթ տղայ էր խարտեաշ եւ գեղեցիկ աչաւք, փոքր էր մարմնով եւ մեծ էր հոգւով։*

Լե. 1 *Եւ Սաւուղ ասէ ցԴաւիթ. «Մանուկ ես դու։* 2 *Եւ նա այր պատերազմող ի մանկութենէ»։* 3 *Զի Գողիադ պատկեր էր այնմ, զոր Տէրն ասաց. «Նա ի սկզբանէ մարդասպան է» (Յվհ. Ը. 44), որ թիւնաւքն զնախաստեղծն յաստուածային փառացն մերկացոյց եւ Կայենի ուսոյց սպանութիւն, եւ զհսկայսն բորբոքեաց ցանկութեամբ կանանց, եւ զՔամ յորդորեց ծիծաղել զհայրն |375ա| եւ Յեսուաւ հալածել զՅակոբ եւ Յովսէփ ետ վաճառել, եւ փարաւոնիւ զժողովուրդն չարչարեաց եւ յանապատին պաշտել ետ զորթն եւ զայլս։* 4 *Եւ զԳողիադ պատերազմող յառաջ էած, զոր լուեալ Դաւթի ո՛չ երկեաւ սիրտ նորա։*

Լզ. 1 *«Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Արածէր ծառայ քո զխաշինս հաւր իւրոյ, եւ յոր*[1] *գայր առիւծ կամ արջ եւ առնոյր ոչխար, ելանէի զհետ նորա եւ հարկանէի զնա եւ կորզէի ի բերանոյ նորա, եւ թէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ սպանանէի զնա, եւ զառիւծ եւ զարջ սատակէր ծառայ քո» (Ա. Թգ. ԺԷ. 34-36)։ Ո՛ յերանելի եւ աստուածային ձայնին, որ ի բերանոյ Դաւթի։* 2 *Ո՛ Դաւի՛թ, ասա՛ ինձ, ո՞ր գիրք վկայեն քեզ վասն այդոցիկ եղելոյ ի քէն։* 3 *Գիտեմ, զի մարգարէանաս վասն Քրիստոսի եւ*

[1] *Զ յորժամ*

պատմես զանձին քո բնական գեղեցկութեամբ, զի զբարս եւ զբնութիւն քո ըստ ստեղծման Աստուծոյ ունիս, վասն որոյ եւ զոր պարծիսն, ոչ ստես, զի եկն ճշմարիտ Դաւիթն, որ ի քոյոյ զաւակէն սրբոյ կուսէն ծնաւ, որ հովուէ զոչխարս հաւր իւրոյ, եւ զմահ իբրեւ զառիւծ[1] *մեռոյց եւ զարջն, որ են մեղք աշխարհի՝ ջնջեաց, եւ զգայլն մոլար հալածեաց, եւ խաչիւն զգլուխ աւձին փշրեաց, եւ զբանաւոր ոչխարն ի բերանոյ դժոխոցն եհան*[2]*:* 4 *Այս են ասացեալքն ի քէն, զի մեք ծանիցուք զարդար հովիւն Քրիստոս եւ փառաւորեսցուք:* 5 *Այլ զի ամենայն ոք, որ զաւրանայ ի վերայ իւրոց անասնական ախտիցն եւ տիրէ նմա իշխանականաւն, նաեւ արտաքին գոռոզաց եւ գազանաց յաղթող երեւի, որպէս եւ Դաւիթ, որ ասէր առաջի Սաւուղի, թէ զառիւծ եւ զարջ կալեալ զփողիցն՝ սպանանէի, այսինքն՝ զցասումն եւ զցանկութիւն՝ զընտանի վնասիչ գազանսն:* 6 *Ոչ հաւատայր թագաւորն, հարկէր Դաւթի, ասելով զուղղութիւնն իւր:*

Լէ. 1 *Հար Դաւիթ զձեռն յանձին սպանանել զնա, զի գիտէր Դաւիթ զի ոչ մեռ|375բ|անիցի մինչեւ թագաւորեսցէ զաւրութեամբ Սուրբ Հոգւոյն, զոր ընկալաւ յաւծմանէն Սամուէլի:* 2 *«Եւ ասէ Սաւուղ, երթ եւ Տէր ընդ քեզ զձեռն»:* 3 *Եւ սգեցոյց Սաւուղ Դաւթի զվարապանակս իւր, եւ զսաղաւարտ, եւ զրահ եւ զամենայն կազմածն:* 4 *Եւ գթեաց Դաւիթ մի անգամ եւ երկիցս:* 5 *Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ոչ կամիմ երթալ սոքաւք, զի չե՛մ հմուտ:* 6 *Եւ հանին զայն ի նմանէ» (տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 37):* 7 *Եւ նմա զէն ո՛չ կամեցաւ առնուլ, վասն զի ո՛չ ներէր այնմ Աստուած, այլ զի մերկ յաղթեսցէ եւ մի ասասցէ թագաւորն, եթէ զէնքն իմ յաղթեցին:* 8 *Ընկենոյր զզէնն եւ զգենոյր զհաւատն, ելանէր մերկ եւ վառեալ հաւատով ելանէր հովիւ զինաւորն:* 9 *Ոչ էջ զենուն*[3] *Սաւուղայ ընդդէմ Գողիադու, զի ո՛չ էր փորձեալ եթէ նովաւ հաճեսցի Տէր աւգնել նմա:* 10 *Սաւուղ երկրաւոր զէն սգեցուցանէր նմա, որով ո՛չ էր սովորել, վասն այնորիկ ի բաց ընկեցեր զմարդկային գիւտ եւ առեր, զոր Աստուած քեզ պարգեւաց:* 11 *Ոչ սաղաւարտ ի գլուխ եդեալ, այլ ունիս զերկնաւոր յուսոյն փրկութիւն եւ պսակ անթառամ, որ պատրաստեալ կայ յերկինս, եւ զրահ՞ ո՛չ յերկաթեղէն շարիթ շխթայե՛լ, այլ զզրահն արդարութեան կրկնակի զգեցեալ զայն որ ըստ անձնական մասանցն է կարգաւորութիւն եւ որ ըստ քաղաքական հաւասար բաշխ[ե]ն ըստ*[4] *արժանաւորութեան:* 12 *Եւ վահան ամրութիւն*

---

[1] *Ջ զմահաբեր զառիւծն*
[2] *Ջ ազատեաց] եհան*
[3] *Ջ զենաւն*
[4] *Ջ > ըստ*

է զհաւատոյն շրջափակութիւն եւ զզաւրութիւն Հոգւոյ Սրբոյ, որով զնետս հրեղէն չարին շիջուցանես եւ ունիս զցուպն ի ձեռին քո, որ է խաչն Քրիստոսի, որ եւ զթագաւորութիւն եւ զքահանայութիւն նշանակէր:

ԼԸ. 1 *«Եւ ընտրեաց իւր Դաւիթ Ե. (5) քարինս ողորկս ի հեղեղատէն»* **(Ա. Թգ. ԺԷ. 40)**: **2** *Տէրն եւ որդի Դաւթի նշանակէ Ե. (5) սգայութեանս մեր, զոր միացոյց յիւրում աստուածութեանն, եւ մերով |376ա| մարմնովս մարտեաւ ընդ սատանայի եւ յաղթեաց:* **3** *Եւ հեղեղատն աւրինակ էր բնութեանս մերոյ, որ հեղեղեալ էաք մեղաւք ո՛չ բերելով զպտուղ առաքինութեանն:* **4** *Այլ եւ Տէրն զԵ. (5) գիրս աւրինացն, զոր ելից եւ կատարեաց եւ եդ յեկեղեցի, որով յաղթեսցուք թշնամոյն եւ զաւրասցուք զաւրութեամբ հոգւոյս:* **5** *Եւ եդ զնոսա ի հովական մախախին, որ է մարմինն Քրիստոսի, զոր առ ի մերմէ բնութենէս, զոր Աստուածաբանն ասէ, թէ՝ «մաշկեղէնն զգենու պատմուճան»* **(տե՛ս Յոան. Ա. 13)**, *«Եւ զպարսն ի ձեռին իւրում»՝ զպատուիրանս աւրինացն, եթէ՝ «Սիրեսցես զՏէր Աստուած քո»* **(Մտթ. ԻԲ. 37, Մրկ. ԺԲ. 30)**, *եւ զընկեր իբրեւ զանձն, զոր ելից եւ կատարեաց:* **6** *Այլ եւ զքաղցր կաթն սաղմոսերգութեանն, զոր եդ յեկեղեցի, որով կերակրին մանկունք՝ ծնեալք հոգեւորապէս եւ տարածմամբ բազկաց եւ բարբառով լեզուի միշտ հարկանեն զիմանալին Գողիադ:*

ԼԹ. 1 *«Իբրեւ հայեցաւ այլազգին եւ ետես զԴաւիթ առ ինքն»* **(տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 42)**: **2** *Բարիոք պատերազմ [էր] երանելի Դաւիթ, մեծագոյն՝ քան զԳողիադ, զաւրաւոր՝ քան զերկաթ եւ զպղինձ:* **3** *Ուստ՛ մեզ զհոգեւոր պատերազմ:* **4** *Եւ զի՞նչ կարող է երկրաւոր զէն առ երկնաւորն, ապականելիս՝ առ անապականն, մարդկային գիւտ առ ա՛յն, որ յԱստուծոյն քեզ պարգեւեալ է:* **5** *Վասն այսորիկ անհաւատին Գողիադու մերկ երեւէիր, այլ Աստուծոյ զաւրութեամբն փակեալ էիր յամենայն կողմանց հաւատով եւ երկեղիւն Աստուծոյ:* **6** *«Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. Մի՞թէ շուն իցեմ, զի ցպով եւ քարամբ գաս ի վերայ իմ:* **7** *Եւ ասէ Դաւիթ. Նա եւս վատթարագոյն, քան զշուն»* **(տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 43)**: **8** *Տեսանե՞ս, զի յայտնապէս խոստովանեցաւ Գողիադ բանիւք |376բ| շուն պեղծ շուն զինքն անուանելով, յորմէ Դաւիթ ո՛չ երկեաւ ի սպառնալեաց, ո՛չ ի շողալ զինուցն եւ ո՛չ ի մեծութենէ հասակին:* **9** *Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. «Դու գաս ի վերայ իմ սրով եւ գեղարդեամբ, եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զաւրութեանց ճակատուս Իսրայիլի:* **10** *Եւ փակեսցէ զքեզ Տէր ի ձեռս իմ, եւ սպանից զքեզ եւ բարձից զգլուխ քո ի քէն»* **(տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 45-46)**:

Խ. 1 *Զայս լուեալ Գողիադու իբրեւ զգազան մռնչէր, որոտայր ի յիւր զաւրութիւնն պանձացեալ եւ Դաւիթ իբրեւ զմանուկ արհամարհէր:* **2** *«Եւ այլազգին մերձեցաւ ընդդէմ Դաւթի»* **(տե՛ս Ա. Թգ. ԺԷ. 48)**, *եւ լցեալ բար-*

կութեամբ, յարձակեցաւ ի վերայ Դաւթի։ 3 *Գոչէր իբրեւ զառիւծ, որպէս թէ զերկաթի պարիսպ պատառել կամի եւ ոչ ընդ մարդոյ պատերազմել։* 4 *Վերացոյց եւ ընդ միմեանս եհար զզէնն՝ կոչելով զԴաւիթ։*

ԽԱ. 1 *Նոր իմն էր տեսիլն, եւ զինչ լինելոց էր ո՛չ գիտէին*[1] *Սաւուղ եւ զաւրքն։* 2 *Ո՛չ փոքրոյ էր ահն, զի տղայ տեսանէին առանց զինուց եւ ընդ այնպիսի այր պատերազմելով։* 3 *Եւ Դաւիթ ի սրտի իւրում աղաչէր զԱստուած, գիտելով եթէ ո՛չ սրով եւ աղեղամբ կեցուցանէ Տէր զյուսացեալս իւր։* 4 *«Եւ մերձեցաւ Դաւիթ եւ ընթացաւ ընդդէմ այլազգոյն ի պատերազմն։* 5 *Եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մախախն, եւ առ անտի քար մի եւ պարսաքարեաց, եւ եհար զճակատն՝ այլազգոյն*[2]*։* 6 *Եւ եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն այլազգոյն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր» (տե՛ս* **Ա. Թգ. ԺԷ. 48-49***)։*

ԽԲ. 1 *Ո՛վ սիրելիք, զարմանալի իմն եղեւ։* 2 *Պարտ է Գողիադու վիրաւորելոյ յորս այս անկանել ի շառաչմանէ քարին, եւ Գողիադ յերեսս անկեալ երկիր եպագ Բանին Աստուծոյ, որ էր ընդ Դաւթայ։* 3 *Զի զաւրութիւն Աստուծոյ անյաղթելի է՝ այս|377ա|ու երեւեսցի։*

ԽԳ. 1 *Եւ զաւրացաւ Դաւիթ, քան զայլազգին, պարսիւն եւ քարիւն. եւ սուր ոչ ունէր ի ձեռինն իւրում։* 2 *Ընթացաւ Դաւիթ, եւ հարաւ ի վերայ նորա։* 3 *Եւ իբրեւ եցոյց զիւր յաղթութիւնն, եւ զի սատանայ զկերակուրն զէն առեալ եհան զԱդամ ի դրախտէն, եւ զանդամս մարմնոյ զինեաց ընդդէմ հոգւոյն եւ սպան*[3] *մեղաւք։* 4 *Վասն որոյ եւ Քրիստոս պահեաց զաւուրս Խ.ունս (40) եւ քաղցին յաղթեաց սատանայի, ասելով՝ «Եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մտթ. Դ. 4, տե՛ս նաեւ Ղկ. Դ. 4)։* 5 *Եւ զանդամս մարմնոյ արարեալ զէն արդարութեան եւ իւր անմեղ մարմնոյն մահուամբն յաղթեաց մահու եւ զկեանս ի մարդիկ աղբիւրացոյց եւ խաչիւն ջախեաց զգլուխ վիշապին։* 6 *Այլ եւ զմաքսաւորս եւ զմեղաւորս, եւ զկռապաշտ թագաւորս, որ սուսեր էին սատանայի եւ զէն մահու*[4]*՝ հան Տէրն ի նմանէ եւ նոքաւք եհատ զգլուխ նորա՝ զամբարտաւանութիւն եւ զկռապաշտութիւն, որ գլուխ են ամենայն չարութեան։*

ԽԴ. 1 *«Իբրեւ տեսին այլազգիքն, թէ մեռաւ զաւրավար նոցա, փախեան» (*Ա. Թգ. ԺԷ. 51*)։* 2 *Իսկ Դաւիթ եւ որդիքն Իսրայիղի կոխէին զբանակս նոցա, որպէս Քրիստոս ասաց. «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զսատանայ եւ զամենայն զաւրութիւն նորա» (տե՛ս Ղկ. Ժ. 19)։* 3 *«Եւ Դա-*

---

[1] *Զ > զինչ... գիտեին*
[2] *Զ > այլազգոյն... այլազգոյն*
[3] *Զ > եւ սպան*
[4] *Զ ահու*

ւիթ եբեր զգլուխն Գոլիադուի բանակն Իսրայիղի» (**տե՛ս Ղկ. Ժ. 54**)։ 4 *Յայնժամ ի բարձունս համբարձեալ ասէ. «Այս բերան, որ խաւսէր զհայհոյութիւն ընդդէմ Աստուծոյ, այժմ պակասեալ է ի ձայնէ, այս լեզու, որ նախատէր զձեզ, այժմ կապեա՛լ է լռութեամբ, այս աչք, որ չարութեամբ նայէր ի ձեզ, այժմ կուրացեալ է ի լուսոյ խափան»։*

Խե. 1 *«Եւ իբրեւ ետես Սաւուղ զԴաւիթ, ասէ ցԱբեններ իշխան զաւրոյն. Մ՚յր որդի է պատանեակդ։* 2 *Ասէ Աբեն|377բ|եր. Մ՚չ գիտեմ։* 3 *Ասէ արքայ. Հարց՝ ո՞յր է պատանե[ա]կդ»* (**Ա. Թգ. ԺԷ. 55-56**)*, զի յառաջ, քան զպատերազմ, կապարճակիր էր նորա։* 11 *Եւ խաւսեցաւ ընդ նմա վասն արջոյն եւ առիւծուն։* 5 *Բայց ասեն ոմանք, թէ՝ իբրեւ առաքեաց զնա հայր իւր առ Սաւուղ, զառաջինն ի զգեստս պայծառ թագաւորութեան մեծայշուք եղեւ ի մտանելն իւրում, գեղեցկացաւ եւ զուարթացաւ կրկնապատիկ, որպէս էրն։* 6 *Իբրեւ դարձաւ նախ տուն հաւր իւրոյ, մերկացաւ զգեստն եւ զգեցաւ զբաճկոնն եւ զձորձս հովութեանն։* 7 *Եւ ցրտացան երեսք նորա յեղեմնախառն ցրտոյն, եւ եղեւ արեւակէզ ի տապոյ արեգականն, վասն այսորիկ ո՛չ գիտաց զնա Սաւուղ։* 8 *Եւ իբրեւ դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, եւ Աբեններ ած զնա առ Սաւուղ եւ գլուխ այլազգոյն ի ձեռին իւրում, եւ ասէ ցնա Սաւուղ. «Մ՚յր որդի ես մանուկ դու»* (**Ա. Թգ. ԺԷ. 57-58**)։ 9 *Գիտէր Սաւուղ եւ Աբեններ, զի թագաւորելոց իցէ Դաւիթ։* 10 *Կամեցաւ ուսանել, թէ յորմէ ազգէ է՝ յուդայեան իցէ, զի ի ժամանակացն Յակոբայ խոստացեալ էր, Զարեհէից է*[1] *թէ ի Փարայէ։* 11 *Ասէ Աբեններ. Մ՚չ գիտեմ։* 12 *Զի մեծ փութով կամէր գիտել զայս Սաւուղ։* 13 *Ասէ Դաւիթ. «Որդի Յեսսեայ Բեդղէմացոյ եմ ես»* (**Ա. Թգ. ԺԷ. 58**)։ 14 *Իբրեւ հարցին, ասաց զտուն հաւր իւրոյ, բայց զանուն ազգին իւրոյ ո՛չ յայտնեաց, զի մի գուցէ սպանցեն զնա։*

Խզ. *«Եւ ոգին Յովնաթանու կապեցաւ ընդ Դաւիթ, եւ սիրեաց զնա սրտիւ իւրով, եւ եհան զպատմուճանն եւ զգաւտի, եւ զզրահ եւ զսուսեր, եւ զաղեղն եւ ետ Դաւթի»* (**տե՛ս Ա. Թգ. ԺԸ. 1-4**)։ 2 *Եւ այն յիրաւի, զի զփառս եւ զպատիւ թագաւորութեանն տայ այն, որով վայելերն, եւ զի արժան էր ժողովրդեանն, որ զաւրէնսն գիտէին այնմ, որ ի Դաւթայ |378ա| ծնանելոց էր Քրիստոս, որ վասն մեր յաղթեաց պատերազմողին սատանայի, եւ մահ խափանեցաւ, վասն այնորիկ հանել զամենայն զփառս իւրեանց եւ տալ Քրիստոսի զքահանայութիւն եւ զթագաւորութիւն եւ զամենայն շնորհս աստիճանաց, որ ազատեաց զեկեղեցի եւ ետ նմա զամենայն եւ որ պարելով երգէ աւրհնութիւն Աստուծոյ։*

Խէ. 1 *«Եւ առ զնա Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ եւ ոչ ետ նմա դառ-*

---

[1] *Զ ի դարեհէից է*

նալ ի տուն հաւր իւրոյ» (**Ա. Թգ. ԺԸ. 2**)։ 2 *«Եւ կացոյց զնա Սաւուղ ի վերայ արանց պատերազմի եւ հաճոյ եղեւ առաջի աչաց ամենայն ժողովրդեան»* (**Ա. Թգ. ԺԸ. 5**)։ 3 *Եւ զի ասէ գիրք. «Ելին պարաւորք ընդառաջ Դաւթի, եւ ասէին. Եհար Դաւիթ զբիւրս եւ Սաւուղ զհազարս. չար թուեցաւ Սաւուղի»* (**Ա. Թգ. ԺԸ. 7-8**) *զի մեծացուցին զԴաւիթ, քան զնա։* 4 *Եւ ասէ Սաւուղ. Զոր ի Սամուելէ կամէի գիտել եւ ո՛չ յայտնեաց, ի ձեռն կանանց երգոցս գիտացի, որ երգեն իբրեւ թագաւորի, որ մեծ է, քան զընկեր իւր։* 5 *Եւ յայնմ աւրէ սկսաւ սակաւ մի ատել զնա Սաւուղ եւ յետ աւուրց վառեցաւ, այսինքն՝ եմուտ այս չար ի Սաւուղ, եւ մարգարէանայր, թէ Դաւիթ թագաւորէ։* 6 *Եւ ուստի՞ ունիցի հոգի չար զմարգարէութիւն լսելով լուաւ կամեցաւ ձգել զգեղարդն Դաւթի։* 7 *Շրջեցաւ Դաւիթ կրկին անգամ յաջ եւ յահեկ եւ ապրեցաւ։* 8 *Արդ, թէպէտ եւ յայսմ աւուր ո՛չ ձգեց ի նա զգեղարդն, արար զնա իւր փեսայ, զի արկցէ ի ձեռս այլազգեաց։*

ԽԸ. 1 *Ով Սաւուղ, զի՞նչ վնաս արար քեզ Դաւիթ. ո՞չ զքո թշնամին սպան։* 2 *Զի՞ նախանձիս ընդ արդարոյն, որ յԱստուծոյ պատուեցաւ եւ որ ի նմա յայնժամ կրէր, այժմ մարմնացեալ փառաւոր յերկինս ընդ Հաւր։* 3 *Թագաւոր ես դու հազարաց միայն, իսկ Քրիստոս երկնայնոցն եւ երկրայնոց։* 4 *Դու թագաւոր՝* |378բ| *մարդ ժամանակաւոր, իսկ Քրիստոս Թագաւոր յաւիտեանս յաւիտենից, որ էջն ի դժոխս եւ զամուրս նորա գերեաց։* 5 *Եւ որպէս Դաւիթ առաջի նորա զԳողիադ արար, նոյնպէս եւ Քրիստոս որպէս զառիւծ, որ պատրաստի յորս որսաց զսատանայ զվիշապն մեծ։* 6 *Զոր եւ Յոբ ասէ, թէ «զՅորդանանու վտակսն յակնայկապիճս իւր ընդունէր»* (**տե՛ս Յոբ Խ. 19**) *եւ ջրահեղցոյց առնէր զմանկունսն, ջախեաց զգլուխ նորա եւ սպան սուրբ մկրտութեամբն եւ ետ կոխան առաքելոցն, եւ խաղան նովաւ, որպէս ձագով մանկունք։*

ԽԹ. 1 *Ասաց Դաւիթ առ Աստուած ի ձեռն Գադայ շինել նմա տուն։* 2 *Եւ ո՛չ հրամայեաց նմա Տէր, զի պատերազմ բազում էր յաւուրս Դաւթի։* 3 *Եւ խնայեաց Տէր ի Դաւիթ եւ ոչ՝ որպէս ասեն ոմանք, թէ ոչ համարեցաւ*[1] *արժանի զԴաւիթ։* 4 *Եւ ասէ Տէր ցԴաւիթ. «Ո՛չ բնակեմ ես ի տան, յորմէ ելի ես յԵգիպտոսէ»* (**Բ. Թգ. Է. 6**)։ 5 *Այսինքն՝ թէ յայնժամ իբրեւ ի տան միում*[2] *եւ յանկեան ուրէք համարէին զԱստուած։* 6 *Իսկ այժմ, հերձանելով զծովն եւ այլաւք սքանչելաւք ծանեան, թէ ոչ է նա Աստուած միոյ կողմեան ուրէք, կամ տաճարի միոյ, զոր խորհիք շինել ինձ, որպէս եւ հեթանոսք, զի անդ միայն իցէ Աստուած եւ ոչ այլուր, այլ Նա յամենայն տեղիս։*

Ծ. 1 *Կաքաւէր Դաւիթ առաջի տապանակին յաւրինակ Յովաննու, որ*

---

[1] *Զ հրամայեցաւ*
[2] *Զ իմում*

խայտար յորովայնին, եւ Քրիստոսի երկրպագեաց, քանզի տապանակ աւրինակ Քրիստոսի էր եւ Ե. (5) գիրք կային ի նմա։ 2 *Իսկ Յովաննէս առաջի այնմ երթայր, որ Ե. (5) սգայութեամբ զարդարեալ էր։*

ԾԱ. 1 *Ուրիա Քետացի եւ կռապաշտ եւ Բերսաբէի ոչ տային թոյլ քահանայքն մտանել ի տաճարն, վասն Ուրիա Քետացւոյ։* 2 *Արդ, խորհեցաւ կինն այն*|379ա| *եւ կամեցաւ հաղորդել ընդ Դաւթի, զի ի պատճառս Դաւթի մտցէ նա ի մէջ ժողովրդեանն հրէից սրբոց։* 3 *Արդ, իբրեւ ետես զԴաւիթ, զի գնայր ի վերայ տանեացն, մերկաց զինքն ի պատճառս լուանալոյ իմիք, իբր այն թէ ո՛չ գիտէր Բեր[ս]աբէ զԴաւիթ եւ ոչ տեսեալ իսկ է նորա զնա։* 4 *Եւ իբրեւ կոչեցին զկինն զայն առ Դաւիթ, վաղվաղակի չոգաւ առ նա, զի աղաւթք իսկ կնոջն այն էր, զի կոչեսցի նա ի Դաւթայ։* 5 *Արդ, տե՛ս դու զդատաստանն Աստուծոյ, զի թէպէտ ի շնութիւն*[1] *կարծեցաւ, այլ կինն վասն հաղորդելոյ սրբութեան*[2] *էարկ զանձն իւր ի գործն յայն։* 6 *Եւ ահա, տե՛ս զարձանս նորա եւ զփոխարէնս, որ յԱստուծոյ, զի բազում կանայք էին Դաւթի եւ մի ոք ի նոցանէ ո՛չ թագաւորեաց, բայց միայն Սողոմոն, որդի Բերսաբէի, զի որ քննէ զսիրտս մարդկան, գիտաց զմիտս կնոջն եւ զայս հատոյց նմա։*

ԾԲ. 1 *Զառաջին ծնունդն Բերսաբէի, որ ի Դաւթայ էր, ո՛չ լուաւ Աստուած Դաւթի եւ ո՛չ ապրեցոյց։* 2 *Ընդէ՞ր. զի որդի պոռնկի էր շնութեան, եւ ո՛չ էր մարդ պոռնկորդոյն թագաւորել կամ մտանել ի տաճարն, կամ նստել ի մէջ ժողովրդոց, զի մի՛ ժողովն տեսեալ զայն՝ շրջեսցին ի պոռնկութիւն յաւրինակէ անտի թագաւոր շնացեալ եւ ծնունդն այն թագաւորել. վասն այսորիկ սպան զնա։* 3 *Իսկ յորժամ աւրինաւք առ կին զնա, ապրեցոյց զորդին, որ աւրհնութեամբ աւրինաց եւ քահանայից էր։* 4 *Արդ, դու Բ. (2) տես. Ա. (1)՝ զգործսն Բերսաբէի՝ լի սքանչելեաւք, զի յառաջ ամուլ էր առ Ուրիա Քետացոյ առն իւրում, եւ վարձանք խորհրդոց իւրոց տուաւ նմա յղութիւն։* 5 *Ահա եւ զայս Թամար արար, զի ցանկացեալ էր սուրբ զաւակին Աբրահամու, եւ ի կերպս* |379բ| *մեղաւոր կնոջ եղեալ, եդ զանձն ի մահ, եւ փոխանակ միոյ՝ Բ. (2) էառ զվարձս իւր։* 6 *Այսպէս եւ զկինն, զոր բամբասէր այր իւր եւ ածէր առ քահանայսն տալ նմա ջուր նզովել, զի սատակեսցի։* 7 *Արդ, եթէ ոչ լինէր յանցուցեալ կինն, փոխանակ զրպարտութեան նորա յղանայր, թէպէտ ամուլ էր եւ ծնանէր։*

ԾԳ. 1 *«Եւ արքայ Դաւիթ ծերացեալ էր եւ անցեալ զաւուրքք, եւ ծած-*

---

[1] *Զ իշխանութիւնն] ի շնութիւն*
[2] *Զ որբութեանն] սրբութեանն*

կէին զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր» (**Գ. Թգ. Ա. 1**)։ 2 *Ունէր ցուրտ ցաւ զԴաւիթ եւ պիտոյ եղեւ նմա աղջիկ մի կոյս եւ արիւնաշատ, զի ջեռուսցէ զնա։* 3 *Իսկ զի ոչինչ պիտոյ էր շնութիւն եւ ամուսնութիւն, վասն էր խնդրեցին զնա այլ բժիշկ, զայն խորհեցան, զի խնդրեսցեն զնա գեղեցիկ, զի սպաս կալցի Դաւթի։* 4 *Եւ Դաւիթ ի տեսանել զգեղոյնորա՝ տուփասցի եւ ցանկասցի, եւ ցրտութիւն ցուրտ ցաւոցն ջերմասցի ի տեսիլ երեսաց նորա։* 5 *Այլ Դաւիթ ոչ գիտաց զնա, որպէս եւ ո՛չ Յովսէփ զՄարիամ, զի պաշտպան եւ սպասաւոր էր նորա, եւ ո՛չ այր, եւ ո՛չ ջեռնոյր։* 6 *Արդ, հանդերձքն, յորմէ ո՛չ ջեռնոյր Դաւիթ, զտկարութիւն աւրինացն նշանակէր, զի զցրտացեալսն ի հաւատսն, որ կարանցին շիջուցանցել եւ կեցուցանել, որպէս յայնժամ զհանդերձքն զծերացեալ մարմինն Դաւթի։* 7 *Այլ թէ զի՞նչ նշանակէր կուսին գեղեցկութիւն ջեռուցանել զարքայ։* 8 *Աբիսագ Սոմնացի աւրինակ էր կուսին, որ նորա ծննդեամբն ցրտութիւն անհաւատութեան մարդկան հալածական եղեւ, եւ ճշմարիտ հաւատով եւ ջերմն սիրով եռացոյց զամեն* |380ա| *ի սէրն Աստուծոյ, ըստ այնմ «Եթէ եկի հուր արկանել յերկիր»* (**Ղկ. ԺԲ. 49**)։

ԾԴ. 1 *Ադոնիա՝ որդի Ագաթի, ասէ. «Ես թագաւորեցից»* (**տե՛ս Գ. Թգ. Ա. 5**)։ 1 *Ազդ եղեւ եւ Բերսաբէի՝ մաւրն Սողոմոնի։* 3 *Եւ խրատէ զնա Նաթան մարգարէ եւ անգանի առ առաջի արքայի պաղատանաւք, եւ ասէ. «Տէր արքայ, ո՛չ դու երդուար աղախնոյ քո եւ ասացեր, թէ Սողոմոն թագաւորեսցէ յետ իմ, եւ զի այն զի՞ է, զի Ադոնիայ թագաւորեալ է»* (**տե՛ս Գ. Թգ. Ա. 13**)։ 4 *Արդ, Բերսաբէ աւրինակ է եկեղեցւոյ, եւ Նաթան բերէ զդէմս աւրինացն եւ ամենայն մարգարէից։* 5 *Եւ որպէս Նաթան խրատէր զԲերսաբէ վասն թագաւորելոյն Սողոմոնի, այսպէս եւ ամենայն մարգարէքն խրատէին զեկեղեցի, զի աղաչեսցեն զՀայր վասն Քրիստոսի թագաւորելոյն, որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի։* 6 *Եւ որպէս Նաթան ընդ Բերսաբէի աղաչէր զարքայ, այսպէս եւ մարգարէքն ընդ եկեղեցւոյ աղաչէին զՀայր։* 7 *Եւ որպէս լուաւ արքայ աղաչանացն Բերսաբէի եւ Նաթանայ, հրաման տուեալ թագաւորեցուցանել զՍողոմոն, այսպէս Հայրն երկնաւոր լուեալ պաղատանաց եկեղեցւոյ, թագաւորեցոյց զՔրիստոս Փրկիչ աշխարհի։*

ԾԵ. 1 *Եւ Ադոնիա թագաւորեաց սակաւ ինչ աւուրս, որպէս եւ հրէայքն անհաւանք սակաւ ինչ ժամանակս*[1] *փայլեցին։* 2 *Եւ այն նշանակ է զսատանայ, որ առ ժամանակ մի եղեւ իշխան աշխարհի։* 3 *Եւ հեծուցին զՍողոմոն ի ջորոցն արքայի եւ իջուցին զնա ի Գեհոն, աւծանել թագաւոր*

[1] *Զ աւուրս] ժամանակս*

ի վերայ[1] *Իսրայիղի։* 4 *Եւ եթէ վասն էր ի ջորոջն հեծուցին զնա։* 5 *Վասն զի ջորի յերկուց բնութեանց է միաւորեալ։* 6 *Այսպէս եւ Քրիստոս նստաւ ի վերայ երկուց ժողովրդոց եւ ուղղեաց զերեսանակն ի վեր|380բ|ինն յԵրուսաղէմ։* 7 *Եւ Գեհոն քաղաք փոքրիկ նշանակէ զաշխարհս։* 8 *Առաքեալ յԵրուսաղէմ ի Գեհոն զՍողոմոն զՔրիստոսի առաքիլն ի ծոցոյ Հաւր եւ ի վերինն Երուսաղէմէ գալ ի ստինս յայս աշխարհ նշանակէ։* 9 *Եւ զԱդոնիայի բառնալ զթագաւորութիւն մեծին Սողոմոնի, որպէս Քրիստոս զսատանայի։* 10 *Եւ որպէս ըստ Սողոմոնի Քերեթին եւ Ոփելեթին, այսպէս ընդ Քրիստոսի առաքեալքն եւ մարգարէքն։* 11 *Եւ որպէս յայնժամ հնչեաց երկիրն, այսպէս եւ ի մտանելն Քրիստոսի յԵրուսաղէմ դղրդեցաւ քաղաքն ամենայն։* 12 *Եւ որպէս Սողոմոնի ի Գեհոն ընկալաւ զթագաւորութիւն, այսպէս եւ Քրիստոս յերկրի զքահանայութիւն եւ զմարգարէութիւն եւ թագաւորութիւն։* 13 *Եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։*

[1] *Ջ > ի վերայ*

ԼԵ.

|380բ| Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ՝ ՅԱՐՄԱՐԵԱԼ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՂՆԿԱԵՑՈՅ. ՍԱՂՄՈՍՆ Ի ԲԱՆՆ, ՈՐ ԱՍԷ. «ՊԱՏՈՒԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ՏԵԱՌՆ ՄԱՀ ՍՐԲՈՅ ԻՒՐՈՅ» (ՃԺԵ. 15)[1]

Քարոզի հիմնական նպատակը եկեղեցու սրբերի հեղինակությունն առավել բարձրացնելն ու հավատացյալներին իրենց կենցաղով ու գործունեությամբ նրանց նմանվել դրդելն է: Սակայն այն հանգամանքը, որ քարոզի վերնագրում Երզնկացին շեշտում է, թե ինքն ընդամենը ի մի է բերում խնդրի վերաբերյալ Սուրբ վարդապետների մեկնությունները, ինչպես եւ քարոզի բովանդակությունը հիմք են տալիս ենթադրելու, որ այն, բացի ընդհանուր քրիստոնեական բարոյական խրատ լինելուց, ուղղված է պաշտոնական եկեղցու սկզբունքներից շեղված աղանդավորների դեմ, որոնք ԺԳ. դարում եւս առկա էին՝ ինչպես Երզնկայում, այնպես էլ այլուր:

Դժվար է որոշակի ասել, թէ աղանդավորներն ի՛նչ էին քարոզում, սակայն ելնելով Երզնկացու հորդորներից, հնարավոր է դառնում որոշ կռահումներ անել: Այսպես՝ Երզնկացին զգուշացնում է, թե պետք չէ հին ժամանակների (նկատի ունի հեթանոսությունը) սովորույթի համաձայն որոշել, գարշելի եւ մեռելոտի համարել նախնյաց նշխարները, այլ՝ ցանկալի, քանզի սրբերի նշխարներին մերձենալը ոչ միայն սրբության առիթ է, այլեւ շատ մեծ եւ անեզրական պարգեւ: Ինքը՝ Երզնկացին, գործնականում իրականացրել է նշխարների նկատմամբ իր պաշտամունքը, երբ 1272 թ. Երզնկայի Թիլ ավանում հայտնաբերվում են Սուրբ Ներսես Պարթեւ հայրապետի նշխարները, այդ առթիվ գրել է իր չքնաղ ներբողը, ուր նշխարների գյուտը համարել է «նշան փրկության» հայոց եկեղեցու եւ պետականության:

Դատելով Երզնկացու բացատրություններից՝ աղանդավորների հիմնական դրույթներից մեկն էլ եղել է սրբերի եւ նահատակների նշխարներից խորշելը՝ այն պատճառաբանությամբ, թե նրանք Աստծո ընտրյալներ չեն, այլապես Աստված չէր կարող թույլ տալ նրանց տառապանքները:

Ըստ երեւույթին՝ աղանդավորներն այս շրջանում պայքարում էին ճգնությամբ մարմինը մեռցնելու դեմ: Հետաքրքիր է, որ Երզնկացին իր բազմաթիվ խրատներում մարմնին իրավունք է տալիս հոգու հետ համահունչ զարգացման, սակայն այստեղ, պատասխանելով ծայրահեղականներին, գրում է, որ եթե կամավոր կամ անձնիշխան մահը հանուն հավատի եւ Քրիստոսի սիրո է, ապա նրանց մահը ընդունելի եւ պատվական է:

Երզնկացու հաջորդ հորդորը եւս պատասխան է նրանց, ովքեր կարծում էին, թե պարտադիր չէ եկեղեցում աղոթելը, եւ մարդ կարող է առանձնացած հաղորդվել Աստծո հետ՝ որտեղ կամենա: Ավելին՝ վերջիններս հենվում

[1] *Խորագիրն ըստ ձեռ. 610 «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց», Ա յիշ. գրչի՝ «Ո՛յ Տէր, ես ծառայ քո եմ»:*

էին Տիրոջ այն խորհրդի վրա, թե աղոթելիս մտի՛ր քո սենյակը եւ դուռդ փակի՛ր, մինչդեռ Դավիթ մարգարեն հորդորում է աղոթել ժողովրդի հետ համատեղ: Բացատրելով, որ Տերը դա ասել է նրանց, ովքեր փառասիրական նկրտումներով եւ կեղծավորաբար էին աղոթում, մինչդեռ մարգարեն կոչ էր անում ճշմարիտ հավատացյալներին: Իր կողմից Երզնկացին հավելում է, որ «չկա ավելի քաղցր եւ օգտակար բան, քան այն, որ թագավորը զորականներով գնում է եկեղեցի եւ կցորդում է իր ժողովրդի հետ աղոթքն առ Աստված, քանզի ինչպես քարը քարին դիպչելով՝ կրակ է ծնվում, այդպես էլ ժողովրդական բազմությունները միմիանց միանալով՝ հոգեւոր սիրով են ջերմում:

Հրատարակվում է ՄՄ 2173 (Ա.՝ 380բ-394բ) եւ 610 (Մ՝ 94ա-102բ) ձեռագրերի համեմատությամբ:

Ա. 1 *Յերիս որոշեալ բաժանին հատուածք*[1] *ժամանակաց՝ յանցեալն, ի ներկա[յ]ս եւ յապառնին:* **2** *Եւ ոմանք ի գոյից եւ կէսք՝ յանգոյից ասեն լինել զգումարութիւն ժամանակաց:* **3** *Ի գոյից է, վասն զի շարժումն շրջագոյութեանն է երկնի, եւ ընթացք լուսաւորացդ ծնանին զժամանակ եւ զորս ի ժամանակի:* **4** *Եւ յանգոյից է, զի անցեալն ահա ապականեցաւ եւ ապառնին չէ ի միջի, եւ ներկայն անզգայաբար անցանէ:* **5** *Եւ վասն այնորիկ յերիս բաժանի, զի ամենայն ներգործութիւն եւ կիր կամ տակաւին լինին եւ նշանակեն զներկայ ժամանակն, եւ կամ կատարեալք են՝ նշանակէ զանցեալն, եւ կամ լինելոց են եւ նշանակէ զապառնին:*

Բ. 1 *Եւ արդ, անցեալն յիշողականին աւանդեցաւ առ ի գիտել, իսկ ն|381ա|երկային ի զգայութեան*[2] *լինին գործք եւ կիրք:* **2** *Իսկ ապագայն միայն հաւատոյ աչաց գոյ տեսանելի:* **3** *Այլ է բազում անկամ, զի մոռացումն տիրէ յիշողականին յաղագս անցելոյն, եւ կամ բնաւ անգիտելի գոյ, որպէս լինելութիւն արարածոցս, որ չէր ոք մաւտ, վասն այնորիկ հաւատոյն պէտք եղեւ առ ի գիտել:* **4** *Վասն որոյ մեծավանք*[3] *եւ աշխարհալուր փողն շնորհին Քրիստոսի Պաւղոս ասէ վասն անցելոյն, եթէ «Հաւատովք իմանամք զյաւիտեանս բանիւն Աստուծոյ յաներեւոյթից զերեւելիս եղեալ» (*Եբր. ԺԱ. 3*):* **5** *Իսկ վասն հանդերձելոյն ի Թուխթսն եբրայեցւոց գովէ զարդարսն առաջին զԱբրահամ եւ զիւրսն զժառանկակիցսն աւետեացն*[4]*, որք հաւատովն արդարացան*[5]*, որք եւ ակն ունէին հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է, եւ զի զայն գաւառ*

---

[1] *Մ հատածք*
[2] *Մ զգուշութիւն*
[3] *Մ մեծավանգ*
[4] *Մ> աւետեացն*
[5] *Մ> արդարացան*

խնդրէին, եւ զնա ի հեռուստ տեսին հաւատոյն[1] *աչաւք եւ ցանկացան նմա։* 6 *Վասն այնորիկ աւտարք եւ պանդուխտք զինքեանս խոստովանեցին յերկրի։* 7 *Նմանապէս*[2] *եւ Դաւիթ վասն հանդերձելոյ կենացն, որ յերկրին կենդանեաց, սրատես եղեալ հաւատոյն աչաւք, ասէ. «Հաւատ[ացի] տես[անել] զբար[ութիւն Տեառն] յերկիր [կենդանեաց]»* **(Սղմս. ԻՁ. 13***), վասն որոյ զաւրութիւն սաղմոսիս առաջի կայ մեզ ի քննութիւն։*

Գ. 1 *Եբրայեցին եւ ասորին զայս սաղմոսս եւ «Զսիրեցին» մի դնեն եւ զիններորդ սաղմոսն յերկուս հատանեն*[3]*, զի ի նոյն միտս յարին, եւ ունի զմակաբայեցոցն զհանդէս, որք յաղագս աւրինացն եւ աւրինադրին Աստուծոյ նահատակեալք համբերեցին։* 2 *Իսկ ի նորումս զվկայիցն Քրիստոսի նշանակէ զնահատ|381բ|ակութիւն, որք զանցաւոր կենցաղս ընդ յաւիտենականին փոխանակեցին նոցա Անտիոքոս Եպիփանես իւրովք զինուորաւքն մարտակից եւ սաստ*[4] *իմանալին Անտիոքոս չար թագաւորաւքն, վասն որոյ ասէ. «Հաւատացի զոր եւ խաւսեցայ»* **(Սղմս. ՃԺԵ. 10***)։*

Դ. 1 *Եւ զի՞նչ էր խաւսեցեալն, որում հաւատա։* 2 *Յառաջնումն սաղմոսին երիս սիրոյ խաւսեցաւ։* 3 *Առաջին՝ «Սիրեցի զՏէր յուսալով, զի լուիցէ զձայն աղաւթից իմոց»* **(Սղմս. ՃԺԴ. 1***)։* 4 *Երկրորդ՝ քաջալերելով խաւսեցաւ առ ինքն, թէ՝ «Դարձ անձն իմ ի հանկիստ քո, զոր Տէրն բարեգործեաց քեզ»* **(Սղմս. ՃԺԴ. 7***)։* 5 *Եւ երրորդ՝ «Հաւատամ տեսանել զբարութիւն, որ կայ եւ պահի մեզ յերկրին կենդանեաց»* **(Սղմս. ԻՁ. 13***)։*

Ե. 1 *Արդ, զոր անդ խաւսեցաւ ի սկիզբն սաղմոսի, ասէ. «Հաւատացի, զոր եւ խաւսեցայ», զի ասելովն «Դարձ անձն իմ ի հանկիստ քո», Բ. (2) իրս ցուցանէ. քաջալերէ զանձն իւր եւ մխիթարէ։* 2 *Քաջալերել յորդորէ ի մահն վասն անուանն Տեառն քաջապէս նահատակել եւ մխիթարէ զինքն ըստ նմանութեանն Պաւղոսի, որ ասէ*[5]*. «Զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի. այսուհետ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն»* **(Բ. Տմթ. Դ. 7***)։* 3 *Զնոյն եւ մարգարէս ասէ. «Դարձ անձն իմ ի հանկիստ քո», զի զերկարութիւն կենցաղոյս լցեր, այսուհետեւ դարձիր ի յաւիտենական հանկիստն յաւժարական կամաւք, որ պատրաստեալ է աւրինաւոր ճգնողացն, զոր Տէր բարեգործեաց քեզ շնորհ եւ պարգեւ եւ ո՛չ վճար պարտուց։* 4 *Վասն որոյ հանգիստ է սէրն եւ գիտութիւն Քրիստոսի շնորհին, յորժամ գիտէ ոք, թէ ո՛չ իւր արդարութեամբն, այլ Քրիստոսի արդարու|382ա|թեամբն փրկեցաք։* 5 *Եւ այսմ գիտողն հանկչի։*

---

[1] *Մ հոգոյն*

[2] *Մ նոյնպէս] նմանապէս*

[3] *Իրոք եբրայական եւ նրանից սերող ասորական կանոներում իններորդ սաղմոսը բաժանուած է երկու մասի, եւ երկրորդ մասը ներկայացուած է իբրեւ տասներորդ սաղմոս։*

[4] *Մ աստ*

[5] *Մ> հաւատացի զոր եւ խօսեցայ... պաւղոսի որ ասէ*

Զ. 1 *Եւ զի՞նչ կարգ բարեգործութեանն։* 2 *Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, որ ի կենցաղումս պաշարեալ էին։* 3 *Եւ եղեւ այս մահուամբն Քրիստոսի եւ ո՛չ իմով գործով։* 4 *Եւ զաչս իմ յարտասուաց, որ ի նեղութենէ վշտաց աստի ա՛նդ ժամանեալ, ուր ո՛չ է արտասուս խաւարեցուցիչ յուրախական փառացն տեսութենէ։* 5 *Զոտս ի գայթակղութենէ աստի կենացս, ուր բազում են վտանգ գլորման։* 6 *Հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց, զի ո՛չ է անդ հակառակ մարմնոյ ի վերայ յարուցումն, եւ ո՛չ ընտանեաց հոգաբարձութիւն, ոչ այլայլութիւն մարմնոյ, եւ ոչ խոտորումն խորհրդոց, եւ ո՛չ բարուց փոխադրութիւն։* 7 *Վասն որոյ երկիր է նա կենդանեաց, յորում ո՛չ է գիշեր քուն մահու եւ ո՛չ կերակուր եւ ըմբելի մահկանացու բնութեանս աւժանդակ։* 8 *Ոչ ցաւք հիւանդարարք եւ ոչ բժիշկական դեղք, ոչ արուեստք վաճառաշահութեան, որ պատճառք են պատերազմաց։* 9 *Եւ զի ո՛չ են մեռանելոց, այլ կան զճշմարիտ կեանս, վասն որոյ ի նոյն յարել ասէ. «Հաւատացի զոր եւ խաւսեցայ» յաղագս այսոցիկ, թէ գոյ երկիր կենդանեաց, որ ոչ մարմնոյ աչաց երեւի, այլ հաւատոյ ակամբ տեսանի։* 10 *Եւ «ես խոնարհ եղէ յոյժ», այսինքն՝ նուաստացայ յիմանալ կամ ի պատմել զանճառից կենացն, ըստ որում գրէ առաքեալ. «Ես ոչ համարիմ զանձն իմ, թէ հասեալ իցեմ»* (**Փլպ. Գ. 13**) *այլ միայն ի զարմացումն հիացման եղէ եւ ասացի, թէ ամենայն ոք, որ ոչ ի հաւատոյն աւժանդակի, այլ իւրով իմա|382բ|ստութեամբն հնարի հասու լինել, սո՛ւտ է եւ արտաքոյ ճշմարտութեանն, այլեւ՝ «Սուտ է ամենայն մարդ»* (**Սղմս. ՃԺԵ. 11**)*, այսինքն՝ ընդ մեղաւք, որ է ունայն եւ սուտ, որ մահուամբն Քրիստոսի արդարացաք եւ ո՛չ մերովք գործովք։*

Է. 1 *Վասն որոյ ասէ. «Զի՞նչ տաց տիրտուր Տեառն»* (**Սղմս. ՃԺԵ. 11**) *յոչ էից յիւրական փառսն ստեղծելոյն եւ ի նորում արարչութեանս փրկանս զինքն փոխանակ բազմաց տալոյն։* 2 *Եւ զի այնքան Մեծն եւ Անհասն զԻնքն ետ մեզ ի պաշտել եւ զարարածս ի վայելել, եւ հանդերձելոց բարեացն յուսով բերկրիլ։* 3 *Եւ ի վերայ այսր ամենայնի, զի տուր ետ մեզ Աստուած զիւր Միածնին մահն եւ նովաւ քաւեաց, որ աշխատութեամբ եւ ճգամբք ո՛չ կարէի։* 4 *Զինչ կշռեցիս փոխարէն, զի փրկեաց Իւրով արեամբն եւ արար Իւր անդամ, հրաւիրեաց յերկնային հանկիստն եւ յանմահական կեանսն։*

Ը. 1 *«Զինչ տաց տ[իրտուր Տեառն]։* 2 *Ոչ զոհս ըստ աւրինացն եւ ոչ նուէրս պատարագաց, այլ «զբաժակ փրկութեան ընկալայց»* (**Սղմս. ՃԺԵ. 13**) *որ է մահն։* 3 *Որպէս իմ Տէրն վասն իմ զբաժակ մահուն էարբ, նշան անպատմելի սիրոյն՝ որ առ մեզ, եւ ես զիս նմա պատարագեցից, զի ծարաւի եմ վկայութեանն կատարման, թէրեւս լիցի անբաւ բարեացն նորա փո-*

խարէնս մահուամբն իմ, զոր «բաժակ» կոչէ, որ է ամանն, որով գինին բաժանի, որ է մարմինս մեր ամանն մահու, որ ամենայնի տայ զբնականն, իսկ զսեփհական եւ զյաւժարական սէրն Աստուծոյ տայ, զի մահն հասարակաց է՝ անասնոց եւ մարդոյ, եւ զհասարակաց սեփհական առել կատարելոցն է։ 4 *Վասն որոյ փրկութեան ասէ բաժակ, զի Տէրն այնու փր|383ա|կեաց զտիեզերս՝ սիրովն մեր արբեալ, որպէս գինով չգրեաց ինչ զամենայն կիրս նախատանացն, ընկալայց ի ձեռացն Քրիստոսի, եւ արբից զնոյն բաժակ, զի որպէս նա, որ բաժակաւ զգինին ըմբէ, համեղութեամբն զմայլի, այսպէս եւ ես զմայլեցայ փրկագործութեամբ մահուն Քրիստոսի։*

Թ. 1 *Յայս բաժակէս արբեալ Առաքեալ ասէր. «Ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանիլն շահ» (***Փլպ. Ա. 21***)։* 2 *Աստի արբեալ Իգնատ[ի]ոս ցորեան լզինքն արկանէր Աստուծոյ յաղացումն ժանեաց գազանաց*[1]*։* 3 *Այսպէս ամենայն սուրբքն զմահուանն Քրիստոսի բաժակ փրկութեան արբեալ, մեռան ցանկութեանց աշխարհիս եւ եւ բորբոքեցան առ ի նա սիրովն եւ տուփմամբն։* 4 *Եւ զանուն Տեառն կարդացից, որպէս նա զՀաւր անունն «Զբաժակն, զոր ետ ինձ Հայր, ո՛չ արբից» (***Յվհ. ԺԸ. 11***) զի յանուն անաւթին եւ զգինին սովոր եմք կոչել բաժակ։* 5 *Եւ ես զանուն Տեառն կարդացի՝ փառաւորել վասն այսպիսի շնորհիս։*

Ժ. 1 *Զաղաւթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա։ Տէրն ետ ի խաչին. «Հա՛յր, մի՛ համարիր սոցա զայս մեղս» (***Ղկ. ԻԳ. 34***)։* 2 *Տային եւ սուրբքն առաջի ամենայնի, իբրեւ սուրբն Ստեփաննոս, Յակովբոս առաքեալ եւ բազումք ի սրբոց վկայիցն, զի այս պատարագ է։* 3 *Զնոյն եւ ես առաջի երկնաւորացն եւ երկրաւորաց ժողով տաց զայս գոհութեան աղաւթս պատարագ, զի ձրի անմեղացայ արեամբն Քրիստոսի։*

ԺԱ. 1 *Եւ զի՞նչ պտուղ այնպիսի յաւժարական սիրոյ, որ զբաժակ մահուն ըմբիցէ եւ աղաւթք Տեառն սպաննողացն մատուցանէ։* 2 *Զի «պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։* 3 *Ո՞ համառաւտ գովեստ ներբողական բանի, եւ զի՞նչ այլ ըղձալի մարդկան, քան զայնպիսի մահ, որ առաջի Աստուծոյ պատուական է։* 4 *Մի՛ դանդաղ|383բ|իք, ասէ, եւ դուք առ գեղեցիկ նահատակութիւնն, մի՛ զարհուրիք յերկեղէ մահուն, քանզի ոչ ապականութիւն է, այլ կենաց պատճառ եւ փոփոխումն ի փառս, վասն որոյ ասէ*[2]*. «Պատուական է առաջ[ի Տեառն մահ սրբոց իւրոց]»։*

---

[1] *Նկատի ունի Իգնատիոս Անտիոքացու է թղթի համապատասխան հատվածը։*
[2] *Ո՞ վասն որոյ ասէ*

ԺԲ. 1 *Յամենայն արարածս Աստուծոյ գոն պատուական եւ ազնիւ՝ ի հրեշտակս վերին դասք աթոռոցն, քերովբէիցն եւ սերովբէիցն. յերկինս*[1] *առաջինք են նոքա տեղեաւ եւ փառաք։* 2 *Յերկուս լուսաւորս, արեգակն՝ յաստեղս, արաւսեակն՝ ի չորից կողմանց արեւեալք, յերկրի՝ դրախտն, ի լերինս՝ Սինեայ եւ Թափաւր*[2]*, ի գետս՝ Յորդանան, ի յոսկին՝ արաբացոցն, ի յակունս՝ շափիւղայն եւ տպազիոնն, եւ ի*[3] *կանայս Մարիամ Աստուածածինն, եւ ի մարդ*[4]*՝ աստուածաբանն մարդացեալ։* 3 *Եւ ի յանարգ մահուանէ*[5]*՝ մահն, որ վասն*[6] *Աստուծոյ, որ քաղցրանայ դառնութիւն նորա ի սէրն Աստուծոյ, որպէս ասէ. «Պատու[ական է] առաջի Տեառն [մահ սրբոց իւրոց]»։*

ԺԳ. 1 *Մարդկան նախատինք եւ յիմարութիւն թուէր վկայիցն մահ*[7]*։* 2 *Բայց քննել արժան է, եթէ զի՞նչ է մահ, եւ կամ քանի՞ տեսակս բաժանի։* 3 *Մահ է որոշումն հոգւոյ ի մարմնոյ, զի որպէս գոյացութիւն մարդոյ ի տարերց աստի է, նոյնպէս եւ մահն, զի չորք տարերքս այսոքիկ՝ հուր եւ աւդ, ջուր եւ երկիր*[8] *միաւորեալ գոյացուցանեն մարմին, հանդերձ փչմամբն Կենդանականաւ, այսպէս եւ ի բաց բաժանեալ եւ իւրաքանչիւր յիւրն։* 4 *Փոխեալ տարր՝ լուծանի մարմինն. հոգին դառնա առ Արարիչն իւր եւ մարմինն յերկիր, ուստի առաւ։* 5 *Եւ այս բաժանումն մահ անուանի։* 6 *Եւ գիտելի է, զի մահ ի Ե. (5) դէմս բաժանի. Է՛ որ բնութեամբ եւ Է՛ որ* |384ա| *պատահմամբ, կամ անձնիշխանութեամբ, կամ նախայխնամութեամբ, եւ կամ յաւժարական կամաւք։* 7 *Բնութեամբ է, որպէս յորժամ ծերանայ մարդ՝ տկարանայ եւ մեռանի։* 8 *Իսկ պատահմամբ է՛, որ յորոգայթից լինի՝ ի գազանաց, ի գետոց, յաւազակաց, յագահութենէ, յահէ եւ ի չարչարանաց։* 9 *Անձնիշխանութեամբ է, որպէս*[9] *ոք, որ սպանանէ զանձն կամ զընկերն։* 10 *Իսկ ի նախախնամութեանն, որպէս յորժամ գայ ի վերա մարդոյ մահ, վասն իւր աւգտի։* 11 *Իսկ այն, որ կամաւոր յաւժարութեամբ է, յերկուս բաժանի. է՛ որ յաւժարական մահ է, որ յապրիլ կենդանւոյն խոկայ զմահ, եւ զմեռելութիւն գործէ ախտից, որպէս ճգնաւորքն, որք ի*

---

[1] *Մ զի յերկինս*
[2] *Մ թաբոր*
[3] *Մ> եւ ի*
[4] *Մ յարս] եւ ի մարդս*
[5] *Մ> մահուանէ*
[6] *Մ ըստ] վասն*
[7] *Մ վկայից մահ, որից յետո յաւելում է. «Իսկ առաջի Տեառն պատուական, զի ոչ որպէս տեսանէ մարդ տեսանէ Աստուած, զի մարդ, յերեւելիս եւ Աստուած յաներեւոյթսն հայի, վասն որոյ յաչս տեսչութեանն Աստուծոյ պատուական է սրբոցն մահ»։*
[8] *Մ հող] երկիր*
[9] *Մ> որպէս*

խաչ հանին զանձինս՝ կարէաւք եւ ցանկութեամբ հանդերձ։ **12** *Եւ է՛, որ կամաւ տայ զանձն ի մահ՝ սրոյ եւ հրոյ, վասն անուանն Աստուծոյ եւ սիրոյ, որպէս մարտիրոսքն եւ նահատակն սուրբ, որք կամաւորական մտաւք զանձինս իւրեանց ետուն չարչարանաց եւ մահու, յաղագս որոց յառաջագուշակ մարգարէութեամբ կանխեալ ասաց մարգարէն Դաւիթ։* **13** *«Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։*

ԺԴ. 1 *Եւ զի զանազան եւ տեսակք մահու, որպէս եւ ցուցաւ, յաւժարական յերկուս բաժանի, որ աշխարհի են մեռեալ եւ ախտից մեղացն, եւ որք յաշխարհէ չարչարանաւք հրոյ եւ սրոյ մահուամբ ելանեն, զի եւ խորհուրդ մկրտութեանն մահ է, որպէս ասէ առաքեալ. «Որք մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք եւ թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ» (Հռմ. Զ. 4), զի յորժամ հաւատացաք, թէ Քրիստոս փոխանակ մեր մեռաւ եւ զմեզ ձրի արդար|384բ|ացոյց, յայնժամ եւ մեք մկրտութեամբն եդաք ընդ նմա դաշինք, թէ վասն առ քեզ յուսոյն մեռաք ցանկութեանց աշխարհիս, զի*[1] *արբեալք զբաժակ փրկագործ մահուն Քրիստոսի, մեռաք ցանկութեանց աշխարհիս <զի արբեալք զբաժակ փրկայգործ մահուն Քրիստոսի, մեռաք ցանկութեանց աշխարհիս> եւ ո՛չ եմք մարմնով, որպէս ասաց Տէրն. «Որ կամի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա» (Մտթ. ԺԶ. 24), որք կամաւոր յաւժարութեամբ, զաւր հանապազ մեռանին եւ զչարչարանացն եւ զմահու բաժակն սիրով ըմբեն։* **2** *Յաղագս այսորիկ ոչ զամենայն մահ երանելի եւ պատուական վարկանի, այլ զսրբոցն միայն, զի ահա բազումք են ի մարդկան, որք վասն չար գործոց իւրեանց մեռանին, վասն որոյ գրէ Պետրոս յԸնթանրական թուխտսն առ հաւատացեալսն. «Մի՛ ոք ի ձէնջ չարչարեսցի, իբրեւ զսպաննող կամ իբրեւ զգող, կամ իբրեւ զչարագործ, ապա եթէ իբրեւ զքրիստոնեայ՝ մի՛ ամաչեսցէ, այլ փառաւոր առնիցէ զԱստուած անուամբս այսուիկ» (Ա. Պտր. Դ. 15-16)։*

ԺԵ. 1 *Եւ են ոմանք, որ ի չարէն գրգռեալ, մահացուցանեն զինքեանս, այլք դարձեալ աստուածասաստ պատուհասիւ սատակին։* **2** *Այսպիսիքս են, յաղագս որոց ասէ յերեսուներեքերորդ*[2] *սաղմոսին. «Մահ մեղաւորին չար է» (Սղմս. ԼԳ. 22)։* **3** *Եւ այսու զատանէր ի միմեանց զերկաքանչիւրոցն մահն եւ զկիսոցն*[3] *անարգ կոչելով։* **4** *Եւ այս յիրաւի, զի մեղաւորք ո՛չ միայն զսգալիս զայս մեռանին զմահ, այլ զյաւիտենականն եւ զմշտնջենաւորն մահ, իսկ արդարքն զգալիս միայն ճաշակեն զմահ։* **5** *Ուստի ո՛չ*

---

[1] *Մ քանզի յորժամ] զի*
[2] *Մ ութերորդ*
[3] *Մ մահ ոմանց պատուական ասելով զմանն եւ կիսոյն*

«մահ», այլ «փոխումն» ի դէպ [է] ասել, զի փոխ|385ա|եցան յաստեացս յիմա[նա]լին յայն եւ յերջանիկ կեանս։ 6 *Սակս որոյ եւ յաղագս Աբէլի ասէր Աստուած առ Կայէնն, թէ «Ձայն արեան եղբաւր քո գոչէ առ իս*[1]*, վասն զի աստուածութիւնն արժանեցան լսէ, թէպէտ վաղճանեալ իցեն կեալ զնոսա գիտելով զանմարմին կեանսն եւ յաղաւթիցն չարացն ի բաց դարձուցեանէ զերեսս, թէպէտ եւ առոյգ կենդանութեամբ վարեցին, համարելով զնոսա մեռեալս ճշմարիտ կենացն. զմարմինն զաւրէն գերեզմանի կրելով յինքեան զթշուառական ոգիսն ի նմա թաղեցին։* 7 *Յաղագս այսորիկ զնոցայն մահ «պատուական» ասէ։* 8 *Իսկ զմեղաւորացն «չար» կոչէ, զի երկու են մահ. մի՛ սգալիս եւ մի՛ իմանալին։* 9 *Նմանապէս եւ Բ. (2) կեանք. այժմուս եւ հանդերձեալքն։* 10 *Եւ յայսցանէ Բ.քն (2) փութալի են եւ Բ.քն (2) արհամարհելիք։* 11 *Փութալիք են ահա առժամանակեայ մահս, յորժամ աստուածպաշտութեամբ պատահէ, եւ յաւիտենական կեանքն. եւ յերկոսին յայսորիկ վայելեն սուրբքն։*

ԺԶ. 1 *Եւ արհամարհելիք են առաւրեայ կենցաղս եւ մշտնջենաւոր մահն, որ պատահէ մեղաւորացն եւ չարաց եղելոց, զի արդարքն թէեւ մեռանին զսգալի մահս, կենդանի են առ Աստուած, որպէս Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ եւ համայնմանք նոցա։* 2 *Իսկ մեղաւորքն թէեւ կենդանի են մարմնով, մեռեալ են հոգւով, յաղագս որոց ասէր Տէրն. «Թոյլ տուք մեռելոցն հոգւով թաղել զմեռեալսն մարմնով» (**Մտթ. Ը. 22**)։* 3 *Եւ վասն այսորիկ ցանկալի է մահ արդարոցն, քան զկեանս ամբարշտացն, զի արդարքն թէեւ յաչս մարդկան մեռեալ կարծին, այլ յոյս նոցայ լի է անմահութեամբ, որոց ոչ միայն կեանքն |385բ| ցանկալի է, այլեւ մահն յաւէտ ըղձալի։* 4 *Վասն որոյ մարգարէս զսրբոցն պատուական ասէ զմահ եւ զմեղաւորացն՝ չար։*

ԺԷ. 1 *Եւ պատուական է մահ սրբոցն, զի առաքինացան յուսով հանդերձեալ կենացն, զի յանցաւոր կենացս ի մշտնջենաւորն փոխեցան եւ ի նեղութեանցս ի հանկիստն, եւ յեղկելի կենացս՝ յերանելին։*

ԺԸ. 1 *Պատուական է սրբոցն մահ, զի յակամայ փորձանացս, որ ըստ հոգւոյ եւ մարմնոյ ի յանդորր փոխեցան, ի ծերութենէ եւ ի տկարութենէ ի նորոգումն, ի սէրն ժամանեցին, որով յաղթեցին ամենայն կրից մարմնոյ։*

ԺԹ. 1 *Պատուական է մահ սրբոցն, զի յայս կեանս մեռան մեղացն եւ ընդ Քրիստոսի կենդանացան։* 2 *«Եւ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր*[2] *յայնժամ» (**Կղս. Գ. 4**) ընդունելոց են զփառս ի Սրբոյ Երրորդութե-*

---

[1] *Ա գրուած է «քեզ» եւ վրան գիծ քաշած, հավանաբար հարցական նշան*

[2] *Մ> եւ յորժամ... ձեր*

նէն յաղագս արդարութեանն եւ սրբութեանն իւրեանց։ **3** *Իսկ որ կենդանի մարմնով մեղաւք վարի եւ ախտիւք, զայսպիսիսն հոգւով մեռեալ կոչեն Գիրք, ըստ այնմ թոյլ տուք մեռ[ելոցն] թաղել զմեռեալ։* **14** *Վասն որոյ չար է մահ նոցա, զի կենաց անտի յուսահատեալ եւ յուղիղ վարուց աւտար*[1]*, եւ արարին զկամս մարմնոյ*[2]*։* **5** *Նոքա են ստուգապէս մեռեալք եւ որպէս ի գերեզման թաղեալք եւ նեխեալք մեղաւք մարմինք անսրբոցն եւ պղծոց, որք անխտիր են յամենայն յանցանս եւ զանաւրէնութեանցն բղխեն ժահահոտութիւն։* **6** *Այնպիսեացն մահ չա՛ր է եւ ողբալի։* **7** *Զա՛ր է, զի յուսահատութեամբ է վաղճանն, զի զրկեալք են ի ժառանկութենէ շնորհացն, եւ եղեն ժառանկք դիւացն եւ գեհենին, զի յայսմ աշխարհի անզգայաբար կայր եւ ոչ յիշէր* |386ա| *զաւր ելիցն, եւ անդ ոչ կարէ գործել։*

Ի. **1** *Զար է մահ մեղաւորացն, զի անդ փակին դրունք ապաշխարութեանն եւ ո՛չ լսեն ի Տեառնէ՝ «Դարձարուք առ իս եւ ես դառնամ առ ձեզ»* (**Մղք. Գ. 7**)*, այլ լսեն, թէ՝ «Հանէք ի խաւարն արտաքին»*[3] (**Մտթ. ԻԲ. 13**)*, եւ «Երթայք յինէն անիծեալք»*[4] (**Մտթ. ԻԵ. 41**)*։* **2** *Եւ բանին նոցա դրունք դժոխոցն, կամ ի*[5] *ջրոյ կարաւտին, որպէս մեծատունն եւ եղոյ լապտերի, որպէս յիմար կուսանքն*[6]*։* **3** *Վասն որոյ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։*

ԻԱ. **1** *Ազատ գոլով յայսպիսի չարութեան կարծեաց, որք զկեանս եւ զմահ Աստուծոյ նուիրեցին. եւ զի*[7] *մարգարէութեամբ գուշակէ զայն, ինչ որ առ յապա հանդերձեալ էր լինել, աստուստ յայտ է ահա, զի ոչ յայնժամ առ իւրաւք ժամանակաւքն ի հինսն այսպէս կարծիւր, զի Մովսիսական աւրէնքն խոտելի համարէր զմեռեալն, եւ որ մերձենայր ի մեռեալ՝ պեղծ կոչեցեալ էր, եւ յայնմանէ սրբութիւն պահանջէին աւրէնքն։* **2** *Ահա յայտնի ցուցումն իմաստից, զի որք վասն Քրիստոսի մեռան, նոցա աղաւ նուագէ եւ ասէ. «Պատ[ուական է] առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»։* **3** *Որ հաւատացեալ ժողովրդոց ո՛չ գարշելի կարծի կամ մեռելոտի ըստ հնոյն, այլ յոյժ ցանկալի եւ մեծի բարեաց պատճառք եւ առիթ*[8] *նշխարք սրբոցն եւ պանծալի նահատակացն Քրիստոսի։* **4** *Սոցա մերձաւորու-*

---

[1] *Մ աւտարացեալք*
[2] *Մ մարմնոյ եւ մտաց*
[3] *Մ արտաքին ուր լեալ ազաց է եւ կրեսել ատամանց եւ թէ երթայք*
[4] *Մ եւ թէ երայք անիծեալք ի հուրն յաւիտեան*
[5] *Մ յանժամ] կամ ի*
[6] *Մ կուսանքն եւ ոչ որք տա նոսա*
[7] *Մ եւ կամ զի*
[8] *Մ առիթ լիիցին*

թիւնն ո՛չ խոտելի է եւ կամ պեղծ համարիլ, որ մերձենայ յայսպիսի մեռեալ, որպէս թուի աւրինակաւցն, այլ հաւատովք մերձեցելոցն ո՛չ միայն սրբութեան առիթ լինին, այլ յոյժ մեծաց եւ անեզրական պարգեւաց։ 5 Յայտ յարգեանցն է, թէ որչափ հրաշս եւ կամ քանի նշանս կատարէ Աստուած ի ձեռն |386բ| սուրբ ոսկերաց նոցա։ Ուստի եւ այնոքիկ, որ զփորձն առնուն, անյագապէս մերձեցեալ ի համբոյր, փարին զսրբոցն մարմնովք եւ առնուն զդեղ բժշկութեան, ըստ իւրաքանչիւր պիտոյից։

ԻԲ. 1 Եւ ո՛չ միայն այս, այլեւ յիշատակ անուան նոցա[1], կամ դոյզն ինչ փոշի տեղւոյ, հանկստեան նոցա, զդեւս հալածեն եւ զցասումն պատուհասի արկածից արագապէս ի մէնջ ի բաց դարձուցանեն, եւ այնպիսի մեծամեծ զաւրութիւնս կատարէն, զոր եւ ո՛չ թագաւորք կամ մեծք եւ ճոխք զաւրաւք եւ զաւրապետաւք կարեն կատարել, նաեւ ո՛չ բոլոր իսկ արարածք։ 2 Յաղագս այսորիկ զյիշատակ սոցա ճգնութեան եւ զաւր կատարման հանգստեան ելից նոցա ի կե[ն]ցաղոյս տաւնախմբէ եկեղեցի եւ միշտ նուագեալ հնչէ բերանով Դաւթի. Մանաւանդ, թէ Հոգւովն Սրբով նոյն բարբառէր. «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց [իւրոց]»։

ԻԳ. 1 Նա դարձեալ եւ այլ ազգ ունիմք իմանալ վասն սորին։ 2 Յորժամ ոք կամաւորաբար մեռուցանէ յինքն զտեսակ մեղաց, սպանանելով՝ ըստ առաքելոյ զանդամս զերկրաւորս, եւ աչել (՞) զինքն աշխարհի եւ զանազան ճգնութեամբ պատերազմել ընդ մահու, աստէն խաչակցեալ ընդ Քրիստոսի մեռանին, զի եւ ընդ նմա յարիցեն փառաւք։ 3 Եւ յաղագս սոցա պատշաճ է ասել. «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց [իւրոց]»։ 4 Եւ կամ[2] յորժամ աստուածպաշտութեան աղագաւ մեռուցանէ ոք զախտ արծաթսիրութեան եւ փոխանակ նորին տնկէ զողորմածութիւն, եւ զագահութիւն մեռուցեալ կենդանանայ ի նմ|387ա|ա[3] անստացուածութիւն եւ ժուժկալութիւն, այսպէս եւ[4] զանհաւատութիւն մահացուցեալ կենդանան[ան] հաւատովք, եւ զատելութիւն սպանեալ տնկի ի նմա եւ կենդանանայ սէր, եւ պոռնկութիւն մեռեալ՝ կենդանանայ սրբութիւն եւ զգաստութիւն։ 5 Եւ որ այսմ նման է՝ ի սոյն յարին[5]. փոխանակ որկորստութեան՝ պահք, փոխանակ արբեցութեան՝ ծարաւ, փոխանակ հպարտութեան՝ խոնարհութիւն, ընդ հայհոյութեան՝ փառաբանութի՛ւն, ընդ

---

[1] Մ զյիշատակս Նոցա
[2] Մ> կամ
[3] Մ ի նա
[4] Մ> ի նմա եւ
[5] Մ եւ ի սոյն յարի

դատարկաբանութեան՝ աղաւթք, ընդ ծաղեր՝ արտասուք, ընդ ծուլութեան՝ տքնութիւն, ընդ անյուսութեան՝ յոյս, ընդ մեղաց՝ արդարութիւն, եւ որ այլ ինչ այսպիսիք, որոց ի միոյն մեռանիլն կենդանութիւն լինի միւսումն, եւ որ զայս մահ մեռանի՝ ստուգապէս առաջի[1] *Տեառն պատուական է եւ ընտիր ի Տէր:* **6** *«Ո, Տէր, ես ծառայ քո եմ»* **(Սղմս. ՃԺԵ. 16)**[2]*:*

ԻԴ. **1** *Խոհեմաբար*[3] *իմանալ պա՛րտ է զդիտաւորութիւն բանիս, եթէ զի՞նչ ունիցի ասելս. «Ո, Տէր, ես ծառայ»:* **2** *Զի որպէս մի ձայն յամենայն ձայնական գործեաց եւ զլեզու եւ զբերան մի յամենայն մասանց անդամոց յառաջ բերելով՝ բան բարբառի, այսպէս եւ մարգարէս յամենայն բանական բնութենէս հողեղինաց եւ յամենայն ազգաց հրէից եւ հեթանոսաց, որք մի հաւտ եղեն միոյ հովուին, իբրեւ զմի այր ընդ ծառայութեամբ նուաճեալ, այնմ որ գնեաց զմեզ արեամբն իւրով՝ առ Աստուած դարձուցեալ զբանս, ասելով. «Ո, Տէր, ես ծառայ քո եմ», յայտնապէս ցուցանելով զայն, ինչ որ Քրիստոս կատարեցաւ:*

ԻԵ. **1** *Եւ արդ գիտելի է, զի ծառայութեան տեսակք են չորք:* **2** *Եւ նախ բաժանի յերկուս՝ յարարչականն եւ ի ստացականն:* **3** *Իսկ ստացականն բաժանի յերիս, զի կամ ընդոծին է անդէն՝ ի տան ծնեալ, եւ կամ գնովք ոսկւոյ* |387բ| *եւ արծաթոյ գնեալ, կամ զաւրութեամբ յաւարի առեալ:*

ԻԶ. **1** *Եւ արդ, տեսցուք զայս կարգ ծառայութեան յասացեալս, զի ասելովն, թէ՝ «ծառայ քո եմ»՝ Բ.ս (2) դէմս ծառայութեանն ցուցանէ. խոստովանի զայն, որ ծառայութիւն կայր աւտարին, եւ դաւանէ զայն, որ փոխադրեալ եղեւ ծառայ իւրում ստեղծողին:* **2** *Վասն որոյ առ Աստուած դարձուցանէ զբանն եւ ասէ. «Ո, Տէր, ես ծառայ քո եմ ըստ արարչութեանն» եւ ըստ բնութեան ծառոց, զի պարտական է պտղոյ տնկագործին:* **3** *Եւ ծառայի պարտ է տալ զպտուղ հնազանդութեանն իւրում ստեղծողին, զի ազգ հեթանոսաց, որք զարարածս պաշտեցաք եւ մասանց տարերցս ի ծառայութիւն մտաք, ըստ առաքելոյ՝ մինչ տղայքն էաք, ընդ տարերբ աշխարհիս ի ծառայութեան կայաք, եւ հրէայք ընդ անիծիւք աւրինացն կապեալ կայաք:* **4** *Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի կնոջէ ի տարերցս, զոր պաշտեցաք զգեցեալ մարմին, զի յինքն դարձուցէ զմերն պաշտաւն, եւ զի զորս ընդ աւրինաւքն իցեն գնեսցէ:* **5** *Վասն որոյ տէրն աւրինաց մտանէր ընդ լծով աւրինացն եւ կատարելով զաւրէնսն, զմերութիւնն մէր լնոյր եւ ի ծառայութենէ աւրինացն ազատէր:* **6** *Յաղագս որոյ ասէ. «Ո, տէր, ես*

---

[1] *Մ> առաջի*

[2] *Մ վասն որոյ առ աստուած դարձուցանէ զբանն եւ ասէ՝ ո, տէր*

[3] *Մ> խոհեմաբար իմանալ... զբանն եւ ասէ*

ծառայ քո եմ, ըստ արարչութեանն», զի թէ ի մոռացաւնս եղեալ Արարչիդ, զոր ի տիրականն ստեղծեր բնութիւն, ծառայեցաք արարածոցս, զորս ի ծառայութիւն ետուր մեզ: 7 *Վասն որոյ Տէրդ զծառայիս առէր զկերպարան, զի ուսայց ի քէն զգործս ծառայի եւ զշահս ծառայելոյն:* 8 *Որպէս գրէ Պաւղոս, «Որ ի* |388ա| *կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի էառ եւ խոնարհեցոյց զանձն լինել հնազանդ մահու չափ եւ մահու խաչի»* (**Փլպ. Բ. 6**)*:* 9 *Վասն որոյ Աստուած զնա առաւել բարձրացոյց:* 10 *Եւ զի ես ուսայց ծառայել Աստուծոյ բարձրութեանն յուսով եւ գիտացից՝ թէ պարտ է ծառայի մեռանել ի վերայ Տեառն:*

Իէ. 1 *Եւ երկրորդ. ո՛չ միայն ծառայ եմ, այլեւ որդի ծառային քում Ադամայ, եւ աղախնոյն Եւայի մաւրն, որ աղախին եղեւ հեշտութեան, որ տիկինն էր:* 2 *Եւ զի՞արդ վճարեցից զԱդամայն՝ զհաւրն իմոյ պարտս եւ զմաւրն Եւայի, եթող կամաւոր մահուամբն:*

ԻԸ. 1 *Եւ երրորդ. ծառայ քո եմ, զի գնոջ գնեցեր, եւ գինն ահեղ եւ պատկառելի:* 2 *Վասն զի ոչ ապականացու արծաթեղինաւք եւ ոսկեղինաւք փրկեցաք, ըստ ասացելումն, այլ ամբիծ եւ անարատ*[1] *արեամբն Քրիստոսի:* 3 *Այսմ եւ Պաւղոս վկայէ. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից աւրինացն»* (**Գղտ. Գ. 13**) *Եւ թէ՝ «Գնոց գնեցայք՝ մի լինիք ծառայք մարդկան»* (**Ա. Կրնթ. Զ. 20**)*:* 4 *Վասն որոյ ասէ. «Ո՛ Տէր, ես ծառայ քո եմ»:* 5 *Եւ գինք պատուական արեամբ Քո:* 6 *Եւ արեամբ գնաւղիդ զիա՞րդ խնայեցից զծառա[յա]կան արիւնս հեղուլ:*

ԻԹ. 1 *Իսկ ըստ չորրորդ յեղանակին «ծառայ քո եմ», զի ազատեցեր ի գերողէն եւ յաւարի առեր յաւտարէն, եւ արձակեցէր ի բազմաշար*[2] *շխթայիցն կապանաց եւ հատեր զկապանս իմ:* 2 *Զի կապեալքն ի Բաբելոնի, որք արձակեցան, կապանքն Յեքոնեայ եւ մանկացն արկելոց ի հնոցին, Դանիէլին՝ ի գուբն առիւծուց ստուերագրութիւն էր իմոյ ճշմարտութեանս, զի ստուգապէս հատ*|388բ|*էր զկապանս իմ:* 3 *Զի կապանք էր մեզ աւրէնքն ստուերական, զի ծառայական էր եւ գիր միայն ապականիչ*[3]*, եւ ո՛չ հոգի կեցուցիչ:* 4 *Վասն որոյ լուծեր ի գրոյ եւ կապեցեր ընդ հոգւոյն, եւ զծառա[յա]կանն կապ խզեցէր եւ յորդիականն հաներ փառս:* 5 *Բայց ես ո՛չ մոռանամ զարժանն իմ, այլ խոստովանիմ, թէ ծառայ քո եմ, զի «հատեր զկապանս իմ»* (**Սղմս. ՃԺԵ. 17**)*:*

---

[1] *Մ պատուական] անբիծ եւ անարատ*
[2] *Մ ազատեցէր ի բազմաշարշար] արձակեցէր բազմաշար*
[3] *Մ սպանիչ] ապականիչ*

Լ. 1 *Այլեւ հրեայք եւ հեթանոսք ամենեքեան կապեալ էաք*[1] *ընդ մեղաւք, ըստ այնմ, թէ՝ «Ի գործս ձեռաց կապ[եսցին] մեղաւորք»* (**Սղմս. Թ. 17**), *զի կապանք էր մեր մեղքն, որով իբր տոռամբ ըմբռնեալ պահեաք ի դատապարտութիւն:* 2 *Եւ զայս կապ խզեցեր մահուամբ Քո, որ վասն մեր, եւ զերծուցեր յազատութիւն քոյոյ շնորհիդ, եւ զծառայս մեղաց արարեր ծառայս արդարութեան:* 3 *Վասն որոյ խրատէ Պաւղոս. «Արդ, ազատացեալք ի մեղաց ծառայեցէք արդարութեան (**Հռմ. Զ. 18**):* 4 *Հատեր զկապ[անս] իմ*[2]*:* 5 *Կապանք մեր էր սէր եւ ցանկութիւն աշխարհիս:* 6 *Եւ զայս կապանս հատեր Քրիստոս, զի աստ մեռար եւ հրամայեցեր մեռանել ցանկութեանց սորա:* 7 *Վասն որոյ զքո հաւատացեալքս ո՛չ կարէ ըմբռնել կապանք իրաց կենցաղոյս, այլ խաչեալք աշխարհիս ծառայքս, ըստ Տեառն նմանութեան, թռչիմք գերիվերոյ սորին ցանկութեանց եւ ընդ Տեառնդ մեր յերկինս ելանեմք:* 10 *Այլ եւ շնորհ ունիմ Արարչիտ իմոյ եւ Տեառն, զի մեռանելովս ի կապանաց մարմնոյ աստ ի մահու ազատես զիս, զի շնչով եւ արեամբ կապեալ է հոգի ընդ մարմնոյ, եւ կապող եւ արձակող:* 11 *Եւ դարձեալ վերստին կապող զքեզ խոստովանիմ:* 12 *Եւ զի լուծա|389ա|կան է բնութիւնս եւ հատանելոց է կապակցութիւն սորա, այլ այս ինձ անզուգական է պատիւ փառաց ծառա[յա]կան բնութիւնս վասն սիրոյ Տեառնդ իմոյ մեռանել:* 13 *Եւ յաղագս այսր ամենայնի գոհանամ զԲարերարէդ եւ ասեմ. «Ո՛վ Տէր, ես ծառայ Քո եմ»:*

ԼԱ. 1 *Ապա զի՞նչ շնորհ է քեզ, կամ ընդէ՞ր համարիս դու զմահն իմ, որ վասն քո՝ պատուական:* 2 *Զի «ես ծառայ քո եմ»՝ ստեղծուած ձեռին եւ «որդի աղախնոյ», եւ հարկ է ծառային ի վերայ Տեառն մեռանիլ:* 3 *Արդ, մեծ եւ պատուական քո մահուան է Տեառնդ, որ փոխանակ ծառ[այ]իցս մեռար:* 4 *Իսկ մերս համեմատեալք ընդ քոյդ՝ փոքր է եւ նուաստ, սակայն դու անճառ գթութեամբդ ո՛չ միայն փոխանակ մեր մեռար, այլեւ զմեր, որ վասն քո մահն զսեփհական ծառայիցս պատուեցեր եւ փոխարէն*

---

[1] *Մ էին*

[2] *Մ > հատեր զկապանս իմ /Այստեղ ՄՄ 610 ձեռագիրն ընդհատում է, փոխարէնը նախորդ «արդարութեան» բառին հետեւում է հաւանաբար գրչի արած հետեւեալ յաւելումը. «Արդ, եթէ ոք տարակուսեցի՝ թէ զիա՞րդ հեշ[տ]ացեալ զուարճանայ Աստուած ի բրախոխող եւ ի հարկեզ մահ վկայիցն, այս իսկ է լուծումն տարակուսանացդ, զի այս կեանս հանդէս է աշխարհաւումար, ստեղծիչն հանդիսագիր հրաբուն զաւրաւքն տեսող հանդիսի, սատանայ անկեալ ի բան Տեառնէն՝ չարն ոխայր ընդ դարձումն բնութեանս, ի վերա յարձակեալ գայլաբար գիշատէր զմարմինս սրբոցն, իսկ Արարիչն զուարճանայր ստեղծուածոյն իւրոյ զսէր հրապարակատես առնելով վերնական զարացն եւ զանմեղութիւն բնութեան յայտնէր եւ զաստուածական անունն սէր, զոր ունէին ցուցանէր, զի թէ կռոցն զուստերս եւ զդստերս զոհէին վասն սոսկ աստուածական անուանն, իսկ յորժամ զճշմարտութիւնն Տանեան զիր եւ զանուն, բիւրապատիկ բիեաց ի նոսա բորբոքումն սիրոյ իբր թէ ասել՝ յորոց ոչինչ գտաք բարի, սակս նոցին սիրով մեռանէաք, որչափ վասն Աստուծոյ, որում փառք յաւիտեանս:*

հատուցէր պսակս եւ պատիւս, մոռացեալ անճառ սիրովդ զայն, թէ ծառայն պարտի զմահն իւր Տեառնն, եւ կամեցար մահուանն մեր պատիւ եւ փառս կշռել ընդդէմ, ըստ այնմ, որ ասէ առաքեալ. «Մեռարուք եւ կեանքն ձեր ծածկեալ է ընդ Քրիստոսիւ յԱստուած։ **5** *Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք»* (**Կող. Գ. 3-4**)։ **6** *Վասն որոյ խոստովանիմ զմեծութիւն շնորհիս, եթէ ես ծառայ քո եմ։*

ԼԲ. **1** *Եւ արդ, եթէ կռոցն, զոր կարծեաւք Աստուած համարէին, զոր բամբասէ Սողոմոն, թէ ի գեղեցկութենէ արարածոցս զուարճացեալ՝ Աստուած կարծեցին, բայց էութիւն նոցա զգեղեցկութիւնն ի նիւթոյն ունէր, եւ զկերպարանն յարուեստէն, եւ զպատիւ նոցայ մեզ ոչ պատուիրեցեր, եւ աստուածական զաւրութիւն եւ կամ գործ ի նմա ինչ ոչ տեսի* (**հմմտ. Իմաստ. ԺԳ. 5-8**)*, եւ թէ վասն նոցա զա|389բ|նձն իմ ետու ի մահ, եւ ի մեռանիլն անպատիւ ի մարմին եւ ի ծնունդս ո՛չ խնայեցից։* **2** *Իսկ վասն Տեառնդ իմոյ եւ Արարչի եւ գեղեցկութեանց ստեղծողի զիա՞րդ ոչ մեռայց զմահն, որ պատուական է առաջի քո, որոյ էութիւնդ անհաս է ի հրեշտակաց։* **3** *Զաւրութիւն քո մեծ եւ անբաւ, գործ արարչութեան քո երկինք եւ երկիր բոլոր լրիւ իւրով։*

ԼԳ. **1** *Արդ, եթէ ոք տարակուսեսցի, եթէ զի ա՞րդ հեշտացեալ զուարճանայր Աստուած ի սրախողոխ եւ ի հրկէզ մահն վկայիցն սրբոց եւ տայր զնոսայ որպէս զոչխար ի զենումն, եւ զարիւնս նոցա որպէս ջուր ի հեղումն, եւ զնշխարս ոսկերաց նորա, որպէս խռիւ ի յայրումն, եւ կամ զիա՞րդ բանսարկուն՝ բնութեանս թշնամին զինէր զանաւթս իւրոյ չարութեանն՝ զանբարիշտ բռնաւորսն այնքան, մինչ զի մոռացեալ զազկակցութիւնս բնութեանս եւ անողորմ ի բերան սրոյ ուտէին եւ մաշէին զմարմինս մարդկան բազմահնար տանջանաւք։* **2** *Այս իսկ է լուծումն տարակուսանաց, զի հանդէս էր աշխարհագումար. Ստեղծիչն հանգիտադիր, հրաբուն զաւրքն՝ տեսող հանդիսի, սատանայ անկեալ ի կարծեցեալ իշխանութենէն, տուն նորա յաւարի առեալ ի բուն Տեառնէն, չարն ոխանայր ընդ դարձումն բնութեանս՝ ի վեր արձակեալ գայլաբար գիշատէր զմարմինս սրբոցն։* **3** *Իսկ Արարիչն զուարճանայր՝ զստեղծուածոյն իւրոյ, զսէր հրապարակատես առնելով վերնական զաւրացն, եւ զանմեղութիւն բնութեանս յայտնէր, եւ զաստուածական անուն սէր, զոր ունէին՝ ցուցանէր։* **4** *Զի թէ կռ|390ա|ոցն զուստերս եւ զդստերս զոհէին վասն սոսկ աստուածական անուանն, իսկ յորժամ զճշմարտութիւնն ծանեան՝ զիր եւ զանուն բիւրապատիկ բղխեաց ի նոսա բորբոքումն սիրոյ, իբր թէ ասել՝ զորոց ոչինչ գտաք բարի, սակս նոցին սիրով մեռանէաք։*

ԼԴ. 1 *«Ո՛ Տէր, զի ես ծառայ քո. [եմ]»։* **2** *Ստեղծողիդ եւ գնողիդ, եւ ի կապեաց արձակողի, զիա՞րդ խնայեցիս զանձն ստեղծեալ կամ զարիւն գնեալ, եւ զհոգի ի հեշտասէր մարմնոյ արձակեալ, այլ մեռայց վասն քո։* **3** *Հատեր զկապանս իմ եւ քեզ մատուցիս պատ[արագ] աւրհնութեան։* **4** *Զճշմարտութիւն դիմացն, զոր ծանեաւ, ցուցանէ քեզ, ասէ, որ Տէրդ ես, եւ որում ծառայս եմ, եւ զոր ծանեայ։* **5** *Յաղագս որոյ գրէ Սողոմոն, եթէ՝ «Ճանաչելն զՔեզ բովանդակ արդարութիւն է եւ իմանալն՝ պտուղ անմահութեան»* (**Իմաստ. ԺԵ. 3**)։

ԼԵ. 1 *«Քեզ մատուցիս պատարագս»։* **2** *Ընդ բարերարութեանդ ձրիս եւ զբարեգործութեանն մատուցանեմ պատարագ, զի հատեր յինէն զկապ ծառայական աւրինացն եւ ազատեցեր ի յանիծիս նորին եւ ի ճենճերոց զոհիցն, եւ զոր աւրինադրեցեր ի ձեռն Մովսիսի զմատուցումն նոցա եւ խոտորեցեր ի ձեռն Դաւթի զանկատարութիւն նոցա եւ զանկարատ գոլ նոցա։* **3** *Վասն որոյ զաւրհնութեանն քո պատարագ՝ զնոր ուխտն արեան քո, զոր աւանդեցեր հացիւ եւ գինով եւ աւրհնութեան բանիւ պատմել զյիշատակ մահուն Քո, զնոյն միշտ մատուցիս Քեզ պատարագ, որով կապեցեր զիս միանալ ընդ Քեզ հատաբար՝ մարմնով ի մարմին եւ արեամբ յարիւն եւ հոգւով ի հոգի, զի այլ մի բաժան|390բ|եսցուք ի Քէն. եւ զի հատեր զկապանս մեղացն, որով գրեալ լինի աւրինաւք, մեղացն որ էին յանդամս իմ. զանդամս մարմնոյ իմոյ քեզ աւրհնութիւն եւ արդարութեան պատարագ մատուցանեմ՝ ըստ խրատուն Պաւղոսի սպանանել զանդամս երկրաւորս մեղացն եւ կենդանիս լինել արդարութեան* (**տե՛ս. Կղս. Գ. 5**)*, եւ ըստ Տեառն խրատու՝ հատանել ընկենուլ, թէ պատճառ գայթակղութեան իրիք լինիցին* (**Մտթ. Ե. 29-30**) *եւ մարտիւրոսական եւ վկայական արեամբ ո՛չ խնայեմ ի հատմանէ սրոյ եւ ի կիզմանէ հրոյ եւ յաւդակոտոր առնելոյ, այլ զկազմած մասունս մարմնոյ տաց իմում ստեղծողիդ ի մահ՝ յուսով վերստին անապական կանկնելոյ։* **4** *Եւ զի զսէր եւ զցանկութիւն իմ խզեալ հատեր յաշխարհէ, այսուհետեւ զջերմութիւն սիրոյ հոգւոյս բորբոքեմ ի սէր վերին յարկացդ եւ ցանկամ, որ դիմին անճառ գեղեցկութեանցն հատեա՛լ ցանկութեանս ի գեղոյ կերպարաց աշխարհիս, գեղեցկութեանց բորբոքիմ գեղոյդ, որ քան զարեգակն ցանկալի, զատեալ յոսկւոյ եւ յարծաթոյ, պայծառութեանցն տենչամ արքայութեանդ պայծառ ճոխութեամբ։* **5** *Եւ այս սէր պատարագ է քեզ՝ բարձեալ ի սիրտս սեղան զխռովական խորհուրդսն կիզէ եւ զանապակ<ակ>անս եւ զոսկենմանս փայլեցուցանէ՝ ըստ առաքելոյ խրատուն շինել ի վերայ այնր հիման, որ է Յիսուս Քրիստոս, «ոսկի եւ արծաթ եւ ակունս պատուականս»* (**Ա. Կորնթ Գ. 12**)։

ԼԶ. 1 *«Զաղաւթս իմ Տեառն տաց»* (**Սղմս. ՃԺԵ. 18**)։ 2 *Հարկաւոր է քննել, թէ զի՞նչ է ստուգաբանութիւն աղաւթիցն, եւ կամ զի՞նչ* |391ա| *թարգմանութիւն նորին։* 3 *Այլ երկափաղառական է աղաւթքն անուն։* 4 *Եւ առաջին վանգն, որ է աղ, ցուցանէ զաղաչական եւ զաղերսանաց աղաղակաւ հանդերձ ի խորոց սրտէ բանս, յաւդւածք, իսկ ուդք, որ է յարմարումն բանիցն առ միմեանս, որ ասի աղաւթք եւ թարգմանի խաւսք ընդ Աստուծոյ, որ յառաջ գայ ի սիրոյ բաղձանաց եւ յանմարմին հոգւոյ ըղձից, զորս նուիրէ անարիւն զենումն եւ աւրհնութիւն պատարագ Աստուծոյ։*

ԼԷ. 1 *Եւ ասէ. «Զաղաւթս Տեառն տաց»։* 2 *Որպէս Անանիանքն ի մէջ հնոցի հրոյն, ոչ բուրումն խնկոց, կամ ողջակէզ խոյոց*[1] *եւ զուարակաց, այլ զանձինս բեկեալս եւ զոգիս տառապեալ, ընդունելի քան զբիւրաւոր գառինս։* 3 *«Եւ պատարագեալս Աստուծոյ հոգի խոնարհ»* (**Սղմս. Ծ. 19**)։ 4 *Եւ Զաւրաբաբել եւ ժողովուրդն գերութիւնն Բաբելոնի, որք ցանկային մատուցանել պատարագ Տեառն ի տաճար սրբութեան ի մէջ Երուսաղէմի։* 5 *Զնոյն բաղձանս եւ Դաւիթ ունելով, ասէ. «Զաղաւթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան»։* 6 *Այսպէս եւ եկեղեցի սուրբ ի հրէից եւ ի հեթանոսաց, որք եւ ասացին միակամ մտաւք եւ միով բարբառով. «Ո՜, Տէր, ես ծառայ քո եմ եւ քեզ մատուցից պատարագս»։* 7 *Այժմ ասէ. «Զաղաւթս իմ Տեառն տաց» եւ ո՛չ կռոցն, զոր անգիտաբար տայի, զոր առաքեալ յանդիմանէ, թէ՝ «Առ կուռս անմռունչս, որպէս երթայիք»* (**Ա. Կրնթ. ԺԲ. 2**) *նոյնպէս եւ գայիք դատարկս եւ անպտուղս։* 8 *Այլ Տեառն տաց որոյ անբաւ են բարեացն բխմունք։* 9 *Իսկ տեղի աղաւթիցն, ասէ, յորում տամ պատարագ՝ զաւրհնութիւն եւ զաղաւթս ի գաւիթս տան Տեառն եւ ի մէջ քո՝ Երուսաղէմ։* 10 *Եւ գաւիթս տան Տեառն իմանամք զերկրաւորս եկեղեցի, եւ նոյն կոչի եւ նոր Երուսաղէմ, որ ասի խաղաղութիւն։* 11 *Եւ խաղաղութիւն մեր Քրիստոս է,* |391բ| *որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ եւ յերկնաւորաց եւ յերկրաւորաց, եւ ի հրէից եւ ի հեթանոսաց արար մի եկեղեցի։* 12 *Եւ գտանի ինքն ի մէջ եկեղեցւոյ իւրոյ, որպէս ասացաւ «Բ. (2) եւ Գ. (3) ժողովեալ են յանուն Իմ, անդ եմ ես՝ ի մէջ նոցա»* (**Մտթ. ԺԸ. 20**)։ 13 *Վասն որոյ Տեառնդ իմ, որ բնակեալդ ես ի մէջ Երուսաղէմի, «տաց զաղաւթս իմ» եւ մերձեալ խաւսակից իմ աղաւթիւք», եւ «զի կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են անշունչ»* (**Սղմս. ՃԺԳ. 4**) *եւ [ան]զգայ[ն], այլ Տէր իմ եւ Աստուած հոգի ես իմանալի եւ պարզ, սիրով հոգւոյս բղխեմ զաւրհնութիւն եւ հոգւով եւ ճշմարտութեամբ երկիր պագանեմ։*

---

[1] *Ձ-ում խնոց*

ԼԸ. 1 *Բայց ունի խորութիւն իմաստից ասելն, թէ՝ «ի մէջ քո՝ Երուսաղէմ» (Սղմս. ՃԺԵ. 19), զի ասաց Աստուած Զաքարիա մարգարէին, թէ դարձայց ի Սիոն բնակեցայց ի մէջ Երուսաղէմի (Զfr. Ը. 3)։* 2 *Սիոն եւ Երուսաղէմ ի վերայ միոյ լերին է շինուած քաղաքին։* 3 *Սիոն ի բարձր կողմն կայ եւ Երուսաղէմ ի խոնարհ, որպէս մի եկեղեցի սուրբ շինեալ ի վերայ հաւատոյն։* 4 *Առաքինութեամբ կատարեալքն եւ բարձրագոյնքն նման Սիովնի, եւ անկատարքն եւ երկրաքարշքն խոնարհ, նման խոնարհական տեղւոյն Երուսաղէմի, յորում ասէ՝ «Դարձայց ի Սիոն եւ բնակեցայց ի մէջ Երուսաղէմի», որպէս թէ, որ վասն մեղաց մարդկան դարձուցեալ էր Տեառն զերեսն եւ առաքինեացն միայն էր սակաւուց տեսանելի՝ արդարոցն առաջնոց, նահապետաց եւ մարգարէից, որ ի նոսա դարձաւ Տէրն եւ նոքաւք յամենայն մարդկային բնութիւնս։* 5 *Զի Երուսաղէմ թարգմանի տաճար խաղաղութեան, որ է եկեղեցի, որ են ժողովք քրիստոնէից, յորոց միջի բնակէ Քրիստոս, բազմադիմի նշանակութեամբ, զի բնակէ ի մէջ եկեղեցւոյ իւրում զանազան շնորհաբաշխութեամբ, որպէս սիրտ կենդանւոյ ի մէջ ամենայն կազմածին՝ ի բաշխումն կենդանական շնչոյն զաւրութեան։* 1 *Եւ որպէս թագաւոր ի մէջ զաւրաց պնդեալ է զզինուորական զաւրսն յարիութիւն* |392ա| *եւ որպէս արեգակն ի մէջ երկնային գաւտոյն կենդանածնեալ եւ լուսաւորեալ զաշխարհս ամենայն, եւ որպիսիւն ի մէջ տան հաստատել յամրութիւն եւ վերացուցանել, եւ որպէս միջնորդ յերկուց կողմանց միջի հաշտեցուցանել եւ ի խաղաղութիւն միջնորդել։*

ԼԹ. 1 *Այլեւ մարմնոյ եւ արեանն իւրոյ հաղորդութեամբ բնակէ Քրիստոս ի մէջ եկեղեցւոյ իւրոյ, կերակրել եւ սնուցանել յաւդ գալոյ*[1] *յարմարել զանդամս իւր ի գլուխն գերագոյն աճեցուցանել եւ յերկինս թռուցանել եւ զնոյն մարմին եւ արիւն թոշակ մեզ տալ վերին քաղաքին ճանապարհի։* 2 *Վասն որոյ ի սոյն խառնել զանմարմինն վեր պատարագի զաղաւթսն, ըստ մարմնոյ եւ արեան պատարագին Քրիստոսի, որ մատուցեալ լինի միշտ ի մէջ եկեղեցւոյ եւ ասէ. «Տաց զաղաւթս իմ ի մէջ քո Երուսաղէմ». աստ մարմնով յԵրուսաղէմս ստորին յեկեղեցի սուրբ, եւ հոգւով եւ մտաւք յերկնաւոր քաղաքն յԵրուսաղէմն վերին, յազատն ի մայրն մեր ամենեցուն, որ եւ երկրաւորս։* 3 *Եկեղեցի գաւիթ է այնր տաճարի, զի աստի անդր մտանեմք։* 4 *Այլեւ որչափ մարմնով եմ յաշխարի, աստ առաջի երկրաւորս եկեղեցւոյ ժողովոյ պատարագեմ Աստուծոյ զաղաւթս իմ, եւ ի փոխելն աստի՝ ի մէջ վերինն Երուսաղէմի, զի անդ է տիրապէս աղաւթիւք խաւսակցելն Աստուծոյ, ուր առանց պատրուակի*

---

[1] *Ա նախ գրել է՝ յօդն գերագո, ապա դարձրել՝ յօդ գեալո*

մարմնոյս տեսանի թագաւորն, որոյ մաղթանքն նուիրի առաջի հրեշ-տակացն երկնաւորաց բիւրուց ժողովրդոց, ըստ որում ասէ. «Զաղաւթս իմ Տեառն տաց [առաջի] ամենայն ժողով[րդեան]»։

Խ. 1 *Բայց քննել արժան է, զիա՞րդ Տէրն հրամայէ. «Յորժամ յաղաւթս կաս, մուտ ի սենեակ քո եւ փակեայ զդուրս քո»* (**Մտթ. ԺԸ. 20**)։ 2 *Եւ Դաւիթ ասէ. «Զաղաւթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեանն»։* 3 *Ոչ են հակառակ բան Տեառն եւ մարգարէիս, այլ հակառակ բար|392բ|ուց մարդկան խրատ զանազան, զի Տէրն առ այնպիսին, որ կեղծաւորական ձեւով եւ փառասէր մտաւք մատուցանել զաղաւթս, ասէ. «Մո՛ւտ ի սենեակ քո»։* 4 *Իսկ Դաւիթ զանկեղծաւոր բարուց եւ զանփառասէր մտաց ասէ առաջի ամենայն ժողովրդեանն մատուցանել՝ յաւրինակ բարեաց ամենեցուն։* 5 *Դարձեալ ի ծածուկ եւ տան աղաւթելն իշխեցելոցն է եւ փոքունցն ի դէպ, իսկ թագաւորաց եւ գլխաւոր առաջնորդաց ի մէջ ամենայն զաւրացն եւ բազմախումբ ժողովոց արժան է աղաւթել։* 6 *Եւ զի մարգարէն Դաւիթ թագաւոր էր եւ առաջանորդ ժողով[րդեան], ասէ. «Զաղ[աւթս իմ] Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեանն»։* 7 *Զի յորժամ թագաւոր զաւրաց եւ տէր աշխարհաց ի տեղի աղաւթիցն ընթանայ՝ եւ կցորդի ընդ խոնարհս ժողովրդեան իւրոյ յաղաւթսն Աստուծոյ։ Զի՞նչ այլ քաղցրագոյն եւ շահաւէտ, քան զայն կայցէ, յորժամ թագաւոր զաւրաւք եւ իշխանն իշխեցելովք եւ առաջնորդ ժողովրդաւք, եւ տէր տան ընդանեաւք եւ զաւակաւք յեկեղեցին ժողովեսցին։* 3 *Զի, զորաւրինակ, քար ընդ քարի հարեալ՝ հուր ծնանի, նոյնպէս բազմութիւն ժողովոցն դեգերեալ առ միմեանս, հոգեւոր սիրովն ջեռնուցուն։*

ԽԱ. 1 *Եւ, զորաւրինակ, կանայք զկուսիցն իւրեանց զդրացեացն զհարսանիսն մեծարեն, մանաւանդ յորժամ աղքատք իցեն, զնոյն եւ յեկեղեցիս պա՛րտ է առնել. ամենայն ուստէք ժողովի միասին ծածկեսցուք զսորայ աղքատութիւն։* 9 *Եւ գլուխն մարմնովն եկեսցէ, թագաւոր զաւրաւքն, արք, կանայք, եւ մանկամբք, զի, զորաւրինակ, վայելուչ է ծառ յերկրէ ի վեր բուսեալ շառաւէղաւք եւ սաղարթեւք աճեցեալ, նոյնպէս գեղեցիկ է մեծամեծքն փոքումք յաղաւթսն Աստուծոյ հաւաքեալք, |393ա| զի թէպէտ այլ ոք, քան զայլ ճոխ եւ փարթամ է, սակայն ողորմութեանն Աստուծոյ հաւասարապէս կարաւտք Աստուծոյ։* 3 *Եւ, զորաւրինակ զերկինս բազմութիւն աստեղաց զարդարեն եւ զդրախտ զանազան տնկոցն գեղեցկութիւն, այսպէս զեկեղեցին բազմութիւն ժողովրդեանն յաղաւթսն միաբանեալ։* 4 *Եւ, զոր աւրինակ, մայր ի վերայ զուարճացեալ բերկրի, յորժամ ի սեղանն բազմիցին, եւ զմաւրն պատրաստեալ կերակուրն ուտիցեն, այսպէս եկեղեցի ի վերայ հոգեւոր որդոցն իւր ցնծացեալ բերկրի, յորժամ ի*

հոգեւոր սեղանն նորա բազմին յունկնդրութիւն գրոց, եւ ի հաղորդութիւն կենարար մարմնոյն եւ արեանն Քրիստոսի, որ բաշխի ի վերայ սրբոյ սեղանոյն։ 5 *Եւ այնպէս պարտ է կալ յաղաւթս, իբրեւ մահապարտք ահիւ մեծաւ առաջի թագաւորի, որ ո՛չ իշխէ յայլ ոք նայել, եւ կամ թիկունս առ թագաւորն դարձուցանել։*

ԽԲ. 1 *Եւ արդ, եթէ թագաւորի ումէք ի հողեղինացս խաւսակից լինել երբեկք պատահէր, երանելի զանձինս վարկանեաք, եւ ո՛չ երբեկք ներէաք լռել ի խաւսելոյ կամ հեռանալ ի դիմացն արքայի, ապա զոր ներեալ թողութիւն ունիցիմք, յորժամ ընդ երկնաւոր թագաւորին գամք ի խաւսակցութիւն, որք եւ որդեգրիլ արժանացաք նմա, եւ անմահութեան վիճակ խոստացեալ է մեզ պարգեւել։* 2 *Զայս ամենայն արհամարհե՞լ եւ զմեծութիւն ձրիցն, զոր ընկալաք ի նմանէ, եւ թիկունս դարձուցանե՞լ ի նա, ի չնչին իրս եւ յարհամարհելիս մերձի՛լ եւ փույթ ա՞յնմ առնել։* 3 *Այլ եւ զողորմութիւնն լծակցեալ ընդ աղա՛ւթսն, զի թէ դու քում աղաչողին ողորմել իցես յաղաւթս աղաչանաց քոց, եւ* |393բ| *դո՛ւ ողորմութիւն գտցես, զի, զոր աւրինակ, թոչուն երկոքումք թեւաւք ի բարձունս վերանայ, նոյնպէս աղաւթք եւ ողորմութիւն դիւրաւ ելանեն առաջի Աստուծոյ, որպէս եւ հրեշտակն առ Կուռնելիոս ասէ. «Աղաւթք քո եւ ողորմութիւն ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ»* (**Գրծ. Ժ.** 4)։

ԽԳ. 1 *Եւ արդ, եթէ այսքան զաւրաւոր են աղաւթք ողորմածութեամբ հանդերձ, զի յերկինս ելանեն եւ կան առաջի Աստուծոյ, եւ խաւսակից առնէ եւ մերձաւոր Աստուծոյ, մի՛ պղերգութեամբ եւ ծուլութեամբ մերով վերջասցուք յայսմ շնորհէ մեծէ։* 2 *Այլ յաւժարական կամաւք յեկեղեցին Աստուծոյ ընթասցուք, ուր եւ յիշատակ մարտիրոսացն եւ տաւնք սրբոց վկայիցն կատարին եւ նահատակութեան նոցա ճառք եւ պատմութիւնք չարչարանաց նոցայ ընթերցալ լինին, կցորդ լիցուք եւ մեք նոցին ճգնութեանցն եւ բարեխաւս կալցուք առ Աստուած զսուրբն, որք համարձակութիւն ունին յաւր նահատակութեանն իւրեանց հայցել յԱստուծոյ մեզ շնորհս պարգեւաց։* 3 *Եւ բացաւղք են դրանց ողորմութեանն Աստուծոյ, տաւնասիրաց եւ վկայսիրաց, մանաւանդ զի եւ հրեշտակացն անմարմին դասապետութիւնքն խոնարհին ի հանդէս նահատակութեան նոցին, եւ տաւնակից լինին մեզ յերկրի։*

ԽԴ. 1 *Վասն որոյ եւ մեք լիցուք մարտիրոսք՝ յաւժարութեամբ եւ առանց սրոյ եւ չարչարանաց վկայք ճշմարտութեանն։* 2 *Մարտիրոսքն սուրբք հրով այրեցեալ, ժուժկալեալ համբերեցին, եւ մեք հրոյ գանձութեանն, որ բորբոքի ի մեզ, համբերեսցուք եւ մի՛ զանձինս մեր կորուսցուք։* 3 *Նոքա սրով սպաննեալք՝ աղաւթս սպաննողացն կատարէին, եւ մեք սրոյ սրտմտու-*

թեանն ընկերին ժուժկալեսցուք եւ զսուր ցասմն|394ա|ական բարկութեանն մեր լռեցուսցուք, եւ մի՛ զեղբարսն մեր խոցեսցուք։ 4 *Հեղին նոքայ զարիւնս, հեղցուք եւ մեք զարտասուս յաղաւթսն եւ զինչսն յողորմութիւն։* 5 *Եւ համարեսցի Աստուած արիւն մարտիրոսական։* 6 *Թողին նոքա զմեծութիւն եւ զփառս շնորհի եւ վասն սիրոյն Աստուծոյ ի մահ դիմեցին. թողցուք եւ մեք զհեշտութիւն քնոյ անկողնոյ եւ զփափկութիւն ըմբելեաց եւ կերակրոյ, եւ ի տաւն սրբոցն գնասցուք, եւ զպատմութիւն նոցա լսեսցուք, մանաւանդ զՔրիստոս տեսցուք եւ զքաղցր ձայն նորա լսեսցուք, եւ այն, զի հանապազաւր լսեմք ի նմանէ, «Ուր Բ. (2) եւ Գ. (3) ժողովին, յան[ուն իմ] անդ ի մէջ նոցա»* (**Մտթ. ԺԸ. 20**)։

Խե. 1 *Եւ արդ, եթէ ի մէջ երկուց եւ երից գտանի նա եւ երեւի խնդրողաց իւրոց, մի՛ ոք ապա երկբայեսցի, թէ եւ այժմ ո՛չ է նա ի միջի մերում, զի գիտեմք ստուգապէս եւ հաւատամք անսուտ հրամանին, զի կա այժմ աներեւոյթաբար ընդ մեզ եւ միաւորեալ է սիրով, որպէս գլուխ առ անդամս իւր։* 2 *Եւ տեսանէ զիւրաքանչիւր ոք ի մէնջ. զոմանց զծնրադրութիւն, զայլոց զսրտառուչ զաղաւթս, կիսոց զպաղատանս, զայլոց զարտասուս. զոմանց զերգատրութիւն, զայլոց զսաղմոսերգութիւն, զկիսոց զընթերցասիրութիւն, զայլոց զունկնդրութիւն հնազանդութեամբ։* 3 *Ես զայսոսիկ տեսանելով, ընդունի զՏեառնն եւ հատուցանէ ըստ իւրաքանչիւր վաստակոց։*

Խզ. 1 *Եւ եթէ այս այսպէս է, որպէս եւ է ստուգապէս, մի՛ հեղգութեամբ մերով ծուլացեալ վարձակորոյս լիցուք եւ մի՛ զմեզ ինքեանս ի բաց զատուցեալ հասցուք ի գլխոյն, զի յորժամ հեռանամք ի տեղւոյ աղաւթիցն, յայտ է թէ հեռանամք եւ ի գլխոյն եւ ի բաց կտրիմք իբրեւ զ|394բ|ուռ անպիտան, որոյ վաղճանն մերձ է յայրումն։* 2 *Եւ ոչ միայն այս, այլ սատանայի լինիմք մերձաւոր եւ անդամ, զի հարկ է մեզ կամ զՔրիստոս ունել գլուխ եւ ի նա յարիլ իբրեւ զանդամ կամ զսատանա։* 3 *Եւ զի գիտէ սատանայ զայսքան աւգուտ, որ յաղաւթից անտի լինի մեզ, եւ զի ինքն մեծապէս վնասի եւ յաղթահարի ի մէնջ, յորժամ յաւժարամիտ սրտիւ կանխեմք ի հասարակ աղաւթսն, զի թէպէտ գովելի է եւ առանձնականն աղաւթք եւ աւկտակար, սակայն յոյժ եւ անհամեմատ հասարականին։* 4 *Վասն զի միաբանական աղաւթք, որ կատարի յեկեղեցւոջ, ի հաշտութիւն ածէ զԱստուած եւ զցասումն պատուհասի երագապէս դարձուցանէ եւ զփաղանգս դիւացն հալածէ, զի մարտակցութիւն է ընդ թշնամոյն։* 5 *Յաղագս այսորիկ ջանայ հնարի սատանայ խափանել զմեզ*

եւ չտայ թոյլ ժամանել ի տեղի աղաւթիցն, զի գիտէ ի բազմացն միաբանութենէ զինքն յաղթահարել եւ հալածել, սակս որոյ գուն գործէ եւ հնարիւք բաժանէ ի միմեանց։ **6** *Զոր աւրինակ այր ոք խարդախող, յորժամ տեսանէ բազում գունդս համախառն ի վերայ ընթացեալ, գիտելով ապայ թէ չէ՛ հնար յաղթել թշնամեացն՝ որքան միաժողովք են, հնարիւք իւիք բաժանէ եւ աւձտէ ի միմեանց։* **7** *Եւ յայնժամ դիւրագոյն լինի նմա մարտն։* **8** *Զսոյն զայս առնէ եւ սատանայ՝ պատճառանաւք իւիք քակտէ զմիաբանեալսն ի հոգեւոր մարտակցութիւնն եւ ապա դիւրաւ զկամս չարութեան իւրոյ կատարէ ի մեզ։*

Խէ. **1** *Եւ արդ, գիտելով մեր զայս, մի՛ հաւանեսցուք չար խրատուին, այլ միաբանութեամբ կանխեալք ի տեղի աղաւթիցն՝ արտաքոյ թողեալ զհոյլս չարեաց, զի եւ խո. բար. հասց. շն. եւ. մդ*[1]*։*

[1] *Ա աւարտւում է այսպէս. երեւի՝ «խորհուրդ բարեաց հասցէ շնորհ եւ մարդոյ»՞*

ԼԶ.

|395ա| ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌԱՒՏ ԵՒ ԹԻՒՔ ՁԱՐՁԱՐԱՆԱՅՆ ԵՒ ԿԱՐԳԻ ԳՐՈՅ ՊԱՏՄՈՂԱՅՆ ԿԱՐՃԱՌԱՒՏԵԱԼ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱՅՈՅ

Ինչպես հուշում է վերնագիրը, Երզնկացին օգտվելով պատմիչների հաղորդած տեղեկություններից, շարադրել է Գրիգոր Լուսավորչի կյանքի ու գործունեության համառոտ պատմությունը:

Համառոտ պատմության սկիզբը քաղված է Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԿԸ., ԿԹ., ՀԱ., ՀԲ., ՀԳ., ՀԴ. եւ այլ գլուխներից, որտեղ պատմական տեղեկություններ են հաղորդվում Պարթեւների եւ հայ Արշակունի թագավորների մասին: Թեեւ մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է սույն շարադրանքի գիտական համեմատությունը իր աղբյուրների հետ, սակայն հարկ ենք համարում նշել, որ թռուցիկ ակնարկն անգամ նկատելի է դարձնում որոշ անձնանունների, տեղանունների այլ ընթերցումներ կամ հավելումներ, օրինակ՝ «Բուրդար» փոխանակ «Այր ոմն ի պարսից. ոչ ի փոքուանց եւ յանշանից, որում «Բունտա», կամ Բանլա-Հաբաս եւ այլն[1]:

Վերոհիշյալ ստեղծագործության հաջորդ էջերը, որտեղ մանրամասն նկարագրվում են Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքները եւ Հայաստանի քրիստոնեության ընդունման պատմությունը, հիմնականում քաղված են Ագաթանգեղոսից:

Անուշտ, ինչպես այլ առիթներով, այս դեպքում եւս Երզնկացին նպատակ է հետապնդել շատերի համար ավելի մատչելի դարձնել հայ ժողովրդի եւ հայոց եկեղեցու շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձությունը եւ եկեղեցու սրբերի պանծացումը:

Նկատի առնելով, որ Երզնկացին այդ մասին գրել է ԺԳ. դարում, չի բացառվում, որ օգտված լինի նշված հեղինակների երկերի ավելի վաղ ընդօրինակություններից, որ եւ կարող են հետաքրքրություն ներկայացնել վերոհիշյալ պատմիչների երկրի քննական բնագրերի ուսումնասիրության համար:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 395ա-401բ) ձեռագրում պահպանված միակ օրինակի:

Ա. 1 *Ի յԱդամայ ԻԱ.երրորդ (21) նահապետ է Աբրահամ, որ յետ Սառայի առ կին զԿենտ[տուրա], յորմէ ծնաւ զորդի եւ արձակեաց յարեւելս յերեսաց Իսահակայ՝ որդւոյ իւրոյ, յորմէ են ազգն պարթեւաց եւ ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեաց ի Մակեդ[դացւոց]։* **2** *Զկնի Կ. (60) ամ ի մահուանն Աղէկսանդրի եւ թագաւորեաց յերկիրն Քուշանաց ամս ԼԱ. (31) յետ սորայ Արշական որդի իւր որ եւ Արտաշէս ասի, սմայ որդի*

[1] *Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 219։*

Արշակ, որ Մեծն կոչեցաւ, որ զԱնտիոքոս սպան, եւ զեղբայրն [Վա]զարշակ թագ[աւ]որ կացոյց Հայոց։ 3 *Եւ Բ. (2) որդի իւր եւ ինքն չուեալ Բահլհաս թագաւորեր ամս ԾԳ. (53), զոր Հաբաս ասեն այլք, վասն որոյ զարմք իւր պահլաւք անուանեցան եւ եղբարքն իւր Արշակունիք ի նախնոյն։* 4 *Յետ Արշակայ Մեծի թագաւորք պահլաւք են այսոքիկ. Արշական՝ ամս ԼԳ. (33), Դարեհ՝ Լ. (30), Արշաւիր՝ ԻՁ. (26), սորայ լինի Գ. (3) որդի եւ դուստր մի. անդրանիկն՝ Արտաշէս, Բ. (երկրորդ)՝ Կարեն, Գ. (երրորդ)՝ Սուրեն, դուստրն՝ Կոմշ, որ եւ յետ հաւրն վաղճանի կամ եղեւ Արտաշեսի ազգաւ ի վերայ եղբարցն թագաւորեալ, վասն որոյ եկեալ եղբայրն հաստատէ ի մէջ նոցա ուխտս թագաւորեալ Արտաշէս ի իւրովք ծնընդաւքն, իսկ եթէ հատցին զարմք, ապայ եղբարցն մատչել եւ զայլ եղբարցն ազգս յանուանէ կոչէ Կարենի պահլաւ, Սուրենի պահլաւ եւ քոյրն ասպարապետի պահլաւ, զի ի վերայ զաւրաց էր այր նորա։* 5 *Եւ այսպիսի անուամբ կոչեցան մինչեւ ի սպառել թագաւորութեանն, զի յետ Արշաւրի թագաւորեաց Արտաշէս ամս ԼԴ. (33),* |395բ| *Արշակ՝ ԺԹ. (19), Արտաշէս՝ Ի (20), Պերոզ՝ ԼԳ. (33), Վաղարշ՝ Ծ. (50), Արտաւան՝ ԼԱ. (31), զոր սպաննեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ բառնալով զթագաւորութիւն Պարթեւաց։* 6 *Եւ Բ. (2) ցեղքն պահլա[ւ] սպահապետին եւ պահլ Սուրենին՝ նախանձ ունելով ընդ թագաւորել ցեղն իւրեանց մուտ ետուն աւտար ազգոյն. իսկ Կարենի պահլ մտերմութիւն պահէ եւ մինչ պատերազմէր Արտաշէս*[1] *որդի Սասանայ ընդ Արտեւանայ կամեցեալ խոսրով հայրն Տրդատայ դիմել յաւգնու[թիւն]։* 7 *Եւ եկեալ յԱսորեստան լուեալ զբաւթ մահու Արտեւանայ եւ զմիաբանեալն Բ.ց (2) պահլաւացն դառնա տրտմութեամբ, աւգնականութիւն խնդրէ ի Փիլոպոս կայսերէ պատերազմել ընդ Արտաշեսի, որո չէր նմա պարապար, այլ գրէ յամենայն կողմանս իշխանութեան իւր աւգնել, որք եկին առգնել յԵգիպտոսէ մինչեւ ի ծովեզրն Պոնտոսի։* 8 *Եւ այն ամենայն բազմութեամբ խաղա ի վերայ Արտաշրի ի փախուստ դարձուցանէ թափելով ի նմանէ զԱսորեստան եւ զայլ արքայանիստ աշխա[արհ] եւ յղէ առ ցեղսն պահլ եւ զաւրսն քուշանաց գալ միաբանել ընդ իւր եւ թագաւորեցուցանէ որոց արժանէ. զի մի յիւրեանց տէրութենէն հեռասցի. եւ ոչ կամեցան ընդ որ յոյժ դժուարի եւ լուեալ աւետի, թէ Կարենի պահլ[աւ] գայ ի կոչ քո, յոյժ ուրախանայ, բայց ոչ յամէ յուրախութիւնն, զի լուաւ բաւթ, թէ ինքն Արտաշէշս ամենայն զաւրաւքն հետեւահաս եղեալ կոտորեաց զամենայն ցեղն Կարեն ի պահլ[աւ]։* 9 *Բայց ի միոյ տղայոյ, զոր մտերիմ տան նորա փախուցանէ յերկիրն Քուշանաց*

[1] *Անշուշտ վրիպում է, պետք է լինի՝ Արտաշիր։*

բազում անգամ խնդրել Արտաշրի եւ երդուեալ ոչ ետուն ի ձեռս։ 10 Իսկ
խաւսրով իւրով զաւրաւքն եւ միաբանելովք հոգ ածէ զնայ մինչ ի
Հնդիկս. ժամ պատերազմ տուեալ |396ա| ընդ նմայ եւ յոյժ ի նեղութիւն
արկեալ։ 11 Եւ Արտաշէս[1] բազում խոստմունս նախարարացն առնէր, թէ
ոք բուժէ զնա յայնմանէ եւ բազում պարգեւս խոստացաւ զարքա[յա]-
նիստ քաղաքն պահլ. ի նոսա դարձուցանել։ 12 Քանզի ասէր ձեզ՝ դիւրին
է պահլաւացդ եւ շուք եւ ձեւ թագաւորութեան խոստ (հմմտ. Մտթ. ԺԻ. 24)։
13 Յոր հրապուրեալ Անակայ, որ էր ի ցեղէն Սուր[են] պահլ[աւ]է, յանձն
առնու սպանանել զԽոսրով եւ հատուածի պատճառաւ փախստեայ լինի
յԱրտաշրէ, եւ զհետ մտեալ զաւրաց<աց>ն պարսից, փախստական վարեն
յԱսորեստան, եւ հանեն առ եզերբ սահմանացն Ատրպատականի ընդ մէջ
Կորդուաց, զոր լուեալ Խոսրովի իբր զԿարեն ի Պահլաւին կարծելով
գունդս առաքէ յաւգնութիւն Անակայ եւ ածեն զնա մինչ ի գաւառն Ար-
տազ, որ էր նշխար լուսաւորչին մերոյ առաքելոյն Թադեոսի եւ ի բնա-
կելն Անակայ ի դաշտին Արտազու, պատահէ նմա տեղի ամթեւանի՝ մա[ւ]տ առ
դիրս սրբոյն առաքելոյն եւ ի ներքսագոյն ապարանի խորանին պատա-
հել յղութիւն մաւր սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի։ 14 Վասն որոյ առ
հանկստարանաւ սուրբ առաքելոյն ընկալաւ յինքն զշնորհս առաքելու-
թեան զնորա հոգեւոր մշակութեանն պակասութիւն լնլով զգործ։ 15 Եւ
ետ Բ. (2) ամի սպանանէ զԽոսրով եւ մեռանի ինքն եւ իւրքն ամենայն։
16 Ի խնամոցն Աստուծոյ պահելով սմա, որ ակնարկութեամբն եւ շնոր-
հաւք առաքելոյն ստեղծանել կամ լուսաւորեալ ասեմք յարգանդի մաւրն
զառաքելութենէն իւր շնորհս ի ձեռն տալով նմա։ 17 Իսկ ի սպանանելն
Խոսրովի Արտաւազդ Մանդակունի զմանուկն Տրդատ ի դուռն կայսեր
հասուցանէ, որոյ անուն Տակիտաւս, եւ զմեր լուս|396բ|աւորիչն դայեկացն
փախուցեալ ի Կեսարիայ։ 18 Իսկ Արտաշրի տիրեալ Պարսից եւ Հայոց
աշխարհիս միաբանէ զամենյան նախարարսն եւ ըստ առաջին սահմանին
հաստատէ զաշխարհն եւ տիրէ առ հասարակ ամս ԻԶ. (26), եւ ապա որ-
դին նորա՝ Շապուհ։ 19 Բայց թէ որպէս եղեւ փախ[ուստ] Լուսաւորչին
մերոյ ի Կեսարիայ, այր ոմն ի Պարսից ոչ ի փոքունց եւ յաննշանից անուն
Բունտաս, գնացեալ ի կողմանս Գամրաց պանդխտանալ եւ առ իւր կին ի
հաւատացելոց անուն Սոփի՝ քոյր մեծատան, որոյ անուն Եւթաղիոս, եւ
դարձաւ գնալ ի պարս հանդերձ կնաւն, որոյ զհետ հասեալ աներոյն
դարձուցանէ։ 20 Եւ սոցա ըստ պատահման հանդիպեալ մերոյ լուսաւոր-
չին, մտանէ ստնտու մանգանն եւ ի հասանել աղետին առեալ Եւթաղեայ

[1] Դարձյալ կրկնում է նույն վրիպումը՝ Արտաշէս] Արտաշիրի։

զքոյրն եւ զփեսայն հանդերձ մանկամբն դառնայ ի Կեսարիայ՝ յառաջատես խնամաւքն Աստուծոյ եւ յարբունս հասեալ փեսայացուցանէ հաւատացելոյ ումեմն, որոյ անուն էր Դաւիթ, ի դուստր իւր Մարիամ, եւ յետ երից ամաց, երկուց որդոց լինելոց զատին ի միմեանց։ 21 *Մարիամ կրսեր մանկամբն ի կանանց վանսն, որոյ մանուկն յարբունս հասեալ գնայ զհետ կրաւնաւորի ումեմն Նիկոյմաքոս անուն, իսկ անդրանիկն առ դայեկացն մնացեալ ամուսնանայր։* 22 *Եւ Գրիգոր անցեալ գնայր առ Տրդատ, զհայրենեացն հատուցանէր պարտս եւ ճշմարիտն զառաքելութեան մերոյ աշխարհիս, եւ քահանայապետութեամբ հանդերձ մարտիրոսութեամբ։* 23 *Եւ ապա ծանուցեալ թագաւորին հարց եւ փորձ բանիցն, եւ սպառնալիքն եւ պատասխանիք սրբոյն Գրիգորի։* 24 *Զի ասես փոխանակ կենաց Ագաթանգեղոս նեղութեամբ հանես զիս յայս կենացս, յաճախես ինձ զպատարագ ուրախու*|397ա|*թիւնն Քրիստոսի, որոյ տէրութիւնն յաւիտենից է, եւ արքայութիւնն անանց, եւ բարիքն անպակաս։* 25 *Եւ զի փոխանակ պատուոյ տաս անարգանս, շնորհես ինձ զպատիւն հրեշտակաց, որ ցնծութեամբ փառաւորեն զարարիչն իւրեանց։* 26 *Եւ փոխանակ բարձ տալոյ եւ յառաջ ձգելոյ ի բանդ եւ ի կապանս արկանես։* 27 *Երանի է ինձ, զի զաւրինակ կապանաց Տեառն իմոյ առից եւ ընդ նմին ուրախացեալ ցնծամ յաւուր գալստեան նորա եւ մերժելով ի քոց բազմականացդ ընդ հաւատոցն հաւրն Աբրահամու. բազմականս առից եւ ընդ արդարոցն ամենայի։* 28 *Եւ զոր սպառնաս մահ նովաւ խառնես ի գունդն Քրիստոսի, ընդ հարսն եւ արդարսն, ընդ մարգարէս եւ առաքեալսն, մարտիրոսքն եւ ընդրեալքն ամենայն։* 29 *Եւ ապա սկիզբն չարչարանացն առնէ։* 30 *Հրաման ետ կապել զձեռս, յոտս եւ հարկանել գայլ ի բերան նորա եւ կախել շառասեղս աղի ի վերայ ողին նորա, եւ տալ գելոցս կրծից նորա եւ արկանել առասան ի կապս կրծից գելարանացն եւ կախել եւ ամբառն<առն>ալ ի բարձրաւանդակ տանիսն ապարանից որմոյն մեքենայիւք եւ կայր այնպէս զէ. (7) աւր (***Ագաթ. Ջ., 5-8***)։* 31 *Եւ իջուցեալ եհարց զզիարդն. իսկ նա ասէ՝ Կախեցէր ինձ աղ, յուսամ յերի սուրբ, զի համեսցէ զանհամութիւնս իմ աղիւն ստուգութեան եւ ճշմարտութեան, որ ոչ անցանէ եւ տացէ ինձ զամենայհեշտ լուծ խոնարհութեանն թեթեւութեան. պարգեւացն յաւիտենից որ բարձրացուցանէ զխոնարհս իւրով մարդասիրութեամբն յանսպառ վաղճան հատուցմունսն։*

Բ. 1 *Երկրորդ եւ յետ այսորիկ հրաման ետ կախել գլխիվ* |397բ| *այր զմիոյ ոտանէն եւ ծխել ներքոյ աղբ եւ արբցէ, գան սաստիկ բրաւք դալարաւք եւ տանջեսցեն Ժ. (10) այր եւ կայր անպէս կախեալ զաւուրս Ե. (5)։* 2 *Եւ անդ ասաց զերկար աղաւթսն եւ ապա իջուցին։* 3 *Ետ հրաման բերել կո-*

ճեղս փայտից եւ առնել ըստ ոլոքանացն եւ խոտոյ ցաց ոտիցն եւ պնդել ուժգին առասանաւք, մինչեւ իջանէր արիւնն ընդ ծայրս մատանց ոտիցն: 4 *Զորրորդ եւ լուծանել յայնմանէ եւ բեւեռս երկաթիս վարել ընդ ներբանս ոտիցն նորա եւ առեալ զձեռանէ այսր եւ անդր ընթացուցանէին եւ հոսէր արիւնն իբրեւ զաղբիւրս ջուրց եւ լնոյր զվայրն:* 5 *Եւ ասէ, որ այսպէս արտասուաւք վարեսցեն եւ ցնծութեամբ հնձեսցեն (տե՛ս* **Սղմս. ՃԻԵ. 5***):* 6 *Ասէ Թագաւորն. «Բախեցէ՛ք զման լալոյ արտասուացն»:* 7 *Եւ կոփեցին զգլուխ նորա անհնարին եւ նա ասէ. «Եթէ ոչ աշխատի մշակն ի տապ խորշակի արեգականն, ոչ ըմբռնէ զարդիւնս շահեկանութեան ուրախութեան պտղոյն»:* 8 *Եւ ասէ Թագաւորն. «Իսկ դուն աստէն աշխատեաց ի մշակութեան ժամանակս յորում եւ կաս ի տանջ աստ»:* 9 *Եւ ետ հրաման բերել աղ, բաւրակ եւ բարկ քացախ, առնել յորս այս եւ դնել զգլուխն ի հիւսանց մամուլս, եւ փող եղեգան ի քիթն եւ արկանել զայն (*Ագաթ. Զ. 19*):* 10 *Եւ յետ այնորիկ ետ հրաման բերել պարկս աւդենիս մեծս եւ լնուլ մոխրով հնոցի եւ արկին թոյլագոյն ի գլուխս նորա, զի ի տուր եւ առ շնչոյն զխելսն վնասեսցէ եւ եկաց նովիմբ աւուրս Զ. (6) եւ ետ ածել (*Ագաթ. Զ. 20*) առաջի Թագաւորին եւ ասէ. «Ուստի գաս, յարքայութենէն:* 11 *Այտ է, զոր ասէիր»:* 12 *Իսկ նա ասէ. «Այո՛, այս է, զի պահեալ է ինձ փոխանակ մոխիր* |398ա| *աւծ եւ անթառամ պսակ:* 13 *Եւ փոխ[անակ] քացախոյն անսպառ ուրախութիւն»:* 14 *Եւ բարկացեալ Թագաւորն ետ կապել զոտս նորա եւ կախեալ գլխիվայր եւ դնել ձագառ ի նստոյ տեղին, եւ արկանել ջուր տկով յորովայն նորա, եւ յետ այսորիկ քերանաւք քերել զամենայն մարմին նորա:* 15 *Յետ այսորիկ ետ բերել տատասկ երկաթի բազում սակառաւք, եւ արկին թանձր ի գետնի եւ մերկացուցեալ արկեալ ի վերա տատասկին եւ քարշէին մինչ ծակոտեցաւ ամենայն մարմին նորա, եւ ոչ մնաց տեղի ողջ:* 16 *Յետ այսմ ետ արկանել կապիճս երկաթիս ի ծունկս նորա եւ ի վարէ լոռունս ստուարս, եւ բառնալ ի կախաղանի զի յաւշեսցին ծունկքս երիս:* 17 *Եւ ապա զկապարն հալեալ պուտամք իբրեւ զջուր եւ արկանել զմարմնով նորա եւ այրեցաւ ամենայն մարմինն, եւ ապա յառաջ մատուցեալ տաճարն ասաց. «Դա է որդի Անակայ» եւ զայլն ամենայն:* 18 *Եւ ապա յետ այս ամենայն չարչարանացս հրաման ետ կապել ոտիւք եւ կապեալ ձեռաւք եւ կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառին ի դեղեակ բերդին յԱրտաշատ քաղաքին եւ իջուցեալ զնա ի վիրապն ներքին, որ անհնարին է խորութեամբ մինչեւ անդէն մեռցի, եւ եղեւ անդ ամս ԺԳ. (13):* 19 *Եւ ինքն Տրդատ Թագաւորն խաղացեալ երթայր յարեւելս յԱյրարատ գաւառի, յաշխարհն Հայոց ի Վաղարշապատ քաղաքի ի ձմերոցս:* 20 *Իսկ*

սրբոյն Գրիգորի կին մի էր բնակեալ այրի յայնմ բերդի հրաման առեալ յարհուրաց գիշերոյ աւուրն նկանակ մի ընկենուլ ի վիրապն եւ այնու կերակրեալ լինէր սուրբն Գրիգոր հրամանաւն Աստուծոյ։ 21 Եւ ապա գալն սրբոց Հռիփսիմ[եանց] եւ նահատա|398բ|կիլն եւ զղջանալ թագաւորին ընդ մահն եւ տրտմիլ եւ ապա ժամ տուեալ որսոյ ամենայն զաւրաց իւրոց, այն ինչ ի կառս ելեալ թագաւորն կամէր ընդ քաղ[աքէ] արտաքս ելանել։ 22 Անդէն վաղվաղակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասանէր եւ հարեալ այսոյն պղծոյ զթագաւորն ի կառացն ի վայր կործանէր եւ անդէն մոլեգնեալ սկսաւ ուտել իւրովին զմարմինն իւր եւ ըստ նմանութեան Նաբուգոդոնոսորայ արքային բաբելացւոց արտաքս ի մարդկային բնու[թենէ] ի նմանութիւն վայրի խոզից իբրեւ զնոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր, եւ մտեալ յեղէգն խոտաճարակէր անհնարին անսգամութեամբ մերկ զանձն ընդ դաշտն կոծելով եւ արգելուլ ի քաղաք ոչ կարէին, մի վասն բնական ուժոյն եւ մի վասն դիւացն որ ի նա հարեալ էին նա եւ ամենայն մարդիկն դիւաբախ մոլեգնէին եւ անհնարին կործումն ի վերայ աշխարհին հասանէր։ 23 Եւ ապա տեսիլ քեռ թագաւորին Խաւսրովիդխտոյ այր մի լուսեղէն Ե. (5) անգամ երեւեալ եւ եկեալ հանէ նախարարն Աւտայ եւ պատմէ զտեսիլն քաղաքացեացն։ 24 Եւ յորժամ հանին թխացեալ էր մարմինն իբրեւ զխանձողատ կրակի։ 25 Արեգակն հոգւոց ծածկեալ ի յամբոց, եւ թխացեալ էր մարմինն։ 26 Արեգակն ի բարձանցն ի յերկիր ծագէ ի յարեւելից եւ սա ի գբոյն յերկինս։ 27 Երկինքն ունի անշունչ արեգակն եւ վիրապն կենդանի հոգւով։ 28 Փշալից անդաստանի ոչ հատանող, այլ ի ծաղիկ փոխարկող անուշահոտ եւ ի տունկ պտղաբերս մարդ մարմնաւոր անմարմնոցն նմանեալ դասուց, որպէս Պետրոս եւ Պաւղոս արեւմտից, սա |399ա| արեւելից հաւատոյ հաստատիչ, սա զտաղանդն բիւրապատիկ աճեցոյց քարոզող որպէս զառաքեալսն։ 29 Սա նմանեալ Դանիէլի, որպէս նա զՆաբուգոդոնոսոր եւ սա զՏրդատ ի կերպարանէ խոզի ի մարդ փոխարկէ. մշակ կորդացեալ երկրի միով ձեռամբ բիւր սերմանց աճեցուցանող իբրեւ զհատս սերման արկանեալ ի խոր վիրապն եւ զնոր նեխեալ եւ փտեալ, համարէին հոտ անոյշս եւ հատս բիւրաւորս երեւեցաւ ելեալ ի գազանացն միջոյ զգազանաբարոյսն գառինս պատարագելիս արար, ելեալ ի գբոյ խաւարին զխաւարեալսն որդիս լուսոյ առնէ։

Գ. 1 Սա հովիւ մոլորեալ հաւտին, բժիշկ հիւանդացելոցս փշաքաղ ճանապարհին, որ առ Աստուած ճրագ լուսոյ նստելոցս ի տան խաւարի։ 2 Վիրապն նմանէր բաբ[ելացւոց] հնոցին երից մանկանցն եւ հրաշիցն, որ ի նմա. Նաբ[ուգոդոնոսոր] զչորս ընդ երիցն լինի ի հնոցն տեսեալ ասէ՝

եկայք արտաքս, որպէս Դանիէլ ի գբին առիւծոցն եւ սա ահագին վիշապացն թիւնից, ժահահոտն եւ ապա[կա]նիչն մարմնոցն. նման ադինական դրախտին անուշահոտ վիշապքն, որ հրաման առին ոտից մարդոյն եւ մարդն նորա գլխոյն աստ փոխի բնութիւնն նոքա ոտից սրբոյն սպասաւորեն, եւ սա զթիւնս բերանոյ նոցա անզաւր արարեալ։ 3 *Եւ ապա սգեցուցին հանդերձ եւ տարան ի Վաղարշապատ յԱրտաշատէ։* 4 *Եւ դիւացնածեալ կացուցին զՏրդատ առաջի նորա, մերկ, խայտառակ մարդիկն ամենայն գային ընդ առաջ մոլեգնելով ուտէին զմարմինս իւրեանց։* 5 *Իսկ սուրբն Գրիգորիոս կացեալ յաղաւթս, եւ նոքա ի զգաստութիւն դառնային ապա հր|399բ|ամայեաց ածել անդերձս զանձամբ, զի ծածկեսցեն զամաւթս իւրեանց։* 6 *Եւ թագաւորն եւ ամենայն նախարարքն բուռն հարեալ զոտից սրբոյն խնդրէին թողութիւն։* 7 *Իսկ սուրբն Գրիգոր մատուցեալ կանգնէր զնոսա ի գետնոյն եւ ասէր՝ ես մարդ եմ իբրեւ զձեզ, բայց դուք ծաներուք զարարիչն ձեր, որ արար զերկինս եւ զերկիր, զարեգակն եւ զլուսին եւ աստեղս։* 8 *Եւ յետ այսորիկ հարցանէր վասն Հռիփսիմեանց եւ գտեալ ամփոփէ, եւ առեալ գնայ ի հնձանսն եւ ինքն ի վանսն իսկ աւթեւանս առնէր։* 9 *Եւ ի վաղիւն թագաւորն եւ ամենայն նախարարքն ամբոխնիւն ամենայն ի ծունր իջանէին առաջի սրբոյն Գրիգորի եւ ոսկերաց սրբոց վկայիցն եւ ասէին. «Թո՛ղ մեզ զամենայն յանցանս չարեացն, զոր մեք ընդ քեզ արարաք եւ խնդրեա՛ յԱստուծոյ քո, զի մի կոր[իցուք]»*[1]*։* 10 *Եւ նա վարդապետեաց նոցա զամենայնի արարիչն աւուրս ԿՁ. (66) եւ բժշկեցան ամենեքեան եւ թափեցաւ ամենայն մորթ մարմնոյ թագաւորին եւ եղեւ ուրախութիւն մեծ եւ խորտակեցին զբագինս կռոցն յամենայն աշխարհն Հայոց հրամանաւ թագաւորին։* 11 *Եւ ապա յինքն թագաւորն ամենայն զաւրաւքն խաղայր գնայր ի Վաղարշապատ քաղաքէ յԱրտաշատ քաղաք եւ աւերեցին զբագինն Անահտական դիցն, ուր երեւեալ դիւացն ի կերպարանս նմանութեան այրուձիոց եւ հետ[եւ]ակ Զաւրմկան դատաւորի նիզակաւք վառեալ, զի նոքայ գոչելով զաղաղակ հարեալ փախչին եւ յԱնահատական մեհեանն անգանեէին եւ մարտ եդեալ ընդ մարդկան նետս անոյժս եւ քարաւէժս թանձրատարափս ի վերուստ շինուածոյն ի խոնարհ անգանէր եւ սրբոյն Գրիգորի, կնքեալ նշան |400ա| խաչին ի հիմանց կործանեցան մեհեանքն եւ լուցեալ հրդեցան, դեւքն փախստական եղեալ եւ անտի գան ի Դարանաղեաց գաւառն ի գեղն Թորթան <ի մեհեանն սպ> ի մեհեանն սպիտակափառն դիցն Բարշամինայ։* 12 *Աւերէին եւ զայն եւ զոսկին աղքատաց բաշխ՚ը (՞), եւ*

[1] *Հմմտ. Մատենագիրք Հայոց, Ա. Հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1410։*

գաւառին ուսուցանէր զբանն կենաց։ **13** *Եւ անտի գնայր յամուր տեղին անուանեալն Անի, ի կայանս հանկստեան գերեզմանաց թագաւորացն Հայոց եւ անդ կործանեցին զպատկերն Զեւդ (Զեւս՞) դիցն Արամազդայն եւ անտի ի սահմանակից գաւառն եկեղեցեաց ի մեծ մեհեանն թագաւորացն Հայոց, ի տեղսն պաշտաման Անահտական մեհենին, յԵզրն աւանի, ուր եւ ի նմանութիւն վահանաւոր զաւրաց երեւեալ դիւացն պատերազմէին, եւ մեծագոչ բարբառով զլերինս հնչեցուցանէին եւ ընդ փաղչելն նոցա բարձրաբերձք պարիսպքն կործանեցան եւ զոսկի պատկերն Անահտական դիցն կանաց փշրել եւ զոսկին եւ զարծաթն նուիրեալ։* **14** *Եւ անդ ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, քակէին զԱնահտական մեհեանն՝ դստերն Արամազդայ ի Թիլն աւանի եւ զգանձն եւ զտեղին թողին նուէր եկեղեցւոյն Աստուծոյ։* **15** *Եւ անտի ի Դերջան հասանէին Մեհրնական մեհեանն անու[ան]եալ որդւոյն Արամազդայ, ի գեղն Բագառիճ ըստ պարտեւերէն լեզուին եւ զայն ի հիմանց բրեալ խլէին։* **16** *Զգանձն աղքատաց եւ զտեղն նուիրել Աստուծոյ եւ զբնակիչսն ի հաւատ հաստատէին։* **17** *Եւ ապա թագաւորն ամենայն զաւրաւքն, կուսակալաւք, պետաւք, ազատաւք, դատաւորաւք, ամենեքեան յԱյրարատ |400բ| գաւառն հասանէին ի Վաղարշապատ քաղաքի։* **18** *Եւ ապա խորհի ամենեքումք զԳրիգոր հովիւ կացուցանել, եւ առաքեցին ի Կեսարիայ զաւրաւք բազմաւք եւ մեծամեծ իշխանաւք առ մեծ հայրապետն Ղեւոնդ եւ ձեռնադրի զսուրբն Գրիգոր հայրապետ Հայոց Մեծաց, եւ ի դառնալն անտ բերէր զնշխար սուրբ Կարապետի, եւ ի ճանապարհին, ուր գտանէր բագինք, կործանէր եւ հաստատէր եկեղեցիք, որ իբրեւ եհաս ի սահմանս Հայոց, լուաւ թէ մնացեալ են մեհեանք յերկիրն Տարաւնոյ՝ Գ. (3). առաջին՝ Վահեվահեն, Բ.՝ (2) ոսկեմաւր ոսկեծին դիցն, որ է ըստ յունականին Ափրոդիտէս, Գ. (3)՝ Վահագնի*[1]*, զորս կործանեաց եւ սկիզբն անդ արար շինել եկեղեցիս եւ մկրտեաց անդ ԺԹ. (19) բիւր մարդիկ։* **19** *Եւ ի գալն նորա յառաջ խաղ<աղ>աց թագաւորն աշխարհագումար ամբոխիւք, զա[ւ]րաւք, եւ զաւրապետաւք, եւ մեծայմեծ նախարարաւքն Հայոց. եւ հանդիպին միմեանց առ գետովն Եփրատես, եւ մկրտեաց անդ զթագաւորն եւ զզաւրս բազումս որ ոչ գոյ թիւ։* **20** *Իսկ յետ լուսաւորելոյն զՀայս, լուսով աստուածգիտութեանն եւ ջնջել զամենայն խաւար կռապաշտութեան եւ ելից զամենայն կողմանս եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք եւ ինքն սիրեալ զլերինս եւ զամայութիւն եւ զանհպարտութիւն մտացն յինքեան կեալ, որպէս զի խաւսիցի ընդ Աստուծոյ անզբաղապէս եւ փոխանակ իւր ձեռ-*

[1] *ձ-ում՝ «.գ. վահագնի, որ է ըստ յունականին ափրոդիտէս*

նադրէ զորդի իւր զԸռըստակէս, եւ ինքն երթեալ ի Դարանաղեաց գաւառին ի Մանեայ այրն։ 21 *Եւ յորժամ եկն որդի նորա Ըռըստակէս ի Նիկիայէ, սուրբն Գրիգոր երթեալ ի Տարաւն առ Ան|*401ա*|գոն ու Կրանիդէս։* 22 *Եւ կացեալ անդ ամիսս չորս, որք եւ ասացին ցնա թէ ծածկեա՛ զքեզ յառաւել փառացդ մատ ի ծերութեանդ, որպէս զմեծն Մովսէս, զի մի՛ ի պաշտաւն առնուցուն զոսկերս քո կամ գայթակղեսցին ի մեռանելն քո, որ եւ գնաց յայրն Մանեայ եւ այլ ոչ եւս երեւեցաւ։* 23 *Սա եղեւ քահանայապետ ի ԺԷ. (17) ամն Տրդատայ. մինչ ի ՀԶ. (76) ամն նորա եւ Լ. (30) ամ ոչ երեւեցաւ մարդոյ. փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց, եւ հովուացն գտեալ յեցեալ ի վերայ գաւազանի եւ այնպէս կայր վաղջանեալ, եւ ամս բազումս ծածկի աստուածային տեսչութեամբն, զի մի՛ ի պաշտաւն առնուցուն նորահաւատքն։* 24 *Իսկ յորժամ յայտնեցան հաւատք կողմանցս այսոցիկ, ի ժամանակս Զենոնի կայսեր եւ Վահանայ Մամիկոնէից տեառն մարզպանութեան, յայտնեցաւ ճգնաւորի ումեմն Գառնիկ անուն, եւ բերեալ եդաւ ի գեղն Թորթան։* 25 *Զայս լուեալ Զենոնի, առաքէ զաւրս բազումս ընդ զաւրավարին Միջագետաց, զի յայնժամ տիրէին կես աշխարհիս Հայոց, զի ոչ գոյր թագաւոր Հայոց, եւ զաւրավարն բազում լեգէոն զաւրաւքն եկեալ առ զնշխար սրբոյն Գրիգորի եւ ետ զաջն Հայոց վասն յառաջագոյն լուսաւորելոյն զնոսայ եւ այլն մասն ինչ։* 26 *Եւ զայլն տարաւ Կոստանդնուպոլիս, եւ այլ մասն ի սրբոց Հռիփս[իմեանց] եւ եդաւ անդ ի տապանի։* 27 *Եւ ի թու[ին] ԳՃԻԵ. (876) յայտնեցաւ։* 28 *Բայց եւ զայս ի գրոց տեղեկացաք՝ որ եւ ճշմարիտ են, եթէ յորժամ յայտնեցաւ ճգնաւորին Գառնկայ, հրամայեաց նմայ եւ եդ ի հիմն եկեղեցոյ, որ ի Թորդան, եւ ի խնդրելն թագաւորին Զենոնի տուին զնշխար Գրիգորիսի Արշակունեաց |*401բ*| եպիսկոպոսի, որ էր այր առաքինի եւ սուրբ, եւ յանուն նորա մեծարեցաւ, ուր եւ գտանի մասն ինչ։*

ԼԷ.

|401բ| ԽՈՐՀՈՒՐԴ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՂԱԶԱՐՈՒ, ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՆՑՆ, ՓՈՔՐ ԻՆՉ ՅԱՒԵԼԵԱԼ ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՅՈՀԱՆՆԷՍ [ՎԱՐԴԱՊԵՏԷ]

Ինչպես նկատվել է, Երզնկացին բացատրում, պարզաբանում է իր օգտագործած աղբյուրներում առկա տեսական-վերացական արտահայտություններն ու իմաստները: Նկատվել է նաեւ, որ նա շարքային հավատացյալներին առավել ընկալելի դարձնելու համար ասվածը, հաճախ պարզ օրինակներ է բերում առօրյա կյանքից ու կենցաղից:

Այս հակիրճ նախերգանքում եւս շարադրելով Արարչագործության հերթականության, ապա նաեւ Քրիստոսի կողմից հրաշագործությունների հերթականության իմաստը, մարդկանց աստիճանաբար ընտելացնելու համար ճշմարիտ հավատի ընկալմանը՝ նա դիմում է բոլորի համար պարզ եւ ընկալելի օրինակի, թե ինչպես մայրը զավակին աստիճանաբար սովորեցնում է փափկագույն կերակրից մինչեւ «զհաստագոյն կերակուրն»:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 401բ-4ա) ձեռագրի:

Ա. 1 *Արուեստք ամենայն յերիս որոշմունս բաժանեալ տեսանին. յարարչականն եւ ի բնաւորականն, որ է մասնաւորն յընթանուր մարդիկ: Արարչականն արուեստ է առնելն յոչ էից զարարածս եւ զարարեալն պահեալ նախախնամական զաւրութեամբ, ի յառնել անդ զգործնական իմաստութիւնն, ցուցանելով զխեռ եւ զանկարգ, եւ զանդաս, եւ զկրուն էութիւն եւ զընդդիմակացն բնութիւն, ածելով ի յարմարական միաբանութիւն: Յետ որոյ զտեսականն ցուցանէ իմաստութիւն, վկայելով յասելն, թէ «[Եւ] ես [Աստուած] զամենայն [զոր արար] եւ ահա բարի են յոյժ (Ծն. Ա. 31): 2 Եւ զնոյն աւրինադրէ մարդկային ազգի գործել վեցիւք եւ տեսանել միական, հանկչել ի բարին, եւ ուղղել զո՛չ բարին, յորմէ եւ գործնական եւ տեսական կենցաղն գոյանայ: 3 Եւ որ ոչն էր կարաւտ նիւթոյ կամ գործեացն եւ ժամանակի, ի չորից նիւթոց տեսակացոյց զամենայն արարածս եւ իւրով արարչական եւ արքունական զաւրութեամբն վարեցաւ, իբր գործեաւ: 4 Եւ թուական աւուրքք եւ ժամանակաւ առնէր զեղեալսն, զի մեք բանիւ եւ մտաւք վայելեսցուք ի գործնական եւ ի տեսական արարածս Աստուծոյ, եւ կարասցուք իմանալ զկարգ եւ զդաս սորա, եւ զսահման եւ զորոշումն, եւ զթիւ աւուրցն եւ ի նմա եղելոցն սեռից, զի կարգն մեզ զվերինն եւ զներքինն եւ զմիջինն ուսուց|402ա|անէ եւ դասն զառաջինն եւ զերկրորդն եւ զայլ հետակայսն: 5 Իսկ սահմանն զբնութիւն իւրաքանչիւրոցն եւ զանխառն առանձնաւորութիւնն յայտնէ:*

6 Իսկ որոշումն զզանազանութիւն եւ զպատիւն արժանաւորութեան։ 7 Եւ ժամանակն զանդրանկութիւն եւ զկրսերութիւն գոյիցս ցուցանէ եւ զաստիճան կարգաց գերակային եւ նուաստականին։

Բ. 1 Իսկ բնութեան արուեստի գործ է բոյսք եւ տունկք, եւ սգայական կենդանիք, նիւթք հալողականք եւ քարինք փայլունք։ 2 Եւ զի ամենայն արուեստ յումեքէ եւ յարտումեքէ եւ իւիք գործի, այսինքն՝ ի պատճառէ եւ ի նիւթոյ եւ ի ձեռն գործեաց։ 3 Եւ է բնութիւն պատճառ ամենայնի՝ յետ Արարչին, իբր զհոգի ընդհանուր կամ արուեստ աստուածային, կամ զաւրութիւն ի խնամոց նորին, եւ ունի զտարերքս՝ որպէս զնիւթ եւ զնման անմասունսն իբրեւ զգործի։ 4 Եւ գործ նորա հանուածոյք եւ բուսականք եւ կենդանիք։ 5 Եւ սկսանի ի խոնարհագոյնսն եւ ելանէ ի գերակայն եւ ի բարձրն, եւ ի փոքունցն առ մեծամեծսն, զի ի գիջութենէ ջրոյ եւ ի ջերմութենէ հրոյ սկսեալ կատարէ ի գեղեցկագոյն եւ ի պատուական նիւթսն՝ ի հալողականացն ազգ եւ ի լոյսանշոյլ քարինսն։ 6 Իսկ տնկոցն սկսանի դալարութիւն, որ ի քարինսն եւ միջովք զանազան բուսոցն եւ տնկոցն գեղազարդութեամբ ելանէ ի բարձրագոյնն յամբաւաբերն տունկ, որ յարեւ մերձ է, ի բանաւորն կենդանի։ 7 Իսկ կենդանեացն գոյութիւն ի գլխոյ անտի սկսանի եւ ապա նկարին ոտք եւ ձեռք եւ մասունքն |402բ| զգայական եւ ապա<յայ>, այլն ամենայն յաւդուած կազմածի մարմնոյն. եւ կատարի պատկեր եւ տեսակ բանաւոր կենդանւոյն։ 8 Իսկ նիւթական արուեստաւորք, յորոց ունակացեալն է ներհմտական կրթութեամբ յանկերպ եւ յանձեւ նիւթոյ արուեստական գործաւք տեսակ եւ կերպարան ի նիւթոյն տպաւորէ, որով ճանաչի տեսողաց, թէ գործ արուեստաւորի է, որպէս քարադրաւշիցն կամ հիւսնականին՝ ի փայտից, եւ յայլ նիւթոց, այլոցն արուեստագիտաց։

Գ. 1 Արդ, Տէրն յերկրորդում եւ ի բարձրագոյնն եւ հրաշափառ արարչութեանս համեմատաբար ըստ առաջնոյն վարեցաւ՝ ի նորոգումն արարածոցս բարեբարութեամբ եւ արդարութ[եամբ եւ] իմաստութեամբ եւ զաւրութեամբ, եւ է որ ըստ բնութեանն ներգործութեան, այլեւ ըստ տեսական արուեստի, որոց համեմատական բաղդատութիւնն առ միմեանս առնելով, յոլովից կարաւտի քննութեան եւ բանի։ 2 Այլ զայն յայտնեսցուք, զի որպէս անտի նուազագունից առ մեծամեծսն եւ ի նուաստականացն ի բարձրագոյնսն արար զկարգ եղելոցս, զի նախ զբուսական եւ զտնկականսն ած ի լինելութիւն, որ ունի զաճեցականն եւ զկերակրականն, եւ ապա զգայական եւ զանասնական կենդանեացն ազգ, եւ ապա ի բարձրագոյնսն ելեալ զբանաւոր կենդանին՝ զմարդն առնէ, որ զամենայն ունի կատարելութիւն կենաց, կերակրելով եւ զգալով, եւ բանի հասեալ, որ|403ա|ով հանգոյն եւ հաւասար ամենայն աշխարհի տեսանի։

Դ. 1 *Եւ բանականաւն զԱրարչին բերէ պատկեր եւ նմանութիւն։* 2 *Ըստ այսմ նմանութեան եւ ի նորումս առնէ արարչութիւն, սկիզբն նշանաց առնելով նախ զջուրն ի գինի փոխարկեալ եւ ապա ձեռնարկելով ի մարդկային մարմնոյ բժշկութիւն. զամենայն խեղութիւնս անդամոց ա՛ծ յուղղութիւն՝ ուր ոտիւք, ուր ձեռաւք, ականջաւք եւ տեսանելաւք եւ այլ ամենայն մասամբք մարմնոյ։* 3 *Ընդ նմին եւ զդեւս հալածական արար ի մարդոյ անտի։* 4 *Իսկ իբրեւ եկն մերձեցաւ ժամանակ կատարման ի լրումն ամենայն նշանացն՝ զյարութիւն Ղազարու եցոյց, ըստ Յոհաննու Աւետարանագրի։* 5 *Յետ այնր սքանչելեաց, այլ ինչ վասն նշանաց ինչ ոչ ճառէ, այլ ի ճառս խաչելութեանն մտանէ։* 6 *Եւ թէպէտ ի յարութենէն Ղազարու մինչեւ ցլուսաւոր յարութիւնն բազումս եւ բարձրագոյն ճոխութեամբ իրագործութիւնք եղեն, այլ ի համար առաջի նշանացն ոչ թուին։* 7 *Այսինքն՝ աւծումն ոտիցն ի Մարիամայ, խոնարհութեամբ յովանակաւ մեծահռչակն մուտն յԵրուսաղէմ։*

Ե. 1 *Հրաշք ահագին աւուրն խաչելութեան բազումք, որք յարեան ընդ նմա ի մեծասքանչ յարութեանն աւուր։* 2 *Այս ամենայն նշանք են եւ սքանչելիք, այլ ըստ Յոհաննու առ Ղազար սահմանեցաւ կատարումն նշանագործութեանն, իբրեւ ի գլուխ ի կազմածի կենդանւոյն եւ իբրեւ ոմն մարդ՝ ի մարդկայինն տեսակ՝ թագաւորականն* |403բ| *պատուովն առաւելեալ, ի միական բնութեամբ կենդանին։* 3 *Քանզի որպէս մայր զուգապէս դիեցուցանելով, մինչդեռ տղայն է, փափկին եւ գիջին բերանոյն զկաթն պտկան ի բերանն դիցէ եւ ատամնաւորի եւ աճեցելոյն զհացն ո՛չ խիստ եւ անկազմ, զի միք անցից քերել խստաւ կերակրաւն լնդացն փափկութիւն, այլ իւրովք ատամամբքն մալեալ եւ ծասկեալ չափաւոր։* 4 *Եւ կշէռ զաւրութեանն այնմ, որ մատուցանեն արար, եւ ապա ըստ յաւելուածի զաւրութեանն աճեցելոյ ընդելեալ ընդ փափկագոյնսն հանդարտ տղա[յ]ոյն մատուցանէ զհաստատայգոյն կերակուրն։* 5 *Այսպէս զմարդկային փոքրոգութիւնն Տէրն իբր զտղայ իմն անկատար, ի ձեռն հրաշիցն կերակրելով եւ դիեցուցանելով, եցոյց զյարութեանն գործն ի ձեռն խոնարհագոյն արմանագործութեանն, զհաւատսն ընդելացուցանէ. մեծամեծաւքն նախ սաստէ ջերմանն, որով զոքանչու Սիմոնի ջեռեալ, մինչ զի կարել սպասաւորել որոց ի տանն կային։* 6 *Եւ ապա սակաւ ինչ յաւելեալ զթագաւորազինն որդի, զոր ասէ պատմութիւնն, հանդերձեալ մեռանել։ Դարձեալ կարգաւ ի բարձրագոյնս ելանէ առ աղջիկ քահանայապետին եւ ապա յաւելեալ ի սքանչելիսն զորդի այրոյն, որ ի Նային քաղաքի, որ*

այնչափ հեռի էր, որ չեւ եղեալ էր ի գերեզմանի։ 8 Իսկ յեւս բարձրագոյնսն աճեցեալ հրաշագործութիւնն, զՂազար մեռեալ չորեքաւրեայ յարուցան|404ա|էր ձայնիւ։ 9 Տես զկարգ ելիցն ի բարձրագոյնսն։ 10 Այն, որ մեռանելն հանդերձեալ էր պատանեակն, որ ի կենաց արդ եւս դադարեալ էր, այն որ ի գերեզմանն ի տապանին էր զապականեալ մեռելովն, եւ ոչ միայն այլոց մարմնով, այլեւ իւրն մարմնով, հաստատեաց զհաւատ յարութեանն։ 11 Եւ այսպէս անսահմանն՝ ըստ աստուածութեանն սահմանեցաւ, թուական ամաւք, ըստ մարդկութեանն, եւ որ եմուտ ընդ սկզբնաւորութեամբ՝ եկն ի կատարելութիւն, զմարմնաւոր նշանայգործութիւն կատարեաց առ ի յարութիւն սիրելոյն եւ զչարչարանացն կատարումն պտղոյ, ետ իւրով յարութեամբն զինքն տարեալ-հանեալ յանբաւ բարձրութիւն գերակայ փառացն։ 12 Եւ ապա ի նոյն յուսով զամենայն աշխարհ ընդ նմին յարուցեալ եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս։ 13 Այլ այժմ զՂ[ազ]արու յարութեանն տեսցուք զխորհուրդ։

ԼԸ.

|404ա| ՄԵԾ ԱՒՈՒՐ ՀԻՆԳՇԱԲԱԹ[Ի], ԵՒ ԹԷ ԿԱՄԻՍ՝ ՁԱՏԿԻՆ, ՅԱՍԱՅՈՒԱԾՈՅ ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՀՐԱՄԱՅ ԿԻԼԻԿԵՅՈՅ Ի ՄԻ ԱԾԵ[Ա]Լ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՒԱՍՏ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱՅՈՅ. ԹԷ ԿԱՄԻՍ՝ ՁԱՏԿԻՆ Ի ԴԷՊ Է, ԵՒ ԹԷ ՀԻՆԳՇԱԲԱԹ[Ի]

Ինչպես արդեն իսկ նշել ենք, զերծ մնալով Երզնկացու երկերում առկա աստվածաբանական, մեկնողական, փիլիսոփայական արժեքների վերլուծությունից, այն թողնելով համապատասխան մասնագետների քննությանը՝ ձգտել ենք թեեւ հակիրճ ներկայացնել յուրաքանչյուր երկում եղած պատմագիտական, բանասիրական կարեւորություն ունեցող այն խնդիրները, որոնք բացահայտում են Երզնկացու աշխարհայացքը ժամանակի քաղաքական, դավանաբանական, լուսավորչական հարցերին, ինչպես եւ անդրադարձել ենք նրա կենսագրության առանձին մանրամասներին: Այդ իմաստով որոշակի մտահանգումների տեղիք է տալիս նաեւ ստորեւ հրատարակվող քարոզը: Ինչպես հայտնի է, աշակերտելով ժամանակի ականավոր գիտնական Վարդան Արեւելցուն, Երզնկացին ոչ միայն շատ հաճախ երախտագիտությամբ ու մեծարանքով է հիշում իր սիրելի ուսուցչին, այլեւ հաճախ օգտվում է նրա երկերից, այդ մասին տեղյակ պահելով ընթերցողին: Նա նույն կերպ է վարվում նաեւ ինչպես իր նախորդների, այնպես էլ իր ժամանակակից այն հոգեւոր եւ աշխարհիկ գործիչների նկատմամբ, որոնք իրենց նպաստն են բերել հայոց պետականության ամրապնդման, եկեղեցու դավանանքի պաշտպանության եւ ժողովրդի լուսավորության գործին:

Լինելով իր ժամանակների համար ընդգծված լայնախոհ գործիչ եւ միաժամանակ հայոց եկեղեցու դավանանքի աննահանջ ախոյան, Երզնկացին գիտական մոտեցում է հանդես բերում քրիստոնեական եկեղեցիների ծիսական, կանոնական առանձնահատկությունների նկատմամբ:

Գտնելով, որ քրիստոնեական եկեղեցիների միջեւ եղած ծիսական եւ կանոնական տարբերությունները չպետք է խոչընդոտեն քույր եկեղեցիների մերձեցմանը, քանզի քրիստոնյաներին միավորողը ոչ թէ տարբեր ժամանակներում, տարբեր միջավայրերում ընդունված ծեսերն ու կանոններն են, այլ հավատն առ Քրիստոս, Երզնկացին, փաստորեն, կոչ է անում հետեւել հայոց Առաքելական եկեղեցու որդեգրած այն սկզբունքին, որ յուրաքանչյուր քրիստոնեական եկեղեցի անխաթար պահպանելով իր նախնիներից եկած ավանդույթները, կարող է առանց մեղանչելու առ Աստված ունեցած հավատի դեմ համագործակցել մյուսների հետ: Սակայն կա մի հարց, որին թեեւ այլ առիթներով անդրադարձել ենք, այնուամենայնիվ հրատարակվող քարոզի առնչությամբ եւս անհրաժեշտ ենք համարում որոշ բացատրություններ տալ: Խնդիրն այն է, որ Երզնկացին խորին հարգանքով եւ մեծարանքով է խոսում ինչպես Գրիգոր Անավարզեցու, այնպես էլ Հեթում Բ. թագավորի մասին, որոնք ավելի ուշ փաստորեն դարձան կաթոլիկական դավանանքի ընդունողները Կիլիկիայում, առժամանակ սակայն այդ փաստը

թաքցնելով: Հետագայում, ինչպես հայտնի է, այդ հանգամանքը ծանր հետեւանքներ ունեցավ հայկական թագավորության համար. փաստորեն, երկիրը նետելով դավանաբանական դաժան հակառակության մեջ, որին զոհ դառնան բազմաթիվ հոգեւոր եւ աշխարհիկ անձինք: Ցավոք, միարարական շարժման ակտիվ գործիչներից է եղել նայեւ ԺԳ. դարի Կիլիկյան ականավոր վարդապետներից Վահրամ Բաբունին, որի նկատմամբ եւս Երզնկացին ակնածանք է ունեցել, այլապես անհնար է կարծել, թէ նա ինչպես կարող էր նույն քարոզում ի մի բերել սիրելի ուսուցչի եւ միարարականությանը հարող Վահրամ Բաբունու երկերից քաղված մտքերը: Նախորդ ուսումնասիրողներին այս խնդիրը չի մտահոգել այն պարզ պատճառով, որ նույնացվել են Երզնկացի նույնանուն երկու նշանավոր վարդապետները՝ Հովհաննես Պլուզը եւ Հովհաննես Ծործորեցին: Հովհաննես Պլուզին վերագրելով Ծործորեցու ապրած տարիները, ինչպես եւ միարարությանը հարած գործունեությունը, անհաջող փորձ է արվել Հովհաննես Երզնկացի Պլուզի հայացքների փոփոխությունը վերագրել նրա հետագա առավել հասուն տարիներին: Կարծում ենք՝ այս թվացյալ կնճիռը վերջնականապես պարզում է Արեւելցուն աշակերտած եւ Հովհաննես Երզնկացուն դասընկեր եղած մեկ այլ ականավոր գիտնական վարդապետի՝ Գեւորգ Սկեւռացու վարքագիրը: Վերջինս, ըստ արժանավույն գնահատելով ինչպես Գրիգոր Անավարզեցու, Վահրամ Բաբունու եւ նրանց հետեւող Հեթում Բ. արքայի գիտական, իմացական հատկանիշները, միաժամանակ ծանր մեղադրանքներ է ներկայացնում վերջիններիս, ինչպես եւ Անավարզեուց հետո կաթողիկոս դարձած Կոստանդին Գ. Կեսարացուն, որի մասին գրում է արգահատանքով ու խորին արհամարանքով ավելացնելով, թե «արծաթով ընդունցին»[1]:

Սակայն ինչպես նշում է վարքագիրը, այդ ամենը տեղի է ունենում շատ ավելի ուշ, երբ արդեն վաղուց վախճանվել էին Լեւոն Գ. թագավորը, ինչպես եւ Հովհաննես Երզնացին: Ավելին՝ ինչպես գրում է նույն կենսագիրը, նույնիսկ Երզնկացու մահից տարիներ անց թեեւ Հեթում արքան եւ Գրիգոր Անավարզեցին հարել էին կաթոլիկությանը եւ ընդունել էին Քաղկեդոնի ժողովի որոշումները, սակայն այն գաղտնի էին պահել հանրությունից, եւ միայն Օշին թագավորի եւ Կոստանդին Կեսարացու օրոք այն բացահայտվեց, որը պատճառ դարձավ ժողովրդական նոր լուրջ հուզումների: Հակառակ թագավորի եւ Կոստանդին կաթողիկոսի գործադրած բուռն ճնշումներին ու հալածանքներին՝ փաստորեն, ինչպես Սսի 1307 թ., այնպես էլ հետագայում տեղի ունեցած Ադանայի ժողովների որոշումները մերժվեցին ինչպես Կիլիկիայի, այնպես էլ Հայաստանի հոգեւորականքյան մեծ մասի եւ ժողովրդական ամենատարբեր շերտերի կողմից:

Հրատարակվում է ըստ ՄՄ 2173 (Ա. 404ա-420բ, 423ա-424բ, 421ա-422բ) ձեռագրում պահպանված միակ օրինակի:

Ա. 1 *«Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ [որդիսն Իսրայէլի]»* (**Ելք ԺԲ. 1, 3**)*:* **2** *Աստուածայինքն իւրք են միայն, եւ ոչ ոք է նմա բաւական,*

---

[1] *Տե՛ս* Է. Բաղդասարեան, *Գէորգ Սկեւռացու «վարքը».- «Բանբեր Մատենադարանի», 7, Երեւան, 1964, էջ 431:*

քանզի իւրքն ամենայն ինքնաչափք են եւ ինքնաթիւք, զի ինքն ինքեան է բաւական եւ ամենեցուն, եւ նմայ՝ ոչ ոք։ **3** *Զի որպէս ըստ առն եւ զաւրութիւն իւր, եւ ըստ եղականի եւ եղելութիւն իւր, քանզի գիտութիւն ցուցանէ զ|404բ|գիտնականն եւ զգալին՝ զգայականն, եւ զաւրութիւն՝ զզաւրաւորն, եւ դրամն՝ զդրողն, որպէս եւ աստուածայինքն բանք եւ գործք, որ զԱստուածոյ գուշակեն եւ ո՛չ են նման ումեք գործոց կամ բանից։* **4** *Զի Բան Նորա գործ է կատարեալ, եւ գործ Նորա անկարաւտ է նիւթոյ, որպէս երկին եւ երկիր, քանզի ոչ յայտնեաց Աստուած Զինքն իսկութեամբ բնութեան երեւմամբ եւ ոչ գործով զորքանութիւն զաւրութեանն, եւ ոչ բանիւ զիմաստութիւն հանճարոյն, այլ որչափ կարէր տանել լայնական ծոցով անմահական բնութիւն անմարմնոցն՝ նոցա յայտնեաց, եւ ըստ քանիութեան ներգործող մտացս մերոց խառնեցելոց ընդ մարմնոյ եւ մահկանացու բնութեանս սահմանի եւ զգալի աշխարհիս տարողութեան, մանաւանդ որ անքան կարէր բառնալ հաւատ մեզ, յայտնեաց, եւ աւետեաւք խոստացեալ է ընդ նորանալն երկնի եւ երկրի, եւ հրեղէն նորոգման հողեղէն բնութեանս՝ բանալ նորայգոյն դպրութեան, եւ ըստ զաւրացելութեան մեր յայտնել Զինքն եւ զիւրական բարեացն խորս, եւ զիմաստութեան իւրոյ զանդունդս առատս, զոր եւ հազարապետն խորոցն Աստուծոյ Պաւղոս ասէ. «Զայժմուս փոքր ի շատէ հայելաւ եւ աւրինակաւ, իսկ զայն դէմ յանդիման եւ յայտնապէս» (**Ա. Կրնթ. ԺԳ. 12**), որ եւ ոչ միայն աստուածայինքն ծածկեալ են իմաստք յայժմուցս, այլ եւ՝ կեանք մեր ընդ Քրիստոսիւ յԱստուած։* **5** *Եւ յորժամ Նայն յայտնեսցի, եւ մեք՝ ընդ Նմա փառաւք, որպէս եցոյց ըստ չափոյ բառնալոյ սգայ|405ա|ութեան եւ մտաց Մովսիսի եւ Ահարոնի յերկրին եգիպտացւոց, եւ զզաւրութիւն եւ զերկայնմտութիւն առ փարաւոն եւ առ իւր զաւրսն, եւ զճշմարտութիւն խոստմանն աւետեացն եւ զսէրն իւր առ որդիսն Իսրայիղի։* **6** *Որ եւ կատարած եւ գլուխ դնէ երկոցունցն պատժոցն Եգիպտոսի զմահ անդրանկացն եւ սիրոյն Իսրայիղի, զազատութիւն ելիցն զենմամբ գառանցն ի խորհուրդ կատարեալ ազատութեան աշխարհի։* **7** *Զենմամբ անմահ գառինն, որ եբարձ զմեղս աշխարհի, ի նմին ամսէն եւ ի նոյնքանիս ամսոյն, զոր եւ արդ պատուիրէ խաւսելով ընդ Մովսիսի եւ ընդ Ահարոնի, ասելով. «Ամիսս այս եղիցի եղիցի ձեզ սկիզբն ամսոց առաջին, եղիցի ձեզ յամիսս տարոյ» (**հմմտ. Կողոս Գ. 3**)։*

Բ. 1 *Նախ առաջին զաւրութիւն բանին Տեառն այս է, զի կամի զազգն ի բաց տանել յամենայն ազգաց սովորութեանց եւ ի դպրութեանց, ի ժամանակաց եւ յամսոց, որ եւ ի գործոց եւ ի պաշտամանց նոցա, քանզի որպէս ասեն եբրայեցւոց ամսոցդ դիրն յԱդամայ հետէ է, զոր Էնովս եւ*

էնովք արձանացուցին եւ Նոյիւ յայս կոյս էանց ջրոյն եւ բերաւ պահեցաւ, եւ յԵգիպտոս մոռացաւ։ 2 *Վասն որոյ ուսուցանէ Աստուած զմոռացեալն վերըստին առնուլ։* 3 *Իսկ այլոց ազգացդ ի բաժանմանէ լեզուացն իւրաքանչիւր լեզուի նահապետ, յորում ժամանակի չոգաւ յաշխարհն իւր, զայն եդ սկիզբին ամսոց։*

Գ. 1 *Արաբացին եւ մակեդոնացին մերձ ի գարունն հասին յաշխարհն իւրեանց, դարձեալք ի ցրմ|*405բ*|անէ աշտարակին, յԱւելեացն ի չորսն, եւ անդ եդին սկիզբն ամսոց իւրեանց։* 2 *Յարակայն եւ Է.երեկն (7) եբրացւոյն, որ էր մնացեալ ի յիշման։* 3 *Եգիպտացիքն եւ եթէովպացիք ի Յուլիս ԺԱ. (11) նաւեցին յաշխարհն իւրեանց, եւ անդի յառաջ չափեն զամիսս իւրեանց, եւ Է.երրեակ (7) պատկեր աւուրն։* 4 *Յոյնք ի Մէհրշվանի ԺԷ. (17) հասին, իսկ Է.երրեակ (7) պատահք աւուրն։* 5 *Հայկն Իլուլի ԺԵ. (15) եհաս յաշխարհս իւր եւ հասարակածն ի Մահեկանի ի ԻԲ. (22) պատահեաց, յարակայ եւ Է.երրեակ (7) պատահք աւուրն։* 6 *Եւ այլոցն նոյն աւրինակ, յորոց որիշս հրամայէ գնալ եւ վարիլ ժամանակաւք, որդոցն Իսրայէղի զիրաւացին եւ զպատշաճաւորն դնելով սկիզբն։* 7 *Քանզի ի Մարտի ի ԺԷ. (17) սկսանի աւրն արարչութեանն, յորում ասաց Աստուած՝ «Եղիցի լոյս», եւ Ի. (20) հասարակած, որ է Ավելեացն Դ. (4), եւ ի ԻԲ. (22) մուտն Նիսան ամսոյ, եւ կազմութիւն առաջին մարդոյն, որ եւ այնպէս թարգմանի Նիսան Կազմութիւն, զոր հրամայէ սկիզբն դնել ամսոց։* 8 *Եւ առաջին կոչէ, քանզի է ինչ որ դասիւ եւ կարգաւ է առաջին, եւ է՝ որ զաւրութեամբ եւ պատուով, այլ սա դասիւ եւ զաւրութեամբ առաջին է, երկոքումք մեծ պատուով մեծարել, որ ի Դ. (4) յեղանակ տարոյն զառաւելն ունի զաւրութիւն, յորում աղբերաբար բղխեն տարերք զբոյսս եւ զպտուղ, եւ կենդանիք զլինելութիւն ծնընդոց։* 9 *Այլ եւ մերում փրկութեանս եւ ազատ|*406ա*|ութեանս եղեւ ժամանակ կատարման եւ սկիզբն հոգեւոր գարնան, եւ ամենաբուխ բարեաց կատարումն։* 10 *Ամիս այս, հայելով առաջնոցն ի Լուսին, որ յԼ. (30) աւրն լիութիւն եւ պակասութիւն կրէր, ասացին. Իմ ես աւրինակս յեղման եւ կարճակեաց փոփոխմանդ, զոր եւ Տէրն զփոփոխական եւ զմեռելոտի բնութիւնս յաստուածային բնութիւնն խառնմամբ, անշփոթելեաւ անապականս եւ անփոփոխ կազմեաց։* 11 *Յայսմ ամսեան զմահ ճաշակեալ կամաւորապէս եւ Գ. (3) աւրեայ յարուցեալ կայ եւ մնայ յաւիտեան. մեր եղել յարացոյց սկզբնատիպ եւ գրաւական, ըստ Պաւղոսի ասիցն, թէ՝ որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառաւքն Հաւր, նոյնպէս եւ մեք ի նորոգումն կենաց*

«շրջեսցուք» (Հռմ. Զ. 4), ի մերում յարութեանն՝ գնալով ի կեանսն յաւիտենականս, անմահացե[ա]լ մարմնով ի յայնմանէ, որ եղեւ մեզ ամենեւին բարի առաջին եւ սկիզբն կենդանութեան «տարեկան՝ Տեառն ըդնունելի» (Ղկ. Դ. 19), տնաւրէնութեան նորա ժամանակ սկսեալ եւ պսակ տարոյ քաղցրութեան երեւեալ։

Դ. 1 *«Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ Ահարոնի ի յերկրին եգիպ-[տացւոց] եւ ասէ. Ամիս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիս տարոյ։ 2 Խաւսեցաւ Տէր ընդ ամենայն ժողովրդեան որդւոցդ Իսրայէղի եւ ասացես ի Ժ.երրորդում (10) ամսեանս այսորիկ առցեն ոչխար ըստ տունս ազգաց։ 3 Ոչխար ըստ երդ. եւ թէ սակաւք իցեն ի տանն, որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր զդ|406բ|րացի իւր եւ զընկեր իւր ըստ մարդաթուի։ 3 Իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն։ 4 Ոչխար կատարեալ՝ արու տարեւոր լիցի ձեզ, յաւդեաց եւ յայծեաց առնուցուք, եւ եղից[ի] ձեզ պահե[ա]լ մինչեւ ի Դ. եւ ի Ժ. (14) աւր ամեսանս այսորիկ։ 5 Եւ զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդոցն Իսրայէղի ընդ երեկս, եւ առցեն յարենէն եւ դիցեն ի վերայ երկուց սեմոցն եւ բարաւորի տանն, յոր ուտիցէք զնոսա։ 6 Եւ կերիջիք զմիսն ի գիշերիս յայսմիկ՝ խորովեալ հրով, եւ բաղարջ ընդ եղեգի կերիջիք, եւ մի՛ ուտիցէք հում ի նմանէ եւ մի՛ պախ եփեալ ջրով, այլ խորովեալ հրով զգլուխն՝ ոտիւքն հանդերձ, եւ զփորոտի նորա։ 7 Եւ մի՛ թողցուք ի նմանէ յայգ, եւ ոսկր մի՛ բեկանեցէք ի նմանէ, եւ որ ինչ մնասցէ ի նոցանէ յայգ՝ հրով այրեսջիք։ 8 Եւ այսպես ուտիջիք՝ գաւտիք ձեր ընդ մէջ, եւ կաւշիկ ձեր յոտս, եւ ցուպ[1] ձեր ի ձեռին։ 9 Եւ փութանակի կերիջիք, զի Զատիկ Տեառն է, եւ անցից ընդ ամենայն երկիրդ եգիպտացոց ի գիշերիս յայսմիկ։ 10 Եւ յամենայն դիս նոցա արարից վրեժխնդրութիւն, զի ես եմ Տէր, եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վերայ սեմոց տանցն, յորս ուտիցէք դուք անդր, եւ ապրեցուց զձեզ» (Ելք ԺԲ. 1-13)։*

Ե. 1 *Եւ արդ, պարտ է նախ քան զմեկնութիւն բանիս, տեսանել զզան[ազան]ութիւն անանց տաւնիս։ 2 Արդ, կոչի տաւնս այս լրումն տաւն չորեքտասաներորդի եւ տաւն խորհրդոց եւ տաւն Զատկի։ 3 Եւ է տաւն չորեքտասաներորդի. «ըստ թուոյ առաջին ամսոյն արասցես տաւն Զատիկ Տեառն»։ 4 Իսկ տաւն խորհ|407ա|րդոց, վասն զի այսպէս յայտնեաց Քրիստոս զսուրբ խորհուրդն իւրոց առաք[ելոց]ն ի վերնատանն խորհրդոյ, զի ո՛չ յանդիման այլոց մարդկան լուաց զոտս նոցա եւ ետ զմարմին եւ*

[1] *ձ-ում ցուց*

զարիւն իւր սուրբ ճաշակել նոցին, այլ անձինն խորհրդով կատարեաց, այլեւ խորհուրդն, զոր նախածանուցին տեսանողքն, այսպէս լցաւ։ 5 Իսկ տան Զատկի կոչի, այլ եւ Պասքա հրէիցն եւ մեզ հաւատացելոցս։ 6 Հրէիցն, զի յայսմ աւուր ազատեալք ելին յԵգիպտոսէ ի դառն ծառայութենէ փարաւոնի եւ անուանեցին զաւրս զայս Զատիկ, որ թարգմանի Ուրախութիւն, զի այսպէս ուրախացան նոքայ զենմամբ գառինն խորհրդոյ, զոր հրաման տուին Մովսէսի եւ արեամբ աւծանել զսեամս մտից տանն, անվնաս մնացին ի սատակչէ անտի եւ զանդրանիկս թշնամեացն սատակեալ տեսին։

Զ. 1 Կոչեցին եւ Պասքայ զսոյն աւր, որ թարգմանի անցանակ, զի յետ զգառն ուտելոյ, բաղարջովն եւ դառնճաւ ելեալ յԵգիպտ[ոս]է, անցին ընդ ծովն Կարմիր, ճանապարհորդեալք յերկիրն աւետեաց։ 2 Իսկ մեզ՝ հաւատացելոցս կոչի սա Զատիկ, զի յայսմ աւուր արեամբ գառինն Աստուծոյ Հաւր ազատեցաք ի ծառայութենէ իմանալի փարաւոնի եւ յեգիպտական կռամոլութեանցն՝ ի խաւարտեսակ ախտիցն եւ ուրախացեալք ի փրկութիւն մեր ուրախութիւն, զաւրս զայս կոչեցաք եւ անցանակ, զի յայս աւր ազատութեամբ նորով ազատեաց զմեզ Քրիստոս՝ գառն անապական, անցաք |407բ| ընդ ծով մեղաց կենցաղոյս ճանապարհորդեալք յերկնային երկիրն, որով վայելչութիւնն ո՛չ է նու[ռ]նեաց եւ ձիթենեաց եւ թզենեաց եւ այգեաց տանց եւ ջրհորոց, այլ՝ արքայութիւն եւ պտուղն կենաց եւ սեղանն կենդանար[ար] եւ կեանքն անվաղճան։ 3 Քանզի եւ ո՛չ փրկութիւնն մեր իբրեւ զնոցայն, զի որպէս մարմնակեր շարչարանք նոցա, սոյնպէս ըստ մարմնոյն փոխանորդեցին զուրախութիւն։ 4 Իսկ մեզ, զի հոգւոց էին վիշտքն եւ անմարմին պատերազմ, հոգեւոր եւ անապական ընկալաք զուրախութիւն, զի նոքա Մովսիսիւ եւ արեամբ գառինն փրկեցան, իսկ զմեզ Քրիստոս գառն ան<նա>արատ իւրով կենարար արեամբն ազատեաց։

Է. 1 Եւ արդ, զի զզանազանութիւն անուանց տաւնիս ասացաք, պարտ է որ յայսմ աւուր փրկագործութիւնք կատարեցան ի Քրիստոսէ ասել մեզ։ 2 Բայց արժան է նախ զաւրինակացն բուռն հարկանել եւ ըստ կարգի ցուցանել զճշմարտութիւն, զի յայտնի լիցի, թէ ի սկզբան անդ նկարեալ էր խորհուրդ զենմանն Քրիստոսի յաւրինակի անդ, եւ այժմ, յորժամ բարձաւ քողն, լուսաւորեցաւ։

Ը. 1 «Խաւսեցաւ Տէր ընդ»։ 2 «Զամենայն աւրէնսն ստուեր հանդերձելոցն» (**Եբր. Ժ. 1**), գրեաց աստուածայինն առաքեալ եւ նոյն ինքն Աստուած ասաց ցՄովսէս, յորժամ վասն սոցունց աւրինադրէր. «Տե՛ս, ասէ, արասցես զամենայն ըստ աւրինակի խորանին, որ ցուցաւ քեզ ի լերինն» (**Ելք Իե. 39**)։ 3 Նկարագրութիւն իմն եւ նախագիծ աներեւութիցն եցոյց

զերեւելիսս, զի ոչ ինչ վայրապար եւ անիմաստ եւ ի վա|408ա|յր անկեալ յայնցանէ հրամայեցաւ, եւ ո՛չ անարժան Աստուծոյ աւրինադրութեանն եւ Մովսիսի գործակցութեանն, այլ բարձրագոյնք եւ աստուածայինք եւ լի իմաստութեամբ, թէպէտ եւ դժուարին է զիւրաքանչիւր ուրուք ստուերացն զիւրաքանչիւրս գտանել տեսութիւն, զի այս Մովսիսի է, եւ որք ըստ նորայն առաքինութեանն եւ իմաստութեանն բարգաւաճեալ են։ 4 *Բայց մեք ըստ մերում նուաստութեանս, զի մի՛ ինչ յաւրինակացն յորս առաւելապէս, քան յայլսն փրկայգործութեան մերոյ խորհուրդ, որ յայսմ աւուր կատարեցաւ ի Քրիստոսէ ամբարեալ կայ, ի ձեռն առեալ ըստ կարգի բացայայտեսցուք, ըստ իւրաքանչիւրոցն առընթեր դնելով աւրինակին զճշմարտութիւնն, ըստ աստուածային արանց տեսութեան։*

Թ. 1 *«Խաւսեցաւ ընդ Մովսիսի եւ ասէ. Ամիս այս եղեւ առաջին»*[1]*։* 2 *Ի գարնանային հասարակութենէն հրամայէ զամիս տարոյն թուել՝ զպատուականութիւն նորին յուշ առնելով։* 3 *Քանզի յայսմ ամսեան ի սկզբան անդր ի չգոյէ ի գոյութիւն էած զամենայն երեւելի արարածս բուսովք եւ տնկովք եւ կենդանեաւք, այնպէս որպէս ի գարնանային տեսեալ լինի ժամանակի։* 4 *Եւ ի նոյն ամսեան ստեղծագործեաց զԻսրայէլ, ազատելովն յԵգիպտոսէ։* 5 *Այլ եւ յայսմ գարնանային ամսեան արեգակն արդարութեան Քրիստոս հանդերձեալ էր գարուն առնել հոգոց մարդկան իւրով գալըստեամբն եւ վերըստին արարչագործել զեղծեալ պատկ|408բ|երս կենդանարար եւ լուսաւոր տնաւրէնութեամբ իւրով։* 6 *Եւ զի՞նչ հրամայէ Մովսիսի առնել յայսմ ամսեանն։*

Ժ. 1 *Խաւսե[ա]ց եւ ասէ ընդ ամենայն ժողովրդեան որդ[ւոց] Իսրայիղի եւ ասասցես. «Ի Ժ.երրորդում (10) ամսեանս այսորիկ առ ոչխարս»։* 2 *Ընդ յաղթութեանն, զոր յաղթեցին Եգիպտացւոցն, համրայէ ամենայն ժողովրդեանն ոչխար պատարագ մատուցանել Աստուծոյ, այլ զի եւ արիւնն փրկիչ եղիցի անդրանկաց, զի մի՛ ընդ եգիպտացոց անդրանկացն սատակեսցին։* 3 *Բայց խնդրելի է, եթէ ընդէ՞ր, զի ի չորեքտասաներրորդ աւր ամսոյն զենլոց էր պատարագն. ի տասներրորդեան նորին ամսեան առնով հրամայէ, ուսուցանելով նոցա մի՛ վարկպարազի եւ առանց պատրաստութեան զպատարագն Աստուծոյ մատուցանել, այլ խնամով եւ հոգալով իբրու շնորհակալութիւն պատրաստե[ա]լ Փրկչին եւ բարեգործին ամենեցուն Աստուծոյ։* 4 *Առ այսու եւ զփորձ առնով կամէր զնոցա, թէ հաւատան ազատութեանն իւրեանց, զոր առնելոց է Աստուած, թէ՞ երկմիտք եւ ծոյլք գտանին։*

---

[1] *Ձեռագրի լուսանցներում նշուած են այն հեղինակների անունները, որոնցից օգտվել է Երզնկացին՝ Փիլոն, Մարութայ, Եփրեմ, ա՛յլ։*

5 Զի թէ ի տասներրորդն յոր հրամայեցաւ՝ առցեն զոչխարն եւ ի պահ արկցեն, զայնքան աւուրս երեւեսցին հաւատացեալք պատգամացն Աստուծոյ եւ փոյթք եւ պատրաստք ի շնորհակալութիւն նորին: 6 Իսկ թէ կայցեն մնասցեն ի չորեքտասաներրորդն առնուլ, յոր հրամայեցաւ զենուլ, յայտնեսցին անհաւատք Բանին Աստուծոյ եւ երկմիտք եւ ծոյլք առ գոհութիւն փրկութիւն փրկողին Աստուծոյ: 7 Եւ ըստ տունս ազգացն հրամայէ առնուլ զոչխ[արս]: 8 Մարդասիրութիւն եւ զուգութիւն ուսուցանելով նոցա, զբաժանել առաջին |409ա| տունսն, ըստ ազգին իւրոյ միաբանիլ, ի պատարագն մատուցանել խրատէ, զի հանդերձեալ էին ճանապարհ երթալ եւ պիտանացու էր նոցա խորանակից եւ տաղաւարակից լինել, արդարացոյց զնոսա ի պատարագացն սկիզբն ընկալեալ առնել զայս: 9 Եւ դարձեալ՝ զի յամենայն տան եգիպտացոցն էր մահ անդրանկացն եւ բովանդակ ազգացն, վասն այսորիկ որոց փրկեցան անդրանիկքն, պարտ էր յամենայն տան եւ ի համա[ւ]րէն տոհմսն լինել շնորհակալութեանն Աստուծոյ: 10 Եւ ասելն ոչխար ըստ երդ, այսինքն՝ անարատ կամ ընտիր:

ԺԱ. 1 Արդ, այսոքիկ ըստ աւրինակին, իսկ ըստ ճշմարտութեանս ոչխարն առեալ լինի յաւրինակ Քրիստոսի, վասն անմեղութեանն, հեզութեանն եւ հանդարտութեանն: 2 Ըստ Եսաեայ, թէ՝ «իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ, իբրեւ զորոչ առաջի կտրչի անմռունչ կայ եւ ոչ բանայ զբերան» (**Եսյ. ԾԳ. 7**): Եւ որպէս այն գառն սակս փրկութեանն Իսրայէղի, եւ Տէրն վասն մերոյ փրկութեանն, զի մոլորեցաք իբրեւ զոչխար կորուսեալ եւ ցրուեցաք իբրեւ զհաւատ, որ[ոյ] ոչ իցէ հովիւ: 4 Եւ վասն այնորիկ եկն Տէր հովիւ քաջ եւ եղեւ գառն ի հաւատէ իւրմէ, ըստ Յովաննու, զի գառն Աստուծոյ կոչեաց զնա՝ բարձաւղ մեղաց աշխարհի: 5 Այլ զի եւ սգեստ լինելով ծածկեսցէ զմերկութիւն նախահաւրն, զի որ վասն մեր է զենումն, պատմուճան անապական է եւ կոչի, զի «Որք մի անգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս, զգեցաք» (**Գղտ. Գ. 27**): 6 Եւ կերակրեսցէ զսովամահ որդին անառակ, այլ եւ անմեղ |409բ| գոլով, վասն մեղաւորաց եւ կարաւտելոց մատչէր, զի յորժամ զենաւ ի խաչին, արեամբն Իւրով ազատեաց զբնութիւնս ի ծառայութենէ սատանայի, որպէս եւ գառն աւրինական զԻսրայէլ յեգիպտոսէ: 7 Եւ զենաւ ոչ վասն միոյ տան կամ ազգայտոհմի, այլ ամենայն տիեզերաց աշխարհի, որք հաւատացին տնաւրէնութեան Նորա: 8 Եւ ասի ոչխարն ըստ երթ, այս է՝ անարատ, զի ոչինչ կրեաց ի բնութեանս կեղտ ախտից, զոր թշնամին էարկ, այլ եւ մաքրիչ եղեւ սոցուն իւրով մարմնոյն անարատութեամբն եւ աստուածային զաւրութեամբն: 9 Եւ զի ի տասներրորդումն Նիսանայ ամսեանն եմուտ յերու-

սաղէմ եւ ընկալեալ եղեւ ի հաւատացելոց եբրայեցւոցն եւ պահեցաւ մինչեւ ի ԺԺ.աներրորդ (14) աւրն, եւ ապայ պատարագեցաւ վասն փրկութեան ամենայն աշխարհի, կամ զի աւուրքն, որ է ի տասանէ անտի մինչեւ ի ԵԺ.աներրորդ (15) աւրն, նշանակեսցէ զենմամբն Քրիստոսի զմաքրութիւն Ե. (5) սգայարանաց մերոց, որք եղեն դրունք ախտիցն մեղացն եւ մահու։

ԺԲ. 1 *«Եւ թէ սակաւք իցեն ի տանն, որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր զդրացի իւր եւ զընկեր իւր ըստ մարդաթուի, իւրաքանչիւր ոք ըստ բաւականի իւրում համարեսցի յոչ[խարն]»։* **2** *Զստուերական գառն մատուցանելով պատարագ զամենեսեան հաւասարս եւ միաբանս կամի լինել ի մատուցանել զնոյն, եւ ո՛չ անձանց միայն խնամ տանել, այլ եւ զդրացիս եւ զընկերս կցորդ առնուլ ի զենումն պատարագին, զի վասն պատուականութեան նոր|410ա|ին զամենեսեան հրամայէ հաղորդ լինել զենմանն եւ զմեծամեծս եւ զփոքունս. մեծամեծացն պատիւ առնել փոքրուանցն եւ նուազիցն եւ հաւասարել ինքեանց զնոսա ի նոյն զենումն, քանզի յայս յայտ առնէ ասելն, եթէ իւրաքանչիւր ոք ըստ իւրում բաւականի համարեսցի յոչխարն։* **3** *Առ ստուերականն այսպէս է, իսկ առ ճշմարիտ զենումն քննելի է, թէ զի՞նչ է զդրացիս եւ զընկերս կցորդ առնուլ զենմանն։*

ԺԳ. 1 *Նախ ուսուցանէ, թէ որ կատարեալքն են հաւատովք եւ մաքրական գործովք առաքինութեան խնամ տանել եւ անկատարիցն հոգւով եւ փութալ ածել զնոսայ ի նոյն նմանութիւն ինքեանց եւ միաբանել հաւատովք եւ գործովք՝ աստուածայնովք հաղորդեսցին մարմնոյ եւ արեան ճշմարիտ Գառինն։* **2** *Դարձեալ խրատէ զնոսա, որք ջեռեալ աստուածային սիրովն կամիցին խաչակցեալ Քրիստոսի եւ մատուցանել զմ[մարմինս ձեր] պատարագ կենդ[անի] սուրբ հա[ճոյ Աստուծոյ]» (Հռմ. ԺԲ. 1)։* **2** *«Իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համ[արեսցի] յոչխ[արն]»։* **3** *Զի բաւական է իւրաքանչիւր առանձինն մատչիլ պատարագ Աստուծոյ, սիրտ սուրբ ունելով եւ հոգի խոնարհ, զոր Աստուած ո՛չ արհամարհէ, եւ յատուկ արժանի միոյ պատարագին, որ միոյ ոչխարին զհետ եկն, եթէ այնուհետեւ յետ գտմանն կայ ի փարախն յամրութեան վայրի, եւ յարաւտս կենսատու յեկեղեցւոջ եւ սուրբ ուսումն հոգեւոր, քանզի ամենայփարթամ Տեառնէ, որ յիւրական բարեցան տալով՝ |410բ| իւրոցն ոչ ինչ պակասէ, իւրն ոչխար գոլով ոչխա՛րս գործէ՝ զհաւատացեալս իւր զգաւն եւ հանդարտ եւ զպտղատու պատարագ, եւ արժանաւոր ողջակէզ Հաւր իւրոյ ի հոտ անուշից։* **4** *Իսկ եթէ ոչ իցէ բաւական, այսինքն՝ աղքատք յիմաստութենէ եւ տկարք ի բա-*

րեաց իցեն, մի՛ հեղգասցեն առ այս, այլ առցեն աւգնական զընտանիսն եւ զդրացիսն հաւատոց եւ զազգակիցսն գործոց առաքինութեանց եւ նոցին աւժընդակութեամբ դաստիարակեալք կարողասցին պատրաստել զինքեանս զենումն Աստուծոյ։

ԺԴ. 1 *Եւ այս է ասելն, թէ՝ «ըստ իւրում կարի համարեալ լիցի ի զենումն, իբր թէ մի՛ վասն թերակատարութեանն արհամարհեալ լիցի ի կատարելոցն, այլ պատուեսցի՝ կցորդ նոցին լինելովն ըստ Պաւղոսի, թէ «նվազն ի լաւէ անդի աւրհնեսցի» (* **Եբր Է. 7***)։* **2** *Եւ այսպէս, որք ո՛չ իցեն բաւական ամենայն առաքինութեամբք մասամբքն նըւիրել Աստուծոյ, առցէ ընդ իւր զդրացի իւր եւ զազգայինս, որք ըստ առաքինութեանն են կցորդք, զի պահողքն եւ աղաւթականքն եւ կուսանքն եւ կրաւնաւորքն, խոնարհքն եւ ողորմած[ք]ն, անդամք եւ բարեկամք լեալ իրերաց, լնուցուն զամենայն կամս Աստուծոյ, որպէս եկեղեցոյ, առաքինութիւն ի բազմաց միաւորեալ ի պսակ գլխոյն իւրեանց՝ Քրիստոսի բարի եւ վայելուչ լինել, բնակել եղբարցն ի միասին, թէ ոչ տեղեաւ, այլ միով հաւատով եւ յուս|411ա|ով, մի որովայնի ծնունդք աւազանին եւ միով կերակրով եւ հանդերձիւ, որ նա ինքն է Տէրն, իբրեւ քահանայական բազմանիւթ ի զանազան որակաց եւ հոտոց բարեխառնեալք ըստ մարդաթիւն։*

ԺԵ. 1 *Արդ, վասն աղքատութեան հանկանակեալ զծախսն եւ աստ զգեղ պատկերին գեղեցկացուցանել ի յորոշմունս պէսպէս առաքինութեանցն, որք բաւական լինի Գառինն Աստուծոյ եւ բարձողին զմեղս աշխարհի (* **Յվհ. Ա. 29***) հանկստեան, որոյ առաքինութիւնն «ծածկեցին զերկինս» (* **Ամբկ. Գ. 3***), որպէս ասէ Ամբակում։* **2** *«Ոչխար կատարեալ արու տարեւոր լիցի ձեզ»։* **3** *«Կատարեալ», ըստ երկուցուն հրամայէր առնուլ զոչխարն. ըստ հասակի եւ ըստ մարմնոյն մասանց, զգայութեանց եւ այլոց գործեացն, քանզի ո՛չ էր արժան զանկատարն յաստուածային սեղանն պատարագ հանել։* **4** *Եւ «արու», զի այս կատարելագոյն է, քան զէգն, որպէս եւ բնութեան Քննիչն։* **5** *Ոչ այլ ինչ ասացին գոլ զէգն, այլ անկատար արու։* **6** *Վասն այսորիկ ոչխար ասէ առնուլ կատարեալ արու, այսինքն՝ արու։* **7** *Եւ դարձեալ, զի հրաման էր թագաւորին զամենայն արուսն սպանանել յեբրայեցոցն եւ զէգն ապրեցուցանել։* **8** *Վասն այսորիկ արդարադատն Աստուած, որ յանդիմանելով զնորին խակ եւ անզգամ հրամանսն, սպան զանդրանիկսն էգոց, իրաւացոյց արու պատարագաւք գոհանալ նոցա, որոց արուքն ապրեցան ի սատակմանէն։* **9** *Իսկ «տարեւոր»՝ զի կատարեալ խնդրեաց |411բ|։* **10** *Վասն այնորիկ յաւել զտարեւորն, զի ի տարին կատարեալ լինի այսպիսի անասուն։*

ԺԶ. 1 *Այս ըստ երեւելի տեսութեանն։* **2** *Իսկ իմացականապէս առնլի է*

ի Քրիստոս, որ կոչեցաւ ոչխար կատարեալ արու։ **3** *Կատարեալ ո՛չ վասն աստուածութեանն միայն է իմանալ, քան զոր ոչինչ է կատարելագոյն, որ զամենայն լնու եւ կատարէ, այլեւ յաղագս մարմնոյն, զոր էառ եւ աւծ աստուածութեամբն եւ կատարելագոյնս գործեաց, որպէս էր առողին բնութիւնն։* **4** *Եւ արու Երկնաւոր Գառն, որ եբարձ զմեղս աշխարի, երկրորդ Ադամ եղեւ եւ արուի էառ բնութիւն, զի արու զաւրաւորագոյն է, քան զէգ մանաւանդ զաւրաւորագունին առաջնոյն մարդոյն, գլորեցուցեալոյն ընդ մեղաւք, արիագոյն տուաւ բժիշկ Գառն Աստուծոյ, զի զգլորեալ նախաստեղծսն վասն թուլութեան հեշտութեանն իւրեանց զաւրեղապէս ի թիկունս հասեալ կանգնեսցէ, զի արուն քան զէգն ուժեղ է, եւ զաւրաւորի պէտք է զանկեալն յարուցանել։*

ԺԷ. **1** *Դարձեալ «արու»՝ վասն սքանչելի ծննդեանն, զի ոչ ինչ էգ եւ ո՛չ վատթար յինքեան եբեր, այլ արիական բնութեամբ եւ իբրեւ զամենահզաւր բռնեցաւ Տէրն ի քակել զաւրէնս բնութեանս, եւ խզեաց զկապ կուսականաց եւ զմայրականաց, քանզի որ մա՛յր է, կոյս ո՛չ է, եւ որ կոյս է՝ մայր ո՛չ է։* **2** *Իսկ ամենասրբուհի Աստուածածինն Մայրն կոյս է անապական եւ Որդոյ Մայր ճշմարտապէս, քանզի յղացաւ առանց սերման ի Հոգոյն Սր|412ա|բոյ եւ ծնաւ արու ի մարգարէ կնոջէն, որպէս Եսայիաս աւետարանէր։* **3** *Մարգարէ գոլով սրբուհին զՏէր մարգարեիցն կրելով, ասէր զլի խորհրդով զմարգարէական երգն «Մեծացա[ուսց]է անձ [իմ] զՏէր» (Ղկ. Ա. 46), իբրեւ այն, զի ասէ. «Յայսմ հետէ երանիցե[են] ամենայն ազգ» (Ղկ. Ա. 48), եւ՝ «յարոյց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի» (Ղկ. Ա. 69)։* **4** *Իսկ Տէրն մեր գառն պա[տարա]գի, անմահական արեգակ արդ[արութեան] (Մղf. Դ. 2) անուանեալ ի Մաղաքիայ մարգարէէ, որ առնէ զյաւիտեանսն բանիւ զհրեշտական մշտընջենաւորութիւն անմահականս եւ զբնակիչս զգալի աշխարհիս շրջակայակա[ն] թուաբերութեամբ, ինքն ընդ երկոսին աշխարհսն լինելով, նախախնամութեամբ յաւիտենիւն, զերկնայինսն եւ ժամանակաւոր արեգակամբս զանցաւորացս չափելով զկենցաղ, ինքն իմանալի արեգակն գոլով, կատարեց զտարի տնաւրէնութեան իւրոյ, կամ անտի դիմեալ ի ծոցոյ Հաւր, իբր այս արեգակս յարեւելից եւ կամ երեւելեա[ւ]ն բովանդակեալ մարմնովն ամենայն լրումն աստուածութեանն, իբրեւ տարրեղէն ման արեգական՝ իւրովն լուսով եւ հրով, եւ յինքն իբրեւ այս արեգակս յարեմտից ընդ հիւսիսի յարեւելս, նոյնպէս Տէրն կատարեալ զտնաւրինականս առ Հայր դարձեալ, պսակ քաղցրութեան բարեբանեալ, իբրեւ տարի պտղաւք պսակե[ա]լ եւ գինի ի կարաս եւ ցորեան յըշտեմարանս եւ պտուղ բնութեանս Տէրն ի ներքին կողմն վարագուրին ընդ աջմէ Հաւր։*

ԺԸ. 1 *Բայց ո՛չ միայն այս ասէ աստուածաբանութեամբ պատուեալն Գրիգորիոս, այլ իբրեւ կենագործող ժամուց առաքինութեանց Բ. (2) արեգակս կենագործէ զժամանակս գարնան, ի ծնունդս շարժելով եւ ի կեանս |412բ| զտարերքս, յաւելով ի ժամս տուընջեան, եւ Տէրն զառաքինութիւն մարդկան հոգիացուցանելով եւ զթերին լնլով, որպէս ասէր ցՅովհաննես. «Այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն»* (**Մտթ. Գ. 15**)*, զի լրումն աւրինաց եւ մարգարէից կոչի Տէրն բոլորակ հեզութեամբն խառնեցելոց եւ յարմարեցելոց ընդ միմեանս աւրինաւք սիրելութեան: 2 Եւ կարգաւ այս արեգակ բոլորէ զտարին, բարեխառնելով զժամսն տաւթոյ եւ ցրտոյ: 3 Եւ իմ[ան]ալի արեգակ Տէրն զՀին կտակարանացն զխստութիւն սպանողութեան գրոյն, ընդ Նոր կտակիս հեզութեան հոգովն, որ կեցուցանէ, զի Մովսիսի սակայն աւրէնքն ժամուց տղայութեան էր ծառա[յա]կան երկիւղն եւ սպառնալիք, եւ Աւետարանին ժամն զկատարելոցն պահանջէր զորդիական սէրն: 4 Իսկ ի վերայ մեր «տարեւորն»՝ զի անթերի կատարեսցուք զժամանակս մեր ամենայն սահմանեալ բարեպաշտութեամբ, ըստ հաւատոց եւ ըստ գործոց: 5 Եւ զտարին չորիւք յեղանակաւք եւ ԳՃԿԵ. (365) աւուրբք կատարել:*

ԺԹ. 1 *«Յաւդից եւ յայծեաց առնուցուք»* (**Եղ ԺԲ. 5**)*. «աւդիքն» արդարոցն խորհուրդ, զոր Տէրն յաջմէն ասաց դասիլ, եւ այծիքն մեղաւորաց նշանակ, որ ի ձախմէն ասաց կացուցանել, քանզի վասն մեր պատարագեցաւ Տէրն. ո՛չ վասն արդարոցն յատուկ, այլ եւ վասն մեղաւորաց զենաւ, եւ առաւել եւս վասն մեղաւորաց, որպէս եւ ասաց. «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս, քանզի ո՛չ ի (=է) պէտք առողջ բժշկաց, այլ հիւանդքն»* (**Մրկ. Բ. 17**)*: 2 Բայց սակայն եւ ո՛չ արդարքն կարացին ապրել առանց նմայ, քանզի ի դժոխս գոլով արդարոցն նմա սպասէին, ուր չոգաւ ի ժամ աւանդելոյ զհոգին առ Հայր Տէրն |413ա| եւ ազատեաց զնոսայ անտի, որպէս եւ ասէ Յուստինոս վկայն, թէ՝ «Եւ մարգարէքն չկարացին առանց նմա ապրել, մեք զիա՞րդ կեցցուք»*[1]*:*

Ի. 1 *«Եւ եղի[ցի] ձեզ պահե[ա]լ մինչեւ ի չորեքտասան աւուր ամսոյս այս»* (**Եղ ԺԲ. 6**)*: 2 Հինկ աւր ի պահ հրամայէ արկանել զպարտութիւն եգիպտացոցն, եւ զյաղթութիւն ինքեանց ցուցանելով, զի թէ ոչ պարտեալ եւ ահաբեկեալ էին, զիա՞րդ համբերէին զԵ. (5) աւր, տեսանելով զաստուածսն իւրեանց նախակազմեալ ի պատարագ աստուծոյն իւրեանց: 3 Դարձեալ ի մաքրութիւն հինկից զգայութեանցս, որով մեղանչեմքն, որ եւ իմաստնոցն ԵԺ.ան (15) է թիւ սղալաց սոցայ, իւրաքանչիւր*

[1] *Սոյն արտայայտությանը բացակայում է Յուստինոս վկայի խօսքերը պարունակող՝ Իրենէոսի եւ Եւսեբիոս Կեսարացու երկերում:*

Գ. (3) գոլով հնկիցն, որպէս այն՝ տեսութիւն տեսանելի տեսանել, լսելութիւն լսելի լսել, հոտոտումն հոտոտելի հոտոտել, ճաշակումն ճաշակելի ճաշակել, շաւշափումն շաւշափելի շաւշափել, որ ընդ ամենայն լինի ԵԺ.ան (15), համեմատ ԵԺ.անի (15) ամսոյն, զի ԴԺ.անն (14) դրացի է ԵԺ.անին (15), զի յերեկորեայ ԴԺ.անին (14) զենեալ եւ կերեալ ի գիշերին, որ ի ԵԺ.անն (15) լուսանայր։ 4 *Այլ եւ ի ԴԺ.անն (14) սկսանին ախտք հեշտ ցանկութեանց, զոր կնքէ պատարագաւն յԱստուած եւ յիշատակս նորա զբաղձանս փափաքմանն։* 5 *Այսոքիւք զպատուականութիւն ԴԺ.աներրորդ (14) թւոյն այս յայտ առնէ, քանզի սովաւ լուսին զարդարի եւ ուռճացեալ ի ժողովմանէ աւուրց՝ տեսողացն երեւի ի լուսալիր։*

ԻԱ. 1 *Այսպէս եւ լոյս անըսկիզբն ծագեալ ի Հաւրէ ի ԴԺ.աներրորդն (14) Նիսանայ լրացուցեալ կատարեաց զփրկական տնաւրինութիւնն իւր, գալով* |413բ| *կամաւորութեամբ ի մահ Խաչին վասն մեր։* 2 *«Եւ զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեանն որդոցն Իսրայէղի ընդ երեկս»* (**Ելք ԺԲ. 6**)*։* 3 *Ընդէ՞ր ամենայն բազմութեանն հրամայէ քահանայագործել եւ զպատարագն մատուցանել։*

ԻԲ. 1 *Առաջին. զի ո՛չ գոյր տաճար հաստատեալ եւ ո՛չ սեղան, եւ ո՛չ ղեւտական ազգն միայն որոշեալ ի քահանայութեանն պատիւ զիւրաքանչիւր ուրուք զտուն տաճար եւ սեղան երեւեցոյց, այլ եւ քահանայ, զի յառաջնումն պատարագին մի՛ ոք մի ինչ առաւել գտցի։*

ԻԳ. 1 *Եւ երկրորդ. վասն զի զոյգ եղեւ ազատութիւնն, եւ հաւասար ամենեցուն ապրեցան անդրանիկքն. զոյքս արժանիս արար զամենեսեան զշնորհակալութիւնն քահանայագործել պատարագ։*

ԻԴ. 1 *Եւ երրորդ. զի որպէս եգիպտացոցն հաւասար գոլոյն ի չարիս վկայ եղեւ հաւասար տանջանքն նոցայ, այսպէս եւ իսրայէլացոցն զոյգ բարեպաշտութեանն յայտնիչ լիցի միաբան քահանայագործելն։*

ԻԵ. 1 *Չորրորդ. իրաւ եւ արժան համարեցաւ յառաջ, քան զընտրեալ զըստ մասին քահանայս ամենայն ազգին շնորհել զքահանայութիւն, զի մի՛ մասամբ բոլորն, այլ մասն բոլորիւն զարդարեսցի, եւ զի զկնի եկեալ մասնաւոր քահանայութեանն բոլոր ազգին քահանայագործել, սկզբնատիպ եղիցի նայ։* 2 *Եւ զի՞նչ է գեղեցկագոյն, քան զպաշտաւն Աստուծոյ յամենեցունց կատարիլ։*

ԻԶ. 1 *Հինգերրորդ, զի կամեցաւ զմի մի իւրաքանչիւր ուրուք զտուն եւ զտանտէրն այնպէս սրբագոյն գործ գործել եւ մի ինչ ամենեւին պղծութիւն ընդունել, որպէս քահանային սրբեցելոյ* |414ա| *յամենայն մեղաց, յորս միանգամ ասիցէ եւ գործիցէ եւ իմանայցէ։* 2 *Եւ «ժողով» ասէ զնոսա, զի ո՛չ մարմնով մի, այլեւ հոգով եւ մտաւք միաբան։* 3 *Եւ ժողովէին ի քահանայագործելն։*

ԻԷ. 1 *Առ հին Իսրայէլ այսպէս, իսկ առ նոր Իսրայէլ ամենեցուն աւրի-*

նադրէ քահանայագործել եւ զէնուլ՝ «զմարմին [ձեր] պատարագ կ[ենդանի] եւ հաճ[ոյ Աստուծոյ]» (Հռմ. ԺԲ. 1)։ 2 *Այլ եւ զոյգ եւ միաբան ճաշակել ի մարմնոյ եւ յարենէ ճշմարիտ Գառինն Աստուծոյ Հաւր՝ անարատ հաւատով եւ մաքուր գործովք, այլ եւ ի ճաշակելն զնոյն մարմնով եւ հոգւով ժողով լինել եւ միաբան։*

ԻԸ. 1 *«Ընդ երեկս» ասէ զ[պատարագն]. քանզի ազատութիւնն ի գիշերի հանդերձեալ լինել, եւ ո՛չ էր պատշաճ զպատարագն մատուցանել ի խաւարի գիշերին։* 2 *Եւ յառաջ քան զայն ո՛չ համարձակէին, այլ յառաջ քան զԹ. (9) ժամն պատրաստել այնոցիկ, որ հանդերձեալ էին ի գիշերի բարիս գտանել։* 3 *Իսկ «ընդ երեկս», որ է միջասահման տուընջեան եւ գիշերոյ, ոչ վայրապար գիտացեալ կշռեաց մարգարէն ի մէջ երկուց մեծամեծ լուսաւորացն՝ արեգական եւ լուսնի, զի հասցէ լոյս ի լոյս, զի ամենաճառագայթ է ԴԺ.ան (14) լուսնայ գիշերն։* 4 *Ոչխարն յայսմ ժամու ասացաւ զենանիլ, նշանակելով թէ ի վաղճան ժամանակիս զենումն Քրիստոսի. ըստ որում եւ ինքն Կենդանարարն ընդ երեկս հաղորդե[ա]ց զնշանն սուրբ խորհրդոյն աշխարհաստեղծ ձեռամբն՝ առ ի լուծանել ի մէ[ն]ջ զխաւար մեղացն։*

ԻԹ. 1 *«Եւ առցեն յարենէն եւ դիցեն ի վերայ Բ. (2) սեմոցն եւ բարաւորի տանն, յորս ուտիցէք զնայ ի նոսա» (Ելք ԺԲ. 7)։* 2 *Որպէս ասացաւ* |414բ| *յառաջագոյն, զի ի ժամանակին բագին եւ տաճար եղեալ էր ամենայն տուն տեսական ազգին, ուստի յիրաւի յաստուածային պատարագաց արենէն ն[ո]ւիրի ի վերայ սեմոց իւրաքանչիւրոց դրանցն դնել արժանի առնէ, միանգամայն եւ քամահել զթշնամիսն՝ իբր ո՛չ թէ երկեղիւ, այլ որպէս ի ցոյցս առնելով։* 3 *Եւ բազում համարձակութեամբ մատուցանեն նոքա զպատարագն։* 4 *Դարձեալ Բ.ս (2) սեմս՝ ցասումն եւ ցանկութիւն, եւ բարաւոր՝ բանն, զոր արեամբ դրոշմե<ա>լ հրամայէ, այսինքն՝ կենդանական հոգովն, զի կենդանութեան նշանակ է արիւնն (Եմմտ. Բ. Օր ԺԲ. 23)։*

Լ. 1 *Այսոքիկ առ հին ժողովուրդն մարմնապէս, իսկ առ մեզ զմեծն քան զամենայն զխաչն եւ զարիւնն գուշակէր, որով ապրեցան անդրանիկքն Իսրայիղի՝ յաւրինակ անդրանկանն Ադամայ, որ ապրեցաւ ծնընդովք իւրովք ի սատակմանէ սրոյ աստուածային բարկութեանն։* 2 *Քանզի իբրեւ զենաւ ճշմարիտ Գառն վասն մեր, պատուական արեամբ նորա կնքեցան գործք մեր եւ բանք եւ կամ զգայարանք մարմնոց մերոց, որք իբրու դրունք եւ սեամք են մտաց մերոց շարժմանց, եւ կնքին սոքա, զի կրթեսցին փակիլ մեղացն եւ անչափ տեսութեանցն եւ բանիլ առ յընդունել զշնորհսն Աստուծոյ եւ զբարիոք տեսութիւնսն, ո՛չ վնասի յապակա-*

նողէն առաջնորդկանս մեր միտք, եւ ոչ սպանեալ լինի սորին անդրանիկքն, որք են առաջին եւ իրիցագոյն խորհուրդք եւ բարիոք իմացմունք։ 3 *Եւ զգեղեցիկ եւ զխո|415ա|րհրդական աւանդութիւնս եկեղեցւոյ ընդունել եւ ի սոսայ ուղղապէս կալ, բանալ յայտնեացն եւ փակե<ա>լ անճառելեացն, պատկառելով յահագին խորհրդոյն։*

ԼԱ. 1 *«Եւ կերիջիք զմիսն ի գիշերիս յայսմիկ, խորովեալ հրով»* (**Ելք ԺԲ. 10**)*. եւ վասն է՞ր խորովեալ. նախ՝ վասն արագութեանն, քանզի ել գաղթին փութացուցանէր, եւ նախ քան զլուսանալն ելանելոց էին, ստիպելով զնոսա՝ եգիպտացւոցն, ի մահու անդրանկացն։* 2 *Երկրորդ՝ վասն անխառնութեան, քանզի խորովեալն պարզագոյն եւ առանց պաճուճանաց կազմի։* 3 *Երրորդ՝ անցաւոր կեանս յղփանալ փափկութեան եւ բազում ժամանակս յամել ո՛չ առնու յանձն, քանզի եփեալն զանազանութեան ցոյցք են եւ համեմելոյ, որ է նշանակ խորտկակերութեան եւ պաճուճանաց, զոր չէ արժան խառնիլ, մեղկիլ եւ թուլանալով իջութեամբ յառաւրեայ կեանս։*

ԼԲ. 1 *Իսկ առ ճշմարիտ զենումն զիա՞րդ տեսանի այս։* 2 *Նշանակէ ասացեալս, եթէ գիշեր է կենցաղս այս։* 3 *Գիշեր է եւ աւր դատաստանին։* 4 *Եւ է՛ յաշխարհիս այսմիկ գիշեր մեղացն, զի որքան աստ եմք, ծածկեալ եմք իբրեւ ի խաւարի։* 5 *Եւ մաքրագոյն տեսութեանցն երկնայնոցն եւ անմարմնոցն պարտիմք առաքինութեամբ մաքրել զմեզ եւ այնպէս ճաշակել զմարմին եւ զարիւնն Քրիստոսի, զի յորժամ հասանիցէ աներեկ առաւատն, այսինքն՝ հանդերձեալ աշխարհն, յանըստուեր ճառագայթս նորա խառնեալ լուսաւորեսցուք։* 6 *Իսկ որ ոչ ուտեն յամենայն |415բ| առաքինութենէ, եւ ապա ի մարմնոյ եւ <եւ> յարենէ Տեառն, աւր Տեառն, որ գալոց է, խաւար է նոցա աղջամղջին եւ ո՛չ լոյս։* 7 *Վասն որոյ զբարկութիւնն հրամ[այ]է լուծանել առաքեալն նախ քան զմտանել իմ[ան]ալի արեգականն յառագաստ եւ զփակել դրանն։*

ԼԳ. 1 *«Խորովել հրով». խորովելն հրով ուսուցանէ մեզ ի ճաշակելն զայս գառն ի կենցաղոյս գիշեր. Ո՛չ սառն եւ պաղ լինել, այլ կարծր եւ մաքրական հրովն, որ է ջերմն սէրն Աստուծոյ, փորձիլ եւ վառիլ եւ Հոգովն Սրբով ողջակիզիլ, զոր Տէրն եկն արկանել յերկիր եւ փութայր զբորբոքումն։*

ԼԴ. 1 *«Բաղարջ ընդ եղեգի կերիջիք». բաղարջն բազում փութոյ եւ արագութեան է նշանակ վասն ելիցն, եւ զի զուսպ եւ անփոփ եւ խոնարհ էին յԵգիպտոս։* 2 *Իսկ դառնիճն՝ վշտալի կենացն, յորում ծառայեալք համբերէին՝ ուտելով զայն, մի մոռասցին զդառնութիւնն, զոր կրէին յԵգիպտոս։* 3 *Իսկ ի նորումս ճշմարտութեան զահաւոր խորհուրդս նշանակէ, որ բաղարջով*

աւանդեցաւ ի տաւն բաղարջակերացն։ **4** *Զի խմոր քացախուտ չարութեան է նշանակ եւ զայրացման սրտի, եւ փքացեալ եւ ուռուցեալ հպարտութեան, քանզի ո՛չ լինի հաց կենդանական*[1]*։* **5** *Եւ Տէր զգուշացուցանէր ի խմորոյ սադուկեցոցն եւ փարիսեցոցն, զաղանդն նոցա առակելով* (**տե՛ս Մտթ. ԺԶ. 12**)*։* **6** *Խմորն, որ թռեաւ յԵւայէ եւ ապականեաց զազգս մարդկան, մինչեւ եկն խորհուրդ բաղարջին, զոր անապականն Մարիամ ծնաւ մարմին աստուածացեալ, եւ բաղարջով աւանդեցաւ ի կեանս անմահականս։*

Լե. **1** |416ա| *Ասացեալս այլաբանութեամբ խրատէ. որք ճաշակեն զմարմին եւ զարիւնն Քրիստոսի, պարտին այնպիսի վարս ստանալ, իբրեւ զի ազատ լիցի յամենայն խմորոյն եւ հնացեալ քացախուտ չարութեանց, եւ առ զանազան նեղութիւնս եւ դառնութիւնս, որ գան ի վերայ մեր՝ համբերողս եւ ժուժկալս լինել, քանզի եւ այսպէս իսկ ճշմարտապէս կերան առաքեալքն զպասէք աւրինական ընդ եղեգի, զի յորժամ ասաց Քրիստոս, եթէ՝ «եհաս ժամանակ իմ շարշարիլ ի հրէիցն»* (**Մտթ. ԻԶ. 45**)*, լցան դառնութեամբ ի տրտմութենէն։* **2** *Նայ եւ այլ շարշարանս եւ մահս կրեցին նոքայ վասն Քրիստոսի, եւ ամենայնի տարան առաքինութեամբ։*

Լզ. **1** *Եւ զի՞նչ այն, զոր յառաջ երթեալ դարձեալ վասն խմորոյ պատուիրէ. «զէ. (7) աւր, ասէ, բաղարջ կերիջիք եւ զխմոր անհետ արարէք ի տանց ձերոց»* (**Ելք ԺԲ. 15**)*։* **2** *Պատուէրս այս դարձեալ վասն մաքուր վարուց է եւ առաքինի գործոց, որպէս զի պարտ էր մեզ յեւթնեակ շրջագաւթեանս սրբել յայսմիկ յանձանց զհին խմորն, որ են ամենայն գործք չարութեան, եւ լինել նոր զանկուած եւ հաճոյ Աստուծոյ յամենայն գործս բարիս եւ ժամանել անարատութեամբ ի սուրբ նուիրե[ա]լ աւրն, որ է կատարումն հինկերրորդիս եւ մուտ Ը.երրորդի (8) ի գալստեանն Քրիստոսի, եւ հանկստի տաժանմանց կենցաղոյս։* **3** *Դարձեալ խմորոյն ոչ լինելն ուսուցանէ պարզ եւ անխառն վարդապետութեամբ կերակրիլ եւ մի՛ ինչ խաւարային եւ մարդկան աւանդել, եւ անաստուածգիտութեամբ։* **4** *Եւ դառնիճն յաղագս դառն եւ զառիվեր գոլ, որ ըստ Աստուծոյ են, վարք ուսուցանէ սկսողացն զնոյն, եւ մանաւանդ քան* |416բ| *զհեշտութիւնսն բարձրագոյն, քանզի թէպէտ եւ «քաղցր է նորա լուծն եւ թեթեւ բեռն»* (**հմմտ. Մտթ. ԺԱ. 30**)*, որպէս լսես, այլ վասն յուսոյն է այս եւ փոխարէն հատուցմանն, քանզի յով էն կենցաղոյս չարշարանաց եւ նեղութեանց առատութիւնք։*

Լէ. **1** *Ով ոչ ասիցէ սաստակագոյն, քան զաւրինական հրամանսն զԱվետարանն դժուարին լեալ եւ տաժանելի, վասն զի աւրէնքն զկատարումն*

---

[1] *Այս միտքը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի Պասէքի ճառից. տե՛ս ՄՄ. ձեռ 1500, 737բ-741ա։*

մեղացն արգելուին, իսկ Աւետարանն ի եւ ի պատճառաց իբրեւ ի գործոց զգուշացուցանէ զմեզ. անդ շնութիւնն արգելու եւ սպանութիւնն, եւ աստ հայիլն յարատ եւ բարկանալն տարապարտ։ 2 *Այսպէս եւ այլքն։*

ԼԸ. 1 *«Եւ մի՛ ուտիցէք ի նմանէ հում եւ ո՛չ պախ՝ եփեալ ջրով, այլ խորովել հրով»։* 2 *Ոչ ինչ ըստ ճառիս էր ասացաւ յառաջագոյն, թէ վասն արագութեան գաղթին էր։* 3 *Իսկ զի՞նչ ասելն՝ «մի՛ ուտիցէք ի նմանէ հում», եւ ո՞վ ոք ի մարդկանէ հում ուտիցէ միս, եթէ ոչ յայտ յանդիման, որ ի Քրիստոս խորհրդենէն նշանակէ, իբր թէ հաւատացելոցն ի տնաւրէնութիւն Նորա ոչ է արժան ընդունել, որ յաղագս նորա Բանն է սոսկ վարկպարագի, եւ ոչ զբան հաւատոյն առանց իմանալի տեսութեանց մտաց ունել, այլ եւ ո՛չ լուծանել անարժան քննութեամբք ոմամբք, այսինքն՝ ոչ ամենեւին հում եւ անքննին թողուլ զտնաւրէնութեանն Քրիստոսի զխորհուրդ եւ զառ ի նայն հաւատ, իբր թէ ոչինչ ունին իմանալի տեսութիւնս։* 4 *Բայց եւ ո՛չ ջրատեսակ եւ լոյծ բանիւ ի խոյզ եւ ի խնդիր անգանել եւ քննել, այլ զի՞նչ՝ |417ա| «խորովիլ հրով», այսինքն՝ յամենայն նիւթականացս ի բաց լինել պաճուճանաց, որպէս խորովեալն միս, եւ բարիոք կայծակամբն հոգոյն, զոր հուրն երկնային էարկ յերկիր, եւ զբորբոքեալն փութածախել յառաջնորդական մտաց մերոց զամենայն չար խորհուրդս եւ զանտեղի մտածմունս, եւ կարծր եւ պինդ խորհրդով եւ ճշմարիտ հաւատով հաստատեալ ի տնաւրէնութեան նորա խորհուրդ։*

ԼԹ. 1 *Արդ, առակաւ ասէ ի տղայութենէ վարժիլ յամենայն ուսումն առաքինութեան, եւ ո՛չ լոյծ եւ գէճ ախտիւք վարիլ, պախիլ<լ> վաւաշոյ հրով ցանկութեան, եփիլ ի յապականութիւն, այլ ժուժկալութեամբ եւ պարկեշտ վարուք սնանիլ։* 2 *Կամ, ըստ ումեմն իմաստնոյ խրատեալս յառաջ ատել*[1] *հոգոցն յառաքինութիւն, թէ յորժամ փոփոխին ի վատթարութենէ ի լաւութիւն, մի՛ ի հում եւ ի խակ ապաշխարութենէ ուտել, այլ եռացուցանելով զնա, այսինքն է՝ ջերմն բանիւ եւ արտաշիկացելովք պատրաստեալք, քանզի բազումք առ հակառակսն փոփոխին յանկարծաւրէն անմիտ յարձակմամբ, յանխայութենէ ի խնայութիւն, եւ ի վայրենի եւ ի պաճուճեալ փափուկ կենաց՝ ի խստավարութիւն, եւ ի փառասիրութենէ թեւակոխեն յանփառութիւն, զորս ոչ ոք գովեսցէ, քանզի հում եւ խակ է փոփոխումն այնպիսեացն, վասն որ ոչ յառաքինութիւն, այլ ի հակառակ չարութիւնս ոչ իմացան փոփոխեալ։* 3 *Իսկ որ միանգամ բանիւ գիտութեան փոփոխեալ յար|417բ|մարին իբրեւ ի հրոյ բռնադատեալք, հաստատուն եւ անշարժ ստացեալ ունին զակտութիւն*[2]*։*

Խ. 1 *«Զգլուխն ոտիւքն հանդերձ եւ զփորոտի նորա». զմասունս զայս*

---

[1] *Վկայութիւնը քաղուած է Փիլոն Եբրայեցու Ելից գրքի մեկնութիւնից՝ Ա. 16. տե՛ս Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826, էջ 460։*

[2] *Նոյն տեղում։*

յիշելով, զբովանդակ պատարագն պատշաճ համարի կերակրեալ եւ ոչ ինչ թողուլ յաւրինական գառնէն։ 2 *Իսկ առ Քրիստոս ճշմարիտ Գառն այսպէս իմանալի է զասացեալս. որք արժանաւորեցան հաղորդ լինել մարմնոյ եւ արեան, որ քան կարողութիւն մտաց եւ բանի հասանել ի տնտեսութեանն Քրիստոսի խորհուրդ։* 3 *Հաստատուն հաւատով քննեսցին եւ ի ներքս ի միտսն կերիցեն եւ ծախեսցեն, հոգեւոր հալմամբ ի վեր տացեն ի յաճումն հոգեկան մասանց, եւ այսպիսի մասամբք, զոր յիշեաց ընդ միտ ածել զաստուածութիւնն եւ զմարդկութիւնն եւ զտնաւրէնութիւն Նորա։* 4 *Քանզի գլուխն նշանակէ զաստուածութեանն զտեսութիւն, եւ ոտք՝ զմարմինն, զոր ի վաղճան ժամանակի սգեցաւ։* 5 *Եւ փորոտի՝ զտնտեսութեանն խորհուրդ, որ յոյժ ծածուկ եւ անծանաւթ է, եւ բարձր քան զմիտս եւ զբանս։*

ԽԱ. 1 *Արդ, կերակրիլ մտացն կոկորդիւ. զայսպիսի քննութեան կերակուր է այսպէս, թէ Նայ, որ Աստուած էր, Արարիչ եւ սկիզբն եւ գլուխ ամենայն եղականաց, վասն փրկութեան մարդկան զառ ի տեղի ոտից համարե[ա]լ մարմինս զգեցաւ, եւ նման փորոտեաց՝ ծածուկ տնաւրէնութեամբն զոր գործեաց, արար փրկութիւն, վասն որո<յ>ց եղեւ զայս։* 2 *«Եւ ո՛չ թողուցուք ի նման|418ա|է յայգ, եւ ոսկր մի՛ բեկանիցէք ի նմանէ, եւ որ ինչ մնասցէ ի նոցանէ յայգ՝ հրով այրեսջիք» (Ելք ԺԲ. 10)։* 3 *«Ո՛չ թող[ուցուք] ի նմանէ յայգ». առաջին՝ զի ոչ համարեցաւ արժանի արեգական ծագել ի վերայ պատարագի անցանացն, այլ զի ի գիշերի եղեւ ազատութիւնն, ի գիշերի հրամ[այ]է զմնացեալսն ի պատարագէն այրել։* 4 *Երկ[ր]որդ, զի մի՛ անփոյթ արարեալ՝ այսր անդր ընկեսցեն զնշխարս զոհիցն, եւ եկեալ եգիպտացիքն վաղիւն անսուրբ եւ պեղծ ձեռաւք շաւշափեսցեն։* 5 *Իսկ առ հոգեւոր տեսութիւնս յարմարական խրատէ զգուշութեան հաւատացելոց ճաշակողաց զիմաստս փրկայգործութեանցն Քրիստոսի. մտացն ակամբք ծածուկ ունել եւ թաքուն յանսրբազանիցն եւ ո՛չ տալ զսրբութիւն շանց եւ զմարգ[արիտս] անմտաց խոզից, այլ ըստ աւրինակի գիշերին անփոփել եւ ոչ յայգ եւ յայտնի ի լոյս բերել խաւարելոցն մտաւք։*

ԽԲ. 1 *Եւ այլ եւս իմաստութեան խրատ, զի ո՛չ է արժան մեզ զբարեգործութիւնն ի վաղիւն ընկենուլ, ըստ Սողոմոնի խրատուն, թէ՝ «Յորժամ ձեռնհաս իցես բարի առնել կարաւտելոյն, մի՛ ասիցես, թէ ե՛րթ եւ վաղիւ եկեսջի՛ր, զի ո՛չ գիտես զինչ վ[աղն] քեզ ծնցի» (Առկ. Գ. 27-28), քանզի եւ Տէրն պատուիրեաց չհոգալ զվաղիւն, այլ զաւուրն հայցել հաց։* 2 *Զի որքան եմք ի կենցաղս այս, պարտ է կերակրիլ առաքինութեամբ եւ մաքուր վարուք, եւ ոչ հեղգալ եւ ի վաղիւն ընկենուլ, զի այսաւր է աւր*

փ[րկու]թեան եւ ժամանակ ընդունելի։ 3 *Զի զոր աւրինակ զբարկութիւնն առ եղբայրն ո՛չ հր|*418բ*|ամ[այ]եաց յայգ հանել, այլ նախ քան զմտանել արեւուն լուծանել, նոյնպէս եւ զվարուցն կերակուր մի՛ յերկուս գիշերս առնել եւ յառաջիկայսն ամբարել, այլ ի գիշեր կենցաղոյս այս ջանալ։*

ԽԳ. 1 *«Եւ ոսկր մի՛ բեկաներ», որ է խրատ զգուշութեան զբանս Աստուածաշունչ գրոց, որ ինչ միանգամ ոսկրուտ եւ անուտելի է եւ մեզ դժուարաւ տեսանելի, ոչ բեկանել չարաչար հերձուածով, այլ որ ինչ միանգամ մարմնատեսակ է եւ դիւրահաս եւ մեզ շա[հ]եկան եւ պիտանի, կերիցէ միտք եւ հալումն հոգեւոր ի վեր տացի, զի՝ «յայտնիքն մեզ եւ որդոց մերոց, ասէ Մովսէս, եւ ծածուկքն Տեառն Աստուծոյ մերոյ»* (**տե՛ս Բ. Օր ԻԹ. 29**)։ 2 *Եւ Առակախաւսն պատուիրէ. «Կթեա՛ կաթն, զի եղիցի իւղ, ապայ թէ կարի ճմլեսցես զկուրծսն՝ ելանէ արիւն»* (**Առկ. Լ. 33**)։ 3 *Եւ եթէ զբանն ոսկրուտ ձգեսցես ի քեզ, ասէ, զորս ոչ կարասցես հասկանալ, ելցեն դատաստանք, եւ կռիւք թողին յաշխարհի, վասն որոյ նոքին իսկ հաղորդեալքն գիտութեանն Քրիստոսի մի՛ յանդգնաբար ի վերայ յարձակե[ա]լ ամենայն գործոցն հետաքրքիրք լինիցին, այլ որ ոսկրուտն է եւ անուտելի, մի՛ խորտակեսցին չարաչար բաժանեալ, որպէս եւ ո՛չ Յիսուսին խորտակեցաւ ի խաչին, զի մի՛ բանին աւձտողաց ծաղկեցուսցեն, այլ նոցա թողցեն, որք հոգովն մաքրեալք եւ անաւսրացեալք են, եւ ի նմանէ տեղեկացեալք խորոցն Քրիստոսի եւ ինքեանց յայտնեցելովքն ինքեանք բաւականասցին գիտութեամբ։*

ԽԴ. 1 *Իսկ զի՞նչ, եթէ՝ «զմնացեալն յայգ հրով այրեսջիք». այսինքն՝ թէ զծածուկսն, զոր ոչ կարիցէք գիտել, մի՛ ոչ հասու լինից|*419ա*|իք, երկբայիցէք եւ կամ տխրեսջիք ինչ, զի ո՛չ միշտ, այլ որքան եմք ի գիշերատիպ կենցաղս յայս, ծածկեալ են ի մէնջ եւ ունին յայտնել յիւրում ժամանակն ի միւսանգամ գալստեանն, զոր «այգ» անուանէ, այլ հրով աստուածային ջեռեալք սպասիցէք, զի զմնացեալսն ի խորոցն Քրիստոսի, ի լուսափայլ նորա գալստեանն ծանիջիք։* 2 *Կամ զի «այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի, այլ յայնժամ դէմ յանդիման»* (**Ա. Կրնթ. ԺԳ. 12**) *իբր թէ հրով այրել զայն ասէ թէ՝ զոր այժմ տեսանեմք յայգանման գալուստն, իբրեւ հարցեալ եւ լուսաւոր եղեալ՝ եւս սրբայգոյն տեսանիցեմք։* 3 *Դարձեալ, «այգ» իմանալի է զմարմնոյ գալուստն Քրիստոսի, որ լուսաւորեաց զմեզ ի խաւարէ կռապաշտութեան եւ ազատեաց ի հրէական աւրինացն ի ծառայութենէ։* 4 *Արդ, խրատէ, թէ զմնացեալն առ ձեզ ի հրէական խտրութեանցն եւ ի հեթանոսական առակութեանցն յառաւաւտ գալըստեանն Քրիստոսի, այրեսջիք իմաստութեանն հրով։*

ԽԵ. 1 *«Եւ որ ինչ մն[այ]՝ հրով այրեսջիք»։* 2 *Անպէղծ թագաւորին հրա-*

*մ[այ]է տալ հրոյն զմնացեալն, քանզի որ աստէն ոչ գայ խոստովանութիւն եւ յապաշխարութիւն հրոյ գանձեալ պահի աւուրն կորստեան, յորում ամենայն ինչ հրով փորձելոց է՝ ոսկի, արծաթ, փայտ, խոտ, եղեգն, աստէն արժան է քաղել զսպին եւ սրբել զաղտ եւ զժանկ եւ զապականութեան նիւթ, ոսկի եւ արծաթ տանել աստի անդր, եւ ականս պատուականս, որ է հաւատ ողջ եւ գործ մաքուր եւ առաքինու|419բ|թիւն անախտ, զի հրովն այնու առաւել եւս պայծառասցի, չգտանել խառնուած ապականացու յըմբռնումն հրոյ անշիջանելոյ։ Եւ զի «գառինն Աստուծոյ, որ եբարձ զմեղս աշխարհի» (**հմմտ. Եփս. Զ. 14**), ո՛չ բեկաւ ոսկր, թէպէտ եւ խաչողքն ճեպէին յաղագս շաբաթուն, եւ ոչինչ եթող ի զգուշական պատուիրանացն ի միւսանգամ գալուստն, զոր ո՛չ աստէն խրատեաց անձանձիր վարդապետութեամբն։*

ԽԶ. 1 *Արժան է եւ ոչ զուտելոյն աւրինակաւ զանց առնել, քանզի եւ ոչ աւրէնքն յայսոսիկ միայն թողին զտեսութիւն վաստակասիրացն։*

ԽԷ. 1 *Արդ, ասէ, թէ այսպէս ուտիջիք. «գաւտիք ձեր ընդ մէջ եւ կաւշիկ ձեր յոտս, եւ ցուպք ձեր ի ձեռին, եւ փութանակի կերիջիք, զի զատիկ Տեառն է»։ 2 Ասացեալքս առակ աւրինակի ուղեգնացութեան տագնապելոց են, քանզի սովորութիւն է, որ ճանապարհ երկայն հանդերձեալ են վճարել զգենուլ կաւշիկս եւ հանգրիճեալ գաւտեաւ եւ ցուպ առ ի պէտս ունել, վասն զի կաւշիկք ոտից են պահապան։ 3 Իսկ հանգրիճեալ դիւրաւ մատուցանէ ոլոքոցն զշարժմունս։ 4 Իսկ ցուպ առ ի յենուլ է պատրաստական եւ առ ի վանումն թունաբեր սողնոց եւ այլոց գազանաց։ 5 Որ վասն հին զատկին, այսպէս է խրատ, իսկ վասն նորոյ զատկիս եւ ճշմարիտ զենմանս հոգեւորապէս առնլի է զասացեալս։ 6 Զի պարտ է, որք կոչեցան ի Քրիստոս մկրտութեամբ եւ վայելեցին ի մարմին եւ յարիւն նորա, մի՛ թոյլ եւ արձ|420ա|ակ ունել զմէջս, ըստ անբանիցս յարձակման, այլ արի եւ պնդակազմ լինել յուղղեգնացութիւն ճանապարհի կենցաղոյս, գաւտի ածել զողջախոհութիւնն ի վերայ ցանկականին երիկամանցն, որ մսուր ասացեալ է անասուն ցանկութեանն։ 7 Եւ պնդել ողջախոհութեան գաւտեաւն զտեղին, յորում բունեալ բազմագլուխ վիշապն, եւ ի վեր անփոփեալ զվրընջողականն մատակախազ ձիոց, ըստ Պաւղոսի՝ շուրջ գաւտի ածեալ զմիջովք ձերովք զճշմարտութիւն (**հմմտ. Կղս. Գ. 5**) եւ հանգրիճ եղեւ ի վեր դարձուցանել ճշմարտութեամբ յԱստուած եւ յաստուածայինսն եւ չտալ թոյլ այլուր բերիլ եւ մաքրապէս ուտել զտաւնս,*

մեռուցանելով զանդամս զերկրաւորս (հմմտ. Կող. Գ. 5) եւ Յովհաննու նմանեալ, որ յաւրինակ մաշկեղէն գաւտոյն սպան յինքեան զամենայն ինչ զհին մարդն[1] *(Մտթ. Գ. 4)։*

ԽԸ. 1 *Դարձեալ եւ գաւտի ածեալ զզինուորականն գիտեմ եւ զարիականն, ըստ որում քաջագաւտիք ասորիք եւ միգաւտիք ոմանք ասին, որպէս եւ ընդ Յոբայ խաւսելով Աստուած ասէր. Ո՞չ այդպէս, այլ ա՛ծ գոտի իբրեւ այր ընդ մեջ քո եւ տո՛ւր պատասխանի արիական։ 2 Եւ աստուածայինն Դաւիթ գաւտի ածեալ զզաւրութիւնն յԱստուծոյ, մեծամեծս պարծի ասելով, որ զգեց[ուցեր] ինձ զաւր[ութիւն] ի պատ[երազմի]» (Սղմս. ԺԷ. 40)։ 3 Եւ վասն Աստուծոյ ասէ. «Զգեցաւ Տէր ընդ մէջ» (Սղմս. ՂԲ. 1)։ 4 Թուի թէ զոր անփոփէ ողորմութեամբ զպատժողականն պատուհաս եւ Տէրն աշ[ակերտ]ացն պատուիրէր. «եղիցին գաւտիք ընդ ձեր ընդ մէջ» (Ղկ. ԺԲ. 35), որ եւ զմեզ խրատէ զգենուլ զսպառազինութիւնն Աստուծոյ եւ արիաբար զինուորիլ ի պատ|420բ|երազմ ընդ անմարմին պատերազմողին մեր եւ այսպէս արժանաւորիլ ճաշակման երկնաւոր Գառինն։*

ԽԹ. 1 *«Եւ կաւշիկ ձեր յոտս». ո՛չ սակաւ քննութիւն պիտոյ է ի տեղոջս, զի Մովսիսի հրամայեաց լուծանել զկաւշիկսն եւ աշակերտացն նոյնպէս՝ մի՛ ագանել կաւշիկս յոտս, աստ ընդէ՞ր հրամայէ ունել կաւշիկս յոտս։ 3 Թերեւս զի կաւշիկն մեռեալ մորթ է, որ եւ կրկին ունի տեսութիւնս։ 4 Զի որք ի սուրբ երկիրն եւ յաստուածակոխ լեառն յիմանալի աշխարհն հանդերձեալ են մտանել, եւ մերձ է իբրեւ զՄովսէս, պարտ է լուծանել զկաւշիկս, այսինքն՝ մի՛ ինչ մեռելոտի եւ անկենդան եւ անասնային ունել վարս, զի չէ պարտ ի մէջ իւր եւ Աստուծոյ ունել մեռելոտի խորհուրդս եւ գործս այնոցիկ, որք իբրեւ զՄովսէս եւ զառաքեալսն են քարոզ Աւետարանին, այլ իբրեւ զաշակերտ առաքեալ յԱւետարանն իմաստասիրաբար եւ առանց յաւելորդաց կեանս ստանալ, անպղինձ ունել գաւտիս (տե՛ս Մրկ. Զ. 8) եւ անցուպ եւ միով պատմուճանաւ եւ մերկոտն եւս լինել, զի երեւեսցին ոտքն՝ իբրեւ զգեղեցիկ աւետարանչացն զխաղաղութիւն եւ զայլ ամենայն բարիս։ 5 Եւ բոկ ոտիւք, որ է նշանակ կուսութեան ի սկզբանէ, եւ կամ կոչմամբ յաստիճան ինչ յայնմ հետէ զգուշանալ, բայց որչափ են յեգիպ[տ]ական կենցաղս, որ է աշխարհական վարս եւ ի հովիտս տրտմութեան, եւ ի մէջ նեղիչ ախտիցն, իբրեւ յԵգիպտոս եւ ի փախուստ զինքեանս, սորին գործոցն պատրաստ են եւ կամին ազատիլ ի*

[1] *Նկատի ունի Յովհաննէս Մկրտչին։*

ծառայեցուցիչ ախտից[1] |423ա| *եւ ի խառն անկողնոյ եւ խնդրէ զերկիրն աւետեաց, սակաւապիտութեամբ զգեցցի կաւշիկս, զաւրինաւոր եւ զպարկեշտ ամուսնութիւն յաղագս աւձաթոյն եւ կարճախայթոց հեշտ ցանկութեանցն, զորս յոլովագոյնս սնուցանէ Եգիպտոս, որ է մարմին եւ մարմնական կեանքս այս, զի մի՛ խածանիցիմք եւ թիւնալից լիցուք յայնմանէ, որ սպասէ գարշապարին, զոր սակաւապետութեամբ եւ ողջախոհ անկողնով կոխել հրաման առաք, որոց պարտ է զգենուլ զպատրաստութիւն Աւետարանին, իբրեւ զկաւշիկս յոտս եւ ամրանալ ի զանազան եւ ի պէսպէս վնասակար եւ խայթոցաւոր ախտից։*

Ծ. 1 *Այլ եւ վասն գաւազանին կրկին է իմաստք. ցուպ ստուար եւ անկոտրելի առ ի յենուլ է վաստակելոցն եւ անգելոցն ի յարուցումն, իսկ գաւազանն հովւական է եւ վարդապետական եւ զբանաւոր ոչխարսն դարձուցանող, զոր առաքելոցն ունել հրամեաց Տէրն։* **2** *Այլ քեզ այժմ զյենուլն աւրէնքն հրամայեն, որում ցուպ պիտոյ է, զի ուր չարչարանք Աստուծոյ եւ խաչ եւ արիւն Աստուծոյ եւ մահ լսի հաւատք պիտոյ է հաստատուն, անբեկելի եւ անգելեան, զի մի՛ անկցուք ի վայր երկբայութեամբ եւ պատկառանաք, այլ առանց ամաւթոյ եւ պատկառանաց կերիցուք զհացն՝ մարմին Աստուծոյ, արբցուք զարիւն Աստուծոյ, եթէ կենացն փափաքիցեմք, մի՛ ինչ որ յաղագս մարմնոյն են բանք՝ ոչ հաւատասցես, եւ մի՛ որ յաղագս չարչարանացն վնասեսցիս, այլ յեցեալ կացցես հաստատուն եւ անշարժ, եւ ոչ ի միոջէ* |423բ| *ումեք դրդուեալ յընդդիմակացն եւ ոչ հաւանական բանիւք ի վայր քարշել, ի բարձրութեան նորա կացջիք։* **3** *Ի գաւիթսն յԵրուսաղէմ կացո՛յ զոտսդ, ի վերայ վիմին յեցո՛, զի մի՛ սասանեսցին քո ըստ Աստուծոյ գնացք։*

ԾԱ. 1 *«Եւ փութանակի կերիջիք». այսինքն՝ մի՛ ծոյլ եւ հեղք գտանիլ առ նեղութիւնս, որք գան ի վերայ մեր, այլ փոյթ եւ արի։* **2** *Գիտել, զի յետ աստի նեղութեանցս զատիկ եւ ուրախութիւն լինելոց է մեզ, որ պատրաստեցաւ Տեառն մերոյ եւ Քրիստոսի չարչարանաւքն։* **3** *Փութանակի կերիջիք եւ առանց ծուլութեան, իբրեւ զիմաստուն կուսանսն եւ զհաւատարիմ տնտեսն, եւ զազնիւ ծառայն եւ զտանուտէրն արթուն, զամենայն գիշեր կենցաղոյս, զի զատիկ Տեառն է մահն նորա։* **4** *Զի ազատեցաք ի ծառայութենէ ապականութեան յազատու[մ]ն փառաց Որդոյն Աստուծոյ, զի ո՛չ հեշտակաւք եւ ո՛չ ծառ[այաւք], այլ Տէրն փառաց ազատեաց զմեզ, որով ոչ փոք ինչ փառաւորեցաք Աստուծով ազատեալք, որ այնչափ սիրէ զմեզ Աստուած, զի զորդին իւր ետ վասն մեր, որ եւ ոչ անդ ի մի անկամ*

[1] *Ձեռագրի թերթերը ետեւառաջ են կարուած, առ այս 420բ՝ ստ. լս-ում կայ. «Բ. թուղթ ա՛նց»։*

ի մահու Նորա վայելեցաք, այլ մինչեւ ցկատարած աշխարհի անհատաբար եւ անընպատ խորհրդական մահուամբ զենանի յեկեղեցի, եւ վայելե[սց]ուք մեք ի նմանէ յաւիտեանց գթութեամբ Հաւր եւ ողորմութեամբն Որդոյ եւ աւժընդակութեամբ Հոգոյն Սրբոյ, որում արժանիս արասցուք զմեզ անարատ վարուք եւ ժրաջան աշխատութեամբ եւ երկբայ հաւատովք։

ԾԲ. 1 *Եւ արդ, վասն զի հինն ընդ նորոյ խորհրդոյս համեմատեալ, ըստ կարի ցուցաք, բեր այսուհետեւ եւ զնոյն ինքն զխորհուրդն, որ այսաւր ի Քրիստոսէ աւանդ|424ա|եցաւ, պատմեսցուք հետեւաբար ըստ սրբոց աւետարանչացն ճառից։*

ԾԳ. 1 *Արդ, ուսուցանէ զմեզ լուսափայլ Աւետարանիչն այսպէս. «Յառաջնումն աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն. «Ո՞ւր կամ[իս], զի պ[ատրաստեցուք] քեզ ուտել զզատ[իկն]» (**Մտթ. ԻՁ. 17**)։ 2 Եւ նա ասէ ցնոսա. «Երթայք ի քաղաքն առ այս ան[ուն] եւ աս[ացէք] ցնա. Վարդապետ, ասէ, ժամ[անակ] իմ մերձ[եալ] է առ ք[եզ առնեմ] զզ[ատիկ] աշ[ակերտ]աւքս հանդերձ» (**Մտթ. ԻՁ. 18**)։ 3 Իսկ Մարկոս եւ Ղուկաս եւ թէ քանի աշակերտս առաքեաց ուսուցանեն։ 4 Ասեն «Առաքեց յերկուս յաշակերտացն» (**տե՛ս Մրկ. ԺԴ. 13**) նա եւ Ղուկաս եւ զանուանս եւս ասեն, զորոց առաքեցեն։ 5 Ասէ առաքեաց զՊաւղոս եւ զՅոհաննէս, այլ եւ նշան ետ նոցա եւ ասէ. «Ահա իբրեւ մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բա[րձեալ] սափոր ջրոյ։ Երթիջիք զհետ նորա ի տունն, յոր տուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէր տանն. Ո՞ւր են աւթեւանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտաւքս հանդերձ։ 7 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, անդ պատրաստեսջիք» (**Ղկ. ԻԲ. 10-12**)։*

ԾԴ. 1 *Եւ արդ, զի՞նչ յայսցանէ իմանամք եւ կամ զո՞ր արդեաւք կոչիցէ առաջին աւր։ 2 Առաջին աւր զէ.երորդ (7) ///(2 բառ) շաբաթուն ասէ, վասն զի հրամայեաց Աստուած որդոցն Իսրայէղի թէ «զէ. (7) աւր բաղարջ կերիջիք» (**Ելք ԺԳ. 6, ԻԳ. 15, 26**), զենէք զպա[րա]րակ Տեառն։ 3 Վասն այնորիկ աշակերտքն աղաչէին զՏէրն գիտ[ել] թէ ո՛ւր կամիցի ուտել զպասէքն ըստ աւրինացն։ 4 Եւ առաքեցան ի Նմանէ հինգշաբթի աւուրն։ 5 Եւ վասն է՞ր երկու[սն յա]շա[կետացն] միայն առաքեցան։ 6 Պետրոս ծերացեալ գոլով աւրինակ էր մարգարէիցն, եւ Յոհաննէս երիտասարդ՝ առաքելոցն, վասն զի ի ձեռն երկոցունց առաքելոց եւ մեք ապրեց|424բ|աք ի մահուանէ եւ դարձաք ի մոլորութենէ եւ մերձեցաք առ Աստուած։ 7 Եւ վասն էր զանուն տանուտեառն ծածկեաց Քրիստոս։ 8 Այլ զայս արար ո՛չ թէ վասն աշակերտացն, զորս առաքեաց, այլ վասն Յու-*

դայի, զի մի՛ երթեալ ասասցէ հրէից, թէ ո՞վ իցէ նա, յորոյ տուն եմուտ Քրիստոս, եւ յայսմանէ ամբոխ ինչ եւ խռովութիւն յարուցանեն հրեայքն ի վերայ առն եւ խափան արասցեն այնմ, որ հանդերձեալ էր ի վերնատանն նորա կատարիլ։ 9 *Վասն այսորիկ առ ժամանակ մի ծածկեաց Քրիստոս զանուն առն։*

Ծե. 1 *Եւ զի՞նչ պատճառ նա իսկ պատրաստ լինելոյ զարդարեալ վերնատանն։* 2 *Այլ քանզի ո՛չ տայր աւրէնք Աստուծոյ որդոցն Իսրայէղի արտաքոյ Երուսաղէմի առնել զզատիկն, եւ վասն այսորիկ ամենայն տունք քաղաքին յԵրուսաղէմ լցեալ լինէին ի հեռուստ եկեալովքն եւ շրջաբնակաւքն հրէիցք։* 3 *Եւ վասն զի այրն ակն ունէր զմեծ ոմն զմարդ երեւելի ընդունել ի տան իւրում եւ վասն <այն> այնորիկ զվերնատունն զայն գեղեցկապէս [պատրա]ստեալ, յաւրինե[ա]լ ամենայն զարդիւք ի պէտս տաւնին, որ եւ այս ըստ շնորհացն Աստուծոյ այնպէս պատրաստեալ պահեցաւ ի պէտս սուրբ խորհրդոյն, որ ի նմա կատարելոց էր։* 4 *Եւ վասն է՞ր ի վերնատանն կատարէին խորհուրդքն։* 5 *Թուի ինձ յերկուց պատճառաց. մի զի զուսուցէ, թէ երկնաւոր է խորհուրդն եւ ոչ երկրաւոր, եւ պատճառ է ընդունողացն զնոսա մտացն թեւաւք բարձրանալ յերկրէ եւ անձին երկնաւոր գնացս տանել։* 6 *Եւ երկրորդ, զի ո՛չ էր վայելուչ զպաշտաւն ծածկել խորհրդոց ի ներքոյ առա|421ա|ջի*[1] *ամենայն բազմամբոխ մարդկան կատարեալ, այլ ի բարձրագոյնսն առաջի իւրա[յն]ոցն միայն եւ կամակցացն ընտրելոց արժան էր։*

ԾԶ. 1 *Եւ զի՞նչ ապա այնուհետեւ։* 2 *«Իբրեւ երեկո եղեւ, ասէ, կայր Յիսուս բազմեալ ընդ ԲԺ. (12) աշակերտսն, եւ մինչդեռ ուտէին, ասէ. «Մի ոմն ի ձենջ մատնելոց է զիս»։* 3 *Եւ տրտմեցան յոյժ եւ սկսան ասել իւրաքանչիւր ոք ի նոցանէ. «Մի՞թէ ե՛ս իցեմ, Տէր»։* 4 *Նա պատասխանի ետ եւ ասէ. «Որ մխեաց ընդ զձեռ ի սկաւառակն, նա մատնելոց է զիս»* (**Մտթ. ԻՁ. 20-23**)։ 5 *Իսկ Յոհաննէս այլ ազգունակ իմն ասէ, եթէ՝ «ինքն Քրիստոս եթաց զպատառն եւ ետ Յուդայի»* (**Յվհ. ԺԳ. 26**)։ 6 *Եւ երկոքեանս եղեն ճշմարտապէս։* 7 *Եւ զի մխեաց նա զձեռն իւր ընդ Քրիստոսի եւ զի էթաց զպատառն եւ ետ նմա։* 8 *Եւ զայս արար Քրիստոս վասն երկուց իրաց. մի, զի ծանուսցէ եւ յայտ արասցէ, թէ գիտէր, զոր ինչ լինելոց էր եւ զի կամաւ գայ ի չարչարանս, եւ զի քննիչ էր երիկամանց սրտի եւ յայտնի նենգութեան խորհրդոցն Յուդայի առաջի նորա։* 9 *Եւ երկրորդ, զի ո՛չ էր արժան հաղորդել նմա մարմնոյ եւ արեան նորա։* 10 *Նախ զգու-*

---

[1] *Թերթերի խառն լինելու վերաբերեալ 424բ՝ ստ. լս-ում ԺԹ. դ. շղագրով կայ՝ «Դ. թուղթ յետ գնա՛»*

շացուցանէ, թէ նա՛ է, որ մատնելոց է եւ զի ցուցէ աշակերտացն յայտնի նշանաւն, թէ ո՞վ է, որ զայն գործելոց իցէ, թէպէտ եւ զայսպիսի նշանս ետ աշակերտացն, եւ նոքա ճշմարիտ գիտէին <էին> զբան վարդապետին։ 11 *Եւ յայտ յայնմանէ է, զի իւրաքանչիւր ոք առանձին իւր կասկածէր, սակայն առ զարմանալն անհաւատալի իմն զբանն համարէին, իբրու թէ ո՛ր աշակերտ իցէ, որ ընդ նոսին այնչափ նշանաց եւ ս[քա]նչելեաց |421բ| հաղորդեալ իցէ եւ յայնչափ յանդգնութիւն համարձակիցի, զի որպէս ինքեանք հեռի էին յայնմ լրբութենէ, նոյնպէս եւ զայլ ոք այնպէս կարծէին։*

ԾԷ. 1 *Եւ յետ այնորիկ զի՛նչ եւս արար Քրիստոս. «Եւ մինչդեռ ուտէին առ Յիսուս, [աս]է, հաց, աւրհնեաց, էբեկ եւ ետ աշակերտացն, եւ ասէ. Առէ՛ք կերայք. ա՛յս է մարմին իմ։* 2 *Եւ առե[ա]լ բաժակ գոհացաւ, ետ նոցա եւ ասէ. Արբե՛ք ի դմանէ ամենեքեան, զի ա՛յս է արիւն իմ Նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թող[ութիւն] մեղաց։* 3 *Զայս արարէք առ իմոյ յիշատակի։* 4 *Բայց ասեմ ձեզ, ո՛չ եւս արբից յայսմ հետէ ի բերո որթոյ, մինչեւ յաւրն յայն, յորում արբից զդա ընդ ձեզ՝ նոր յարքայութեանն Հաւր իմոյ։* 5 *Եվ աւրհնեաց, եւ ելին ի լեառն Ձիթենեաց»* (**Մտթ. ԻԶ. 26-30**)։

ԾԸ. 1 *Եվ զի՞նչ արդեաւք էր, զոր ուտէին, յորժամ առ Քրիստոս զհացն աւրհնեաց եւ ետ նոցա զգառն աւրինական, զոր պատրաստեցին առաքեալքն։* 2 *Եւ կամ, որպէս թուի ինձ ի դէպ գոլ, թէ այլ ինչ բազմեցան ուտել յետ աւրինական գառինն, որպէս այլու[ր] հայր սուրբ ասաց։* 3 *Եւ յայտ անտի է, զի աւրէնքն Աստուծոյ յոտն հրամայէին ուտել զգատիկն. եւ Քրիստոս ո՛չ անց զաւրինաւքն երբեք։*

ԾԹ. 1 *Եւ ընդէ՞ր յետ ստուերական գառինն ճաշակելոյ ապա աւրհնեաց զհացն եւ ետ նոցա ունել։* 2 *Առ ի ցուցանել, թէ այն աւրինակ էր եւ այս ճշմարտութիւն։* 3 *Եւ արժան էր նախ զաւրինակն կատարել եւ ապա գալ ճշմարտութեանն։* 4 *Եւ որպէս ստուերն կցորդ է մարմնոյն, նոյնպէս եւ աւրինակն յաւրինողին։* 5 *Արդ, կատարեաց նախ զաւրինակն, ըստ հին պատուիրանացն, եւ ապա սկիզբն արար Նորոյ |422ա| ուխտիս, յայտ առնելով, թէ նոյն ինքն է Տէր տուիչն եւ Նոր կտակարանացն, վասն այնորիկ զայն [ել]ից, որպէս պատուիրեցաւ եւ զայս ստուգեաց, որպէս խոստացաւ։* 6 *Նա եւ՝ յորժամ ուտէին զգառն, ո՛չ ասաց թէ՝ «Այս է մարմին իմ», վասն զի աւրինակ էր, այլ յորժամ բազմեցաւ առ զհացն, քանզի ճշմարտութիւն էր, աւրհնեաց եւ արար մարմին, եբեկ եւ ետ նոցա, յայտ արար, թէ անց աւրինակն, եւ ծագեաց ճշմարտութիւնն։* 7 *Եւ ո՛չ միայն այս, այլ զի նախ աւրհնեաց եւ ապա եբեկ առ ի յուսուցանել մեզ, թէ այսպէս*

պարտ է կատարել զսուրբ խորհուրդն. նախ աւրհնել զհացն եւ քարոզել ի վերայ նորա զամենայն փրկական տնաւրէնութիւն, եւ ապա բեկանել եւ առնուլ հաւատով ի քաւութիւն մեղաց մերոց։ **8** *Եւ զի գոհացաւ յետ կատարման խորհրդոյն՝ առ ի խրատել զմեզ, թէ այնպէս պարտ է գոհանալ՝ յորժամ հաղորդիցիմք ի սուրբ խորհրդոյն։* **9** *Եւ զի ասաց, թէ՝ «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան», եցոյց թէ ամենայն հաւատացելոց յամենայն ժամ պարտ է զգուշանալ եւ մերձենալ ի մարմին եւ յարիւն Որդոյն Աստուծոյ։*

Կ. **1** *Եւ է՞ր վասն Քրիստոս յետ զգառն ուտելոյն հաղորդեաց զաշակերտսն մարմնոյ եւ արեան իւրոյ, իսկ մեք՝ ոչ։* **2** *Նախ զկերակուրն հաղորդիմք, եւ եթէ ոք յայսոսիկ սխալէ, պատուհաս կրեսցէ, վասն զի այն առաջինն աւրինակ էր, զոր կերաննն, եւ երկրորդն՝ ճշմարտութիւն։* **3** *Եւ պարտ է նախ աւրինակին անցանել եւ ապա գալ հասանել ճշմարտութեանն, քանզի ամենայն իրաւք պարտ էր եւ պատ|422բ|շաճ էր Քրիստոսի զամենայն աւրէնսն կատարել, որպէս եւ ինքն իսկ ասաց, որպէս պատշաճ էր դարձեալ լուծանել եւ յայլ բարձրագոյնս փոխել։* **4** *Եւ վասն այնորիկ կոչէր վայելուչ յետ զհրաշափառագոյն խորհուրդն աւանդելոյ եւ հաղորդեցուցանել զաշակերտսն մարմնոյ եւ արեան Իւրոյ։* **5** *Դարձեալ անդրէն յաւրինակն դառնալ եւ զստուերական գառն ուտել։*

ԿԱ. **1** *Նա եւ ոչ եւս տեսանեմք, թէ այլ ուրեք երբեք գործեցին առաքեալքն այնպիսի, եւ մեզ արժան է զնոցին զհետ ընթանալ, որ ստուգապէս ի Քրիստոսէ ընկալան զաւրինադրութիւն, եւ յետ այնորիկ ի Հոգոյն Սրբոյ ի վերնատանն, որովք ուսանիմք, թէ չիք ինչ ի մեզ հին կամ ստուերական, այլ ամենայն ինչ նոր եւ ճշմարիտ։* **2** *Եւ ոչ երկրաւոր ինչ կերակուր ունիմք, այլ՝ երկնաւոր։* **3** *Եւ զինչ հարկ էր ա[ս]են, կատարիլ հանապազորդ խորհրդոյն եւ միշտ հաղորդելն մարմնոյ եւ արեան Նորա, զի բաւական էր մին միայն։* **4** *Այո՛, հարկ էր արդար եւ կարի քաջ, զի թէ զհանապազորդութիւն հաղորդութեանն չէր պարգեւե[ա]լ, ուստի՞ ճանաչէին զկնի եկեալքն զհրամանս Նորա, եւ կամ ոք կարէ՞ր զոք հաւանեցուցանել վասն այսպիսի հրամանաց պարգեւի եւ այսպէս դժուարհաւատալի թուէր ճշմարտութիւնն յաղագս բազմաժանակեա մ[ահ]ացութեանն։* **5** *Բայց այժմ յամենայն ժամ ի մարմին եւ յարիւն Նորա մերձենալով եւ ի վերայ ձեռաց մեր բառնալով, ճշմարտապէս հաւատամք, եթէ///[1]։*

---

[1] *Այստեղ ձեռագիրն աւարտւում է, ստ. լս-ում ԺԹ. դ. շղագրով կայ՝ «պակաս է»*

ԼԹ.

ՆՈՒԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՀԱՆՆԻՍԻ Ի ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Միջնադարի մեր նշանավոր գործիչները՝ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը եւ ուրիշներ հաճախ են դժգոհում քաղաքական, տնտեսական աննպաստ պայմանների պատճառով բնակչության (եւ անգամ) հոգեւորականների շրջանում ինչպես կենցաղային բարեւերի աղավաղման, համար, այնպես էլ գիտական, կրթական մակարդակի անկումից: Հովհաննէս Երզնկացին եւս, հետեւելով իր մեծ նախորդների օրինակին, ձգտում է ո՛չ միայն պայքարել եղած շեղումների դեմ, բացատրել նրանք ծնող պատճառները, այլեւ տալիս է հաղթահարման ուղիները: Ինչպես արդեն ասել ենք, Երզնակցին, անդրադառնալով սաղմոսներին, դժգոհում է, որ սաղմոսերգուները միշտ չէ, որ հասկանում են սաղմոսների ներքին իմաստները, թէեւ «ի մանկութենէ մինչեւ յաւագոյթ ի բերան առեալ երգեն» (ձեռ. 2173, 4բ-5ա): Նույն մտահոգությամբ դժգոհում է նաեւ քրիստոնեության մեծագույն սրբերից Պողոս առաքյալի գործունեության եւ մասնավորապես նրա նշանավոր «Թղթերի» շուրջ եղած տարակարծությունների վերաբերյալ, որոնք դուռ են բացում բազմաթիվ սխալ, աղանդավորական գաղափարների ներթափանցման համար: Նկատելով, որ այդ ամենն արդյունք է ոչ թէ գիտական մտքի պակասի, այլ մարդկանց ծուլության, պահանջում է խորապես սերտել, ուսումնասիրել Սուրբ գիրքը, հորդորում է հաղթահարել ծուլությունը եւ հետեւել Քրիստոսի խոսքին. «Խնդրեցէ՛ք, եւ տացի ձեզ, հայցեցէ՛ք եւ գտջիք, բախեցէ՛ք եւ բացցի ձեզ», ապա հանգամանալի բացատրություններ է տալիս Պողոս Առաքյալի «Թղթերի» վերաբերյալ:

Բնագիրը հրատարկվում է ըստ ՄՄ 682 (Ծ. 91ա-5ա) ձեռագրի:

Ա. 1 |91բ| *Յամենահրաշ յարարչական Բանին հրամանէ խկոյն բաղկացեալ գոյացան բազմութիւնք բնութեանց՝ հրեղինաց եւ հողեղինաց: 2 Ոմանք բարձրագոյնք եւ պատուաւորք եւ այլք՝ նուաստք եւ երկրաւորք, կէսք փառաւք գերափայլեալք եւ այլք՝ նիւթաւք զանազանեալք: 3 Ոմանք շնորհաւք բարգաւաճեալք եւ այլք՝ բնութեամբ առատացեալք: 4 Ըստ սորին ինքեան առաքելական բանի վկայութեան, թէ «Ի տան արքունական մեծի են [ոչ միայն] անաւթք պատուականք՝ ոսկեղէնք եւ արծաթեղէնք, [այլ և] են փայտեղէն եւ խեցեղէնք, ոմն ի փառս եւ ոմն յանարգանս»* (**Բ. Տմթ. Բ. 20**)*, ըստ պատշաճի պիտոյից արքունական ապարանից: 5 Ըստ յայսմ յարացուցի ի տաճար եւ ի տուն երկնաւոր անմահ արքային Յիսուսի, զոր ստացաւ կրկին արարչութեամբ ի սուրբ եկեղեցի, եղեն անաւթք ի յոգւոյն ազնիւք եւ փառաւորք. առաքեալք եւ մարգարէք, կուսանք եւ*

մարտիրոսք, յորոց միջի գերազանցեալ շնորհաւք Հոգւոյն համատարած հայրն հասարակաց Պաւղոս առաքեալ, որպէս սերովբէքն ի դասս հրեշտակաց, կամ արեգակն ի մէջ լուսաւորաց, եւ կամ տպազիոն ի մէջ ականց պատուականաց, եւ ոսկի ազնիւ ի մէջ նիւթական փայլաւղաց, ըստ Տեառնն բանի, թէ անաւթ ընտիր է նա ինձ կրել զանուն իմ ի մէջ ազգաց եւ հեթանոսաց (տե՛ս **Գրծ. Թ. 15***)։* **6** *Իսկ ազնուութիւն սորա ո՛չ միայն ի բանից եւ ի գործոց, այլեւ ի թղթոց սորա բացափայլապէս ցուցանի։* **7** *Ուստի եւ մեք, հրճուեալ ի բան երանելւոյս, որպէս ոք յերկնային դրախտին ցանկութիւն, փութամք մտանել ի սա, քանզի յայն դրախտ միմիայն եմուտ զաւազակն ասեմ խաչակից փրկչին, իսկ ի սորայն՝ յոքունք եւ անթիւք։* **8** *Եւ բերին մեզ ո՛չ աւետիս միայն, որպէս աւազակն զբանալ դրախտին, այլ պտուղս յոգնահամս անուշացուցիչ հոգւոց, զիմաստս բանի վայելել փափկութեամբ, որք փափագաւղք եղեն սմին։* **9** *Բայց նախ զայս ասեմ եւ զաղէտս խորհրդոց կրից հասարակաց ծանուցանեմ, քանզի ցանկ միշտ եւ հանապազ ընթեռնլով զ«Գիր թղթոց» երանելոյն Պաւղոսի՝ ըստ իւրաքանչիւր շաբաթու իցէ, զի երկիցս եւ երիցս, մանաւանդ յորժամ զյիշատակ մարտիրոսաց կատարեմք, եւ ես ուրախ լինիմ, յորժամ հոգեւոր փողոյն եղեց հաղորդ, զուարթանամ եւ ի վեր վազեմ առ յաւժարութիւն սրտիս եւ տոչորիմ փափագմամբ, յորժամ զիմոյ սիրելոյն զձայնն լսեմ եւ ցանկամ մերձենալով խաւսել ընդ նմա, եւ վշտագին երկնեմ, զի ամենեքեան զայսպիսի այր ո՛չ գիտեն, որպէս պարտ է գիտել, այլ ոմանք այնպէս գիտեն, մինչ զի «Թղթոց» նորա համարս առնել ոչ կարեն։* **10** *Եւ այս ոչ եթէ յանուսումնութենէ լինի, այլ ի ծոյլ մտաց, զի ո՛չ կամին հանապազ խաւսել ընդ երանելոյն։* **11** *Զի ո՛չ եթէ մեզ, որ թուիմք, թէ եմք ինչ, այլ մտավարժութեան կամ երագահասութեան ցուցաւ, այլ զի հանապազ առն հնչելով ի լսելիս մեր, եմք առաւել ի զարմացման նորա։* **12** *Զոր երանելոյս այսորիկ ցուցեալ ասէր ցփիլիպեցիսն. «Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել |92ա| վասն ձեր, վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի՝ ի կապանս իմ եւ ի պատասխանատուութեան եւ ի հաստատութիւն Աւետարանին»* **(Փլպ. Ա. 7***)։*

Բ. 1 *Նոյնպէս եւ դուք, եթէ կամիք յաւժարութեամբ ունկն դնել ընթերցուածոց՝ ո՛չ էք կարաւտ ուսանելոյ, քանզի անսուտ է բանն Քրիստոսի, որ ասէ. «Խնդրեցէք՝ <կէ> գտջիք, բախեցէ՛ք եւ բացցի ձեզ»* **(Մտթ. Է. 7***)։* **2** *Այլ բազում ինչ ասացաւ ընդդէմ մեզ, այսինքն՝ զորդիս սնուցանել, կանանց հոգ տանել։* **3** *Սորին վասն չառնուն յանձն զայսպիսի աշխատութիւնս։* **4** *Վասն այնորիկ բիւր չարիք ծնանին ի գրոց տգիտութենէ։* **5** *Սորին աղագաւ ի հերձուածողաց ժանտախտն ծաղկեցաւ, վասն այնորիկ ար-*

համարհելի եղեն ի՛րք։ 6 *Զոր աւրինակ, որք ի լուսոյ զրկեալ են, ոչ կարեն ուղիղ գնալ։* 7 *Սոյնպէս, որք ո՛չ հային ի ճառագայթս աստուածային գրոց սրտիւ, վտանկեալ ի խաւարի միշտ գնան*[1]*։* 8 *Վասն որոյ մեք, որովհետեւ հանդերձեալ եմք մխել ի ճառս «Թղթոցս» այսոցիկ, կարեւոր համարեցաք ասել նախ, թէ ընդ էՙր իսկ Թուղթս գրեաց Պաւղոս, եւ երկրորդ, թէ ո՛ւստ գրեաց։* 9 *Երրորդ՝ թէ ո՞ւր եւ առ որս գրեաց։* 10 *Չորրորդ, թէ ընդէՙր Դ.ան (14) միայն Թուղթք։* 11 *Հինգերորդ, թէ էՙր աղագաւ այսպիսի կարգեցան Թուղթքս մի զմիոյ զկնի։* 12 *Վեցերորդ, թէ էՙր վասն զնախագահութիւն ընկալաւ թուղթն Հռոմայ։* 13 *Եւթներորդ, զպատճառս գրութեան Թղթոցն, զի այսոսիկ գիտելով դիւրաւ լիցի մեզ մուտ ի վարդապետութիւն առաքելական շարագրութեանս։*

Գ. 1 *Արդ, վասն առաջնոյն, թէ ընդէՙր գրեցին Թուղթս, ա՛յս է պատճառն։* 2 *Քանզի առաքեալն, յորժամ առին զՀոգին Սուրբ ի վերնատունն, ո՛չ առին հրաման ի Տեառնէ գրել, այլ միայն բանիւ քարոզել, ըստ այնմ, թէ «Գնացէ՛ք, քարոզեցէք ընդ ամենայն տիեզերս»* (**Մրկ. ԺՁ. 15**)*։* 3 *Վասն որոյ ոչ կամէին գրով ինչ բան տալ հաւատացելոցն, այլ հոգւով աւանդել ի միտս նոցա, ըստ աւետեացն Աստուծոյ թէ. «Տաց զաւրէնս իմ ի միտս նոցա եւ ի սիրտս նոցա գրեցից»* (**Եբր. Ը. 10**)*, զի զոր մկրտէին կամ ձեռնադրէին, առնուին զՀոգին Սուրբ, որպէս ասաց, թէ. «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք ի Հոգին Սուրբ մկրտիջիք»* (**Գործ. Ա. 5**)*, զոր էհեղ ի վերայ ամենայն մարմնոյ, որպէս եւ Պաւղոս ի Կորնթացւոց երկրորդ Թղթին գրէր. «Դուք էք թուղթ» Քրիստոսի պաշտեցեալ ո՛չ մրով, այլ Հոգւովն Սրբով, ո՛չ ի տախտակս քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս* (**Բ. Կրնթ. Ա. 5**)*։* 4 *Եւ առ հռոմայեցիսն ասէր. «Ոչ առիք զհոգին ծառայութեան, այլ որդեգրութեան»* (**Հռոմ Ը. 15**)*։* 5 *Եւ յամենայն թուղթս յիշատակէ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զոր ընկալան, զի ո՛չ է փոյթ առաքելոցն վերջին տկարութիւնս մեր, թէպէտ եւ տեղեակ իսկ էին, որպէս ասէր. «Պաւղոս, թէ ի ժամանակս յետինս եկեսցեն մարդիկք չարք անձնասէրք»* (**տե՛ս Բ. Տմթ. Գ. 1-2**)*։* 6 *Սակայն փութային զհրամայեալսն բանիւ քարոզել։* 7 *Բայց զի որպէս մարդն առաջին զրկեալ ի փառացն Աստուծոյ յերկիր անկաւ, այսպէս եւ նոքա ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ,* |92բ| *որ յայտնապէս Պաւղոս ազդէր։* 8 *Եւ այս վասն երկու պատճառի. կամ անարժանութեանն եւ կամ զի հաստատեալք եղեն ի հաւատս եւ չունէին*

---

[1] *«Յանկ միշտ եւ հանապազ ընթեռնելով «զգիր թղթոց» երանելոյն Պօղոսի... ի խաւատի միշտ գնան» հատուածը քաղուած է Յովհան Ոսկեբերանի Պօղոսի թղթերի մեկնութիւնից. տե՛ս Ս. Յովհան Ոսկեբերան, Ճառք, ի մեկնութեանց Սուրբ Գրոց, աշխատ, Հ. Քէոսէեանի, էջմիածին, 2008, էջ 424-425։*

պէտս յայտնի սքանչելեաց, զի նշան անհաւատից վասն է, բայց զի մի՛ մոռասցին զխորհուրդ տնաւրէնու թեանն Քրիստոսի եւ կամ ապականիչքն յաւելուած կամ պակասութիւն խառնեսցեն։ 9 *Վասն այսորիկ հարկ եղեւ առաքելոցն գրով տալ նոցա զբան քարոզութեան իւրեանց։* 10 *Ուստի եւ Պաւղոս մեծ գործ առեալ զանձամբ, ո՛չ միոյ գաւառի գրէ, որպէս եւ այլ առաքեալքն, այլ՝ ընդհանուր ազգի, զի կատարեսցի այն, թէ ո՞ւր ոչն պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, քանզի վասն ամենեցուն ցաւէր Պաւղոս եւ որպէս իւր ծնունդ սիրէր, եւ ի ձեռն Թխթոյն, որպէս թռչուն անձկալի գթով հասանէր առ նոսա եւ զհակառակութիւնսն բառնայր եւ ի ճշմարտութիւնն հաստատէր եւ զսղալեալսն վերստին ուղղէր երկամբք յապաշխարութիւն։* 11 *Որպէս առ գաղատացիսն գրէր. «Որդեակք, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչեւ նկարեսցի Քրիստոս ի ձեզ»* (**Գղտ. Դ. 19**)։ 12 *Այս թէ ընդէ՞ր գրեցին Թուղթս։* 13 *Իսկ զերկրորդն եւ զերրորդն, թէ ո՛ւստ գրեաց եւ կամ առ որս գրեաց, բաւական համարիմք զասացեալն յԵթաղեայ յԵգիպտացւոյ, զոր ստուգիւ եցոյց ի խնդրոյ թագաւորազինն կրաւնաւորացելոյ։*

Դ. 1 *Բայց զչորրորդն ասելի է, թէ ընդէ՞ր չորստասան Թուխթս գրեաց Պաւղոս։* 2 *Արդ, ոմանք բազումս կարծեցին Թուղթս գրեալ Պաւղոսի, եւ ոչ այսչափ միայն, որպէս է՛ գտանել երրորդ Կորնթացիս եւ այլս։* 3 *Բայց այսչափ ընկալեալ եղեւ ի հարանցն եւ ի լոյս եկն ճշմարիտ խնդրաւղաց, այլ թէպէտ այսքան միայն՝ ո՛չ առանց խորհրդոց։* 4 *Քանզի Դ.անեքումբք (14) Թղթովքս իբր լրացեալ լուսնային լուսով, քանզի յայսքան աւուրս աճեալ՝ նորանայ, լուսաւորեաց զգիշէր մեղաց եւ տգիտութեան մարդկան խաւարի եւ զարթոյց մերձենալ ի լոյսն ճշմարտութեան։* 5 *Ըստ այն՝ «Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ»* (**Հռոմ ԺԳ. 12**) *որդիք լուսոյ եղիջիք։*

Ե. 1 *Եւ դարձեալ այսքան Թղթովքս զախտ ցանկութեան մարդկայինս բնութեան, որ այսքան ժամանակս խլրտեալ շարժի, իբր սանձով իւիք աստուածաբան վարդապետութեամբ իւրով մաքրեաց, եւ որպէս զհրեշտակս ի յերկրի զմարդիկ տնաւրինեաց ի ձեռն խրատուն, թէ՝ «Մի՛ ի ցաւս ցանկութեան, որ հեթանոսաց է աւրէն»։*

Զ. 1 *Վասն այսորիկ Դ.Ժ. (14) կարգեաց Թուղթս։* 2 *Դարձեալ, զի չորսն տասինն գոյացութիւն է, եւ տաս սուրբ է ամենեւին։* 3 *Արդ, յայտ առնէ, թէպէտ Թուղթքն Պաւղոսի սուրբ է եւ ընտիր, եւ պատճառ սրբութեան եւ մաքրութեան ամենեցուն։*

Է. 1 *Իսկ հինգերորդն, թէ է՞ր աղագաւ այսպէս կարգեցան Թուղթքն։*

Ը. 1 *Ոմանք ասեն, թէ ըստ պատուոյ մեծագոյն քաղաքացն եւ Թուղթքն*

եդան, բայց այս ո՛չ է ճշմարիտ, զի թէ այսպէս էր, ապա Եբրայեցւոյ Թուղթն առաջին եւ կամ |93ա| ընդ առաջինսն պարտ էր կարգել եւ ո՛չ յետոյ։ 2 *Եւ այլ ասեն, թէ ըստ գիւտի թղթոյն, որպէս էգիտ Կլեմտէս (=Կղեմէս), որ հետեւող էր առաքելոցն, այնպէս կարգեաց, քանզի գտեալ Թուղթքն գալարելով էր ըստ նամակի, որպէս եւ գրեալն էր, եւ այնպէս զգուշութեամբ պահէին, զոր յետոյ շարայարեաց ի գրոց աւրինակ։* 3 *Եւ այս թէպէտ այսպէս է ճշմարիտ, սակայն ոչ պատահմամբ, այլ ըստ խորհրդոյ եդաւ, որպէս ունիմք ուսանել, քանզի Թուղթն Հռոմայեցւոց նախակարգեալ է, զի բնական խորհրդոցն ճառէ, ասելով. «Գիտութիւն Աստուծոյ յայտնի է ի նոսա յարարածոցս տեսութենէ» (Հռոմ. Ա. 19)։* 4 *Եւ «աներեւոյթք նորա ի սկզբանէ երեւելաւքս ճանաչեալ լինէր» (Հռոմ. Ա. 20) այսինքն՝ մշտնջենաւորութիւն եւ զաւրութիւն եւ աստուածութիւն նորա։* 5 *Եւ զի ծանեան զԱստուած եւ զվայելչականն ո՛չ հատուցին որպէս [պ]ատիւ, որպէս Մելքիսեդեկիւ եւ այլքն, որք նովաւ արդարացան։* 6 *Իսկ իմաստութիւն ի բնական քննութենէն եկն յառաջ տեսանել զբնութիւն արարածոցս, զոր մոլար եւ շնչական գիտութեամբ զարարածս աստուածածուցին։* 7 *Վասն այսորիկ զկնի եդաւ Թուղթն Կորնթացւոց, զսնոտի իմաստութիւնն յանդիմանելով. ո՛չ բանիւք իմաստութեան ասէ, զի մի՛ ընդունայն լիցի խաչին խորհուրդ։* 8 *Զի գրեալ է. «Կորուսցից զիմաստութիւն իմաստնոց եւ զխորհուրդս խորհրդականաց արհա[մարեցի]» (Ա. Կորնթ Ա. 19)։* 9 *Եւ Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ըն[դհանուր]։* 10 *Եւ թէ ո՞ւր, իմաստուն ասէ եւ զպատճառն, թէ «Ոչ ծանեաւ աշխարհս իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապր[եցուցանել]» (Ա. Կորնթ Ա. 21) ի բազմաքնին իմաստութենէն ո՛չ աւգտեալք, դարձայց ի պարզ անմեղութիւն, յաղագս որոյ գոհանայր զՀաւրէ, թէ ծածկեցեր յիմաստնոց եւ յայտնեցեր տղայոց, զի այնպէ՛ս հաճոյ եղ[եւ]։* 11 *Եւ զի ոչ բնական գիտութեամբ եւ ոչ վայրաքնին իմաստութեամբն աւգտեցան, յաւել զաւրէնսն Մովսէսի։* 12 *Նորին աղագաւ երրորդ, ըստ կարգի երկրորդ Թուղթն կորնթացւոց, զի զաւրինացն ունի զխորհուրդ։* 13 *Առ նոսա համեմատելով՝ զառաւելութիւն Աւետարանին յայտ առնէ Պաւղոս, տաւն արդարութեան եւ հոգեւորական ասէ։* 14 *Իսկ զաւրէնսն խափանելիս պաշտաւն դատապարտութեան գիր սպանանող եւ գրեալ մրով եւ անյայտ ծածկութիւ։* 15 *Արդ, որպէս երեւեցաւ Կորնթացւոց Երկրորդն, զի ունէր զնուազութիւն աւրինացն եւ զԱւետարանին առաւելութիւն, ի նոյն յարեալ չորրորդ Գաղատացւոցն, որ ցուցանէ զաւրինացն բարձումն՝ համարձակեալ նզովիւք մինչ ի հրեշտակս, որ թէ ուսուցանեն հաստատել զաւրէնսն, եւ թէ աւրինաւքն ո՛չ*

արդարանան, եւ որք ընդ աւրինաւքն են, ընդ անիծիւք են, եւ սնուցիչ մեր եւ դաստիարա՛կ էր, որով ի կարգի ծառայութեան կայաք, իսկ Քրիստոսիւ Որդիք Աստուծոյ, որով աղաղակեմք աբբա հայր եւ ժառանգ Քրիստոսի (Հմմտ. Գղտ. Գ. 24, Դ. 64), եւ ո՛չ թլփատութիւն, այլ նո՛ր արարած։

Թ. 1 *Իսկ յետ այսր, հինգերորդ՝ Եփեսացոցն, որ ցուցա|93բ|[ւր]նէ զլինելն նորոյ աշխարհի ի ձեռն Քրիստոսի երկնաւոր աւրհնութեամբ, ըստ յառաջադրութեանն Աստուծոյ իջանել Տեառն մերոյ յերկնից, այն որ եդաւ ի տնտեսութիւն լրման ժամանակաց, միաւորելով զմեզ ընդ հրեշտակս, ընդ Քրիստոսի յարոյց եւ ընդ նմին նստոյց՝ զծածկեալ խորհուրդ տնտեսութեանն յայտնելով։*

Ժ. 1 *Ապա վեցերորդ՝ Փիլիպեցւոցն, որ նշանակէ զմարմնանալն Քրիստոսի, որպէս եւ ասէ. «Զինքն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ» (Փլպ. Բ. 7), որ եւ մեզ զնոյն խորհել, որ եւ ի Քրիստոս Յիսուս։*

ԺԱ. 1 *Եաթներորդ՝ Կողոսացւոցն, որ ունի զչարչարանացն եւ զխաչին խորհուրդ, որպէս եւ ասէ. «Որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ եւ բեւեռ[ե]աց ընդ խաչ» (Կղս. Բ. 8)։* 2 *Եւ մեզ հրամայէ մեռանել մեղացն եւ խաչակցել Քրիստոսի, եւ ո՛չ իբրեւ զկենդանիս աշխարհի կրաւնաւորիլ, այլ զվերինն խոհել, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ» (Կղս. Դ. 2)։*

ԺԲ. 1 *Իսկ ութերորդն՝ առ Թեսաղոնիկեցիս Առաջին, վասն յարութեանն Քրիստոսի, որպէս եւ ասէ, թէ՝ «Հաւատամք, եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ եւ զմերս ի նոյն յարեալ» (Ա. Թեսաղ. Դ. 13)։* 2 *Նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա, եւ թէ՝ «յափշտակեսցուք» (Ա. Թեսաղ. Դ. 16)։*

ԺԳ. 1 *Իսկ իններորդ առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ, ի վերայ այսր ցուցանէ, զաւր հանդերձեալ գալստեան նորա։* 2 *Եւ թէ որպէ՞ս լինելոց է, ասէ, թէ «Ո՛չ եկեսցէ որդին կորստեան՝ հակառակորդն հպարտացեալ» (Բ. Թեսաղ. Բ. 3) եւ բարձցի, որ այժմդ ունի, որ է հռոմայեցւոց թագաւորութիւնն։*

ԺԴ. 1 *Իսկ տասներորդ՝ Եբրայեցւոցն, զի զաւրէնսն մեկնողապէս ասէ զխորանն, զպատարագն, զքահանայսն եւ յայտնապէս զհանդերձեալսն ցուցանէ։* 2 *«Փութացարուք մտանել ի հանգիստն, ուր կարապետն մեր Յիսուս եմուտ յանդիման լինել երեսացն Աստուծոյ» (Եբր. Դ. 11)։* 3 *Եւ դարձեալ, պիտոյ է համբերութիւն, զի զկամս նորա արասցուք եւ հասցուք աւետեացն (հմմտ. Եբր. Ժ. 36), զոր խոստացաւ, որպէս ասէ. «Որ գալոցն է՝ եկեսցէ եւ ո՛չ յամեսցէ»։* 4 *Եւ ցուցանէ զբազմութիւն նահապետացն հաւատովք արդարացեալ, վասն որոյ զՔրիստոս ի մէջ բերէ. «Հա-*

յեցարուք ի զաւրագլուխն հաւատոյ ի կատարիչն Յիսուս, որ անձն առ զխաչն, արհամարհեաց զամաւթն, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ» (**Եբր. ԺԲ. 2**)։ 5 *Նոյնպէս եւ Տիմոթեացն զհանդերձեալ կենացն ասէ, թէ՝ «Յուսով կենացն յաւիտենից, զոր յիւրում ժամանակն ցուցցէ երանելին եւ միայն հզաւրն՝ թագաւորն թագաւորաց եւ Տէրն Տէրանց»* (**Ա. Տիմոթ Զ. 15**)։

ԺԵ. 1 *Եւ թէ զաւետիս կենաց ունի զարդիս եւ զհանդերձելոցն, եւ թէ բուռն հար զկենացն յաւիտենից։* 2 *Ըստ Նմին եւ երկրորդ թուղթն ասէ. «Աւետեաց կենացն» հասանել երկնաւոր փառաւքն* (**Բ. Տիմոթ Ա. 1**)։ 3 *Եւ թէ՝ «համբերեմք ընդ Նմին եւ թագաւորեմք»* (**Բ. Տիմոթ Բ. 12**) *եւ թէ «Կայ եւ մնայ ինձ արդարութեան [պսակն]»* (**Բ. Տիմոթ Դ. 8**)։ 4 *Եւ թէ՝ ամենեցուն Նմա պարտ է ակն ունել։*

ԺԶ. 1 *Նոյն աւրինակ Տիտոսի թուղթն «Յուսով կենացն, զոր խոստացաւ անսուտն Աստուած»* (**Տիտ. Ա. 2**) *եւ դարձեալ «Ակն ունել յայտնութեան փառաց Մեծին Աստուծոյ»* (**Տիտ. Բ. 13**)։

ԺԷ. 1 *Իսկ Փիլիմոնի թուղթն թողուլ հրամայէ զպարտս եւ զյանցանս, եւ անոխակալ լինել, եւ մեզ* |94ա| *թողութիւն գտանել անաչառ դատաւորէն, եւ աւետարանական իմաստիւք ծերացեալք, եւ սիրով անխզելի շղթայիւք կապեալ ի սէր նորա եւ մեզ զնոյն ցուցանէ՝ տպաւորեալ ի Քրիստոս Յիսուս։*

ԺԸ. 1 *Գտանեմք դարձեալ եւ այլ աւրինակ գեղեցիկ կարգի յարմարան Թղթոյս, զի կատարումն միոյն՝ միւսոյն սկիզբն լինի։* 2 *Զի զոր ի սպառուածի Հռոմայեցւոց թղթոյն պատուիրէ զգուշանալ յայնցանէ, որ հերձուածս եւ գայթակղութիւնս առնեն, առ Կորնթացիս սկիզբն առնէ, ասէ՝ «Հերձուածք են ի ձեզ»* (**Ա. Կրնթ. Ա. 10**)։ 3 *«Ոմն ասէ՝ Պաւղոսեան եմ եւ միւսն թէ՝ ես Ապաւղոսեան»* (**Ա. Կրնթ. Գ. 4**)։ 4 *Սաստէ ի կատարման Թղթին եւ խոստանայ գալ* (**Բ. Կրնթ. ԺԱ. 13**)։ 5 *Եւ երկրորդ Թղթին սկիզբն առնէ զպատճառ չերթալոյն, վասն նեղութեան եւ խնայելոյ։* 6 *Եւ ի կատարման Թղթին յանդիմանէ զսուտ առաքեալսն, կեղծաւոր եւ նենգաւորս կոչէ եւ արբ[ան]եակ սատանայի։* 7 *Եւ ի Գաղատացւոց Թղթին ի դէմս այլոց նզովիւք փակէ զքաղաքս*[1] *աւտարոտիս, որ յաւրէնս դարձուցանէն։* 8 *Եւ ի կատարումն Թղթին ո՛չ հրեայ եւ ոչ հեթանոս, այլ՝ նոր արարած* (**Գղտ. Գ. 28**)։ 9 *Եւ Եփեսացւոցն սկիզբն եղեալ յառաջ քան զյաւիտեանս սահմանեալ ի վերջնումս հաստատեալ Քրիստոսիւ, որ ըստ պատկերի Արարչին հաստատեալ արդարութեամբ եւ սրբութեամբ։* 10 *Ի կատարմանն նորոյ արարածոց հրամայէ գործ ի պատերազմի առնուլ եւ*

---

[1] *Զեռ. անընթեռնելի, զքաղաքս՞, զքարոզս՞։*

դնել մարտ ընդ աշխարհակալ խաւարի աւդոյս եւ պնդել զմէջս ճշմարտութեամբ (հմմտ. Եփս. Բ. 2)։ 11 *Իսկ առ Փիլիպեցիսն, առ որս պատերազմեալս, գրէ. «Վստահեմ ի ձեզ Տերամբ» (Բ. Թեսաղ. Գ. 4) յաւրէ յառաջնէ մինչեւ ցայժմ հաղորդել Աւետարանին՝ կցորդս մեզ եղեալ պատերազմիւք ի կատարմանն, որ ինչ ճշմարտութեամբ։* 12 *Զնոյն առ Կողոսացիսն գրէ, իբրեւ «Լուաք զբանն ճշմարտութեան ըստ Աւետարանին, որ էհաս առ ձեզ յաւրէ, յորմէ ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ» (Կող. Ա. 5)։* 13 *Ի կատարածին պատուիրէ ընդունել զաշակերտսն եւ ի Թեսաղ[ոնիկեցիս] գովէ զվաստակս նոցա եւ զգործս հաւատոց։* 14 *Ի կատարածին, վասն ժամուց եւ ժամանակաց, թէ երբ լինիցի գալուստն եւ իբրեւ «Զգող գայ եւ այնպէս հասանէ» (Ա. Թեսաղ. Ե. 1)։* 15 *Իսկ երկրորդին գրէ վասն գալստեան Տեառն մերոյ եւ մեր ժողովելոյ առ նա։* 16 *Ի կատարածին՝ թէ նախ ապստամբութիւնն եկեսցէ եւ ապա գալուստ Տեառն մերոյ, որ «Սատակէ զորդին կորստեան հոգւով բերա[նոյ իւրոյ]» (Ա. Թեսաղ. Բ. 8)։*

ԺԹ. 1 *Իսկ առ Եբրայեցիսն երեւեցուցանէ, թէ «Յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, նորոգէ զարարածս եւ դնէ զթշնամիս ի ներքոյ ոտից» (Եբր. Ա. 6)։* 2 *Ի կատարմանն հրամայէ ունկնդիր լինել առաջնորդացն, իսկ ի Տիմաւթեայ եւ ի Տիտոսին առաջնորդաց տայ պատուէր։* 3 *Եւ ի կատարման առաջնորդին Թղթին ասէ «բուռն հարկանել զճշմարիտ կենացն» (Ա. Տմթ. Զ. 19) եւ յերկրորդին սկիզբն ասէ. «Տուաւ մեզ Քրիստոս յառաջ, քան զժամանակսն յաւիտենից, բայց յայտնեցաւ, այժմ յերեւել Փրկչին մերոյ» (Բ. Տմթ. Ա. 9, 10)։* 4 *Իսկ ի կատարմանն զերծուսցէ զմեզ յար|94բ|քայութիւն Որդւոյ, որ յերկինսն է։* 5 *Եւ ի սկիզբն Տիտոսի Թղթոյն ասէ. «Զոր խոստացաւ զանսուտն Աստուած յառաջ, քան զժամանակսն յաւիտենից» (Տիտ. Ա. 2)։* 6 *Ի կատարածին ասէ. «Ուսցին եւ մերքն բարեաց գործոց վերակացու լինել ի պէտս կարեւորս» (Տիտ. Գ. 14)։* 7 *Եւ առ Փիլիմոն ի սկզբանն. «Լսեմ, ասէ, զքո հաւատսն եւ զսէրն, որ առ ամենայն սուրբսն» (Փիլիմ. 5)։ Եւ արդ այսու աւրինակաւ շարայարեն Թուղթքս։*

Ի. 1 *Իսկ վեցերորդ գլուխն, թէ էր վասն զնախագահութիւնս ընկալաւ Թուղթն Հռոմայեցւոց, ասելի է. Քանզի ոչ, որպէս ասեն, թէ յառաջ, քան զամենեսեան է Թուղթս այս։* 2 *Են այլ, որպէս ԲԺ. (12) մարգարէքն ոչ ըստ կարգի ժամանակացն եղեալ, այլ յոյժ հեռի միմեանց գրեցան, եւ յետինք ժամանակաւ զառաջին դասն ընկալան, որպէս Անկէաս եւ Զաքարիաս, որ յետոյ էին, քան զԴանիէլ եւ զԵզեկիէլ, սակայն յԲԺ.ից (12) թիւ կարգեցան։* 3 *[Ա]յսպէս եւ ասա։* 4 *Եւ զի ո՛չ է առաջին Թուղթն Հռո-*

մայեցւոց, ինքն իսկ յայտ առնէ, թէ այլք յառաջ են, քան զնա, որպէս ասէ. «Երթամք յԵրուսաղեմ պաշտել զսուրբս, քանզի հաճոյ թուեցաւ մակեդոնացւոցն եւ աքայեցւոցն հաղորդութիւն առնել ընդ աղքատսն, որ են յԵրուսաղէմ» (Հռոմ ԺԵ. 25)։ 5 *Այս յայտ առնէ, թէ Թեսաղոնիկեցւոցն եւ Կորնթացւոց Թուղթսն յառաջ են, քան զսա։* 6 *Եւ ի Կորնթացւոց Թղթին վկայէ զԹեսաղոնիսն յառաջ գոլ, քան զինքն յայնմիկ, զի ասէ. «Վասն ձեր պարծեալ եմ ի մէջ մակեդոնացւոցն» (Բ. Կրնթ. Թ. 2), որով երեւի առաջին լինել զԹեսաղոնիկեցւոցն, զոր գրեաց Աթենայ զառաջինն եւ զերկրորդն։* 7 *Եւ ապա գնացեալ յԱթենայ, եկն ի Փիլիպպէ եւ գրեաց զԿորնթացւոց զառաջինն եւ զերկրորդն։* 8 *Եւ եկն ի Կորնթոս եւ գրեաց զհռոմայեցւոցն։* 9 *Եւ այսպէս եկն ի Նիկուպալիս եւ գրեաց զՏիտոսին։* 10 *Եւ շրջեալ ընդ Մակեդոնիա եւ անցեալ ընդ Ասիա ի Լաւոդիկեայ մակեդոնացւոց, գրեաց զառաջինն թուղթն Տիմաւթեայ։* 11 *Եւ հասեալ ի Փռիւգիայ յԻտալիայէ, գրեաց զԵբրայեցւոցն։*

ԻԱ. 1 *Այսոքիկ գրեցան յառաջ, քան զարգելուլն ի Հռոմ ի Կապանս, եւ անտի գրեաց Զ. (6) Թուղթ զԳաղատացիս, զԵփեսացիս, ապա զՓիլիմոնին, զի սա յառաջ է, քան զԿողոսացին, զի անդ գրէ թէ Ոնեսիմաւ հանդերձ, զի նախ զՈնեսիմոս առ Փիլիմոն յղեաց, եւ իբրեւ եկն անտի, յետոյ յղեաց առ Կողոսացիսն զկնի Թղթոյն։* 2 *Եւ Կողոսացւոցն յառաջ է, քան զՓիլիպ[եցւոցն]։* 3 *Յորժամ քարոզեաց Եպափրաս ի Կողոսիա, զի եւ անտի իսկ էր, եւ հալածեցա՛ւ ի սուտ առաքելոցն եւ եկն առ Փիլիպեցիսն եւ անտի առեալ ընծայ, գնաց առ Պաւղոս ի Հռոմ, եւ նա փութով գրեաց զԹուղթն Կողոսացւոց եւ ապա յետոյ զՓիլիպեցւոցն, քանզի |95ա| զԵպափրայ թէ խաւթացաւ մերձ ի մահ եւ հուսկ յետոյ գրեաց զերկրորդ Թուղթն Տիմաւթեայ, որպէս եւ ասէ, թէ «Ես այսուհետեւ նուիրեալ եմ եւ ժամ» (Բ. Տմթ. Դ. 6)։*

ԻԲ. 1 *Արդ, թէ այս այսպէս է, ապա ընդէ՞ր Հռոմայեցւոց թուղթս առաջին եդաւ։* 2 *Ասեմք՝ վասն բազում պատճառաց։* 3 *Նախ՝ զի որ զաւրաւորագոյն էր բանիւք եւ իմաստիւք նախակարգեալ եղեւ, եւ գտանեմք զՀռ[ոմայեցիս] զաւրագոյն հանճարով, քան զայլսն։* 4 *Եւ երկրորդ, զի հանգոյն է Մատթէի Աւետար[անին], զի որպէս նա ի զաւակէ Դաւթի ասէ զՔրիստոս, նոյնպէս եւ սա։* 5 *Եւ երրորդ, զի զբնական աւրէնսն ճառէ։* 6 *Չորրորդ, զի առաջին անդ եղեւ հրէից եւ հեթանոսաց ընդ միմեանս, վասն նախագահութեան հաւատոյ։* 7 *Հինգերորդ, զի ի սմանէ գեղեցիկ կարգ առնուն թուղթքն։* 8 *Վեցերորդ, զի սորա կատարած բանի զամենայն Թղթոյն զսկիզբն եւ զկատարածն միաբան ցուցանէ, որպէս ասացաւ։* 9 *Եաւթներորդ, զի մեծ եւ անուանի է, քան զամենայն քաղաքս, որ յոլորտս երկրի։* 10 *Ութե-*

րորդ, զի անդ եղեւ հրաշալի սքանչելիք յընթեռնուլ զԹուղթն Պաւղոսի, զի անկեալ ՀԲ. (72) պատկերքն փշրեցան յանկարծակի: **11** *Իններորդ, զի Հռոմ էր մայր մեղաց, անտի եւ զփրկութեան սկիզբն դնէ:* **12** *Տասներորդ, զի գլուխն առաքելոցն՝ Պետրոս, զնա ունէր վիճակ եւ աթոռ քարոզութեանն:* **13** *Վասն պատուոյ եւ սիրոյ նորա, զսա առաջին եդին:* **14** *Տասնմեկերորդ, զի ամենայն քաղաքք, յորս գրեցան Թուղթքն, Պաւղոսի ընդ հռոմայեցւոցն իշխանութեամբ էր:* **15** *Վասն այնորիկ զսա՛ նախ եդին:* **16** *Տասներկուերորդ, զի անդ, քան յամենայն քաղաքս, բազում էին հաւատացեալքն:* **17** *Տասներեքերորդ, զի անդ վերափոխումն եղեւ յաստեացս մեծի առաքելոյն:* **18** *Տասնչորսերորդ, զի որպէս անդ պահեալ կայ ամենամաքուր մարմինն Պաւղոսի, անտի ի դէպ է միշտ սկսանել վարդապետութեան նորա:*

ԻԳ. **1** *Այսոքիկ են պատճառք նախադասելոյ Թղթոյն Հռոմայեցւոց:* **2** *Ժամ է այժմ ասել զեաւթներորդ գլուխն, թէ է՞ր վասն գրեաց զԹուղթս զայս. քանզի բազումք հաւատացին ի Քրիստոս ի հրէից եւ ի հեթանոսաց:* **3** *Եւ էր աղմուկ ի մէջ նոցա ո՛չ վասն նախանձու բարեպաշտութեան, այլ վասն նախագահութեան հակառակէին:* **4** *Կարծէին, որք ի հրէիցն էին՝ առաջին գոլ, զի ասէին ցհեթանոսքն մեր են Աբր[ահամ] եւ մարգարէքն, մանաւանդ ինքն Քրիստոս ըստ մարմնոյ*[1]*:*

[1] *Աւարտւում է այսպէս՝ առանց վերջաբան-աւարտի. 95ա էջի երկրորդ սկզնակի կէսից աւելին դատարկ՝ չգրուած է, ապա կայ՝ «95աբ Փայտ կենաց է ամենայն որ պատսպարին – [ի]մաստասէրք յորժամ ի խնդիր ինչ իրաց ելանեն...», յետոյ՝ 96ա. «Այլ է պատմութիւն բանիս, որ յայտնէ մեզ զեղեալսն»: Այս վերջինները երգնկացուն հետ կապ չունեն:*

Խ.

ՔԱՐՈԶ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՈՐ ԱՍԷ «ՅԱՂՕԹՍ ԿԱՑՑԵՆ ԱՌ» [ԼԱ. 6] ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հովհաննէս Պլուզ Երզնկացին, հետեւելով ամեն ինչ իր տեղին եւ ժամանակին կարեւոր սկզբունքին, միշտ հարազատ մնալով հայոց դավանաբանական եւ քրիստոսաբանական սկզբունքներին, ըստ իրավիճակի փոխում է իր գրելաոճը՝ այն հնարավորինս մատչելի դարձնելու համար տվյալ լսարանին: Այդ հանգամանքը հատկապես նկատելի է հասարակության լայն շերտերին ուղղված քարոզներում եւ խրատներում: Հեղինակը ոչ միայն գրում է իր ժամանակակիցներին առավել հասկանալի հայերենով, այլեւ աստվածաշնչային իրողությունները բացատրելիս շատ հաճախ դիմում է իրական կյանքից վերցրած օրինակների:

Խիստ կարեւորելով աղոթքի խորհուրդը՝ նա չորս անհրաժեշտ խնդիր է դնում հավատացյալի առջեւ. առաջին՝ պատշաճ ձեւով, հոգեկան, մարմնական մաքրությամբ դիմել Աստծո ողորմածությանը. երկրորդ՝ աղօթքի պատշաճ վայրը եկեղեցին է, քանզի թեպետ Աստծո իշխանությունը եւ զորությունն ամենուր է, սակայն նրա փառքի ինքնությունը իր եկեղեցու մեջ է: Աղոթքի ընդունելի լինելու հաջորդ պայմանը աղոթողի կողմից մարդկային բնությանը հատուկ սխալներից ապաշխարությամբ մաքրվելն ու մեղքերի ծանրությունից հրաժարվելն է: Վերջապես աղոթքի ընդունելիության խորին իմաստը աղօթքի ժամն է՝ օրվա երրորդ ժամը, երբ Տէրն իր անմեղ մահվամբ փրկեց մարդկությունը մահվան անեծքից:

Բնագիրը հրատարակվում է ըստ ՄՄ 7032 (Կ. 114բ-122ա) ձեռագրի:

Ա. 1 *Անմարմին եւ անհասակայ բնութիւն է Աստուած ի բնաւորական գոյացութեանց եւ անսահմանելի, անորակ եւ անզննին ի հասողական զգայութենէ, վասն անտեսական եւ անշաւշափելի գոլոյն, անքանակ*[1] *եւ անչափելի մեծութեամբ եւ անթուելի սքանչելի զաւրութեամբ, անուր եւ անտեղի ի պարագրական տեղւոյ պարունակութենէ, աներբ եւ անժամանակ յարեգակնային բերմանց եւ երկնային շրջագայութեանցն մասնաւորութենէ:*

Բ. 1 *Արդ, բանն Աստուած արարչակից եւ համագոյ Հաւր* |115ա| *եւ ամենասուրբ Հոգւոյն եւ ամենայն գիտական մասանց իմաստասիրականաց անքննին եւ անգիտելի, կամաւ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն էառ զբնաւորական գոյութիւն մարդոյ եւ անսահման էութեանն ստեղծակա-*

[1] *Ձ-ում՝ անքանակ*

նացս եղեւ սահմանելի անորակն զգայական երեւութից, եւ բնութեամբ անտեսականն եւ անքանակն անբաւելի բարձրութեամբ ընդ քանակութեամբ[1] *ի նուաստութիւն մարմնոյ միացեալ՝ չափաւորի ընդ թուով աւուրց ամսոց եւ ամաց մտանելով, ընդ երկրային տեղւոյ յարկի եւ ծածկութիւն տաղավարելով, առնել զգործս տեսանելի եւ կրել կիրս զարհուրելիս, մարդասէր գոլով՝ մարդկայնովս զաստուածայինսն հրաշագործէր։* **2** *Եւ ո՛չ միայն այս, այլեւ Արարչական Բանն, որ ո՛չ միշտ գործէ եւ ո՛չ հանապազ լռէ, այլ ըստ արարչութեանն յաւուրս վեց գործեաց եւ մշտնջենաւոր յաւիտենիս միշտ նախախնամէ, զնոյն եցոյց եւ ի նորում արարչութեանս։* **3** *Զի Արարիչն ամենայնի քաղցրութեամբ եւ ողորմութեամբն իւրով ամենայնիւ նման մեզ, մարդ եղեւ եւ հաւասար մեզ զմերս զամենայն առեալ, բաց ի մեղաց,* |115բ| *եւ միաւորեցաւ ընդ բնութիւնս մեր, վասն զի ետ մեզ զիւրում պատկերն եւ ըստ նմանութեան զանձն եւ զմիտս իւրովքն առաքինութեամբք եւ մեք ո՛չ պահեցաք։* **4** *Էառ ինքն զաղքատ եւ տկար բնութիւնս մեր, զի սրբեսցէ եւ անապական արասցէ եւ հաղորդ աստուածութեանն ցուցցէ դարձեալ վերստին։* **5** *Այլ պարտ էր, զի ոչ սկիզբն բնութեանս հաղորդէր վերագոյն աստուածային բնութեանն, այլեւ ամենայն մարդ, որ եւ կամեսցի, երկրորդ ծնունդ ծնցի՝ վերստին ծննդեամբ եւ նորոգ կերակրովն, որ եւ նման գոյր նոր ծննդեանն՝ սնանիցի։* **6** *Վասն այսորիկ, սակս նորոգութեան մերոյ խառնէ զաննիւթ եւ զանտեսական աստուածութիւնն ընդ նիւթական եւ տեսական գոյացութիւնն հացիս եւ բաժակիս, եւ տա՛ զինքն կերակուր անապական՝ ի ճաշակս որակաց քաղցրութեան համոյ եւ հոտոյ։* **7** *Եւ չափաւորի անքանակ բնութիւն Բանին ի ձեւ չափոյ տպաւորական հացին եւ բաժակի։* **8** *Եւ անտեղին յարկի եւ ծածկութիւն բարձրացեալ բազմի ի վերայ սրբոյ սեղանոյ, եւ անժամանակ եւ անսկզբնաբար ծնունդ Հաւր, ամենայն աւուր ի ժամ երրորդի պատարագեալ զենի միշտ զենումն անմահ եւ անծախելի, ի նոյն ժամու, յորում պատարագեցաւ* |116ա| *ի վերայ խաչին, պատարագեալ բաշխի ի վերայ սրբոյ սեղանոյս։* **9** *Զի որպէս ծնաք յԱդամայ զիւրն ծնունդ եւ նմանեալ նմա ժառանգեցաք զանէծս եւ զապականութիւն, այսպէս եւ ի նմանէ ծնանելով՝ նմանեսցուք նմա եւ ժառանգեսցուք զանապականութիւն, զաւրհնութիւն եւ զփառս։* **10** *Ըստ որում ասէ մարգարէս. «Վասն այսորիկ յաղաւթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի»* **(Սղմս. ԼԱ. 6)***, զոր առաջին տունք սաղմոսիս ունի զզաւրութիւն, վասն զի ամենիմաստ Արարիչն բնութեանս, որ ի մարմին եւ յարիւն միաւորեաց*

[1] *Զ-ում՝ անբանակն... բանակութեամբ*

զհոգի եւ զմիտս զիւրն ազգ՝ եւ ինքն ի նոսա գոլով բարերարութեամբ։
11 *Իսկ զկնի անցանացն եւ ի մահ մատնելոյն, զարիւն եւ զմարմին մեր միացոյց ընդ իւրում աստուածութեանն զսկիզբն զանկուածոյս մերոյ, որով եւ ծնաւ Տէրն ծննդեամբ մեր եւ ապա՝ զամենայն մարդիք միաւորեաց ընդ ինքն հաւատով եւ վերստին ծննդեամբ ետ նոցա զհացն եւ զբաժակն, յորոց էր իւրն մարմին, ուտել նոցա զիւրն մարմին եւ արիւն։*
12 *Եւ միաւորեցաւ ընդ մեզ մարմնով՝ ի մարմին, արեամբ՝ յարիւն, հոգւով ի հոգի, մտաւք՝ ի միտք, եւ եղեւ ի մեզ կատարեալ ի մի, ըստ այնմ, թէ «Որ ուտէ զմարմին եւ ըմպէ զարիւն Իմ, նա յԻս բնակէ եւ ես ի նմա» (Յվհ. Զ. 57)։* 13 |116բ| *Զոր եւ յբսկիզբն սաղմոսիս քննելով զգաւրութիւն զայս ցուցանէ միտս, ասելով՝ Երանի ում թողութիւն եղեւ մեղաց եւ ծածկեցան ամենայն յանցանք նոցա, մինչեւ յայս բան։* 14 *Վասն այսորիկ յաղաւթս կացցեն ամենայն սուրբք ի ժամ ընդունելի։*

Գ. 1 *Արդ, չորք են պատճառ եւ եղանակ ընտրութիւն աղաւթից՝ ի յարմարական ձեւոյ եւ ի դիմաց աղաւթականին եւ ի պատշաճաւոր տեղւոյն, յորում զաղաւթս մատուցանէ, եւ ի ներգործութենէ իրաց աղաւթականին անձին եւ ի խորհրդական ժամուն, յորում նուիրէ զբանական նուէրն Աստուծոյ։* 2 *Եւ է յարմարական ձեւ եւ դէմք աղաւթականին այսպէս։*

Դ. 1 *Զի, զոր աւրինակ, մահապարտք առաջի թագաւորաց սարսեալ եւ սասանեալ եւ գլխակոր դիմաւք կան եւ կապեալ լեզուով, եւ ի խաւսել թագաւորին ոչ յայլ ոք հային, այսպէս՝ առաւել քան զայս, եւ մե՛զ պարտ է կերպարանել ի ժամ աղաւթից՝ ահիւ եւ դողութեամբ, արտասաւք եւ պաղատանաւք կալ առաջի Աստուծոյ եւ խնդրել զթողութիւն ո՛չ մտաւք մոլորական, այլ ժտել ի ժամ աղաւթից՝ ըստ Տեառն բանին, թէ՝ «Հայցեցէք եւ գտջիք» եւ ըստ մարգարէին, թէ «Ժտեա՛ ի Տեառնէ եւ նա՛ տացէ քեզ զխնդութիւն» (Սղմս. ԺԶ. 4), որպէս կինն այրի յանիրաւ դատաւորէն,* |117ա| *եւ ժողովուրդն ի հովիտսն տրտմութեան, որով մաքսաւորն ի տաճարին էառ զքաւութիւն, եւ քանանացին զդստերն վտանգելոյ զբժշկութիւն։* 2 *Եւ բազումք հաւասար սոցա ըստ հաւատոյն հայցմանն առին զշնորհս եւ զպարգեւս ողորմութեանն Աստուծոյ։*

Ե. 1 *Իսկ երկրորդն պատճառ ընդունելութեան աղաւթից ի տեղի պատշաճաւոր, որ է եկեղեցի սուրբ, շինեալ արեամբն Քրիստոսի ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից։* 2 *Եւ, զոր աւրինակ, թագաւորացն է ատեան դատողական արքունական պաղատն, որ թէպէտ եւ զաւրութիւն տէրութեանն թագաւորին ի վերայ ամենայն աշխարհաց է, բայց ինքնութիւն փառացն ի տանն պարփակի, վասն որոյ հարկ է անդ զերկրպագութիւն մատուցանել։* 3 *Այսպէս եւ Աստուծոյ իշխանութիւնն եւ նախախ-*

նամական զաւրութիւնն ի վերայ ամենեցուն է, բայց ինքնութիւն փառացն յեկեղցւոջ իւրում է, զի վասն այսորիկ հաճեցաւ անտանելի բնութիւնն շինեալ ինքեամբ չափ բնակութիւն, որպէսզի հնարաւոր լիցի մեզ լալով եւ պաղատանաւք խնդրել եւ ի տան իւրում գտանել զնա։ 4 *Վասն որոյ, այն որ հաճեցաւ բնակիլ ի սմա, տա՛ մեզ պաղատելոյ եւ հայցման մարգարէիւն, ասելով. |117բ| «Զաւրս սորա աւրհնելով աւրհնեցիք, եւ զաղքատս սորա ի բարեաց գործոց լցու[ց]իք հոգեւոր եւ երկնաւոր հացիւ»։*

Զ. 1 *Իսկ երրորդ պատճառ ընդունելութեան աղաւթիցն է՛ ներգործութիւն անձին իրաց աղաւթականին, սուրբս լինել ի խաւսելն ընդ սրբոյն՝ ըստ մարգարէական ձայնիս. «Յաղաւթս կացցեն առ Քեզ ամենայն սուրբք ի ժամ...»։*

Է. 1 *Սուրբս կոչէ զայնոսիկ, որք աւազանին սրբութեամբն անսխալապէս կան յանմեղութեան եւ սուրբ են ի խղճէ մտաց՝ անգայթակղելի մնացեալ ի մեղացն գլորմանէ։* 2 *Իսկ երկրորդ սրբութիւն ասի այն, յորժամ յետ մարդկաւրէն սխալանացն եւ աղտեղելոյ զանապական պատմուճան հոգւոյն, վերստին սրբեալ մաքրի ի բով ապաշխարութեան՝ ուղիղ խաւսութեամբն արդարացեալ եւ ի մեղացն գարշութենէ սրբեալ։* 3 *Այլեւ սուրբ սրտիւ կալով յաղաւթս յանմաքուր խորհրդոց՝ սուրբ լինելով եւ աննենգ եւ յանկեղծաւոր սիրով լինել առ մարդիք եւ ո՛չ ծածկել խաբէութեամբ զդառնութիւն մեղաց ընդ քաղցրութեան որակաւ, իբրեւ զդեղս մահացու, որ եւ այսպիսի աղաւթք ընդունելի լիցին Աստուծոյ։* 4 *Եւ յոր գիտէ, թէ ինքն ոչ անլուր եղեալ առ ինքն պաղատողի, յայնժամ հաւատասցէ, |118ա| թէ տեսողն ծածկելոց սրտին ընդունի զաղաւթս մատուցանողին, եւ յորժամ յանոխակալ սրտէ իցէ եւ հաշտեալք իցեն ի խռովութենէ, ըստ Տեառն բանի, թէ՝ «Երթ նախ հաշտեա՛ ընդ եղբոր եւ ապա՛ մատուսջիր զպատարագն» (Մտթ. Ե. 24)։* 5 *Ով մեծի մարդասիրութեանն զիւր պաշտաւնն խափանել տայ վասն սիրոյ եղբաւրն, զի եւ այն պատարագ մեծ է առաջի Աստուծոյ եւ պատճառ ընդունելութեան աղաւթիցն։*

Ը. 1 *Իսկ չորրորդ է՛ խորհրդական ժամն ընդունելութեան աղաւթիցն, որ է՛ ժամ սուրբ պատարագին երրորդ ժամ աւուրն, յորում ժամու եւ Տէրն մեր ի խաչին պատարագեցաւ եւ իւրով անմեղ մահուամբն ի դատապարտութենէ մեղացն մահու եւ անիծիցն ազատեաց զմեզ, եւ արեամբն անապական ի ծառայութենէ բանսարկուին գնեաց զմեզ եւ արդարութեամբն իւրով զգիր պարտաւորութեան մերոյ պատառեաց եւ անմահական կեանս մեզ պարգեւեաց, եւ զյիշատակ կենարար մահուանն, յառաջ քան զժամ մահուն աւանդեաց միշտ զայն առնել յիշատակ նմա եւ*

կատարել զխորհուրդ փրկութեան մերոյ եւ մատուցանել զյիշատակ մահու Միածնին նուէր հաշտութեան Հաւր |118բ| գթածի եւ մարդասիրի։ **2** *Յաղագս որոյ ասէ մարգարէն. «Ժամ ընդունելի»։* **3** *Վասն զի ընդունելի է ժամ սուրբ պատարագին, որ եւ ասի յիմաստնոցն, թէ Գ. ժամանակ ասի Քրիստոսի յաթոռ դատողական նստել եւ արդարադատ կշռովք առնել իրաւունս դատաստանի։* **4** *Եւ է՛ առաջին աթոռ խաչն Քրիստոսի, յորում բարձրացաւ։* **5** *Ըստ այնմ՝ «Նստար յաթոռ դատաւոր արդարութեան»։* **6** *Եւ ըստ որում ինքն Տէրն ասէր. «Ի դատաստան եկի աշխարհս այս»։* **7** *Իսկ երկրորդ աթոռ դատողական ասի սեղանն, յորում բարձրացեալ բազմի եւ ամենայն երկնային զաւրքն իջեալ՝ սպասաւորեն։* **8** *Եւ որպէս ասէ Սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր, թէ՝ «Ամենայն աւուր բարեաց գործքն մեր եւ անաւրէնութիւնք մեղացն կշռին յարդար կշիռ իրաւանցն Աստուծոյ, եւ ի հակել ծանրութեան մեղացն դնեն հրեշտակքն ի կողմն արդարութեան զխորհուրդ պատարագի ամենայն աւուր, որ միշտ մատուցանի։* **9** *Եւ այսպէս առաւելեալ կողմն արդարութեանն Քրիստոսի պատարագին աւգնելով՝ անտես առնէ երկնաւոր Հայրն զմեղաց մերոց համարն, որպէս ի ժամ խաչին եթող զպարտս մեղաց ամենայն աշխարհի։* **10** *Իսկ զչորրորդ դատաստանի |119ա| աթոռ ասի դատողական ահեղ ատենին եւ մեծ աւուրն, որ է միւս անգամ գալուստն, զոր եւ առնէ անաչառ եւ անկաշառ դատողութեամբ։* **11** *Իսկ այժմ, որքան եմք աշխարհի եւ տամք ամենայն աւուր նուէր հաշտութեան Հաւր, զՈրդի ի շնորհաց եւ յողորմութեան աթոռ նստի, զոր եւ առաքեալն ասէ. «Ահա ժամանակ ընդունելի, ահա աւր փրկութեան»* **(Կրնթ. Բ., Զ, 2)**։

Թ. **1** *Զսոյն իսկ եւ մարգարէս ասէ. «Ժամ աղաւթից ընդունելի», յորում ժամու աղաչեն հրեշտակք եւ հրեշտակապետք վասն մեր, ունելով զիւրեանց աւգնական զխորհուրդ պատարագին, եւ նովաւ շարժեն ի գութ զԱրարիչն բնութեանս։* **2** *Զոր աւրինակ մարդիք ոստս ձիթենեաց հատանելով՝ շարժեն զթագաւորս տնկովն յողորմութիւն եւ զմարդասիրութիւն նոցա յիշեցուցանեն, նոյնպէս եւ հրեշտակք յայնժամ, փոխանակ ոստոցն ձիթենեաց զնոյն ինքն զտէրունական մարմին առաջի դնեն եւ աղաչեն յաղագս մարդկային բնութեանս զխորհուրդ տնաւրէնութեան, որ վասն նոցա յիշեցուցանեն եւ ի գութ քաղցրութեան ածեն զնա, որ վասն մեր զայն ամենայն կիրս կրեաց փրկագործ յանձին եւ զմեզ ի մեղաց ազատելով։* **3** *Վասն այն |119բ| ժամ ընդունելին ասեմք զժամ պատարագին, զի որ ի խաչին պատարագեցաւ իբր ի սեղանոյ եւ այժմ զնոյն նշան խաչին ըստ այնմ տեղիս տեսանելով, զի թեւոցն տարածմամբ անբարբառ բարեխաւսէ եւ զչարչարանս Միածնին Հաւր յիշեցուցանէ։* **4** *Եւ Հայր, հայե-*

լով ի Մարմին Բանին իւրոյ, ի բացումն տիգին եւ ի խոցումն գեղարդեանն, որ ո՛չ է կցեալ, այլ համագաղափար մեր սպիացեալ մնա՛ ի յարուցելումն, որպէս եւ ասէ ոմն ի սրբոցն. «Եւ զինչ այլ այս, եթե ոչ զմշտնջենաւորութիւնն եւ զյարակայութիւնն այս սուրբ զենմանս հաւատարմացուսցէ, որպէս յայնժամ ի խաչին տեսեալ հաշտեցաւ ընդ մեզ մահուամբն Որդւոյ իւրոյ»։ 5 *Զնոյն զենումն այժմ ի վերայ սրբոյ սեղանոյս տեսանելով, անտես առնէ զսղխալանս մեր աւրըստաւրէ։* 6 *Եւ վասն այնորիկ տեղին սպիացեալ մնայ ի յարուցելումն մարմին մինչ ի վաղճան աշխարհի, զի որքան ի մարմնի եմք եւ մեղանչեմք կամայ եւ յակամայ, վասն այսմ մեծի խորհրդոյս զթողութիւն մեղաց գտանեմք։* 7 *Զի որ այժմ ի վերայ սրբոյ սեղանոյս տեսանի* |120ա|*, զնոյն զեկուցանէ խորհուրդ։* 8 *Վասն այնորիկ եւ խորհուրդ կոչեմք, զոր յայսմ սոսկալի ժամուս կատարի, զի այլ ինչ տեսանի եւ այլ իմանի։* 9 *Զի որ երեւի հաց եւ գինի, եւ որ իմանի մարմին եւ արիւն որդւոյն Աստուծոյ, դարձեալ խորհուրդ կոչի, զի յայտնի եւ բացափայլագոյն է սրբոցն, եւ ծածուկ եւ թագնաբար եւ անյայտ պղծոցն եւ անարժանիցն։*

Ժ. 1 *Ըստ այսմ «Մի՛ տայք զսրբութիւնդ շանց»* (**Մտթ. Ժ.** 6)*։* 2 *Եւ զոր աւրինակ, թագաւոր ընդ իշխանակիցս իւր ի խորհուրդ մտանէ, վասն խաղաղութեան եւ շինութեան աշխարհի եւ յաղթութեան թշնամւոյն, եւ հարկէ իշխանացն առ տէրն իւրեանց համարձակապէս խաւսել՝ վասն բարութեան աշխարհի, այսպէս եւ քահանայքն խորհրդակից են Աստուծոյ. յաւուր աւուր ի խորհուրդ մտանեն, զՄիածնի Որդւոյ զչարչարանսն յուղ ածեն եւ հաշտութիւն խնդրեն յերկնաւոր Հաւրէն։* 3 *Վասն որոյ ասէ. «Յաղաւթս կացցեն ամենայն սուրբք ի ժամ ընդունելութեան»։* 4 *Եւ ընդունելի ժամ է, ժամ սուրբ պատարագին, զի զմարմին եւ զարիւն որդւոյն Աստուծոյ ունիմք նուէր եւ պատարագ հաշտութեան։* 5 *Զոր աւրինակ ծառայք Տեառն մատուցանեն պատարագ ըստ կարեաց, եւ ակն ունին առնուլ ի թագաւորէն ողորմութիւն։* 6 |120բ| *Եւ զի Քրիստոս ի խաչին զմարմին եւ զարիւնն իւր պատարագեաց Հաւր եւ զանցանս մեր եբարձ, վասն որոյ ի մեղանչելն մեր ի ժամանակի կենցաղոյս զաւանդեալն ի Քրիստոսէ զմահուն իւրոյ զյիշատակ Աստուծոյ Հաւր պատարագ մատուցանեմք, վասն թողութեան անցանաց մերոց։* 7 *Եւ յայսմ պատարագի խառնելով զաղերս պաղատանաց աղաւթիցս, հաւատամք ընդունելի լինել, վասն որոյ ասէ. «Յաղաւթս կացցեն սուրբք ի ժամ ընդունելութեան»։* 8 *Զի յայսմ ժամու, յորում բաշխի մարմին եւ արիւն Որդւոյն Աստուծոյ, ի միասին եկեալ զանազան բազմութեանս, սովաւ՝ ի մի Անձնաւորութիւնն, վասն որոյ եւ հաղորդութիւն անուանեմք, զի ի մարմնական վայրաքարշութեանց*

այլայլեալքն սովաւ գան ի միատեսակ աստուածանմանութիւն։ 9 *Նոյնպէս եւ անդամքս Քրիստոսի խտրոցեալ մեղաւք միանամք ապաշխարութեամբ, եւ իջանէ կենդանութիւն ի գլխոյն մերէ Քրիստոսէ յանդամքս, եւ լինիմք մի՛ հոգի ի բաժանեալ մարմինս եւ խստութեամբ մաքրեալք եւ հաղորդեալքս միոյ Հոգւոյ եւ ի միոյ մարմնոյ եւ յարենէ Տեառն ճաշակելով։* 10 *Եւ յաղագս այսպիսի յուսոյ յաղաւթս կացցեն առ ամենայն սուրբ ի ժամ ընդունելի։*

ԺԱ. 1 *Եւ արդ, զի ընդունելի է Աստուծոյ այս ժամ աղաւթից,* |121ա| *վասն զի բացեալ են դրունք ամենառատ ողորմութեան նորա, զի հեղք գտցուք ի ժամուս այսմիկ, զրկեսցուք զանձինս յայսքան մեծութենէ պարգեւիս, այլ զամենայն հոգս մարմնական եւ զամենայն յոյս շահավաճառութեան թողցուք, այսմ անկապուտ գանձոյ զանձինս հաղորդս արասցուք։* 2 *Եւ, զոր աւրինակ, հաւաքումն որդւոց զմայր որդեսէր զուարճացուցանէ, այսպէս եւ միոյ աւազանի ծնունդք միոյ մաւր եկեղեցւո՛յ ժողովմամբն իւրոց ուրախ առնեն զմայրս մեր հոգեւոր։* 3 *Վասն որոյ գլուխն մարմնովն եկեսցէ, այսինքն՝ այրն՝ կնաւն եւ մանկամբն ծնիցէ[լ]ովք։* 4 *Զի եթէ ծառ վայելուչ է տեսանել, որ յերկրէ ունիցի շառավիղս ի վեր բուսեալ, եւ բազմախիտ տերեւովք զուարճացեալ, որչափ եւս առաւել զմարդ մանկամբք, քան զամենայն ձիթենի քաջազուարճ եւ գեղեցիկ տեսանել։*

ԺԲ. 1 *Յայսմ ժամու, որոմ յաղթեաց Տէրն զթշնամին կենաց մերոց, մարտիցուք եւ մեք՝ Քրիստոսի զինուորքս եւ յաղթեսցուք սատանայի։* 5 *Եւ, զոր աւրինակ, աղեղնաւոր ոչեղ կայ ընդդէմ նպատակին նկատել զնետաձգութիւն, նոյնպէս եւ դու, որ հանդերձեալ ես նետաձիգ լինել ի գլուխ բանսարկուին, եւ զխորհուրդդ ուղղեա՛։* 6 |121բ|*Ըստ որում, ի ժամուս այսմիկ խրատիմք ի Սարկաւագէն, որ ասէ. «Ահիւ կացցուք երկիւղ կա բարիոք կաց»։*

ԺԳ. 1 *Յայսմ ժամու փարատեցաւ սուգ մեղաց եւ անիծիցն Ադամայ. փարատեսցուք յոգւոց մերոց զխաւար մեղաց եւ զտրտմութիւն անցանաց։* 2 *Զի, զոր աւրինակ, ամպոցն խստութիւն սկիզբն մթագոյն առնէ զաւդն, իսկ թափել անձրեւացն խաղաղական եւ պայծառ[ա]գործէ զտեսիլն, նոյնպէս եւ տրտմութիւնքն, որքան ի ներքս ամբոխին եւ խաւարեցուցանեն զմիտսն, բայց յորժամ աղաւթիւք եւ արտասուք թափէ, յոգին ամբարէ զպայծառութիւնն։* 3 *Մի՛ ոք ի ժամուս այսմիկ անմասն մնասցէ յաստուածային պարգեւացն եւ կամ դատարկ յընծայաբեր լինելոյ։* 4 *Կամ յիշխանական ճոխութենէ իցես, ընդ մոգուցն փարթամասցիս, զի զբանն Աստուած բազմեալ ի մսուր տեսանիցես։* 5 *Անդ՝ ի յայրին եւ*

աստ՝ ի խորանի Աստուծոյ։ 6 *Անդ՝ յանբանից մսուր եւ աստ՝ ի սրբութեան սեղանոյս։* 7 *Անդ՝ խանձարրաւք եւ աստ սուրբ կտաւաւք։* 8 *Նոքա ոսկի պայծառ, իբրեւ թագաւորի, դու զանբիծ հաւատս ուղղափառութեան։* 9 *Նոքա կնդրուկ, որպէս Աստուծոյ, դու* |122ա| *զվարս անուշահոտս, զոր սիրէ Աստուած։* 10 *Նոքա զմուռ որպէս մեռելոյ, դու զախտս մեռուցանել վասն մահուն Քրիստոսի։* 11 *Նոքա զաստղն պայծառափայլ, դու զարդարութեան արեգակն զՔրիստոս։*

ԺԴ. 1 *Թագաւոր էր եւ Հերովդէս, այլ վասն նենգութեան բարուցն զրկեալ եղեւ յայսմ բարի պարգեւացս։* 2 *Եթէ կարաւտի ոք գերեզմանին Քրիստոսի, կամ ահեղ աւուրն, յորում բեւեռեալ կայր Տէրն ի խաչին, զհաւատոյ աչսն բացեալ զնոյն խորհուրդ տեսանէ ի վերայ սրբոյ սեղանոյս։* 3 *Մշտնջենաւոր եւ անմահ զենմանն տեղի եւ աստուածային մարմնոյն խորհրդական սպասուք ծածկողին ըստ գերեզմանին գովելոյ, յորում միշտ փառաւորեմք զՓրկիչն մեր Քրիստոս ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ։*

ԽԱ.

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Երզնկացին եթե անգամ ուրիշ որեւէ գրություն չունենար էլ, ապա միայն սրանով կարելի էր պնդել, որ նա եղել է հայ եկեղեցու հարազատ ավանդների ամենաջերմ եւ ամենակարող պաշտպաններից մեկը: Ամենայն հավանականությամբ քաղաքական այս աշխատությունը Երզնկացին իրականացրել է կյանքի վերջին շրջանում, որովհետեւ ըստ գրածի նա «յոլով ժամանակ եւ աշխատութեամբ» է ստացել այս գրքերը, որոնք գտել է «յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի»: Այստեղ Երզնկացին պարզ ասում է, որ ինքը չի արտագրել, այլ տվել է ուրիշներին արտագրելու, իսկ ինքը կատարել է հիմնականում ինչ-որ լրացումներ, խմբագրել, ավելացրել կամ պակասեցրել է որոշ հատվածներ: Եթե Երզնկացին այս աշխատանքը կատարելիս լիներ երտասարդ հասակում, անհասկանալի պիտի դառնար, թե ինչու ինքը՝ գրիչ Երզնկացին, որը «բազում աշխատութեամբ» ձեռք է բերել շատ գրքեր եւ որոնք ինքն այնքան բարձր է գնահատել, պետք է ուրիշին տար արտագրելու: Նույն բանը պնդելու իրավունք են տալիս նաեւ հետեւյալ խոսքերը. «եւ թողում զս[ը]տ որում յետ իմ ժառանգէք»: Հազիվ գործը ավարտած՝ նա խոսում է ժառանգելու մասին, որը տարին առած մարդուն է հատուկ:

Այն, որ Երզնկացին չի բավարարվել միայն երեք գիրք ի մի բերելով (պայմանականորեն ենք գիրք անվանում), այլ հաճախ համառոտել կամ ավելացրել է ուրիշ հատվածներ, պարզ է դառնում առաջին գրքի, այսինքն՝ Անանիայի «Հակաճառության» մեջ տեղ գտած հետեւյալ հատվածից. «Թէ վասն էր երիցս սրբասացութիւնն վերաբերի հասարակ աստուածութանն եւ մի երրէակ խաչեցարն կցուրդ ի վերա յատուկ յանուն Միածնի Որդւոյն Աստուծոյ եւ թէ յորում ժամանակի եւ յորոց ոմանց նախ կարգեցաւ: Բայց նախ զյառաջագրեալ զխորհուրդ խաչին տեսչիր սկզբնաւորեալ ի կենաց տնկոյն, որ ի դրախտին, զի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր ի միտ երեքարբեան տերութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի զոր յայլում տեղւոջ քաղել եմ եւ եղեալ եւ ապա զայս, զոր յԱնանիա վարդապետին գրոցն համառօտ ժողովեցի» (ձեռ. 567, 98ա):

Այս ուշագրավ հատվածից պարզվում է երկու բան. նախ, որ փրկագործ խաչելության խորհրդի վերաբերյալ հատվածը ներմուծված է Երզնկացու կողմից եւ ապա շարունակությունը ոչ թե սոսկ արտագրություն է, այլ՝ Անանիայի մի շարք գործերի հատվածներից քաղվածքներ:

Հրատարակվում է ըստ ՄՄ 6453 (3, 2աբ), 567 (Խ, 5աբ) ձեռագրի, որ ԺԷ. դարում գրված ժողովածու է:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՅՍ

Ա. 1 *Նախ քան զմտանել քո ի բանս*[1] *ընթերցման գրոցս*[2] *պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական եւ բարելի գանձուց, նուաստ եւ տկար ոգի Յոհանէս Երզնկայեցի*[3] *սպասաւոր բանի եւ իմաստից գրոց սրբոց ծարաւի, յոլով ժամանակաւք եւ աշխատութեամբ բազմաւ ստացայ զսա*[4] *զերեք*[5] *գիրքս, որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեան։* 2 *Եւ թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք, բարեբախտութիւն մեծ եւ փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեանն*[6] *գիտողի*[7]*, զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի եւ ստացայ զերիս գիրսն, եւ ի նոցունց*[8] *դարձեալ ետու գրել, եւ առ միմեանս եդի եւ արարի մի գիրք. առաջին՝ զԱնանիային զՀայոց վարդապետի, երկրորդ՝ զԽոսրովկայ Թարգմանչի եւ զհզաւր գիտնականի, երրորդ՝ զՍարկաւագ վարդապետին եւ զմեծ իմաստասիրի զՀաղբատեցոյ*[9]*։* 3 *Եւ թողում զսա*[10] *որում յետ իմ ժառանգէք՝ յոգնազան բարեաց ճոխութիւն, յամէնառատ*[11] *գանձուց փարթամութիւն աստուածաբանական հանճարով, յերկինս թուացելոց սա թեւք զաւրաւոր եւ վերացուցիչ, յաշխարհիս ծովիս նաւելոց ղեկք՝ վարիչք եւ ուղղիչք ի մարտս խմբից հերձուածողականացն*[12] *զէնք սրեալք յաջողակ ձեռաց քաջամարտից։* 4 *Ի խաղաղական ժամու ժողովոց սեղանք երկնաւորք եւ քաղցրաճաշակ լցեալ կերակրովք, վաճառականաց հանճարոյ եւ հմտագունից մարգարիտ անգիւտ եւ աշխարհաւ ամենայնիւ գնեալ։* 5 *Աղքատաց անձանց եւ նիւթականաց անձեռնհասիցն*[13] *սա ճոխութիւն երկնաւոր եւ անհամեմատելի։* 6 *Իմաստութեամբ լուսաւոր անձանց արփի լուսաբուխ եւ բազմանշոյլ, անգիտութեան մթով պատելոց ճրագ լուսատու եւ խաւարափարատ։* 7 *Սա ձեզ յոլով բարեաց բղխմունս աղբերաց եւ մեզ նիւթ յիշատակի եւ բարբառ եւ ձայն առ ձեզ մաղթանաց։*

8 *Զի որք աւգտիք եւ զուարճանայք՝ զողորմելի Յոհանէս*[14] *յիշեսջիք եւ մեղացելոյս անձին եւ վարդապետին իմոյ եւ ծնաւղաց ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսջիք*[15]*։*

---

1 *Խ գրանս] բանս*
2 *Խ գրոյս*
3 *Յ յովհաննէս եզնկա եպիսկոպոս*
4 *Խ > զսա*
5 *Խ զերեգ*
6 *Խ քացրութեանն*
7 *Խ գիտօղի*
8 *Խ նոցանց*
9 *Յ հախպատեցւոյ*
10 *Խ զստ] զսա*
11 *Յ ամէնառատ*
12 *Խ հերձուածողականաց*
13 *Խ անձեռնհասից*
14 *Յ յովհաննէս*
15 *Խ հայցեսջիք + (յիշ. գրչի)՝ «եւ ինձ՝ մեղուցեալ գրչիս մովսէս քահանայի»։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 5
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅԻ 15
ԲՆԱԳՐԵՐ 31

Ա. ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԻ ՃԱՌԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ 33

Ա. Ի ՃԽ. ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ ԱՍԷ «ՏԷՐ, ԿԱՐԴԱՅԻ ԱՌ ՔԵԶ»՝ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅԻՈՅ ԱՍԱՅԵԱԼ ՅԱՏԵԱՆՆ ԴՐԱԶԱՐԿՈՅՆ, Ի ՀՌՉԱԿԱՒՈՐ ԵՒ Ի ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻՆ, ԳՆԱԼՈՎ ԱՆՏԻ 34
Բ. ՅԱՂԱԳՍ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏԱՒՆԻՆ Ի ՁԸ. ՍԱՂՄՈՍՆ, Ի ԲԱՆՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ՈՐ ԱՍԷ. «ՔՈ ԵՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ ՔՈ Է ԵՐԿԻՐ, ՁԱՇԽԱՐՀ ԼՐԻՒ» 54
Գ. Ի ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԲԱՆՆ, ՁՈՐ ԳՈՀԱՅՈՂԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՐԳԵԱՅ ԱՄԵՆԱՍԲՈՒՀԻ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ. ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՆՀԱՄԵՄԱՏ ՊԱՐԳԵՒԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐ |31գ| ԵՒ ՄԻԱԾՆԻ ԲԱՆԻՆ ԻՒՐՈՅ, ՁՈՐ ԵՒ ԱՍԷ. «ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ԱՆՁՆ ԻՄ ՁՏԷՐ» (ՂԿ. Ա. 46), ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՁՆԿԱ[ՅԻՈՅ] ԱՇԽԱՏԵԱԼ Ի ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՅՍ. 73
Դ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԱՐԿԵԱԼ ԲԱՆ ԻՆՁ ՅԱՐՄԱՐԱԿԱՆ Ի ԾԹ. ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ ԱՍԷ. «ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐԺԵՑԵՐ ՁՄԵՁ ԵՒ ԱՒԵՐԵՑԵՐ» (ՍՂՄՍ. ԾԹ. 3) ՆՈՐԱԳԻՒՏ ՇԱՒՂՕՔ ԵՐԵՒԵՑՈՒՑԵԱԼ ՁԶՕՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԻՍ ԵՒ ՅՈՂՈՎ ԺՈՂՈՎՈՒՄՆ ԲԱՆԻՑ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԽԱՁԻՆ Ի ՎԱՐԺՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԵՂԲԱՐՑ ԳԵՂԵՑԻԿ 87
Ե. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ, Ի ԺԱՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԱՍԱՅԵԱԼ, ԵՒ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՈՐ ԱՍԷ. «ՄԱՏԻ՛Ք ԱՌ ՏԷՐ ԵՒ ԱՌ[ԷՔ ՁԼՈՅՍ]» (ՍՂՄՍ. ԼԳ. 6) 107
Զ. ՆՈՐԻՆ ՆԱԽԵՐԳԱՆ ՅԱՂԱԳՍ ՊԱՏՈՒԵԼՈՅ ԶԲԱՆՆ ԵՒ ԿԱՄ ԱՆՊԱՏՈՒԵԼՈՅ 115
Է. ՆՈՐԻՆ ԱՅԼ ՆԱԽԵՐԳԱՆ 120
Ը. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՍԱՅԵԱԼ Ի ԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ, ՅԱՏԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ 122
Թ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՅԵԱԼ Ի ԲԱՆՆ ԱՌԱՔԵԼՈՅ, ՈՐ ԱՍԷ. «ԱՄԵՆԱՅՆ ԱՆՁՆ, ՈՐ ԸՆԴ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ Է, Ի ՀՆԱՁԱՆԴՈՒԹԻՒՆ ԿԱՅՑԷ» (ՀՌՄ. ԺԳ. Ա.), ՅԱՒՈՒՐՆ ՅՈՐՈՒՄ ԱՒՐՀՆԵՑԱՆ ՁԻԱՒՈՐՔ ԱՐՔԱՅՈՐԴԻՔՆ ՄԵՐ ՀԵԹՈՒՄ ԵՒ ԹՈՐՈՍ ԵՒ ԱՅԼ ՄԱՆԳՈՒՆՔ ԻՇԽԱՆԱՅ, ԵՒ ՈՐՔ ՅԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՒՈՐԱՅՆ 147
Ժ. ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԱՅԵՑ[Ի]ՈՅ, Ի ԲԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԴԱՒԹԻ. «ՍՔԱՆՉԵԼԻ ԵՂԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՔՈ ՅԻՍ» (ՍԱՂՄ. ՃԼԸ. 6). ՅԱՆԱՒԱՐՁԱ ԽՕՍԵՑԵԱԼ՝ ԱՌ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ 167
ԺԱ.ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ Ի ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԻՆ, Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԽԱՁԵԼՈՒԹԵԱՆՆ 207
ԺԲ. ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆՆԷՍ] ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ ՅՈՐԴՈՐԱԿ, ԱՍԱՅՈՒԱԾ Ի ԵԿԵՂԵՑԻՈՅ, Ի ԽՆԴՐՈՅ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՒՌԻԿՈՍՅԻՈՅ 230
ԺԳ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆՆ՝ ՆՈՒԱՍՏ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ ՇԱՐԱԴՐԵԱԼ ՅԻՄԱՍՏՆՈՅՆ ԲԱՆԻՅ, Ի ԽՆԴՐՈՅ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԵՐԿԵՂԱՁԱՐԴ ՊԱՏԱՆԻՈՅՆ ՊԱՐՈՆ ՎԱԽԹԱՆԿԱՅ 233

Ա. ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՆԻ, ԹԷ ՔԱՆԻ՞ ԵՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ ՈՐՊԷՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ ՅԱՆԳՈՅԻՑ ԵՂԵՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ 235
Բ. ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՆԻՑՆ ԵՒ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ԹԷ ՈՐՊԷՆ Է 236
Գ. ՅԱՂ[ԱԳՍ] ԵՐԿՐԻ, ԹԷ ՈՐՊԷՆ ՇՈՒՐՋ ԳԱԼՈՎՆ ԵՐԿՆԻ՝ ԵՐԿԻՐՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՅ ԵՒ ԵՐԿԻՆՔՆ ՄԻՇՏ ՇԱՐԺԻ 237
Դ. ՎԱՍՆ ԾՈՎՈՒ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՋՈՒՐՑ 238
Ե. ԵՒ ԹԷ ՅԻՆՉ ՊԷՏՔ ԵՆ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ՋՈՒՐՔՍ, ՋՈՐ ԱՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ 239
Զ. ՋՈՒՐ ԾՈՎՈՒՆ ՎԱՍՆ ԷՐ ԱՂԻ Է, ԿԱՄ ՋԻՆՉ Է ՊԱՏՃԱՌՆ, ՈՐ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ԳԵՏՔՍ Ի ԾՈՎՆ ԳՆԱՆ ԵՒ ԾՈՎՆ Ո՛Չ ԼԻՆԻ ԼՑԵԱԼ ԵՒ ՅԻՒՐ ՉԱՓԷՆ Ո՛Չ ԵԼԱՆԷ 240
Է. ՎԱՍՆ ՕԴԵՂԷՆ ԵՐԿՆԻՑ, ՅՈՐՈՒՄ ԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՔԴ 240
Ը. ԹԷ ՈՐՊԷՆ ՇԱՐԺԻ ԵՒ ՇՈՒՐՋ ԳԱՅ ԳՈՒՆԴ ԵՐԿՆԻՑՆ, ԵՒ ՈՐՊԷՆ ԳՆԱ. ԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՍՏԵՂՔ 242
Թ. ՈՐՊԻՍԻ՞ ՅԵՂԱՆԱԿԱՒ ԳԻՏԱՍՑՈՒՔ ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԱՅԼ ԼՈՒՍԱՒՈՐՔԴ ԸՆԴ ԱՐԵՒԵԼՍ ԵՐԹԱՆ 243
Ժ. ՅԱՂԱԳՍ ՋՈՐՍ ԵՂԱՆԱԿԱՅ ՏԱՐՈՅՆ 244
ԺԱ. ՎԱՍՆ ԵԱՒԹ ԳԱՒՏԵԱՅՆ, ՈՐ ԱՍԵՆ ԵԱՒԹ ՊԱՐՈՒՆԱԿ ԵՒ ԿՈՉԻ ԵԱՒԹ ԵՐԿԻՆՔ 245
ԺԲ. ՅԱՂԱԳՍ ԱՒԴՈՅՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀՈՂՄ 246
ԺԳ. ԹԷ ՈՒՍՏԻ ԼԻՆԻ ԱՅՍ ՅԱՒԴՆ ԵՒ ՈՐՊԷՍ 247
ԺԴ. ՋԻՆՉ Է ԲԱԼՆ 247
ԺԵ.ՋԻՆՉ Է ՈՐՈՏՆ ԵՒ ԿԱՅԾԱԿՆ 247
ԺԶ.ՋՄԵՌՆ ՈՐՈՏ Է՞Ր ՈՉ ԼԻՆԻ 247
ԺԷ. ՅԻՆՉ ՊԷՏՔ Է ՈՐՈՏՆ 248
ԺԸ.ՎԱՍՆ ՁԻՒՆԻ ԵՒ ԱՆՁՐԵՒԻ 248
ԺԹ. ՎԱՍՆ ԿԱՐԿՏԻ 249
Ի. ՈՒՍՏԻ՞ ԻՑԷ ՅԱՒՂ ԵՒ ԵՂԵԱՄՆ 249
ԻԱ.ՋԻՆՉ Է ԱՂԵՂՆ 249
ԻԲ. ԹԷ ՋԻՆՉ Է ՀՈՒՐՆ, ՈՐ Ի ՅԵՐԿՆԻՑ ԱՆԿԱՆԻ ԵՒ ՔԱՆԻ՞ ԱՋԳ ԵՆ 250
ԻԳ.ՋԻՆՉ Է ԲԱԿ ԼՈՒՍՆԻՆ 251
ԻԴ.ՅԱՂԱԳՍ ԳԱՐՆԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԵՒ Ի ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՍՆ 251

ԺԴ. ՅՈՀԱՆԻՍԻ ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ Ի ԺԷ. ՍԱՂՄՈՍՆ. «ՍԻՐԵՑԻՑ ՁՔԵՁ ՏԷՐ». Ի ԲԱՆԻՑ ԺՈՂՈՎԵԱԼ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ 253
ԺԵ.ՆՈՐԻՆ Ի ԼԴ. ՍԱՂՄՈՍՆ, «ԴԱՏԵ՛Ա, ՏԷՐ, ՁԱՅՆՈՍԻԿ, ՈՅՔ ԴԱՏԻՆ ՁԻՍ». Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՁՕՐՈՒԹԵՆԷ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ 271
ԺԶ.ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՁՆԿԱՅՈՅ Ի ԾԲ. (52) ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ Ի ԳԼՈՒԽ ԿԱՆՈՆԻՆ «ՄԻ ՆԱԽԱՆՁԻՐ... ԵՒ ՎԱՍՆ ՁՕՐՈՒԹԵԱՆ, ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԱՆՁԳԱՄ ՄԱՍԻՆՆ» 287
ԺԷ. ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆԷՍ] ԵՁՆԿԱՅԵՑԻՈՅ Ի Հ.ԵՐԲՈՐԴ (70) ՍԱՂՄՈՍՆ, ՈՐ Ի ԳԼՈՒԽ ԿԱՆՈՆԻՆ «ՈՂՈՐՄԵ՛Ա» ԵՒ ՎԱՍՆ ՁԱՒՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՍՈՅՆ, ՈՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ 301
ԺԸ.ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆԻՍԻ] ԵՁՆԿԱՅԵՑՈՅ, ՁԸ. ՍԱՂՄՈՍԻՆ, «ՁՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՍ ՔՈ, ՏԷՐ, ՅԱՒԻՏԵԱՆ ԱՒՐՀՆԵՑԻՑ» (ՁԸ. 2) 320
ԺԹ.ՆՈՐԻՆ Ի ՃԷ. ՍԱՂՄՈՍՆ «ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՏԵԱՌՆ, ՁԻ ՔԱՂՑՐ Է» 338
Ի. ՆՈՐԻՆ՝ ՃԺԸ. ՍԱՂՄՈՍԷՆ, Ի ԲԱՆՆ ՈՐ ԱՍԷ. «ԻՇԽԱՆՔ ՀԱԼԱԾԵՑԻՆ ՁԻՍ Ի ՆԱՆ[ԻՐ]» (ՍՂՄՍ. ՃԺԸ. 161) 358
ԻԱ.ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԱՅԵՑՈՅ ՅԵՐԳՍ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՆ ՄՈՎՍԻՍԻ ԵՒ ՈՐԴՈՅՆ ԻՍՐԱՅԻԼԻ 371

ԻԲ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՅԵՑԻՈՅ ԲԱՆ ՀԱՄԱՌՕՏ, ՔԱՂԵԱԼ ՅԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԳՐՈՅՆ, ՈՐ ԸՆԴԴԷՄ ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՅՆ 395
ԻԳ. ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ, ՈՐՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՎՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՅԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵԱՆՑ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ, ՈՐ ԿՈՉԻ ԵԶՆԿԱՅ, Ի ԹՈՒԻՍ ՉԻԹ. (729): ԱՍՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ԵՒ ԾԵՐՈՒՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԳՐԻԳՈՐ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՈՐ ԵՒ ԳՐԵՑԱՒ Ի ԳԼՈՒԽ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ. ԵՒ ԵՄ՝ ՆՈՒԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՅՈՀԱՆՆԷՍ ԵԶՆԿԱՅԻ, ԳՐԵՑԻ ԶՍԱՀՄԱՆ ԵՒ ԶԽՐԱՏ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ ԵՒ ԶՇԱՀԱՒԷՏ ԱՒԳՈՒՏՆ, ՈՐ Ի ՍՄԱՆԷ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ 398
ԻԴ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՅԵՑԻՈՅ ԿՐԿԻՆ ԿԱՆՈՆՔ ԵՒ ԽՐԱՏՔ ՏՂԱՅԱՀԱՍԱԿ ՄԱՆԿԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՅ, ՈՐՔ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐԱՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՎ ՎԱՐԵՆ ԶԿԵԱՆՍ ԱՇԽԱՐՀԻՍ, ԶՈՐՍ ԵՒ ՄԵՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՒՐԻՆԱՅՆ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՈՒՂՂԵՄՔ ԶԱՅՆՊԻՍԻՍՆ Ի ՀՈԳԵՒՈՐՆ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ 408

ՅԱՂԱԳՍ ԳՕՏՈՅ 412
ՎԱՍՆ ԳՕՏԻ ՏԱԼՈՅՆ 415

ԻԵ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵԶՆԿԱՅԵՑՈՅ Ի ԽԶ. ՍԱՂՄՈՍՆ ԴԱՒԹԻ, Ի ՄԵԿՆՈՂԱՅ ԲԱՆԻՑ ՅԱՐՄԱՐԵԱԼ 419
ԻԶ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍ ԵԶՆԿԱՅԵՑՈՅ ԱՍԱՅՈՒԱԾՔ ԲԱՆԻ Ի ԲԱՆՍ ԱՂԱՒԹԻՑ ՍՐԲՈՒՀԻՈՅՆ ԱՆՆԱՅԻ, ՈՐ ԱՍԷ. «ՀԱՍՏԱՏ[ԵՑԱՒ ՍԻՐՏ ԻՄ Ի ՏԷՐ]» 430
ԻԷ. ՆՈՐԻՆ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ՅԱՂԱՒԹՍ ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ («ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲՔ ԿԱՅՑԵՆ ԱՌ ՔԵԶ») 461
ԻԸ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԵԶՆԿԱՅՈՅ ԱՍԱՅՈՒԱԾ ԲԱՆԻ Ի ՃԼԱ. ՍԱՂՄՈՍԷՆ. «ՔԱՀԱՆԱՅՔ ՔՈ ԶԳԵՑՑԻՆ» 470
ԻԹ. ՆՈՐԻՆ ՅՈՀ[ԱՆՆԻՍԻ], ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՐԴՈՅՆ ԵՒ ՄԱՀՈՒ, Ի ԲԱՆ ԻՄԱՍՏՆՈՅՆ, ՈՐ ԱՍԷ. «ԱՍՏՈՒԱԾ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԶՄԱՐԴՆ ՅԱՆԵՂԾՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ՊԱՏԿԵՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՅ ԱՐԱՐ ԶՆԱՅ» 503
Լ ԱՍԱՅՈՒԱԾՔ Ի ԲԱՆՆ ՏԵԱՌՆ, ՈՐ ԱՍԷ. «ԵՍ ԵՄ ՀՈՎԻՒՆ ՔԱՋ» (Ա. ԿՐՆԹ. ԺԲ. 28). ԵՐՋԱՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅԵՑՈՅ ԱՐԱՐԵԱԼ Ի ԽՆԴՐՈՅ ԵՒ Ի ՀԱՅՑՄԱՆԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱՐԻ[ՈՐ Ի ԴՐԱՆԷ ՍՐԲՈ ԿԱՐԱՊԵՏԻՆ 522
ԼԱ. ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅՈՅ ՅԱՂԱԳՍ ԱՂԱՒՆՈՅՆ ՄԻԱՄՏՈՒԹԵԱՆ 547
ԼԲ. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶԸՆԿԱՅՈՅ, Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՍՆ 560
ԼԳ. ՆԱԽԵՐԳԱՆ ԱՌԱԿԱՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ 562
ԼԴ. ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ. ԱՍԱՅՈՒԱԾԻ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՅՍ, ՅԱՂԱԳՍ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻ 564
ԼԵ. Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ՝ ՅԱՐՄԱՐԵԱԼ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱԵՑՈՅ. ՍԱՂՄՈՍՆ Ի ԲԱՆՆ, ՈՐ ԱՍԷ. «ՊԱՏՈՒԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ՏԵԱՌՆ ՄԱՀ ՍՐԲՈՅ ԻՒՐՈՅ» (ՃԺԵ. 15) 586
ԼԶ. ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌԱՒՏ ԵՒ ԹԻՒՔ ԶԱՐԶԱՐԱՆԱՅՆ ԵՒ ԿԱՐԳԻ ԳՐՈՅ ՊԱՏՄՈՂԱՅՆ ԿԱՐՃԱՌԱՒՏԵԱԼ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱՅՈՅ 607
ԼԷ. ԽՈՐՀՈՒՐԴ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՂԱԶԱՐՈՒ, ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՆՅՆ, ՓՈՔՐ ԻՆՉ ՅԱՒԵԼԵԱԼ ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՅՈՀԱՆՆԷՍ [ՎԱՐԴԱՊԵՏԷ] 616

ԼԸ. ՄԵԾ ԱՒՈՒՐ ՀԻՆԳՇԱԲԱԹ[Ի], ԵՒ ԹԷ ԿԱՄԻՍ՝ ՁԱՏԿԻՆ, ՅԱՍԱՅՈՒԱԾՈՅ ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՀՐԱՄԱՅ ԿԻՒԼԻԿԵՅՈՅ Ի ՄԻ ԱԾԵ[Ա]Լ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՒԱՍՏ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՁՆԿԱՅՈՅ. ԹԷ ԿԱՄԻՍ՝ ՁԱՏԿԻՆ Ի ԴԷՊ Է, ԵՒ ԹԷ ՀԻՆԳՇԱԲԱԹ[Ի] 620
ԼԹ. ՆՈՒԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՀԱՆՆԻՍԻ Ի ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ 646
Խ. ՔԱՐՈՋ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐՁՆԿԱՅԻՈՅ Ի ԲԱՆ ՍԱՂՄՈՍԻՆ, ՈՐ ԱՍԷ «ՅԱՂՕԹՍ ԿԱՅՑԵՆ ԱՌ» [ԼԱ. 6] ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ 656
ԽԱ. ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 664
ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՅՍ 665

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՏՈՐ Ա.

ՃԱՌԵՐ ԵՒ ՔԱՐՈԶՆԵՐ

Բնագրերը հրատարակության պատրաստեցին
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐԶՆԿԱՅԻ-ՏԷՐ-ՍՐԱՊՅԱՆԸ եւ
ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ
Ներածականները ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան
Համակարգչային շարվածք և ձևավորում՝ Ա. Խանզադյան